

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԾԱՐ ԳԱԼՈՒՍՏ ԿԻՒԼՊԵՆԿԵԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԵԱՆ

ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆ

ԳԻՐԵՐՈՒ ԳԻՒՏԻ 1600-ԱՄԵԱԿԻ ՄԱՏԵՆԱԾԱՐ

ՄԱՏԵՆԱԳԻՐՔ ՀԱՅՈՑ

Գ. ՀԱՏՈՐ

Զ. ԴԱՐ



ԱՆԹԻԼՈՍ - ԼԻՐԱՆԱՆ
2004

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ	VII
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԻՐ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ	XI
ԿԱԶՄՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ	XIII
ԱՆԱՆՈՒՆ	1
«Վկայաբանություն...» եւ «Գիւտ նշխարաց...» սուրբ Թադէոս առաքեալի եւ Սանդուխտ կոյսի	3
ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆ ԹԱԴԵՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅՆ	5
ԳԻՏ ՆՇԽԱՐԱՑ ԹԱԴԵՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅՆ	19
ԱՆԱՆՈՒՆ	23
«Սուրբ Շուշանիկի վկայաբանությունը».....	25
ՎԿԱՅՈՒԹԻՒՆ ՍՐԲՈՅՆ ՇՈՒՇԱՆԿԱՆՆ	27
ԱՆԱՆՈՒՆ	49
«Կեանք եւ վարք Վաչագանայ արքայի»	51
ԿԵԱՆՔ ԵՒ ՎԱՐՔ ՎԱՉԱԳԱՆԱՅ ԱՐՔԱՅԻ	57
ԲԱՐԳԵՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՈԹՄՍԵՅԻ	113
Բարգէն Ոթմսեցու Թղթերը	115
[Ա] ԹՈՒՂԹ Ի ՊԱՐՍՍ	117
[Բ] ԹՈՒՂԹ Ի ՊԱՐՍՍ	122
ՎԱԶԱԳԱՆ ԱՂՈՒԱՆԻՑ ԱՐՔԱՅ	125
Աղուէնի եկեղեցական ժողովի կանոնները.....	127
[ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ ԿԱՆՈՆԱԿԱՆ՝ Ի ՎԱՉԱԳԱՆԱՅ ԱՂՈՒԱՆԻՑ ԱՐՔԱՅԷ ԵՂԵԱԼ Ի ԺՈՂՈՎՈՅՆ, ՈՐ ՅԱՂՈՒԷՆՆ ԵՂԵԻ].....	133
ՂԱԻԹ ԱՆՅԱՂԹ	141
Ղաւիթ Անյաղթ	143
ՍԱՀՄԱՆՔ ԵՒ ՏՐԱՄԱՏՈՒԹԻՒՆԷ ԻՄԱՍԱՍԻՐՈՒԹԵԱՆ	147
ՄԵԿՆՈՒԹԻՒՆ Ի «ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆՆ» ԱՐԻՍՏՈՏԵԼԻ	197
ՎԵՐԼՈՒԾՈՒԹԻՒՆ «ՆԵՐԱԾՈՒԹԵԱՆՆ» ՊՈՐՓԻՐԻ	227
ՄԵԿՆՈՒԹԻՒՆ «ՍՏՈՐՈԳՈՒԹԵԱՆՅՆ» ԱՐԻՍՏՈՏԵԼԻ	286
ՄԱՏԹԷ ԳԻՏՆԱԴՐ	355
«Հարցումն արքային Վաչագանայ».....	357
ՀԱՐՑՈՒՄ ԱՐՔԱՅԻՆ ՎԱՉԱԳԱՆԱՅ ԶՄԱՏԹԷ ԵՐԵՅ ԳԻՏՆԱԴՐ	359
ԱՔՐԱՀԱՄ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ	361
Աքրահամ Մամիկոնէից եպիսկոպոսը եւ իր Թուղթը.....	363
ԹՈՒՂԹ ՎԱՍՆ ՆՆՋԵՅԵԼՈՅ	367

ՍԱՀԱԿ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՈՐԴԱՍՑԻ.....	371
Սահակ Ուղկացին եւ Կարևոյ ժողովի կանոնները	373
ԿԱՆՈՆԵ ԺՈՂՈՎՈՅՆ ԿԱՐՆՈՅ.....	377
ՊԵՏՐՈՍ ՍԻՒՆԵՑԻ.....	385
Պետրոս Սիւնեցին եւ իր երկերը	387
ԳՈՎԵՍՏ Ի ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆՆ.....	389
ՅԱՂԱԳՍ ՄԱՐՄԱԽՈՐՈՒԹԵԱՆՆ ՏԵԱՌՆ	396
ՅԱՂԱԳՍ ՀԱԲԱՏՈՅ	406
ՊԵՏՐՈՍ ՍԻՒՆԵԱՑ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՍԷ.....	408
ԱՌ ՍՈՒՐԲՆ ՅԻԶՏԻԲՈՒԶՏԻ ՅՈՐԺԱՄ Ի ՀԱՆԴԻ ԷՐ Ի ԴՎԻՆ.....	409
ՆԵՐՍԷՍ ԲԱԳՐԵԱՆՂԱՑԻ.....	411
Ներսէս Բագրեանղացին եւ իր երկերը	413
ՊԱՏԱՍԽԱՆԻ ԹՂԹՈՅՆ ԱՍՈՐԵԱՑ.....	415
ԹՈՒՂԹ ՄԵՂԱԴՐՈՒԹԵԱՆ ԱՌ ԵՊԻՍԿՈՊՈՍՈՒԲՍՆ	418
ՈՒԽՏ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԻՍ.....	419
ԿԱՆՈՆԵ ՆԵՐՍԷՍԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԵՒ ՆԵՐՇԱՊՅՈՅ ՄԱՄԻԿՈՆԷԻՑ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ.....	421
ՅՈՎՀԱՆՆԷՍ ԳԱԲԵՂԵՆԱՑԻ.....	439
Յովհաննէս Գաբեղենացին (Գաբեղեան) եւ իր երկերը	441
ԹՈՒՂԹ, ՉՈՐ ՏԵՐ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԵՒ ԱՅԼ ԵՊԻՍԿՈՊՈՍԵ, ԱՌ ՍԻՒՆԵԱՑ ԵՊԻՍԿՈՊՈՍՆ ԵՒ ԱՌ ՏԵՐՆ ԱՐԱՐԻՆ	445
ԹՈՒՂԹ ՅՈՎՀԱՆՆԻՍԻ՝ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՌ ՏԵՐ ԱԲԱՄ՝ ԱՂՈՒԱՆԻՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ.....	448
ՅՈՎՀԱՆՆՈՒ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ Ի ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ ԶՐԻՍՏՈՍԻ.....	453
ՆԵՐՍԷՍ ՈԱԺԻԿ	457
«Վկայաբանութիւն սրբոյն Յիզտիբուզտեայ»	459
ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՍՐԲՈՅՆ ՅԻԶՏԻԲՈՒԶՏԵԱՅ	461
ՄՈՎՍԷՍ ՑՈՒՐՏԱԻՑԻ.....	467
Մովսէս Ցուրտաւեցին ու իր թղթերը	469
ԱՌԱՋԻՆ ԹՈՒՂԹ Ի ՄՈՎՍԷՍԷ ԵՊԻՍԿՈՊՈՍԷ ԱՌ ՎՐԹԱՆԷՍ ԶԵՐԴՈՂ	471
ԵՐԿՐՈՐԴ ԹՈՒՂԹ Ի ՄՈՎՍԻՍԷ ԵՊԻՍԿՈՊՈՍԷ ԱՌ ՎՐԹԱՆԷՍ ԶԵՐԴՈՂ	472
ԵՐՐՈՐԴ ԹՈՒՂԹ Ի ՄՈՎՍԷՍԷ ԵՊԻՍԿՈՊՈՍԷ ԱՌ ՎՐԹԱՆԷՍ ԶԵՐԴՈՂ.....	473
ԹՈՒՂԹ ԱՌ ՍՐԲԱՍԷՐ ՏԵՐ ԱԲՐԱՅԱՄ՝ Ի ՄՈՎՍԻՍԷ	474
ԹՈՒՂԹ ԱՌ ՏԵՐ ՍՄԲԱՏ Ի ՄՈՎՍԷՍԷ	475
ԹՈՒՂԹ ՇՐՋԱԳԱՅԱԿԱՆ. ՊԱՏՃԱՌԵ Դ. ԺՈՂՈՎՈՅՆ ԵՐԿԱԲՆԱԿԱՅՆ	477
ՎՐԹԱՆԷՍ ԶԵՐԹՈՂ.....	487
Վրթանէս Զերթողը եւ իր գործերը	489
ՅԱՂԱԳՍ ՊԱՏԿԵՐԱՄԱՐՏԻՑ.....	493
ՊԱՏԱՍԽԱՆԻ ԹՂԹՈՅՆ ՍՈՐՄԵՆԱՅ, ՈՐ ԱՌ ՎՐԹԱՆԷՍ ԵՒ ՎԱՐԴԱՊԵՏ ԳՐԵԱՑ	501
ԹՈՒՂԹ ՇՐՋԱԳԱՅԱԿԱՆ ԱՌ ԵԿԵՂԵՑԻՍ ՑՈՒՐՏԱԻՍ	505

ԹՈՒՐԹ ԱՌ ՊԵՏՐՈՍ ՎՐԱՑԻ.....	506
ՏԵԱՌՆ ԿԻՐՈՎՆԻ Ի ՎՐԹԱՆԻՍԷ.....	507
ՊԱՏԱՍԽԱՆԻ ԹՂԹՈՅՆ ՄՈՎԱԵՍԻ Ի ՎՐԹԱՆԻՍԷ [Ա]	509
ՊԱՏԱՍԽԱՆԻ ԹՂԹՈՅՆ ՄՈՎԱԵՍԻ Ի ՎՐԹԱՆԻՍԷ [Բ]	510
ՊԱՏԱՍԽԱՆԻ ԵՐՐՈՐԴ ԹՂԹՈՅՆ ՄՈՎԱԵՍԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ Ի ՎՐԹԱՆԻՍԷ	511
ԳՐԻԳՈՐ ԶԵՐԹՈՂ.....	515
Գրիգոր Զերթող եւ իր երկը	517
ՍՐԲԱՍԻՐԻ ՏԵԱՌՆ ԱԲՐԱՅԱՍՈՒ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ Ի ԳՐԻԳՈՐԷ ՆՈՒԱՍԷ ԶԵՐԴՈՂԷ	519
ՄՈՎԱԵՍ Բ. ԵՂԻՎԱՐԴԵՑԻ.....	525
Մովսէս Բ. Եղիվարդեցին եւ իր թուղթը	527
ԹՈՒՐԹ ՏԵԱՌՆ ՄՈՎԱՍԻՍԻ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՌ ԿԻՐՈՆ ՎՐԱՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ	529
ՑԱՆԿԵՐ	533
ՍՈՒՐԲԳՐԱՅԻՆ ՅՂՈՒՄՆԵՐ	535
ՏԵՂԱՆՈՒՄՆԵՐ, ՑԵՂԱՆՈՒՄՆԵՐ	537
ԱՆՁՆԱՆՈՒՄՆԵՐ, ՏՈՅՄԱՆՈՒՄՆԵՐ	544

ԱՆԱՆՈՒՄ

ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆ ԹԱԴԵՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅՆ, ՔԱՐՈՉՈՒԹԵԱՆՆ ԵՒ
ԳԱԼՍԵԱՆ Ի ՀԱՅՍ ԵՒ ԿԱՏԱՐՄԱՆՆ ՈՐ Ի ՔՐԻՍՏՈՍ

ԳԻՏ ՆՇԽԱՐԱՑ ԹԱԴԵՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅՆ

**«ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆ...» ԵՒ «ԳԻՏ ՆՇԽԱՐԱՑ...»
ՍՈՒՐԲ ԹԱԴԵՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԵՒ ՍԱՆԴՈՒԽՏ ԿՈՅՍԻ**

Ըստ Տ. Ղեկոնդ Ալիշանի՝ Վկայաբանութիւնը շարադրուել է Թադէոս առաքեալի աշակերտների կողմից, «եւ ի սկիզբն օսկեակ դարու մերոյս թարգմանութեան փոխաբերեալ ի հայ գիր եւ բան»։ Նրա կարծիքով, թարգմանութիւնն իրականացուել է Խորենացուց առաջ, քանզի վերջինս նշում է, թէ իրենից առաջ ուրիշները մանրամասն պատմել են Թադէոս առաքեալի եւ Սանդուխտ կոյսի մասին¹։

Ալիշանը նոյնիսկ հակուած է կարծել, թէ իբրեւ թարգմանիչ յիշատակուած Սամուէլ եպիսկոպոսը թերեւս Շմուէլ ասորին է, որ Սահակ Պարթեւի ժամանակ նրան հակառակ կաթողիկոս էր կարգուած հայոց վրայ²։ Այս վերագրումը, սակայն, իրաւացիօրէն վիճարկուում է. բանն այն է, որ ասորի գրականութեան մէջ բացակայում է նման մի երկ։ Երկրորդ՝ այս հիմամբ, բնականաբար, Շմուէլը չէր կարող թարգմանել այն, քանզի երկի բովանդակութիւնն ինքնին հակառակ է Շմուէլի եւ նրա յաջորդների եկեղեցա-քաղաքական գործունէութեանը։ Երրորդ՝ «թարգմանել» նշանակում է «աւանդել, մեկնել, ճառել, պատմել»։ Տուեալ դէպքում այն կիրառուած է հէնց «աւանդել, պատմել» իմաստով։ Ուրեմն իբրեւ թարգմանիչ յիշուած Սամուէլ եպիսկոպոսը ոչ թէ Վկայաբանութեան թարգմանիչն է, այլ թերեւս տեղայնացնող ասորերէն (այսօր անյայտ) վաղնջական գրոյցի կամ դրա հեղինակը, որ Սահակ Պարթեւի կամ Մեսրոպ Մաշտոցի աշակերտներից էր³։

Յաջորդ՝ Գիւտ Եղիարաց... միաւորը շարադրուել է Յովհաննէս Մանդակունի կաթողիկոսի եւ Վահան Մամիկոնեան Հայոց մարզպանի եւ սպարապետի օրօք տեղի ունեցած նշխարների գիւտից, այն է՝ 485 թ. յետոյ։ Այդ շրջանում Հայոց եկեղեցին աստիճանաբար յստակում է իր գիրքորոշումը՝ Քաղկեդոնի եւ նեստորական եկեղեցու նկատմամբ։ Իր գիրքերի ամրացման համար նա բնականաբար պէտք է դիմէր նշխարների գիւտի պատմութեանը։

Ի մի բերելով՝ կարելի է արձանագրել, որ եթէ Թադէոս առաքեալի եւ Սանդուխտ կոյսի վկայաբանութիւնը շարադրուել է հայ իրականութեան մէջ Ե դ., ապա առաքեալի նշխարների գիւտի պատմութիւնը՝ Ե-Ձ դ.դ. սահմանագլխին, երբ դաւանաբանական վէճերի սաստկացման շրջանում հրամայական անհրաժեշտութիւն էր դարձել ոչ միայն եկեղեցու դաւանական ինքնորոշումը, այլեւ առաքելական ակունքների վկայակոչումով նրա հաստատագրումն՝ իբրեւ պատմական աներկբայ իրողութիւն։

Վկայաբանութիւնն ու Գիւտ Եղիարացը հրատարակուած են՝ ըստ վեներաբլեան երկու ձեռագրերի եւ Ֆրանսիայի Ազգային գրադարանի (Փարիզ) ԺԲ դ. ընդօրինակուած

1 Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, Գիրք Բ, գլ. ԼԳ (տե՛ս ՄՀ, Բ հտ., էջ 1905-1907)։ Ի դէպ, Բուզանդը եւս վկայում է, որ Թադէոսի եւ Սանդուխտի մասին պատմութիւններն «ի ձեռն այլոցն գրեցան»։ Բուզանդ, Պատմութիւն, դպ. Գ, գլ. Ա (տե՛ս ՄՀ, Ա հտ., էջ 278)։
2 Սոփերէ, Ը, 1853, էջ 101, ճնթ. 37
3 Տե՛ս Հ. Գ. Մելիքեան, Հայ-ասորական յարաբերութիւնների պատմութիւնից, Երեւան, 1970, էջ 168-171։

Տօնականի՝ *Հիման վրայ Հ. Ղ. Ալիշանի իրականացրած համեմատական բնագրի*²:
Սովետական հրատարակչության բնագիրը մէկ անգամ եւս համեմատուած է Փարիզեան
ձեռագրի հետ³:

Ներկայ հրատարակութեան մէջ զանց է առնուած վկայութիւն սրբոյն Սանդիտոյ
դատերն Սանատրկոյ արքայի բնագիրը⁴, որը համառօտութիւնն է վկայաբանութիւն Թա-
դէոսի առաքելոյն սրբախօսական միակորի:

Յակոբ Քէոսէեան

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

1. **Հ. Ներսէս Անդրիկեան**, *Տեղեկութիւններ Սանդուխտի վկայաբանութեան վրայ*, «Բագմավէպ», 1905, էջ 552-555:
2. **Հ. Ներսէս Անդրիկեան**, *Սանդուխտի վկայաբանութեան թարգմանիչը*, «Բագմավէպ», 1907, էջ 60-61:
3. **Հ. Ներսէս Ակիմեան**, *Մատենագրական հետազօտութիւններ. Թադէի եւ Սանդիտոյ վկայաբանութիւնը*, ՀԱ, 1969, էջ 399-426:
4. **Հ. Պօղոս Անանեան**, *Քրիստոնէութեան հետեւեր Հայաստանի մէջ Ս. Գրիգոր Լուսաւորչի քարոզութենէն առաջ (պատմական ուսումնասիրութիւն)*, Վեներիկ-Ս. Ղազար, 1979 («Բագմավէպ» հայագիտական մատենաշար, թիւ 14):
5. **Էդուարդ Դանիէլեան**, *Սուրբ Թադէոս առաքելի ասանդութեան արտացոլումը հայ պատմագրութեան մէջ*, «Հայաստանը եւ ֆրիստոնեայ Արեւելք», Երեւան, 2000, էջ 49-54:
6. **օլգոս ԶժՅլաձե**. *Ճարտչական և երկրաչափական ճշգրտագրական շրջանառութիւն IX-X եւ-Յ, ճարտչական և ճշգրտագրական*, Երեւան, 1944, թ. 3-8.
7. **M. van Esbroek**, *Le Roi Sanatruk et l'Apôtre Thaddée*. - REArm, t. IX, 1972, pp. 243-283.
8. **M. van Esbroek**, *L'apôtre Thaddée et le roi Sanatruk*. - Atti del II Simposio internazionale Armenia-Assyria. Ed. M. Nordio and B. Zekian, Venice, 1984, pp. 83-106.

1 Տե՛ս Ֆրանսիայի Ազգային գրադարանի հայերէն ձեռ. թիւ 178, թերթ 568ա-576բ: Զեռագրի նկարագրութիւնը տե՛ս **R. H. Kévorkian, A. Ter-Stepanian**, avec le concours de B. Outtier et de G. Ter-Vardanian, *Manuscripts arméniens de la Bibliothèque nationale de France. Catalogue*, Paris, 1998, pp. 589-604.

2 Տե՛ս *Սովետական*, Ե, Վեներիկ-Ս. Ղազար, 1853, էջ 9-75, 87-97:

3 ՄՄ, դրսի մանրաժապաւեններ, թիւ 879

4 Տե՛ս *Սովետական*, Ե, էջ 77-83:

[ԿԱՍՆ] ԿԿԱՅԱԲԱՆՈՒԹԵԱՆ ԹԱԴԵՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅՆ, ՔԱՐՈՉՈՒԹԵԱՆՆ ԵՒ ԳԱԼՍԵԱՆ Ի ՅԱՅՍ ԵՒ ԿԱՏԱՐՄԱՆՆ ՈՐ Ի ՔՐԻՍՏՈՍ

1 Բազմադիմի են ճանապարհք աստուածային լուսեղէն վտակացն, եւ ոռոգի¹ դիտարագունդ բաժակաւքն վասն զի² մաքրական ընթացիւքն վառին 'ի հանդիպումն անշէջ լապտերին, եւ հասանեն սիրական խորհրդին, եւ միակամ կամաւքն փարին 'ի ծայրագոյնսն, մինչեւ առնուն զհայցումն ջերմեռանդն գլծոյն: 2 Եւ փութան հասանել կամողին, եւ առնուն զմետասաներորդ մասն վաստակոց, սկսեալ յառաջնոցն մինչեւ 'ի տասն եւ միակն, ըստ աւետարանական բանին. զի հանդիպին լուսաբեր ցաւղոյն, ուստի բղխեն զքաղցրահամբոյր սէրն, 'ի խաղս անուշարար կուսութեանցն աստուածագարդ վարուցն: 3 Եւ լնուն շտեմարանք նոցա 'ի բղխմանէ աղաւթական եւ արտաւարագործ³ վաստակոցն. զի յամենայն ժամ են փառաւորիչք Սրբոյ Երրորդութեանն. եւ փայլեն իբրեւ զճառագայթս արեգական սիրական խորհրդովք, եւ տան պտուղ սուրբ հանդիսին, եւ մատուցանեն ընծայ 'ի հոտ անոյշ որ առաջի աստուածորդւոյն, եւ հաճոյակատար⁴ կամաւք առնուն զպարգեւս անմահական լուսոյն, եւ գրին 'ի լուսեղէն բանակսն 'ի հրեշտակամբոխ⁵ զաւրսն. եւ լինին թեւագեցիկք 'ի սրովբէագոչ դասսն, եւ լնուն երկնաւոր ցանկութեամբքն լիապէս:

4 Արդ, որք հանդիսանան՝ հանդիպին⁶ ըստ վերագրելոցն⁷ որպէս եւ⁸ հիւսիսային կողմանցս ծագեաց աստղն վարսադիտակ⁹ այրն սքանչելագործ, սուրբ առաքեալն Թադէոս. եւ վիճակեաց զամենայն Հայաստան ազգս. զի նա էր քարոզ բանին կենաց, եւ յառաջընծայ 'ի հանդէս մարտիրոսական պսակին¹⁰: 5 Նա եկեալ ճայնէր զամենեսեան յերկնաւոր ընթրիսն. զի առաքեցաւ յամենափրկչէն մերմէ Յիսուսէ Քրիստոսէ, յետ համբառնալոյ Տեառն յերկինս. եւ եղեալ զսուրբ աջն իւր 'ի վերայ առաքելոցն փչեաց 'ի նոսա զմխիթարական Սուրբ Հոգին զլոյսն ճշմարտութեան, եւ աւրհնեաց զնոսա, եւ քաջալերեալ զնոսա լուսեղէն բանիւն, եւ առաքեաց զնոսա յիւրաքանչիւր վիճակս քարոզել զբանն կենաց: 6 Իսկ այս սուրբ առաքեալս էր լցեալ լուսեղէն խորհրդով, վիճակեալ Հայաստան ազգիս. գայր հասանէր 'ի Միջագետս Ասորւոց, քարոզէր զբանն կենաց, առնէր նշանս եւ սքանչելիս մեծամեծս: 7 Եւ դարձեալ անտի յառաջ գայր հասանէր 'ի քաղաքն Ուռհայ. եւ մտեալ 'ի տուն Տուբիայ բժշկէր զամենայն ախտս եւ զհիւանդութիւնս, եւ լուսաւորէր զնոսա երկնային լուսովն:

8 Եւ լուեալ թագաւորին Աբգարու զսրբոյ առաքելոյն Թադէոսէ, եւ զսքանչելիսն¹¹ զոր առնէր, կարծելով իմացաւ թէ նա է որ առաքեցաւ 'ի Քրիստոսէ¹²: 9 Եւ

1 Յօր.՝ Դիտարագունդ բանակօք. իսկ 'ի միւսում օրինակի եւ յերկաթագիր Տօնականին Բարիզեան՝ Դիտաւոր գունդ բաժակօք
2 Բ տիրական ... լապտերօք
3 Բ արտասուագոչ
4 Բ հաճոյական
5 Բ հրեշտակախումբ

6 հանդիպիլ
7 վերագրելոյն
8 ի փիս եւ
9 Բ վերադիտակ
10 Բ բաժակին
11 Բ զսքանչելի նշանացն
12 Բ ունի՝ յղեաց եւ կոչեաց զնա

ապա եկեալ սուրբ առաքեալն 'ի տուն թագաւորին Աբգարու, եւ տեսեալ Աբգարու զսուրբ առաքեալն Թադէոս, եւ նշան երկնաւոր լուսոյն 'ի վերայ երեսաց նորա, զահի հարեալ անկաւ 'ի վերայ երեսաց իւրոց, եւ երկիր եպագ նմա. եւ մատուցեալ սուրբ առաքեալն եդ ձեռն 'ի վերայ նորա, եւ բժշկեաց զնա անուամբ փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի, եւ լուսաւորեաց զնա երկնային լուսովն, եւ զամենայն տուն նորա: 10 Բժշկեաց եւ զԱբգիու որդի Աբղեայ 'ի չար ցաւոց, որ էր այր մեծ եւ երեւելի 'ի դրան թագաւորին: 11 Եւ լուսաւորեաց զամենայն քաղաքն, եւ թողոյր անդ յաշակերտաց իւրոց: 12 Եւ ինքն իսկ թագաւորն Աբգար որ բժշկեցաւ 'ի սրբոյ առաքելոյն, եղեւ քարոզ բանին կենաց, եւ նշանագործ 1 յամենայն բարիս. եւ աւրհնէր սուրբ առաքեալն զթագաւորն եւ զամենայն հաւատացեալսն:

13 Եւ ինքն սուրբ առաքեալն առնոյր զաշակերտսն եւ փութով հասանէր յաշխարհն Հայոց, առ թագաւորն Սանատրուկ, 'ի գաւառին Արտագ, 'ի քաղաքագեւղն Շաւարշան, յապարանս արքունի, ուր² էին հովոց գետինք³ թագաւորացն Հայոց: 14 Եւ քարոզէր անդ զբանն կենաց, եւ առնէր նշանագործութիւն 'ի դրան արքունի 'ի համաշխարհագարդ⁴ բանակսն. եւ բժշկէր զամենայն ախտս չար հիւանդութեանց: 15 Եւ եկեալք բազումք յարքունական դրանէն առ սուրբ առաքեալն, լսէին 'ի նմանէ զքաղցրաբարբառ քարոզութիւն անտարանին. եւ տեսանէին զնշանսն, զի զբորոտս սրբէր, զկաղս զնացուցանէր, զդեւս հանէր, եւ զամենայն ախտս չարաչարս առողջացուցանէր:

16 Եւ տեսեալ զամենայն սքանչելիս բազումք հաւատացին 'ի Քրիստոս:

17 Յայնժամ եկեալ դուստր թագաւորին, որում անուն էր Սանդուխտ, որ էր 'ի տիրոց տղայ⁵, գեղեցիկ տեսեամբ եւ վայելուչ երեսաւք, ⁶որ ոչ գտանէր համեմատ նմա 'ի վերայ երկրի. եւ հասեալ 'ի գիշերի առ սուրբ առաքեալն լսէր 'ի նմանէ զբանն քարոզութեան Աւետարանին⁷, եւ զձայն երկնաւոր զաւրացն, եւ ընդունէր, եւ անկանէր առաջի սուրբ ոտից նորա, եւ արտասուաւք համբուրէր, եւ ուսանէր 'ի նմանէ զբազում անուրս. եւ ոչ թողոյր զնա գտիւ եւ զգիշեր, եւ այնպէս միացեալ բեւեռէր 'ի սէրն Քրիստոսի Աստուծոյ մերոյ: 18 Եւ տեսեալ սուրբ առաքելոյն զՉերմեռանդն գութ սիրոյ նորա առ Քրիստոս, առեալ մկրտէր զնա յանուն Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ: 19 Եւ եղեւ նշան լուսեղէն⁸ յերկնից 'ի վերայ սրբոյ⁹ կուսին, եւ 'ի մէջ լուսոյն ձայն երկնաւոր զուարթնոցն¹⁰. բազում եւ այլք հաւատացին 'ի ժամուն 'ի Քրիստոս. եւ տեսեալ քրմաժողով դիւցակատար պաշտանէիցն, պատմեցին խստերախ եւ անաւրէն թագաւորին իւրեանց Սանատրկոյ:

20 Ապա չարագիտեալ թագաւորն, տայր հրաման սրամահ առնել զհաւատացեալսն: 21 Եւ եղեւ նշան յերկնից 'ի վերայ նոցա, եւ բազումք հաւատացին 'ի Քրիստոս, եւ անկաւ ահ 'ի վերայ անաւրինացն. եւ բազումք կորեան 'ի նոցանէ յահէ լուսոյ ճառագայթիցն. եւ ոչ իշխեցին ձեռն արկանել 'ի սուրբ առաքեալն: 22 Եւ երեւեալ Փրկիչն ասէ. պի'նդ կաց Թադէոս, զի ես ընդ քեզ եմ 'ի փրկել զքեզ: 23 Եւ տեսեալ սրբոյն Թադէոսի զՓրկիչն Քրիս-

1 Բ յամենայն գործս բարիս

2 Ձեռագրում որ, ուղղումն ըստ Մ. Օրմանեանի, Ազգայատում, Ա, § 8 (Յ. Ք.):

3 Այսպէս է նաեւ ձեռագրում (Յ. Ք.):

4 Բ համաշխարհագառ

5 ի տիս տղայութեան

6 Ձի՞ որ ոչ ... երկրի

7 Սուրբ Աւետարանին

8 Ձի՞ լուսեղէն

9 սուրբ

10 անտեսացն փիս զուարթնոցն

տոս՝ անկանէր առաջի նորա հանդերձ արտասուաւք, եւ ասէր. Տէ՛ր իմ եւ Աստուած՝ մի՛ թողուր զիս միայն, զի ահա իբրեւ եկի՛ ՚ի բարբարոս ազգս ՚ի դուռն թագաւորիս հրամանաւ եւ զաւրութեամբ քով. դու իսկ ասացեր, Տէ՛ր իմ, ելե՛՛ք ընդ ամենայն երկիր եւ փարոզեցե՛՛ք զքանն կեանաց՞. որ՛ հաւատայ եւ մկրտի ապրեսցի՞², եւ որ ոչն հաւատայ դատապարտեսցի՞³. արդ իբրեւ եկի ես այսր եւ սկսայ քարոզել զբանս սուրբ աւետարանին քո զոր եղեր ՚ի բերանի իմում՞³ եւ ոչ կամին լսել՝ զի որք հաւատային ՚ի քեզ Տէր, սրամահ արարեալ սպանին, եւ զոմանս բրազոհ արարեալ եղին ՚ի բանդի. կամէին եւ յիս ձեռն արկանել. իսկ լոյս սուրբ աստուածութեան քո փութացեալ ընկղմեաց զնոսա ՚ի խորս տրտմութեան չարին, եւ գանեալք սատակեցան չար մահուամբ, եւ ոչ կարացին հանդիպել ինձ: 24 Եւ ասէ Տէր. Արի եւ երեւեանց դոցա եւ համբերեա՛, զի բազում նեղութիւնք հասանեն քեզ, զի ոչ են ընդունելոց զքարոզութիւն Աւետարանի իմոյ աստ, բայց ՚ի բազմաց սակաւ ժողովուրդ. եւ ես պահեցից զնոսա, եւ առից զնոսա առ իս. եւ որք կատարեցան վասն անուան իմոյ, տաց նոցա տեղի ՚ի տան չար իմոյ⁴: 25 Ասէ թաղէոս ցՏէր. Եւ⁴ ես փութամ հասանել ՚ի լոյս աստուածութեանդ քո, եւ լնուլ երկնային սիրովն ՚ի լուսեղէն փառաց քոց: 26 Եւ ասէ Տէր. Խնդա՛ եւ ուրախ լեր, զի կատարեցից զկամս հայցման քո. եւ աւրհնեալ զնա համբարձաւ: 27 Եւ դարձաւ սուրբ առաքեալն ուրախութեամբ մեծաւ ՚ի Փրկչէն:

« Տէ՛ր Բարձ. Ժ. 9 15:
 1 եւ ամենայն, որ
 2 կեցցէ փ/ս ապրեսցի
 3 Տէ՛ր Թ. 4. 9: 18:
 4 բերան իմ
 5 Հմմտ. Գ. 1. 4. Ժ. 1. 8:
 6 Տէր իմ եւ

28 Գնաց ՚ի բանդն ՚ի գիշերին եւ պահէին զսուրբն Սանդուխտ եւ զայլ հաւատացեալսն. եւ բացան դրուներն ինքնին, եւ եմուտ ՚ի ներքս սուրբ առաքեալն եւ ասաց. Խաղաղութիւն ընդ ձեզ սիրելիք Քրիստոսի: 29 Եւ տեսեալ զսուրբ առաքեալն զաւրանային: 30 Եւ եկեալ առ սուրբն Սանդուխտ՝ համբուրեաց⁵ զկապանս⁶ նորա, եւ ասէ ցնա. Երանի՛ է քեզ դուստր երկնաւոր թագաւորին. եւ զաւրացուցեալ զնոսա բանիւք սուրբ աւետարանին ՚ի սէրն Քրիստոսի, նշանեաց լուռ կալ⁷ եւ աղաւթել: 31 Եւ ինքն տարածեալ զձեռս իւր յերկինս ասէ. Գոհանամ զքէն Տէր իմ եւ Աստուած Յիսուս Քրիստոս Միածին Որդի Աստուծոյ, որ վասն փրկութեան ազգի մարդկան եկիր յերկիր. հայեաց այժմ⁸ յերկնից ՚ի պատրաստ բնակութեանէ քումմէ՛ յաղախին քո Սանդուխտ, որ ետ զտղայութիւն իւր քեզ. արդ պահեա՛ զսա, Տէ՛ր իմ, եւ զաւրացո՛ ՚ի պատերազմիս, եւ զընկերս սորա, եւ ծագեա՛ զլոյս աստուածութեան քո ՚ի վերայ սոցա, եւ արա յամալթ զխաւարակուլ թշնամին. վասն զի դու միայն ես Աստուած աստուածոց եւ Տէր տերանց. երեւեցո՛ զնշան զաւրութեան քո ՚ի վտանգեալս մարմնով, զի քո են եւ ՚ի քո ահեղ անունդ եղիցին զաւրացեալք մինչեւ յաւիտեան: 32 Եւ ՚ի կատարել աղաւթից սրբոյն եղեւ թնդիւն⁹ սաստկութեան, եւ վերացաւ ձեղուն բանդին եւ ծագեաց լոյս յերկնից, որ¹⁰ առաւել

5 համբուրել
 6 Բ գպատկերս: Բայց թաղէի աստուածընկալ շրթանցն վայելչագոյնի՞ ըստ բնագրիս, հրեղէն համբոյրք կապանացն, որ զողջախոտ տատրակն Քրիստոսի պարաւանդեալ պրկէին: Քանի՛ վսեմք եւ սիրալիք այս աղապատանք առաւելոյն Քրիստոսի:
 7 լռել փ/ս լուռ կալ
 8 Զի՛ք այժմ
 9 Բնդիւն եւ ահ
 10 Զի՛ք որ

էր¹ քան զճառագայթս արեգական. եւ 'ի մէջ լուսոյն ձայն երկնաւոր աւետեաց, որ ասէր առ նահատակսն. Քաջալերեցարուք եւ պինդ կացէք, զի ես եկից եւ առից զձեզ առ իս: 33 Եւ դու, Սանդուխտ, որ եկիր զկնի իմ, եւ արհամարհեցեր զերկրաւոր պատիւս, եւ կոչեցեր զիս հայր, տաց քեզ զվերագոյն լոյսն, եւ առաւել պայծառ քան զբազմաց: 34 Եւ 'ի լսել զերկնաւոր զձայնն լուծան կապանք նոցա, եւ ողջացան անդամք մարմնոց նոցա, եւ յարուցեալ փառաւորեցին զՔրիստոս Աստուած, եւ ասէին միաբան. Տէ՛ր Յիսուս Քրիստոս Աստուած մեր, գոհանամք զքոյ մարդասիրութենէդ, որ եկիր յայց եւ 'ի խնդիր մեզ կորուսելոցս, եւ փրկեցեր զմեզ 'ի դիցապաշտութեանց, եւ ետուր մեզ յաղթող լինել 'ի վերայ աներեւոյթ թշնամւոյն: 35 Եւ քաջալերեցեր զմեզ երկնաւոր ձայնիւ աւետեացդ լուսեղէն ճառագայթիւք աստուածութեանդ քո, եւ զկապանս մեր փշրեցեր, եւ զհարեալ մարմինս մեր ողջացուցեր: 36 Արդ, մեք զի՞նչ կարեմք մատուցանել քում աստուածութեանդ, բայց զանձինս մեր մատուցանեմք 'ի հոտ անուշից Հաւրդ: 37 Եւ կատարեալ զաղաւթսն, եւ 'ի փարատել լուսոյ ճառագայթիցն հայեցեալ տեսին զսուրբ առաքեալն զի աղաւթէր: 38 Եւ յարուցեալ յաղաւթիցն աւրհնեաց զնոսա, եւ համբուրեաց սիրական եւ երկնային համբուրիւն:

39 Եւ տեսեալ զայն նշանս բանտապանացն, եւ հայեցեալ տեսին զդուրս բանտին զի 'ի բաց կային, եւ սուրբ առաքեալն թաղէսս 'ի մէջ նոցա, եւ զահի հարեալ 'ի լուսոյն դիմեցին 'ի ներքս. եւ անկան առաջի սուրբ առաքելոյն դողալով եւ ասեն. Եւ մեք հաւատամք յԱստուածն քո, զոր դու քարոզես սուրբդ Աստուծոյ. ընկալ եւ խառնեա զմեզ 'ի թիւ հաւատացելոցդ. եւ փարէին զոտիւք առնն Աստուծոյ,

եւ աղաչէին արտասուաւք եւ ասէին. Թող մեզ սուրբդ Աստուծոյ, զի ոչ 'ի կամաց, այլ ակամայ պահէաք զգունդս սուրբ հաւատացելոցդ 'ի ծանր նեղութեան, վասն ահի անաւրէն թագաւորին: 40 Եւ իբրեւ տեսաք զլոյսն ծագեալ 'ի վերայ ձեր 'ի բանտիդ, տեսաք լուծեալ զկապանս դոցա, ծանեաք եւ զքեզ 'ի մէջ դոցա, որ էիր վարդապետ դոցա եւ առաջնորդ երկնաւոր լուսոյն: 41 Ծանեաք հաստատապէս, եւ զիտացաք թէ նա է արարիչ երկնի եւ երկրի զոր դու քարոզես: 42 Եւ հաւատացաք ամենայն խորհրդովք մերովք, եւ խոստովանիմք թէ նա է Աստուած, եւ ոչ ոք կարէ մեկնել զմեզ յԱստուծոյն քում², ոչ կապանք եւ ոչ նեղութիւնք: 43 Արդ, արի փութա՛, սո՛ւրբդ Աստուծոյ, եւ խառնեա՛ զմեզ 'ի գունդն Քրիստոսի, գուցէ մեռանիմք յահի փառաց Աստուծոյն քո:

44 Եւ զիտաց սուրբ առաքեալն եթէ 'ի Տեսունէ Աստուծոյ եղեւ կոչումնն, եւ տեսին զլոյսն ծագեալ յերկնից, եւ զձայն ահեղ հնչմանն. ասէ ցնոսա. Եղբա՛րք³ իմ, մի՛ երկնչիք. փոխանակ զի նուիրեցէք զձեզ Աստուծոյ, եւ հաւատացէք 'ի Միածին Որդին՝ 'ի Տէր մեր Յիսուս Քրիստոս, եւ 'ի Սուրբ Հոգին, եւ ես աղաչեցից վասն ձեր զՔրիստոս, եւ շնորհեցէ թողութիւն ձեզ, զի զայն յանգիտութեան արարէք. զի մարդասէր է Տէրն մեր եւ ողորմած, եւ կամի գտանել զամենեսեան, որք կորուսեալ էին 'ի մեղս, որպէս եւ դուք էիք: 45 Արդ, սիրեաց զձեզ վասն բազում ողորմութեան իւրոյ, եւ ազդեաց զլոյս աստուածութեան իւրոյ 'ի սիրտս ձեր. եւ արար զձեզ ճանաչել զնա, զի նա միայն է Աստուած, եւ չիք այլ ոք: 46 Արդ, պի՛նդ կացէք եւ զաւրացարուք 'ի հաւատսն Քրիստոսի Աստուծոյ, եւ մոռացարուք զձեր սնտի եւ զխաբէական մոլորութիւնսդ: 47 Եւ իբրեւ զաղա-

1 Չիֆէր

2 Բ՛ի սիրոյ ցորս

3 Բ՛ որդեակի իմ

րեաց սուրբ առաքեալն 'ի խաւսելոյ, ասէ ցնոսա. Արիք աղաւթեցէ՛ք. եւ ինքն հայեցեալ յերկինս հառաչելով ասէ. Հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որով¹ կամեցար եւ ծանուցար սոցա, եւ կոչեցեր առ քեզ. արդ, պահեա՛ զսոսա սուրբ աջովդ, եւ մի՛ տար խոտորել յաջ կամ յահեակ, եւ բեւեռեա՛ զսոսա 'ի ջերմեռանդն գուլթ աստուածութեանդ քո. սրբեա՛ զսոսա երկնային ազատութեամբդ, զի միաւորեալ բեւեռեսցին 'ի սէր Միածնի Որդւոյ քո սիրելւոյ:

48 Եւ կատարեալ զաղաւթսն, առեալ 'ի նմին գիշերի մկրտեաց զնոսա յանուն Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ: 49 Եւ էին նոքա թուով երեսուն եւ երեք ընդ այր եւ ընդ կին, որք 'ի ժամուն յայնմիկ հաւատացին. եւ էին յազգէ բանդապահացն: 50 Իսկ անիծեալն սատանայ եղեալ 'ի կերպարանս առն միոյ, եւ եկեալ 'ի բանդն կայր 'ի հեռաստանէ, ձայն բարձեալ առ բանդապանսն ասէր. Զի՞նչ պակաս էր ձեզ զի թողէք զմեծ աստուածն Անահիտ, եւ զմայր աստուածոցն Պիսիդովն², եւ դուք մոլորեցարուք զհետ առն միոյ Հրէի, որ ուսոյց ձեզ նոր ուսումն, եւ խաբեալ զմիտս ձեր կորոյս. եկայք դարձարուք, եւ պագէք երկիր Անահտայ. եւ ես աղաչեցից զաստուածսն ամենայն՝ որ առնէ ձեզ թողութիւն: 51 Եւ իմացեալ Թաղէոսի զխորամանկութիւն չարին ասէր. Ո՛վ բանսարկու չարեաց, լե՛ր յետս դարձեալ թշուառական: 52 Եւ լուեալ սատանայի զձայն սուրբ առաքելոյն ասէր. Զձայնդ քո լսեմ, այլ զիտեմ ոչ ուր ես: 53 Ասէ սուրբ առաքեալն ցատանայ. Եւ այլ մի տեսցես զծառայս Քրիստոսի Աս-

տուծոյ. ո՛վ աղտեղի եւ պիղծ, չար եւ անամաւթ. մինչեւ յե՞րբ ոչ ամաչես դու յԱստուծոյ. երկիր 'ի զաւրութենէն Աստուծոյ, եւ երթ յետս չարագլուխ վիշապ: 54 Եւ 'ի սաստել սուրբ առաքելոյն՝ եղեւ խաւարեալ չարն, եւ տանջէր 'ի հրեշտակաց սրբոց: 55 Եւ տեսեալ նորահաւատիցն զաններելի տանջանս չարին՝ հաստատէին 'ի հաւատսն Քրիստոսի. եւ ձայն բարձեալ սատանայի՝ լայր դառնապէս, եւ ասէր Եղճկ եղէ ես որ յաղթեցայ խաչելոյն, եւ կորեայ. բայց զիտեմ զի՛նչ արարից, մտից 'ի սիրտս իշխանացն եւ զբողոքից զնոսա հանդերձ թագաւորան, եւ արասց զձեզ սրամահ: 56 Ասէ սուրբ առաքեալն. Ե՛րթ յետս, սատանայ, սաստեսցէ Տէր 'ի քեզ: 57 Եւ իբրեւ լուաւ եղեւ անհետ 'ի տեղւոյն, երթեալ մտանէր յարքունիսն, եւ զբողոքս զբարբարոսսն 'ի վերայ սրբոցն:

58 Եւ իբրեւ եղեւ առաւաւտ, խորհուրդ արարեալ թագաւորին ³վասն դստերն իւրոյ Սանդիստոյ, թէ զի՞նչ պարտ է առնել. վասն սպանման ոչ կարէր տալ հրաման, վասն աղէտի գլխոյ հայրութեանն, զի առաւել սիրէր, եւ մինչ յիշէր լայր դառնապէս: 59 Ապա յղէր 'ի բանդն նախարար զոմն ամել զսուրբն Սանդուխտ, եւ ⁴յուզեալ զաշխարհապողոտայսն, զի գտեալ ամցեն զսուրբ առաքեալն Թաղէոս որ մոլորեցոյց դուստրն իւր. եւ իբրեւ եհաս իշխանն 'ի բանտն բազում ամբոխիւ, ետես զդուռն բանդին 'ի բաց, եւ զարմացաւ. հայեցեալ 'ի ներքս տեսանէր լոյս սաստիկ շուրջ զնոքաւք, ամբոխ բազում. եւ սուրբ առաքեալն կայր յոտն, եւ ուսուցանէր նոցա զբանն կենաց: 60 Եւ իբրեւ ետես զամենայն եւ զլոյսն զի առաւել պայծառանայր, զահի հարեալ երկիր կործանեցաւ, եւ տանջէր երեւոյթ տանջանաւք եւ ձայն ահեղ զնոքաւք: 61 Եւ ի-

1 Բ որովհետեւ

2 Պիսիդովն թէ աստ զնեպտունոս իմասցում¹ ոչ նա մայր աստուածոց, այլ եղբայր նանաչի դիցափորն Արամագղայ. բայց բուի թէ զնոյն ինքն յԱրամագղ կամէր ասել. զի եւ ստորեւ Սանատրուկ յիշէ զնոյն ընդ Անահտայ:

3 Բ վասն չքնաղագեղն Սանդիստոյ

4 Բ յղեալ ընդ աշխարհապողոտայսն

մացեալ սրբոյ առաքելոյն, ելեալ 'ի դուրս տեսանէր զի անկեալ թաւալէին ընդ գետին, եղ ձեռն 'ի վերայ եւ բժշկեաց զնոսա. եւ հաւատաց իշխանն եւ յիսուն այր ընդ նմա: 62 Եւ էր այրն մեծ կարգեալ 'ի վերայ ամենայն դիցն, եւ հրամանատար ամենայն տանն արքունի. նա էր երկրորդ տէրութեանն Հայոց, յայնժամ սատանայի ՚իսիդբս զծնկով առեալ լայր դառնապէս եւ ասէր. Ձմեծ գէն գլխոյս իմոյ կորուսի: 63 Եւ իբրեւ ոչ կարէր մատել 'ի բանդն յահէ երկնաւոր գաւրութեանն, փութով հասանէր յարքունիսն, եւ գրգռեալ դառնացուցանէր զչար եւ զանաւրէն թագաւորն. ապա հրաման տայր սրով սպանանել. եւ կատարեցան յաւուր յայնմիկ ոգիք երկերիւր: 64 Եւ եղեւ ձայն ասեղ, եւ թնդիւն երկնաւոր գաւրացն, որ իջեալ ողջունէին զսուրբ նահատակսն, եւ յահեղ ձայնէն բազումք կորեան յանաւրինացն: 65 Եւ իբրեւ եղեւ զիչեր, կայր լոյսն երկնաւոր համատարած 'ի վերայ նոցա. յայնժամ յղէր 'ի տուն իւր սուրբն Սանդուխտ գաղտ 'ի հաւրէն իւրմէ եւ տայր բերել բարակ կտաւս, եւ առեալ զհաւատացեալ սուրբ ընկերսն, ամփոփէր զմարմինս նոցա, համբուրէր եւ ասէր. Երանի՛ է ձեզ, եղբարք իմ եւ քորք. որք արժանի եղէք երկնաւոր ուրախութեանցն, յիչեցէ՛ք եւ զիս զաղախինս ձեր. եւ թաղէր զնոսա մատ յապարանս իւր, եւ տայր զգուշութիւն, զի մի ոք գիտասցէ յարքունի տանն. եւ ինքն փութով հասանէր 'ի բանդն:

66 Եւ տեսեալ զսուրբ առաքեալն զի աղաւթէր եւ լոյս մեծ 'ի վերայ նորա, գահի հարեալ սուրբն Սանդուխտ՝ անկանէր 'ի վերայ երեսաց իւրոց արտասուաւք եւ համբուրէր զգարչապարս առնն Աստուծոյ եւ ասէր. Տէ՛ր իմ եւ հա՛յր, որ գտեր զիս զմոլորեալս, եւ ծանուցեր ինձ գերկնաւոր զՏէրն իմ զՅիսուս Քրիստոս զՄիածին Որ-

դին, այժմ աղաւթեա՛ վասն իմ եւ աւրհանեա՛ զիս, զի եւ ես փութացեալ հասից ընկերացն իմոց, եւ եղէց արժանի տեսանել զՏէրն զՔրիստոս քեւ հանդերձ: 67 Եւ տեսեալ սուրբ առաքելոյն զարտասուս սրբոյ կուսին Սանդխտոյ, եւ զՋերմեռանդն գութ սիրոյ նորա առ Քրիստոս, եւ ասէր. Երանի՛ է քեզ, դո՛ւստր երկնաւոր Թագաւորին, համբերեա՛ աստ ժամանակ², եւ այժմ տեսանես զլոյսն ամենայն արարածոց: 68 Քաջալերէր եւ զայլ հաւատացեալսն սուրբ բանիւ աւետարանին եւ ասէր. Պի՛նդ կացէք, զի այժմ առնուք զլուսեղէն պսակն: 69 Եւ կատարեալ զխաւսն մատուցին առաջի հաց. եւ առեալ զհացն աւրհանեաց եւ ետ սրբոյն Սանդխտոյ եւ ընկերացն. ճաշակեաց սակաւիկ մի եւ ինքն. եւ իբրեւ յարեան՝ աւրհանցին եւ գոհացան զՍուրբ Երրորդութենէն: 70 Եւ կնքեալ զանձինս իւրեանց նշանաւ սուրբ խաչին, եւ ննջեցին:

71 Իսկ սուրբ առաքեալն կայր եւ աղաւթէր ասելով. ³Տէ՛ր Աստուծո՞ իմ, Հա՛յր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, չեմ բաւական գոհանալ զառատ ողորմութենէդ քումմէ, որ կոչեցեր զիս զանարժանս 'ի վիճակ առաքելութեան, եւ սրբեալ մաքրեցեր եւ արարեր զիս տաճար Սուրբ Հոգւոյդ, եւ ետուր ինձ վիճակ զաշխարհս զայս, ուր քարոզեմ զբանս սուրբ Աւետարանի քո. զի որ հաւատասցեն 'ի սուրբ ասեղ անունդ քո, կատարեալս ընկալցիս զնոսա 'ի հոտ անուշից 'ի լոյս աստուածութեանդ քո: 72 Եւ խառնեա՛ զնոսա 'ի հրեշտակերամ դասս վերին բանակացն. ընկալ եւ զմեզ պատարագ 'ի հոտ անուշից աստուածութեանդ քո. պահեա՛ եւ զտղայս զայս Սանդուխտ, զի է սուրբ կուսութեամբ. եւ տուր համբերութիւն սմա պատերազմել զհանդէս մարտիրոսական ըն-

1 Բ Խեղբ գծնկով արկեալ

2 Բ փոքր մի

3 Ձիք Տէր ... իմ

թացիցն, եւ առնուլ զպսակն լուսոյ 'ի գլուխ իւր: 73 Եւ 'ի կատարել աղաւթիցն, երեւեալ Փրկիչն ասէ. Խաղաղութիւն ընդ ձեզ, սիրելի՛ք իմ. եւ տեսեալ սրբոյն Թաղէսի զՓրկիչն անկաւ 'ի վերայ երեսաց իւրոց, եւ երկիր եպագ նմա: 74 Եւ ասէ Փրկիչն. Լուսայ աղաւթից քոց եւ գոր ինչ խնդրեցեր յինէն ետու քեզ. եւ կատարեսցիս մարտիրոսական հանդիսիւ Սանդիստով հանդերձ եւ այլ աշակերտելովք: 75 Եւ ծագեցից զլոյս աստուածութեան իմոյ 'ի վերայ ոսկերաց ձերոց. եւ ուր կատարեսցին նուէրք ուխտիցն որ վասն անուան իմոյ մատուցանին 'ի վերայ ձեր՝ եղիցին խնդրուածք հայցման նոցա անարգել, եւ առաւել վասն քո: 76 Եւ դու քաջալերեալ երեւեսցիս այսաւր. եւ մի՛ երկիցես եւ մի՛ զանգիտիցես, զի ընդ ձեզ եմ 'ի փրկել զձեզ: 77 Ասէ Թաղէս. Տէ՛ր իմ եւ Աստուած՝ իմ, ողորմեա՛ ինձ. եւ մի՛ թողուր զսոսա, որք հաւատացին 'ի սուրբ անունդ քո, եւ յետ մահուն իմոյ պահեա՛ զնոսա աջով քով. եւ մի՛ թողուր զվիճակս քո զայս, զոր շնորհեցեր ինձ, Տէ՛ր իմ. եւ բարձեալ զկուպաշտութիւն մոլորութեան 'ի բարբարոս ազգէս ահեղ աստուածութեամբք քով, եւ մի՛ առներ ¹ըստ դոցա անաւրէն եւ չարագործ. զի մոլորեցոյց զդոսա բանսարկուն չար, արա՛ զնոսա յամալթ եւ հալածական, եւ խորտակեալ ընկճեա՛ զնա, եւ զմեքենայս չարութեան նորա, եւ վիճակեա՛ զսոսա վերստին վիճակաւն 'ի լոյս աստուածութեանդ քո. եւ արա՛ զսոսա ժողովուրդ յաւիտենական, եւ երկնաւոր գաւթին ծնունդք. զի միաբան փառաւորեսցեն ²զսուրբ աստուածութիւն անուշահոտ վարուք իւրեանց: 78 Եւ ասէ Տէր. Լուսայ աղաչանաց քոց, ոչ թողից զհաւատացեալս 'ի ձեռաց իմոց մինչեւ 'ի վախճան աշխարհի, եւ ոչ զվիճակ բամին

քո. այլ փութով կատարեցից զկամս քո, եւ դրոշմեցից զդոսա 'ի գունդ աստուածութեան իմոյ, եւ արարից զդոսա 'ի գունդ լուսոյ աստուածութեան իմոյ: 79 Եւ արարից զդոսա ինձ ժողովուրդ սեփհական, եւ տաց զաւետիս իմ 'ի միտս նոցա, եւ արարից փախստական զչար գազանն 'ի դոցանէ, եւ պարսպեցից զդոսա յուսով աստուածութեան իմոյ: 80 Հայեցայց 'ի դոսա եւ ողորմեցայց դոցա. եւ դու խնդա՛ եւ ուրա՛խ լեր: 81 Եւ աւրհնեալ համբարձաւ:

82 Եւ մատուցեալ սուրբ առաքեալն զարթոյց զհաւատացեալսն եւ զաշակերտսն իւր, եւ զսուրբ աղախինն Քրիստոսի Սանդուխտ, եւ ասէ. Աղաւթեցէ՛ք. եւ ինքն սկսաւ աղաւթել եւ ասել զսաղմոսս զայս, Աւրհնեցից զՏէր յամենայն ժամ: 83 Եւ կատարեալ եւ այլ սաղմոսս բազում, եւ արտասուաւք հանդերձ փառաւորէին զԱստուած, եւ էին ուրախութեամբ մեծաւ: 84 Իբրեւ կատարեցին զաղաւթսն, ասէ սուրբ առաքեալն ցհաւատացեալսն. Պի՛նդ կացէք եւ համբերեցէ՛ք, զի այժմ առնուք զպսակն լուսոյ 'ի գլուխս ձեր: 85 Եւ հայեցեալ 'ի սուրբն Սանդուխտ ետես զերեսս նորա արտասուաւք լի, եւ ասէ. Մի՛ վատասրտիր, եւ ³մի՛ երկնչիր: 86 Կարծելով կարծեաց թէ՛ երկեաւ: 87 Եւ ասէ սուրբն Սանդուխտ. Տէ՛ր իմ եւ Հայր Հոգւոյ իմոյ, ոչ եմ վատասրտեալ, այլ ցնծամ եւ ուրախ եմ եւ փութամ տեսանել զՔրիստոս յոյս իմ, եւ լինել առաջի նորա յամենայն ժամ, զի կարի անձկացեալ եմ տեսանել զլոյսն երկնային: 88 Եւ ասէ սուրբ առաքեալն. Երանի՛ է քեզ, քո՛յր իմ եւ դո՛ւստր, զի այժմ հասանես առ որ անձկացեալն ես, եւ առնուս զպսակն լուսեղէն 'ի գլուխ քո. եւ լինիս յանդիման առաջի Աստուծոյ երկնաւոր թագաւորին. զի պարծեալ եւ գեր 'ի

1 Բ ըստ դոցա անիրաւութեանն
2 Բ գտուրբ անունն քո

՝ Սաղմ. ԼՊ. 2
3 Բ Աղախինն Քրիստոսի, մի՛ երկնչիր, զի կարծեր թէ երկեաւ

վերոյ գտանիս քան զբազումս վասն ջերմեռանդն զնացից քոց:

89 Իբրեւ դադարեաց, եղեւ առաւաւտ, եկին հասին իշխանքն բազում մեծամեծաւք ՚ի դուռն բանդին: 90 Հանեալ արտաքս գտուրբ առաքեալն եւ զՍանդուխտ, եւ զայլ քրիստոնեայսն, որ էին ՚ի բանդի, եւ ածին կապանաւք յապարանս թագաւորին, եւ գտուրբն Սանդուխտ արձակ: 91 Ասէ սուրբն Սանդուխտ մեծաբարբառ ձայնիւ ցհաւատացեալ ընկերակիցսն իւր ցնծալով. Եղբար՛ք իմ, պի՛նդ կացէք եւ զաւրացարո՛ւք ՚ի Քրիստոս, զի ոչինչ են սպառնալիք երկրաւոր թագաւորացս. յայն միայն հայեցարուք, յոր հաւատացէքն՝ յերկնաւոր թագաւորն: 92 Նմա տո՛ւք զմիտս եւ զխորհուրդս ձեր, եւ նա տացէ ձեզ զաւրութիւն, զի նա միայն է Աստուած, եւ չիք այլ ոք. նա պահեսցէ զձեզ ՚ի սնտոի եւ ՚ի խաբէական պատրանացս:

93 Եւ մինչդեռ խաւսէր ընդ սուրբ ընկերակիցսն իւր, խնդրեաց ՚ի ներքս թագաւորն գտուրբն Սանդուխտ, եւ մտեալ ՚ի ներքս, ասէ թագաւորն. Մա՛ւտ եկ, դո՛ւստր իմ. եւ նա ոչ հայեցաւ ՚ի նա, եւ ոչ զնաց մաւտ: 94 Եւ ասէ թագաւորն. Ուրացա՞ր զիս, եւ սիրեցե՞ր զմոլորեցուցիչն. եթէ ոչ դառնաս յամառ մտաց քոց՝ երդուեալ յաստուածսն ամենայն՝ չար մահուամբ կորուսից զքեզ ու զնա: 95 Ասէ սուրբն Սանդուխտ. Որ կոչես մոլորեցուցիչ, նա զիս ՚ի խաւարէ ՚ի լոյս փոխեաց, եւ ծանոյց ինձ զՏէր իմ զարարիչն երկնի եւ երկրի, եւ զՈրդին Միածին, եւ զՍուրբ Հոգին որ ՚ի նոցունց. ես փութամ առ Տէր իմ Քրիստոս, նա է Տէր տերանց եւ թագաւոր թագաւորաց, որ է լոյս եւ կեանք ամենայն արարածոց: 96 Եւ ասէ թագաւորն. Ո՞վ է նա որ կոչես Աստուած եւ Հայր: 97 Ասէ սուրբն Սանդուխտ. Աստուած, նա է Աստուած, որ արար զամենայն յոչնչէ, եւ հաստատեաց զամենայն արարածս բա-

նիւ բերանով իւրով, եւ ձեր մոլորեալ միտք եւ խաւարեալ խորհուրդք թողեալ զԱստուած զարարիչն ձեր, որ զձեզ յոչնչէ արար եւ հաստատեաց. եւ դուք պագանէք երկիր ուրուականաց կոոց մեռելոտեաց, որ ոչ տեսանեն եւ ոչ լսեն յորում բնակեալ են դեւք, որ խաւարեալ կորուսին զմիտս ձեր, եւ արարին զձեզ որդիս գեհեհին: 98 Արդ, ունիք երթալ ՚ի խաւարն արտաքին գործակցաւն ձերով սատանայիւ, ուր լալ աչաց է եւ կրճել տատմանց:

99 Յայնժամ սրտմտեալ թագաւորն, ետ հրաման կապել եւ քերել զի այրեսցի: 100 Յայնժամ մատուցեալ դահճապետն կապեաց գտուրբն Սանդուխտ. ապա ընթացեալ ոմն ՚ի հաւատացելոցն պատմեաց սրբոյ առաքելոյն, եթէ զՍանդուխտ կապեցին եւ կամին չարչարել: 101 Իսկ սուրբ առաքեալն յարտասուս եղեալ ասէր. Տէ՛ր իմ Յիսուս Քրիստոս, հայեա՛ց յաղախին քո. զաւրացո՛ւ եւ արա՛ յամաւթ զչար թշնամին ճշմարտութեան: 102 Իսկ սուրբն Սանդուխտ մինչդեռ կայր կապեալ եւ ձեռն արկեալ կամէին քերել, աղաղակեաց յերկինս մեծաբարբառ արիաբար եւ ասէ. Տէ՛ր իմ Յիսուս Քրիստոս, փութա հա՛ս ինձ յաւանականութիւն, զի դու ես իմ Հայր եւ Արարիչ. ապաւէն եւ կեանք, մի՛ թողուր զմոլորեալ ոչխարս հաւտի քո: 103 Եւ յաղաղակել սրբոյ աղջկանն, եղեւ շարժումն, եւ ծագեաց լոյս յերկնից, եւ եղեւ ձայն որ ասէր. Քաջալերեա՛ց, դո՛ւստր իմ, զի ընդ քեզ եմ ՚ի փրկել զքեզ, եւ լուծան կապանք նորա, եւ ՚ի լուսոյ փայլատականցն կորեալ դահճապետն, եւ բազումք ընդ նմա. եւ պատեաց ահ զամենեսեան թագաւորաւն հանդերձ, ¹կարծէին զամենեսեան կորուսանել: 104 Իսկ սուրբն Սանդուխտ փութով հասանէր, ուր ունէին գտուրբ առաքեալն. եւ եկեալ փարէր գոտիւք նորա, եւ ասէր. Տէ՛ր իմ եւ հա՛յր

1 Բ Կարծէին ամենեցուն կորնչել

հոգևոյ իմոյ, ահա զիս Քրիստոսս փութով արձակեաց 'ի կապանաց, եւ յամալթ արար զսատանայ եւ զարբանեակս նորա. եւ յարուցեալ գոհանային զՏեառնէ: 105 Յայնժամ գայր իշխան ոմն հրամանաւ թագաւորին, եւ անկանէր առաջի սուրբ առաքելոյն ասելով. Յղեաց թագաւորն առ քեզ, եւ ասէ. Մեղա՛յ քեզ եւ Աստուծոյն քում. թո՛ղ մեզ եւ աղաւթեա՛, զի անցցէ բարկութիւն ահեղ սաստկութեանս, զի կորնչիմք իսպառ. եւ զոր ինչ կամիս դու առնեմք. հրամայեաց եւ զձեզ արձակել 'ի կապանացդ:

106 Եւ իբրեւ ետես զնա եւ լուաւ զհրամանս թագաւորին, յարտասուս եղեալ աղաւթէր եւ ասէր. Հա՛յր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, հայեա՛ց 'ի ժողովուրդս քո, եւ մի՛ առներ ըստ դոցա մեղանաց. թո՛ղ դոցա, Տէ՛ր. զի ոչ գիտեն զինչ գործեն. եւ 'ի կատարել աղաւթիցն, լուծան կապանք ամենայն հաւատացելոցն: 107 Եւ դադարեաց ձայն ահեղ շարժմանցն, եւ տեսեալ իշխանին երկեաւ: 108 Ասէ առաքեալն. Մի՛ երկնչիր, երթ պատմեա՛ թագաւորին քում զոր ինչ տեսերդ: 109 Եւ երթեալ ասէ ցթագաւորն. Տեսի զառաքեալն ոչ որպէս մարդ՝ այլ առաւել քան զմարդ. եւ լոյս շուրջ զնովաւ, եւ որպէս աղաւթեաց՝ անցանեն այն ցասումն յերկրէս¹: 110 Իսկ թագաւորն զրգոեալ 'ի չարէն ասէ. Միթէ անցո՞յց նա զբարկութիւնս, այլ Արամագդ եւ Անահիտ մեծ աստուածքն, որ են շինութիւն աշխարհիս եւ փառք մեր թագաւորացս:

111 Յայնժամ հաւատաց իշխանն ամենայն տամբ իւրով, մկրտեցաւ եւ կոչեցաւ անուն նորա Սամուէլ. զի ոչ գտանէր նման նորա 'ի մէջ աշխարհիս Հայոց. փոքրեաց զհերս իւր եւ եղեւ աշակերտ սուրբ առաքելոյն: 112 Եւ լուեալ թագաւորին

տայր վարել բեւեռս հրացեալ ընդ ուսս նորա, եւ այնպէս կատարեցաւ. եւ այլք յաշակերտաց սրբոյ առաքելոյն, որ եկեալ էին ընդ նմա բազումք: 113 Եւ 'ի ժամուն դիպեցան չորք եւ երեք² յաշխարհէս Հայոց, եւ զնոսա չարչարեալ զոմանս հրացեալ երկաթով զլսուունս ծակէին, եւ զայլսն սրով սպանանէին, եւ կատարեցան յաւուր յայնմիկ ութ նահատակք. եւ եղեւ նշան լուսոյ 'ի վերայ նոցա, եւ ահ սաստկութեան 'ի վերայ անաւրինացն: 114 Իբրեւ եղեւ գիշեր, եկեալ սուրբ առաքեալն ուխտընկալաւքն, առեալ զմարմինս նոցա պատեաց պատուական հանդերձիւք իւրովք եւ խնկաւք. եւ եղ 'ի փոքր ձորակին ուր էին աւթեվանք նոցա, եւ ետ զգուշութիւն զի մի ոք գիտասցէ: 115 Ի նմին գիշերի եկեալ սուրբն Սանդուխտ, անկանէր առաջի սուրբ առաքելոյն ասելով. Երանի՛ է քեզ, Տէ՛ր իմ հայր, զի զբազումս արարեր արժանի քրիստոսական պսակին: 116 Ասէ սուրբ առաքեալն. Երանի՛ եւս քեզ է, որ արժանի եղեր զնոսա յղարկել. խնդա՛ եւ ուրախ լեր, զի փութով հասանես դու առ Քրիստոս. եւ մխիթարէր սուրբն Սանդուխտ զամենայն հաւատացեալսն. կերակրէր զնոսա հացիւ եւ զգեցուցանէր հանդերձիւ, եւ ոչինչ առնէր նոցա պակաս, եւ քարոզէր զբանն կենաց, եւ դարձուցանէր զբազումս առնելով նշանս եւ սքանչելիս:

117 Յայնժամ հաւատաց կին ոմն 'ի մեծ ազգէ ամենայն տամբ իւրով, որ էր 'ի մերձաւորաց թագաւորին, որում անուն էր Զարմանդուխտ: 118 Եւ առեալ սրբոյ առաքելոյն մկրտեաց զնոսա ոգիս երկերիւր, եւ լուեալ թագաւորին տայր հրաման զԶարմանդուխտ սրով սպանանել միայն: 119 Եւ իբրեւ կատարեցաւ, եղեւ 'ի վերայ նորա նշան, եւ բազումք հաւատացին յաւուր կատարման սրբոյն. եւ լուեալ թագա-

1 Բ Անց ամենայն ցասումն յերկրէս

2 Այսպէս յօր. 'ի միւսումն պակասի:

ւորին մրմոռեալ իբրեւ զառեւծ 'ի վերայ սրբոյն Սանդիստոյ, եւ ասէր. Նա զամենեսեան առաւել մոլորեցուցանէ, եւ տայր հրաման զի սրով սպանցի: 120 Եւ լուեալ սուրբ առաքելոյն զհրաման անաւրէն թագաւորին, աղաւթէր առ Քրիստոս զամենայն զգիշերն վասն սրբոյն Սանդիստոյ:

121 Իբրեւ եղեւ առաւաւտ, եկեալ Սանդուխտ առ սուրբ առաքեալն, անկանէր առաջի ոտիցն համբուրէր եւ ասէր. Տէ՛ր իմ, խորհէի 'ի սրտի իմում թէ զի՞նչ արասցէ ինձ Քրիստոս լոյսն իմ. որպէս եղէ 'ի քուն յայսմ գիշերի, լոյս ծագեաց 'ի վերայ իմ. եւ 'ի մէջ լուսոյն այր մի լուսազգեստ, որ ոչ կարէի առնուլ զնմանութիւն յառաւել լուսոյ ճառագայթիցն. ճայնեաց զիս եւ ասէ. Սանդուխտ, արի փութա՛ւ եւ զգեցի՛ր զլոյս իմ. եւ ես յարտասուս եղեալ ասեմ. Տէ՛ր իմ, չեմ արժանի. եւ սաստելով զգեցոյց ինձ զլոյսն որպէս զվերարկու. եղ եւ պսակ լուսեղէն 'ի գլուխ իմ, եւ զարդարեաց զիս լուսեղէն զարդուք, եւ ես հիացեալ կայի. եւ ասէ. Ուրա՛խ լեր, Սանդուխտ, զի ոչ թողից զքեզ: 122 Եւ յանկարծակի եղեւ թնդիւն ասեղ եւ զարթոյց զիս. եւ ես յարուցեալ փառաւորեցի զՔրիստոս Աստուած, որ արժանի արար զիս այսպիսի սքանչելի տեսեան: 123 Իբրեւ լուաւ սուրբ առաքեալն, իմացաւ թէ այսաւր փոխի յաշխարհէ, եւ զգենու զփառս լուսեղէն դասուց. եւ առնու զպսակն լուսոյ 'ի գլուխ իւր, եւ յարտասուս եղեալ սուրբ առաքեալն ասէ. Երանի է քեզ Սանդուխտ, զի այս որ երեւեցաւ քեզ ինքն Քրիստոս է. վասն զի ետես զՉերմեռանդն գութ սիրոյ քո առ ինքն, վասն այնորիկ երեւեցաւ քեզ, զի առաւել հաստատեսցէ զքեզ 'ի լոյս աստուածութեան իւրոյ. եւ լոյս նոր զգեցոյց քեզ որպէս վերարկու, եւ պսակն լուսեղէն 'ի գլուխ քո, վասն զի թողցես զթանձրամած մարմին քո, եւ զգենուս զլոյսն երկնաւոր, եւ զպսակն լուսոյ յաղթութեան մարտիւ-

րոսութեան արժանի լինիս առնուլ 'ի գլուխ քո: 124 Եւ զարդարիլ վերագոյն լուսով, բնակել 'ի լոյս աստուածութեանն. եւ յամենայն ժամ կաս յուրախութեան վերին լուսոյն: 125 Եւ որ ասացն թէ՛ խնդա՛ւ եւ ուրա՛խ լեր, զի ոչ թողից զքեզ, զի անմեկնելի է Քրիստոս 'ի սիրելեաց իւրոց, եւ ուրախ առնէ զամենեսեան որ կան 'ի սէր աստուածութեան նորա:

126 Իբրեւ լուաւ սուրբն Սանդուխտ զպատմութիւն սքանչելի տեսեանն, յարտասուս եղեալ անկանէր առաջի ոտից սուրբ առաքելոյն ասելով. Երանի՛ է քեզ, հա՛յր իմ, որ ծնար զիս վերստին եւ ուսուցեր ինձ զլոյսն կենդանի զՔրիստոս, զի դու եղեր ինձ ճանապարհ կենդանի եւ դեզ անմահութեան. արդ խնդրեա՛ 'ի Քրիստոսէ, զի փութով ժողովեսցէ զիս առ ինքն: 127 Եւ ասէ սուրբ առաքեալն. Ահա փութով հասանես 'ի լոյսն կենդանի առ որ անձկացեալն ես: 128 Եւ ասէ սուրբն Սանդուխտ. Տէ՛ր իմ, աղաչեմ զքեզ, մինչ փոխիմն՝ մաւտ կայցես առ իս, զի ոչ կարեմ տեսել 'ի հոգեւոր սիրոյ քոյ. եւ յարուցեալ աղաւթէին: 129 Եւ համբարձեալ յերկինս զձեռս իւր ասէր. Յիշեա՛ զաղախին քո, Տէ՛ր, եւ տո՛ւր սմա համբերութիւն 'ի պատերազմիս այսաւր, եւ արա՛ յամաւթ զթշնամին. զի ծանիցեն ամենայն հաւատացեալք թէ դու միայն ես Աստուած յերկինս 'ի վեր, եւ յերկիր 'ի խոնարհ: 130 Եւ դարձեալ 'ի սուրբն Սանդուխտ աւրհնեաց զնա եւ ասէ. Պի՛նդ կաց, եւ զաւրացուցէ զքեզ Քրիստոս: 131 Եւ ասա յանկարծակի հասին բարբարոս իշխանքն զաւրականաւքն հանդերձ 'ի դուռնն: 132 Իսկ սուրբ առաքեալն ելեալ զնայր ընդ մէջ նոցա:

133 Յայնժամ տարան զերանելին 'ի տեղի սպանմանն. ասէ ցայնոսիկ որ տանէինն. Համբերեցէ՛ք սակաւիկ մի, զի կացից յաղաւթս առ Տէրն իմ եւ Աստուած:

134 Եւ հայեցեալ յերկինս հանդերձ արտասուաւք եւ ասէ. Հա՛յր երկնաւոր սիրելի Որդւոյ քոյ Յիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ եւ Փրկչի, հայեաց՛ յերկնից ՚ի սրբութենէ քումմէ, եւ արա՛ առ իս զգութ մարդասէր շնորհաց քոց: 135 Եւ ընկա՛լ զաղախին քո, յանուն Որդւոյ քո սիրելոյ ՚ի հոտ անուշից, եւ արա՛ զիս արժանի երկնաւոր լուսոյ աստուածութեան քո, վայելեալ յանսպառ եւ յաւիտենական բարիսն, զոր խոստացար սիրելեաց քոց: 136 Եւ հրաժարեալ ՚ի սրբոյ առաքելոյն ընկալաւ զաւրհնութիւն ՚ի նմանէ. եւ մատուցեալ ՚ի տեղի հանդիսին ասէ. Արիք կատարեցէ՛ք զկամս հաւրն ձերոյ սատանայի. եւ մատուցեալ ինքնին կամաւորութեամբ զպարանոցն: 137 Եւ ձգեալ դահճին զսուրն, կամէր սպանանել զսուրբ կոյսն Սանդուխտ, եւ եհար զգահճապետն եւ սատակեաց զնա: 138 Իբրեւ տեսին բարբարոսքն առաւել զայրացեալ ՚ի չարէ անտի, առեալ զսուրսն դիմեցին ՚ի վերայ նորա, եւ անդէն հարեալք զիրեարս սատակէին: 139 Իսկ սուրբ աղախինն Քրիստոսի կայր յաղաւթս եւ ասէր. Տէ՛ր Յիսուս Քրիստոս, ընկա՛լ զիս ՚ի յարկսդ յաւիտենից, զի ցանկամ եւ ուրախ եմ ընդ չարչարանս եւ ընդ մահ որ վասն անուանդ քո, որ զաւրացուցեր զիս յաղթել որ մարտեան ընդ իս, զի քո է յաղթութիւն եւ քեզ վայել է փառք յաւիտեանս, ամէն: 140 Եւ նոյն ժամայն պատանի ոմն եհար զկուրծս երանելոյ կուսին սրբոյն Սանդխտոյ, եւ ել արիւն եւ բուրեաց հոտ անուշութեան, եւ աւանդեաց զոգին ՚ի Քրիստոս բարի խոստովանութեամբ ՚ի Հայր եւ յՈրդի եւ ՚ի Հոգին Սուրբ: 141 Եւ ծագեաց յերկնից իբրեւ սիւն լուսոյ, եւ եղեւ շարժումն եւ ձայն անհեղ երկնաւոր զաւրաց, որք աւրհնէին զԱստուած, եւ եկաց սիւն լուսոյն ՚ի վերայ սուրբ մարմնոյն գերիս տիւս եւ գերիս գիշերս: 142 Եւ հաւատացին յաւուր յայնմիկ ոգիք իբրեւ երկու հազար ընդ

այր եւ ընդ կին, եւ ոչ մեկնեցան ՚ի տեղւոջն ուր մարմին սրբոյն Սանդխտոյ էր. եւ եկեալ սուրբ առաքեալն ՚ի գիշերի մկրտեաց զնոսա յանուն Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ: 143 Եւ առեալ զմարմին սրբոյն Սանդխտոյ՝ եղ ՚ի նմին տեղւոջ եւ արար աներեւոյթ զհանգստարանն երանելի սուրբ տիկնոջն:

144 Եւ յետ երից աւուրց կատարելոյ սրբոյն Սանդխտոյ մաւտ յառաւաւտն, կայր յաղաւթս սուրբ առաքեալն, եւ երեւեալ Փրկիչն ասէ. Խաղաղութի՛ւն ընդ քեզ, սիրելի՛ իմ. արդ, փութա՛, այսաւր հասանես ՚ի հանդէս մարտին, եւ համբերեա՛ զի բազում չարչարանս ածեն ՚ի վերայ քո. եւ ես ոչ թողից զքեզ. եւ աւրհնեալ զնա եղեւ աներեւոյթ: 145 Իսկ սուրբ առաքեալն աղաւթէր եւ ասէր. Գոհանամ զքէն, Հա՛յր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. որ ոչ թողեր զիս ՚ի ձեռանէ յայս ՚ի բարբարոս երկրիս, այլ առաւել զթացար յիս: 146 Արդ, ընկա՛լ զիս ՚ի հոտ անուշից աստուածութեանդ քո, եւ զաւրացո՛ զիս ՚ի պատերազմիս. ընկալ եւ յիշեա՛ Տէր զաղախին քո Սանդուխտ, որ փոխեցաւն առ քեզ, եւ խառնեա՛ ՚ի գունդս սրբոց քոց, որ վասն անուան քո պատարագեցան, եւ ընծայեա՛ զնոսա ՚ի լոյս աստուածութեանդ քո. պահեա՛ զհաւատացեալս որ ՚ի քեզ ապաւինեցան: 147 Այժմ լո՛ւր պաղատանաց նոցա եւ հայցուածոց՝ Մարդասէ՛ր. եւ մի՛ անտես առներ զխնդրուածս նոցա, որ աղաղակեն առ քեզ ՚ի տուէ եւ ՚ի գիշերի, եւ հեռացո՛ զչար բանսարկուն ՚ի սոցանէ, եւ արա՛ յամաւթ, զի մի իշխեսցէ մերձենալ ՚ի գունդ հաւատացելոց քոց. եւ զաւրացո՛ զծառայքս քո ՚ի սէր պատուիրանի քո համբերական ընթացիւք մինչեւ իսպառ: 148 Եւ իբրեւ կատարեաց զաղաւթսն, աւրհնեաց զհաւատացեալսն եւ ասէ. Որդեա՛կք, որովհետեւ ետուք զանձինս ձեր Աստուծոյ, եւ գրեցայք ՚ի գունդն Քրիստոսի, պի՛նդ կացէք ՚ի հաւատս, եւ զաւ-

րացուցեց զձեզ Քրիստոս Աստուած, եւ բազմացուցեց զձեզ եւ արասցէ յամալթ զբանասարկուն չարեաց, զմոլորեցուցիչն հեթանոսաց: 149 Եւ արկցէ զնա կոխան առաջի ոտից ձերոց մինչեւ յաւիտեան. եւ ես ահա փոխիմ առ Տէրն իմ Քրիստոս, եւ աղաչեցից զնա զի առաքեսցէ զհրեշտակ զաւրութեան իւրոյ, եւ պահեսցէ զձեզ ՚ի չար լծոյ ծառայութեան հեթանոսական մոլորութեանն ուստի էառ զձեզ, եւ պարգեաց ՚ի բովս լուսոյ աստուածութեան իւրոյ, ժողովուրդ սեպհական. արդ, նա է ձեր Հայր, Տէր եւ Թագաւոր, նա պահեսցէ զձեզ եւ ոչ թողցէ:

150 Իբրեւ լուան հաւատացեալքն եթէ փութով փոխի առ Քրիստոս, ամենեքեան եղեն յարտասուս, եւ անկեալ առաջի նորա համբուրէին զոտս նորա եւ ասէին. Տէ՛ր եւ կեցուցի՛չ հոգւոց մերոց, աղալթեա՛ վասն մեր, եւ խնդրեա՛ ՚ի Քրիստոսէ, զի ոչ թողցէ զմեզ ՚ի ձեռանէ: 151 Եղեալ յարտասուս սուրբ առաքեալն ասէր. Տէ՛ր Յիսուս Քրիստոս, մի՛ թողուր ՚ի ձեռանէ զսակաւ ժողովուրդս քո, որ փարին զինեւ, եւ պահեա՛ սուրբ աջով քո: 152 Եւ հրաժարեալ յամենեցունց արձակեաց յիւրաքանչիւր տեղիս:

153 Եւ իբրեւ զնացին հաւատացեալքն երկնաւոր ակհնութեամբն, եկին հասին երկու իշխանք հրամանաւ անաւրէն թագաւորին, եւ ամբոխ բազմութեան ընդ նոսա. յուզէին զամենայն տեղիս, կարծելով թէ ոչ կարեմք գտանել որպէս յերէկն եւ յեռանդն: 154 Եւ իմացեալ սուրբ առաքելոյն ինքնին եկաց առաջի եւ ասէ. Ահա ես եմ, զոր խնդրէք: 155 Եւ նոցա կալեալ ածին առաջի թագաւորին: 156 Տեսեալ զնա թագաւորին ասէ. Դո՞ւ ես Թաղէոս. եւ ասէ, Ես եմ. եւ հայեցեալ ՚ի նա ետես զերեսս նորա առաւել պայծառ եւ ահեղ, երկեաւ. եւ ասէ. Զիա՞րդ գողացար զմիտս չքնաղ կուսին դասերն իմոյ,

եւ զբաւեցեր զնա ՚ի քեզ, եւ հեռացուցեր զնա ՚ի հայրենի աթոռոյս իմոյ, ՚ի ծիրանագեստ եւ յոսկեհոռ պատուոյս. եւ արարեր ատելի աստուածոցն մերոց. եւ արարեր զնա որպէս զմի յաղքատաց, մինչեւ ցասուամն սրտմտութեան իմոյ կորոյս զնա ՚ի սուր անողորմ:

157 Եւ ասէ սուրբ առաքեալն. Որ ասացեր վասն սուրբ կուսին, արդարեւ ես գողացայ զնա ՚ի սառնամանեաց եւ յանդնդային պտուտից չարամեռ եւ խաւարային գործոց չար պաշտամանցն ձերոց, որք ձաւնեալքդ էք Անաստայ կուսմոյ դիւացն: 158 Եւ զբաւեցի զմիտս նորա ՚ի Քրիստոս, ծնանելով երկնաւոր ծննդեամբ սուրբ ակագանաւն, եւ հեռացուցանել զնա ՚ի քո հայրենի պղծութեանցն. զգեցոյց նմա Քրիստոս փառս լուսեղէնս զերկնաւոր ճառագայթսն: 159 Եւ կարծելով քո սպանանել զնա փոխեցաւ ՚ի մահուանէ ՚ի կեանս. եւ թեւագեցեալ ել ՚ի լուսեղէն բանական, ընկալաւ զանթառամ պսակն, եւ միացեալ ՚ի սէր աստուածութեանն խնդրեաց յամենայն ժամ ՚ի մէջ սրովբէական դասուցն փառաւորելով զՍուրբ զերրորդութիւնն. զի անդ է լոյսն անսպառ, եւ կեանքն յաւիտենականք. եւ ձեր մոլորեալ են միտք, եւ խաւարեալ խորհուրդք, եւ թողեալ զարարիչն երկնի եւ երկրի, որ զձեզ յոչնչէ արար, եւ հաստատեաց ՚ի վերայ երկրի, եւ ՚ի նմանէ է ձեզ կեանք եւ շունչ. եւ դուք մոլորեալ երկիրպագանէք կոռոց մեռելոտեաց. վասն զի մոլորեցոյց զձեզ չար եւ անիծեալն սատանայ, եւ արկ զձեզ ՚ի կապանս եւ յորոգայթ մահու, ունիք նովաւ երթալ ՚ի խաւարն արտաքին, ուր լալ աչաց է եւ կրճել ատամանց:

160 Յայնժամ սրտմտեալ թագաւորն ասէ. Ոչ է պարտ առնս այսմիկ կեալ. եւ տարեալ զսուրբն Թաղէոս կապանաւք արգելին ՚ի դղեակ պարսպին, ուր էին մար-

դակեր գազանքն: 161 Իբրեւ արձակեցին երկու առեւծք, եւ եկեալ անկանէին առ ոտան եւ լեզուին զհողաթափսն ոտից սրբոյն, եւ ոռնային քծնելով: 162 Եւ սրբոյն աղաւթեալ լուծան կապանք իւր: 163 Եւ նշանեալ ընդդէմ առիւծուցն գնացին յիւրաքանչիւր տեղիս: 164 Իսկ անաւրէն թագաւորն առաւել գրգռեալ 'ի չարէն հրամայեաց լուցանել հնոց հրոյ եւ բորբոքեցին յոյժ, եւ արկին զսուրբ առաքեալն կապանաւք 'ի ներքս: 165 Եւ նա աղաւթեալ ասէր. Տէ՛ր Յիսուս Քրիստոս, հա՛ս ինձ յաւգնականութիւն. եւ ե՛լ յանկարծակի հողմ ուժգին ամպխառն ցաւղով, եւ առ զհնոցն հրախառն եւ ա՛րկ գանաւրէն բարբարոսաւքն: 166 Եւ ահ երկնաւոր ձայնիցն կորոյս գամենեսեան: 167 Իսկ թագաւորն փախստական անկաւ յապարանս իւր, եւ չար հիւանդութեամբ վարանեալ կայր 'ի տարակուսի: 168 Իսկ սուրբ առաքեալն եղեալ լի երկնաւոր յուսովն, եւ էր զուարթ որպէս լոյս, եւ հաւատացին յաւուր յայնմիկ ոգիք չորեքհարեւր երեսուն եւ երեք, աղաղակէին եւ ասէին. Մե՞ծ է Աստուածն քրիստոնէից. եւ առեալ մկրտեաց զնոսա 'ի նմին ժամու: 169 Եւ զայրացեալ անաւրէն թագաւորին, տայր հրաման սրով սպանանել: 170 Իսկ սուրբ առաքեալն հաստատէր զնոսա 'ի հաւատս կենսաբէր աւետարանին: 171 Եւ յարուցեալ աղաւթէր, այսպէս. Տէ՛ր Յիսուս Քրիստոս Աստուած իմ, մի՛ թողուր զսուրբ ժողովուրդս քո, այլ զաւրացո՛ղ զսոսա 'ի սէր աստուածութեան քո, եւ զիս ընկա՛լ, Տէ՛ր, 'ի հոտ անուշից:

172 Եւ 'ի կատարել աղաւթիցն ւարհնեաց զհաւատացեալսն, եւ յանձն արար զնոսա Քրիստոսի, եւ ասէ. Արիք ելէ՛ք 'ի բարձր տեղին, որ 'ի վերոյ քան զմեզ է, եւ հայեցեալ տեսէ՛ք զհանդէս մարտիրոսութեան իմոյ, եւ ես ետու ձեզ առաջնորդ զՁաքարիաս սիրելին Քրիստոսի, որ է իմ լծակից եւ պաշտաւնեայ Տեառն. եւ նա ու-

սուցէ ձեզ զբանս սուրբ Աւետարանին, զոր եզ 'ի բերան նորա Սուրբ Հոգին, եւ հաստատեալ զձեզ 'ի հաւատս սուրբս փութով հասանէ առ իս, կատարել զմարտիրոսական հանդէսն: 173 Եւ ւարհնեալ զնոսա գնացին: 174 Եւ հասեալ բազում զաւրականք իշխանաւքն հանդերձ, եւ կալեալ զսուրբ առաքեալն՝ հանին 'ի փոքր ձորակէն սակաւ մի 'ի բարձրաւանդակ տեղի մի 'ի վիմամէջս: 175 Իսկ սուրբ առաքեալն աղաւթէր, եւ ասէր. Տէ՛ր Աստուած, Հա՛յր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, ընկա՛լ զիս այժմ, եւ արա՛ զնշան ահեղ աստուածութեանդ, զի գիտացեն եւ ծանիցեն թէ դու միայն ես Աստուած ամենայն արարածոց. եւ այժմ աղաչեմ զքեզ, մի՛ թողուր 'ի ձեռանէ զվիճակս զայս, եւ մի՛ համարիր սոցա զայս մեղս, զի ոչ գիտեն զինչ գործեն. փոխեա՛ զբարբարոս միտս սոցա, եւ արա՛ սոցա ճանաչել զքո աստուածութիւնդ, մարդասէր եւ քաղցր Տէր: 176 Եւ կատարեալ զաղաւթսն, եւ տեառնագրեալ զինքն նշանաւ սուրբ խաչիւն, ասէ ցղահիճսն. Զինչ կամիք՝ արարէ՛ք: 177 Եւ յարուցեալ դահիճն 'ի վերայ սրբոյն սրով եհար զՁեմենտոս գեղբայր իւր եւ սատակեաց զնա, որ էր իշխան 'ի վերայ ամենայն ճանապարհաց եւ հաւատարիմ 'ի դրան արքունի: 178 Իսկ սուրբ առաքեալն իբրեւ ետես եթէ մեռաւ այրն, տրտմեցաւ, զի էր դարմանիչ հաւատացելոց, եւ ամենայն աւտարաց ընդունող: 179 Եւ եկեալ սուրբ առաքեալն առ մեռեալն, հայեցաւ յերկինս եւ ասէ. Հա՛յր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, հայեա՛ց յերկնից 'ի սուրբ աթոռոյ քումմէ, եւ կենդանացո՛ղ զմեռեալս զայս, զի գիտացեն եթէ դու միայն ես Աստուած. եւ բուռն եհար զձեռանէ մեռելոյն, եւ ասէ. Քեզ ասեմ, արի կա՛ց յանուն Յիսուսի Քրիստոսի Որդւոյն Աստուծոյ: 180 Կանգնեցաւ եւ յարեաւ, եւ անկեալ առաջի ոտից սրբոյն ասէ. Հաւատամ յԱս-

տուածն քո, զի նա միայն է Աստուած, եւ չիք այլ ոք, եւ եդ ձեռն 'ի վերայ վիրացն եւ բժշկեաց զնա: 181 Եւ Հաւատացին 'ի ժամուն ոգիք եւթն հարիւր եւ քսան, եւ առաջնորդ Հաւատացելոցն էր Ջեմենտոս՝ զոր կենդանացոյց Քրիստոս 'ի ձեռն սուրբ առաքելոյն: 182 Եւ ասէ սուրբ առաքեալն ցՋեմենտոս. Ահա կենդանացոյց զքեզ Քրիստոս, Որդին Աստուծոյ. եւ փրկեաց զքեզ 'ի Հայրենի մոլորութենէն, եւ արար զքեզ արժանի երկնային լուսոյն. արդ, զաւրացի՛ր եւ պի՛նդ կաց 'ի Հաւատան Քրիստոսի, եւ նա պահեսցէ զքեզ, եւ զամենայն Հաւատացեալսդ: 183 Եւ առեալ մկրտեաց զնոսա, եւ Համբուրեաց երկնային սիրովն, աւրհնեաց զնոսա եւ յանձն արար Սուրբ Հոգւոյն, եւ ասէ. Երթայք խաղաղութեամբ, Տէր ընդ ձեզ: 184 Ապա ինքն աղաւթէր 'ի վերայ Հաւատացելոցն եւ ասէր. Տէ՛ր իմ Յիսուս, պահեա՛ զսոսա, եւ արա՛ յամաւթ զչարն, եւ զիս ընկա՛լ, Տէ՛ր իմ: 185 Իբրեւ կատարեաց զաղաւթան, եւ թագաւորն բարկացեալ հրամայեաց փութով սպանանել զառաքեալն: 186 Եւ կատարեցաւ 'ի նմին ժամու սրով: 187 Եւ 'ի կատարել սրբոյն բուրեաց հոտ անուշուրեան, եւ ձայն ահեղ սաստկութեան, եւ ծագեաց լոյս յերկնից 'ի վերայ սրբոյն, եւ եդեւ շարժումն մեծ, եւ պատառեալ վիմին ընկալաւ զսուրբ մարմին առաքելոյն զաւրութեամբն Աստուծոյ, եւ

անաւրէնքն եղեն փախստականք: 188 Իսկ Հաւատացեալքն զաւրանային 'ի լուսոյն ճառագայթիցն, եւ սուրբ առաքեալն Թադէոս էր 'ի մէջ նոցա իբրեւ զլոյս: 189 Աղաղակեցին միաբան եւ ասեն. Սուրբ առաքեալ Աստուծոյ, հա՛յր մեր, յիշեա՛ զմեզ եւ մի՛ մոռանար, զի կարծէին եթէ մարմնով Համբարձաւ: 190 Եւ յարուցեալ իջին 'ի տեղի սպանմանն, իմացան եթէ սրով կատարեցաւ: 191 Եւ վիմին պատառեալ ընկալաւ զսուրբ մարմինն. ապա եղեալ յարտասուս լային, եւ Հաւատացին յաւուր յայնմիկ ոգիք երեք հազար եւ չորս հարեւր եւ երեսուն եւ երեք ընդ այր եւ ընդ կին. փառաւորելով զՍուրբ Երրորդութիւնն 'ի բարձունս:

192 Ես Սամուէլ եպիսկոպոս անարժան ծառայ Քրիստոսի, թարգմանեցի զվկայութիւն սուրբ առաքելոյն Թադէոսի, եւ զսրբոյ կուսին Սանդիստոյ, եւ ետու ամենայն Հայաստան աշխարհի՛: 193 Որք ընթեռնուք եւ կատարէք զյիշատակ երկոցունց ընտրելոցն, արժանի Համարեսչիք իշել զանարժանս 'ի սուրբ աղաւթս ձեր:

194 Կատարեցաւ սուրբ առաքեալն Թադէոս 'ի քաղոց ամսոյ երեքտասան, յիններորդ ժամու, եւ սուրբն Սանդուխտ յեւթն նորին ամսոյն, 'ի փառս Ամենասուրբ Երրորդութեանն. ամէն:

1 Սամուէլս այս՝ յայտ է թէ թարգմանեաց զվկայաբանութիւնս յառաջ քան զպատմագրել Խորոնեցւոյն. քանզի յիշէ սա այլոց յառաջ քան զինքն գրեալ զԹադէէ եւ Սանդիստոյ. իսկ զի ասէ՝ տուեալ զայն յընթերցումն ամենայն Հայաստանեայց, թուի թէ մեծաթոռ ոք էր եպիսկոպոսն, եւ գուցէ նոյն ինքն Շմուէլ ասորի, որ առ մեծան Սահակաւ կացուցաւ հակառակ նմին. եթէ գոյին 'ի նմա եւ այսպիսեաց բարեաց իրաց փոյթ:

**ԹԱԴԵՈՍԻ¹ ԱՌԱՔԵԼՈՅ ԵՒ ՍԱՄՈՒԵԼԻ ԵՒ ԻՍՐԱՅԵԼԻ ԵՒ ԱՅԼՈՑ² ՈՐ
ԲԱԶՈՒՄ ԺԱՄԱՆԱԿՍ ԿԱՅԻՆ ԾԱԾԿԵԱԼ ԵՒ ԷԻՆ ԱՄԲՈՂԶ. ԵՒ ՅԱՅՏԵՑԱՆ
ԱՌՆ ՈՒՐՈՒՄՆ³ ՃԳՆԱՒՈՐԻ ԵՒ ՍՔԱՆՉԵԼԱՏԵՍԻ ՈՐ Ի ՄԱՆԿՈՒԹԵԱՆ⁴
ՎԱՐԺԵԱԼ ԵՐ⁵ ԱՐԺԱՆԱՒՈՐ ԿԱՐԳԱՔԵ ԿԻՐԱԿՈՍ ԱՆՈՒՆ**

Արդ, սկսեալ նորա պատմել եւ ասէր⁶. Ես Կիրակոս էի աշակերտեալ Դաւթի միայնակեցի. բնակէի ՚ի սնարս լերին Սանատրուկ՝ ՚ի յայրին, մաւտ ՚ի Շաւարշան. յերկրաւորացս հրաժարեալ եւ միայնացեալ բազում ամաւք, եւ միով հանդերձիւ, հանապազ յաղաւթս: 2 Եւ յայտնեցաւ ՚ինձ ՚ի քուն գիշերի յայտնապէս տեսիլ հրաշալի, ՚ի մէջ Սանատրուկ դաշտի, ՚ի վերայ⁸ միոյ փոքրիկ բլրոյ ծագեալ լոյս սքանչելի, եւ ՚ի մէջ լուսոյն աթոռ ոսկի, եւ ՚ի վերայ աթոռոյն այր մի լուսաւոր, որ ոչ կարէի⁹ պատմել զնշան լուսոյն: 3 Եւ կային շուրջ զաթոռովն այլ եւս հինգ այր լուսազգեաց¹⁰. եւ ես հիացեալ եւ զարմացեալ կայի: 4¹¹ Եւ յանկարծակի ՚ի մէջ լուսոյն երեւեցաւ աղջիկ մի թագաւորացն, եւ

երեսք նորա իբրեւ զարեգակն, եւ հանդերձս ոսկեհոռոս զգեցեալ ունէր, եւ էր արկեալ զիւրեաւ ծիրանիս եւ պսակ հրաշալի ՚ի գլուխ իւր, եւ եկն եկաց առ լուսաւոր առնն որ յաթոռոյն նստէր, եւ նա ասէր ցաղջիկն. Ուրախ լեր, սուրբ կոյս հարսն Քրիստոսի: 5 Եւ տեսի¹² եւս այլ այր մի սքանչելի երեսաւք որ նման էր վարդապետին իմոյ Դաւթի, եւ ասէր ցիս. Մի՛ երկնչիւր, այլ զաւրացիր ՚ի Քրիստոս¹³, զի ետ քեզ շնորհս եւ երեւեցոյց¹⁴ քեզ լոյս մխիթարութեան, արդ ունկն դիր եւ պատմեցից քեզ¹⁵: 6 Սքանչելի¹⁶ լոյսն, որ երեւեցաւն քեզ, շնորհք Հոգւոյն Սրբոյ է, որ ՚ի վերայ սրբոցն ծագեալ լուսաւորէ, եւ ոչ հեռանայ յարդարոցն ՚ի հոգւոցն եւ ՚ի մարմնոցն, եւ երեւի արժանացելոց որպէս եւ այժմ քեզ: 7 Արդ, որ նստի ՚ի յաթոռն ոսկեղէն, նա է առաքեալն Թադէոս, եւ հինգ արքն լուսազգեացք¹⁷ զառաջեալ¹⁸ նոքա են աշակերտք եւ վկայք նորա, եւ աղջիկն Սանդուխտ է: 8 Եւ ես երկիրւղիւ ասեմ. Եւ ո՞ւր¹⁹ տէր իմ. եւ ասէ. Ինքեանք ցուցցեն. եւ ես էի զարմացեալ. եւ յանկարծակի զարթոյց զիս, եւ փառաւորեցի զԱստուած վասն տեսլեանն եւ խնդրէի զստոյզն:

1 Ձեռագրում՝ Գիւտ նշխարաց Թադէոսի
2 Ձեռագրում՝ այլոց սրբոց
3 Ձեռագրում՝ միոջ
4 Ձեռագրում՝ տղայութենէ
5 Ձեռագրում՝ արժանաւոր վարում եւ յաղթեալ չարին Կիրակոս անուն նորա
6 Կամ յառաջարան պատմութեանս պակասէ, կամ յերկայն պատմութենէ մասն հանեալ է: Ոչ է մեզ յայտ ո՞վ իցէ Կիրակոսդ եւ ո՞վ Դաւիթդ, Անյա՞ղքն արդեօք թէ այլ ոք. եւ ոչ քաջ ստոյգ ժամանակ գիւտի նշխարացս, զորոյ քննութիւն տե՛ս յԱ. հատ. Պատմ. Հայոց, յէջ 584: Իսկ բանի սորա երեւեցուցանեն առ Մանդակունեան Յովհ. եւ առ մեծան Աստուան լինել զգիւտդ յամի Տեառն 485 կամ 486:
7 Ձեռագրում՝ ինձ նշխարս սրբոյն, երեւեցաւ ինձ ի բուն գիշերոյ
8 Ձեռագրում՝ բլրոյ միոյ
9 Ձեռագրում՝ կարեմ
10 Ձեռագրում՝ լուսազգեստ
11 Ձեռագրում՝ եւ յանկարծ երեւեցաւ ի մէջ լուսոյն

12 Ձեռագրում չիք եւս այլ
13 Ձեռագրում՝ Քրիստոս Յիսուս
14 Ձեռագրում՝ եցոյց
15 Ձեռագրում՝ զսքանչելիսդ փիս քեզ
16 Ձեռագրում չիք Սքանչելի
17 Ձեռագրում՝ լուսազգեստ
18 Ձեռագրում չիք զառաջեալ
19 Ձեռագրում՝ ո՞ւր իցեն

9 Եւ յերրորդում աւուր երեւէր ինձ սուրբ առաքեալն նովին կերպարանաւք, եւ իմ տեսեալ զնա յերկիր կործանեցայ, եւ բուռն հարեալ կանգնեաց զիս եւ ասէ. Մի՛ երկնչիր Կիրակոս, միտ դիր եւ ցուցից քեզ զնշխարս մեր ուր հանգուցեալ են: 10 Եւ եցոյց ինձ արձան մի անտաշ յարեւելից կողմանէ, եւ ասէ. Աստ գտանես. եւ յերկիւղէն զարթեայ: 11 Եւ կայի ՚ի պահս պնդութեան զաւուրս երեսուն, եւ արտասուագոչ աղաւթիւք հայցէի: 12 Եւ յաւուրն երեսներորդի մատուցի պատարագ եւ հաղորդ եղէ խորհրդոյն, եւ գոհացեալ անցի յասացեալ տեղին՝ միայն, եւ գտի զարձանն եւ բրեցի առ նովալ եւ ոչ ինչ գտի, եւ ՚ի տրտմութենէն նիրհեցի: 13 Եւ դարձեալ տեսի ՚գառաքեալն սուրբ ընկերաւքն առաւել եւս հրաշալի, եւ ասէ. Մի՛ երկնչիր Կիրակոս, յառաջակայ կողմն բրեա եւ գտանես: 14 Եւ զարթեայ եւ բրեցի եւ գտի զնշխարս վկայի միոյ, եւ բուրեաց հոտ անուշութեան. եւ ես կարծէի թէ ինքն առաքեալն իցէ, եւ փառաւորեցի զԱստուած:

15 Եւ ՚ի նմին գիշերի երեւեցաւ ինձ պատանի մի բարձր հասակաւ եւ գեղեցիկ² երեսաւք եւ³ լուսաւոր յոյժ եւ ասէ ցիս. Կերակոս, որ տեսերդ՝ Իսրայէլ է, եւ որ ՚ի վերայ դորա՝ ես եմ Զաքարիա⁴, եւ ⁵գիր ՚ի վերայ իւրաքանչիւրումն է, եւ արձանդ, որ ընդդէմ կայ, անդ գտանես զառաքեալն: 16 Եւ թուէր ՚ի տեսեանն թէ պատառէր արձանն եւ ծագէր լոյս, եւ զարթեայ ՚ի լոյս տեսեանն եւ ՚ի հոտ անուշութեանն. եւ գիր ոչ էր: 17 Եւ ՚ի միում գիշերի տեսի զՍանդուխտ ըստ առաջին

տեսեանն եւ առաւել եւս պայծառ. եւ իմ զարհուրեալ յոյժ, եւ նա ⁶բուռն հար եւ կանգնեաց զիս, եւ հրամայեաց ինձ ՚ի տեսեանն՝ տապաստ մի տարածել եւ զնշխարսն ՚ի վերայ դնել. եւ արարի զհրամայեալսն, եւ յանկարծակի լուցան եւ նշխարքն իբրեւ զջահս, եւ ես⁷ զարհուրեալ կայի⁸. եւ նա զաւրացուցանէր զիս եւ ասէր. Մի՛ երկնչիր: 18 Եւ ասեմ. Ահա այրի տապաստդ⁹: 19 Եւ նա ասէ. Ոչ այրէ, այլ ահա ¹⁰սրբէ եւ լուսաւորէ, եւ հաւատացելոց մխիթարութիւն բժշկութեան ¹¹մատուցանէ եւ ընծայէ: 20 Եւ տեսանէի եւ ահա կանգնեցան եւ եղեն որպէս իւրաքանչիւր կերպարան՝ լուսաւոր եւ զարմանալի. եւ Սանդուխտ կայր ՚ի միջի լուսաւոր տեսեամբ. եւ ասէր մի ոմն ցՍանդուխտ. Ուրախ լեր հարսն Քրիստոսի, զի ՚ի ձեռն քո շնորհեցան նշխարք մեր ՚ի բժշկութիւն հաւատացելոց եւ ՚ի մխիթարութիւն, եւ յայտնի լիցի սոցա նահատակութիւն մեր եւ սէրն, որ ՚ի Հայր եւ յՈրդի եւ ՚ի Սուրբ Հոգին: 21 Եւ կոյսն փառաւորէր¹² զԱստուած եւ ասէ ցիս. Ես ՚ի բլրին եմ՝ ուր զառաջինն ցուցաւ քեզ տեսիլն. եւ տարաւ զիս ՚ի բլուրն եւ ցուցանէր ինձ եկեղեցի մի փոքրիկ եւ լի լուսով: 22 Իսկ վերին լոյսն անպատում է, ուր բնակութիւն սրբոցն է. արդ զաւրացիր եւ կատարեալ զհրամայեալսն քեզ:

23 Եւ իմ յարուցեալ փառաւորեցի զՔրիստոս եւ պահեցի պնդութեամբ ՚ի մարերի ամսոյ մինչեւ ՚ի նաւասարդի ամիս, եւ եկեալ պատմէի եպիսկոպոսին¹³, եւ բազում փութով խնդրեալ գտեղին ոչ

1 Ձեռագրում՝ գուրք առաքեալն
 2 Ձեռագրում՝ առաւել գեղեցիկ
 3 Ձեռագրում՝ չի՛ք եւ
 4 Զաքարիայդ աշակերտ Թադէի է, գոր նա լծակից իւր կոչէր. թուի թէ եւ Իսրայէլդ ՚ի հետեւողաց նորին, գոր ոչ յիշէ պատմութիւնս:
 5 Ձեռագրում՝ գիր իւրաքանչիւր առ իւրում է

6 Ձեռագրում՝ բուռն հարեալ զարացոյ զիս
 7 Ձեռագրում՝ իմ
 8 Ձեռագրում՝ չի՛ք կայի
 9 Ձեռագրում՝ տապաստն
 10 Ձեռագրում՝ սրբի եւ լուսաւորի
 11 Ձեռագրում՝ չի՛ք մատուցանէ եւ
 12 Ձեռագրում՝ փառաւորեաց
 13 Ի Յայսմաւուրս Շահակ կոչի եպիսկոպոսդ:

գտանէր գտենչալին: 24 Եւ դարձեալ երեւէր ինձ նոյն լուսաւոր կերպարանաւք սուրբ առաքեալն եւ ասէ. Այսաւր գտանէք զփափաքելին ձեր: 25 Եւ տանէր զիս ՚ի տեղին եւ ցուցանէր եւ տայր զգոչութիւն տեղւոյն: 26 Եւ յարուցեալ առի ընդ իս քահանայ գոմն Սամուէլ անուն, եւ հասեալ ՚ի նշանաւոր սրբոցն հանգիստ՝ աղաւթիւք խնդրեցաք յԱստուծոյ արժանի լինել նշխարացն: 27 Եւ եղեւ ահ եւ թնդիւն եւ պատառեցաւ վէմն, եւ հոտ անուշութեան բուրեաց եւ ելից զվայրսն: 28 Եւ գտաք զնշխարսն յիւրաքանչիւր հանգստի ահաւոր եւ սքանչելի տեսեամբ. առաջինն՝ առաքեալն որ կայր ՚ի մէջ պատառեալ վիմացն յարեւելից կողմանէ որպէս երեւեցան. եւ մաւտ յառաքեալն գտաք զնշխարս որոց նշանն այս էր. միոյն ընդ ուան հարեալ երկաթի բեւեռս եւ ՚ի նմին կային բեւեռքն. եւ միւսումն ընդ լսուունսն ծակեալ, եւ էին զարմանալիք: 29 Եւ մեր ահիւ ժողովեալ զնշխարսն փառաւորեցաք զԱստուծո:

30 Եւ յերրորդում աւուրն հասաք ՚ի հանգստարան սրբոյն Սանդխտոյ եւ աղաւթեցաք, եւ եղեւ շամանդաղ թանձրամած ՚ի վերայ բլրին մինչեւ յերիս ժամն աւուրն, եւ ոչ կարացաք տեսանել ինչ. եւ ահիւ եւ լալով խնդրեցաք զփափաքելին, ապա ուրեմն կարացաք տեսանել ՚ի բլրին լոյս, եւ ՚ի մէջ լուսոյն բազմութիւն լուսազգեսաց մարդկան զի փայլէին: 31 Եւ բացեալ հանգիստ սրբոյն եւ հոտ անուշութեան բուրեալ, եւ փարատեցաւ շամանդաղն եւ եղեւ լոյս եւ երեւեցան նշխարքն, եւ առեալ բերաք ՚ի տեղին ուր նշխարք սուրբ առաքելոյն էին, եւ եղաք առ նմա: 32 Եւ ՚ի գիշերին յայնմիկ եղեւ լոյս յերկնից ՚ի վերայ նշխարացն եւ ձայն աւրհնութեան՝ որ հրաշալի եւ քաղցր բարբառով աւրհնէին զԱստուծո եւ զմիմեանս

ողջագուրէին, եւ նշխարք ոսկերաց նոցա թռուցեալ առ միմեանս հանգչէին. եւ մեք զարհուրեալ կայաք հիացեալ, եւ տեսաք զնշխարս Սանդխտոյ զի էին ՚ի մէջ նշխարաց առաքելոյն, եւ մեր երկիւղիւ մատուցեալ զատուցանէաք ՚ի միմեանց. զի որ մերձենայցէ, գիտասցէ զնշխարս առաքելոյն եւ Սանդխտոյ. եւ աւրհնեցաք զԱստուծո ցնծութեամբ:

33 Եւ ել² համբաւ զսրբոցն յայտնութենէ ընդ աշխարհս Հայոց, եւ բազում ժողովք³ լինէին ՚ի հռչակ սրբոցն եւ տաւն ուրախութեան կատարէին ահիւ Տեառն: 34 Եւ բժշկութիւնք լինէին եկելոցն՝ դիւահարաց, կուրաց, խլից, անդամալուծաց, գաւսացելոց, բորոտաց եւ ամենայն փտաժեսաց ՚ի ձեռն սուրբ նշխարացն ՚ի փառս Աստուծոյ:

35 Յայսմ ժամանակի ոմն⁴ յիշտունեաց⁵ կոյր ՚ի ծնէ, որ եկեալ էր ՚ի բժշկութիւն եւ ընկալաւ զլուսաւորութիւն, եւ պատմէր սքանչելի տեսիլ, որ երեւեալ էր նմա եւ ասէր. Տեսանէի ՚ի տեսեան գիշերի աղջիկ մի գեղեցիկ տեսեամբ եւ ասէր. Ես եմ Սանդուխտ. արի եւ զնա ՚ի գաւառն Արտագ ՚ի քաղաքագեւղն Շաւարշան, ՚ի դաշտն Սանատրուկ, ՚ի կայս հանգստեան մերոյ, երթ կաց անդր եւ խնդրեա ՚ի Տեառնէ եւ լուսաւորեսցիս ՚ի ձեռն սուրբ առաքելոյն եւ նորին աշակերտացն, եւ ես ընդ նոսա. եւ դիցուք զձեռս մեր ՚ի վերայ աչաց քոց եւ բժշկիս⁶ անուամբ Երրորդութեանն: 36 Եւ ասէր սուրբն Սանդուխտ. Ահա տես զգոյշ կաց եւ արասցես զհրամայեալսն⁷ քեզ հաւատովք: 37 Եւ իմ զարհուրեալ ահիւ եւ հաւատով եւ յուսով, եւ եկեալ զհրամայեալսն ինձ արարի. եւ

1 Ակնարկէ ՚ի պատմեալսն յէջ 38 եւ 39:

2 Ձեռագրում՝ եղեւ

3 Ձեռագրում՝ ժողովուրդ

4 Յայսմաւուրբ կիմ ոմն ասեմ:

5 Ձեռագրում՝ Ռշտունեաց, որ էր

6 Ձեռագրում՝ բժշկեսցիս

7 Ձեռագրում՝ զպատուիրեալս

բացան աչք իմ, որպէս հրամայեաց ինձ 'ի տեսլեանն Սանդուխտ շնորհաւք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: 38 Եւ ասէր բժշկեալն՝ թէ տեսանէի յորժամ եկին՝ այր մի լուսաւոր եւ գնոյն աղջիկ հրաշալի եւ սքանչելի երեւմամբ եւ ունէին գաւազան ոսկի, եւ եղին գձեռս իւրեանց հանդերձ գաւազանաւն 'ի վերայ աչաց իմոց, եւ առժամայն բացան եւ տեսի լոյս եւ փառաւորեցի զԱստուած: 39 Եւ եղեւ նշանս այս առաջի ամենայն ժողովրդեանն որ եկեալ էին 'ի լուր սքանչելեացն: 40 Եւ այլ եւս բազումք բժշկեցան 'ի բազում՝ ախտից:

41 Եւ եղեւ գիւտ նշխարացն 'ի շնորհաց Սուրբ Հոգւոյն յաւուրս հոգեզարդ, աստուածասէր եւ ճգնազգեաց տեառն Յովհաննու Հայոց կաթողիկոսի, եւ քաջանուն եւ նախանձախնդիր աստուածային պատուիրանացն Վահանայ Մամիկոնենից տեառն Հայոց մարգպանի եւ սպարապետի. որք եկին աշխարհախումբ բազմու-

թեամբ եպիսկոպոսաւք, քահանայիւք, եւ սարկաւազաւք եւ այլ բազմութեամբ ազատաց եւ խառնիճաղանձ ամբոխիւ, եւ տաւնեցին սաղմոսիւք եւ աւրհնութեամբ գլխատակ սրբոցն բազում աւուրս եւ ²ուխտ եղեալ կատարեալ գլխատակ նոցա: 42 Եւ առնուին մասն 'ի նշխարաց սուրբ առաքելոյն Թադէոսի եւ Սանդիստոյ եւ յայլոց վկայիցն, եւ տուեալ փառս Աստուծոյ գնացին յիւրաքանչիւր տեղիս խնդութեամբ:

43 Արդ, որք հաւատով եւ սրբութեամբ փափագեն³ սուրբ եւ երկնաւոր գանձուց ⁴նշխարացն սրբոց՝ որք նահատակեցան վասն Քրիստոսի, ընկալցին զփափագելի⁵ լոյսն յաւիտենից եւ ծագեցի 'ի վերայ նոցա՝ արեգակն արդարութեան, եւ խնդրուածք նոցա կատարեսցին 'ի Տեառնէ բարեխաւսութեամբ սրբոցն, եւ հասցեն մասին ժառանգութեան սրբոցն 'ի Քրիստոս Յիսուս 'ի Տէր մեր. որում փառք յաւիտեանս:

1 Ձեռագրում պէս պէս փիս բազում

2 Ձեռագրում ուխտեալ փիս ուխտ եղեալ

3 Ձեռագրում փափագին

4 Ձեռագրում սրբոց նշխարացս

5 Ձեռագրում չիք գփափագելի

ԱՆԱՆՈՒՆ

ՎԿԱՅՈՒԹԻՒՆ ՍՐԲՈՅՆ ԵՈՒՇԱՆԿԱՆՆ

«ՍՈՒՐԲ ՇՈՒՇԱՆԻԿԻ ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ»

Վարքագրական այս յուշարձանը նկատելի չափով առանձնանում է Հայոց միջնադարեան սրբախօսական միւս երկերից, ինչը պայմանաւորուած է նախ Շուշանիկի՝ ս. Վարդան Մամիկոնեանի դուստր եւ Գուգարաց բղեշխ Աշուշայի հարս լինելու պարագայով: Շուշանիկի կենաց ու նահատակութեան պատմութիւնը, փաստօրէն, Վարդանանց պատերազմը եւ շուրջ երեք տասնամեակ անց Վահանանց ելոյթի միջակայքում մեզանում տեղի ունեցած քաղաքական անցուղարձերի գրական-պատմական անդրադարձն է՝ եղիշէի վէպի շարունակութիւնը՝ վարքագրութեան կանոնականութեան պահանջած օրէնքներով շարադրուած:

Առանձնացումի յաջորդ պարագան կապուած է յուշարձանի գրութեան ժամանակի, հեղինակային պատկանելութեան եւ խմբագրական բազմաշերտ մշակումների հետ: Ս. Վարդանի դուստրը կամաւոր նահատակութիւն է ստանձնում հաւատուրաց ամուսնուց ազատուելու եւ Մամիկոնեան տան նուիրական ականդներին հարագատ մնալու զրդումով: Փարպեցու տեղեկութեամբ դաւադիր Վազգէնը մահուան է դատապարտուել Պերոզ արքայի 25-րդ տարում (457+25=482 թ.): Այս իրողութիւնը անձանօթ է Վկայաբանութեան բնագրին, հետեւաբար այն գրուել-խմբագրուել է մինչ այդ: Գիտենք, որ Վազգէնը Տիգրան է գնացել եւ կրօնափոխ եղել Պերոզի ծ-րդ տարում (467 թ.), որին հետեւել է Շուշանիկի բանտարգելութեան վեց տարին, իսկ եօթերորդ տարուայ մուտքին սրբուհին կնքել է իր մահկանացուն (իմա՝ 475 Քաղոց ամսի 17-ին): Ուրեմն, Վկայաբանութիւնը գրուած պիտի լինի 475-482 թթ. միջեւ ընկած եօթ տարիների միջոցին: Հետեւաբար Կորիւնի երկից յետոյ Շուշանիկի Վկայաբանութիւնը բաւական ստոյգ թուագրուող Ե դ. երկրորդ յուշարձանն է:

475-482 թթ. գրուած նախնական այդ Վկայաբանութիւնը հիմք է ծառայել հայկական երկու ընդարձակ անանուն խմբագրութիւնների եւ Անդրէաս կրօնաւորի (ս. Շուշանիկի խոստովանահօր) ու Յակոբ երէցի (նոյն դերակատարումով ըստ վրացական պատումի) գրական մշակումների համար: Նրանց յարասումով Ահարոն Վանանդեցին Ժ դ. առաջին տասնամեակներին կազմել է նորամշակ մէկ այլ խմբագրութիւն, որին ծանօթ են եղել Ուխտանէսն ու Գրիգոր Խլաթեցին:

Հայկական ընդարձակ տարբերակից է սերում յայսմաւուրքային համառօտ խմբագրութիւնը, որը պահպանուել է նաեւ վաղ միջնադարում վրացերէն կատարուած թարգմանութեամբ: Այլեւս պարզ է խմբագրութիւնների ու տարբերակների բազմաստիճանակութեամբ եւս Սուրբ Շուշանիկի Վկայաբանութիւնը առանձնայատուկ խնդիրներ յարուցող յուշարձան է: Մոռանալու չէ, թէ Շուշանիկը Հայոց եւ Վրաց եկեղեցիների միասնութեան շրջանում ճանաչուած սրբուհի է, որի պաշտամունքը է դ. եկեղեցական բաժանումից յետոյ պիտի ազգայնացուէր տեղական պահանջմունքին համապատասխան, ուստի հայկական մշակումները շեշտադրում են Մամիկոնեան տոհմականութիւնը, նահատակութեամբ մէկ նոր Հռիփսիմէ ներկայանալը, հայրենաբաղձ կեցուածքը, իսկ վրացերէնը գերադասում է պատմականացման տանող դրուագների ու ազգագրական նկարագիր հաղորդող մանրամասների կշռոյթը: Եւ, այնուամենայնիւ, հիմք ունենք եզրակացնելու, թէ հայկական տարբերակը նախնական ներկայանալու բաւական կուռաններ ունի. խօսքը միայն

վրացերէն ընդարձակ բնագրում առկայ հայկաբանութիւններին չի վերաբերում: Քննութիւնից պարզւում է, որ «Ցուրտաւայ եկեղեցւոյ հայալեզու իշխանութիւնը» իրեն պարտաւորուած պիտի զգար պահպանել Շուշանիկի վկայարանում կատարուող հայալեզու ժամասացութիւնը, որ Կիւրոն կաթողիկոսի պահանջով է դ. արշալոյսին դարձել էր երկլեզու՝ հայերէն եւ վրացերէն: Ս. Շուշանիկի յիշատակի օրը սահմանուած էր մինչ այդ, եւ ընթերցուելիքն էլ, բնականաբար, պիտի լինէր հայերէն:

Սուրբ Շուշանիկի վկայարանութեան հայերէն բնագրի անդրանիկ հրատարակումն ու քննութիւնը կատարել է վաստակաշատ հ. Ղ. Ալիշանը, ապա նաեւ Կ. Կեկելիձէն, Պ. Պետերսը, Ի. Աբուլաձէն եւ ուրիշներ: Վկայաբանութեան բոլոր խմբագրութիւններն ու տարբերակները համատեղուած ու քննութեամբ ներկայացուած են Սուրբ Շուշանիկի վկայարանութիւնը գրքում¹:

Պարոյր Մուրադեան

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

1. Լիակատար մատենագիտութիւնը տե՛ս Պ. Մ. Մուրադեան, *Սուրբ Շուշանիկի վկայարանութիւնը*, Բնագրեր եւ հետազոտութիւն, Երեւան, 1996, էջ 209-216:

ՏԱՌԱՆՇԵՐ ԲԱՂԴԱՏՈՒԱԾ ԶԵՌԱԳՐԵՐԻ ԵՒ ՀԱՄԱՌՕՏԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

A - ՄՄ ձեռ. թիւ 941, ժամանակ՝ 1689 թ.

B - Ֆրանսիայի Ազգային գրադարանի (Փարիզ) հայերէն ձեռ. թիւ 178, ժամանակ՝ ԺԲ դար

C - Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց վանքի մատենադարանի ձեռ. թիւ 1բ, ժամանակ՝ 1418 թ.

¹ Պ. Մ. Մուրադեան, *Սուրբ Շուշանիկի վկայարանութիւնը*, Բնագրեր եւ հետազոտութիւն, Երեւան, 1996, էջ 19-60

**1ՎԿԱՅՈՒԹԻՒՆ ՍՐԲՈՅՆ ՇՈՒԾԱՆԿԱՆՆ, ՈՐ ԿԱՏԱՐԵՑԱՒ Ի ՎԻՐՍ ՅԱՌՆԷ
ԻՐՐՍԷ ՅԱՆԹԻՊԱՏՐԷ ՎՐԱՅ ԱՌԱՋՆՈՐԴԷ, ՈՐ ԷՐ ԴՈՒՍՏՐ ՍՐԲՈՅՆ
ՎԱՐԴԱՆԱՅ, ԹՈՌՆ ՍԱՅԱԿԱՆՈՒԾԱՅ՝ ԴՍՏԵՐ ՍՐԲՈՅՆ ՍԱՅԱԿԱՅ
ՊԱՐԹԵԻ ԶԱՅՈՑ ԶԱՅՐԱՊԵՏԻ Ի ՔԱՂՈՅՆ, Ի ՏԱՍՆ ԵՒ ԵԻԹՆ**

Ա. 1 Եւ եղեւ ի ժամանակս ²Թագաւորութեանն Պարսից բղեաշխ ³ոմն աշխարհին Վրաց, որոյ անունն⁴ Վազգէն⁵ որդի Աշուշայ բղեշխի, ⁶որ երթեալ ի դուռն արքունի ուրացաւ գբրիստոնէութիւն⁷ եղեալ ընդ պարսկական ակրինաւքն ⁸ի կամաց եւ ոչ ի հարկէ եւ⁹ ի բռնութենէ: 2 ¹⁰Եւ կին ունէր զդուստր Վարդանայ Հայոց սպարապետի Մամիկոնէի, թոռն սրբոյն Սահակայ Պարթեւի եւ Հայոց հայրապետի ի դատերէն Սահականուշայ. եւ անուն նորա Վարդենի ի ծնաւդացն¹¹ կոչեցեալ եւ ¹²Շուշանիկ յորջորջանաւք յետոյ անուանեալ, բարեպաշտաւն եւ երկիրդած յԱս-

տուծոյ ի մանկութենէ իւրմէ: 3 Եւ վասն լկտի եւ անառակ վարուց առնն¹³ աղաչէր զհաւատացեալս¹⁴ աղաւթս առնել¹⁵ առ Աստուած, զի թերեւս գայցէ ի զգաստութիւն: 4 Եւ հոգայր եւ կասկածէր՝ յորժամ ի դուռն արքունի չոգաւ, թէ գուցէ¹⁶ ուրանայ զՔրիստոս, զոր եւ արար իսկ ամբարիշտն¹⁷: 5 Ուրանալով զճշմարիտն Աստուած¹⁸, ¹⁹երկիր պագանէր կրակի եւ²⁰ ²¹ուխտագիր եղեալ սատանայի²² խնդրէր յիւր²³ կին Պարսիկ ի թագաւորէն: 6 ²⁴Եւ նորա հաւանեալ, տայ նմա ի կնութիւն զմայր կնոջ իւրոյ: 7 Իսկ նա խոստանայր եւ զառաջին կինն եւ զորդիսն եւս²⁵ դարձուցանել ի մոգական²⁶ ակրէնս:

Բ. 1 Եւ այսպիսի²⁷ ամբարշտութեամբ²⁸ ²⁹եւ պարգեւաւք դառնայր յաշխարհ իւր եւ յիշխանութիւն³⁰, յղէր յառա-

1 AC վկայարանութիւն սրբոյն Շուշանկանն թոռին սրբոյն Սահակայ, դատեր սրբոյն Վարդանայ, որ յիւրմէ (A իւրմէ) առնէն կատարեցաւ զանագան տանջանաւ (A տանջանոս) վասն Քրիստոսի հաւատոցն
2 A թագաւորութեան / B Պարսից թագաւորութեանն
3 B չիք ոմն աշխարհին ... անունն
4 C անուն
5 A Վասգէն
6 B որ ի դուռն արքունի երթեալ
7 AC գրիստոնէութիւնն / B գրիստովնութիւնն ունի՝ եւ
8 AB չիք ի կամաց եւ
9 AB ունի՝ ոչ
10 AC Էր սմա տուեալ յարիմաւոր ամուսնութիւն դուստր սրբոյն Վարդանայ (Վարդանա) Հայոց սպարապետի եւ Մամիկոնէի, թոռին սրբոյն Սահակայ Պարթեւի եւ Հայոց վարդապետի, դատեր Սահականուշայ փիս եւ կին ... Սահականուշայ
11 A ծնողաց
12 AC Շուշանիկ յետոյ յորջորջանաւք անուանեցաւ: Սա (C սայ) Էր բարեպաշտաւն եւ երկիրդած (C երկիրդած) Աստուծոյ (C յԱստուծոյ) փիս Շուշանիկ ... յԱստուծոյ

13 AC առն
14 B զհաւատացեալսն
15 B առնել
16 B չիք գուցէ
17 AC ամբարիշտն
18 B ունի եւ
19 B երկրպագէր
20 C չիք եւ
21 B ուխտէր ընդ
22 B ունի եւ
23 AC իւր
24 B եւ հաւատայր նմա եւ տայր զկնոջ իւրոյ մայրն նմա ի կնութեան, եւ յանձն առնոյր զկինն առաջին փիս եւ նորա ... կինն
25 AB չիք եւս
26 B մոգութեան
27 B չիք այսպիսի
28 A ամբարտաւանութեամբ փիս ամբարշտութեամբ / B ամբարշտութեամբ
29 B չիք եւ պարգեւաւք
30 B չիք յիշխանութիւն+

Ջագոյն ¹պատգամաւոր՝ տալ աւետիս գալստեան² իւրոյ. որոյ³ եկեալ մտեալ⁴ առաջի տիկնոջն⁵ տալ ⁶զողջոյն առնն⁷ ⁸նորա եւ զաւետիս գալստեանն: 2 Եւ նա ասէ թէ՝ «Արդարեւ ո՞ղջ իցէ Հոգւով» եւ⁹ երգմնեցուցանէր զայրն յԱստուած կենդանի: 3 Եւ նորա¹⁰ ¹¹յարտասուս եղեալ ասէ. «Այրն քո ուրացաւ զքրիստոնէութիւն¹² եւ երկիր եպագ գտորուշանաց¹³, ¹⁴հաւանեալ պարսկական ակրինաց»:

4 ¹⁵Իբրեւ լուսաւ բարեպաշտ տիկինն, յերկիր կործանեցաւ¹⁶. լայր դառնապէս եւ ¹⁷աւաղէր զայրն ուրացեալ¹⁸ յԱստուծոյ¹⁹, եւ եղուկ²⁰ զորդիսն վարկանէր:

5 Եւ յետ բազում ողբոց եւ հառաչանաց յարուցեալ երթայր յեկեղեցին եւ զորդիսն²¹ ընդ իւր տանէր, զի էին ²²նորա որդիք երեք եւ դուստր մի: 6 Անկանէր²³ ա-

ռաջի սրբոյ սեղանոյն եւ ասէր²⁴. «Տէր Աստուած²⁵, արարիչ²⁶ երկնի եւ երկրի եւ որ ի նոսա արարածք իցէն, դու սահմանեցեր այսպիսի²⁷ ակրէնս ազատութեան ²⁸բանիւ ակրհնութեան միածնի քո ի ձեռն ծառայից քոց արբանեկաց²⁹ դրոշմամբ³⁰ կենսաբեր աւագանին³¹՝ Գոր եւ վերստին ծննդեամբ ջրով եւ հոգւով ³²լինել՝ որդիս լուսոյ եւ որդիս տուրնջեան եւ մաքրիլ ի գիշերային յախտաւոր³³ ծննդեմէ՞, որ ըստ մարմնոյ յառնէ³⁴ եւ ի կնոջէ յառաջ գան, եւ այցելութիւն գտանել ի³⁵ լուսաւոր ծննդեանն, որ ի Քրիստոս Յիսուս, եւ լինել մի հաւտ եւ ³⁶մի հովիւ՞ ճշմարտիւ: 7 Եւ արդ՝ ³⁷ես ոչ ինչ համարիմ զսոսա, զծնեալս³⁸ յառնէ ամբարշտէ ըստ մարմնոյ, մահկանացուս ի մահկանացուէ³⁹: 8 ⁴⁰Եւ արդ, տէ՛ր իմ⁴¹, եթէ արժանիս⁴² համարիս զսոսա մնալ⁴³ ի վերստին ծննդեանն⁴⁴, որ ի Հայր եւ յՈրդի եւ ի

1 AC պատգամաւորս / B յաշխարհ իւր զգալուստ իւր եւ զդառնալն փիս պատգամաւոր ... իւրոյ
 2 A զգալստեան / C զգալստեանն
 3 B եւ փիս որոյ
 4 B ոմն փիս մտեալ
 5 B ունի՝ Ծուշանկանն
 6 A զողջոյնն
 7 B չի՞ր առնն
 8 B գառնէն իւրմէ՛ փիս Գորա եւ զաւետիս գալստեանն
 9 B չի՞ր եւ
 10 AB չի՞ր Գորա
 11 B ասէր արտասուսալ փիս յարտասուս եղեալ ասէ
 12 B զնշմարտութիւնն փիս զքրիստոնէութիւնն / A զքրիստոնէութիւնն
 13 A ատրշունաց
 14 B եւ եղեւ ընդ պարսկական օրինաւն փիս հաւանեալ ... արինաց
 15 B եւ փիս իբրեւ լուսաւ բարեպաշտ (C բարեպաշտ)
 16 A ունի՛ եւ
 17 B եղուկ փիս աւաղէր
 18 B զուրացեալ
 19 B ունի՛ ասէր
 20 B աւաղ փիս եղուկ
 21 B ունի՛ իւր
 22 B Գորա երեք որդիք
 23 B եւ անկանէր

24 B ունի՛ այսպէս
 25 B ունի՛ ամենակալ
 26 B արարող
 27 B այնպիսի
 28 B միածնիւդ քո որդւովդ արհմութեամբ բանիւդ քո փիս բանիւ ... միածնի քո
 29 C արբանեկաց
 30 B դրոշմեալս
 31 B աւետարանաւն փիս աւագանին
 32 B որդիս լուսոյ եւ որդիս տուրնջեան (C տուրնջեան) լինել եւ անուանել փիս լինել որդիս ... տուրնջեան
 * Հ՞մար. Յ՞ւզ. Գ. 5:
 33 B յախտաւոր / B ունի՛ եւ
 ք Ը թէ՛. Է. 5. Հ՞մար. Յ՞ւզ. Գ. 6:
 34 A առնէ / B յառն
 35 A եւ փիս ի
 36 B միոյ հովուի նշմարտի Յիսուսի Քրիստոսի ք Տէ՛ր. Յ՞ւզ. Ժ. 16:
 37 B եւ իմ ինչ ոչ / C եւ իմ ոչ ինչ
 38 AC ծնեալս / B զծնեալսս
 39 B ունի՛ եւ ոչ ասել ինձ
 40 B չի՞ր եւ արդ
 41 B չի՞ր իմ
 42 A արժանի
 43 B ունի ի նշմարիս եւ
 44 B ծննդեանդ փիս ծննդեանն որ

սուրբ Հոգին, պահեա՛ զգոսա մշմարտութեամբ ի հաւատս ուղիղս եւ ի գործս բարիս, զգաստութեամբ² կալ³ յերկրի՝ եւ ոչ պաշտել զարարածս, այլ զԱրարիչդ, որ ես աւրհնեալ յաւիտեանս⁴: 9 Զի դիմեալ զայ ուրացողն⁵ լի ամբարշտութեամբ⁶ որսալ զիս եւ զծնունդս⁷ իմ ի վիհս⁸ կորստեան: 10 Եւ արդ, տէր Յիսուս Քրիստոս, քեզ յանձն առնեմ զիս եւ ⁹զորդիս իմ, որ Տէրդ¹⁰ ես եւ Աստուած. ¹¹եւ ես պատրաստ եմ ¹²չարչարանս ընդունել եւ մեռանել վասն անուանդ¹³ ¹⁴քո սրբոյ, զի դու ես Աստուած ճշմարիտ եւ քեզ վայել է երկրպագութիւն եւ փառք յաւիտեանս յաւիտենից¹⁵»:

11 Եւ ¹⁶այլ եւս բազում պաղատանս ամենատեառնն մատուցանէր արտասուաւք երանելին յայգուէ մինչեւ ցերեկոյ յեկեղեցւոջն: 12 Եւ ¹⁷ի կատարել զպաշտանն երեկոյին ուխտաւորք¹⁸ եկեղեցւոյն¹⁹ ամենեքին սգակիցք²⁰ լինէին նմա²¹:

13 Եւ նա յարուցեալ մտանէր ի տնիկ²² մի փոքրիկ, որ էր մերձ²³ յեկեղեցին. եւ կայր յաղաւթս առ Աստուած՝ լալով ²⁴եւ ողբալով զգիշերն ամենայն, ²⁵եւ ի դառնութենէն անհանգիստ լեալ եւ ոչ ինչ ճաշակեալ: 14 Եւ ոչ ոք²⁶ իշխէր ²⁷ճամարձակիլ եւ բան ինչ խաւսել ի մերձաւորացն:

Ք. 1 Եւ եպիսկոպոսն ոչ պատահէր անդ²⁸ ի ժամուն յայնմիկ Ափոց²⁹ ի³⁰ տանն բղեշխին, բայց ³¹դրան երէց տիկնոջն համարձակեալ՝ ³²սփոփէր զնա վասն անհնարին վտանգիցն³³. ³⁴զի այն երեք տիւ էր եւ երեք գիշեր զի անկերակուր էր եւ անհանգիստ: 2 Եւ³⁵ ասէ ցերանելին. «Յիշեա զԱստուած եւ նովին³⁶ յուսովն³⁷ զքեզ մխիթարեա, որ տայ երկայնամտութիւն տարակուսելոց եւ կեանս այնոցիկ, որ մաշեալ են սրտիւք: 3 Արդ³⁸ անձամբ զանձնդ³⁹ սփոփեա ի Քրիստոս ⁴⁰մարտն-

1 AC Հոգիդ / B ի հոգին Սուրբ. B ունի եւ սնեալ յարդարութեան ի վերայ բազկաց իմոց առաջի փոյլ տէրութեանդ
2 B ունի եւ արդարութեամբ եւ աստուածապաշտութեամբ / C արդարութեամբ
3 B կեալ
* Հմմտ. Տէր. Բ՝ 12:
4 AC յաւիտեան / B ունի ամէն
5 B ուրացեալն եւ
6 A ամբարտաւանութեամբ փխ ամբարշտութեամբ
7 A ծնունդս
8 C վիհ
9 AC գոսա փխ զորդիս իմ
10 AC տէր
11 B եւ պատրաստ եմ եւ
12 B չարչարել փխ չարչարանս ընդունել
13 A անուան
14 B ունի եւ ոչ հաւասարել կամաց ուրացողին եւ պիղծ անկողնակցին
15 B ամէն փխ յաւիտենից
16 B չի՛ք այլ եւս
17 B կատարեցին զպաշտանն երեկոյին փխ ի կատարել ... երեկոյին
18 B ուխտ
19 B ունի եւ

20 AC սգակից
21 B եւ ակնածէին խաւսել բան վասն այնորիկ փխ նմա
22 A տուն
23 B մերձէր
24 AC չի՛ք եւ ողբալով
25 B անհանգիստ, ամենեւին ոչ ինչ ճաշակեալ ի դառնութենէ անձին իւրոյ փխ եւ ի դառնութենէն ... ճաշակեալ
26 B չի՛ք ոք
27 C համարձակել / B համարձակ խաւսել բան փխ համարձակիլ ... խաւսել
28 B չի՛ք անդ
29 AC Ափոյ / B չի՛ք Ափոց
30 AC չի՛ք ի
31 B երէց դրան
32 B սփոփել գտիկինն փխ սփոփէր զնա
33 A վշտակիցն փխ վտանգիցն / C վտանկին
34 B չի՛ք զի այն ... եւ անհանգիստ
35 B չի՛ք եւ
36 AC նորին
37 AC յուսով
* Տէ՛ր. Ս՝ 19:
38 B չի՛ք արդ
39 AC զանձն
40 B եւ մարտիր զբարիոք փխ մարտնչելով զբարւոք / C զբարիոք

չելով զբարութ^ա մարտն, որով¹ կեաս եւ հանդիսանաս, ²եւ մխիթարութեամբ զանցաւորս թողուլ³ եւ յուսովն⁴ մերձենալ առ Աստուած, որ կարողն է յամենայնի, թէպէտ եւ ⁵ոչ ունիս զոք համաշունչ, որ⁶ ընտանեբար⁷ հոգասցէ⁸ վասն քո»։ Եւ այլովք⁹ բանիւք բազմաւք քաջալերէր¹⁰ եւ¹¹ մխիթարէր զերանելին¹²։

4 Այնուհետեւ¹³ եւ մերձաւորացն¹⁴ համարձակեալ, ¹⁵աղաչէին զերանելին առնուլ կերակուր. եւ նորա¹⁶ ունկնդիր եղեալ՝ սակաւ ինչ ճաշակէր¹⁷։ 5 Եւ յարուցեալ զոհանայր զտեառնէ, եւ զգիշերն ամենայն յաղաւթս եւ ի սաղմոսերգութիւնս եւ յընթերցմունս¹⁸ աստուածային¹⁹ գրոց անցուցանէին։ 6 Եւ²⁰ մրրկեալ սիրտն՝ ²¹եւ խռովեալ եւ տարակուսեալ, ²²ապա փոքր ինչ կազդուրէր յուսովն Աստուծոյ։ 7 Եւ ²³ի կատարել զառաւաւտու²⁴ պաշտանն²⁵ տային աւրհնութիւն Աստուծոյ։

« Հմտ. Ը ՏՅԺ. Զ 12 :

- 1 AC որ
- 2 AC չի՛ք եւ մխիթարութեամբ
- 3 AC թողով
- 4 AC յուսով
- 5 B ոչ գո՛ր ունիս
- 6 B եթե փ/ս որ
- 7 C ընտանեբար
- 8 AC հոգայցէ
- 9 B այդաւփ
- 10 AC չի՛ք քաջալերեալ
- 11 AC չի՛ք եւ
- 12 B գնա փ/ս գերանելին
- 13 B չի՛ք այնուհետեւ
- 14 B ունի ընդ նա
- 15 B չի՛ք աղաչէին զերանելին
- 16 B չի՛ք նորա
- 17 B նաշակեալ / B ունի կերակուր եւ ըմպելի
- 18 B յընթերցումն
- 19 B չի՛ք աստուածային
- 20 B ունի փոքր ինչ
- 21 B եւ տարակուսեալ եւ խռովեալ
- 22 B չի՛ք ապա փոքր ինչ
- 23 BC կատարեալ փ/ս ի կատարել
- 24 BC գառաւատին
- 25 A ունի եւ

8 Եւ մատուցեալ ²⁶զրան քահանային ասէ ցտիկինն. «Զի՞նչ եղիր ի մտի եւ զի՞նչ ունիս առնել զյարուցեալ²⁷ պատերազմս²⁸ ի վերայ քո ²⁹յուրացող բղբշխէն յաղագս ³⁰բազում չարեացն զոր գործելոց է»։ ³¹Պատասխանի ետ տիկինն³² եւ ասէ. «Այսոքիկ վտանգեն³³ ³⁴զանձն իմ եւ³⁵ որդւոց³⁶ իմոց՝ տարակուսանք եւ հոգք, զի գիտեմ զառնն³⁷ զամբարշտութիւնն եւ³⁸ վասն այնորիկ յերկարեմ զսուզն³⁹ եւ ցտիմ արտասուաւքս⁴⁰։ 9 Ո՞վ⁴¹ տայր զլիտյ իմոյ ջուր եւ աչաց իմոց աղբերս⁴² արտասուաց, եւ յանապատի աւթեւանս⁴³, որ լայի^է յաղագս անհնարին⁴⁴ առն իմոյ ամբարշտի⁴⁵ կորստեան⁴⁶ եւ⁴⁷ ուրացողի զԱստուած ճշմարիտ, եւ վասն ծննդոց իմոց

- 26 B քահանայն դրանն
- 27 A զարուցեալ / B որ յարուցեալ է
- 28 B պատերազմ
- 29 B յուրացողէն փ/ս յուրացող բղբշխէն
- 30 B միաւորութեանն իւրոյ վասն դստերն, որ ըստ պարսկաց արիւնին հանդերձեալ էր առնուլ իւր ի կնութիւն. եւ յաղագս որդւոցն դարձուցանելոյ յԱստուծոյ նշմարտէ, եւ առնել որդիս խաւարի՝ որպէս զինքն, եւ յաղագս ամենայն չարեացն զոր հանդերձեալ էր ցուցանել ըստ խրատու մոգուցն եւ ազդման չարին. ասել զարդարութիւն եւ սիրել զանարեւելութիւն եւ զամպարշտութիւն, զի յամենայնի կատարեսցէ զմեզս փ/ս բազում չարեացն զոր գործելոց է
- 31 B ետ պատասխանի
- 32 B կինն
- 33 B վտանգէ
- 34 B զիմ անձս
- 35 BC չի՛ք եւ
- 36 B ուստերաց եւ դստերաց փ/ս որդւոց
- 37 AC զառն
- 38 C չի՛ք եւ
- 39 C զսուփս
- 40 B արտասուաւք
- 41 B եւ ո՞վ
- 42 AC աղբերս
- 43 C աւթեւանս
- է Տէ՛* Եբէ՛. Թ՝ 1-2 :
- 44 B վիրաց եւ անբժշկելոյ փ/ս անհնարին
- 45 C չի՛ք ամբարշտի
- 46 B չի՛ք կորստեան
- 47 C չի՛ք եւ

տարակուսանաց՝ այլ յայլմէ¹ երեւմանց² լեալս³, յաստուածգիտութենէ⁴ յանաստուածութիւն⁵, ի լուսոյ ի խաւար փոխարկեալս⁶: 10 Ո՞վ ոչ ողբասցէ⁷ զայսքան կորստեան համբաւ⁸, այսպէս⁹ ո՞ր լսելիք բերեն զլուր կորստեան¹⁰, որ ոչ ունի յոյս¹¹ մխիթարութեան, ո՞ր տեսանելիք տարցեն¹² զտեսութիւն առն ամբարշտի եւ ուրացողի զԱստուած, ո՞ր բան ունիցի¹³ զայսքան աղետիցս¹⁴ պատմել զթշուառութիւն¹⁵ եւ զվտանգ¹⁶, ո՞ր համբաւ մահուց¹⁷, որ այսպէս գիտի եւ զվարմից կորուսանէ ի գեհեմի¹⁸։ ո՞ր մեռեալ որ ոչ թողուցու¹⁸ մասնին¹⁹ մխիթարութեան մերձաւորաց իւրոց յերկրի²⁰: 11 Որո՞վք այսօքիւք մերժեցից զսուգս եւ ²¹սակաւ մի հանդարտեսցի²² անձն իմ: 12 Ո՞ր²³, որքան է վտանգս²⁴ այլս²⁵ ի վերայ այլոց²⁶. ո՞վ է²⁷ ²⁸իմաստուն եւ հանճարեղ, որ իմասցի զլու-

ծումն²⁹ գտանել պատահելոցս. ո՞վ մարդիկ³⁰, ասացէք: 13 Ընդ³¹ էր, տէր, կացեր ի հեռաստանէ եւ անտես արարեր զաղախին քն ի դէպ նեղութեան³¹ եւ տարակուսանաց³² եւ վտանգաւոր ժամանակի³³, որ³⁴ ոչ այլ ուստեք³⁵ իցէ³⁶ մխիթարութիւն՝ բայց յԱստուծոյ: 14 Ո՞չ վերակացուք³⁷, ո՞չ մերձաւորք³⁸, ո՞չ սիրելիք, ո՞չ ծառայք, ո՞չ աղախնեայք, ³⁹ո՞չ ընտանիք, ո՞չ ատարք, ո՞չ պանդուխտք, ո՞չ հեռաւորք, ո՞չ մերձաւորք⁴⁰ եւ ո՞չ ոք յերկրայնոցս⁴¹: 15 Կորեաւ հաւատ⁴², հատաւ⁴³, սպառեցաւ ամենայն յոյս իմ⁴⁴ ⁴⁵ի մարդկանէ եւ յերկրէ. բայց ակն կալայց Աստուծոյ ամենակալի⁴⁶, որ փրկեսցէ⁴⁷ զիս եւ տայցէ⁴⁸ ինձ թեսս որպէս աղանոյ⁴⁹, զի թոռցեալ թեսաւ եւ⁵⁰ ⁵¹չնորհաւ Հոգւոյն սրբոյ ⁵²հեռացեալ դադարեցից յանապատի՛: 16 Եւ ⁵³տայցէ զաւրութիւն ընդունել⁵⁴ ի վերին

1 A այլմէ / B յայմդէ
 2 C չի՞ երեւմանց
 3 B լեալ
 4 A աստուածգիտութենէ
 5 B յանաստուածգիտութիւն
 6 B փոխարկեալս
 7 B ողբասցի
 8 B համբաւս / C է որ
 9 B որ լսի փիս այսպէս
 10 A կորստեանս
 11 B մասն փիս յոյս
 12 B տարցին
 13 AC ունի
 14 B աղետից / C աղէտիցս
 15 B զթշուառութիւնս
 16 B զվտանգս
 17 B մահու
 18 * Մարգ. Ժ 28
 18 B թողու
 19 B չի՞ ինչ
 20 AC չի՞ յերկրի
 21 AC չի՞ սակաւ մի
 22 AC հանդարտեսցէ
 23 B չի՞ ո՞ր
 24 AC վտանգ
 25 B այլ
 26 B ունի զանուշութիւն հեծութեան իմանալ
 27 B չի՞ է
 28 B հանճարեղ եւ իմաստուն եւ

29 AC լուծումն
 30 A մարդիկ
 31 B նեղութեանս
 32 B տարակուսանացս
 33 B ժամանակիս
 34 * Տէ՛ր * Մարգ. Ժ 1:
 34 B զի փիս որ
 35 AC ուրէք
 36 B է փիս իցէ
 37 AC վերակացու / B վերայկացուք
 38 AC մերձաւոր
 39 B չի՞ ոչ ընտանիք / C ընդանիք
 40 B մատուորք
 41 A երկնայնոցս / B երկրայնոցս
 42 AC չի՞ հաւատ
 43 C հատեալ
 44 B չի՞ իմ
 45 B յերկրէ եւ ի մարդկանէ
 46 A ամենակալէ
 47 AB փրկէ
 48 C տայցէ
 49 AC զաղանոյ
 50 B չի՞ եւ
 51 B հոգւոյն սրբոյ շնորհաւ
 52 B հասանել եւ դադարել փիս հեռացեալ դադարեցից
 53 * Մարգ. Դ 7-8
 53 B ընդունել փիս տայցէ / C տայցէ
 54 B չի՞ ընդունել

խնամոցն, եւ սթափել¹ փոքր ինչ ի մրրկեալ խոռովութենէս², որպէս³ ինքն գիտէ իւրով իմաստութեամբն⁴: 17 Եւ ես պատրաստ եմ տալ ⁵զանձն իմ՝ բանտից⁶ եւ կապանաց եւ ամենայն կտտանաց, որով նեղէ գիս ⁷ամբարիշտն եւ ուրացողն, զի Աստուծով կեցից եւ մեռայց վասն անուան նորա, եւ ոչ թողից զաւանդութիւն սուրբ⁸ հարցն իմոց՝ լուսաւորչացն Հայոց, եւ ոչ դրդուեցայց յընդդիմակցաց⁹ իմոց, որք գինին¹⁰ ընդդէմ անձին իմոյ եւ ճշմարտութեան¹¹ աւանդիցն¹², որ ի Հայր եւ յՈրդի¹³ եւ ¹⁴ի Հոգին սուրբ խոստովանութիւն եւ երկրպագութիւն եւ փառաբանութիւն. ¹⁵զի հաստատուն եւ անշարժ ¹⁶եւ անդրդուելի¹⁷ կացից մնացից¹⁸ զաւրութեամբ եւ շնորհիւ տեառն, եւ ընդ ուրացողին ոչ միաբանեցայց¹⁹ եւ ոչ²⁰ պղծեցայց, այլ²¹ վարուց սրբութեան եւ արդարութեան պատկառ²² եղէց²³ համբերութեամբ բազմաւ ի փառս Աստուծոյ²⁴, որ զամենայն

մարդիկ²⁵ կամի զի կեցցեն եւ ի գիտութիւն նշմարտութեան եկեսցեն՞»:

18 Եւ այլով²⁶ բանիւք բազմաւք աւաղէր ողորմ-ողորմ²⁷ գծնունդս որովայնի իւրոյ եւ զվայրենութիւն առնն²⁸ ամբարշտի, որ դիմեալ գայր յարուցանել պատերազմ²⁹ ընդդէմ ճշմարտութեանն³⁰ եւ դնել որոգայթս եւ որսալ ի կորստեան վիհն մեղաց ուրացութեամբ եւ պղծութեամբ զուստերս եւ զդատերս ըստ պարսկական աւրինացն: 19 ³¹Եւ միտիթարէր գինքն յուսովն Աստուծոյ. զմտաւ ածեալ³² զոր³³ ի սաղմոսերգութեանն պատմի, թէ³⁴ «Ոչ կամէր միտիթարել անձն իմ, յիշեցի զԱստուած եւ ուրախ եղէ»³⁵: 20 Եւ³⁶ առժամայն զտրամութիւնն³⁶ փոխարկեաց³⁷ յուրախութիւն: 21 ³⁸Եւ այնպէս քաջալերեալ գինքն՝ յԱստուած ապաստան առնէր զամենայն:

Դ. 1 Յայնժամ գայր բղեաշխն ուրացեալ յաշխարհ³⁹ Վրաց⁴⁰ եւ⁴¹ ի տուն իւր⁴². կոչեաց զեպիսկոպոսն իւր եւ զքահանայսն, խաւսէր ընդ նոսա աղերսանաւք⁴³ եւ պարգեւս խոստանայր եւ⁴⁴ առաւել

1 AC գութափել
 2 B սրտնեղութենէս եւ վիստութենէս փիս խոռվութենէս
 3 B եւ որպէս փիս որպէս
 4 B ունի եւ մարդասիրութեամբն
 5 B գանձս փիս գանձն իմ
 6 B բանդից
 7 B չիք ամբարիշտն եւ
 8 B չիք սուրբ
 9 A ընդդիմակցաց / B յնդդիմակց
 10 AC զինուորին
 11 A նշմարտութիւն
 12 B աւանդից
 13 A որդի
 14 B սուրբ հոգին փիս ի հոգին սուրբ
 15 B չիք զի հաստատուն եւ
 16 AC չիք եւ անդրդուելի
 17 B ունի եւ հաստատուն
 18 B չիք մնացից
 19 B միաւորեցայց
 20 B չիք ոչ
 21 B եւ փիս այլ
 22 AC ունի եւ հպատակ
 23 B չիք եղէց
 24 B չիք աստուծոյ. ունի՝ եւ ի գովութիւն տեառն մերոյ եւ փրկչին Յիսուսի Քրիստոսի

25 A մարդիք
 * U S Գ. Ի 4
 26 B պղաւք
 27 A չիք ողորմ
 28 AC առն
 29 AC պատերազմն
 30 AB նշմարտութեան
 31 B եւ զինքն յուսովն Աստուծոյ միտիթարել
 32 B ածել
 33 B որ
 34 B չիք թէ
 Զ Ս Գ. Գ. 3-4
 35 B ունի՝ այսպէս քաջալերեալ զինքն
 36 C զտրամութիւն
 37 AC փոխարկեալ / B յուրախութիւն փոխարկեալ
 38 B չիք եւ այնպէս ... զինքն
 39 AB Յաշխարհն
 40 AC իւր փիս Վրաց
 41 A չիք եւ
 42 AC չիք իւր / B ունի եւ
 43 B ողորմաւք
 44 AC չիք եւ

քան զառաջինն ունել ի բարիոջ¹. «Մի՛ խորշիք, ասէ², եւ մի՛ խղճէք յիմմէ³ տերութենէս⁴»: 2 Յղէր պատգամս եւ⁵ առ տիկինն՝ դառնալ յիւրոց կամացն եւ հաւանել կամաց նորա եւ վայելել ի փառս աշխարհիս առաւել քան զառաջինն:

Ե. 1 Եւ նոքա եկեալ, եւ եղբայր բզեշխին ընդ նոսա, որում անուն էր Զոջիկ, եւ յարտասուս եղեալ ամենեքեան ական ածէին ասել զպատգամս ուրացողին: 2 Եւ յետ բազում ողբոց եւ հառաչանաց, ուր ուրեմն սկսան⁶ ասել եպիսկոպոսն⁷ եւ Զոջիկն զասացեալսն ի բզեշխէն:

3 Իսկ տիկինն ասէ ցեպիսկոպոսն խստագոյն ձայնիւ⁹. «Եւ դու՞ զայդ հրամայես՝ միաբանել ընդ առն ամբարշտի եւ ուրացողի զԱստուած, այդպիսեա՞ց¹⁰ լինիս թելադիր իբրեւ¹¹ մտախաբ. աւանդ իմոյ թշուառութեանս, որ միսիթարիչ¹² ինձ ոչ գտաւ: 4 Ծանիք զնենդութիւնս¹³ ամբարշտին, որ ձեաւք¹⁴ խարդախէ զիս ի կորստեան վիհն. մի՛ ընդունիք զնորայսն, որ ձեաւք¹⁵ որսայ¹⁶ զկորուստ հոգւոց որպէս զինքն: 5 Բայց ես ոչ խաբիմ¹⁷ իմաստութեանն¹⁸ առաջնորդեալ¹⁹ ինձ յարդա-

րութիւն: 6 Լուայ²⁰ առաքելական խրատուն, որ զմարգարէական բանն²¹ յիշեցուցանէ, ասէ²². «Ելե՛ք ի միջոյ նոցա եւ մեկնեցարու՛ք, ասէ տէր, եւ ի պիղծս մի մերձեցայք»²³, զի որ մերձեցայ ի պոռնիկն²³ եւ յուրացողն մի մարմին է. եւ որ մերձեցայ ի տէր՝ մի հոգի է²⁴. եւ ուր հոգին²⁴ է՝ անդ ազատութիւն է ի²⁵ մեղաց²⁵: 7 26²⁶ եւս, ասէ, ընկալայց գձեց, եւ ես եղէց ձեզ Աստուած. եւ դու՛ք եղիջիք ինձ յուստերս եւ ի դստերս, ասէ տէր ամենակալ²⁷: 8 Իսկ որովհետեւ զայս աւետիս²⁷ ունիմք, ²⁸սիրելիք եւ վերակացուք իմ, որոշեցէ՛ք²⁹ զիս ի նմանէ, ³⁰եւ միաւորեցայց ընդ Քրիստոսի, որ փրկէ³¹ զիս³² ի հաղորդութենէ ուրացողին, ³³որսացելոյն ի սատանայէ յիւր³⁴ կաման: 9 Եւ ինձ լիցի ամենայն սրբութեամբ եւ արդարութեամբ պաշտել զԱստուած կենդանի եւ զամենայն չարչարանս եւ ³⁵վտանգս ընդունել, զոր ածելոց է ի վերայ իմ ուրացեալն յԱստուծոյ ³⁶եւ թշնամին արդարութեան»:

1 AB ունի ասէ
2 AB չի՛ք ասէ
3 A յիմէ / B յիմ
4 B ունի ասէր եւ
5 AB չի՛ք եւ
6 B սկսաւ
7 A եպիսկոպոսին
8 B եւ նա փիս իսկ տիկինն
9 B բանիւք փիս ձայնիւ
10 B եւ այսպիսեացս փիս այդպիսեաց
11 B եւ փիս իբրեւ
12 B յորդորիչ փիս միսիթարիչ
13 AC գնեցութիւն
14 A ձեռաւ / B ձեւ
15 A ձեռաւ փիս ձեռաւ / B չի՛ք ձեռաւ
16 B խաբէութեամբ փիս զկորուստ ... զինքն
17 A խաբիմ
18 A իմաստութեան
19 AC առաջնորդ եղեալ

20 B լուր
21 B բանսն
22 B չի՛ք ասէ
23 Խ Կ. Գ. Գ 17
24 B չի՛ք եւ յուրացողն
25 Բ Տէ՛՞ Ե Կ. Գ. Գ 16-17:
24 B հոգի տեսուն փիս հոգին
25 B չի՛ք ի
26 Բ Տէ՛՞ Խ Կ. Գ. Գ 17:
26 B չի՛ք եւ ես, ասէ ... ամենակալ
27 Խ Կ. Գ. Գ 18
27 B ազատութիւն փիս աւետիս
28 B վերակացուք իմ եւ սիրելիք
29 B ո՞ր որոշեցէ փիս որոշեցէք
30 B չի՛ք եւ միաւորեցայց ... Քրիստոսի
31 B փրկելոցն է փիս փրկէ / C փրկէն
32 B ունի ի հրոյն յաւիտենից եւ
33 B չի՛ք որսացելոյն ի սատանայէ յիւր կաման
34 AC ի նորա փիս յիւր
35 B վտանգ ընդունել եւ զչարչարանս / A զվտանգս / C վտանկս
36 B չի՛ք եւ թշնամին արդարութեան

10 Ասէ եպիսկոպոսն. «¹Ասացեալքդ ի քէն բարիոք են. բայց զայս զմտաւ ²պարտ է ածել, թէ³ ⁴դուցէ յառաւել բարկութիւն եւ ի նախանձ յուզիցի⁵ եւ յարուցանէ չար ի ⁶վերայ չարի վերակացուաց եւ ժողովրդոց, այլ⁷ յարուցեալ եկեսցես, թերեւս⁸ փոքր մի շիջանիցի⁹ բարկութիւնն¹⁰»:

11 Նոյնպէս եւ եղբայր բղձիւնն աղաչէր:

12 Եւ ամենեցուն ստիպեալ եւ յոյժ թախանձեալ¹¹, հաւանէր կամաց նոցա եւ ասէր¹². «Արարից զկամս ձեր¹³: 13 Ես գիտեմ զի չարչարանս ածելոց է ի վերայ իմ, այլ¹⁴ դուք գնասլիք¹⁵ յիւրաքանչիւր տեղիս եւ զիս միայն թողուցուք. եւ չեմ միայն, զի տէր իմ¹⁶ ընդ իս է՝ յոր յուսացեալն եմ¹⁷. զի¹⁸ տէր է իմ աւգնական՝ եւ ես¹⁹ ոչ երկեայց. զի՛նչ²⁰ արասցէ ինձ մարդ²¹»:

14 Եւ յարուցեալ երթայր զհետ նոցա. եւ մտեալ յապարանսն՝ ոչ հաւանէր երթալ ի սենեակն²² իւր, այլ ի տնկան²³ միում

արգելոյր զինքն եւ²⁴ կայր յաղաւթս առ տէր Աստուած եւ ասէր. «Տէր Աստուած²⁵ իմ²⁶, ի քեզ եմ յուսացեալէ, ողորմեա²⁷ ինձ, ողորմեա, որ աւգնականդ ես անաւգնականից²⁸, տարակուսելոց՝ վստահութիւն. անյուսից՝ յոյս²⁹, սգաւորաց՝ մխիթարութիւն, խռովելոց՝ բերկրանք, նեղելոց՝ սփոփանք, զրկելոց՝³⁰ իրաւարար, հիւանդաց՝ առողջութիւն³¹, տրտմեցելոց՝ ուրախութիւն, հալածելոց՝ տեղի, բեկելոց՝ ողջացուցիչ, վտանգելոց՝ անդորրութիւն³², աղքատաց՝ մեծութիւն, տառապելոց՝ տուրք, աշխատելոց՝ հանգիստ, չարչարելոց՝ զաւրացուցիչ³³, ³⁴հաւելոց՝ նաւահանգիստ, որբոց՝ հայր, անազգաց՝³⁵ ազգ, ի քեզ ³⁶յուսացելոց՝ ապաւեն եւ մեծ յոյս: 15 Տո՛ւր ինձ, տէր³⁷, զաւրութիւն եւ ժուժկայութիւն, պնդութիւն³⁸ ի բարկանալ սրտմտութեամբ³⁹ ուրացողին ի վերայ իմ յազգմանէ չարին, ⁴⁰զի պահեցայց սրբութեամբ եւ անարատութեամբ, եւ ճշմարիտ հաւատով, որ ի Հայր եւ յՈրդի եւ ի սուրբ Հոգին⁴¹:

16 Դու ինքնին⁴² գիտես, տէր իմ, զի ի մանկութենէ⁴³ զմեզս¹ ատեցի եւ անարգե-

1 B նշմարիտ եմ ասացեալիդ ի քեզ փխ ասացեալիդ ի քեզ բարիոք (A բարւոք) եմ
 2 AB չիք պարտ է
 3 B եթէ
 4 B առաւել ի բարկութիւն փխ գուցէ յառաւել բարկութիւն
 5 B յուզի
 6 C չիք վերայ չարի
 7 B բայց փխ այլ
 8 AC զի փխ թերեւս
 9 B շիջանի
 10 AB բարկութիւն / B ունի անարիւնիւն
 11 A ունի եւ / B ունի գերանելիւն
 12 AC ասէ
 13 B + եւ
 14 B եւ փխ այլ
 15 AC գնացէք
 16 AC չիք իմ
 17 C չիք եմ
 18 AC եւ փխ զի
 19 B չիք ես
 20 AC զի փխ զի՛նչ
 21 B չարն փխ մարդ
 * Ս աղք. ճ ժ-Է 6
 22 B սենեակ
 23 A տուն

24 C չիք եւ
 25 BC չիք Աստուած
 26 B ունի ես
 Զ Հմմտ. Ս աղք. Է 1:
 27 AC ողորմեաց / B ողորմեայ
 28 B ունի եւ
 29 B ունի եւ
 30 B ունի իրաւունք եւ
 31 B ունի եւ
 32 B ունի հալածելոց
 33 B ունի կապելոց արձակիչ
 34 B չիք մաւելոց մաւահանգիստ
 35 AC անազգից
 36 B ապաւինելոց եւ յուսացելոց փխ յուսացելոց ... յոյս
 37 AB չիք տէր
 38 C պնդութեան
 39 B սրտմտութեան
 40 B եւ պահեցից զիս փխ զի պահեցայց
 41 AC հոգիդ / B ունի զի
 42 A ինքն
 43 B ունի իմմէ

ցի, եւ զաւրէնս քո սիրեցի: 17 Յիշեա՛, 2 մարդասէ՛ր տէր, զծառայան քո՝ զհարսն իմ, որոց ես 3 զարմ եմ, որք սիրեցին զքեզ 4 ճշմարիտդ Աստուած 5, եւ նոցա բարեխաւսութեամբ աւգնեա ինձ ի պատերազմիս, որ առաջի կայ ինձ 6. զի 7 ոչ ոք է իմ աւգնական, ո՛չ հայր եւ ո՛չ եղբայր, եւ ո՛չ այլ ոք ի մերձաւորաց, որ ընտանեբար 8 9 եւ կամաց հոգասցէ 10: 18 11 Դու, Աստուած իմ եւ տէր, հայր եւ ուղղիչ 12, մի՛ թողուր զազախին քո ի խնամոց 13 քոց եւ յողորմութենէ: 19 Այլ 14 տուր ինձ զաւրութիւն կատարել զընթացս իմ նեղութեամբ՝ նմանութեամբ 15 հարցն իմոց, զի 16 եւ նոցա 17 մասին 18 հանգստեան 19 ժառանգորդ զտայց 20: 20 Եւ արդ, ի քեզ եմ 21 յուսացեալ, որ զսուրբն Հոփսիսիմէ 22 փրկեցեր ի 23 բռնութենէ թագաւորին եւ 24 յամալթ արարեր զհսկայազաւրն 25. եւ զիս՝ 26 զանարժանս

ապրեցո 27 ի բռնութենէ 28 ուրացողին, զի քո է յաղթութիւն եւ 29 քեւ յաղթեցից: 21 Եւ քեզ փառք 30 յաւիտեանս. ամէն»:

22 Եւ կատարեալ զաղաւթսն, մնայր անդէն ի տնկանն 31 զերիս աւուրս անկերակուր եւ անըմպելի 32. եւ հոգեւոր կերակրովն առաւելեալ 33 լինէր, անդադար սաղմոսերգութեամբ 34 ի տուէ եւ ի գիշերի:

Ձ. 1 Եւ յերրորդում 35 աւուրն իբրեւ յընթրիս 36 մտին, առաքեաց զեղբայրն իւր զՋոշիկ 37 38 եւ զկին նորին՝ կոչել յընթրիս 39 զտիկինն: 2 Եւ նա ոչ հաւանէր. եւ յետ բազում աղաչանաց եւ ողորական բանից՝ երթայր լալով եւ տրամութեամբ: 3 Եւ 40 ունէր 41 աւետարան մի փոքրիկ, որ էր 42 նախնոյ նորա սրբոյն Սահակայ, զոր 43 ընդ իւր ունէր եւ նովաւ 44 աղաչէր զԱստուած ի ծածուկ: 4 Եւ ոչ եկեր եւ ոչ արբ 45 ի զիւական ընթրեացն 46, այլ լուռ եղեալ արտասուաւք՝ յիշատակաւ 47 խոստացելոց 48 բարեացն Աստուծոյ եւ 49 հոգեւոր վայելմանցն, որ ի Քրիստոս Յիսուս, մխի-

1 A ունի իմ
2 B չի՛ մարդասէր տէր
3 B եմ գարմ
4 A քեզ
5 Աստուածդ A
6 B չի՛ ինձ
7 B եւ փխ զի
8 A ընտանաբար / C ընտանեբար
9 B չի՛ քու ըստ կամաց
10 B ունի վասն իմ
11 B այդ դու, տէր Աստուած իմ փխ դու Աստուած իմ եւ տէր / C Աստուած իմ եւ տէր
12 A ուղեղ
13 AC կամաց փխ խնամոց
14 B եւ փխ այլ
15 B նմանել
16 B չի՛ զի
17 AC նոցին
18 B ունի եւ
19 B հանգստեանն
20 B եղեց փխ գտայց
21 AC եմք
22 AC Հոփսիսիմէ
23 AC քաղաւորին բռնութենէն / B բարկութենէ փխ բռնութենէ
24 B ունի զնա
25 B չի՛ զհսկայազաւրն
26 B զանարժանս աղախին քո փխ զանարժանս

27 B փրկեա փխ ապրեցո
28 B բարկութենէ փխ բռնութենէ
29 B յաղթեցից քեւ
30 B ունի այժմ եւ
31 AC տանն
32 C անըմպելի
33 B աղցեալ փխ առաւելեալ
34 B ունի եւ աղաւթիւք
35 A յերրորդի
36 B յնթրիս
37 B զՋոշիկն
38 B չի՛ եւ զկին նորին
39 B յնթրիս
40 AC չի՛ եւ
41 AC ունէր. ունի եւ
42 AB նախնոյն / B նախնոյն իւրոյ էր
43 B չի՛ գոր
44 B ի ծածուկ զԱստուած աղաչէր
45 AC էարբ
46 B ունի այնցիկ
47 B ի յիշատակս
48 A խոստովանելոց / C խոստացելոցն
49 AC ունի ի

Թարէր¹: 5 Եւ յարուցեալ զնայր ի տեղի իւր:

6 Եւ բղեաշխն առաւել² սրտմտեալ³ յուզէր ի բարկութիւն. ⁵Եւ իբրեւ զբաւ եղեւ ընթրեացն, եւ զնացին⁶ յիւրաքանչիւր⁷ տեղիս, առաքեաց դարձեալ եւ⁸ կոչեաց զնա առ ինքն: 7 Իսկ նա ոչ կամեցաւ գալ⁹: 8 Յայնժամ¹⁰ յարուցեալ ¹¹երթայր ինքն գազանացեալ եւ քարչէր զնա ծառայիւքն ¹²ի տեղին: 9 Եւ ¹³նա աղաղակէր եւ ասէր. «Տէր Յիսուս, աւգնեա՛ ինձ»:

10 Եւ հարկանէր զնա բրաւք սաստիկ յոյժ, եւ ոչ ոք կարէր շիջուցանել ¹⁴զբարկութիւն առնն: 11 Յայնժամ ազգ առնէին¹⁵ եղբարն բղեշխին¹⁶, եւ եկեալ ոչ կարէր ցածուցանել ¹⁷զբարկութիւն եղբարն. այլ եւ զնա արհամարհանաւք հաւածէր ի ¹⁸տեղի իւր: 12 Եւ անաչառ եւ անողորմ զհարուածսն սաստկացուցանէր՝ մինչեւ ոչ մնաց ի նմա տեղի ողջ ի բրածեծն¹⁹ առնելոյ: 13 Եւ²⁰ կայր իբրեւ զմեռեալ. ²¹Եւ ոչ լինէր ձայն ի բարբառ երանելոյն, եւ համարեցաւ զնա մեռեալ:

14 Եւ ²²բղեաշխն առաւել զայրացեալ նախատէր զԱստուած եւ զհարս ²³սուրբ տիկնոջն: 15 Իբրեւ պարտեցաւ²⁴ լքաւ, ետ հրաման անդրէն²⁵ քարչել զերանելին ի տնիկն²⁶ իւր, զի²⁷ համարեցաւ զնա մեռեալ:

Է. 1 Եւ ընդ առաւաւտն յարուցեալ երթայր ի²⁸ տեսանել զերանելին: 2 Իբրեւ ետես եթէ²⁹ կենդանի է, պահապանս կարգեաց՝ ³⁰հրաման տուեալ մի՛ թողուլ զոք ³¹մտանել առ նա յարանաց կամ ի կանանց, զի նովին չարչարանաւք մեռցի, եւ կերակուր տալ³² գարի հաց եւ ջուր հրամայէր: 3 Իսկ³³ երանելին ³⁴կայր վտանգեալ եւ³⁵ գոհանայր զտեսանէ³⁶, որ վասն անուան նորա արժանի եղեւ չարչարանս կրել³⁷ եւ ի հաղորդութենէ՝ ուրացողին փրկեցաւ, որպէս եւ ինքն ցանկայր, եւ յուսայր այսոցիկ այսպէս³⁸ եղելոց³⁹, որ ի փառս Աստուծոյ կատարեցաւ: 4 Եւ ինքն ⁴⁰բղեաշխն ի գործ աշխարհին կարգեցաւ:

1 B չի՛ք միտքարէր
2 B չի՛ք առաւել
3 AC տրտմեալ փիս սրտմտեալ
4 B յուզի բարկութեամբ
5 B չի՛ք եւ իբրեւ զբաւ եղեւ ընթրեացն եւ
6 B անցին փիս զնացին
7 A իւրաքանչիւր
8 B չի՛ք եւ
9 B գնալ փիս գալ
10 B չի՛ք յայնժամ
11 B ինքն երթայր
12 AC չի՛ք ի տեղին
13 AC չի՛ք աղաղակէր եւ
14 B զբարկութիւնն փիս զբարկութիւնն առնն (C առնն)
15 AC եղեւ փիս առնէին
16 B չի՛ք բղեշխին
17 B զբարկութիւնն փիս զբարկութիւնն եղբարն
18 B բաց փիս տեղի իւր
19 A բրածեծ
20 B ունի՛ նա
21 B չի՛ք եւ ոչ լիներ ... զնա մեռեալ

22 AC ինքն զայրագնեալ փիս բղեաշխն առաւել զայրացեալ
23 B նորա փիս սուրբ տիկնոջն, ունի՛ եւ յետ բազում հարուածոցն
24 B պակասեցաւ փիս պարտեցաւ
25 AC չի՛ք անդրէն
26 A տուն / B տեղի
27 B եւ փիս զի
28 AC չի՛ք ի
29 AC թէ / B եթե
30 B չի՛ք հրաման տուեալ
31 C յարանց կամ ի կանանց մտանել առ նա փիս մտանել ... կանանց
32 B չի՛ք տալ
33 B եւ փիս իսկ
34 B ոչ ինչ զանգիտեալ փիս կայր վտանգեալ
35 B այդ փիս եւ
36 B զԱստուծոյ փիս գտեսանէ
37 B ընդունել փիս կրել
38 B չի՛ք այսպէս
39 B եղելոցս
40 B զնայր ի գործ աշխարհին փիս բղեաշխն ... կարգեցաւ

5 ¹Եւ ապա գայր դրան քահանայն եւ աղաչէր զպահապանսն, զի տեսանիցէ՝² ³զերանելի տիկինն: 6 ⁴Եւ յետ բազում աղաչանաց տեսանէր զնա. եւ նա ոչ կարէր կանգնել ի սաստիկ յայտմանէն՝⁵ մարմնոյն եւ յարենէն, որ մածեալ՝⁶ էր զնովաւ: 7 Եւ տեսեալ քահանային՝ լայր դառնապէս՝⁸: 8 Եւ ասէր՝⁹ երանելի տիկինն. «Մի՛ լար՝¹⁰ ի վերայ իմ, զի առանց՝¹¹ չարչարանաց հանդիսի՝¹² եւ նախատանաց ոչ արդարանայ՝¹³ առաջի Աստուծոյ ամենայն մարդ, եւ ոչ շնորհք Փրկչին լքանէ եւ՝¹⁴ թողու զոք առանց ողորմութեան, որք՝¹⁵ յուսան ի նա: 9 Ես՝¹⁶ այսու չարչարանաւքս՝¹⁷ սրբեցայ ի՝¹⁸ պիղծ անկողնոյ՝¹⁹ առն ամբարշտի: 10 Եւ արդ՝²⁰ ես ուրախ եմ ընդ չարչարանս, որ եհաս ինձ, զի այսու՝²¹ հանդիպեցայց՝²² բարի ժառանգութեան հարցն իմոց, որ ի Քրիստոս Յիսուս.՝²³ եւ ես վասն այսր ամենայնի գոհութիւն հատուցի եւ հատուցից նմա՝²⁴ հանապազ»:

11 Եւ քահանայն՝²⁵ աղաչէր զերանելին առնուլ կերակուր. եւ նա թէպէտ եւ՝²⁶ կամէր, այլ ոչ կարէր ի սաստիկ հարուածոցն: 12 Եւ՝²⁷ ապա հազիւ սակաւ ինչ ճաշակեալ՝²⁸ եւ յետ աւուրց ինչ գայր ի լաւութիւն փոքր մի. եւ կայր յաղաւթս անդադար՝²⁹ ուր արգելեալն էին զնա՝³⁰ ի տուէ եւ ի գիշերի, եւ ճաշակէր սակաւ մի ի գարէ՝³¹ հացէն եւ ի ջրոյն:

13 Ընդ՝³² ժամանակս՝³³ ընդ այնոսիկ հասանէր երկիւղ ուստեք. եւ զորդիս նորատանէին՝³⁴ յամուրս ուրեք՝³⁵ անցուցանելով՝³⁶ ընդ կուր գետ: 14 ³⁷Եւ մի ի մանկանցն գետավէժ լինէր, եւ մեծ սուգ՝³⁸ լինէր բոկելիսին՝³⁹ եւ աշխարհին: 15 Իսկ՝⁴⁰ տիկինն՝⁴¹ իբրեւ լսէր՝ գոհանայր գտեառնէ եւ ասէր՝⁴². «Թէպէտ եւ՝⁴³ ըստ մարմնոյ մեռաւ, այլ ըստ հոգւոյ ապրեցաւ յորոգայթէ՝⁴⁴ հաւր իւրոյ ուրացողի. եւ արդ՝⁴⁵ Աստուծոյ՝⁴⁶ փառք՝⁴⁷ յամենայնի»:

16 Իսկ՝⁴⁸ մարզպանն եւ նախարարքն Վրաց գային առ բոկեալին՝ մխիթարել

1 AC գայր ապա փիս եւ ապա գայր
2 AC տեսցէ
3 B գերանելիմ փիս գերանելի տիկինն
4 B չի՛ք եւ ետ բազում ... զնա
5 B ունի յամենայն / C այտմանէ
6 B մածեալն
7 B չի՛ք տեսեալ քահանային
8 B ունի քահանայն
9 AC ասէ
10 B լայր
11 B հանդիսի եւ չարչարանաց
12 B չի՛ք եւ նախատանաց
13 B արդարանա
14 BC չի՛ք եւ
15 AC ոյք
16 B եւ փիս ես
17 AC չարչարանաւքս
18 A չի՛ք ի
19 B անկողնոց
20 B չի՛ք արդ
21 B ունի չարչարանաւքս
22 AC հանդիսացայց փիս հանդիպեցայց
23 B եւ գոհութիւն վասն այսր ամենայնի հատուցի փիս եւ ես վասն ... հատուցի
24 AC չի՛ք նմա

25 B չի՛ք քահանայն
26 A չի՛ք եւ
27 B չի՛ք ապա հազիւ
28 B չի՛ք եւ յետ աւուրց ... փոքր մի
29 B ունի գտիւ եւ զգիշեր
30 B չի՛ք ի տուէ եւ ի գիշերի
31 B գարի
32 A եւ ընդ փիս ընդ
33 B ժամանակս
34 B տանելի
35 AC չի՛ք ուրեք
36 B անցուցանել
37 B եւ ի մանկանցն դաւ լինէր փիս եւ մի ի մանկանցն գետավէժ լինէր
38 C սուգ
39 B բոկելիսին լինէր
40 B եւ փիս իսկ. ունի՛ երանելի
41 B չի՛ք իբրեւ լսէր
42 B զԱստուծոյ ասելով փիս գտեառնէ եւ ասէր
43 B չի՛ք եւ
44 B յորոգայթից
45 B չի՛ք արդ
46 B Քրիստոսի փիս Աստուծոյ
47 AC փառս
48 B եւ փիս իսկ

զնա վասն մանկանն եւ լուծանել զսուզն¹:
 17 Եւ նա յղէր առ տիկիինն, զի յարուցեալ
 երթիցէ ի բանտէն² եւ ի տան միում³ պա-
 ճապանաւքն կացցէ՝ մինչեւ մարգպանն եւ
 նախարարքն դարձցին⁴ յիւրաքանչիւր⁵
 տեղիս: 18 Եւ նա խնդութեամբ կատարէր
 զհրամանն⁶ առն ամբարշտի⁷: 19 Եւ նորա⁸
 երթեալ անդ⁹, զանձն կրաւնաւորական
 զգեստիւ եւ¹⁰ կարգաւորութեամբ հանդի-
 սացուցանէր¹¹ առաւել քան զառաւել յաւ-
 ժարութեամբ պահաւք եւ աղաւթիւք,
 տքնութեամբ եւ արտասուլաւք. եւ ամե-
 նայն լուսաւոր կարգաւք հանդիսանայր՝
 մինչեւ զարմանալ ամենեցուն¹² ընդ վարս
 սրբոյն¹³: 20 Զի այնպէս¹⁴ ցանկորդեալ էր
 աստուածասիրութեամբ, որ ոչ ինչ մեղկէր
 զնա ի ճգնութենէն. վասն զի ամենայն
 բարի գործաւք¹⁵ յարդարեալ էր անձն ե-
 րանելոյն՝ սուրբ, մաքուր, պարկեշտ¹⁶, ա-
 նարատ, մեղսատեաց, արդար, ճշմարիտ,
 ուղիղ, սրբասէր, բարեսէր¹⁷, խոնարհ, հեզ,
 հլու, հպատակ, հնազանդ¹⁸, ցած, հան-
 դարտ¹⁹, ողորմած, աղքատասէր, հիւրա-
 սէր, պահող²⁰, տքնող²¹, մաղթող²², արտա-

սուող²³, աշխատասէր, գործասէր, արդիւ-
 նաւոր, ընթերցասէր, լսող²⁴, անոխակալ,
 աննախանձ, անամբարտաւան, անբարկա-
 նալի, անընչասէր, անարծաթասէր²⁵, ան-
 փառասէր, այլ²⁶ աստուածասէր, հանճա-
 րեղ, իմաստուն, խորհրդական, իրաւարար,
 աստուածապաշտ, մեկնեալ յամենայն ի-
 րաց չարաց՝ արժանի ըստ երկնային կոչ-
 մանն խորհէր²⁷ եւ արժանաւորապէս²⁸ ըստ
 աւետարանին Քրիստոսի՝ 29 անարատու-
 թեամբ կենցաղավարեալ յաշխարհի վա-
 րէր³⁰ զկեանս իւր:

21 Եւ իբրեւ³¹ եղեւ³² դառնալ մեծամե-
 ծացն յիւրաքանչիւր³³ տեղիս, յղէր
 բղեաշխն առ երանելի տիկիինն ողորպական
 բանիւք դառնալ յայնպիսի կամացն³⁴ եւ
 հաւանել կամաց նորա: 22 Եւ խոստանայր
 պարգեւս եւ առաւել³⁵ մեծութիւն՝ 36 եւ
 պատիւ քան զառաջիինն:

23 Իսկ նա ոչ առնոյր յանձն բնակել
 37 ընդ առն ամբարշտի եւ ուրացողի զԱս-
 տուած: 24 Այլ³⁸ զգարդս³⁹ եւ զպատուա-
 կան հանդերձս իւր ետ տանել առ
 բղեաշխն եւ պատասխանի առնէր, թէ⁴⁰.
 «Զի՞նչ բաժին կայ հաւատացելոյն ընդ ան-

1 C սուլն
 2 BC գնդակէն փխ բանտէն / B ունի՝ յապարանսն
 եպիսկոպոսին, որ մաւտ էր յեկեղեցին
 3 B կայցէ պահապանաւքն հանդերձ
 4 B դարձցին փխ գնացեն
 5 A իւրաքանչիւր
 6 AC գիրամանսն
 7 B չիք առն ամբարշտի
 8 AC չիք նորա
 9 B չիք անդր
 10 B չիք եւ
 11 B հանդիսանայր
 12 B ամենեցունց
 13 B ընդ հանդէս նահատակութեան երանելի
 կնոջն փխ վարս սրբոյն
 14 B էր ցանկորդեալ
 15 B գործովք
 16 B չիք պարկեշտ
 17 B չիք բարեսէր / C բարեսէր
 18 B չիք հնազանդ
 19 AC չիք հանդարտ
 20 C պահաւ

21 B չիք տնող / C տնաւոյ
 22 B ունի՝ տեկնող / C մաղթաւոյ
 23 B արտասուլաւք / C արտասուաւոյ
 24 C լսաւոյ
 25 B չիք անարծաթասէր
 26 AC չիք այլ
 27 B խորհել
 28 B արժանապէս
 29 B չիք անարատութեամբ ... յաշխարհի
 30 B վարեալ
 31 B չիք իբրեւ
 32 B ունի՝ ի
 33 A իւրաքանչիւր
 34 A կամաց
 35 AC աւելի
 36 AC չիք եւ պատիւ
 37 B այլ ընդ փխ ընդ առն ամբարշտի եւ
 38 B եւ փխ այլ
 39 B զգարդսն
 40 B չիք թէ

հաւատին. եւ զի՞նչ հաղորդութիւն է¹ լուսոյ ընդ խաւարի. եւ զի՞նչ ²միաւորութիւն է տանարի Աստուծոյ ընդ³ պոռնկի⁴։
 25 ⁵Արդ ես ի ձեռն չարչարանացս⁶ սրբեցայ⁷ ի քո բնակցութենէդ⁸ եւ յառաջին միաւորութենէն⁹։ 26 Ես¹⁰ Քրիստոսի ընծայեցայ¹¹. ոչ փառք, ¹²ոչ պատիւ, ոչ մեծութիւն ¹³եւ ոչ ինչ ի¹⁴ մարդկայնոցս իրք՝ փափկութիւնք եւ հեշտութիւնք ¹⁵կարիցեն որոշել զիս ի սիրոյն Քրիստոսի, այլ¹⁶ չարչարանաւք փոխեցայց յաշխարհէ¹⁷ եւ մեծի թագաւորին մերձ կացից, եւ անտի լուսովն առլցայց¹⁸, զորոյ¹⁹ փոքր²⁰ ինչ զխոստումն²¹ աստէն ընդունիմ շնորհաւքն²² Յիսուսի Քրիստոսի։ 27 Արդ²³ այսպէս կացից մնացից²⁴ զգուշութեամբ ի խորհուրդս արդարութեան²⁵։ 28 **Զոր ինչ կամիս²⁶ արա. ես պատրաստ եմ մեռանել**

27 վասն անուանն Քրիստոսի սրբութեամբ, քան թէ անցանել զաւանդութեամբ²⁸ սուրբ²⁹ հարցն իմոց³⁰»։

Ը. 1 Եւ տարեալ զկարասին եւ զզարդսն³¹, պատմեցին նմա ³²զասացեալսն երանելի[ւ]ոյն։ 2 Իսկ³³ ³⁴անաւրէն բղեաշխն առաւել ի³⁵ բարկութիւն շարժեալ³⁶ սպառնայր ³⁷չար անցս անցուցանել ընդ երանելի աղախինն Քրիստոսի։ 3 Եւ առ ցասմանն ոչ ներէր, այլ յարուցեալ ինքնին երթայր եւ զոմանս³⁸ ի³⁹ ծառայիցն ընդ իւր ⁴⁰տանէր. եւ երթեալ⁴¹ գտանէր զնա, ⁴²զի կայր յաղաւթս յեկեղեցուջն, եւ ոչ ներէր, այլ մտեալ հարկանէր զնա բրով⁴³ սաստիկ, եւ բուռն հարկանէր զհերացն⁴⁴ եւ քարչէր ⁴⁵ի դուրս յեկեղեցուոյն։ 4 Եւ ⁴⁶ոք ոչ իշխէր բուռն հարկանել եւ թափել ի գայլոյն զորոջն Քրիստոսի։ 5 Բայց մի ոմն ի քահանայիցն ⁴⁷ասէր. «**Զի՞ այդչափ հարկանես անողորմաբար**»։ 6 Եւ նա ի վերայ նորա զցասուամն

1 B չի՛ք է
 2 B միաբանութիւն փիս միաւորութիւն է
 3 B եւ փիս ընդ
 4 C պոռնկի
 * ՏԷ՛՞Բ Ա՞՞Ր. Զ 14-16 :
 5 B որ փիս արդ ես
 6 B չարչարանաց
 7 B ունի՛ գոր ածեր ի վերայ իմ
 8 B բարկութենէն փիս բնակցութենէդ / A բնակցութենէն
 9 B միաւորութեանցն
 10 AC եւ փիս ես
 11 AC ունի՛ զի
 12 B ոչ մեծութիւնք, ոչ պարտիւք
 13 B ոչ փիս եւ ոչ ինչ
 14 AC չի՛ք ի
 15 B չի՛ք կարիցեն ... Քրիստոսի
 16 B եւ փիս այլ
 17 AC յերկրէ փիս յաշխարհէ
 18 B լցայց / C լրցայց
 19 B գոր
 20 A փոքրն
 21 B գիտումն փիս զխոստումն
 22 B շնորհաւք. ունի՛ եւ մարդասիրութեամբ տեսուն մերոյ եւ փրկչին
 23 B չի՛ք արդ
 24 B ունի՛ հանդերձ
 25 B ունի՛ եւ ոչ նստայց յաթոռ ժամդից
 Բ Ա՞՞Ր. Ա՞՞Ր. Ը 1-2 :
 26 B առնելոց եւ փիս կամիս

27 B չի՛ք վասն անուան ... սրբութեամբ
 28 B գաւանդութեան
 29 B չի՛ք սուրբ
 30 B իմից
 31 B ունի՛ եւ
 32 B գոր ինչ ասաց երանելին փիս զասացեալսն երանելոյն
 33 B եւ փիս իսկ
 34 B ամպարիշտն փիս անաւրէն բղեաշխն
 35 C չի՛ք ի
 36 B բարկութիւն ձգեր փիս բարկութիւն շարժեալ / A շարժեաց / B է եւ
 37 B չարչարանս փիս չար անցս
 38 B զբագումս փիս զոմանս
 39 A չի՛ք ի
 40 B առեալ փիս տանէր եւ
 41 B չի՛ք երթեալ
 42 B չի՛ք զի կայր յաղաւթս
 43 B բրով
 44 AC զհերաց նորա փիս զհերացն
 45 B յեկեղեցուոյն ի դուրս
 46 B ոչ ոք
 47 B չի՛ք ասէր / B զի՞ այդպէս անողորմ չարչարես, ասէր

հեղոյր եւ հարկանէր զքահանայն¹ սաստիկ յոյժ², եւ ամենայն ժողովեալքն³ զձիչ բարձեալ լային⁴ առ հասարակ արք եւ կանայք: 7 Եւ նա զիմէր յամենեսեան⁵ ի հարուածս՝ որպէս գազան չար եւ անընդել:

8 Եւ գերանելին քարչէր ընդ երկիրն, ընդ փուշ եւ ընդ խոչ⁶, ընդ քար⁷ եւ ընդ թուփ եւ⁸ 9 Հրամայէր յապարանսն տանել. եւ պատառ պատառ լինէր ամենայն մարմին նորա, զի էր դժնիկ երկիրն, եւ արիւն հոսէր¹⁰ ի նմանէ, եւ գերկիրն արեամբ ցնդեալ¹¹ ցուցանէր տեսողացն:

Թ. 1 Եւ հասեալ յապարանսն՝ անաւրէն[ն]¹² դարձեալ ի հարուածսն յաճախէր, եւ¹³ առաւել քան զառաջինն: 2 Իսկ¹⁴ սուրբ¹⁵ աղախինն Քրիստոսի ոչ ինչ բարբառէր, այլ ետ զինքն Աստուծոյ եւ ժուժկալութեան. եւ կայր մեծաւ ուժով, եւ ոչ ինչ գրեաց զչարչարանսն¹⁶ եւ¹⁷ զբրածեծ գանիցն: 3 Նա եւ¹⁸ զհանդերձիկն, որ զանձամբն եւ զգլխովն էր¹⁹, ի քարչանցն²⁰ ի բաց գերծոյր²¹ ի նմանէ. եւ նա²² մերկ գլխովն²³ եւ պատառուտուն²⁴ զգեստովն

պատսպարէր զանձն²⁵ եւ գոհանայր զԱստուծոյ²⁶ ի վերայ²⁷ անցիցն անցելոց: 4 Եւ ամբարիչտն ոչ ամաչէր եւ ոչ ողորմէր նմա²⁸, այլ յազգումանէ չարին յարուցեալ²⁹ ասէր. «Աւգնեսցէ քեզ Քրիստոս³⁰ եւ եկեղեցին եւ աղաւթք³¹ քո³² եւ հաւր քո, յոր յուսացեալն³³ ես»: 5 Եւ տայր կապել³⁴ գոտս եւ զձեռս երանելոյն երկաթի կապանաւք եւ տանել³⁵ ի բանտ³⁶ 37 եւ երկանել շղթայս ի պարանոցն³⁸: 6 39 Եւ հրամայէր⁴⁰ վարել ցիցս երկաթիս ընդ որմն, եւ զշղթայսն⁴¹ ընդ այն կապել, եւ կնքէր⁴² զշղթայսն եւ զկապանսն: 7 Եւ պահապանս կարգէր՝ մեծաւ⁴³ ահիւ եւ զգուշութեամբ պահել եւ մի՛ գոք ամենեւին թողուլ⁴⁴ առ նա. եւ կերակուր⁴⁵ զարէ⁴⁶ հաց եւ⁴⁷ ջուր հրամայէր: 8 Եւ ասէր. «⁴⁸Ուրախ լեր արդ՝⁴⁹ չարչարանացդ հանդիպեցար եւ

1 B չիժ գփահանայն
 2 B ունի՛ գնա
 3 B ժողովուրդքն
 4 AC չիժ լային
 5 AC յամենեսսին
 6 B ունի՛ եւ
 7 B չիժ եւ ընդ թուփ
 8 B ունի՛ ապա
 9 B յապարանսն հրամայէր
 10 B չիժ հոսէր
 11 B չիժ ցնդեալ
 12 B չիժ անաւրէն / C անաւրէնսն
 13 AC չիժ եւ
 14 B եւ փիս իսկ
 15 B երանելի փիս սուրբ
 16 A զչարչարանս / B զբարչելն փիս զչարչարանսն
 17 B ունի՛ ոչ
 18 B զի փիս նաեւ
 19 B չիժ էր
 20 AC չիժ ի քարչանցն
 21 A ի բացիւն փիս ի բաց գերծոյր / C գերծոյին
 22 B չիժ նա
 23 AC գլխով

24 BC պատառուտուն
 25 B զանձն
 26 B գտեառնէ փիս զԱստուծոյ
 27 B վասն փիս ի վերայ
 28 B չիժ նմա
 29 AC զայրացեալ փիս յարուցեալ / B ունի՛ իբրեւ գեղեղատ սաստիկ ողորմել գերփել կարծէր զլուսաւոր վարս եւ զսրբութիւն երանելոյն եւ
 30 B չիժ եւ եկեղեցին
 31 B չիժ քո եւ
 32 B եւ հարցն քոց
 33 B յուսացեալ
 34 AC զնա փիս գոտս եւ զձեռս երանելոյն
 35 B արկանել փիս տանել
 36 B բանդ
 37 A չիժ եւ արկանել շղթայս ի պարանոց
 38 AC ունի՛ նորա
 39 B եւ վարել հրամայէր երկաթի ցից
 40 A հրամայեաց
 41 A շղթայն
 42 B զկապանսն եւ զշղթայսն
 43 AC չիժ ահիւ եւ
 44 B չիժ առ նա
 45 B ունի՛ նորա
 46 B զարի
 47 AC ունի՛ լոկ
 48 B արդ ուրախ լեր
 49 C ի չարչարանսդ որում / B որում հանդիպեցար չարչարանացդ

դառն կապանացի¹, որով կտտեմ զքեզ մինչեւ ի մահ»:

9 ²Պատասխանի ետ երանելին³ եւ աւսէ. «Ուրախ եմ ընդ այս⁴ չարչարանս, զոր ածէր ի վերայ իմ⁵ եւ լնում զպակասութիւն⁶ նեղութեանցն կապանաւքս իմովք վասն սիրոյն Քրիստոսի, զի արժանաւորեցայց ժառանգութեան⁷ սուրբ հարցն իմոց, զոր նախատես զնոսա եւ զԱստուած աւտարացեալը յԱստուծոյ եւ թշնամի արդարութեան: 10 Զի որքան յաւելուս գտանջանս⁸ իմ՝ առաւելուս ինձ զուրախութիւն, որ ոչ անցանէ, զի առժամայն⁹ նեղութեամբս¹⁰ զմեծութիւն առաւելութեան փառացն պատրաստես¹¹ ինձ, որ ոչ¹² սասանի յաւիտեան¹³ ք. եւ դու ընկալցիս վրէժս յարդարադատն¹⁴ Աստուծոյ յաւուրն այցելութեան»:

11 Եւ ամբարիչտն ոչ ինչ պատասխանի առնէր, այլ զարմանայր ընդ ժուժկալութիւն եւ ընդ համբերութիւն¹⁵ երանելւոյն¹⁶: 12 Եւ թողեալ զնա¹⁷ նովին կապանաւքն¹⁸ զնայր յաշխարհէն¹⁹ բռեաշխն²⁰:

Փ. 1 Եւ յետ երից աւուրց գայր դրան քահանայն²¹, տայր ինչս պահպանացն²² եւ մտանէր առ երանելին²³ եւ տեսանէր զնա կապանաւքն՝ լի ուրախութեամբ եւ զուարթութեամբ յանդադար սաղմոսերգութեան²⁴, եւ երանէր զնա, որ զայնպիսի համբերութիւն վասն անուանն²⁵ Աստուծոյ կրէր²⁶ 27 տանջանս եւ կապանս ընդունելով, եւ ասէր²⁸. «Երանելի ես դու ի կանայս²⁹. արդարեւ ի²⁹ բարի արմատոց³⁰ բարի շառաւեղ³¹ ցուցեալ³². յայսմ հետէ երանիցեն քեզ ամենայն³³ հաւատացեալք արդարապէս³⁴, զի յուսովն³⁵ Աստուծոյ վանեցեր զամբարիչտն եւ զանուն եւ զոգի ժառանգեցեր ըստ նմանութեան սրբոյն Հովիւ³⁶ փսիմէի³⁶, ընդ նմին եւ դու³⁷ պսակեցիս³⁸ յամենեցունց տեսունէն³⁹ եւ ի փրկչէն մերմէ Յիսուսէ Քրիստոսէ»:

2 Ասէ երանելին⁴⁰. «⁴¹Ես ⁴²ոչ եմ արժանի պսակաց եւ երանութեանց սրբոյն, որ ոչ մերձեցաւ⁴³ յայր¹ ամբարիչտ, ²այլ

1 AC կտտանաց փի կապանացի
 2 B ետ պատասխանի
 3 B տիկինն փի երանելին
 4 AC չի՛ր այս
 5 B չի՛ր եւ լնում ... սիրոյն Քրիստոսի
 6 A զպակասութիւն
 7 A ժառանգութեանց
 8 AC ի տանջանս
 9 B առժաման
 10 B նեղութիւնս
2 Քանզի եկեալ երկրորդ անգամ ի ձէնջ առ մեզ Սիմոն երէց աշխատասէր եւ անձանձրոյթ յամենայն ժամ ի խնդիր հաւատոյ, որ պատմեաց տակաւին զմարտ պատերազմի նորոգելով միւսանգամ Նեստորի, ո՛չ ընդունելով զգրեալսն ձեզ յամենայն ուղղափառաց յաղագս ճշմարիտ հաւատոյ, ընդ նմին եւ զառ ի մէնջն՝ զի ապրեսցին. այլ զի թրեւս կարասցէ շարժել զհաստատութիւն սրբոյ եկեղեցւոյ նսեմացուցանելով զհաւատս ուղղափառութեան յաշխարհի ձերում. եւ թէ որպէս աճեցեալ տակաւին եւս առ նոսին մոլորութիւն վտանգեցուցանէ զճշմարիտ հաւատ եղբայրութեան ձեր, որպէս սովորեաց նախանձ խանտանաց ի սկզբանէ, որով տարագիր եղեւ ազգ մարդկան յաստուածայնիցն բարեացն, եւ ոչ դադարեաց մինչեւ ցայսաւր ժամանակի, ալեկոծեալ սուրբ եկեղեցի, ի ժողովոյն Քաղկեդովնի զաւրացեալ: 3 Սկիզբն առնելով ի Նեստորէ չարիմաց խորհեցաւդէ, յաղագս Սրբոյ Երրորդութեանն, բաժանելով զմարմնանալն Տեառն ի սրբոյ Կուսէն Մարիամայ, որ իս-

կապէս մարդ միանգամայն եւ Աստուած խոստովանիմք եւ երկրպագեմք հանդերձ Աստուածութեամբն զմարմնաւորութիւնն, եւ հանդերձ մարմնաւորութեամբն զԱստուածութիւնն. նովին ակնդուլթեամբ խոստովանիմք եւ մեք զոր ընկալաք ի սուրբ ժողովոյն որ ի Նիկիա. Յ եւ ժԸ եպիսկոպոսաց, եւ նոցին խորհրդոց հազորդիմք ի կանոնացն շարագրեցելոց, քանզի է ճշմարիտ արդարեւ աստուածային գործակցութեամբ: 4 Եւ փախչիմք ուրացեալ զի Քաղկեդոնին ստութիւն Նեստորի եւ այլոցն նմանից, զոր գիտեմք կեղծաւորութեամբ փախուցեալ ի հեթանոսութենէ, եւ ի հրէական մոլորութենէ, եւ զնոյն խոստովանին զհեթանոսութիւն, միանգամայն եւ զհրէութիւն, պատրել ի մոլորութիւն զմիտս անմեղաց՝ որ է տգիտաց, վրիպեցուցանելով ի ճանապարհէ զկոյրս, որով սահմանեցաւ ի Սրբոյ Հոգւոյն մարգարէիւն հատուցումն նոցին, զոր սուրբ հարքն միաբանութեամբ իւրեանց ի Նիկիա յանդիմանեալ խզեցին զընթացս չար խորհրդոց նոցա. ի սրբոց գրոց՝ նզովելով զՆեստորիոս, եւ զԱրիոս, եւ զԴիոդորոս, եւ զԹէոդորիտոս, եւ զԵւտիքոս, եւ զՊաւղոս Սամուստացի, եւ զնմանս նոցին, որ խառնակութիւն զանգուածոյ զմարդանալն Քրիստոսի, ասել իշխեցին, իբր զլոկ մարդ, ո՛չ կատարեալ Աստուած ի մարմնի կատարելում: 5 Զոր եւ մեծն Ամպեղիս եպիսկոպոս Քերսոն քաղաքի, ճշմարիտ հաւատոյ սիրաւղ եւ սպասաւոր, գրեաց ճշտիւ, ճշմարտապէս, յորում փութացեալ ոչ վերջացաւ: 6 Նմին գրոյ նախանձաւոր լեալ երէցն բարեպաշտ Անատոլիս Կոստանդնուպալսի վկայեալ՝ սրբոյ եպիսկոպոսի Ամպեղի գրոյ, յաւելուած Սրբոյ Երրորդութեանն ոչ գիտացեալ՝ զի սրբոյ Կուսէն զծնունդն Որդւոյ, այլ զնոյն ինքն

Աստուած եւ Բան մարդացեալ անախտաբար՝ մնաց նոյն, որ յառաջ քան զյաւիտեանս երկրպագի ընդ Հաւր եւ ընդ Սուրբ Հոգւոյն: 7 Ճշմարտապէս գրեաց սուրբ քահանայապետն Քերսովնացւոց Ամպեղիս, հանդերձ երկոտասան գլխովք Կիւրղի եպիսկոպոսի երանելւոյ, ի նոյն յարելով եւ զթուղթն Զենոնի բարեբանելոյ թագաւորին Հոռոմոց, ստուգութեամբ վկայեաց երէցն աստուածասէր Անատոլիս: 8 Քանզի սրբոց հարանցն է աւանդութիւնս այս, մշակացն առաքինութեան, որոց ստուգիւ զհետ գնացեալ արդարութեան հալածեցին զստութիւն:

9 Հաւանեալ եմք ամենայն իրաւք գրելոցն առ ի նոցանէ եւ նովին վարիմք հաւատովք, ի սրբոց ՅԺԸ. իցն ժառանգեալ եւ ի ՃԾ. իցն հաստատեալ: 10 Իսկ որք ոչն խոստովանին այսպէս՝ ուրանալով զՈրդի, նոքա մոլորեալք ի տուրնջենէ, մոռանան զՀայր, զորս յիրաւի ձայնէ առաքեալն. Ծառս պողպակորոյս իլեալ արմատաւի, աստեղս մոլորս, որոց վիի խաւարին յալիտեմից պատրաստեալ մնայ՝, յազագս որոց Քրիստոս Տէրն փառաց զուրմեռաւ: 11 Քանզի զգեղեցիկ բանին Աստուծոյ ճաշակեցին զքաղցրութիւն, եւ հնազանդեցան կարծեաց աւտարաւտեաց: 12 Յազագս որոյ յամառեալ, ոչ գիտեն զինչ խաւսին, եւ յորում պնդեալն են. վասն զի Աստուած աշխարհիս այսորիկ, ըստ ասացելումն, Կուրացոյց զմիտս նոցա, զի մի ծագեացէ ի նոսա լուսաւորութիւն աւետարանի փրկչի նարարածոց՞, զոր յամենայն ժամ ընթերցեալ, եւ երբեք ոչ ծանեան: 13 Քանզի ոչ խոստովանելով զՈրդի ուրանան եւ զՀայր, զոր ասաց ուրանալ եւ ինքն Քրիստոս առաջի Հաւր, եւ պատուիրեաց եւ մեզ հրաժարել ամենեւին ի նոցանէ, եւ ատել մինչեւ բանիւ անգամ

զողջոյն նոցա: 14 Արդ զի եւ յայտնագոյն եղիցի խոստովանութեանս մերոյ բան, որպէս հաւատամք մեք Հայք ի Հայր եւ յՈրդի եւ ի Սուրբ Հոգին, յորոյ վերայ շինեալ եւ հաստատեալ է սուրբ եկեղեցի. Խոստովանիմք զՀայր, եւ զՈրդի զծնեալն ի Հաւրէ յառաջ քան զյաւիտեանս, անսկիզբն, մարմնացեալ ի սրբոյ Կուսէն Մարիամայ, ի փրկութիւն արարածոց, անքննելի անարատ ծննդեան աւրինակաւ, կոյս մնալով մաւրն. եւ ի Սուրբ Հոգին յանեղն եւ ի կատարեալն: 15 Աստուած զՀայր, Աստուած զՈրդի, Աստուած զՍուրբ Հոգի, յորում մկրտեցաքն, եւ մկրտիմք, ոչ հրէաբար պակասեցուցանեմք, եւ ոչ հերձուածողաւրէն վրիպեալ յաւելուածով, եւ ոչ նուազ եւ առաւել քան զմիմեանս: 16 Այլ երկրպագեմք, զԵրիսն ի միութեան փառաւորելով, եւ զՄին յերրորդութեան: 17 Այսպէս հաւատամք որպէս աւանդեցին մեզ սուրբ հարքն ՅԺԸ եպիսկոպոսքն ի Նիկիա, նահատակք ճշմարտութեան, եւ որք յեփեսոս, եւ նգովեմք զՆեստորիոս, եւ զԱրիոս, զԹէոդորոս, զԴեոդորոս, զԹէոդորիտոս, զԵւտիքոս, զՊաւղոս Սամուստացի, զԻբա, զԱկակ, զԲարծումէ, զԲաբէ, որք ի Պարսից աշխարհի գնոցուն զկանոն եւ զհաւատ, զարմատսն դառնութեան ի վեր երեւեալս, յորոց բազումք նեղեալ արտաքս հալածեցան ի ճշմարտութենէն սերման որոմամբք առ ի նոցանէ մշակեալք: 18 Զոր եւ աստուածանշան արանցն առաքինեաց, եւ երիցս երանելեացն նմանիցն նոցուն, Իգնատիոս, որ յառաքելոցն տունկ բարեպտուղ, Աթանասիոս ճառագայթն լուսոյ աշխարհի, Բարսիլիոս Կապադովկացւոց եկեղեցւոյն [Աստուածաբան] կոչեցեալ Գրիգորիոս մեծն, եւ երկուն եւս նորին համանունք, եւ Յուլիոս զարեւմտացն ճանապարհին կենաց առաջնորդ, եւ Ամբրոսիոս, Յովհաննէս, եւ Ատտիկոս, եւ Թէոփիլոս, եւ Կիւրղոս, եւ Պրովղոս, եւ չքնաղ հայր մեր Առիստակէս,

« Հմմտ. Յուրա 12-13:
 ք Հմմտ. Ի Կոր. Գ 4:

զաւակն արդարութեան սրբոյն Գրիգորի, եւ զՀայոց եղեալ սկիզբն եւ պատճառս աստուածային սիրոյն, եւ հաշտութեան:

19 Սոքա ամենեքեան ժողովեալ սրբոց, ասպնջական Երրորդութեանն, հաստատեցին վկայութեամբ հին եւ նոր կտակարանաց ընթանուր ի կաթողիկէ եկեղեցւոջ:

20 Այսուիկ վարիմք հաւատովք զոր եւ գրեցաք իսկ ձեզ յառաջագոյն, Վրաց եւ Աղուանից միաբանութեամբ իւրաքանչիւր աշխարհի գրով: 21 Եւ այժմ գնոյն երկրորդեցաք, ի ձեռն հասարակաց եղբար ըստ հաւատոյ Սիմէովնի նախանձաւոր երիցու, զի մի ոք համարձակեացի յայսմ հակառակել եւ ընդդիմանալ պատճառաւ առ ի մէնջ:

22 Այլ զի եւ այսու եւս խզեսցի յանդուգն եւ անտաւոր խորհուրդ հերձուածոյ նոցա, եւ աղաւթեսցուք հասարակաց, զի նոյն ինքն Երրորդութիւնն խափանեացէ զթշնամիս իւր, զհակառակորդս ճշմարիտ հաւատոյ, եւ զաւրացուցէ զպաշտաւնեայս եւ զերկրպագուս անուան իւրոյ: 23 Եւ զայս եւս ծանիցէ եղբայրութիւն ձեր, թէ որք ատեցին զՀայր՝ ուրացան զՈրդի՝ ո՛չ հնազանդեցան, Սուրբ Հոգւոյ նորա, ոչինչ են զարմանք, թէ եւ զգրեալսն ի բարւոյ խորհրդոյն ուղղափառաց եւ ի մէնջ ոչ ընկալան, զի ելցեն յաչաց ամենեւին ամաւթալից եղեալ յորժամ եկեսցէ Տէր առնել վրէժխնդրութիւն ի վերայ այսորիկ եւ յայտնել զգաղտնիս խաւարի եւ զծածուկս սրտից նոցուն ի դատապարտութիւն եւ զղջումն տարածամ: 24 Եւ վասն թղթոյն սրբոյ Ամպեղի եպիսկոպոսի, եւ Անատոլեայ երիցու, հրամայեցաք աստ գրել: 25 Եւ եթէ ի հերձուածողաց ոք գայ եւ դառնայ ի մեր սուրբ հաւատս, ընդունել արժան է զնոսա, վասն զի դուռն ողորմութեան Աստուծոյ հանապա՛զ բա՛ց է խոստովանողաց եւ ապաշխարողաց:

ՎԱՉԱԳԱՆ ԱՂՈՒԱՆԻՑ ԱՐՔԱՅ

ՍԱՐՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ ԿԱՆՈՆԱԿԱՆ

ԱՂՈՒԷՆԻ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ («ՍԱՅՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ ԿԱՆՈՆԱԿԱՆ»)

Վաչագան Բարեպաշտ Աղուանից արքայի կանոնները մեզ են հասել Ժ դ. վերջի պատմիչ Մովսէս Դասխուրանցու Պատմութիւն Աղուանից երկում (գլուխ Ա.իգ) եւ Հայոց կանոնագրքի ձեռագրերում: Վերջիններիս Ա խմբի օրինակներում նրանք կրում են ԼԵ, իսկ Բ խմբի օրինակներում՝ ԼԸ թուահամարը: Բնագիրը պարունակում է 21 կանոն եւ եկեղեցական ժողովի մասնակիցների անունները թուարկող առաջաբան եւ վերջաբան: Ըստ վերջինների՝ կանոններն ընդունուել են Աղուանից Վաչագան Բ Բարեպաշտ թագաւորի հրաւիրած ժողովում, որը գումարուել է արքայական ամառանոց Աղուէնում («ի հովոցի տեղի»):

Պատմութիւն Աղուանիցում բառացի արտագրութեամբ պահպանուած եւ պայմանականօրէն Վաչագանի վէպ անուանուող Զ դ. երկի տեղեկութիւնների համաձայն՝ Վաչագանը Բուն Աղուանքի վաղմիջնադարեան թագաւորութեան Արշակունի արքայատոհմի տասներորդ ներկայացուցիչն էր, իսկ Ժ դ. պատմիչը նրան համարում է բնիկ հայկական Առանշահիկ իշխանատոհմի շառաւիղ: Վաչագանի վէպը պատմում է, որ Վաչագանը թագաւոր էր ճանաչուել Սասանեան արքայից արքայ Վաղարշ Ա-ի (484-488 թթ.) կողմից (հաւանաբար Նուարսակի պայմանագրութեան շրջանակներում՝ 485 թ. աշնանը): Ըստ մեր վերջին հետազոտութեան՝ նրա իշխանութիւնը, հաւանաբար, շարունակուել է մինչեւ Զ դ. 20-ական թթ. եւ աւարտուել Կաւատ Ա Սասանեանի կողմից Վիրքում թագաւորական իշխանութեան վերացման հետ միաժամանակ՝ 523 թ.:

Վաչագանի վէպում, որը թուագրուած է Զ դ. ամենաառաջին տարիներով (հաւանաբար՝ 501-502 թթ.), յիշատակուած են Աղուէնի եկեղեցական ժողովի մի քանի մասնակիցներ, ընդ որում՝ կա՛մ նոյն, կա՛մ աւելի ցածր պաշտօններում. մասնաւորապէս՝ ժողովական Մանասէ Կապաղակի եպիսկոպոսը Վէպում դեռեւս «թագաւորի դրան» (նոյն Կապաղակ մայրաքաղաքի արքունիքի) երէցն էր: Այն, որ կանոններն ընդունուել են Վէպի ժամանակից աւելի ուշ, երեւում է նաեւ նորակառոյց Պարտաւ մայրաքաղաքի յիշատակութիւնից («Շուփհաղիշոյ Պարտաւայ արքեպիսկոպոս», «Մաթէ Պարտաւայ երէց»): Ըստ ուշասանեան պատմական աւանդոյթի վրայ հիմնուող արաբ մատենագիրների եւ Պատմութիւն Աղուանիցում պահպանուած 684 թ. պատմութեան տեղեկութիւնների՝ այն կառուցուել է Կաւատ արքայի կողմից եւ «Պերոզ-Կաւատ» անունով (որը նշանակում է՝ «Կաւատը յաղթող»): Դա, ամենայն հաւանականութեամբ, տեղի է ունեցել Զ դ. սկզբներին՝ պարսկա-բիւզանդական եօթնամեայ՝ 506-512 թթ., հաշտութեան տարիներին (ըստ ասորա-բիւզանդական աղբիւրների, այդ ժամանակ Անաստաս կայսրը նաեւ մեծ գումար վճարեց Սասանեաններին, հիւսիսկովկասեան սաւիր-հոների դէմ Կովկասեան պաշտպանական գիծն ամրապնդելու նպատակով): Ըստ այսմ՝ Աղուէնի ժողովի գումարումը առաւել մեծ հաւանականութեամբ հնարաւոր է թուագրել 510-ական թթ.:

Պատմագիտութեան մէջ փորձեր են եղել Աղուէնի կանոնները համարել աւելի վաղ ժամանակներում ստեղծուած: Ս. Յովհաննիսեանը փորձել է դրանք վերագրել Դ դ. երկրորդ կէսին եւ համարել ընդունուած Աշտիշատի եկեղեցական ժողովից յետոյ՝ Աղուանից մէկ այլ Վաչագան թագաւորի (իրականում՝ Յաւազան) օրերում: Հ. Ն. Ակիսեանի կար-

ծիքով, Աղուէնի կանոններն ընդունուել են Ե դ. առաջին կէսի վերջերին՝ Շահապիվանի ժողովի կանոններից յետոյ: Սակայն աղբիւրագիտական առկայ նիւթը ստիպում է մերժել Աղուէնի ժողովի թուագրումը ոչ միայն նման վաղ ժամանակներով, այլեւ Վաչագան Բարեպաշտի իշխանութեան առաջին տարիներով (480-490-ական թթ.), ինչպէս կարծում էին Աս. Մնացականեանը, Բ. Ուլուբաբեանը եւ այլոք:

Հետեւելով Հ. Ն. Ակինեանին՝ կարեւոր է արձանագրել, որ «Աղուէնի ժողովի կանոնները սերտ կապի մէջ են Շահապիվանի ժողովին կանոններու հետ (Հմմտ. կան. Ժ=ԺԳ: ԺԱ=Դ, Թ: ԺԲ=ԺԱ: ԺԵ=Բ: ԻԱ=ԺԷ): ...Հոս քանիցս կը յիշուի Կանոնագիրք մը («որպէս ի Կանոնսն գրեալ է՝ պատուհաս դիցեն»): ԺԵ. «կանոնիւք դատեսցին»): ԺԶ. «որ ի կանոնս գրեալ է»): ԻԱ.), որուն համաձայն կ'առաջնորդուին: ...Կանոններս գրուած են Ե դարու առաջին կէսին գործածական գրական հայերէնով, զոր սովոր ենք դասական անուանել»: Աւելացնենք, որ Վաչագանի վէպի հետ միասին Աղուէնի կանոնների ստեղծման գաղափարական նպատակն է եղել Սասանեան տէրութեան գերիշխանութեանը ենթակայ Աղուանք-Առան վարչաքաղաքական միաւորի մէջ Աղուանից եկեղեցու շուրջ համախմբուած քրիստոնեայ հասարակութիւնը (իր բունաղուանական եւ հայկական էթնիկ մասերով) ամրապնդել ոչ թէ բունաղուանական էթնոմշակութային համակարգի գործառութեան խորացման, այլ ընդհակառակը՝ Կուրի աջափնեակի հայութեան ազգային-մշակութային անանդներն այդ ամբողջ հասարակութեան համար հաստատագրելու ճանապարհով:

Աղբիւրագիտական տեսակէտից կարեւոր է նշել, որ Աղուէնի կանոնների առաջին պարբերութիւնը («Յամս Վաչագանայ՝ Աղուանից արքայի բազում հակառակութիւնք լինէին ի մէջ աշխարհականաց եւ եպիսկոպոսաց, եւ քահանայից եւ քորեպիսկոպոսաց, ազատաց եւ ռամկաց: Ապա կամ եղեւ արքայի՝ առնել ժողով յԱղուէն՝ բազմամբոյս ատեան, յամսեանն մարերի, որ աւր երեքտասան էր»), մեր համոզմամբ, բխում է ոչ թէ Աղուէնի ժողովի բուն արձանագրութիւնից, այլ աւելացուած է Կանոնագրքի՝ մի ինչ-որ վաղ ժողովածոյ կազմողի կողմից ճիշտ այնպէս, ինչպէս դա արուել է «բացատրագիր» չունեցող շատ ուրիշ կանոնախմբերի համար (այդպէս վարուել են ե՛ւ Յովհաննէս Օձնեցին, ե՛ւ նրա գործը շարունակողները): Դա նշանակում է, որ Մովսէս Դասխուրանցին կամ նրա մի որեւէ նախորդն է Աղուէնի կանոնների բնագիրն ընդօրինակել կանոնագրքի ինչ-որ օրինակից, ոչ թէ հակառակը, ինչպէս ենթադրում էր Հայոց կանոնագրքի գիտաքննական բնագրի հեղինակ Վ. Յակոբեանը: Դա նաեւ նշանակում է, որ անհրաժեշտ է որոշ վերապահումով մօտենալ «մարերի ամսի ԺԳ» ամսաթուի հաւաստիութեանը, որը նշուած է, առանց որեւէ արքայի տիրակալութեան համապատասխան տարուայ յիշատակութեան. թէպէտ հնարաւոր է նաեւ, որ Կանոնագրքի ժողովածոյ կազմողը այդ ամսաթիւը քաղել է Աղուէնի ժողովի արձանագրութեան՝ իր ձեռքի տակ եղած բնագրի (գուցէ մագաղաթեայ փաստաթղթի լուսանցքների կամ յետեւի կողմի) ինչ-որ մի նշումից:

Մեր կարծիքով, անհրաժեշտ է եւս մի վերապահում կատարել եւ պայմանական համարել նաեւ Աղուէնի կանոնների վերտառութիւնը. «Սահմանադրութիւն կանոնականի (K կանոնի) Վաչագանայ Աղուանից արքայէ (K արքայի) եղեալ ի ժողովոյն (a ժողովէն K ժողովն), որ յԱղուէնն եղեւ»: Աղուէնի ժողովի բուն արձանագրութեան բնագրում չկայ ո՛չ «սահմանադրութիւն» բառը, ո՛չ էլ «կանոն» եզրը՝ իբրեւ նիւթի բնորոշում: Եղած բնորոշումներն են՝ «կարգ» («կարգեցաք այսպէս»), «պայման» («զայս պայման արա-

րին»), «հրաման» («զայս հրաման մատանեցին»), «գիր» («վասն առաւել հաստատութեան գրոյս»): Ըստ այսմ՝ աւելի հաւանական է ենթադրել, որ մեր ունեցած վերտառութիւնը նոյնպէս գրուած է Աղուէնի ժողովի արձանագրութեան բնագիրը՝ Հայոց կանոնագրի ժողովածոյ ընդգրկողի կողմից:

Ուսումնասիրողների միահամուռ կարծիքով, Աղուէնի կանոններն ընդգրկուած չեն եղել Յովհաննէս Օձնեցու կազմած Հայոց կանոնագրի առաջին ժողովածոյի մէջ (որն ունեցել է 24 կանոնախումբ), սակայն դրանք եղել են արդէն այն ժողովածոյում, որն իր 38 կանոնախմբերով ծանօթ է եղել Անանիա Մոկացի կաթողիկոսին ժ. դ. կէսին: Յենուելով նախորդ հետազոտողների քննութեան վրայ՝ հաւանական է ենթադրել, որ Վաչագան արքայի կանոնների բնագիրը «յայտնաբերուել է» Ը. դ. երկրորդ կէսին՝ 768 թ. Պարտաւի եկեղեցական ժողովի գումարման առիթով Հայոց Սիոն Բաւոնեցի կաթողիկոսի՝ Արեւելից կողմերն այցելութեան ժամանակ (ըստ Ն. Ակինեանի՝ «Այն պարագան, որ Միքայէլ Աղուանից կաթողիկոս, երբ քննութեան կ'առնէր Շամքորի Բերդոյ վանքին մէջ 705-ին Վարազոյ իշխանին մերձամուսնութիւնը..., վկայութեան չէ կոչած Աղուէնի ժողովին Սահմանագրութեան ժէ կանոնը..., եւ դարձեալ Յովհաննէս Իմաստասէր կաթողիկոս Աղուէնի ժողովին Կանոնները իր կազմած Կանոնագիրքին մէջ չէ առած (իբր 725-ին), ենթադրել կու տայ, թէ Ը. դարուն առաջին կէսին տակաւին հրապարակի վրայ մատչելի չէին այս Կանոնները, ուստի անոնք գտնուած ըլլալու են Ը. դարու երկրորդ կէսին կամ Թ. դարում որ եւ է վանքի խուլ անկիւնը»): Առաւել ենթադրելի է, որ հէնց այդ օրերում այն վերցուել է Պարտաւի կաթողիկոսական դիւանից եւ արտագրուել Հայոց կանոնագրի մի նոր ժողովածոյի մէջ՝ Պարտաւի ժողովում ընդունուած կանոնների հետ միասին: Այս ժողովածոյին յանգող մի ձեռագրից, որը ժ. դ. երկրորդ կէսում պահուած է եղել Աղուանից կաթողիկոսարանի դիւանում, Աղուէնի կանոններն իր երկի մէջ է արտագրել նաեւ Մովսէս Դասխուրանցին:

Ինչպէս ձեռագրերի մանրակրկիտ քննութեամբ պարզաբանել է Վազգէն Յակոբեանը, Կանոնագրի շուրջ 200 օրինակների մեզ հասած երկու ձեռագրախմբերը ծագում են ժ. դ. վերջում (992-997 թթ. միջեւ) կազմուած մէկ ընդհանուր մայր տարբերակից, որն ունեցել է 40 կանոնախումբ: Նրանից են ծագում Հայոց կանոնագրի հնագոյն երկու ձեռագրերը՝ A գրչագիրը՝ արտագրուած 1098 թ. («տէր Խաչիկի օրինակից»): Նոր Զուղայի ձեռագիրը, եւ B գրչագիրը՝ արտագրուած, ըստ ամենայնի, միեւնոյն մայր օրինակից ժ. դ.: Դրանցից կատարուած տասնեակ ընդօրինակութիւնները կազմում են Հայոց կանոնագրի ձեռագրերի Ա խումբը (մենք նկատի չենք ունեցել դրանք): ժ. դ. վերջի այդ տարբերակից են արտագրուել նաեւ Հայոց կանոնագրի ձեռագրերի Բ խմբի մեզ հասած երեք ենթախմբերի մայր գրչագրերը: Այդ մայրերից ոչ մէկը մեզ չի հասել, ուստի Բ խմբի մայր օրինակի ընթերցումների մասին պատկերացում կազմելու համար անհրաժեշտ է նախապէս վերականգնել բոլոր երեք ենթախմբերի ձեռագրերի մայր գրչագրերի ընթերցումները՝ այդ ենթախմբերից իւրաքանչիւրի բոլոր օրինակների տուած նիւթի համեմատական քննութեամբ: Կատարելով այդ աշխատանքը (Վ. Յակոբեանի համեմատական հսկայածաւալ աշխատանքի օգնութեամբ)՝ ենթախմբերը պայմանականօրէն անուանել ենք K_a (acdkmpsv ձեռագրեր՝ ժ. 2-ժ. դ. դ.), K_b (befgq ձեռագրեր՝ ժ. 2-ժ. դ. դ.) եւ K_r (hloru ձեռագրեր՝ ժ. 2-ժ. դ.): Ընդհանուր առմամբ, Վ. Յակոբեանի մանրակրկիտ համեմատական աշխատանքի շնորհիւ իւրաքանչիւր ենթախմբի նախնական ընթերցումների վերհանումը

լուրջ խնդիրներ չի յարուցում, նոյն կերպ նաև (դրանից յետոյ)՝ Ա եւ Բ խմբերի մայր տարբերակի (ժ դ. վերջ) ընթերցումների վերհանումը (կանոնադրքային ընդհանուր ընթերցումները նշանակում ենք՝ $K=ABK_{abr}$): Որոշ կասկածելի դէպքերում շահագրգիռ ընթերցողն ինքը կարող է դիմել Վ. Յակոբեանի քննական-համեմատական հրատարակութեան տողատակերի մատուցած սպառիչ նիւթին:

Պատմութիւն Աղուանիցի ձեռագրերի երկու խմբերի (a ձեռագիր եւ bclr ձեռագրեր՝ b1 եւ cr ենթախմբերով) եւ Հայոց կանոնագրի ձեռագրախմբերի ընթերցումների համադիր օգտագործմամբ կազմուած Վաչագանի կանոնների քննական բնագիրը մեծ հաւանականութեամբ պատկերացում է տալիս նրա վեցերորդարեան վիճակի մասին: Ստորեւ ներկայացուած բնագրի տողատակերում հաշուի չեն առնուած Պատմութիւն Աղուանիցի երկու տասնեակից աւելի մնացեալ գրչագրերի, ինչպէս նաև Հայոց կանոնագրի՝ ենթախմբերի մայր օրինակ չհանդիսացող ձեռագրերի տարընթերցումները, քանի որ դրանք հաստատապէս արտագրուել են կա՛մ մեր կողմից օգտագործուած ձեռագրերից որեւէ մէկից, կա՛մ կանոնադրքային Բ խմբի ձեռագրախմբերի (վերականգնուած) մայր օրինակներից, ուստի չեն կարող օգտակար համարուել Աղուէնի կանոնների ինքնագրի վերականգնման հարցում: Բնագրի տողատման եւ կէտադրման խնդրում էապէս օգտուել ենք Պատմութիւն Աղուանիցի համեմատական հրատարակութեան հեղինակ Վարազ Առաքելեանի եւ Հայոց կանոնագրի քննական հրատարակութեան հեղինակ Վազգէն Յակոբեանի կատարած աշխատանքից:

Ալեքսան Յակոբեան

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

1. **Հ. Ներսէս Ակիմեան**, Մովսէս Դասխուրանցի (կոչուած Կաղանկատուացի) եւ իր Պատմութիւն Աղուանից, Վիեննա, 1970:
2. Կանոնագիրք Հայոց, աշխատասիրութեամբ՝ Վազգէն Յակոբեանի, հտ. Ա, Երեւան, 1964. հտ. Բ, Երեւան, 1971:
3. **Կիմ Ղահրամանեան**, «Պատմութիւն Աղուանից աշխարհի» երկի աղբիւրները (թեկնածուական ատենախօսութիւն), Երեւան, 1974:
4. **Ասատուր Մնացականեան**, Աղուանից աշխարհի գրականութեան հարցերի շուրջը, Երեւան, 1966:
5. **Մովսէսի Կաղանկատուացույ Պատմութիւն Աղուանից աշխարհի**, Ի լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին, Մոսկուա, 1860:
6. **Մովսէս Կաղանկատուացի**, Պատմութիւն Աղուանից աշխարհի, ֆնակական բնագիրը եւ ներածութիւնը Վարազ Առաքելեանի, Երեւան, 1983:
7. **Ալեքսան Յակոբեան**, Մովսէս Կաղանկատուացու «Աղուանից պատմութեան» ձեռագրերը, ԲՄ, 1986, թիւ 15:
8. **Ալեքսան Յակոբեան**, «Վաչագանի վէպ»-ը եւ Արշակունեաց թագաւորութեան խնդիրը Դ-Ձ դարերի Աղուանում, ՀԱ, Վիեննա, 2003:
9. **Սմբատ Յովհաննիսեան**, Աղուէնի սահմանադիր ժողովի կանոնները եւ նրանց աղերսը Աշտիշատի կանոնների հետ, ՊԲՀ, 1967, թիւ 4:

10. **Բագրատ Ուլուբաբեան**, *Դարձեալ Աղուէնի ժողովի գումարման տարեթուի մասին*, «Լրաբեր», 1969, թիւ 6:
11. **Հենրիկ Ս. Սւազեան**, *Մովսէս Կաղանկատուացու «Աղուանից պատմութեան» արժիւրները*, ՊԲՀ, 1972, թիւ 2:
12. **А. А. Акопян**, *Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках*, Ереван, 1987.
13. **К. А. Каграманян**, *Источники “Истории страны Алуанк”*, Автореф. дисс. ... к. и. н., Ереван, 1973.
14. *The History of the Caucasian Albanians by Movses Dasxuranci*. Translated by C. J. F. Dowsett, London, 1961.

ՏԱՌԱՆԻՇԵՐ ԲԱՂԴԱՏՈՒԱԾ ՁԵՆԱԳՐԵՐԻ

- a* - ՄՄ ձեռ. թիւ 1531, ժամանակ՝ 1289 թ.
b - ՄՄ ձեռ. թիւ 1725, ժամանակ՝ 1675 թ.
c - ՄՄ ձեռ. թիւ 2561, ժամանակ՝ 1664 թ.
l - Ռուսաստանի Գիտությունների ակադեմիայի Արեւելագիտութեան ինստիտուտի Ս. Պետերբուրգի բաժանմունքի գրադարանի հայերէն ձեռագրերի հաւաքածոյ, թիւ С 59, ժամանակ՝ 1678 թ.
r - Բրիտանական թանգարանի թիւ Or 5261, ժամանակ՝ ԺԷ դ.
A - Նոր Զուղայի ձեռ. թիւ 131 (ՄՄ լուսանկարների հաւաքածոյ, թիւ 203), ժամանակ՝ 1098 թ.
B - ՄՄ ձեռ. թիւ 6409, ժամանակ՝ ԺԳ դ.
K_a, *K_b*, *K_r* - Հայոց կանոնագրքի Բ խմբի ձեռագրախմբերի վերականգնուած մայր օրինակների ընթերցումներ (ըստ Վազգէն Յակոբեանի համեմատած նիւթի)

**[ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ ԿԱՆՈՆԱԿԱՆ՝¹ Ի ՎԱԶԱԳԱՆԱՅ՝² ԱՂՈՒՆԻՑ՝³
ԱՐՔԱՅԷ՝⁴ ԵՂԵԼ Ի ԺՈՂՈՎՈՅՆ՝⁵, ՈՐ ՅԱՂՈՒԷՆՆ՝⁶ ԵՂԵԻ՝⁷]**

1 [Յամս Վաչագանայ՝⁸ Աղուանից արքայի բազում հակառակութիւնք՝⁹ լինէին¹⁰ ի մէջ աշխարհականաց եւ եպիսկոպոսաց¹¹, եւ քահանայից եւ¹² քորեպիսկոպոսաց¹³, ազատաց եւ ռամկաց: 2 Ապա կամ եղեւ¹⁴ արքայի՝ առնել¹⁵ ժողով յԱղուէն՝¹⁶ բազմամբոխ ատեան¹⁷, յամսեանն մարերի, որ աւր երեքտասան էր¹⁸:]

3 Ես Վաչագան՝ Աղուանից արքայ¹⁹, եւ²⁰ Շուփհաղիչոյ՝²¹ Պարտաւայ²² արքեպիսկոպոս²³, Մանասէ՝ Կապաղակայ²⁴ եպիսկոպոս²⁵, Յովնան՝²⁶ Հաչէոյ²⁷ եպիսկոպոս,

Անանիա²⁸ եւ Սահակ²⁹ եւ Սուտոփոր³⁰ եպիսկոպոսք³¹, Յովսէփ՝ Կաղանկատուաց³² երէց³³, Մատթէ՝³⁴ Պարտաւայ³⁵ երէց³⁶, Թումա՝³⁷ Թագաւորի դրան երէց, Պաւղոս՝ Գայեգոնու³⁸ երէց³⁹, Շիմաւովն⁴⁰ Յրոյ⁴¹ քորեպիսկոպոս⁴², Մատթէ՝⁴³ Դարահոնոյ⁴⁴ երէց⁴⁵, Աբայիկ⁴⁶ Ազբեղայ⁴⁷ երէց¹,

1 K կանոն փխ կանոնական (որոշ ձեռագրերում՝ կանոնի Վաչագանայ փխ կանոն ի Վաչագանայ)
2 ac Վաչագանա, B Վաչաֆանայ
3 bclr յԱղուանից (acgK)
4 K արքայի cr արքաէ
5 a ժողովէն, c ժողոյն, K ժողովն փխ ժողովոյն (btr)
6 reg յԱղուէն, b յԱլուէն, cbg յԱլուէն, I յԱղուէն, K յԱղուանս փխ յԱղուէնն (a)
7 b եղեալ, bgAB եղեւ. գլուխս ԻԱ. (bg ԻԲ, B Ի)
8 abcr Վաչագանա
9 abr հակառակութիւն (clK)
10 abcr լինէր (IK)
11 a էպիսկոպոսաց
12 abclr չիբ եւ ֆահանայից եւ (K)
13 a ֆորէպիսկոպոսաց, bclr չիբ ֆորէպիսկոպոսաց (aK)
14 bclr եղեալ
15 bl առնէ
16 bl յԱղուէնն, cr յԱլուէն, A յԱղուան
17 Kr յատեան
18 a էր ամսոյն, I էր երեքտասան ամսոյն փխ երեքտասան էր (bcrK)
19 cr արքա
20 AK_b չիբ եւ
21 AK_{ab} Շոփհաղիչոյ, B Շոփհաղչոյ, K_r Շոփհեղիչոյ փխ Շոփհաղիչոյ (abclr)
22 bcr Պարտաւայ, Kr Պերտեւայ
23 a արքեպիսկոպոս
24 a Կապաղայ, bcr Կապաղակայ, K_{ab} Կապաղակոյ (IABK_r)
25 a էպիսկոպոս

26 abclr Յունան, K_b Յոհան փխ Յովնան (ABK_{ar})
27 a Հաշուա, K Հրոշոյ փխ Հաշէոյ (bclr) (=Հոշոյ, Հոշոյ - «Պատմութիւն Աղուանից», Գ.գ, Գ.ը)
28 I Անանիայ
29 b Իսահակ
30 a Ոստոփոր, clr Ոսոյ Փոր, b Ոստոփոր, K_{br} Ստոփոր, AB Ոստոփոր փխ Սուտոփոր (K_a) (=յուսնարէն ստուգաբանութեամբ, թերեւս ինչ-որ չափով աղաւաղուած (գոյցէ՝ Սիտոփոր-Յորնարբեր), միայն այստեղ հանդիպող անուն): Ըստ Վ. Առաքելեանի՝ վերականգնելի է Ոսոյ ֆորէպիսկոպոս:
31 a էպիսկոպոս, K_b եպիսկոպոս
32 clr Կաղանկատուաց, b Կաղանուաց, a Կաղանկատուաց A Կաղանկատուաց, B Կաղանկատուաց փխ Կաղանկատուաց (K_{ab})
33 abclr էրէց
34 abcAK_b Մաթէ փխ Մատթէ (IBK_{ar})
35 abcA Պարտաւայ, K_b Պարտայիայ
36 bclr էրէց
37 bcr Թումա, I Թումայ, AK_{abr} Թովմայ, B Թովմա փխ Թումա (a)
38 a Գայեգոնու, IABK_a Գայեգոնու, K_b Գայեչոյ փխ Գայեգոնու (bclr)
39 bclr էրէց
40 a Շիմաւովն, ABK_r Շիմաւովն, bclrK_{ab} Շիմաւովն փխ Շիմաւովն (վերականգնում՝ ըստ aABK_r)
41 a Յրոյ, B Յրոյ փխ Յրոյ (bclrAK_{abr})
42 ABK_a ֆորէպիսկոպոս, bclr ֆորէպիսկոպոս Յրոյ (I Յրոյ) փխ Յրոյ ֆորէպիսկոպոս
43 abcK_b Մաթէ փխ Մատթէ (IABK_{ar})
44 ABK_b Դարահոնոյ, K_a Դարոհոնոյ, Kr Դարահոնոյ
45 clr էրէց
46 bcr Աբայիկ, a Աբիկ փխ Աբայիկ (IK)
47 a Ազբեղայ, bclr Ազբեղոյ, K_b Ազբեղեայ, Kr Ազբեղայ փխ Ազբեղայ (ABK_a) (=Ազբեղ գաւառ (b Ազբեղ, clr Ազբեղ) - «Պատմութիւն Աղուանից», Գ.ժ. որոշ ձեռագրերում՝ Աբայիկայ Բեղայ կամ Աբայի Կազբեղայ ձեւով)

Ուրբաթ՝ Այրմանուշէից² երէց³, Յովէղ⁴ եւ Պարմիդէ⁵ եւ Յակովբ⁶ երիցունք, եւ ազատ մարդիկ⁷ եւ նահապետք⁸ Արցախայ⁹, Բակուր՝ Կաղանկատուաց¹⁰ նահապետ եւ այլք¹¹ բազումք, որք միաբան առաջի իմ եկին ի Հանդէս՝ ի Հովոցի¹² տեղւոյն¹³ յԱղուէն¹⁴, կարգեցաք այսպէս.

4 Ա. Երիցունք, որ¹⁵ ի շէնս լինին¹⁶, երկիցս¹⁷ անգամ ի տարւոյն¹⁸ եպիսկոպոսին¹⁹ երկիր պազցեն եւ գկարգս հոգեւորս ուսցին²⁰ ի նմանէն²¹ ըստ Գրոց: 5 Եւ որպէս կարգն է, ի տարւոյն²² եպիսկոպոսին²³ ընծայ²⁴ տարցի²⁵:

6 Բ. Քահանայ եւ²⁶ սարկաւազ յորժամ ձեռնադրեն, Դ²⁷ դրամ քահանային եւ Բ՝ սարկաւազին տացեն²⁸:

7 Գ. Ազատ մարդոյ եւ թագաւորագրի²⁹, որ³⁰ ինչ հոգւոյ³¹ մասն է³², տացէ իւրով³³ ձեռամբ³⁴ ի կենդանութեանն՝ ձի թամբաւք եւ սանձիւք³⁵, եւ զոր ինչ³⁶ կարողութիւնն³⁷ է³⁸ իւր, տացէ: 8 Ապա եթէ³⁹ ի կենդանութեանն⁴⁰ չտայցէ⁴¹, յետ մահուն⁴² ընտանիքն⁴³ տացեն⁴⁴:

9 Դ⁴⁵. Պտուղ ի ժողովրդոց⁴⁶ երիցուն⁴⁷ կարգ այս լիցի. թուանիկն⁴⁸ Դ գրիւ ցորեան⁴⁹ եւ Զ գրիւ⁵⁰ գարի⁵¹ եւ ԺԶ փասքաղցու: 10 Եւ որ տառապեալն է⁵², զՀաջոյդ⁵³ զկէսն⁵⁴ տացէ⁵⁵, եւ գինի՝ որչափ եւ

1 bclr էրէց
 2 a Այրմանուշայ փիս Այրմանուշէից (bclrK) (որոշ ձեռագրերում՝ Ուրբաթայր Մանուշէից ձեւով)
 3 bclr էրէց
 4 aK_{abr} Յովէլ, bcr Յովէլ փիս Յովէլ (AB)
 5 cr Բարմիդէ, ABK_{br} Պարպ Միգե փիս Պարմիդէ (ablK_a)
 6 abclr Յակոբ (K)
 7 crK_r մարդիկ
 8 bclrABK_a նահապետք (aK_b)
 9 abcr Արցախայ
 10 cr Կաղանկատուաց, a Կաղանկատուաց, A Կաղանկատուաց, K_r Կաղանկատուաց փիս Կաղանկատուաց (blBK_{ab})
 11 abcr այլ
 12 K_b հաւատոց, K_a հովոց, ABK_r հաւովոց փիս հովոցի (abclr)
 13 bcrK_a տեղոցս
 14 b յԱղուէն, K_a յԱղուէն, cr յԱղուէն ի հովոց ի տեղոցս (կրկն.) փիս յԱղուէն (alABK_{br})
 15 I որք
 16 ABK_{ab} լինիցին փիս լինին (abclrK_r)
 17 c երիցս
 18 bcrK_b տարոցն
 19 a էպիսկոպոսին
 20 c ուսանիցեն
 21 bclrK_a նմանէ
 22 bcrK_{br} տարոցն
 23 a էպիսկոպիսին
 24 a ընծայ bcr ընծա
 25 a տարցեն, bl տարցին փիս տարցի (crK)
 26 bclr կամ փիս եւ
 27 K_{ab} Գ փիս Գ

28 abclr չիք տացեն (K)
 29 a թագաւորագւնոյ փիս թագաւորագրի (bclrK)
 30 a չիք որ
 31 bcrK_{abr} հոգոյ
 32 a չիք է
 33 K իւրով
 34 bclr ձեռամբն K ձեռամբ փիս ձեռամբ
 35 a սանձաւք
 36 a զինչ փիս զոր ինչ
 37 bclrK_r կարողութիւն փիս կարողութիւնն (aABK_{ab})
 38 A չիք է
 39 a եթե bclr թէ փիս եթէ (K)
 40 b կենդանութեան
 41 bclrK_{br} չտացէ
 42 a մահունն b մահուան փիս մահուն (clrK)
 43 bK_b ընդամիքն AB ընտանիք
 44 a տայցեն
 45 aK ձեռագրերում յողուածը միացած է նախորդին, ուստի չի պահպանուել թուահամարը (bclr)
 46 a ի ժողովրդէն b ժողովրդեան փիս ի ժողովրդոց (clrK)
 47 K_b չիք երիցու a իրիցու, c իրիցու, AK_{ar} երիցուն փիս երիցու (blrB)
 48 cr թուանիկն որ է հարուստն
 49 a ցորեն cr ցորեան, գրին հարիւր իստիլն է
 50 K_b գրուանայ փիս գրիւ
 51 bclr չիք եւ Զ գրիւ գարի
 52 K իցէ փիս է
 53 K հացիդ, a հացոյ (h տառի տակ երեւում է գ տառը, որի վրայ է նոյն գրիչը գրել հ, գուցէ պատահաբար, կողմին գրելու փոխարէն. ուստի, բերելու՝ զհացոյ) փիս զհացոյդ (bclr) (գուցէ զհացոյդ զկէսն-ի փոխարէն վերականգնելի է զհացոյ Դ կէսն = «հացի քառորդ մասը»)
 54 b կէսդ
 55 a տայցէ

կարող¹ է²: 11 Իսկ որ³ որոյ⁴ վար եւ այգի չէ⁵, մի՛ առցեն: 12 Եւ որ ոք աւելի, քան զայս⁶ տացէ⁷ սակս հոգւոյն⁸, բարի⁹ առնէ, որպէս Պաւղոս ասէ¹⁰. Որ առատութեամբ սերմանէ, առատութեամբ հնձեսցէ¹¹: 13 Եւ ոյր¹² ոչխար է¹³, ի տանէ¹⁴ ոչխար մի եւ Գ զգաթ¹⁵ բուրդ¹⁶ եւ¹⁷ մի պանիր, եւ ոյր ձիք ի տան իցեն՝ մի յովանակ¹⁸, եւ ոյր պախրէք իցեն՝ որթ մի¹⁹:

14 Ե. Եթէ ազատ է²⁰, եթէ²¹ շինական²², եւ եթէ այլ²³ ոք յաշխարհականաց՝ ի տարւոջն²⁴ զպատարազն մի՛ խափանեսցէ, այս ինքն՝ զմեռելոց²⁵ յիշատակ²⁶, որպէս եւ²⁷ կարող²⁸ է. եւ անմասն մի՛ արասցեն զմեռեալսն²⁹ ի վաստակոց իւրեանց: 15 Եւ մեռեալ մարդոյն թէ³⁰ ձի է՝ մի ձի, զոր³¹ եւ³²

կամի՝ յեկեղեցի³³ տայցէ³⁴, եւ³⁵ եթէ³⁶ արջառ է՝ նոյնպէս արասցէ³⁷:

16 Զ. Վանաց երէց³⁸ կամ վանական ոք, եթէ³⁹ ի⁴⁰ վանացն գայթանք ոք⁴¹ առնէ, եւ ի վերայ յայտ լինի⁴², անարգեսցեն զնա⁴³ եւ ի տեղւոյն⁴⁴ ի բաց արասցեն⁴⁵, եւ զխոստակն⁴⁶ յեկեղեցի⁴⁷ կալցեն⁴⁸:

17 Է. Եթէ⁴⁹ վանաց երիցունք բազում⁵⁰ են եւ⁵¹ ժողովուրդք⁵² սակաւ⁵³, եւ այլ վանաց ժողովուրդք⁵⁴ բազում⁵⁵ են եւ երիցունք⁵⁶ սակաւք⁵⁷, ի բազում ժողովուրդէնէն առցեն⁵⁸ եւ տացեն վանացն⁵⁹, որ⁶⁰ երիցունքն⁶¹ շատ⁶² են:

1 IB կարաւղ
2 K իցէ փխ է
3 bclrAK_{ar} չիբ որ (aB)
4 K_b որոց փխ որոյ
5 K_a չիցէ K_b ոչ իցէ I ոչ է փխ չէ (abcrABK_r)
6 B քան զայս աւելի փխ աւելի քան զայս
7 a տայցեն փխ տացէ (bclrK)
8 c հոգոց AB ոգեաց K_{ab} ոգւոյ փխ հոգւոյն (ablrK_r)
9 bclr բարիս
10 b ասէ Պողոս
11 bclr եւ հնձեսցէ
* Ի Կ * * * Թ * 6
12 bclr որոյ փխ ոյր (K_{abr} ձեռագրերում, սկսած եւ ոյր բառերից, դարձուած է առանձին յօդուած)
13 K_{ab} չիբ է bclr ոչխարք են փխ ոչխար է (aK)
14 abclr չիբ ի տանէ K_a տան փխ տանէ
15 K_r զգաղ
16 acr բուրթ
17 K չիբ եւ
18 K_b յաւանակ փխ յովանակ
19 abclr չիբ եւ ոյր ձիք ... որթ մի (K)
20 bclr չիբ է
21 a եթէ AB եւ եթէ փխ եթէ (abclrK_{abr})
22 b շինականք
23 abclrBK_{abr} այլ փխ այլ (A)
24 bcrK_{br} տարոջն
25 aK_a զմեռելոյ
26 a յիշատակն
27 K չիբ եւ
28 a կարողն, bl կարող փխ կարող (crK)
29 K_b զմեռեալս
30 a եթէ փխ եթէ (bclrK)

31 K յոր փխ գոր
32 cr չիբ եւ
33 AB եկեղեցի
34 K տացէ
35 ABK_{ab} չիբ եւ (abclrK_r)
36 AB եթէ
37 a մի արջառ, գոր եւ կամի, յեկեղեցին տայցէ փխ նոյնպէս արասցէ (bclrK)
38 abclr էրէց
39 a եթէ
40 bclr չիբ ի
41 a կայտակոք, br կայտաք, I կայտաք, c կայտք փխ գայթանք նք (K)
42 bl լիցի K_r այլ լիցի փխ յայտ լիցի
43 a չիբ զնա
44 bcr տեղոյն
45 acr հանցեն փխ արասցեն (blK)
46 bcr խոստակն, a զխոստակն փխ զխոստակն (IK)
47 a յեկեղեցի K_{abr} յեկեղեցին
48 I կալցին
49 a եթէ
50 bclr բազումք փխ բազում (aK)
51 cr չիբ եւ
52 cB ժողովուրդ
53 bclr սակաւ փխ սակաւ (aK)
54 BK_a ժողովուրդ
55 bclr բազումք փխ բազում (aK)
56 bclr էրէցք, a իրիցունք փխ երիցունք (K)
57 K սակաւ
58 c տացէն
59 a չիբ վանացն
60 bl որոյ փխ որ (acrK) (ըստ Վ. Յակոբեանի եւ Վ. Առաքելեանի՝ վերականգնելի է որոյ)
61 a իրիցունքն
62 I շատք

18 Ը. Քրիստոնեայ¹ մարդ, որ կռուի եւ արիւն հեղու, տարցեն² առաջի եպիսկոպոսին³ եւ ըստ աւրինացն⁴ պատուհասեցեն⁵:

19 Թ. Երէց⁶, որ զչէն մեծ պահէ⁷, այլ մի՛ պահեսցէ շէն⁸: 20 Եւ որ մաւտ երկու ազարակք են⁹, մի երէց պահեսցէ, եւ այնչափ հովուեսցէ¹⁰ երէցն¹¹, որչափ առաջնորդել¹² կարասցէ¹³:

21 Ժ. Այր զերրորդ ազգի կին մի՛ արասցէ¹⁴ եւ¹⁵ զեղբաւր կին մի՛ արասցէ:

22 ԺԱ. Եւ որ զկին¹⁶ թողու¹⁷, եւ որ¹⁸ առանց պսակի կին առնէ¹⁹, եւ որ անաւրէն եւ²⁰ մարդասպան է եւ կամ²¹ զգէտս²² հարցանէ, զայնպիսին²³ կապեալ²⁴ ի դուռն արքունի տարցեն²⁵ եւ դառն մահ²⁶ ի վերայ

դիցեն²⁷:

23 ԺԲ. Եւ այնք, որ²⁸ կոծ դնեն, զտանուտէրն եւ²⁹ զգուսանն³⁰, կապեսցեն եւ ի դուռն արքունի տարցեն³¹ եւ պատուհաս ի վերայ դիցեն, եւ ընտանիքն³² զհետ արտասուել մի՛ իշխեսցեն:

24 ԺԳ. Որ զմեռելոտի ուտէ եւ որ³³ ի քառասներորդսն³⁴ միս ուտէ եւ որ³⁵ կիւրակէի³⁶ գործ ինչ գործէ³⁷ եւ յեկեղեցի չերթայ³⁸, երէցն³⁹ պատուհաս արասցէ հանդերձ ժողովրդեամբն⁴⁰:

25 ԺԴ. Եւ որ չորեքշաբաթու⁴¹ կամ ուրբաթու⁴² միս ուտէ յառաջ քան զաղուհացսն՝ մի շաբաթ⁴³ պահեսցէ: 26 Եւ եթէ⁴⁴ երիցուն առաջի ոք գայ⁴⁵ եւ վկայէ⁴⁶ վասն մարդոյն, թէ⁴⁷ չէ⁴⁸ այդպէս, աւագն շինոյն կալցէ⁴⁹ եզն⁵⁰ մի զմարդոյն⁵¹ եւ յերէցն¹ տացէ²:

1 ac ֆրիստոնեա b ֆրիստոնե
2 IK_{ar} տարցին փխ տարցեն (abc_rABK_b) (ըստ Վ. Ա. Ուոսթոնի վերականգնելի է տարցի)
3 a էպիսկոպոսին
4 b օրինաց
5 a պատուհաս արասցեն փխ պատուհասեցեն (bc_rK)
6 bl էրէց
7 K պահեսցէ փխ պահէ (abc_r)
8 Վ. Աւոսթոնեանը, հետեւելով Մկրտիչ Էմինին, վերականգնելի է համարում գայլ շէն մի պահեսցէ փխ այլ մի պահեսցէ շէն (abc_rK)' ըստ Ղունկիանոսի ուշ արտագրութեան
9 K_{ab} իցեն փխ են
10 aAB հովեսցէ
11 bc_r էրեցն
12 a առաջնորդեալն AB առաջնորդելն
13 ABK_{ar} կարիցէ փխ կարասցէ (abc_rK_b)
14 bl մի արասցէ կին փխ կին մի արասցէ
15 K_{ab} չիբ եւ
16 K_b զկինն
17 a թողու առանց պատնառանաց (bc_rK)
18 a չիբ որ (bc_rK)
19 I առնու, cr պահէ փխ առնէ
20 I չիբ եւ
21 b որ փխ կամ
22 c զգեստս փխ զգէտս
23 ac զայնպիսին
24 K_b կապել
25 aI տարցին փխ տարցեն (bc_rK)
26 K_b պատուհաս մահ փխ դառն մահ

27 b դիցեն ի վերայ փխ ի վերայ դիցեն
28 IB որք
29 a չիբ եւ
30 a գուսանս փխ գուսանն (bc_rK)
31 a չիբ տարցեն IK_r տարցին փխ տարցեն (bc_rABK_{ab})
32 AK_a ընտանիք
33 B չիբ որ
34 a քառասներորդսն, K_a քառասներորդսն փխ քառասներորդսն (bc_rAK_b)
35 abc_r չիբ որ (K)
36 a կիրակեի, b կիրակի, BK_{ar} կիրակեի, K_b ի կիրակեի փխ կիրակեի (c_rA)
37 cr գործեսցէ
38 bcr չերթա
39 bc_r էրեցն
40 aAB ժողովրդեամբն հանդերձ փխ հանդերձ ժողովրդեամբն (bc_rK_{abr})
41 a չորեքշաբթի, c չորեքշաբթու փխ չորեքշաբթու (bc_rK)
42 a ուրբաթի փխ ուրբաթու (bc_rK)
43 K_r շաբաթ մի փխ մի շաբաթ
44 a եթե
45 a գա
46 a վկաէ
47 a թե
48 bc_r ոչ է փխ չէ (aK)
49 K կալցի փխ կալցէ (abc_r)
50 I էզն
51 abc_r չիբ զմարդոյն (K)

27 ԺԵ. Եթէ³ աշխարհական ոք յերիցու⁴ կամ ի սարկաւազի վերայ⁵ բամբասանս դնիցէ⁶, եւ նոքա խոստովանեսցին⁷, թէ⁸ այդպէս է⁹, եպիսկոպոսն¹⁰ դնիցէ¹¹ ի վերայ¹² կարգ, եւ¹³ յանապատի ապաշխարեսցեն: 28 Ապա թէ¹⁴ ոչ խոստովանեսցին ճշմարտութեամբ, եւ զոր այլքն ասեն՝ ճշմարտութեամբ¹⁵ յայտ¹⁶ լինի¹⁷, որպէս ի կանոնսն¹⁸ է գրեալ, պատուհաս դիցեն եւ ի բաց հալածեսցեն¹⁹ ի շինոյն²⁰: 29 Եւ²¹ եթէ²² մեղքն չէ²³ յայտ, պատարագ հրամայեսցեն մատուցանել քահանային, եւ երգումն այն լիցի նմա²⁴:

30 ԺԶ. Եւ²⁵ եթէ²⁶ ընկերք իւր եւ աշակերտքն²⁷ մեղս ի վերայ դնեն²⁸ երիցուն²⁹ եւ ինքեանք հաւատարիմ³⁰ են, երէցն³¹ ա-

ռաջի սեղանոյն³² կացցէ³³, եւ ամբաստանողք³⁴ ժողովրդեանն առաջի³⁵ ի բեմէն³⁶ ի վայր առցեն եւ ի շինոյ³⁷ արտաքս հանցեն: 31 Ապա եթէ ընկերք եւ աշակերտքն³⁸ քինով լինին³⁹, եւ ժողովուրդքն գիտէին, եթէ⁴⁰ յառաջ խոով էին, քահանայն⁴¹ պատարագ⁴² մատուցէ, եւ ժողովուրդն⁴³ անիծիւք ի բաց հալածեսցեն⁴⁴: 32 Ապա եթէ⁴⁵ խոստովանին, թէ⁴⁶ սուտ ասացաք, ապաշխարութիւն ի վերայ դիցեն եւ ի վանաց⁴⁷ մի հանցեն: 33 Իսկ եթէ⁴⁸ յետ այնր⁴⁹ վնաս գործեսցեն⁵⁰, կանոնաւք⁵¹ դատեսցին⁵²:

34 ԺԷ. Դարձեալ՝ եպիսկոպոսունք⁵³ եւ երիցունք զազատ արանց առաջի արքայի եղեն տրտունջ, եթէ⁵⁴ ի շինի⁵⁵ երկուս կամ երիս եկեղեցիս⁵⁶ առնեն վանս⁵⁷: 35 Եւ արքայի առաջի⁵⁸ ազատ մարդիկ պայմանե-

1 Երկրէցն Եր երկրէցն Լ յերկրէցն
2 Ե տայցէ փիս տացէ (bclrK)
3 Ե եթե
4 Ե երիցոյ, bclr ի վերայ յերիցոյ փիս յերիցոյ (K)
5 Ե չի՞ վերայ bc վերայ
6 K դիցէ
7 K_a խոստովանեսցին K_b խոստովանին
8 K_r թէ այդ Ե եթե փիս թէ
9 ABK_{ar} իցէ փիս է (abclrK_b)
10 Ե Էպիսկոպոսն
11 K դիցէ
12 bclr չի՞ ի վերայ
13 K չի՞ եւ
14 aAB եթէ (Ե եթե) փիս թէ
15 Ե չի՞ եւ զոր ... նշմարտութեամբ
16 Ե եւ յայտ clr ի յայտ փիս յայտ (bK)
17 Լ լիցի Ե զայ փիս լինի (bcrK)
18 Ե կանոնն A կանոնն
19 BK_b հալածիցեն
20 Ե շինէն փիս շինոյն (bclrK)
21 K ապա փիս եւ
22 K_b թէ
23 IABK_r չեն, K_{ab} չիցեն փիս չէ (abc_r)
24 Ե չի՞ եւ երդումն ... լիցի նմա K լիցի նմա (AB չի՞ նմա) այն փիս այն լիցի նմա (bclr)
25 K_{ab} չի՞ եւ
26 Ե եթե
27 Ե չի՞ իւր եւ աշակերտքն
28 bclrK_b դնիցեն փիս դնեն (aABK_{ar})
29 Ե յերիցոյն
30 IK հաւատարիմ
31 bclr երկրէցն

32 Ե սեղանոյն
33 Ե կայցէ
34 K_{br} ամբաստանողն IK_a ամբաստանողն
35 K_{ab} առաջի ժողովրդեանն փիս ժողովրդեանն առաջի (abclrABK_r)
36 ABK_r բեմին փիս ի բեմէն (abclrK_{ab})
37 Ե շինէն
38 bclr աշակերտք
39 Ե լինէին
40 aK_{ab} թէ փիս եթէ (bclrAB)
41 Լ փահանայն
42 bclr պատարագ
43 bclrK_r ժողովուրդն
44 Ե IABK_a հալածեսցին
45 Ե եւ թե փիս Ապա եթէ K_{ab} թէ փիս եթէ (bclrAB) K_r չի՞ եթէ
46 Ե թե Ե եթէ
47 bclrK_b վանացն
48 Ե եթե
49 abclr այն փիս այնր (K)
50 K գործիցեն
51 bclr կանոնով K_{ar} կանոնաւն
52 bclrK_b դատեսցեն
53 Ե Էպիսկոպոսունք
54 Ե եթե
55 bclr շինին (aK)
56 Ե եկեղեցիս K_b եկեղեցի bclr չի՞ եկեղեցիս
57 K_b վանք
58 K_{ab} առաջի արքայի փիս արքայի առաջի

ցին¹, եւ արքայի² եւ եպիսկոպոսաց³ եւ ազատաց այսպէս հաճոյ թուեցաւ, թէ⁴ զարարեալ⁵ եկեղեցիսն⁶ թողցեն եւ զպտուղ եւ զհաս եկեղեցւոյ⁷ ի վսամ եկեղեցին⁸ տացեն⁹:

36 ԺԸ. Եւ որ¹⁰ տասանորդս տան¹¹ ազատ մարդիկ՝ զկէսն ի¹² բուն եկեղեցին տայցեն¹³, եւ զկէսն՝ յիւրեանց¹⁴ եկեղեցին¹⁵:

37 ԺԹ¹⁶. Կիրակէին¹⁷ տէր եւ ծառայ¹⁸ ի¹⁹ վսամ եկեղեցին²⁰ երթիցեն յաղաւթս եւ զյիշատակ յեկեղեցին²¹ տարցեն²². այլ²³ անաշխարհիկն զհոգեցատուրն²⁴ յեկեղեցին²⁵ տարցէ²⁶:

38 Ի. Ազատ արանց, որչափ իւրեանց²⁷ դաստակերտքն²⁸ իցեն²⁹, զերէց³⁰ առանց եպիսկոպոսին³¹ մի՛ իշխեսցեն հանել եւ առնել, այլ³² եպիսկոպոսն իշխեսցէ առանց նոցա հանել եւ առնել: 39 Եւ երիցուն³³, եթէ³⁴ յազատէ կամ ի ժողովրդականէ³⁵ վտանգ լինի³⁶, առանց եպիսկոպոսին³⁷ գնալ մի՛ իշխեսցէ³⁸:

40 ԻԱ. Եւ³⁹ ազատ մարդոյ⁴⁰ յիւր⁴¹ եկեղեցւոջ⁴² եթէ⁴³ սեղան կանգնէ կամ⁴⁴ նշխարս⁴⁵ բերէ կամ պատարագ առնէ, եպիսկոպոսին⁴⁶ հրամանաւ արասցէ, որչափ եւ⁴⁷ իւր կարողութիւն⁴⁸ իցէ⁴⁹: 41 Եւ որ զայս հրաման⁵⁰ առնէ եւ կատարէ⁵¹, աւրհնեալ լիցի⁵². եւ որ ոչն¹ առնէ², հեռի³

1 a պայմանեցիմ, K պոմանեցիմ, bclr պայմանեցիմ (b պայմանեցիմ) ազատ մարդիկ (cr մարդիկ) փխ ազատ մարդիկ պայմանեցիմ
 2 b արբաի
 3 a էպիսկոպոսաց
 4 a եթե փխ բէ (bclrK)
 5 b զարարել, K_b զարդարեալ
 6 a եկեղեցիսն, cr եկեղեցիս
 7 a եկեղեցւոյ, bclrK_{br} եկեղեցոյ
 8 a եկեղեցւոյն, AB յեկեղեցիմ, K_r եկեղեցիսն փխ եկեղեցիմ (bclrK_{ab})
 9 a տայցեն
 10 I որբ
 11 a տասանորդ ստանայ փխ տասանորդս տան (bclrK)
 12 b չիբ ի
 13 K տացեն փխ տայցեն (abcclr)
 14 abK_b իւրեանց
 15 AB յեկեղեցիմ, a եկեղեցւոյն տայցեն
 16 K չիբ ժԹ (բացի K_r ձեռագրախմբից, յողուածը միացուած է նախորդի բնագրիմ)
 17 aclrBK_{br} կիրակէիմ, b կիրակէիմ փխ կիրակէիմ (AK_a)
 18 a ծառայմ, b ծառա
 19 abcclr չիբ ի
 20 a յեկեղեցիմ
 21 bK_r եկեղեցիմ
 22 bLABK_{ar} տարցիմ, a արասցեն փխ տարցեն (crK_b)
 23 bclrK_{abr} այլ փխ այլ (aAB)
 24 a զհոգեացատուրն
 25 a յեկեղեցիմ, b եկեղեցիմ
 26 a տայցէ, bclr տացէ, A տարցի, B տարցիմ փխ տարցէ (K_{abr})

27 bclr չիբ իւրեանց
 28 bclr դաստակերտբ
 29 K են փխ իցեն
 30 acr զերէց
 31 K եպիսկոպոսի
 32 ABK_{br} մի փխ առնել, այլ (bclrK_a) (բոլոր հրատարակիչները նախապատուութիւնը տուել են առաջին խումբ ձեռագրերի ընթերցմանը, որի հետեւանում կանոնի բովանդակութիւնը սխալ է ներկայացուել)
 33 bclr երիցոյն, aK_a երիցում փխ երիցում (ABK_{br})
 34 K բէ փխ եթէ
 35 a ժողովրդեանէ, b ժողովրդեանէ փխ ժողովրդականէ (crK)
 36 a լիցի
 37 a էպիսկոպոսիմ
 38 b մի իշխեսցէ գնալ փխ գնալ մի իշխեսցէ, K գնալ մի իշխեսցէ առանց եպիսկոպոսին փխ առանց եպիսկոպոսին ... մի իշխեսցէ
 39 K չիբ եւ
 40 bclr մարդ ոք փխ մարդոյ (aK)
 41 K իւր
 42 a եկեղեցւոջ, c եկեղեցւոյ, I եկեղեցւոյն, K եկեղեցւոյ (K_r եկեղեցոյ)
 43 a բէ
 44 K_{ab} եթէ փխ կամ
 45 a նշխարս ինչ
 46 a էպիսկոպոսիմ
 47 b չիբ եւ
 48 I կարողութիւն, K_a կարողութիւն
 49 I է փխ իցէ
 50 c հրամանաւ, a հրամանով փխ հրաման (bclrK)
 51 B չիբ եւ կատարէ
 52 bK եղիցի փխ լիցի

եղիցի⁴ յեկեղեցւոյն⁵. եւ ապա ըստ կարի⁶ տուգան⁷ բերցէ առաջի եպիսկոպոսին⁸: 42 Եւ յետ այնր⁹ որչափ տուգանն¹⁰ տայցէ¹¹ մարդն, որ ի կանոնսն¹² գրեալ¹³ է¹⁴, ընդ աւրհնութեամբ արասցէ¹⁵:

43 Զայս¹⁶ պայման արարին եպիսկոպոսունք¹⁷ եւ քահանայք¹⁸ եւ ազատ¹⁹ մարդիկ²⁰ առաջի արքայի²¹, եթէ²² ի²³ մեր եպիսկոպոսաց²⁴ եւ յերիցանց²⁵ եւ յեկեղեցւոյ²⁶ բերանոյ աւրհնեալ եղիցի²⁷ թագաւորն թագուհւովն²⁸ եւ զաւակովն²⁹ հանդերձ³⁰, եւ ամենայն աշխարհովս³¹ հանդերձ, որք³² յայս³³ ժողովս³⁴ են, աւրհնեալ եղիցին:

44 Եւ զայս հրաման մատանեցին³⁵ Մուծիկ³⁶ արքայի³⁷ հրամանատար, Միրհաւրիկ³⁸ հազարապետ, ասկապետ³⁹ Մարութ, Տիրազդ⁴⁰, Սպրակոս⁴¹, Շամա⁴², Բակուր⁴³, Ռատան⁴⁴, Արչէս⁴⁵, Վարդան Քաջ Գարդմանայ⁴⁶ տէր, Խուրս, Գերմոսան⁴⁷, Խոսկէն⁴⁸, Փիրոզ⁴⁹ նահապետ եւ ամենայն ազատք Աղուանից: 45 Եւ⁵⁰ վասն առաւել հաստատութեան⁵¹ գրոյս Վաչագանայ⁵² Աղուանից⁵³ արքայիս⁵⁴ մատանիս⁵⁵ եղաւ⁵⁶ ի վերայ:

1 K_{ab} ոչ
2 a չառնենն ϕ իս ոչն առնէ ($bclrK$)
3 cr եւ հեռի
4 a եղիցին, $bclr$ լիցի ϕ իս եղիցի (K)
5 cr յեկեղեցոյ, K յեկեղեցոյ
6 ABK_a կարին, K_{br} կարգին ϕ իս կարի ($abclr$)
7 K տուգան ϕ իս տուգան ($abclr$)
8 a Էպիսկոպոսին
9 a այն
10 a տուգան ϕ իս տուգանն ($bclrK$)
11 K տացէ
12 b կանոնսն
13 acr գրեալն ϕ իս գրեալ (bIK)
14 K չիք է
15 K արասցեն ϕ իս արասցէ ($abclr$)
16 $abclr$ ԻԲ. Յայս (b այս) ϕ իս Յայս (K)
17 a Էպիսկոպոսունն, K եպիսկոպոսն
18 K_{br} քահանայն
19 B ազատ
20 cr մարդիկ
21 K արքային
22 a եթէ, K թէ
23 b չիք ի
24 a Էպիսկոպոսաց
25 K_{ab} երիցանց, cr քահանայից երիցանց
26 $acrK_{br}$ յեկեղեցոյ
27 $bclr$ եղիցի ϕ իս լիցի
28 bK թագուհովն, cr թագուհին ϕ իս թագուհւովն (aI)
29 cr զաւակոյն ϕ իս զաւակովն ($abIK$)
30 K հանդերձ եւ զաւակովն ϕ իս եւ զաւակովն հանդերձ ($abclr$)
31 $bclr$ աշխարհաւս ϕ իս աշխարհովս (aK)
32 $bclrABK_{br}$ որ ϕ իս որք (aK_a)
33 K_{abr} ի յայս ϕ իս յայս ($abclrAB$)

34 K վիճակս (ABK_{ar} չիք վիճակս) ժողովեալ ϕ իս ժողովս
35 K_{br} մատենագրեցին ϕ իս մատանեցին
36 a Մուծին ϕ իս Մուծիկ ($bclrK$)
37 b արքայի, ABK_r արքայ եւ ϕ իս արքայի
38 a Միրհաւրիկ, K_b Մորհորիկ, K_r Հմիրհաւրիկ ϕ իս Միրհաւրիկ ($bclrABK_b$)
39 $bclr$ չիք ասկապետ, K_{ab} ազգապետ ϕ իս ասկապետ ($aABK_r$) (=առայժմ անյայտ նշանակութեամբ կամ աղաւաղուած մի պաշտօնի անուն (ϕ երեւս՝ ասկապետ՝ առաջացած վաղ շրջանի պ եւ կ տառերի նմանութեան ու շփոթի հետեւանֆով): Ըստ Վ. Յակոբեանի եւ Վ. Առաքելեանի՝ վերականգնելի է ազգապետ:
40 a Տիրազդ, ABK_{br} Տիրազգ, K_a Միրազգ ϕ իս Տիրազգ ($bclr$)
41 AB Ասպրակոս ϕ իս Սպրակոս ($abclrK_{abr}$)
42 K Շամայ, a Ղամա ϕ իս Շամա ($bclr$)
43 $bclrB$ Բկուր
44 ABK_{ab} Առատան, K_r Եռատան ϕ իս Ռատան ($abclr$)
45 cr Արչէս, ABK_b Ոչէս, K_r Արչէս ϕ իս Արչէս ($abIK_a$)
46 cr Քարդմանա, b Գարդմանա
47 $abclr$ Բերմոսան, AB Գերմոսան, K_b Գերմոսան ϕ իս Գերմոսան (K_{ar}) (գուցէ վերականգնելի է Քերմոսան, որից մի ղէպֆում՝ Ք>Գ, միւս ղէպֆում՝ Ք>Բ անցումներով՝ Գերմոսան եւ Բերմոսան)
48 K Խոսկէան
49 a Փիրոզ
50 K չիք եւ ($bclr$)
51 K չիք հաստատութեան ($bclr$)
52 cr Վաչագանա, B Վաչաֆանայ, K_b Վաչագան
53 a չիք եւ վասն առաւել ... Աղուանից
54 aK արքայի ϕ իս արքայիս ($bclr$)
55 K մատանի ϕ իս մատանիս ($abclr$)
56 a եղին ϕ իս եղաւ ($bclrK$)

ԴԱԲԻԹ ԱՆՅԱՂԹ

ՍԱՀՄԱՆՔ ԵՒ ՏՐԱՄԱՏՈՒԹԻՒՆՔ ԻՄԱՍՏԱՍԻՐՈՒԹԵԱՆ

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ Ի «ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆՆ» ԱՐԻՍՏՈՏԵԼԻ

ՎԵՐԼՈՒԾՈՒԹԻՒՆ «ՆԵՐԱԾՈՒԹԵԱՆՆ» ՊՈՐՓԻՐԻ

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ «ՍՏՈՐՈԳՈՒԹԵԱՆՑՆ» ԱՐԻՍՏՈՏԵԼԻ

ԴԱԻԹ ԱԼՅԱՂԹ

Ե-Ձ դդ. ականաւոր փիլիսոփայ Դաւիթ Անյաղթը հին Հայաստանի փիլիսոփայական գիտութեան հիմնադիրն է՝ նրա աշխարհիկ ուղղութեան ամենախոշոր ներկայացուցիչը: Նրա շնորհիւ հայ փիլիսոփայութիւնը Ձ դ. թեւակոխեց իր զարգացման մասնագիտական փուլը՝ սեփական խնդիրներով եւ յղկուած մասնագիտական տերմինաբանութեամբ:

Դաւիթ Անյաղթի ստեղծագործութիւնը նախապատրաստուած էր Ե դ. հայ իմաստասէրների եւ թարգմանիչների բեղուն գործունէութեամբ: Ե դ. երկրորդ կէսի եւ Ձ դ. առաջին քառորդի ընթացքում Յունաբան դպրոցի կատարած թարգմանութիւնները, քերականական, ճարտասանական եւ յատկապէս՝ հին յունական փիլիսոփայական յուշարձանների թարգմանութիւնները առաջ մղեցին հայ տեսական միտքը եւ այն բարձրացրին ժամանակի զարգացած ժողովուրդների գիտութեան մակարդակին: Հայոց գրերի գիւտից ընդամէնը հարիւր տարի անց ամենաճշգրիտ թարգմանութեամբ հայ ընթերցողն իր ձեռքի տակ ունէր Արիստոտէլի, Պլատոնի, Փիլոն Ալեքսանդրացու, Պորփիր Փիլնիկեցու, Դիոնիսիոս Թրակացու, Աֆտոնիոսի, Թէոն Ալեքսանդրացու եւ այլ անտիկ ու վաղ միջնադարեան հեղինակների գիտափիլիսոփայական երկերը: Այդ ժամանակաշրջանում ստեղծուեց նաեւ զուտ գիտական բովանդակութեամբ հայագիր ինքնուրոյն գիտութիւնը:

Ալեքսանդրեան նորպլատոնական դպրոցի սան Դաւիթ Ներգինացին՝ իր յոյն արուեստակիցներից Անյաղթ եւ Եռամբձ մականունները ստացած հայագրի փիլիսոփան, ըստ միջնադարեան գրաւոր աւանդութեան, տարէց հասակում վերադարձել է Հայաստան եւ ծաւալել բուռն գիտական եւ մանկավարժական գործունէութիւն: Իր գործերը Դաւիթը նախապէս գրել էր յունարէն: Սակայն այն հանգամանքը, որ նրա հայերէն տարբերակները երեւան են եկել յունարէնի հետ գրեթէ միաժամանակ՝ Ձ դ. առաջին կէսում, Յունաբան դպրոցի գործունէութեան երրորդ շրջանում, խօսում է յօգուտ կա՛մ Հայաստան վերադառնալուց յետոյ հեղինակի կողմից թարգմանուելու, կա՛մ էլ յունաբան դպրոցի թարգմանիչների՝ հեղինակի կողմից ընդհանուր ղեկավարութիւն ստանալու մասին:

Դաւթի փիլիսոփայական ժառանգութիւնն ընդգրկում է չորս աշխատութիւն. դրանք են՝ Սահմանք իմաստասիրութեան (Փիլիսոփայութեան սահմանումներ կամ Գիրք սահմանաց՝ Սահմանումների գիրք), Վերլուծութիւն Ներածութեան Պորփիրի (Պորփիրի Ներածութեան վերլուծութիւն), Մեկնութիւն ի Վերլուծական Արիստոտէլի (Արիստոտէլի Անալիտիկայի մեկնութիւն) եւ Մեկնութիւն Ստորագութեանց Արիստոտէլի (Արիստոտէլի կատեգորիաների մեկնութիւն):

Այդ չորս աշխատութիւններով Դաւիթ Անյաղթը հայ փիլիսոփայութեան մէջ որակական բեկում կատարեց՝ սահմանազատելով իմաստասիրութիւնը աստուածաբանութիւնից: Նա տուեց փիլիսոփայութեան, որպէս գիտութեան, սահմանումը, որոշեց նրա խնդիրները եւ նպատակները, ուրոյն տեղը հին եւ միջնադարեան Հայաստանի գիտութիւնների բնագաւառում:

Դաւիթ Անյաղթի չորս աշխատութիւններից ամենակարեւորը Սահմանք իմաստասիրութեան երկն է: Այստեղ շարադրուած են փիլիսոփայական կարեւորագոյն խնդիրները, տրուած են այդ գիտութեան սահմանումները, եւ արտացոլուած է հեղինակի հա-

յեացքների ողջ համակարգը: Դաւիթն առաջադրում է փրկիսփայլութեան վեց սահմանումներ, որոնք տալիս են փրկիսփայլութեան առարկայի, էութեան եւ նպատակի սպառիչ ըմբռնում:

Դաւթի երկրորդ կարեւոր աշխատութիւնը Պորփիրի Ներածութեան վերլուծութիւնն է, որը նուիրում է տրամաբանութեան հարցերին, ընդհանուր հասկացութիւնների՝ ընդհանուրի եւ եզակիի փոխարարեութեան, Պորփիր Փիւնիկեցու Ներածութեան հիմնական բովանդակութիւնը կազմող հինգ ձայների՝ սեռի, տեսակի, տարբերութեան, սեփական եւ պատահական յատկանիշների քննութիւնը:

Այս աշխատութեան հետ սերտօրէն կապուած է Դաւթի միւս երկը՝ Արիստոտելի կատեգորիաների մեկնութիւնը: Այստեղ Դաւիթը կրկին անդրադառնում է հասկացութիւնների հարցին եւ վերլուծում Արիստոտելի տասը կատեգորիաները (ստորոգութիւնները)՝ գոյացութիւնը, քանակը, որակը, յարաբերութիւնը, տեղը, ժամանակը, դրութիւնը, տիրապետումը, գործողութիւնը եւ կրաւորութիւնը: Հայերէն պահպանուած 38 գլուխներում Դաւիթը քննում է միջնադարեան փրկիսփայլութեան համար շատ կարեւոր՝ ընդհանուրի եւ եզակիի փոխարարեութեան խնդիրը: Նա դրսեւորում է փրկիսփայլական իր լայն գիտելիքները եւ քննադատական վերաբերմունքը հին յունական փրկիսփայլական դպրոցների հանդէպ: Այս երկը մեզ է հասել եզակի ձեռագրով (ՄՄ ձեռ. թիւ 1930), որտեղ պահասում են աշխատութեան սկիզբը եւ վերջը: Լրիւ է նրա յունարէն տարբերակը, որը հրատարակել է Ադոլֆ Բուսսէն, սակայն՝ կամայական կերպով, շեղուելով ձեռագրերից՝ փոխել է վերնագիրը եւ վերագրել երկը Էլիասին: Այդ տեսակէտը մերժուած է մեր կողմից, եւ վերականգնուած են Դաւիթ Անյաղթի հեղինակային իրաւունքները:

Ծաւալով ամենափոքր Մեկնութիւնն ի վերլուծականն Արիստոտելի երկը Դաւիթը նուիրել է հաւաքաբանութեան (սիլլոգիզմի) ուսմունքին: Նա քննում է դատողութեան, հասկացութեան եւ հաւաքաբանութեան կառուցման կանոնների հետ կապուած հարցերը՝ առանձնապէս կանգ առնելով ապացուցման տեսութեան վրայ:

Սոյն հատորում վերահրատարակում են Դաւիթ Անյաղթի գիտաքննական բնագրերն ըստ հետեւեալ հրատարակութիւնների՝

Սահմանք իմաստասիրութեան. համահաւաք քննական բնագիր, թարգմ. ուսուերէն, առաջաբանը եւ ծանօթագր.՝ Ս. Ս. Արեւշատեանի, Երեւան, 1960: Քննական բնագրի հիմքում դրուած է ՄՄ թիւ 1747 ձեռ. (1243 թ.), որի հետ համեմատուած են ՄՄ ձեռ. թիւ 1746 (1280 թ.), 2326 (ժԴ դ.), 1751 (ժԴ դ.), 464 (1734 թ.):

Մեկնութիւնն ի վերլուծականն Արիստոտելի. համահաւաք քննական բնագիր, թարգմ. ուսուերէն, առաջաբանը եւ ծանօթագրութիւնները՝ Ս. Ս. Արեւշատեանի, Երեւան, 1967: Քննական բնագիրը կազմուած է համաձայն հետեւեալ գրչագրերի՝ ՄՄ թիւ 8132 ձեռ. (ժԴ դ. - A), որի հետ համեմատուած են ՄՄ ձեռ. թիւ 7151 (1386 թ. առաջ - B), 1763 (1611-1613 թթ. - C), 1686 (1634 թ. - D), 1764 (1651-1654 թթ. - E), Վենետիկի 1833 թ. հրատարակութիւնը¹ (F):

Վերլուծութիւնն Ներածութեանն Պորփիրի. համահաւաք քննական բնագիր, թարգմ. ուսուերէն, առաջաբանը եւ ծանօթագրութիւնները՝ Ս. Ս. Արեւշատեանի, Երեւան, 1976:

1 Տե՛ս Կորիւն վարդապետի, Մամբրէի Վերծանողի եւ Դաւիթ Անյաղթի Մատենագրութիւնն, Վեներտիկ-Ս. Ղազար, 1833:

Քննական բնագրի հիմքում դրուած է ՄՄ թիւ 1716 ձեռագիրը (1270 թ.), որի հետ համեմատուած են ՄՄ ձեռ. թիւ 1746 (1280 թ.), 2326 (ԺԴ դ.), 1751 (ԺԴ դ.), 2326 (ԺԴ դ.), 1766 (ԺԵ դ.), ինչպէս նաեւ 1833 թ. վեներտիկեան հրատարակութիւնը¹:

Մեկնութիւն Ստորոգութեանցն Արիստոտէլի. համահաւաք քննական բնագիր, թարգմ. ռուսերէն, առաջաբանը եւ ծանօթագրութիւնները՝ Ս. Ս. Արեւշատեանի. տե՛ս Դաւիթ Անյաղթ, Երկասիրութիւնք փիլիսոփայականք, Երեւան, 1980, էջ 193-300: Այս երկը հրատարակուած է ըստ ՄՄ թիւ 1930 ձեռագրի (ԺԳ դ.):

Յունարէն պահպանուած Ստորոգութիւնների մեկնութեան բնագիրը տե՛ս *Eliae in Porphyrii Isagogen et Aristotelis Categorias commentaria*, ed. Adolfus Busse. Berolini, 1900. նաեւ Փիլիսոփայական սահմանումների եւ Պորփիրի Ներածութեան վերլուծութեան յունարէն բնագիրը տե՛ս *Davidis Prolegomena et in Porphyrii Isagogen Commentarium*, ed. A. Busse, CAG, vol. XVIII, pars 2, Berolini, 1904, pp. 80-219. Հայերէն բնագրերը Գոհար Մուրադեանի կողմից վերստին համեմատուել են յունարէն բնագրերի հետ եւ կատարուել մասնակի ճշգրտումներ:

ՍԷՆ Արեւշատեան

ՍԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

1. Կորիւն վարդապետի, Մամբրէի Վերծանողի եւ Դաւիթ Անյաղթի Մատենագրութիւնք, Վեներտիկ-Ս. Ղազար, 1833:
2. ՍԷՆ Արեւշատեան, Դաւիթ Անյաղթը՝ հին Հայաստանի ականաւոր փիլիսոփայ, Երեւան, 1980:
3. ՍԷՆ Արեւշատեան, Դաւիթ Անյաղթի ժառանգութիւնը նոր լուսարանութեամբ, ԲՄ, հտ. 9, Երեւան, 1969:
4. Յակոբ Մանանդեան, Յունարան դպրոցը եւ նրա զարգացման շրջանները. քննական ուսումնասիրութիւն, Վիեննա, 1928:
5. Յակոբ Մանանդեան, Դաւիթ Անյաղթի խնդիրը նոր լուսարանութեամբ, Վաղարշապատ, 1904:
6. Դաւիթ Անյաղթ, Մատենագիտական ցանկ, Երեւան, 1980:
7. С. С. Аревшатын, Формирование философской науки в древней Армении (V-VI вв.), Ереван, 1973.
8. С. С. Аревшатын, Давид Непобедимый, Москва, 1980.
9. В. К. Чалоян, Философия Давида Непобедимого, Ереван, 1946.
10. В. К. Чалоян, История армянской философии, Ереван, 1959.
11. В. К. Чалоян, Развитие философской мысли в Армении, Москва, 1974.

1 Նոյն տեղում, էջ 251-356:

ԴԱԹԻ ԵՌԱՄԵԾԻ ԵՒ ԱՆՅԱՂԹ ՓԻԼԻՍՈՓԱՅԻ ԸՆԴԴԵՄ ԱՌԱՐԿՈՒԹԵԱՆՑՆ

ՉՈՐԻՑ ՊԻՅՈՒՆԻ ԻՄԱՍՏԱԿԻ

ՍԱՀՄԱԼՔ ԵՒ ՏՐԱՄԱՏՈՒԹԻՒՆՔ ԻՄԱՍՏԱՍԻՐՈՒԹԵԱՆ

1 Որք միանգամ իմաստասիրութեան տենչան բանից եւ առ ի նմանէ հեշտութեանց ծայրիւ միայն մատին հանդիպին ճաշակեալք, ամենայն կենցաղական հոգոց բարեալ մնալ ասացեալք, ողջախոհ իմն մոլութեամբ առ այսոսիկ վարեալք բերին: 2 Եւ անդուստ իսկ ապա էակացն մակացութեամբ փութապէս գնոցին իսկ ինքեանց փոխեն զտենչանս: 3 Իսկ մակացութիւն էակացն, որպէս հանդերձեալ եմք ուսանել, իմաստասիրութիւն է:

4 Եւ արդ, վասն զի բազում յաւժարութիւն եւ ողջախոհ զբազումն եւ իմաստուն տենչումն յայսոսիկ վարեաց զմեզ ի հանդէսս, բեր գաստուածայինն հանդէս իմաստասիրութեան զգեցցուք: 5 Մի գաւառիկայսդ դժուարաձեռն համարելով, այլ առ եզր աստուածային խոստմանց դորա բացահայելով, զամենայն աշխատութիւն նուաստ եւ երկրորդ նորին գոլ վարկցուք: 6 Բայց բարւոք թուի ինձ սակաւ մի յապաղումն առնել պատմութեանս եւ արուեստիցն հաւանել որոշմանց, որք ասեն՝ թէ պարտ է գրեթէ յամենայն իրողութիւնս զչորսս զայսոսիկ խնդրել զգլուխս. եթէ է՞, եւ զի՞նչ է, եւ որպիսի՞ ինչ է, եւ վասն է՞ր է:

7 Եւ յիրաւի այսոքիկ խնդրին, քանզի յիրողութեանցն ոմանք անգոյք են, որպէս եղջերուաքաղն եւ արալէզն, եւ որչափ ինչ մերս վերաստեղծէ մտածութիւն. իսկ ոմանք գոյութիւն ունին: 8 Եւ այնոցիկ դարձեալ, որք զգոյութիւն ունին, ոմանք երկբայաբար ունին զգոյութիւն, որպէս անասող երկինն եւ հակոտնեայքն, քանզի յերկբայս եմք վասն այսոցիկ, եթէ ե՞ն եւ

եթէ ոչ. իսկ ոմանք աներկբայաբար ունին զգոյութիւնն, որպէս մարդ, ձի, արծուի, որք խոստովանաբար գոն: 9 Արդ ի վերայ անգոյիցն եւ այնոցիկ, որք երկբայաբար ունին զգոյութիւն, զեթէն պարտ է խնդրել, իսկ ի վերայ այնոցիկ, որք աներկբայաբար ունին զգոյութիւն, ոչ է պարտ խնդրել զեթէն, այլ եթէ զզինչէն: 10 Իսկ զինչէն կամ անուամբ ճանաչի մեզ, կամ սահմանաւ: 11 Եւ անուամբ, յորժամ տեսանելով ինչ, ասեմք՝ զի՞նչ է, եւ ասեմք՝ թէ մարդ է. իսկ սահմանաւ, յորժամ ասեմք՝ կենդանի բանաւոր, մահկանացու, մտաց եւ հանճարոյ ընդունակ:

12 Եւ վասն զի ամենայնք յիրողութեանցն ոչ միայն հասարակութիւն ունին առ միմեանս, այլ եւ զանազանութիւնք, քանզի կենդանիք ոչ միայն հասարակութիւն ունին առ միմեանս, այս ինքն է ըստ սեռումն, ըստ որում կենդանին գոն, այլ եւ զանազանութիւնս ունին առ միմեանս. վասն զի ոմանք բանականք են եւ ոմանք անբանք, ոմանք մահկանացուք եւ ոմանք անմահք: 13 Վասն այսորիկ խնդրի եւ որպիսի՞ ինչէն, զի նովաւ ուսցուք զգանազանութիւնսն. քանզի հարցանելով, թէ որպիսի՞ ինչ է, ասեմք թէ բանական՝ թէ անբան, մահկանացու՝ թէ անմահ: 14 Եւ զիտել պարտ է, զի բազում անգամ որպիսիինչէն ի զինչէնումն երեւի, քանզի յորժամ զինչէն սահմանաւ ճանաչի, յայնժամ որպիսիինչէն ի զինչէնումն տեսանի, քանզի զինչէն հանդերձ սահմանաւ երեւի:

15 Իսկ յորժամ զինչէն անուամբ ճանաչի, յայնժամ որպիսիինչէն ոչ երեւի ի զինչէնումն. եւ պարտ է յայնժամ զորպի-

սիրինչէն խնդրել: 16 Եւ վասն զի ամենայնք ի գոյիցս առ կատարումն ինչ տեսանիլ բնաւորեցան, եւ ոչինչ ընդունայն եւ վայրապար ստեղծիչն եստեղծ. ոչ բնութիւն եւ ոչ արհեստ, վասն այսորիկ կարեւորաբար զվասնէրն խնդրեմք: 17 Որգոն, վասն է՞ր են մահիճք, վասն հանգստեան մարդկան. եւ վասն է՞ր է մարդ, վասն զարդարելոյ զզգալիսս. քանզի եթէ ոչ էր մարդկային սեռն, ամենայն անկատար գոյր. որպէս յայտ առնէ եւ Պղատոն ի «Տիմէոսի» տրամաբանութեանն, քանզի այսպէս ասէ յաղագս արարչին, եթէ յետ առնելոյն զերկիրնս եւ զերկիր, հրատարակէր առ իմանալի զաւրութիւնսն այսպէս եւ ըստ այսմ աւրինակի, եթէ այլ եւս երեք սեռք մեզ մահկանացուք անեղանելիք, որոց ոչ եղելոց՝ երկին անկատար: 18 Իսկ միտք ասացելոցդ է ըստ այսմ աւրինակի, եթէ այլ եւս երեք սեռք մահկանացուք. պակաս գոն մեզ անեղանելիք. այսինքն տակաւին ոչ եւս եղեալք: 19 Արդ, են երեք սեռք մահկանացուք. աւդայինք, ջրայինք եւ երկրայինք, յորոց եւ մարդն է, որոց ոչ եղելոց, որպէս ասէ, երկին անկատար: 20 Երկին կոչեաց զաշխարհ, ի պարունակողէն զպարունակեալն նշանակելով, քանզի երկին պարունակէ զաշխարհ:

21 Եւ արդ վասն զի իմաստասիրութիւն է առաջիկայս մեզ եւ գեղեցկագոյն եւ պատուականագոյն ամենայն գործոց մարդկան, որ առ ի մէնջ ոչ երկբայանի վասն գոլոյն. բայց յայլոց յոմանց երկբայանի, որպէս ի կուրաց քատակիցելոց յաղագս գունից շարաբանիցելոց: 22 Յաղագս որոց եւ Ստագիրացին ասէ, եթէ ի ծնէ կոյրք ոչ կարեն յաղագս գունից շարաբանել, վասն զի եւ ոչ գիտեն ի բնութենէ զգոյնս: 23 Բեր զայսոցիկ զբանս արտադրեսցուք եւ զեղծմունս նոցա որպէս եւ կարողութիւն է արասցուք, յայտնապէս զանմտութիւնն նոցա յանդիմանելով: 24 Այլ եթէ որպիսի ինչ են այսոքիկ

բանք, ի հետակայումդ տեսաւորութեան ուսցուք:

1 Ընդ այսոսիկ յանդերձ աստուծով եւ առաջիկայ գործաւորութիւնս

ՊՐԱԿՔ Ա.

2 Քանզի որպէս յառաջիկայում տեսութեան խոստացաք եւ զբանս կամեցելոցն եղծանել, զգոյութիւն իմաստասիրութեան արտադրեսցուք եւ զնոցին եղծմունս ըստ կարողութեան արասցուք: 3 Եւ է նախ առաջին ձեռնարկութիւն այնոցիկ, որք եղծանեն զգոյութիւն իմաստասիրութեան, այսպէս եւ ըստ այսմ աւրինակի արտաբերի: 4 Էն ի հոմանունաց է, իսկ հոմանունքն ընդ սահմանաւ ոչ ստորանկանին եւ ոչ ընդ գիտութեամբ. ապա ուրեմն էն անգիտելի է. իսկ իմաստասիրութիւն գիտութիւն էիցն է ըստ ձեզ, յայտ է թէ անգիտելի է, որովհետեւ էն անգիտելի է:

5 Արդ յայսմ ձեռնարկութեան ըստ երկուց յեղանակաց պատահեմք ձեզ. ընդգծակայութեամբ եւ ընդդիմայարակայութեամբ: 6 Եւ է ընդդիմակայութեանն գործէ՝ անդուստ ի սկզբանն ճշմարիտ գոյացուցանել զնա եւ ոչ երբէք շփոթել զառաջիկայն:

7 Արդ, եղծանելով զառաջիկայ ձեռնարկութիւնն եղծանողացն զիմաստասիրութեան, պիտանանամք եւ ընդդիմակայման եւ ընդդիմայարակայման:

8 Եւ ընդդիմակայմանն այսպէս ասելով, եթէ ոչ է էն ի հոմանունացն, այլ յայնցանեացն, որք որպէս ի միոջէն եւ առ մին են. քանզի եթէ զի՞նչ են հոմանունքն, յառաջիկայսն ունիմք ուսանել:

9 Իսկ ընդդիմայարակայման պիտանացեալք ասեմք, զի թէպէտ եւ տամք զէն ի հոմանունացն գոլ, այլ ոչ եթէ այսուիկ ինչ անգիտելի է: 10 Քանզի թէպէտ եւ ոչ կարողք գոն հոմանունքն ընդ սահմանաւ

ստորանկանիլ, այլ ոչ այսուրիկ անգիտելիք գոն. քանզի որոշումն է տրամաբանական, որ ասէ, թէ պարտ է ի վերայ հոմանուանցն զերիսս զայսոսիկ խնդրել, եթէ քանիս ունի նշանակութիւնս համանունն. եւ եթէ յաղագս որո՞յ նշանակութեան է բանն. եւ երրորդ ապա ստորագրել եւ կամ սահմանել զմի ի նշանակութեանցն, յաղագս որոյ բանն է: 11 Որգոն, արդ յորժամ յարացուցիւ հաւաստեցուցուք զասացեալսդ:

12 Յորժամ վասն շան է բանն, վասն զի ի հոմանուանցն է այս ձայն, նախ առաջին պարտ է քննել, թէ քանիս ունի նշանակութիւնս. որգոն, թէ նշանակէ զաստղայինն եւ գծովայինն եւ յերկրայինն: 13 Եւ երկրորդ ասի, թէ յաղագս որոյ նշանակեցելոյ, այսինքն՝ յաղագս որոյ շան է բանն: 14 Եւ երրորդ զայն, յաղագս որոյ բանն է ընդ ստորագրութեամբ կամ ընդ սահմանաւ ստորանկանել, որգոն, թերեւս յաղագս երկրայնոյ շան է բանն, ասեմք՝ թէ կենդանի է չորքոտանի յաջողական:

15 Արդ այսպէս եւ ի վերայ էին զերիսս զայսոսիկ խնդրեմք: 16 Քանզի խնդրեմք նախ առաջին, թէ որչափ նշանակութիւնս ունի. եւ ասեմք, թէ ըստ տասն նշանակեցելոցն էն բերի, այսինքն ըստ տասն ստորագրութեանց: 17 Եւ երկրորդ խնդրեմք, թէ յաղագս որոյ նշանակեցելոյ է բանն, այսինքն յաղագս գոյացութեա՞ն, թէ յաղագս քանակի՞, թէ յաղագս որակի՞, թէ յաղագս այլո՞ցն. եւ երրորդ, զնշանակեցեալն ընդ սահմանաւ եւ կամ ընդ ստորագրութեամբ արկանեմք. իսկ եթէ ընդ սահմանաւ եւ ընդ ստորագրութեամբ արկանեմք, յայտ է՝ թէ ոչ է էն անգիտելի:

18 Իսկ երկրորդ գլուխ եղծանողացն զգոյութիւն իմաստասիրութեան յառաջագայի այսպէս եւ ըստ այսմ աւրինակի:

19 Էակքն ի հոման եւ ի ծորման են, եւ ոչ երբէք հանդիպին դադարման, քանզի յառաջանայ քան զբանն փոփոխումն էակացն, եւ գրեթէ յառաջ քան զճառելն զնոցանէ զբանն՝ փոփոխին: 20 Եւ բերեն յարացոյց ինչ այսպիսի, թէ զոր աւրինակ ի հոսանուտ գետի՝ ի նոյն ջուր անկար է երկիցս թանալ գոտն: 21 Եւ կամ որպէս ոմանք, յարածգելով եւս զտարակուսանսդ, ասեն, թէ եւ ոչ մի անգամ կարողութիւն է ի նոյն ջուր թանալ գոտն, այն ինչ ջրոյն փութապէս ի բաց հոսեցելոյ եւ անցելոյ: 22 Այնպէս եւ էակքն, ի հոման եւ ի ծորման գոլով՝ եւ դադարման հանդիպել եւ ոչ միում, եւ յայտ է, թէ ոչ ստորանկանին ընդ գիտութեամբ. քանզի եւ ի կամելն զնոսա գիտել՝ փոփոխին եւ ի զանազան ժամանակս զանազանապէս ունին. եւ ոչ ոք կարէ հասանել եւ գիտել զնոսա: 23 Արդ, զիա՞րդ իմաստասիրութիւն գիտութիւն էակացն է, ուր էակքն ի հոման եւ ի ծորման գոլով անգիտելիք են:

24 Եւ այլազգ դարձեալ ասեն, եթէ զի եղիցի հասումն՝ պարտ է գիտողին պատկանիլ գիտելումն. եւ գիտող ասեն զանձն, իսկ գիտելի զենթակայ իրն: 25 Արդ զի եղիցի պատկանութիւն՝ այսինքն ըմբոն եւ կարող հասումն, պարտ է գիտելումն ոչ շարժիլ եւ ոչ զանազանաբար գոլ. ապա թէ շարժի գիտելին եւ փոփոխի, պարտ է եւ գիտողին, այսինքն անձին, շարժակից եւ փոփոխակից լինել: 26 Եւ թերեւս ուրեք գիտելին սպիտակ լինիցի, պարտ է եւ անձին սպիտակ լինել. եւ թէ գիտելին ջուր, պարտ եւ անձին ջուր լինել, զի գիտասցէ նմանեաւն զնմանն: 27 Այլ արդ, անձն ոչ լինի փոփոխակից գիտելումն. եւ յայտ է, թէ ոչ կարէ գիտել զգիտելին: 28 Ապա ուրեմն իմաստասիրութիւն ոչ կարող գոյ լինել գիտութիւն էակացն, վասն զի ոչ ստորականին ընդ գիտութեամբ էակքն: 29 Զայսոսիկ այնոքիկ:

30 Առ որս ասեմք նախ եւ առաջին, թէ իմաստասիրութիւնն ոչ եթէ վասն մասնականացն լինի, որք ի ծորման եւ ի հոսման են, այլ յաղագս հանուրցն լինի, որք ոչ փոփոխին, այլ միշտ նոյնպէս ունին:

31 Երկրորդ, զի թէպէտ եւ ասեմք զիմաստասիրութեանէ՝ թէ վասն մասնականացն է, ոչ եթէ վասն այնորիկ ոչ կարող գոյ հասանել ինչ եւ գիտել. վասն որոյ գիտողն, այսինքն անձն ոչ փոփոխակից լինի գիտելումն, այսինքն ենթակայումն:

32 Քանզի ըստ այսմ բանի եւ ոչ աստուածայինն գիտասցէ ինչ ի գոյիցն, վասն զի ոչ փոփոխակից լինի գիտելեացն, այլ միշտ նոյնպէս է եւ մնայ: 33 Եւ դարձեալ ըստ այդմ բանի եւ ոչ բժիշկ, ըստ բնութեան առողջ գոյով՝ կարող եղիցի ճանաչել զցաւս անցաւ բնութեամբ, այս ինքն յորժամ ողջ գոյ՝ ոչ կարէ տրոհել զցաւսն, այլ հարկաւորի հիւանդանալ, զի զհիւանդութիւնն գիտասցէ: 34 Բայց բազում անգամ անձն յառաջ քան զփոփոխել իրացն գիտէ զնոսա, որպէս եւ Պղատոն յայտ առնէ ասելովն, եթէ առաքինեացն անձինք ոչ միայն ի վերջոյ զգան իրացն, այսինքն հետեւիլ բնաւորեցան, այլ բազում անգամ յառաջ են քան զնոսա եւ գիտեն: 35 Արդ այսոքիկ այսպէս:

36 Երրորդ ձեռնարկութիւնն եղծանողացն զիմաստասիրութիւնն, եթէ ամենայն գիտելիքն ընդ զգայութեամբ ստորանկանին. որպէս եւ Պղատոն յայտ առնէ ասելովն, թէ արարիչն տեսողութիւնն եւ լսողութիւնն շնորհեաց մեզ, զի ի ձեռն սոցա զիմաստասիրական սեռն ուղղեսցուք:

37 Արդ զայս առնելով՝ խոստովանաբար ասեն, եթէ ուրեք ցուցանեմք ի ձեր բաժանմանէ, թէ մասունք իմաստասիրութեանն ոչ կարողք գոն լինել մասունք իմաստասիրութեան, յայտ է, թէ եւ ոչ բոլորն ասեն, այս ինքն իմաստասիրութիւնն կարող գոյ բաղկանալ: 38 Եւ ասեն, թէ ըստ ձեզ իմաստասիրութիւնն բաժանի ի

տեսականն եւ ի գործականն: 39 Եւ դարձեալ, տեսականն բաժանի ի բնաբանականն եւ յուսումնականն եւ յաստուածաբանականն: 40 Արդ, եթե կործանեմք զայսոսիկ զմասունս, յայտ է՝ թէ ոչ կարող գոյ բաղկանալ իմաստասիրութիւնն, վասն զի մասանցն ոչ գոյոյ՝ եւ ոչ բոլորն կարող գոյ բաղկանալ:

41 Եւ ասեն, թէ ուսումնականն ոչ է մասն իմաստասիրութեան, որպէս եւ Պղատոն կարծէ. քանզի եւ նա ոչ կարծէ զուսումնականն մասն գոյ իմաստասիրութեան, այլ նախակրթութիւնն ինչ, որպէս եւ քերթողականն եւ ճարտասանականն. ուստի եւ ի վերայ իւրոյ համալսարանին մակագրեաց. «Աներկրաչափն մի ներքսամտեսցէ»: 42 Իսկ զբնաբանականէն ասեն, թէ կործանեցաք զնա ի ձեռն երկրորդ ձեռնարկութեան ասելով, եթէ էակքն ի հոսման եւ ի ծորման են եւ դարձարման հանդիպին եւ ոչ ուրեք: 43 Իսկ զաստուածաբանականն եղծանեն այսպէս. թէ աստուածայինքն ընդ զգայութեամբ ոչ երբէք ստորանկանին եւ ոչ ընդ գիտութեամբ ստորանկանին. ապա ուրեմն եւ աստուածայինքն անգիտելիք են: 44 Արդ այսոքիկ այսպէս:

45 Առ որս ասեմք, թէ տակաւին ոչ ինչ ասացէք յաղագս գործականին, որ ընդգիմաբաժանի ի տեսականումն. եւ յայտ է, թէ ոչ զամենայն իմաստասիրութիւնն եղծին. վասն զի եւ գործականն մասն է իմաստասիրութեան, որպէս եւ Պղատոն յայտ առնէ ասելովն, թէ իմաստասէր կոչեմ ես ոչ զյոզնագէտն եւ ոչ զայն, որ կարող գոյ բազում ինչ առնուլ ի բերան, այլ զայն, որ անարատ եւ անբիծ վարս ստացեալ ունի յինքեան, որ է գործական իմաստասիրութիւնն: 46 Զայսոսիկ այսպէս:

47 Բայց եկեսցուք եւ պատասխանատրեսցուք յաղագս ուսումնականին եւ

բնաբանականին եւ աստուածաբանականին: 48 Եւ յաղագս ուսուցմանականին ասեմք, եթէ ոչ կարծէ զնա Պղատոն ոչ գոլ մասն իմաստասիրութեան, բայց եթէ ոչ ծայրագոյն իմաստասիրութեան, այսինքն աստուածաբանականին, քանզի ծայրագունին ոչ կարծէ զնա գոլ մասն. այլ զի գիտէ գուսուցմանն մասն իմաստասիրութեան, յայտ առնէ, մակացութիւն զնա կոչելով: 49 Արդ, եթէ մակացութիւն է, յայտ է, եթէ մասն է իմաստասիրութեան: 50 Իսկ Արիստոտէլ յայտնապէս գուսուցմանականն մասն իմաստասիրութեան կոչէ. Իսկ յաղագս բնաբանականին պատասխանատրեցաք, յեղծումն արկեալ զերկրորդն եւս ձեռնարկութիւն, որ ասէին՝ թէ էակքն ի հոսման եւ ի ծորման են: 51 Իսկ յաղագս աստուածաբանականին ասեմք, թէպէտ եւ աստուածայինն անգիտելի է ըստ ինքեան, այլ սակայն, տեսանելով զստեղծուածս եւ զարարածս նորա եւ զբարեկարգապէս շարժումն աշխարհի, ի մտածութիւն եւ ի կարծիս գամք ստեղծչին: 52 Իսկ աներեւոյթն յերեւելեացս փութագոյն ունի ճանաչիլն: 53 Արդ, այսպէս յեղծումն արկեալ եւ զերրորդ նոցա ձեռնարկութիւն, դադարեցուցուք զառաջիկայ տեսութիւնս:

54 Չորրորդ ձեռնարկութիւն հանդիպի ընդդիմակացուաց իմաստասիրութեան այսպէս եւ ըստ այսմ աւրինակի: 55 Իմաստասիրութիւն կամ գիտութիւն է, կամ ոչ է գիտութիւն. եւ եթէ ոչ է գիտութիւն, ապա եւ ոչ արհեստ եւ ոչ մակացութիւն կարող գոյ գոլ: 56 Իսկ եթէ գիտութիւն է, կամ ընդհանուր է կամ մասնական: 57 Իսկ եթէ մասնական գոյ, յոռեգոյն գոյ, քան զայլ արհեստ եւ զմակացութիւն, քան զքերթողական ասեմ եւ քան զճարտասանականն, քանզի նոքա ունին ընդհանուր բացորոշութիւնս: 58 Իսկ եթէ յոռի է, քան զայլ արհեստ, զիւրօրդ ասէք զնա արհեստ արհեստից եւ մակացութիւն

մակացութեանց: 59 Իսկ եթէ ընդհանուր գիտութիւն է, ոչ կարէ գոյանալ ի միում անձին, վասն զի ընդհանուր գիտութիւն ընդհանուր պատահումն է, իսկ ընդհանուր պատահումն ոչ կարէ ի մասնական ենթակայումն գոյանալ, վասն զի ընդհանուր սպիտակն ոչ կարէ ի ձեան բաղկանալ. ապա թէ ոչ՝ ոչ կարէ ի բուռ կամ եւ կաթնում գոյանալ: 60 Արդ, եթէ իմաստասիրութիւն ընդհանուր գիտութիւն է, ոչ կարէ ի մասնական ենթակայում գոյանալ, այսինքն ի Սոկրատում կամ ի Պղատոնում:

61 Չայս տարակուսութիւն լուծանելով ասեմք, եթէ իմաստասիրութիւն ընդհանուր գիտութիւն է. եւ ոչ եթէ վասն այսորիկ ոչ կարէ ի միում ենթակայում բաղկանալ, վասն զի ընդհանուր գիտութիւն է, քանզի այլ է ընդունակ ընդհանուր պատահման, եւ այլ՝ ընդունակ ընդհանուր իմաստասիրութեան: 62 Քանզի ընդունակ ընդհանուր պատահման՝ մարմին, իսկ ընդունակ ընդհանուր իմաստասիրութեան՝ միտք: 63 Եւ թէպէտ եւ մի մարմին ոչ կարէ զընդհանուր պատահումն ընդունել, քանզի որպէս ասացաք, եթէ Սոկրատէս ոչ կարէ զընդհանուր սպիտակն ընդունել, զի թէ կարող գոյր Սոկրատէս զընդհանուր սպիտակն ընդունել, ոչ կարող գոյր սպիտակն յայլում ումեք երեւել:

64 Այլ թերեւս եւ Սոկրատէս մարմնով ոչ կարէ զընդհանուր սպիտակն ընդունել, սակայն մտաւք զբան ընդհանուր սպիտակին կարէ ընդունել. քանզի կարէ գիտել Սոկրատէս, եթէ ընդհանուր սպիտակն գոյն է արտադատող աչաց: 65 Եւ ըստ այլում աւրինակի պարտ է զայս ցուցանել. քանզի մարմին ոչ կարէ զհակառակս սեռաբար եւ առանց շփոթութեան ընդունել ի միում մասին եւ ըստ միում ժամանակի: 66 Քանզի ոչ իսկ կարէ զսպիտակն եւ զսեւան սեռաբար եւ առանց շփոթութեան

ընդունել ըստ միում մասին եւ ըստ միում ժամանակի: 67 Եւ ասացեալ ըստ միում մասին, վասն զի ըստ այլ եւ ըստ այլ մասին կարէ գհակառակսն ընդունել ըստ միում ժամանակի: 68 Եւ ըստ միում ժամանակի ասացեալ, վասն զի ի միում մասին կարողք գոն հակառակքն անշփոթաբար գոյանալ ըստ այլ եւ այլ ժամանակի:

69 Արդ, թէպէտ եւ մարմին ոչ կարէ գհակառակսն սեռաբար եւ առանց շփոթութեան ընդունել ի միում մասին եւ ըստ միում ժամանակի, սակայն միտք կարող գոն ի միում ժամանակի զընդհանուր հակառակացն զբանս ընդունել յինքեանս. քանզի կարող է գիտել, եթէ ընդհանուր սպիտակն գոյն է արտադատող աչաց, եւ եթէ ընդհանուր սեւան գոյն է բաղդատող աչաց: 70 Իսկ եթէ կարող գոն միտքն, որք բնաւորեցան գոլ յանհատսն հանուր մարդոյ՝ գհակառակսն սեռաբար եւ անշփոթաբար ընդունել ի միում ժամանակի, զիա՞րդ ոչ կարող գոյ միտք զընդհանուր իմաստասիրութիւն ընդունել, որ գոյիցն է գիտութիւն: 71 Վասն զի կատարեալ վարդապետութիւն այն է, որ ոչ միայն զընդդիմակաց տարակուսութիւնս լուծանէ, այլ եւ որ գիւրն կարող գոյ հաստատել: 72 Եւ արդ, քանզի լուծաք գառաջի եղեալ տարակուսութիւնս, բեր այսուհետեւ ցուցցուք, եթէ է իմաստասիրութիւն այսպէս եւ ըստ այսմ աւրինակի:

73 Եթէ է աստուած, է եւ իմաստասիրութիւն: 74 Այլ արդ է աստուած, քանզի եպիկուրացոցն է ասելն, թէ ոչ է աստուած: 75 Արդ, եթէ է աստուած, է եւ նախախնամութիւն. քանզի ոչ միայն ստեղծանէ աստուած, այլ եւ խնամ տանի ստեղծուածոցն: 76 Արդ, եթէ է նախախնամութիւն, է իմաստութիւն. քանզի ոչ եթէ անբանաբար, այլ իմաստութեամբ նախախնամէ: 77 Եւ եթէ է իմաստութիւն. է եւ բաղձանք իմաստութեան: 78 Եւ եթէ

բաղձանք իմաստութեան՝ եւ սիրելութիւն իմաստութեան: 79 Եւ եթէ սիրելութիւն իմաստութեան, ապա եւ իմաստասիրութիւն, քանզի ոչ այլ ինչ է սիրելութիւն իմաստութեան, եթէ ոչ իմաստասիրութիւն:

1 Ընդ այսոսիկ հանդերձ աստուծով եւ առաջիկայ պրակֆ

ՊՐԱԿՔ Բ

2 Զի թէպէտ եւ աւելորդ էր ի խնդիր անկանել յաղագս իմաստասիրութեան եթէ է, այլ սակայն, զճշմարտութիւն որպէս զնիզակակից ի կիր առեալք, զբանս այնոցիկ, որք փորձեցան զգոյութիւն իմաստասիրութեան բառնալ, որպէս տկարս կործանեցաք: 3 Քանզի այնոցիկ, որոց կենցաղն հեռ է, որք են պիհոռնացիք, զամենայն ինչ եղծանել կամելով՝ զմայր ապացուցին, այսինքն զիմաստասիրութիւն ի ձեռն ապացուցի կամեցան եղծանել, որպէս զիմաստասիրութիւն ի ձեռն իմաստասիրութեան եղծանել: 4 Առ որս հանդիպի Պղատոն խնտացեալ առ ասացեալս նոցա, ոչ գոլ հասումն, ասելով եթէ զիա՞րդ ոչ գոլ հասումն ասէք, որպէս հասեալք, եթէ որպէս ոչ հասեալք: 5 Եթէ որպէս հասեալք, յայտ է՝ թէ հասէք, եւ է հասումն: 6 Իսկ եթէ որպէս ոչ հասեալք, ո՞վ հաւատասցէ ձեզ ոչ հասելոցդ եւ ոչ գիտակցելոցդ յասելդ զայդ:

7 Բայց եւ Արիստոտէլ յիւրում յումեմն Յորդորականում, յորում յորդորէ գհամբակս յիմաստասիրութիւն, ասէ այսպէս: 8 Թէպէտ եւ ոչ իմաստասիրելի, եւ եթէ իմաստասիրելի, իմաստասիրելի է. բայց ամենայն իրաւք իմաստասիրելի է: 9 Այսինքն՝ թէպէտ եւ ասէ ոք ոչ գոլ զիմաստասիրութիւն, ապացուցի պէտս ունի, որով բառնայ զիմաստասիրութիւն: 10 Իսկ եթէ ապացուցի պէտս ունի, յայտ է՝ թէ իմաստասիրէ. քանզի մայր ապացուցի իմաստասիրութիւն է: 11 Եւ եթէ ոք ա-

սէ գոլ զիմաստասիրութիւն, դարձեալ իմաստասիրէ, զի ապացուցի պիտանանայ, որով ցուցանէ գոլ զնա. ապա ուրեմն ամենայն իրաւք իմաստասիրէ, որ բառնայ զնա՝ եւ որ ոչն բառնայ. քանզի իւրաքանչիւր ոք ի նոցանէ ապացուցի պէտս ունի, որով հաւատարիմ լինին ասացեալքն: 12 Իսկ եթէ ապացուցի պէտս ունի, յայտ է՝ թէ իմաստասիրէ. քանզի մայր ապացուցի, որպէս ասացաք, իմաստասիրութիւն է:

13 Արդ, ի բաց թողեալք զեթէն, խնդրեսցուք թէ զի՞նչ է իմաստասիրութիւն եւ որպիսի՞նք ինչ է: 14 Եւ պարտ է գիտել, եթէ իմաստասիրութիւն եւ մի ինչ է, որպէս բոլոր պահանջելով, եւ բազմացեալ գոյ, որպէս զանազան մասունս ունելով: 15 Ապա որպէս մի ինչ գոլ՝ զնա սահմանեսցուք, իսկ որպէս բազմացեալ՝ բաժանեսցուք. քանզի անտեղի է այլոց արհեստիցն սահմանս տալ եւ բաժանել, իսկ իմաստասիրութեան ոչ սահմանս տալ եւ ոչ բաժանումն, յորմէ ամենայն արհեստք յառաջ գան:

16 Եւ պարտ է գիտել, եթէ զսահման եւ զբաժանումն յիշէ Պղատոն: 17 Զսահման ի «Փեդրոսում» տրամաբանութեանն ասելով, թէ «ով մանուկ դու, մի է սկիզբն զեղեցկաբար խորհելոյն, այսինքն գիտել յաղագս ո՞ր է մտածութիւն. ապա եթէ ոչ՝ հարկ է յամենայնէն վրիպել». այսինքն՝ եթէ կամի ոք յաղագս իրի ուրուք ճշմարտաբար խորհել եւ մտածել, պարտ է նախ գիտել զնորին իրի բնութիւնն, այսինքն զսահմանն: 18 Քանզի որ ոչն գիտէ զսահմանն, վրիպէ յայնցանեացն ամենեցունց, որք հետեւիլն բնաւորեցան նորին իրի. որգոն, եթէ ոք կամիցի գիտել՝ զինչ է բժշկութիւն, եթէ ոչ նախ գիտէ զբնութիւն բժշկութեանն, եթէ յաղագս մարդկային մարմնոյ լինի, այլ կարծէ զնա յաղագս փայտի լինել, զինչ բանս, զոր եւ ասէ յաղագս բժշկութեան, ընդունայն ասէ:

19 Իսկ զբաժանումն յիշէ ի «Սոփեստայ» տրամաբանութեանն ասելով, թէ «ընդ բաժանական հնարս ոչ ինչ պանծասցի փախչել, քանզի եւ ոչ ինչ փախչի ի բաժանմանէ». քանզի յորժամ ասեմք, թէ ի կենդանեացն ոմանք բանականք են եւ ոմանք անբանք, եւ ոչ ինչ է որ առանց սոցա է. քանզի ոչ գոյ կենդանի, որ ոչ է բանական կամ անբան:

20 Եւ դարձեալ նոյն ինքն ի նորին տրամաբանութեանն յաղագս բաժանման ասէ: 21 Զայսոսիկ ասեն՝ զբաժանումն պարզեւեալ մեզ ի ձեռն Պոլիմիթեայ երեւելական հրոյ: 22 Եւ պարտ է գիտել, եթէ որք առասպելաբանեն՝ ասեն, թէ Պոլիմիթեա գողացաւ երբեմն յաստուածոցն հուր եւ շնորհեաց մարդկան, որ է այլաբանութիւն: 23 Քանզի նախ եւ առաջին Պոլիմիթեա եգիտ զբաժանողական հնարս. քանզի բաժանողական հնարն համեմատի հրոյ, եւ վասն այսորիկ ասեն զնմանէ շնորհել հուր մարդկան: 24 Եւ զի բաժանողականն համեմատի հրոյ՝ աստուտ է յայտ. զոր աւրինակ հուր տրոհէ ի միմեանց զհոմասեռսն եւ զայլասեռսն: 25 Եւ զհոմասեռսն՝ որգոն զհրահայելիսն, այսինքն զարծաթ եւ զոսկի եւ զանագ եւ զպղինձ եւ զկապար. քանզի այսոքիկ հոմասեռք են, վասն զի սեռ ունին զհրահայելին եւ հրով տրոհին ի միմեանց. նաեւ հրով իսկ տրոհի արծաթ յոսկւոյ եւ կապար ի պղինձոյ: 26 Իսկ զայլասեռսն, որգոն յորժամ ի ձեռն հրոյ ասեմք տրոհել զժանգն յարծաթոյ եւ ի պղինձոյ: 27 Արդ այսպէս եւ բաժանականն համեմատիլ բնաւորեցաւ հրոյ ի տրոհելն զհոմասեռսն եւ զայլասեռսն: 28 Եւ զհոմասեռս, որգոն, յորժամ ասեմք, եթէ ի կենդանեացն ոմանք բանականք են եւ ոմանք անբանք, որք են հոմասեռք. վասն զի հասարակ սեռ ունին զկենդանին: 29 Իսկ զայլասեռսն, որպէս յորժամ ի ձեռն բաժանման բաժանեալ տրոհեմք զտասն թիւ ի քերականութենէն,

որ են այլասեռք. քանզի քերականութիւն ընդհանուր արհեստիւ է, որ է ընդ որակութեամբ, իսկ տասն թիւ ընդ թուականութեամբ է, որ է ընդ քանակութեամբ:

30 Արդ, այսոքիկ այսպէս գոլով, եկեսցուք եւ սահմանեսցուք զիմաստասիրութիւն, եւ բաժանումն նմին արասցուք:

31 Բայց պարտ է քննել, եթէ զոր պարտ է առաջին դասել, զսահմանե՞լն եթէ զբաժանելն: 32 Եւ պարտ է գիտել, եթէ պարտ է նախ սահմանել՝ եւ ապա բաժանել վասն այսր պատճառանաց. քանզի սահմանն վերաբերի միակի, իսկ բաժանումն բազմութեան: 33 Արդ, որպէս միակն յառաջ է, քան զբազմութիւնսն, նոյնաւրինակ եւ սահմանն համեմատելով միակի՝ յառաջ է քան զբաժանումն, որ համեմատի բազմութեան: 34 Եւ զի սահմանն համեմատի միակի, իսկ բաժանումն բազմութեան, աստուտ է յայտ: 35 Ձոր աւրինակ, միակն մի ինչ է եւ մի բնութիւն. նոյնպէս եւ սահմանն զբազմումն մի ինչ առնէ, եւ մի բնութիւն բացակատարէ. քանզի մարդ՝ կենդանի բանաւոր, մահկանացու, մտաց եւ հանճարոյ ընդունակ, մի բնութիւն բացակատարէ՝ զընդհանուր մարդն: 36 Իսկ բաժանումն ընդդէմ նորին զմիմն ի բազումս տրամատէ եւ յանբաւս, քանզի առնու զգոյացութիւն եւ բաժանէ ի մարմին եւ յանմարմին, եւ զմարմինն ի ներբուսականն եւ յանբուսականն: 37 Նմանապէս եւ զայլսն, որ ի կարգին:

38 Արդ եկեսցուք եւ սահմանեսցուք զիմաստասիրութիւն: 39 Այլ վասն զի որպէս ոչ է կարողութիւն հիւսել զհետեւաբանութիւն, եթէ ոչ նախ ուսանիմք՝ զի՞նչ է հետեւաբանութիւն եւ ուստի՞ եզանի, այսպէս եւ սահմանել անհնար է, եթէ ոչ նախ ուսանիմք, թէ զինչ է սահման: 40 Արդ զայս գիտելով, զլուխս ոմանս թուով ինն յարդարեսցուք:

41 Առաջին, յորում ասեմք, թէ զի՞նչ է սահման: 42 Երկրորդն՝ յորում ասեմք, թէ ի՞նչ զանազանի սահման ի սահմանադրութենէ եւ ի ստորագրական սահմանէ: 43 Երրորդն՝ եթէ ուստի՞ ասի սահման: 44 Չորրորդն՝ եթէ ուստի՞ առնու սահման: 45 Հինգերորդն՝ յորում ասեմք, եթէ ո՞ր է կատարեալ սահման եւ որ անկատար, եւ զի՞նչ յոռութիւն սահմանի եւ զինչ առողջութիւն: 46 Վեցերորդն՝ յորում ասեմք, քա՞նի են սահմանք իմաստասիրութեան: 47 Եւթներորդն՝ յորում ասեմք, վասն է՞ր այսքանիք են սահմանք իմաստասիրութեան, եւ ոչ նուազք եւ ոչ յոլովք: 48 Ութերորդն՝ յորում ասեմք զկարգս նոցա: 49 Իններորդն՝ յորում ասեմք, եթէ ո՞րք են գտակք սահմանացս այսոցիկ:

1 Ընդ այսոսիկ հանդերձ աստուծով եւ առաջիկայ պրակֆ

ՊՐԱԿՔ Գ

2 Եկեսցուք յառաջին գլուխն եւ ասացուք, թէ զինչ է սահման: 3 Սահման է բան կարճառատ, յայտնիչ բնութեան ենթակայ իրի: 4 Այլ վասն զի որպէս հանդերձեալ եմք ուսանել, ամենայն սահման բնաւորեցաւ ի սեռէ եւ ի բաղկացուցիչ զանազանութեանց լինել, ասացուք՝ եթէ ո՞ր բառ յառաջիկայ սահմանիս համեմատի սեռի, եւ ո՞րք են այնոքիկ, որք բաղկացուցչաց զանազանութեանց: 5 Այլ զի հաւաստի մեզ վարդապետութիւնս եղիցի, յաւրինակ առնումք զսահման մարդոյ:

6 Եւ պարտ է գիտել, եթէ մարդ է կենդանի բանաւոր, մահկանացու, մտաց եւ հանճարոյ ընդունակ: 7 Արդ ահա աստանաւր կենդանին փոխանակ սեռի առաւ. քանզի հասարակ է եւ ըստ բազմաց բերի, քանզի բերի ըստ մարդոյ եւ ըստ շան եւ ըստ ձիոյ եւ ըստ այլոց այսպիսեաց: 8 Իսկ այլքն ի բառից փոխանակ բաղկա-

ցուցչաց զանազանութեանց յարառոցեալք գոն:

9 Արդ այսպէս եւ յառաջիկայում սահմանում բան փոխանակ սեռի առաւ, քանզի հասարակ է եւ ըստ բազմաց բերի. քանզի բերի ըստ ներտրամադրականին եւ ըստ յառաջաբերականին: 10 Իսկ այլքն ի բառից փոխանակ բաղկացուցչաց զանազանութեանց յարառոցեալք գոն:

11 Արդ եկեսցուք եւ պատմեսցուք զսահմանդ սահմանի: 12 Եւ պարտ է գիտել, զի բան ասացաւ յաղագս որոշելոյ յանուանէ. քանզի եւ անուն սահմանէ զբնութիւն ենթակայ իրին, որգոն, մարդ. եւ զոր սահման ի ձեռն բազմաց բառից առնէ, զայս անուն ի ձեռն միոյ բառի, ուստի եւ հակասահմանին: 13 Քանզի ասեն, եթէ անուն է սահման կարճառաւտ, իսկ սահման է անուն ծաւալեալ: 14 Արդ, զի որոշեսցի անունն, վասն այսորիկ կոչեցաւ բանն: 15 Եւ արդարեւ, զոր ինչ առնէ անուն, առնէ եւ բան, քանզի եւ անուն եւ բան զբնութիւն ենթակայ իրին յայտնեն: 16 Վասն է՞ր իմացան զսահման. եւ արդ ասեմք՝ վասն գիտելոյ մեզ զբաղկացուցիչ զանազանութիւնս, այսինքն բաղկացուցանելով մեզ գենթակայ իրն: 17 Քանզի թէ ասեմք մարդ միայն, ոչ եւս գիտեմք զբաղկացուցիչ զանազանութիւնս. իսկ եթէ ասեմք, մարդ՝ կենդանի բանաւոր, մահկանացու, մտաց եւ մակացութեանց ընդունակ, գիտեմք զբաղկացուցիչ զանազանութիւնսն:

18 Իսկ համառաւտ ասացաւ վասն ձգտեցելոցն բանից, որ կոչին ճառք. որպէս որ յաղագս պսակի եւ կամ որպէս պատմական բան. քանզի եւ նոքա բանք ասին, այլ ոչ եւ համառաւտ:

19 Իսկ յայտնիչ բնութեան ենթակայ իրի ասացաւ, կամ վասն ասացելոց բացազանչմանց, որգոն՝ Ծանի՛ր զքեզ, եւ եթե՛ Մի՛ ինչ յոյժ. քանզի այսոքիկ բանք ասին

եւ համառաւտ, այլ ոչ յայտնեն զբնութիւն ենթակայ իրի. եւ կամ վասն ստորագրութեանց. քանզի եւ նոքա ոչ եթէ զբնութիւն ենթակայ իրին յայտնեն, այլ զպարագայս բնութեանն եւ ըստ պատահմանն հետեւեալս: 20 Որգոն, յորժամ ասեմք, եթէ արդ է ուղղորդագնաց, ծիծաղական, լայնեղունգն. քանզի այսոքիկ զպարագայս բնութեանն յայտնեն եւ ոչ զբնութիւնն: 21 Արդ զայսոսիկ առաջին գլուխն:

22 Եկեսցուք յերկրորդ գլուխն եւ ասացուք՝ զի՞նչ զանազանի սահման ի ստորագրութենէ: 23 Եւ պարտ է գիտել՝ եթէ զանազանի սահման ի ստորագրութենէ այսու. վասն զի սահման ի գոյացողականաց ձայնիցն առնու, եւ զգոյացութիւն եւ զբնութիւն ենթակայ իրին յայտնէ. որգոն, մարդ՝ կենդանի բանաւոր, մահկանացու, մտաց եւ հանճարոյ ընդունակ. իսկ ստորագրութիւն ի պատահմանցն առնու եւ զպարագայս ենթակայ իրին յայտնէ. որգոն՝ մարդ է ուղղորդագնաց ծիծաղական, լայնեղունգն: 24 Եւ վասն զի ասացաք, եթէ սահման ի գոյացողականաց բառիցն առնու, իսկ ստորագրականն ի պատահմանց, ուսցուք զի՞նչ է գոյացողականն եւ զի՞նչ պատահումն:

25 Եւ պարտ է գիտել, եթէ գոյացողականն այն է, որ առընթեր գոլով գոյացուցանէ, իսկ ոչ գոլով ապականէ, որպէս բանականն: 26 Քանզի սա առընթեր գոլով գոյացուցանէ զմարդն, իսկ ոչ գոլով՝ ապականէ: 27 Իսկ պատահումն է, որ առընթեր գոլով ոչ գոյացուցանէ եւ բառնալով ոչ ապականէ, որպէս սպիտակն, քանզի սպիտակն առընթեր գոլով ոչ գոյացուցանէ եւ բառնալով ոչ ապականէ:

28 Արդ զայսոսիկ ասացեալք, եկեսցուք եւ ասացուք, եթէ զի՞նչ զանազանի սահման ի սահմանագրութենէ: 29 Եւ պարտ է գիտել, թէ որպէս մարդ եւ կեն-

ղանի հանուրը եւ մասնականաւ զանազանին ի միմեանց. վասն զի մարդ մասնականագոյն է քան զկենդանին, իսկ կենդանին ընդհանրագոյն է քան զմարդ, քանզի որ ինչ մարդ, նոյն եւ կենդանի, վասն զի ամենայն մարդ կենդանի, բայց ոչ որ ինչ կենդանի՝ նոյն եւ մարդ. քանզի ոչ ամենայն կենդանի մարդ է, վասն զի ոչ միայն մարդ է կենդանի, այլ եւ ձի եւ շուն:

30 Սոյնպէս եւ սահման եւ սահմանադրութիւն ընդհանուրքն եւ մասնականաւ զանազանին ի միմեանց. քանզի սահման մասնականագոյն է, եւ սահմանադրութիւն՝ ընդհանրականագոյն: 31 Քանզի որ ինչ սահմանադրութիւն է՝ նա եւ սահման, այլ ոչ որ ինչ սահման՝ նա եւ սահմանադրութիւն, քանզի սահմանադրութիւն ոչ միայն զսահման նշանակէ, այսինքն զհամառուութեան զյայտնիչ բնութեան ենթակայ իրին, այլ եւ զսահմանադրութիւնս վայրից եւ գեաւղից եւ ագարակաց ըստ Արիստոտելի, եւ ընդ սովաւ եւ զայնս, յորս վերլուծանի առաջարկութիւնն, քանզի ասէ Արիստոտէլ, եթէ սահմանադրութիւն կոչի, յորս վերլուծանի առաջարկութիւն, որդոն՝ Սոկրատէս ճէմի. առաջարկութիւն է սա եւ վերլուծանի ի Սոկրատէսն եւ ի ճէմին. եւ իւրաքանչիւր ոք ի սոցանէ, որպէս ասէ Արիստոտէլէս, սահմանադրութիւն կոչի, այսինքն եւ Սոկրատէսն եւ ճէմին:

32 Արդ, որպէս ասացաք, ըստ հանրականին եւ ըստ մասնականին ի միմեանց սահման եւ սահմանադրութիւն զանազանին: 33 Բայց բազում անգամ եւ զսահման սահմանադրութիւն կոչեն ընդհանրական անուան պիտանացեալք, որպէս բազում անգամ եւ զմարդ սեռական անուամբ կենդանի կոչեմք: 34 Արդ, ուսեալք, եթէ զինչ զանազանի սահման ի սահմանադրութենէ, եկեսցուք եւ ասաս-

ցուք՝ զինչ զանազանի սահման ի ստորագրական սահմանէ:

35 Եւ պարտ է գիտել, եթէ զանազանի սահման ի ստորագրական սահմանէ այսու, վասն զի սահման միայնատեսակ է եւ ի գոյացողականաց ձայնից առեալ լինի միայն. որդոն՝ մարդ է կենդանի բանաւոր, մահկանացու, մտաց եւ հանճարոյ ընդունակ: 36 Իսկ ստորագրական սահման խառնակ է, քանզի առեալ է ի գոյացողականաց եւ ի պատահմանց, եւ որպէս զի ասիցէ ոք, թէ ի սահմանէ եւ ի ստորագրականէ բաղկացեալ. որդոն՝ որպէս յորժամ ասեմք, թէ մարդ՝ կենդանի բանաւոր, մահկանացու, մտաց եւ մակացութեան ընդունակ, ուղղորդագնաց, լայնեղունգն, ծիծաղական: 37 Եւ պարտ է գիտել, թէ առ ի լինել սահմանի՝ պարտ է զամենայն բառսն գոյացողականս գոլ, որդոն, մարդ է կենդանի բանաւոր, մահկանացու, մտաց եւ հանճարոյ ընդունակ: 38 Իսկ առ ի լինել ստորագրական սահմանի՝ բաւական է եւ մի բառ յաւելումն ընդունել՝ զպատահումն յայտնելով. որդոն, մարդ է կենդանի բանաւոր, մահկանացու, մտաց եւ մակացութեան ընդունակ, ուղղորդագնաց: 39 Եւ որպէս առ ի լինել յարմարումն քնարի՝ պարտ է զամենայն զաղիսն բարեյարմարս գոլ, իսկ առ ի լինել անյարմարութեան՝ բաւական է եւ մի աղի փոփոխել: 40 Եւ դարձեալ, առ ի լինել առողջութեան՝ պարտ է գոլ չափաւորութիւն խառնուածոցն, եւ զըստ բնութեանն շարագրութիւն մասնկանցն. իսկ առ ի լինել հիւանդութեան՝ բաւական է եւ մի խառնուած փոփոխեալ եւ մի մասնիկ ոչ գոլով ըստ բնութեանն: 41 Ըստ նմին աւրինակի առ ի լինել սահմանի՝ պարտ է զամենայն բառսն, որպէս ասացաք, գոյացողականս գոլ, իսկ առ ի լինել ստորագրական սահմանի՝ բաւական է եւ մի միայն բառ յեղափոխել: 42 Եւ այսոքիկ այսպէս:

43 Բայց տարակուսեն ոմանք յառաջին գլուխն, ասելով՝ եթէ յետին արարէք, սահմանի սահման բացատրելով. քանզի պահանջեմք ի ձէնջ եւ սահմանի սահման. եւ այնր սահմանի այլ սահման, եւ այսոքիկ մինչեւ յանբաւս արտաբերին, եւ ոչ եւս գիտասցուք զինչ է սահման:

44 Եւ պատասխանատրեն ոմանք, ասելով՝ թէ ոչ որպէս զսահման սահմանեցաք, այլ որպէս սահմանելի, այսինքն որպէս ենթակայ իր. առ որ ասելի է, թէ ոչ նուազ մնայ տարակուսութիւն, քանզի ասեմք ընդ ձեզ՝ թէ եւ այնր սահմանի բացատրեցէք սահման, որպէս սահմանելոյ. եւ դարձեալ միւս եւս սահմանին բացատրեցէք սահման, որպէս սահմանելոյ, որ նմանապէս եւ այս յանհունս արտաբերի:

45 Արդ, այսպէս պարտ է ասել, թէ զոր աւրինակ չափոցն եւ թուոցն են ոմանք, որ ինքնաչափք եւ ինքնաթիւք են, եւ նոյնք այլաթիւք եւ այլաչափք են: 46 Եւ ինքնաթիւք եւ ինքնաչափք են ըստ եզակացն, որ ի նմա. քանզի տասն ինքն զինքն թուէ ըստ եզակացն, որ ի նմա. բայց թուէ որպէս այլաթիւ եւ զքսան եւ զերեսուն. զքսան ըստ երկուց, եւ զերեսուն ըստ երից: 47 Ըստ նմին աւրինակի եւ սահման եւ ինքնասահման եւ այլասահման. եւ այլասահման, վասն զի նոյն եւ զայլ սահմանս սահմանէ, իսկ ինքնասահման՝ վասն զի եւ զինքն ընդ այլս սահմանէ: 48 Եւ զոր աւրինակ մարդ սահմանելով զմարդ՝ ասէ, թէ մարդ՝ կենդանի բանաւոր, մահկանացու, մտաց եւ մակացութեան ընդունակ, ոչ միայն զամենայն մարդ սահմանէ, այլ եւ զինքն. վասն զի եւ ինքն սահմանի:

49 Բայց տարակուսեն ոմանք եւ առ երկրորդ գլուխն, ասելով՝ թէ մինչ գոյացութիւն պատուականագոյն է քան զպատահումն, եւ առեալ է ի գոյացութեանցն սահման, իսկ ստորագրութիւն ի պատահ-

մանց, վասն է՞ր ասեմք ստորագրական սահման, զյոռին նախագասելով, եւ ոչ ասեմք սահման ստորագրական:

50 Եւ պատասխանեն ոմանք, ասելով՝ թէ վասն է՞ր ըստ քերթողին ոմանք կիսէչ ասեն, զի քերթողն Հոմերոս կիսէչ ասէ զյոռին նախագասելով, զի յոռեգոյնն յաղթէ ի շարագրութեանցն անուանց լաւագունին, զի յոռեգոյնն է լաւագոյն, քանզի կիսէչ ասեմք զՋորի, զյոռեգոյնն անուանելով, եւ ոչ կիսածի. վասն այսորիկ եւ ստորագրական սահման ասեմք, զյոռեգոյնն նախագասելով: 51 Զայսոսիկ նոքա:

52 Բայց ասելի է՝ թէպէտ եւ հիւանդական է պատասխանատրութիւնդ, բայց սակայն ոչ բարիոք տարակուսեցին, որք տարակուսեցին: 53 Նախ եւ առաջին, քանզի ոչ ոք ի հնոց վարդապետացն ասաց, եթէ ստորագրական սահման պարտ է ասել՝ եւ ոչ սահման ստորագրական: 54 Իսկ երկրորդն, թէպէտ եւ ստորագրական սահման ասեմք, թէպէտ սահման ստորագրական, ոչ ինչ եղծանի նշանակեալն. քանզի ասէ Արիստոտէլ, եթէ անուանք եւ բայք փոխադրելով՝ զնոյն նշանակեն, վասն զի զնոյն իսկ նշանակեն, եթէ ոք ասիցէ՝ Սոկրատէս ճէմի, եւ թէ՛ ճէմի Սոկրատէս:

1 Ընդ այսոսիկ հանդերձ աստուծով եւ առաջիկայ պրակի

ՊՐԱԿՔ Դ

2 Սկիզբն արասցուք եւ երրորդ գլխոյն, որ ասէր, թէ ուստի՞ ասի սահման:

3 Եւ պարտ է գիտել, եթէ սահման ասի ի փոխաբերութենէ գեաւդից եւ ազարակային սահմանաց. քանզի եւ առաջինքն յերկաքանչիւրոցն անչափութենէ փախչելով, յառաւելաստացութենէ եւ ի պակասաստացութենէ, գտին զսահմանագրութիւն. զի յիւրեանցն վայելեացեն եւ յայլոցն փախչեն:

4 Արդ նոյնպէս եւ սահման պարասահմանելով զենթակայ իրն՝ որոշէ զնա յայլոցն. որպէս եւ սահման մարդոյ, որգոն՝ կենդանի բանաւոր, մահկանացու, մտաց եւ մակացութեան ընդունակ:

5 Արդ, ասելով կենդանի, զատոյց յայնց, որք ոչ են կենդանի, այսինքն յանկենդանեացն եւ յանշնչիցն. իսկ ասելովն բանաւոր, որոշեաց յանբանիցն. իսկ մահկանացու՝ յանմահիցն. իսկ մտաց եւ մակացութեան ընդունակ ասելով, որոշեաց զնա յաներեւութից եւ յանմահկանացուաց արարածոց, որք եւ յաւերժական հարսունք անուանին, որք եւ բնութեամբ ունին զգիտութիւն եւ ոչ ուսանելով. բայց միայն մարդն բնաւորեցաւ ընդունել ըստ ազգողականին զգիտութիւն:

6 Եւ պարտ է գիտել, զի ի սահմանս հակակիրք միմեանց լինին բառք եւ իրք. քանզի յորժամ սահմանն առաւելու բառիւք, նուազեն իրք: 7 Որգոն, մարդ կենդանի բանաւոր, մահկանացու, մտաց եւ հանճարոյ ընդունակ եւ քերթող. քանզի քերթողն յաւելումն եղեալ ի սահմանի՝ նուազեցոյց զիրն, վասն զի զքերթողն միայն սահմանեաց եւ ոչ զամենայն մարդ, քանզի ոչ ամենայն մարդ քերթող. ահա առաւելաւ բառքդ եւ նուազութիւնն եղեւ իրացդ: 8 Իսկ յորժամ նուազեն բառքդ, առաւելուն իրք. որգոն, մարդ՝ կենդանի բանաւոր. ահա նուազեցին բառքդ եւ յաւելան իրքդ. վասն զի ոչ միայն մարդ է կենդանի բանաւոր, այլ եւ հրեշտակք եւ դեւք: 9 Եւ որպէս ասէր Ոլոմպիադորոս փիլիսոփոս, եթէ սքանչելի իմն հնարս եգիտ բնութիւնս, նուազութիւնն հարստացեալ եւ հարստութիւնն կեղծաւորեալ զնուազութեանցն:

10 Իսկ եթէ տարակուսեցին ոք ասելով, թէ զիս՞րդ ասացէք, թէ յորժամ առաւելու սահման բառիւք, նուազէ իրաւք, քանզի ահա ասեմք մարդ է կենդանի բա-

նաւոր, մահկանացու մահանալով, մտաց եւ մակացութեան ընդունակ. առաւելաւ բառիւք եւ ոչ պակասեաց իրաւք, քանզի զամենայն մարդ պարունակեաց:

11 Ասեմք, եթէ յաւելեալ բառդ ոչինչ առաւել նշանակեաց. քանզի նոյն է սահման՝ մահկանացուն եւ մահանալովն, զի մահանալովն յաւելուած բայի է եւ ոչ անուն, քանզի սահման անուամբ ճանաչի եւ ոչ բայիւ: 12 Զայսոսիկ եւ երրորդ գլուխն:

13 Բայց եկեսցուք եւ ի չորրորդ գլուխն եւ ասացուք, թէ ուստի՞ առնու սահման: 14 Եւ պարտ է գիտել, եթէ սահմանք կամ յենթակայէ առնուն եւ կամ ի կատարմանէ, եւ կամ յերկոցունց. այսինքն յենթակայէ եւ ի կատարմանէ: 15 Բայց նախ ասացուք զի՞նչ է ենթակայ եւ զի՞նչ է կատարումն: 16 Ենթակայ է, ըստ որում լինի եւ ըստ որում ազդէ, եթէ արհեստ եւ եթէ մակացութիւն. իսկ կատարումն է, ըստ որում նկատէ եւ կերպարանի եւ ըստ որում զամենայն ինչ առնէ: 17 Որգոն, հիւսնութեան ենթակայ է փայտ, զի վասն փայտի գոյանայ հիւսնութիւն. իսկ կատարումն ունի աթոռ առնել եւ տաճար շինել: 18 Եւ դարձեալ, աստեղաբաշխութիւնն ենթակայ ունի զերկնային մարմինն, իսկ կատարումն ոչ եթէ զառնելն նման նմա, այլ գիտել զչարժումն նորա: 19 Նմանապէս եւ իմաստասիրութիւնն ունի ենթակայ, ունի եւ կատարումն: 20 Ենթակայ՝ զամենայն գոյսս, իսկ կատարումն՝ զգիտութիւնն նոցին, այսինքն գիտել զնոսա եւ նոքումքք նմանիլ աստուծոյ: 21 Քանզի իմաստասէրն նման է աստուծոյ, որպէս յայտ առնէ Պիլթեայ հարցուկ, ասելով ցԼիւկուրգոս աւրէնսդիր եւ փիլիսոփոս, վասն զի առաջինքն յիմաստասիրացն աւրէնսդիրք էին: 22 «Արդ եկիր, ով Լիւկուրգէ, յիմ ճենճերալիր տաճարս. յերկբայս գոմ, թէ զինչ առասացից

զքեզ. աստուած թէ մարդ, բայց սակայն աստուած առասացից զքեզ, ով Լիւկուրգէ»։²³ Զայս ասելով ոչ եթէ ոչ գիտէր զինչ պարտ էր կոչել զնա, այլ զի ցուցցէ կցորդակից զաստուծոյ բնութիւնն եւ զիմաստասիրին, ուստի եւ ի վերայ ածէ. «Բայց սակայն աստուած առասացից զքեզ, ով Լիւկուրգէ»։²⁴ Եւ զի կատարեալ իմաստասէրն նման է աստուծոյ, աստուստ է յայտ, զի նոքրիմք կերպարանի, որովք եւ աստուած, քանզի որպէս աստուած կերպարանի բարեաւն եւ գիտնականաւն եւ կարելեաւն, որպէս եւ քերթութիւնն յայտ առնէ վասն բարոյն, թէ աստուածք տուիչք բարեաց են. իսկ գիտնականաւն, թէ աստուածք զամենայն ինչ գիտեն. իսկ կարելեաւն, թէ աստուածք զամենայն ինչ կարեն առնել։

²⁵ Ըստ նմին աւրինակի եւ կատարեալ իմաստասէրն երեքումքք այսոքիւք կերպարանի, բարեաւն ասեմ եւ գիտնականաւն եւ կարելեաւն։²⁶ Եւ բարեաւն, թէ որպէս աստուած խնամ տանի ամենեցունց, նոյնպէս եւ կատարեալ իմաստասէրն խնամ տանի անկատար ոգւոց ի կատարեալ գիտութիւն ածելով զնոսա։²⁷ Իսկ գիտնականաւն, թէ որպէս աստուած զամենայն ինչ գիտէ, նոյնպէս եւ կատարեալ իմաստասէրն զամենայն ինչ խոստանայ գիտել, եւ գիտէ զաւգտակարն։²⁸ Իսկ կարելեաւն, թէ որպէս աստուած զամենայն ինչ կարէ զպատշաճագոյնսն՝ եւ կամի, նոյնպէս եւ կատարեալ իմաստասէրն որչափ ինչ կարող գոյ ըստ կարելոյն՝ եւ կամի. եւ ոչ երբէք կամի զոր ոչն կարէ։

²⁹ Այլ սակայն ի վերայ աստուծոյ անդրադարձի. քանզի որչափ ինչ կամի՝ եւ կարող գոյ, եւ որչափ ինչ կարող գոյ՝ եւ կամի. իսկ ի վերայ իմաստասիրին ոչ անդրադարձի. քանզի որչափ ինչ կարող գոյ՝ կամի, այլ ոչ որչափ ինչ կամի՝ կարող գոյ։³⁰ Քանզի թէ կամի մատամբն հպիլ ի կո-

րընթարդն երկնից, ոչ գոյ կարող։³¹ Վասն այսորիկ տարակուսեն ոմանք ասելով, թէ զիա՞րդ ասացէք զիմաստասէրն կարելեաւն կերպարանի նմանիլ աստուծոյ, որովհետեւ անդրադարձի ի վերայ աստուծոյ, իսկ ի վերայ փիլիսոփայի ոչ, որպէս ասացէք։³² Վասն որոյ ասեմք, եթէ կատարեալ իմաստասէրն կամի ոչ տենչալ անհասանելեացն. վասն զի եւ ի տոկոսիսն մեծ կարաւտութիւն է տենչանացն անլիութիւն։³³ Բայց պարտ է գիտել, եթէ յառաջելով ցուցանելի է, եթէ այլազգ է առ ի յաստուծոյ բարին եւ գիտնականն եւ կարելին, եւ այլազգ առ իմաստասիրին։

³⁴ Բայց այժմ պարտ է գիտել, եթէ սահմանք յենթակայէ առնուն, կամ ի կատարմանէ, եւ կամ յերկոցունց, այսինքն յենթակայէ եւ ի կատարմանէ։

³⁵ Եւ յենթակայէ՝ յորժամ ասեմք, եթէ բժշկութիւն է արհեստ յաղագս մարդկային մարմնոյ բնութեան եղեալ։³⁶ Իսկ ի կատարմանէ, յորժամ ասեմք, եթէ բժշկութիւն է առողջութեան արարիչ. քանզի կատարումն բժշկութեան է կամ զներկայ առողջութիւնն պահել, եւ կամ զմերժեալն վերստին ածել յառողջութիւն։³⁷ Իսկ յերկոցունց, որպէս յորժամ զերկոսին սահմանադ շարակցեմք եւ ասեմք, եթէ բժշկութիւն է արհեստ յաղագս մարդկային մարմնոյ եղեալ, առողջութեան արարիչ։

³⁸ Արս այսպէս եւ զիմաստասիրութիւն սահմանելով յենթակայէ եւ ի կատարմանէ, ի կատարմանէ, եւ ասեմք՝ յենթակայէ, եթէ իմաստասիրութիւն է գիտութիւն աստուածայնոց եւ մարդկայնոց իրողութեանց. իսկ ի կատարմանէ, եթէ իմաստասիրութիւն է նմանութիւն աստուծոյ ըստ կարողութեան մարդկան։³⁹ Իսկ յերկոցունցն, որպէս յորժամ ասեմք, եթէ իմաստասիրութիւն է գիտութիւն աստուածայնոց եւ մարդկայնոց իրողութեանց եւ

նմանութիւն աստուծոյ ըստ կարողութեան մարդկան: 40 Եւ այսոքիկ այսպէս.

41 Բայց տարակուսեն ոմանք ասելով, եթէ զիս՞րդ ասէք, թէ ամենայն սահման կամ յենթակայէ առնու կամ ի կատարմանէ, կամ յերկոցունց, այսինքն յենթակայէ եւ ի կատարմանէ. ուր առ հասարակ ամենեքեան ասեմք, եթէ ամենայն սահման ի սեռէ առնու եւ ի բաղկացուցիչ զանազանութեանց. որգոն, մարդ է կենդանի բանաւոր մահկանացու, մտաց եւ մակացութեան ընդունակ: 42 Քանզի ահա աստանաւր զկենդանին սեռ ունի, իսկ զայլսն ի բառից՝ բաղկացուցիչ զանազանութիւնս: 43 Եւ ոմանք պատասխանատրելով զայս պատճառս տան, եթէ ի վերայ բնականացն ի սեռէ եւ ի բաղկացուցիչ զանազանութեանց առնուն սահմանք, որպէս ի վերայ մարդոյ, եթէ մարդ է կենդանի բանաւոր, մահկանացու, մտաց եւ հանճարոյ ընդունակ: 44 Իսկ ի վերայ արուեստականացն յենթակայէ առնու, կամ ի կատարմանէ, եւ կամ յերկոցունց՝ յենթակայէ եւ ի կատարմանէ, որպէս ի վերայ ասացելոց յառաջ աւրինակաց:

45 Զայս նոքա բայց ոչ բարիոք ասեն: 46 Նախ եւ առաջին, զի զտարակուսանսն ոչ լուծին, քանզի տարակուսանք էին, եթէ ամենայն սահման ի սեռէ եւ ի բաղկացուցիչ զանազանութեանց առնու, իսկ դոքա զոմանս ի սահմանացն՝ ի սեռէ եւ ի բաղկացուցիչ զանազանութեանց առնուն, իսկ զոմանս յենթակայէ, եւ զոմանս ի կատարմանէ, եւ զոմանս յերկոցունց՝ յենթակայէ եւ ի կատարմանէ: 47 Իսկ երկրորդ, զի ոչ լուծին զտարակուսանսն բարիոք. քանզի տարակուսանք էին՝ ոչ ամենայն սահման ի սեռէ եւ ի բաղկացուցիչ զանազանութեանց առնու. իսկ դուք զոմանս յենթակայէ եւ զոմանս ի կատարմանէ, եւ զոմանս յերկոցունց՝ յենթակայէ եւ ի կատարմանէ: 48 Իսկ երրորդ, ոչ բարիոք լու-

ծին զտարակուսանսդ. քանզի զտանեմք զսահման եւ ի վերայ բնականացն յենթակայէ եւ ի կատարմանէ առեալ, որպէս եւ ի վերայ բարկութեան, քանզի եւ բարկութիւն բնական ինչ է. եւ սակայն յենթակայէ եւ ի կատարմանէ սահմանեմք զնա, ասելով՝ եթէ բարկութիւն է եռանդն զսրտիւն արեանն առ ի տենչումն փոխարէն տրտմեցուցանելոյ: 49 Եւ ահա եռանդն զսրտիւն արեանն յենթակայէ է, քանզի բարկութեանն ստորակայէ զսրտիւն արիւն, իսկ առ ի տենչումն փոխարէն տրտմեցուցանելոյ՝ ի կատարմանէ. քանզի կատարումն բարկութեան՝ է տենչալն, փոխարէն տրտմեցուցանելոյ զայն, որ տրտմեցոյցն: 50 Արդ այսոքիկ այսպէս:

51 Բայց պարտ է ասել, թէ բարիոք ասեմք զամենայն սահման ի սեռէ եւ ի բաղկացուցիչ զանազանութեանց առնուլ, քանզի որք յենթակայէ, եւ որք ի կատարմանէ, եւ որք յերկաքանչիւրոց, ունին եւ սեռ, ունին եւ զբաղկացուցիչ զանազանութիւնս: 52 Որգոն, բժշկութիւն է արհեստ յաղագս մարդկային մարմնոյ եղեալ: 53 Ահա աստանաւր փոխանակ սեռի առաւ արհեստ, իսկ փոխանակ բաղկացուցիչ զանազանութեանց՝ այլ բառք: 54 Եւ դարձեալ, բժշկականութիւն է արհեստ, առողջութեան արարիչ: 55 Ահա աստանաւր փոխանակ սեռի առաւ արհեստ. իսկ այլ բառք փոխանակ բաղկացուցիչ զանազանութեանց: 56 Եւ դարձեալ, բժշկականութիւն է արհեստ յաղագս մարդկային մարմնոյ եղեալ, առողջութեան արարիչ: 57 Ահա աստանաւր փոխանակ սեռի առաւ արհեստ, իսկ փոխանակ բաղկացուցիչ զանազանութեանց՝ այլ բառք: 58 Եւ դարձեալ, իմաստասիրութիւն է գիտութիւն աստուածայնոց եւ մարդկայնոց իրողութեանց: 59 Ահա աստանաւր փոխանակ սեռի առաւ գիտութիւն, իսկ փոխանակ

բաղկացուցիչ զանազանությունն՝ այլ բառք: 60 Զայտսիկ եւ չորրորդ գլուխն:

61 Իսկ հինգերորդ գլուխն, յորում խնդրէաք, եթե ո՞ր է կատարեալ սահման եւ ո՞ր անկատար: 62 Եւ պարտ է գիտել, եթէ կատարեալ սահման այն է, որ անդրադարձի առ սահմանելին: 63 Որգոն, յորժամ ասեմք, եթէ զինչ որ միանգամ մարդ է՝ նա կենդանի բանաւոր, մահկանացու, մտաց եւ մակացութեան ընդունակ, եւ զինչ որ միանգամ կենդանի բանաւոր, մահկանացու, մտաց եւ մակացութեան ընդունակ, նա մարդ է: 64 Այս է կատարեալ սահման: 65 Իսկ անկատար սահման է, որ ոչ անդրադարձի, քանզի յուռութիւն սահմանի է ոչ անդրադարձիլ: 66 Իսկ յուռութիւն սահմանի լինի յառաւելութենէ եւ ի նուազութենէ սահմանի, քանզի ոչ կարող գոյ սահման անդրադարձիլ առ սահմանելին, յառաւելուին եւ ի նուազելն, որգոն, մարդ է կենդանի բանաւոր, մահկանացու, մտաց եւ մակացութեան ընդունակ, քերական: 67 Քանզի սա առաւելեալ՝ ոչ անդրադարձի, քանզի որ միանգամ կենդանի բանաւոր, մահկանացու, մտաց եւ մակացութեան ընդունակ, քերական՝ նա մարդ է. այլ ոչ որ միանգամ կենդանի բանաւոր, մահկանացու, մտաց եւ մակացութեան ընդունակ՝ նա եւ քերական. վասն զի ոչ ամենայն մարդ քերական: 68 Նաեւ ոչ ի նուազելն իւր անդրադարձի առ սահմանելին. որգոն, կենդանի բանաւորն նուազ գոյով՝ ոչ անդրադարձի, քանզի ոչ միայն մարդ է կենդանի բանաւոր, այլ եւ հրեշտակք եւ դեւք: 69 Եւ այսոքիկ այսպէս:

70 Բայց պարտ է խնդիր առնել՝ ո՞չք են ի նախասացելոց սահմանացս, որք կատարեալք գոն: 71 Եւ պարտ է գիտել, թէ այնոքիկ են կատարեալք, որք յերկոցունց առնուն՝ յենթակայէ եւ ի կատարմանէ. որգոն, հիւսնութիւն է արհեստ յաղագս

փայտի եղեալ, աթոռոյ արարչական: 72 Իսկ որք յենթակայէ միայն են, կամ ի կատարմանէ միայնոյ, բազումք եւ յուրվք ի նոցանէ ոչ գոն կատարեալք: 73 Որգոն, յորժամ ասեմք, եթէ բժշկականութիւն է արհեստ յաղագս մարդկային մարմնոյ եղեալ, ոչ անդրադարձի, քանզի որ միանգամ բժշկականութիւն է՝ յաղագս մարդկային մարմնոյ եղեալ. այլ ոչ որ ինչ միանգամ յաղագս մարդկային մարմնոյ եղեալ՝ նա բժշկականութիւն է, քանզի ոչ միայն բժշկականութիւն գոյ սակս մարդկային մարմնոյ եղեալ, այլ եւ սափրողականն եւ եղեգնահատականն:

74 Դարձեալ, յորժամ ասեմք ի կատարմանէ, եթէ ճարտասանութիւն է հաւանութեան արարչական, ոչ անդրադարձի. քանզի ամենայն, որ ճարտասանութիւն է, նա եւ հաւանութեան արարչական, այլ ոչ որ միանգամ հաւանութեան արարիչ՝ նա եւ ճարտասանական է, քանզի ոչ միայն ճարտասանութիւն է հաւանութեան արարիչ, այլեւ տրամաբանական իմաստասիրութիւնն: 75 Եւ դարձեալ, բարկութիւն է եռանդն զսրտիւն արեան, որ ոչ անդրադարձի, վասն զի ամենայն բարկութիւն՝ եռանդն է զսրտիւն արեան, այլ ոչ որ միանգամ եռանդն է զսրտիւն արեան՝ նա բարկութիւն է, քանզի եւ ի ջերմութենէ լինի եռանդն զսրտիւն արեան:

76 Բայց որպէս վերագոյն ասացաք, եթէ բազումք եւ յուրվք, որք յենթակայէ միայնոյ են, եւ կամ ի կատարմանէ, ոչ գոն կատարեալք, վասն այդորիկ առադրեցաք զբազումս եւ զյոյովս, վասն զի է արուեստ, որ կատարեալ է յենթակայէ միայնոյ, որպէս ապակեգործութիւն, քանզի դա միայն կատարեալ գոյ յենթակայէ միայնոյ. քանզի ամենայն, որ ապակեգործութիւն է, սակս ապակւոյ գոյ եղեալ, եւ ամենայն, որ սակս ապակւոյ գոյ եղեալ, ապակեգործութիւն է:

77 Իսկ իմաստասիրութեան սահման թէպէտ յենթակայէ միայնոյ առնու, եւ թէպէտ ի կատարմանէ՝ ամենեքեան կատարեալք գոն: 78 Եւ պատճառք, եթէ զի միայն իմաստասիրութեան սահմանք յենթակայէ միայնոյ եւ կամ ի կատարմանէ կատարեալք գոն, այսոքիկ են: 79 Վասն զի ենթակայն իմաստասիրութեան, այսինքն ընդհանուր գոյք, ոչ կարող գոն այլ արհեստի ենթակայ լինել, վասն զի ոչ ոք յայլ արհեստից կարող գոյ զընդհանուր գոյսս քննել եւ գիտել. եւ կատարումն իմաստասիրութեան, այսինքն նմանիլ աստուծոյ ըստ կարողութեան մարդկան, եւ ոչ գոյ այլ արհեստի կատարումն, վասն զի ոչ ինչ կարող գոյ այլ արհեստ նմանեցուցանել զմարդ աստուծոյ ըստ կարողութեան մարդկան:

1 Ընդ այսոսիկ հանդերձ աստուծով եւ առաջիկայ պրակֆ

ՊՐԱԿՔ Ե

2 Ուսեալք զհինգերորդ գլուխն, խնդրեսցուք եւ զվեցերորդն, յորում ասեմք քանիք եւ որպիսիք են սահմանք իմաստասիրութեան: 3 Եւ պարտ է գիտել, թէ վեց են սահմանք իմաստասիրութեան, եւ են այսոքիկ: 4 Նախ եւ առաջին, որ ասեն՝ թէ իմաստասիրութիւն է գիտութիւն գոյիցն, ըստ որում գոյք են: 5 Երկրորդ, իմաստասիրութիւն է գիտութիւն աստուածայնոց եւ մարդկայնոց իրողութեանց: 6 Երրորդ, որ ասէ՝ իմաստասիրութիւն է խոկումն մահու: 7 Չորրորդ, առ այսոքիւք է սահման, որ ասէ, թէ իմաստասիրութիւն է նմանութիւն աստուծոյ ըստ կարողութեան մարդկան: 8 Հինգերորդ, որ ասեն՝ թէ իմաստասիրութիւն է արհեստ արհեստից եւ մակացութիւն մակացութեանց: 9 Վեցերորդ ի վերայ այսոցիկ, որ ասեն՝ իմաստասիրութիւն է սիրե-

լիութիւն իմաստութեան: 10 Զայսոսիկ եւ վեցերորդ գլուխն:

11 Եւթներորդ գլուխն, յորում ասեմք, թէ վասն է՞ր այսքան են սահմանք իմաստասիրութեան, եւ ոչ են յոլովք եւ ոչ նուազք: 12 Վասն որոյ ասեմք երկուս պատճառս, զմինն ի բաժանմանէ եւ զմիւսն ի թուականութենէ: 13 Եւ ի բաժանմանէն այսպէս: 14 Են ոմանք որ ենթակայացեալք գոն եւ ոչ անուանեալք, որպէս այնոքիկ, որք ի խորսն գոն, քանզի են ոմանք ի խորսն, որք գոյութիւն ունին եւ ոչ հանդիպին անուանադրութեան առ ի մէնջ վասն ոչ տեսանելոյ զնոսա: 15 Եւ դարձեալ, են ոմանք անուանեալք եւ ոչ ենթակայացեալք, որպէս արալէզն եւ եղջերուաքաղն, որք անուանին, բայց ոչ են ենթակայացեալք: 16 Եւ դարձեալ, են ոմանք, որ անուանեալք են եւ ենթակայացեալք, որպէս մարդ եւ արհեստ. քանզի մարդ եւ արհեստ՝ եւ անուանեալք են եւ ենթակայացեալք: 17 Իսկ իմաստասիրութիւն եւ անուանեալ է եւ ենթակայացեալ, եւ որպէս յեթէումն ուսաք՝ ընդ առաջինսն ունի զգոյութիւն, վասն զի իմաստասիրութիւն մայր է իմաստից եւ արհեստից եւ ընդհանուր մակացութեանց, քանզի ի նմանէն առնուն առաջս եւ սկզբունս ամենայն արհեստք եւ մակացութիւնք. որպէս երկրաչափն առնու խոստովանաբար, եթէ նշան է, որոյ մասն ոչ ինչ է, զորոյ զպատճառսն բնական իմաստասէրն գիտէ: 18 Եւ դարձեալ, բժիշկն առնու խոստովանաբար, եթէ ի չորից տարերցդ բաղկացեալ գոյ մարմին, զորոյ զպատճառսն բնական իմաստասէրն գիտէ: 19 Եւ դարձեալ, քերթողն առնու խոստովանաբար, եթէ էն եւ ովն բնութեամբ երկարք են, իսկ զպատճառսն երաժշտական իմաստասէրն գիտէ:

20 Արդ, իմաստասիրութիւն, որպէս ասացաք, եւ անուանի եւ գոյութիւն ունի, եւ ընդ առաջինսն ունի զգոյութիւն, եւ

վասն զի անուանի՝ յանուանութենէ, այսինքն ի ստուգաբանութենէ, զսահմանն զայն, որ ասէ՝ թէ իմաստասիրութիւն է սիրելութիւն իմաստութեան: 21 Եւ վասն զի ընդ առաջինսն ունի զգոյութիւն, ունի եւ զսահմանն զայն, որ յառաւելութենէ, որ ասէ՝ իմաստասիրութիւն է արհեստ արհեստից եւ մակացութիւն մակացութեանց: 22 Եւ վասն զի ենթակայացեալ է, ունի ենթակայ, ունի եւ կատարումն. քանզի ամենայն արհեստ եւ ամենայն մակացութիւն ունի ենթակայ, ունի եւ կատարումն: 23 Եւ զիւրաքանչիւր ոք ի դոցանէ կրկնակի. քանզի ունի հուպ ենթակայ եւ հեռի, եւ հուպ կատարումն եւ հեռի:

24 Եւ զի հաւաստի եղիցի մեզ ասացեալդ, վարժեսցուք զբանդ ի վերայ նաւարարութեան: 25 Եւ պարտ է գիտել, զի նաւարարութիւն ունի ենթակայ, ունի եւ կատարումն, եւ զիւրաքանչիւր ոք ի դոցանէ կրկնակի, քանզի ունի հուպ ենթակայ եւ հեռի, եւ հուպ կատարումն եւ հեռի: 26 Եւ հուպ ենթակայ զընդհանուր փայտ, իսկ հեռի ենթակայ զայս անուն փայտ, եւ զպատշաճ առ ի լինել ողնափայտ եւ քեղի. քանզի նախ եւ առաջին նաւակառոյցն առնու զընդհանուր փայտ, եւ ապա ի խնդիր գայ, թէ ո՞ր փայտ պատշաճ գոյ ողնափայտ լինել եւ ո՞վ է որ քեզի գոյ պատշաճ: 27 Եւ դարձեալ, հուպ կատարումն ունի առնել նաւ. իսկ հեռի կատարումն ունի առնել այսպիսի ինչ նաւ. որգոն, այժմնաձեւ կամ ճրագաձեւ:

28 Նոյնպէս եւ իմաստասիրութիւն ունի ենթակայ, ունի եւ կատարումն, եւ զիւրաքանչիւր ոք կրկնակի. քանզի ունի եւ հուպ ենթակայ եւ հեռի, եւ հուպ կատարումն եւ հեռի: 29 Արդ հուպ ենթակայ ունի զընդհանուր գոյսս. իսկ հեռի ենթակայ ունի, որգոն, աստուածային եւ մարդկային իրողութիւնս:

30 Դարձեալ, հուպ կատարումն ունի զխոկումն մահու, այսինքն զմեռելութիւն արտից, իսկ հեռի կատարումն ունի ի ձեռն մեռելութիւն առնելոյ արտից՝ նմանիլ աստուծոյ ըստ կարողութեան մարդկան: 31 Եւ արդ, վասն զի իմաստասիրութիւն ունի ենթակայ, ունի եւ կատարումն, եւ զիւրաքանչիւր ոք կրկնակի, որպէս եւ ասացաք. վասն այսորիկ եւ այլ եւս չորս սահմանս ունի: 32 Երկուս յենթակայէ, մինն ի հուպ ենթակայէն, որ ասէ՝ թէ իմաստասիրութիւն է գիտութիւն էակացն, ըստ որում էակք են, եւ զմինն ի հեռի ենթակայէն, որ ասէ՝ իմաստասիրութիւն է գիտութիւն աստուածայնոց եւ մարդկայնոց իրողութեանց: 33 Եւ երկուս դարձեալ ի կատարմանէ, զմինն ի հուպ կատարմանէն, որ ասէ՝ թէ իմաստասիրութիւն է խոկումն մահու, իսկ զմիւսն ի հեռի կատարմանէն, որ ասէ՝ թէ իմաստասիրութիւն է նմանութիւն աստուծոյ ըստ կարողութեան մարդկան: 34 Արդ այս է պատճառ, որ ի բաժանմանէն է, թէ վասն է՞ր վեց են սահմանք իմաստասիրութեան:

35 Իսկ ի թուականութենէն այսպիսի ինչ է. ի թուոցն ոմանք կատարեալք գոն, եւ ոմանք անկատարք, եւ ոմանք գերակատարք: 36 Եւ կատարեալ թիւ է, որոյ մասունքն շարադրեալք հաւասարք գոն բոլորին, որպէս վեցին, քանզի վեցին մասունքն շարադրեալք զվեցն ծնանին. քանզի ունի կէս՝ գերիսն, եւ երկեակ՝ գերկուսն, եւ վեցեակ՝ զմին, որ լինի վեց: 37 Քանզի զչորրորդն ոչ առնու, զի եթէ զչորրորդն առնու, հարկաւորի հատանել զմիակն. քանզի չորրորդն վեցին՝ մի եւ կէս է: 38 Իսկ թուականք ոչ հատանեն զմիակն, այլ մինչեւ ցմիակն վարին:

39 Իսկ գերակատարութիւն է թուոցն, որոյ մասունքն շարադրեալք, գերազանցեալք զբոլորին գտանին, որպէս երկուտասանին. քանզի երկուտասանին մա-

սուսնքն շարադրեալք՝ զտասն եւ զվեց թիւն բացակատարեն. քանզի ունի կէս զվեցն եւ երրորդ զչորսն, եւ չորրորդ գերիսն, որ լինի տասն եւ երեք, եւ վեցերորդ՝ գերկուսն, եւ երկոտասաներորդ՝ զմին, որք լինին տասն եւ վեց:

40 Իսկ անկատարութիւն է, որով մասուսնքն շարադրեալք, պակասագոյն քան զբոլորն գտանին, որպէս ութն, քանզի ութին մասուսնքն շարադրեալք գեաւթն թիւ բացակատարեն. քանզի ունի կէս զչորսն, եւ չորրորդ գերկուսն, եւ ութերորդ զմինն, որ լինի եաւթն:

41 Արդ այսոքիկ այսպէս ունելով, վասն զի առաջին կատարեալ թիւ վեցն է, զի ոչ ոք է այլ յառաջ քան զսա կատարեալ թիւ, վասն այսորիկ վեց են սահմանք իմաստասիրութեան: 42 Քանզի պարտ է մաւրն եւ պատճառին ամենայն արհեստից որպէս կատարելագունի՝ կատարելագունիւ զարդարել թուով:

1 Ընդ այսոսիկ հանդերձ աստուծով եւ առաջիկայ պրակֆ

ՊՐԱԿՔ Զ

2 Եկեսցուք եւ յութերորդ զլուխն եւ ասասցուք զկարգաւորութիւն սահմանաց իմաստասիրութեան: 3 Եւ պարտ է գիտել, եթէ վեց ելոց սահմանաց իմաստասիրութեան հոսկ վերջին է որ ի ստուգաբանութենէ է, որ ասէ՝ թէ իմաստասիրութիւն է սիրելութիւն իմաստութեան: 4 Իսկ այլոց հնգից վերջին է, որ յարտունութենէ է սահման, որ ասեն՝ թէ իմաստասիրութիւն է արհեստ արհեստից եւ մակացութիւն մակացութեանց: 5 Իսկ այլոցն չորից սահմանաց առաջինքն են, որք յենթակայէ, եւ վերջինք՝ որք ի կատարմանէ. եւ երկաքանչիւրոցս այսոցիկ, որ ի հուպ ենթակայէն է՝ առաջին է, եւ վերջին՝ որ ի հեռի ենթակայէ: 6 Նոյնպէս եւ որք ի կատարմանէ են. առաջին է, որ ի հուպ կատարմանէն

է, եւ վերջին՝ որ ի հեռի կատարմանէ, որոց կարգաւորութիւն է այսպէս եւ ըստ այսմ աւրինակ:

7 Առաջին սահման իմաստասիրութեան է, որ ի հուպ ենթակայէն է, այն որ ասեն՝ թէ իմաստասիրութիւն է գիտութիւն էակացն, ըստ որում էակք են: 8 Երկրորդ սահման, որ ի հեռի ենթակայէն է, որ ասեն՝ թէ իմաստասիրութիւն է գիտութիւն աստուածայնոց եւ մարդկայնոց իրողութեանց: 9 Երրորդ սահման իմաստասիրութեան է, որ ի հուպ կատարմանէն է, որ ասեն՝ թէ իմաստասիրութիւն է խոկումն մահու: 10 Չորրորդ սահման ի հեռի կատարմանէն, որ ասեն՝ իմաստասիրութիւն է նմանութիւն աստուծոյ ըստ կարողութեան մարդկան: 11 Հինգերորդ սահման, որ յարտունութենէ, որ ասեն՝ թէ իմաստասիրութիւն է արհեստ արհեստից եւ մակացութիւն մակացութեանց: 12 Վեցերորդ սահմանին իմաստասիրութեան ի ստուգաբանութենէ է, որ ասեն՝ իմաստասիրութիւն է սիրելութիւն իմաստութեան: 13 Զայս ասելով, եկեսցուք եւ ասացուք զպատճառս կարգաւորութեան սահմանացս իմաստասիրութեան:

14 Եւ պարտ է գիտել, եթէ սահմանն իմաստասիրութեան, որ ի ստուգաբանութենէ է, որ ասեն՝ թէ իմաստասիրութիւն է սիրելութիւն իմաստութեան, վերջին կարգաւորութեան հանդիպելով եւ յիրաւի: 15 Վասն զի ամենայն իրի նախ պարտ է գոյանալ եւ ապա անուան հանդիպիլ. որդոն, նախ ծնանիլ եւ ապա ի վերջոյ գնի անուն: 16 Նոյնպէս պարտ է նախ եւ առաջին գոյանալ իմաստասիրութեան եւ ապա անուան հանդիպիլ եւ կոչիլ իմաստասիրութիւն: 17 Արդ, վասն զի անուն զվերջին դասումն բնաւորեցաւ ունել, վասն այսորիկ եւ որ ի ստուգաբանութենէ սահմանն է՝ զվերջին դասն ընկալաւ, որպէս զանուն իմաստասիրութեան:

18 Իսկ որ յարտունութենէ է սահմանն, որ ասէ՝ թէ իմաստասիրութիւն է արհեստ արհեստից եւ մակացութիւն մակացութեանց, որ ի վերջոյ այլոցն դասեցաւ վասն այսր պատճառանաց: 19 Ամենայն իր, որ առհասարակ է, նախադասի յառաջ քան զյատուկն, որ յատկապէս ումեք գոյանայ: 20 Որգոն, կենդանին առհասարակ իր գոլով. նախադասի բանականին եւ մահկանացուն. վասն զի յոլովս է կենդանին քան զբանականն եւ զմահկանացուն:

21 Եւ դարձեալ, բանականն եւ մահկանացուն նախադասին մտաց եւ մակացութեան ընդունակին. վասն զի բանականն եւ մահկանացուն ի յոլովագոյնս են քան զմտաց եւ զմակացութեան ընդունակն. վասն զի մտաց եւ մակացութեան ընդունակն մարդոյն միայն է յատուկ: 22 Արդ, վասն զի որ առհասարակագոյնք են, նախադասին այնոցիկ, որք յատկապէս գոյանան ումեք, վասն այսորիկ եւ այնոցիկ սահմանք, որք յենթակայէ են եւ ի կատարմանէ, նախադասին յարտունութենէ սահմանին, վասն զի ենթակայ եւ կատարումն եւ այլոց արհեստից եւ մակացութեանց գոյանան: 23 Իսկ արտունութիւն ոչ ումեք պատշաճի, բայց միայն իմաստասիրութեան. քանզի իմաստասիրութիւն միայն է գերազանցեալ: 24 Եւ վասն այսորիկ, որ յարտունութենէ սահմանն է, ի վերջոյ դասեալ է, զի յատկապէս իմաստասիրութեան միայն պատշաճի: 25 Իսկ որ յենթակայէ սահմանք են, առաջինք են քան զայնս որ ի կատարմանէ, վասն զի նախ ենթակայ գոյանայ եւ ապա կատարումն. զի եթէ ոչ ենթակայի հիւսնութեան նախ փայտն, ոչ կարէ առնել աթոռ, որ է կատարումն:

26 Դարձեալ, որ ի հուպ ենթակայէն է սահմանն, նախադասի այնմ, որ ի հեռի ենթակայէն է. վասն զի ընդհանուրն մաս-

նականին գոյ նախադասեալ: 27 Զի եթէ ոչ գոյ ընդհանուր փայտն, եւ ոչ մասնականն կարէ գոլ. այսինքն ընկուզի կամ տոսար: 28 Ըստ նմին աւերինակի նախադասի սահմանն, որ ի հուպ ենթակայէն է, որ ասէ՝ իմաստասիրութիւն է գիտութիւն էակացն, ըստ որում էակք են: 29 Եւ երկրորդ սահմանն զկնի դասի, որ ի հեռի ենթակայէն է, որ ասէ՝ իմաստասիրութիւն է գիտութիւն աստուածայնոց եւ մարդկայնոց իրողութեանց. վասն զի ընդհանուր էակքն նախադասին մասնականում գոյացութեանց:

30 Նմանապէս եւ յետ այսոցիկ նախադասի սահմանն, որ ի հուպ կատարմանէն է, որ ասէ՝ իմաստասիրութիւն է խոկումն մահու. եւ յետ սորա ի հեռի կատարմանէն, որ ասէ՝ թէ իմաստասիրութիւն է նմանութիւն աստուծոյ ըստ կարողութեան մարդկան: 31 Վասն զի խոկումն մահու յառաջագոյն է քան զնմանիլն աստուծոյ. զի եթէ ոչ նախ խոկայ զմահ եւ մեռելութիւն բացակատարէ ախտից, ոչ կարէ նմանիլ աստուծոյ: 32 Զայսոսիկ եւ ութերորդ գլուխն:

33 Եկեսցուք յիններորդ գլուխն եւ ասացուք՝ ո՞րք են գտաւոր սահմանացս այսոցիկ: 34 Եւ պարտ է գիտել, թէ երկուց սահմանացդ, որ յենթակայէ են, եւ միոյ, որ ի ստուգաբանութենէ, զՊիթագորաս ասեմք գտաւոր. թէպէտ եւ ոչ կարեմք ցուցանել ի Պիթագորայ շարագրութեանցն: 35 Քանզի ոչ կամեցաւ թողուլ զշարագրածութիւնս Պիթագորաս, ասելով՝ թէ ոչ կամիմ զիմ վարդապետութիւնս թողուլ յանշունչս, այլ ի շնչաւորս. անշունչ կոչելով զգիրս, իսկ շնչաւոր՝ զաշակերտսն, որք եթէ ոք հարցանիցէ կամ տարակուսեսցի, կարողք գոն պատասխանատրել եւ լուծանել զտարակուսանս, իսկ գիրք միշտ զմի եւ զնոյն ասելով՝ ոչ կարեն լուծանել զարտաքոյ իւրեանց տարակուսանս:

36 Արդ, որպէս ասացաք, ի Պիթագորայ շարագրութեանց ոչ կարեմք ցուցանել, բայց ի պիթագորականացն ցուցանեմք: 37 Քանզի Նիկոմաքոս պիթագորական, որ զթուականութեան տեսական եգիտ, ասէր՝ թէ Պիթագորաս այսպէս սահմանեաց զիմաստասիրութիւն, թէ իմաստասիրութիւն է գիտութիւն էակացն, ըստ որում էակք են: 38 Եւ դարձեալ, թէ իմաստասիրութիւն է գիտութիւն աստուածայնոց եւ մարդկայնոց իրողութեանց: 39 Եւ դարձեալ, իմաստասիրութիւն է սիրելութիւն իմաստութեան:

40 Իսկ երկու սահմանքն վերաբերին ի Պղատոն, որք ի կատարմանէն են. այն որ ասեն, թէ իմաստասիրութիւն է խոկումն մահու եւ այն, որ ասեն, թէ իմաստասիրութիւն է նմանութիւն աստուծոյ ըստ կարողութեան մարդկան: 41 Քանզի ի «Փեդոնի» տրամաբանութեանն երեւի Պղատոնի ասել զիմաստասիրութիւն խոկումն մահու. որովք ասէ տազնապին, որք միանգամ հանդիպին ուղղորդաբար մերձեցեալ յիմաստասիրութիւն, մոռանալ զնոսին իսկ զինքեանս եւ զայլսն, ոչ այլ ինչ խոկալով, քան եթէ զմեռանելն եւ զմահանալն:

42 Իսկ ի «Թէեւտի» տրամաբանութեանն երեւի ասել զիմաստասիրութեանէ առ ոմն Թէոդորոս երկրաչափ, եթէ նմանութիւն աստուծոյ ըստ կարողութեան մարդկան. յորոյ ձեռն եւ ասէ, որովհետեւ, ով Թէոդորէ, ոչ գոյ կարողութիւն կորուսանել զչարն, քանզի հարկ է ամենայն իրաւք ընդդէմ հակառակ ինչ գոյ եւ ոչ ի վերնագոյնսն զետեղիլ. բայց զայս մահականացու բնութեամբ եւ զայս տեղեալք պարագայիլ հարկ է, վասն որոյ պարտ է փախչել աստուստ անդր զվաղագոյնսն: 43 Եւ զի՞նչ արդեաւք իցէ փախուստն. նմանութիւն աստուծոյ ըստ կարողութեան մարդկան: 44 Նմանութիւն աստուծոյ է

բարեպաշտն եւ արդարն գոյ հանդերձ խոհեմութեամբ:

45 Իսկ որ յարտունութենէ սահմանն է՝ վերաբերի յԱրիստոտէլ. քանզի այնպէս երեւի զիմաստասիրութիւն սահմանեալ «Յետ ասացելոց բնականաց», եթէ իմաստասիրութիւն է արհեստ արհեստից եւ մակացութիւն մակացութեանց: 46 Ջայտոսիկ եւ իններորդ գլուխն:

1 Ընդ այսոսիկ հանդերձ աստուծով եւ առաջիկայ պրակֆ

ՊՐԱԿՔ Է

2 Ուսեալք եթէ քանիք եւ որպիսիք են սահմանք իմաստասիրութեան, եւ զպատճառս քանիաւնութեան նոցա եւ զկարգաւորութիւն եւ զգտաւղս նոցին, եկեսցուք եւ հաւաստեսցուք զմի մի ի նոցանէ ի մէջ ածելով: 3 Որոց առաջին սահմանն էր նոցանէ, որ ասէր՝ թէ իմաստասիրութիւն է գիտութիւն էակացն, ըստ որում էակք են:

4 Եւ պարտ է գիտել, թէ փոխանակ սեռի առեալ է գիտութիւն, որպէս առհասարակ ինչ, իսկ էակացն՝ փոխանակ բաղկացուցիչ զանազանութեանց, որք որոշեն զիմաստասիրութիւն յայլոց արհեստից, քանզի իմաստասիրութիւն ամենայն գոյիցն է գիտութիւն, իսկ այլ արհեստք եւ մակացութիւնք ոչ ամենայն գոյիցն, այլ մասնականաց ոմանց:

5 Եւ տարակուսեն ոմանք, թէ վասն է՞ր ասաց արդեաւք հանդերձ յաւդին, թէ գիտութիւն էակացն, եւ ոչ ասաց առանց յաւդի, թէ գիտութիւն էակաց: 6 Եւ են ոմանք, որ ասեն, թէ զի ցուցցէ ի ձեռն յաւդին զհաղորդութիւն էիցն, որ առ միմեանս. ի վերուստ արարչականաւն եւ ներքուստ նիւթականաւն:

7 Վասն որոյ ասեմք եթէ ոչ բարիոք ասէք, քանզի ոչ թէ զհաղորդութիւն էակացն նշանակէ յաւդդ, այլ զնախագիտութիւն. քանզի յաւդդ զվերերեւութիւն եւ

զվերստին յիշումն նշանակէ, զոր յառաջագոյն ոք գիտէր: 8 Քանզի յորժամ ասեմք առանց յաւդի, թէ այր եկն, որպէս յաղագս անձանաւթ իրի ասեմք. իսկ յորժամ ասեմք, թէ այրն եկն, գյառաջածանաւթ իրս նշանակէ: 9 Բայց եւ աստանաւր յաւդդ ոչ ինչ յայսպիսեաց նշանակէ, բայց եղաւ վասն յայտնելոյ զընդհանրութիւնս էակացն. քանզի ունիմք ուսանել եւ գիտել յառաջիկայսդ, եթէ առանց յաւդի առաջարկութիւնք համազաւրք են մասնականացն. իսկ հանդերձ յաւդիւն՝ համազաւրք գոն հանրականաց առաջարկութեանց:

10 Արդ, զի յայտ արասցէ, թէ ամենայն գոյիցն է գիտութիւն իմաստասիրութիւն, վասն այսորիկ հանդերձ յաւդիւն ասաց, թէ գիտութիւն էակացն: 11 Իսկ ըստ որում էակք են՝ յաւելու, զի յայտ արասցէ զգիրարդ գիտելն իմաստասիրութեան զգոյսս, այսինքն՝ թէ ոչ գիտէ զնոսս ըստ քանակութեան, այլ ըստ բնութեան: 12 Նա քանզի եւ ոչ կարողութիւն զքանիաւնութիւն անհատիցն գիտել, այլ զբնութիւն. վասն այսորիկ զայս յայտ առնելով, եթէ ըստ բնութեան գիտել եւ ոչ ըստ քանակութեան, ասաց ըստ որում էակքն են: 13 Արդ յաղագս հաւաստութեան առաջին սահմանին այսչափ:

14 Բայց եկեսցուք եւ յերկրորդ սահմանն եւ հաւաստեսցուք, որ ասէ, թէ իմաստասիրութիւն է գիտութիւն աստուածայնոց եւ մարդկայնոց իրողութեանց: 15 Եւ պարտ է գիտել, թէ աստանաւր զգիտութիւն, որպէս հասարակ ինչ, փոխանակ սեռի առնու, իսկ աստուածայնոց եւ մարդկայնոց իրողութեանց փոխանակ բաղկացուցիչ զանազանութեանց, որք բաղկացուցանեն զիմաստասիրութիւն. քանզի միայն իմաստասիրութիւն է, որ յաղագս աստուածայնոց եւ մարդկայնոց իրողութեանց եղանի: 16 Եւ ոչ զաստուա-

ծայինսն արհամարհէ՝ լինելովն սակս մարդկայնոցն. եւ ոչ զմարդկայինսն առնէ անփոյթ՝ լինելովն սակս աստուածայնոցն. այլ աստուածայնոցն հետեւի եւ աշակերտի, իսկ զմարդկայինսն յարդարէ եւ ի կատարումն ածէ:

17 Աստուատ տարակուսեն ոմանք ասելով, թէ զիւրդ ասէք վասն իմաստասիրութեան, թէ գիտութիւն աստուածայնոց եւ մարդկայնոց իրողութեանց. վասն զի եւ այլ գոյից է գիտութիւն՝ երկնի եւ երկրի եւ ամենայն գոյից, եւ այնոցիկ՝ որ ոչ աստուածայինք եւ ոչ մարդկայինք են: 18 Նաեւ յաղագս բնութեան հոգևոյ ասի իմաստասիրութիւն, որ ոչ աստուածային է եւ ոչ մարդկային:

19 Զայս տարակուսանս լուծանելով ասեմք, թէ վասն զի յէակացն են ոմանք, որ իմանալիք են, եւ են՝ որ զգալիք: 20 Արդ, իմանալեացն ծայր աստուածայինքն են, եւ զգալեացն՝ մարդկայինք: 21 Արդ, զծայրս գոյիցն ասելով, հանդերձ նոքումք յարառոցեաց զիմանալիսն եւ զզգալիսն:

1 Ընդ այսոսիկ հանդերձ աստուածով եւ առաջիկայ պրակֆ

ՊՐԱԿՔ Ը

2 Երրորդ սահման է ի հուպ կատարմանէ, որ ասէ՝ իմաստասիրութիւն է խոկումն մահու, քանզի այսպէս սահմանէ զնա Պղատոն ի «Փեղոնի» տրամաբանութեանն, յորոյ ձեռն ասէ, թէ արդարեւ տազնապին այնոքիկ, որք միանգամ հանդիպին ուղղորդաբար մերձեցեալք յիմաստասիրութիւն, մոռանալով զնոսին իսկ զինքեանս եւ զայլսն ոչ այլ ինչ խոկալով, քան եթէ զմեռանելն եւ զէմեռանելն: 3 Եւ բարիոք առկայանան երկոքին մեռանելն եւ էմեռանելն. քանզի ի ձեռն մեռանելոյն զգործական իմաստասիրութիւնն մեկնեաց: 4 Քանզի իմաստասէրն ի մեռանելն

իւրում ունի զգործականն. քանզի յայն-
ժամ մեռելութիւն բացագործէ ախտից:

5 Իսկ ասելովն էմեռանել՝ զտեսա-
կանն յայտնեաց. քանզի էմեռանելն զան-
ցեալ ժամանակն նշանակեաց, եւ իմաստա-
սիրի յետ մեռանելոյն է տեսականն:
6 Քանզի յետ մեռուցանելոյ զախտս եւ
մաքրելոյ եւ սրբելոյ զհոգին վերածգտի
առ տեսութիւն եւ սկիզբն առնէ աստուա-
ծաբանելոյ: 7 Քանզի եթէ ոչ մեռելութիւն
բացագործէ ախտից եւ սրբիցէ զհոգին, ոչ
կարէ աստուածաբանել, վասն զի ըստ
Պղատոնի անսուրբն ի սուրբ հպիլ ոչ բար-
ւոք եւ իրաւ: 8 Եւ այսոքիկ այսպէս:

9 Բայց տարակուսեն ոմանք ասելով,
թէ զիս՞րդ Պղատոն զիմաստասիրութիւն
խոկումն մահու ասէ զոյ, ասելով, թէ «Ո՛վ
Պղատոն, զիարդ իմաստասէրն հմտասէր
զինքն արտահանէ, այսինքն ի բաց բառ-
նայ, եւ հարստահարութիւն խոկայ ընդ-
դէմ արարչին, կամելով զկապն լուծանել,
զոր նա կապեաց, այսինքն զմիաւորու-
թիւն հոգւոյ եւ մարմնոյ»: 10 Եւ որպէս
զի ոչ է պարտ ումեք զինքն արտահանել,
այսինքն ի բաց բառնալ, ցուցանի ի բա-
զում ձեռնարկութենէ. նախ ի նմին իսկ ի
Պղատոնէ. քանզի եւ ասէր իսկ Պղատոն ի
նոյնում տրամաբանութեանն, թէ՛ որպէս
ահա յումեմն պահարանում եմք, եւ ոչ է
պարտ յայսմանէ զինքն արտահանել եւ
տարափախչիլ: 11 Իսկ յերկրորդ ձեռնար-
կութենէ ցուցանի, թէ արդարեւ իմաստա-
սէրն նման է աստուծոյ, որպէս յառաջա-
գոյն ցուցաք. ցուցեալք զնա այնոքիւք
կերպարանեալ, որովք եւ գաստուածա-
յինն: 12 Իսկ նմանն աստուծոյ ոչ արտա-
հանէ զինքն՝ այսինքն ի բաց բառնայ.
յայտ է, թէ ոչ իմաստասէր է, որ զինքն ի
բաց բառնայ, թէպէտ եւ խոկայ զմահ:
13 Եւ զի նմանն աստուծոյ ոչ ի բաց բառ-
նայ զինքն, եւ յայտ է, թէ ամենայն, որ ի
բաց բառնայ զինքն, ոչ միայն ոչ նմանի

աստուծոյ, այլ եւ հակառակ նմին է, կա-
մելով ի բաց բառնալ զինքն եւ լուծանել
զկապն, զոր նայն կապեաց, եւ անջատէ
զհոգին ի մարմնոյն: 14 Իսկ յերրորդ ձեռ-
նարկութենէ յայսմանէ, թէ աստուածային
բնութիւնն ոչ երբէք որոշէ զինքն յերկ-
րորդէն, այսինքն ի մարդոյ, բայց եթէ
յանպատկանաւորութենէ մարդոյն. քանզի
յայնժամ թուի որոշել զինքն ի նմանէ:

15 Եւ արդ որպիսի ինչ է, զոր ա-
սեմքս. որպէս արեգակնային լոյս առ հա-
սարակ զամենեսեան լուսաւորէ. բայց թէ
յանպատկանաւորութենէ տեսարանացն
թուի զոմանս առաւել լուսաւորել եւ զո-
մանս նուազ: 16 Քանզի են ոմանք, որ ա-
ռողջ ունին զտեսարանն, եւ են որ տկար,
եւ յայսմանէ թուի զոմանս առաւել լուսա-
ւորել եւ զոմանս նուազ: 17 Նոյնպէս եւ
աստուածայինն ոչ երբեք որոշէ զինքն ի
մարդոյ, այլ ամենեցուն հաւասարապէս
խնամէ. այլ վասն տկարութեան ընդունո-
ղին եւ վասն ոչ սուրբն գոյոյ յախտից,
թուի զինքն որոշել ի նմանէ: 18 Արդ այս-
պէս եւ իմաստասէրս ոչ այնպէս խոկայ
զմահ, որպէս թէ անջատել զհոգին յերկ-
րորդէն, այսինքն ի մարմնոյն. քանզի
մարմին որպէս ապականելի՛ երկրորդ կոչի
հոգւոյն:

19 Իսկ ի չորրորդ ձեռնարկութենէ
յայսմանէ, թէ արդարեւ առաքինութիւն
բարերջանկութիւն է, եւ մայր իմաստասի-
րութեան առաքինութիւն է. վասն զի ի
ձեռն առաքինութեան ստանամք զիմաս-
տասիրութիւն: 20 Իսկ բարերջանիկն է
այն, որ ըստ առաքինութեան կեայ, ոչ
տրտմի, ոչ ի վերայ մարմնականաց փոր-
ձութեանց եւ ոչ ի վերայ արտաքնոցն, այ-
սինքն ընչից. իսկ որ ոչն տրտմի ի վերայ
մարմնականացն փորձութեանց եւ ոչ ի
վերայ արտաքնոցն, այնպիսին եւ ոչ ար-
տահանէ զինքն: 21 Նոյնպէս եւ իմաստա-
սէրն ըստ առաքինութեան կենցաղավարե-

լով՝ ոչ տրտմի, ոչ վասն մարմնականաց փորձութեանց եւ ոչ վասն արտաքնոցն: 22 Իսկ որ տրտմին եւ տխրին ի վերայ մարմնականացն փորձութեանց եւ ի վերայ արտաքնոցն, լսեն զասացեալսն առ ի Հիպոկրատայ, վասն աւտար փորձութեանց իւրական ստանան գտրտմութիւնն:

23 Զայսոսիկ յայտ առնէ եւ Պղոտին¹, թէ՛ որ ըստ առաքինութեան կենցաղավարի՝ ոչ տրտմի, ոչ վասն մարմնականաց փորձութեանց եւ ոչ վասն արտաքնոցն: 24 Քանզի եւ նա հարցեալ յուսմանէ, եթէ՛ աղէ ասա ինձ, ով Պղոտին, թէ՛ այնպիսին որ յիւրում կենդանութեան ի պոխմիականսն անկաւ փորձութիւնս եւ գելիոն ետես չարեաւք ըմբռնեալ, եւ յետ վախճանելոյ գտաւ անթաղ ընկեցեալ, բարերջանիկ գո՞յ թէ՛ ոչ: 25 Պատասխանեաց ասելով՝ ի բաց տար ի քումմէ կարճամտութեանէդ, քանզի ոչ ինչ եղծանէ զհոգեկան առաքինութիւնս:

26 Արդ այսոցիկ այսպէս գոլով, զինչ ունիմք ասել վասն Պղատոնի, որ երբեմն ասէր՝ պարտ է խոկալ զմահ, եւ երբեմն՝ թէ՛ ոչ է պարտ զինքն արտահանել. ընդդիմանա՞յր արդեաւք ինքեան թէ՛ ոչ: 27 Եւ ասեմք, թէ՛ ոչ: 28 Այլ զի զայս ցուցցուք, եթէ՛ ոչ ընդդիմանայր ինքեան, ասացուք դուզնաքեայ ինչ:

29 Պարտ է գիտել, եթէ՛ կենդանութիւն է ունակութիւն եւ պատճառք գոլոյ, իսկ մահ՝ պակասութիւն եւ պատճառք ոչ գոլոյ. եւ իւրաքանչիւր ոք ի սոցանէ երկակի ասի գոլ. քանզի եւ է իսկ երկակի կենդանութիւն. է՛ որ բնական, եւ է՛ որ յաւժարական: 30 Արդ, բնական ասի շարմերձութիւն հոգւոյ եւ մարմնոյ, ըստ որում զգայութիւն ասի տալ հոգի մարմնոյ եւ շարժումն. ըստ որում ամենեքեան ասիմք կեալ, ըստ որում մարմինն կապիլ եւ

կրիլ ասի զհոգին. ուստի եւ կապարան զմարմինն բացակոչէ Հոմերոս, վասն որոյ մարմին կոչի, այսինքն ընդարմ. վասն զի ընդարմացուցանէ զհոգին եւ ընդարմանայ ի գերեզմանի: 31 Իսկ յաւժարական կենդանութիւն է, յորժամ յոռեգոյնն յաղթէ լաւագունին, այսինքն յորժամ հոգին յաղթի ի մարմնականաց հեշտախտութեանց, ընդ որս եւ անառակ կեանք կոչեցան, այսինքն ոչ ողջախոհ: 32 Իսկ բնական մահ է անջատումն հոգւոյ ի մարմնոյ, ըստ որում ամենեքեան վախճանիմք: 33 Իսկ յաւժարական մահ է ըստ առաքինութեան կենցաղավարութիւն, այսինքն ապրիլ կենդանւոյն, յորժամ խոկումն լինի մահու վասն մեռելութիւն գործելոյ ախտից:

34 Արդ, այսոցիկ այսպէս գոլով, չորքս այսոցիկ յայսցանէ՝ գոլն, ոչ գոլն, բարի գոլն, չարն գոլ: 35 Արդ, գոլն է բնաւորական կենդանութիւն. իսկ ոչ գոլն՝ բնաւորական մահ, եւ բարի գոլն՝ յաւժարական մահ. իսկ չար գոլն՝ ախորժական կենցաղավարութիւն: 36 Արդ, յորժամ ասէ Պղատոն, թէ՛ պարտ է խոկալ զմահ, զախորժական մահուանէն ասէ, այսինքն թէ՛ պարտ է ըստ առաքինութեան կեալ եւ մեռելութիւն գործել ախտիցն: 37 Իսկ յորժամ ասէ, թէ՛ ոչ է պարտ արտահանել զինքն, զբնաւորական մահն նշանակէ, ըստ որում ամենեքեան մեռանիմք: 38 Եւ այսոցիկ այսպէս:

39 Եւ պարտ է գիտել, թէ՛ ոմն Կլէոմբուտոս Ամբուակիացի կարծելով, թէ՛ Պղատոն զբնաւորական մահուանէն հրամայէ խոկալ իմաստասիրին, ընկեցեալ զինքն ի պարսպէն վախճանեցաւ. վասն որոյ ասէ Կալիմաքոս՝ «Ուրախացիր, ով արեգակն, Կլէոմբուտոս Ամբուակիացի վազեալ ի բարձրաբերձ պարսպաց ի դժոխս, արժանի ինչ ոչ ուսեալ մահու, այլ չար զՊղատոնի զյաղագս հոգւոյ գիրն ընթերցեալ»:

1 Ուղղում ենք ըստ յուն. Πλωτίνος, հայ. Պղատոն

40 Առ այսօսիկ ասաց Ոլոմպիադորոս փիլիսոփոս, թէ ոչ պղատոնական գիրն զիմա նահանջէր գյարձակումն, այն ինչ ահա տաժանաբար լուծանէի գյոգնաթախանձ կապ կենցաղոյս: 41 Արդ, զի մի եղիցին բազում Կլէոմբոտոսք՝ առադրեսցուք ի սահմանն, զնոյնն նշանակութիւն պահելով, ասացուք այսպէս: 42 Իմաստասիրութիւն է խոկումն մահու յապրիլ կենդանոյն, որով հնարիցի զխոկումն մահու: 43 Բայց մահ պարտ է աստանաւր իմանալ ոչ զբնաւորական մահն, այլ զախորժականն, որով մեռելութիւն գործէ ախտից:

1 Ընդ այսօսիկ հանդերձ աստուծով եւ առաջիկայ պրակֆ ՊՐԱԿՔԹ

2 Եւ արդ, վասն զի Պղատոն զիմաստասիրութիւն խոկումն մահու սահմանեաց, կարծեցեալ ստոյիկեանքն՝ թէ վասն բնաւորական մահուն ասէ. գան եւ յարադրեն յեղանակս ոմանս, ըստ որոց յիրաւի ոք զինքն ի բաց բառնայ: 3 Եւ ասեն, եթէ վասն զի առաջիկայ կենցաղս այս մեծի երախանի նմանեալ գոյ, յայտ է, թէ ըստ որչափից յեղանակաց երախան լուծանի, ըստ այնքանեաց յիրաւի ոք զինքն արտահանէ:

4 Նա քանզի եւ ասեն իսկ, եթէ ըստ վեց յեղանակաց լուծանի երախանն. կամ վասն կարաւտութեան կերակրոց, զի կարաւտութիւն ելոյ կերակրոց, յիրաւի յառնեն կոչեցեալքն եւ լուծանի երախանն: 5 Այսպէս եւ վասն կարաւտութեան ընչից՝ յիրաւի ոք զինքն արտահանէ, այսինքն ի բաց բառնայ, ոչ կամելով ծախիլ ի սովոյ, որպէս եւ Թէոգնիս յայտ առնէ առ ոմն Կիւլոնոս ասելով, թէ պարտ է յաղքատութենէ փախչել եւ ի մեծակիտեղն անկանել ի ծով եւ ի վիմաց, ով Կիւլոնէ, հոսիլ յարեգակնակոխ: 6 Եւ արդ պարտ է գիտել, եթե ոչ զայն ասէ, թէ պարտ է տնանկին զինքն

ի բաց բառնալ, այլ զայն ասէ, թէ պարտ է տնանկին ամենայն ուրեք սերմանել՝ եւ ի վիհս անկոխս, եթէ հնար ինչ իցէ եւ ի ծովու, որպէս զի ազատեսցի ի սովոյ:

7 Ըստ երկրորդ յեղանակի դարձեալ լուծանի երախանն վասն լինելոյ չարահազկերակուրան եւ գեղս մակարդիցեալս. քանզի այսպիսեաց ելոց կերակրոց յիրաւի յառնեն կոչեցեալքն եւ լուծանի երախանն: 8 Արդ, այսպէս եւ մարմնոյ ուրուք չարահազակոյ եւ անպատկանաւորելոյ առ ի յընդունելոյ զանձնաւորական ազդումն, յիրաւի արտահանէ՝ ի բաց քեցելով զինքն ի ցաւոյն, որպէս եւ ոմն շնական փիլիսոփոս, կիսագաւս գոլով, մատեաւ առ Յուլիանոս թագաւոր ասելով՝ կէս մարմնոյ իմոյ մեռաւ եւ կէս տեսանէ գտիւ, գլթայ, ով թագաւոր, ի կիսակտոր շնականս. այսինքն թէ հրամայեայ կամ բժշկել կամ սպանանել. առ որս ասաց՝ թէ զերկոսեան զրկես, եւ զՊղոտոն եւ զՓայիթոն. յումեմնէ պակասել եւ զոմն տակաւին եւս տեսանելով:

9 Ըստ երրորդ յեղանակի դարձեալ լուծանի երախանն, յորժամ է վասն առանձնական տագնապի կոչնատեառն. քանզի կոչնատեառն կամ յանկարծակի հիւանդանալ եւ կամ լսել զկորուստ սիրելոյ՝ յառնեն կոչեցեալքն եւ լուծանի երախանն: 10 Եւ արդ, այսպէս եթէ առանձնական ումեք տագնապ հասանիցէ, լիրաւի ի բաց բառնայ զինքն, որպէս արար պիթագորուհին Տիմիքտայ, որ կոչեցաւ Թէանովն: 11 Քանզի նա անկեալ ի բուռն սիկիլացոց բռնաւորին եւ հարցեալ, թէ ընդէ՞ր ոչ ուտեն պիթագորականքն զմեծ ոլոռունս, ասէր՝ կերայց քան թէ ասացից: 12 Եւ յասել բռնաւորին, թէ կեր, ասէր՝ ասացից քան թէ կերայց: 13 Եւ այնպէս ծամելով զլեզուն վախճանեցաւ:

14 Ըստ չորրորդ յեղանակի դարձեալ լուծանի երախանն վասն արբեցութեան. քանզի յարբեցութիւն անկելոց կոչեցե-

լոցն, յիրաւի լուծանի երախանն: 15 Այսպէս յիրաւի ոք զինքն ի բաց բառնայ, յորժամ ի վերջինն հասանիցէ ծերութիւն եւ զառանցիցէ, եւ սկիզբն առնէ աղճատելոյ եւ բարբառնջելոյ:

16 Իսկ ըստ հինգերորդ յեղանակի դարձեալ լուծանի երախանն, յորժամ սկիզբն առնեն կոչեցեալքն կռուելոյ եւ աւիրաւս առ միմեանս առնել: 17 Նոյնպէս յիրաւի ոք ի բաց բառնայ զինքն, յորժամ ըմբռնեալ ի թշնամեաց հրամայի առնել անիրաւ ինչ, կամ ընդ մաւր անկանել, կամ անպատեհս ինչ ուտել:

18 Իսկ ըստ վեցերորդ յեղանակի ասի լուծանիլ երախանն վասն հասարակական տագնապի. քանզի հասարակական տագնապի հասելոյ, կամ հրայրեցութեան, կամ շարժման, կամ արշաւանաց բարբարոսաց, յառնեն կոչեցեալքն եւ լուծանի երախանն: 19 Այսպէս յիրաւի ոք զինքն ի բաց բառնայ ի հասարակական տագնապէ հասելոյ եւ թշնամեացն այն ինչ զքաղաքն առնուլ հուպ եղելոյ, եւ նորա յերկիւղէ անտի յաղթահարելոյ: 20 Արդ զայսոսիկ ստոյիկեանքն:

21 Իսկ այլքն երկուս միայն յեղանակս յարադրեն, ըստ որոց յիրաւի ոք զինքն ի բաց բառնայ. քանզի ասեն, թէ առ ի կեալ՝ կենցաղս է կամ լաւ, կամ յոռի, կամ միջակ: 22 Արդ, յորժամ ոք ի լաւումն կամ ի միջակումն գոլով տեսանէ զինքն ի յոռին արտամիտեալ, յիրաւի ի բաց բառնայ զինքն: 23 Եւ դարձեալ, յորժամ ոք ի յոռեգունումն գոլով՝ եւ տեսանէ զինքն ոչ երբէք ի լաւագոյնան վերաթեւեալ, յիրաւի ի բաց բառնայ զինքն: 24 Եւ արդ այսոքիկ այսպէս:

25 Վասն որոյ ասեմք, եթէ ոչ ըստ իրաւանց եւ ոչ ըստ անիրաւութեան պարտ է զինքն ի բաց բառնալ ումեք, քանզի որք զայսպէսն կամին կամ խորհին, ընդդիմանան արարչին՝ հարստահարութեամբ կա-

մելով լուծանել զկապն, զոր նայն կապեաց: 26 Եւ պարտ է հաւանել Պղատոնի, որ ասէ, թէ ահա որպէս յումեմն պահարանում եմք. եւ ոչ է պարտ յայսմանէ զինքն արտահանել եւ տարափախել, այլ կալ մնալ կապողին մինչեւ նա լուծցէ: 27 Իսկ փորձութիւնք, թէ ուրեք պատահիցեն՝ ոչ վասն այնորիկ, որպէս թէ ումեք պարտ է զինքն ի բաց բառնալ, այլ վասն փորձելոյ զհոգին: 28 Քանզի որպէս լաւ նաւապետ ոչ ի հանդարտութեան ծովուն, այլ ի յուզման ալեացն փորձի, նոյնպէս եւ վեհագոյն հոգի ի փորձութեան նահատակի: 29 Ուստի եւ ճեմականքն, կամելով զժուժկալութիւն հոգւոյ ցուցանել՝ աղաւթէին ասելով, Ջեւս, տեղեայ՝ ի մեզ փորձութիւն:

1 Ընդ այսոսիկ հանդերձ աստուծով եւ առաջիկայ պրակֆ

ՊՐԱԿՓ Ժ

2 Համբառնայ այսուհետեւ աստուծոս Պղատոն ի հեռի կատարումն, եւ ոչ պարզաբար ի հեռի, այլ եւս ի հեռագոյնն, որ ոչ ինչ եւս է, քան զնա անդր. քանզի սահմանէ զիմաստասիրութիւն՝ նմանութիւն աստուծոյ ըստ կարողութեան մարդկան:

3 Քանզի զի՞նչ այնպէս երանելի եւ վայելուչ կատարումն, որպէս զնմանիլ աստուծոյ ըստ կարողութեան մարդկան: 4 Վասն որոյ ասեն ոմանք, եթէ ոչ կարէ իմաստասէրն, որպէս մարդ գոլով, նմանիլ աստուծոյ, զոր նիւթեն այսպէս:

5 Էութիւն աստուծոյ եւ մարդոյ զանագան է, որպէս եւ քերթողն յայտ առնէ ասելով. վասն զի ոչ ինչ ցեղ նման է աստուածոց անմահից եւ մահկանացուաց գետնակոխաց մարդկան. իսկ որոց էութիւնքն զանագանք են, այսոցիկ եւ կատարելութիւնք զանագանք գոն. որգոն, այլ է էութիւն մարդոյ եւ այլ՝ ճիոյ, եւ այլ կատարելութիւն մարդոյ եւ այլ՝ ճիոյ:

6 Արդ, եթէ զանազան է էութիւն աստուծոյ մարդոյ, եւ որոց էութիւնքն զանազանք են, զանազանք են եւ կատարելութիւնքն: 7 Եւ յայտ է, թէ այլ կատարելութիւն է աստուծոյ եւ այլ մարդոյ. վասն որոյ ոչ կարէ իմաստասէրն նմանիլ աստուծոյ:

8 Արդ, զի գտարակուսանս զայս լուծանել փութամք, ասասցուք, թէ ըստ ո՞րում նշանակութեան ասեմք աստանալր նման: 9 Այլ նախ ասասցուք, թէ ըստ քանի յեղանակաց ասի նմանն: 10 Եւ պարտ է գիտել, թէ ըստ չորից յեղանակաց ասի նման. քանզի նման ասի այն, յորժամ նոյն որակութիւնն ի բոլորումն տեսակում տեսանի. որգոն, յորժամ զբոլոր եթովպացիսն նման միմեանց ասեմք գոլ ըստ սեւոյն, եւ զամենայն կարապ նման միմեանց ըստ սպիտակին:

11 Դարձեալ ասի նման, յորժամ նոյն որակութիւնն ի զանազան տեսակս տեսանի՝ ըստ առաւելութեան եւ ըստ նուազութեան, որպէս զսպիտակ պղպեղ եւ զսեաւ նմանս միմեանց ասեմք գոլ ըստ ջերմայնոյն, քանզի երկուքին ջերմայինք գոն, այլ ըստ առաւելութեան եւ ըստ նուազութեան սեաւն առաւել ջերմային է, իսկ սպիտակն նուազ:

12 Դարձեալ ասի նման եւ այն, յորժամ զանազան որակութիւնք ի զանազան տեսակս տեսանին, որպէս զհաւփալն եւ զաղաւնին նման միմեանց ասեմք գոլ զնոյն որակութիւնս ունելով. քանզի որպէս հաւփալն զանազան որակութիւնս ունի՝ զսպիտակն եւ զխարտեաշն եւ զսեաւն, նոյնպէս եւ աղաւնոյն ասեմք զնոյն որակութիւնս ունել:

13 Դարձեալ ասի նման միմեանց, որպէս պատկերն եւ յարացոյցն, քանզի ասեմք զպատկերն Սոկրատայ նման գոլ Սոկրատում: 14 Եւ պարտ է գիտել, թէ յարացոյց ասի նախատիպն, ըստ որում

պատկերն եղեւ. որպէս, յորժամ զՍոկրատէս յարացոյց ունելով, զպատկերն Սոկրատայ ասեմք նման գոլ Սոկրատում:

15 Արդ ըստ այսմ նշանակութեան ասեմք զիմաստասէրն նման գոլ աստուծոյ, որպէս զպատկերն Սոկրատայ՝ Սոկրատում, թէպէտ եւ այլ է պատկերն Սոկրատայ՝ եւ այլ Սոկրատէս. քանզի ոմն շնչաւոր եւ ոմն անշունչ: 16 Ըստ նմին աւրինակի եւ նշանակութեան ասեմք զիմաստասէրն նման գոլ աստուծոյ, թէպէտ եւ այլ է էութիւն աստուծոյ՝ եւ այլ մարդոյ: 17 Եւ զի իմաստասէրն նման է աստուծոյ՝ աստուստ յայտ եղիցի. քանզի որովք կերպարանի աստուածայինն, նոքիմք կերպարանի եւ կատարեալ իմաստասէրն: 18 Քանզի երիւքս այսոքիւք աստուածայինն կերպարանի՝ բարեաւն եւ գիտութեամբ եւ կարողութեամբ. որպէս եւ քերթողութիւնն յայտ առնէ ասելովն վասն բարոյն, թէ աստուածք տուողք բարեաց են, իսկ վասն գիտականին՝ թէ աստուածք զամենայն ինչ գիտեն. իսկ վասն կարողութեան, թէ աստուածք յամենայնի կարողք գոն:

19 Նոյնպէս եւ կատարեալ իմաստասէրն երիւքս այսոքիւք կերպարանի՝ բարեաւն եւ գիտականաւն եւ կարելեաւն: 20 Եւ բարեաւն, զի որպէս աստուածայինն ամենեցուն ինամ ածէ, նոյնպէս եւ կատարեալ իմաստասէրն անկատար հոգոց ինամ տանի եւ ի ձեռն գիտութեան զանկատար եւ զտգէտ հոգի ի կատարեալ գիտութիւն փոփոխելով: 21 Իսկ գիտականաւն կերպարանի, զի որպէս աստուածայինն զամենայն ինչ գիտէ, նոյնպէս եւ կատարեալ իմաստասէրն զամենայն ինչ խոստանայ գիտել: 22 Իսկ կարելեաւն, զի որպէս աստուած զամենայն ինչ կարէ եւ կամի, նոյնպէս եւ կատարեալ փիլիսոփոս՝ որչափ ինչ կարող գոյ եւ կամի: 23 Արդ այսոքիկ այսպէս:

24 Վասն որոյ եւ ասեն ոմանք, թէ զիս^որդ ասէք զիմաստասէրն նման գոլ աստուծոյ բարեալն եւ գիտականաւն եւ կարողութեամբն, որ ըստ քերթողին ոչ է նման ցեղ անմահից աստուծոց եւ գետնակոխաց մարդկան: 25 Առ որս ասեմք, թէ վասն այսորիկ առկայացաւ ի սահմանին ըստ կարողութեան մարդկան. քանզի որչափ ինչ կարողութիւն է եւ հաստամն մարդոյ՝ թուի նմանիլ իմաստասէրն աստուծոյ: 26 Վասն զի եւ ոչ նոյնպէս է՝ ոչ բարին եւ ոչ գիտականն եւ ոչ կարողն առ աստուծոյ եւ առ մարդոյ. քանզի այլաբար է առ ի յաստուծոյ բարին, եւ այլ առ ի մարդոյ. վասն զի բարին էակացեալ է առ աստուծոյ, եւ էութիւն աստուծոյ է բարին, ուստի եւ անկարութիւն է ընդունակ լինել չարին վասն առաւելութեան բարւոյն. որպէս արեգակն անընդունակ ասի լինել խաւարի վասն առաւելութեան լուսոյն: 27 Իսկ մարդ ունակութեամբ ունի զբարին, ուստի եւ ընդունակ է չարութեան. որպէս եւ աւդդ ըստ ունակութեան ասի ունել զլոյս, վասն զի ի ծագել արեգականն լուսաւորի, ուստի եւ ընդունակ ասի գոլ խաւարի. քանզի ի մտանել արեգականն խաւարի:

28 Եւ դարձեալ այլաբար է գիտականն առ ի յաստուծոյ, եւ այլաբար առ ի մարդոյ. քանզի աստուած միշտ եւ միաբան զամենայն գիտէ, եւ ոչ է ժամանակ յորում ոչ գիտէ, այլ միշտ եւ միաբան զամենայն գիտէ: 29 Իսկ մարդ ոչ միշտ եւ ոչ միաբան զամենայն գիտէ. քանզի եւ ոչ տակաւին եւս ծնեալն գիտէ ինչ ազդմամբ, այլ զաւրութեամբ ասի գիտել: 30 Եւ դարձեալ, մարթ է, եթէ դէպ լիցի ումեք, այսաւր գիտել ինչ եւ այգուցն մոռանալ. եւ ոչ զամենայն ինչ միաբան գիտել. այլ ըստ մասին. քանզի յայսմ ժամանակի զայլ ինչ գիտէ, եւ յայլ ժամանակի՝ զայլ ինչ. որպէս յայտ առնէ եւ Պղատոն, ասելով՝ թէ ախորժելի է, որում գեթ ի ծերութեանն ի-

մաստասիրութիւն եւ խոհեմութիւն առնութիւր է:

31 Եւ դարձեալ, այլաբար է կարողութիւն աստուծոյ՝ եւ այլաբար առ ի մարդոյ. քանզի անդրադարձի առ ի յաստուծոյ, վասն զի որչափ ինչ կամի եւ կարէ, եւ որչափ ինչ կարէ եւ կամի. եւ ոչ ինչ պատշաճիցի անկարութիւն առ ի յաստուծոյ: 32 Իսկ առ իմաստասիրին ոչ անդրադարձի. քանզի որչափ ինչ կարէ եւ կամի, այլ ոչ որչափ ինչ կամի եւ կարէ, վասն զի թէ կամիցի ձեռամբ բուռն հարկանել զարեգականէ եւ կամ ստեղծանել երկին, ոչ կարէ: 33 Ապա թէ ոք ասիցէ, թէ ոչ կամի անկարելի ինչ իրի կատարեալ իմաստասէրն ցանկալ, այլ այնոցիկ տենչայ որոց եւ հասանել կարող գոյ. քանզի ըստ ստոյիկեանցն մեծ կարաւտութիւն է ի վաշխս տենչանացն անլիութիւն: 34 Ասեմք, եթէ որպէս գիտելով զիւր զտկարութիւն բնութեան՝ ոչ տենչայ անհասիցն, այլ այնոցիկ տենչայ, որոց եւ հասանել կարող գոյ: 35 Արդ այսոքիկ այսպէս:

36 Բայց տարակուսեն ոմանք, ասելով՝ թէ ո՞ւր սահմանեաց Պղատոն զիմաստասիրութիւն նմանութիւն աստուծոյ ըստ կարողութեան մարդկան: 37 Եւ ասեմք, թէ ի «Թեւտիայ» տրամաբանութեանն, քանզի անդ, առ Թէոդորոս ոմն երկրաչափ առնելով զխաւսս, ասէ այսպէս. այլ վասն զի, ով Թէոդորէ, ոչ կորնչիլ չարեաց կարողութիւն գոյ, քանզի հակառակ իմն բարւոյ գոլ հարկաւոր, եւ ոչ առ աստուած զնոսա զետեղիլ. բայց զայս զմահկանացու բնութեամբ եւ զայս տեղեալ շրջաբերիլ հարկ է. վասն որոյ պարտ է ջանալ փախչել աստուստ անդր զվաղագոյնսն: 38 Արդ, զի՞նչ է փախուստն՝ նմանութիւն աստուծոյ ըստ կարողութեան մարդկան: 39 Իսկ նմանութիւն աստուծոյ է սուրբն եւ արդարն գոլ հանդերձ խոհեմութեամբ:

40 Դարձեալ ասեն, թէ ոչ սահմանեաց
 զիմաստասիրութիւն, այլ զփախուստն ի
 չարեաց: 41 Առ որս ասացուք, թէ եւ
 փախուստն ի չարեաց ոչ այլ ինչ է, եթէ ոչ
 իմաստասիրութիւն. վասն զի իմաստասի-
 րութիւն է, որ զմեռելութիւն ախտիցն բա-
 ցազործէ, որպէս բազում անգամ ի վերա-
 գոյնն սահմանեցաք զնա խոկումն մահու:
 42 Իսկ մեռելութիւն ախտից ոչ այլ ինչ է,
 եթէ ոչ փախուստ ի չարեաց. եւ յայտ է,
 թէ զիմաստասիրութիւն սահմանեաց:

43 Եւ դարձեալ, եթէ արդարեւ արդա-
 րութիւն եւ խոհեմութիւն առաքինու-
 թիւնք են. իսկ տեղի իմաստասիրութեան
 առաքինութիւն է, վասն զի ի ձեռն առա-
 քինութեան ստանամք զիմաստասիրու-
 թիւն, յայտ է, թէ ի ձեռն ասելոյն՝ լինել
 արդար հանդերձ խոհեմութեամբ, զիմաս-
 տասիրութիւն սահմանեաց: 44 Եւ եւս
 վասն ասելոյն՝ հանդերձ խոհեմութեամբ,
 զտեսականն սահմանեաց. վասն զի խոհե-
 մութիւն կատարումն բանի է, իսկ կատա-
 րումն տեսականին կատարելութիւն բանի
 է, այսինքն բանի գիտութիւն: 45 Եւ յայտ
 է, թէ ասելովն՝ հանդերձ խոհեմութեամբ,
 զտեսականն նշանակեաց, իսկ ասելովն՝
 սուրբն եւ արդարն գոյ, զգործականն սահ-
 մանեաց. վասն զի սուրբն եւ արդարն ա-
 ռաքինութիւնք բարուց են, իսկ կատա-
 րումն գործականին առաքինութիւնք՝
 զարդարումն բարուց: 46 Արդ այսոքիկ
 այսպէս:

47 Բայց խնդրեն ոմանք, թէ վասն է՞ր
 առկայացան երկոքինն՝ սուրբն եւ ար-
 դարն: 48 Եւ ոմանք ասեն, թէ սուրբն ա-
 ռաւելութիւն է արդարոյն, ուստի եւ զան-
 չափ անիրաւսն անսուրբ ասեմք գոյ:
 49 Բայց լաւագոյն է ասելն, թէ զանազա-
 նին ի միմեանց սուրբն եւ արդարն, վասն
 զի արդար այն ասի, որ զգուգաւորութիւն
 համեմատ էակացն պահէ, իսկ սուրբ է, որ
 յաստուածայնոցն ունի փոյթ յանձին:

50 Եւ զի այսոքիկ ի միմեանց զանազա-
 նին՝ յայտ առնէ Պղատոն, գրելով երկուս
 տրամաբանութիւնս. եւ ի միումն մակա-
 գրեաց «Յաղագս արդարոյ, կամ քաղաքա-
 վարութեան», եւ ի միւսումն՝ «Եւթիփոն,
 յաղագս սրբոյ», յորում վասն աստուածա-
 յին իրաց ծանուցանէ: 51 Եւ այսոքիկ
 այսպէս:

52 Բայց տարակուսեն ոմանք ասելով,
 թէ վասն զի չորք առաքինութիւնք են
 հոգևոյ՝ արիութիւն, արդարութիւն, ողջա-
 խոհութիւն, խոհեմութիւն, զի՞ զմինն
 միայն յիշեաց աստանաւր՝ զարդարու-
 թիւն:

53 Առ որս ասեմք, նախ եւ առաջին,
 եթէ զխոհեմութիւն յիշեաց, քանզի ասաց՝
 եթէ արդարն եւ սուրբն գոյ հանդերձ խո-
 հականութեամբ:

54 Երկրորդ՝ թէ եւ զարդարութիւն
 միայն յիշեաց, ոչ ինչ անտեղի լինին, որ-
 պէս ցուցանեմք: 55 Եւ պարտ է գիտել, թէ
 եռամասնեայ գոյ հոգի, քանզի ունի բան,
 ցասումն եւ ցանկութիւն. չորք են առաքի-
 նութիւնք հոգևոյ՝ արիութիւն, արդարու-
 թիւն, խոհականութիւն, ողջախոհութիւն:

56 Եւ այսոքիկ յիրաւի, վասն զի պարտ է
 զիւրաքանչիւր մասն հոգևոյ իւրականաւ
 զարդարիլ առաքինութեամբ, ուստի բան
 խոհականութեամբ զարդարեալ գոյ, իսկ
 բարկութիւն՝ արիութեամբ, իսկ ցանկու-
 թիւն՝ ողջախոհութեամբ: 57 Եւ վասն զի
 ոչ միայն պարտ է իւրաքանչիւր մասին ա-
 ռանձնականաւ զարդարիլ առաքինու-
 թեամբ, այլ եւ յարմարումն առ միմեանս
 եւ բարեկարգութիւն պահել. վասն այսո-
 քիկ եւ արդարութիւն ընդ ամենեսեան ան-
 ցեալ երեւի, զի մի միայն ի միում մասին,
 այլ եւ յամենեսեան ի մասունս տեսանեմք,
 զի յարմարութիւն եւ բարեկարգութիւն
 պահեսցի:

58 Եւ որպէս յամենայնումն տեսա-
 նեմք զոմանս իշխան միայն գոյ, որպէս

զաստուածայինն, եւ զոմանս իշխան եւ ընդ իշխանութեամբ, որպէս զմարդկայինս. քանզի մարդկայինքս ընդ իշխանութեամբ են աստուածայնոցն, եւ իշխանն անասուն կենդանեաց. իսկ այլքն ընդ իշխանութեամբ միայն, որպէս նոքին իսկ անասուն կենդանիքն: 59 Ըստ նմին աւրինակի եւ ի մարդուս իբր ի փոքր աշխարհում ըստ Դիմոկրիտոսի՝ այսոքիկ տեսանին: 60 Ոմանք իշխան միայն, որպէս բան, եւ ոմանք իշխան եւ իշխին, որպէս բարկութիւն. քանզի բարկութիւն իշխի ի բանէ եւ իշխէ ցանկութեան: 61 Իսկ ոմանք միայն իշխին, որպէս ինքն ցանկութիւն: 62 Արդ այսոքիկ այսպէս ելոց, վասն զի արդարութիւն առաւելագոյն է, քան զայլ առաքինութիւնս, որպէս թափանցեալ ընդ այլսն եւ զբարեկարգութիւն նոցա պահեալ, վասն այսորիկ որպէս կարեւոր ինչ զնա միայն յիշեաց:

63 Երրորդ, առ այսոքիւք զարդարութիւն յիշելով, զայլ առաքինութիւնսն միանգամայն առեալ եցոյց: 64 Քանզի մակատացական առաքինութիւնքն հանդերձ պատճառաւ միմեանց հետեւին. քանզի որ պատճառաւ է ողջախոհ, այսինքն գիտէ զպատճառն, թէ վասն է՞ր է ողջախոհ, թէ վասն զի յանառակութենէ ժլատութիւնք եւ անիրաւութիւնք լինին, այնպիսին ի հարկէ եւ արի գոյ, զախտսն ստորադասելով. այնպիսին եւ խոհեմ գոյ, վասն զի գիտէ զպատճառն, թէ վասն է՞ր պարտ է լինել խոհեմ. այնպիսին եւ արդար գոյ, վասն զի ի մարմնականաց հեշտախտութեանց լինին անիրաւութիւնք:

65 Իսկ մակատացական առաքինութիւնք ասացան վասն բնականացն. իսկ բնականք ասին, որք միանգամ ըստ խառնուածոյ մարմնոյ գոն, որք ոչ հետեւին միմեանց. քանզի որ ի խառնուածոյ մարմնոյ է ողջախոհ, ոչ ամենայն իրաւք եւ արի, եւ խոհեմ, եւ արդար գոյ, որք եւ ծա-

ռայականք կոչին եւ անբանք: 66 Եւ ծառայականք կոչին՝ որպէս ի հարկէ հետեւեալք խառնուածոյ մարմնոյն. քանզի որ ի ցուրտ խառնուածոյն է, նա ի հարկէ ողջախոհ գոյ: 67 Իսկ անբանք կոչին՝ վասն ոչ գիտելոյ զպատճառն, թէ վասն է՞ր պարտ է ողջախոհ լինել: 68 Եւ դարձեալ, անբանք կոչին, վասն զի եւ յանբան կենդանիսն բնաւորեցաւ այսպիսի առաքինութիւն տեսանիլ, որպէս յորժամ ասեմք զտատրակ ի բնութենէ ողջախոհ, եւ զուղտ խոհեմ, եւ զառիւծ արի, եւ զարագիլ արդար, վասն զի զծերացեալ հայրն կերակրէ:

69 Եւ դարձեալ, մակատացական առաքինութիւնք ասացան վասն բարոյականաց առաքինութեանց, որք յաւանդութենէ եւ ի պատուիրելոյ, որպէս յորժամ ոք ի պատուիրելոյ գոյ ողջախոհ, ոչ գիտելով զպատճառն, որք ոչ հետեւին միմեանց, վասն զի մարթ գոյ ողջախոհ լինել յաւանդութենէ եւ ոչ իմաստուն:

1 Ընդ այնոսիկ հանդերձ աստուծով եւ առաջիկա պրակի

ՊՐԱԿՔ ԺԱ.

2 Յետ Պրատոնի եւ Պիթագորի երկակի սահմանելոյ զիմաստասիրութիւն, զոմն յենթակայէ եւ զոմն ի կատարմանէ, գայ Ստագիրացին, այսինքն Արիստոտէլ, եւ սահմանէ զիմաստասիրութիւն՝ ոչ փոքր ինչ խորհելով, թէպէտ եւ մենատեսակ զնա սահմանէ, նոցա երկակի երկաքանչիւրոցն զնա սահմանելով, այլ մեծ եւ բարձրագոյն իմն խորհելով: 3 Վասն զի յառաւելութենէ զնա սահմանէ ասելով, թէ իմաստասիրութիւն է արհեստ արհեստից եւ մակացութիւն մակացութեանց:

4 Այլ պարտ է խնդրել, թէ զի՞նչ կամիցի երկաքանչիւրոցդ վերակրկնակութիւն, այսինքն արհեստ արհեստից եւ մակացութիւն մակացութեանց. քանզի շատ է

ասելն՝ իմաստասիրութիւն է արհեստ եւ մակացութիւն: 5 Արդ խնդրելի է, թէ վասն է՞ր առադրեաց արհեստից եւ մակացութեանց:

6 Եւ պարտ է ասել, թէ ի ձեռն առաջին կրկնապատկութեանն, այսինքն արհեստ արհեստից, թագաւորի նմանեցոյց զիմաստասիրութիւն. իսկ ի ձեռն երկրորդ կրկնապատկութեանն, այսինքն մակացութիւն մակացութեանց, աստուծոյ նմանեցոյց զիմաստասիրութիւնն: 7 Քանզի յորժամ իշխանաց իշխան ասեմք, յայտ առնեմք զթագաւոր: 8 Ըստ նմին աւրինակի եւ արհեստ արհեստից յորժամ ասեմք, թագաւորի նմանեցուցանեմք զիմաստասիրութիւն: 9 Իսկ յորժամ թագաւոր թագաւորաց ասեմք, զաստուած յայտ առնեմք: 10 Ըստ նմին աւրինակի եւ մակացութիւն մակացութեանց ասելով՝ զիմաստասիրութիւնն աստուծոյ նմանեցուցանեմք. քանզի լաւագոյն է մակացութիւն, քան զարհեստ. վասն զի մակացութիւն տայ սկզբունս արհեստի:

11 Նա քանզի եւ քերթողն գիտէ, թէ էն եւ ովն բնութեամբ երկարք են. թէպէտ եւ զպատճառսն ոչ գիտէ, այլ վերածգէյե-րաժտական իմաստասէրն: 12 Եւ որպէս յորժամ թագաւոր ոչ աղտեղացուցանէ զինքն, որ ոչ անմիջակաբար խաւսի ընդ ամբոխի, այլ կացուցանէ իշխանս ի վերայ, յորոց ձեռն վերջագունիցն եւ տրպագունիցն խնամ ածէ, ըստ նմին աւրինակի եւ իմաստասիրութիւն յառաջ ածէ զարհեստս, յորոց ձեռն զենթակայս նոցա գիտէ:

13 Եւ դարձեալ, որպէս աստուածայինն աներեւոյթ զաւրութիւնս ոմանս ունի, յորոց ձեռն աստեացս խնամ ածէ, նոյնպէս եւ իմաստասիրութիւն յառաջ ածէ զմակացութիւնս, որպէս զի ի ձեռն սոցա գիտասցէ զենթակայս նոցա:

14 Եւ դարձեալ, վասն այսորիկ սահմանեաց զիմաստասիրութիւն արհեստ ար-

հեստից եւ մակացութիւն մակացութեանց, որպէս զի ցուցցէ, թէ զնոյն բան ունին արհեստք եւ մակացութիւնք առ իմաստասիրութիւն, զոր բան եւ նոցա ենթակայն առ նոսա: 15 Քանզի բժշկականութեան ենթակայ գոյ մարդկային մարմին. իսկ իմաստասիրութեան նոյն ինքն բժշկականութիւն է ենթակայ:

16 Եւ դարձեալ, աստեղաբաշխութեան ենթակայ գոյ երկնային մարմինն, իսկ իմաստասիրութեան նոյն ինքն աստեղաբաշխութիւն է ենթակայ: 17 Եւ դարձեալ, վասն այսորիկ ասաց զիմաստասիրութիւն արհեստ արհեստից եւ մակացութիւն մակացութեանց, վասն զի իմաստասիրութիւն զբնութիւն էիցն գիտէ, իսկ զարտաքոյս բնութեանց եւ զհետեւմունս ետ գիտել արհեստից եւ մակացութեանց. քանզի ինքն առելով զըստ գիտութեան զնիւթ եւ զտեսակ, զսկզբունս ամենայնի բացակատարէ՝ զչորս տարերս. եւ ի նոցանէ բացակատարէ զնմանամասնեայսն, իսկ ի նմանամասնեայցն՝ զգործիկանսն, եւ ի գործիկանացն՝ զմարդկային մարմինս: 18 Եւ զայլսն ամենայն պատահմունս, որ ի մարմնի, բժշկականութեան ետ դիտել, այսինքն զցաւս եւ զառողջութիւնս, ոչ որպէս թէ ինքն ոչ գիտելով գիտէ եւ զայնուսիկ, այլ որպէս ոչ կամելով զինքն աղտեղացուցանել մինչեւ ի հոսակ վերջինսն հասանել:

19 Եւ դարձեալ, իմաստասիրութիւն գիտէ զբնութիւնս ձայնից, իսկ զհետեւմունս ձայնի ետ գիտել քերթողին, այսինքն զոլորակս եւ զհագագաս: 20 Եւ դարձեալ, իմաստասիրութիւն գիտէ զբնութիւն գծի, իսկ զայլսն թոյլ ետ գիտել երկրաչափութեան: 21 Եւ դարձեալ, վասն այսորիկ ասաց զիմաստասիրութիւն արհեստ արհեստից եւ մակացութիւն մակացութեանց, վասն զի նա է, որ տայ ամենայն արհեստից եւ մակացութեանց սկզբունս. վասն

զի քերականութիւն ի նմանէ առնու զէն եւ զովն բնութեամբ երկար գոլ, զորոյ զպատճառսն իմաստասիրութիւն գիտէ. իսկ նա խոստովանաբար առնլով յիմաստասիրութենէ՝ յարդարէ զիւր արհեստ:

22 Դարձեալ, բժշկականութիւն գիտէ, թէ ի չորից տարերց է մարդկային մարմին, ոչ գիտելով զպատճառս, թէ վասն է՞ր են չորք տարերք. այլ խոստովանաբար առնլով յիմաստասիրութենէ, յարդարէ զիւր արհեստն:

23 Եւ դարձեալ, ճարտասանութիւն պիտանանայ արդարոյ, այսինքն քաղաքականութեան, անգիտանալով զբնութիւն արդարոյն, այլ խոստովանաբար առնլով յիմաստասիրութենէ, յարդարէ զիւր արհեստն: 24 Վասն այսորիկ անգիտանալով ճարտասանք զբնութիւն արդարոյն՝ ընտրեն զգրկելն առաւել, քան թէ զգրկիլն. իսկ իմաստասէրն որպէս գիտելով զբնութիւն արդարոյ, ոչ ընտրէ եւ ոչ զոք ի դոցանէ. իսկ եթէ դէպ լինիցի ընտրել, ընտրէ զգրկիլն առաւել քան եթէ զգրկելն. քանզի եւ ասեն իսկ, թէ ոչ ոք կարէ զհոգի ուրուք վնասել, եթէ ոչ նախ զիւրն վնասիցէ, անիրաւս եւ անպատեհս գործելով:

25 Քանզի թէ վնասէ ոք զոք, կամ զմարմինն վնասէ, կամ զարտաքոյսն, զինչսն յափշտակելով. իսկ զհոգին ոչ կարէ վնասել, այլ զգործարան նորա, այսինքն զմարմինն. որպէս եւ ասեն պիթագորականքն, թէ՛ եմ ես, եւ իմն, եւ իմոյն: 26 Եւ ես ասէին զհոգին, վասն զի ի հոգւոջն ունիմք զգոյուլթիւն. եւ իմ ասէին զմարմինն, որպէս զգործի հոգւոյ. իսկ իմոյ ասէին զարտաքոյսն, այսինքն՝ զստացուածս: 27 Արդ որ վնասեն, ոչ զոք, բայց եթէ զիւրն վնասէ. այլ զայլոցն ոչ կարէ:

29 Եւ պարտ է գիտել, եթէ ոչ միայն բանական արհեստից եւ մակացութեանց տայ զսկզբունս իմաստասիրութիւն, այլ եւ անբանից. որպէս զլարն՝ հիւսան եւ

զհուրն՝ դարբնութեան: 29 Իսկ անբան արհեստք լին, այսինքն ոչ անպատճառք, քանզի ոչ ինչ է արհեստ, որ ոչ ունի պատճառս, թէպէտ եւ արուեստաւորն անգիտանայ. այլ անբանք կոչին՝ վասն զի կարողք գոն որք ուսանին՝ ոչինչ բարբառել եւ ուսանիլ. քանզի կարող գոյ հիւսն առանց բարբառելոյ աթոռ բացակատարել:

30 Եւ դարձեալ, պարտ է գիտել, թէ ոչ միայն սկզբունս կարող գոյ տալ իմաստասիրութիւն ամենայն արհեստից եւ մակացութեանց, այլ եւ վերստին ուղղել զսխալեալսն ի նոսա. քանզի քերթողք ի սահմանելն զձայն՝ վիրաւորութիւն աւղոյ աւսացին, զորս վերստին ուղղէ իմաստասէրն, ասելով՝ թէ յոռի է սահմանդ, վասն զի ոչ զուգադարձի. վասն զի որ ձայն է՝ նա եւ վիրաւորութիւն աւղոյ, այլ ոչ որ ինչ վիրաւորութիւն աւղոյ, այն ինչ եւ ձայն. վասն զի եւ ասերք ոք եթէ հարկանէ զաւղ, ոչ բացակատարէ ձայն: 31 Իսկ կատարեալ սահմանք այնորիկ են, որ զուգադարձին առ սահմանելիսն. որգոն, ինչ որ միանգամ կենդանի բանաւոր, մահկանացու, մտաց եւ հանճարոյ ընդունակ՝ նա մարդ, եւ որ միանգամ մարդ՝ նա կենդանի բանաւոր մահկանացու մտաց եւ հանճարոյ ընդունակ է: 32 Վասն որոյ սահմանեն զձայն այսպէս, ձայն է բացակատարումն գանչեցելոյ ի մեզ հագազի եւ երիւրեցելոյ ընդ խոշորութեան շնչափողն եւ տեսակարարեցելոյ լեզուաւ եւ մակալեզուաւ:

33 Դարձեալ, պարտ է գիտել, թէ վասն այնորիկ ասաց զիմաստասիրութիւն արհեստ արհեստից եւ մակացութիւն մակացութեանց, վասն զի ամենայն բանաւոր արհեստք պէտս ունին բաժանմանց եւ սահմանաց եւ ապացուցից, որոց մայր իմաստասիրութիւնն ճանաչի:

1 Ընդ այսուսիկ հանդերձ աստուծով եւ առաջիկայ պրակֆ

ՊՐԱԿՔ ԺԲ

2 Եւ վասն զի ի վեր անդ զբոլոր սահմանն որպէս բոլոր ուսաք, եկեսցուք այսուհետեւ ի մասունս նորա եւ քննեսցուք զմի մի ի նոցանէ ի մէջ ածելով: 3 Վասն որոյ եւ ասեն ոմանք, եթէ յոյժ տխմարաբար զիմաստասիրութիւն արհեստ արհեստից ասացէք գոյ. քանզի թէ արհեստ արհեստից է՝ յայտ է, եթէ եւ արհեստ է. իսկ եթէ արհեստ է՝ յայտ է, թէ եւ սխալական է, որ է անպատեհ:

4 Առ որս պարտ է ասել, թէ ոչ ամենայն իրաւք որք միանգամ միաբանաբար ասին, նոքին եւ առանձնաբար ասին, քանզի ահա ասեմք մեռեալ մարդ, եւ ոչ կարեմք առանձնաբար ասել, թէ մարդ է, վասն զի ոչ ունի գյատկութիւնս մարդոյ, քանզի ոչ շնչաւոր է եւ ոչ զգայական: 5 Եւ դարձեալ, ասեմք քարէ նաւ, եւ ոչ ասի նաւ, վասն զի ոչ վերաբերի ի ջուրց որպէս նաւ:

6 Եւ դարձեալ, որպէս առասպելն ասէ, թէ մարդ եւ ոչ մարդ, բայց սակայն մարդ, զհաւս եւ ոչ զհաւս, բայց սակայն զհաւս ի վերայ փայտի եւ ոչ ի փայտի, այլ ի փայտի, քարիւ եւ ոչ քարիւ, այլ քարիւհարեալ սատակեցան զչղջիկան ի վերայ կանջոխոյ նստեալ: 7 Արդ, որպէս յառաջագոյն ասացաք, ոչ ամենայն իրաւք միաբանար ասացեալքն եւ առանձնաբար ասին, որպէս եւ յընդդիմէն, ոչ ամենեւին առանձնաբար ասացեալքն եւ միաբանաբար ասիլ կարող գոն:

8 Արդ, ստորակայեսցի ոմն Սիմոն՝ արուեստիւ կարուակ, իսկ բարուք բարի, արուեստիւ յոռի: 9 Արդ, ի վերայ սորա առանձնաբար ասացեալքն ոչ կարող գոն միաբանաբար ասիլ. որգոն, յորժամ ասեմք Սիմոն կարուակ է, եւ Սիմոն բարի է: 10 Արդ, զայսուսիկ զառանձնաբար ասա-

ցեալսս ոչ կարող գոյ միանգամայն յարեւաբար ասել, թէ Սիմոն կարուակ բարի, վասն զի ըստ արուեստին փցուն զնա ստորագրեցաք:

11 Արդ այսպէս եւ ի վերայ իմաստասիրութեան. քանզի արհեստ արհեստից զնա ասել մարթ գոյ. իսկ արհեստ միայն ասել ոչ գոյ մարթ, որպէս յառաջագոյն ցուցաք, թէ ոչ կարողք գոն միաբանաբար ասացեալքն եւ առանձնաբար ասիլ: 12 Բայց սակայն թէ եւ արհեստ ասեմք զիմաստասիրութիւն գոյ, ոչ ինչ է անտեղի. քանզի բազում անգամ զանուն արհեստիք եւ ի վերայ մակացութեան առնուն. քանզի եւ Պղատոն ի «Գորգիայ» տրամաբանութեանն զմակացութիւն արհեստ կոչէր. քանզի առ նա ասէր, թէ որո՞յ զքեզ ասացուք արհեստի մակացու, այսինքն մակացութեան, քանզի մակացու՝ մակացութեան է մակացու: 13 Այլ եւ ի «Սոփեստիայ» տրամաբանութեանն զարարիչն արուեստաւոր կոչեաց՝ զանսխալաբար գիտողն ամենայնի:

14 Եւ դարձեալ, թէ արդարեւ այս սահման, որ ասէ զիմաստասիրութիւն արհեստ արհեստից՝ յաւառաւելութենէ է, իսկ առաւելութիւն այլ է այնմ, առ որ զառաւելութիւնն ունի, ապա եւ իմաստասիրութիւն ոչ է արհեստ, այլ առաւել քան զարհեստ: 15 Արդ այսոքիկ այսպէս:

16 Դարձեալ ասեն ոմանք, թէ զի՞ ասաց զիմաստասիրութիւն մակացութիւն մակացութեանց: 17 Միթէ ա՞յլ մակացութիւն է աւելի քան զիմաստասիրութիւն: 18 Առ որս պարտ է ասել, թէ երկակի է մակացութիւն. մին ներստորադրական եւ միւսն աններստորադրական: 19 Եւ ներստորադրական է, որ առնու սկզբունս, որք պէտս ունին ապացուցութեան եւ որոց զպատճառսն անգիտանայ. որպէս յորժամ երկրաչափն առնու խոստովանաբար, եթէ նշան է անմասն ինչ, զորոյ զպատճառսն

ոչ գիտէ, այլ զայն բնական իմաստասիրին է: 20 Իսկ աններստորադրական մակացութիւն է, որ առնու սկզբունս զհասարակաց մտածութիւնս, որք ոչ ունին պէտս ապացուցութեան. որպէս յորժամ ասեմք, թէ աստուած բարի է, որ է հասարակաց մտածութիւն. վասն զի ամենայն ոք խոստովանի, թէ աստուած բարի է, եւ ոչ ինչ ունի պէտս ապացուցութեան: 21 Արդ այսոքիկ այսպէս:

22 Եւ վասն զի յիշումն արարաք արհեստի եւ մակացութեան, եւ վասն սոցա ասասցուք զուզնաքեայ ինչ: 23 Բայց նախ քան զսոցայն յաղագս գիտութեան ասասցուք: 24 Արդ, պարտ է գիտել, եթէ գիտութիւն կամ ընդհանուր է կամ մասնական, կամ հանդերձ պատճառաւ կամ առանց պատճառի, յորոց լինին չորքս այսոքիկ. հմտութիւն, ներհմտութիւն, արհեստ, մակացութիւն:

25 Արդ, հմտութիւն է միոյ իրի անպատճառ գիտութիւն. որպէս յորժամ մի ղեղ գիտելով, այնմ միայն պիտանանայ, ոչ գիտելով զպատճառսն, թէ որպէս պարտ է պիտանանալ նմա:

26 Իսկ ներհմտութիւն է ընդհանուր անպատճառ գիտութիւն. որպէս այնք, որք ի ներհմտականաց բժշկաց են, որք բազում ղեղս գիտելով՝ անգիտանան զպատճառս ներգործութեան ղեղոցն: 27 Եւ դարձեալ, ներհմտութիւն է յիշումն եւ անբան պահանջութիւն մարդկային բազմաբար եւ նոյնաբար երեւեցելոցն, քանզի ներհմտական բժիշկն, յիշելով եւ պահելով բազում անգամ զնոյնաբար երեւեալսն ի ղեղոցն, պիտանանայ այնոցիկ:

28 Իսկ արհեստ է ընդհանուր գիտութիւն հանդերձ պատճառաւ, կամ արուեստ է ունակութիւն ճանապարհորդեալ հանդերձ երեւակայութեամբ. քանզի արուեստ ունակութիւն ոմն է եւ գիտութիւն, այլ եւ ճանապարհորդէ. այսինքն զամենայն ինչ

ըստ կարգի առնէ: 29 Իսկ հանդերձ երեւակայութեամբ ասացաւ վասն բնութեան. քանզի եւ բնութիւն ունակութիւն է, քանզի ունի զգոլն յայնոսիկ, որք ունին զնա, այսինքն ի մարդու եւ ի քարու եւ յայլսն, եւ ըստ կարգի յառաջագայի, բայց ոչ ըստ երեւակայութեան, որպէս եւ արհեստ. քանզի արուեստաւորն պիտանանալով բանի, յորժամ կամի ինչ առնել, այսինքն պատճառին, նախ եւ առաջին տպաւորէ յինքեան եւ այնպէս բացակատարէ զբանն: 30 Իսկ բնութիւն ոչ երբէք յառաջագոյն տպաւորէ յինքեան:

31 Եւ դարձեալ, արուեստ է բաղկացութիւն ի հասողութենէ, ներհմտութեամբ նախակրթեալ առ պիտանացու ինչ կատարումն, որ ի կենցաղումս: 32 Իսկ հաւաստութիւն սահմանիդ այս է՝ արհեստ է բաղկացութիւն, այսինքն զումարութիւն յարադրութենէ. քանզի ոմանց զայս ինչ գիտելոց եւ ոմանց զայն ինչ՝ բացակատարեցաւ արհեստ: 33 Ներհմտութեամբ նախակրթեալ, այսինքն փորձեալ բազում հմտութեամբ. քանզի բազում հմտութեամբ փորձեալ զտեսակս արհեստին, այսպէս ձաւնէին զնոսա նորին արհեստի: 34 Իսկ առ ինչ պիտանի կատարումն, որ ի կենցաղումս ասացաւ, վասն ընդունայն արուեստութեանց եւ չարարուեստութեանց, որք ոչ ունին պիտանի կատարումն ի կենցաղումս: 35 Եւ են ընդունայն արհեստութիւնք՝ լարախաղացութիւն, ձողախաղացութիւն, որք ոչ աւգտեցուցանեն զկենցաղս եւ ոչ վնասեն: 36 Իսկ չարարուեստութիւն է կախարդութիւն եւ դիւթութիւն, որ ոչ միայն ոչ աւգտեցուցանեն զկենցաղս, այլ եւ վնասեն:

37 Իսկ մակացութիւն է ընդհանուր անսխալ եւ անփոփոխելի գիտութիւն, քանզի անսխալաբար գիտէ զգիտելիսն:

38 Եւ դարձեալ, մակացութիւն է գիտու-

թիւն անսխալ իւրոց ենթակայից իրողութեանց, ըստ որում ունին զբնութիւն, քանզի որպէս ունին զբնութիւն իրողութեանց ենթակայ իրք, այնպէս գիտէ: 39 Արդ այսոքիկ այսպէս:

40 Բայց տարակուսեն ոմանք ասելով, թէ մինչ արհեստ հանդերձ պատճառաւ գիտէ, եւ մակացութիւն հանդերձ պատճառաւ, ըստ որո՞ւմ իրաց զանազանին ի միմեանց: 41 Եւ ասեն ոմանք, թէ վասն զի մակացութիւն անսխալաբար գիտէ եւ անսխալ է. իսկ արհեստ սխալ է: 42 Առ որս ասեմք, եթէ ոչ բարիք ասէք. քանզի եւ արհեստ ըստ իւրում բանին անսխալ է, իսկ վասն ենթակային անպատկանութեան թուի սխալական գոյ:

43 Արդ զանազանին ի միմեանց արհեստ եւ մակացութիւն, վասն զի մակացութիւն եւ ենթակայն իւր անսխալք են, որպէս երկիր եւ երկրաչափութիւն, աստեղագիտութիւն եւ աստեղք. քանզի եւ աստեղագիտութիւն անսխալ է, եւ ենթակայն նորին, այսինքն աստեղք: 44 Իսկ արհեստ ըստ իւրում բանին անսխալ է. իսկ ըստ ենթակային վասն զի հոսանուտ է, թուի սխալական գոյ. որպէս հիւսնութիւն եւ փայտ՝ նորին ենթակայ: 45 Արդ հիւսնութիւն ըստ իւրում բանին անսխալ է. իսկ փայտն, վասն զի ապականացու է եւ հոսանուտ, յառնել հիւսան աթոռ կամ այլ ինչ յանկարծաւրէն բեկանի եւ սխալեցուցանէ զարուեստն:

46 Արդ, որպէս յառաջագոյն ասացաք, այսոքիկք զանազանին ի միմեանց արհեստ եւ մակացութիւն. վասն զի մակացութիւն եւ ըստ իւրում բանին անսխալ է եւ ըստ ենթակային. իսկ արհեստ ըստ իւրում բանին անսխալ է, իսկ ըստ ենթակային թուի սխալական գոյ:

1 Ընդ այսոսիկ հանդերձ աստուծով եւ առաջիկայ պրակֆ

ՊՐԱԿՔ ԺԳ

2 Սկիզբն եւ կատարումն մեզ եղիցի Պիթագորաս, քանզի եւ սիրելի իսկ երեւի աշսպիսում առն զսկիզբն եւ զկատարումն ի նա անկել, որպէս ի բոլորում. քանզի ի բոլորում շարակցեալ գոյ սկիզբն կատարման: 3 Արդ այսպէս եւ սա սկիզբն եւ կատարումն եղեւ մեզ. եւ սկիզբն, վասն զի նորա են սահմանք, որ ի սկզբանն ասացան, այսինքն՝ թէ իմաստասիրութիւն է ծանալթութիւն էակացն ըստ որում էակք են: 4 Եւ դարձեալ, իմաստասիրութիւն է գիտութիւն աստուածայնոց եւ մարդկայնոց իրողութեանց: 5 Իսկ կատարումն է, վասն զի նորին առն սահման բացատրեցաւ ի կատարմանս, որ ասէ՝ թէ իմաստասիրութիւն է սիրելութիւն իմաստութեան:

6 Եւ պարտ է գիտել, թէ ոմանք պախարակեն զբացատրութիւն սահմանիս, ասելով թէ ամենայն սահման զուգադարձի յիւր սահմանելին. իսկ առաջիկայ սահմանս ոչ զուգադարձի. քանզի որ ինչ իմաստասիրութիւն է՝ սիրելութիւն իմաստութեան, այլ ոչ որ ինչ սիրելութիւն իմաստութեան՝ նա եւ իմաստասիրութիւն, քանզի ամենայն արհեստ սիրէ եւ տենչայ իւրում ենթակային: 7 Վասն որոյ պարտ է ասել, թէ բարիք է առաջիկայ սահմանդ, քանզի Պիթագորի է. վասն զի նախ եւ առաջին Պիթագորաս զիմաստասիրութեան սահման եգիտ, որ վայրապար բերիւր եւ ի վերայ ձեռականաց արհեստից, որպէս եւ քերթողն յայտ առնէ: 8 Վասն զի իմաստունն, ասէ, յարմարեաց զանալթն. իմաստունն անուանեաց զհիւսն: 9 Իսկ Պիթագորաս, զիմաստունն ի բաց որոշելով, ի վերայ ճշմարիտ գիտութեան գոյին եդ, քանզի նա առաջին անուանեաց իմաստութիւն զգիտութիւն ճշմարիտ գոյին, այսինքն աստուծոյ:

10 Եւ պարտ է գիտել, թէ իմաստասիրութիւն բազում աստիճանաց պիտանանայ. քանզի եւ բազում իսկ աստիճանք են իմաստասիրութեան: 11 Քանզի պարտ է գիտել զհինգ գիտական գաւրութիւնս՝ զգգայութիւն, զերեւակայութիւն, զկարծիս, զտրամախոհութիւն, զմիտս:

12 Եւ զգայութիւն է առաջիկայ իրի մասնական գիտութիւն, վասն զի ամենայն զգայութիւն զմասնական գիտութիւն գիտէ:

13 Իսկ երեւակայութիւն է բացագոյիցն մասնական գիտութիւն: 14 Եւ գանազանի երեւակայութիւն ի սոսկ մտածութենէ այսուիկ. վասն զի երեւակայութիւն, որպէս ասացաք, բացագոյիցն է յիշողութիւն: 15 Իսկ սոսկ մտածութիւն է ոչ գոյիցն տրամատպաւորութիւն. որպէս յորժամ ոք զեղջերուաքաղն ստեղծանիցէ յիւրում մտածութեանն, որ ոչ է գոյ:

16 Իսկ կարծիք երկակի ասին, է որ պատճառաւ եւ է որ առանց պատճառի: 17 Եւ առանց պատճառի՝ որպէս յորժամ ոք զբանական հոգի կարծիցէ անմահ, ոչ գիտելով զպատճառն, իսկ պատճառաւ՝ յորժամ եւ զպատճառսն գիտէ զանմահութեանն: 18 Եւ պարտ է գիտել, զի կարծիք հանդերձ պատճառաւ եզրակացութիւն է առաջարկութեանց. որգոն, հոգի ինքնաշարժ, ինքնաշարժն մշտաշարժ, մշտաշարժն անմահ է: 19 Ահա եզրակացութիւն առաջարկութեանց, այսինքն հոգի անմահ, որ կոչեցաւ կարծիք հանդերձ պատճառաւ:

20 Իսկ տրամախոհութիւն է ընդհանրականացն հանդերձ պատճառաւ գիտութիւն: 21 Վասն որոյ եւ տարակուսեն ոմանք ասելով, թէ յորժամ հանդերձ պատճառաւ կարծիք՝ գիտութիւն է ընդհանրական, եւ տրամախոհութիւն հանդերձ պատճառաւ՝ գիտութիւն ընդհանուր, զինչ զանազանին միմեանց: 22 Առ որս պարտ

է ասել, եթէ կարծիք հանդերձ պատճառաւ եզրակացութիւն առաջարկութեանց է, իսկ տրամախոհութիւն գտաւ զառաջարկութեանց՝ ի հասարակաց խոստովանութեանց է, եւ հիւսող եւ եզրացուցիչ:

23 Արդ այսոցիկ այսպէս եղելոց, պարտ է գիտել, թէ ի զգայութեանց ծնանի հմտութիւն, եւ յառանց պատճառի կարծեաց՝ ներհմտութիւն. այլ եւ ի զգայութենէ եւ յերեւակայութենէ ծնանի ներհմտութիւն: 24 Իսկ տրամախոհութենէ եւ ի հանդերձ պատճառաւ կարծեաց ծնանի արհեստ, իսկ ի տրամախոհութենէ եւ ի մտաց՝ մակացութիւն:

25 Քանզի յորժամ առնուն սկզբունս, որ պէտս ունին ապացուցութեանց, այն ինչ ի տրամախոհութենէ ծնանի մակացութիւն: 26 Իսկ յորժամ առնուն սկզբունս, որք ոչ պիտանանան ապացուցութեան, այն ինչ ի մտաց ասեմք ծնանիլ զմակացութիւն: 27 Եւ արդ ահա, որպէս ասացաք, բազում աստիճանաւք ցուցաւ իմաստասիրութիւն պիտանացեալ. եւ եթէ լաւագոյն ամենայն արհեստից եւ մակացութեանց է իմաստասիրութիւն, որպէս եւ Պղատոն առ ոմն Թէոդորոս երկրաչափ յայտ առնէ ասելով, եթէ այսպիսի ինչ, ով Թէոդորէ, ոչ եկն երբէք առ ի մարդիկ եւ ոչ եկեսցէ երբէք պարգեւեալ առ ի յաստուծոյ:

28 Արդ, այսոցիկ այսպէս ելոց, ծանեաք, թէ վեց են սահմանք իմաստասիրութեան, եւ զպատճառսն գիտացաք. եւ ոչ միայն զսահմանսն, այլ եւ եթէ չորք են զանազանութիւնք սահմանաց իմաստասիրութեան: 29 Քանզի ոմանք յենթակայէ առնուն, որպէս գիտութիւն էակացն, ըստ որում էակք են, եւ գիտութիւն աստուածայնոց եւ մարդկայնոց իրողութեանց, եւ ոմանք ի կատարմանէ, որպէս իմաստասիրութիւն՝ խոկումն մահու եւ նմանիլ աստուծոյ ըստ կարողութեան մարդկան. եւ

յառաւելութենէ, որպէս արհեստ արհեստից եւ մակացութիւն մակացութեանց. իսկ ի ստուգաբանութենէ, որպէս սիրելութիւն իմաստութեան:

30 Եւ վասն այսորիկ չորք են զանազանութիւնք սահմանաց իմաստասիրութեան. վասն զի չորքդ մեծապատիւք էին առ պիթագորեանսն, որպէս եւ ինքեանք, երդմունս կատարելով ի Պիթագորաս, աւէին՝ Երզուեալ յաւանդողն մեզ զքառեակն՝ զմշտաբուխ աղբիւրն բնութեան: 31 Մշտաբուխ կոչէին զչորս թիւսդ՝ վասն չորից տարեցդ. եւ վասն այսորիկ մեծապատիւ էր առ պիթագորեանսն չորրեակդ, կամ վասն չորից տարեցդ, եւ կամ վասն չորից առաքինութեանց հոգւոյ, եւ կամ վասն զի չորք թիւք հանդերձ շարադրելով նախագունիւք իւրեանց՝ բացակատարեն զտասն թիւ: 32 Քանզի առնլով երիս՝ բացակատարէ եւթն. եւ դարձեալ, առնլով երկուս՝ բացակատարէ ինն, եւ առնելով մին՝ բացակատարէ տասն: 33 Իսկ տասն թիւդ կատարուն է, վասն զի ամենայն միակ առանձնական անուամբ մինչեւ ի տասն գոյանայ եւ յետ այնորիկ ի նոյն շրջապատի:

1 Ընդ այսոսիկ հանդերձ աստուծով եւ առաջիկայ պրակի ԴՐԱԿՔ ԺԴ

2 Եւ վասն զի ի յառաջագոյն ասացեալսն թուական պատճառս ասացաք, թէ վասն է՞ր վեց են սահմանք իմաստասիրութեան, պարտ է գիտել, եթէ թուականութեան երկուս տեսակք են՝ դար եւ կոճատ: 3 Եւ դար է, որ կարող գոյ յերկուս զոյգս բաժանիլ. որպէս չորք, որպէս վեց, որպէս ութ, որպէս տասն: 4 Իսկ կոճատ, որ ոչ կարող գոյ յերկուս զոյգս բաժանիլ. որպէս երեք, որպէս հինգ, որպէս եւթն, որպէս ինն: 5 Արդ ընդհանուր սկիզբն դարիցն եւ կոճատացն միակն է, իսկ դարին երկեակն:

6 Եւ տարակուսեն ոմանք, թէ երկեակն, թիւ գոլով, զիա՞րդ է սկիզբն: 7 Առ որս ասեմք, եթէ ոչ գոյ թիւ երկեակն. վասն զի ոչ ունի զյատկութիւն թուոյ յինքեան, վասն զի ամենայն թիւ բազմապատկելով մեծ թիւ բացակատարէ, քան շարադրելով. որգոն, երիցս երեք՝ ինն, եւ երկու երեք՝ վեց: 8 Ահաւաղիկ բազմապատկելով մեծ թիւ արար՝ ինն, քան թէ շարադրելով, որ է վեց: 9 Իսկ երկեակդ ոչ այդպէս. քանզի բազմապատկելով եւ շարադրելով զնոյն թիւ բացակատարէ՝ զչորսն. երկիցս երկու՝ չորս. եւ երկու երկու՝ չորք: 10 Ուստի յայտ է, թէ երկեակդ ոչ է թիւ, այլ լոկ սկիզբն թուոյ:

11 Այսոցիկ այսպէս ելոց, պարտ է գիտել, եթէ եւթն թիւդ կոյս լսի, որպէս Աթենայ եւ ժամանակ: 12 Եւ կոյս՝ վասն զի ամենայն թիւ ի ներքոյ տասնեկիդ կամ ծնանի զոք կամ ծնանի յումեքէ. իսկ եւթն ոչ ծնանի զոք ի ներքոյ տասնեկիդ եւ ոչ ծնանի յումեքէ, որգոն, երկուք ծնանի զչորս ի ձեռն բազմապատկութեան, եւ երեք՝ զինն: 13 Իսկ չորք ծնանի յերկուց, եւ ծնանին զութ ըստ երկուց բազմապատկութեանց: 14 Նոյնպէս եւ հինգ ծնանի զտասն ի ձեռն երկուց բազմապատկութեանց: 15 Իսկ վեց ծնանի յերից ըստ նորին բազմապատկութեանց: 16 Իսկ ութն՝ ի չորից ըստ նորին բազմապատկութեանց: 17 Իսկ ինն՝ յերից ըստ երից բազմապատկութեանց: 18 Իսկ տասն ի հնգէ ըստ երկուց բազմապատկութեանց: 19 Իսկ եւթն թիւդ, որպէս յառաջագոյն ասացաք, ոչ ծնանի զոք եւ ոչ ծնանի յումեքէ ի ներքոյ տասնեկիդ:

20 Արդ այսպէս եւ Աթենայ կոյս լսի, վասն զի ասէին արտաքինքն զԱթենայէ, թէ ի գլխոյն Արամագղայ ծնաւ: 21 Իսկ ժամանակ կոչի, վասն զի եւ տղայք, ծնանելով վեցամսեայք եւ ութամսեայք, ոչ ապրին. իսկ եւթնամսեայք ապրին: 22 Եւ

դարձեալ, վասն զի տղայքն բնաւորեցան յեւթներորդ ամսեանն հանել ատամունս եւ յեւթն ամին փոփոխել:

1 Ընդ այսոսիկ հանդերձ աստուծով եւ առաջիկայ պրակի

ՊՐԱԿՔ ԺԵ

2 Եւ վասն զի ի ձեռն սահմանաց որպէս մի ինչ գոյացեալ զիմաստասիրութիւն ուսաք, եկեցուք այսուհետեւ եւ որպէս բազմամասն ինչ զնա գոլով ընդ բաժանմամբ ստորարկեցուք: 3 Վասն զի ի ձեռն բաժանման ստուգաբար զմասունս նորա իմանամք, իսկ ի ձեռն մասանցն ստուգաբար զբոլորն գիտեմք: 4 Եւ դարձեալ, զիտելով ստուգաբար զմասունս նորա, կարող լինիմք ստուգաբար գիտել, թէ որպիսի՞ շարադրութիւնք իմաստասիրութեան յորպիսի՞ մասունս վերաբերին, զի մի որք ի տեսականն վերաբերին առ տգիտութեան կարծեսցուք ի գործականն վերաբերիլ, եւ որք ի գործականն՝ ի տեսականն:

5 Եւ արդ, վասն զի բաժանման յիշատակ արարաք, նախ թէ զի՞նչ է բաժանումն եւ մակաբաժանումն եւ ստորաբաժանումն՝ ուսցուք: 6 Եւ պարտ է գիտել, թէ բաժանումն է առաջին հատումն ենթակայ իրողութեան, որգոն, յորժամ ասեմք, եթէ ի կենդանեացն ոմանք բանականք են եւ ոմանք անբանք:

7 Իսկ մակաբաժանումն է երկրորդ հատումն նորին ենթակայ իրողութեան ըստ այլ յեղանակի եղեալ, որպէս յորժամ՝ զկենդանին վերատին բաժանելով ասեմք՝ եթէ ի կենդանեացն ոմանք մահկանացուք են եւ ոմանք անմահք:

8 Իսկ ստորաբաժանումն է բաժանեցելոյ մասինն հատումն, որպէս յորժամ բաժանեցելոյ զկենդանին ի բանականն եւ յանբանն, դարձեալ զբանականն ստորաբաժանեմք ի մահկանացու եւ յանմահ. եւ

դարձեալ զմահկանացուն բաժանեմք ի մարդ եւ ի ձի եւ յայսպիսիս: 9 Նոյնպէս եւ իմաստասիրութիւն բաժանի ի տեսականն եւ ի գործականն, զի ի ձեռն տեսականին գիտացուք զամենայն գոյսս. իսկ ի ձեռն գործականին ուղղութիւն արասցուք բարուց մերոց:

10 Եւ արժան է խնդրել, թէ վասն է՞ր յերկուս բաժանի իմաստասիրութիւն, ի տեսականն ասեմ եւ ի գործականն, եւ ոչ ի մի կամ ի բազումս: 11 Եւ պարտ է ասել, եթէ ի մի ոչ կարող գոյ լինել բաժանումն. վասն զի ոչ երբէք բաժանումն վասն միոյ ուրուք բնաւորեցաւ լինել, այլ եւ ոչ ի բազումս, քանզի բաժանումն լսի երկատութիւն, այսինքն յերկուս որոշել զայս ինչ յայսմանէ ընտրողաբար, եւ ոչ կոտորել ի բազումս շփոթաբար:

12 Բայց բաժանեցաւ յերկուս իմաստասիրութիւն վասն երից պատճառաց:

13 Նախ եւ առաջին այս. եթէ վասն այնորիկ իմաստասիրութիւն ի տեսականն եւ ի գործականն բաժանեցաւ, վասն զի էակացեալ է ի մեզ տեսականն եւ գործականն:

14 Եւ տեսականն այսպէս, որպէս յայտ առնեն մանկունք ամենեքեան, հարցասէքք գոլով ի զրոյցս, այսինքն հետաքրքիրք գոլով. քանզի իւրաքանչիւր ոք ի մէնջ ախորժէ լսել ինչ:

15 Իսկ եւ գործականն նոյնպէս էակացեալ է ընդ մեզ, որպէս յայտ առնէ հոգի՝ ոչ երբէք դադարելով. քանզի ի ննջելն ոչ երբէք դադարէ յածելով ընդ երազս, այլ եւ յորժամ ոչ ննջեմք եւ ոչ ունիմք գործել ինչ, կամ մազ ի հերոյ ճողեմք, եւ կամ շիւղ ինչ շարժեմք: 16 Արդ վասն զի էակացեալ է ի մեզ տեսականն եւ գործականն, վասն այսորիկ իմաստասիրութիւն յայսոսիկ բաժանի:

17 Իսկ երկրորդ պատճառ այս է յերկուս բաժանելոյ, որպէս յառաջագոյն ուսաք, իմաստասիրութիւն է նմանութիւն

աստուծոյ, որ ունի երկու զաւրութիւնս՝
 գտեսականն եւ զգործականն: 18 Տեսա-
 կան է՝ ըստ որում զամենայն գոյսս ճանա-
 չէ, իսկ գործական է՝ ըստ որում արարիչ
 գոյ: 19 Վասն այսորիկ եւ իմաստասիրու-
 թիւն յերկուս բաժանի՝ ի տեսականն եւ ի
 գործականն, զի ի ձեռն տեսականին տպա-
 ւորեցցէ յինքեան գտեսական զաւրութիւն
 աստուածութեանն. իսկ ի ձեռն գործակա-
 նին՝ զգործական զաւրութիւնն, խնամ
 տանելով հոգւոց մարդկան եւ ի տգիտու-
 թենէ ի ճշմարիտ գիտութիւն ածելով:

20 Երրորդ պատճառ այս է. իմաստա-
 սիրութիւն գիտաւորութիւն ունի զհոգիս
 մարդկան զարդարել: 21 Իսկ հոգիք
 մարդկան երկուս զաւրութիւնս բնաւորե-
 ցան ունել՝ տեսական եւ կենդանական:
 22 Եւ տեսական է այս՝ միտք, տրամախո-
 ճութիւն, կարծիք, զգայութիւն, երեւակա-
 յութիւն, վասն որոյ յառաջագոյն ասա-
 ցաք: 23 Իսկ կենդանականն ունի զայսո-
 սիկ. կամաւորութիւն, ընտրողութիւն,
 յաւժարութիւն, բարկութիւն, ցանկութիւն:
 24 Վասն այսորիկ եւ իմաստասիրութիւն
 յերկուս բաժանեցաւ՝ ի տեսականն եւ ի
 գործականն, որպէս զի ի ձեռն տեսակա-
 նին զգիտնական զաւրութիւնսն հոգւոյն
 զարդարեցէ, իսկ ի ձեռն գործականին
 զկենդանականսն: 25 Վասն զի գործա-
 կանն ուսուցանէ մեզ ոչ առնել ինչ ըստ
 բարկութեան եւ ոչ ցանկալ ինչ անպատե-
 հիցն: 26 Արդ այսոքիկ, թէ վասն է՞ր ի-
 մաստասիրութիւն յերկուս բաժանեցաւ՝ ի
 տեսականն եւ ի գործականն:

27 Եւ պարտ է գիտել, թէ երկաքան-
 չիւր ոք ի սոցանէ յաղթահարին ի մի-
 մեանց եւ յաղթահարեն զմիմեանս. քանզի
 տեսականն յաղթահարէ զգործականն ըստ
 ենթակային, քանզի տեսականին ամենայն
 գոյք ենթակային առ ի գիտել, իսկ գործա-
 կանին՝ մարդկային միայն հոգիք, քանզի
 զմարդկային միայն զհոգիս զարդարէ, եւ

ոչ զանբանիցն: 28 Իսկ տեսականն եւ
 զանբանից եւ զբանաւորաց զբնութիւնս
 գիտէ: 29 Իսկ գործականն յաղթահարէ
 գտեսականն ըստ կատարմանն, վասն զի
 կատարումն տեսականին ճշմարտութիւն
 է, իսկ կատարումն գործականին՝ բարին.
 զի ի ձեռն գործականին զարդարէ զբարսն,
 ի բաց կտրելով զախտսն, գործելով զբա-
 րին: 30 Իսկ ի ձեռն տեսականին զճշմար-
 տութիւն, վասն զի տեսականն է, որ ու-
 սուցանէ մեզ զճշմարտութիւն գոյիցն:

31 Իսկ բարին պատուականագոյն է
 քան զճշմարիտն, որպէս ընդհանրականա-
 գոյն եւ ներպարունակական, քանզի ամե-
 նայն որ ճշմարիտ է, նա եւ բարի է, այլ ոչ
 ամենայն բարի ճշմարիտ է. քանզի գտա-
 նեմք երբեմն եւ զսուտն բարի, որպէս զոր
 ասելոցս եմք: 32 Ետ ոմն ցոմն յաւանդ
 սուսեր, եւ ի ժամանակի բարկութեան չո-
 գաւ խնդրել, որպէս զի սպանումն արաս-
 ցէ, իսկ նա ուրացաւ, թէ ոչ ինչ ետուր
 ցիս, եւ ստեաց: 33 Եւ ահա սուտ, որ բարի
 գոյ:

1 Ընդ այսոսիկ հանդերձ աստուծով եւ
 առաջիկայ պրակի՝

ՊՐԱԿՔ ԺԶ

2 Եւ վասն զի զիմաստասիրութիւն ի
 տեսականն եւ ի գործականն երկատեցաք,
 պարտ է գիտել, զի երկաքանչիւր ոք յեր-
 կատելոց մասանցս ստորաբաժանի: 3 Եւ
 նախ եւ առաջին տեսականն, վասն զի պա-
 տուականագոյն է, քան զգործականն,
 վասն զի տեսականին ամենայն գոյք են-
 թակային, իսկ գործականին միայն մարդ-
 կային հոգիք:

4 Եւ պարտ է գիտել, եթէ այլաբար
 Պղատոն ստորաբաժանէ զտեսականն եւ
 այլաբար Արիստոտէլ: 5 Քանզի Պղատոն
 ստորաբաժանէ զտեսականն ի բնաբանա-
 կանն եւ յաստուածաբանականն, վասն զի
 ոչ կամի զուսումնականն մասն գոլ իմաս-

տասիրութեան, այլ նախակրթութիւն ինչ, որպէս գրքերթողականն եւ զճարտասանականն. ուստի եւ առաջի իւրում համալսարանին մակագրեաց՝ Աներկրաչափ ոք մի ներսամտեսցէ: 6 Արդ զայս մակագրեաց այսպէս, վասն զի բազում իրս Պղատոն իմաստասիրէ, աստուածաբանէ եւ վասն աստուածաբանութեանն կահաւորի: 7 Իսկ ուսումնականն գործակից լինի առ ի գիտել զաստուածաբանութիւնն, որոյ մասն ինչ է երկրաչափութիւնն:

8 Իսկ Արիստոտէլ ստորաբաժանէ զտեսականն ի բնաբանականն, յուսումնականն եւ յաստուածաբանականն: 9 Վասն զի եւ զուսումնականն, որպէս մակացութիւն, մասն իմաստասիրութեան ստորագրէ: 10 Եւ արդ այսոքիկ այսպէս:

11 Բայց պարտ է գիտել, թէ վասն է՞ր յերիս բաժանի տեսականն: 12 Վասն որոյ ասեմք, թէ տեսականին ամենայն գոյք ենթակային առ ի գիտել. իսկ ամենայն գոյք եռակի են՝ կամ ենթակայութեամբ եւ մակամտածութեամբ նիւթաւորք գոն, որպէս փայտ եւ քար եւ այլքն ամենայն ի տեսանելեացն: 13 Քանզի այսոքիկ եւ ենթակայութեամբ եւ մակամտածութեամբ նիւթաւորք գոն, վասն զի ոչ է կարողութիւն զքար եւ զփայտ առանց նիւթոյ իմանալ: 14 Եւ կամ ենթակայութեամբ եւ մակամտածութեամբ իսկ աննիւթք, որպէս աստուած, հրեշտակ, միտք, հոգի: 15 Քանզի այսոքիկ եւ ենթակայութեամբ աննիւթք են եւ մակամտածութեամբ, վասն զի ոչ գոյ կարողութիւն նիւթաւոր իմանալ զաստուած կամ զհրեշտակս, կամ զմիտս, կամ զհոգի: 16 Եւ կամ ենթակայութեամբ նիւթաւորք գոն, իսկ մակամտածութեամբ աննիւթք, որպէս ձեւք, քանզի ձեւք ենթակայութեամբ նիւթաւորք գոն: 17 Քանզի ոչ կարէ եռանկիւնին եւ քառանկիւնին կամ այլ ձեւք առանց նիւթոյ բաղկանալ. այլ կամ ի քարում, եւ կամ ի փայտում, եւ

կամ յայլ ինչ նիւթում ունի զգոյութիւն:

18 Իսկ մակամտածութեամբ աննիւթք գոն, քանզի յորժամ երեւակայէ ոք զձեւս ի տրամախոհութեան, զնա ինքն զձեւն ըստ ինքեան տպաւորէ ի մակամտածութեան: 19 Քանզի որպէս մոմ առատպելով յինքեան զգիր մատանւոյ, զնոյն ինքն առանձին զգիրն առատպէ յինքն, եւ ոչ այլ ինչ նիւթ առնու ի մատանւոյն, ըստ նմին աւրինակի եւ տրամախոհութիւն, երեւակայելով յինքեան զձեւս, ոչ ինչ առնու ի նիւթոյ, այլ զնոյն ինքն զձեւս երեւակայէ եւ տրամատպաւորէ յինքեան: 20 Եւ արդ, վասն զի տեսականին ամենայն գոյք ենթակային առ ի գիտել, իսկ գոյքք, որպէս ասացաք, եռակի են, վասն այսորիկ եւ տեսականն յերիս բաժանեցաւ. ի բնաբանականն, յուսումնականն եւ յաստուածաբանականն:

21 Եւ պարտ է գիտել, զի բնաբանականն կահաւորի վասն այնոցիկ, որք ենթակայութեամբք եւ մակամտածութեամբ, նիւթաւորք գոն: 22 Իսկ ուսումնականն կահաւորի վասն այնոցիկ, որք ենթակայութեամբ նիւթաւորք գոն, իսկ մակամտածութեամբ աննիւթք: 23 Իսկ աստուածաբանականն՝ վասն որք ենթակայութեամբք եւ մակամտածութեամբք աննիւթք: 24 Արդ այսոքիկ այսպէս ելոց, ասացուք եւ վասն դասաւորութեան նոցին:

25 Եւ պարտ է գիտել, զի բնաբանականն զառաջինն ընկալաւ դաս, որպէս սննդակից եւ հուպ ի մեզ, եւ որպէս ամենեւիմբ նիւթական: 26 Իսկ ուսումնական զմիջինն ընկալաւ դասաւորութիւն, այսինքն ի մէջ բնաբանականին եւ աստուածաբանականին, որպէս երկոցունց հաղորդ, վասն զի եւ նիւթաւոր է, որպէս բնաբանականն, եւ աննիւթ որպէս աստուածաբանականն: 27 Իսկ աստուածաբանականն ի հարկէ զվերջինն ընկալաւ դասաւորութիւն, վասն զի ոչ է կարողութիւն յետ

բնաբանականին յաստուածաբանականն ամբառնալ. վասն զի եւ ոչ է պարտ յամենեւիմբ նիւթականացն՝ այն ինչ յամենեւին աննիւթականս մատչել. ապա եթէ ոչ՝ գնմանսն կրեմք այնոցիկ, որք բազում ժամանակս յաղջամղջին տեղուջ կացեալք, այն ինչ առ արեգակն հայել ձեռնարկեն, որք եւ նոյնժամայն կուրանան: 28 Արդ այսպէս որք յամենեւիմբ նիւթականացն յամենեւիմբ աննիւթականս մատչել, զորս առակելով քերթուածինն վասն Ոտոսի եւ Եփրայտոսի, որք զՈսայ զլեառն ի վերայ Ոլիմպիոսի յաւժարեցան դնել եւ ի վերայ զՈսայ զտերեւաշարժն զԲիլոն, որպէս զի երկին ճեմարան եղիցի. որ նշանակէ ոչ այլ ինչ, այլ եթէ իմաստասէրք գուրով ձեռնարկեցին առանց ուսումնականին յամենեւիմբ նիւթականացն յամենեւիմբ աննիւթականսն գուր, այսինքն ի բնաբանականացն յաստուածաբանականսն ամբառնալ:

29 Եւ զի պարտ է յետ բնաբանականին զուսումնականն ի կիր առնուլ, պատուիրեաց հրաշալին Պղոտինոս¹ ասելով, թէ աւանդելի է նորագունիցն զուսումնականն առ ի յընտանեցուցանել զանմարմին բնութիւնն, յորոց ձեռն անմարմին բնութիւնն, գայ ի գիտութիւն:

30 Բայց տարակուսեն ոմանք ասելով, եթէ ոչ միայն ուսումնականն ուսանի առ ի մէնջ, այլ եւ բնաբանականն եւ աստուածաբանականն, վասն է՞ր սա միայն լսի ուսումնական: 31 Առ որս պատասխանատրեն պիթագորականք ասելով, թէ յերաւի սա միայն լսի ուսումնական, վասն զի ի տրամախոհութեան ունի զգոյութիւն: 32 Իսկ որ ուսանիլն բնաւորեցաւ, տրամախոհութիւն միայն է, քանզի միտք պարզաբար ըմբռնումն գոյիցն է:

1 Ընդ այսոսիկ հանդերձ աստուծով եւ առաջիկայ պրակֆ

ՊՐԱԿՔ ԺԷ

2 Բաժանեալ զտեսականն ի բնաբանականն եւ յուսումնականն եւ յաստուածաբանականն, եկեսցուք այսուհետեւ եւ զիւրաքանչիւր ոք ի սոցանէ ստորաբաժանեցուք: 3 Այլ վասն զի երկատուծիւն բնաբանականին եւ աստուածաբանականին բազմախիտ է եւ մեծի լսողութեան ունի պէտս, գայսոսիկ մեծագունիցն թողեալ իրողութեանց, եկեսցուք եւ ասացուք զերկատուծիւն ուսումնականին. ասացուք եւ զհաւաստին սակս ուսումնականին, քանզի է եւ այլ բազմախիտ երկատուծիւն, որք ի խորագոյն իրողութիւնս ասացին: 4 Բայց սակայն զոր ասելոցս եմք՝ ստոյգ եւ հաւաստի է, զոր պարտ է մեզ հինգ գլխովք յայտ առնել: 5 Մի՛ նախ եւ առաջին, թէ ո՞ք եւ որչա՞փ իցեն տեսակք ուսումնականին: 6 Երկրորդ, յորում ասեմք զպատճառս քանիութեան: 7 Երրորդ, յորում վասն տեսականն եւ նոցին դասաւորութեան ճառեմք: 8 Չորրորդ, յորում ասեմք, թէ ո՞ք են գտաւղք տեսական ուսումնականին: 9 Հինգերորդ, յորում ասեմք, թէ ո՞ք ոմանք տեսակք յարակային տեսակացս այսոցիկ:

10 Արդ եկեսցուք յառաջին գլուխն եւ ասացուք, թէ ո՞ք եւ որչափ իցեն տեսակք ուսումնականին: 11 Եւ պարտ է գիտել, թէ չորք են տեսակք՝ թուականն, երաժշտականն, երկրաչափականն եւ աստեղաբաշխականն:

12 Եկեսցուք եւ յերկրորդ գլուխն եւ ասացուք զպատճառս քանիութեան տեսական ուսումնականին: 13 Եւ պարտ է գիտել, թէ ուսումնականն քանակիւն գոյանայ եւ այսոքիւք կահաւորի. կամ թուականաւն, որպէս ինքն իսկ թուականն, որ է քանակ, եւ կամ բաղադանութեամբ հնչմանց, որպէս երաժշտականն, քանզի եւ

1 Ուղղում եմք ըստ յուն. Πλωτίνος

այս քանակ է. քանզի խնդրէ՝ թէ ո՞ր է, որ զերկպատիկ բան ունի, եւ ո՞ր է, որ զկիսաբոլոր, եւ ո՞ր զմակեռակն, եւ ո՞ր զմակքառակն: 14 Եւ կամ տարակացութեամբ երկրի, որպէս երկրաչափականն, քանզի եւ այս քանակ է: 15 Եւ կամ շարժմամբ երկնային մարմնոյն, որպէս աստեղաբաշխականն, քանզի եւ այս քանակ է. քանզի ունին շարժմունք տարակացութիւնք, ըստ որոց շարժին:

16 Արդ այսոցիկ այսպէս ելոց եւ ծանուցելոց, եթէ ուսումնականն քանակիւն գոյանայ, պարտ է գիտել, թէ քանակն երկակի է. կամ շարունակ է, կամ տարրորոշ: 17 Եւ շարունակ քանակ է, որոյ մասունքն առ մի սահման շարամերձին, որպէս որմոյ քար, որ է շարունակ քանակ, քանզի եթէ զաւրութեամբ հատանես եւ բաժանես ի բազում տեղիս զամենայն մասունս նորա, հատեալքն եւ բաժանեալքն առ մի սահման շարամերձին, քանզի այս հատած յայն հատած շարամերձեալ իմանի, յորժամ իմանալի զգիծն առնուցուս ի լինել բաժանման: 18 Քանզի իմանալի գիծն զաւրութեամբ առնելով զբաժանմունս եւ միջակ գոլով զաւրութեամբ բաժանեցելոցն, գտանի այս մասն շարամերձեալ իմանալի գծով յայն, եւ այն՝ իմանալի գծով յայլ. եւ ի ձեռն իմանալի գծոյն շարամերձեալք գոն միմեանց: 19 Բայց ասասցուք զաւրութեամբ բաժանեալ զշարունակն եւ ոչ ազդմամբ, վասն զի ազդմամբ բաժանեալ տարրորոշ առնէ եւ ընկենու ի բնութենէ շարունակին: 20 Իսկ տարրորոշ քանակ է տրամորոշեալն. եւ ոչ ինչ ունելով ընդ մէջ, որով կարող գոյ շարամերձեալ զայս մասն առ այն, որպէս ի թիւսդ, քանզի տասն տարրորոշեալ է, թէպէտ եւ ի միակացն առնու զնա շարակացեալ ի հնգէ եւ ի հնգէ, ոչ ունի այլ թիւ ի մէջ հնգիցն, որով շարամերձին առ միմեանս, քանզի թէ առնու զմիակն ի մէջ

հնգիցն՝ անկանի ի տասն լինելոյ: 21 Եւ արդ այսոցիկ այսպէս:

22 Բայց պարտ է գիտել, եթէ իւրաքանչիւր ոք ի տեսակաց քանակիս երկակի ասի գոլ. քանզի եւ տարրորոշն երկակի ասի, վասն զի է որ ըստ ինքեան ասի, եւ է որ ըստ բաղազանութեան: 23 Եւ ըստ ինքեան, որպէս յորժամ զթիւ ըստ ինքեան առանձինն առնումք, որգոն, յորժամ գտասն ինքն ըստ ինքեան առնումք, ոչ բաղազանելով զնա առ այլ թիւ: 24 Իսկ ըստ բաղազանութեան է, յորժամ զոք մի ի թուոցն բաղազանեմք առ այլ թիւ, որպէս գտասն առ հինգ, ասելով, թէ տասն հնգին կրկնապատիկ է: 25 Այլ եւ շարունակ քանակն երկակի է, քանզի է որ անշարժ է, եւ որ շարժուն. անշարժ որպէս երկիր, վասն զի ոչ շարժի յայսմ տեղոյ յայլ տեղի, իսկ շարժուն՝ որպէս երկին, որ է մշտաշարժ:

26 Արդ այսոցիկ այսպէս ելոց, վասն զի ուսումնականն, որպէս յառաջագոյն ասացաք, քանակիւն բաղկանայ. իսկ զքանակն երկակի ասացաք՝ է որ տարրորոշ, եւ է որ շարունակ: 27 Եւ դարձեալ, զիւրաքանչիւր ոք ի նոցանէ երկակի. գտարրորոշն ըստ ինքեան եւ ըստ բաղազանութեան, եւ զշարունակն անշարժ եւ շարժուն, որք ընդ ամենայն չորք լինին տեսակք:

28 Արդ, ըստ համեմատութեան այսց չորից տեսակաց քանակի՝ չորս ունի եւ ուսումնականն, որ քանակիւն գոյանայ. զթուականն, զերաժշտականն, զերկրաչափականն, զաստեղաբաշխականն. յորոց թուականն բաղկանայ ի տարրորոշ քանակէն, որ ըստ ինքեան. իսկ երաժշտականն՝ ի տարրորոշ քանակէն, որ ըստ բաղազանութեան. իսկ երկրաչափականն՝ յանշարժ շարունակ քանակէն. իսկ աստեղաբաշխականն՝ ի շարժուն շարունակ քանակէն: 29 Ընդ այսոսիկ եւ երկրորդ գլուխն:

30 Եկեսցուք եւ յերրորդ գլուխն եւ ասասցուք զկարգ դասաւորութեան տեսակաց ուսումնականին: 31 Եւ պարտ է գիտել, եթէ թուականն եւ երաժշտականն զառաջին կարգ դասաւորութեան ընկալան, քան զերկրաչափականն եւ զաստեղաբաշխականն, վասն զի թուականն եւ երաժշտականն տարրոշ քանակիւն բաղկանան. իսկ երկրաչափականն եւ աստեղաբաշխականն շարունակ քանակիւն բաղկանան: 32 Իսկ տարրոշ քանակն պատուականագոյն է, քան զշարունակն, վասն զի տարրոշ քանակն կարող գոյ անշփոթաբար զանագան տեսակս ընդունել, որպէս քսան եւ հինգն, տարրոշ քանակ գոլով՝ անշփոթաբար ընկալաւ զանագան տեսակս, բոլոր գոլով եւ քառանկիւնի: 33 Եւ բոլոր, վասն զի որպէս ի բոլորումն սկիզբն շարամերձեալ գոյ կատարման, վասն զի կարող գոյ ի բոլորումն նոյն նշան եւ սկիզբն լինել եւ կատարումն: 34 Այսպէս եւ աստանաւր ի հնգէ սկիզբն արարեալ բազմապատկաբար աւարտեցաւ բոլորաբար ի նոյն հինգ, որպէս հնգիցս հինգ՝ քսան եւ հինգ. ահա ի հնգէ սկիզբն արարեալ, աւարտեցաւ ի հինգ:

35 Իսկ քառանկիւնի դարձեալ, վասն զի ամենայն թիւ յինքեան բազմապատկելով զքառանկիւնի թիւն բացակատարէ, որպէս երիցս երեք՝ ինն, չորիցս չորս՝ տասն եւ վեց. նոյնպէս եւ հնգիցս հինգ՝ քսան եւ հինգ: 36 Իսկ շարունակ քանակն ոչ կարէ անշփոթաբար զանագան տեսակս ընդունել, վասն զի մոմ, որ է շարունակ քանակ, եթէ ոք ստեղծանէ զնա ըստ Տիգրանայ կերպարանին, ոչ կարէ այլ կերպարան ընդունել, եթէ ոչ յառաջագոյն ի բաց եղծանի. ապա եթէ ոչ՝ շփոթումն լինի:

37 Արդ վասն զի տարրոշ քանակն պատուականագոյն է, քան զշարունակն, վասն այսորիկ թուականն եւ երաժշտականն, տարրոշ քանակիւն բաղկանալով,

զառաջին դաս ընկալան, քան զերկրաչափականն եւ զաստեղաբաշխականն: 38 Իսկ թուականն դարձեալ յառաջագոյն, քան զերաժշտականն, վասն զի թուականն, որպէս յառաջագոյն ասացաք, տարրոշ քանակիւն, որ ըստ ինքեան է, բաղկանայ: 39 Իսկ երաժշտականն՝ տարրոշ քանակիւն, որ ըստ բաղադանութեան: 40 Եւ նախագոյն է ըստ ինքեանն, քան ըստ բաղադանութեան, քանզի եւ պարզաբար լինելն, քան զայսպէս լինելն: 41 Իսկ երկրաչափականն յառաջագոյն է, քան զաստեղաբաշխականն, վասն զի երկրաչափականն ի շարունակ քանակէն՝ որ անշարժն է, բաղկանայ: 42 Իսկ աստեղաբաշխականն ի շարունակ քանակէն, որ շարժունն է: 43 Իսկ անշարժն յառաջագոյն է, քան զշարժունն. զի անշարժն է սկիզբն շարժման, զի ամենայն որ հանդերձեալ է շարժիլ՝ ի դադարմանէ եւ յանշարժէն ունի սկիզբն շարժման: 44 Այսոքիկ եւ վասն դասաւորութեան տեսակաց ուսումնականին:

45 Եկեսցուք այսուհետեւ եւ ի չորրորդ գլուխն եւ ասասցուք, թէ ո՞րք ոմանք են գտողք այսոցիկ տեսակաց: 46 Եւ պարտ է գիտել, եթէ զթուականն փիւնիկեցիք գտին, որպէս վաճառականք գոլով եւ թուականութեան պէտս ունելով առ ի համարել: 47 Իսկ զերաժշտականն՝ թրակացիք, վասն զի անտի էր Որփեսս, զորմէ ասեն նախ գտանել զերաժշտականն: 48 Իսկ զաստեղաբաշխականն՝ քաղզեացիք, վասն անամպ եւ հանապազաջինջ գոլով աւզոցն՝ դիւրաւ կարացին ըմբռնել զշարժումնս աստեղաց: 49 Իսկ զերկրաչափականն եգիպտացիք գտին ի հարկէ, քանզի Նեղոս գետոյ ի ծովանալ ի վերայ Եգիպտոսի եւ խառնակել զսահմանս արտավարացն կռիւք եւ սպանմունք լինէին եգիպտացւոցն ի վերայ իւրաքանչիւր սահմանի, մինչեւ իմացան չափ մի, որում անուն էր սպանակ. զայն դնելով

գտանէին զսահմանս իւրաքանչիւր արտավարի, ուստի եւ ապա երկրաչափութիւն գտաւ:

50 Եկեսցուք այսուհետեւ ի հինգերորդ գլուխն եւ ասացուք, թէ որպիսիք իցեն տեսակք յարակացեալք այսոցիկ տեսակաց: 51 Եւ պարտ է գիտել, եթէ թուականին յարակայանայ համարողականն, բայց զանագանին ի միմեանց, վասն զի թուականն զբնութիւն թուոց խնդրէ եւ քննէ, եւ որ ըստ ինքեան իմանի թիւ, այնու բաղկանայ եւ ոչ հատանէ զմիակն:

52 Իսկ համարողականն զգալի թուականութեամբն բաղկանայ եւ միակն հատանէ ի կէս եւ յերեակ եւ ի չորրեակ: 53 Իսկ երաժշտականին յարակայանայ նիւթական երաժշտականն, այսինքն որ փանդուամբք եւ փողովք եւ ծնծղայիւք բաղկանայ:

54 Իսկ ստոյգ երաժշտականն բանի միայն պիտանացեալ բաղկացուցանէ զինքն:

55 Իսկ երկրաչափականին յարակայանայ երկրաբաժանականն, վասն զի երկրաչափականն բանիւ բաղկանայ. իսկ երկրաբաժանականն՝ գործով: 56 Իսկ աստեղաբաշխականին յարակայանայ գնդականն, եւ զանագանին ի միմեանց, վասն զի աստեղաբաշխականն գիտութեամբ երկնային մարմնոյն շարժմամբ բաղկանայ, իսկ գնդականն՝ ամենայն գնդաձեւ մարմնով եւ նոցին բաժանմամբ, քանզի ասէ զպէսպէս հատմունս գնդաձեւականացն:

57 Եւ պարտ է գիտել, թէ մեծ է զաւրութիւն երաժշտականին, պէսպէս կրիւք ըմբռնելով զհոգին եւ տրամադրելով, որպէս յայտ առնեն մրմունջք եւ ողբք, ըստ ինքեանց տրամադրելով զհոգին: 58 Որպէս վիպասանեալ է ոմանց վասն Աղեքսանդրի, թէ ի խրատութեան ելով, երածիշտն զպատերազմականն նուագէր զմատն, եւ նա իսկոյն զինեալ արտաքս զիմեաց: 59 Իսկ դարձեալ երաժշտին զու-

րախանականն բախեալ զնուագս, նա անդրէն դարձեալ ի բազմականսն ճեմէր:

1 Ընդ այսոսիկ հանդերձ աստուծով եւ առաջիկայ պրակֆ

ՊՐԱԿՔ ԺԸ

2 Ուսեալք եթէ իմաստասիրութիւն բաժանի ի տեսականն եւ ի գործականն, եւ տեսականն՝ ի բնաբանականն եւ յուսումնականն եւ յաստուածաբանականն, եկեսցուք այսուհետեւ եւ ասացուք, եթէ ըստ որո՞ւմ յեղանակի եղեւ բաժանումն այսոցիկ. քանզի զբաժանումն գործականին յետ այսորիկ ունիմք ասել: 3 Այլ զի գայսոսիկ ուսցուք, ասացուք՝ եթէ որչափ եւ որպիսիք իցեն բաժանման յեղանակք:

4 Եւ պարտ է գիտել, եթէ ոմանք ութ յեղանակս ասեն զոլ բաժանման, եւ են այսոքիկ: 5 Որպէս ի սեռէ ի տեսակս, որպէս ի տեսակէ յանհատս, որպէս ի բոլորէ ի մասունս: 6 Եւ այս երկակի՝ կամ ի նմանամասնեայ լինի, կամ յանմասնամասնեայ: 7 Որպէս ի հոմանուն ձայնէ ի զանազան նշանակեալս, որպէս յէութենէ ի պատահումն, որպէս ի պատահմանէ յէութիւն, որպէս ի պատահմանէ ի պատահումն, որպէս ի միոջէ եւ առ մի:

8 Արդ, որպէս ի սեռէ ի տեսակս, յորժամ բաժանեմք զկենդանին ի բանականն եւ յանբանն: 9 Իսկ ի տեսակէ յանհատս, որպէս զհանուր մարդ բաժանեմք ի Սոկրատէս, ի Պղատոն, յԱղկիպիադէս եւ յիւրաքանչիւր անհատս: 10 Իսկ ի բոլորէ ի մասունս նմանամասնաբար, որպէս յորժամ զբոլոր երակն բաժանեմք ի փոքր երակս, որք նմանամասնաբարք են բոլորին. վասն զի զնոյն բնութիւն բոլորին ունին: 11 Իսկ ի բոլորէ ի մասունս անմասնամասնաբար, որպէս յորժամ զբոլոր գլուխն բաժանեմք յաչս, յականջս, յունչս, որք են աննմանք, վասն զի ոչ բոլորին եւ ոչ միմեանց նմանք գոն: 12 Իսկ ի հոմանուն

ձայնէ ի զանազան նշանակեալս, որպէս յորժամ զշուն ձայնդ բաժանեմք յերկնային եւ յերկրային եւ ի ծովային: 13 Իսկ յէութենէ ի պատահումն, որպէս յորժամ ասեմք, թէ ի մարդկանէ ոմանք սպիտակք են եւ ոմանք սեւաւք: 14 Իսկ ի պատահմանէ յէութիւն, որպէս յորժամ ասեմք, թէ սպիտակին ոմանք ձիւն են եւ ոմանք բուռ: 15 Իսկ ի պատահմանէ ի պատահումն, որպէս յորժամ ասեմք, թէ սպիտակին ոմանք ջերմ են եւ ոմանք ցուրտ. ջերմ որպէս կիր, ցուրտ որպէս ձիւն: 16 Իսկ ի միողէ, որպէս յորժամ ասեմք՝ բժշկական գիրք, բժշկական դեղ, բժշկական գործի: 17 Իսկ առ մին, յորժամ ասեմք՝ առողջային գիրք, առողջային տած, առողջային դեղք, վասն զի առ մին բացահայելով, այսինքն առ առողջութիւն, անուանեցաք զառողջայինս: 18 Եւ այսոքիկ այսպէս:

19 Բայց պարտ է գիտել, թէ յասացելոց յեղանակացդ երեք են ստուգապէս յեղանակք բաժանման, որպէս ի սեռէ ի տեսակս, որպէս ի բոլորէ ի մասունս, որպէս ի հոմանունն ձայնէ ի զանազան նշակեցեալսն: 20 Իսկ այլ յեղանակքն ոչ կարող գոն բաղկանալ, որպէս եւ առ ի մէնջ ցուցցին. վասն զի ոչ կարէ որպէս ի տեսակէ յանհատս լինել բաժանումն, զի անհատքն անբաւք եւ անորիչք են առ ի թուել, վասն զի ոմանք ապականին եւ ոմանք լինին, զորս ոչ կարեմք ընդ թուով արկանել: 21 Այլ եւ ոչ ի պատահմանէ յէութիւն է իսկապէս յեղանակ բաժանման. քանզի ասելն, թէ սպիտակին ոմն ձիւն է եւ ոմն բուռ, չէ իսկապէս յեղանակ բաժանման. վասն զի ոչ եթէ զսպիտակն զինքն ըստ ինքեան առանց մարմնոյ բաժանէ, այլ զմարմինն բաժանէ, յորում սպիտակն: 22 Իսկ մարմինն հուլթիւն է. ապա ուրեմն զէութիւնն յէութիւնն բաժանէ եւ ոչ զպատահումն յէութիւնն:

23 Եւ դարձեալ, ամենայն որ բաժանի՝ ի նմանն բաժանի եւ ոչ յաննմանն, վասն զի կենդանին բաժանելով բանաւորն եւ յանբանն, ի կենդանի բանաւորն եւ ի կենդանի անբանն բաժանեցաւ, այլ ոչ եթէ յոչ կենդանին, որ է աննման: 24 Իսկ պատահումն յէութիւնն բաժանելով՝ յաննման բաժանի: 25 Արդ ըստ այսմ յարացուցի եւ ոչ հուլթիւնն ի պատահումն բաժանելով իսկապէս յեղանակ բաժանման ասի, եւ ոչ դարձեալ պատահումն ի պատահումն բաժանելով. քանզի ասելն, թէ սպիտակին ոմանք ջերմ են եւ ոմանք ցուրտ, ոչ եթէ զպատահումն ինքն ըստ ինքեան բաժանէ զըստ ինքեանց պատահումնս. այլ զմարմինս բաժանէ, յորս պատահումնքն: 26 Այլ եւ ոչ ի միողէն եւ առ մին ասի յեղանակ բաժանման, այլ որպէս թիւ ինչ, վասն զի ի միողէն անորիչք եւ անթիւք են. ըստ նմին բանի եւ առ մին. Ապա ուրեմն երեք են իսկապէս յեղանակք բաժանման. որպէս ի սեռէ ի տեսակս, որպէս ի բոլորէ ի մասունս, որպէս ի հոմանունն ձայնէ ի զանազան նշանակեալս:

27 Բայց պարտ է եւ զպատճառսն յեղանակաց բաժանման իսկիցն եւ անիսկիցն ի բաժանմանէ յումեմնէ գտեալս ասել այսպէս եւ ըստ այսմ աւերինակի: 28 Ամենայն որ միանգամ բաժանելի է եւ բաժանի, կամ ըստ հուլթեան, կամ ըստ ինքեան բաժանի, եւ կամ ըստ պատահման. եթէ ըստ ինքեան բաժանի՝ կամ որպէս իր բաժանի, կամ որպէս ձայն: 29 Եւ եթէ որպէս իր բաժանի, այսոքիկ յեղանակք բաժանման լինին, որպէս ի սեռէ ի տեսակս, որպէս ի տեսակէ յանհատս, որպէս ի բոլորէ ի մասունս, որպէս ի միողէն եւ առ մին. քանզի այսոքիկ որպէս իր բաժանիլ բնաւորեցան: 30 Իսկ եթէ որպէս ձայն՝ յեղանակ բաժանման լինի որպէս հոմանունն ձայն ի զանազան նշանակիցեալս: 31 Իսկ եթէ ըստ պատահման բնաւորեցաւ բաժանիլ բաժանելին, այլքն եւս յեղանակք բա-

ժանման լինին, որպէս էութիւն ի պատահումն, որպէս պատահումն յէութիւն, որպէս պատահումն ի պատահումն:

1 Ընդ այսոսիկ հանդերձ աստուծով եւ առաջիկայ պրակի

ՊՐԱԿՔ ԺԹ

2 Ասացեալք զտրամատական յեղանակս, եկեսցուք եւ ասացուք որո՞ւմ յեղանակի բաժանի իմաստասիրութիւն ի տեսականն եւ ի գործականն: 3 Եւ պարտ է գիտել, եթէ որպէս սեռ ի տեսակս ոչ կարէ բաժանիլ, վասն զի յընդդիմաբաժանեալ տեսակսն ոչ գոյ տեսանել վերջին եւ առաջին. որպէս բաժանեցելոյ կենդանոյն ի բանականն եւ յանբանն ոչ գոյ ասել եթէ բանականն յառաջագոյն է, քան զանբանն, եւ կամ անբանն՝ քան զբանականն. այլ գոյգք եւ համայնք գոն: 4 Իսկ ի տեսականին եւ ի գործականին՝ է առաջին եւ վերջին. քանզի տեսականն առաջին է, վասն զի ձեռն տեսականին եւ բանի գայ ի գործականն, զի մի անբան եւ անպատճառ եղիցի գործականն: 5 Եւ յայտ է, թէ ոչ լինել բաժանումն ի տեսականն եւ ի գործականն, որպէս ի սեռէ ի տեսակս:

6 Երկրորդ, վասն զի յընդդիմաբաժանեալ տեսակսն ոչ ունի պէտս մինն միւսումն առ ի բաղկանալ. իսկ ի տեսականումն եւ ի գործականումն ոչ այսպէս, այլ պէտս ունի գործականն տեսականին, որով բաղկանայ եւ յարգարի, զի մի անբան եւ անպատճառ եղիցի: 7 Այլ պարտ է նախ տեսականաւն քննել զըստ բնութեան բարին եւ այնպէս նովաւ բաղկացուցանել զգործականն: 8 Ապա ուրեմն ոչ բաժանի իմաստասիրութիւն ի տեսականն եւ ի գործականն, որպէս սեռ ի տեսակս, այլ եւ ոչ որպէս տեսակ յանհատս, վասն զի անհատքն անբաւք եւ անպարունակելիք գոն. իսկ այսոքիկ ոչ են անբաւք, այլ երկուք միայն՝ տեսական եւ գործական:

9 Եւ դարձեալ, անհատքն մասամբ ցուցանին, իսկ այսոքիկ ոչ: 10 Յայտ է, թէ ոչ կարող գոյ իմաստասիրութիւն որպէս տեսակ յանհատս բաժանիլ ի տեսականն եւ ի գործականն: 11 Այլ եւ ոչ որպէս հոմանունն ձայն ի զանազան նշանակիցեալսն. վասն զի ի հոմանունսն ոչ գոյ առաջին եւ վերջին, վասն զի ոչ ոք ասէ, թէ երկնային շունն յառաջագոյն է, քան գերկրային, եւ կամ երկրայինն՝ քան զծովայինն: 12 Իսկ աստ, որպէս կանխաւ ցուցաք, յառաջագոյն է տեսականն քան զգործականն: 13 Ապա ուրեմն ոչ կարող գոյ իմաստասիրութիւն բաժանիլ ի տեսականն եւ ի գործականն՝ որպէս հոմանունն ձայն ի զանազան նշանակիցեալսն: 14 Այլ եւ ոչ որպէս էութիւն ի պատահումն, եւ ոչ որպէս պատահումն յէութիւն. վասն զի իմաստասիրութիւն ոչ է էութիւն ոչ տեսականն եւ ոչ գործականն, այլ պատահումնք: 15 Այլ եւ ոչ որպէս պատահումն ի պատահումն, վասն զի պատահումն ի պատահումն կամ որպէս սեռ ի տեսակս բաժանի, կամ որպէս էութիւն յէութիւն:

16 Արդ, ցուցաք, թէ ոչ որպէս սեռ ի տեսակս բաժանի, եւ ոչ որպէս էութիւն յէութիւն, վասն զի պատահումն է: 17 Այլ եւ ոչ որպէս բոլոր ի մասունս, ոչ նմանամասնաբար եւ ոչ աննմանամասնաբար. վասն զի նմանամասնաբարքն եւ միմեանց հոմանունաբար ասին եւ բոլորումն, իսկ տեսականն եւ գործականն թէպէտ եւ բոլորումն հոմանունաբար ասին, այլ ոչ միմեանց. այլ եւ ոչ աննմանամասնաբար: 18 Վասն զի աննմանամասնաբար բաժանեալքն ոչ բոլորումն եւ ոչ միմեանց ասին հոմանունաբար, իսկ տեսականն եւ գործականն թէպէտ եւ միմեանց ոչ ասին հոմանունաբար, այլ բոլորումն ասին. վասն զի եւ նա իմաստասիրութիւն է եւ նոքա: 19 Արդ, իմանամք յասացելոցդ, թէ որպէ՞ս ի միոջէ եւ առ մի եղեւ բաժանումն իմաստասիրութեան. քանզի որպէս ի միո-

Ղէ ումեքէ իմաստասիրութենէ անուանեցան իմաստասիրութիւն եւ տեսականն եւ գործականն:

20 Բայց սակայն Արիստոտէլ ասէ, թէ որպէս բոլոր ինչ ի մասունս բաժանեցաւ: 21 Եւ բարիոք ասէ, վասն զի տեսականն եւ գործականն մասունք իմաստասիրութեան են: 22 Եւ որպէս միոյ մասին պակասելոյ հարկ է զբոլորն անկատար գոյ, նոյնաւրինակ եւ գործականին ոչ ելոյ՝ անկատար է իմաստասիրութիւն. քանզի պարտ է կատարեալ իմաստասիրին ոչ միայն տեսականաւ, այլ եւ գործականաւ զարդարիլ:

23 Եւ եթէ ոք ասիցէ՝ յինչ եղեւ բաժանումն, ի նմանամասնակա՞նն թէ յանմանամասնականն. ասեմք, թէ ի նմանամասնականն, քանզի եւ բոլորումն եւ միմեանց հոմանունաբար ասին, որ է յատուկ եւ առանձին նմանամասնեայ՝ բոլորին եւ ինքեանց հոմանունաբար ասիլ: 24 Նմանապէս եւ աստ, զի որպէս իմաստասիրութիւն իմաստասիրութիւն ասի, այսպէս տեսականն եւ գործականն իմաստասիրութիւն ասին: 25 Եւ ոչ միայն այս, այլ եւ կարող գոյ տեսականն գործական ասիլ, եւ գործականն տեսական: 26 Եւ տեսականն գործական ասի, վասն զի գործ մտաց է, իսկ գործականն՝ տեսական, վասն զի ծնունդ տեսականին է գործականն, վասն զի նախ տեսականաւ գտեալ գողջախոհութիւն, բարի գոյ՝ գործելով, զնոյն յարդարեաց:

27 Արդ, ուսեալք՝ եթէ որպէս իմաստասիրութիւն բաժանեցաւ որպէս բոլոր ի մասունս նմանամասնաբար, եկեսցուք այսուհետեւ եւ ասացուք, թէ ըստ որո՞ւմ յեղանակի եւ տեսականն բաժանեցաւ ի բնաբանականն, յուսումնականն եւ յաստուածաբանականն: 28 Եւ պարտ է գիտել, թէ որպէս ի սեռէ ի տեսակս ոչ եղեւ բաժանումն, վասն զի յընդգիմաբաժանեալ

տեսակսն ոչ եղեւ բաժանումն, քանզի յընդգիմաբաժանեալ տեսակս ոչ է առաջին եւ վերջին: 29 Իսկ աստանաւր վասն զի նախ եւ առաջին բնաբանականն, ապա ուսումնականն եւ ապա աստուածաբանականն:

30 Եւ դարձեալ, թէ ոչ երբէք սեռ յերիս բնաւորեցաւ բաժանիլ, իսկ տեսականն յերիս. ի բնաբանականն, յուսումնականն եւ յաստուածաբանականն: 31 Եւ պարտ է գիտել, եթէ որպէս սեռ ի տեսակս ոչ եղեւ բաժանումն, վասն որոյ ասեն ոմանք, եթէ զիա՞րդ շնչականն սեռ գոյով յերիս բաժանեցաւ՝ ի կենդանին, ի կենդանաբոյսն եւ ի բոյսս: 32 Առ որս ասացուք, եթէ ցուցանել ունիմք՝ եթէ ոչ է բարիոք բաժանումդ այդ:

33 Դարձեալ ընդդէմ դնելով ասեն, թէ ահա ճարտասանականն սեռ գոյով յերիս բաժանի տեսակս. յատենականն, ի բաղխոհականն, ի կացրդականն: 34 Առ որս ասացուք, թէ ոչ է բարիոք բաժանումդ, եւ ոչ որպէս ի սեռէ ի տեսակս ասի բաժանիլ ճարտասանականն յայսոսիկ, վասն զի յընդգիմաբաժանեալ տեսակսն ոչ գոյ ժամանակական զանազանութիւն, որպէս բանականն եւ անբանն բաժանեալ ոչ ունին ժամանակական բաժանումն. քանզի ոչ ունիմք ասել՝ եթէ բանականն յանցեալ ժամանակի, եւ անբանն ի ներկայում կամ յապառնուոյն: 35 Իսկ անուանեալ տեսակք ճարտասանականիդ ժամանակական ունին առ միմեանս զանազանութիւնս, վասն զի բաղխոհականն վասն ապառնուոյ ժամանակի ունի զգոյութիւն. վասն զի յորժամ ոք ումեք խորհրդակից գոյ՝ վասն հանդերձելոյն խորհի: 36 Իսկ ատենականն վասն անցելոյ ժամանակին ունի զգոյութիւն. վասն զի ամենայն որ դատի՝ վասն այնոցիկ դատի, զորս գործեացն: 37 Իսկ կացրդականն յաղագս ներկային գոյանայ, վասն զի զաճումն առընթերակայից բա-

րեացն ունի յինքեան: 38 Ուստի յայտ է, թէ ոչ են իսկապէս տեսակք ի սեռէ բաժանեալքն. վասն որոյ ոչ է բարիոք բաժանումն ճարտասանականին յասացեալ տեսակսր:

39 Այլ եւ ոչ որպէս բոլոր ի մասունս ասի բաժանիլ տեսականն, ոչ ի նմանամանականսն եւ ոչ յաննամանամանականսն: 40 Ի նմանամանականսն, վասն զի թէպէտ եւ միմեանց ոչ ասին հոմանունաբար, այլ բոլորումն ասին, վասն զի եւ բնաբանականն տեսական ասի եւ ուսումնականն եւ աստուածաբանականն. վասն զի, որպէս բազում անգամ ասացաք, նմանամանականացն յատուկ այն է՝ եւ բոլորումն եւ միմեանց հոմանունաբար ասիլ: 41 Այլ եւ ոչ աննամանամանաբար, զի յատուկ աննամանամանեայց է ոչ բոլորումն հոմանունաբար ասիլ եւ ոչ ինքեանց: 42 Իսկ սոքա թէպէտ եւ միմեանց ոչ ասին հոմանունաբար, այլ բոլորումն ասին:

43 Այլ եւ ոչ որպէս տեսակ յանհատս ասի բաժանիլ տեսականն, եւ ոչ որպէս էութիւն ի պատահումն, եւ ոչ որպէս պատահումն յէութիւն, եւ ոչ որպէս պատահումն ի պատահումն, եւ ոչ որպէս հոմանունն ձայն ի զանազան նշանակիցեալս, վասն ասացելոց յառաջագոյն պատճառացդ: 44 Այլ են որպէս ի միոջէ եւ առ մի, վասն զի բնաբանականն եւ ուսումնականն եւ աստուածաբանականն որպէս ի միոջէ ի տեսականէն անուանեցան տեսական իւրաքանչիւր ոք: 45 Եւ այսոքիկ այսպէս:

46 Եկեցուք այսուհետեւ եւ ասացուք թէ ըստ որո՞ւմ յեղանակի եւ ուսումնականն բաժանի ի թուականն, յերաժշտականն, յերկրաչափականն եւ յաստեղաբաշխականն: 47 Եւ ասելի է, թէ ոչ որպէս սեռ ի տեսակս բաժանի, եւ ոչ որպէս տեսակ յանհատս, եւ ոչ որպէս բոլոր ի մասունս, եւ ոչ որպէս հոմանունն ձայն ի զա-

նազան նշանակիցեալս, եւ ոչ որպէս էութիւն ի պատահումն, եւ ոչ որպէս պատահումն յէութիւն, եւ ոչ որպէս պատահումն ի պատահումն, վասն ասացելոցդ յառաջագոյն պատճառացդ, այլ որպէս ի միոջէ եւ առ մի, վասն զի թուականն, եւ երաժշտականն, եւ երկրաչափականն, եւ աստեղաբաշխականն որպէս ի միոջէ յուսումնականէն իւրաքանչիւր ոք ուսումնական կոչեցաւ:

1 Ընդ այսոսիկ հանդերձ աստուծով եւ առաջիկայ պրակի՝

ՊՐԱԿՔ Ի

2 Յետ ասացելոյ զբաժանումն տեսականին, եկեցուք եւ ի բաժանումն գործականին: 3 Զի թէպէտ եւ յետ տեսականին է, վասն զի ի ձեռն տեսականին յարդարի եւ ի ձեռն բանին պաճուճէ զբարոյականն եւ հնազանդեցուցանէ զախտս, այլ սակայն ոչ է պարտ արհամարհել զնա, վասն զի, որպէս ասէ Պղատոն, թէ իմաստասէր կոչեմ ես ոչ զայն, որ շատն գիտէ, եւ ոչ որ բազում ինչ է միտ առնուլ կարող է, այլ որ անբիծ եւ անաղտ կենցաղավարութիւն ստացեալ ունի յինքեան. քանզի կատարեալ իմաստասէր է ոչ որ բազում ինչ գիտէ, այլ որ զախտս կարող գոյ հնազանդեցուցանել:

4 Արդ եկեցուք եւ ասացուք զբաժանումն գործականին: 5 Եւ պարտ է գիտել, եթէ այլաբար բաժանեն զգործականն արիստոտէլականքն եւ այլաբար պղատոնականքն: 6 Քանզի արիստոտէլականքն յերիս բաժանեն զնա՝ ի քաղաքականն, ի տնտեսականն, ի բարոյականն: 7 Եւ յիրաւի յերիս բաժանի, վասն զի յորժամ զարդարէ ոք զբարս՝ կամ զմիոյ ուրուք զարդարէ զբարս՝ եւ լինի բարոյական, եւ կամ զտան՝ եւ լինի տնաւրինական, եւ կամ զքաղաքի՝ եւ լինի քաղաքական:

8 Եւ զի այսօքիկ յերիս բաժանին, ցուցանէ յիւրոց շարագրածացն Արիստոտէլ: 9 Վասն զի Արիստոտէլ գրեաց զբարոյականն, յորում վասն բարուց ճառէ. եւ վասն տան, յորում վասն տնտեսականին ճառէ, յորում ասէ, չորք են ընթացակիցք առ ի տան կարգաւորութիւն: 10 Միամտութիւն առն եւ կնոջ առ միմեանս, եւ սէր յորդեաց վերայ, եւ երկիւղ ի վերայ ծառայից, եւ չափաւորութիւն ելեւմտիցն: 11 Վասն զի երկաքանչիւրոցն անչափութիւն յոռեգոյն է, զի եթէ բազում են մուտք եւ դուզնաքեայ ելք, այնպիսին ընդ ազահս հաշուի. իսկ եթէ դուզնաքեայ մուտք եւ առաւել ելք, այնպիսին ընդ անառակս է: 12 Բայց գրեաց եւ այն քաղաքականս, յորում վասն կարգաւորութեան քաղաքի ճառէ: 13 Նմանապէս եւ Պղատոն գրեաց քաղաքականս, եւ գնոյն կարգաւորութիւն զԱրիստոտէլին ունի:

14 Եւ պարտ է գիտել, զի ի քաղաքական շարագրութեանցն մի դիտաւորութիւն ունին Արիստոտէլ եւ Պղատոն. վասն զի իւրաքանչիւր ոք ի դոցանէ ասէ, թէ զիս՞րդ պարտ է կարգաւորիլ քաղաքի: 15 Իսկ ի քաղաքականութեանն զանազան է դիտաւորութիւն եւ շարագրութիւն եւ մակագրութիւն. վասն զի Պղատոն եզակի մակագրեաց՝ Զքաղաքականութիւն, իսկ Արիստոտէլ յոգնակի՝ Զքաղաքականութիւնք. վասն որոյ եւ դիտաւորութիւն զանազան գոյ: 16 Քանզի Արիստոտէլ ասէ՝ թէ զիարդ քաղաքավարեցան առաջինքն, այսինքն արգիացիք եւ բիովտացիք եւ այլք ամենայն յոյնք. իսկ Պղատոն ասէ, թէ զիարդ պարտ է քաղաքավարիլ:

17 Աստուստ պարտ է գիտել, եթէ պղատոնականքն ընդդէմ ասեն արիստոտելականացն վասն բաժանման գործականին. ասեն, թէ ոչ բարիոք արարին զառաջիկայ բաժանումնդ յերիս բաժանելով. քանզի ոչ երբէք սեռ յերիս բաժանի, այլ

յերկուս. որպէս կենդանին ի բանականն եւ յանբանն, գոյնն ի սպիտակն եւ ի սեւան:

18 Երկրորդ, վասն զի ոչ երբէք յընդդիմաբաժանեալ տեսական մինն ի միւսումն տեսանի, քանզի ոչ երբէք բանականն յանբանումն տեսանի. եւ ոչ անբանն ի բանականումն: 19 Իսկ աստանաւր բարոյականն ի տնաւրինականումն տեսանի, եւ տնաւրինականն ի քաղաքականումն:

20 Երրորդ, առ այսօքիւք ոչ երբէք մի տեսական համակար գոյ սեռի. քանզի ոչ կարէ բանականն համակար գոյ կենդանոյն, որ է սեռ, եւ ոչ անբանն միայն. այլ երկոքեան միանգամայն: 21 Իսկ աստ քաղաքականն միայն համակար գոյ գործականին, վասն զի, որպէս ասեն արիստոտէլականքն, գործականն բաժանի ի բարոյականն, ի տնտեսականն, ի քաղաքականն, որ պարունակեալ ունի յինքեան զբարոյականն եւ գտնաւրինականն. վասն զի որ կարող գոյ քաղաք կարգաւորել, այնպիսի եւ գտուն եւ զբարս. յայտ է, թէ համակար գոյ քաղաքականն գործականին եւ տնաւրինականն քաղաքականին: 22 Եւ եթէ այսօքիկ այսպէս, յայտ է՝ եթէ բարիոք արարին զբաժանումն գործականին:

1 Ընդ այսօսիկ հանդերձ աստուծով եւ առաջիկայ պրակֆ
ՊՐԱԿՔ ԻԱ

2 Եւ յետ ձեռնարկութեան պղատոնականացն, որ ընդդէմ արիստոտելականացն, յաղագս բաժանման գործականին ի բարոյականն, ի տնտեսականն եւ ի քաղաքականն, ինքեանք այնուհետեւ ձեռնարկեն բաժանել զգործականն յերկուս միայն՝ յաւրէնսդրականն եւ ի դատողականն: 3 Եւ յիրաւի, քանզի իմաստասէրն կամ դնէ աւրէնս, որով միշտ զիւրն զարդարէ զբարս, եւ լինի աւրէնսդրականն, եւ կամ զայլս դատէ ըստ գրեցելոց աւրինացն, եւ լինի դատողականն: 4 Եւ զոր բան ունի

աւրէնսդրականն առ քաղաքս, պահելով ի նոսա գիրաւացին, զնոյն բան ունի եւ դատողականն առ աւրէնսդրականն, պահելով զպատուիրեալսն ի նմա. քանզի բարոյականն եւ տնաւրինականն եւ քաղաքականն զնիւթոյ զտեղի ունին առ աւրէնսդրականն եւ դատողականն. քանզի աւրինադրողն կամ զմիոյ ուրուք զբարս զարդարէ. կամ զտանն, կամ զքաղաքի՝ վասն աւրէնս դնելոյ, ըստ որում իւրաքանչիւր ոք պարտի քաղաքավարիլ: 5 Եւ դատողն կամ զմի ոք դատի, կամ զտունն, կամ զքաղաք:

6 Եւ պարտ է գիտել, թէ ոչ եղեւ բաժանումն գործականին յաւրէնսդրականն եւ ի դատողականն, որպէս ի սեռէ ի տեսակս, վասն զի անդ ոչ է առաջին եւ վերջին յընդդիմակացեալ տեսակսն, իսկ աստ է. քանզի յառաջագոյն է աւրէնսդրականն եւ ապա դատողականն: 7 Ըստ նմին աւրինակի եւ ոչ ըստ միում յասացելոց յեղանակաց բաժանման, այլ են որպէս ի միոջէ եւ առ մի:

8 Արդ ուսեալք, եթէ զինչ է իմաստասիրութիւնն, եկեսցուք այսուհետեւ եւ ասացուք, եթէ որպիսին ինչ է: 9 Այլ եւ այս յայտնի եղեւ ի ձեռն յառաջասացելոցդ, քանզի ուսաք ի ձեռն սահմանացդ եւ ի ձեռն բաժանման: 10 Ի ձեռն բաժանման ուսաք, եթէ տեսական եւ գործական է, քանզի յայսոսիկ միայն բաժանի:

11 Ապա թէ ոք ասիցէ, եթէ ոչ միայն իմաստասիրութիւնն է տեսական եւ գործական, այլ եւ այլ արհեստք գոն տեսական եւ գործական. քանզի ահա բժշկականն եւ տեսական ասի, յորժամ գիտէ զախտս եւ ասէ զպատճառն, թէ ուստի եղեւ. այլ եւ գործական ասի, յորժամ մաղձադեղս տայ կամ արիւն հանէ:

12 Առ որս ասեմք, թէ իսկապէս տեսական եւ գործական իմաստասիրութիւնն միայն է: 13 Եւ տեսականն միայն է իսկա-

պէս, վասն զի այլ արուեստք ոչ զամենայն գոյս գիտեն, այլ զայն՝ որ զնիւթովն միայն է. վասն զի աստուածաբանութեամբ ոչ յարդարին, իսկ իմաստասիրութիւնն յաղագս ամենայն գոյիցն լինի եւ յաղագս աստուածայնոցն: 14 Այլ եւ գործական միայն իմաստասիրութիւնն իսկապէս ասի, վասն զի այլ արհեստ կամ յաղագս մարմնոյ է՝ որպէս բժշկականն, կամ յաղագս այնոցիկ, որ արտաքոյ մարմնոյ են՝ որպէս հիւանականն, շինողականն, դարբնականն. իսկ իմաստասիրութիւնն յաղագս հոգւոյ եղանի. քանզի զհոգւոյ աչս կալեալս ի մարմնական հեշտախտութեանցն եւ խաւարեալս՝ ի ձեռն իմաստասիրութեան յարուցանել եւ լուսաւորել բնաւորեցաւ հոգի: 15 Արդ որչափ պատուականագոյն է հոգի քան զմարմին. նոյնպէս եւ որ զհոգի զարդարէ իմաստասիրութիւնն՝ պատուականագոյն է քան զայլ արհեստս՝ մարմնոյ զարդարողս: 16 Վասն այսորիկ գործական ասի քան զայլ արհեստս, զի սա զհոգւոյ ազդմունս զարդարէ:

17 Արդ ուսեալք ի ձեռն բաժանման, եթէ որպիսի ինչ է իմաստասիրութիւնն, եթէ տեսական է եւ գործական: 18 Այլ ի ձեռն սահմանացն ծանեաք, թէ որպիսի ինչ իմաստասիրութիւնն. քանզի ի ձեռն սահմանացն, որ յենթակայէն են՝ այս ինքն ի ձեռն այնր որ ասէ, իմաստասիրութիւնն է գիտութիւնն էականն ըստ որում էակք են, եւ իմաստասիրութիւնն է գիտութիւնն աստուածայնոց եւ մարդկայնոց իրողութեանց՝ ուսաք, եթէ տեսական է իմաստասիրութիւնն: 19 Իսկ ի ձեռն սահմանին՝ որ յառաւելութենէ, որ ասէ, իմաստասիրութիւնն է արհեստ արհեստից եւ մակացութիւնն մակացութեանց՝ ուսաք, եթէ իշխանական է իմաստասիրութիւնն: 20 Իսկ ի ձեռն սահմանին՝ որ ի հուպ կատարմանէ, որ ասէ, թէ իմաստասիրութիւնն է խոկումն մահու՝ ուսաք, եթէ մաքրող ախտից է իմաստասիրութիւնն: 21 Իսկ ի ձեռն սահմա-

նին՝ որ ի հեռի կատարմանէ, որ ասէ, թէ իմաստասիրութիւն է նմանութիւն աստուծոյ ըստ կարողութեան մարդկան՝ ուսաք, թէ քաղաքական է իմաստասիրութիւն. քանզի քաղաքական իմաստասէր կամի եւ ըստ գիտութեան եւ ըստ գործոց որչափ կարողութիւն է մարդոյն նմանիլ աստուծոյ:

22 Եւ պարտ է փութապէս ասել, երկուց տեսակաց ելոց իմաստասիրութեան տեսականին եւ գործականին, եւ վեց սահմանաց, ոմանք ի տեսականն իմաստասիրութիւն վերաբերին եւ ոմանք ի գործականն եւ ոմանք յերկաքանչիւրսն: 23 Քանզի երկու սահմանք՝ որ յենթակայէ, որ ասէ, իմաստասիրութիւն է գիտութիւն էակացն ըստ որում էակք են, եւ որ ասէ, իմաստասիրութիւն է գիտութիւն աստուածայնոց եւ մարդկայնոց իրողութեանց. եւ մի՛ որ յառաւելութենէ, որ ասէ, իմաստասիրութիւն է արհեստ արհեստից եւ մակացութիւն մակացութեանց, ի տեսական մասն իմաստասիրութեան վերաբերի: 24 Իսկ մին՝ որ ի հուպ կատարմանէ, որ ասէ, թէ իմաստասիրութիւն է խոկումն մահու, եւ միւս եւս՝ որ ի ստուգաբանութենէ, որ ասէ՝ իմաստասիրութիւն եւ սիրելութիւն իմաստութեան, ի գործական մասն վերաբերին: 25 Իսկ որ ի հեռի կատարմանէ, որ ասէ՝ իմաստասիրութիւն է նմանութիւն աստուծոյ ըստ կարողութեան մարդկան, առ երկուսեան վերաբերի:

26 Արդ, ուսեալք՝ եթէ որպիսի ինչ է իմաստասիրութիւն, ասասցուք թէ վասն է՞ր է: 27 Վասն զի որ վարկապարագի է իմաստասիրութիւն, որպէս յայտ առնէ Պղատոն, առ ոմն Թէոդորոս առնելով զբանս իւր. «Այսպիսի ինչ բարի, ով Թէոդորէ, ոչ երեւեցաւ երբէք ի մարդիկ առ ի

յաստուծոյ՝ եւ ոչ երեւելոց է»: 28 Եւ պարտ է գիտել, թէ վասն այսորիկ է իմաստասիրութիւն՝ վասն զարդարելոյ եւ պաճուճելոյ զմարդկային հոգիս, եւ փոփոխելոյ զնա ի նիւթային եւ ի մառախողուս կենցաղոյս յաստուածայինն եւ յաննիւթն:

29 Եւ պարտ է գիտել, եթէ հոգի երկուս ունի զաւրութիւնս՝ գիտնականս եւ կենդանականս: 30 Եւ գիտնականք են այսորիկ. միտք, տրամախոհութիւն, զգայութիւն, կարծիք, երեւակայութիւն. իսկ կենդանականք այսորիկ են՝ կամք, ընտրողութիւն, յաւժարութիւն, ցանկութիւն, բարկութիւն: 31 Եւ յերկաքանչիւրսս յայսորիկ ոմանք բանականք են ոմանք անբանք. քանզի եւ ի գիտական զաւրութիւնս հոգւոյն ոմանք բանականք են եւ ոմանք անբանք: 32 Եւ բանականք են միտք, տրամախոհութիւնք, կարծիք. իսկ անբանք՝ զգայութիւնք, երեւակայութիւն: 33 Եւ ի կենդանականն դարձեալ զաւրութիւնս՝ ոմանք բանականք են եւ ոմանք անբանք. եւ բանականք ասին կամք, ընտրողութիւն, յաւժարութիւն, իսկ անբանք՝ բարկութիւն եւ ցանկութիւն:

34 Արդ այսոցիկ այսպէս ելոց, շնորհեաց աստուած զիմաստասիրութիւն վասն զարդարելոյ զմարդկային հոգի: 35 Արդ զգիտնական զաւրութիւնսն զարդարէ եւ ի ձեռն տեսականին, իսկ զկենդանականն՝ ի ձեռն գործականին, որպէս զի մի զսուտ գիտութիւն ի կարծեաց ընկալցուք եւ մի չար ինչ գործեսցուք:

36 Ընդ այսորիկ եւ առաջաբանք իմաստասիրութեան Դաւթի եռամեծի եւ անյաղթ փիլիսոփայի ընդդէմ առարկութեանցն չորից Պիհոռնի իմաստակի եւ սահմանք եւ տրամատութիւնք իմաստասիրութեան:

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԱՐԻՍՏՈՍԵԼԻ

Ի ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԱՐԻՍՏՈՍԵԼԻ

[ՊՐԱԿՔ Ա.]

1 Դիտաւորութիւն Արիստոտէլի ²ի Վերլուծականն՝ է բունն հարկանել զպարզ հաւաքմանէ: 2 Այլ եթէ է դիտաւորութիւն Առաջնոյ վերլուծականաց պարզ հաւաքման, զիս³րդ վաղվաղակի ի սկզբանս ասէ³, Նախ ասել արժան է՝ զի⁴նչ եւ⁴ յազազս որո՞յ խոհմունն⁵. եւ եթէ սակս ապացուցի եւ մակացութեան ապացուցականի: 3 Եւ ահա վաղվաղակի ի նախերգանէս⁶ ապացուցի յիշումն առնէ:

4 Առ որս ասեմք, եթէ ոչ ինչ անտեղի է՝ եւ յազազս պարզ հաւաքման ելոյ դիտաւորութեան, ճառել եւ յազազս ապացուցի, եւ զնոյն դիտաւորութիւն գոլ եւ յազազս ապացուցի: 5 Որպէս յորժամ ոք անտառահարութեան⁷ մասն ասիցէ զնաւակառութիւն⁸. զի⁹ յազազս նորա լինի: 6 Եւ դարձեալ երակահատութեան ասիցէ զառողջութիւն գոլ կատարումն. զի սակս նորա եղանի: 7 Բայց ուսոյց եւ այլ պատճառս¹⁰, եթէ որպէս Վերլուծականացն պարզաբար կատարումն ապացոյցն է: 8 Իսկ որպէս յԱռաջնոց վերլուծականացն գիտութեան բունն հարկանել զպարզ հա-

ւաքմանէ, տայ եւ զմիւս եւս պատճառ, եթէ որպէս եւս ըզձալի կամելով առնել զառաջիկայ շարագրածս, զպիտանացուն¹¹ որ ի նմայն՝ յառաջագոյն քարոզէր¹², զի պիտանացու է պարզաբար¹³ հաւաքումն: 9 Այս է քննութիւն պարզաբար¹⁴ հաւաքման յապացուցական¹⁵ հաւաքմանէ: 10 Քանզի պարտ է գիտել, եթէ մի իրողութիւն ճայնեաց¹⁶ Արիստոտէլ պարզաբար հաւաքմանն, եւ ապացուցականումն՝ զչորս ճառս վերլուծականացն պատուեալ. եւ զպարզաբար հաւաքումն շարամերձելով՝ զնա լաւագունումն տեսակումն. այս ինքն ապացուցականում պատմելոց, զապացուցականն շարամերձելով ընդհանուր սեռումն:

11 Եւ պարտ է գիտել՝ եթէ¹⁷ հինգ են տեսակք¹⁸ հաւաքմանց՝ ապացուցական, տրամաբանական, ճարտասանական, իմաստական¹⁹, քերթողական, որ եւ առասպելախառնումն²⁰: 12 Եւ²¹ հինգ են վասն այսր պատճառի. որոյ անուն²² եւ դիմէն, կամ ամենեւին ճշմարտեն, եւ լինի ապացուցականն, կամ ամենեւին ստեն, եւ լինի քերթողականն. եւ կամ է ինչ որ ճշմարիտ, եւ է ինչ որ սուտ: 13 Եւ²³ թէ հաւասարք

1 A վերնագրում միայն՝ վերլուծական Արիստոտելի: ա, B վերլուծական Արիստոտելի ի վերայ հաւաքման: Բնագիրը սկսում է 3-րդ պարբերութիւնից՝ (եւ) պարտ է գիտել..., CD Արիստոտելի վերլուծական, EF Գաւթի... չորեքսասան գլխոց Արիստոտելի ի վերլուծականն
2 ACDE ի վերլուծականէն բունն...
3 AE չի՞ ասէ
4 D չի՞ գիցն է
5 A խորհմունն
6 AF ի նախերգանիս
7 A զանտառահարութիւն
8 A Նաւակառութեան
9 C չի՞ գի
10 CD պատճառ

11 D զպիտանացուն
12 A քարոզէ
13 A պարզ
14 A պարզ
15 E ապացուցական
16 A ձօնեաց
17 B զի
18 B տեսակ վասն
19 B մասնական
20 CD առասպելականումն
21 ACDEF բայց փիս եւ
22 A յորոց անուն
23 AE որի փիս եւ

են միմեանց ¹ճշմարիտն եւ սուտն՝ լինի ճարտասանականն. եւ ճարտասանականումն միայնում ասին² գոլ կացմունք եւ վէճք եւ անվէճք, առ ի նոցանէ միայն եղանակելիք³: 14 Իսկ եթէ առաւել է ճշմարիտն քան զսուտն՝ լինի տրամաբանականն. իսկ եթէ առաւել է սուտն քան զճշմարիտն՝ լինի իմաստականն⁴:

15 Բայց ⁵ոմանք ասեն՝ եթէ երեք միայն են տեսակք հաւաքման, ապացուցական, տրամաբանական, իմաստական⁶. ⁷Քանզի լծեն ընդ տրամաբանականումն զճարտասանականն, իսկ ընդ իմաստականումն զքերթողականն: 16 Եւ ստորանիւթեն այսպէս. ⁸երեք միայն են տեսակք. քանզի հինգ են ⁹ամենեքեան՝ որովք ճանաչեմք ինչ եւ գիտեմք, զգալութիւն¹⁰, երեւակայութիւն, կարծիք, տրամախոհութիւն, միտք: 17 Քանզի գիտելին՝ կամ արտաբոյ է, կամ ի ներքս¹¹. բայց է մասնական ամենայն իրաւք. վասն զի զգալութիւնք զմասնականացն բնաւորեցան¹² բոլուն հարկանել: 18 Այլ¹³ եւ երեւակայութիւն ¹⁴զմասնականացն բոլուն հարկանէ. քանզի զոր ինչ առնու ի զգալութեանց՝ զայն պահէ. վասն որոյ եւ երեւակայութիւն յորջորջի¹⁵, այս ինքն՝ երեւեցե-

լոցն¹⁶ կացումն: 19 Իսկ կարծիքն զընդհանուրան գիտեն, նոյնպէս եւ տրամախոհութիւն եւ միտք. այլ կարծիք՝ առանց գիտելոյ զպատճառան. իսկ միտք ի վերքան զպատճառան. իսկ տրամախոհութիւն ըստ պատճառաց¹⁷:

20 Արդ երեք են տեսակք հաւաքման¹⁸, այսպէս եւ¹⁹ ըստ այսմ յեղանակում²⁰: 21 ²¹Ոչ զգալութիւնք եւ ոչ երեւակայութիւնք, քանզի եւ նա ի զգալութեանց առնու, եւ ոչ միտք հաւաքեն, որպէս ինքնատեսաւղք ամենայն իրաց. այլ եւ ոչ կարծիք, քանզի կարծիք՝ զեզրակացութիւն միայն գիտէ. բայց միայն տրամախոհութիւն է, որ հաւաքէ: 22 ²²Եւ սա կամ ի միտ առնու զնախադասութիւն, այս ինքն է զառաջարկութիւն, եւ առնէ զապացուցական՝ որ ի պատճառաց՝ եւ յառաջնոց. եւ կամ ի կարծեաց, եւ առնէ զտրամաբանականն, եւ կամ ի զգալութենէ, եւ առնէ զմասնականն: 23 Ապա երեք ուրեմն²³ են ²⁴տեսակք հաւաքմանն:

24 Յետ որոյ ասասցուք զպիտանացուն: 25 Արդարեւ պիտանացու²⁵ առաջիկայ իրողութիւնս²⁶ յապացուցական հաւաքմանէ: 26 Քանզի որ ոչ կարաւզ գոյ գեղեցիկ գրել՝ այնպիսին բնաւ իսկ ոչ գիտէ գրել. նոյնպէս եւ ոչ գեղեցկաբար հաւաքել այն՝ որ ոչ գիտէ զի՞նչ է պարզաբար հաւաքումն: 27 Իսկ ապացուցական հաւաքումն պիտանացու գոյ յամենայն իմաստասիրութեան, ի տեսականն եւ ի

1 B չի՛ք ճշմարիտն եւ սուտն
 2 B միայն ասի
 3 A եղանելի՛ք
 4 B մասնական
 5 B Ոմանք երեք ասեն տեսակ հաւաքմանց
 6 B մասնական
 7 B զի լինի նարտասանականն ընդ տրամաբանականովն եւ քերթողականն ընդ մասնականան
 8 B չի՛ք երեք միայն են տեսակք, քանզի
 9 B ամենայն ինչ, որով
 10 B սգալութիւն հասարակ
 11 AE ի ներքոյ
 12 B չի՛ք բնաւորեցան
 13 B չի՛ք այլ
 14 B չի՛ք զմասնականացն բոլուն հարկանէ, քանզի
 15 B լսելի փոյ յորջորջի

16 B երեւելեացն
 17 B ըստ պատճառին
 18 B հաւաքաբանութեան
 19 B չի՛ք այսպէս եւ
 20 A օրինակում, B եղանակի
 21 B ոչ զգալութիւն հաւաքել եւ ոչ...
 22 B եւ սայ դարձեալ կամ ի մտաց առնու գնախատեսութիւն, որ է առաջարկութիւն
 23 E ումեմն
 24 B տեսակ հաւաքման եւ ոչ ինքն
 25 B պիտանի
 26 B չի՛ք առաջիկայ իրողութիւնս

գործականն¹. որպէս զի [մի] զցուցեալսն ի տեսականումն ճշմարտապէս՝ ճշմարիտ² կարծեսցուք. ³որպէս զի մի գտուտ գիտութիւն ընկալցուք եւ մի չար ինչ գործեսցուք:

28 Արդ պիտանացու առաջիկայ իրողութեանս⁴ պարզ հաւաքման՝ եւ զայլ⁵ ինչ ի ձեռն այլոյ գտանել: 29 Քանզի ոչ գամենայն ինչ թագոյց բնութիւնս, զի ոչ կարաւզ գոյր գտանել ինչ ոք, եւ ոչ դարձեալ⁶ գամենայն ինչ յայտնի արար⁷, զի ոչ ոք էր ապա որ ի խնդիր անկանէր: 30 Այլ է ինչ՝ զոր թաքոյց եւ է ինչ՝ զոր յայտնեաց. վասն որոյ խնդրելն է⁸ յուզելն եւ գտանելն: 31 Արդ եկն էանց ի մէջ հաւաքումն, որպէս զի յորոց եցոյց բնութիւնս, գտցէ զայն՝ զոր թաքոյցն. զաւրէն յուզականացն ասացեալ շանց, որք գիտեն, այս ինքն ի շաւղացն եւ ի հոտոցն գտանեն⁹ զորջս գագանաց:

32 ¹⁰Պիտանացու առաջիկայ իրողութիւնս՝ եւ ի մեր ինքեանց գոյութիւնս¹¹. ¹²քանզի մարդ միայն բանաւոր յէիցս՝ է հաւաքաւղ էիցս: 33 Վասն զի այլ գոյութիւնք ոչ հաւաքեն. ոմանք որպէս ոչ կարելով, եւ ոմանք որպէս ոչ պէտս ունելով: 34 Քանզի երկնայինքն, որպէս ինքնատեսաւղք իրողութեան, ոչ պէտս ունին հաւաքման: 35 Իսկ անասունք, որպէս ոչ կարաւզ գոյով. վասն զի անգիտանան

զընդհանուրսն: ³⁶ Քանզի թէպէտ եւ շուն՝ այլ ինչ ի ձեռն այլոց բնաւորեցաւ գտանել, յորոց գիտէ զոր ինչ գիտէ. այլ զայս ըստ բնութեան առնէ, եւ ոչ ըստ տրամախոհութեան. եւ զի ըստ բնութեան գոյանայ նմա այսպէս՝ յայտ է յայսմանէ, զի ամենայն շուն այսպէս¹³ առնէ: ³⁷ Բայց ոչ ամենայն մարդ հաւաքէ, ապա ուրեմն մարդում միայն¹⁴ գոյ հաւաքելն. զի թէ հաւաքէին եւ անբանք, որ ոչ գիտեն¹⁵ զընդհանուրսն, առանց որոց ոչ լինի հաւաքումն, զինքեանս պատրաստէին¹⁶: 38 Եւ զի անասունք անգիտանան զընդհանուրսն, յայտ առնեն աքաղաղք¹⁷. Համատեսակաց զենեցելոցն եւ¹⁸ ի զենումն եկելոցն՝ նոքա խայտան, ոչ գիտելով թէ այն ինչ ի նոսա հասանելոց են չարիքն:

1 ¹⁹Ընդ այսուսիկ հանդերձ աստուծով եւ առաջիկայ պրակֆ

ՊՐԱԿՔ Բ

2 Յետ դիտաւորութեան [եւ] պիտանացուին, ասացուք եւ զկարգն առաջիկայ շարագրութեան²⁰, ²¹որ ունի այսպէս եւ ըստ այսմ աւրինակում, եթէ Առաջին է ²²առաջին դրութիւն պարզ ձայնիցն: 3 Երկրորդ է՝ դրութիւն նոցին: 4 Երրորդ է՝ դրութիւն առաջին շարագրութեան, այս ինքն նախադասութեան. իսկ նախադա-

1 AB ի գործնական
2 AB չի՛ք նշմարիտ
3 B չի՛ք որպէս զի մի գտուտ գիտութիւն ընկալցուք
4 AB իրողութիւնս
5 ABE զի այլ փիս գայլ
6 B չի՛ք դարձեալ
7 B յայտնեաց փիս յայտնի արար
8 A խնդրելն է
9 B ֆնել փիս գտանեն
10 B պիտանացու է եւ մեք ի տեսիլ բնութիւնս
11 D գոյացութիւնս
12 B ձեռագիրն այստեղից մինչեւ գլխի վերջը խիստ աղետատուած է:

13 AC նոյնպէս
14 CD միայնում
15 CE գիտէին
16 A պատրէին
17 A ախալալֆ
18 AD չի՛ք եւ
19 B չի՛ք ընդ այսուսիկ... եւ առաջիկայ
20 ABC իրողութեանս փիս շարագրութեան
21 B ըստ այսմ ձեւի փիս որ ունի այսպէս եւ ըստ այսմ օրինակում եթէ
22 F առաջի, B առաջադրութիւն փիս առաջին դրութիւն

սուլթիւն ¹պարզ հաւաքումն՝ այլոց ըստ մասին հաւաքմանց:

5 Արդ յաղագս առաջին դրութեան պարզ ձայնիցն ի Ստորոգութիւնսն ճառեաց. իսկ² յաղագս երկրորդ դրութեանց պարզ ձայնից: 6 այս ինքն յաղագս աւուռանց եւ բայից ի Յաղագս³ մեկնութեան, յորում եւ վասն նախադասութեանց⁴ ճառեաց. այս ինքն է յաղագս առաջին շարադրութեան պարզ ձայնից՝ յորոց ամենայն հաւաքմունք: 7 Յաղագս ընդհանուր հաւաքման յառաջիկայումս ճառէ իրողութեան. յաղագս⁵ ըստ մասին հաւաքմանց՝ յետ այս⁶ իրողութեանս ճառէ. եւ յաղագս ապացուցականին՝ ի յերկրորդումն վերլուծականումն: 8 Իսկ յաղագս տրամաբանականումն՝ ի Տեղիսն⁷. Իսկ յաղագս ճարտասանականին՝ ի Յաղագս ճարտասանականութեանց արհեստս: 9 Իսկ յաղագս իմաստականին՝ ի Յաղագս իմաստականութեանց յանդիմանութեանց. իսկ յաղագս քերթողականին՝ ի Յաղագս քերթողականութեանց:

10 Արդ յառաջագոյն է առաջիկայ իրողութիւնս⁸ ամենեցուն ըստ մասին հաւաքականաց իրողութեանց, վասն զի եւ պարզ հաւաքումն ըստ մասին էիցն: 11 Իսկ Ստորոգութեանցն իրողութիւնս⁹ յառաջագոյն է, քան զՅաղագս¹⁰ մեկնութեան. որ է¹¹ պարզ ձայնիցն երկրորդ շարադրութիւն. իսկ Յաղագս մեկնութեան,

քան զՎերլուծականսն. վասն զի երկրորդ դրութիւն¹² յառաջագոյն է քան զառաջին շարադրութիւն: 12 Եւ առաջին շարադրութիւն պարզ հաւաքման: 13 Եւ այսոքիկ յաղագս կարգաւորութեան¹³ պարզ հաւաքման¹⁴:

14 Յետ որոյ¹⁵ ասացուք եւ զպատճառս մակագրութեան: 15 Մակագրեալ է առաջիկայ բոլոր իրողութիւնս՝ վերլուծականք ի միոյ հատածէ յերրորդէն առաջին բանէն¹⁶. այլ զի ստուգաբար զիտասցուք զասացեալդ, ասացուք զառ ի մասնկունս¹⁷ բաժանումն: 16 Արդ բաժանի առաջիկայ բոլոր իրողութիւնս վերլուծականաց ի չորս ճառս: 17 Եւ առաջինք երկու ճառքն՝ Առաջին վերլուծականք մակագրեալք են. իսկ վերջինքն երկու եւս ճառք՝ կամ վերջինք, եւ կամ երկրորդ վերլուծականք: 18 Եւ արդ յառաջինսն յերկու ճառսն յաղագս պարզ հաւաքման բունն հարկանէ: 19 Արդ երկաքանչիւրոցն երկակացն՝ յառաջին ճառսն այս ինչ¹⁸, առաջինն եւ երկրորդն բոլոր իրողութիւնս¹⁹ յաղագս²⁰ տեսակի գոն ասացեալք իւրեանց հաւաքմանն. իսկ երրորդն ի չորրորդն յաղագս նիւթոյ իւրեանց հաւաքմանն գոն ասացեալք:

20 Իսկ առաջին ճառն Առաջնոց վերլուծականացն բաժանի յերիս հատածս: 21 Եւ առաջին հատած նորին՝ յաղագս լինելութեան է առաջին, այսինքն²¹ յաղագս պարզ հաւաքման. իսկ երկրորդ հատածն յաղագս առատութեան առաջարկութեանց

1 C պարզ հաւաքման, իսկ պարզ հաւաքումն այլոց...
2 ABF իսկ երկրորդ
3 CEF չի՛բ յաղագս
4 B նախասութեանց
5 AB ի յաղագս
6 D սորս
7 A ի տեղին առնէ
8 CDE իրողութեան
9 CDEF ստորոգութիւն իրողութեան, B ստորասութեանցն իրողութիւն
10 BCF յաղագս
11 ACE չի՛բ որ է

12 B գրութիւն
13 ACDEF դիտաւորութեան
14 B չի՛բ պարզ հաւաքման
15 BCDF որոց
16 AB քանին
17 BDEF ի մասնականսն, C ի մասնականումն
18 A այսինքն փ/ս այս ինչ
19 AF իրողութեան
20 CDE յայլ փ/ս յաղագս
21 BCDEF այս փ/ս այսինքն

է. Իսկ երրորդն յաղագս վերլուծութեան հաւաքմանցն: 22 Բայց յամենայն ուրեք, գրեթէ յամենայնում ճառում յիշէ յաղագս վերլուծութեան հաւաքմանց: 23 Սակայն երրորդ հատածն յաղագս վերլուծութեան հաւաքմանց մակագրեցաւ. վասն զի բազմաց ելոց յեղանակաց վերլուծականաց՝ գրեթէ զբոլորն յարագրէ յերրորդումն հատածին:

24 Բայց յատուկ լինելութեան եւ հաւաքմանցն է առնուլն առաջարկութիւնս ոմանս, որպիսիք կարաւոք գոն շարագրել որպէս ազգակիցք, եւ հիւսել զնոսա, եւ գտանել զհետեւեալն նոցա, այս է զհետեւութիւն¹ նոցին բաղեգերումն. որգոն՝ զբանականն, զմահկանացուն, զանմահն, ²որ հաւաքի ի մարդ, կամ ի հրեշտակ: 25 Իսկ յատուկ լինելութեան³ առաջարկութեանց է առնուլն զինչ եւ է բաղեգերութիւն, եւ գտանել զառաջարկութիւնս, որք յարգարեն զնա:

26 Որգոն՝ տուաւ ինձ առաջրկութիւն, եթէ անձն անմահ է. արդ կամ է իմ գտանել զառաջարկութիւնս, որք յարգարեն⁴ զնա: 27 Եւ դարձեալ տուաւ ինձ որպէս ոք առ այլ առաջարկութիւնս, եթէ անձն անմարմին է. արդ կամ է ինձ գտանել առաջարկութիւնս այնպիսիս, որպիսիք զնա կարաւոք գոն յաւրինել: 28 Իսկ յատուկ վերլուծութեան⁵ է ի հաւաքմանցն առնուլն հաւաքումն որպիսի ինչ եւ է եւ⁶ վերլուծանել զնա յայնս՝ յորոց⁷ շարագրեցեալ գոյ. այս ինքն որո՞յ ձեւոյ է, եւ ո՞ր է աւարտումն եւ ոչ աւարտումն. եւ

զիա՞րդ մարթ⁸ գոյ գերկորդում ձեւումն հաւաքումն վերլուծանել յառաջին ձեւն: 29 Եւ դարձեալ⁹ զիա՞րդ մարթ¹⁰ գոյ՝ զանկատարսն ի հաւաքման¹¹ ի կատարումն ածել: 30 Եւ¹² այսոքիկ ¹³յաղագս ի մասնկունսն բաժանման բոլոր առաջիկայիս¹⁴ իրողութեան հաւաքմանց, որ մակագրեալ գոյ Վերլուծականք, յերրորդ¹⁵ հատածէ առաջին ճառին:

31 Բայց վերլուծականք մակագրեցան եւ ոչ շարագրականք, վասն երկուց¹⁶ պատճառաց. նախ եւ առաջին, վասն զի սակաւագոյն է վերլուծութիւն քան զշարագրութիւն. զի որ վերլուծանելն կարաւոք գոյ, նա եւ շարագրել¹⁷. բայց ոչ որ շարագրելն գիտէ, նա եւ վերլուծանել. որպէս եւ ի տգիտաց իսկ յայտ է, որք երկայն շարագրել բանս գիտեն, բայց վերլուծանել զնոսա յայնս՝ յորոց եւ շարագրեալքն գոն, ոչ գիտեն, այս ինքն¹⁸ ի բառս եւ ի փաղառութիւնս եւ ի տառս: 32 Երկրորդ¹⁹ պատճառ, եթէ երկրաչափականացն տեսութեանց եւ շարագրութիւնս ունելով եւ վերլուծութիւնս, երկրաչափքն²⁰ զվերլուծութիւնս միայն գրեն, վասն զի աւելորդ խոհամտութեան պէտս ունին: 33 Եւ այսոքիկ այսպէս:

34 Յետ որոց՝ եթէ հարագատ գոյ, խնդրեսցուք: 35 Արդարեւ հարագատ Արիստոտէլ գոյ առաջիկայ իրողութիւնս՝ յերից իրաց յայսցանէ: 36 Նախ եւ առա-

1 A գիտեստողն
2 B որ հաւաքէ զմարդ կամ զհրեշտակ
3 B յատուկ գտանի լինելութեան, A գտնելութեան փխ լինելութեան
4 E յարադրեն
5 CD վերլուծութիւնք
6 ABF չի՞ք եւ
7 E յայն, որոյ

8 DEF մարդ
9 DE չի՞ք դարձեալ
10 E մարդ
11 ADE ի հաւաքմանց
12 BCDE եւ դարձեալ
13 B ի յաղագս ի մասնականսն բոլոր
14 A առաջիկայ իրիս, BCDE առաջիկայ իրս
15 BD յերկրորդ
16 ABCD երից փխ երկուց
17 A շարագրելով
18 ABD չի՞ք այս ինքն
19 BCD երրորդ
20 A երկրաչափականքն

ջրին՝ եթէ քառասուն գրոց գտելոց հաւաքմանցն ի հին գրանոցսն, չորք միայն այսորիկ գիրք ընտրեցան գոյ Արիստոտէլի: 37 Երկրորդ՝ եթէ վասն զի յայսցանէ յիշէ իսկ ինքն Արիստոտէլ յիւր հարազատ բանս. քանզի Յաղագս մեկնութեան ասէ, թէ Այսորիկ՝ որպէս ի Վերլուծականսն գոն ասացեալ, նոյնպէս դասեսցին¹: 38 Երրորդ պատճառ, եթէ եւ արիստոտելական պահեալ գոյ սովորութիւն². քանզի սովորութիւն է Արիստոտէլի զընդհանուրսն նախադասել մասնականացն, որպէս եւ Յաղագս անձին առնէ՝ նախադասելով զընդհանուր անձն մասնականին. նոյնպէս եւ աստ արար՝ նախադասելով զընդհանուր հաւաքումն մասնականի³ հաւաքման:

1 Ընդ այսոսիկ ⁵հանդերձ աստուծով եւ առաջիկայ ՊՐԱԿՔ Գ

2 Երրորդ եթէ է մասն, եւ եթէ մասնիկ իմաստասիրութեան բանականս, Եւտոկիոս սկիզբն առնելով յիշատակութեանն⁶ Պորփիրի Ներածութեանցն խնդրէ. իսկ Աղէքսանդրոս զառաջիկայս յիշատակելով զիրողութիւն՝ լաւագոյն քան զնա արար. քանզի խնդրէ, եթէ մասն է, եւ եթէ գործի իմաստասիրութեան բանականս, կամ ըստ հաւաքականին⁷ միայն է, եւ կամ ըստ բոլորին: 3 Քանզի երեք կարծիք վասն այսորիկ ասեն եղեալք, վասն զի ստոյիկեանքն ասէին մասն գոլ զհաւաքականն⁸ իմաստասիրութեան. իսկ արիստոտէլա-

կանքն՝ գործի. իսկ պղատոնականքն՝ ե՛լ գործի ե՛լ մասն:

4 Բայց այժմ զձեռնարկութիւն ստոյիկեանցն ասացուք. որոց առաջին ձեռնարկութիւն է այս. Ամենայն իրում պիտոյանայ⁹ արուեստ ինչ, եւ կամ մակացութիւն, ¹⁰եթէ ոչ է այլոյ արուեստի մասն, եւ կամ մասնիկ նորին. իսկ պիտացելոցն մասն է, կամ մասնիկ. քանզի տածականումն՝ պիտանանայ բժշկականութիւն., որ ոչ է այլոյ արհեստի մասն կամ մասնիկ, հարկ է նորին¹¹ բժշկականութեան մասն գոլ եւ կամ մասնիկ: 5 Եւ բարևք առկայացաւ, եթէ ոչ է այլոյ արհեստի մասն եւ կամ մասնիկ՝ վասն քերականութեան եւ աստեղաբաշխութեան. եւ զի ոչ է մասն քերականութեան աստեղաբաշխութիւն. քանզի աստեղաբաշխութիւն ուսումնականին գոյ մասն, իսկ բոլոր իմաստասիրութեան մասնիկ:

6 Արդ հաւաքականումն¹² միայն պիտանանայ իմաստասիրութիւն¹³, ի տեսականումն՝ առ ի յորոշումն ճշմարտութեան եւ ստութեան, իսկ ի գործականումն¹⁴ առ ի յորոշումն բարևոյ եւ չարի, եւ այլոյ արհեստի, կամ մակացութեան ոչ մասն եւ ոչ մասնիկ գոյ, յայտ է՝ եթէ իմաստասիրութեան է մասն եւ կամ մասնիկ. որ եւ հակաբաժանի ¹⁵ի տեսականումն եւ ի գործականումն. քանզի եթէ ցուցցուք, եթէ ոչ է մասնիկ, հարկ է մասն գոլ. արդ մասնիկ գոլ ոչ կարէ, քանզի մասնիկն զնոյն նիւթ բոլորին եւ զնոյն կատարումն նորին ունի: 7 Արդ տեսականն նիւթ ունի զամենայն գոյսս առ ի գիտել, իսկ կատարումն

1 A դասեցան
 2 BCF սովորութիւնք
 3 B ընդ մասնաւոր, D մասնակի
 4 A չի՞ Ընդ այսոսիկ հանդերձ աստուծով եւ առաջիկայ
 5 B չի՞ հանդերձ աստուծով
 6 C յիշատակութիւն
 7 CDF հաւաքականին
 8 CDF զհաւաքականականն

9 ACDE պիտանանայ
 10 AB եթէ ոչ արհեստ, C եթէ ոչ արուեստի, D եթէ ոչ արուեստ, E չի՞ եթէ ոչ է այլոյ արուեստի
 11 A նորին իսկ
 12 CD հաւաքականին, F հաւաքականն
 13 EF իմաստասիրութեան
 14 A իսկ գործականումն
 15 A ի տեսականն եւ ի գործականն

զճշմարիտան. իսկ գործականն նիւթ ունի
զմարդկային հոգիս, իսկ կատարումն զբա-
րին. այս ինքն՝ կամ զչափաւորապէսն գոլ
ի կիրս, ըստ Արիստոտէլումն, եւ կամ զա-
նախտն գոլ, ըստ Պղատոնումն: 8 Նոյն-
պէս եւ հաւաքականն¹ նիւթ ունի զձայնս,
իսկ կատարումն զապացոյցն: 9 Արդ ոչ
կարաւղ գոյ մասնիկ գոլ իմաստասիրու-
թեան, քանզի ոչ ուրեք² զմասանց³ նորա
զնոյն կատարումն նորին ունի:

10 Առ որս ասեմք, եթէ զխնդրելին
խոստովանելի առնէք, եթէ ոչ է գործի նո-
րին. եւ անկատար է բանդ ձեր. քանզի
այսպէս պարտ էր յառաջ բերել, եթէ էր
կատարումն ամենայնի՝ որում պիտանա-
նայ⁴ արհեստ, եւ կամ մակացութիւն. եթէ
ոչ է այլոյ արհեստի⁵ մասն եւ կամ մաս-
նիկ եւ կամ գործի նորին. իսկ պիտացե-
լոցն⁶ մասն է եւ կամ մասնիկ եւ կամ գոր-
ծի: 11 Ջի որպէս ցուցիք⁷ եթէ մասնիկ⁸ ի-
մաստասիրութեան, նոյնպէս պարտ էր
ցուցանել՝ եթէ եւ ոչ գործի նորին է, եւ ու-
նէիք զխնդրելին. ապա թէ ոչ եւ մեք ա-
սասցուք զերակահատն, որ է ի մարմին,
բժշկականութեան մասն գոլ. քանզի այլոյ
արհեստի ոչ մասն է, եւ ոչ մասնիկ, այլ
բժշկականութեան միայն պիտոյանայ⁹:

12 Երկրորդ ձեռնարկութիւն ստոյի-
կեանց, որք ցուցանեն եթէ մասն¹⁰ է բա-
նականն իմաստասիրութեան: 13 ¹¹Եթէ
նոյն ինքն ասէ, իմաստասիրութիւն ծնաւ
զհաւաքումն¹² նորին, ապա ուրեմն եւ

մասն է: 14 Առ որս ասեմք եթէ շատ ինչ
ծնանին արհեստք ոմանք՝ որք ոչ են նոցա
մասունք. բայց բացակատարեցին զնոսա,
որպէս զի եւ ինքեանք առցեն¹³ ի պէտս եւ
այլք. քանզի քանոնումն եւ կանգնումն
պիտանանայ եւ հիւսն եւ շինաւղն. թէ-
պէտ եւ հիւսն բացակատարեաց զնոսա. եւ
զի որպէս գործի բացակատարեաց զնոսա
հիւսն առ ի պիտանանալ նոցին. յայտ է
յայնմանէ, զի բազում զգուշութեամբ գոր-
ծեաց վասն ամենայն իրաւք¹⁴ պէտս ունե-
լոյ նոցա, ոչ իւր միայնոյ, այլ եւ այլոց:

1 Ընդ այսոսիկ ¹⁵հանդերձ աստուծով եւ
առաջիկայ

ՊՐԱԿՔ Դ

2 Եւ զի մասն իմաստասիրութեան
զհաւաքականն յարդարեցին¹⁶ ստոյի-
կեանքն ի ձեռն երկուց ձեռնարկու-
թեանցս, զորս եւ կործանեցաք: 3 Իսկ եթէ
որպէս գործի յարդարեն¹⁷ արիստոտէլա-
կանքն, այսպիսուս պիտանացեալք¹⁸ բա-
նում¹⁹. եթէ մասն է ասեն հաւաքականն ի-
մաստասիրութեան, վասն զի եւ այլ ար-
հեստք պիտանանան բ[ա]նական հնարում,
բաժանելով, զինքեանս, եւ սահմանելով եւ
ապացուցելով²⁰. նաեւ ձեռնայինքն հաւա-
քաբանեն. որգոն՝ շինողականն հաւաքա-
բանէ, եթէ յորժամ հանդերձեալ է ուղղորդ
յարուցանել զորմն²¹, պարտ է հիմունս ար-
կանել: 4 Արդ՝ եթէ առաջինն ամենայն ի-
րաւք, ապա ի հարկէ ուրեմն եւ երկրորդն.
եւ աթոռ՝ եթէ հանդերձեալ է զնիստն ճա-
հաւոր ունել՝ պարտ է նմա այսպիսի ինչ

1 CDF հաւաքաբանականն
2 A ուրով
3 A ի մասանց
4 A պիտանացու է, BCDE պիտանացուի
5 CEF այլոց արհեստից
6 A պիտացելոյն, D պիտանացելոցն
7 ABD ցուցէի
8 A ոչ մասնիկ
9 AE պիտանանայ
10 BCEF եթէ եւ մասն
11 B չիք եթէ նոյն ինքն ասէ իմաստասիրութիւն
12 E զհատուցումն

13 F ինքեանց տացեն
14 A իւրով
15 BE չիք հանդերձ աստուծով
16 A յարադրեցին
17 A յարադրեն
18 A պիտացեալք
19 E քազում փիլ բանում
20 BDF ապացուցանելով
21 BDF զորմէ փիլ զորմն, E զորում

ունել զձեւն՝ հաւաքաբանէ հիւսն: 5 Տրպագոյն¹ ապա ուրեմն իմաստասիրութիւն եւ² քան զձեռին արհեստք³, որ քաւ եւ մի լիցի. որովհետեւ եւ մասնում նորա, այս ինքն կատարման պիտանանան եւ այլ արհեստք, քանզի է ընդհանուր: 6 Եթէ երկու արհեստ գոյով, եւ միւսն պիտանանայ միւսոյն կատարման, որպէս գործւոյ⁴, յոռի գոլ ասի այն՝ որում պիտանանայն, քանզի⁵ յոռի ասի գոլ սանձարարականն քան զձիականն:

7 Առ որս ասեն ոմանք ի մերոցն, եթէ ըստ ձեր բանումդ՝ յոռի ուրեմն⁶ է եւ երկնային անձն քան զմարդկայինսն, քանզի երկնային անձն բացակատարեաց զմեր մարմինս, որում որպէս գործւոյ⁷ պիտանանայ մեր հոգիս: 8 Առ որս ասելի է, թէ երկնային անձն ոչ միայն զմեր մարմինս բացակատարեաց, այլ եւ զանբանիցն եւ զտնկոցն: 9 Իսկ սանձարարականն՝ սանձս միայն առնէ, այլ եւ ոչ գոյն, եւ որ պիտանանայն սանձաց⁸ զձիականն:

10 Բայց առնեն եւ այլ⁹ ձեռնարկութիւն այսպիսի. եթէ ոչ է մասն իմաստասիրութեան բանականս, որպէս ցուցանեմք: 11 Իսկ եթէ մասն ոչ՝ հարկ է գործի գոլ. արդ մասն ոչ կարէ գոլ. վասն զի մասունք ի բաց բարձեալք՝ եւ զբոլորս ի բաց բառնան. բայց ապացոյց էր եւ յառաջ քան զգրել¹⁰ վերլուծականացն առ ի յԱրիստոտելէ, քանզի էր ապացոյց եւ բնութիւն իրողութեան: 12 Եւ զայսոսիկ արիստոտէլականքն:

13 Իսկ պղատոնականքն յարդարեն¹¹, ¹²եթէ է մասն, եւ է գործի. եւ զի գործի է՝ բաւականանան¹³ արիստոտէլականացն ձեռնարկութիւնք¹⁴: 14 Բայց եթէ ո՞րպէս մասն, յարդարեն ինքեանք. քանզի ոչ բաւականանան¹⁵ ստոյիկեանցն ձեռնարկութիւնքն¹⁶. վասն զի այնոքիկ կործանեցան: 15 Բայց ձեռնարկեն այսպէս, եթէ մասն է իմաստասիրութեան հաւաքաբանութիւնս¹⁷, քանզի հաւաքաբանութիւն գիտութիւն է բոլոր գոյից. զի գիտութիւն ամենայն գոյից մասն¹⁸ իմաստասիրութեան է¹⁹. քանզի ոչ է բոլոր իմաստասիրութիւն. քանզի բոլոր իմաստասիրութիւն պէտս ունի եւ բարեկենդանութեան: 16 Եւ զի մասն իմաստասիրութեան է հաւաքաբանութիւն, գիտէ²⁰ եւ Պղատոն յիւրում տրամաբանականին ի պէտս առեալ զհաւաքաբանութիւն, զոր եւ Յանկ ուսմանց անուանեաց ի բազում տեղիս: 17 Իսկ ցանկ մասն է՝ որոյ եւ ցանկն գոյ. եւ զի մասն է, դարձեալ յայտարար յիւրում շարադրութեանն, յորում ասելով, եթէ Կրթեա զքեզ յինքեան²¹ կոչեցելովն առ ի բազմաց թախանձութիւն²², մինչ տակաւին եւս նորագոյնդ ես, ապա թէ ոչ՝ փախիցէ ի քէն: 18 Ճշմարիտ թախանձութիւն կոչեցեալ զբացազանչութիւն իրացն, իսկ կրթութիւն զգիտութիւն գոյիցն. քանզի երկակի ասի գոլ ապացուցականն. քանզի մին ի նոյնս իսկ յերողութեանցն բնութեան²³ ասի գոլ. որգոն՝

1 A տիպագոյն է
 2 C եւ ապա
 3 D արուեստք
 4 BC գործոյ
 5 A Որպէս զի փյս Բանգի
 6 E որումն
 7 BC գործոյ
 8 A սանձիցն
 9 C այլ եւ այլ
 10 F գրելի

11 A յարադրեն
 12 C եթէ մասն եւ թէ գործի
 13 F բաւական
 14 A ձեռնարկութեան, CDE ձեռնարկութեանց
 15 BF բաւական
 16 CDF ձեռնարկութեանց
 17 CD իմաստասիրութիւն հաւաքաբանութեան
 18 A չի՞ մասն
 19 A իմաստասիրութիւն է
 20 CD դիտէ
 21 A զինքեան, DE ինքեան
 22 BF նշարտաթախանձութիւն
 23 CF յերողութիւնսն բնութիւն

անձն ինքնաշարժ, ինքնաշարժն մշտաշարժ, մշտաշարժն անմահ: 19 Իսկ միւսն յորոշմունս, այս ինքն՝ ի նկատմունս միայն եւ ի կիտմունս¹. որգոն՝ յերկուց ստորասութեանց՝ ²ստորասական գոյ ժողովեալն. այս ի³ բանս միայն է, իսկ այն եւ յիրողութիւնս⁴. քանզի միայն Արիստոտէլ ոչ հեղգացաւ բացակապտել⁵ զհնարս բանից ի նոցունց իսկ յիրողութեանց, եւ կիտակս, այս ինքն է կանոնս առնել: 20 Առ որս Պղատոն ասաց, եթէ Արհեստիկ արարեր զիմաստասիրութիւն:

21 Արդ վասն այնոցիկ⁶, որք⁷ յիրողութիւնսն են ապացոյցք, ձայնակիցք գոն Արիստոտէլ եւ Պղատոն. իսկ որք ի կիտակս գոն, վասն այնոցիկ տարածայնք են⁸. քանզի [ոչ] էին⁹ կիտակք եւ հնարք հաւաքաբանութեան ի ժամանակս Պղատոնի. եւ թէպէտ ոչ էին հնարք յաւուրս Պղատոնի, սակայն ոչ եթէ զանցանէր ինչ ինքն Պղատոն յիւր յինն¹⁰ տրամաբանութիւնսն: 22 Քանզի առաքիւնիքն եւ մեծքն բնութեամբ՝ ոչ ունին պէտս կիտաց, այլ զեր ի վերոյ քան զնոսս ներգործեն, եւ ինքեանք լինին կիտակք յետնոցայցն: 23 Քանզի ոչ կալաւ պէտս Պղատոն ապացուցականումն Արիստոտէլի, այլ Արիստոտէլ Պղատոնումն, զի առցէ ի նմանէ սերմանիս. ոչ պիտացաւ¹¹ եւ Հոմերոս յազագս¹² քերթողականումն Արիստոտէլի,

այլ Արիստոտէլ Հոմերոսում¹³. ոչ պիտացաւ եւ Դիմոսթէնէս վիճաբանութեանց Հերմոգրինի, այլ Հերմոգրինէս նմա:

24 Բայց տարակուսեն՝ եթէ զիա՞րդ պղատոնականքն զբանականս եւ մասն եւ գործի նոյն իրաց ասեն կարաւղ գոյ, զի թէպէտ եւ ձեռն՝ եւ մասն եւ գործի, այլ մասն ամենայն մարմնոյ է, իսկ գործի՝ ներանձնաւորին. քանզի մեռելոյ ձեռն, թէպէտ եւ մասն է բոլոր մարմնոյն, այլ գործի ոչ է. քանզի տալոյ եւ առնելոյ գործի է. եւ կուծն՝ եւ մասն է եւ գործի, այլ ոչ նոյն իրի. այլ ամանն գործի է պարունակեցելոցն¹⁴, իսկ կժաւոր ջուր՝ մասն է այլոյ ջրոյ: 25 Առ որս եթէ ասիցեն պղատոնականքն, եթէ եւ ոչ մեք ասեմք նոյն իրաց գործի եւ մասն զբանականն, այլ կամ նոյնում այլ եւ այլ, եւ կամ զնոյնն այլում եւ այլում մասն եւ գործի, որպէս զձեռն. քանզի շնչաւորին գործի, իսկ մարմնոյն մասն եւ կամ նոյնում գոյ այլ եւ այլ՝ եւ գործի եւ մասն. քանզի իմաստասիրութեան¹⁵ բանականս¹⁶ եւ գործի եւ մասն. քանզի բնութիւն իրողութեանց գոյ ապացոյց՝ մասն է իմաստասիրութեան, իսկ ի կիտակսն՝ գործի:

1 Ընդ այսոսիկ հանդերձ աստուծով եւ առաջիկայ ՊՐԱԿՔ Ե

2 «Նախ ասել¹⁷ արժան է յազագս զի՞նչ, եւ որո՞յ խոհմունս¹⁸, թէ սակս ապացուցի, եւ մակացութեան ապացուցականի»: 3 Ի նախերգանի իրողութեանս զզիտաւորութիւն նորին քարոզէ, եւ այլ

1 D եւ ի նկատմունս, E եւ ի տիկմունս, F տողատակումն ճշունս է՝ Միւս օրինակ՝ դիտմունս
 2 BCF ստորասակնագոյն եւ ժողովեալն
 3 CDE չի՞րի
 4 E իրողութիւնս
 5 A բացակատարել
 6 ABC այնորիկ
 7 ABC չի՞ր որի
 8 BDE տարածայնքն են
 9 A ոչ էին
 10 A չի՞ր յինն
 11 E ոչ պիտոյացաւ
 12 ACE զյազագս

13 AB Հոմերոնում
 14 A պարունակելոյն
 15 E իմաստասիրութիւն
 16 E չի՞ր բանականս
 17 B նախադասիլ փիլոսոփա ասել
 18 A խորհմունս

ինչ՝ պիտանացու դիտաւորութեան¹: 4 Արդ զդիտաւորութիւն, զի յաղագս ապացուցի եւ մակացութեան ապացուցականի: 5 Իսկ պիտանացուք հինգ են, քանզի սահմանէ յառաջ զառաջարկութիւն, զսահման, զհաւաքաբանութիւն, ասէ² ո՞ր աւարտուն եւ ո՞ր անաւարտ, զի՞նչ որ ի բոլորում, եւ զի՞նչ որ ոչ ի բոլորում, եւ զի՞նչ ի մասնում, եւ զի՞նչ ըստ ամենայնում, եւ ոչ ըստ ումեքում:

6 Բայց տարակուսին եւ առ առաջինն, եւ առ երկրորդն: 7 Եւ առ առաջինն՝ եթէ ընդէ՞ր յաղագս պարզ հաւաքաբանութեան ելոյ դիտաւորութիւն³ յաղագս ապացուցի ճառէ անդուստ ի նախերգանէն⁴: 8 Առ որս ասեմք զպատճառսն զայս, եթէ ոչ ինչ անտեղի⁵ յաղագս պարզ հաւաքաբանութեան ելոյ⁶ դիտաւորութեան, եւ յաղագս⁷ ապացուցի ճառելն եւ գոլ⁸ դիտաւորութիւն: 9 Վասն զի ի ձեռն ապացուցական հաւաքաբանութեան եւ պարզ հաւաքաբանութեան առնէ խնդիր: 10 Արդ այսպէս առ առաջինն:

11 Իսկ առ երկրորդն տարակուսին, եթէ ընդէ՞ր⁹ սահման ի միջի¹⁰ դասեաց առաջարկութեան եւ հաւաքաբանութեան. քանզի արժան էր՝ կամ ըստ¹¹ մեզ կարգաւորութեան պիտանանայ, եւ զհաւաստեալն նախադասել, իսկ հաւաստի մեզ քան զայլս ամենայն սահման է, կամ ըստ բնութեան, եւ ի վերջոյ դասել զսահման

քան զառաջարկութիւն, եւ զհաւաքաբանութիւն:

12 Առ որս չորս ասեմք լուծմունս: 13 Նախ՝ եթէ է իւր Արիստոտէլի անուն սահմանիդ. քանզի ինքն ասէ, եթէ Սահման կոչեմ՝ յոր լուծանի առաջարկութիւն. իսկ կոչեմ¹² առաջարկութիւն գոլով՝ յայտ առնէ, եթէ Արիստոտէլի է այդպէս սահման անուանել. եւ վասն ¹³այնորիկ ոչ է արժան յաւտարածայնութենէ սկիզբն առնել բառից, այլ ի ծանաւթիցն¹⁴: 14 Այս առաջին պատճառն:

15 Երկրորդ պատճառն, եթէ պէտս ունի իւր առաջարկութեան սահմանի սահմանումն¹⁵, քանզի սահման է յոր առաջարկութիւն վերլուծանի. արդ պարտ էր յետ առաջարկութեան զսահմանն գոլ:

16 Երրորդ պատճառ, եթէ Յաղագս¹⁶ մեկնութեան վասն առաջարկութեանց ճառէր¹⁷. արդ որպէս զի ¹⁸զպատճառ յառաջեցելոցն եղիցի, վասն զի նախադասեաց զառաջարկութիւնն քան զերիսն, եւ իսկոյն զսահմանն. քանզի թէպէտ յաղագս պարզ ճայնիցն խաւսեցաւ եւ յաղագս մեկնութեան անուան եւ բայի եւ ի Ստորոգութիւնսն, այլ ի Ստորոգութիւնսն որպէս պարզ ճայնս միայն քննէ զնոսա¹⁹: 17 Իսկ ի Յաղագս մեկնութեան որպէս ասութիւնս խնդրէ զանուն եւ զբայ. որպէս եւ զառաջարկութիւն ուսուցանէ եւ աստ, ²⁰եւ Յաղագս մեկնութեան. այլ Յաղագս մեկնութեան՝ որպէս երեւմունս ուսուցանէ զնո-

1 CD դիտաւորութիւն, E պիտանացու դիտաւորութիւն
 2 F չի՞ր ասէ
 3 BF դիտաւորութեան
 4 DF ի նախերգանի
 5 BCF տեղի է փխ անտեղի
 6 B հաւաքական բուեղոյ
 7 BCDE յայլ փխ յաղագս
 8 BF գնոյն գոլ
 9 ABCDE չի՞ր ընդէր
 10 ABCDE ի մեջ
 11 B եւ զըստ փխ կամ ըստ

12 A կոչումն
 13 A այսորիկ ոչ է պարտ
 14 B ի ծանաւթագունիցն
 15 A սահման ի սահմանի սահմանումն
 16 B յայլ փխ յաղագս
 17 F քանէ
 18 A զպատճառսն ած, BDE ըզպատճառսն ած յառաջացելոց սկիզբն հանդերձելոց եղիցի
 19 B զնա
 20 AB չի՞ր եւ յաղագս մեկնութեան

սա. իսկ աստ որպէս մասունս հաւաքաբանութեանց:

18 Չորրորդ պատճառ, վայել է սահմանումն ի միջում դասիլ ¹առաջարկութեան եւ հաւաքաբանութեան, ²զի տեսակարարէ զհաւաքաբանութիւնն միջին սահմանս: 19 Ձի այս միջին սահմանս կամ ենթակայ է ումեմն, այլ սահմանացն, եւ այլում ստորոգի, եւ առնէ զառաջին ձեւն. եւ³ երկոցունց ենթակայ է, եւ կամ զերկոցունց ստորոգի եւ առնէ⁴ զերկրորդ եւ զերրորդ ձեւն. այլ թէ զերկոցունց ստորոգի, զերկրորդն առնէ ձեւ. իսկ եթէ զերկոցունց ենթակայի, առնէ զերրորդն⁵:

20 Նախադասիլ⁶ ատտիկեան է⁷ շարադրութիւն. քանզի առլսի եւ պարտն՝ յաղագս զի՞նչ, եւ որո՞յ խոհմունս⁸: 21 Բարւոք դասեաց⁹ յաղագս¹⁰ զի՞նչ առ հայցականն, իսկ յաղագս որո՞յն՝ առ սեռականն: 22 ¹¹Այլ զի՞նչ եթէ յաղագս գապացոյցն. ահա առ հայցականն դասեաց: 23 Եւ յաղագս որո՞յ խոհմունս, եթէ յաղագս մակացութեան ապացուցականին. ապա առ սեռականն շարադասեաց:

24 Եւ պարտ է գիտել, եթէ այլ է ապացոյց, եւ այլ է մակացութիւն ապացուցականն¹². քանզի ապացոյցն ինքն իսկ ներգործութիւն է. իսկ մակացութիւն¹³ ապացուցական՝ նոյն ինքն ունակութիւն:

25 Եթէ¹⁴ ի նոյնում գոն ենթակայում, արարողականն¹⁵ է ունակութիւն ներգործութեան. իսկ եթէ յայլում եւ յայլում, արարողական է ներգործութիւն ունակութեան: 26 Քանզի արարողական է ուսուցանողին¹⁶ ներգործութիւն. այս ինքն վարդապետութիւն ունակութեան ունողին:

27 Եւ զի՞նչ առաջարկութիւն եւ սահման եւ զի՞նչ հաւաքաբանութիւն. ահա ի միջում դասեաց զսահման առաջարկութեան եւ հաւաքաբանութեան: 28 Եւ¹⁷ յետ այսորիկ ո՞ր աւարտումն եւ որ անաւարտն: 29 Եւ պարտ է գիտել՝ եթէ¹⁸ աւարտումն եւ անաւարտն զանազանութիւնք են հաւաքաբանութեանց: 30 Եւ զի՞նչ որ ի բոլորումն¹⁹ եւ ըստ ամենայնում, եւ ոչ ըստ ումեքումն. այսորիկ զանազանութիւնք են առաջարկութեանց, որ ելումն եւ իջումն քատակեալք: 31 Ձի եթէ ի ներքուստ քո սկիզբն առնէ²⁰, որգոն՝ յորժամ ասէ, եթէ մարդ կենդանի, այս ի ներ բոլորումն ասի. քանզի ի բոլորումն կենդանոջն է մարդն, որպէս ի սեռումն: 32 Իսկ եթէ ի վերուստ սկիզբն առնէ եւ ասէ՝ կենդանի ըստ ամենայն մարդումն, այս ըստ ամենայնում ասի: 33 Եւ նոցին հակակայքն՝ ոչ ներ ի բոլորումն եւ ոչ ըստ ումեքում:

1 A չի՛ք առաջարկութեան եւ հաւաքաբանութիւն, CD չի՛ք առաջարկութեան
2 CD զի եւ հաւաքաբանութեան տեսակարարէ, A զի եւ հաւաքաբանութեան տեսակարարէ, գիտաբանութիւն միջին սահմանէ
3 A եւ կամ
4 BF չի՛ք առնէ
5 E զերկրորդն
6 A նախադասել
7 A չի՛ք է
8 A խոհումն
9 A նախասեաց փիլ բարւոք դասեաց
10 AC գլխազգս
11 A յաղագս փիլ այլ, C չի՛ք այլ զինչ
12 A մակացութեան ապացուցական
13 A մակացութեան

14 AC եւ եթէ
15 A արարողական
16 B ուսուցողին
17 A չի՛ք եւ
18 BEF որ
19 A ներ ի բոլորում
20 BF ի սկզբանէ փիլ սկիզբն առնէ

1 ¹Ընդ այսուսիկ ²հանդերձ աստուծով եւ
³առաջիկայ պրակի

ՊՐԱԿՔ Զ

2 «Արդ է նախադասութիւն բան
յայտնաւդ ինչ ըստ ումեքում»։ 3 Ճանա-
պարհակից լինելով Արիստոտէլ իւրոց
հիւսմանց⁴, սահմանէ գնախադասութիւն,
այս ինքն գառաջարկութիւն, ասելով. Նա-
խադասութիւն է⁵ յայտնաւդ ինչ ըստ ու-
մեքում։ 4 Երկակի ելոյ առաջարկութեան,
կամ ստորոգականի, եւ կամ ստորադրա-
կանի, գստորոգականն միայնումն սահմա-
նէ. եւ որպէս ի ձեռին նորա գստորադրա-
կանն ունելով։ 5 Քանզի ստորադրականն՝
յորժամ յերկբայս լինին, ստորոգականացն
պէտս ունին առաջարկութեանց յարդա-
րումն։ 6 Ինչ⁶ ըստ ումեքումն, ոչ ստորա-
սութիւն յայտ առնելով. զի թերեւս ապա ի
վերայ ածեալ էր, եթէ⁷ ինչ բաց ումե-
քումն. որ է բացասութիւն։ 7 Այլ ինչ ըստ
ումեքումն այժմ առ որոշումն ասացեալ է
ստորադրականացն առաջարկութեանց.
քանզի նոքա ոչ յայտնեն ըստ ումեքումն,
այլ ումեմն գոլոյ զի⁸նչ է, եւ ումեմն ոչ
գոլոյ զինչ ոչ է⁹։ 8 Զի թէպէտ եւ զընդ-
հանուր հաւաքաբանութիւն սահմանեսցէ.
իսկ ընդհանուր հաւաքաբանութիւն ի հա-
նուր յառաջարկութենէ գոյ բաղկացեալ,
եւ պարտ էր զընդհանուր առաջարկու-
թիւն գոլ սահմանել։

9 Արդ ի յաղագս մեկնութեան եւ
զընդհանուր⁹ առաջարկութիւն սահմա-
նեաց՝ ասելով, եթէ Նախադասութիւն է
բան՝ ընդունակ ճշմարտութեան եւ ստու-

թեան. քանզի այս սահման եւ գստորադ-
րական առաջարկութիւնն¹⁰ պարունակէ։
10 Բայց սահմանեաց¹¹ եւ գստորադրա-
կանն¹² անդ ասելով այսպէս՝ Բան յայտ-
նաւդ ինչ ըստ ումեքումն, եւ ինչ բաց ու-
մեքում։ 11 Իսկ այժմ գստորոգականն
դարձեալ սահմանէ. վասն զի եւ սորա
միայնոյ սահման ուղղութեան պէտս ու-
նէր¹³. քանզի Յաղագս մեկնութեան ի
ձեռն թուելոյ նշանակութեանց լինէր¹⁴
ստորադրութիւն։ 12 Քանզի ասելն՝ ինչ
ըստ ումեքումն, եւ ինչ բաց ումեքէ, ոչ
ինչ այլ, եթէ ոչ ասել, եթէ առաջարկու-
թիւն՝ կամ ստորասական է, եւ կամ բացա-
սական։

13 Իսկ աստ¹⁵ ասացեալ¹⁶ գառաջար-
կութիւն բան գոլ յայտնողական ինչ ըստ
ումեքումն, սահմանական արար զբացա-
սութիւնն։ 14 Բայց թէպէտ գորակն նեղ¹⁷
ասաց, ոչ ասացեալ՝ թէ եւ ինչ բաց ումե-
քէ, սակայն զքանակն սփռեաց՝ ասելով, ե-
թէ բայց սա՝ կամ ընդհանուր է եւ կամ
մասնական եւ կամ առ անսահմանելի։
15 Քանզի զըստ իւրաքանչիւրսն ոչ յի-
շեաց, որպէս պարունակեցելոցն առ¹⁸ ան-
սահմանելեացն. քանզի ըստ իւրաքան-
չիւրքն առ անսահմանելիք։ 16 Բայց զա-
նազանին յայլոց առ անսահմանելեաց.
քանզի բնաւորեալք ունել՝ ոչ ունին. իսկ
նոքա ոչ բնաւորեալք են՝ եւ ոչ ունին¹⁹.
քանզի ոչ ոք կարե ասիլ²⁰ ոք Սոկրատէս

1 C վերնագիր չիֆ։
2 B չիֆ հանդերձ աստուծով
3 DE միայն Առաջիկայ պրակի
4 B հոսմանց
5 A է բան
6 F զինչ
7 A եթէ է
8 E չիֆ եւ ումեմն ոչ գոլոյ զինչ ոչ է
9 D ընդհանուր

10 BEF առաջարկութեանն
11 A սահմանելոյ, BEF սահմանելոց, D սահմանե-
լով
12 C գստորասականն
13 AB ունիւր, C ունի իւր
14 ABC լինիւր, F շինէր
15 A չիֆ աստ
16 AB ասաց
17 CDEF ել փխ ցեղ
18 A առ ի
19 E չիֆ իսկ նոքա ոչ բնաւորեալք են՝ եւ ոչ ունին
20 ABC ոչ ոք ասէ

կամ ամենայն ոք¹ Սոկրատէս. եւ կամ այլ ազգ, եթէ² ըստ իւրաքանչիւրքն ապականելիք, իսկ մասնականքն անապականք. քանզի միշտ է ոք մարդ, իսկ Սոկրատէս ապականելի է:

1 ³Ընդ այսոսիկ ⁴հանդերձ աստուծով եւ առաջիկայ պրակֆ

ՊՐԱԿՔ Է

2 Սահմանեալ զառաջարկութիւնն՝ իջանէ եւ ի տեսակս առաջարկութեան, երկու տարակուսանս առնելով մեզ տարակուսիլ: 3 Առաջին՝ եթէ ընդէ՞ր յաղագս հաւաքաբանութեան ելոյ զիտաւորութիւն⁵, եւ այսք եւ յաղագս հանուր առաջարկութեան: 4 Երկրորդ՝ թէ ընդէ՞ր⁶ ի տեսակս առաջարկութեանցն զանազանութեան⁷ գտրամաբանականն միայն ասէ առաջարկութիւն եւ զապացուցականն. իսկ զիմաստականն եւ զքերթողականն ոչ ասէ: 5 Արդ առ առաջինն ասեմք, եթէ իջեալ ի տեսակս առաջարկութեանցն՝ ոչ ինչ ընդհատ ի հանրականումն մնաց. քանզի զանազանին առաջարկութիւնք ոչ ընդ հանրականիւն իւրեանց սահմանաւ, քանզի մի սահման է, այլ այլովք ոմամբք: 6 Իսկ առ երկրորդն ասեմք, եթէ իջեալ ի տեսակս առաջարկութեանցն՝ զհուպան տարրորչէ, այս ինքն⁸ զբացացուցականն եւ գտրամաբանականն⁹: 7 Եւ այսք յաղագս այսորիկ¹⁰:

8 Յետ որոց ասէ զզանազանութիւն բացացուցականի առաջարկութեան եւ տրամաբանականի. եւ առ այժմ տարրորչէ զնոսա ի միմեանց եւ պիտոյիւք եւ նիւթով: 9 Եւ պիտոյիւք՝ եթէ տրամաբանականն հակասութիւն¹¹ հարցանէ եւ առաջարկութիւն առնէ ոչ զբոլորն, այլ զմասն ինչ հակասութեան, եւ այժմ սահմանէ այսպէս, եթէ Տրամաբանական նախադասութիւն է հարցումն¹² հակասութեան. իսկ ի¹³ հաւաքաբանողումն տրամատութիւն երեւեցելոց¹⁴, եւ ներկարծաւորին: 10 Իսկ ի Յաղագս մեկնութեան այսպէս սահմանէ զնա ասելով, Տրամաբանական է՝ հարցումն¹⁵ պատասխանւոյն միոյ նախադասութեան, կամ միոյ մասնական հակասութեան: 11 Վասն որոյ եւ տարակուսեն, եթէ զիա՞րդ գտրամաբանականն հարցումն հարցումն¹⁶ հակասութեան ասէ. իսկ ի Յաղագս մեկնութեան, միոյ պատասխանոյ հարցումն¹⁷, եւ կամ միոյ մասին նորա: 12 Առ որ Ամոնիոս ասէ լուծումն իմն այսպիսի, եթէ երկոքեան ճշմարիտ գոն. զի եւ որ¹⁸ զբոլոր հակասութիւնս¹⁹ հարցանէ՝ տրամաբանականն²⁰ յայտ առնեն, ուրացողական պատասխանիքն հաճոյացեալքն լուեցելումն մասնումն. իսկ զմի առաջարկութիւն ներգործութեամբ, զմիւս եւս մասն զաւրութեամբ յայտնելով: 13 Եւ այս յաղագս այսորիկ:

14 Բացացուցականն ոչ հարցանէ²¹, այլ առնու զկարծեցեալսն ճշմարիտ գոյնմա, թէպէտ եւ ոչ թուի տրամաբանո-

1 A չիֆ ոֆ
2 CE զի փիս եթէ
3 C վերնագիր չիֆ:
4 E չիֆ հանդերձ աստուծով եւ
5 B չիֆ դիտաւորութիւն
6 ADE էջ փիս ընդէր, C չիֆ թէ ընդէր
7 A զզանազանութիւն. երկրորդ, DE զանազանութիւն տրամաբանական
8 ACDE Բանգի փիս այս ինքն
9 CE ի տրամաբանականն փիս եւ գտրամաբանականն
10 A այսոցիկ

11 A զհակասութիւն
12 ABDE ուսողումն հարցումն, F ուսողումն
13 ACE չիֆ ի
14 A տրամաբանութիւն երեւեցելոյ
15 B հայցումն
16 BCDEF չիֆ 2-րդ հարցումն
17 B հայցումն
18 CE չիֆ որ
19 BF հակասութեանց
20 BF տրամաբանական է
21 ABCDE չհարցանէ

զումն: 15 Արդ այսպէս պիտոյիւք¹ զանազանին, այլ եւ նիւթով, զի բացացուցականումն ենթակայանայ ամենայն որ ինչ ճշմարիտ է, թէ եւ անկարծելի է. որդոն՝ թէ արեգակն կարի յոյժ մեծ է քան զերկիր, եւ երկիր քան զլուսին. թէպէտ եւ ոտնաչափ երեւի արեգակն: 16 Քանզի այս թէպէտ եւ անկարծելի է, այլ սակայն ճշմարիտ գոյ: 17 Իսկ տրամաբանականումն ամենայն որ ինչ կարծելի է՝ ենթակայանայ, թէպէտ եւ սուտ գոյ: 18 Իսկ ներկարծելի է եւ սուտ՝ ասելն, եթէ Աստուած զամենայն ինչ կարէ ներգործել. վասն զի բազմաց ամենեցուն այսպէս թուի: 19 Բայց սուտ է, վասն զի ի չարիս անկարուծիւն ունի նոյնպէս եւ Աստուած, սակս անչափ² բարուոյն՝ որ բնութեամբ եւ ի վեր քան զբնութիւն գոյ գոյացեալ³ ի նմա: 20 Եւ դարձեալ ներկարծաւոր է եւ սուտ՝ ասելն, եթէ ամենայն մարմին ի տեղուջ է. քանզի այս թէպէտ եւ է ներկարծաւոր, բայց սուտ է. քանզի անմոլարն⁴ ոչ է ի տեղուջն. թէ եւ մակերեւոյթ ասիցեմք զտեղին, ոչ ինչ արտաքոյ է անմոլարն՝ ոչ մակերեւոյթ եւ ոչ մարմին. թէպէտ եւ մարմին տացի, գտցի նոյն ինքն տեղական մարմին ի տեղուջ. եւ այս յանհունս: 21 Եւ այսք մինչեւ ցայսչափ⁵:

22 Նախադասութիւն է բան ուրումն ըստ ումեքում, որպէս զի թէ ասէր, եթէ նախադասութիւն է, ոչ որպէս թէ երբեմն բան ստորասական կամ բացասական. քանզի ենթագրական է այսպիսիս, որպէս ի ձեռն բացասութեան նշանակելեացն, այլ որպէս այժմու բանս ստորասական՝ ումեմք ուրումն⁶ ըստ ումեքումն: 23 Եւ սա՛ կամ ընդհանուր եւ կամ ներմասնումն, մասնա-

կան եւ կամ անորոշելի. ահա նեղեալ զորակն՝ զքանակն տարածեաց բացաթուեալ զտեսակս առաջարկութեանցն. իսկ զըստ իւրաքանչիւրան եթող. եւ եթէ որոյ⁷ պատճառի⁸ ասացաք:

24 Բայց ասեմ⁹ ընդհանուր ամենայնում, կամ ոչ ումեքումն՝ ընդհանուր առաջարկութիւնք զերկուս ընդհանուրս առ որոշմունս պարունակեալք ունին. իսկ ներմասնումն ումեքում, կամ ոչ ումեքում, եւ ոչ ամենայնում: 25 Զմասնական բացասութիւն երկակի անուանէ, ոչ ումեքում եւ ոչ ամենայնում, որպէս ումեմն ստորասութիւն հակակայց¹⁰ ոչ ումեքում ոչ է. իսկ որպէս ընդհանրում ամենայնում ստորասութիւն հակակայիցեալ¹¹ բացասաբար՝ ոչ ամենայնում: 26 Բայց ոչ ինչ տարբերեցէ առիթ լինել զերկաքանչիւրոցն հաւաքաբանութեան¹² զտարակուսեալն ի¹³ տեսութիւն: 27 Ասէ, եթէ ընդէ՞ր հանուր¹⁴ հաւաքաբանութեան¹⁵ ելոյ դիտաւորութիւն, եւ այսորիկ¹⁶ եւ ընդհանուր առաջարկութեան¹⁷, ինքն ի տեսակս առաջարկութեանցն էջ: 28 Եւ ասէ՛ եթէ ոչինչ արգելու զմեզ ի խնդրելոյ զտեսակս առաջարկութեան, առ ի լինելոյ զդիտաւորութիւն¹⁸, եւ յաղագս ընդհանուր առաջարկութեան՝ եւ ընդհանուր հաւաքաբանութեան: 29 Քանզի հանուրքն բանիւ ոչինչ զանագանին¹⁹ առաջարկութիւնքն. քանզի

1 D պիտիւք
 2 D այն փիս անչափ
 3 ADE գոյակցեալ
 4 C անմոլորն
 5 AE յայսչափ
 6 A որումն

7 F եւ թէ յորոց
 8 DE պատճառէ
 9 BF այսմ փիս ասեմ
 10 A ստորասութեան հակակայց
 11 A ստորասութեան հակակայիցեալ
 12 BCDEF հաւաքաբանութիւն
 13 E չի՞ր ի
 14 B չի՞ր հանուր
 15 C հաւաքաբանութիւն
 16 ADF այսորիկ
 17 B առաջարկութիւն
 18 F դիտաւորութեան
 19 BCF զանագանի

զամենայն առաջարկութիւն որպէս այսու սահմանէ, բան է ուրումն¹ ըստ ումեքում:

1 Չնդ այսոսիկ հանդերձ աստուծով եւ առաջիկայ պրակֆ

ՊՐԱԿԳ Ը

2 «Բայց սահման կոչեմ, յոր վերլուծանի նախադասութիւն»:³ Յետ սահմանի առաջարկութեան՝ սահմանէ եւ³ զսահման՝ ասելով, եթէ Սահման կոչեմ, յոր վերլուծանի նախադասութիւն, ի ստորոգեալն եւ յենթակայն⁴, եթէ ոմն է՝ յաղագս որոյ է բան⁵, իսկ ոմն՝ յաղագս նորա ասացեալ, որք տիրապէս մասունք գոն առաջարկութեան: 4 Իսկ այլքն ամենայն զշաղկապի տեղիսն ունին, որպէս էրն. եւ կամ զքանակն չափեն, որպէս առորոշմունքն. եւ կամ զորակն, որպէս եղանակն. եւ կամ զբացմունսն⁶:

5 Եւ զի կարեւոր⁷ մասունք առաջարկութեան այսք են, աստուստ է յայտ. վասն զի ամենայն առաջարկութիւն ի հարկէ ենթակայ ունի եւ ստորոգումն. եւ թարց երկուց⁸ այսոցիկ ոչ երբէք լինի առաջարկութիւն. բայց թարց այլոց լինին առաջարկութիւնք⁹. թարց յեղանակի¹⁰ եւ բացման եւ առստորոգման¹¹, առորոշման: 6 Քանզի Սոկրատէս ճեմի, ոչ ինչ յայսպիսեաց ունի, իսկ յաւելեալ՝ եթէ առազրեցելոյ ումեք, կամ տրամատեցելոյ՝ զամենայն առաջարկութիւնս պարունակեաց, զոր

Յաղագս մեկնութեան բացատրեաց: 7 Քանզի երկուց ելոց հակադրութեանց, առազրութեան¹² եւ բացառութեան, տրամատութեան եւ շարադրութեան, զմին յիշելով յերկաքանչիւրոցն հակադրութեանց՝ եւ զայլն ստորակնարկէ¹³. Ի ձեռն առազրութեան զբացառութիւնն յայտնելով, իսկ ի ձեռն տրամատութեան զշարադրութիւնն: 8 Եւ իւրաքանչիւր ումեք¹⁴ ի չորիցս յայսցանէ առազրիցելոց գոլոյ կամ ոչ գոլոյն, ութ լինին ընդ ամենայն. որգոն՝ առազրութեան գոլոյ՝ առազրութեան ոչ գոլոյ. բացառութեան գոլոյ՝ բացառութեան ոչ գոլոյ. տրամատութեան գոլոյ՝ տրամատութեան ոչ գոլոյ. շարադրութեան գոլոյ՝ շարադրութեան ոչ գոլոյ: 9 Արդ զամենայն առաջարկութիւն պարունակեաց:

10 Որպէս ասացաք եւ ցուցաք¹⁵, այս բայ է¹⁶. քանզի ընդհանուր առաջարկութիւնք, որպիսի ինչ եւ է, կամ զաւրութեամբ ունի զէն առ ստորոգելով, կամ ներգործութեամբ: 11 Զաւրութեամբ, որպէս ամենայն մարդ¹⁷ ենթակայցէ, եւ աստի¹⁸ ստորոգելոյ: 12 Քանզի թէպէտ եւ ոմանք ի դոցանէ ներգործութեամբ ունին զէն, որպէս Աստուած է, Սոկրատէս է, այլ գոյն¹⁹ առ ստորոգելով զաւրութեամբ ունին, վասն զի ամենայն բայ յիւր ընդունելութիւն վերլուծանելով. որգոն՝ Սոկրատէս է²⁰, Սոկրատէս գոլով է. Աստուած է²¹, Աստուած գոլով է:

1 B ումեք, AC որումն, F բան ուրումն
2 C վերնագիր չիք, DE ընդ այսոսիկ եւ առաջիկայ պրակֆ
3 AD չիք եւ
4 ACDE եւ ի նենթակայն
5 CD որոյ բանն
6 A բացմունսն
7 E զկարեւոր փիլոսոֆ կարեւոր
8 DE երկոցունց
9 CF լինի առաջարկութիւն
10 ADE սրացման երրորդի փիլոսոֆ եւ բացման եւ, C ուրացման փիլոսոֆ եւ բացման
11 A առստորոգումն

12 CEF առգրութեան
13 CE ըստ որակն արկէ
14 A իւրաքանչիւրում
15 AE ասացաք եւ ցուցաք
16 A բայ է, B այսքար է
17 ADE արտ փիլոսոֆ մարդ
18 A ասի
19 EF դոյն
20 A չիք Սոկրատէս է
21 A չիք Աստուած է

13 Արդ այսք՝ որք զաւրութեամբ ունին զէն առկայացեալ, կամ ստորասականք են, կամ բացասականք: 14 Եւ ստորասականք գոլով՝ ստորասութիւն¹ ունին գոլոյն. իսկ գոլդ է՝ պարտ է իմանալ որ ի բաց բառնայ ի նոցանէ. իսկ բացասականք գոլով՝ բացասութիւն ոչ գոլոյն ունին. քանզի ի բաց բառնայ² ի նոցանէ՝ ³ոչ գոլոյն: 15 Իսկ որք ներգործութեամբ ունին զէն, կամ յեղանակա⁴ են, կամ առանց յեղանակի. առանց յեղանակի՝ որպէս Սոկրատէս արդար է, Սոկրատէս արդար ոչ է: 16 Արդ ստորասականք գոլով՝ առադրութիւն ունին գոլոյն, իսկ բացասականք գոլով առադրութիւն ունին ոչ գոլոյն. իսկ թէ յեղանակաւ են, կամ ստորասականք են, կամ բացասականք. եւ ըստ իւրաքանչիւրոցդ⁵, կամ պարզք գոն եւ կամ ի գերադրութենէ⁶: 17 Արդ պարզ⁷ գոլով ստորասութեան⁸, եւ յեղանակ⁹ ¹⁰շարադրութեան ունի Սոկրատէս մարթաբար¹¹:

1 12Ընդ այսուսիկ հանդերձ աստուծով եւ առաջիկայ պրակի

ՊՐԱԿՔ Թ

2 «Հաւաքաբանութիւն է բան, յորում¹³ դրիցելոց ոմանց՝ նմա նովին այլ ինչ¹⁴ առկացելեալքն՝ ի հարկէ հանդիպի զնոյնս¹⁵

1 A բացասութիւն
 2 ABCDE բարձեալ
 3 ADE ոչ գոլն, ոչ եթէ փ/ս ոչ գոլոյն: Իսկ որք
 4 F յեղականաւ փ/ս յեղանակաւ
 5 A երկաբանչիւրոցդ
 6 BF ի գերադրութեան
 7 ACE պարզ
 8 ACDE ստորասութիւն
 9 AE յեղանակաւ, BD յեղանակով
 10 ABCDE շարադրութիւն գոլոյ ունի
 11 EF մարդաբար
 12 BCD վերնագիր չի: Բ
 13 ACDE յորում է
 14 B ինչ անարգի, C ինչ անարգի, DE ինչ անարգի
 15 CE գոյնս, F գայնս

այսպէս¹⁶ ունելով»: 3 Յետ մասանցն հաւաքաբանութեան, զհոլպսն ասեմ՝ այս ինքն զառաջարկութիւնս, եւ զհեռիսն՝ այս ինքն զսահմանսն, գայ Արիստոտէլ եւ գառ ի նոցանէ բաղկացեալ հաւաքաբանութիւնս՝ յերից իրողութեանց ¹⁷արտաքս առկացուցանելով զնախերգան առաջիկայի իրողութեան, Ստորագութեան, Յաղագս մեկնութեան եւ Վերլուծականացն: 4 Քանզի որպէս ի Ստորագութեանց յաղագս պարզ ճայնիցն խաւսեցաւ, որք են սահմանք. իսկ ի Յաղագս մեկնութեան՝ յաղագս նախադասութեանց. իսկ ի Վերլուծականսն՝ յաղագս պարզ հաւաքաբանութեան. նոյնպէս եւ յարակալում նախերգանումս սահմանեալ զառաջարկութիւն եւ զսահմանս, այսպէս գայ ի հաւաքաբանութիւն:

5 Բայց սահմանէ զամենայն հաւաքաբանութիւն, զստորագականն եւ կամ զստորադրականն՝ ոչ գայս եւ ոչ գայն: 6 Քանզի ¹⁸բացատրեցեալդ սահման ամենայնում հաւաքաբանութեան պատշաճի: 7 Իսկ Աղէքսանդրոս առյարակայիցս¹⁹ պատմիչ բանից, ասէ՝ թէ Ջստորագականն միայն սահմանէ հաւաքաբանութիւն, երկոքումբք այսոքիւք հաւատարմացուցանելով զբանդ: 8 Միով եւ առաջնով, եթէ զստորագական առաջարկութիւն սահմանեաց միայն. իսկ ստորագականք²⁰ հաւաքաբանութիւնք ի ստորագականացն զանյառաջարկութեանց: 9 Ասէ եւ երկրորդ²¹ պատճառ, եթէ զանագանութիւնս յարադրէ աւարտնոց եւ անաւարտից հաւաքաբանութեանց. իսկ աւարտեալն եւ անաւարտն՝ ստորագականացն միայն գոյ հաւաքաբանութեանց:

16 B այնպէս
 17 ABDE արտաքս տա կացուցանելով
 18 A բացատրեցեալ սահմանդ ամենայն
 19 B առ յարակայիցս
 20 D իսկ ստորակամ
 21 E երկու փ/ս երկրորդ

10 Առ որս ասեմք մեք նախ եւ առաջին, եթէ ստորոգականն միայն սահմանէ առաջարկութիւն, որպէս այն ինչ Յաղագս մեկնութեան զամենայն առաջարկութիւն սահմանեալ: 11 Բայց թէ ընդէ՞ր¹ զստորոգականն միայն սահմանէ զառաջարկութիւն, զպատճառն ասացաք: 12 Բայց լուծանեմք եւ զերկրորդն այսպէս, եթէ ստորադրականացն զանազանութիւն յարադրէ հուպ ի կատարումն առաջնոյ հատածի² առաջնոյ³ ճառի⁴, որ առձեռն է: 13 Եւ արդ այսոքիկ առ Աղէքսանդրոս ասացին: 14 Այլ վասն զի Արիստոտէլ՝ եթէ զի՞նչ է հաւաքաբանութիւն, յարադրէ միայն, թողեալ զեթէէն: 15 Իսկ եթէէն յառաջագոյն է քան զզինչէն, բեր ցուցցուք, եթէ է հաւաքաբանութիւն: 16 Բայց զայս առնեմք վասն եփիկտիոսացն⁵ փիլիսոփայից, որք անհասութիւն արտանան, եւ այսուիկ ի բաց բառնան զհաւաքաբանութիւն, որպէս զգործին⁶ մտահասութեան⁷:

17 Բայց բառնան զհաւաքաբանութիւն այսպէս ձեռնարկելով. Ի ձեռն հաւաքաբանութեան՞ն ցուցանէք, ով ձերմականք, եթէ է հաւաքաբանութիւն, եթէ առանց հաւաքաբանութեան: 18 Եթէ առանց հաւաքաբանութեան, ոչ հաւանիմք ձեզ որպէս⁸ ոչ ցուցելոց. իսկ եթէ ի ձեռն հաւաքաբանութեան, զսկզբանումն⁹ հայցելի է զերկբայացեալն խոստովանեալ առնելով¹⁰: 19 Այլ եւ յաղագս հաւաքաբանութեան, որ եցոյցն՝ եթէ է հաւաքաբա-

նութիւն, զնոյնս ցուցէք¹¹. եւ այս յանհունս:

20 Առ որս ասեմք զայսոսիկ, եթէ ձերովք իսկ ըմբռնեցայք թեւաւք ըստ¹² առասպելումն որպէս¹³ մանկունականք¹⁴: 21 Քանզի զնոյն եւ մեք ասեմք առ ձեզ, եթէ ուստի՞ ասէք՝ եթէ ոչ է հաւաքաբանութիւն. բացացուցանելով, եթէ ոչ բացացուցանելով: 22 Եւ զիա՞րդ կարողութիւն է՝ ոչ ելոյ¹⁵ հաւաքաբանութեան ըստ ձեզ՝ հաւաքաբանութեամբ պիտալ. զոր ի բաց բառնալ ձեռնարկէք. այլ եւ ոչ յանհունս ելանեմք: 23 Քանզի հաւաքաբանութիւնն՝ որ եցոյց, եթէ է հաւաքաբանութիւն, եւ զինքն եցոյց, թէպէտ եւ ոչ որպէս հաւաքաբանութիւն, այլ որպէս հաւաքաբանելի. որպէս եւ սահման եւ զինքն սահմանէ, թէպէտ եւ ոչ որպէս սահման, այլ որպէս սահմանելի: 24 Բայց արդ այսպիսի բան՝ որ ցուցանէ, եթէ է հաւաքաբանումն¹⁶, այլ¹⁷ այլովն ցուցանելի է՝ եթէ է¹⁸ հաւաքաբանումն: 25 Քանզի բնութիւն ոչ զամենայն ինչ թաքոյց. զի ոչ էր ապա գտանելն, եւ ոչ զամենայն ինչ յայտնեաց, զի ոչ էր ապա¹⁹ խնդրել, այլ խնդրելն եւ գտանելն: 26 Բայց եկն մարդկային տրամախոհութիւնն հաւաքաբանել յայսպիսուոյ պատճառէ. քանզի տեսանեն զամենայն իրս ոչ ամենեւիմք հաղորդեալս ընդ միմեանս. քանզի ոչ էր ապա այլ այլով գտանել²⁰. վասն զի ամենայն ինչ յինքեանս ցուցանիւր, որ զգայութեանց է յատուկ, եւ ոչ հաւաքաբանութեան. եւ ոչ²¹

1 ADE զի փխ թէ ընդէր
 2 BD հատածիս, E հալածիս
 3 E յառաջնոյ
 4 D պատճառիս փխ ճառիս
 5 ACE եփեկտիոսացն, B եփեկտիոսացն, D եփիկտոսացն
 6 A գգործի
 7 E հասութեան
 8 A չի՞ որպէս
 9 A զի սկզբանումն
 10 C խոստովանեալն խոստովանեալ առնելով, FE առնելով

11 ABC ցուցուք, DE եւ զնոյնս ցուցցուք
 12 CDEF չի՞ ըստ
 13 ABCD ով փխ որպէս
 14 B մակունականք, D մականունականք
 15 E այլոյ
 16 A հաւաքաբանութիւն
 17 CD եթէ այլ
 18 CDE եւ փխ եթէ է
 19 ACDE խնդրիլն, այլ խնդրիլն եւ գտանիլն
 20 ACE գտանիլ
 21 E չի՞ ոչ

դարձեալ ամենեւիմբ¹ զանազանեալս ի միմեանց, քանզի ոչ երբէք յերկուց բացասութեանց եզրակացութիւն լինի: 27 Եւ այսոքիկ յաղագս այսորիկ:

28 Յետ որոց եկեսցուք ի նոյն ինքն ի հաւաքաբանութիւն, զոր սահմանէ այսպէս. «Հաւաքաբանումն է բան, յորում զրիցելոց ոմանց, այլ ինչ առկացելովք² ի հարկէ հանդիպի զնոյնս գոլ»: 29 Այս սահման եւ սեռ ունի. քանզի բան՝ սեռ է բացացուցականին, տրամաբանականին, ճարտասանականին, իմաստականին, քերթողականին³. եւ բաղկացուցիչ զանազանութիւնս: 30 Իսկ զանազանութեանց ոմանք ի նիւթոյ են, որպէս ոմանց եւ դրիցելոցն. իսկ ոմանք ի տեսակէ, որպէս այլ ինչ առկացելեաւքն ի հարկէ. եւ այլքն ամենայն ի կարգումն: 31 Իսկ տեսակ հաւաքաբանութեան եզրակացութիւնք⁴: 32 Բայց հաւատեսցուք զիւրաքանչիւր ոք ի բառիցդ առանձին:

33 «Բան՝ յորում զրիցելոց ոմանց»: 34 Դրիցելոց ասաց, եւ ոչ ստորադրիցելոց, ապա թէ ոչ՝ զստորադրականն միայն սահմանէր. եւ ոչ ստորոգիցելոց ասաց, ապա թէ ոչ զստորոգրականն միայն սահմանէր. այլ՝ զրիցելոց ասաց. այսինքն՝ խոստովանիցելոց: 35 Եւ պարառոցեաց⁵ զստորոգականսն եւ զստորադրականսն. քանզի առաջարկութիւնքն⁶ խոստովանեցեալք ոմանք գոն: 36 Եւ ի ստորոգականսն, վասն զի առաջարկութիւն⁷. իսկ ՝ստորադրականին, որպէս շարամերձական եւ առասութիւն: 37 Եւ զի զրիցելոցն՝ խոստովանեցե-

լոց⁹ է, յայտ է. վասն զի նշանակութեանց դրութիւն է խոստովանութիւն: 38 Իսկ զրիցելոց ասաց առ հակորոշումն այլոց բանից, որպէս¹⁰ ըղձականին, հրամանականին¹¹ եւ հակորոշեցելոցն բացերեւականումն¹². քանզի յոչ ուրուք վերայ նոցա նախենթակայէ ինչ երբէք խոստովանեցեալ: 39 Բայց յոգնակի ասաց՝ զրիցելոց, ի ոչ եզակի՝ զրիցելոյ. վասն շարամերձականաց, եւ տարալծականաց¹³, եւ վասն հակադարձմանց՝ եւ վասն եզառածիցն. քանզի ի նոսա մի զմիոյ զկնի երթայ:

40 Որգոն, որպէս շարամերձականն՝ եթէ է արեգակն ի վերայ երկրի՝ տիւ է. այլ արդ¹⁴ ի վերայ երկրի, ապա ուրեմն տիւ է. եւ ի տարալծականսն¹⁵ նմանապէս, կամ տիւ է եւ կամ գիշեր, այլ ահա տիւ է, գիշեր ապա ուրեմն ոչ է: 41 Նմանապէս եւ ի հակադարձումն¹⁶ մի զմիոյ զկնի երթայ. որգոն¹⁷, եթէ ոչ ոք քար՝ մարդ է, եւ ոչ ոք մարդ՝ քար է. եւ զի յեզառածսն մի միում հետեւի. բայց պիտոյ են¹⁸ եզառածիցն ճարտասանքն. որգոն՝ այս անուն պճնաւդ, ապա ուրեմն եւ շուն. այս անուն մեռաւ առընթեր կալով նորա որ եսպան, մեռելումն ապա ուրեմն սպանաւդ: 42 Արդ այսպիսեացս պիտային հաւաքաբանութեանց եւ Եսքինէս¹⁹ ընդդէմ Դէմոսթենայ²⁰ ասելով. քանզի որդիատեացն եւ հայր չար²¹, յաւել, թերեւս ոչ երբէք հրապարակութեամբ երեւեսցի քաղցրապի-

1 A ամենեւիմ
2 A առկացելեոֆն, E առկացեալ է
3 A քերթողականիմ
4 A հաւաքաբանութիւնն եզրակացութեանցն, BDE եզրակացութեանցն
5 CDE պատառոցեաց
6 A չիք առաջարկութիւնիմ
7 BDE առաջարկութիւնիմ
8 AB ի փի իսկ

9 ACD խոստովանելոց
10 DE չիք որպէս
11 DE հրամայականիմ
12 ADE բացերեւականումն
13 AD տարալուծականաց
14 C արդ է
15 AD տարալուծականսն
16 A ի հակադարձումն
17 ACDE եւ փի/ս որգոն
18 A պիտային, CE պիտային
19 A Եսքինէս
20 AC Թեմոստենայ, BDE Թեմոստիմայ
21 ACD չիք չար

տակ: 43 Այսօրիկ ամենեքեան անա-
լարտք են հաւաքաբանութիւնք:

44 Բայց զի կոչեցին անալարտունք.
այսպէս պարտ է ասել. այս անուն
պճնաւղ. ամենայն պճնաւղ շուն, ապա ու-
րեմն այս անուն շուն է: 45 Այս անուն ա-
ռաւ ի գիշերումն առընթեր նորա կալով
սպանումն, առելումն ամենայնի սպանող
է¹ այս անուն, ապա ուրեմն այս անուն²
սպանող է. նմանապէս եւ զԵսքինեայ հա-
ւաքաբանութիւն այսպէս պարտ է ասել.
Դէմոսթենէս որդիատեաց եւ հայր չար. ա-
մենայն այսպիսի թերեւս ոչ երբէք երե-
ւեսցի հրապարակութեամբ քաղցրապի-
տակ: 46 Բայց պիտային եզառածիցն ճար-
տասանք՝ վասն չորից պատճառաց. կամ
խնայելով ի ժամանակն. քանզի առ հոսա-
նուտն ընտրելով առնէին, կամ շողոքոր-
թելով զգատաւորսն, որպէս զգիտունսն
հաւաքաբանից հնարից, եւ կամ այլազգա-
բար, որպէս զի³ ձայնակիցս⁴ կալցին զդա-
տաւորսն, որպէս վերալցաւղս զպակա-
սումն. քանզի ամենայն ոք ընդ ինքեան
առաւել հաւատայ ասողում, քան թէ այ-
լում: 47 Եւ այլազգաբար, եթէ կամաւոր-
ութեամբ՝ թողուին զմեծ առաջարկու-
թիւնն. վասն զի⁵ բազում անգամ սուտ
գտանէին⁶, եւ վասն թաքուցանելոյ
զսուտն՝ այնպէս առնէին:

48 Արդ, բարևոք ասաց դրիցելոց ու-
մանց. եւ ոչ դրիցելոյ ումեք⁷, քանզի ի
հաւաքաբանութիւնսն յոլովք դնին, եւ ա-
սելով դրիցելոց⁸, առակեաց⁹, եթէ է կարի

նուազ¹⁰ երկուքն¹¹ ամենայն իրաւք:
49 Վասն զի եւ բազում առաջարկութիւնս
կարողութիւն է դնել ի հաւաքաբանու-
թեան. եւ աստուտ եւ անուն հաւաքաբա-
նութեան գտաւ, որ նշանակէ բաղհաւա-
քումն. քանզի բաղ՝ յորոց վերայ առադրի,
բազմութիւն նշանակէ. որպէս մարտակից,
որպէս որդեկից, նոյնպէս հաւաքակցու-
թիւնք, այս ինքն բաղհաւաքումն, սակս
բազում ինչ միանգամայն հաւաքաբանե-
լոյ: 50 Քանզի ի սմա ոչ եթէ մի միումն
հետեւի, այլ բազմաց մին. որգոն՝ մարդ,
կենդանի, շնչաւոր. ապա ուրեմն եւ
մարդն շնչաւոր: 51 Ապա բազմաց՝ այս
ինքն կենդանումն եւ ներանձնաւորումն՝
մինն հետեւի, այս ինքն մարդ ներանձնա-
ւոր:

1 Ընդ այսուսիկ հանդերձ աստուծով եւ
առաջիկայ պրակֆ

ՊՐԱԿՓ Ժ

2 «Այլ ինչ առկացելեաւքն ի հարկէ
հանդիպի զնոյնս գոլ»: 3 Յետ առ ի նիւ-
թոյն զանագանութեանց՝ դայ եւ առ ի տե-
սակէն: 4 Այլն առկայանայ, որպէս զի այլ
եղիցի եզրակացութիւն առաջարկու-
թեանց¹², եւ ոչ մի ինչ ի նոցանէ իցէ¹³
նոյն. որգոն՝ մարդ կենդանի, կենդանին՝
գոյացութիւն, ապա ուրեմն մարդ գոյա-
ցութիւն: 5 Արդ մարդ գոյացութիւն, եւ
ոչ մի ինչ ոք է յառաջարկութեանցն¹⁴
նոյն գոլ. իսկ ոչ մի ինչ ¹⁵յառաջարկու-
թիւնս նոյն գոլ՝ է եզրակացութիւն, այս
ինքն բաղեզերումն: 6 Ասացաւ եւ վասն
տարբերեցելոցն¹⁶ առ ի ստոյիկեանցն

1 C ամենայն ի սպանողէ է
2 AC չի՞ այս անուն
3 F ի փիս զի
4 AC ձայնակից
5 B ֆանգի
6 A գտանի
7 BEF դրիցելոց փիս դրիցելոյ ումեք
8 CDE ընդ դրիցելոց
9 CF առակեաց

10 BDE նուազ
11 E երկուքն
12 D առաջարկութեան, E յառաջարկութեան
13 ACD է փիս իցէ
14 CD յառաջարկութիւն, F յառաջարկութեան
15 ACD յառաջարկութեան զնոյն գոլ զեզրակացու-
թիւն, այսինքն զբաղեզերումն
16 A տարբերեցելոյ

բաղձաւաքմանցն, որք զբաղեցերումն զնոյն առնէին միում յառաջարկութեանց: 7 Որգոն՝ եթէ տիւ է, տիւ է. այլ արգ տիւ է, ապա ուրեմն տիւ է. քանզի սոքա սակս թախանձանս ի ներքս ածելոյ եւ ոչ զգործոյն առնեն, քանզի ոչ եթէ այլ այլով ցուցանեն, այլ զինքն ինքեամբ. այսինքն զնոյն նոյնիւ:

8 Ինչ. ոչ է արհամարհել զինչդ, որպէս զմի փաղառութիւն. քանզի անչափ ունի զաւրութիւն, որպէս եւ որ ոչ ինչ գոլ բաղձաւաքականացն, եւ անբաղձաւաքմանց լծակութեանց¹: 9 Վասն զի պարտ է զիտել, եթէ որքանիք լծակցութիւնք նոյն հիւսմանց պատահեցելոց². իսկ նիւթոյն փոխեցելոյ ինչ ժողովեն՝ եւ մի, եւ ոչ բազում, այնոքիկ բաղձաւաքականք³ ասին⁴. իսկ որքանիք լծակցութիւնք նոյն հիւսմանց պատահեցելոց⁵, եւ միոյ⁶ սահմանի փոխեցելոյ, այլ ինչ եւ այլ ժողովեն, երբեմն⁷ ումեքումն, եւ երբեմն ոչ ամենայնի. այնոքիկ անբաղձաւաքականք ասին:

10 Ի հարկէ. ի հարկէ ասացաւ, որպէս զի հարկաւոր եւ կարեւոր եղիցի ժողովելն մակաձականացն⁸ եւ յարացուցից, որք ոչ հարկաւոր ինչ ժողովեն. քանզի ամենայն հաւաստ⁹ կամ ի հանգիտէն զհանգէտն յարդարէ, կամ ի նուագէն զմեծն, եւ կամ ի մեծէն զնուագն: 11 Արդ որ ի հանգիտէն զհանգէտն յարդարէ, ասի յարացոյց. որգոն՝ ոչ տացուք Դիոնէսիոսումն թիկնապահ մարմնոյ. վասն զի եւ Պիսիստրատոս առեալ բռնացաւ: 12 Քանզի ոչ հարկաւոր է՝ թէ Պիսիստրատոս բռնացաւ, եւ Դիոնէ-

սիոս բռնանայ: 13 Իսկ որ ի նուագէն ըզմեծն յարդարէ, մակաձութիւն ասի. որգոն՝ վասն զի մարդ եւ ձի զներքին կլափն շարժեն, ¹⁰ոչ է հարկաւոր՝ թէ ապա ուրեմն եւ ամենայն կենդանի զներքին կլափն շարժէ¹¹, որ ոչ է հարկաւոր փիւնիկաթեւի¹² եւ կոկորդիլոսի եւ գոճամի¹³, որք զվերին կլափն շարժեն: 14 Իսկ որք ի մեծէն զնուագն հաւաստեցուցանեն¹⁴, այնոքիկ բաղձաւաքումն ասին, որք հարկաւոր հաւաքեն. որգոն¹⁵, եթէ ամենայն մարդ երկոտանի գոյ, ապա եւ Սոկրատէս երկոտանի գոյ, որ է կարեւոր¹⁶:

15 Իսկ հանդիպի ասացաւ, վասն տրամաբանականացն եւ իմաստականաց բաղձաւաքմանց, որք զմարթելին եւ զանկարելին ժողովեն, քանզի տրամաբանականքն զմարթելին ժողովեն. իսկ իմաստականքն¹⁷ զանկարելին: 16 Բայց ուրեք ուրեք զհարկաւորն ժողովեն. սակայն ոչ ըստ ինքեան, այլ ըստ պատահման, եւ զայն հետեւման բաղձաւաքման. քանզի Սոկրատէս ճեմի, իսկ որ ճեմի¹⁸, շարժի՝ մարթելի է: 17 Իսկ հետեւման¹⁹ բաղձաւաքման, հարկաւոր լինի. եւ թեւս ունել Սոկրատում²⁰ անկարելի է. եւ մարթելին է բռնութիւն բաղձաւաքման. որգոն՝ Սոկրատէս թռչի. եւ որ թռչի²¹, թեւս ունի. ապա ուրեմն²² եւ Սոկրատէս թեւս ունի: 18 Բայց ²³բացացուցականն միայն եւ ըստ

1 B լծակցութիւն
 2 A պահելոց
 3 BF բաղիւսմանց
 4 BF չի՞ ասին
 5 ADE պահեցելոյ
 6 BF մի
 7 B երբեք
 8 A եւ ոչ որպէս մակաձականացն
 9 BCD հաւաստ

10 ACDE չի՞ ոչ է հարկաւոր թէ
 11 BF շարժեն
 12 CEF փիւնակաթեւի
 13 F գունդի
 14 ADE հաւաստեցուցանեն
 15 ADE արդ փիս որգոն
 16 E հարկաւոր
 17 E իմաստականք
 18 BEF որք մեմին
 19 A անհետեւման
 20 CDF Սոկրատայ
 21 ACE չի՞ եւ որ թռչի
 22 ACE չի՞ ուրեմն
 23 CE բացացուցականն նա միայն

ինքեան հետեւման զհարկաւորն ունի. որ-
գոն՝ մարդ կենդանի, որ է հարկաւոր եւ
թարց հիւսմանց¹: 19 Իսկ կենդանին՝ նե-
րանձնաւոր, հարկաւոր այսոքիկ եւ ըստ
ինքեան, հարկաւոր եւ ըստ հիւսման լի-
նին:

20 Զնոյնն գոլ. զայս ասաց, այս ինքն՝
եթէ պարտ է զբաղեցրումն² վասն կացե-
լոց առաջարկութեանց, եւ ոչ սահման ի
սմանէ արտաքուստ մակիմացելոյ, եւ կամ
պակասեցելոյ³. որգոն՝ անձն ինքնաշարժ,
ինքնաշարժն մշտաշարժ, մշտաշարժն ան-
մահ. ապա ուրեմն անձն անմահ. քանզի
ոչ⁴ եթէ ի կացելոց առաջարկութեանց ժո-
ղովեցաւ, այլ զսահմանի ոմանց արտա-
քուստ մակիմացելոց, որ ասէ՝ եթէ մշտա-
շարժն անմահ: 21 Եւ դարձեալ անձն ինք-
նաշարժ ինքնաշարժն մշտաշարժ, մշտա-
շարժն անմահ. ապա ուրեմն անձն ինքնա-
շարժ. քանզի աստ աւելորդ է մի առաջար-
կութիւն, որպէս մշտաշարժն. քանզի ոչ
ինչ պիտարկի⁵ ի բաղեցրումն:

22 Այսպիսիք են եւ առ ի ստոյի-
կեանցն անճարաբար⁶ եղերեալք բաղճա-
ւաքմունքն. որգոն՝ մին հանգէտ գոյ⁷ եր-
կում, եւ երկու հանգէտ գոյ⁸ երեքում. ու-
րեմն մին երկու՝ հանգէտ է երեքում:
23 Եւ դարձեալ մին երկու՝ մեծ է քան
զերկուն, իսկ երկու մեծ է քան զերեքում.
ապա մինն երկուն՝ մեծ է քան զերեքում.
քանզի այսոքիկ ⁹անճարաբար ասին եղե-
րեալ: 24 Քանզի զնուազ առաջարկու-
թիւնն երկիցս առնուն, իսկ զմեծն թողուն.

քանզի ասելով՝ մին հանգէտ երկում, իսկ
երկու երեքում հանգէտ, զնուազն երկիցս
էառ, իսկ զմեծն եթող. քանզի ոչ մի քան
զմի առաւել է. եւ ի վերայ միւս եւ այլոյ
յարացուցին նոյն բան պատշաճի:
25 Քանզի պարտ էր ներճարապէս¹⁰ այս-
պէս հիւսել. մինն երկում¹¹, եւ երկուն երե-
քում հանգէտ, իսկ որք¹² նոյնում գոն
հանգէտ, ¹³եւ միմեանց գոն հանգէտ, ապա
եւ մին երկում հանգէտ: 26 Եւ դարձեալ
մինն քան զերկուն մեծ մեծի էլոյ քան
զերեքումն. իսկ որ քան զմեծն մեծ է, կա-
րի յոյժ ապա եւ քան զնուազն մեծ. ապա
եւ մին երկուն¹⁴ քան զերեքում մեծ:
27 Այս է եւ ճարաբար¹⁵ եղերին:
28 Քանզի թէպէտ եւ ի վերայ այնոցիկ
յարացուցից ճշմարիտ գոլ ժողովեալն¹⁶
զբնութիւն ենթակայացելոցն իրողու-
թեանց, այլ ի վերայ այլոց յարացուցիցն
ոչ պատկանի բանն. որգոն՝ այս անունն նո-
րա եղբայր, եւ այս անունն նորա¹⁷ եղբայր,
ապա այս անունն եւ այս անունն եղբարք
գոն միմեանց, որ է սուտ բաղեցրումն.
քանզի մարթ գոյ երկուց ոմանց եւ այ-
լումն եղբայր¹⁸ գոլ. բայց միմեանց ոչ գոլ
եղբարք: 29 Որգոն՝ ոմն ունելով ¹⁹զորդի
յայլմէ կնոջէ, կին էառ զոմն՝ որ ունէր
զորդի յայլմէ յառնէ. արդ որ ի նոցանէ
յերկուցն²⁰ ծնանի՝ եղբայր գոյ միումն ի
հաւրէ, իսկ միւսումն ի մաւրէ: 30 Եր-

1 A հիւսման
2 BEF բաղեցրումն
3 D եւ մակպակասեցելոյ
4 D ոչ այս, E այս ոչ
5 A պիտարկի
6 BF անճարաբար
7 AD չի՞ գոյ
8 AD չի՞ գոյ
9 BF անճարաբար, D անճարտարաբար ասին
եզերիլ

10 F ներնառապէս
11 AB EF երկու
12 F որ
13 BF չի՞ եւ միմեանց գոն հանգէտ
14 C մի երկու
15 BF անառաբար
16 ABE գոյ ժողովեցեալն
17 BCE նորին
18 ACD եղբարս
19 ACDE որդի յայլ կնոջէ, կին առ զոմն որ ունէր
որդի յայլ առնէ
20 ACE յերկոցունց

կուքն միում գոլով եղբարք, միմեանց ամենեւիմբ¹ ոչ գոն եղբարք:

1 ՉԸնդ այսոսիկ ³հանդերձ աստուծով եւ առաջիկայ պրակֆ

ՊՐԱԿՔ ԺԱ.

1 «Բայց ակարտուն⁴ կոչեմ բաղձաւաքումն գոչինչ⁵ արտաքուստ սահմանումն առ կարաւտացեալն առ ի լինել բաղեզերումն»: 3 Յետ սահմանին բաղձաւաքման՝ գայ ի գանազանութիւն բաղձաւաքմանցն, զակարտուն⁶ ասեմ, եւ գանաւարտն, ասելով թէ բաղձաւաքմանցն ոմանք ակարտունք են, որք յառաջնումն գոն ձեւում⁷. Իսկ ոմանք անաւարտք՝ որք յերկրորդումն եւ յերրորդումն ձեւում: 4 Այլ զիա՞րդ ասեմք անաւարտ բաղձաւաքումն. որովհետեւ անկարաւտն կայ ի սահմանումն: 5 Քանզի անկարաւտն կարաւտեցելոյն կատարելագոյն, իսկ անաւարտ է՝ որ կարաւտանայ սահմանում ումեք արտաքուստ. իսկ ակարտուն⁸ անկարաւտն արտաքուստ սահմանումն: 6 Սակս⁹ սորին¹⁰ այսորիկ տարածայնեցան¹¹ առ միմեանս¹² Մաքսիմոս Ուռձայեցի¹³ աշակերտ¹⁴ Իամբլիքոսի¹⁵, եւ Թեմիստոս¹⁶. Քանզի եւ Թեմիստոս ուշ ունելով բաժանման հաւաքմանցն՝ զոմանս ակարտունս կոչէր, որք

յառաջնումն ձեւում, իսկ զոմանս անաւարտ՝ որք յերկրորդումն եւ յերրորդումն: 7 Իսկ Մաքսիմոս ուշ ունելով սահմանումն ունողումն զանկարաւտն զամենայն բաղձաւաքումն ակարտուն¹⁷ կոչէր: 8 Եւ յաղագս այսորիկ առին դատաւոր զՅուլիանոս¹⁸ թագաւոր՝ որ զյաղթութիւնն ետ Մաքսիմոսումն¹⁹:

9 Բայց ասասցուք սակս Թեմիստոսի, զոր եւ ինքն միայնագրում ումեմն²⁰ ասաց այսպէս, թէ եւ ոչ ես կոչեմ անաւարտ բաղձաւաքումն, որ բնաւ կարաւտանայ արտաքուստ իմիք սահմանումն: 10 Ձի որ սահմանումն կարաւտանայ բնաւ եւ ոչ բաղձաւաքումն ումեք²¹, եւ ոչ այլում ումեք²² արտաքուստ, ոչ հակադարձութեամբ միումն եւ երկուց, եւ ոչ անկարելի մակաձուլթեամբ: 11 Իսկ²³ անաւարտ կոչեմ բաղձաւաքումն ոչ գայն՝ որ կարաւտանայ արտաքուստն ումեք սահմանումն. քանզի սահմանումն կարաւտացեալն՝ եւ բաղձաւաքումն իսկ ոչ է: 12 Այլ գայն որ այլումն ²⁴է՝ անուանէ, ի պէտս արտաքուստ սահմանումն, առ ի արծարծումն հարկաւորին, եւ ոչ եթէ առ ի լրումն, եւ կամ հակադարձումն միում, կամ երկուց, եւ կամ յանկարելին²⁵ մակաձուլթեամբ: 13 Եւ արդ այսորիկ յաղագս տարբերութեանց բաղձաւաքմանցն:

14 Յետ որոյ յարադրէ²⁶ մեզ եւ զգանազանութիւնս առաջարկութեանցն՝ զներբոլորումն եւ զոչ ներ²⁷ բոլորումն, զըստ ամենայնումն եւ զըստ ոչ ումեքումն. եւ

1 BF ամենեւիմ
2 BC վերնագիր չիֆ
3 DE չիֆ հանդերձ աստուծով եւ
4 CDE ակարտում
5 C գոր գոչինչ
6 CDE գաւարտումն
7 ACDE ի ձեւում
8 CDF ակարտումն
9 A չիֆ սակս, CDE սոֆա փիս սակս
10 A գորին
11 A տարածայնեցին
12 E առ միմեանց
13 A Մաքսիմիոս Ուրիայեցի
14 ABDE աշակերտ աշակերտի
15 A Ամբլիքոսի, CDE Ամիլիքոսի, F Ամիլիքոսի
16 B Թեմիստոսի, CDE Թեմիստոս

17 CDE ակարտումն
18 CDEF գուլիանոս
19 CE ետ այսինքն Մագսիմիանոսումն
20 F ուրեմն
21 AE ուրեմ
22 B այլ ուրեմ
23 F զի փիս իսկ
24 A ունի փիս է անուանէ ի
25 CDE յանկատարելի
26 A յարաւտրէ
27 D չիֆ ներ

այսոքիկ կամ ստորասականք են, կամ բացասականք: 15 Արդ ստորասականք գոլով ի ներ բոլորումն ասին, եւ կամ ըստ ամենայնում. իսկ բացասականք գոլով՝ ոչ ի ներ բոլորումն, եւ ոչ ըստ ումեքումն: 16 Բայց եթէ զիա՞րդ այսոքիկ զանագանին ի միմեանց, այն ինչ ուսաք, եթէ յորժամ ասեմք՝ մարդ կենդանի ի ներ բոլորումն, զմարդն ասեմք գոլ ի կենդանումն. իսկ եթէ ասեմք կենդանի ամենայնումն մարդումն, ըստ ամենայնումն ասեմք զայսպիսի առաջարկութիւնս: 17 Իսկ եթէ ասեմք մարդ ոչ ումեք կենդանումն, ասի ոչ ի ներ բոլորումն. իսկ եթէ ասեմք կենդանի ոչ ումեք մարդում, ոչ ըստ ումեքում ասի:

18 Բայց տարակուսեն երիս տարակուսանս: 19 Նախ՝ եթէ զիա՞րդ ասեմք ներ ի բոլորումն կենդանումն կենդանւոյն մարդում եւ ձիում եւ եզում¹ յարադրելով² զինքն: 20 Լուծումն. եթէ վասն զի զբոլոր սահման կենդանւոյն ունի յինքեան մարդն: 21 Երկրորդ տարակուսանք, եթէ ընդէ՞ր յորժամ ասեմք մարդ կենդանի, ասի ներ բոլորումն. իսկ յորժամ ասեմք կենդանի ամենայնումն մարդումն, ասի ըստ ամենայնումն: 22 Լուծումն այսորիկ. եթէ վայելուչ է ստորոգիցելումն առ անորոշելին. քանզի³ ի բոլորումդ ստորոգիցելումդ գոյ շարամերձեալ, եւ ոչ առորոշումն⁴, որդոն՝ ներ ի բոլորումն կենդանումն. իսկ ենթակայումն վայել է առորոշումն, որդոն՝ որպէս յորժամ ասեմք, կենդանի ըստ ամենայնումն մարդումն: 23 Քանզի ամենայնդ այդ⁵ առորոշումն շարամերձեալ է մարդումն, ենթակայումն յաւելումն⁶:

24 Երրորդ տարակուսանք, եթէ վասն է՞ր նախակարգեաց զներ ի բոլորումն ըստ ամենայնումն: 25 Լուծումն. եթէ վասն զի վերլուծական է իրողութիւնս⁷, եւ վայել է վերլուծութեան մանաւանդ վերլուծութիւն, քան զվայրիջութիւն:⁸

1 Գնդ այսոսիկ հանդերձ աստուծով եւ առաջիկայ պրակֆ

ՊՐԱԿՔ ԺԲ

2 «Եւ վասն զի ի նախադասութեանց ոմանք ստորասականք են, եւ ոմանք բացասականք»: 3 Ուսուցեալ զմեզ Արիստոտէլի զամենայն զոր ինչ միանգամ խոստացաւ, եւ սահմանեալ զսահմանս, զառաջարկութիւնս¹⁰. եւ եթէ զի՞նչ է բաղձաւարումն, ասացեալ է եւ զզանազանութիւնս նորա ¹¹զաւարտունն եւ զանաւարտունն, եւ զզանազանութիւնսն առաջարկութեանցն, ¹²զոչ ներ բոլորումն եւ ներ բոլորումն, եւ ըստ ամենայնում եւ ոչ ըստ ումեքումն: 4 Այժմ այլ տեղի քննութեանց առնու վարդապետութեան¹³ բաղձաւարմանցն, եւ հակադարձութեան նոցա, որպէս զի մի յերկրորդումն եւ յերրորդումն ձեւումն պէտս ունելով հակադարձութեանց, եւ ոչ ուսուցեալ յառաջագոյն՝ ի վերայ¹⁴ անհաւաստեաց յառաջածեսցէ¹⁵ զբանն, եւ կամ ուսուցէ ի միջումն¹⁶, կտրեսցէ¹⁷ զչարունակութիւնն: 5 Եւ տարակուսեն, եթէ վասն է՞ր ոչ ուսուցանէ

1 B եզնում
 2 E յարատրելով
 3 D Բանգի էր ի
 4 A եւ ոչ է առ անորոշումն
 5 ADE չի՞ք այդ, F ունի այսպիսի տարբերակ՝ ամենայն մարդ փիս ամենայնդ այդ
 6 A ելում, D աւելում

7 C իրողութեանս
 8 B վերջակէտից յետոյ ստացողի յիշատակագրութիւն՝ եփրեմի ի գիրքս
 9 BC վերնագիր չի՞ք: DE ընդ այսոսիկ առաջիկայ պրակֆ
 10 A եւ գառաչարկութիւնսն
 11 CDEF գաւարտումն եւ գանաւարտումն
 12 A գոչ ներ ի բոլորումն եւ ներ ի բոլորումն
 13 CDE վարդապետութիւն
 14 CE զի մի ի վերայ
 15 D յառաջեսցէ
 16 DE ի միջումն
 17 D կտրասցէ

մեզ յառաջագոյն եւ զանկարելին բացածուծիւն, եւ թէ զիւրօր լինի, վասն զի եւ նմա՛ պէտս ունի եւ յերկրորդումն եւ յերրորդումն ձեւումն:

6 Առ որս ասեմք, եթէ բաւական համարեցաւ, զոր նորա մտածութիւն ունիմք: 7 Բայց այժմ զայսոսիկ ուսուցանէ եւ յարգարէ՛, որպէս ստիպեցուցանաւզս: 8 Իսկ յառաջելով՝ եւ զառ ի յանկարելի՛ բացածութիւն ուսուցանէ. քանզի նոյնպէս եւ պիտանացուցս՝ առ ստորագութիւնսն՝ զոմանս նախակարգեաց զանհաւաստիսն, իսկ զոմանս ի վերջոյ ուսոյց:

9 Բայց լինի սա ի բառնալոյ բաղեզերմանն. ի ձեռն հակակայի առաջարկութեանցն բաղեզերմանն, եւ միոյ առաջարկութեան, որ յառաջէր մնալով եւ զայն ի բաց բառնալով: 10 Որգոն ասեմ մարդ՝ կենդանի, կենդանին՝ ներանձնաւոր, ապա եւ մարդ՝ ներանձնաւոր: 11 Արդ եթէ ոք ասէ զբաղեզերումդ ոչ գոյ, այս ինքն զմարդն ներանձնաւոր, յանդիմանէ՛ ի ձեռն անկարելին բացածութեանց: 12 Այսպէս եղելոյ՝ առնում զհակակայն բաղեզերմանն. որգոն՝ զոչ ոք մարդ ներանձնաւոր առնում. եւ մի յառաջարկութիւն, որ յառաջն էր որ ասէր, ամենայն մարդ կենդանի, եւ առնեմ երկրորդ ձեւ այսպէս. ոչ ոք մարդ ներանձնաւոր, ամենայն մարդ կենդանի, ժողովել ի մասնական բացասական, որպէս յերկրորդումն ձեւումն՝, ոչ ամենայն կենդանի ներանձնաւոր: 13 Բայց աստ մանաւանդ այսպէս, ոչ ոք մարդ ներանձնաւոր, որ հակակայի սկզբան՝ բաղե-

զերմանն: 14 Եւ մի առաջարկութիւն սկզբանցն՝, ամենայն մարդ կենդանի. եւ ժողովել ի մասնական բացասական, ոչ ամենայն կենդանի, ներանձնաւոր ամենայն եւ ոչ ամենայն, եւ առնէ հակասութիւն, որում ոչ գոյ հնար ճշմարտակից լինել: 15 Զայն եւ հակադարձութիւն բաղահաւաքման՝ կոչեն: 16 Եւ այսոքիկ յազգս այսորիկ:

17 Բայց պարտ է ութ գլուխս ոմանս յառաջագոյն առնուլ յազգս հակադարձութեան բանի, այս ինքն վարդապետութեան բաղահաւաքմանցն: 18 Նախ՝ եթէ քանաբա՞ր՝ ասի հակադարձութիւն, եւ յազգս որո՞յ արդեաւք այժմու բանս է: 19 Երկրորդ՝ եթէ այս յազգս որոյ այժմու բանս է՝ քանաբա՞ր, եւ յազգս որո՞յ դիտաւորութեան: 20 Երրորդ՝ սահմանել զնա՞ յազգս որոյ բանն է: 21 Չորրորդ՝ քանաբար գոյն եւ հարկաւորն եւ մարթն, քանզի զայլսն՝ ոչ յիշէ՝ զկարելին եւ զանկարելին, եւ զիւրօր ըստ իւրաքանչիւր ումեք ի սոցանէ պիտանանայ հակադարձութեան: 22 Հինգերորդ՝ վասն է՞ր եթող զկարելոյն եւ զանկարելոյն հակադարձութիւնս: 23 Վեցերորդ՝ զի՞նչ այնոքիկ՝ որք ցուցանին ի ձեռն հակադարձութեանցն: 24 Եւթներորդ՝ զի՞նչ կարգաւորութիւն նոցին: 25 Ութերորդ՝ ո՞յք ոմանք իցեն յառաջ բերեալքն՝ տարակուսանք:

26 Արդ ութ ելոց գլխոց առաջիկայ տեսութեանս՝ զերիսն միայն յարադրէ:

1 CDEF նմանապէս

2 ACD յարատրէ

3 E յառաջ ածելով

4 E անկարելին

5 CE պիտանացուածն

6 A յանդիմանի

7 ACE ժողովեալն մասնական

8 A ձեւում է

9 ACE ի սկզբան

10 C ի սկզբանց

11 ACDE ժողովի մասնական

12 A բաղահաւաքմանց

13 AD քանիաբար

14 A դիտաւորութիւն

15 A զնոսա

16 E զայսն

17 C յառաջաբերեալն

18 DF տեսութիւնս

27 Նախ՝ եթէ քանաբա՞ր¹ հակադարձու-
թիւն ասի² եւ յաղագս որո՞յ բանս:

28 Արդ հակադարձութիւն եռակի ասի,
կամ ի սահմանս, կամ յառինչսն³. զոր եւ
յարադրեաց ի Ստորոգութիւնսն, յորժամ
ասէրն, եթէ առինչքն առ ի հակադառնալն
ասին, հայր՝ որդւոյ հայր, եւ որդի՝ հաւր
որդի. եւ կամ յառաջարկութիւնսն⁴ են, որ-
պէս⁵ այժմու բանս: 29 Այս առաջին
զլուիս⁶:

30 Երկրորդ զլուիս էր, եթէ այս որ յա-
ռաջարկութիւնս՝ յաղագս որոյ եւ այժմու
բանս է, քանաբա՞ր, եւ յաղագս որո՞յ ար-
դեաւք է դիտաւորութիւն: 31 Եւ սա նոյն-
պէս եռակի. քանզի կամ պարզ է, եւ կամ
մարթելի, եւ կամ բաղձակադարձու-
թեամբ⁷:

32 Պարզ է, որ զորակն զնոյն պահէ,
իսկ զկարգ սահմանացն փոխէ. որգոն՝ ոչ
ոք մարդ քար, եւ ոչ ոք քար մարդ: 33 Ո-
րակն նոյն մնաց, քանզի երկոքին բացա-
սականք. իսկ կարգ սահմանացն փոխեցաւ
միայն. քանզի ստորոգեցեալն ենթակայ
եղեւ, եւ ենթակայն ստորոգեցեալ:
34 Քանզի յորժամ ասեմք, ոչ ոք մարդ
քար, մարդն ենթակայ է, իսկ քարն ստո-
րոգեալ. իսկ յորժամ ասեմք, եթէ ոչ ոք
քար մարդ, քարն ենթակայ է, իսկ մարդն
ստորոգեալ⁸:

35 Իսկ մարթելի հակադարձութիւն է,
որ զորակն փոխէ, իսկ զկարգն սահմա-
նացն զնոյն պահէ: 36 Բայց մարթելի ասի
ի նիւթոյն, յորոյ վերայ բնաւորեցաւ
ճշմարտել. որգոն՝ մարթելի գոյ ամենայ-
նու՛մ մարդու՛մ արդար գոյ, որ է ստորա-

սութիւն. եւ դարձեալ մարթելի գոյ՝ ոչ ու-
մեք մարդու՛մ արդար գոյ. որ է բացասու-
թիւն: 37 Ապա որակն փոխեցաւ, իսկ
կարգ սահմանացն նոյն պահեցաւ. քանզի
մնաց նոյն ստորոգեցեալ, եւ նոյն ենթա-
կայ:

38 Տարակուսեն ոմանք, եթէ վասն է՞ր
որպէս զբացասութիւն էառ, եթէ մարթի
ոչ ումեք մարդու՛մ արդար գոյ. քանզի ի
վերայ յեղենակաւ առաջարկութեանցն՝ յե-
ղանակին ի բաց բարձեցելոյ լինի բացա-
սութիւն¹⁰: 39 Արդ եթէ յեղանակաւ էր ա-
ռաջարկութիւնդ՝ պարտ էր ասել, եթէ ոչ
մարթի¹¹ ամենայն մարդու՛մ արդար գոյ:
40 ¹²Լուծումն սորին, եթէ համազարի¹³
այլու՛մ առաջարկութեան, որ ասէ՝ ոչ հար-
կաւոր զոք մարդ արդար գոյ. քանզի մար-
թի ոչ ումեք մարդու՛մ արդար գոյ՝ ոչ
հարկաւոր զոք արդար գոյ:

41 Իսկ բաղձակադարձութեամբ է հա-
կադարձութիւն, որ եւ զորակն փոխէ եւ
զկարգ սահմանացն. որգոն՝ եթէ մարդ՝ եւ
կենդանի, եթէ ոչ կենդանի՝ եւ ոչ մարդ.
այս բաղձակադարձութեամբ հակադար-
ձութիւն: 42 Երկրորդ յեղանակ ստորա-
դրականացն. եւ յորժամ զստորադրակա-
նացն բուռն հարկանիցէ¹⁴, եւ յաղագս նո-
րին ուսուցէ:

43 Արդ երկրորդ յեղանակ ստորադ-
րականացն ի բաց բարձմամբ հետեւեցե-
լոց¹⁵ բառնայ զառաջեցեալն¹⁶, եթէ ոչ կեն-
դանի եւ ոչ մարդ: 44 Իսկ առաջինն դրու-
թեամբ յառաջեցելոյ ներածէ զհետեւե-
ցեալն, եթէ մարդ՝ եւ կենդանի, այլ արդ՝
մարդ, ապա ուրեմն եւ կենդանի: 45 Բայց

1 ADE քանիաբար
2 CDEF չի՞ ասի
3 ACDE չի՞ կամ յառինչսն
4 C ի յառարկութիւնսն
5 CDE չի՞ որպէս
6 C չի՞ զլուիս
7 A ըստ հակադարձութեամբ
8 A ստորոգեցեալ, CDE ստորոգի

9 F մարթելի ոչ ումեքում
10 CDE լինէին բացասութիւնք
11 AC ոչ մարթ է
12 C մարդը նախադասութիւնը չի՞:
13 A համազար է
14 ACDE հարկանէ
15 A հետեւեցելոյն
16 C զառաջարկեցեալն

բաղձակադարձութեամբ ասի. վասն զի հանդերձ որակաւն¹ եւ զկարգ սահմանացն փոխէ հակադարձութեամբ ոմամբ: 46 Բայց այժմ յաղագս պարզ հակադարձութեան է բանս:

47 Երրորդ գլուխ էր՝ սահմանել զնոյն զինքն՝ յաղագս որոյ բանն է, որոյ սահմանն է այսպէս. «Պարզ հակադարձութիւն² է՝ հաղորդութիւն երկուց նախադասութեանց առաջարկութեանց՝ ըստ իւրաքանչիւր³ երկոցունց սահմանաց որակին նոյնի⁴ մնացելոյ, իսկ կարգի սահմանացն փոխեցելոց, հանդերձ ճշմարտակցելովն»: 48 Հաղորդութիւն փոխանակ սեռի յարանեալ գոյ. իսկ երկուց նախադասութեանց՝ ի սահմանս հակադարձութեան. քանզի նոքա ոչ աւարտաբար⁵ հաղորդին, այլ առնչեղ⁶ են. որգոն՝ հայր՝ որդւոյ հայր, եւ որդի՝ հաւր որդի. զի յորդի⁷ հակադարձուցէ: 49 Որպէս անդ ի յանգիցելոյն⁸ հակադարձեցաւ. որգոն՝ ոչ ոք մարդ քար, եւ ի քարէն հակադարձութիւն եղեւ. եւ կամ յորժամ հանդիպի մարդոյն, յորժամ յանկմանն⁹ գտանի. իսկ այժմ որդւոյ հայր ոչ ոք ասի հայր: 50 Քանզի եթէ էր տիրապէս հակադարձութիւն եւ որպէս արդարեւ գուգադարձութիւն այսպէս պարտ էր հակադարձիլ որպէս եւ ասացաւ: 51 Բայց այժմ ասեմք, որդի՝ հաւր որդի. եւ դարձեալ ի բաղձաւաքմունս. վասն զի ոչ անդ հաղորդին երկու առաջարկութիւնք ըստ ամենայնումն, զորակն զնոյն պահելով, իսկ զկարգ սահմանացն փոխելով:

1 AB որակովն
2 B հակադարձութեամբ
3 ABCDE չի՛ք իւրաքանչիւր
4 ACE նոյն է ի
5 DE ատարաբար
6 ABC առչեղ
7 DE որդի
8 B ի յագեցելոյն, CDE ի յանկեցելոյն, F ի յանկեցելոցն
9 BCDF ի յանկմանն

52 Այս առարկեցաւ¹⁰ վասն մարթելոյն հակադարձութեան, որ զորակն փոխէ, եւ վասն բաղձակադարձութեան, այսպէս եւ զորակն փոխելով¹¹ եւ զկարգ սահմանացն: 53 Հանդերձ ճշմարտակցելովն. այս առարկի¹², ¹³զի մի մի ոմն յառաջարկութեանցն ճշմարիտ եղիցի, եւ միւսն սուտ: 54 Բայց զի ոչ ասաց եւ ստակցելով. վասն զի ճշմարիտքն ոչ երբէք մարտնչին ընդ միմեանս. իսկ սուտքն՝ եւ ճշմարտումն եւ ինքեանց մարտնչին. որգոն՝ ամենայն մարդ շնչէ, ճշմարիտ է: 55 Արդ որք մարտնչին, են¹⁴ երկու առաջարկութիւնք, ոչ ամենայն մարդ շնչէ, եւ ոչ ոք մարդ շնչէ. որք եւ միմեանց մարտնչին. եւ դարձեալ ոչ ամենայն մարդ գնայ. եւ ճշմարիտ առաջարկութեանս այսմիկ մարտնչին այլք երկուք, ամենայն մարդ գնայ, եւ ոչ ոք մարդ գնայ. այլ եւ միմեանց մարտնչին, քանզի ամենայն՝ ոչ ումեքին¹⁵ ընդդէմ է:

1 16Ընդ այսոսիկ հանդերձ աստուծով եմ առաջիկայ պրակի՛ք

ՊՐԱԿՔ ԺԳ

2 Չորրորդ գլուխ առաջադրեցելոց՝ քանաբար¹⁷ ասի գոլն, եւ հարկաւորն, եւ մարթն: 3 Արդ գոլն երկակի է. կամ այն՝ որ զսոսկ էութիւն յայտնէ, եւ զթարց յեղանակի առաջարկութիւնս. վասն որոյ¹⁸ եւ Յաղագս մեկնութեան¹⁹ ճառեաց եւ աստ. եւ կամ զվճարեալ²⁰ մարթն¹, զորմէ

10 E առարկեցաւ
11 A փոխեցելոյ
12 DE առարկի
13 E զի մի մի ոմն
14 CDE չի՛ք են
15 A ոմն, CD ումեքն
16 BC վերնագիր չի՛ք: DE ընդ այսոսիկ առաջիկայ պրակի՛ք
17 ABD քանաբար
18 BCEF որոց
19 CDEF մեկնութեանց
20 A գյարարեալ, D գար ելեալ, E գա եղեալ

բուռն հարցէ յառաջագոյով խառնարկութիւնսն². եւ զորմէ՞ արդեաւք աստ զգոյոյ բուռն հարկանէ: 4 Եւ ասեմք, եթէ զայնմանէ՝ որ զսոսկ էութիւն յայտնէ. քանզի ինքն իսկ հակորոշեաց զգոյն յայլոց³ յեղանակաց՝ ասելով, եթէ Ամենայն նախադասութիւն կամ գոյ է, կամ մարթ, կամ հարկաւոր. որպէս զի ասէր, եթէ ամենայն առաջարկութիւն կամ յեղանակաւ է, կամ թարց յեղանակի, եւ ի Յաղագս մեկնութեան առաջարկութեան⁴ է բան. յայտնելով ինչ ումեքումն գոյ, եւ ինչ ումեքումն ոչ գոյ. զի եթէ գոյն այժմ զվճարեալ մարթն յայտնէր, թողոյր արդեաւք գյեղանակաւ առաջարկութիւնսն. եւ խորթանային երկոքեան իրողութիւնքն Արիստոտէլի յառաջիկայս որպէս ոչ ուսուցեալ զհակադարձութիւնսն զգոյոցն⁵ առաջարկութեանցն, եւ Յաղագս մեկնութեան՝ որպէս ոչ զամենայն առաջարկութիւն սահմանեալ: 5 Այլ եթէ գոյոյն այժմ զսոսկ էութիւն յայտնելոյ, նախ զհակադարձումնսն⁶ վճարելոյ մարթին ասէ գոյոյ, որ ուսուցէ ասպա զնորա հակադարձութիւնսն: 6 Եւ ասեմք եթէ եթող զայսոսիկ, որպէս պարունակեցեալսն ընդ հարկաւորումն: 7 Քանզի եւ վճարեալ մարթն է հարկաւոր: 8 Ընդ այսոսիկ եւ նշանակութիւնք գոյոյն⁷:

9 Իսկ հարկաւորն, եւ նա զանազան գոյ. կամ յարագոյ, եւ կամ լինելոց⁸. որպէս ի վերայ եղիցին⁹. եղիցի ամառն, եղիցի ձմեռն: 10 Իսկ յարագոյ, կամ մշտնջենաւոր, կամ ապականելի: 11 Մշտնջենա-

ւոր՝ միշտ աստուածայինն բարի. միշտ արեգակն լուսաւորէ. միշտ հուր ջեռուցանէ. իսկ ապականելի՝ հանդերձ առորոշամաբ եղիցի. եթէ ենթակա՞յն եղիցի, եթէ ստորագիցելովն եղիցի. եթէ ենթակայն, եթէ Սոկրատէս չնչէ՝ եղիցի, եթէ ստորագելովն, եթէ Սոկրատէս լուանի, ցորքան գոյ նմա լուանիլն:

12 Եւ վասն որո՞յ արդեաւք հարկաւորի այժմ տրամաճառէ: 13 Ասեմք, եթէ յաղագս միշտ եւ նոյնպէս ունելոյն. ընդ այսոսիկ եւ զանազանութիւնք հարկաւորին: 14 Իսկ մարթն՝ նա¹⁰ եռակի. կամ ի նուազն, կամ ի յոլովն, կամ ի հանգէտն: 15 Ի նուազն՝ որպէս բախտացի. քանզի պակաս ոք ի փորել ինչ եգիտ գանձ. իսկ ի յոլովն՝ բնութիւն, եւ նորին նմանաւղ՝ արհեստ. քանզի յոլով՝ հնգամատեան առէ բնութիւն, եւ արհեստ՝ յոլով հանդիպի իւրում դիտաւորութեան. իսկ ի հանգէտն՝ մարդկային նախառութեան, քանզի ի մեզ է լուանիլն եւ ոչ լուանիլն: 16 Եւ վասն որո՞յ արդեաւք նշանակեցելոցս¹¹ այժմու բանս: 17 Եւ ասեմք, եթէ այժմ զայն առնու՝ որ ի յոլովն է. քանզի արհեստական է եւ կարելի, ընդ մակացութեամբ¹² դասեալ¹³ ըստ գիտութեան: 18 Ընդ այսոսիկ եւ չորրորդ¹⁴ գլուխն:

19 Հինգերորդ գլուխն, յորում խնդրեմք, եթէ վասն է՞ր եթող զհակադարձութիւնս կարելոյն եւ անկարելոյն¹⁵: 20 Եւ ասեմք եթէ զկարելոյն եթող, որպէս պարունակեցեալս ¹⁶յայնցանեաց, որք մարթին գոյ. իսկ զանկարելին¹⁷ եթող,

1 D մարդն
 2 B ի խառնակութիւնս
 3 A այլոց
 4 AD առաջարկութիւնս
 5 F գիակադարձութիւնս զգոյոյն
 6 A գիակադարձութիւնս, E գիակադարձումնս
 7 A նշանակութիւնս
 8 E լինելոյ
 9 CE եղիցն

10 F եւ նա
 11 A նշանակեցելոյ
 12 E մակացութիւնս
 13 D դասել
 14 DE չորք
 15 A կարելոյն եւ անկարիւն, BDE եւ անկարիւն
 16 AD յայնցանէ, CE յայնցանէ ցորք
 17 CDE զանկարիւն

վասն զի հակադարձի¹ նոյնք զոն հարկա-
 ւորին առաջարկութեանցն, եւ բացասու-
 թիւնք բացասութեանց: 21 Քանզի հան-
 զիտագաւր է ի փոխադրութենէ ստորա-
 սուլթիւն անկարելոյն պարզումն ստորա-
 սուլթեան հարկաւորին. որզոն՝ անկար է ոչ
 գոլ. հարկաւոր է գոլ. քանզի անկար ոչ
 գոլոյն² հարկաւոր գոլ է. եւ բացասութիւն
 բացասութեան, ոչ անկար է ոչ գոլ. ոչ
 հարկաւոր գոլ: 22 Ընդ այսոսիկ եւ հին-
 գերորդ գլուխն:

23 Վեցերորդ գլուխն³, եթէ ո՞յք ո-
 մանք են՝ որք ցուցանին⁴ ի ձեռն հակա-
 դարձութեանցն: 24 Եւ ասեմք, եթէ գի-
 տելն. վասն զի ցուցանիւր⁵ ի ձեռն հակա-
 դարձութեանդ տակաւին ի վերայ գոլոյն
 եւ հարկաւորին յեղանակի՝ եթէ ընդհա-
 նուր բացասութիւն առ ինքն հակադարձի.
 որզոն՝ ոչ ոք մարդ քար, եւ ոչ ոք քար
 մարդ: 25 Իսկ ընդհանուր ստորասուլթիւն
 առ մասնականն. որզոն՝ ամենայն մարդ
 կենդանի, եւ իք կենդանի մարդ: 26 Իսկ
 մասնական բացասութիւն՝ ոչ առ ինքն, եւ
 ոչ առ այլ. որզոն⁶, ոչ ամենայն մարդ
 կենդանի, եւ ոչ ամենայն⁷ կենդանի մարդ,
 ոչ ճշմարտակցէ, եւ ոչ ստակցէ. եւ ոչ է
 հակադարձութիւն: 27 Այսոքիկ ի վերայ
 գոլոյն եւ հարկաւոր⁸ յեղանակին՝ այդպէս
 ունին, որպէս ասացաւդ:

28 Իսկ ի վերայ մարթին ստորասու-
 թիւնք նոյնպէս ունին. իք մարդ գնայ, եւ
 իք գնայն մարդ⁹: 29 Իսկ բացասութիւն
 ստորասուլթեան՝ ներհակաբար ունին.
 քանզի ընդհանուր բացասութիւն, որ եր-

բեմն հակադարձիւր առ ինքն ի վերայ գո-
 լոյն, եւ հարկաւոր յեղանակին, այժմ ի վե-
 րայ մարթին ոչ հակադարձի, եւ ոչ առ
 ինքն հակադարձի: 30 Քանզի ընդհա-
 նուրն ի վերայ մարթին նիւթոյ՝ ոչ երբէք
 ճշմարտէ. բայց մասնական բացասութիւն՝
 որ երբեմն ոչ հակադարձիւր ի վերայ գո-
 լոյն եւ հարկաւոր յեղանակին, այժմ ի վե-
 րայ մարթին հակադարձի. որզոն՝ ոչ ամե-
 նայն մարդ գնայ, եւ ոչ ամենայն գնայն
 մարդ¹⁰:

1 ¹¹Ընդ այսոսիկ հանդերձ աստուծով եւ
 առաջիկայ պրակֆ

ՊՐԱԿՔ ԺԴ

2 «Ամենայն նախադասութիւն կամ ի
 գոլոյն է, եւ կամ ի հարկէ գոլոյն, եւ կամ
 ի մարթելոյն»: 3 Եւթներորդ գլուխ՝
 զի՞նչ է կարգ հակադարձութեանցն. որոց
 այսպէս եւ ըստ այսմ աւերինակի¹² ճանաչի
 կարգ¹³: 4 Նախադասեաց զգոլն յառաջ
 քան զհարկաւորն եւ զմարթն, որպէս զա-
 ռանց յեղանակի, այնոցիկ՝ որք յեղանակի
 ենն¹⁴. Իսկ զհարկաւորն քան զմարթն.
 վասն զի միշտ եւ նոյնպէս ունի ըստ հա-
 կադարձութեանցն գոլումն: 5 Դարձեալ ի
 հակադարձութիւնս այսոցիկ¹⁵ յառաջա-
 գոյն դասեաց զընդհանուր բացասութիւն
 քան զընդհանուր ստորասուլթիւն. ոչ
 միայն զի հակադարձի, եւ առ ինքն հակա-
 դարձի, այլ եւ զի պիտանի է հակադար-
 ձութիւն նորա այլոցն հակադարձու-
 թեանց: 6 Իսկ զընդհանուր ստորասու-
 թիւն յառաջագոյն դասեաց քան զմասնա-
 կան ստորասուլթիւն. թէպէտ եւ զնա

1 CD հակադարձակի
 2 AC ոչ գոլն
 3 ACDE չի՞ գլուխ եթէ
 4 ABCDE ուսուցանեն փիս ցուցանին
 5 ACD ցուցանէր
 6 CD չի՞ որգոն
 7 E յամենայն
 8 D հարկաւորին
 9 B անմարդ, E գնայ անմարդ

10 B գնա անմարդ, E գնայ անմարդ
 11 ABC վերնագիր չի՞. լուսանցում՝ ԺԴ, DE Ընդ
 այսոսիկ առաջիկայ պրակֆ
 12 AB օրինակում
 13 A կարգին
 14 A յեղանակաւ ենն, C յեղանակենն, D յեղանակ
 ենն, E յեղանակ են
 15 BEF այսոցիկ

պարտ էր յառաջագոյն դասել. ոչ¹ որպէս առ ինքն հակադարձելով, այլ որպէս հանուր քան զմասնական: 7 ²Իսկ զմասնական ստորասութիւն յառաջագոյն դասեաց քան զմասնական բացասութիւն. վասն զի մասնական բացասութիւն ամենեւին ոչ հակադարձի³ ի վերայ գոլոյն եւ հարկաւոր⁴ յեղանակին: 8 Ընդ որս եւ է եաւթնեւորորդ⁵ գլուխն:

9 Ութերորդ գլուխ՝ տարակուսանք ոմանք: 10 Նախ՝ եթէ զիս⁶րդ ասես, ով Արիստոտէլ, եթէ ընդհանուր բացասութիւն առ ինքն հակադարձի. քանզի ի բազում իրս ոչ այդպէս գտանեմք. որդոն՝ զի թէ ոչ մի դեռում զդանակ հատանէ, եւ ոչ մի դանակ զդեռումն հատանէ. եւ եթէ ոչ որմ ի ցցում է, եւ ոչ ցից յորմում է. եւ եթէ ոչ մի կարաս ի գինւոջ, եւ ոչ մի գինի ի կարասում: 11 Արդ այսոքիկ ամենայն⁶ հակադարձութիւնք բացասութիւնք գոն առ ինքն հակադարձելոյ, եւ պարտ էր ճշմարտակցել, սակայն ոչ ճշմարտակցին: 12 Այսք երեք տարակուսանք, որոց մի լուծումն է այս, եթէ ոչ է ողջաբար բոլոր ստորոգիցելոյն⁷. քանզի պարտ էր ասել այսպէս, ոչ մի դեռում զդանակ հատանէ, եւ ոչ մի ինչ՝ որ զդանակն հատանէ՝ դեռում է. այլ կամ խարտոց է, եւ կամ այլ ինչ այսպիսի: 13 Եւ դարձեալ՝ վասն զի եւ ոչ մի որմ ի ցցում է, եւ ոչ ինչ որ ի ցցում է՝ որմ է, այլ չուան է, եւ կամ պարան. եւ վասն զի ոչ մի կարաս ի գինւոջ, եւ ոչ ինչ որ ի գինւոջ՝ կարաս է, այլ հատիճ, եւ կամ թին է:

14 Բայց տարակուսի⁸ եւ այլ տարակուսանս. եթէ վասն զի ոչ կենդանին՝ ոչ մարդ, ոչ մարդն՝ ոչ կենդանի, ճի եւ կամ եզն: 15 Այլ տարակուսանք, եթէ վասն զի ոչ մի գոյացութիւն ի սպիտակումն, այն ինչ եւ ոչ մի սպիտակ ի գոյացութեանն. եւ ո՞ւմ արդեաւք ստորոգեացի սպիտակն⁹, եւ կամ յորո՞ւմ¹⁰ ենթակայցէ, եթէ ոչ ի գոյացութիւնս¹¹:

16 Երրորդ տարակուսութիւնս այսպէս. որ ոչ է ի տեղւոջ՝ ոչ կայ, եւ ոչ կացեալն՝ ոչ է ի տեղւոջ: 17 Եւ զիս⁶րդ է այս ճշմարիտ, եթէ հանդիպի գնալով: 18 Լուծումն այսոցիկ մի: 19 Առաջնոյն, եթէ ոչ է պարտ գուրացականն ի հակադարձութիւն առմերձիլ ի նենթակայումն եւ ընդհանուր կիտացն¹² պատշաճելով. քանզի յորժամ ուրացութիւն ունին, եւ ենթակայն եւ ստորոգեալն¹³, պարտ է գերկուս ուրացութիւնս ստորոգելում առմերձիլ: 20 Որդոն՝ ոչ կենդանին՝ ոչ մարդ, իսկ ոչ մարդն՝ ոչ կենդանի. քանզի ուրացութիւնք զմիմեանս ի բաց բառնալով՝ մի ստորասութիւն առնեն. ոչ ոչ կենդանի, այլ կենդանի: 21 ¹⁴Դարձեալ, որ ոչ է ի տեղւոջ, ոչ կայ, եւ որ ոչն կայ՝ ¹⁵ոչ ի տեղւոջ է. եւ դարձեալ՝ ոչ մի գոյացութիւն յորակումն, այս արդէն իսկ սուտ. քանզի է յորակումն գոյացութիւն, թէպէտ եւ բնազանցաբար: 22 Քանզի երկակի է ստորոգութիւն, մին ըստ բնութեան, իսկ միւսն բնազանցաբար¹⁶: 23 Ըստ բնութեան, յորժամ հանուրքն մասնականացն, եւ պատահմունք գոյացութեանց ստորո-

1 AB չի՞ ոչ
2 ACF իսկ գստորասութիւն. չի՞ գմասնական
3 CE չհակադարձի
4 B հարկաւոր է
5 DE եւթն
6 E յամենայն
7 A ստորոգելոցն, CDE ստորոգիլոյն

8 A տարակուսից
9 A ստորոգեացն գսպիտակն
10 B յորս
11 AF ի գոյացութեանս
12 A կիտակացն
13 BCDEF ստորոգելովն
14 CDE դարձեալ, ոչ ի տեղւոջն
15 ADE ոչ ոչ ի տեղւոջ է
16 DE րնազանց

զին: 24 Իսկ բնագանցաբար՝ յորժամ մասնականքն ընդհանուրցն, եւ գոյացութիւնք պատահմանցն ստորոգին:

25 Բայց ¹տարակուսին եւ առ ընդհանրումն ստորասութիւնն այսպէս. եթէ զիա՞րդ ասի ընդհանուր ստորասութիւնն առ մասնական ստորասութիւնն հակադարձիլ. քանզի եթէ այս ճշմարիտ՝ տարակուսեսցի ոք արդեաւք այսպէս: 26 Եթէ վասն ²զի ամենայն որ կին գոյ՝ կոյս էր, եւ ոք կոյս գոլով՝ կին էր. եւ վասն զի ամենայն աւագ՝ մանուկ էր, եւ ոք մանուկ՝ աւագ էր: 27 Լուծումն սորա³, թէ եւ ոչ աստ ողջաբար առաւ ստորոգելովն ի հակադարձիւն. ⁴Ամենայն կին կոյս էր. քանզի պարտ էր այսպէս հակադարձել⁵. ամենայն կին կոյս էր, եւ ոք⁶ կոյս գոլով յառաջն՝

կին է. եւ ամենայն աւագ՝ մանուկ էր, եւ ոք⁷ մանուկ գոլով յառաջն՝ աւագ է:

28 Տարակուսին եւ այլ տարակուսանս այսպէս. եթէ զիա՞րդ ասէ, եթէ մասնական բացասութիւնն ոչ հակադարձի⁸ ոչ առինքն եւ ոչ առ այլ, զի ⁹ոչ հակադարձի առ հանուր ստորասութիւնն, որպէս ընդհանուր ստորասութիւնն առ մասնական ստորասութիւնն. որգոն՝ որպէս յորժամ ասէ¹⁰ ոք, ոչ¹¹ ամենայն կենդանի՝ մարդ, ամենայն մարդ՝ կենդանի: 29 Լուծումն¹² այսորիկ. եթէ ոչ մնաց նոյն որակ. քանզի ոմն յառաջարկութեանց ստորասական է, իսկ ոմն բացասական, զոր ոչ պարտ է ունել պարզ հակադարձութեան. քանզի որակ միշտ զնոյն պահէ, բայց միայն զկարգ սահմանացն փոխէ:

1 AE տարակուսեն եւ առ ընթանուր

2 E զի յամենայն կին գոյ կոյս

3 CDF նորա

4 ABCDE չի՞ր ամենայն կին կոյս էր

5 E հակադարձուցանել

6 A եւ ոչ nf

7 A եւ ոչ nf

8 ACDE չհակադարձի

9 B ոչ հակադարձ է ընդհանուր

10 A ասեմք

11 ABD չի՞ր ոչ

12 A ձեռ. ընդհատում է. ընկել է վերջին թերթը:

ԴԱԹԻ ԱՆՅԱՂԹ ՓԻԼԻՍՈՓԱՅԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹԻՒՆ «ՆԵՐԱԾՈՒԹԵԱՆՆ»

ՊՈՐՓԻՐԻ

1 [ՊՐԱԿՔ Ա.]

2 Հանդերձեալք Հանդերձ Աստուծով սկիզբն առնել առաջիկայ շարագրութեանս, գտովորականն պատմողաց՝ խնդրել զգլուխս՝ ութ գոլ թուով խնդրեսցուք. եւ են այսոքիկ. դիտաւորութիւն, պիտանացուն, պատճառք մակագրութեան, հարազատութիւն, բաժանումն գլխոցն, կարգն, վարդապետական յեղանակն², առ ինչ մասն վերաբերումն: 3 Եւ ոչ եթէ աւելորդք ինչ առնելով զայսոսիկ գլուխս, այլ վասն յաւժարագոյն առնելոյ զընթերցողսն: 4 Վասն որոյ եւ զդիտաւորութիւն խնդրեն. վասն զի կարճառատիւք պարունակեալ ունի յինքեան զամենայն ասացուածն առաջիկայ շարագրութեանց: 5 Յիրաւի եւ զպիտանացուն խնդրեն, վասն զիտելոյ՝ թէ առ ինչ պէտս մտանէ առաջիկայ շարագրութեանն իրք, եւս յաւժարագոյն լինի առ ի յընթեռնուլ: 6 Նմանապէս եւ զպատճառ մակագրութեանն խնդրեն. զի թէպէտ եւ պիտի մակագրութեան ձայնակից լինել դիտաւորութեան եւ կարճառատիւք զնա պարունակել, այլ է ուրեք որ անհաւաստի գոլով՝ պէտս խնդրոյ բացագործէ: 7 Որպէս յորժամ մակագրէ Արիստոտէլ «Յաղագս ստորոգութեան», «Յաղագս մեկնութեան», «Յաղագս վերլուծութեան». զորս բազումք ոչ կարող գոն գիտել՝ եթէ որպիսի ինչ դիտաւորութիւն առաջիկայ շարագրութեան նշանակեն:

8 Արդ, վասն զի բազում անգամ, որպէս ասացաք, անհաւաստի գոն մակագրութիւնք, վասն այսորիկ պիտանանամք

խնդրոյ: 9 Յիրաւի եւ հարագատութիւնն խնդրի. վասն զի գիտելով՝ եթէ հարագատ է առաջիկայ շարագրածն, զգիտութեան փառս ունողի վարդապետին³ յաւժարութեամբ ընթեռնումք, վասն զի բազումք ոչ գոլով կարաւղք զճշմարիտն եւ գուտն որոշել՝ զպիտանացուն եւ զանպէտն, լաւ համարին վասն պատուոյ եւ ճոխութեան վարդապետին յաւժարագոյնս ընթեռնուլ, եւ որպէս սիրելի ինչ վարկանին զհետեւին կարծեաց վարդապետին:

10 Եւ դարձեալ վասն այսորիկ խնդրեմք զհարագատութիւն առաջիկայ շարագրութեանց, վասն զի բազում անգամ եւ խորթք շարագրածութիւնք գտանին: 11 Եւ լինին խորթք շարագրածութիւնք ըստ չորից յեղանակաց. կամ վասն հոմանունութեան, եւ այս երկակի. կամ վասն հոմանունութեան շարագրողաց, եւ կամ վասն հոմանունութեան շարագրածաց: 12 Եւ վասն հոմանունութեան շարագրողաց, որպէս յորժամ գտանին երկուք ոմանք հոմանուն, եւ զրէ իւրաքանչիւր ոք շարագրածս, ոմն «Վասն հոգւոյ», եւ ոմն «Վասն երկնից». յայնժամ վասն հոմանունութեան շարագրողացն ոչ ոք կարաւղ գոյ որոշել, այլ զերկոսեան շարագրածսն միոյ առն կարծէ գոլ: 13 Եւ կամ վասն հոմանունութեան շարագրածութեանցն, յորժամ գտանին երկուք ոմանք զանազան անուանս ունելով՝ եւ առնեն շարագրածութիւնս վասն միոյ իրի՝ կամ վասն հոգւոյ կամ վասն երկնից. եւ յայնժամ ոչ ոք կարող գոյ որոշել՝ կամ զնորայն սորա կարծելով, կամ զսորայս նորա:

1 τῶν ἐξηγητῶν

2 ὁ διδασκαλικὸς τρόπος

3 τοῦ ἀνδρός

14 Իսկ ըստ երկրորդ յեղանակի ասին խորթք շարագրածութիւնք՝ որ լինին ի ձեռն պատուասիրութեան, այսինքն սնափառութեան: 15 Քանզի ոմանք անփառք եւ աներեւելիք գոյով՝ անուամբ վարդապետութեան կամելով յարգել զիւրեանց շարագրածսն, մակագրեն յիւրեանց շարագրածսն զերեւելի ուրուք զանուն վարդապետի:

16 Իսկ ըստ երրորդ յեղանակի լինին խորթք շարագրածք վասն ժլատութեան, որպէս եղեւ առ Պիսիստրատոսիւ բռնաւորին սիկիլացւոց: 17 Վասն զի առ նովաւ ցնդաբար բերեցելոց հոմերականաց հագներգութեանցն կամ եղեւ նմա ժողովել զամենայն տաղս հոմերականս, եւ վարձս տանողացն բազումս խոստանայր տալ: 18 Վասն որոյ բազումք տաղս ստեղծանելով մատուցանէին բռնաւորին՝ որպէս թէ հոմերոսն իցէ՝ վասն իւրեանց շահիցն:

19 Իսկ ըստ չորրորդ յեղանակի լինին խորթք շարագրածք վասն բարեմտութեան աշակերտաց առ իւրեանց վարդապետսն. զրեն շարագրածս ոմանս, եւ մակագրեն զանուն վարդապետին. որպէս Պղատոն զՍոկրատային ի վերայ իւրոց շարագրածաց մակագրեաց. եւ պիւթագորականքն զՊիւթագորին ի վերայ Ոսկի ասացելոց առականս¹: 20 Արդ վասն խորթ շարագրածութեան յիրաւի զհարագատութիւնն խնդրեմք ամենայն առաջիկայ շարագրութեան:

21 Բայց տարրոշին եւ ճանաչին շարագրածք՝ թէ խորթք իցեն, թէ հարագատք, ըստ նիւթոյն եւ ըստ տեսակին: 22 Ըստ նիւթոյն՝ ըստ յարմարման եւ ըստ բառից. զի յարմարումն եւ բառք որպէս նիւթ են շարագրութեան: 23 Իսկ ըստ տեսակի՝ ըստ մտածութեան:

24 Յիրաւի եւ զի գլուխսն զբաժանումն խնդրեն. վասն զի գիտելով զգլուխսն որպէս զմասունս՝ դիւրապէս եւ մասանցն զբոլորն կարաւղ լինիմք գիտել: 25 Այլ եւ զկարգ շարագրութեանն յիրաւի խնդրեն. զի մի՛ զորս յառաջ պարտ է ընթեռնուլ՝ ի վերջէ ընթեռնուցումք եւ շփոթեմք զկարգ շարագրութեանցն: 26 Այլ եւ զվարդապետական յեղանակն խնդրելով բարւոք առնեն. զի որպէս ուսանելոց եմք՝ բազում են յեղանակք վարդապետութեան: 27 Յիրաւի եւ զառինչ մասն վերաբերութիւն խնդրեն. զի մի՛ որ ինչ ի տեսականն վերաբերիցի շարագրած՝ զայն ի գործականն կարծիցեմք, եւ որ ի գործականն՝ զայն ի տեսականն:

1 Ընդ այսոսիկ հանդերձ աստուծով առաջիկայ տեսութիւն²

ՊՐԱԿՔ Բ

2 Ուսեալք զսովորականն առ ի յասել զգլուխս, եկեսցուք եւ զնոյն գլուխս եւ յառաջիկայ շարագրութեանս խնդրեսցուք: 3 Եւ նախ եւ առաջին՝ յաղագս դիտաւորութեան:

4 Եւ պարտ է գիտել, եթէ դիտաւորութիւն առաջիկայ շարագրութեանս՝ եւ ձայնակցեալ է յոմանց, եւ տարաձայնեալ: 5 Եւ ձայնակցեալ է, վասն զի ամենեքեան խոստովանիմք, եթէ յաղագս հինգ ձայնիցն պատմէ՝ սեռի, տեսակի, տարբերութեան, յատկի, պատահման. որպէս եւ ինքն իսկ յիսկզբան³ շարագրութեանն պատմէ: 6 Իսկ տարաձայնեալ է նոյն շարագրութեան դիտաւորութիւնն. վասն զի ոմանք ասեն՝ թէ վասն նոցին իսկ հինգ ձայնիցդ առնու ցուցանելով զառ ի նոցանէ պէտս, եւ ոչ եթէ վասն պիտանացուաց յայլ իրս: 7 Իսկ այլք ասեն՝ եթէ վասն Ա-

1 ἐποίησαν τὰ χρυσᾶ ἔπη

2 ἐν οἷς σὺν θεῷ καὶ ἡ πράξις

3 ἐν τῷ προομίῳ

րիստոտէլի «Ստորագրութեանցն» առնու զսոսա. վասն զի Արիստոտէլի «Ստորագրութիւնքն» վասն ամենայն գոյից վարդապետեն, յորս պիտանացու լինին մեզ այսոքիկ հնգեքին ձայնքս. վասն զի ի ձեռն ձայնիցս այսոցիկ յայտնին, վասն այսորիկ յաղագս սոցա առնու: 8 Այլք ասեն՝ վասն զի պիտանացու են մեզ հինգ ձայնքդ յամենայն իմաստասիրութիւն, վասն այնորիկ առնու յաղագս դոցա: 9 Զի որպէս քերդողք¹ զամենայն բան յուր մասն ժողովեցին, եւ ճարտասանքն զամենայն քաղաքականսն ի տասն եւ ի չորս կացմունս² յարդարեցին. եւ որպէս Արիստոտէլ զամենայն գոյսս ի տասն ստորագրութիւնս եզիտ յարադրեալս, նոյնպէս եւ ամենայն իմաստասիրական ձայն հնգիւք այսոքիւք գտանի յարդարեալս, քանզի ամենայն իմաստասիրութեան ձայն՝ կամ սեռ է, կամ տեսակ, կամ տարբերութիւն, կամ յատուկ, կամ պատահումն: 10 Եւ զի հինգ են այսոքիկ ձայնք, ցուցանի ի բաժանմանէ, որ ունի այսպէս եւ ըստ այսմ աւրինակի:

11 Զայն երկակի է, կամ յաւելեալ, կամ անյաւել. յաւելեալ՝ որպէս մարդոյ, կամ անյաւել՝ որպէս անասնոյ եւ կամ որպէս անշնչիցն հնչումնք: 12 Եւ երկաքանչիւրքն դարձեալ երկակի, կամ նշանական, կամ աննշանական: 13 Յաւելեալ եւ նշանական՝ որպէս արծուի եւ եղջերու, վասն զի յաւելեալ է սիղոբայիւք, եւ նշանակեն զարծուին եւ զեղջերուն: 14 Իսկ յաւելեալ եւ աննշանական՝ որպէս ձիակապիկն եւ եղջերուաբաղն. քանզի այսոքիկ յաւելեալ են, բայց նշանակեն եւ ոչ ինչ: 15 Իսկ անյաւել եւ նշանական, որպէս հաջիւն շան. զի թէպէտ եւ անյաւել է՝ նշանակէ զգալուստ մարդոյ կամ գազանի: 16 Իսկ անյաւել եւ աննշանական՝ որպէս հնչումն քարի կամ փայտի:

17 Արդ այսոցիկ այսպէս եղելոց՝ իմաստասէրք ոչ վասն անյաւել ձայնի, եւ ոչ վասն յաւելեցելոյն եւ աննշանականի՝ որպէս քերդողք առնուն ի կիր, այլ զյաւելեալն եւ զնշանակեալն առնուն ի կիր:

18 Իսկ յաւելեալն ձայն եւ նշանական երկակի է, կամ հանուր, կամ մասնական. մասնական՝ որպէս Սոկրատէս. հանուր՝ որպէս մարդ, ձի, արծուի: 19 Այլ զմասնականն ձայն ոչ առնու ի կիր, վասն զի անորիչք են եւ անբաւք, այլ զհանրականն առնու ի կիր: 20 Եւ այս դարձեալ յաւելեալ եւ նշանակեալս եւ հանրականս երկակի է, կամ եղուտ³, կամ մակեղուտ⁴. եւ ասի մակեղուտ ամենայն պատահումն՝ որ յէութեան ունի զգոյն: 21 Եւ իւրաքանչիւր ոք ի սոցանէ երկակի գոյ: 22 Քանզի մակեղուտն երկակի գոյ, կամ միոյ բնութեան պատկանի, կամ բազմաց. եւ եթէ բազում բնութեան պատկանի՝ պատահումն լինի. որ է երկակի՝ անջատական եւ անանջատական. անջատական՝ որպէս նստել, գործել. եւ անանջատական՝ որպէս արձուունկն, պնչատ, որ բազում բնութեանց պատկանին: 23 Իսկ եթէ միոյ բնութեան պատկանի, յատուկ լինի՝ որ է մակեղուտ. որպէս յորժամ մարդոյ ասեմք յատուկ գոյ զծիճաղականն:

24 Ասի դարձեալ եւ եղուտն երկակի, քանզի կամ միոյ բնութեան պատկանի, կամ բազմաց: 25 Եւ եթէ բազում բնութեանց պատկանաւորի, կամ՝ ի զինչէումն⁵ ստորագի, եւ լինի սեռ. քանզի հարցեալ՝ զի՞նչ է մարդ, կենդանի՝ պատասխանեմք, որ բազում բնութեանց պատկանաւորի: 26 Եւ կամ ի ներ որպիսումն ստորագի⁶, եւ լինի տարբերութիւն. քանզի հարցեալ՝ թէ որպիսի ինչ է մարդ, գտարբերութիւնն

1 γραμματικοί
2 δεκατρείς στάσεις

3 οὐσιώδης
4 ἐπουσιώδης
5 ἐν τῷ τί ἔστι
6 ἐν τῷ ὁποῖον τί ἔστι

պատասխանեմք, բանական. եւ այս բազում բնութեանց պատկանի: 27 Եւ կամ դարձեալ ի ներ զինչէտումն ստորոգի, եւ լինի տեսակ, քանզի հարցեալք՝ թէ զի՞նչ է Սոկրատէս, ասեմք՝ թէ մարդ, գտեսակն պատասխանատրեմք, որ միում բնութեան պատկանաւորի. քանզի միայն մարդ ասի մարդ: 28 Եւ կամ ի ներ որպիսէտումն ստորոգի, եւ լինի եղուտ յատուկ. որպէս յորժամ հարցեալք՝ որպիսի ինչ է մարդ, պատասխանեմք՝ մտաց եւ մակացութեան ընդունակ, որ է յատուկ մարդոյ:

29 Արդ հինգ ելոց ձայնից, որպէս ցուցաք ի բաժանմանէ, այս ինքն սեռ, տեսակ, տարբերութիւն, յատուկ, պատահումն, հինգ են եւ յեղանակ ստորոգութեանց, որ յետ այսոցիկ ձայնից բերին՝ եթէ է, զինչ է, որպիսի ինչ է, վասն էր, եւ առ որպիսի ինչ ունի: 30 Արդ սեռ եւ տեսակ՝ ի ներ զինչէտումն ստորոգին. իսկ տարբերութիւն եւ եղուտ յատուկն՝ ի ներ որպիսինչէտումն ստորոգին: 31 Իսկ մակեղուտ յատուկն եւ անանջատական պատահումն՝ նմանապէս յորպիսիինչէտումն. իսկ անջատական պատահումն՝ ի զիարդէտումն:

32 Եւ պարտ է գիտել, թէ զի՞նչ եղուտն՝ եւ զի՞նչ մակեղուտն: 33 Եւ եղուտ է, որ առընթեր գոլով գոյացուցանէ, եւ ոչ գոլով ապականէ, որպէս բանականն. եւ մակեղուտ է, որ ոչ գոլով՝ ոչ ապականէ, եւ գոլով՝ ոչ գոյացուցանէ, որպէս սեաւն, սպիտակն:

1 Ընդ այսոսիկ հանդերձ աստուծով առաջիկայ պրակի¹

ՊՐԱԿՔ Գ.

2 Ուսեալք թէ զինչ է դիտաւորութիւն առաջիկայի շարագրութեանս, եկեսցուք եւ ի պիտանացուն: 3 Եւ գիտելի է, եթէ պիտանացուն առաջիկայ շարագրութեանս

եռակի է. քանզի պիտանացու լինի մեզ առաջիկայ շարագրութիւնս եւ ի «Ստորագութիւնսն» Արիստոտէլի եւ յամենայն իմաստասիրութիւնս եւ ի տրամաբանական հնարս²: 4 Եւ ի «Ստորագութիւնսն» Արիստոտէլի պիտանացու լինի, վասն զի ի «Ստորագութիւնսն» ուսուցանէ զմեզ Արիստոտէլ յաղագս տասն սեռականագոյն սեռիցն. եւ ուսուցանէ եւ առաջիկայ շարագրութիւն, թէ զինչ է սեռ:

5 Եւ դարձեալ, սեռք՝ տեսակացն են սեռք, եւ ի ձեռն տարբերութեանց բաժանին ի տեսակս. որպէս կենդանի սեռ գոլով տեսակաց՝ ի ձեռն տարբերութեանց, այս ինքն բանականին եւ անբանին, բաժանի ի տեսակս: 6 Իսկ առաջիկայ շարագրութիւնս ուսուցանէ զմեզ, եթէ զինչ է տեսակ, եւ զինչ զանագանութիւն: 7 Եւ դարձեալ, զի սեռականագոյն սեռք ոչ ընդունին զսահմանս, վասն զի սահման ի սեռէ եւ ի բաղկացուցիչ զանագանութեանց բաղկանայ, իսկ սեռականագոյն սեռք ոչ ունին այլ սեռականագոյն սեռ՝ զոր պարտ է դնել ի սահմանս նոցա. եւ վասն այսորիկ ոչ սահմանին, այլ ի ձեռն յատկի յայտնին: 8 Ուսուցանէ մեզ եւ առաջիկայ շարագրութիւնս՝ եթէ զինչ յատուկ: 9 Եւ դարձեալ, վասն զի յոլովք ի տասն սեռականագոյն սեռիցն պատահմունքն են, որպէս որակն եւ քանակն, եւ այլք ամենայն: 10 Իսկ առաջիկայ շարագրութիւնս ուսուցանէ մեզ՝ զինչ է յատուկ, եւ զինչ պատահումն:

11 Արդ այսպէս ցուցաք՝ եթէ զիարդ պիտանացու է առաջիկայ շարագրութիւնս մեզ ի «Ստորագութիւնսն» Արիստոտէլի: 12 Յուցցուք եւ եթէ զիարդ յամենայն իմաստասիրութիւնս պիտանացու է մեզ առաջիկայ շարագրութիւնս. եւ ցուցցուք այսպէս. եթէ «Ստորագութիւնքն» Արիս-

1 ἐν οἷς καὶ ἡ δευτέρα πρᾶξις

2 διαλεκτικὰς μεθόδους

տոտէլի յամենայն իմաստասիրութիւնս պիտոյանան. վասն զի ներածութիւնք են ամենայն իմաստասիրութեան, վասն զի նոքաւք ուսանիմք զամենայն զգոյսս: 13 Արդ եթէ «Ստորոգութիւնքն» Արիստոտէլի յամենայն իմաստասիրութիւնս պիտանանան, իսկ ի «Ստորոգութիւնսն» Արիստոտէլի պիտանանայ առաջիկայ շարագրութիւնս, ապա ուրեմն եւ յամենայն իմաստասիրութիւնս պիտանանայ առաջիկայ շարագրութիւնս:

14 Այլ եւ ի տրամաբանական հնարս՝ որպէս ասացաք, պիտանացու գոյ: 15 Բայց նախ եւ առաջին ասացուք, թէ վասն էր ասին տրամաբանական հնարք, եւ ապա թէ քանիք ինչ իցեն, եւ ապա զկարգն նոցա. եւ այնպէս ապացուցուք՝ եթէ զհարգ առաջիկայ շարագրութիւնս պիտանացու է ի տրամաբանական հնարս:

16 Եւ գիտելի է, եթէ տրամաբանականն այն է, յորժամ ոմն հարցանէ, եւ ոմն ասէ: 17 Եւ ի տրամաբանելն երեւին չորք այսոքիկ հնարք. քանզի էր ինչ որ բաժանէին. եւ էր ինչ, որ սահմանէին. եւ էր ուրեք, որ ապացուցի պիտանանային եւ վերլուծութեան: 18 Վասն որոյ չորք գոն տրամաբանական հնարք, եւ են այսոքիկ. բաժանականն, սահմանականն, ապացուցականն եւ վերլուծականն: 19 Եւ է գործ բաժանականին՝ առնուլ զսեռս եւ բաժանել ի տեսակս. իսկ սահմանականին՝ սահմանել զիրաքանչիւրոք ի գոյիցս. իսկ ապացուցականին՝ ցուցանել եւ հաւատարմացուցանել այնպէս գոլ, որպէս են: 20 Իսկ հաւատարմանայն եռակի գոյ, կամ ի հանրականացն զմասնականսն ցուցանել եւ հաւատարմացուցանել, կամ ի մասնականացն զհանրականսն, կամ ի զուգէն զգոյգն:

21 Արդ յորժամ ի հանրականէն զմասնականսն ցուցանէ եւ հաւատարմացուցանէ, իսկապէս ապացուցական կոչի. որպէս յորժամ կամելով ցուցանել՝ եթէ մարդ նե-

րանճնական է՝ այս ինքն շնչական, յընդհանրականացն զայսոսիկ ցուցանեմք եւ հաւատարմացուցանեմք, եթէ մարդն կենդանի է. ամենայն կենդանի շնչական է, ապա ուրեմն եւ մարդն շնչական է:

22 Եւ յորժամ մասնականաւն զընդհանուրն հաւատարմացուցանեմք, այնպիսին մակածական¹ կոչի. որպէս յորժամ կամելով զոք հաւատարմացանել՝ թէ ամենայն կենդանի զներքին կլափն շարժէ, ի մասնականացն զայսոսիկ ցուցանեմք ասելով՝ թէ վասն զի մարդ եւ ձի զներքին կլափն շարժեն, ապա ուրեմն ամենայն կենդանի զներքին կլափն շարժէ:

23 Իսկ յորժամ հաւասարաւն զհաւասարն ցուցանեմք, յայնժամ յարացոյց² կոչի. որպէս յորժամ ոք կամելով ոչ տալ Դիոնիսի մարմնապահս՝ ասելով. Արք արթնացիք, ոչ տացուք Դիոնիսի թիկնապահս, վասն զի եւ Պիսիստրատոս առեալ բռնացաւ:

24 Եւ պարտ է գիտել, եթէ որ հանրականաւն զմասնականսն հաւատարմացուցանէ, ամենայն իրաւք ճշմարիտ է. եւ նա է իսկապէս յեղանակ ապացուցութեան. որպէս զմարդ՝ մասնական գոլով, յորժամ կամիմք ցուցանել թէ շնչական է, հանրականաւն՝ այս ինքն կենդանեաւն ցուցանեմք, ասելով՝ թէ մարդ կենդանի, եւ ամենայն կենդանի շնչաւոր է, ապա ուրեմն եւ մարդ շնչաւոր է:

25 Իսկ յորժամ մասնականաւն զընդհանրականսն հաւանեցուցանեմք, ոչ է ամենեւին ճշմարիտ. քանզի յասելն՝ թէ վասն զի մարդ եւ ձի զներքին կլափն շարժեն, եւ ասել՝ թէ ապա ուրեմն եւ ամենայն կենդանի զներքին կլափն շարժէ, ոչ է ճշմարիտ. քանզի կոկորդիլոս զազանն եւ փիւնիկն հաւ ոչ շարժեն զներքին կլափն,

1 ἐπαγωγή

2 παράδειγμα

այլ զվերինն: 26 Եւ զի արդեաւք ոչ է ճշմարիտ մասնականաւն զընդհանրականն հաւատացուցանել, վասն զի մասնականքն անթիւք եւ անբաւք են, եւ ոչ կարեն յեզր ելանել, վասն այնորիկ ոչ գոն ճշմարիտ: 27 Այլ եւ ոչ յորժամ հաւասարաւն զհաւասարն հաւատարմացուցանեմք, գոյ ճշմարիտ. քանզի յասելն՝ թէ մի տացուք Դիոնիսի մարմնապահս, վասն զի եւ Պիսիստրատոս առեալ բռնացաւ, ոչ է ճշմարիտ. քանզի ոչ եթէ յորժամ Պիսիստրատոս բռնացաւ, եւ Դիոնիսիոս բռնացաւ:

28 Իսկ վերլուծականին գործ քակտելն ինչ յայնս՝ յորոց եւ գոյացեալ գոյ. որպէս յորժամ առնելով ոք զմարդ՝ քակտէ զնա յոտս եւ ի ձեռս եւ ի գլուխս: 29 Եւ զայսոսիկ դարձեալ ի մարմին եւ յոսկերս եւ ի ջիւս, յերակս եւ ի նեարդս. եւ զսոսա դարձեալ ի չորս տարերս. եւ զտարերս ի նիւթ եւ ի տեսակ, յորոց եւ բաղկացեալ գոյ:

30 Արդ ասացուք եւ վասն դասաւորութեան նոցա: 31 Եւ պարտ է գիտել, եթէ նախադասի բաժանականն քան զսահմանականն. վասն զի եւ բաժանումն յառաջագոյն է քան զսահման. վասն զի ամենայն ոք առնելով զպիտանացուն ի բաժանմանէ բացակատարէ զսահմանն: 32 Իսկ սահմանականն նախադասի ապացուցականին. վասն զի որպէս ասէ Արիստոտէլ, սկիզբն ապացուցութեան սահման է. վասն զի ապացոյց հանապազ զբնութիւն ենթակայ իրին յանդիման կացուցանէ, այլ եւ սահման զբնութիւն ենթակայ իրին յայտնէ: 33 Իսկ վերլուծականն ի վերջոյ դասեցաւ, վասն զի հակադարձապէս ունի վերլուծութիւն առ բաժանումն. քանզի բաժանումն ի պարզագունէն սկսանի, եւ ի շարադրեալսն երթեալ յանդի. իսկ վերլուծականն ի շարադրելոցն սկսանելով ի պարզագոյնն երթեալ յանդի: 34 Իսկ առ սահմանականն եւ ապացուցա-

կանն հակադարձի, վասն զի նոքա զբազում բնութիւնսն մի առնեն. իսկ վերլուծութիւն զմին ի բազումս բաժանէ:

35 Զայսոսիկ գիտելով՝ եկեսցուք եւ ցուցցուք, եթէ զիարդ եւ առաջիկայ շարագրութիւնս եւ յայսոսիկ պիտանացու է: 36 Եւ պարտ է գիտել, եթէ ի բաժանականն պիտանացու գոյ այսպէս. զի որպէս է տեսանել յայսն զերիս զայսոսիկ, որ բաժանէն, եւ որ բաժանին, եւ յորս բաժանումն լինի. որպէս [ի] հիւսնականն զսղոցն եւ զփայտն եւ զմասունսն, յորս փայտն բաժանեցաւ, նոյնպէս եւ աստանաւր՝ է որ բաժանէն, եւ է որ բաժանին, եւ է յորս բաժանումն լինի: 37 Արդ որ բաժանին աստ՝ սեռ է, եւ որ բաժանենն՝ բաղկացուցիչ զանազանութիւնք. իսկ յորս բաժանումն եղեւ՝ այսոքիկ տեսակք են:

38 Արդ վասն զի բաժանումն ի սեռէ բնաւորեցաւ լինել ի տեսակս՝ ի ձեռն բաղկացուցիչ զանազանութեանց, պիտանացու է մեզ առաջիկայ շարագրութիւնս. վասն զի ուսուցանէ՝ եթէ զինչ է սեռ, եւ զինչ տեսակ, եւ զինչ բաղկացուցիչ զանազանութիւնք:

39 Իսկ ի սահմանականն պիտանացու է, վասն զի սահման ի սեռէ եւ ի բաղկացուցիչ զանազանութեանց բաղկանայ. որպէս սահման մարդոյ՝ կենդանի բանաւոր, մահկանացու, մտաց եւ հանճարոյ ընդունակ: 40 Եւ է կենդանին սեռ, իսկ այլքն բաղկացուցիչ զանազանութիւնք. զորս ուսուցանէ մեզ առաջիկայ շարագրութիւնս՝ եթէ զինչ է սեռ եւ զինչ բաղկացուցիչ զանազանութիւնք: 41 Իսկ եթէ ի սահմանականն պիտանացու է, ապա եւ յապացուցականն. վասն զի որպէս յառաջագոյն ասացաք՝ սկիզբն ապացուցի սահմանականն է:

42 Իսկ ի վերլուծականն պիտանացու է, վասն զի ամենայն բնաւորական իր¹ ի

1 φυσικά πράγματα

նիւթ եւ ի տեսակ վերլուծանի՝ յորոց եւ բաղկացեալ գոյ: 43 Իսկ Համեմատի սեռ նիւթոյ, զի որպէս նիւթ ամենայն բնաւորականացն առհասարակ է, նոյնպէս եւ սեռ ամենեցուն ընդ նոյնաւ տեսակացն հասարակաց է. իսկ բաղկացուցիչ զանազանութիւնք՝ տեսակի:

1 Ընդ այսոսիկ հանդերձ աստուծով առաջիկայ պրակի¹

ՊՐԱԿՔ Դ

2 Ուսեալք զդիտաւորութիւն եւ զպիտանացու առաջիկայ շարագրութեանս, ասասցուք եւ զպատճառ մակագրութեանն: 3 Եւ գիտելի է, զի մակագրեալ է առաջիկայ շարագրութիւնս «Պորփիւրի ներածութիւն», Պորփիւրի Փիւնիկեցւոյ՝ աշակերտի Պղոտինի² Լիկոպալսեցւոյ: 4 Իսկ Լիկոպալսի՝ յԵգիպտոս է, վասն որոյ ասացեալ է, եթէ ոչ յօքունս եգիպտացիս, բայց յորժամ ծնանի՝ մեծ ծնանի: 5 Վասն որոյ ասէ Պորփիւրիոս, եթէ Պղոտինոս³ մերային քատակեալ գոյր ամաչեցեալ, եթէ զիարդ արդեալք ի մարմնում իցէ. եւ կամեցելոյ ոմանց յարուցանել նմա պատկեր՝ արգել ասելով. Շատ է ինձ՝ որ ի բնութենէս գոյ ստուերակերպութիւն, այլ ոչ ստուերակերպումս ստուերակերպ կանգնել:

6 Ուսեալք յաղագս Պորփիւրի թէ ուստի, ուստի Յամղիքոս⁴, յաղագս որոց ասաց Պիւթիա, թէ աստուածային Ասորին եւ բազմուսումն Փիւնիկեցին: 7 Բազմուսումն փիւնիկեցի զՊորփիւրիոս ասելով, եւ աստուածային ասորի՝ զՅամղիքոս. վասն զի աստուածաբանութեամբ միշտ պարապէր: 8 Իսկ «Ներածութիւն» մակագրեցաւ, վասն զի նա է որ ի ներքս ամէ զմեզ յամենայն իմաստասիրութիւն. քան-

զի ուսուցանէ յաղագս հինգ ճայնիցն՝ սեռի, տեսակի, տարբերութեան, յատկի, պատահման, յորս ամենայն իմաստասիրութեան բարբառք վերաբերին: 9 Եւ յիրաւի «Ներածութիւն» գրեցաւ, եւ ոչ «Յաղագս ներածութեան», զի «Ներածութիւն» իսկապէս ինքն իսկ զիրն նշանակէ, իսկ «Յաղագս ներածութեան» որպէս թէ այլ ինչ իր յաղագս նորա պատմէ:

10 Եկեսցուք եւ ի հարագատն: 11 Եւ գիտելի է, եթէ ի բազում իրաց ցուցանի հարագատ առաջիկայ շարագրութիւն Պորփիւրի: 12 Նախ եւ առաջին անգուստ իսկ ի նախերգանէն, յորում գրեալ է «Ելոյր հարկաւորի, Քրիսաւորիէ»: 13 Իսկ Քրիսաւորիս հիպատոս էր ի Հոռոմ, որում զառաջիկայ շարագրութիւնս առճայնեաց, զորոյ յիշատակէ եւ յայլս իւր շարագրութիւնս: 14 Եւ երկրորդ, վասն զի հոգ տանի հաւաստութեան, որ է առանձին Պորփիւրի. վասն զի գրելոց յեղանակաց հաւաստութեան, որպէս ուսանելոց եմք ի նախերգանի նորին շարագրութեան, դա ինքն Պորփիւրիոս ամենայն հաւաստութեամբ հոգ տանի: 15 Ընդ այսոսիկ եւ հարագատդ:

16 Ընդ որս ասասցուք եւ զգասաւորութիւն նորին շարագրութեան: 17 Եւ գիտելի է, զի «Ստորագրութիւնքն» Արիստոտէլի պիտոյ են մեզ յամենայն իմաստասիրութիւն: 18 Իսկ «Ներածութիւնքս» Պորփիւրի պիտանանան մեզ ի «Ստորագրութիւնքն» Արիստոտէլի, որպէս ի պիտանացումն ուսաք: 19 Ապա ուրեմն պարտ է զառաջիկայ շարագրութիւնս՝ Արիստոտէլի շարագրութեանցն նախադասել:

20 Յետ որոյ ասասցուք զ'ի գլուխսն բաժանումն: 21 Եւ գիտելի է, զի յերկուս գլուխս բաժանի առաջիկայ շարագրութիւնս. յառաջնումն ուսուցանէ զմեզ՝ եթէ զինչ իւրաքանչիւր ոք է ի հինգ բարբա-

1 ἐν οἷς ἡ πράξις
2 Հայ. Պղոտոնի, յուճ. Πλωτίνου
3 Հայ. Պղոտինոս, յուճ. Πλωτίνος
4 Ἰάμβλιχος

ուոցդ. Իսկ յերկրորդումն զհաղորդութիւն զոցա առ միմեանս եւ զզանազանութիւնս:

22 Ասասցուք եւ զվարդապետական յեղանակն: 23 Եւ գիտելի է, եթէ չորից ելոց վարդապետական յեղանակաց՝ զչորեսինն ի կիր արկանէ, եւ բաժանականին՝ յորժամ բաժանէ զհինգ բարբառոզ, եւ սահմանականին՝ յորժամ սահմանէ զնոսա, եւ ապացուցականին՝ յորժամ ցուցանէ զերաքանչիւր ոք ի նոցանէ: 24 Այլ եւ զվերլուծականն արկանէ ի կիր՝ յորժամ զերաքանչիւր բարբառոյ ստորագրութիւն ի բառս լուծանէ, եւ հաւաստեցուցանէ զերաքանչիւր ոք ի բառից:

25 Յետ որոյ ասասցուք՝ եթէ յինչ մասն իմաստասիրութեան վերաբերի առաջիկայ շարագրութիւնս: 26 Եւ գիտելի է, թէ ի բանական մասն իմաստասիրութեան վերաբերի առաջիկայ շարագրութիւնս: 27 Իսկ բանականն՝ եթէ մա՞սն է իմաստասիրութեան, եւ եթէ գործի, ի «Ստորոգութիւնս» Արիստոտէլի ուսցուք:

1 Ընդ այսոսիկ հանդերձ աստուծով առաջիկայ գործաւորութիւնս¹

ՊՐԱԿՔ Ե

2 «Ելոյր հարկաւորի, Քրիստոսի»: 3 Յանկումն ունելով նախերգանաց՝ յիրաւի կարծեցեալ, քանզի ամենայն ինչ յանկումն ունել բնաւորեցան՝ որք ըստ մեզս են, բայց միայն յառաքինութեանց, փութապէս զառաջիկայ հանդէս զգեցցուք, եւ եկեալք ի նոյն ինքն ի «Ներածութեանն» պատմութիւն, որ անդուստ իսկ ի սկզբանն զերիս զայսոսիկ աւանդեաց՝ զգիտաւորութիւնն, զպիտանացուն, զվարդապետական յեղանակն: 4 Եւ երկաքանչիւրոցս այսոցիկ առ ինքն յարաքարչելով՝ գիտաւորութեանն ասեմ եւ պիտանացուին, զընդմէջ

ճանապարհ ունելով Պորփիւրիոս՝ խառնեաց զերկաքանչիւրսդ զգիտաւորութիւն եւ զպիտանացուն. եւ յերկուս բաժանեալ զպիտանացուն՝ ի մէջ նոցին եդ զգիտաւորութիւն:

5 Եւ ասի գիտաւորութիւն յարաքարչել զմեզ առ ինքն. վասն զի, ըստ Պղատոնի, «մի է սկիզբն ճշմարիտ խորհելոյ՝ գիտել յաղագս ոյր է մտածութիւնն. ապա թէ ոչ՝ հարկ է յամենայնէն վրիպել». քանզի որ զգիտաւորութիւն առաջիկայ շարագրութեանն անգիտանայ, եւ ոչ ասացելոցն այնպիսին հետեւիլ կարող գոյ:

6 Իսկ պիտանացուն ասի յարաքարչել զմեզ առ ինքն, վասն զի գտանելով զպիտանացուն առաջիկայ շարագրութեան՝ սքանչանամք: 7 Իսկ սքանչանք սկիզբն են իմաստասիրութեան: 8 Եւ զի սքանչանք սկիզբն են իմաստասիրութեան՝ աստուստ պարտ է գիտել. վասն զի թէ ոչ սքանչանայ ոք՝ եւ ոչ ի խնդիր անկանի եւ ոչ իմաստասիրէ. որգոն՝ յորժամ տեսանելով ոք զծիածանդ², եւ ոչ սքանչանայ՝ եթէ զինչ իցէ եւ ուստի բաղկանայցեն խառնուածք նորին երփն երփն գունոցն, ոչ անկանի ի խնդիր. եթէ սքանչանայ, ապա եւ ի խնդիր անկանի, ապա եւ իմաստասիրել ձեռնարկէ: 9 Ապա ուրեմն պարտ է ի պիտանացունէն սկիզբն առնել. վասն զի, որպէս ասացաք, ի ձեռն սքանչման նա է սկիզբն իմաստասիրութեան:

10 Արդ երկաքանչիւրոցս այսոցիկ զմեզ առ ինքն յարաքարչելով՝ գիտաւորութեանն եւ պիտանացուին, զընդմէջ ճանապարհն ունելով Պորփիւրիոս խառնեաց զերկոսին: 11 Եւ եռակի ելոյ պիտանացուին՝ նախ դնէ զառաջին մասն պիտանացուին, ասելով՝ թէ եւ յառ'ս Արիստոտէլի ստորոգութեանցն վարդապետութիւն: 12 Եւ յետ առաջին մասին պիտանացուին

1 Ταῦτα ἔχει ἡ παροιῶσα πράξις καὶ τὰ προλεγόμενα τῆς Πορφυρίου Εἰσαγωγῆς

2 Ἴρις

ի վերայ ածէ զգիտելն՝ եթէ զինչ է սեռ, եւ զինչ տարբերութիւն, զինչ տեսակ, զինչ յատուկ, զինչ պատահումն, որ է զիտաւորութիւն, այս ինքն եթէ յաղագս հնգիցս այսոցիկ է զիտաւորութիւն:

13 Իսկ ասելն՝ թէ ի սահմանացն քացատրութիւն, եւ ամենեւին յաղագս քաժանման եւ ապացուցութեան, զերրորդ մասն պիտանացուին ուսուցանէ, եթէ եւ ի տրամաբանական հնարս պիտանացու գոյ: 14 Իսկ ասելովն զեւն շաղկապ՝ թէ եւ յԱրիստոտէլի ստորոգութեանցն՝ վարդապետութիւն, յայտ արար թէ ոչ միայն առ ի գիտել զԱրիստոտէլի ստորոգութիւնսն պիտանացու է, այլ եւ յամենայն իմաստասիրութիւն՝ որ է երկրորդ մասն պիտանացուին: 15 Դարձեալ ասելն՝ թէ, եւ ի սահմանացն քացատրութիւն, ոչ միայն զերրորդ մասն պիտանացուին յայտ արար, այլ եւ զվարդապետական յեղանակն. վասն զի ամենայն վարդապետական յեղանակ ըստ չորից տրամաբանական հնարից եղանի:

16 Բայց խնդրելի է՝ թէ զի՞ նախ զսեռ դասեաց, երկրորդ գտարբերութիւն, երրորդ գտեսակ, չորրորդ գյատուկ, հինգերորդ զպատահումն: 17 Բայց յառաջ քան զայս ասացուք՝ թէ յէականցն ոմանք մասնականք են եւ ոմանք հանուրք: 18 Արդ մասնականացն եւ ենթալուսնեացն ոչ ինչ միշտ եւ նոյնպէս բնաւորեցան գոյ. իսկ հանրականքն միշտ եւ նոյնպէս բնաւորեցան գոյ: 19 Իսկ արդ զայս գիտելով՝ իմաստասիրութիւն ըստ նմանութեան բնութեան զհանրականաւք եղանի, որք միշտ եւ նոյնպէս բնաւորեցան գոյ: 20 Իսկ մասնականքն, որ կոչին անհատք, ոչ գոյով միշտ եւ նոյնպէս, վասն այնորիկ ոչ նոքաւք բաղկանայ իմաստասիրութիւն: 21 Եւ ասին մասնականք Սոկրատէս, Պլատոն, Ալկիպիադ, որք եւ անհատք կոչին: 22 Իսկ անհատք կոչին, վասն զի բաժանե-

լով ոչ կարեն պահել զառաջին տեսակն, քանզի որպէս բոլոր ի մասունս բաժանի. զի ամենայն բոլոր ի մասունս բաժանելով՝ ոչ պահէ զառաջին տեսակն:

23 Արդ վասն զի ընդհանրականքն պատուականագոյնք են, որպէս միշտ եւ նոյնպէս գոյով, վասն այնորիկ նախ եւ առաջին զսեռ դասեաց Պորփիրիոս՝ որպէս ընդհանրական քան գտարբերութիւն եւ գտեսակ: 24 Քանզի որ ինչ բանական է՝ որ է տարբերութիւն, նա եւ կենդանի է՝ որ է սեռ. այլ ոչ՝ որ ինչ կենդանի, նա եւ բանական: 25 Արդ վասն զի ընդհանրականագոյն է սեռ քան գտարբերութիւն, եւ վասն նորին եւ պատուականագոյն, վասն այնորիկ նախադասեցաւ: 26 Իսկ գտարբերութիւն նախադասեաց տեսակի վասն նորին պատճառի. զի տարբերութիւն հանրականագոյն է քան գտեսակ. վասն զի որ ինչ մարդ է՝ որ է տեսակ, նա եւ բանական՝ որ է տարբերութիւն. այլ ոչ՝ որ ինչ բանական, նա եւ մարդ: 27 Վասն այնորիկ նախադասեցաւ տարբերութիւն քան գտեսակ:

28 Իսկ գտեսակն նախադասեաց յատկի եւ պատահման, վասն զի տեսակ եղուտ է. իսկ յատուկ եւ պատահումն՝ մակեղուտ. եւ պատուականագոյն է եղուտն քան զմակեղուտն: 29 Վասն որոյ տարակուսեն ոմանք ասելով, թէ եւ յատուկ է ուրեք որ գտանի եղուտ՝ որպէս մտաց եւ հանճարոյ ընդունակ, վասն է՞ր նախադասեաց գտեսակն քան զեղուտ յատուկն: 30 Զայս տարակուսութիւն լուծանելով ասեմք, թէ վասն զի տեսակ հանապազ եղուտ է. իսկ ոչ հանապազ եղուտ է յատուկն՝ այլ եւ մակեղուտ, վասն այնորիկ նախադասեաց զհանապազ եղուտն ոչ հանապազ եղուտին: 31 Իսկ զյատուկն նախադասեաց պատահման, վասն զի յատուկ է ուրեք զի եղուտ գտանի, որպէս մտաց եւ հանճարոյ ընդունակն. իսկ պատահումն՝ հանապազ մակե-

զուտ: 32 Արդ այսօրիկ եւ վասն դասաւորութեան հինգ բարբառոցդ:

33 Եւ դարձեալ ըստ այլ յեղանակի նախադասի յատուկ պատահման, թէպէտ եւ պատահումն հանրականագոյն է. վասն զի յատուկն անդրադարձի առ այն՝ որոյ է յատուկ, որգոն, որ ինչ մարդ՝ նա ծիծաղական, եւ որ ինչ ծիծաղական՝ նա եւ մարդ: 34 Իսկ պատահումն ոչ անդրադարձի. քանզի որ ինչ ազուալ՝ նա եւ սեաւ, այլ ոչ որ ինչ սեաւ՝ նա ազուալ:

1 Ընդ այսուսիկ հանդերձ աստուծով առաջիկայ տեսութիւն¹

ՊՐԱԿԳ Զ

2 Գոյով կարեւոր, Քրիսաւորիէ: 3 Աստուտ տարակուսեն ոմանք, թէ ընդէ՞ր գոլն կարեւորին նախադասեաց: 4 Առ որս ասեմք, թէ վասն զի պարտ է սկիզբն ի հանրականագունիցն առնել, զնոյն խորհելով եւ Պորփիրիոս՝ ի գոյէն սկիզբն արար. իսկ կարեւորն բազմապատկաբար ասի: 5 Եւ պարտ է գիտել՝ եթէ երկուք այսօրիկ յարակայանան միմեանց՝ բարին եւ պիտանացուն: 6 Իսկ պիտանացուն բաժանի յերկուս՝ ի հոմանուն բարին եւ ի կարեւորն. եւ բարի այն է՝ որ վասն ինքեան է ընտրելի, որգոն՝ բարեպաշտութիւն², բարերջանկութիւն³: 7 Իսկ հոմանունն որ հակորոշի կարեւորին, որ առընթեր գոյով ոչ գոյացուցանէ, եւ ոչ գոյով ոչ ապականէ. որպէս այսպիսի ինչ եւ կամ այնպիսի հանդերձ, կայծն եւ այծենակաճն: 8 Իսկ կարեւոր է՝ որ առընթեր գոյով գոյացուցանէ, եւ ոչ գոյով ապականէ:

9 Արդ այսպիսի կարեւոր վեցաբար ասի գոլ. կամ որպէս նիւթ, որպէս նաւակառուցի՝ տախտակք, եւ բրտին՝ կաւ. կամ

որպէս զանազանութիւն, որպէս յորժամ ասեմք կարեւոր գոլ մարդոյ զբանականն. կամ բռնութեամբ, որպէս յորժամ ասեմք՝ կարեւորապէս որ ընդ մէջն կտրի՝ վախճանի, այս ինքն հարկաւորապէս. եւ կամ որպէս հետեւիւն, յորժամ ասեմք՝ եթէ կարեւորապէս հետեւի առաջարկութեանցն եզրակացութիւնն⁴: 10 Բայց ասի կարեւոր, եւ որ վասն իւր փախչելի է, բայց վասն այլոյ ընտրելի, որպէս երակահատն. քանզի նշտրակն վասն իւր ինքեան փախչելի է՝ վասն զի ցաւեցուցանէ. իսկ վասն առողջութեան ընտրելի: 11 Ասի կարեւոր՝ եւ որ վասն իւր եւ վասն այլոյ ընտրելի է, որպէս զառողջութիւնս. քանզի առողջութիւն վասն իւր ընտրելի է, եւ վասն այլոյ, այս ինքն վասն անձնաւորական ներգործութեանցն⁵. քանզի ոչ երբէք կանխեն առ ի յազդել անձնաւորական ներգործութիւնքն առանց առողջութեան: 12 Արդ ըստ այսմ վերջին նշանակութեանս կարեւոր՝ ասի գոլ եւ առաջիկայ շարագրութիւնս կարեւոր. քանզի եւ վասն իւր է կարեւոր առ ի գիտել մեզ զիւրաքանչիւր ոք ի հինգ բարբառոցդ. եւ վասն այլոց է ընտրելի, վասն Արիստոտէլի «Ստորոգութեանցն» եւ վասն ամենայն իմաստասիրութեան:

13 Քրիսաւորիէ: 14 Գիտեմք զՔրիսաւորիէ հիպատոս ի Հռոմ, բարեկամ Պորփիրի, առ որ զառաջիկայ շարագրութիւնս առձայնեաց: 15 Առ ի յԱրիստոտէլի ստորոգութեանցն վարդապետութիւն: 16 Աստանաւր զերկակի պիտանացուն ցուցանէ՝ ըստ հաւաստոյն եւ ըստ անհաւաստոյն. ըստ հաւաստոյն՝ ի ձեռն ասելոյն՝ թէ ի ստորոգութիւնսն Արիստոտէլի. իսկ ըստ անհաւաստոյն, ըստ որում զեւն շողկապ դնէ՝ արտաքուստ յայտնէ զամենայն իմաստասիրութիւն: 17 Գիտել զիմչ սեռ,

1 ταῦτα ἔχει καὶ ἡ παροῦσα πρᾶξις
2 εὐσέβεια
3 εὐδαιμονία

4 προτάσει το συμπέρασμα
5 ψυχικὰς ἐνεργείας

զինչ տարբերութիւն, զինչ տեսակ, զինչ յատուկ եւ զինչ պատահումն: 18 Աստուստ զդիտաւորութիւն առաջիկայ շարագրութեանս յայտնէ:

19 Համառուտ քեզ ընձեռնութիւն առնելով: 20 Աստուստ զեղանակ վարդապետութեանս յայտնէ ասելով՝ եթէ դաժանագունից տեսութեանցն ոչ կամիմ կաճառակից լինել. վասն զի յայսցանէ անհաւատութիւն լինի: 21 Եւ որովհետեւ զանհաւատութիւն յիշեցաք, բեր այսուհետեւ ասացուք՝ թէ ըստ քանի յեղանակաց լինի անհաւատութիւն:

22 Արդ լինի անհաւատութիւն կամ ի բառիցն կամ ի տեսութեանցն. եւ ի տեսութեանցն՝ որպէս Հերակլիտեանք ասացուածք¹. Քանզի այսոքիկ ասացուածք խորագոյնք եւ դժուարագոյնք գոլով, վասն որոյ ասացեալ է՝ խորագունի պիտանանայ լուզորդի: 23 Իսկ ի բառիցն՝ երկակի լինի անհաւատութիւն՝ կամ երկայնութեամբ ավազոյն, որպէս Գալինայիք ասացուածքն². զի թէպէտ եւ դիւրաւաչք գոն, սակայն վասն երկայնութեանս անհաւատութիւն ի ներքս անկանի: 24 Եւ կամ վասն որակութեան բառիցն, որպէս Արիստոգինէականքն³. Քանզի անդ հեշտացաւ եւ ներհամետացեալ ասէ. արդ եթէ որպիսի ինչ հեշտացաւ եւ ներհամետացեալ՝ ոչ գիտեմք: 25 Եւ զի՞ զայսոսիկ այլուստ ձեռնարկեմք ցուցանել եւ ոչ ի մերոց առաջնորդապետաց եւ վերակացուաց իմաստասիրութեան. ի Պղատոնէ ասեմ եւ յԱրիստոտէլէ. Քանզի ի սոցանէ ոմն ըստ յարմարաբանութեան ախորժեաց առնել զանհաւատութիւն. իսկ ոմն ըստ տեսութեան: 26 Քանզի արիստոտէլականքն տեսաւորութիւնք դիւրք են, իսկ յարմարաբանութիւնն դժուարապատում. Քանզի ե-

թէ ոք իմանայ զի՞նչ է ներաւարտ ունակութիւն եւ քանակ, զաւրութեամբ⁴, հեշտ եւ դիւրալուր երեւին ասացուածք. իսկ յարմարաբանութիւնքն են դժուարք: 27 Իսկ պղատոնականքն տեսաւորութիւնք ամենեւին խորինք եւ դժուարք. իսկ յարմարաբանութիւնքն դիւր եւ ճոխ. զի պղատոնական տեսաւորութիւնքդ դժուարք եւ խորինք եւ յամենայն կարծիս հուպ անկեալք. եւ զի այս այսպէս գոյ, յայտ է զի ամենայն մեկնող ըստ իւրում կարծեաց ձեւացուցանէ: 28 Բայց եթէ զի՞ ախորժեցին առնել զանհաւատութիւն, կատարելապէս ի «Ստորագրութիւնսն» Արիստոտէլի ուսանելոց եմք⁵:

29 Համառուտ քեզ ընձեռնութիւն առնելով: 30 Տեսանես թէ ո՞րպէս ամենայն ուրեք զհաւատութիւն կամի պահել. զի ասելովն՝ համառուտ յայտ արար՝ թէ ի ձեռն երկայն յարմարաբանութեան ոչ առնեմ անհաւատութիւն: 31 Փորձեցայց: 32 Ոմանք մեղադրեն իմաստասիրիս՝ եթէ զի՞ ասաց՝ փորձեցայց. Քանզի ավտար է այս իմաստասիրաց՝ երկբայաբար ասել ինչ: 33 Վասն որոյ ասեմք եթէ զփորձեցայցն ասելով՝ ոչ եթէ վասն զի երկբայաբար ասելոց է, այլ չափաւորեալ ունելով զինքն, որ մանաւանդ վայել է իմաստասիրութեան: 34 Եւ դարձեալ՝ վասն զի Քրիստոսորիէս այր գոլով զաւրավար եւ ի զաւրավարութեան իրս պարապեալ, եւ ոչ գոլով ամենեւին հմուտ իմաստասիրական բանից, վասն այսորիկ ասաց «Փորձեցայց» եթէ ըստ քում կարողութեան ասել եւ հասուցանել:

35 Իբր ներածութեան յեղանակի: 36 Եւ աստուստ եւս փախչի ի յանհաւատութենէ. Քանզի ասելն՝ իբր ներածութեան յեղանակի, յայտ արար՝ եթէ ըստ որակութեան բառիցն ոչ առնեմ անհաւատ-

1 'Ηρακλείτεια συγγραμμάτων

2 Γαλήνεια συγγραμμάτων

3 'Αριστογένεια

4 έντελέχεια, πόσον και δύναμις

5 Յուճ. այս նախադասութիւնը չի:

տի. վասն զի ներածութիւնք ոչ կամին բերել յինքեանս զգժուարութիւն բառից: 37 Զառ ծերունեացն անցանել բանիւ: 38 Զհետեւիլն իմաստասիրաց պահեաց աստանաւր՝ ոչ իւր առնել զայլոյ ասացուածս. քանզի ասէ՝ եթէ ոչ զիմ ասեմ, այլ զոր ինչ ի հնոցն շահեցայ: 39 Ի խորագունիցն ի բաց կալ ի խնդրոյ, եւ պարզագունիցն չափաւորապէս հանդիպել. այս ինքն թէ խորագոյնս ասել ըստ տեսութեան ոչ կամիմ: 40 Արդ աստէն իսկ վաղվաղակի: 41 Ըստ իւրում խոստմանն զնալով՝ ամենայն ուրեք իմաստասէրս հոգ տանի հաւաստոյն. քանզի ասէ՝ եթէ խորագոյնս կարող գոմ ասել վասն հինգ այսոցիկ բարբառոցս՝ եթէ են, եւ եթէ ոչ են, եթէ ի մակամտածութեան միայն են, եթէ ենթակայացեալք: 42 Եւ եթէ զինչ է մակամտածութիւն, ասասցուք:

43 Մակամտածութիւն է, որոյ լինելութիւնն մեր տրամախոհութիւնս է, եւ ապականութիւն՝ մեր մոռացումն: 44 Որգոն, յորժամ մակամտածէ ոք յիւրում տրամախոհութեանն զեղջերուաքաղն՝ զոր բնութիւնն ոչ ետեղծ, այլ մեր մակամտածութիւն բռնադատեալ բնութիւն իմացակենդանի ինչ յեղջերուէ եւ ի քաղէ, զոր բնութիւնն ոչ գիտէ. զոր յիշելով ի մակամտածութեան լինելութիւնն առնէ, իսկ մոռանալով՝ ապականութիւն: 45 Իսկ ենթակայացեալ ասեմք՝ զոր բնութիւնն ետեղծ եւ գիտէ, որպէս մարդ, ձի, արծուի, որք ոչ ունին զլինելութիւն ի մակամտածութեան:

46 Արդ բարևոք ասաց, եթէ ոչ խնդրեմք՝ եթէ են հինգ բարբառքդ, եթէ չեն, զի մի ի խորագոյնս քննութեան մտից: 47 Եւ զի մի՛ ոք ասիցէ եւ տարակուսեսցի՝ եթէ զի՞նչ պէտք էին այսպիսի խնդրոց, մի՞թէ երկբայութիւն ինչ է յաղաքս գոլոյ կամ ոչ գոլոյ հինգ բարբառոցդ. ասեմք՝ եթէ երկբայութիւն էր ումանց առ ի հնոցն՝ որպէս Անտիսթենեայ:

48 Քանզի ասէր Անտիսթենէս՝ «Մարդ տեսանեմ, մարդութիւնն ոչ. ձի տեսանեմ, ձիութիւնն ոչ. արջառ տեսանեմ, արջառութիւնն ոչ»¹: 49 Զայս ասէր յայտ առնելով՝ թէ մասնաւորքս եւ զգալիքս են, իսկ ընդհանուրքն եւ իմանալիքն չեն. զոր յանդիմանելով ասեմք, եթէ ոչ ամենայն ինչ յէիցն ընդ զգայութեամբ անկանի: 50 Զի եթէ որք ընդ զգայութեամբ անկանին՝ նոքա միայն են գոյք, ապա վասն զի աստուածայինն եւ միտք եւ հոգի ոչ անկանին ընդ զգայութեամբ, ապա ուրեմն ոչ են գոյք: 51 Նա եւ պարտիմք իսկ ոչ զգայութեանցդ հաւատալ, վասն զի ոչ ճշմարտեն. ահաւասիկ արեգակն բազմապատիկ մեծ գոլով քան զերկիր՝ թղաչափաբար տեսանի, եւ զղեկ նաւի ի ջուր՝ բեկեալ տեսանեն զգայութիւնք:

52 Արդ ցուցեալք, եթէ անիրաւաբար ի բաց բառնայ Անտիսթենէս զընդհանրականսն, ասասցուք եթէ զի՞նչ է ընդհանուր: 53 Ընդհանուր է մի թուով ըստ տեսակի ի բազմաց ընկալեալ. արդ մի թուով ասացաք, վասն զի մի ինչ է. իսկ վասն զի եւ նիւթ մի ինչ է, առադրեցաք զըստ տեսակին: 54 Վասն զի նիւթ թէպէտ մի ինչ է, այլ ոչ ըստ տեսակի. եւ զի ոչ ընդհանրական ինչ է նիւթ եւ ոչ մասնական, կատարելապէս հանդերձ աստուծով ի «Բնաբանութիւնսն» Արիստոտէլի ուսցուք: 55 Իսկ ի բազմաց ընկալեալ ասացաք, վասն զի մի գոլով՝ ի բազումս տեսանի: 56 Եւ եթէ զիարդ մի գոլով ի բազումս տեսանի, ասասցուք:

57 Անհատքն ամենայն իրաւք հաղորդին միմեանց՝ կամ ըստ նոյնին, կամ ըստ նմանին, որգոն՝ Սոկրատէս, Ալկիպիադ, Պղատոն. բայց եթէ ըստ իրի միում հաղորդին միմեանց: 58 Արդ կամ ըստ նոյնին

1 *Ανθρωπον ὄρω, ἀνθρωπότητα δὲ οὐχ ὄρω, ἵππον ὄρω, ἵππότητα δὲ οὐχ ὄρω, ὥστε οὖν οὐκ ἔστι τό καθόλου.

ումեք հաղորդին, կամ ըստ նմանին: 59 Արդ, եթէ ըստ նոյնին, գտաք զխնդրելին՝ եթէ մի է ըստ տեսակին ի բազմաց ընկալեալ: 60 Իսկ եթէ ըստ նմանին հաղորդին, կամ ըստ միոյ եւ կամ ըստ բազմաց: 61 Արդ, եթէ ըստ միոյ՝ նոյնպէս գտաք զխնդրելին. իսկ եթէ ըստ բազմաց՝ դարձեալ բազումքն կամ ըստ միոյ հաղորդին, կամ ըստ բազմաց: 62 Եւ վասն զի այս յանհունս, եւ ոչ ինչ է, որ յանհունս է, ապա ուրեմն հարկ է բազմացն ըստ միոյ ումեք հաղորդի: 63 Արդ, բարևոք ուրեմն բացատրեցաւ սահման հանրականին մի գոյ ըստ տեսակին, կամ որպէս կենդանին, կամ որպէս շնչական:

1 Ընդ այսոսիկ հանդերձ Աստուծով առաջիկայ տեսութիւն
ՊՐԱԿՔ Է

2 Աղբիւր հաւաստութեան ցուցեր զչարագրութիւնդ քո, ով Պորփիւրիէ, ամենայն ուրեք խնամելով ի նորագոյնսն. քանզի ասես կարող գոյ զքեզ ինքն՝ կամ ի սոսկ մտածութեանց գոյ յառաջիկայս, որպէս կարծեցին գոյ շնականքն, եւ կամ ենթակայացեալք, խնդրել եւ քննել: 3 Այլ եւ եթէ խոստովանաբար գոն ենթակայացեալք՝ ասես կարող գոյ՝ կարի յոյժ խորագունաբար եւ բարձրաբար յաղագս նոցա խնդրել: 4 Քանզի յենթակայեցելոցն ոմանք անմարմինք են, եւ ոմանք եռակի տրամակայեալք¹. եւ կարող գոյիւր յաղագս այսոցիկ՝ թէ մարմինք են եւ եթէ անմարմինք են, խնդրել. քանզի եւ կարեւոր գոյ յաղագս այսոցիկ խնդիր: 5 Եւ յայտ յայնցանէ է, վասն զի ստոյիկեանքն զամենայն ինչ մարմին ենթառնեն, արք երկրածինք եւ սերմանեալք ի կաղնոյ եւ ի վիմէ՝ ըստ քերթութեանն, որք եւ ոչ զիմաստասիրութեանն առկոչութիւն արժանիք էին ըն-

դունել, եթէ ոչ մեծաբանութեամբ անուամբ զնա զարդարեալ էր: 6 Քանզի ասեն զիմաստասէրն միայն հարուստ, միայն թագաւոր, միայն բարեբախտ: 7 Միայն փարթամ, վասն զի իւրովքն միայն շատանայ, եւ այլոց պէտս ոչ ունի. քանզի այս է փարթամին, ոչ այլ ումեք պէտս ունել, թէպէտ եւ առաջիկայ ժամանակս զայսոսիկ խորթացոյց՝ յանկումն շահելոյն ոչ ունել փարթամաց: 8 Միայն թագաւոր, վասն զի զպատերազմաւզսն հնազանդեցուցանէ, որ միայնոյ է թագաւորի: 9 Միայն բարեբախտ, վասն զի որոյ բաղձայն՝ եւ հասանաւ գոյ. եւ որոյ հասանող գոյ՝ նմին եւ բաղձայ. քանզի բաղձայ միշտ առաքինութեանց, որոյ եւ հասանել կարաւ գոյ: 10 Այլ սոքա երկաքանչիւրովքս պերճացեալք՝ ըստ գիտութեան երկրաբարչ եւ գձուձ, ասելով զամենայն գոյսս մարմին. ըստ որոց աստուածայինն նրբաբար մարմին գոլով ընդ ամենայն թափանցեալք. քանզի այս է նոցա պարկեշտագոյնն: 11 Իսկ ըստ կենցաղավարութեան առաւելեալ՝ ասելով զիմաստասէրն միայն թագաւոր, միայն փարթամ:

12 Արդ վասն զի այսպիսի խնդիրք եւ երկբայութիւն ի հնոցն եղեն յարիստոտէլականաց եւ ի պղատոնականաց, ասելով՝ թէ ոմանք անմարմինք են, եւ ոմանք եռակի տրամակայեալք, իսկ ստոյիկեանքն զամենայն էակսս մարմին կարծելով, բեր ըստ սովորական վարդապետութեանն զհինգ բարբառսդ ցուցցուք անմարմին ըստ չորից այսոցիկ յեղանակաց²:

13 Նախ եւ առաջին՝ մարմին ի մեծամեծսն եւ փոքունս ոչ նոյնաբար յայսոցիկ ունի, որզան՝ փղի եւ մրջման ոչ նոյն մեծութիւն գլխոյ տեսանի, եւ ոչ էանտեայ եւ Տիդեայ³ նոյն բազուկ տեսանի: 14 Իսկ սեռ եւ տարբերութիւն եւ տեսակ եւ այլք

1 τριχῆ διαστατά

2 κατά ἕξ τοιοῦτους λόγους

3 Αἴαντι καὶ Τυδείδῃ.

ի բարբառոցն՝ նոյնաբար տեսանին յընդունաւդսն. քանզի ոչ ոք ասէ եթէ՝ սա առաւել կենդանի է քան զնա, կամ էաս¹ առաւել մարդութիւն ունի քան զՏիւղէս²:
 15 Ապա ուրեմն յայտ է՝ թէ անմարմինք են: 16 Ուստի յայտ եղեւ, թէ եւ բաղազանութիւնքն անմարմինք են. զի՛նչ են բաղազանութիւնքն՝ կրկնապատիկն առ կէսն, եւ կիսոյն առ կրկնապատիկն:

17 Երկրորդ, ոչ երբէք մարմին բոլորն որպէս բոլոր յամենեցունց ունականայ. որգոն, ի սափորոյ գիւնոյ եթէ առնուցուս զկէսն, ոչ բոլոր սափորն որպէս բոլոր ի կիսումն տեսանի. իսկ սեռ եւ տեսակ յամենեսեան բոլոր որպէս բոլոր տեսանի. քանզի մարդութիւն բոլորն որպէս բոլոր տեսանի յիս եւ յայլում, նոյնպէս եւ կենդանին. յայտ է թէ անմարմինք են: 18 Աստուատ յայտ եղեւ թէ եւ ձայն անմարմին է, զի բոլորն որպէս բոլոր յամենեսեան տեսանի:

19 Երրորդ, առ այսոքիւք՝ ամենայն մարմին մարմնում առադրելով, աճումն առընդունողին լինի յաւելուածն. որգոն՝ եթէ կապիճ մի գինի զեղցեն յայլ գինի, կրկնապատիկ լինի ընկալեալն: 20 Իսկ սեռ եւ տեսակ եւ այլքն ամենայն առադրեալ Սոկրատումն, ոչ ինչ յաւելուն, յայտ է թէ անմարմինք են:

21 Չորրորդ, առ այսոքիւք՝ ոչ երբէք նոյն մարմին ի նոյն ժամանակում ի բազումս տեսանի. զի թէպէտ եւ նմանն տեսանի, այլ ոչ նոյն: 22 Իսկ սեռ եւ տեսակ նոյնք ի նոյնում ժամանակի ի բազումս տեսանին. յայտ է թէ անմարմինք են: 23 Ուստի եւ ուսանիմք, թէ եւ անտեսակ նիւթ անմարմին է:

1 Ընդ այսոսիկ հանդերձ աստուծով առաջիկայ տեսութիւն

ՊՐԱԿՔ Ը

2 Եւ բազում գովութեանց արժանի է իմաստասէրս՝ վասն հաւաստութեան առաջիկայ շարագրութեանս. քանզի ասէ՝ թէպէտ եւ անմարմինս գոյ զդոսսա ի խնդրոց եւ ի քննութեանց գտաք, սակայն կարող գոյ եւ այլապէս ի խորագոյն խնդիրս անկանել եւ ասել, թէ նախ քան զբազումս են, եւ թէ ի բազումս, եւ ի վերայ բազմաց:

3 Եւ է նախ քան զբազումս՝ որ զպատճառսն ունի առ ի յԱստուծոյ արարչութենէն: 4 Իսկ ի բազումս է՝ որ ի նիւթում տեսանի: 5 Իսկ ի վերայ բազմաց է՝ որ ի գիտութիւն մեր տրամախոհութեանս գոյ: 6 Եւ վասն զի դժուարիմանալիք են ասացեալքդ, յարացուցիւ հաւաստեսցուք զնոյնս: 7 Եղիցի ոսկի մատանի՝ զքաջի ուրուք ունելով զտպաւորութիւն³, եւ զսա դարձեալ ի բազում մոմս տպաւորեալ. եւ ոմն մի զայսոսիկ զտպաւորութիւնս տեսեալ, եւ յիւրում ի միտսն զամենայն տպաւորութիւնսն խորհելով:

8 Արդ ասի մատանին նախ քան զբազումս, քանզի նա նախ է քան զտպաւորութիւնսն, որ ի մոմսն իսկ տպաւորութիւնքն որ ի մոմսն եղեն՝ ի բազումս ասին գոյ. իսկ զտեսեալ զտպաւորութիւնսն եւ յիւրում միտսն խորհեալ՝ ի վերայ բազմաց ասի:

9 Արդ վասն զի ցուցաք ի տարացուցէդ, թէ զինչ է ասացեալդ. բե՛ր եւ որ ինչ յաղագս այսոցիկ տարաձայնութիւն է Պղատոնի եւ Արիստոտէլի՝ ասացուք, եւ ի վերջոյ դատեսցուք⁴ զնոսս: 10 Եւ սքանչելի իմն հանդիպեցաւ միում ի բաժանման, քանզի յայլ բաժանմունս ոչ կարէ ի հակաբաժանեալսն սուտ լինել եւ ճշմարիտ: 11 Քանզի ոչ կարէ ստել եւ ասել, ե-

1 Αἴαντα
 2 Τυδέως

3 τύπους εἰκόνα σφραγίδες
 4 Հայ. դատեսցուք. ուղղում եմք ըստ յուն. διατιήσωμεν

Թէ ոչ ենթակայացաւ եւ ոչ ի սոսկ մտածութեան է. եւ ոչ ճշմարտել եւ ասել, թէ ենթակայացեալ է եւ ի սոսկ մտածութեան է. եւ ոչ ստել, թէ մարմինք եւ անմարմինք են. եւ ոչ ճշմարտել, թէ մարմինք են կամ անմարմինք: 12 Իսկ ի վերայ առաջիկայիցս կարաւղ գոյ յերկաքանչիւրսն ճշմարիտ լինել. քանզի եթէ միոյն ճշմարիտ ելոյ՝ միւսն սուտ ցուցանի. զի կարաւղ գոյ ասել, թէ յառաջ քան զբազումս է, ի բազումս, եւ ի վերայ բազմաց. քանզի այսպէս եւ Պղատոն ասէ, թէ լինի, եւ է, եւ ի բաղազանութեան է: 13 Եւ վասն ասելոյն լինել՝ յայտնեաց զնա նախ քան զբազումս, որպէս զի իմասցիս զմատանին նախ քան զկնիքն: 14 Իսկ ասելն՝ եւ է, յայտ արար, թէ ի բազումս է, այս ինքն ի նիւթում: 15 Իսկ ասելն՝ թէ ի բաղազանութեան է, յայտ արար, թէ ի վերայ բազմաց է, այս ինքն ի գիտութեան: 16 Իսկ Արիստոտէլ զ'ի բազումսն՝ գոլ կարծէ, այլ ոչ յառաջ քան զբազումս. քանզի ասէ, թէ ի ներգործութեանցն ոմանք են եղուտք, եւ ոմանք մակեղուտք: 17 Եւ եղուտքն ներգործութիւնք են բնութեան, քանզի այսոքիկ պէտս ոչ ունին բանին. իսկ գիտութիւն ամենայն իրաւք բանիւ լինի: 18 Իսկ մակեղուտք ներգործութիւնք են ի հիւսանց եւ ի նմանեացն. քանզի այսոքիկ բանի պիտանան: 19 Արդ, որ զայսոսիկ ասեն, սուտ ասեն վասն Արիստոտէլի, քանզի եւ ոչ նա ասէ զգործն առանց գիտութեան, եւ ոչ զգիտութիւն առանց գործոց:

20 Եւ արդ, ուստի՞ երբէք եղեւ այս երկբայութիւն՝ պարտ է ասել, եթէ ոչ սակաւ զանազանութիւնք են պղատոնականացն առ միմեանս: 21 Քանզի ոմանք ասեն, թէ ըստ այսմ ասեմք յառաջ քան զբազումս, վասն զի ի ձեռն բանի ստեղծանէ Աստուած զայսպիսիս: 22 Իսկ այլք

ասեն, թէ ոմանք տեսակք² ինքնաստորակայք բան ոչ ունելով, բայց զգայութիւն ունին, ըստ որոց կերպարանի զամենայն ստեղծանէ աստուած: 23 Իսկ այլք ասեն, թէ են ոմանք տեսակք, որ զգայութիւնս ոչ ունին. ըստ որում զամենայնս ստեղծանէ աստուած: 24 Բայց ոչ հաւանի Արիստոտէլ, վասն այսորիկ ոչ ասէ՝ յառաջ քան զբազումս: 25 Իսկ որք ասեն, թէ բանիւ ստեղծանէ զամենայն Աստուած՝ այնոցիկ հաւանի, եւ ասէ զյառաջ քան զբազումս, այս ինքն է գիտութիւնն աստուծոյ: 26 Եւ ոչ միայն յառաջ քան զբազումս³, այլ եւ ի բազումս. քանզի «Յետ քան զբնականացն» յաղագս այսոցիկ ասելոյ՝ յարացոյց նոցին ասէ, ասելով, թէ որպէս իշխան ունի յինքեան զկարգաւորութիւն եւ ի նմանէ ի զաւրսն լինի, նոյնպէս եւ այսպիսի իրք առ ի յաստուծոյ. ապա եւ ի վերջոյ ի նիւթում: 27 Նախ գիտէ աստուած, եւ ապա ստեղծանէ զնոսա բնութիւնն: 28 Արդ, յորժամ ասէ Արիստոտէլ ստեղծանել բնութեանն զայսոսիկ առանց բանի՝ զայս ցուցանելով, թէ ինքն բնութիւնն ոչ գիտէ զտեսակս, բայց ստեղծելով ոչ թաքչի յաստուծոյ. զի աստուծոյ գիտութեամբն առնէ բնութիւն, եւ ոչ իւրովն:

1 Ընդ այսոսիկ հանդերձ աստուծով առաջիկայ տեսութիւն

ՊՐԱԿՔ Թ

2 Զհանգիսասիրացն զպարգեւս հանրականացն եռակի շնորհեալ, եթէ ոչ սոսկ ի մտածութեան են, այլ ենթակայացեալք. եւ եթէ ոչ են մարմինք, այլ անմարմինք. եւ եթէ յառաջ քան զբազումս են, եւ ի բազումս, եւ ի վերայ բազմաց. բե՛ր այսուհետեւ եւ զընդդէմսն նոցա եղեալ՝ զստոյզն ուսցուք: 3 Քանզի ոմանք ասեն,

1 ἐπὶ τοῖς πολλοῖς

2 ἰδέαι

3 ἐπὶ τοῖς πολλοῖς

թէ ոչ են ենթակայացեալք, այլ ի սոսկ մտածութեան են. եւ ոչ են անմարմինք, այլ մարմինք. յառաջ քան զբազումս եւ ի բազումս ոչ ասեն լինել, այլ ի վերայ բազմաց: 4 Եւ զառաջինն այսպէս ասեն, թէ ի սոսկ մտածութեան են, եւ ոչ են ենթակայացեալք. քանզի որք ոչ են ի բնութենէ ստեղծեալ, այլ ապաւէն իւրեանց լինելութեանն զմեր տրամախոհութիւնս ունին, զայսոսիկ ասեմք ի սոսկ մտածութեան, որպէս զեղջերուաքաղն:

5 Իսկ առ երկրորդն ընդդիմաբանեն ասելով, թէ մարմինք են ընդհանուրքն, զի զնոյն բնութիւն ընդունին զմասնականացն եւ զնոյն սահմանս: 6 Արդ, եթէ ընդհանուրն մարդ՝ պարտ է եւ զսահման ընդունել զմասնական մարդոյ. եւ եթէ ոչ ընդունի զմասնականին սահման, ապա եւ ոչ ընդհանուր. իսկ եթէ ընդունի՝ մարմին է ամենայն իրաւք. քանզի կենդանի բանաւոր, մահկանացու, մտաց եւ մակացութեան ընդունակ՝ ամենայն իրաւք զմարմնաւոր յայտնէ:

7 Իսկ առ երրորդն ասեն թէ ոչ է նախ քան զբազումս, որպէս յայտ առնէ Արիստոտէլ ասելով, թէ տեսակք ի բաց երթիցեն, քանզի ընդհանրականն ոչ է. զի յերկբայս է վասն այսոցիկ Արիստոտէլ. ապա թէ է՝ ի մերում տրամախոհութեան միայն է: 8 Այլ եւ ոչ ի բազումս ասեն գոլ. քանզի ասեն, կամ զմի բնութիւն ենթակայացեալ եւ ի բազմաց ունակացեալ, կամ զբազումս ի բազումս տեսանել: 9 Եւ եթէ մի բնութիւն ասեն ըստ ինքեան ենթակացեալ, սուտ ասեն. քանզի յանդիմանեցաւ յառաջնումն ձեռնարկութեանն: 10 Իսկ եթէ բազումս, եւս անկարելի է՝ զի վերայ բազմացն՝ միայն ասել: 11 Եւ բարւոք ասեն, քանզի այս որ ի վերայ բազմացս է ընդհանուր, ոչ եթէ վասն զի ի բազումս է՝ վասն այնորիկ ընդհանուր է. քանզի կարող գոյ եւ ի Սոկրատումն

միայն տեսանիլ. այլ վասն զի ի Պղատոն հայելով եւ ի յառաջագոյնսն քան զնա, նոյնպէս էին եւ որ ի վերջոյ քան զնա: 12 Եւ համայն իսկ ասել, թէ վասն զի նախ եղելոցն, եւ որ լինելոցն են, եւ որ ենս պատկանին, վասն այնորիկ ասի գոլ ընդհանուր: 13 Իսկ այս ապրի եւ լինի ի մերում տրամախոհութեանս. քանզի հայելով ի Սոկրատէս եւ ի միւսն, որք զնոյն բնութիւն ունին, ասեմք գոլ զընդհանուրն:

14 Եւ արդ, զի՞նչ ասասցուք: 15 Բարի՞՞ք տարակուսեցին առ ամենայն: 16 Ասասցուք՝ թէ ոչ. քանզի եւ ոչ ի սոսկ մտածութեան են՝ որպէս ասեն, այլ ենթակայացեալ են. ոչ ըստ ինքեան, այլ ի մերում տրամախոհութեանս: 17 Քանզի եթէ զոչ գոյն ասեմք ի սոսկ մտածութեան, այս ինքն զեղջերուաքաղն: 18 Ապա թէ այդպէս է, ընդհանուրն ոչ է սոսկ մտածութեան. քանզի ի գոյիցն ճանաչեմք զհանուրն: 19 Իսկ այսպիսիս ի մերում մտածութեան ապրի, այլ ոչ եթէ ըստ ինքեան ենթակայանայ: 20 Իսկ առ երկրորդն՝ թէ մարմինք են եւ եթէ անմարմինք, ոչ ինչ է մեզ փոյթ. քանզի ենթակայանայ ի մերում տրամախոհութեան, որ է ի վերայ բազմաց: 21 Իսկ առ երրորդն բարիոք ասացին՝ ոչ գոլ յառաջ քան զբազումս. քանզի ոչ գոն ենթակայացեալք, բայց եթէ ըստ գիտութեան աստուծոյ, որպէս ասէ Արիստոտէլ: 22 Իսկ ի բազումսն գոլ ոչ է, զի եւ ոչ ի գիտութեան. քանզի գիտութիւն ի մեզ է, կամ յարարչին, որ է յառաջ քան զբազումս:

1 Ընդ այսոսիկ հանդերձ աստուծով առաջիկայ տեսութիւն

ՊՐԱԿՔ Ժ

2 Արդ աստէն իսկ վաղվաղակի: 3 Ոչ սակաւ տեսաւորութեան ասացելոյ՝ եկեցուք ի նոյն իսկ յառաջիկայ բարբառան,

որ ունի այսպէս. Արդ աստէն իսկ վաղ-վաղակի յաղագս սեռից եւ տեսակաց, մինչեւ ցբուն իսկ նախերգանդ: 4 Բայց խնդիր է՝ թէ վասն է՞ր առաջի կացելոյ Պորփիրի ասել եւ ի կիր առնուլ զհինգ բարբառո՞ղ՝ զսեռ միայն յիշէ եւ զտեսակ, զտարբերութիւն եւ զյատուկ եւ զպատահումն ոչ յիշեաց:

5 Եւ ասեմք, թէ յիրաւի զտարբերութիւն եւ զյատուկ եւ զպատահումն ոչ երբէք յիշեաց, վասն զի բաւական էր նմա յիշել զսեռ միայն եւ զտեսակ. քանզի սեռ եւ տեսակ թափանցեալք գոն ընդ այլ երիսն եւս: 6 Արդ ասելով զսեռ եւ զտեսակ, պարունակեալ առնու եւ զայլսն. քանզի ունի տարբերութիւն սեռ եւ տեսակ. սեռ, որպէս զի ասեն զտարբերութիւն, որ յիսն է եւ ի ճիւղումն եւ յարծուումն եւ յայլ տեսակս: 7 Արդ որ ստորոգի տեսակաց՝ նա սեռ է. իսկ զանազանութիւն տեսակաց ստորոգի. ապա ուրեմն կարող գոյ տարբերութիւն սեռ լինել: 8 Իսկ տեսակ՝ յորժամ անհատեսցես զնա ի բազմաց, որպէս բանաւորութիւն. քանզի բանաւորութիւն անհատից ստորոգի: 9 Այլ եւ ի յատկում տեսանի սեռ եւ տեսակ. սեռ՝ որպէս յորժամ իմասցիս զբոլոր յատկութիւնն յամենայն տեսակս. քանզի որպէս ասացաք՝ որ տեսակացն ստորոգի, նա սեռ է. իսկ տեսակ՝ յորժամ անհատեսցես զմի յատուկն, որպէս զծիճաղականն: 10 Ըստ նմին աւրինակի իմասցիս եւ յաղագս պատահմանն: 11 Այլ վասն այսորիկ զսեռ եւ զտեսակ միայն յիշեաց, վասն զի սոքա՝ որպէս ասացաք, յայլսն տեսանին:

12 Մի՛ զի թէ ենթակայացաւ, եւ թէ միայն ի սոսկ մտածութեան կայ: 13 Բարիոք յառաջագոյն դասեաց զենթակայացաւն՝ սոսկ մտածութեանն, զգոյն՝ ոչ գոյին, եւ զճշմարիտն՝ ստույթեանն: 14 Եւ ե-

թէ ենթակայացեալ՝ մարմնիմ եմ կամ անմարմնիմ: 15 Խնդրելի է դարձեալ, եթէ զի՞ զմարմինս դասեաց նախ անմարմնոցն: 16 Եւ ասեմ, թէ վասն ներածիցելոցն. վասն զի նոցա ստուգագոյն է մարմին քան զանմարմին: 17 Եւ եթէ արդեաւ գատելի՞մ կամ ի գգալիսս, եւ յայսոսիկ ենթակայացեալ: 18 Արդ գատելիս ասելով՝ յայտնեաց զյառաջ քան զբազումս. քանզի յառաջ քան զբազումսն զատուցեալք են ի զգալեացս: 19 Իսկ ի գգալիսս ասելով՝ յայտ արար զի՛ բազումս. քանզի որք ի նիւթումս են՝ զգալիք են: 20 Եւ դարձեալ՝ ասելով յայսոսիկ ենթակայացեալ, յայտ արար զի՛ վերայ բազմացն, որք ի մերում մտածութեանս են:

21 Բայց զիարդ յաղագս սոցա եւ առաջիկայիցս: 22 Արդ ասելով առաջիկայիցս, յայտ արար զայլ եւս երիս բարբառոսն՝ զտարբերութիւն, զյատուկ եւ զպատահումն: 23 Բանականագոյնիմ հիմնի՞ բուռն հարեալ: 24 Երկակի յայսոսիկ ելոյ խնդրոյ, ոմանք աստուածաբանաբար, եւ ոմանք տրամաբանաբար: 25 Արդ ասէ՝ թէ աստուածաբանաբար ոչ կամիմ խնդրել. քանզի դժուարագոյն է այսպիսի խնդիր, այլ տրամաբանաբար². քանզի անխիտ եւ պարզ է նա: 26 Արդ եթէ զինչ աստուածաբանաբար է, եւ զինչ տրամաբանաբար՝ ասացուք: 27 Աստուածաբանաբար խնդիր՝ յորժամ խնդրեմք, թէ մշտնջենաւոր է աստուած՝ եթէ ի լինելութեան եւ յապականութեան. եւ եթէ անընդմիջաբար աստուած ստեղծանէ, եթէ միջնորդութեամբ բնութեանն: 28 Իսկ տրամաբանաբար է, յորժամ խնդրեմք՝ եթէ հոմանունք իցեն բարբառքն, եւ եթէ բազում նշանակութիւնս ունին: 29 Եւ պարտ է գիտել, եթէ տրամաբանաբար աստանաւր զբանականն կոչէ:

1 Հայ. բայց արդէն. ուղղում ենք ըստ յուս. αὐτίκα-արդ աստէն

2 διαλεκτικώτερον

30 Եւ այսոցիկ յաւէտ որք ի նեմարա-
նէն: 31 *Ձճեմարանն յիշէ, որպէս ոմանք
ասեն, վասն զի ճեմականքն զաւրաւորք
էին բանականան. այլք ասեն՝ թէ վասն
զի պղատոնական է, կամեցաւ ցուցանել՝
թէ եւ արիստոտելականացն հետեւի. վասն
այսորիկ յիշեաց:* 32 *Իսկ ճեմական կոչե-
ցաւ Արիստոտէլ, վասն զի Պղատոնի տա-
կաւին եւս կենդանի գոլով՝ ոչ իշխէր
նստել եւ ուսուցանել, այլ ճեմէր. այլք ա-
սեն ոչ, այլ հակառակէր Պղատոնի. զի նա
նստեալ գոլով՝ ինքն յոտն կացցէ:* 33 *Որ
զայդ ասեն, սուտ ասեն. այլ եւ պատուէր
զնա եւ պաշտէր. որպէս եւ ուրեմն բազին
կանգնեաց, եւ մակագրեաց այսպէս. «Բա-
զինս այս Պղատոնի, զոր կանգնեաց Արիս-
տոտէլ, առն՝ զոր չարք եւ ոչ գովելոյ զնա
արժանի են»:*

**ՍԿԻՉԲՆ ԱՍՏՈՒԾՈՎ
ՅԱՂԱԳՍ ՍԵՌԻ**

1 ՊՐԱԿՔ ԺԱ

2 Յետ երկակի նախերգութեան իմաս-
տասիրիս եւ մեր, աւգնականութեամբ լա-
ւագունին¹ բուռն հարցուք զնոցին իսկ
զհանդիսիցն, սկիզբն առնելով ի վարդա-
պետութենէ, որ յաղագս սեռին, զոր ու-
սուցանէ մեզ Պորփիրիոս: 3 Նախ եւ ա-
ռաջին արիստոտէլական բացորոշմանցն
հետեւիլ լաւագոյն համարի, եւ զհոմանու-
նութիւն ընդ երիւք այսոքիւք արկանել
սահմանաւք: 4 Նախ, եթէ քանի նշանա-
կութիւնք են սեռի: 5 Երկրորդ, եթէ յա-
ղագս որո՞յ նշանակութեան բանն է: 6 Եր-
րորդ, ստորագրել եւ սահմանել զայն, յա-
ղագս որոյ բանն է: 7 Ապա եթէ ոչ կամի-
ցի ըստ այսմ բացորոշութեանց առնել,
յանհուն երկբայութիւնս անկեալ ցնդի.
վասն զի հոմանունութիւն մայր է մոլոր-
ութեան եւ երկբայութեան: 8 Արդ այսմ

բացորոշութեան հետեւելով Պորփիրիոս՝
նախ եւ առաջին տարրորոշէ զհոմանունու-
թիւն եւ ասէ, թէ քանի նշանակութիւնք
են սեռի. եւ երկրորդ, ասելով՝ թէ յաղագս
որոյ է նորա խնդիրն. եւ երրորդ, յետ այ-
սորիկ ասելոց եւ զվարդապետութիւն՝ յա-
ղագս որոյ խնդիրն է:

9 Արդ ասէ, թէ նախ առաջին սեռ է,
որ ի միոջէ յարանուանեալ է՝ եւ յառաջ ե-
կեալ, որպէս հերակլեանմն ի Հերակլեայ՝
յարանուանարք ասացեալք, եւ յառաջ ե-
կեալք ի Հերակլեայ: 10 Եւ բարիոք առըն-
թեր եղաք զյառաջ եկեալմ. քանզի են ո-
մանք ի միոջէ յարանուանեալք, այլ ոչ ա-
սին սեռք. վասն զի ոչ են ի միոջէն յառաջ
եկեալ, որպէս պիթագորեանքն ի Պիթագո-
րէ, եւ պղատոնականքն ի Պղատոնէ:
11 Բայց ոչ ասին այսպիսիքս սեռք, վասն
զի ոչ են յառաջ եկեալք՝ ոչ պղատոնա-
կանքն ի Պղատոնէ, եւ ոչ պիթագորա-
կանքն ի Պիթագորէ, որպէս հերակլեանքն
ի Հերակլեայ: 12 Այս առաջին նշանակու-
թիւնք են սեռի՝ որ ունի երիս բաղադա-
նութիւնս. ի Հերակլեայ՝ առ բազմութիւն
հերակլեանց, եւ ի բազմութենէ հերակ-
լեանց առ Հերակլէս, եւ ի հերակլեանց առ
միմեանս:

13 Երկրորդ, սեռ ասի՝ սկիզբն իւրա-
քանչիւր լինելութեան. իսկ սկիզբն ասեմ
լինելութեանն՝ կամ զհայրն կամ զհայրե-
նիսն: 14 Եւ այս երկակի. քանզի է որ
հուպ է, եւ է որ հեռի, եւ ի վերայ հաւր եւ
ի վերայ հայրենեաց. զորս միով յարացու-
ցիւ հաւաստեսցուք: 15 Աքիլեւս հուպ ու-
նի զսեռն ի հայրենեացն, որպէս յորժամ
ասեմք զնա փտիովտացի². իսկ հեռի՝ յոր-
ժամ ասեմք զնա թետալացի. իսկ ի հաւրէ
հուպ սեռ՝ որպէս յորժամ ասեմք զնա որդի
Պլեայ. իսկ հեռի, որպէս յորժամ ասեմք
զնա որդի Յէակսեայ³:

1 οὐν εὐμενεία τοῦ κρείττονος

2 Φθιώτην
3 Αλακοῦ

16 Երրորդ, սեռ ասի այն՝ որ ըստ իմաստասիրութեան է ի յոգունս տարածեալ, որպէս զկենդանին. քանզի սա ի յոգունս տարածի, քանզի ասի եւ ձի, եւ շուն: 17 Եւ նմանեալ է սա երկուց սեռից. նախ այնմ՝ որ ի միողէն յարանուանեալ. քանզի որպէս նա մի գոլով՝ զբազումս պարունակեալ ունի, նոյնպէս եւ կենդանին մի գոլով՝ զբազում տեսակս պարունակեալ ունի: 18 Իսկ այնմ սեռի որ սկիզբն գոյ, որպէս հայրն՝ նմանեցաւ, վասն զի եւ կենդանին սկիզբն ասի իւրաքանչիւր տեսակի:

19 Բայց երեւեցաւ, թէ ոչ սեռ եւ ոչ տեսակ պարզաբար ասի: 20 Արդ վասն զի են բարբառք, որ մի նշանակութիւն ունին, եւ են, որ բազումս. արդ ասէ, թէ սեռ ոչ մի նշանակութիւն ունի, այլ բազում. վասն այսորիկ ասաց, թէ ոչ սեռ եւ ոչ տեսակ պարզաբար ասին. այս ինքն ոչ միայնաբար, այլ բազմաբար: 21 Տարակուսեն ոմանք ասելով, թէ զի՞ զսեռէ բուռն հարեալ՝ գտեսակ յիշեաց: 22 Ասեմք, թէ ոչ ինչ անտեղի արար, քանզի այսոքիկ առինչուանակին են. իսկ առինչուանակն՝ որքանաբար մինն ասի, նոյնքանաբար եւ միւսն եւս: 23 Արդ վասն զի բազմաբար ասի սեռ, նմանապէս եւ տեսակ բազմաբար ասի:

24 Քանզի սեռ ասի՝ եւ ոմանց ունելով առ մի ինչ իմն եւ առ միմեանս հաւաքումն: 25 Եւ բարիոք ասաց զիմն. քանզի յայտարար թէ ոչ յարանուանիլն յումեքէ միայն բաւական է սեռ ասիլ, այլ եւ յառաջն գալ ի նմանէ յորմէ անուանեցանն. քանզի ասէ՝ թէ սեռ ասի հաւաքումն, որ ունի իմն առ միմեանս ընտանութիւն սեռի: 26 Եւ ի վերայ ածէ՝ եւ ասեմք ի Հերակլեայ. աստուտ զմիոյ առ բազումս զբազազանութիւն նշանակէ: 27 Որք ունին առ միմեանս. աստուտ զառ միմեանս բազազանութիւն նշանակէ:

28 Բայց ասի եւ այլազգ դարձեալ սեռ իւրաքանչիւրոյն սեքման սկիզբն. աստուտ երկրորդ նշանակութիւն սեռի: 29 Քանզի այսպէս զՈվրեստէս ի Տանտալեայ ասեմք, եւ գՀիւլոն ի Հերակլեայ: 30 Արդ ասելով զՈվրեստէս ի Տանտալեայ՝ զհեռի սեռն նշանակեաց. իսկ զՀիւլոն ի Հերակլեայ՝ զհուպն: 31 Եւ դարձեալ ասելով, զՊինդարոս թեբայացի զհեռի սեռ՝ հայրենի նշանակեաց. իսկ ասելով զՊլատոն աթենացի՝ զհուպ սեռ հայրենեացն: 32 Եւ զի մի ոք ասիցէ՝ թէ եւ հայրենիքն սե՞ռք են, այո՞ ասէ, եւ կարի քաջ. վասն զի անտի է սկիզբն լինելութեան սեքմանն. եւ նա է որ ուսուցանէ բարս պիտանացուս եւ աւրէնս եւ կրաւնս՝ առ ի բարիոք կենցաղավարութիւն:

1 Ընդ այսոսիկ հանդերձ աստուծով առաջիկայ պրակի

ՊՐԱԿՔ ԺԲ

2 Արդ եռակի սեռ ասացելոյ՝ յաղագս երրորդիմ առ իմաստասէքս է քան: 3 Յետ անջատելոյ զհոմանունութիւնն եւ յայտնելոյ, թէ գորմէ նշանակութեանէ բուռն հարկանէ, յիրաւի ի նորին վարդապետութիւնն խաղայ: 4 Թողեալ զեթէէն՝ ի զինչէէն սկիզբն արասցուք. քանզի խոստացաք իսկ ոչ զայս խնդրել՝ եթէ ի սոսկ մտածութեան են. եւ եթէ ենթակայացեալք: 5 Եւ վասն զի զինչէն կամ ի ձեռն ստորագրութեան, կամ ի ձեռն սահմանի յայտնի, նախ առաջին տեսցուք, թէ զի՞նչ արդեաւք առնէ Պորփիրիոս. ստորագրիցէ՞ եթէ սահմանիցէ: 6 Եւ ասեն ոմանք՝ ստորագրէ. առ որս տարակուսեմք ասելով, եթէ վասն է՞ր ոչ առաւել սահմանէ, այլ ստորագրէ: 7 Եւ ասեն թէ յիրաւի ոչ սահմանէ, այլ ստորագրէ. քանզի՝ թէ ասացաք զնմանէ փախչել ի խնդրոյն յաղագս եթէէին եւ կամ ոչէին: 8 Իսկ սահման ամենայն իրաւք ի վերայ գոյիցն առնու:

9 Յիրաւի ոչ սահմանեաց, զի մի ի ձեռն սահմանին ցուցցէ զսեռն՝ թէ ի գոյիցն իցէ. այլ ստորագրեաց, վասն զի ստորագրութիւն կարող գոյ եւ ի վերայ գոյիցն եւ ի վերայ ոչ գոյիցն առնուլ: 10 Եւ եւս ասեն, թէ ոչ կարող գոյ սահմանել, վասն զի սահմանելոյն պէտք են գերազանցեալ սեռ ունելով. իսկ ընդհանրական սեռի ոչ ինչ է այլ գերազանցեալ սեռ, որով սահմանի: 11 Եւ զի այսօրիկ այսպէս են, յայտ է ի գանազանութենէ. եւ վասն զի ընդհանուր գանազանութիւն ոչ ընդունի այլ գանազանութիւն, որովք սահմանի, փախչի ի սահմանելոյ:

12 Առ որս ասացուք, եթէ ոչ է ճշմարիտ բանդ. քանզի ասեմք, եթէ վասն ոչ ունելոյ գերազանցեալ սեռ՝ ոչ սահմանեցաւ, այլ եւ ոչ տարբերութիւն, ընդէ՞ր այլքն ի բարբառոցն ունելով սեռ՝ ոչ սահմանեցան, այլ ստորագրեցան:

13 Առ այսօրիկ ընդհանրական պատասխանատրութիւն ասեն յաղագս հինգ բարբառոցդ, եթէ ոչ կարող գոյր սահմանել. վասն զի հինգ բարբառքդ այդօրիկ հոմանունք են, իսկ հոմանունք գոյով՝ բազում նշանակութիւնս բնութեանց յայտնեն. իսկ սահման մի բնութիւն բնաւորեցաւ նշանակել. զիս՞րդ կարէր սահման ի վերայ նոցա առնուլ, որք բազում բնութիւնս նշանակեն: 14 Այլ եւ եթէ ասէ ոք, եթէ կարող գոյր զհոմանուն ձայնն սահմանել, եթէ որոշութեան հանդիպին, ասեն՝ թէ Պորփիւրիոս զայսօրիկ բարբառս զբոլորս՝ որպէս զբոլոր կամեցաւ ստորագրել: 15 Առ որս ասեմք, եթէ ընդունայն բարբառիք. քանզի ըստ այդմ բանի զոր ասացէքդ՝ եւ ոչ ստորագրել արժան էր. քանզի պատկեր սահմանի է ստորագրութիւն: 16 Արդ եթէ սահման մի բնութիւն յայտնէ, ապա եւ ստորագրութիւն: 17 Իսկ եթէ ոչ սահմանին առաջիկայ բարբառքս վասն բազում բնութիւնս յայտնելոյ՝ քանզի հո-

մանունք են, ապա եւ ոչ ստորագրիլ պարտ էր, վասն զմի բնութիւն յայտնելոյ: 18 Այլք ասեն, եթէ պարտ էր ըստ բաղազանութեանցն՝ զոր ունին առ միմեանս հինգ բարբառքդ, սահմանել: 19 Եւ ոմանք ասեն, եթէ ոչ կարեն ի ձեռն բաղազանութեան սահմանիլ. վասն զի ոչ է ընդունելի այդպիսի սահման առ ի յիմաստասիրաց. եւ ապացոյց՝ վասն զի ի խնդրելոյն զխնդրելին յարկացոցեն: 20 Առ որս ասեմք, թէպէտ յայլ իրս ոչ է ընդունելի, այլ յայնոսիկ որ առինչունակին է, յոյժ ընդունելի է. քանզի այսօրիկ առ միմեանս ունին ընտանութիւն եւ ի ձեռն միմեանց նշանակին:

21 Արդ զի՞նչ ասիցեմք մեք: 22 Ասեմք, եթէ զբաղազանութիւնն սահմանեաց, որպէս ցուցանելոց եմք. իսկ զիրան՝ յորս բաղազանութիւնքն տեսանին, ստորագրեաց: 23 Քանզի եւ եթէ զսպիտակն, որ ի մարմնում, սահմանեմք որպէս առ սպիտակն՝ սահման ասեմք գոյ, իսկ որպէս առ մարմինն՝ ստորագրութիւն. վասն զի ամենայն սպիտակ ի մարմնում: 24 Նոյնպէս եւ աստանաւր որպէս առ բաղազանութիւնս բարբառոցդ, զորս ունին առ միմեանս, սահման ասեմք գոյ. իսկ որպէս առ իրսն, յորս բաղազանութիւնքն, ստորագրութիւն ասեմք գոյ:

1 Ընդ այսօրիկ հանդերձ աստուծով առաջիկայ տեսութիւն

ՊՐԱԿՔ ԺԳ

2 Վասն զի խոստացաք յառաջագոյն խնդրել, եթէ զինչ է սեռ, բե՛ր ըստ մերում խոստմանն սահմանեսցուք: 3 Սեռ է, որ ըստ յոլովից եւ տարբերեցելոց տեսակաւ՝ ի ներում զինչէն ստորագրեալ: 4 Եւ վասն զի առաքինութիւն սահմանի ասացաք գոյ զանդրադարձիլն ի սահմանելին, տեսցուք եւ յառաջիկայում սահմանիս, եթէ նոյն առաքինութիւն սահմանի պահի: 5 Եւ ա-

սեմք թէ աներկբայաբար պահի. քանզի ունիմք ցուցանել եթէ ամենայնում սեռի եւ միայնում պատկանի բացատրեալդ սահման:

6 Եւ գիտելի է, զի եաւթն են ձայնք. աննշանական՝ որպէս արալէզն, իսկ նշանականն երկակի, մասնական եւ ընդհանուր. իսկ ընդհանրականին հինգ են, որպէս յառաջագոյն ասացաք, սեռ, տարբերութիւն, տեսակ, յատուկ, պատահում: 7 Արդ, են վեց ձայնք նշանականք, հինգ հանրականն, մին մասնական, եւ այն որ աննշանականն է: 8 Յայսմ եաւթեանցս սեռում միայն պատկանի բացատրեալդ սահման՝ զամենեսեան տարորոշելով ի նմանէ: 9 Քանզի յասելն ստորոգեալ՝ տարորոշէ յաննշանական ձայնէն. քանզի աննշանական գոլով՝ ոչ ումեք ստորոգի: 10 Իսկ յասելն ըստ յոլովից՝ տարադատէ, այս ինքն որոշէ զմասնականն ի հանրականացն: 11 Իսկ աննշանականին եւ մասնականին արտաքսեցելոյ՝ հինգքն ընդհանուրքն մնացին:

12 Արդ, ասելով ի ներում՝ զինչէին ստորոգրեալ, գերիսն ի նոցանէ արտաքս հանէ՝ զտարբերութիւն, զյատուկ եւ զպատահումն. քանզի այսոքիկ ոչ ի ներում զինչէին ստորոգին, այլ ի ներում որպիսիինչէին: 13 Քանզի հարցեալք՝ որպիսի^օ ինչ մարդ, պատասխանեմք՝ բանական, որ է տարբերութիւն. եւ որպիսի ինչ է, պատասխանատրեմք՝ ծիծաղական, որ է յատուկ. եւ դարձեալ սեաւ կամ սպիտակ, որ է պատահումն: 14 Իսկ յասելն տարբերեցելոց տեսակաւ՝ որոշէ զնա ի տեսակէ. զի տեսակ թէպէտ եւ զյոլովից ստորոգի եւ ի ներում զինչէին, այլ ոչ տեսակաւ տարբերեցելոց, այլ թուով: 15 Արդ այսպէս յամենեցունց յայլոց ձայնիցն որոշեալ եւ զատուցեալ զսահմանդ՝ ցուցաք եթէ ամենայնում սեռի եւ միայնում յարմարի:

16 Աստուտ մեղադրեն ոմանք վասն կարգի որոշմանցդ, եւ թուի թէ բարուք: 17 Քանզի ասեն, թէ պարտ է նախ զհեռագոյնն որոշել, եւ այնպէս ապա զմաւտոյն՝ որպէս ի մարդում սահմանում: 18 Քանզի անդ նախ զհեռին որոշեմք ասելով՝ կենդանի. քանզի ասելով կենդանի, որոշեմք զնա յոչ կենդանուոյն, այս ինքն յաննշանականէն՝ որ է հեռագոյն ի մարդոյ. իսկ բանական ասելով՝ որոշեմք զնա ի մաւտագունիցն, այս ինքն ի ճիոյ եւ յարձույ եւ յայլոցն՝ որ են մաւտագոյն ի մարդն, որպէս շնչականք: 19 Նոյնպէս եւ յայսմ սահմանում պարտ էր նախ զհեռագոյնն որոշել. այս ինքն զաննշանական ձայնն, եւ այնպէս ապա զնշանականսն: 20 Արդ պարտ էր, ասեն, այսպէս սահմանել, եթէ «սեռ է, որ ստորոգի ըստ յոլովից եւ տարբերեցելոց տեսակաւ՝ ի ներում զինչէին»: 21 Զի ասելովն ստորոգեալ հանէր զաննշանական ձայնն, որ է հեռագոյն, իսկ ըստ յոլովիցն ասելով՝ զմասնականն. իսկ տարբերեցելոցն տեսակաւ որոշէ ի տեսակէ. իսկ յասելն ի ներում զինչէին որոշէ ի տարբերութենէ, ի յատկէ եւ ի պատահմանէ:

22 Աստուտ դարձեալ են ոմանք որ ասեն, եթէ բացատրեալդ սահման պարունակէ յինքեան զհինգ պղատոնական սեռան¹: 23 Եւ ասեմք թէ ոչ պարունակէ, վասն զի այս սեռ ի ներ զինչէումն ստորոգի. իսկ պղատոնականքն սեռք ի ներ որպիսիինչէումն ստորոգին: 24 Եւ զիս^օրդ նոքա ի ներ որպիսիինչէումն ստորոգին: 25 Արդ ասելի է, եթէ վասն զի նոքա զնմանութիւն զաստեացս նշանակեն. իսկ ամենայն նմանութիւն ընդ որակութեամբ է, եւ ներ որպիսիինչէն՝ ընդ որակութեամբ է: 26 Արդ յայտ է, թէ եւ պղատոնական սեռքն ի ներ որպիսիինչէին ստորոգին. ապա ուրեմն ոչ պարունակեալ ունի յին-

1 Πλάτωνι καθόλου γένος, λέγω δὲ τὰς ιδέας

քեան բացատրեալդ սահման զհինգ պղատոնական սեռսն:

1 Ընդ այսոսիկ հանդերձ աստուծով առաջիկայ տեսութիւն՝

ՊՐԱԿՔ ԺԴ

2 Թէպէտ եւ ստոյգ է սահմանն եւ բանն որ յաղագս սեռին է, այլ սակայն տազնապ հասանէ ի հակառակորդաց ճշմարտութեանն, որք սովորեցան ընդդէմ ասել ճշմատութեանն. քանզի ոչ եթէ վարկպարազի տարակուսանաւք ընդդէմ զինին, այլ եւ յոյժ ուժեղնագունիւք եւ դժուարալուծիւք: 3 Քանզի ասեն, եթէ սահմանս այս, որ ընդհանուր սեռի է, ոչ կարէ պարունակել յինքեան եւ զգերազանցեալ սեռն, այս ինքն զստորոգեալն, քանզի ստորոգեալն գերազանցեալ է քան զսեռն. քանզի ասեմք, եթէ սեռ է ստորոգեալ ըստ յոլովից եւ տարբերեցելոց տեսակաւ ի ներուժ զինչէին: 4 Արդ, որովհետեւ ասացաք սեռ է ստորոգեալն, յայտ արարաք, թէ գերազանցեալ է ստորոգեալն քան զսեռն. եւ ոչ պարունակէ զնա բացատրեալդ սահման:

5 Զայս տարակուսութիւն լուծանելով ասեմք, եթէ որպէս սահմանի սահման ոչ միայն զայլսն սահմանէ, այլ եւ զինքն, վասն զի եւ զինքն սահմանէ. նոյնպէս եւ աստանաւր բացատրեալդ սահման ոչ միայն զինքն, այլ եւ զհանուրն եւ զգերազանցեալն պարունակէ:

6 Իսկ երկրորդ տարակուսին ընդդիմակացուք ճշմարտութեանն ասելով, եթէ նուազ է բացատրեալ սահմանդ. քանզի ստորոգեալն որ է գերազանցեալ՝ ոչ ըստ յոլովից եւ տարբերեցելոց տեսակաւ միայն, այլ եւ սեռիւ. որգոն՝ գոյն ստորոգի մարմնոյ եւ անմարմնոյ. իսկ մարմին ստորոգի շնչականի եւ անշնչականի:

7 Արդ, մարմին եւ անմարմին ոչ որպէս տեսակք միայն զանազանին, այլ եւ որպէս սեռք. վասն զի մարմինն շնչականին է սեռ, իսկ անմարմին՝ անձին եւ մտաց:

8 Արդ, պարտ է յաւելուլ ի սահմանդ եւ ասել, թէ սեռ է ստորոգեալն ըստ յոլովից եւ տարբերեցելոցն ոչ միայն տեսակաւ, այլ եւ սեռիւ ի ներուժ զինչէին:

9 Զայս տարակուսութիւն լուծանելով ասեմք, եթէ բացատրեալ սահմանդ առ ի Պորփիրէ՝ զամենայնսն պարունակէ, եթէ գերազանցեալ եւ եթէ ոչ: 10 Իսկ բացատրեալդ առ ի ձէնջ՝ ոչ ամենայն սեռի պատկանի. վասն զի եւ ոչ կենդանոյն. քանզի կենդանին սեռ գոլով՝ ստորոգի բանականին եւ անբանին, որ տեսակք գոլով՝ տեսակաւ միայն զանազանին ի միմեանց, այլ ոչ սեռիւ, վասն զի ոչ կարեն սեռք գոլ: 11 Արդ, լաւագոյն եւ հաւաստագոյն է բացատրեալ սահմանդ առ ի Պորփիրէ, վասն զի ամենեցուն պատկանի. եւ այդ է առաքինութիւն սահմանի ամենեցուն պատկանիլ, եւ միշտ եւ նոյնպէս գոլն. այլ ոչ որպէս բացատրեալդ առ ի ձէնջ, վասն զի դա ոչ ամենեցուն պատկանի:

12 Երրորդ առ այսօքիւք տարակուսեն՝ եթէ ոչ բարւոք է սահմանդ, վասն զի տեսակի եւ տարբերութեան պատկանի եւ այլոց բարբառոցն. քանզի եւ ընդհանուր տեսակ եւ տարբերութիւն՝ ըստ յոլովից եւ տարբերեցելոց տեսակաւ ստորոգին. նոյնպէս եւ ընդհանուր յատուկն, նոյնպէս եւ ընդհանուր պատահուժն: 13 Առ որ ասեմք, եթէ ընդհանուր տեսակն թէպէտ եւ ստորոգի ըստ յոլովից եւ տարբերեցելոց տեսակաւ, այլ յայնժամ ոչ որպէս տեսակ, այլ որպէս սեռացեալ գոլով՝ սեռային բաղադանութեամբն ստորոգի, այլ ոչ որպէս տեսակ:

14 Զոր եւ ենթագրելովք բացատրեցին: 15 Եւ զի ոչ ասաց ենթագրելով, այլ ենթագրելովք, զի ցուցցէ՝ թէ ոչ իւր է բա-

1 ἐν οἷς ἡ πράξις

ցատրեալ սահմանն, այլ այնոցիկ, որք ի ճեմարանէն: 16 Բայց մեք ասացաք ի տեսութեան, թէ զիարդ պարտ է նախ եւ առաջին զաննշանականն ի նշանականէն որոշել, եւ այնպէս ապա զնշանականն. իսկ Պորփիւրիոս նախ զնշանականն, եւ ապա զաննշանականն: 17 Եւ է նշանականն կամ հանուր, կամ մասնական. այլ այսպէս բաժանեալն նուազ ցուցանէ զբաժանումն, քանզի ոչ պարունակեալ ունին յինքեան զիւրաքանչիւրսն. վասն զի այլ է մասնականն, եւ այլ է իւրաքանչիւրն, քանզի մասնականն անորիչ է. որգոն՝ իք մարդ. իսկ իւրաքանչիւրն որոշեալ եւ սահմանեալ, որգոն՝ Սոկրատէս, Պղատոն: 18 Արդ, եթէ այսպէս բաժանեմք՝ եթէ նշանական ձայնն կամ հանուր է, կամ մասնական, նուազ առնեմք զբաժանումն եւ ոչ առողջ: 19 Բայց պարտ է այսպէս ասել՝ եթէ նշանական ձայնն կամ հանուր է, կամ ըստ միոյ. քանզի ասելով ըստ միոյ՝ պարունակես եւ զիւրաքանչիւրսն, եւ զմասնականսն. քանզի մի ինչ նշանակեն իւրաքանչիւրն եւ մասնականն. ուստի եւ հակասահմանին միմեանց, քանզի զի՞նչ է մասնականն, եթէ ոչ անորիչ իւրաքանչիւր. եւ զի՞նչ իւրաքանչիւր, եթէ ոչ որոշեալ մասնական:

20 Այլ եւ դարձեալ այսպէս բաժանելով, նոյնպէս նուազ առնեմք զբաժանումն. քանզի զհոմանունս ձայնիցն ոչ պարունակեցաք, վասն զի ոչ ըստ միոյն նոքա եւ ոչ ըստ հանրականին: 21 Եւ ըստ միոյն ոչ են, վասն զի բազում բնութիւն նշանակեն. այլ եւ ոչ ըստ հանրականին, վասն զի հանրականն եւ փաղանունաբար ստորոգի. իսկ հոմանունքն ի ձայնիցն ոչ փաղանունաբար, այլ հոմանունաբար ստորոգին: 22 Իսկ եթէ զինչ հոմանունն է եւ զինչ փաղանունն՝ ստուգապէս ի «Ստորոգութիւնս» Արիստոտէլի ուսցուք: 23 Ապա ուրեմն այսպէս պարտ է բաժանել. եթէ նշանական ձայնն կամ ըստ յոլո-

վից ստորոգի, կամ ըստ միոյ. քանզի ասելով ըստ յոլովից՝ ոչ միայն զհանրականն պարունակէ, այլ եւ զհոմանունսն ի ձայնիցն:

24 Քանզի ստորոգիցելոյն՝ է ինչ որ գմիոջէ ասի միայնոյ: 25 Բարևոք ասաց գմիայնոյ, զի եթէ գմասնականէ ասացեալ էր, զիւրաքանչիւրն թողոյր: 26 Բարևոք ասաց եւ գլոլովիցն. վասն զի թէ եւ ասացեալ էր զհանրականացն, թողոյր եւ ոչ պարունակէր զհոմանունս ի ձայնիցն: 27 Որգան՝ Սոկրատէս, եւ սայն, եւ այսն: 28 Ի ձեռն յարացուցիցս՝ յայտ արար զիւրաքանչիւրսն՝ Սոկրատէս ասելովն, եւ զմասնականսն՝ սայն եւ այսն յատուկ ասելովն: 29 Եւ պատահումնքն հասարակաբար, այլ ոչ յատկապէս: 30 Բարիւք ասաց հասարակաբար. քանզի հասարակաբարն կարող գոյ յոլովից ստորոգիլ, այլ ոչ յատկապէս: 31 Եւ պատահն, որգոն՝ սպիտակն, սեւն, նստելն: 32 Խնդրելի է թէ վասն է՞ր ի վերայ այլոցն մի մի յարացոյց ասաց, իսկ ի վերայ պատահման երիս. սպիտակն, սեւն, նստելն: 33 Եւ ասելի է, թէ պատահումն երկակի ասի՝ անջատական եւ անանջատական: 34 Արդ, զանանջատականսն ի ձեռն սպիտակին եւ սեւոյն յայտնեաց, իսկ զանջատականսն՝ ի նստելոյն:

35 Արդ, գմիոյ միայնոյ ստորոգիցելոյն տարբեր է սեռն այնու՝ որ գլոլովից բացատուեալ է ստորոգիլ: 36 Այս ինքն թէ ի մասնականէն որոշեալ է սեռն. զի սեռ գլոլովիցն ստորոգի, իսկ մասնականն՝ եւ ոչ երբէք: 37 Նմանապէս ասէ եւ զորոշումն յայլոց բարբառոցն, զոր մեք յառաջագոյն ի տեսութեան ասացաք:

38 Ոչ ինչ ապա ուրեմն ակելորդ եւ ոչ նուազ պարունակէ սեռիս՝ ճառեցեալս ենթազրուցիւն մտածութեան: 39 Ըստ մե-

1 προκειμενου παραδειγμάτων

րում խոստմանն բեր ասացուք, եթէ զիարդ սահման է, եւ ոչ ենթագրութիւն առաջիկայ բացատրութիւնս: 40 Վասն զի ենթագրութեան կարողութիւն է միոյ բառի ի բաց բարձեցելոյ՝ ամբողջ պահիլ ենթագրութեանն. որգոն՝ յորժամ ասեմք, մարդ է հետեւակ երկոտանի, ուղղորդագնաց, լայնեղունկն: 41 Արդ եթէ զայլսն ասելով՝ զլայնեղունկն ի բաց բառնաս, ոչինչ նուազ գտանի ենթագրութիւն մարդոյն: 42 Իսկ յորժամ սահմանեմք զմարդ եւ ասեմք՝ կենդանի բանաւոր, մահկանացու, մտաց եւ մակացութեան ընդունակ, եւ զբանաւորն ի բաց բարձեալ՝ զայլսն ասեմք, ոչ ասեմք սահման մարդոյ գոլ զնա. վասն զի ոչ գոյ կարող մարդ լինել մարդ առանց բանաւորութեան: 43 Նոյնպէս եւ բացատրեալ սահմանին սեռի. քանզի եթէ զյոյլովիցն կամ զտարբերեցելոցն տեսակաւ, եւ կամ զի ներում զինչէին ստորագիլն ի բաց բառնաս, ոչ գոն կարող մնացեալքն սահման գոլ սեռի. վասն զի ոչ լիով յարկացոցէ գտեսութիւն նորա: 44 Արդ, ուրեմն յայտ է եւ յասացելոցս, թէ բացադրեալդ ի վերայ սեռի ոչ է ստորագրութիւն, այլ սահման: 45 Ընդ այսոսիկ հանդերձ Աստուծով վերլուծութիւն [սեռի եւ սկիզբն վարդապետութեան] յազազ տեսակի:

ՅԱՂԱԳՍ ՏԵՍԱԿԻ

1 ՊՐԱԿՔ ԺԵ

2 Զկարգ իմաստասիրիս որպէս բնական ինչ հետեւող իրողութեանս ի պէտս առեալք՝ յիրաւի յետ սեռին վարդապետութեան ի տեսակին վարդապետութիւն իջցուք: 3 Այլ աստուատ մեզ տարակուսեն ոմանք ասելով, եթէ պարտ էր դմա գտարբերութիւն յառաջ քան գտեսակն նախադասել, որպէս անդ ուրեմն ի վերն: 4 Արդ, կամ գտեսակ պարտ էր անդ նախադասել յառաջ քան գտարբերութիւն եւ կամ որ-

պէս անդ նախադասեաց գտարբերութիւն, պարտ էր եւ աստ նախադասել. արդ փոփոխելով զկարգն՝ անհետեւողութիւն արար վարդապետութեանն: 5 Առ որս ասեմք, եթէ անդ գտարբերութիւն յիրաւի նախադասեաց, իսկ աստ գտեսակ. վասն զի անդ առաջին կարգաւորութիւն էր, յիրաւի առաջին դասաւորութիւն տուաւ ի բնութենէ տարբերութեանն. վասն զի բնականաբար նախադասեցաւ յառաջ քան գտեսակ, վասն զի ընդհանրականագոյն է քան գտեսակ եւ պարզագոյն. այլ եւ պատճառ նորին է, վասն զի նա բաժանէ զսեռ ի տեսակս: 6 Իսկ աստ յիրաւի գտեսակ քան գտարբերութիւն նախադասեաց, վասն զի առինչունակին են տեսակ եւ սեռ:

7 Արդ, ի սահմանի սեռի ամենայն իրոք յիշումն տեսակի լինի, քանզի քարչէ յինքն սեռ գտեսակ: 8 Արդ, վասն զի սակաւ ինչ յառաջագոյն զսեռ սահմանեցաք՝ հարկ է եւ գտեսակ սահմանել. քանզի է մի եւ նոյն վարդապետութիւն սեռի եւ տեսակի, վասն զի առինչունակին են: 9 Արդ, ուսեալք զկարգ նախադասութեան նոցա, եկեսցուք եւ ի վարդապետութիւն տեսակին: 10 Նախ եւ առաջին, արիստոտէլական բացորոշութեանցն հաւանեալք՝ տարորոշեմք զհոմանունութիւնն, եւ ասեմք՝ եթէ քանի նշանակութիւնք են տեսակի: 11 Երկրորդ, եթէ յազազս որոյ նշանակութեան են բանքս, եւ ապա զյազազս այնորիկ զվարդապետութիւն յառաջ ածցուք:

12 Արդ, երկակի է տեսակ, քանզի տեսակ ասի եւ կերպարան. որպէս Եւրիպիդէս ողբերգակ ասէ. «նախ եւ առաջին տեսակ՝ արժանի բռնաւորութեան»¹: 13 Բայց ասի եւ ստորադասեալն սեռում, որպէս մարդ՝ տեսակ կենդանոյն ասի: 14 Արդ, որովհետեւ զիտացաք, եթէ քանաբար ասի տե-

1 πρώτου μὲν εἶδος ἄξιον τυραννίδος

սակ, բեր ասացուք՝ եթէ յաղագս որո՞յ նշանակութեան է բանս: 15 Եւ պարտ է գիտել, եթէ յաղագս այնորիկ՝ որ ըստ իմաստասիրութեան է, զոր եւ երբակի սահմանէ: 16 Եւ նախ եւ առաջին այսպէս՝ թէ «Տեսակ է՝ ստորադասեալն սեռում»: Երկրորդ՝ թէ «Տեսակ է որում սեռն ստորոգի»: Երրորդ՝ թէ «Տեսակ է որ ըստ յօլովից եւ տարբերեցելոց թուով ի ներում գինչէին ստորոգեալ»: 17 Եւ գիտելի է, թէ առաջինն եւ երկրորդ սահմանքն հաղորդութիւն ունին առ միմեանս եւ զանազանութիւն: 18 Եւ հաղորդութիւն, վասն զի երկոքեան զտեսակ սահմանեն. իսկ զանազանութիւն, վասն զի ոմն ունի զբաղադանութիւն՝ որպէս ի տեսակէ առ սեռ, իսկ ոմն՝ որպէս ի սեռէ առ տեսակ: 19 Այլ եւ երրորդ սահմանն ունի առ նոսին հաղորդութիւն եւ զանազանութիւն. հաղորդութիւն, վասն զի եւ նա զտեսակ սահմանէ. եւ զանազանութիւն, վասն զի նա զյատկագոյն տեսակն սահմանէ. իսկ նոքա զմիմեանց վերայն:

20 Իսկ յատկագոյն տեսակ է, որ գյուղովից եւ զգանազանեցելոց թուով ի ներում գինչէին ստորոգեալ: 21 Արդ, այսպիսի սահմանս զմարդն եւ զձին մահմանէ. քանզի մարդ տեսակ գյուղովիցն եւ զգանազանեցելոց թուով ի ներում գինչէին ստորոգեալ՝ որ է յատկագոյն. վասն զի ոչ բաժանի յայլ տեսակս: 22 Իսկ ի վերայ միմեանց ստորոգին տեսակք, որք ոչ սահմանեն զըստ յօլովիցն եւ տարբերեցելոցն թուով ի ներում գինչէին ստորոգեալն, այլ զայն տեսակն սահմանեն զստորոգեալն սեռում, եւ որում սեռն ստորոգի: 23 Քանզի զայս կարող գոյ ե՛լ ի վերայ մարդոյ ասել ե՛լ ի վերայ կենդանոյ. քանզի եւ կենդանին տեսակ է՝ ստորադասեալ սեռի, այս ինքն շնչականին:

24 Եւ պարտ է գիտել, եթէ երեք սահմանքն տեսակի երիս բաղադանութիւնս

յայտնեն. զմին՝ որպէս ի տեսակէ առ սեռ, եւ զմին՝ որպէս ի սեռէ առ տեսակ. իսկ գերրորդն՝ որպէս ի տեսակէ առ անհատսն: 25 Բայց ոչ ոք ի դոցանէ աւարտեալ, քանզի եւ ոչ առաջինքն յիշատակել վասն բաղադանութեան անհատի՝ որ առ նոսա, եւ ոչ վերջագոյնն յիշատակէ սեռ, զոր պարտ է յիշատակել վասն բաղադանութեան տեսակի առ սեռն: 26 Վասն այսորիկ պարտ է մանաւանդ այսպէս սահմանել. «Տեսակ է՝ ստորադասեալ ընդ սեռում ըստ յօլովից եւ տարբերեցելոց թուով ի ներում գինչէին ստորոգեալ»:

27 Իսկ եթէ զսեռն բացատրելով՝ զտեսակն յիշեցաք, ասելով՝ ըստ յօլովից եւ տարբերեցելոց տեսակաւ ի ներում գինչէին ստորոգեալ, եւ զտեսակն ասեմ զայն, որ ընդ բացատրեալ սեռիւ է, գիտել պարտ է, վասն զի սեռ է՝ որումն սեռ, եւ տեսակ՝ որումն տեսակ: 28 Ջայս ասելով յայտ առնէ, թէպէտ եւ սահմանելով զսեռ՝ զտեսակ յիշեցաք, եւ զտեսակ սահմանելով՝ զսեռ յիշեցաք, մի կարծեսցի յըստ միմեանց բանս. քանզի այսոքիկ առինչունակին են, յորում պիտանան յըստ միմեանց բանն: 29 Բացատրեն. այս ինքն սահմանեն, իսկ այլքն եղիցին թերեւս արդեաւք եւ ոչ տեսակագունիցն. այս ինքն, թէ այլ սահմանքն ոչ միայն տեսակագունիցն տեսակացն են, այլ եւ ընդ միմեամբքն:

1 Ընդ այսուսիկ հանդերձ Աստուծով առաջիկայ տեսութիւն

ՊՐԱԿՔ ԺԶ

2 Առակաբար¹ ասացեալ յաղագս սեռի եւ տեսակի ի յառաջագոյնսն, բե՛ր այսուհետեւ եւ յաղագս հաւաստութեան յարացուցիլ յայտ արասցուք, եւ մանաւանդ

1 Հայ. Բառակարար. ուղղում՝ եմք ըստ յուն. αὐτοματωδῶς-առակարար

արիստոտելականաւք ընտրագունիւք յայսպիսիսս: 3 Բայց յառաջ քան զարիստոտելական բաժանումն, բե՛ր յառաջագոյն բացորոշել ինչ, որ զբաժանումն բացորոշէ՝ ասասցուք: 4 Սեռ երկակի ասի. քանզի ասի սեռ եւ սեռականագոյնն, ասի եւ ընդ միմեամբքն: 5 Այլ եւ տեսակ երկակի ասի. քանզի առինչունակին են. իսկ առինչունակին որքանաբար մինն ասի, նոյնքանաբար եւ միւսն եւս: 6 Արդ, վասն զի սեռ երկակի ասի, հարկ է եւ տեսակին երկակի գոլ. քանզի ասի տեսակ եւ տեսակագոյնն, ասի եւ ընդ միմեամբքն:

7 Արդ, սեռականագոյն սեռ ասի, որ ոչ ունի վերագոյն քան զինքն սեռ. եւ դարձեալ, տեսակագոյն տեսակ ասի, որ ոչ ունի քան զինքն այլ տեսակ ի ներքոյ: 8 Իսկ ընդ միմեամբք սեռ է, որ ե՛ւ սեռ կարաւղ գոյ գոլ ե՛ւ տեսակ. նոյնպէս եւ ընդ միմեամբք տեսակ ասի, որ ե՛ւ տեսակ կարաւղ գոյ գոլ ե՛ւ սեռ: 9 Արդ, ծայրագոյն սեռ սեռականագոյն ասի, իսկ ծայրագոյն տեսակ՝ տեսակագոյնն. իսկ մէջ սեռ՝ ընդմիմեամբքն սեռ, իսկ մէջ տեսակ՝ ընդ միմեամբքն տեսակ:

10 Արդ է տեսանել երիս իրողութիւնս եւ չորս բաղադանութիւնս: 11 Երկու ծայրք եւ մի մէջն, իսկ բաղադանութիւն՝ մի ի սեռականագունիցն սեռէ առ ստորնագոյնն, այս ինքն տեսակագոյնն, եւ մի ի տեսակագունէն առ վերագոյնն. եւ երկու ընդ միմեամբքն, քանզի ունի մի առ վերագոյնն քան զնա, եւ միւս սեռ ստորագոյնն քան զնա: 12 Արդ, վասն զի գիտացաք երիս գոլ զիրսն եւ չորս զբաղադանութիւնսն, բե՛ր այսուհետեւ ասասցուք՝ վասն էր ընդ միմեամբք ասին այսոքիկ: 13 Եւ պարտ է գիտել, եթէ ընդ միմեամբք ասին, վասն զի կարող գոն եւ սեռ գոլ եւ տեսակ. տեսակ այնր՝ որ ի վերոյ քան զնա, եւ սեռ՝ որ ի ներքոյ քան զնա:

14 Արդ ուսեալք՝ եթէ զի՞նչ տեսակագոյնն եւ զի՞նչ ընդ միմեամբքն¹, բե՛ր զարիստոտելական բաժանումն յարադրեսցուք, զի ստուգագոյնն ուսցուք յաղագս այսոցիկ:

15 Արդ, բաժանեն արիստոտելականքն զսեռականագոյն սեռն այսպէս. «Գոյացութիւն բաժանի ի մարմին եւ յանմարմին. մարմին՝ ի շնչական եւ յանշնչական. շնչական՝ ի կենդանի, ի կենդանաբոյս եւ ի բոյս. կենդանին՝ ի բանաւոր եւ յանբան. բանաւորն ի մահկանացու եւ յանմահ. մահկանացուն՝ ի մարդ եւ յարջառ»: 16 Արդ, զգոյացութիւնն ասեն սեռականագոյն սեռ. վասն զի ոչ ունի քան զինքն գերազանցեալ սեռ: 17 Իսկ տեսակագոյն տեսակ ասեն զմարդն՝ որ ոչ գոյ ի ներքոյ այլ տեսակ, քանզի այն է վերջագոյն: 18 Իսկ զկենդանին եւ զշնչականն ընդ միմեամբք սեռ կոչեն, եւ ընդ միմեամբք տեսակ. քանզի ի միջի գոլով՝ կարողք գոն եւ սեռք գոլ եւ տեսակք: 19 Այսոքիկ այսպէս:

20 Արդ ասասցուք՝ զի՞նչ է կենդանին, կենդանաբոյս, եւ բոյս: 21 Այդ, բոյս է, որ ունի երիս զանազանութիւնս՝² զծննդականն, զաճողականն, զսննդականն: 22 Եւ վա՛չ արարչականին բնութեան. զի ի շնորհելն մեզ զծննդականն՝ շնորհեաց եւ զաճողականն. զի ի ձեռն նորա կատարեալք լինելով՝ կարացուք զնմանն ծնանել. եւ վասն զի աճողական պէտս ունի սննդականին՝ վասն այսորիկ եւ զսննդականն շնորհեաց մեզ: 23 Արդ այսոցիկ երիցս զմի ի զգայութեանցն ընդունելով, այս ինքն զշաւչափականն, լինի կենդանաբոյսն. եւ զի կենդանաբոյսն զշաւչափականն միայն ունի՝ աստուտ է յայտ, զի ի ծագել արեգականն ի ջուրս ծո-

1 τί γενικώτατον γένος καὶ τί εἰδικώτατον εἶδος καὶ τί ὑπάλληλον, φέρε...

2 δυνάμεις

վուն՝ բանայ զպատենկունսն եւ հեշտանայ, եւ հարելոյ շողոյն՝ ամփոփի: 24 Եւ ի վերայ այսոցիկ այլ եւս չորք զգայութիւնքն ի ներս եկեալ հանդերձ շարժութեամբ՝ գկենդանին բաղկացուցանեն: 25 Եւ գիտելի է, եթէ ուր շարժողութիւն է, անդ եւ զգայութիւն, այլ ոչ ուր զգայութիւն է, անդ եւ շարժողութիւն. վասն զի որպէս տրպագոյն ինչ զգայութիւն ստորագասեալ է ընդ շարժողութեամբ:

26 Եւ թերեւս ուրեք տարակուսեսցի ոք ասելով, եթէ ուստի՞ յայտ է, թէ ամենայն շարժումն զգայութիւն ունի. ասեմք, եթէ վասն զի ոչ ինչ ընդ վայր առնէ բնութիւն: 27 Արդ, եթէ արտաքոյ զգայութեան շնորհեալ էր զշարժումն, այն ինչ հանդերձեալ էր սատակիլ, ի քարանձաւաց հոսիլ, կամ ի գութս անկանիլ, գոր ոչ կամի բնութիւն, որպէս արարիչ յետ արարչին. ուստի այնպէս իւրոց արարածոց խնամ տանի բնութիւն, մինչ զի գորդն, որ ոչ ունի զգայութիւն, անոսկր եւ կակղագոյն եստեղծ՝ զի մի ի բարձուէ ուստեք անկեալ սատակեսցի: 28 Արդ, ուսեալք յասացելոցդ, թէ նւազ է սահմանդ կենդանոյն. եւ պարտ է այսպէս սահմանել՝ գոյացութիւն ներչնչական, զգայական, ինքնաշարժ: 29 Շարժումն ասեմ գտեղի ի տեղոջէ փոխումն:

1 Ընդ այսոսիկ հանդերձ Աստուծով առաջիկայ տեսութիւն

ՊՐԱԿՔ ԺԷ

2 Հասեալ է Պորփիւրիոս յաղագս նոցին վարդապետութիւն առնել, նախ յաղագս ծայրիցն ուսուցանելով, եւ ապա յաղագս միջոցացն, այսինքն յաղագս ընդմիմեամբքն, եւ ապա յաղագս տեսակագունիցն: 3 Աստուստ տարակուսեն ոմանք, եթէ էական որպէս սեռ ստորոգի գսեռականագունից սեռիցն, այս ինքն գտասն ստորոգութեանցն: 4 Առ որս ասեմք, եթէ ոչ

որպէս սեռ եւ ոչ որպէս այլքն ի բաժանելեացն, որք ըստ վեց յեղանակաց բաժանին, կարաւղ գոյ բաժանիլ այսպէս եւ ըստ այսմ աւրինակի: 5 Էական որպէս տեսակ բաժանիլ ոչ կարէ. քանզի տեսակն յանհատս բաժանի, իսկ անհատք մի բնութիւն յայտնեն, իսկ սեռականագոյն սեռքն բազում բնութիւնս յայտնեն, ապա ուրեմն ամենայն իրաւք էական ոչ կարող գոյ՝ որպէս տեսակ բաժանիլ յանհատս: 6 Այլ մի գուցէ որպէս բոլո՞ր ի մասունս բաժանի: 7 Այլ եւ ոչ այս է ճշմարիտ. քանզի բոլոր՝ կամ ի նմանամասնայս բաժանի, կամ յաննմանամասնայս. ի նմանամասնայս՝ որպէս փայտ ի բազում փայտս. իսկ յաննմանամասնայս՝ որպէս Սոկրատէս ի ձեռս եւ յոտս եւ ի գլուխս: 8 Իսկ էակ ի սեռականագոյն սեռան ոչ որպէս ի նմանամասնայս բաժանի, քանզի նմանամասնայքն եւ անուան հաղորդին եւ իրի, այնմ որ բաժանեցաւ ի նմանամասնեայս: 9 Իսկ սեռականագոյն սեռքն՝ թէպէտ եւ անուան հաղորդին էակին, այլ եւ ոչ իրի: 10 Այլ եւ ոչ աննմանամասնաբար կարաւղ գոյ բաժանիլ, վասն զի աննմանամասնաբար բաժանեալքն ոչ անուան եւ ոչ իրի հաղորդին. իսկ սեռականագոյն սեռքն՝ թէպէտ եւ ոչ իրի, այլ սակայն անուան հաղորդին, քանզի էակք ասին: 11 Այլ եւ ոչ որպէս հոմանուն ձայն բաժանի. զի հոմանունն անուան միայն հաղորդութիւն տայ. իսկ էական եւ անուան եւ իրի հաղորդութիւն տայ՝ տասն սեռականագոյն սեռիցն:

12 Երկրորդ, վասն զի հոմանուն ձայն հասարակաբար հաղորդութիւն տայ, որք ընդ նովաւն են, իսկ էական՝ սեռականագոյն սեռիցն ոչ այսպէս, քանզի գոյացութիւն առաւելագոյն էակ քան զայլսն. զի պատահմունքն նուազագոյնք են: 13 Այլ մի արդեաւք որպէս էութի՞ւն ի պատահումն բաժանի: 14 Այլ եւ ոչ այս ճշմարիտ. վասն զի եւ ոչ գոյ՝ պատահումն, եւ ոչ պատահմունքն՝ գոյ. ապա եթէ ոչ կոչին՝

ապա եւ ոչ կարաւոզ գոյ էակն որպէս ի պատահումն բաժանիլ. այլ եւ ոչ որպէս պատահումն յէութիւն. այլ եւ ոչ որպէս պատահումն՝ ի պատահումն: 15 Յորոց պակասէ ցուցանել, թէ եւ ոչ որպէս սեռ է ի տեսակս, վասն զի յընդդիմաբաժանեալ տեսակսն ոչ է բնութեամբ առաջին եւ վերջին, իսկ աստ բնութեամբ առաջին է գոյ, եւ վերջին՝ պատահումնքն. ապա ուրեմն ոչ կարէ որպէս սեռ ի տեսակս բաժանիլ: 16 Բայց ասացուք, եթէ զի՞նչ է բնութեամբ առաջին եւ բնութեամբ վերջին: 17 Բնութեամբ առաջին է, որ շարաբերի՝ եւ ոչ շարաբերէ, շարաբառնայ՝ եւ ոչ շարաբառնի: 18 Որգոն, բնութեամբ առաջին է կենդանին, քանզի յորժամ ասես մարդ՝ շարաբերի կենդանին, այսինքն թէ եւ կենդանի է. իսկ յորժամ ասես թէ կենդանի՝ ոչ շարաբերի մարդն, քանզի ոչ միանգամ որ կենդանի է՝ մարդ է: 19 Այլ շարաբառնայ՝ եւ ոչ շարաբառնի, վասն զի եթէ ի բաց բառնի կենդանին՝ ամենայն տեսակքն շարաբառնին. իսկ եթէ ի բաց բառնի մարդն եւ արձուին՝ ոչ շարաբառնի կենդանին: 20 Այսպէս եւ գոյ բնութեամբ առաջին է, վասն զի շարաբերի՝ եւ ոչ շարաբերէ. շարաբառնայ՝ եւ ոչ շարաբառնի: 21 Ապա ուրեմն յասացելոցս երեւի, թէ ոչ կարաւոզ գոյ էակն սեռ գոյ: 22 Եւ արդ այսօրիկ յաղագս ոչ գոյոյ զէակն սեռ, երթիցուք այսուհետեւ ի մեկնութիւն առաջիկային:

23 Որպէս ասէ Արիստոտել: 24 Կամի յարիստոտելական կարծեաց ցուցանել, թէ ոչ է էակն սեռ, այլ հոմանուն ձայն. զի անուան հաղորդութիւն տայ սեռականագոյն սեռիցն¹, այլ եւ ոչ իրողութեան: 25 Թէպէտ զամենայն ոք էակս կոչէ, հոմանունաբար, այլ ոչ փաղանունաբար: 26 Արդ ասէ, թէ արդարեւ սեռ է էակն, պարտ է նմա եւ անուան հաղորդութիւն

տալ եւ իրի, արդ որովհետեւ ոչ տայ, ոչ կարող գոյ²: 27 Արդ որպէս Պղատոն ասէ, էակն սեռ գոյ տասն սեռականագոյն սեռիցն. եւ վասն զի ոչ պարտ է զՊղատոնի կարծեաւքն զանց առնել, զառն՝ զիմաստասիրութիւն ի լոյս բերիցելոյ, բե՛ր ասացութիւն ինչ յաղագս սորա զէակն սեռ ասելոյ՝ արտադրեսցուք: 28 Քանզի ասէ, եթէ էակն սեռ է. քանզի որ անուան եւ իրի հասարակութիւն ունի ընդհանրականաց ոմանց, սեռ կոչի. արդ եթէ էակն տասն սեռականագոյնից սեռիցն եւ անուան եւ իրի հասարակութիւն ունի, յայտնապէս սեռ է: 29 Իսկ ընդհանրականաց ոմանց ասացաւ վասն տեսակագոյն տեսակի, քանզի եւ նա անուան եւ իրի հասարակութիւն ունի անհատիցն, բայց ոչ է սեռ:

30 Բայց Արիստոտել տարածայնէ առ այսօրիկ, որպէս եւ յառաջագոյն Պորփիրիոս ասաց, եթէ ոչ է սեռ էակն, այլ հոմանուն ձայն: 31 Եւ արդ, զի ոչ սեռ է եւ ոչ հոմանուն ձայն, կատարելաբար ի «Ստորոգութիւնսն» Արիստոտելի ուսցուք: 32 Սեռ ոչ կարէ գոյ էակն, որպէս ասէ Արիստոտել, վասն յառաջասացելոցն պատճառաց. այլ եւ ոչ հոմանուն ձայն կարող գոյ գոյ, որպէս ասէ Պղատոն, վասն յառաջասացելոց պատճառանաց: 33 Եւ արդ զի՞նչ ասացուք: 34 Տարածայնեցի՞ն արդեաւք առ միմեանս իմաստասէրքդ թէ ոչ: 35 Քանզի իւրաքանչիւր ոք զծայրս նոցին յայտ արար զմիողէն եւ առ մին: 36 Արդ, ստուգաբար փաղանունն ոչ կարէ գոյ. վասն զի ի փաղանունսն ոչ գոյ առաւել եւ նուազ. իսկ աստ առաւել է գոյացութիւն քան զայլ ստորոգութիւնսն: 37 Եւ դարձեալ, փաղանունքն հասարակաբար տան անուան եւ իրի հաղորդութիւն, իսկ էակն ոչ հասարակաբար տայ, քանզի գոյացութիւն առաւել էակ է, եւ անուամբ եւ իրաւք քան զայլ ստորոգու-

1 δνόματος μεταδίδοσι ταῖς δέκα κατηγορίας

2 Յուն. նոր գրութիւն՝ Πράξις κ' (էջ 158)

թիւնսն: 38 Արդ, ոչ փաղանուն ստուգաբար կարէ գոլ, այլ եւ ոչ հոմանուն, այլ որպէս ի միոջէ եւ առ մի: 39 Ի միոջէ էակէ անուանեցան տասն սեռականագոյն սեռքն՝ էակք. եւ առ մին առ նոյն ինքն էակն. վասն զի իւրաքանչիւր ոք ի տասն սեռականագոյն սեռիցն բաղձայ՝ է գոլ եւ կոչիլ:

40 Արդ, ուսեալք յաղագս էակին, եթէ ո՞րպէս եւ ըստ որո՞ւմ յեղանակի բաժանի էակն ի տասն սեռականագոյն սեռսն, ասասցուք, եթէ քանաբար ասի էակն: 41 Եւ պարտ է գիտել, եթէ եռակի ասի էակն: 42 Քանզի էակն կամ ըստ գիտութեան եւ ըստ բնութեան եզերեալ գոյ, կամ ըստ գիտութեան եւ ըստ բնութեան անեզր. կամ բնութեամբ անեզր եւ գիտութեամբ եզերեալ, եւ կամ գիտութեամբ անեզր եւ բնութեամբ եզերեալ: 43 Արդ, մին ի դոցանէ ոչ կարէ գոյանալ, քանզի ուր հասանէ գիտութիւն, ուր ոչ հասանէ բնութիւն: 44 Արդ, եզերեալ եւ գիտութեամբ եւ բնութեամբ տասն սեռականագոյն սեռքն¹. որ գիտութեամբ եզերեալ են, վասն զի գիտեմք զնոսա, թէ տասն են: 45 Իսկ ոչ եզերեալ, ոչ ըստ գիտութեան եւ ոչ ըստ բնութեան՝ անհատքն, քանզի այսոքիկ ոչ ըստ բնութեան են եզերեալ եւ ոչ ըստ գիտութեան. եւ ըստ բնութեան՝ զի հանապազ եւ միշտ եղանին: 46 Արդ, որ միշտ եղանի, ոչ է եզերեալ ըստ բնութեան, այլ եւ ոչ ըստ գիտութեան. քանզի որ ըստ բնութեան ոչ է եզերեալ, եւ եւս առաւել ըստ գիտութեան: 47 Արդ, անհունս ասեմ զանհատն ոչ եթէ անելանելիք ի հնէն, քանզի ամենայն ուրեք եզերեալք են յեզերեցելում տեղւոջ՝ այս ինքն յաշխարհի, այլ վասն զի միշտ եղանին, վասն այսորիկ ասեմք յանհունս գոլ: 48 Իսկ եզերեալ

ըստ բնութեան եւ անհուն ըստ գիտութեան ասեմք զտեսակսն. եւ վասն զի տեսակք ըստ բնութեան եզերեալք են, իսկ ըստ գիտութեան անհունք. քանզի են տեսակք, զորս ոչ գիտեմք, որք են ի խորս ծովու եւ յանկոխ լերինս, որք եւ ոչ անուան հանդիպեցան առ ի մէնջ: 49 Արդ, յայտ ուրեմն է յասացելոցս, եթէ է եւ եռակի իմանի էակն. սեռականագոյնքն սեռքն, եւ անհատքն, եւ տեսակքն:

1 Ընդ այսոսիկ հանդերձ Աստուծով առաջիկայ տեսութիւն

ՊՐԱԿՔ ԺԸ

2 Թէպէտ եւ հետեւիլ Ստագիրացոյն խոստացաւ իմաստասէրս, բայց սակայն ոչ ամենեւին առանց յիշելոյ թողու զիւր վարդապետին զպատուէր, այս ինքն զՊղատոնի. քանզի երիս յեղանակս բաժանման աւանդէ մեզ Պաղատոն. որոց առաջինն այս է: 3 Ասէ թէ պարտ է զբաժանումն ի սեռականագոյնիցն լինել մինչ ցտեսակագոյնսն, եւ յանկոյս տեսակագոյնիցն ոչ անցանել: 4 Եւ խնդրելի է, թէ վասն էր մինչեւ ցտեսակագոյնսն հրամայէ իջանել, եւ ոչ եւս յայնկոյս յանհատսն անցանել: 5 Եւ ասելի է, թէ վասն այնորիկ ոչ հրամայէ յանհատսն անցանել, զի մի գտցի յանհատսն առնել զբաժանումն, որք ոչ ունին զմշտնջենաւորութիւն: 6 Քանզի եթէ ասես, եթէ մարդ բաժանի ի Սոկրատէս, ի Պղատոն եւ յԱլկիպիադ, ոչ եւս մնացական եւ մշտնջենաւորս, այլ յայնոսիկ, որ այսաւր իցեն արդեաւք եւ վաղիւ ոչ եւս: 7 Իսկ բաժանումն պարտ է ի մշտնջենաւորսն լինել, որպէս գոյացութիւն՝ ի մարմին եւ յանմարմին, կենդանին՝ ի բանաւորն եւ յանբան. վասն զի հաստատուն գիտութիւն ըստ մշտնջենաւորաց լինի եւ որք միշտ եւ նոյնպէս գոն: 8 Այլք ասեն, թէ պարտ է զբաժանումն ոչ յայսպիսի եւ յայսպիսի լինել յանհատս, այս

1 τὰ δέκα καθολικώτατα γένη. ταῦτα γὰρ καὶ πεπέ-
ρανται τῆ φύσει, καθὸ αὐτῆ ταῦτα. ἐδημιούργησε
(էջ 160₁₋₂)

ինքն թէմիստոկլի, եւ յԱլկիպիադ, այլ յընդհանուր յանհատսն: 9 Առ որ ասեմք, եթէ ընդհանուր անհատն ոչ այլ ինչ է, այլ տեսակագոյն տեսակ:

10 Երկրորդ յեղանակ բաժանման, զոր պատուիրէ Պղատոն պահել, ասելով, թէ պարտ է որ բաժանեն՝ ոճով բաժանել եւ առնել զբաժանումն, ոչ գերազանցական աշտիճանաւ քայլափոխիլ. որդոն՝ պարտ է զգոյացութիւնն նախ ի մարմին եւ յանմարմին բաժանել, այլ ոչ ի կենդանի, ի կենդանաբոյսն եւ ի բոյսն, զի մի՛ թողցէ, որ ի միջոցին: 11 Եւ զի ախորժելի է Պղատոնի ոճով առնել զբաժանումն, ինքն իսկ յայտ արար ասելով, զի ըստ բաժանականն, ասէ, Հնարս ոչ ինչ պանծասցի փախչել:

12 Երրորդ յեղանակ, զոր պատուիրէ յեղուտն առնուլ զբաժանումն, այլ ոչ ի մակեղուտն. զի մակեղուտքն անհունք են, եւ ոչ ենթակացուցանեն զբնութիւն որպէս եւ եղուտքն: 13 Իսկ յանհունս բարբառոցն եւ յայնոսիկ, որք ոչ յայտնեն զբնութիւն ենթակայ իրին, ոչ է պարտ առնել զբաժանումն. քանզի անարհեստ եւ անմակացական է, որպէս ինքն իսկ ասէ եւ յայտ առնէ ի Փիլեբոսի՛ տրամաբանութեան, ասելով, թէ որ առնէ զբաժանումն յեղուտ ձայնիցն, նման է արուեստաւոր խոհակերի, որ ըստ յաւելից առնէ զքակմունսն. իսկ որ ի մակեղուտն առնէ, նման է փցուն խոհակերի, որ ոչ ըստ յաւելից առնէ զքակմունսն, այլ վայրապար: 14 Այս են երեք յեղանակ բաժանման, զորս հարկ է յամենայն բաժանման պահել: 15 Եւ պարտ է գիտել, թէ յամենայն բաժանման ել է եւ էջ. եւ էջ ի սեռականագունիցն ի տեսակագոյնսն, եւ որ ընդարձակէ զբաժանումն. իսկ ելն ի տեսակագունիցն ի սեռականագոյնսն, որ նեղէ

զբաժանումն, որք քատակեցան անհատի եւ բազմութեան. քանզի ի սեռականագունիցն ի տեսակագոյնսն իջանել բազմութեան քատակի. իսկ եւ տեսակագունիցն ի սեռականագոյնսն ելանել՝ անհատի:

16 Արդ տասուցմ սեռականագոյնս: 17 Զայս ասելով Պորփիրիոս, յայտ արար զեզերեալսն եւ ըստ բնութեան եւ ըստ գիտութեան, այս ինքն զսեռականագոյնսն. քանզի ասելով տասն, յայտ արար, թէ գիտեմք զնոսա, եւ բնութեամբ եզերեալք գոն: 18 Իսկ տեսակագոյնսն ցեր թուումն իմն են՝ այլ ոչ յանհունս: 19 Դարձեալ աստանաւր յայտ առնէ եւ զայն, որ ըստ բնութեան եզերեալք են եւ անհուն ըստ գիտութեան. քանզի յասելն, թէ ցեր թուումն իմն են, յայտ առնէ, թէ եզերեալք են ըստ բնութեան. իսկ յասելն, այլ ոչ յանհունս, յայտ արար, թէ անհունք են ըստ գիտութեան. որպէս զի ասիցէ՝ թէպէտ եւ ըստ մերում գիտութեան անհունք են, այլ ոչ են յանհունս:

20 Իսկ անհատսն, որ էին գկնի բան գտեսակագոյնսն, անհունս: 21 Ոմանք ասեն, թէ անհուն ասէ զանորոշսն, եւ յայտ առնէ զայն, որ ոչ ըստ բնութեան եւ ոչ ըստ գիտութեան եզերեալ են. քանզի երկակի է անհունն՝ անելանելին եւ անորիշն: 22 Արդ ասեն, եթէ ոչ վասն անլինելոցն է անհուն, այլ վասն զի ի ներկայումս են եւ անորիշք են: 23 Եւ զիա՞րդ են անորիշք՝ աստուստ յայտ է. բնութիւն ամենայն ուրեք զամենայնի զծայրսն ունի, քանզի չափ ունի եւ սակաւուց եւ յոլովից եւ փոքունցն եւ մեծամեծաց: 24 Եւ զոր ինչ եւ ասեմք, ասեն, այսպիսի ինչ է. սահմանեաց բնութիւն զկատարումն հասակի՝ զչափ ունել զչորեքկանգնեան², եւ ոչ եւս աւելի ի մեծագոյնսն ետ անցանել. եւ դարձեալ զփոքրագոյնսն հասակ որոշեաց երկու-

1 Հայ. ի Փիլիպպէի, յուց. ἐν Φιλίππῳ. պէտք է լինի՝ ἐν Φαίδρω-ի Փիլիպոսի

2 μέγεθος τοῦ ἀνθρώπου εἶνα τετράπηχῃ

կանգնեան, եւ ի նուազագոյնսն ոչ ետ անցանել. իսկ զմիջինսն անորիչ եթող: 25 Նոյնպէս եւ ըստ սակաւուց, եւ ըստ յոլովից. քանզի սահմանեաց զյոլովիցն, որպէս զի ասասցես զկատարեալ բազմութիւնն հազար. իսկ զկատարեալ պակասութիւնն հարիւր. իսկ զմիջին քանակութիւնն՝ անորիչ: 26 Արդ, ըստ այսմ բանի ասէ Պորփիրիոս զանհատսն անհունս. քանզի ասէ, եթէ սահմանեալ են. վասն զի որոց ծայրքն եզերեալք են, այնոցիկ եւ մէջն. այլ անհուն ասին, վասն անորոշութեան, այլ ոչ որպէս անելանելիք:

27 Վասն որոյ ի սեռականագուցնիցն ի տեսակագոյնսն իջեալ հրաման տայր Պղատոն դադարել: 28 Եւ այս առաջին յեղանակ եւ պատուէր Պղատոնի յաղագս բաժանման: 29 Եւ իջանելով ի ձեռն միջնոցն բաժանելով տեսակարարաւք տարբերութեամբք: 30 Այս երկրորդ յեղանակ բաժանման, զոր հրամայէ Պղատոն. այս ինքն՝ եթէ պարտ է ոճով իջանել ի տեսակագոյն տեսակսն, եւ ոչ գերագանց աստիճանի ոտամբ: 31 Եւ բաժանելով տեսակարարաւք տարբերութեամբք: 32 Այս երրորդ յեղանակ, զոր պատուիրէ Պղատոն, եթէ պարտ է յեղուտսն առնել զբաժանումն, եւ ոչ ի մակեղուտսն, զի անմակացելի են. եւ զանհունսն ասէր թողուլ. քանզի ոչ գոյ լինել ի սոցանէ մակացութիւն, այս ինքն եթէ յորժամ անորիչք են եւ անհունք՝ անորիչիցն եւ անհնիցն ոչ գոյ մակացութիւն եւ արհեստ:

1 Ընդ այսուսիկ Աստուծով հանդերձ առաջիկայ տեսութիւն

ՊՐԱԿՔ ԺԹ

2 Զիւր դիտաւորութիւնն ամենայն իրաւք պահելով իմաստասէրս՝ բանականագոյն խնդրել յանձն առեալ, քանզի վասն արմատոյ եւ հիման բանականին այժմ զվարդապետութիւն առնէ, այս ինքն յա-

ղագս ստորագելոյ եւ ենթակայի. եւ զի այստքիկ երկոքեան արմատ եւ հիմն են բանականին, այսինքն ստորագեալն եւ ենթակայն, յայտնի է յասացելոցս: 3 Բանականն կատարումն ունի զապացուցականն, իսկ ապացուցականն ի շարաբանութեանցն բաղկանայ, իսկ շարաբանութիւնքն՝ ի նախադասութեանց, իսկ նախադասութիւնքն՝ ի ստորագելոյ եւ յենթակայէ: 4 Իսկ ապացուցականն է հաստատութիւն եւ անդիմաճառելի: 5 Եւ շարաբանութիւն է շարագրեալ բան. մարդ կենդանի է, իսկ կենդանին գոյ¹: 6 Իսկ մասունք շարաբանութեան են նախադասութիւնք: 7 Առաջին նախադասութիւն՝ մարդ կենդանի, երկրորդ նախադասութիւն՝ կենդանին գոյ: 8 Բայց ունի նախադասութիւն ենթակայ եւ ստորագեալ. ենթակայ ունի առաջին նախադասութիւն զմարդն, իսկ ստորագեալ՝ զկենդանին: 9 Իսկ երկրորդ նախադասութիւնն ենթակայ ունի զկենդանին, իսկ ստորագեալ՝ զգոյն:

10 Արդ, ստորագեալն կամ յոլովագոյն պարտի գոլ քան զենթակայն կամ հանգէտ նորին, բայց նուազ՝ եւ ոչ երբէք: 11 Իսկ ենթակայն՝ կամ հանգէտ կամ նւազ, բայց յոլով՝ ոչ երբէք քան զստորագեալն: 12 Արդ, յոլովագոյն ստորագեալն քան զենթակայն, որպէս կենդանին քան զմարդն: 13 Իսկ հանգէտ ստորագել աւսեմք ենթակային՝ այս ինքն մարդոյ զծիծաղականն. քանզի հանգիտանիւթք են միմեանց ծիծաղականն եւ մարդն, եւ հակադարձին առ միմեանս: 14 Եւ յարացոյց ասացելոցդ՝ նախաճառեցեալ բաժանումն, քանզի գոյացութիւն ստորագեալ միայն է, իսկ անհատքն՝ ենթակայ. իսկ մէջքն ստորագեալք են եւ ենթակայք. այլ տեսակագոյնն՝ ենթակայ առաւել գոյ քան ստորագեալ, զի անհատիցն միայն ստորագի, բայց ենթակայացեալ եւ տարընկղմեալ ա-

1 οὐσία. ὁ ἀνθρώπος ἄρα οὐσία

մենեցուն վերնոցն. իսկ ընդմիմեամբքն՝ ստորոգեալք առաւել քան ենթակացեալք:

15 Աստուստ տարակուսեն ոմանք ասելով, եթէ զիա՞րդ ասէք զգոյացութիւն միայն ստորոգեալ. քանզի ահա տեսանեմք զսպիտակն, այս ինքն զպատահումն ստորոգեալ գոյացութեան. եւ է կաթն գոյացութիւն, իսկ սպիտակն պատահումն. ապա ուրեմն ոչ բարւոք ասէք զգոյացութենէն, թէ ստորոգի միայն, քանզի ահա եւ ենթակայանայ պատահմանց: 16 Առ այսոսիկ ասեմք, եթէ ոչ ասեմք զնա ամենայն գոյիցն ստորոգիլ, այլ այնոցիկ միայն, որք ընդ նովաւն են, քանզի այնոցիկ, որք ընդ նովաւն են, ոչ ումեք ենթակայանայ, այլ միշտ ստորոգի: 17 Եւ յարացոյց ասացելոցդ զնոյն բաժանումն ստորարկեսցուք. եւ եղիցի գոյացութիւն, որպէս բոլոր ինչ. իսկ անհատքն որպէս մասունք. իսկ մէջքն՝ եւ բոլորքն եւ մասունք. այլ տեսակագոյն առաւել մասն քան թէ բոլոր. իսկ ընդմիմեամբքն առաւել բոլոր քան թէ մասունք: 18 Արդ, որպէս բոլորն զամենայն ընդ միմեամբ ունի զմասունս, նոյնպէս եւ գոյացութիւն ընդ ինքեամբք ունի զամենայն բաժանեալսն ի նմանէ: 19 Արդ, բոլորն եւ գոյացութիւն, թէպէտ նմանք միմեանց են ասացելովքդ, բայց սակայն այլ է բոլոր եւ այլ է գոյացութիւն. քանզի գոյացութիւն իւրով ենթագրութեամբն կարաւղ գոյ յայնսն տեսանիլ, որք ի նմանէն բաժանեալք են, իսկ բոլորն իւրով ենթագրութեամբ ոչ կարաւղ գոյ որպէս բոլոր տեսանիլ յիւր մասունս. քանզի ոչ կարաւղ գոն ձեռն եւ ոտն ի գլուխ տեսանիլ:

20 Արդ, ասացեալ Պորփիւրի յաղագս սեռականագունիցն եւ տեսակագունիցն եւ ընդմիմեամբքն, ոչ անտես առնէ եւ զանհատսն, այլ սահմանէ եւ զնա ասելով, եթէ «Անհատ է ի յատկութեանց բաղկացեալն, որոց հաւաքումն ոչ երբէք ի վերայ այլոց

տեսցի»: 21 Այս է սահման անհատի: 22 Եւ յարացոյց իմաստիւր ինձ զՍոկրատէս. քանզի նա անհատ գոլով՝ ի յատկութեանց գոյ բաղկացեալ. այս ինքն ի կնդութենէ, եւ յառաջբաղերթութենէ, եւ յուշիմութենէ, եւ ի գոլոյ Սոփրոնիսկոսի որդի: 23 Արդ, այսոցիկ հաւաքումն, ոչ երբէք միաբան յայլոց վերայ տեսանի. քանզի թէ կունդ է, քաղրթեղ չէ, թէ քաղրթեղ է, ուշիմ չէ, թէ ուշիմ գոյ, Սոփրոնիսկոսի որդի ոչ կարէ գոլ:

24 Աստուստ տարակուսեն ճեմականքն, եթէ ըստ երկուց յեղանակաց յանցեալ Պորփիւրիոս, զանհատն ի պատահմանցն ասելով լնուլ, զոր Արիստոտէլ նախ եւ լաւագոյն եւ պատուականագոյն ասէ գոլ գոյացութիւն ի ստորոգութիւնսն. յայտ է թէ յոյժ սխալեաց յայսոսիկ Պորփիւրիոս. քանզի եղուտն յեղտիցն լնանին, եւ ոչ ի մակեղտիցն: 25 Այլ եւ ընդդէմ այսորիկ, քանզի ինքնաստորակայքն բաղկացուցանեն զայլաստորակայսն, իսկ ըստ Պորփիւրի այլաստորակայքն բաղկացուցանեն զինքնաստորակայսն, որ է անհատրին: 26 Քանզի ինքն Պորփիւրիոս ասէ, թէ «Պատահումն է՝ որ լինի եւ բացալինի առանց ենթակային ապականութեան»: 27 Արդ, եթէ ի պատահմանց բաղկացեալ է անհատն, հարկ է ապականիլ ենթակային յապականիլ պատահմանցն: 28 Առ այսոսիկ պատասխանատրեն պղատոնականքն ասելով, թէ ոչ ասէ ի պատահմանց բաղկանալ անհատին, այլ ճանաչիլ: 29 Արդ այսպէս պղատոնականքն: 30 Իսկ դուք, ով ճեմականք, զի՞նչ ասիցէք: 31 Եւ նոքա ոչ ինչ անտեղի ասեն լնուլ գէտութիւն ի պատահմանց, եւ առ այլ գոլ էութիւն, եւ առ այլ պատահումն. քանզի որպէս ջերմութիւն ի հուր եւ էութիւն ասի գոլ, եւ պատահումն. քանզի որպէս առ անորակ մարմին՝ պատահումն, իսկ առ հուրն՝ էութիւն. քանզի գոյացութիւն հրոյ ջերմութիւն է: 32 Նոյնպէս եւ կնդութիւն որպէս

մարդոյ ելոյ պատահումն ասեմք, իսկ որպէս առ Սոկրատէս՝ գոյացութիւնն:

33 Արդ բացատրելոյ սեռի եւ տեսակի զինչ իւրաքանչիւր ո՞ք է: 34 Աստուստ զենթազրութենէ սեռականագունիցն եւ տեսակագունիցն ճառէ: 35 Քանզի պարտ եւ արժան է կամ հանգէտ գհանգիտից ստորոգիլ եւ կամ մեծն զնուագէն, որպէս խնցալկանն ճիոյ, իսկ մեծն՝ կենդանին՝ զմարդոյ: 36 Աստուստ զարմատոյ եւ զհիմանէ բանականին ճառէ, զստորոգելոյ եւ զենթակայէ. եւ ասէ, թէ ամենայն նախադասութիւն ստորոգեալ եւ ենթակայ ունի. եւ ստորոգեալն կամ մեծագոյն քան զենթակայն կամ հանգէտ, բայց նուազ եւ ոչ երբէք. իսկ ենթակայն կամ հանգէտ ստորոգելոյն է կամ նուազ, բայց յոլով եւ ոչ երբէք: 37 Քանզի բոլոր իմն սեռն է, իսկ անհատն մասն: 38 Աստուստ ասէ, թէ որ ստորոգին միայն, բոլորումն ստորոգեալ է, իսկ անհատն՝ մասին, որպէս ի տեսութեան յառաջագոյն ասացաք, զի՞նչ զանազանին բոլորն՝ եւ որ ստորոգին միայն: 39 Եւ արդ ասացուք, թէ զի՞նչ զանազանի մասն յանհատէն: 40 Արդ, զանազանի, վասն զի մասն ոչ կարէ ընդունել զենթազրութիւն բոլորին. այսինքն՝ ձեռն, մասն գոլով, ոչ ընդունի զենթազրութիւն ոտից եւ գլխոյ, իսկ անհատն ընդունի զենթազրութիւն գոյացութեան: 41 Այսոքիկ մեզ եւ յազապս տեսակի վարդապետեցան:

ՅԱՂԱԳՍ ՏԱՐԲԵՐՈՒԹԵԱՆ

1 ՊՐԱԿՔ Ի

2 Յետ երկաքանչիւրոց ծայրից վարդապետութեան՝ եկեսցուք եւ ի տարբերութիւն, որ ունի երրորդ դասաւորութիւն, թէպէտ եւ բնութեամբ յառաջագոյն է քան զտեսակ. այլ զի մի աւցտեսցի վարդապետութիւն սեռին եւ տեսակին ի միմեանց, քանզի նոքա ի ներում զինչէին ստորոգին, իսկ տարբերութիւն եւ յատուկ եւ պատա-

հումն՝ ի ներում որպիսիինչէին, վասն այսորիկ զերրորդն ընկալաւ աստիճան:

3 Արդ, սկիզբն առնելով վարդապետութեան որ յազապս տարբերութեան, նախ ըստ սովորութեանց զբացորոշութեանցն Արիստոտէլի զհոմանունութիւնն բացորոշեսցուք. քանզի հոմանունն ճայնիցն է տարբերութիւն: 4 Արդ, ասի տարբերութիւն եռակի, քանզի է տարբերութիւն հասարակաբար, յատկապէս եւ յատկեղ: 5 Եւ հասարակաբար է՝ որ նշանակէ անջատական պատահումն. իսկ յատկապէս՝ որ նշանակէ անանջատական, իսկ յատկեղ՝ որ զգոյացութիւն յարկացոցէ: 6 Եւ արդ, առաջնոյն յարացոյց՝ սպիտակն, որ է յիս, որ է անջատական եւ կարաւոյ գոյ լինել սեաւ. իսկ երկրորդին՝ խաժակնութիւն, որ է յիս, այս է անանջատականն. իսկ երրորդին՝ բանականն, որ տարաբար է զմեզ յանբանիցն. արդ, այս տարբերութիւն գոյացութիւն յայտնէ: 7 Բայց պարտ է գիտել, եթէ զի՞նչ են երեք տարբերութիւնք եւ ոչ յոլովագոյնք եւ ոչ նուազ քան զերիս, զոր արժան է ասել, եւ ապա ի վերջոյ՝ թէ վասն է՞ր այսպիսի անունաց հանդիպեցան:

8 Երկու են իրողութիւնք. կամ պատահումն կամ գոյացութիւն: 9 Իսկ պատահումն, կամ անջատական, կամ անանջատական: 10 Արդ, եթէ անջատական է, առնէ զհասարակական պատահումն. իսկ եթէ անանջատական՝ առնէ զյատկապէսն: 11 Իսկ եթէ գոյացութիւն՝ առնէ զյատկեղն, որպէս բանականն եւ մահկանացուն, որք են գոյացութիւնք մեր: 12 Արդ, եթէ երկակի իրողութիւնք են եւ յերիս բաժանեալ են, յիրաւի երեք են տարբերութիւնք: 13 Երկրորդ պատճառ, զոր եւ Պորփիւրիոս ասէ՝ եւ այս է: 14 Գոյացութիւն է այլ, իսկ պատահումն՝ որ է այլայլակ: 15 Եւ եթէ զիա՞րդ գոյացութիւն այլ է,

իսկ պատահումն այլայլակ, առաջիկայ շարագրութիւնդ ուսուցանէ զմեզ:

16 Արդ, իւրաքանչիւր ոք ի դոցանէ առնէ երկուս լծակցութիւնս. այլ անջատական եւ այլ անանջատական. այլայլակ անջատական, եւ այլայլակ անանջատական: 17 Են եւ այլ երկուս այլ եւ այլայլակ. անջատական եւ անանջատական, որք լինին վեց: 18 Եւ ի սոցանէ երեքն բաղկանան եւ երեքն՝ ոչ. եւ բաղկանան ընդ միմեամբքն, եւ մի այն՝ որ ի տրամանկեանցն է. իսկ ոչ բաղկանան ընդդիմակքն, եւ մի ի տրամանկեանցն: 19 Քանզի ոչ բաղկանայ այն, որ ասէ՝ եւ այլայլակ. եւ ոչ որ ասէն՝ անջատական եւ անանջատական, եւ ոչ մի ի տրամանկեանցն, որ ասէ՝ այլ անջատական: 20 Իսկ բաղկանայ այն, որ ասէ՝ այլ անանջատական, եւ որ ասէ՝ այլայլակ անջատական եւ այլայլակ անանջատական: 21 Արդ, այլայլակ անջատականն առնէ զհասարակաբար պատահումն, իսկ այլայլակ անանջատականն առնէ զյատկապէսն. իսկ այլ անանջատականն առնէ զյատկեղն:

22 Արդ, ուսեալք, եթէ վասն է՞ր երեք են տարբերութիւնք, բե՛ր ըստ մերուժ խոստմանն ասացողք, եթէ վասն է՞ր այդպիսում հանդիպեցան անուանց: 23 Արդ, հասարակաբար կոչեցաւ տարբերութիւն, որ յայտնէ անջատական պատահումն. վասն զի հասարակաբար ընդունի զընդդիմական, թէպէտ եւ ոչ ի միում ժամանակի. քանզի կարող է՝ որ սպիտակն է, յայլ եւ յայլ ժամանակի սեաւ գոլ. եւ որ շարժին, կարաւղ գոյ դադարել յայլ եւ յայլ ժամանակի: 24 Իսկ յատկապէս տարբերութիւն կոչեցաւ, որ անանջատական պատահումն յայտնէ. վասն զի ոչ կարողք գոն ընդդիմակքն ի միում եւ ի նոյնում տեսանիլ. քանզի ոչ կարող գոն կնտութիւն եւ հերաւորութիւն ի միում եւ ի նոյնում մասին տեսանիլ. եւ վասն զի ոչ երբէք անջատի

կնտութիւն, վասն այսորիկ յատկապէս տարբերութիւն կոչեցաւ:

25 Իսկ յատկեղ կոչեցաւ տարբերութիւն անանջատական՝ այլն, որպէս բանականն. վասն զի բանական գոլով մարդոյ՝ ոչ երբէք բաժանի, ոչ ազդամբ եւ ոչ մտածութեամբ. վասն այսորիկ յատկեղ տարբերութիւն կոչեցաւ, վասն զի զխաժակնն մարթ գոյ մտածութեամբ սեաւակնն իմանալ. իսկ զմարդ՝ առանց բանականին անհնար է մարդ իմանալ:

26 Տարբերութիւն հասարակաբար՝ եւ յատկապէս եւ յատկեղ ասացի: 27 Թուի թէ հրամայելով ասէ, թէ ասացի. ուստի յայտ է՝ թէ իւր են անունքդ այսպիսի տարբերութեանց. զի վասն այսորիկ ասաց՝ թէ ասացի, ոչ ասաց՝ թէ ասի, այլ թէ ասացի:

28 Ասեն ոմանք, եթէ ոչ բարւոք նախադասեցան սեռ եւ տեսակ տարբերութեան, վասն զի հանրականագոյն է տարբերութիւն քան զտեսակ: 29 Ասեմք, եթէ բարւոք նախադասեցան, վասն զի առինչունակին են. եւ ոչ միայն զտեսակն, այլ եւ զանհատսն պարտ է նախադասել տարբերութեան. զի այսոքիկ առինչունակին են, եւ առինչունակն համանգամայն պարտի գոլ:

30 Որպէս զիարդ եւ իցէ կամ առ ինքն, կամ առ այլ: 31 Բարիոք ասէ. բայց ոմանք ասեն, եթէ գառ ինքն ասելով գոլ՝ ոչ բարւոք ասաց, քանզի տարբերութիւն մինչ յոյժ պակաս յերկուս տեսանի, ի միում եւ ոչ երբէք. քանզի զիա՞րդ ինքն ինքեան տարբեր է: 32 Ասեմք, եթէ բարիոք ասաց. քանզի տարբեր է ինքն ինքեան յայլ եւ այլ ժամանակի, այլ ոչ ի միում՝ որ է անհնարին, որպէս ինքն ասէ:

33 Մանկան ելոյր՝ եւ այրացելոյր, եւ ցերգործելոյր՝ եւ դադարեցելոյր: 34 Աստուստ պարտ է գիտել, եթէ անջատականին պատահման ոմանք դիւրանջատա-

կանք են, եւ ոմանք դժուարանջատականք: 35 Քանզի ներգործել ինչ եւ կամ դադարել՝ դիւրանջատականք, իսկ մանկան ելոյր՝ այրանալ, դժուարանջատական, քանզի միշտ յիւր ինչ պէտս ասելով՝ գդիւրանջատական պատահումն ասաց: 36 Այլ եւ անանջատականն երկակի է, քանզի ոմն ի ծնէ, որպէս խաժակն եւ կորունչ. եւ է ինչ ժամանակաւոր, որպէս եւ կնդուծիւն, եւ սպի ի վիրէ սեւեռեալ: 37 Չայս ասելով՝ յայտնէ գերկակին գոլ եւ անանջատականին պատահման:

38 Իսկ յատկեղմն՝ տարբերել այլ այլոյ ապիմ. յորժամ տեսակարարաւ տարբերութեամբ զանագանիցէ, որպէս մարդ՝ ձիոյ: 39 Բարւոք ասաց՝ տեսակարարաւ տարբերութեամբ. քանզի տեսակարար տարբերութիւն եւ եղուտ գոլով՝ զմեր գոյացութիւնս կերպարանէ: 40 Եւ պարտ է գիտել, թէ եւ տեսակարար տարբերութիւնք երկակի գոն. ոմանք բաժանականք եւ ոմանք բաղկացականք: 41 Եւ բաժանականք են ընդդիմակայքն, որգոն՝ բանականն եւ անբանն, իսկ բաղկացականքն են նոյնք, այլ զընդմիմեամբքն առնլով, որպէս բանականն եւ մահկանացուն:

42 Այլ հասարակաբարն եւ յատկապէսն այլայլակ առնէ: 43 Այս ինքն է, թէ պատահմունքն զտեսակսն ոչ կարեն փոխել՝ որ են տափնչութիւնք, սպիտակութիւնք: 44 Իսկ յատկեղքն այլ. այս ինքն եղուտ գոլով՝ փոխեն զտեսակսն, եւ առնեն զոմն բանական կենդանի եւ զոմն անբան: 45 Արդ ըստ այլարարակս բաժանմունք լինին սեռիցն ի տեսակս, եւ սահմանք բացատուեալ լինին ի սեռէ ելով եւ յայսպիսեաց տարբերութեանց: 46 Աստի յայտ առնէ, եթէ երկակի տեսակարարաւղքն են. ոմանք բաժանականք եւ ոմանք բաղկացականք:

1 Ընդ այսոսիկ հանդերձ աստուծով յառաջիկայ տեսութիւն

ՊՐԱԿՔ ԻԱ.

2 Հանդերձեալ Պորփիւրիոս եւ երկրորդ բաժանումն առնել. զոր եւ մեք յայնմ ի տեսութեան թողեալք՝ այժմ կարեւոր կամարեցաք ի կիր արկանել. որ է ըստ այսմ աւրինակի: 3 Էականցն ոմանց անջատականցն են եւ ոմանց անանջատականց: 4 Եւ վասն զի ոչ լիով էանց ընդ այսպիսի բաժանումն, բե՛ր զնւագն ի կիր արկցուք, նախ ուսանելով՝ թէ զինչ զանագանութիւն է գոյացութեան եւ գոյեղտին, պատահման եւ մակագոյեղտին. քանզի զայսոսիկ ուսանելով գիտեմք եւ զնուագութիւն բաժանմանն, զոր արար Պորփիւրիոս: 5 Արդ, զանագանեալ է գոյացութիւն ի գոյեղէն, վասն զի գոյեղն եւ ի վերայ պատահման եռնու. իսկ գոյն եւ ոչ երբէք: 6 Արդ, եթէ նոյն էր գոյեղն եւ գոյն, պարտ էր գոյին տեսանիլ՝ ուր գոյեղն է:

7 Բայց թէ զիա՞րդ ի վերայ պատահման առնու գոյեղն՝ ասասցուք: 8 Գոյնն պատահումն է, եւ սեռ է սպիտակին. եւ ստորոգի գոյնն սպիտակին գոյեղաբար, քանզի թէ ոչ է կարողութիւն զսպիտակն ոչ մտածութեամբ եւ ոչ ազգմամբ առանց գունոյ իմանալ՝ յայտ է, թէ գոյեղաբար ստորոգի գոյնն սպիտակին: 9 Քանզի այսպէս բնաւորեցան ստորոգիլ այնքիկ, որ ոչ կարող գոն կամ մտածութեամբ կամ ազգմամբ անջատիլ: 10 Արդ, թէ տեսանի գոյեղն անգ՝ ուր ոչ կարող գոյ գոյն տեսանիլ, ամենայն իրաւք ոչ գոյ նոյնն: 11 Ըստ նմին աւրինակի որոշեալ զանագանի եւ մակագոյեղն ի պատահմանէ. քանզի մակագոյեղն գոյացութեան ստորոգի, իսկ պատահումն գոյացութեան ոչ երբէք ստորոգի, եթէ ոչ՝ յորժամ ասեմք, Սոկրատէս սպիտակ է, ոչ ասեմք՝ եթէ Սոկրատէս փոխանակ Սոկրատէս գոլոյ՝ սպիտակ է, այլ այնպէս իմանամք ստորոգիլ,

որպէս թէ սպիտակն ի Սոկրատում է: 12 Այն իսկ յորժամ ասեմք, եթէ Սոկրատէս սպիտակ ոչ է, այս ինքն, թէ զսահման սպիտակին ոչ ընդունի, որպէս զկենդանոյն, յայնժամ ոչ ստորոգի պատահումն գոյացութեան: 13 Ըստ այսմ յեղանակի ասացաւ ոչ ստորոգիլ զպատահումն գոյացութեան:

14 Բայց եթէ զհարդ ստորոգի մակագոյեղն գոյացութեան, որպէս յորժամ ասես՝ ծառայի եւ տեառն զմարդն ստորոգիլ: 15 Քանզի որպէս ստորոգի մարդում կենդանին, այսպէս եւ ի տէրումն եւ ի ծառայումն մարդ, քանզի ուր տէր, անդ եւ մարդն: 16 Բայց ոչ զնոյն ստորոգութիւն ասեմք. քանզի կենդանոյն առ մարդն գոյեղ է. իսկ մարդոյն առ տէրն՝ մակագոյեղ: 17 Արդ, եթէ տեսանի մակագոյեղն անդ՝ ուր ոչ տեսանի պատահումն, ամենայն իրաւք ոչ նոյն է մակագոյեղն եւ պատահումն:

18 Արդ, ուսեալք զսոցա զանազանութիւնս, եկեսցուք եւ ի բանս իմաստասիրիս: 19 Արդ՝ ասէ, թէ «Զանազանին յատկեղն, եւ հասարակաբարն, եւ յատկապէսն. քանզի ոմանք ունին զառաւելն եւ զնուազն, զսպիտակն եւ զսպիտակագոյնն, իսկ ոմն ոչ»: 20 Ոչ բարիոք ասէ. քանզի ցուցանի, եթէ հասարակաբարն եւ յատկապէսն ոչ ունի զառաւելն եւ զնուազն, իսկ յատկեղն ունի: 21 Քանզի ահա հասարակաբարն ոչ ընդունի զառաւելն եւ զնուազն. որպէս յորժամ ասեմք զեռանկիւնին, եւ զքառանկիւնին ի նմին գոյ. քանզի նա ընդունելով զեռանկիւնին եւ զքառանկիւնին՝ ոչ տեսանի ի նոսա առաւելն եւ նուազն. քանզի ոչ է եռանկիւնի եռանկիւնոյ առաւել եւ նուազ. ապա ուրեմն ոչ ամենայն ուրեք ի հասարակաբար տարբերութեան տեսանի առաւելն եւ նուազն: 22 Այլ եւ ոչ յատկապէսն ամենայն ուրեք ընդունի զառաւելն եւ

զնուազն. քանզի ահա աթենացի գոլ՝ անանջատական է պատահումն. իսկ աթենացի առ աթենացի՝ ոչ ունի զառաւելն եւ զնուազն. իսկ յատկեղն ունի զառաւելն եւ զնուազն. եւ թէ զհարդ՝ ասացուք:

23 Յատկեղն նշանակէ եւ զգոյ, եւ զգոյեղ. զգոյ՝ որպէս զի ասես զբանականն. իսկ զգոյեղն՝ որպէս զսպիտակն. քանզի ուսաք, եթէ զհարդ զանազանի գոյացութիւնն գոյեղին: 24 Արդ, եթէ յատկեղն առնու ի վերայ գոյին եւ գոյեղին, իսկ գոյեղն իմանի ի վերայ պատահման, յայտ է, թէ յատկեղին ճանաչի առաւելն եւ նուազ: 25 Քանզի ասեմք զսպիտակն յոյժ սպիտակ եւ նուազ սպիտակ. իսկ ասացաք եւ զգոյնն գոյեղաբար ստորոգիլ սպիտակին: 26 Բայց ասէ զյատկեղն ոչ ունել զառաւելն եւ զընուազն. իսկ զհասարակաբարն եւ զյատկապէսն ունել: 27 Բե՛ր յարադրեսցուք զբանս իմաստասիրիս:

28 Արդ ասէ, թէ «Յատկեղն յիրաւի ոչ ընդունի զառաւելն եւ զնուազն. վասն զի մի տեսակ յայտնէ, որ կերպարանողական գոյ մեր, որպէս բանականն»: 29 Իսկ մին եւ նոյնն զիա՞րդ կարող գոյ ընդունել զընդդիմականն, այս ինքն՝ զառաւելն եւ զնուազն. քանզի եթէ ընդունի, փոփոխի. իսկ բանական ասէ զգոյեղն, որ միշտ եւ նոյնպէս իւրաքանչիւր ումեք գոյ: 30 Ապա թէ ոք ասէ, թէ ասեմք բանականագոյն, ասեմք, թէ հանճարոյ եւ մակացութեան է ընդունել զառաւելն եւ զնուազն, այսինքն զբանականն:

31 Բայց եւ այլազգ յանդիմանել զիմաստասէրս. քանզի ասեմք, եթէ ըստ այդմ բանի եւ ոչ մի ոք ի զանազանութեանցդ ընդունի զառաւելն եւ զնուազն. քանզի եթէ վասն գոյոյ մի տեսակ բանականին ոչ ընդունի զառաւելն եւ զնուազն, ապա եւ ոչ որ հասարակաբարն է՝ պարտ է ընդունել, եւ ոչ որ յատկապէսն: 32 Քան-

զի սպիտակն, որպէս ի սպիտակում մարմնում, տեսակ է սպիտակ մարմնոյ, եւ ոչ գոյ կարողութիւն զսպիտակ մարմին արտաքոյ սպիտակութեան իմանալ: 33 Եւ է մի տեսակ սպիտակն սպիտակ մարմնոյն. վասն զի առ սպիտակ մարմինն՝ տեսակ է սպիտակն. իսկ առ հանուր մարմինն՝ ոչ երբէք: 34 Արդ, ոչ պարտ է սպիտակին, որ է մի տեսակ սպիտակ մարմնոյն, ընդունել զառաւելն եւ զնուազն. քանզի պարտ է սպիտակին, որ է սպիտակ, նոյնպէս գոյ: 35 Ապա ուրեմն ոչ է ընդունելի բան ի մաստասիրիս:

36 Իսկ արդ զի՞նչ եւ մեք ասացուք: 37 Ասեմք, թէ պարտ է այսպէս ասել, թէ անլայն իրս նշանակէ տարբերութիւն. որպէս զեռանկիւնին եւ զքառանկիւնին, քանզի այսոքիկ անլայն են խառնուածով, եւ ոչ ընդունի զառաւելն եւ զնուազն. նոյնպէս եւ աթենացին անլայնական գոլով ըստ խառնուածս, ոչ ընդունի զառաւելն եւ զնուազն. նոյնպէս եւ բանականն միշտ եւ նոյնպէս գոլով՝ եւ ոչ ունելով լայնութիւն խառնուածոյ, ոչ ընդունի զառաւելն եւ զնուազն: 38 Իսկ եթէ լայնութիւն խառնուածոյ ունի՝ յայնժամ ընդունի զառաւելն եւ զնուազն, որգոն՝ սպիտակն կարող գոյ առաւել սպիտակ գոլ եւ նուազն: 39 Վասն այսորիկ ընդունի զառաւելն եւ նուազն:

40 Իսկ ըստ երկրորդ յեղանակի զանազանի յատկեղն ի հասարակաբար եւ ի յատկապէս տարբերութենէ. քանզի նոքա յենթագրութիւնս յարառոցին, իսկ յատկեղքն ի սահմանս: 41 Զայս ճշմարիտ ասէ: 42 Եւ տես զիարդ յայտ արար աստանաւր, եթէ յատկեղն ե՛լ զգոյացութիւն նշանակէ ե՛լ զգոյեղ: 43 Քանզի ասելն, եթէ յատկեղն ի սահմանս յարառոցին, յայտ արար, եթէ ի վերայ պատահմանց ասի գոյեղն, քանզի սահմանեմք եւ զպատահմունս: 44 Իսկ սահման ի գոյեղիցն բազ-

կանան ձայնից. յայտ է, թէ եւ ձայնք ի վերայ սահմանաց պատահմանց գոյեղք գոն: 45 Քանզի ասեմք, եթէ սպիտակն գոյն է արտադատող աչաց: 46 Երրորդ առ այսոքիւք ասէ, եթէ զանազանի յատկեղն ի հասարակաբար եւ ի յատկապէս տարբերութեանց. քանզի նոքա այլայլակ առնեն, իսկ յատկեղն՝ այլ:

1 Ընդ այսոսիկ հանդերձ աստուծով առաջիկայ տեսութիւն
ՊՐԱԿՔ ԻԲ

2 Ասացաք, եթէ ըստ որոց իրաց զանազանին ի միմեանց տարբերութիւնքս: 3 Ասացուք, թէ զի՞նչ զանազանութիւն ունի առ ինքն յատկեղն՝ յայտնելով զբազկացականս եւ զբաժանականս տարբերութիւնս: 4 Վասն որոյ ասեն ոմանք, թէ նոյնք են: 5 Եւ զի ոչ են նոյնք՝ յասացելոցս յայտ է: 6 Սեռականագունից սեռիցն ոչ են բազկացուցիչ զանազանութիւնք, բայց միայն բաժանականքն. եւ դարձեալ, տեսակագունից տեսակացն ոչ գոն բաժանականք տարբերութիւնք, այլ բազկացուցիչ զանազանութիւնք: 7 Արդ, եթէ նոյնք էին, պարտ էր ի միում մասին տեսանել զերկաքանչիւրսն, իսկ եթէ ոչ տեսանին, յայտ է, թէ ոչ են նոյնք: 8 Եւ ունիմք աստուստ երկուս առաձս: 9 Մի՛ թէ սեռականագոյն սեռն ոչ սահմանի, վասն զի ոչ ունի բազկացուցիչ զանազանութիւնս. նա քանզի եւ ամենայն սահման ի սեռէ եւ ի բազկացուցիչ զանազանութեանց լինի, եւ եթէ ըստ այսմ բանի՝ եւ ոչ տեսակագոյն տեսակն բաժանի. քանզի այսպէս ասէ Պղատոն՝ նախ պարտ է զբաժանումն ի սեռականագունիցն մինչեւ ցտեսակագոյնսն լինել, եւ ոչ անցանել յայնկոյս յանհատսն:

10 Երկրորդ, բաժանականքն սեռիցն՝ սեռիցն միայն են, ոչ երբէք եւ տեսակացն. իսկ բազկացականքն՝ տեսակացն միայն

են, ոչ եւս եւ սեռիցն. եւ թէպէտ ասէ ոք, թէ եւ սեռիցն են բաղկացականքն: 11 Ապա ուրեմն պարտ էր եւ ամենայն սեռի գոյ, զի որք նոյն տեսակի գոյեղաբար գոն, եւ ամենեցուն նմանեացն գոյեղաբար գոն:

12 Արդ, եթէ միում սեռի բաղկացականք գոն զանազանութիւնք, պարտ է եւ ամենայն սեռի գոյ. իսկ եթէ ոչ գոյ, քանզի սեռականագունիցն ոչ գոն բաղկացականք, ապա ուրեմն ամենայն իրաւք ոչ նոյնք են բաղկացականք եւ բաժանականք տարբերութիւնքն: 13 Եւ յընդդիմակէն մարթ գոյ հակադարձել զբանն, եւ զնոյն ասել ի վերայ բաժանականացն: 14 Եթէ էին բաժանականք տարբերութիւնք տեսակի, պարտ էր եւ ամենայն տեսակի. իսկ եթէ ոչ են, քանզի տեսակագոյնքն ոչ ունին բաժանականս, ապա ուրեմն ամենայն իրաւք ոչ են նոյնք, քանզի ոչ կարաւ գոն ի միում եւ ի նոյնում տեսանիլ:

15 Երրորդ եւ հաւաստագոյն՝ եթէ ոչ նոյնք են. վասն զի կենդանոյն բաղկացականք են գոյացութիւն, ներշնչաւորն եւ զգայականն. իսկ բաժանականք կենդանոյն՝ բանականն եւ անբանն:

16 Չորրորդ, թէպէտ եւ նոյնք էին՝ ամենայն իրաւք բաղկացականքն ի բաժանականացն լինին. բայց սակայն ոչ ի նոյնում եւ ի միում կարաւ գոյ տեսանիլ. քանզի կենդանոյն բաժանական՝ բանականն եւ մահկանացուն, մարդոյն բաղկացականք գոն:

17 Հինգերորդ, բաղկացականքն հանրականագոյնք են, իսկ բաժանականքն՝ մասնականագոյնք: 18 Եւ զի բաղկացականքն հանրականագոյնք են, յայտնի է ի բաժանելն մեր զնոսա, քանզի ասեմք, եթէ կենդանին՝ գոյացութիւն ներշնչական զգայական: 19 Արդ, վասն զի ներշնչականն ի յորովագոյնս հասեալ գոյ, քան զկենդանին, բաժանեմք զնա ի զգայականն եւ յանզգայականն. եւ դարձեալ,

վասն զի զգայականն յորովագոյն է, քան զկենդանին, բաժանեմք զնա յինքնաշարժն եւ յանշարժն:

20 Վեցերորդ, բաժանականքն ապականութեան գոն արարչականք, իսկ բաղկացականքն՝ բաղկացութեան. քանզի ոմանք, բաժանելով զկենդանին ի բանականն եւ յանբանն, կարծիս ապականութեան տան, իսկ բաղկացուցիչքն՝ բաղկացութեան:

21 Եւթներորդ, բաժանականքն ի հակակայսն տեսանին, բանականն եւ անբանն. իսկ բաղկացուցիչքն՝ եւ ոչ երբէք, քանզի ոչ ոք ասէ, եթէ մարդ է կենդանի բանական եւ անբան:

22 Եւ պարտ է գիտել, թէ Պորփիրիոս միով անուամբ զբաղկացականսն բաժանականս կոչէ, եւ զբաժանականսն՝ բաղկացականս: 23 Քանզի պատուականագոյն է բաղկացականն, քան զբաժանականսն:

24 Նախ եւ առաջին աստուստ, զի բաղկացականքն պատուականագոյնք են, քան զբաժանականսն. վասն զի բաղկացականքն հանրականագոյնք են, իսկ բաժանականքն՝ մասնականագոյնք: 25 Իսկ պատուականագոյն է հանրականն, քան զմասնականն: 26 Երկրորդ, վասն զի բաժանականքն զաւրութեամբ են, իսկ բաղկացականքն ներգործութեամբ: 27 Եւ պատուականագոյն է ներգործութեամբքն, քան զզաւրութեամբն. վասն զի կենդանին զբաժանականն, այս ինքն զբանականն եւ զմահկանացուն, զաւրութեամբ ունի յինքեան, իսկ մարդն՝ ներգործութեամբ: 28 Վասն այսորիկ պատուականագոյն է բաղկացականն, քան զբաժանականն:

1 Ընդ այսոսիկ հանդերձ աստուծով առաջիկայ տեսութիւն

ՊՐԱԿՔ ԻԳ

2 Արդ, ի վերուստ դարձեալ սկսանելով նառելի է: 3 Յասելն ի վերուստ սկսա-

նելով յայտ արար երկրորդ բաժանումն առնել էակացն, յանջատականն եւ յաննջատականն: 4 Եւ անանջատականացն՝ եմ որ ըստ ինքեանց եմ, եւ եմ որ ըստ պատահմանց: 5 Զանանջատականն աստուստ բաժանէ ի գոյացութիւն եւ ի պատահումն. քանզի ըստ ինքեան ասելով՝ զգոյացութիւն նշանակեաց. քանզի սովորութիւն է Արիստոտէլի զբնութիւն ըստ ինքեան անուանել՝ որպէս ինքնագոյ:

6 Իսկ ըստ պատահմանցն ոչ առեալ լինին ի գոյացութեանն բանի, եւ ոչ առնեմ այլ, այլ այլայլակ: 7 Արդ, տես աստանաւր՝ զի՞՞րդ զգուշաբար ասաց: 8 Քանզի վասն գոյեղիցն, որք ի սահմանս առնուն եւ յենթագրութեան, ոչ քննեաց եւ ասաց, թէ ի գոյացութեան միայն բանի առնու, զի ցուցցէ, թէ եւ յենթագրութիւնս պատկանաւորք գոն: 9 Իսկ վասն պատահմանցն, որք ոչ առնուն ի գոյացութեան բանի, այլ յենթագրութեան, զի ցուցցէ, թէ յենթագրութեան միայն գոն պատկանաւորք, ասաց՝ եթէ ոչ առնեն այլ, այլ այլայլակ:

10 Դարձեալ ըստ ինքեանցն տարբերութեանց՝ ոմանք եմ ըստ որս բաժանեմք զսեռսն ի տեսակս, եւ ոմանք ըստ որս բաժանեալքն տեսակարարին: 11 Աստուստ յաղագս բաժանականաց եւ բաղկացուցչաց զանազանութեանցն ճառէ: 12 Զի շնչաւորին եւ զգայնոյն տարբերութիւն եմքակայական է կենդանոյն գոյացութեան: 13 Աստուստ ցուցանէ, թէ ոչ նոյն տարբերութիւնք են բաղկացականք եւ բաժանականք, վասն զի ոչ ի վերայ միոյ առեալ տեսանին:

14 Այլ բանականն եւ մահկանացուն՝ բաղկացականք լինին մարդոյ: 15 Յայսմ բաժանմանէ վեց լինին լծակցութիւնք. բանականն եւ անբանն. մահկանացուն եւ անմահն. բանական մահկանացուն, բանական անմահն. անբան մահկանացուն, ան-

բան անմահն. յորոց ըստ ոմանց երկու անբաղկացելիք են, իսկ չորք բաղկացելիք. իսկ ըստ այլոց երեք են բաղկացելիք. եւ յերիցն երկուքն գտանին ընդմիմեամբք եւ մինն տրամանկիւնի: 16 Իսկ եթէ չորք են բաղկացելիք, երկու տրամանկիւնիքն, եւ երկու ընդմիմեամբքն: 17 Արդ, ըստ Պլատոնի չորս են բաղկացելիքն. բանական անմահ, բանական մահկանացու, անբան մահկանացու, անբան անմահ: 18 Իսկ զընդդիմական անբաղկացելիս զբանականին եւ զանբանին, զմահկանացուին եւ զանմահին: 19 Իսկ Արիստոտէլ զանբան անմահն ոչ ընդունի, այլ երիս բաղկացելիս, որում հետեւիլ խոստացաւ Պորփիրիոս:

20 Այսպէս է վերնագոյն գոյացութեան: 21 Արդ, այսպէս ունի եւ գոյացութիւն, քանզի բաժանի ի շնչական եւ յանշունչն, ի զգայունն եւ յանզգայն, որք լինին եւ յայսմ բաժանմանէ վեց լծակցութիւնք. շնչականն եւ անշունչ, զգայուն եւ անզգայ, շնչական զգայուն, շնչական անզգայ, անշնչական զգայուն, անշնչական անզգայուն. որոց տրամագծութիւնք լինին այսպէս եւ ըստ այսմ աւրինակի, զոր վերոյ ասացաք:

1 Ընդ այսոսիկ հանդերձ աստուծով առաջիկայ տեսութիւն

ՊՐԱԿՔ ԻԴ

2 Եթէ ի գիտութիւն իրողութեանց սահմանք գոյանան, եկեցուք այսուհետեւ եւ զտարբերութիւն սահմանեցուք. ասացեալ եթէ զի՞նչ է հասարակաբարն, եւ զի՞նչ յատկապէսն, եւ զի՞նչ յատկեղն, եւ զի՞՞արդ յատկեղն զգոյացութիւն եւ զգոյեղ նշանակէ, եւ զի՞՞րդ բաղկացաբար եւ բաժանաբար առեալ գոյ: 3 Արդ, ասի տարբերութիւն, որով առաւելու տեսակն քան զսեռն: 4 Եւ բարւոք ասաց, թէ որով առաւելու տեսակն քան զսեռն. քան զի ի

տեսակում առաւելուն տարբերութիւնք, իսկ ի սեռում եւ ոչ երբէք. քանզի սեռն, որպէս սեռ անբաժանելի գոլով, ոչ ունի զանազանութիւնս:

5 Ապա եթէ ասիցէ ոք, այո ունի. քանզի ահա ասեմք՝ գոյացութիւն ներշնչական, զգայական. ասացուք, եթէ ոչ ունի զտարբերութիւնս զայս որպէս սեռ, այլ որպէս տեսակ: 6 Եւ այս նախ յայտնի յայնոցիկ, զի բաղկացականք գոն զանազանութիւնքն. իսկ բաղկացականք տարբերութիւնք ոչ գոն սեռիցն, այլ տեսակացն: 7 Ապա եթէ վիճաբար ոք ի ներս զայցէ՝ եթէ ամենայն իրաւք սեռ ունի տարբերութիւնս, այլ ոչ եթէ զհանգէտս եւ զնոյնս թուով տեսակի. քանզի տեսակն ունի եւ զիւր տարբերութիւնան, ունի եւ զսեռին. քանզի գոյացութիւնն ներշնչական, զգայական ասի եւ ի վերայ մարդոյ, որ է տեսակ, եւ բանականն եւ մահկանացուն, այլ եւ ներգործութեամբ գոն ի տեսակում, զաւրութեամբ ի սեռում, յորժամ եւ թոյլ տացէ ոք զբանականն զանազանութիւն զոլ սեռում որպէս սեռում: 8 Բայց զայս ասեմ, զի անբաժանելի գոլով սեռի՝ ոչ ունի զբանականն յիւրմէ բաժանեալ:

9 Եւ մի ոք կարծեսցէ, եթէ տեսակ, յոլովագոյն ունելով տարբերութիւն, հանրականագոյն է քան զսեռ. քանզի ուր յոլովք են տարբերութիւնք, անդ սուղ եւ նուազ գոյ սահմանեալն: 10 Քանզի ահա յանհատսն տարածանելով մարդ՝ ոչ այնչափ ինչ ունի զանազանութիւն, որչափ անհատն: 11 Քանզի ասելով, մարդ կենդանի, բանաւոր, մահկանացու, մտաց եւ հանճարոյ ընդունակ, եւ զընդհանուրն սահմանէ: 12 Իսկ եթէ կամիցի զմի յանհատիցն՝ այս ինքն զմասնականսն, յաւելու եւ այլ զանազանութիւնս առ ի յանհատել զհանուր մարդն: 13 Քանզի ասեմք զՍոկրատէս մարդ կենդանի, բանաւոր, մահկանացու, մտաց եւ հանճարոյ ընդու-

նակ, լայնեղունկն, յառաջաքաղերթ: 14 Եւ այսպէս ի ձեռն յոլովից զանազանութեանց անհատի ընդհանուր մարդն:

15 Աստուստ քննեն ոմանք, եթէ վասն է՞ր Պորփիրիոս զտարբերութիւն սեռիւ եւ տեսակաւ սահմանեաց, իսկ զտեսակ եւ զսեռ ոչ ի ձեռն միմեանց աւանդեաց. եւ այն զի կարաւ զգոյր տեսակ տարբերութեամբ եւ սեռիւ սահմանիլ. որպէս զի յորժամ ասէ ոք, տեսակ է, որ յոլով զանազանութիւնս ունի բան զսեռ, նմանապէս եւ սեռ կարաւ զգոյր բացազայիլ տեսակաւ եւ զանազանութեամբ. որպէս յորժամ ասէ ոք, սեռ է, որ ի տեսակում տեսանի, եւ ոչ ի տարբերութեան երբէք, քանզի զմարդ կենդանի ասեմք, իսկ զբանաւորութիւն՝ ոչ կենդանութիւն: 16 Բայց է առ այսոսիկ այսպէս պատասխանատրել. չորք են որ ներանիւթեն. երեք անբաղկացելիք եւ մին բաղկացելի. խոստովանեալ ի խոստովանելոյ, երկբայ յերկբայէ, խոստովանեալ յերկբայէ, երկբայ ի խոստովանելոյ: 17 Եւ ի սոցանէ երեքն, որպէս ասացաք, անբաղկացելի, եւ մին բաղկացելի: 18 Եւ ո՞ք ոմանք այսոքիկ են, ասացուք: 19 Խոստովանեալն ի խոստովանելոյ ոչ կարէ բաղկանալ. վասն զի ոչ մարթ գոյ ներանիւթել զխոստովանեալն ի խոստովանելոյ, եւ ոչ զերկբայն յերկբայէ. քանզի այսպիսիս ընդ միմեանց գոյ բան: 20 Այլ եւ ոչ զխոստովանեալն յերկբայէն, զի եթէ զխոստովանեալն ի խոստովանելոյն ոչ մարթի ներանիւթել, զի ա՞րդ զխոստովանեալն՝ յերկբայէն: 21 Իսկ զերկբայն ի խոստովանելոյն ներանիւթել եւ հաւանեցուցանել մարթ գոյ: 22 Արդ, այսոցիկ այսպէս ելոց, բանաւորական հնարի պիտանացեալ. Պորփիրիոս ոչ սահմանէ զխոստովանեալն յերկբայէն. քանզի զսեռ սահմանելով՝ ոչ կարաւ զգոյ տարբերութեամբ եւ տեսակաւ զնա բացատրել. քանզի տակաւին եւս տեսակ եւ տարբերութիւն երկբայանային առ ի մէնջ: 23 Այլ եւ ոչ զտեսակ տարբերու-

թեամբ եւ սեռիւ. քանզի տակաւին եւս անգիտանիւր առ ի մէնջ տարբերութիւն: 24 Իսկ զտարբերութիւն սեռիւ եւ տեսակաւ բացատրեաց, զերկբայացեալն ի մէնջ ի խոստովանեցելոցն:

25 Եւ վասն զի ոմանք ներանիւթենն ոչ գոլ զտարբերութիւն, բե՛ր նախ զներանիւթեւն նոցա ուսցուք, եւ ապա ցուցցուք զնա գոլ ի գոյիցն: 26 Արդ, ներանիւթենն ի ձեռն երկուց այսոցիկ առածից. որոց առաջինն է այս: 27 Ոչ երբէք ընդդիմակքն ի միում եւ ի նոյնում ըստ թուոյ, ի նորին մասին, եւ նոյնում ժամանակի տեսանին. որդոն՝ սպիտակն եւ սեաւն ի միում ըստ թուոյ ի նորին մասին եւ նոյնում ժամանակի տեսանիլ ոչ կարէ. եւ վասն զի կարաւոյ գոյ ի նոյնում ըստ տեսակի, զի եղիցի ի Սոկրատում սեաւն, իսկ ի Պղատոնում՝ սպիտակն: 28 Եւ վասն այնորիկ յաւելին՝ ըստ թուոյ, զի զմին յայտնեցեն: 29 Եւ քանզի ի միասին կարաւոյք գոն ընդդիմակքն տեսանիլ, յոտոն ցուրտ, իսկ ի գլուխն ջերմ. վասն այսորիկ յաւելին՝ ի նոյն մասին: 30 Եւ դարձեալ, վասն զի յայլ եւ այլ ժամանակի կարաւոյ գոն ի նոյն մասին ընդդիմակքն տեսանիլ, վասն այսորիկ յաւելին՝ ի նոյն ի նմին ժամանակի:

31 Իսկ երկրորդ առածն¹ ունի ըստ այսմ աւրինակի: 32 Ոչ երբէք յոչէէ եւ յոչնչէ գտանի ինչ եղեալ. քանզի ամենայն գոյք ի գոյից ունին զլինելն: 33 Եւ զիտելի է, թէ այլազգ ասէ Պղատոն զոչ երբէք ոչ ուրեք² եւ այլազգ Արիստոտէլ: 34 Քանզի Պղատոն զոչն երբէք ոչ ուրեք ոչ մտածութեամբ եւ ոչ ներգործութեամբ ասէ գոլ. ուստի զարալեզն³ ասէր ամենեւին ոչ ուրեք ոչ երբէք, վասն զի ոչ ունի զգոլն եւ ոչ մտածութեամբ: 35 Իսկ Արիստոտէլ զոչն երբէք ոչ ուրեք է որ մտածութեամբ է, բայց ներգործութեամբ ոչ: 36 Արդ, այսոցիկ այսպէս ելոց, ասեն վասն տարբերութեան ոչ գոլ. քանզի ո՞ւր են՝ ասեն. քանզի թէ ասէք, եթէ ի սեռում գոն, սուտ ասէք. քանզի զայսոսիկ ներանիւթեաց առաջին առածն՝ զընդդիմակսն ոչ երբէք ի նոյնում ըստ միում թուոյ՝ ի նոյնում մասին ի նոյնում ժամանակի գոլ: 37 Արդ, եթէ կենդանին մի եւ նոյն է ըստ թուոյ, անմասն է ըստ որում սեռ է. վասն զի սեռք անմարմինք են, ընդհանուր գոլով. իսկ անմարմինք անմասունք են: 38 Ապա զիա՞րդ կարաւոյ գոյ ի նոյն ժամանակի ընդունել զընդդիմակսն, այսինքն զբանականն եւ զանբանն, զմահականացուն եւ զանմահն: 39 Այլ թէպէտ եւ ասին գոլ տարբերութիւնք ի սեռում, ամենայն իրաւք եւ ըստ նոյնում ժամանակի գոն. քանզի ոչ գոյ մարթ այսաւր բանական իմանալ զկենդանին, եւ այգուն անբան: 40 Արդ, եթէ ոչ են տարբերութիւնք ի սեռան, ապա ուրեմն յոչերբէքէն յոչուրեքէն գոն, զոր երկրորդ առածն արգելու յոչերբէքէն յոչուրեքէն գոլ ինչ. եւ թէպէտ եւ ասես զջուր ի հրոյ լինել, սակայն յառաջագոյն գոյր հուրն. եթէ ասես ի ջրոյ լինել աւոյ, այլ սակայն յառաջագոյն գոյր ջուրն:

41 Արդ, յաղագս այսոցիկ պատասխանատրութիւն, եթէ է ինչ մէջ, որ ոչ յոչուրեքէն յոչերբէքէն է, եւ ոչ դարձեալ զգոլն ունի յինքեան, այլ ընդ մէջ երկաքանչիւրոց ծայրիցն է, որ զաւրութեամբ կոչի, որպէս մանուկն, որ զաւրութեամբ քերթող⁴ ասի: 42 Արդ, այսպիսիս ոչ ի գոյիցն է, վասն զի ոչ է եւ ոչ ասի, այլ եւ ոչ յոչերբէքէն յոչուրեքէն է, վասն զի զաւրութեամբ ունի զգոլ: 43 Արդ, այսպիսիս զերկոսեան զտարակուսանսն լուծանէ. քանզի է ասել՝ եթէ տարբերութիւնք ի

1 λήμμα
2 μηδαμή μηδαμώς
3 τραγέλαφον

4 γραμματικόν

սեռսն ոչ են ներգործութեամբ, այլ զաւրութեամբ. այս ինքն յորակութեան կարաւղ գոյ տեսանել զաւրութեամբ զՂերմ եւ զցուրտ. քանզի իք Ղերմ եւ ցուրտ, այս ինքն ոմն ցուրտ զաւրութեամբ եւ Ղերմ, զոր եւ ի վերայ ձիթոյ է տեսանել. քանզի ձէթ զաւրութեամբ ունի յինքեան զՂերմ եւ զցուրտ, եւ որչափ ինչ ժամանակս ինքն ըստ ինքեան մնայ՝ զաւրութեամբ ասի ունել զՂերմ եւ զցուրտ. իսկ եթէ խառնի յինչ, փոփոխէ զմին ի միւսն: 44 Քանզի եթէ խառնի ընդ վարդում, փոփոխէ զՂերմ ի ցուրտ. իսկ եթէ ընդ կոչեցելումն զնդածաղիկ¹ խառնեսցի, յայնժամ ի Ղերմն փոխէ զցուրտն:

45 Արդ այսոցիկ այսպէս ելոց, ցուցանի, թէ սեռ զաւրութեամբ ունի զտարբերութիւն յինքեան. թէպէտ եւ հակակայք միմեանց գոն տարբերութիւնքն:

46 Քանզի գոյնն սեռ գոլով, զաւրութեամբ ունի յինքեան զընդդիմակսն, այս ինքն զսեռն եւ զսպիտակն, իսկ որակութիւն՝ զՂերմ եւ զցուրտ, իսկ կենդանին՝ զբանականն եւ զանբանն: 47 Աստուստ ունիմք, եթէ կարաւղ գոն ընդդիմակք միմեանց գոլով տարբերութիւնք՝ զաւրութեամբ տեսանիլ ի սեռսն. որով եւ երկրորդ տարակուսումն լուծանի. զի թէ տարբերութիւնքն ի սեռսն զաւրութեամբ գոն, յայտ է, թէ ոչ են յոչերբէքէն յոչուրբէքէն:

1 Ընդ այսոսիկ հանդերձ Աստուծով առաջիկայ տեսութիւն
ՊՐԱԿՔ ԻԵ

2 Զճեմականացն զկարծիս անարգել պղատոնականքն կամելով, փորձին ներգործութեամբ ցուցանել զտարբերութիւնսն ի սեռն. քանզի զաւրութեամբ ասել խտրեն զտարբերութիւնսն ի սեռսն, ասելով՝

սելով՝ եթէ զաւրութեամբ ասեմք զտարբերութիւնս ի սեռն, իսկ ներգործութեամբ ի տեսակսն, եղիցին տեսակքն լաւագոյն քան զսեռսն, վասն զի լաւագոյն է ներգործութեամբն, քան զաւրութեամբ: 3 Երկրորդ, վասն զի եւ ոչ ընդդիմակք միմեանց են այսոքիկ, վասն զի ոչ ունին ընդդիմութիւն բանականն եւ անբանն, քանզի գոյացութիւնք են: 4 Իսկ գոյացութիւնք ոչ ունին ընդդիմակս. վասն զի ոչ են յենթակայում, այլ ենթակայք, ²որպէս հանդերձեալ եմք ուսանել ի «Ստորագութիւնսն» Արիստոտէլի: 5 Ապա եթէ էին այսոքիկ ընդդիմակք միմեանց, ոչ կարէին ներգործութեամբ ի միում իմիք տեսանիլ. իսկ այժմ բանականն եւ անբանն ի մարդում տեսանին, եւ ոչ ապականեն զմիմեանս, որոց պարտ էր ապականել, եւ ոչ փոփոխին ի միմեանց, որոց պարտ էր փոփոխիլ ըստ աւրինաց ընդդիմութեան: 6 Երրորդ առ այսոքիկք, թէ եւ էին ընդդիմակք միմեանց այսոքիկ, պարտ էր ի միում եւ ի նոյնում տեսանիլ³. քանզի ասա ցուրտն եւ Ղերմն, սպիտակն եւ սեռն, եւ բոլոր տեսակք յանտեսակում նիւթում⁴ տեսանին: 7 Չորրորդ, եւ զի ընդդիմակք միմեանց ի միում եւ ի նոյնում տեսանին, որպէս եւ ի նոյն իսկ ի զգայութեանց յայտնի գոյ. քանզի համայն տեսութիւն զընդդիմակացն բուռն հարկանէ զսեւէն եւ զսպիտակէն. եւ հաւաստի գոյ բանդ՝ յորոշելոյ զսեւն ի սպիտակէն, որպէս ի քարտիսի զգիրն:

8 Բայց է յազագս ճեմականացն այսպէս պատասխանատրել, եւ առ առաջինն այսպէս ասել. եթէ մի, որ ինչ արիստոտելականացն թուի, զնոյն ի կործանումն նո-

1 χαμαιόλου

2 Յուս. չիֆորպէս ... Արիստոտէլի:
3 Յուս. շարունակում է՝ ὡσπερ ἐν τῇ ἀνειδέῳ ἴλλη - որպէս անտեսակում նիւթում
4 Հայ. աղնատուած է՝ յամենայն տեսակում նիւթում. ուղղում եմք ըստ յուս. ἐν τῇ ἀνειδέῳ ἴλλη - յանտեսակում նիւթում

ցին առնուք. ո՛վ պղատոնականք. քանզի նոցա թուին տեսակքն լաւագոյնք, քան զսեռսն. քանզի թէ ասիցէ ոք, եթէ մարդ բանական է, ոչ պարտիմք մեղադրել եթէ զի՞ ասաց զմարդ բանական, այլ ցուցանել, եթէ էր կարողութիւն, ի ձեռն այլոց ապացուցից, եթէ ոչ է բանական: 9 Արդ, եթէ թուի արիստոտէլականաց վասն տեսակացն, եթէ լաւագոյնք են, քան զսեռսն, եւ անհատքն՝ քան զտեսական, որպէս եւ Արիստոտէլ ցուցանէ ի «Ստորագութիւնսն», ոչ է պարտ ի նոցա կարծեացն անպատեհացուցանել եւ ասել, թէ վասն է՞ր տեսակք լաւագոյն են, քան զսեռսն. վասն զի այնպէս դիտէ եւ ճշմարտութիւնն:

10 Իսկ առ երկրորդն ասեմք, թէ եւ գոյեղ զանազանութիւնքն ոչ են ընդդիմակք միմեանց՝ բանականն եւ անբանն. այլ սակայն պատահականք տարբերութիւնքն ընդդիմակք միմեանց են՝ ջերմն եւ ցուրտն, սպիտակն եւ սեւան, որք ոչ կարաւղ գոն համայն ի միում տեսանիլ: 11 Արդ, եթէ խոստովանաբար այսոքիկ համայն ի միում մասին ի միումն ժամանակի ոչ կարաւղք գոն գոյ, ապա եւ ոչ այնոքիկ, յաղագս որոյ յերկբայս եմք, այս ինքն բանական եւ անբանն՝ կարաւղք գոն ներգործութեամբ տեսանիլ համայն ի միում. վասն զի եւ զերկբայն ի խոստովանեցելոյն ներանիւթել բնաւորեցաք:

12 Իսկ առ երրորդն ասասցուք, որ ասացէք՝ եթէ ընդդիմակքն յանտեսակում նիւթում¹ տեսանին: 13 Արդ, թէպէտ եւ տեսանին ի նմա, ոչ ներգործութեամբ, այլ զաւրութեամբ, քանզի զի՞նչ ասեմք յաղագս նիւթոյն, որ ի Սոկրատումն է, եւ յաղագս այնորիկ, որ յամենայնումն է. քանզի որ ի Սոկրատումն է՝ նա ոչ երբէք է ներգործութեամբ ձիոյ եւ շան, բայց զաւրութեամբ է ձիոյ եւ շան, իսկ ներգործու-

թեամբ Սոկրատայ: 14 Իսկ եթէ զայն նիւթ ասէք, որ յամենայնումն է, անհնարին է նմա ներգործութեամբ զՍոկրատէս ունել եւ զձին², բայց զաւրութեամբ:

15 Իսկ առ չորրորդն ասեմք, թէ ոչ է պարտ տարակուսանաւք զտարակուսանս լուծանել. քանզի եթէ տարակուսեմք, եթէ զի՞ է բանական մարդ, ոչ պարտիք ասել, թէ վասն զի աստուածայինքն բանականք են. քանզի տարակուսի եւ ձեզ ինքեանց, թէ վասն զի ի տեսութեանց ընդդիմակքն ներգործութեամբ, քանզի ի վերայ անմարմնոցն ասին ընդդիմակքն ազգամբ տեսանիլ, իսկ ի վերայ մարմնոցն ոչ երբէք: 16 Եւ տարակուսեցաւ ձեզ, եթէ զիա՞րդ համայն բուռն հարկանէ զընդդիմակացն տեսութիւն՝ մարմին գոյով: 17 Զայս տարակուսանս ի լուծումն երկբայեցելոցն ոչ է պարտ ձեզ ասել: 18 Արդ, եթէ զիա՞րդ տեսութիւն զընդդիմակացն համայն բուռն հարկանէ՝ ի մեծամեծս իրողութեանցն ուսցուք³:

19 Զորս եւ որոշելով, այս ինքն սահմանելով ասեմ, տարբերութիւն է՝ որով առաւելու տեսակն քան զսեռն: 20 Սահմանս այս ոչ է Պորփիրի, այլ ձեմականացն. վասն որոյ ասաց, թէ ասեմ, այլ ոչ թէ ասեմ: 21 Քանզի մարդն քան զկենդանին աւելի ունի գրանական: 22 Աւելիդ ասելով յայտ արար, թէ ներգործութեամբ ունի տեսակն զտարբերութիւն, իսկ սեռն զաւրութեամբ: 23 Զի կենդանին եւ ոչ մի ինչ ոչ է յայսցանէ: 24 Այս ինքն, եթէ սեռ ոչ երբէք ոչ ունի, այլ ունի. քանզի երկու բացասութիւնք, որպէս ունիմք ուսանել, մի ստորասութիւն առնէ: 25 Այսուիկ առակէ զերկուս ձեռնարկութիւնսն զայնոսիկ եւ ասէ, եթէ զաւրութեամբ ունի զդոսա, ապա թէ ոչ յոչերբէքէն յոչուրբէքէն տեսանին: 26 Եւ ոչ զամենայն զհակա-

1 Ուղղում ենք ըստ յուն. ἐν τῇ ἀνείδῳ ὕλη

2 κύνα

3 ἐν τελείαις πραγματείαις εἰσόµεθα

կայսն ունի: 27 Ասեն ոմանք, եթէ ոչ բար-
 ւոք ասաց զամենայն զհակակայսն. որպէս
 թէ յայտ արար, թէ զոմանս ընդունի:
 28 Ոչ բարւոք մեղադրեն իմաստասիրիս.
 վասն զի ցուցեալ է Արիստոտէլի զայսպի-
 սիս զանտարորոշս նախադասութիւնս
 հանգիտակարողս գոյ մասնականաց:

29 Այլ, որպէս արժանի առնեն, զաւ-
 րուքեամբ գամենայն ունի: 30 Ոմանք աս-
 տուստ ձեռնարկեն ի համաձայնութիւն ա-
 ծել զԱրիստոտէլ եւ զՊղատոն. զի Պղատոն
 ներգործութեամբ ասէ ունել զտարբերու-
 թիւն, եւ Արիստոտէլ՝ զաւրութեամբ: 31 Է
 ինչ զաւրութեամբ առաջին, եւ է ինչ երկ-
 րորդ զաւրութեամբ, զոր եւ միջակ ասեմք.
 եւ է ինչ առաջին ներգործութեամբ, եւ է
 ինչ առ երկրորդ: 32 Առաջին զաւրու-
 թեամբ ասեմք զմանուկն՝ որ քերթողն,
 այս ինքն ըստ ճահաւորութեան. զի եթէ
 ոչ պակասէ ժամանակն, կարաւ զոյ զա-
 մենայն մակացութիւնս ընդունել: 33 Երկ-
 րորդ զաւրութեամբ ասեմք զայն, որ իրաց
 ինչ ունակութիւն ունելով՝ ոչ ներգործէ:
 34 Իսկ առաջին ներգործութեամբ ասեմք,
 որ քերթելն¹ կարաւ զոյ՝ ննջիցէ եւ ոչ
 կամիցի քերթել: 35 Իսկ երկրորդ ներգոր-
 ծութեամբ ասեմք զքերթողն, որ ներգոր-
 ծութեամբ ուսուցանէ, այս ինքն ըստ
 պատրաստութեան: 36 Արդ, տե՛ս զի նոյն
 է երկրորդ զաւրութեամբ եւ առաջին ներ-
 գործութեամբ. քանզի երկրորդ զաւրու-
 թեամբ ասեմք զքերթաւղն ունակութիւն
 ունել, բայց ներգործել ոչ երբէք:
 37 Ձնոյն եւ առաջին ներգործութեամբն
 ունի: 38 Արդ, եթէ նոյն են երկրորդ զաւ-
 րութեամբն եւ առաջին ներգործութեամբ,
 ձայնակից գոն Արիստոտէլ եւ Պղատոն.
 քանզի ոմն ասէ զերկրորդ զաւրութեամբն,
 եւ ոմն՝ զառաջին ներգործութեամբն, եւ
 երկրորդն ի նոյն ժողովին:

39 Իսկ ոմանք բարւոք ընդդիմանա-
 լով ասեն, եթէ նոյն է եւ ունակութեամբ
 ունել զքերթելն եւ ներգործել քերթողին.
 զի ի բազում իրս զնոյն ցուցանէ Արիստո-
 տէլ ասելով, եթէ որ ունակութեամբ ոք ու-
 նի՝ եւ անմիջաբար գործէ. քանզի ոչ եթէ
 այլ ասեմ զայն, որ ունակութեամբ քեր-
 թող, եւ այլ՝ որ ներգործութեամբ, այլ նոյն
 ինքն է: 40 Ապա եթէ այսոքիկ այսպէս
 գոն, այլ է ներգործութեամբ եւ այլ զաւ-
 րութեամբ. քանզի զաւրութեամբ ասէ Ա-
 րիստոտէլ զայն, որ ոչ եւ ունակութեամբ.
 վասն զի նա նոյնժամայն ներգործէ:
 41 Իսկ Պղատոն զունակութեամբն ներ-
 գործութեամբ ասէ: 42 Եւ պարտ է գիտել,
 եթէ զաւրութեամբն, յորժամ ունակու-
 թեամբ եղանի, ոչ նոյն մնայ. քանզի մա-
 նուկն, որ զաւրութեամբ քերթաւղն է, յոր-
 ժամ ունակութեամբ սկիզբն առնէ ներգոր-
 ծել, որ նոյն մնայ:

1 Ընդ այսոսիկ հանդերձ Աստուծով ա-
 նաջիկայ տեսութիւն

ՊՐԱԿՔ ԻԶ

2 Աստուստ այլազգաբար սահմանե-
 ցելոյ զտարբերութիւն Պորփիւրի: 3 Քան-
 զի ասէ, եթէ տարբերութիւն է, որ ըստ յո-
 լովից եւ տարբերեցելոց տեսակաւ ի նե-
 րում որպիսիինչէն ստորոգեալ: 4 Եւ վասն
 զի յաղագս ներում որպիսիինչէն կամի
 ուսուցանել, զայլս՝ որպէս այն ինչ ծանու-
 ցեալս՝ ի բաց թողեալս, բե՛ր ըստ սովորու-
 թեան, որ ի թողեալսն գոն տարակուսանք,
 զայնոսիկ լուծցուք: 5 Քանզի ասեն ո-
 մանք, եթէ ոչ բարիոք ասաց ըստ յոլովից,
 քանզի եթէ ըստ յոլովից բերի՝ հասարա-
 կութիւն նշանակէ եւ ոչ տարբերութիւն.
 արդ ամենայն իրաւք յոռեպէս բացատ-
 րեալ զոյ սահմանդ:

6 Առ որս պարտ է այսպէս պատաս-
 խանատրել. եթէ տարբերութեանցն ոմանք
 են հանրականք, եւ ոմանք մասնականք.

1 γραμματικέοθαι

եւ մասնականք, որպէս յորժամ ասեմք զկնտութիւն ի Սոկրատոս։ Իսկ հանրական, որպէս յորժամ ասեմք զբանականն ի մարդոս եւ ի հրեշտակոս։ 7 Արդ, յադագս մասնականացն եւ ոչ մի ինչ բան յառ իմաստասիրացն, բայց յադագս հանրականացն. արդ սահմանէ Պորփիրիոս՝ ոչ զմասնականն, այլ զհանուրն. եւ վասն զի ընդհանուր է, վասն այսորիկ ըստ յոլովից բերի. վասն որոյ եւ ոչ որպէս տարբերութիւն ըստ յոլովից ստորոգի, այլ որպէս ընդհանուր. զի թէ որպէս տարբերութիւն, պարտ էր ապա եւ ամենայն տարբերութեան ըստ յոլովից ստորոգի. քանզի մասնականն Սոկրատոս միայն ստորոգի։ 8 Եւ յայտ է, թէ ոչ որպէս տարբերութիւն ըստ յոլովից ստորոգի, այլ որպէս ընդհանուր։

9 Դարձեալ տարակուսին եւ ասեն, եթէ նուազ է բացատրեալ սահմանդ. քանզի ոչ բարւոք ասաց ըստ յոլովից եւ տարբերեցելոց տեսակաւ, քանզի ստորոգի ոչ միայն տարբերեցելոց տեսակաւ, այլ եւ թուով։ 10 Քանզի մտաց եւ հանճարոյ ընդունակն ոչ գոյ ի տարբերեցելոցն տեսակաւ, այլ տարբերութեանցն թուով։ 11 Քանզի եւ ոչ վերնագոյն գոյացութեան է մտաց եւ հանճարոյ ընդունակն գոյ, վասն զի ոչ ունի պէտս. եւ ոչ դարձեալ յոռագունին¹, վասն զի ոչ գոյ կարաւ։ 12 Բարւոք տարակուսեցին։ 13 Բայց գտանի ի բազում գիրս «Ներածութեանց» Պորփիրի եւ շաղկապ, որ ունի այսպէս. եթէ տարբերութիւնն է, որ ըստ յոլովից եւ տարբերեցելոց եւ տեսակաւ է, վասն զի եւ շաղկապդ յայտ արար, թէ եւ թուով։

14 Արդ, եկեսցուք ի պատմութիւն² իմաստասիրիս, որ ի ձեռն երկու ձեռնարկութեանց ցուցանէ, եթէ ի ներում որպիսիինչէին ստորոգի տարբերութիւն։ 15 Ու

րոց առաջինն այսպէս է. ի հարցանելն մերում, թէ որպիսի³ ինչ մարդ, կամ ձի, կամ արծուի, ոչ պատասխանէ՝ կենդանի, այլ այսպիսի ինչ կենդանի, բանական կամ անբան։ 16 Ապա ուրեմն ի հարցմանէ պատասխանին, իսկ ի պատասխանոյն ստորոգութիւն յայտնի։ 17 Իսկ երկրորդն է այսպիսի ինչ. ամենայն իր ի նիւթոյ եւ ի տեսակէ բաղկանայ, կամ ի համեմատութենէ նոցին։ 18 Իսկ համեմատի նիւթոյ սեռ, իսկ տեսակի, ³այս ինքն կերպարանի, տարբերութիւն։ 19 Արդ, զոր աւրինակ նիւթ ի բազումս տարածեալ գոյ, նոյնաւրինակ սեռ. եւ զոր աւրինակ ի վերայ նիւթոյ կերպարանք գոլով անհատեն զնիւթն եւ յանհունս զնա բաժանեն, ըստ նմին աւրինակի տարբերութիւնք ի վերայ սեռի գոլով՝ անհատեն զնա։ 20 Արդ, եթէ համեմատի տարբերութիւն կերպարանի, իսկ կերպարան՝ որպիսիինչէ է, որպէս ասէ Արիստոտէլ ի «Ստորոգութիւնսն», յայտ է, թէ եւ տարբերութիւն որակ է, ⁴այս ինքն որպիսութիւն։

21 Բայց եմթագրեմ զնա եւ այսպէս։ 22 Պարտ է գիտել, եթէ ի վերայ հինգ բարբառոցդ այդոցիկ երբեմն սահման ասէ Պորփիրիոս, եւ երբեմն ստորագրութիւն, ուսուցանելով զմեզ, թէ ե՛լ ենթագրութիւն կարաւդ են ասիլ ե՛լ սահման. ենթագրութիւն՝ որպէս առ իրս, իսկ սահման՝ որպէս առ կալմունս իրաց, զոր առ միմեանս ունին։

1 Ընդ այսուսիկ հանդերձ Աստուծով առաջիկայ տեսութիւն
ՊՐԱԿՔ ԻԷ

2 Աստանաւր դարձեալ այլազգաբար բացատրէ մեզ զենթագրութիւն տարբերութեան, ասելով, եթէ տարբերութիւնն է

1 καλῶς δὲ οὔτοι λέγουσιν
2 τὴν ἐξήγησιν

3 Յուճ. չի՞բ այս ինքն կերպարանի
4 Յուճ. չի՞բ այս ինքն որպիսութիւն

անջատելն բնաւորեալ զընդ նոյն սեռիւ: 3 Եւ պարտ է յաւելուլ, եթէ գոյեղաբար, եւ բարւոք է բացատրութիւն սահմանիս. քանզի յայտնէ, եթէ տարբերութիւն է, որ անջատէ զայնս, որոք ընդ նովին սեռիւ են՝ բանականն եւ անբանն, մահկանացուն եւ անմահն: 4 Եւ այլազգաբար դարձեալ բացատրէ, եթէ տարբերութիւն է, որով իւրիք տարբեր է իւրաքանչիւր: 5 Աստուստ խնդրեն ոմանք ասելով, եթէ ընդէ՞ր գտարբերութիւն միայն քառակի ենթագրեաց: 6 Յաղագս որոց ասեմք, եթէ ոչ մի ոք ի սահմանաց ընդ թախանձութեան մեղադրանաւք անկանի, քանզի ամենեքեան կարեւոր բացատրեցան:

7 Արդ, առաջինն պարունակէ զբաժանականսն եւ զբաղկացականսն տարբերութիւնս. քանզի ասէ, թէ որով առաւելու տեսակն, քան զսեռն: 8 Եւ արդ, ի յայտնելն՝ թէ գոն ի սեռում տարբերութիւնք, զբաժանականսն նշանակեաց. քանզի ի սեռում տարբերութիւնք բաժանականք են: 9 Իսկ ի յայտնելն՝ ի տեսակում գտարբերութիւնս, զբաղկացականսն նշանակեաց. քանզի բաղկացականք տեսակացն են: 10 Այս առաջին ենթագրութիւն տարբերութեան, որ բաժանեցան երկրորդ եւ երրորդ:

11 Երկրորդ զբաղկացականսն յայտնելով, քանզի յասելն ըստ յոյժից եւ տարբերեցելոց տեսակաւ, զբաղկացականսն յայտնեաց. քանզի որ ի տեսական ստորոգին տարբերութիւնք՝ բաղկացականք են: 12 Իսկ երրորդ զբաժանականսն պարունակէ. քանզի ասէ, եթէ տարբերութիւն է անջատելն բնաւորեալ զայնս, որք ընդ նոյն սեռիւ են գոյեղաբար: 13 Եւ յայտ է, թէ անջատելն ասել՝ զբաժանականսն նշանակեաց:

14 Իսկ չորրորդ զընդհանրական եւ զպարզ տարբերութիւն յայտնէ. եւ մի ոք կարծեսցէ, եթէ որովհետեւ ի վերջէ բա-

ցատրեցաւ եւ յիւրմէ ներգործութենէ նմանաբար ընկալաւ զանուանակոչութիւն, նուազագոյն ինչ է նախասացելոցն, այլ լաւագոյն է, քան զայլ երիսն եւս, որպէս իւր Պորփիրի թուի, քանզի զառաջին ենթագրութիւն¹ ոչ ընդունի. քանզի ասէ, թէ որպէս ասեմ: 15 Իսկ զերկրորդն յուր գոյ մեք ցուցաք, թէպէտ եւ զեւն շաղկապ առնու. քանզի երբեմն տարբերեցելոց տեսակաւ, եւ երբեմն թուով, որ է անվայելուչ սահմանի. քանզի ոչ վայել է սահմանի երբեմն այսպէս եւ երբեմն այնպէս: 16 Իսկ երրորդ նուազ գոյ, քանզի ասացաք, եթէ պարտ է յաւելուլ գոյեղաբարն: 17 Իսկ չորրորդն յայսպիսեաց ինչ որ ունի, այլ զամենայն տարբերութիւն յայտնէ:

18 Արդ, ասացեալք զիւրաքանչիւր ուրուք ի չորիցս սահմանացս զիւրն, յայլ խնդիր զբանն ուղղեսցուք. քանզի խնդրի, թէ վասն է՞ր յաւել զգոյեղն յերրորդ սահմանն: 19 Բայց ինքն իսկ Պորփիրիոս ասէ, եթէ զգոյեղն պարտ է յաւելուլ, զի զգոյեղագոյնն յայտնեսցուք. վասն զի եւ պատահականք տարբերութիւնք տարանջատեն զընդ նոյն սեռիւ քանզի նաւելն տարանջատէ զմարդ յայլոց կենդանեաց, եւ ծիծաղելն եւ լայնեղունկն. վասն զի այսոքիկ ի վերայ մարդոյ ասին:

20 Աստուստ դարձեալ երկու² տարակուսանս վերաբուսանին մեզ, այս ինքն խնդիրս, որոց առաջինն այսպիսի ինչ է խնդիրս. ասեն, թէ զիւրոք մարդոյ միայն գոյ նաւելն, քանզի եւ այլ կենդանիքն լողել զիտեն: 21 Առ այսոսիկ ասեմք այսպէս. ոչ ասէ Պորփիրիոս զնաւելն լողել, այլ զհիւսնելն նաւել. քանզի հիւսնելն մարդում միայն գոյ:

22 Աստուստ դարձեալ երկրորդ տարակուսութիւն³ զմեզ ընդունի, քանզի ա-

1 όρισμόν

2 Հայ. երկրորդ. ուղղում ենք ըստ յուն. δύο-երկու

3 δριμύτερα άπορία

սեն. եթէ զնաւելն հիւսնել ասէ Պորփիլ-
րիոս, վասն է՞ր զհիւսնելն պատահումն ա-
սէ եւ ոչ գոյեղ. եւ զի հիւսնելն գոյացու-
թիւն մարդոյ է, սահմանք մարդոյն յայտ-
նեն, քանզի ասեմք՝ կենդանի բանաւոր,
մահկանացու, մտաց եւ մակացութեան ըն-
դունակ. իսկ կարելն հիւսնել մասն է ըն-
դունականին, քանզի ամենայն մարդ ըն-
դունակ է հիւսնութեան: 23 Իսկ եթէ մասն
է ընդունականին՝ մակացութիւն ոմն է, եւ
յայտ է, թէ գոյացութիւն. քանզի մասունք
գոյացութեան գոյացութիւն են, որպէս ա-
սէ Արիստոտէլ ի «Ստորոգութիւնս»:
24 Արդ, զիս՞րդ զնաւելն պատահումն ա-
սէ Պորփիլրիոս:

25 Առ այսոսիկ այսպէս ասել պարտ
է. եթէ է ինչ առաջին, եւ է ինչ երկրորդ:
26 Առաջին՝ մարդ, երկրորդ՝ այսպիսի ինչ
մարդ, որդոն՝ քերթաւղ, կամ կարճ, կամ
երկայն: 27 Եւ է ինչ դարձեալ որ ըստ ին-
քեան է, եւ է որ ըստ պատահման: 28 Եւ
ըստ ինքեան՝ կենդանին, իսկ ըստ պա-
տահման՝ սպիտակն: 29 Արդ, եթէ այսո-
քիկ այսպէս, եթէ մարդ առաջին է, իսկ
քերթաւղն գոյ՝ երկրորդ, արդ, ուշ ունելով
երկրորդին, Պորփիլրիոս ասէ մակագոյեղս
զայսպիսիս, որպէս երկրորդ ինչ մարդոյն.
քանզի զերկրորդ մարդ մարդոյն եւ կամ
կենդանոյն մակագոյեղս կոչեն: 30 Եւ
պարտ է զիտել, եթէ սահմանս այս ոչ
նշանակէ գաննմանասեռսն¹, քանզի յա-
սելն զընդ նոյն սեռիւ, զայս նշանակեաց:

31 Արդ երկուս եւս տարակուսանս
տարակուսեալ՝ դադարեցուցուք զյաղագս
այսոցիկ զխնդիրն: 32 Նախ եթէ մինչ փա-
ղանունքն տան անուան եւ իրի հաղոր-
դութիւն, եւ ամենայն ոք ասէ փաղանու-
նաբար ստորոգիլ զտարբերութիւնս տեսա-
կացն, զի՞ ոչ տան տեսակացն եւ անուան
եւ իրի հաղորդութիւն, այլ իրի միայն.

²քանզի ոչ ասեմք զանբանութիւն բանա-
կան, եւ զմահկանացուն անմահութիւն:
33 Առ այսոսիկ ասեմ, եթէ որ փաղանու-
նաբար ստորոգին՝ երկակի են. են որք ա-
նուան եւ իրի տան, որպէս կենդանին
մարդոյն. եւ են որք իրի միայն, որպէս
տարբերութիւն: 34 Ապա ուրեմն այլ է
տարբերութիւն եւ այլ՝ տեսակ: 35 Քանզի
եւ որ անջատին՝ այլ է այնմ, որ անջատեն
զնա. արդ, որ անջատեն՝ տարբերութիւն է,
իսկ որ անջատին՝ տեսակք: 36 Ապա ու-
րեմն ամենայն իրաւք այլ է տարբերու-
թիւն եւ այլ՝ տեսակ:

37 Բայց ենթագրեմ զայսպիսի տարբե-
րութիւն եւ այսպէս. տարբերութիւն է ան-
ջատելն բնաւորեալ զընդ նոյն սեռիւ:
38 Զայս սահմանի պակասութիւն յետ սա-
կաւի միոյ բացատրէ ասելով. «Եւ առար-
տագործելով զյաղագս տարբերութեան մի
զվայրապար դէպն ասել անջատողացն
զընդ նովին սեռիւ գոյ տարբերութիւն»:
39 Որոց շարադրութիւն նշանակէ զայս,
թէ ոչ զվայրապար անջատողն զընդ նո-
վին սեռիւ պարտ է ասել տարբերութիւն,
այլ զգոյեղաբարն անջատող, զոր Պորփիլ-
րիոս որ ի գոյն բաղարկոցէ ասաց. քանզի
ասելովն, որ ի գոյն բաղարկոցէ՝ զգոյեղ
տարբերութիւն նշանակեաց: 40 Եւ զգիմ-
չերն գոյ: 41 Այս արիստոտէլական առբա-
յութիւն ի վերայ գոյեղիցն ասացեալ:
42 Եւ որ իրին է մասն: 43 Բարւոք ասէ.
զի բանականն մասն է մարդոյ, քանզի բա-
ղարկոցի ի սահման մարդոյ: 44 Քանզի ոչ
եթէ բնաւորեալն նաւել՝ տարբերութիւն է
մարդոյ, թէպէտ եւ յատուկ մարդոյ է:
45 Այս ինքն, թէ պարտ է առադրել ի
սահմանդ զգոյեղաբարն. քանզի թէ ոչ ա-
ռադրեմք զգոյեղաբարն, գտանեմք պա-

1 ἀνομοιογενείς ἀλλὰ καὶ τὰς ὁμοιογενείς

2 οὐτε γάρ τὴν λογικότητα λογικὸν φαιμέν, οὐτε τὴν
θνητότητα θνητόν. ըստ այդմ՝ հայ. պէտք է լինէր՝
բանգի ոչ ասեմք գրանաւորութիւն բանական եւ
զմահկանացութիւն մահկանացու:

ըունակեալ եւ զյատուկն, քանզի եւ յատուկն մարդոյ որոշէ զնա ի ձիոյն, եւ յատուկն ձիոյն՝ յայլոց կենդանեացն: 46 Իսկ այսպիսիք ոչ են նշանականք գոյացութեան, ոչ մարդոյն եւ ոչ այլոց կենդանեաց:

ՅԱՂԱԳՍ ՅԱՏԿԻ

1 ՊՐԱԿԻ ԻԸ

2 Զմիահամուռ փոփոխմունս ոչ միայն յիրս, այլ ի ձայնս սխալ գոլ ծանուցեալ, Պորփիւրիոս չուել ի պատահմունս կոյս հեղգացաւ. քանզի պատահմունքն մակագոյեղ գոլով, միահամուռ ի գոյեղից անմիջակաբար ի մակագոյեղս գոլ ոչ էր կարողութիւն: 3 Յիրաւի ուրեմն ապա ի յատուկն կոյս խաղաց. վասն զի որչափ ինչ է մակագոյեղսն հասեալ է, գոյեղ գոյ յատուկն: 4 Այս առաջին պատճառ է, թէ վասն է՞ր¹ [յետ տարբերութեան] զյատկէ բուռն եհար Պորփիւրիոս:

5 Երկրորդն այսպիսի ինչ է. յատուկն ի միջի տարբերութեան եւ պատահման տեսանի, վասն զի երբեմն գոյեղաբար առնու, եւ երբեմն մակագոյեղաբար: 6 Գոյեղաբար, յորժամ ասես՝ մտաց եւ հանճարոյ ընդունակ, որ է յատուկ մարդոյ. իսկ մակագոյեղաբար առնու՝ որպէս յորժամ ասես զծիծաղականն յատուկ գոլ մարդոյ, քանզի պատահումն է: 7 Եւ արդ, եթէ այսոքիկ այսպէս գոն, յիրաւի ուրեմն ապա նախադասեաց զյատուկն պատահման:

8 Երրորդ պատճառն այսպիսի ինչ է. պարտ էր յատկին յառաջ քան զչորս² բարբառն նախադասել: 9 Քանզի եթէ ի ձեռն ենթագրութեանց ուսուցանէ զսեռս, եւ զտեսակ, եւ զտարբերութիւն, իսկ ենթագրութիւնք ի հակադարձից յատկիցն ամենայն իրաւք առնուն, ապա ուրեմն

պարտ էր նախ եւ առաջին յաղագս յատկիցն բուռն հարկանել, եւ ապա յաղագս սեռի ուսուցանել. այլ վասն զի նոքա յատկեղք են, վասն այսորիկ թոյլ ետ նոցա նախադասիլ յաղագս պատուականութեան, իսկ մակագոյեղիցն՝ վասն զի հանգիտապատիւք են՝ եւ ոչ երբէք:

10 Արդ, ուսեալք զնախադասութեանցն բան, բե՛ր այսուհետեւ ի նորին վարդապետութիւն խաղասցուք: 11 Բայց նմանապէս եւ աստանաւր ըստ արիստոտէլականացն բացորոշութեանց զհոմանունութիւն տարրորոշեսցուք, եւ յաղագս որոյ նշանակութեան է մեզ բանն. եւ այսպէս ապա ի նորին վարդապետութիւն խաղասցուք:

12 Արդ ասի յատուկն քառակի. կամ ամենայնում տեսակում, որպէս երկոտանիմ գոլ. եւ կամ միայնում տեսակում, որպէս կնդութիւն. քանզի մարդում միայնում կնդութիւն. կամ ամենայնում եւ միայնում, բայց ոչ միշտ, որպէս ալեւորելն. քանզի ամենայնում մարդում եւ միայնում է ալեւորելն ոչ պակասելով ժամանակին. կամ ամենայնում եւ միայնում եւ միշտ, որպէս ծիծաղականն. քանզի միայնում մարդում, եւ ամենայնում յատուկ գոյ եւ միշտ:

13 Բայց ասացաք ամենայնում տեսակում գոլ զերկոտանին՝ առ որոշումն աննմանասեռից³ զի մի առցէ երկոտանին զՍոկրատէս եւ զՊլատոն միայն, այլ եւ զհաս:

14 Յերկրորդումն ասացաք միայնում, վասն հոմասեռիցն⁴. քանզի մարդում միայնում է կունտն գոլ՝ յայլոց կենդանեաց: 15 Իսկ այլքն ամենայն յայտնիք են, քանզի ամենայնում մարդում եւ միայնում է ալեւորելն եւ ծիծաղականն. այլ ոմն ոչ միշտ՝ որպէս այլեւորելն, իսկ

1 μετά τὴν διαφορᾶν...
2 πέντε

3 Հայ. հոմասեռից. ուղղում ենք ըստ յուն. ἀνομοιογενεῖς-աննմանասեռից
4 Հայ. աննման սեռիցն. ուղղում ենք ըստ յուն. διὰ τὰ δμοιογενῆ-հոմասեռիցն

միևսն միշտ՝ որպէս ծիծաղականն: 16 Եւ տե՛ս, զիա՞րդ ի նուագագունէն ի յոյժ յատուկն խաղաց կարգաւորութիւնս: 17 Քանզի ամենայնում տեսակում գոյ յատուկ գրէ թէ ոչ էր յատուկ, քանզի հաւասարութիւն իմն առնէ այսպիսի յատուկ վասն այսորիկ որպէս զնուագ ինչ զնա նախադասեաց:

18 Իսկ երկրորդ յատուկ ասացաւ՝ որ միայնում գոյր, թէպէտ եւ ոչ ամենայնում: 19 Եւ յերաւի. զի այս յայտնագոյն քան զառաջինն, քանզի ունի զմիայնն, որ պատշաճ է յատկի: 20 Իսկ երրորդն՝ երկրորդին յայտնագոյն, վասն զի զերկոսեան ունի. եւ զամենայնում, եւ զմիայնում: 21 Իսկ քառորդն երրորդին է յայտնագոյն, վասն զի ունի զմիշտն. քանզի ծիծաղականն միշտ գոյ մեզ:

22 Եւ արդ, յաղագս որո՞յ է բանս: 23 Ասեմք, եթէ յաղագս վերջնոյն. քանզի նա է՛ միշտ եւ միում տեսակում ստորագեալ. քանզի եւ այլք թէպէտ եւ են ընդհանրական եւ միշտ, որպէս երկոտանին գոյ, կամ ամենայնում եւ միայնում, այլ ոչ միշտ, որպէս արեւորելն. իսկ սա եւ ամենայնում եւ միայնում եւ միշտ: 24 Եւ այլագգ դարձեալ, առաջինքն ոչ հակադարձին, իսկ սա հակադարձի. քանզի որ ինչ մարդ՝ նա ծիծաղական, եւ որ ինչ ծիծաղական՝ նա եւ մարդ:

25 Արդ, եկեացուք եւ ի սորին վարդապետութիւն: 26 Ոմանք այսպէս սահմանեն զնա. «որ ամենայնում, եւ միայնում, եւ միշտ գոյ»: 27 Եւ կարի յոռապէս. վասն զի զոր պատմեցին վասն նորա, ի ձեռն նորին եւ սահմանեն: 28 Իսկ այլք այսպէս բացատրեն զնա. «յատուկ է՝ կամ գոյեղ, կամ պատահումն հակադարձեալ»: 29 Արդ, որ այսպէս սահմանեն, յերկուս սխալանս անկանին: 30 Նախ եւ առաջին,

եթէ ոչ երբէք գոյացութիւն ասեմք զյատուկն, այլ պատահումն. ապա ուրեմն յորժամ ասէաք զնմանէ, եթէ գոյացութիւն յայտնէ՝ մտաւք եւ հանճարոյ ընդունականան՝ դիւրակործանելի է, բայց պիտակաբար ասեմք զնմանէ գոյացութիւն նշանակել: 31 Երկրորդ, ոչ երբեք սահման ողջաբար ունելով՝ երբեմն զայս եւ երբեմն զայն յայտնէ, որպէս բացատրեալդ:

32 Բայց արդ է այսպէս բացատրել. յատուկ է՝ պատահումն հակադառնալով: 33 Եւ բարւոք բացատրեցաւ սահմանդ, քանզի թէ ոչ աւելի եւ նուագ ունելով սահմանդ՝ հանգէտ գոյ սահմանելոյն, իսկ հանգէտ հակադարձի. ապա ուրեմն որ ասեն՝ ամենայնում եւ միայնում գոյ յատուկ՝ հանգէտ է, վասն զի ոչ առաւելութիւն եւ ոչ նուագութիւն ունի. նուագութիւն ոչ ունի, վասն զի ամենայնում է. առաւելութիւն ոչ ունի, վասն զի միայնում է. իսկ հանգէտ գոյով հակադարձի, ապա ուրեմն՝ բարւոք գոյ բացատրեալ սահմանդ:

34 Զյատուկն բաժանեն քառակի: 35 Ոչ պահէ զկարգ բացատրութեան Պորփիրիոս. որպէս մեք ի տեսութեան, քանզի ասէ, եթէ «Զայն ասեմք յատուկ գոյ մարդոյ, ո՞ր միայնում ասի եւ ոչ ամենայնում, որպէս բժշկելն». քանզի բժշկելն միայնում մարդոյ գոյ, այլ ոչ ամենայնում: 36 Եւ դարձեալ զընդդէմն նորին յատուկ ասեմ, որ ամենայնում մարդոյ գոյ եւ ոչ միայնում, որպէս երկոտանին. քանզի ոչ մարդոյ միայնում, այլ՝ եւ այլ տեսակաց: 37 Քանզի թէպէտ եւ ոչ ծիծաղի՝ ծիծաղական ասի, ոչ ահա ծիծաղելովն, այլ բնաւորելովն: 38 Աստուտ ոմանք ասեն, թէ բնաւորեցաւ մարդ ծիծաղել, ապա գոյացութիւն մեր է ծիծաղականն, որպէս բանականն. քանզի թէպէտ եւ ոչ ծիծաղիմք, ասեն, այլ զաւրութեամբ ունիմք այսպիսի:

1 ἔστι καθολικὸν καὶ αἰεί...

39 Առ որս ասասցուք եւ ցուցցուք, թէ չէ գոյացուլիւն ծիծաղականն, այլ մակագոյեղ. եւ եթէ զիա՞րդ լինի ծիծաղականն, եւ աստուստ ցուցցուք, թէ ոչ է գոյեղ: 40 Նախ եւ առաջին ցուցանելի է, եթէ գոյեղքն կատարելականք գոն մեր, եւ որչափ ինչ աճեն՝ նոյնչափ եւ կատարելականք գոն: 41 Քանզի յոլովագոյնս բնաւորեալ է գոյացուլիւն մարդոյ: 42 Արդ, եթէ էր ծիծաղականն գոյեղ, պարտ էր նմա կատարողական լինել մեզ, արդ կատարողական ոչ գոյ, այլ եւ հրաժարական, քանզի ասէ, թէ «Եւ մի ծաղր յանդուզն»¹:

43 Երկրորդ, ոչ երբէք ընդդիմակքն նորին իրի բաղկացականք գոն. որգոն՝ մահկանացուն եւ անմահն, բանականն եւ անբանն: 44 Արդ, եթէ էր ծիծաղականն գոյեղ ի մեզ բաղկացական, ապա եւ լալականն, վասն զի եւ նա միայնում մարդոյ գոյ: 45 Արդ, գոյեղ ասասցի եւ նա՝ որպէս ծիծաղականն, վասն զի որպէս մին ունի եւ է ի հակակայիցն, նոյնպէս եւ միւսն եւս: 46 Բայց անկարելի է երկուցն ընդդիմակացն բաղկացականս գոյ մեզ:

47 Այլ թերեւս ասիցէք, թէ ոչ են այսոքիկ ընդդիմակք միմեանց, քանզի գոյացուլիւնք են. իսկ դուք՝ որպէս զի խոստովանաբար մակագոյեղք են՝ այսպէ՞ս ներանիւթեցէք: 48 Առ որս ասեմք, թէպէտ եւ ոչ են ընդդիմակք, սակայն անկար է երկոցունց բաղկացականս գոյ. քանզի ահա բանականն եւ անբանն ընդդիմաբաժանեալք են, սակայն բանականն բաղկացական է մեր, եւ այն զի անբանն եւս ունիմք շունչ². իսկ ծիծաղականն եւ լալականն ընդդիմակք միմեանց են. վասն զի եւ փոփոխին ի միմեանս. արդ, եթէ այսոքիկ այսպէս, յայտնի է, թէ ծիծաղականն ի մեզ ոչ է բաղկացական:

49 Երրորդ, ոչ երբէք գոյեղք աճելովն ի բաց բառնան զայն, որում ստորագին. որգոն, բանականն աճելով ոչ ի բաց բառնայ զմարդ, այլ եւ զընդդէմսն եւս աճեցուցանէ: 50 Իսկ եթէ ծիծաղականն ի բաց բառնայ զմարդ աճելովն, զիա՞րդ իցէ գոյեղ, ուր եւ առ պարսից գտան դատապարտուլիւնք՝ ծաղու սատակել զդատապարտեալսն:

51 Չորրորդ առ այսոքիւք, եթէ ոչ զաւրուլթեամբ ունիմք զծիծաղականն, ուր եւ ոմանք ընդ Տրոփոնիոնն³ անցեալք՝ յայնմ հետէ եւ առ յապա առանց ծիծաղելոյ մնացին:

52 Բայց ասելի է ըստ մեր խոստմանն, թէ զիա՞րդ լինի ծաղր: 53 Եւ ոմանք ասեն, թէ անբան շնչովն լինի, որոց դաշնակից գոմք. քանզի ծիծաղելն ի ձեռն մկանաց եւ ջլաց լինի, որ անբան շնչոյն են, եւ զի ոչ ի ձեռն բանական հոգւոյ: 54 Բայց տարակուսեն ոմանք ասելով, եթէ ի ձեռն անբան շնչոյն ծաղրն լինի, վասն զի եւ մկանունքն եւ ջիւքն ի միմեանս գոլով առնեն զծաղրն, ապա պարտ է նման եւ յանբանսն տեսանիլ. վասն զի ունին մկանունս եւ ջիւս: 55 Այլ այսոքիկ ընդդիմաբանելով ասեմք, թէ եւ այլ կենդանիք են ծիծաղական, որպէս վիպէ Արիստոտէլ «Յաղագս կենդանեաց», յորոց մի է եւ տառեղն: 56 Երկրորդ, թէ ոչ յամենայն կենդանիս նմանապէս ներգործէ անբան շունչն, ապա թէ ոչ՝ պարտ էր հաջուլիւն շան եւ յայլ կենդանիս տեսանիլ. քանզի այսոքիկ յատկուլիւնք են շնչոյն յիւրաքանչիւրում տեսակի. եւ զի ոչ բուսականին է ծիծաղականն, յամենեցունց խոստովանեալ է, վասն զի երիս ունի զաւրուլիւնս՝ զաճողականն, զսննդականն, զծննդականն: 57 Եւ մի ոք յայսց զաւրուլթեանց ոչ ներգործէ զծիծաղականն:

1 μήτε προπετιή γέλωτα στέργε

2 ψυχή

3 διὰ τοῦ Τροφάνου-Μουφινίηϋν

ՅԱՂԱԳՍ ՊԱՏԱՅՄԱՆ

1 ՊՐԱԿՔ ԻԹ

2 Սահմանք պատահման բացատրեն նմա զբստ արժանոյն կարգ, քանզի յայտնեն՝ եթէ վերջին է, եւ նուազ, եւ տկար: 3 Քանզի զի՞նչ է պատահումն: 4 Որ լինի եւ բացալինի թարց ենթակային ապակա-նութեան: 5 Եւ տարակուսեն ոմանք ասելով, եթէ վասն է՞ր ի պատահման միայն զանց արար զբացորոշութեամբն Արիստոտէլի. ոչ ասաց, եթէ քանի նշանակութիւնք են պատահման, եւ եթէ յաղագս որոյ նշանակութեան է բանն, այլ նոյնժամայն ի վերայ ածէ զվարդապետական յեղանակն:

6 Առ որս ասեմք, եթէ զքանաբարն ասել եթող, վասն զի յառաջ քան զայսոսիկ ասաց՝ եթէ պատահումն երկակի է, կամ անջատական կամ անանջատական: 7 Իսկ յաղագս որոյ նշանակութեան ոչ արտադրեաց, կամելով զամենայն պատահմանէ բուռն հարկանել. քանզի յայնժամ ասեմք յաղագս որոյ նշանակութեան է բանն, յորժամ զմիողէ բուռն հարկանեմք, եւ յորժամ ոչ վասն բազմաց ուսուցանեմք:

8 Արդ, եռակի բացատրելով ասէ, թէ «պատահումն է, որ լինի եւ բացալինի առանց ենթակային ապականութեան». եւ այլազգաբար, թէ «պատահումն է, որ ընդունի նոյնում գոլ կամ ոչ գոլ»: 9 Իսկ ի բացասութենէ ենթագրէ այսպէս, թէ «պատահումն է, որ ոչ սեռ է, եւ ոչ տեսակ, եւ ոչ տարբերութիւն, եւ ոչ յատուկ»: 10 Եւ վասն զի ոմանք փորձին յոռի ցուցանել զբացատրեալ սահմանդ, բե՛ր զառ ի նոցանէ ասացեալսն յարադրեսցուք, եւ այնպէս ապա ի վերջէ նոցա ասացելոցն վայելչական պատասխանատրութիւն բացատրեսցուք:

11 Ասեն ոմանք զառաջին սահմանէն, թէ նուազ գոյ եւ աւելորդ: 12 Եւ նուազ այսպէս, եթէ սահմանս այս զեղեալսն եւ

զբացեղեալսն պատահումն նշանակէ, յայտ է, թէ զանջատական պատահումն միայն նշանակէ. որգոն՝ զսպիտակն, որ կարող գոյ յիս լինել եւ բացալինել առանց ենթակային ապականութեան. քանզի ոչ բացալինի սեաւն եթովպացոյն՝ տակաւին եւս գոլով եթովպացոյն, եւ ոչ դարձեալ ագռաւուն:

13 Առ որս դարձեալ ասեմք, եթէ պատահմանցն ոմանք ներգործութեամբ¹ անջատին յենթակայէն, իսկ ոմանք մտածութեամբ միայն: 14 Արդ, ներգործութեամբ եւ մտածութեամբ անջատականքն. քանզի կարող գոյ եւ ներգործութեամբ անջատիլ սպիտակն՝ որ յիս, կարաւզ գոյ եւ մտածութեամբ. իսկ մտածութեամբ միայն՝ զանանջատական պատահումնսն. քանզի զսեաւն եթովպացոյն կարաւզ գոյ մտածութեամբ իմանալ ի բաց եղեալ՝ առանց ենթակային ապականութեան: 15 Քանզի եթէ իմանաս սպիտակ զեթովպացին, ոչ ապականի ենթակայն: 16 Վասն որոյ պարտ է յաւելուլ ի սահմանդ՝ մտածութեամբ եւ ներգործութեամբ, եւ ոչ գտանի նուազ թէ «պատահումն է, որ լինի եւ բացալինի առանց ենթակային ապականութեան, ներգործութեամբ եւ մտածութեամբ»:

17 Իսկ առաւելուլ զնմանէ ասեն այսպէս. եթէ զայս ասեմք պատահումն, որ լինի եւ բացալինի առանց ենթակային ապականութեան, արդ ոչ միայն զպատահումն պարունակեաց սահմանս այս, այլ եւ գոյացութիւնս ոմանս. քանզի ահա ջերմութիւն հրոյ լինի եւ բացալինի առանց ենթակային ապականութեան, որ է էութիւն հրոյ: 18 Ապա թէ ոք ասիցէ, թէ զիա՞րդ բացալինի ջերմութիւն ի հրոյն, եւ ոչ ապականի ենթակայն. քանզի² անորակ մարմին է, իսկ անորակ մարմին ոչ ապականի:

1 ἐπινοία καὶ ἐνέργεια
2 φαιέν οὐχί

19 Առ որս ասեմք եթէ ոչինչ է տարակուսութիւնդ. քանզի յայտնի է լուծումն: 20 Քանզի ջերմութիւն էութիւն է եւ պատահումն. քանզի որպէս առ հուրն՝ էութիւն է ջերմութիւն, իսկ որպէս առ մարմինն հրոյն՝ պատահումն: 21 Եւ ապազգ դարձեալ ասելի է, թէ եւ ոչ պարունակեաց զայսոսիկ սահմանդ. քանզի յասելն առանց ենթակայիմ ապականութեան, յայտ առնէ, թէ ապականելի է ենթակայն. քանզի որոց բան ունի ապականիլ ենթակայն՝ ամենայն իրաւք ապականի, թէպէտ եւ ոչ բացալինի¹: 22 Արդ, եթէ այսոքիկ այսպէս ունին, վասն զի ենթակայն հրոյ եւ ջրոյ անապականելի են, քանզի անորակ մարմին են², յայտ է, թէ ոչ պարունակեաց զայսոսիկ սահմանդ. քանզի ասեն գենթակայն ապականելի. իսկ այսոցիկ անապականելի է ենթակայն:

23 Արդ, յայսպիսեաց կարծեաց ազատեալ գտահմանդ, բեր յայլ երթիցուք տարակուսանս: 24 Քանզի ասեն ոմանք, եթէ վասն զի ոչ երբէք ինչ յէիցն ինքեան կորստեան բաղձայ, քանզի ասեմք զանբանիցն, եթէ զինքեանս անկանելով՝ ոչ³ եթէ կորստեան ինքեանց բաղձալով զայսոսիկ առնեն, այլ կամ վասն փախչելոյ յուժեքէ, եւ կամ վասն բարկութեան ըստ պատահման զինքեանս կորուսանեն, զի՞՞րդ պատահմունքն զինքեանս կորուսանել բաղձան: 25 Եւ զի զինքեանս կորուսանեն, աստուստ է յայտ. զի եթէ յենթակայումն են պատահմունքն՝ եւ գենթակայն կորուսանեն խոստովանաբար եւ զինքեանս կորուսանեն. եւ եթէ զի՞՞րդ կորուսանեն գենթակայն՝ ասացուք: 26 Ունական ջերմութիւնն⁴ կորուսանէ գենթա-

կայն, քանզի անհնար է բացալինել նմա առանց ապականութեան ենթակային. արդ, որովհետեւ գենթակայն կորուսանէ՝ ապա եւ զինքն ընդ նմա:

27 Առ որս ասեմք, եթէ ոչինչ ի պատահմանց իւրում ապականութեան տենչայ, այլ եւ ոչ գենթակայն ապականել տենչայ. քանզի ըստ պատահման ապականէ զնա, եւ ոչ կամաւք. եւ յայտ է աստուստ, եթէ ունական ջերմն անչափութիւն է, իսկ առողջ խառնուած՝ չափակցութիւնքն. իսկ այսոքիկ ընդդէմ միմեանց են: 28 Արդ, անչափութիւն փութայ ապականել զչափակցութիւն. եւ ապականելով զնա, ըստ պատահման ապականէ եւ գենթակայն. իսկ ապականելով գենթակայն, եւ զինքն ապականէ:

29 Իսկ երկրորդ սահման անկատարելաբար ունի, քանզի ասէ, թէ պատահումն է, որ ընդունի նոյնումն գոյ կամ ոչ գոյ. եւ սա ոչ պարունակէ զանանջատելի պատահումն. քանզի եւ ոչ մարթ գոյ՝ գոյ եւ ոչ գոյ նոյնում. քանզի սեաւ ոչ մարթի ոչ գոյ եթովպացւոյն. վասն որոյ պարտ է առադրել որպէս առաջնումն՝ կամ ներգործութեամբ, կամ մտածութեամբ: 30 Իսկ առ երրորդն գրէ թէ եւ սահման իսկ ոչ է, վասն զի ոչ ասի՝ որ էն, այլ որ ոչն է:

31 [Պատահումն է՝ որ եւ ոչ սեռ, եւ ոչ տեսակ, եւ ոչ տարբերութիւն եւ ոչ յատուկ]5: 32 Աստուստ ոմանք ասեն. թէ ընդդէ՞ր ոչ եւ զայլսն սահմանեաց այսպիսի բացասութեամբ: 33 Առ որս ասեմք, թէ ոչ կամէր զերկբայսն յերկբայիցն սահմանել. վասն զի տակաւին եւս յերկբայս էին սեռ եւ տեսակ եւ տարբերութիւն. եւ ոչ կարէր ասել, եթէ սեռ է, որ ոչ տեսակ է եւ ոչ տարբերութիւն. վասն զի տակաւին եւս անգիտանային առ ի մէնջ. իսկ որպէս

1 καθ' ἑαυτὴν ὅτι ἀπογίνεται τὸ συμβεβηκός

2 ἄποιοι γὰρ αὐτῶν ἔστι τὸ σῶμα, καὶ τὰ ἄποια οὐ φθείρεται, σαφές...

3 ἀπόλλουσιν ἀπὸ κρημνοῦ πηδῶντα ἢ εἰς ὕδωρ ριπτούμενα, οὐ...

4 ἑκτικός πυρετός

5 Հայ. չի՞. վերականգնում ենք ըստ յուժ. Եթե՞-
բեկ, էստի՞ թ ո՞ւր յենո՞ս ո՞ւր է՞ն, ո՞ւր յա-
փոր, ո՞ւր յի՞նք ո՞ւր է՞ն

զայլսն զամենայն սահմանաւ ծանոյց մեզ, եւ պատահումն միայն գոյր մնացեալ, յիրաւի բացասութեամբ ծանուցելոցն սահմանեաց:

34 Բայց կար է ընդ միտ ածել եւ իմանալ ագուաւ սպիտակ, եւ եթովպացի ի բաց ընկեցեալ զգոյնն՝ առանց եմթակային ապականութեան: 35 Բազում անգամ ասացաք վասն սահմանաց պատահմանց, թէ ոչ ոք ի դոցանէ ողջաբար ունի. քանզի յառաջին սահմանն, որ ասէր, թէ «պատահումն է, որ լինի եւ բացալինի առանց ենթակային ապականութեան», առադրեցաք, թէ կամ ներգործութեամբ, կամ մտածութեամբ: 36 Արդ, կամ այս կամ բաղձիւսական է շաղկապ, կամ տարալուծական. եւ եթէ բաղձիւսական է որպէս գոյ՝ թէ եւ ներգործութեամբ եւ մտածութեամբ, ստէ սահմանդ ի վերայ անանջատականաց պատահմանց. քանզի անանջատականքն ոչ լինին եւ բացալինին ներգործութեամբ եւ մտածութեամբ առանց ենթակային ապականութեան: 37 Իսկ եթէ տարալուծական է, ոչ ասի գոյ սահման, այլ բաժանումն. քանզի սահմանի գործ է ժողովել զբազումս եւ միացուցանել. իսկ բաժանման՝ զմին ի բազումս ցուցանել: 38 Արդ, այսպէս առաջին սահմանն, քանզի ասէ՝ կամ ներգործութեամբ, կամ մտածութեամբ: 39 Նոյն բան ասի եւ ի վերայ երկրորդին: 40 Իսկ վասն երրորդին անդէն իսկ ի տեսութեան ցուցաք, թէ ո՞րպէս յոռի գոյ:

41 [Կատարումն եղև գրելոյ միոյ մասին առաջիկայ շարագրութեան Պորփիրի]:

**23ԱՂԱԳՍ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԵՒ
2ԱՆԱԶԱՆՈՒԹԵԱՆ ՀԻՆԳ ԶԱՅՆԻՑ
ԱՌԱՋԻԿԱՅ ՏԵՍՈՒԹԻՒՆ**

1 ԱՌԱՋԻՆ

2 Ըստ խոստմանն մերում յետ բանիւ ստեղծանելոյ զհինգ բարբառոզ, բե՛ր զհասարակութիւնս նոցին եւ զգանազանութիւնս յարադրեսցուք: 3 Եւ պարտ էր, որովհետեւ կատարելաբար ուսաք, կատարումն առնել առաջիկայ շարագրութեանս. քանզի որ գիտէ զհինգ բարբառոզ եւ զնոցին ենթագրութիւնսն, գիտէ եւ զնոցին հասարակութիւնսն եւ գանազանութիւնսն: 4 Այլ վասն զի առ ներածականս առնէ զբանս իւր, կարեւոր համարեցաւ զայսոսիկ աւանդել: 5 Եւ գիտելի է, իրողութիւնք ամենայն ոչ ամենայն ուրեք հասարակութիւն ունին առ միմեանս եւ ոչ գանազանութիւնս. այլ ըստ իրաց ինչ հասարակութիւնս ունին, եւ ըստ իրաց ինչ գանազանութիւնս: 6 Արդ, հասարակութիւն ունին, վասն զի զմիոջէ ի սկզբանէ կախեալ գոն. իսկ գանազանութիւն ունին ըստ նիւթոյն: 7 Արդ, երկուց եղելոց գանազանութեանց եւ հասարակութեանց՝ ընդհանրականաց եւ մասնականաց, գառաջին նախադասութիւնն հանրականացն շնորհէ, իսկ գանազանութեանն նախադասէ զհասարակութիւն: 8 Ուստի եւ տարակուսեն ոմանք, թէ ոչ ինչ հասարակութիւն ունին առ միմեանս հինգ բարբառոզ, բայց եթէ ըստ միում իմիք ունին հասարակութիւն: 9 Իսկ մի ինչ առնել զհինգ բարբառոզ տարակուսութիւն է. վասն զի տարակուսել արժան է, թէ վասն է՞ր հինգ բարբառոզ մի գոն:

10 Արդ, նմանեցաւ տարակուսութեան հասարակութիւն, իսկ լուծման՝ գանազա-

1 Յուն. չիփ

2 Հայ. վերնագիրն աղնատուած է՝ Յաղագս հանրականաց սեռից եւ տարբերութեան առաջիկայ տեսութիւն. վերականգնում՝ եմփ ըստ յուն. Περι κοινωσιών και διαφορών των πέντε φωνών.

նութիւն. քանզի ցուցանէ, թէ ոչ գոն մի ինչ. եւ ի ցուցանելն, թէ ոչ գոն մի ինչ՝ զտարակուսութիւն լուծանէ: 11 Արդ, վասն զի նմանեցաւ ոմն տարակուսութեան եւ ոմն լուծման, եւ առաջին է տարակուսութիւն, քան զլուծումն, առաջին է եւ հասարակութիւն քան զզանազանութիւն:

12 Արդ, ասէ Պորփիրիոս, թէ ընդհանրական հասարակութիւն ամենեցուն՝ ըստ յոլովիցն ստորոգիլ. իսկ զանազանին՝ վասն զի ոչ ամենեքեան նոյն ենթակային ստորոգին, քանզի ոմանք ի նոցանէ տեսակաց ստորոգին, որպէս սեռ, եւ տարբերութիւն, եւ պատահումն: 13 Իսկ ոմանք՝ անհատիցն, որպէս տեսակ եւ յատուկ: 14 Եւ ինքն Պորփիրիոս մի հասարակութիւն եւ մի զանազանութիւն յարադրեաց. իսկ մեք առադրեսցուք յերկաքանչիւրսդ, բացատրելով զընդհանրականս ոմանս հասարակութիւնս եւ զանազանութիւնս:

15 Եւ նախ առաջին՝ զհասարակութիւնս: 16 Դարձեալ, ունին ամենեքեան հասարակութիւնս, վասն զի ամենեքեան հոմանունք են: 17 Երրորդ հասարակութիւն, վասն զի ամենեքեան ի միում ստորոգութեան տեսանին, քանզի եթէ սեռք են ստորոգութիւնք, ամենայն իրաւք է եւ այլքն ի բարբառոցն: 18 Չորրորդ առ այսորիւք տեսանեմք հասարակութիւն, վասն զի ամենեքեան սահման եւ եզերք են իմաստասիրականաց ճայնից. քանզի ամենայնք իմաստասիրականք ճայնք յայսորիկ բարբառս եզերին, եւ ոչ ինչ է արտաքոյ սոցին: 19 Հինգերորդ հասարակութիւն տեսանի՝ զմիմեանս ի ներքս ածելովն եւ զմիմեանս բառնալովն. զի ուր մի ոք իցէ ի դոցանէ, անդէն ամենեքեան. եւ ուր մին պակասէ՝ ամենեքին նուազեն:

20 Արդ, ասացեալք զհասարակութիւն, ասացուք եւ զզանազանութիւնս նոցա: 21 Երկրորդ զանազանութիւն է նո-

ցա յեղանակ ստորոգութեան. քանզի ոմանք ի ներում զինչէին ստորոգին, [որպէս սեռ եւ տեսակ]¹, եւ ոմանք ի ներում որպիսիինչէին, [որպէս տարբերութիւն եւ յատուկն եւ պատահումն]²: 22 Երրորդ զանազանութիւն է նոցա սահմանք. զի որոց սահմանքն զանազանք են՝ նոցա եւ գոյացութիւնքն: 23 Չորրորդ զանազանութիւն է նոցա զառ ի բաժանմանէն գոլ. քանզի որք ի բաժանման են՝ զանազանք գոն, քանզի ոչ ոք ինքն յինքեան բաժանի: 24 Հինգերորդ զանազանութիւն՝ ոչ նշանակելն զմիմեանս ըստ նմին իրի. քանզի սեռն ոչ նշանակէ զտեսակ որպէս զսեռ³:

25 Հասարակ ամենեցուն՝ ըստ յոլովից ստորոգիլ: 26 Ի հասարակութենէ մոռացաբար եւ զզանազանութիւն աւանդէ Պորփիրիոս, քանզի ասէ, եթէ ստորոգիմ ըստ յոլովից, այլ ոչ նմանաբար. քանզի սեռ եւ տարբերութիւն եւ պատահ տեսակաց եւ անհատից ստորոգին, իսկ յատուկն եւ տեսակն անհատիցն միայն: 27 Արդ, ոչ բարւոք ասեն այնոքիկ, որ ասեն, թէ յերիս հատածս բաժանի առաջիկայ շարագրութիւնս. եւ յառաջնումն զգոյացութիւնս նոցա ուսուցանէ, իսկ յերկրորդումն՝ զհասարակութիւնս, իսկ յերրորդումն՝ զզանազանութիւնս: 28 Սուտ ասեն, քանզի միանգամայն զհասարակութիւնս եւ զզանազանութիւնս նոցա բացատրէ:

29 Իսկ անասուն, որ է տարբերութիւն, պիտակաբար ասաց, որ է անբանութիւն:

30 Այլ նախապետաբար զանհատիցն, իսկ ըստ երկրորդ բանի՝ պարունակողացն զանհատսն: 31 Արդ ասէ, թէ յանհատսն

1 Վերականգնում եմք ըստ յուն. ὡς περ τὸ γένος καὶ τὸ εἶδος

2 Վերականգնում եմք ըստ յուն. ὡς περ ἢ διαφορά καὶ τὸ ἴδιον καὶ τὸ συμβεβηκός

3 κατὰ τὸ αὐτό

նախ եւ առաջին տեսանի պատահումն, յետ այսորիկ ապա ի տեսակս. քանզի ջերմն եւ սպիտակն նախ ի Սոկրատում տեսանին, աստուստ ապա եւ զմարդն ասեմք սպիտակ եւ ջերմ: 32 Այսոքիկ են դոցա ընդհանուր հասարակութիւնք եւ զանազանութիւնք հինգ բարբառոցդ:

1 Ընդ այսոսիկ հանդերձ Աստուծով առաջիկայ գործաւորութիւնս ԵՐԿՐՈՐԴ

2 Ասացեալ Պորփիրի յաղագս հանրականաց հասարակութեանց [եւ զանազանութեանց]¹, գայ եւ ի մասնականսն, եւ նախ եւ առաջին զհասարակութիւն եւ զզանազանութիւն սեռի առ տարբերութիւն ասէ: 3 Եւ տե՛ս, զիա՞րդ յորժամ վասն հասարակականացն է բան, զտարբերութիւն յետ սեռի դասէ, իսկ յորժամ վասն գոյացութեան սոցա կամի ցուցանել, յայնժամ զտեսակն նախադասէ ընդ սեռիւ, վասն զի առինչունակին են. իսկ զառինչունակն համանգամայն պարտ է ուսանել:

4 Արդ, ասէ, եթէ «հասարակ սեռի եւ տարբերութեան ստորոգիլն տեսակացն. եւ եւս հասարակութիւն ունին, զի որք ստորոգիլն սեռի որպէս սեռի, այնոքիկ՝ եւ զընդ սեռիւն տեսակաց. եւ որք ստորոգիլն տարբերութեան որպէս տարբերութեան, այնոքիկ եւ զընդ տարբերութեան տեսակացն ստորոգիլն»: 5 Եւ բարևոք ասէ, թէ որպէս սեռի. քանզի զայս ասէ, թէ ամենայն՝ որ միանգամ սեռին ստորոգիլն գոյեղաբար, այնոքիկ եւ զընդ նովաւ տեսակացն ստորոգիլն. որգոն՝ գոյացութիւն կենդանոյն² գոյեղաբար ստորոգիլ, իսկ այս եւ մարդում ստորոգիլ³:

6 Դարձեալ, ներչնչականն եւ զգայականն կենդանոյն ստորոգիլն, այսոքիկ եւ տեսակի ստորոգեսցին եւ անհատի: 7 Քանզի թէ ոչ զայսոսիկ առցուք ի վերայ սեռի՝ այլ զպատահմունսն, այս ինքն զմիափաղառականն գոյ, եւ կամ զկոչիլն նմա սեռ՝ ընդհանրականապէս զայս առնուլ ոչ բաղկացի բանն. քանզի այսոքիկ գոյացութեան ներչնչականումն եւ զգայականումն պատահեաց պատահումն, եւ կոչիլ սեռ, եւ միափաղառական գոյ. որգոն, կենդանի հանրականապէս առնուլն՝ այսոքիկ մարդոյ ոչ ստորոգեսցին, վասն զի գոյեղաբար սեռի, այս ինքն գոյացութեան, ներչնչականումն զգայականումն [ոչ] ստորոգիլ:

8 Նոյն բան եւ ի վերայ տարբերութեան, քանզի որք գոյեղաբարն ստորոգիլն, այսոքիկ եւ զընդ նովաւ տեսակացն ստորոգեսցին. քանզի գոյացութիւն ունի տարբերութիւն՝ զպիտանանալն բանում, այս ինքն ներգրականում⁴, որ եւ մարդում եւ անհատում ստորոգեսցի: 9 Արդ, թէ ոք ասէ, թէ պարատահումն քառափաղառական գոյ, այս ոչ ստորոգիլ մարդոյ, քանզի ոչ է էութիւն նորա: 10 Դարձեալ, հասարակութիւն ունին զայն, զի որպէս ի բաց բարձեցելոյ սեռի՝ ի բաց բառնին եւ որ ընդ նովաւ են տեսակք, այսպէս տարբերութեան ի բաց բարձեցելոյ՝ ի բաց բառնին եւ որ ընդ նովաւ տեսակք:

11 Արդ, ասացեալ Պորփիրի յաղագս հասարակութեան սեռի եւ տարբերութեան, բուն հարկանէ եւ զզանազանութենէ նոցին եւ ասէ, թէ զանազանի սեռ տարբերութեան, զի սեռ բնութեամբ առաջին է քան զտարբերութիւն: 12 Եւ եւս, զանազանի սեռ տարբերութեան, վասն զի սեռ զաւրութեամբ ունի զտարբերութիւն, իսկ տարբերութիւն ոչ զաւրութեամբ պարու-

1 Ծուև. καὶ διαφορῶν
2 Հայ. սեռի. ուղղում եմք ըստ յուն. τοῦ ζώου-կենդանոյն
3 Հայ. չիք ոչ. վերականգնում եմք ըստ յուն. οὐ κατηγορεῖται-ոչ ստորոգիլ

4 φημί δὲ τῷ ἐνδιαθέτω

նակէ զսեռ: 13 Եւ եւս տարբեր է սեռ, քանզի սեռ ի ներուժ զինչէն ստորոգի, իսկ տարբերութիւն ի ներուժ որպիսիինչէն: 14 Եւ եւս զանազանի սեռ տարբերութեան, քանզի իւրաքանչիւր տեսակի սեռ՝ մի գոյ, իսկ տարբերութիւն՝ յոլով. քանզի ահա ի մարդուժ մի է՝ կենդանին, իսկ տարբերութիւն՝ յոլով, որ է կենդանի բանաւոր, մահկանացու, մտաց եւ հանճարոյ ընդունակ:

1 Ընդ այսոսիկ հանդերձ Աստուծով առաջիկայ տեսութիւն
ԵՐՐՈՐԴ

2 Զվարդապետութիւն տարբերութեան ընկալաւ տեսակ, ընդ որում եւ վասն նախադասութեան հակառակի, արդ յարադրէ Պորփիրիոս զսեռի եւ զտեսակի հասարակութիւն, երիս հասարակութիւնս եւ չորս զանազանութիւնս: 3 Եւ վասն զի պէտս ունի առտարրոշութեան մի մի ի զանազանութեանցն, բե՛ր նախ քան [զհասարակութեանց եւ]¹ զզանազանութեանցն վարդապետութիւն սակաւ ինչ վասն նորա հանգանակեսցուք:

4 Արդ, ասէ, եթէ զանազանի սեռ ի տեսակէ. վասն զի բնութեամբ նախագոյն է սեռ քան զտեսակ: 5 Արդ, այսոցիկ այսպէս ունելով, եթէ է ինչ սեռ եւ տեսակ, մի առցես զսեռ եւ զտեսակ ըստ միում եւ ըստ նոյնում. որգոն՝ զկենդանին մի առցես սեռ եւ տեսակ. ապա թէ ոչ՝ ինքն ինքեան եղիցի բնութեամբ առաջին. այլ զներչնչականն առցես սեռ, եւ զկենդանին տեսակ, եւ այնպէս գտանի բանդ ճշմարիտ:

6 Երկրորդ առտարրոշութիւն. մի՛ առցես զսեռ ըստ այլում իրի տեսակ, եւ զտեսակ՝ սեռ, այլ նոյնպէս. ապա եթէ առնուցուս զներչնչականն որպէս տեսակ, եւ

զկենդանին որպէս սեռ, գտանի տեսակն բնութեամբ առաջին քան զսեռ: 7 Վասն այսորիկ ասացաք՝ մնասցէ սեռն որպէս սեռ, եւ տեսակն որպէս տեսակ:

8 Երրորդ առտարրոշութիւն, թէ յառաջագոյն է սեռ քան զտեսակ՝ ոչ ըստ սեռականի եւ տեսականի զանազանութեանց: 9 Եւ զայս ասեմ, ոչ թէ սեռ որպէս սեռ յառաջագոյն է քան զտեսակ, քանզի առինչունակ է, իսկ առինչունակացն համանգամայն պարտ է գոլ եւ լինել, այլ որպէս իր. քանզի որպէս հայր ոչ յառաջագոյն է քան զորդի որպէս հայր, քանզի համանգամայն են հայր եւ որդի ըստ աւրինակի առինչունակին. այլ որպէս մարդ յառաջագոյն է Սոփրոնիսկոս Սոկրատայ: 10 Նոյնպէս եւ սեռ յառաջագոյն է քան զտեսակ ոչ որպէս սեռ, այլ որպէս իր. որգոն՝ գոյացութիւն ներչնչական զգայական արդ որպէս իր յառաջ է մարդոյ, քանզի յառաջ է քան զմարդ:

11 Ասացեալք զառտարրոշութիւնս այսպիսի զանազանութեանց, բե՛ր զհասարակութիւնս նոցա ասացուք, եւ ապա յետ այսորիկ զզանազանութիւնս: 12 Արդ, հասարակ են սեռ եւ տեսակ, ըստ որում յոլովիցն ստորոգին. եւ եւս հասարակութիւն ունին, վասն զի երկոքեան յառաջագոյն են քան զանհատն. եւ եւս հասարակութիւն ունին, զի որպէս բոլոր ինչ են: 13 Եւ վասն է՞ր ասացաք՝ որպէս բոլոր ինչ եւ ոչ բոլոր. վասն զի բոլորն՝ որպէս բոլոր համայն յիւր մասունսն ոչ կարէ տեսանիլ. ապա եթէ ոչ, եղիցի իւրաքանչիւր ոք ի մասանցն բոլորն: 14 Իսկ տեսակն եւ սեռն բոլորն որպէս բոլոր յանհատումն տեսանի: 15 Իսկ զանազանին՝ վասն զի սեռն յառաջագոյն է բնութեամբ քան զտեսակ. եւ եթէ զիա՞րդ եւ որո՞վ յեղանակաւ է՝ ասացաք: 16 Եւ եւս զանազանին, զի սեռ նիւթում քատակեցաւ, իսկ

1 Ըստ յուժ. τῶν κοινωμάτων καί...

տեսակ կերպարանում¹. Եւ եթէ զիա՞րդ նմանեցաւ սեռ նիւթում եւ տեսակ կերպարանում. որպէս զի իմասցիս ինձ զայրաձեւն պղընձի². քանզի ի նիւթոյ ի պղնձոյ եւ ի կերպարանէ մարդոյ բացատրեալ է:

17 է եւ այլ եւս երկուս զանազանութիւնս սեռի եւ տեսակի: 18 Ձմին յանընդդիմաճաւասարութենէ ստորասութեան, եւ զմին յանընդդիմաճաւասարութենէ բացասութեան: 19 Արդ, յանընդդիմաճաւասարութենէ ստորասութեան զանազանի սեռ ի տեսակէ, վասն զի սեռ յոլովագոյնս ունի զաւրութեամբ զբաժանականսն տարբերութիւնս, [բանականն եւ անբանն]³, իսկ տեսակ ոչ եւս զբաժանականսն, բայց յոլովագոյնս ունի զնոսա ներգործութեամբ, որպէս բաղկացականս: 20 Բայց զստորասականն ասացաք: 21 Եւ բացասական՝ վասն զի ասելն սեռականագոյն ոչ ունի բաղկացականս տարբերութիւնս, եւ տեսակագոյնն ոչ ունի բաժանականս. իսկ ստորասական եւ բացասական է, յորժամ ասեմք՝ սեռն ոչ ունի բաղկացականս, եւ տեսակն ոչ ունի բաժանականս:

1 Ընդ այսուսիկ հանդերձ Աստուծով ԶՈՐՐՈՐԳ

2 Եկեսցուք այսուհետեւ եւ զճասարակութիւն սեռի եւ յատկի ասացուք, եւ զզանազանութիւնս: 3 Արդ, ունին ճասարակութիւն սեռ եւ յատուկ. վասն զի երկաքանչիւր ոք ի դոցանէ շարաբերի յայնցանէ՝ յորոց ստորոգին. քանզի մարդն շարաբերէ, եւ կենդանին շարաբերի, եւ ծիծաղականն. քանզի որ ինչ մարդ՝ նա կենդանի. եւ որ ինչ մարդ՝ նա եւ ծիծաղական: 4 Եւ եւս ճասարակութիւն ունին, վասն զի Հանգիտաբար ունականան յայնցանէ՝ որոց ստորոգին. քանզի կենդանի

Հանգիտաբար եւ ճիւղում եւ մարդում ստորոգի, եւ ծիծաղականն նմանաբար Պղատոնի եւ Ալկիպիադայ: 5 Եւ եւս ճասարակութիւն ունին սեռ եւ յատուկ, վասն զի փաղանունաբար ստորոգին՝ որոց ստորոգինն. վասն զի որպէս կենդանին փաղանունաբար ստորոգի՝ որոց ստորոգի, զի անուան եւ իրի տայ Հաղորդութիւն, նոյնպէս եւ ծիծաղականն փաղանունաբար ստորոգի Պղատոնի. քանզի անուան եւ իրի տայ Հաղորդութիւն այնմ՝ որ ունի զնա:

6 Իսկ զանազանի սեռ ի յատկէ, վասն զի սեռ յառաջագոյն է քան զյատուկ. քանզի սեռ նախ է, երկրորդ՝ տեսակ, ապա յատուկ: 7 Եւ եւս զանազանի սեռ ի յատկէ, զի սեռն բազում տեսակաց ստորոգի, իսկ յատուկն միում՝ որոյ է յատուկ: 8 Եւ եւս զանազանի սեռ ի յատկէ, վասն զի յատուկ Հակադարձի այնմ՝ որոյ յատուկն է, իսկ սեռ ոչ Հակադարձի:

1 Հանդերձ Աստուծով (եւ առաջիկայ տեսութիւն)

ՀԻՆԳԵՐՈՐԳ

2 Հետեւորական կարգի պիտանացեալք, եկեսցուք եւ զսեռի եւ զպատահման ճասարակութիւն եւ զզանազանութիւն ասացուք, այլ ոչ Հանգիտութեամբ զճասարակութիւն եւ զզանազանութիւն. քանզի մի ճասարակութիւն ունիմք բացատրել եւ երիս զանազանութիւնս: 3 Եւ տարակուսեն ոմանք, ասելով, թէ վասն է՞ր ի վերայ այլոց բարբառոցդ բազում ճասարակութիւն սեռի յարադրեաց, իսկ առ պատահումն մի ճասարակութիւն:

4 Առ որ ասեմք, եթէ վասն զի յոյժ հեռագոյնս ի միմեանց տարակացան սեռ եւ պատահումն. վասն զի սեռ ծայր գոյացութեան է, իսկ պատահումն՝ ծայր մակագոյնդ. եւ ըստ այլոց ոմանց կարողութիւն է ցուցանել, եթէ յոյժ հեռի գոն ի մի-

1 μορφωθείση ὕλη

2 ἐκ χαλοῦ καὶ μορφῆς συνιστάμενον

3 Ըստ յուս. τὸ λογικὸν καὶ τὸ ἄλογον

մեանց, վասն որոյ յոյժ գիտնոյ է գտանել զհեռագունիցն հասարակութիւն: 5 Արդ ասէ, թէ «հասարակ է սեռի եւ պատահման ըստ յոլովիցն ստորոգիլ»: 6 Զայսոսիկ Պորփիրիոս: 7 Իսկ մեք արտաքուստ այլ հասարակութիւն սեռի եւ պատահման բացատրեսցուք: 8 Արդ, է հասարակութիւն սեռի եւ պատահման, վասն զի երկաքանչիւր ոք ի դոցանէ եւ տեսակաց եւ անհատից ստորոգի:

9 Իսկ զանազանի սեռ ի պատահմանէ, վասն զի սեռ յառաջագոյն է քան զտեսակն, եւ տեսակ յառաջագոյն է քան զպատահումն. քանզի ամենայն պատահումն յառաջագոյն ունի տեսակ՝ որոյ պատահումն է: 10 Եւ եւս զանազանի սեռ ի պատահմանէ, վասն զի սեռ հանգիտաբար ստորոգի՝ որոց ստորոգի. իսկ պատահումն ոչ հանգիտաբար, այլ ըստ առաւելումն եւ նուազումն: 11 Եւ եւս զանազանի սեռ ի պատահմանէ, վասն զի սեռ նախ տեսակաց ստորոգի, եւ ապա անհատից. իսկ պատահումն նախ անհատիցն, եւ ապա տեսակաց: 12 Եւ եւս զանազանի սեռ ի պատահմանէ, վասն զի սեռ ի ներում զինչէին ստորոգի, իսկ պատահումն ի ներում որպիսիինչէին:

1 Հանդերձ Աստուծով առաջիկայ տեսութիւն
ՎԵՑԵՐՈՐԴ

2 Հասարակութիւն տարբերութեան եւ տեսակի՝ եթէ հանգիտաբար ունականան, եթէ միշտ առընթեր գոն՝ որոց ընդունականն գոն: 3 Զանազանութիւն տարբերութեան եւ տեսակի՝ եթէ տարբերութիւն ի ներումն որպիսիինչէումն ստորոգի, իսկ տեսակ՝ ի ներում զինչէին. եթէ տարբերութիւն յոլովս ի տեսակացն պարունակէ եւ զտեսակացն անհատսն, իսկ տեսակ՝ զընդիւրեաւ միայն անհատսն:

1 Հանդերձ Աստուծով առաջիկայ տեսութիւն

ԵԱԻԹՅԵՐՈՐԴ

2 Հասարակութիւն տարբերութեան եւ յատկի՝ եթէ տարբերութիւն հասարակաբար ստորոգի որոց ստորոգին, նոյնպէս եւ յատուկ, եթէ միշտ առընթեր գոն որոց ստորոգին: 3 Զանազանութիւն տարբերութեան եւ յատկի՝ եթէ տարբերութիւն յոլով տեսակս պարունակէ, իսկ յատուկն մի: 4 Եթէ տարբերութիւն ոչ հակադարձի տեսակի, իսկ յատուկն հակադարձի:

1 Աստուծով հանդերձ (առաջիկայ տեսութիւն)

ՈՒԹԵՐՈՐԴ

2 Հասարակութիւն տարբերութեան եւ պատահման՝ եթէ ի վերայ յոլովիցն ասիլ. եթէ առ անանջատական պատահմունսն միշտ եւ ամենայնին առ գոյ: 3 Զանազանութիւն տարբերութեան եւ պատահման՝ եթէ տարբերութիւնք պարունակեն եւ [ոչ] պարունակին¹, իսկ պատահմունքն պարունակեն եւ պարունակին. եթէ տարբերութիւնք զառաւելն եւ զնուազն ոչ ընդունին, իսկ պատահմունքն ընդունին:

1 Աստուծով հանդերձ (առաջիկայ տեսութիւն)

ԻՆՆԵՐՈՐԴ

2 Հասարակութիւն տեսակի եւ յատկի՝ եթէ միմեանց ստորոգին, եթէ հանգիտաբար ունականան: 3 Զանազանութիւն տեսակի եւ յատկի՝ եթէ տեսակ կարաւղ գոյ այլոց որպէս սեռ լինել, իսկ յատուկն ոչ. եթէ տեսակ գոյեղ գոյ, իսկ յատուկն մակագոյեղ:

1 Հայ. չի՞ ոչ. վերականգնում ենք ըստ Պորփիրի Ներածութեան բնագրի՝ οὐ περιέχεται (Porph. Isagoge, 5 b 38).

1 Աստուծով հանդերձ (առաջիկայ տեսութիւն)

ՏԱՄՆԵՐՈՐԴ

2 Հասարակութիւն տեսակի եւ պատահման ըստ յոլովիցն ստորոգիլ: 3 Զանազանութիւն տեսակի եւ պատահման, եթէ տեսակ ի ներ զինչէին ստորոգի, իսկ պատահումն ի ներ որպիսիինչէին: 4 Եթէ տեսակ բնութեամբ յառաջագոյն է պատահմանցն, իսկ պատահմունքն վերջագոյնք:

1 Աստուծով հանդերձ (առաջիկայ տեսութիւն)

ՄԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ

2 Հասարակութիւն յատկի եւ պատահման, թէ ոչ առանց նոցա բաղկանան այնոքիկ՝ որոց նոքայն գոյանանն. եթէ է հանապազ առընթեր գոն երկոքեանն: 3 Զանազանութիւն յատկի եւ պատահման, թէ յատուկ միում տեսակում գոյանայ, իսկ պատահումն յոլովից: 4 Եթէ յատուկն հակադարձի տեսակի, իսկ պատահումն՝ ոչ երբէք:

ԴԱԹԻ ԱՆՅԱՂԹ ՓԻԼԻՍՈՓԱՅԻ

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ «ՍՏՈՐՈԳՈՒԹԵԱՆՅՆ» ԱՐԻՍՏՈՏԵԼԻ

... ..

1 Եւ վասն զի անուանի, խնդրեմք զառաջին գլուխն եթէ ըստ քանեա՞ց եւ որպիսեա՞ց պատճառաց այսպէս անուանեցան հերձուածք, եւ վասն է՞ր ձեմական Արիստոտելականն անուանեցաւ իմաստասիրութիւն: 2 Եւ դարձեալ վասն զի ենթակայացաւ, կամ ըստ ընքեան ենթակայացաւ զաւրէն արհեստի եւ մակացութեան կամ առ մեզ՝ որպէս ուսանելի: 3 Եւ վասն զի ըստ ընքեան ենթակայացաւ, կամ ի կատարելոցն յանկատարսն խաղայ, եւ խնդրեմք եթէ զի՞նչ բաժանումն է, վասն զի բաժանումն ի կատարելագունիցն յանկատարսն եւ ի մասնականսն կոյս խաղայ, եւ կամ յանկատարելագունիցն ի կատարելագոյնսն, եւ խնդրեմք զի՞նչ սկիզբն, զի՞նչ կատարումն, զի՞նչ որ ընդ մէջ ճանապարհն: 4 Եւ այսպէս ըստ ընքեան: 5 Իսկ եթէ որպէս առ մեզ ենթակայանայ՝ խնդրեմք որպիսի՞ ինչ պարտ է գոյ լսաւդին եւ որպիսի՞ ինչ մեկնողին: 6 Եւ վասն զի զբաժանումնս շարադասութեանցն յիշեցաք, իսկ ի շարադասութիւնսն եւ բառք գոն եւ մտածութիւնք, եւ վասն բառիցն խնդրեցուք եթէ որպիսի՞ ինչ տեսակ գոյ յարմարաբանութեանց եւ եթէ վասն է՞ր զանհաւաստին ախորժեաց, իսկ վասն մտածութեանն խնդրեմք եթէ որպիսի՞ս եւ որքանի՞ս գլուխս պարտ է յառաջագոյն առնուլ Արիստոտելականաց շարադրութեանց:

1 Ընդ այսոսիկ հանդերձ աստուծով եւ առաջիկայ տեսութեանն

ՊՐԱԿՔ Բ

2 Առաջին գլուխ պարփակելոցն զԱրիստոտելի իմաստասիրութիւնն խնդրելն եթէ ըստ քանեա՞ց յեղանակաց անուանեցան իմաստասիրութեան հերձուածք: 3 Եւ պարտ է գիտել եթէ ըստ եւթն յեղանակաց անուանին իմաստասիրութեան հերձուածք: 4 Այլ վասն զի ոչ կարողք գոմք ստուգապէս հետեւիլ ասացելոցդ, եթէ ոչ նախ ուսանիմք զի՞նչ է հերձուած՝ արդ ասացուք՝ զի՞նչ է հերձուած: 5 Հերձուած է արանց գիտնոց կարծիք առ ինքեանս ճայնակցելոց եւ առ այլս տարաճայնեցելոց: 6 Եւ բարիոք ասացաք «արանց» եւ ոչ առն. վասն զի միոյ առն կարծիք դրութիւն լինի եւ ոչ հերձուած, որպէս Հերակղիտեայ², եթէ ամենայն ինչ շարժի, եւ կամ Պարմենիդեայ³, թէ եզ է էակն եւ անշարժ, եւ կամ Անտիսթենեայ, որ ասէր՝ եթէ ոչ է ընդդիմակացութիւն. քանզի դրութիւն է հրաշափառ կարծիք ուրումն՝ միոյ ուրումն յայնցանէ որք յիմաստասիրութեանն ճանաչին: 7 Իսկ «գիտնոց» ասելով եւ զայդ բարիոք առադրեցաք, զի եղիցին արժանաբանք եւ մակացուք: 8 Քանզի եթէ եղիցին վայրապարք եւ երամակայինք՝ այնպիսեացն կարծիք ոչ առնեն արհեստս եւ մակացութիւն, վասն զի մեք զայնպիսի հերձուածս ի կիր առնումք՝ որ յարհեստս եւ ի մակացութիւնս տեսանին: 9 «Առ միմեանս ճայնակցելոց եւ առ այլս տարաճայնեցելոց». քանզի եթէ առ միմեանս եւ

1 Հայ. վերնագիր չի՞ եւ սկիզբն թերի. յուն. Ἐξήγησις σὺν θεῶ τῶν δέκα κατηγοριῶν τῆς φιλοσοφίας ἀπὸ Φωτῆς Δαβίδ.

2 Երակղիտեացն. ուղղում՝ եմ՛ ըստ յուն. ἡ Ἡρακλείτου

3 Պարմենետեացն. յուն. ἡ Παρμενίδου

առ այլս ձայնակից գոն՝ ոչ լինի հերձուած, այլ ընդդիմանան հերձուածոյ հասարակ մտածութիւնք. քանզի կերպարանէ զհերձուած ձայնակցութիւն հանդերձ տարածայնութեամբ, եւ ոչ ի վայրապար մարդկան, այլ ի գիտունս եւ յարժան անց:

10 Արդ այսոքիկ վասն հերձուածոյ:
11 Բայց պարտ է գիտել, եթէ ըստ եւթն յեղանակաց անուանին ըստ իմաստասիրութեան հերձուածք՝ կամ ի հերձուածապետէն, որպէս Պղատոնականք եւ Արիստոտելականք եւ Եպիկուրեանք, եւ կամ ի հայրենեաց հերձուածապետին, որպէս Կլարենացիք վասն Առաստիպոսի կլարենացւոյ, եւ Էռէստէացիք վասն Մենեդիմոսի էռէստիացւոյ, կամ Մեգարականքն առ Տեոփսիոնի եւ Եւկլիդեայ մեգարացւոյ, ուստի եւ Մեգարական իմաստասիրութիւն անուանեցան երկրաչափք, կամ Ելիականք վասն Փէդոնի որ էր յԵլլիդեայ: 12 Արդ այսպէս եւ ի հայրենեաց հերձուածապետին:

13 Կամ ի տեղոջէն, ուր հաւաքակիցք լինէին, որպէս Ստոյիկեանք՝ այսինքն սրահականք՝ վասն զանազանապէս շինուածոց սրահին որ յԱտտիկոս, յորում վարժէր Զենոն Կիտացին այլ ոչ Ելեատացին¹, որ եւ Պարմենիդային² եւ երկալեզու, յաղազս որոյ ասացեալ է.

«Երկալեզուին մեծ զաւրութիւն եւ ոչ տկար Զենոնի»:³ 14 Բայց երկալեզու կոչեցաւ ոչ եթէ տրամաբանական էր, որպէս Կիտացին որ գնոյն ստեղծանէր, այլ վասն զի վարուք էր տրամաբանական՝ այլ ասելով՝ եւ այլ խորհելով: 15 Արդ երբեմն հարցեալ ի բռնաւորէ ումեմնէ, եթէ ո՞ք ոմանք են առաւել դաւաբերիչք իւրոյ բռնաւորութեանն՝ նա զգէնակիրսն եցոյց:

16 Եւ նա հաւանեալ եւ ապականեալ զնոսա՝ միայնացաւ եւ սպանաւ. քանզի բարի կարծեաց զստելն վասն ի բաց բարձման բռնակալութեանն: 17 Որ երբեմն եւ իւր վարդապետին վիճակից եղեալ Պարմենիդեայ որ ասէր, եթէ եզ է գոյն եւ անշարժ, թէպէտ եւ գիտէր ի ներգործութենէ եթէ յոքունք են գոյք, բայց սակայն շարադրեաց գիրս ի քառից ձեռնարկութեանց եթէ եզ է գոյն՝ բարի կարծեցեալ զվիճակիցն գոլ իւր վարդապետին: 18 Եւ երբեմն դարձեալ առ նոյնում վարդապետում ասելով անշարժ ասէ գոյն՝ հինգ ձեռնարկութեամբ եստեղծ թէ անշարժ է գոյն: 19 Որոյ ընդդէմ ոչ կարելով ասել Անտիսթենիս Շնական՝ յարեաւ յաթոռոյն եւ զգնաց էառ՝ կարծեցեալ հզաւրագոյն գոլ քան զամենայն ընդդիմադրութիւնս բանից զի ձեռն ներգործութեան ապացոյցն: 20 Արդ այսպէս եւ ի տեղոջէն՝ ուր հաւաքակիցքն լինէին:

21 Եւ կամ յիմաստասիրելն մակղատութենէ, որպէս Արգելականքն³. քանզի սոքա անհասելութիւն կարծելով՝ արգելուին զլուծմունս նախադասութեանցն: 22 Բայց կոչեցաւ եւ եռոտնիք նոցին հերձուածն, վասն զի եռակի առնէին զպատասխանիսն. քանզի հարցեալք՝ եթէ հոգի անմահ է եթէ մահկանացու է՝ ասէին թէ կամ մահկանացու է, կամ անմահ, կամ երկաքանչիւրքդ, կամ ոչ ոք ի սոցանէ: 23 Բայց կոչեցաւ եւ Բացբարձական, որ է տարակուսական, վասն զի տարակուսէին միայն եւ ոչ լուծանէին, որք ընդդէմ են Պոտտագորականաց. քանզի Պոտտագորականք զճշմարիտն աւանդէին, ասելով եթէ ամենայն՝ զոր ինչ եւ կարծէ ոք՝ ճշմարիտ է: 24 Զոր առանձինն յանդիմանէ Պղատոն զերկաքանչիւրսն եթէ «Որպէս հասեալք ասէք ոչ գոլ հասումն, եթէ որպէս ոչ հասեալք: 25 Եթէ որպէս հասեալք՝ ահա՛ է

1 Զենոն Ելլադացի, այլ ոչ Կիտացի. յուն. Ζήνων ὁ Κιτιεύς, οὗχ ὁ Ἐλεάτης.

2 Պարմենիայի

3 Յուն. οἱ Ἐφεκτικοί

հասումն, ապա եթէ որպէս ոչ հասեալք՝ ոչ հաւանիմք ձեզ ոչ հասելոցդ, եթէ է անհասուութիւն»։ 26 Իսկ զՊոռտագորականս յանդիմանէ ի Պոռտագորայ տրամաբանութեանն, ասելով այսպէս՝ եթէ «Մեք, ո՛վ Պոռտագորաս, ասելով կարծել զքեզ չարաչար ճշմարտիցե՞մք արդեաւք եթէ ստիցեմք։ 27 Եթէ ճշմարտեմք մեք՝ դու ստես, եւ ահա է սուտ. իսկ եթէ ստեմք եւ դու ճշմարտես՝ ահա՛ է սուտն ի ստելն մեր։ 28 Արդ ստես, թէպէտ եւ ճշմարտես, եւ եթէ ստես՝ ամենայն իրաւք ստես»։ 29 Եւ ապա ի վերայ ածէ ասելով՝ եթէ Պոռտագոր ստէ, թէպէտ եւ ճշմարտէ, ստէ։ 30 Իսկ Արիստոտէլ ի ձեռն միոյ եւ նորին ձեռնարկութեան յանդիմանէ վասն արժանաւորութեան հակասութեան, քանզի ոմանք զամենայն սուտ կարծեն եւ ոմանք՝ ճշմարիտ, հակասութիւն է այսպիսիս, եւ ոչ երբէք հակասութիւն ճշմարտեսցէ. քանզի ոչ ամենայն ինչ ճշմարիտ եւ ոչ ամենայն սուտ։ 31 Այսորիկ բաժանման կարծեցին ոմանք եւ զՊղատոն գոլ, վասն զի պիտանանայ երկբայականաց առբայութեանց, ասելով՝ «Թուի ինձ» եւ «Թերեւս», «արդեաւք» եւ «կարծեմ»։ 32 Այլ զայսոսիկ Պղատոն վասն ստուգութեան ասէր եւ ոչ վասն երկբայութեան։ 33 Արդ ոչ ստոյգն ամենայն իրաւք արգելական եւ արգելականն ստոյգ։ 34 Բայց սակայն ոչ արգելական Պղատոն. քանզի է ամենայն ուրեք լսել յասելն նորա եւ ի ցուցանելն շեշտաբար ըստ քերդողին՝ ի Փեստրոմ՝ տրամաբանութեանն, եթէ անձն ամենայն անմահ է, եւ ի Փէդոնումն՝ եթէ ազամանդանիւք կապովք զկարծիսս զայս ունել յաղազս անմահութեան հոգւոյ եւ ի դժոխս երթալոյ։ 35 Եւ դարձեալ յԱւրէնումն ասէ, եթէ ճշմարտագոյն են այժմու ասացեալքս քան զԿրէտէս կղզի գոլ։ 36 Եւ դարձեալ ի Քաղաքականութեանն ասէ, եթէ վարձեսցուք

քարոզիչ մեծաձայնագոյն քան զՍտենտոր, որ ելեալ ի վերայ բարձրաբերձ աստիճանի եւ աղաղակեսցէ՝ եթէ արդարն բարերջանիկ է, թէպէտ եւ մոռասցի ի մարդկանէ այսպիսի գոլով եւ վասն այսորիկ անիրաւ կարծեցեալ մտրակեսցի, իսկ անիրաւն թշուառական՝ թէ եւ մոռասցի յամենայն մարդկանէ եւ վասն այսորիկ որպէս արդար կարծեցեալ պատուեսցի յամենեցունց։ 37 Բազում ուստեք կարող էաք ցուցանել՝ եթէ ոչ յԱրգելականաց է Պղատոն, բայց զի Արիստոտէլական նախաբանութիւն է առաջիկայս եւ ոչ Պղատոնական։

1 Ընդ այսոսիկ հանդերձ աստուծով եւ առաջիկայ տեսութեանս

ՊՐԱԿՔ Գ

2 Հինգերորդ յեղանակ էր հոմանունութեան² ըստ իմաստասիրութեան հերձուածոց՝ որ ի յեղանակէ վարուցն էր, որպէս կոչեցեալքն Շնականք իմաստասէրք։ 3 Եւ Շնականք կոչեցան վասն չորից պատճառաց. կամ վասն անխտրութեան կենդանոյդ, վասն զի եւ նոքա զանխտրութիւն անխտրեցին՝ որպէս շունք ի հրապարակում ուտելով եւ լակելով, եւ բոկ գնալով, եւ ի կարասս, եւ յեռաճանապարհս ննջելով։ 4 Բայց զայս առնէին՝ որպէս բնութեամբ բարւոյն տենչալով. քանզի ասէին եթէ կամ բարի է, եւ պարտ է հասարակաբար եւ առանձինն գործել, եւ կամ ոչ է բարի՝ ոչ հասարակաբար եւ ոչ առանձինն պարտ է գործել. քանզի ոչ ի առ ի նոցանէ։

5 «Չայս ինչ ասել եւ զայս ինչ թագուցանել», այլ էր ի նոցանէ ըստ քերդողին, եթէ.

6 «Ասա՛ եւ յայտնապէս, վասն զի ոչ ունիմք զարհուրիլ յումեքէ»։

1 Յուև. ἐν μὲν τῷ Φαίδρῳ

2 Յուև. τῆς ἐπιωνυμίας

7 Այս առաջին պատճառ: 8 Երկրորդ՝ եթէ անամաւթ կենդանի է շուն, նոյնպէս եւ նոքա ախորժեցին զանպատկառութիւն՝ ոչ գյոռագոյնն քան զամաւթ, այլ զլաւագոյնն. քանզի երկակի է անպատկառութիւն՝ մին յոռեգոյն քան զամաւթ եւ մին է լաւագոյն, որպէս ասէ Իսիդոս քերթող.

9 «Անպատկառութիւն կամ մեծապէս վնասեաց զարս կամ աւգտեցոյց»:

10 Արդ զայսպիսի անպատկառութիւն ախորժէին, որ լաւագոյն է քան զամաւթ, որգոն հաջելով ընդդէմ այնոցիկ, որք ոչ էին ի նոցայն իմաստասիրութենէ: 11 Երրորդ պատճառ, եթէ պահպանական կենդանի է շուն՝ պահէին նոքա զկարծիս իմաստասիրութեան ի ձեռն ապացուցիցն եւ յոյժ մեծամտէին ի վերայ այսոցիկ. քանզի ասաց արդեաւք Անտիսթենիս վերակացու նորին հերձուածոյ այսպէս.

12 «Ինն բացաթափանցիկ նետս շեռտաժայռս.

13 Եւ զսա ոչ կարացի հարկանել կատարի շունս», այսինքն՝ եթէ անչափ փորձութիւնս ի վերայ ածի եւ ոչ կարացի ի վայր արկանել զխորհուրդս նորա: 14 Չորրորդ պատճառ՝ եթէ որոշական կենդանի է շուն՝ ծանաւթութեամբ եւ անծանաւթութեամբ զսիրելին եւ զայլացին որոշելով. քանզի գոր ճանաչէն՝ սիրելի կարծէ, թէ եւ բիրս ի վերայ ողան հանդիպի առնլով, իսկ գոր ոչ ճանաչէ՝ թշնամի կարծէ, թէպէտ եւ կեր ինչ հանդիպի առնլով: 15 Նոյնպէս եւ նոքա զպատկանաւղս իւրեանց իմաստասիրութեան սիրելիս կարծելով՝ մտերմութեամբ ընդունին, իսկ զանպատշաճողս ի բաց հալածէին՝ զաւրէն շանց ընդդէմ հաջելով: 16 Վասն որոյ Պղատովն ի Գորգիայ տրամաբանութեանն ասէ, թէ ունի ինչ իմաստասիրութիւն շուն՝ որոշելով զսիրելին եւ զթշնամին: 17 Եւ որոշել զճշմարտութիւն եւ ստույթիւն միայն ի-

մաստասիրութեանն է: 18 Արդ այսպէս եւ հինգերորդ յեղանակն:

19 Վեցերորդ յեղանակ որ ի կատարմանէ, որպէս անուանեալք Հեշտականքն. քանզի կատարումն էականցն զհեշտութիւն իմաստասիրութեան ասէին, որոց սկիզբն եղեւ էպիկուրաս, որում աճակից եղեւ Մենանդրոս: 20 Արդ սոքա Եպիկուրեանքս մինչեւ յերկնայինսն ասէին գոլ զնախախնամութիւն եւ դադարեցուցանէին, զի մի կիրս ինչ կալցի աստուածայինն, որպէս հետաքրքիր գոլով առ ստորեայցս: 21 Բայց յիշէ զկարծիսս զայսոսիկ եւ Մենանդրոս յեպիտոնական գործառնութեանն, յորժամ ասէ այսպէս.

22 «Կարծես եթէ այնչափ ինչ ունին աստուածք պարապութեան,

23 Որպէս զի զչարն եւ զբարին յամենայն աւուր

24 Բաշխեն իւրաքանչիւր ումեք, ո՛վ Սմիկոնի»:

25 Արդ սոքա ասէին կատարումն գոլ զհեշտութիւնն՝ ոչ գյոռագոյնն զափորողիտականացն եւ զայլոցն, այլ զանթախանձութիւն կրիցն եւ զդադարականն եւ զհաստատողականն զհոգոյ, որպէս զի մի՛ կրեսցէ յոռի ինչ կիրս: 26 Սակայն եւ ոչ այսպէս կարող գոն զողորդն ասել, վասն զի ոչ է հեշտութիւնն կատարումն բնութեամբ. քանզի ոչ վասն այնորիկ է ներգործութիւն բնութեան, որպէս զի հեշտասցուք, այլ հիւսեաց զհեշտութիւն ընդ ներգործութեան՝ պատրել զմեզ ի ձեռն հեշտութեան վասն տաժանողական ներգործութեանցն. քանզի տաժանումն է՝ ոչ քաղցելոց ուտելն եւ ոչ ծարաւելոց ըմպելն՝ եւ ոչ տենչալով աստղկեանցն՝ զաստղկեանցն գործել: 27 Արդ հեշտութիւնն ո՛չ է կատարումն՝ հետեւի եւ շարահիւսի ըստ բնութեան ներգործութեան, որ-

պէս ստուերն գնացելումն լուսում:
28 Այսպէս եւ վեցերորդ յեղանակն:

29 Եւթներորդ յեղանակ հոմանունութեան¹ ըստ իմաստասիրութեան հերձուածոցն յումեմնէ պատահմանէ, որպէս ձեմականք: 30 Ընդ այսմ պատճառի Պղատոն ճեմելով առնելով զմերձաւորութիւն որ ըստ ուսմանց, վասն զի այն ինչ հանդերձ հոգևով եւ զմարմինն կրթել: 31 Եւ ի մարդկայինց ի բաց գնացելոյ յաջորդէ զպարապարանն նորա Սպեսիպոս՝ որդի Պոտոնեայ՝ քեռ Պղատոնի. քանզի այն ինչ որ հանդիպիւր անդ Արիստոտէլիս, այլ կոչեցեալ էր ի Փիլիպեայ ի Մակեդոնիայ առ վարժել զորդի նորա զԱղեքսանդրոս. զոր առեալ յինքն՝ այնպէս խնամով վարժեաց ի թագաւորական արհեստն՝ որպէս ասել Աղեքսանդրի, յորժամ ուրեք ոչ զոք աւգտեցոյց՝ եթէ «Այսաւր ոչ թագաւորեցի, վասն զի ոչ ումեք շնորհեցի բարի»: 32 Եւ երբեմն յասել Արիստոտէլի, եթէ անբաւ աշխարհք են ըստ Դէմոկրիտոսի՝ յարտասուս ասեն հարեալ զԱղեքսանդրոս ասել, եթէ ոչ միում բոլորում աշխարհում կարող եղէ ինքնակալ գոլ: 33 Անտի դարձեալ Արիստոտէլ՝ յաջորդէ զպարապարանն Սպեսիպոսի Քսենոկրատաւ, եւ կոչին երկոքեան ձեմականք տեղաւքն զանազանեալք. քանզի Արիստոտէլականքն կոչին Լիւկիէացիք ձեմականք, իսկ Քսենոկրատեանքն՝ Ակադիմականք ձեմականք: 34 Իսկ ժամանակաւ, որպէս պատահէ, պակասեաց ոմանց անուն տեղւոյն եւ կոչէին ձեմականք միայն, այլ ոչ Լիւկիէացիք՝ Արիստոտէլականքն, իսկ Քսենոկրատեայցն ներգործութեան անունն պակասեաց եւ կոչէին Ակադիմականք: 35 Արդ ձեմականք կոչեցան, ոչ եթէ ի ճեմել ինչ ուսուցանէին եւ ուսանէին, այլ վասն զի յաջորդեցին զպարապարանն Պղատոնի միջնորդութեամբ Սպեսիպոսի:

36 Այսոքիկ են յեղանակք մականունութեան ըստ իմաստասիրութեան հերձուածոց: 37 Բայց եւ յաւելցուք եւ զպատճառ եւթն գոլոյն յեղանակս՝ ոչ յորովս եւ պակասս: 38 Եւ պարտ է գիտել, եթէ անուանեցան ըստ իմաստասիրութեան հերձուածք կամ ի պատահմանէ, որպէս ձեմականք, եւ կամ ի մտածութենէ. եւ ի մտածութենէ, կամ ի պարակայէ կամ ի նախատեսութենէ. եւ ի պարակայէ՝ կամ յանուանէ կամ ի տեղւոյ: 39 Եւ եթէ յանուանէ, որպէս Պղատոնականք, իսկ եթէ ի տեղւոյն՝ կամ յանձատականէ եւ կամ յանանձատականէ: 40 Եւ եթէ յանանձատականէն² առնէ զի հայրենեացն հոմանունութիւն³: 41 Իսկ եթէ յանձատականէն⁴ առնէ զի տեղւոյն հոմանունութիւն⁵: 42 Իսկ եթէ ի նախատեսութենէ, կամ ի կատարմանէ՝ որպէս անուանեալքն Հեշտականք, եւ կամ ի ստեղծմանէն որ առ կատարումնն, եւ յայսմանէ՝ կամ ի գիտականէն կամ ի կենցաղականէն: 43 Եւ եթէ ի գիտականէն՝ առնէ զանուանեալ Արգելականսն, իսկ եթէ ի կենցաղականէն՝ առնէ զՇնականսն: 44 Այսոքիկ եւ յեղանակս պատճառի հոմանունութեանցն:

1 Ընդ այսոսիկ հանդերձ աստուծով եւ առաջիկայ տեսութիւնս
ՊՐԱԿՔ Դ

2 Երկրորդ գլուխն է յառաջադրեցելոց մեզ ասել զբաժանումն Արիստոտելականաց շարագրութեանց հազարից ելոց թուով, որպէս Անդրոնիկոս աւանդեաց՝ մետասաներորդ յաջորդ գոլով յԱրիստոտելէ: 3 Արիստոտելականկք շարագրու-

1 Յուն. ἐπωνυμία

2 Յանձատականեմ. ուղղում եմք ըստ յուն. ἀχαρίστου
3 Յուն. ἐπωνυμίαν
4 Յանձատականեմ. ուղղում եմք ըստ յուն. χαρίστου
5 Յուն. ἐπωνυμίαν

թիւնքն՝ ոմանք մասնականք են եւ ոմանք հանուրք եւ ոմանք միջակք: 4 Բայց մասնականք ասին՝ ոչ որպէս առ մի ինչ գրեալք, քանզի կարող է հանրական իրողութիւն առ մի ոք գրել, քանզի այսպէս եւ որ Յաղագս աշխարհի իրողութիւն է, հանրական գոլով՝ առձաւնեալ գոյ Աղեքսանդրի թագաւորի, այլ մասնական ասեմ՝ որքան յաղագս մասնականի եւ միոյ եւ առ մի ոք, որպէս թուղթք նորին: 5 Քանզի թուղթք նորին առ մի ոք գոն գրեալք, զորս յուր գիրս ժողովեաց ոմն Արտեմոն յետ Արիստոտելի եղեալ: 6 Իսկ ընդհանուրք ասին, որք զամենայն տեսակաց բուռն հարկանեն, որպէս Բնական լսաւորութիւնքն յաղագս ամենայն բնականաց, եւ Յաղագս երկնի, եւ Յաղագս լինելութեան եւ ապականութեան, եւ Յաղագս բարձրականացն որք վասն ամենեցուն, որք ի վերնաւղեայ տեղումն բաղկանան: 7 Իսկ ոմանք ընդ մէջ մասնականացն եւ հանրականաց, որչափ ոչ յաղագս բոլորեցուն եւ ոչ յաղագս միոյ, այլ գոլովից բուռն հարկանէ, որպէս պատմութիւն, որ երկակի է՝ ոմն քաղաքական՝ որպէս Քաղաքականութիւնքն, զորս պատմագրեաց վասն ընդ բազում երկրաշարժելոյ հանդերձ Աղեքսանդրի թագաւորաւ, զորս աւանդեաց ըստ տառիցդ երկերիւր եւ յիսուն գոլով թուով, իսկ ոմն բնական՝ որպէս Յաղագս տրնկոց եւ կենդանեաց պատմագրութիւնք:

8 Իսկ ընդհանրականացն՝ ոմանք են ստորայիշատականք եւ ոմանք շարադասականք: 9 Եւ ստորայիշատականք են, յորս գլուխս միայն գրէր առանց նախերգութեան եւ մակաբանութեան եւ վայելչական աւանդութեան: 10 Իսկ ստորայիշատականք, վասն որոյ ոչ է պարտ ի ստորայիշատականացն հաւանիլ արիստոտելական կարծեաց, որպէս ուղղեցելոց ի վերջոյ: 11 Արդ այսոցիկ ստորայիշատականացն՝ ոմանք միայնատեսակք եւ ո-

մանք պէսպէսք: 12 Եւ միայնատեսակք են, որպէս կարծեցան, Յաղագս մեկնութեան՝ եւ ստորայիշատականք վասն անհաւաստութեան, յառաջ քան զգրեալն ի նա ստորայիշատակութեան Ամոննի իմաստասիրի իրաւացուցանել, եթէ եւ նախերգութիւն ունի, եւ մակաբանութիւն, եւ զվայելուչ աւանդութեան խոստումն: 13 Իսկ ի պէտս կարծեաց են՝ գրեալքն առ Եւկէրոս ոմն եւթանասուն գիրս Յաղագս պէսպէս եւ շփոթեալ խնդրոց առանց նախերգութեանց եւ մակաբանութեանց:

14 Իսկ շարադասականացն՝ ոմանք ինքնադէմք, որք եւ լսաւղականք կոչին, եւ ոմանք տրամաբանականք, որք եւ արտաքինք կոչեցան: 15 Եւ որպէս ինքնադէմք՝ ընդդիմակայք գոն տրամաբանականաց, իսկ որպէս լսաւղականք՝ արտաքոյականաց: 16 Քանզի զամենայն մարդ աւետեցուցանել կամելով Արիստոտել՝ գրեաց եւ առ պատկանաւորս իմաստասիրութեան յիւր յերեսաց, որք եւ լսաւղականք կոչեցան, որպէս զի պարտ է ամենայն իրաւք նոցա ունկն դնել. ուստի Բնական¹ ունկնդրութիւն կոչեցաւ, վասն զի բարեփորձ գտաւ յայնոսիկ Արիստոտել որք ոչ գոն պատկանաւոր իմաստասիրութեան՝ ի տրամաբանականսն: 17 Արդ յունկնդրականսն, որպէս առ արս հանդերձեալ իմաստասիրել խաւսելով՝ ապացուցից պիտանանայ, իսկ ի տրամաբանականսն, որպէս առ արս արտաքոյս իմաստասիրութեան խաւսելով՝ հաւանականից պիտանանայ բանից. ստեղծանելով զանմահութիւն անձին եւ յունկնդրականսն եւ ի տրամաբանականսն, եւ յունկնդրականսն հարկեցուցանողաւք բանիւք ստեղծանելով, իսկ ի տրամաբանականսն հաւանեցուցանողաւք եւ յիրաւի. քանզի ասէ Յաղագս անձին յունկնդրականումն, եթէ անձն անապական է. քանզի եթէ ապականացու էր՝

1 Բանական, յուն. Φυσική

պարտ էր նմա ապականիլի ծերական թա-
ռամութեան. իսկ նա յայնժամ աճէ, յոր-
ժամ մարմինն զառանցէ. իսկ այն որ յոր-
ժամ պարտ էր ապականիլ աճէ՝ անապա-
կան է, ապա ուրեմն անապական է անձն:
18 Արդ այսպէս յունկնդրականսն: 19 Իսկ
ի տրամաբանականսն այսպէս ասէ՝ եթէ
անմահ է հոգին, վասն զի իւրովի ամե-
նայն մարդ գինեճաւնութիւնս առնէ զնա-
ցելոցն եւ երդնուն նոքաւք: 20 Արդ եթէ
ոչ էր անմահ հոգին՝ ոչ երդնուն ի նա.
Քանզի ոչ ոք յոչ երդնու եւ ոչ ձաւնէ ինչ
նմա: 21 Իսկ Աղեքսանդրոս մեկնիչ այլ
զանազանութիւն առնէ ունկնդրականացն
առ տրամաբանականսն, եթէ յունկնդրա-
կանսն զիւր զկարծիս ասէ եւ զճշմարիտն,
իսկ ի տրամաբանականսն զայլու եւ
զսուտն: 22 Այլ, ո՛վ Աղեքսանդրէ, ասեմք
առ նա, եթէ ոչ այդ է իմաստասիրի. քան-
զի զսուտն ընդունել եւ եղծանել զճշմա-
րիտն ոչ իրաւացի. քանզի ըստ Հոմերոսի.

23 «Թշնամի ինձ այնպիսի այր սա-
կայն եւ ի դրունս դժոխոց,

24 Որ այլ ինչ թագուցանէ ի սրտին
եւ այլ ինչ ասէ»:

25 Արդ այսպիսի զանազանութիւն աս-
սէ Աղեքսանդրոս ունկնդրականացն եւ
տրամաբանականացն, վասն զի ոչ կամի
զբանական հոգի անմահ: 26 Իսկ Արիստո-
տել ի տրամաբանականսն եւս առաւել
քարոզէ զանմահութիւն հոգւոյ: 27 Արդ
զի մի՛ յանդիմանեսցի ի տրամաբանակա-
նացն Արիստոտելի, վասն այսորիկ ասաց
զայսպիսի զանազանութիւն ունկնդրակա-
նացն եւ տրամաբանականացն:

1 Ընդ այսոսիկ հանդերձ աստուծով եւ
առաջիկայ գործաւորութիւն

ՊՐԱԿՔ Ե

2 Բաժանումն ինքնադիմացն ըստ բա-
ժանման իմաստասիրութեան լինի: 3 Քան-
զի որպէս իմաստասիրութիւն յերիս բաժա-

նի ի տեսականն, ի գործականն, ի բանա-
կանն՝ նոյնպէս եւ ինքնադէմքն. քանզի
ինքնադիմացն ոմանք տեսականք, ոմանք
գործականք, ոմանք բանականք: 4 Եւ իւ-
րաքանչիւր ոք ի սոցանէ յերիս բաժանի.
Քանզի տեսականն յերիս բաժանի՝ ի բնա-
բանականն, յուսումնականն, յաստուածա-
բանականն. իսկ գործականն՝ ի բարոյա-
կանն, ի տնաւրինականն, ի քաղաքականն.
Իսկ բանականն՝ յառաջ քան զհնարս, ի
նոյն ինքն ի հնարս եւ յայնս՝ որք ընդ
հնարիւքն մտանեն: 5 Արդ բնականքն Ա-
րիստոտելի կամ յաղագս մարմնոց են կամ
յաղագս անմարմնոց: 6 Եւ եթէ յաղագս
անմարմնոց¹ են, կամ յաղագս այնոցիկ՝ որ
յոռեգոյնք են քան զմարմին, կամ յաղագս
լաւագունիցն քան զմարմին: 7 Եւ եթէ
յաղագս լաւագունիցն քան զմարմին, որ-
պէս Յաղագս հոգւոյ իրողութիւն (քանզի
հոգի լաւագոյն քան զմարմին բնաւորե-
ցաւ գոյ), իսկ եթէ յաղագս յոռեգունից
քան զմարմին, որպէս Յաղագս գունից նո-
րա խնդիրք. քանզի գոյնք յոռեգոյնք են
քան զմարմինս, վասն զի ի նոսա ունին
զգոյն: 8 Իսկ եթէ յաղագս մարմնոց է
բնաբանութիւն նորա՝ կամ յաղագս վեր-
նագունիցն քան զլուսին, որպէս երկնա-
յինք մարմինք եւ յաղագս նոցա խնդիրք,
որպէս սակս յարդագողիդ եւ աստեղց, եւ
արեգական, եւ լուսնի, եւ կամ յաղագս
ներքնագունից քան զլուսին, եւ այսոցիկ
կամ յաղագս ընդհանուր մարմնոց բնու-
թեան, որպէս Յաղագս լինելութեան եւ ա-
պականութեան խնդիրք, եւ կամ յաղագս
մասնականաց: 9 Եւ եթէ յաղագս մասնա-
կանաց՝ կամ անշնչից կամ ներշնչից:
10 Եւ եթէ ներշնչից՝ կամ սգայնոց կամ
անսգայնոց: 11 Եւ եթէ յաղագս անզգայ-
նոց ներշնչիցն, որպէս Յաղագս բուսոց եւ
տնկոց նորա խնդիրք. իսկ եթէ յաղագս
զգայնոցն՝ եւ այս դարձեալ կամ սակս

1 Մարմնոց, յուն. δσωμάτων

ընդհանուրը, որպէս Յաղագս կենդանեաց նորա պատմութիւն, յորում ասէ զկիրս կենդանեաց, եւ յաղագս ծերութեան եւ յաղագս մանկութեան, եւ յաղագս ամման եւ նուագութեան, քանզի այսոքիկ հանուրք են եւ ամենայն կենդանեաց գոն, եւ կամ սակս առանձնականացն, որպէս Յաղագս նախագիտութեան որ յերազոց. քանզի այս առանձինն մարդում միայն գոյանայ: 12 Իսկ դարձեալ եթէ յաղագս ներքնագունիցն քան զլուսին են խնդիրք բնաբանութեան՝ կամ յաղագս վերնագունիցն քան զերկիր եւ կամ որք յերկրումս, կամ սակս այնց որ ի ներքոյ երկրի: 13 Եւ եթէ յաղագս վերնագունիցն քան զերկիր, որպէս Ամբարձականք նորա, յորում ասէ սակս ծխային եւ գոլորշայնոյ շոգոլեաց, սակս որոտմանց եւ փայլակմանց, ամպոց եւ սակս ցոլակաց եւ վարսաւորաց, եւ խանձողացն եւ այծոցն եւ այլ տեսակացն: 14 Իսկ եթէ սակս այնոց որ յերկրում, որպէս Յաղագս ծովուց, որպէս սակս գետոց եւ աղբերց իրողութիւնք: 15 Իսկ եթէ սակս որ ի ներքոյ երկրի, որպէս Յաղագս շարժմանց եւ պատառմանց խնդիրք: 16 Եւ այսոքիկ յաղագս բնականացն Արիստոտելի: 17 Իսկ ուսումնականք նորա՝ որպէս Յաղագս Երեւականացն նորա եւ Հնարականաց գրեալ գիրք: 18 Իսկ աստուածաբանականք նորա՝ որպէս որք Յետ բնականացն յաղագս սկզբանց ինն գիրք: 19 Արդ այս բաժանումն տեսականացն:

20 Իսկ գործականացն ոմանք են բարոյականք, յորում զբարեբարոյութիւն ուսուցանէ՝ որպէս Եւգենմայինք եւ Նիկոմաքայինք¹ մեծք եւ փոքունք. քանզի է ինչ որ առ հայրն գրեաց, որ կոչի մեծ Նիկոմաքայինք, եւ է ինչ որ առ որդին, որ կոչեն փոքր Նիկոմաքայինք: 21 Իսկ տնաւրինականքն՝ որպէս Տնաւրինականք նորա

գրեալ գիրք յետ տնաւրինական շարակարգութեան, յորում Վասն կենակցութեան առն եւ կնոջ, յորում ասէ ի չորից ունակութեանց զբարեկարգութիւն տան: 22 Իսկ Քաղաքականն շարակարգութիւնք, յորում ուսուցանէ եթէ զիա՛րդ պարտ է քաղաքավարի: 23 Եւ յերկրորդ բանում Քաղաքականին ընդդէմ ասէ Քաղաքավարութեանն Պղատոնի: 24 Իսկ ի Քաղաքավարութիւնսն ոչ ասէ, եթէ զիա՛րդ պարտ է քաղաքավարի, այլ եթէ զիա՛րդ առաջինքն քաղաքավարեցան:

25 Իսկ բանականն նորա բաժանի յերիս՝ ի յառաջ քան զպպացոյց՝ այսինքն զհնարս, ի նոյն ինքն յապպացոյցն եւ ի ներքս մտեալսն յապպացոյցն: 26 Եւ են յառաջ քան զհնարս՝ այսինքն զպպացոյցն՝ Ստորագութիւնքն են Յաղագս մեկնութեան եւ Առաջինք վերլուծութեանցն: 27 Իսկ ոմանք զնոյն ինքն զպպացոյցն ուսուցանեն, որպէս այլ երկու եւս Վերլուծութիւնք²: 28 Իսկ մտեալք ի նոյն ինքն յապպացոյցն, որպէս Տեղականքն եւ ճարտասանական արհեստքն, եւ Իմաստականք յանդիմանութիւնք, եւ Յաղագս քերթողականին, քանզի հինգ են տեսակք շարաբանութեան՝ այսինքն ապպուցի՝ ապպուցականն, տրամաբանականն, ճարտասանականն, իմաստականն, քերդողականն: 29 Եւ յիրաւի հինգ են, վասն զի նախագասութիւնքն ուստի լինին հինգ են. քանզի կամ ամենեւիմք ճշմարիտ են առաջարկութիւնքն եւ առնեն զպպացուցականն, եւ կամ ամենեւիմք սուտ են եւ առնեն զքերդողական զառասպելուտն, կամ է ինչ որ ճշմարիտ եւ է որ սուտ. եւ այս եռակի՝ կամ առաւել ունի զճշմարիտն եւ առնէ զառաջնոցն տրամաբանականն, եւ կամ առաւել ունի զսուտն քան զճշմարիտն եւ առնէ զիմաստական ապպուցոյցն, եւ կամ հանգէտս միմեանց զսուտն եւ զճշմարիտն

1 Եւդիտաիմֆ եւ Նիկոմաքիմֆ, յուլ. Εὐδοκεία καὶ Νικομάχεια

2 Յուլ. τὰ δευτέρα ἀναλυτικά

եւ առնէ զճար տասանականն: 30 Ուստի կամեցուք ճարտասանին միայն տեսանին վասն հանգիտանալ միմեանց ճշմարտին եւ ստին: 31 Եւ պարտ է գիտել, եթէ, բանականն գործի է իմաստասիրութեան. քանզի զոր ինչ պէտս կատարէ հիւսան լարն հիւսան՝ որոշելով զգորդն եւ զգելն, եւ շինողին ըստակն՝ որոշելով զթեւերն եւ զուղղորդն՝ այսպէս եւ բանականն՝ գործի գոլով իմաստասիրութեան՝ որոշէ ի միմեանց զսուտն եւ զճշմարիտն, զչարն եւ զբարին, զի մի՛ սուտ ինչ կարծեսցուք եւ մի՛ չար ինչ գործեսցուք:

1 Ընդ այսոսիկ հանդերձ աստուծով եւ առաջիկայ ՊՐԱԿԳ Զ

2 Եւ արդ վասն զի բազում գոլ զԱրիստոտէլական շարագրածութիւնս իմացաք ի ձեռն բաժանման եւ ոչ գիտեմք՝ եթէ ո՛ր առաջին եւ ո՛ր վերջին եւ ո՛ր միջին առ ի սկիզբն առնել՝ բե՛ր գերիսս զայսոսիկ ի կիր առցուք զի՛նչ սկիզբն Արիստոտելի շարագրութեանց եւ զի՛նչ կատարումն եւ զի՛նչ որ ընդ մէջ ճանապարհն:

3 Բայց զայսոսիկ խնդրեմք ոչ միայն վասն բազմութեան նոցա, այլ եւ վասն տարաձայնութեան առաջնոցն. վասն զի ոմանք ասէին՝ եթէ պարտ է ի բնաբանականէն սկիզբն առնել, եւ ոմանք՝ ի բանականէն, եւ այլք՝ ի բարոյականէն, եւ ոմանք՝ յուսումնականէն: 4 Քանզի Բոյիթոս Սիդոնացի ասէր, եթէ ի բնաբանականէն պարտ է սկիզբն առնել. իսկ Անդրոնիկոս Ռոդացի՝ մետասաներորդ յաջորդն Արիստոտէլի՝ ասէր ի բանականէն սկիզբն առնել, իսկ ի Պղատոնականացն՝ ոմանք ի բարոյականէն եւ ոմանք յուսումնականէն: 5 Եւ իւրաքանչիւր ոք զիւր կարծիս ստեղծանէր: 6 Քանզի որք ասէին ի բարոյականէն սկիզբն առնել՝ ասէին եթէ արժան է նախ եւ առաջին զարդարել զբարս

եւ մաքրել զհոգի յամենայն չարաբարոյականացն բարուց, վասն զի մաքուր գոլով՝ մաքրագունապէս մերձեսցի յիմաստասիրութիւնն. քանզի «անմաքուր ի մաքուրն հպել ոչ իրաւ» ըստ Պղատոնի, որպէս եւ ի բժշկականութեան ասեն, եթէ «զանմաքուրս ի մարմնոցն որչափ դարմանեսցես՝ առաւել վնասեսցես՝ նիւթ տալով չարամաղձութեան», եւ որպէս ոչ կարողութիւն է բլշականաւքն աչաւք եւ այտուցելաւք ստուգաբանել յաղագս տեսանելեացն, նոյնպէս եւ որ չարաբարոյականաւք կարծեաւք հասեալ ունի զհոգին եւ ձեռնարկէ ուսուցանել մեծ սկզբմունս՝ սուտ կարծելութեան շնորհէ, եւ անվարժ ո՛չ այն որ ոչինչ գիտէ, այլ որ զմանկայինն յինքեան ոչ ունի ամփոփեալ ի չարէ. քանզի է մանկային ինչ ի մեզ եւ ծերոցելոց՝ անբան հոգի, զոր պարտ է վարժել. եւ վարժեալ առ ի Պղատոնէ ոչ այն որ բազում ինչ գիտէ եւ հոսէ յինքենէ վկայաբանութիւնս, այլ որ զմանկականն յինքեան ամփոփեալ ունի, որպէս ասացաք, ի չարէ: 7 Վասն որոյ ասէ Պղատոն. «Իմաստասէր կոչեմ ես՝ որ զբարիք վարս ստացեալ է, թէպէտ եւ ոչ գիր [եւ ոչ] զուղղել¹ գիտէ», զփութագոյնսն առ ի յԱթենացւոց. քանզի զգիրս վասն իմաստասիրութեան ուսանէին, իսկ զուղղել² վասն նաւամարտութեան: 8 Արդ այսոքիկ այսպէս:

9 Իսկ որք ասէին, եթէ ի բնաբանութեանէն արժան է առնել սկիզբն՝ ասէին եթէ բնականքն կակղագոյնքն են, որպէս աննդակիցս մեր եւ ի մանկութենէ շաւշափեալք առ ի մէնջ՝ մարմին եւ ջիւք եւ երակք, եւ վասն զի բժիշկք սկիզբն առնելով բժշկութեան՝ ի կակղագունից դեղոցն սկիզբն առնեն, եւ վասն զի առաւել թուի Արիստոտէլ բարեփորձ լինիլ ի բնականս

1 Ուղղեալ, յուն. καθ' ἡµετέρας γράμματα μήτε νεῖν ἐπίσταται
 2 Ուղղել, յուն. νεῖν

իրողութիւնս: 10 Արդ այսպէս եւ սոքա: 11 Իսկ որք ասեն, եթէ պարտ է յուսումնականէն սկիզբն առնել՝ ասեն եթէ արժան է նախ զուսումնականն ընթեռնուլ վասն հաստատութեան ապացուցին, քանզի զայստոսիկ ստուգապէս ուսանիմք, իսկ զայլն ամենայն կարծեալք հասանեմք եւ քննութեամբ քան թէ ուսանելով, եւ վասն զի յայտոսիկ ուսանիմք, եթէ զիս'րդ ուսանել պարտ է, եւ եթէ գործականաւք հաւատարմութեամբ եւ ոչ յարժանահաւատարմութիւնս երեսաց յեցեալք, եւ վասն Պղատոնի մակագրեցելոյ ի համալսարանէն՝ «Աներկրաչափն մի՛ ներամտեսցէ»:

12 Իսկ որք ասեն, եթէ արժան է ի բանականէն¹ սկիզբն առնել՝ ասեն եթէ գործի է բանականն² իմաստասիրութեան, եւ արժան է նախ գիտել զգործին եւ այնպէս պիտանանալ նմա: 13 Քանզի այսպէս առնեն եւ ի ձեռնարհեստականսն, վասն զի երթեալն ի հիւսնականն նախ եւ առաջին ուսանի զգործին՝ զդուրն, զչաղափն, եթէ յի՛նչ պէտս են, եւ ապա պիտանանայ նոցա ըստ իւրաքանչիւր գործոյ: 14 Արդ այսպէս եւ այտօքիկ: 15 Բայց բե՛ր մեք ասացուք, ուստի պարտ է սկիզբն առնել: 16 Արդ պարտ է մեզ սկիզբն առնել ի բարոյականէն, վասն զի ոչ այլ կարծրագոյն քան զսոսա ունիմք, որք ասեն եթէ պարտ է ի բարոյականէն սկիզբն առնել. քանզի ուսանիմք զբարս ոչ ի սովորութենէ՝ հարուածով որպէս ճարակայինք ի կենդանեաց, այլ պարտ է ի բանականէն սկիզբն առնել: 17 Սակայն եւ ոչ այնպէս պարտ է անփոյթ առնել զբարոյականէն, այլ եւ զնոսա զարդարել ի ձեռն զգաւնութեանց ներագրեցելոցն եւ անգրիցն, որպիսիք են Իսկրատայն, որպէս զի պատրաստ գտեալ բանին՝ զմաքրագոյնս վարուցն կառուցի

ի նոսա: 18 Եւ գիտելի է՝ եթէ իմաստասիրութեան ի տեսականն եւ ի գործականն բաժանեցելոյ, եւ տեսականին յաղագս ճշմարտին որ ի բանս է լինելոյ եւ զսուտն որոշելոյ, իսկ գործականին յաղագս բարւոյն որ ի գործսն է եւ զչարն որոշելոյ, եւ ի ներքսեանց շարաբանութիւնն՝ այսինքն ապացոյցն՝ գործի գոլով իմաստասիրութեան ընտրութիւն եւ բացընտրութիւն, որպէս զի ի տեսականին ընտրեսցէ զճշմարիտն եւ բացընտրեսցէ զսուտն, նոյնպէս եւ ի գործականին ընտրեսցէ զբարին եւ բացընտրեսցէ զչարն. որպէս զի մի՛ սուտ ինչ կարծեսցուք եւ ստոյն հաւատասցուք եւ մի՛ չար ինչ գործեսցուք: 19 Եւ եթէ էր լինալ յաւուրս Պղատոնի բանականդ՝ ո՛չ արդեւք մակագրէր ի դրուես համալսարանին՝ «աներկրաչափն ոք մի՛ ներամտեսցէ», զորոյ զաւրութիւն եւ ինքն եցոյց երբեմն ասելով ի Սոփիստէս տրամաբանութեանն այսպէս. «Կրթեա՛ զքեզ ինքն կոչեցելովքն առ ի յոքունց թախանձութեամբ, տակաւին եւս նոր գոլով համբակ, ապա եթէ ո՛չ՝ փախիցէ ի քէն ճշմարիտն», թախանձութիւն կոչեաց զհեռակացութիւն³ իրացն՝ այսինքն զբանականն: 20 Քանզի Արիստոտէլ ի բանականումն փոխանակ իւրաց դնէ զտառս ք՛ զայբն, զբեն, զգիմ, ասելով եթէ այբն բենին գոյանայ եւ բենն գիմին՝ ապա ուրեմն եւ գիմին գոյանայ այբն, եւ ի ձեռն սոցա ուսուցանէ զչարահիւսմունս շարաբանութեանցն, յարաժամ ոցա պիտանանալով՝ թախանձէ զընթերցաւն. զայտոսիկ եւ մեք ասացաք՝ ուստի՛ պարտ է սկիզբն առնել:

1 Ի բնաբանականէն. ուղղում ենք ըստ յուն. ἀπὸ τῆς λογικῆς

2 Բնաբանականն

3 Զհեռակցութիւն

1 Ընդ այսուսիկ հանդերձ աստուծով եւ առաջիկայ պրակֆս

ՊՐԱԿՔ Է

2 Եւ վասն զի եցոյց մեզ բանս, եթէ պարտ է ի բանականէն սկիզբն առնել՝ նախագարգարեալ զբարս, որպէս զի մաքուրք գոլով մաքրապէս մերձեցուք յիմաստասիրութիւն. եւ եւս իմաստասիրութեան բաժանեցելոյ ի տեսականն եւ ի գործականն՝ բանականն զաւրէն մաղի գոլով, որպէս յառաջագոյն ասացաք, ընտրէ ի տեսականէն զճշմարիտն եւ ի գործականէն զբարին, եւ բացորոշէ ի տեսականէն զսուտն եւ ի գործականէն զչարն, զի մի՛ սուտ կարծիս ընկալցուք վասն գոյիցն եւ մի՛ չար ինչ գործեսցուք, ունելով զբանականն որոշիչ՝ այսինքն զապացոյցն, որ է արդարեւ Հերմէական մոլութիւն, որով զինեալքն ոչ մեղկին եւ պարտին ի յուշկապարկաց՝ այսինքն յայլակարծեաց հերձուածոցն իմաստասիրութեան, որպէս Ուրիսեւս՝ ընկերաց նորա խոզացելոց ի դեղոցն Կիրկեայ, իսկ որ ապացուցիւ ոչ է զինեալ՝ լինի խոզ Բիւոտացի: 3 Արդ հաւաքեաց բանս՝ եթէ պարտ է ի բանականէն սկիզբն առնել եւ յառաջագոյն զարգարել զբարսն:

4 Եւ վասն զի սակաւիկ ինչ յառաջագոյն վասն սկզբանց ճառեցաք, իսկ ուր սկիզբն է՝ անդ եւ կատարումն, բե՛ր յազազ կատարման՝ եթէ զի՛նչ կատարումն է Արիստոտելի իմաստասիրութեան՝ խնդրեսցուք. վասն զի գտանելով զկատարումն՝ յաւժարագոյն լինիմք յընթեռնուլն, զի որք ո՛չ գիտեն զկատարումն կուրաց գոն քատակեալք՝ գնացելոց եւ ի նոյն բերիլոց: 5 Արդ է կատարումն Արիստոտելի իմաստասիրութեանն գիտելն՝ եթէ մի է սկիզբն ամենայն գոյից: 6 Քանզի ընդունել զասացեալսն ի քերթողէն ի վերայ Աստուծոյ, քան թէ ի վերայ թագաւորի՝ եթէ ո՛չ բարիօք է յոքնատէրութիւն՝ մի է տէր

եւ թագաւոր: 7 Եւ զի մի սկիզբն է բոլորից գոյից՝ ցուցանէ Արիստոտէլ, Յետ բնաբանութեան աստուածաբանելով այսպէս՝ եթէ սկիզբն կամ մի է կամ յոքունք, եւ եթէ մի է՝ ահա՛ ունիմք զոր ինչ խնդրեմքն, իսկ եթէ բազումք են՝ կամ կարգաւորեալք եւ կամ անկարգք: 8 Եւ եթէ անկարգք են՝ անկարգագոյնք են այնք որք ի նոցանէն, եւ ոչ եւս եղիցի այս աշխարհ զարդարեալ կարգաւորութեամբ, եւ նոյն ժամայն քակտելի եղիցի առանց բնութեան եւ ըստ բնութեան ոչ ելոյ: 9 Իսկ եթէ կարգաւորեալք գոն՝ կամ յընթեանց գոն կարգաւորեալք կամ արտաբուստ յայլմէ ումեքէ պատճառէ: 10 Եւ եթէ յընթեանց գոն կարգաւորեալք՝ ունին հասարակ ինչ մի, որ կարգաւորեաց գնոսա, եւ այն է սկիզբն: 11 Իսկ եթէ յարտաբուստ յայլմէ ումեքէ պատճառէ՝ կամ ի միոջէ եւ կամ ի բազմաց: 12 Եւ եթէ ի միոջէ՝ աստուստ մի է եւ սկիզբն: 13 Իսկ եթէ ի բազմաց՝ կամ ի կարգաւորելոց կամ յանկարգից: 14 Եւ ոչ դադարեցից գնոյնս շրջապատել մինչեւ ցանբաւն: 15 Իսկ անբաւին ոչ ելոյ՝ ահա մի է բոլորեցուն սկիզբն: 16 Եւ այսպէս՝ սկիզբն կամ մի է կամ յոքունք: 17 Եւ եթէ յոքունք՝ կամ գնոյնս յարածեն ի գոյս եւ կամ այլք գայս: 18 Եւ եթէ գնոյնս յարածեն՝ աւելորդ է միւսն, իսկ ոչինչ ի սկզբմանէ եւ կամ յաստուածութեան աւելորդ: 19 Իսկ եթէ այլ եւ այլք յարածեն ի գոյսս՝ պակաս եղանի իւրաքանչիւր ոք. քանզի պակաս է յարածեալն ի միոյն ի միւսմէն: 20 Այլ ոչինչ սկիզբն եւ աստուածութիւն անկատար եւ թերի եւ ոչ երբեք . ապա ուրեմն՝ մի է բոլորեցուն սկիզբն: 21 Եւ նա է արարիչ երկնայինց եւ այնոցիկ, որք ընդ լուսնով են ենթակցեալք: 22 Քանզի եթէ համայն աստուած եւ համայն աշխարհ ըստ Արիստոտելի, այլ պատճառաւ յառաջ է աստուած քան զաշխարհ: 23 Եւ ոչ եթէ ինքնեղ է աշխարհ՝ զաստուած պատճառ

ունելով, որպէս եւ արեգակն յառաջագոյն գոյ իւր լուսոյն ըստ պատճառի միայն: 24 Ապա եթէ ոք ասէ, եթէ բազում սկզբունք են ըստ Արիստոտելի (քանզի որչափ ինչ են, որ շուրջն շարժին՝ այնչափ են եւ շարժաւոր նոցա. քանզի ասէ եւթն շրջանակացն եւթն միտս երակացեալս շարժաւորս, իսկ զնոսա գոլ անշարժ), այլ եւ այսպէս մի է սկիզբն, ընդ որով յարմարեալք գոն ամենայն ստորադասեալք միտք՝ նաեւ մի միտք գոլով անշարժ եւ անպատճառ՝ որ շարժէ զանմուլարն: 25 Ապա եթէ ասես, «վասն է՞ր զմիտսն ասէ նախկին եւ նախագոյն զսկիզբն եւ ոչ զբարին՝ որպէս Պղատոն», գիտասցես զի յետ բնաբանականացն աստուածաբանելով, իսկոյն Յետ բնականաց իրողութեանց յիրաւի զանպատճառ միտսն ասէ սկիզբն՝ որպէս բնաւորականագոյն. այլ գիտէ եւ ինքն զբարին զմին զբոլորից սկիզբն, որպէս յայտ արար ի նախերգանու մն Բարոյականին՝ այսպէս ասելով, եթէ «ամենայն արհեստ եւ ամենայն հնար եւս եւ գործք եւ յաւժարութիւն բարւոյ ումեք թուի տենչալ»: 26 Եւ բարիոք երեւեցոյց զբարին, քանզի ամենայն ոք նմա տենչայ: 27 Եւ գիտելի է, եթէ միշտ աստուածաբանելով բնաբանէ, քանզի թէպէտ յաղագս այնոցիկ՝ որք շարժին՝ բնաբանութիւն լինի, իսկ յաղագս անշարժիցն աստուածաբանութիւն, այլ սակայն անշարժքն՝ այսինքն աստուածայինքն՝ պատճառք լինին շարժելութեան, որպէս դարձեալ Պղատոն միշտ բնաբանելով աստուածաբանէ, եւ ամենայն ուրեք շրջապատելով՝ զիմանալեացն տեսանէ կարծիս:

28 Հինգերորդ գլուխ էր, յորում խնդրէաք՝ եթէ զինչ է ընդ մէջ ճանապարհն: 29 Եւ պարտ է գիտել, թէ հինգ աշտիճանք են ամենայն իմաստասիրութեան՝ բանականն, բարոյականն, բնաբանականն, ուսումնականն, աստուածաբանականն. յորոց ծայրք են երկու՝ բանա-

կանն եւ աստուածաբանականն, իսկ մէջք՝ այլքն: 30 Ի սոցանէ ոմանք զսրսկարանաց եւ մաքրարանաց քատակեցան, իսկ ոմանք հուպ ի կատարեալսն եւ ոմանք ի կատարելոց եւ նոցին խորհրդածութեանց: 31 Արդ սրսկարանաց եւ մաքրարանաց քատակեցաւ բարոյականն՝ մաքրելով զհոգին ի շար բարուականաց կարծեաց, որպէս զի մաքուր եւ կարգաւոր եղեալ՝ մաքրապէս մերձեսցի յիմաստասիրութիւն, իսկ հուպկատարելոցն քատակեցաւ բնաբանականն, քանզի թէպէտ եւ անշարժ խնդրեմք ի բնաբանութեանն եւ շարժեցեալս յաստուածաբանութեան, այլ սակայն աստուածայինքն պատճառք գոն շարժելութեան բնականացն, եւ շարժելոցն ի հանգամայնս գամք շարժողաց անշարժիցն. իսկ աներեւելին յերեւելոյն փութագոյն ունի զճանաչելն: 32 Իսկ նոցին կատարելոց քատակեցաւ ուսումնականն՝ որպէս սանդուխք ինչ եւ կամ կամուրջ յամենեւիմք նիւթականացն առ ամենեւիմք աննիւթականսն: 33 Այսոցիկ ամենեցուն բազին եւ տաճար եղեւ Արիստոտելի իմաստասիրութիւնն: 34 Իսկ բանականս զաւրէն ցանկոյ շուրջ եկեալ պահպանէ զամենայն տեսութիւնս որ յիմաստասիրութեան ի ձեռն ապացուցի:

1 Ընդ այսուսիկ հանդերձ աստուծով եւ առաջիկայ պրակֆս

ՊՐԱԿՔ Ը

2 Յառաջիկայում գործաւորութեանս խնդրեմք զվեցերորդ եւ զեւթներորդ գլուխն. քանզի եկաք զմեզ եւ զձեզ քննել: 3 Եւ խնդրեսցի ի վեցերորդ գլխումն, եթէ որպիսի՛ պարտ է գոլ լսաւորին ըստ վարուց եւ ըստ գիտութեան: 4 Իսկ յեւթներորդն՝ եթէ որպիսի՛ պարտ է լինել եւ մեկնաւորին: 5 Արդ եղիցի լսաւորն կարգաւոր ըստ վարուց եւ փոքր աշխարհ, որպէս զի ի ձեռն կարգաւորութեանն, որ ի

նմա, զմինն զբոլորեցունց զսկիզբն ծանիցէ, վասն զի կարգաւորութիւն ի միոջէ, իսկ անկարգաւորութիւն ի բազմաց, զի ի ձեռն աշխարհին, որ յինքեան, զբոլոր աշխարհս ծանիցէ: 6 Արդ եղիցի լսաւդն փոքր աշխարհ. արդ որպէս ի բոլորում աշխարհում լաւագոյնքն ընդ ընքեամբ անկեալ ունին զյոռեգոյնսն՝ այսպէս պարտ է բանի ընդ իւրեւ ունել զբարկութիւն, բարկութեան զցանկութիւն: 7 Քանզի յոռի է, որպէս ասէ Պղատոն, եթէ այր ոքմի ի մասին յոռեգունին անկանիցի. քանզի զարդարէ զբան խոհեմութիւն. եւ զբարկութիւն՝ արութիւն, եւ զցանկութիւն՝ ողջախոհութիւն: 8 Եւ այսոցիկ բարիոք յարդարելոց եւ առանձնագործսն եղելոց՝ երեւի արդարութիւն, ոչ յայս միայն մասին անձին կամ յայն. այլ որպէս յարմարումն ինչ գորով՝ նոցին յամենեսին տեսանի: 9 Արդ այսպէս եղիցի ըստ վարուց լսաւդն: 10 Իսկ ըստ գիտութեան եղիցի ստոյգ՝ ոչ յանգչելով յարժանահաւատութիւնս երեսաց: 11 Քանզի այս պրակիս ոչ հաւատալով, վայրապար համարելով՝ այլ յեղանակաւ հաւատասցէ Սոկրատում՝ որ ասէ՝ «Սոկրատում սակաւ ինչ հոգ տարցի, իսկ ճշմարտութեան յոյժ», հաւատասցէ եւ Արիստոտէլում՝ որ ասէր ի Բարեոյականումն՝ «եթէ սիրելի է այրն՝ սիրելի եւ ճշմարտութիւնն, եւ երկոցունց սիրելեաց ելոց՝ ընտրելի է եւ մանաւանդ ճշմարտութիւնն»: 12 Եւ վասն այլ իրաց պարտ է ստոյգ լինել լսաւդին, վասն զի ի միոջէ իրէ բնաւորեցաւ լինել եւ ատելաբանութիւն եւ մարդատելութիւն, որպէս ասէ Պղատոն ի Փեդոնում՝ տրամաբանութեան՝ ի դիւրապէսն հաւատալոյ բարուց կամ բանից: 13 Քանզի ոմանք յառաջ քան զփորձ առնուլ ընտանեցուցեալ ընքեանց զոմանս, որպէս պիտանացու բարուց ստացաւդս, իսկ ինքնագիտաւղք եղեալք յետ-

նագունից նոցա բարուց՝ յայնմհետէ մարդատեցողք եղեն: 14 Եւ որք հաւատացին բանից ոմանց հաստատնոց եւ անխզից՝ եւ յետոյ տեսեալ զնոսա աւցտեալ եւ եղծեալս ի տրամաբանականացն՝ յայնմհետէ բանատեցողք եղեն: 15 Արդ զի մի եղիցուք մարդատեցողք եւ բանատեցողք՝ պարտ է մեզ լսաւդացն ստոյգս լինել, պարտ է նմա ոչ ընդունել զերկարածգութիւնս բանից, այլ տալ զինքն ըստ հարցմանց եւ պատասխանեաց վասն Սոկրատայ որ ասէ «Թէ ոչ դու քեզ ինքեան լսես՝ այլում ասելոյ մի՛ հաւատասցես», այսինքն՝ եթէ դու որ տաս զառաջարկութիւն, ի հարկէ եւ զեզրակացութիւնս տաս՝ ոչ հաւատաս. քանզի տվաւդ սերմանցն է պատճառ չարաչար բուսոցն: 16 Քանզի պարտ է ասել առ այն՝ որ արտաքուստն ձեռնարկէ ասել զեզրակացութիւն եւ ոչ ետ զառաջարկութիւն՝ «Զիա՞րդ արդեւք դու ինձ ասասցես՝ զոր ինձ պարտ է ասել», եւ առ այն որ զառաջարկութիւնսն ետ եւ կազի վասն եզրակացութեան՝ եթէ «ի քէն եւ ոչ յինէն զայդ լսես»: 17 Պարտ է նմա ոչ լինել հակառակող եւ վիճկու. «Քանզի որ յայտնագունիցն ընդդէմ երթայ», որպէս ասէ Արիստոտէլ, «կամ սգայութեանց պէտս ունի կամ տանջանաց. եթէ գիտելով ընդդէմ ասէ ճշմարտութեանն՝ տանջանաց, իսկ եթէ անգիտանալով սգայութեանց եւ ուսմանց»: 18 Արդ այսպիսի եղիցի մեզ լսաւդն:

19 Իսկ մեկնիչ եւ պատմաւղ եղիցի միանգամայն եւ պատմաւղ եւ մակացաւղ: 20 Եւ է պատմաւղին գործ մեկնութիւն անհաւաստեաց բառից, իսկ մակացուին՝ որոշմունք ճշմարտիցն եւ ստից, այսինքն՝ ծնրնդականացն ի հողմայինս: 21 Պարտ է նմա ոչ փոփոխակից լինել՝ զորս պատմէն եւ մեկնէ՝ զաւրէն տաղաւարականացն որ զանազան երեսս զգեմուն վասն նմանութիւն առնելոյ զանազանից բարուց, եւ Արիստոտէլական լինել՝ յորժամ զԱրիստո-

1 Ի Փեդոնում

տելին պատմէ, եւ ասել՝ եթէ ոչ եղեւ այսպիսի իմաստասէր, եւ Պղատոնական լինել՝ յորժամ զՊղատոն մեկնէ, եւ ասել՝ եթէ ոչ եղեւ որպէս Պղատոն իմաստասէր: 22 Պարտ է նմա ոչ ամենայն իրաւք բռնադատել եւ ասել՝ եթէ ամենայն իրաւք ճշմարիտ է գոր մեկնէն, այլ ամենայն ուրեք ասել՝ «սիրելի այր, սիրելի է եւ ճշմարտութիւն, եւ երկոցուն սիրելեաց եւրոց՝ ընտրելի է ճշմարտութիւնն»:

23 Պարտ է նմա ոչ կրակից՝ լինել հերձուածոյ ումեք, որպէս Յամպղիբոսն եղեւ. քանզի սա կրակից եղեալ Պղատոնի՝ շնորհիւ Արիստոտելի ոչ ընդդէմ ասել Պղատոնի վասն տեսակացն, այլ մանաւանդ ձայնակցել: 24 Պարտ է նմա ոչ ընդդիմակիր լինել ի կարծեաց ումեք, որպէս Աղէքսանդրոս. քանզի Աղէքսանդրոս՝ ընդդիմակիր եղեալ անմահութեան բանականի անձին՝ զասացեալսն առ ի յԱրիստոտելէ յերրորդում ճառին՝ Վասն անմահութեան անձին, որք ցուցանեն եթէ անմահ է բանական անձն՝ փորձի զամենայն շրջունս շրջել առ ի մահականացու ցուցանել զբանաւոր անձն: 25 Պարտ է նմա զամենայն զԱրիստոտէլականսն գիտել, որպէս զի ձայնակից իւր արարեալ՝ զԱրիստոտէլ ի ձեռն Արիստոտելի պատմեսցէ: 26 Պարտ է նմա եւ զամենայն զՊղատոնականսն գիտել, որպէս զի զՊղատոն ձայնակից իւր արասցէ եւ զԱրիստոտէլականսն Պղատոնականաց ներածութիւն արասցէ:

1 Ընդ այսուսիկ հանդերձ աստուծով եւ առաջիկայ պրակս

ՊՐԱԿՔ Թ

2 Ութերորդ գլուխ առաջագրելոցն խնդրել՝ եթէ զի՛նչ տեսակ է՝ այսինքն յարմարաբանութիւն՝ Արիստոտելի շարագրածութեանց: 3 Արդ է ոչ մի տեսակ, այլ զա-

նագան. բայց եթէ ոք ասիցէ այլ յեղանակաւ մի գոլ՝ յամենայն ուրեք նմանս գոլով եւ պատշաճագոյն ըստ ենթակայից իրողութեանց. քանզի որպէս նման են ենթակայից իրողութեանց՝ թուի մի գոլ. քանզի զանագան իրաց բուռն հարեալք՝ ամենայարմար տեսակաւք բանից պատշաճեցոյց, կերպարանակցելով զյարմարաբանութիւնս ենթակայից իրողութեանց: 4 Վասն որոյ ի մասնականսն, այսինքն՝ ի թուղթսն, փոյթ եւ կարճառաւ է, հասարակ միանգամայն եւ առանձինն. եւ հասարակ՝ վասն զի ոչինչ զանագանի թղթական յարմարաբանութիւն հասարակ խաւսից, բայց միայն ներագրաւորն գոլով եւ առ տարացիս. իսկ առանձինն, զի մի ի տգիտականն անկցուք: 5 Վասն որոյ եւ Հերմոգենիս, որ զձարտասանական արհեստն գրեաց՝ ասէ. «Ձնորն հասարակաբար եւ զհասարակաբարն որպէս». քանզի, որ հասարակ մտածութիւն ունին՝ պարտ է աւտարավայելուչ բառիւք յարմարել, զի մի արհամարհեսցի վասն գետնաքարչ բառիցն եւ մտածութեանցն. իսկ զնորագոյնսն դարձեալ եւ զաւտարավայելուչ մտածութիւնսն պարտ է հասարակական բառիւք յարմարել, որպէս զի խորագոյնք գոլով իմասցին: 6 Այլ եւ կծու է, եւ զի կծու է՝ յայտ առնէ մի ոմն ի թղթոցն. քանզի յետ մահուն Սոկրատայ, ելեալ յԱթենից՝ տաժիւր ի Քաղաքիդում, եւ վերստին կոչելով որ յԱթենս եւ ոչ հաւանեալ՝ գրեաց այսպէս. «Ոչ հաւանեցուցից զԱթենացիս երկիցս մեղանչել զիմաստասիրութիւն, առ որս՝ խոզատանձ ի վերայ խոզատանձի ծերանայ եւ թուզ ի վերայ թզոյ»: 7 «Թուզ ի վերայ թզոյ» գրելով՝ զգրպարտողսն նշանակեաց:

8 Իսկ ի միջակսն, այսինքն՝ յերկուս պատմագրութիւնսն, ստոյգ տրամայաւդեալ, որ մանաւանդ պատշաճ է պատմագրութեան. քանզի ոչ է, որպէս յայլսն՝ արտաքուստ ինչ ձեռնարկութիւնս առնել՝ նոյնպէս եւ ի պատմագրութեան: 9 Իսկ ի

1 Կրանակից

յընթանրականն ի տրամաբանականն, որպէս առ արտաքոյս իմաստասիրութեան խաւսելով, իսկ ի տրամաբանականն՝ խիստ եւ զանազան, նմանութեամբք Աստղական անուամբք եւ շնորհաւք լի: 10 Իսկ ի հանրականն եւ յինքինադէմսն, որ եւ յունկնդրականն, ըստ բառից անհաւաստի, իսկ ըստ անուանաբերութեան հաւաստի, որպէս յորժամ ասէ ստորոգութիւն եւ քեղաւոր եւ տեղի. ոչ զայն տեղի որոյ եզրն պարունակաւ է այն՝ որ պարունակի ի նմանէ, որպէս սահմանեաց ի Բնաբանութեան, այլ տեղի անուանէ զձեռնարկութիւնն՝ որ բազում ձեռնարկութիւնս պարունակեալ ունի յընքեան: 11 Դարձեալ՝ որպէս յորժամ մեկնութիւն ասէ զանպաճոյճ բառն մեկնութեանն: 12 Եւ այլազգ դարձեալ անհաւաստի է Արիստոտէլ. քանզի տարակուսելով՝ ոչ իսկոյն առընթեր դնէ զլուծումն, այլ շարամանէ զերկրորդ եւ զերրորդ տարակուսութիւնն, եւ այնպէս ահա ի ձեռն լուծման յերրորդ տարակուսութեանն լուծանէ գառաջին տարակուսութիւնն, զոր ոչ կարէ ի միտ առնուլ ընթերցաւղն եւ ոչ ի վերայ կալ երեւելեացն. իսկ մտածութիւնն ոչ հեռի կայ յերեւելեացս, վասն զի աղաչէ զամենեսեան եւ հարկաւորէ ի ներգործութենէ երեւելեացն զցուցեալսն հաւատացուցանել: 13 Եւ զցուցեալսն ի ձեռն բանից՝ վկայութեամբք հնոցն վերակնքէ, ասելով այսպէս թուի Եռակղիտեայ եւ էմպէդոկղեայ: 14 Եւ զվերագոյնս քան զընութիւն քննելով հաւատարմանայ՝¹ յայնցանեաց՝ որ ըստ բնութեանն են. վասն որոյ միշտ աստուածաբանելով բնաբանէ, որպէս եւ Պղատոն բնաբանելով աստուածաբանէ, ամենայն ուրեք յարաշրջեցուցանելով զկարծիս տեսակացն:

15 Իններորդ գլուխ է առաջադրեցելոցն խնդրել, թէ զի՞ զանհաւաստութիւն

ախորժեաց Արիստոտէլ. վասն զի ոչ էր բնութեամբ անհաւաստի՝ արդեաւք վասն պատմական տկարութեան զայս ախորժեաց, քանզի ի յոլով իրս հաւասարաբար պատմէ, որգովն ի մասնականն յամենեսեան եւ յայնս՝ որք ընդ մէջսն են, եւ ի հանրականացն ի տրամաբանականն յամենեսեան եւ յինքնադիմացն յոմանս, որպէս յԱմբարձականն եւ ի Տեղիս եւ յիմաստականս յանդիմանութիւնս, եւ բնութեամբ գոլով հաւաստի՝ զանհաւաստութիւն ախորժեաց: 16 Բայց ախորժեաց զանհաւաստութիւն վասն երկից պատճառաց՝ կամ թագուցանելոյ սակս, կամ փորձելոյ, կամ կրթելութեան. քանզի որպէս առ ի քերթողացն առասպելքն եւ առ ի քահանայիցն վայրագոյրք՝ նոյնպէս առ ի յԱրիստոտէլեան հաւաստութիւն, բայց զի զՈրփիականն միայն ոչ երգէ զայն եթէ.

17 «Երգեմ հանճարողաց, եւ դրուես ի վերայ ունկան դիք պիղծք».

18 Նմանն սորին՝

19 «Չարախոհիցն պղծաց զթաւս ալանջացն պարածածկեսցեն սարդի ոստայնիւք».

20 Եւ զԿաղղիմաքայինն՝

21 «Յիջանել կողովին ընդ գետին հայեցարուք կանայք,

22 եւ ոչ ի ձեղուանց եւ մի՛ ի բարձանց ճաճանչէք»:

23 Եւ Արիստոտէլու մերեմն մեղադրելով Աղէքսանդրոս վասն արտատուութեան իւրոց շարագրածացն՝ «եւ արտատրեալ է» ասաց «եւ ոչ արտատրեալ», առակելով զանհաւաստութիւն իմն ի Պիլթագորականացն արտատրեալ զասացեալ միայնագիրսն որ Վասն բանից գծաց՝ ի նաւաբեկութեան ըմբռնեցաւ որպէս զանճառսն արտակաքաւեալ. եւ զոր ասէն Պղատոն վասն անհաւաստութեան, «եթէ

1 Հաւատանա

եւ տախտակագիրն ուրեք կիրս կրեսցէ՛ յերկրում եւ կամ ի ծովում, որ ընթեռնուն մի՛ գիտասցէ»։ արդ՝ այսպէս թագուցանելոյ սակս։ 24 Եւ կամ սակս փորձելոյ զպատկանաւորս եւ զանպատկանաւորս իմաստասիրութեան, որպէս զի անպատկանաւորքն առ իմաստասիրութիւն թիկունս դարձուցեն, առ որս պարտ է ասել զՀոմերականն՝ եթէ

25 «Ո՞ւր փախչեսցին թիկունս դարձուցեալ, որպէս յոռի ոք ի պատերազմում»,

26 իսկ պատկանաւորք առ իմաստասիրութիւն յորդորագոյնք եղիցին, ուսանելով՝ եթէ որչափ ինչ պէտս ճգնութեան ունին առ ի յուղղիլ իմաստասիրութեամբ. առ որս է ասել զՊղատոնականն՝ զոր ի Մանկաւրէնումն ասէ. «Արդ՝ եթէ դժուարք եւ եթէ դեւրք՝ ընդ այս ուսմունս գնալի է՝ այս է ճանապարհ. անփոյթ առնել ոչ է պարտ»։ 27 Արդ՝ այսպէս եւ արծուիք որոշեն զհարազատագոյնսն եւ զխորդսն ի ճագուց՝ կացուցանելով զնոսա ընդդէմ արեգականն. եւ որ միանգամ անքթթակի կարող գոն հայել ընդ ճառագայթսն արեգական, հանելով այնուհետեւ ի բոյնս՝ որպէս հարազատս սնուցանեն։ 28 Իսկ որք ոչ կարեն հայել ընդդէմ ճառագայթից արեգականն՝ որպէս խորթս՝ ի բաց ընկենելով ի բունաց՝ անտի սատակեն։ 29 Քանզի որպէս արամագոյսին [եւ] թագաւորական գոլով արծուի՝ եւ զթագաւորականն ի զգայութեանց ստուգեալ ունի, այսինքն՝ զտեսարանն։ 30 Եւ զի թագաւորական է արծուին՝ յայտ է, զի ոչ երբեք կերակրի մեռեալոտեալք։ 31 Այսպէս եւ Կեղտացիք Ռինոսիւ գետով որոշէին զհարազատս յորդեացն եւ զչնայինսն. քանզի դնելով զնոսա ի վերայ վահանաց՝ թողուին ի հոսանս գետոյն այսր եւ անդր բերիլ։ 32 Եւ որք

միանգամ ընկողմէին ի հոսանացն՝ որպէս որդիս շնացելոց կարծելով՝ անփոյթ առնէին, իսկ որք ապրէինն՝ առ հարազատս ունելով՝ խնամով սնուցանէին։ 33 Իսկ Պիւթագորականք զպատկանաւորս եւ զանպատկանաւորս առ իմաստասիրութիւն երագովք փորձեալք նախաճանաչէին. քանզի քննէին զնոսա յետ բազում աւուրց յաղաւթս կալ հրամայելոյ՝ եթէ որպիսիս երագս տեսին։ 34 Եւ զորս կարծէինն պատկանաւորս գոլ առ իմաստասիրութիւն՝ ընդունէին ի պարապարանն, իսկ զանպատկանաւորսն հալածէին ամենայն գոյիւ։ 35 Եւ այնուհետեւ ունայնաշիրիմն շինելով նոցա՝ որպէս ընդ մեռելոց կաճառէին։ 36 Վասն որոյ եւ Քիզովն Լակեդոմովնացի զայս կիրս կրեալ ի նոցանէ՝ հուր հարեալ զպարապարանէն նոցա՝ զբազումս ապականեաց։ 37 Իսկ Պղատոն ի ձեռն գինոյ որոշէր զպատկանաւորս եւ զանպատկանաւորսն, լաւագոյն եւ ճարտարագոյն քան զՊիւթագորաս առնելով. վասն զի յերագս մարթ գոյ եւ յաւելուլ եւ պակասեցուցանել, բայց արբեցեալք՝ զամենայն ինչ անբաժ եռակի արտապատմեմք, զոր յառաջն բազում ծածկութիւնք թագուցանէաք։ 38 Արդ՝ այսպէս եւ փորձելոյ սակս։ 39 Իսկ կրթութեան՝ որպէս Պղատոն զդաժանութիւն կարծմանցն ախորժեաց կրթութեան սակս։ 40 Այսպէս եւ Ապողոն զառչեղութիւն նախասացութեան՝ փորձելոյ սակս. վասն որոյ եւ Կոխոսի տուաւ անհաւաստի պիտած.

41 «Կոխոսս ընդ Հաղէս անցեալ մեծ իշխանութիւն քակտեսցէ»։ քանզի անյայտ էր՝ եթէ զիւրն եթէ զԿիւրոսին. ուստի զաւրաժողով եղեալ՝ զյետնագոյսն վիճակեցաւ։ 42 Եւ Աթենացոց երբեմն պիտած տուաւ.

43 «Պարիսպ Տոխտածնի փայտեղէն տայցէ մեծագանձն Արամագղ»։

1 Գիրս գրեսցէ

44 քանզի յայտնէր՝ եթէ ի ձեռն եռա-
 վարիցն պարտ է նոցա նաւամարտել. քան-
 զի զայս նշանակէր փայտեղէն պարիսպն:
 45 Յորոյ վերայ եհաս թեմիստոկղիս
 դժնեայ գոլով յիմանալ: 46 Եւ Սաղամի-
 նացւոց տուաւ պիտած որ ասէր.

47 «Մի վաստուածային Սաղամիսս,
 յուզես դու գորդիս կանանց». անյայտ գո-
 լով՝ եթէ գորոց արդեւք կանանց, զիւ-
 րեանցն եթէ զհակառակամարտիցն:
 48 Արդ՝ միանգամայն ասել, եթէ որպէս
 քերթողացն առասպելք եւ քահանայից
 վայրագոյրք՝ այսպէս եւ Արիստոտէլի ըստ
 բառիցն անհաւաստութիւն, թագուցանելոյ
 սակս: 49 Դարձեալ՝ որպէս արծուեաց ա-
 րեգական եւ Կեղտացւոց Ռինոս գետ, Պիւ-
 թագորականաց երազք, Պղատոնի գինին՝
 այսպէս եւ Արիստոտէլի ըստ բառիցն ան-
 հաւաստութիւն, փորձելոյ սակս: 50 Եւ
 որպէս դարձեալ Պղատոնի կարծմանն դա-
 ժանութիւն եւ Ապողղոնի առչեղութիւն
 նախասացութեանցն՝ այսպէս եւ Արիստո-
 տելի ըստ բառիցն անհաւաստութիւն,
 կրթութեան սակս:

1 Ընդ այսոսիկ հանդերձ աստուծով եւ
 առաջիկայ պրակֆս

ՊՐԱԿՔ Ժ

2 Տասներորդ եւ վերջին գլուխ առա-
 ջադրեցելոցն խնդրելի է քանի՞ս եւ որպի-
 սի՞ս ոմանս գլուխս պարտ է յառաջագոյն
 առնուլ ամենայն Արիստոտէլական շա-
 րագրութեան: 3 Արդ՝ վեց գլուխս պարտ է
 ամենայն Արիստոտէլականի յառաջագոյն
 առնուլ՝ զգիտաւորութիւն յորժամ ի մա-
 կագրութենէ անտի քարոզի. վասն զի ա-
 մենայն ինչ առ ի դիտաւորութիւն հայի,
 որպէս եւ Պղատոն ասէ. «Մի մանուկ դու,
 մի է սկիզբն գեղեցկաբար խորհելոյ. գի-
 տելն յաղագս ո՛յր է մտածութիւնն. ապա
 եթէ ոչ՝ հարկ է յամենայնէն վրիպել»:
 4 Բայց քարոզի դիտաւորութիւնն ի մա-

կագրութենէ, որպէս Յաղագս անձին եւ
 Յաղագս երկնի եւ Յաղագս լինելութեան
 եւ ապականութեան: 5 Բայց մանաւանդ
 խնդրելի է դիտաւորութիւն, յորժամ ոչ ի
 մակագրութենէ քարոզի, յորժամ յոյժ ան-
 հաւաստի է մակագրութիւն եւ տարալսելի՝
 որպէս Ստորոգութիւնք, որպէս Յաղագս
 մեկնութեան: 6 Իսկ պիտանացուն խնդրե-
 լի է վասն յաւժարագոյնս լինելոյ զընթեր-
 ցաւսն՝ հայցեալս որպէս կեր ինչ կարկա-
 ռեալ զառ ի նմանէ շահն առ տրփականս
 զուարդակցութիւն: 7 Բայց մանաւանդ
 խնդրելի է զպիտանացուն առ թուեցեալսն
 վարկպարագի գրեալս գիրս, որպէս Տեղիք՝
 զնոյն ստեղծանելով եւ եղծանելով, կամ
 առ չար ինչ գրեալս, որպէս Սոփեստա-
 կանք յանդիմանութիւնք՝ յեղանակս խա-
 բէութեան ուսուցանելով: 8 Յաղագս որոց
 է ասել, եթէ եւ Տեղիք առ բարիոք իրս
 գրեցան՝ սակս կրթութեան, որպէս զի նե-
 ղելով հոգի յիւրաքանչիւրսն ձեռնարկու-
 թեանց բացածնեսցի զճշմարտութեանն
 լոյս, զաւրէն հրահանաց քարանցն յարչ-
 փելոց ընդ միմեանս եւ հուր բացաթողոց
 ընդ միմեանս եւ լոյս: 9 Եւ ոչ իմաստա-
 կան յանդիմանութիւնքն առ չար ինչ
 գրեցան, թէպէտ եւ յեղանակս խաբէու-
 թեան ուսուցանեն. այլ ոչ որպէս զի խա-
 բեսցուք, այլ զի մի՛ խաբեսցուք: 10 Քան-
 զի այսպէս եւ բժիշկք ուսուցանեն զմա-
 հացուան ոչ վասն պիտոյից, այլ որպէս զի
 փախիցեն ի նմանէ: 11 Իսկ զպատճառս
 մակագրութեանն խնդրելի է, եւ յորժամ
 զգիտաւորութիւն քարոզէ, բայց մանա-
 վանդ խնդրելի է զմակագրութիւն, յորժամ
 անհաւաստի գոյ, յորժամ անուանաստեղ-
 ծէ Արիստոտէլ՝ որպէս ի Ստորոգութիւնսն,
 որպէս Յաղագս մեկնութեան: 12 Քանզի
 յորժամ ասէ Ստորոգութիւն, ո՛չ գատենա-
 կան դատախազութիւն, որպէս սովորու-
 թիւնն է՝ նշանակէ, այլ զսեռականա-
 գոյնսն, որք սովորութիւն ունին միշտ
 ստորոգել եւ ոչ ստորակայիլ: 13 Եւ դար-

ձեալ Յաղագս տեղեաց, ո՛չ զեզր պարունակողին՝ ըստ որում պարունակող է պարունակիցեալն, որպէս ասեմք պարունակիցեալ զգինին ի ներքուստ մակերեւութենէն, այլ զորոշումն ի բազմաց որոշմանց պարունակական: 14 Եւ դարձեալ Յաղագս մեկնութեան ասելով, ո՛չ ըստ բառին մեկնութիւն նշանակելով, այլ զմտածութիւնս հոգւոյն:

15 Ընդ որս խնդրելի է եւ յաղագս եղելոց խորթութեանց: 16 Քանզի խորթանան գիրք ըստ հինգ յեղանակս. կամ յաղագս բարեմտութեան աշակերտաց, որք զիւրեանց շարագրածութիւնս իւրեանց վարդապետացն ձաւնեցին, որպէս պատճառաց բարեաց, որպէս Պիւթագորի եւ Սոկրատայ Պիւթագորականաց եւ Սոկրատականաց:

17 Եւ կամ վասն թագաւորականի պարգեւի. քանզի Իովբատայ Լիւբէացոց թագաւորի հաւաքեցելոյ զայնս, որք Պիւթագորին գոյին, իսկ Պտղոմիոսի՝ զայնս, որք Արիստոտէլի՝ ոմանք վասն շահի վայրապար շարագրածութիւնս առնելով՝ խայտաղանէին եւ փտեցուցանէին, դնելով ի նորս ցորեանս, որպէս զի ընկալցին խոստովանաբար զառ ի ժամանակէն արժանահաւատութիւն:

18 Կամ վասն հոմանունութեան շարագրողաց եւ շարագրածութեանց եւ ստորայիշատակմանց. եւ շարագրաւղաց՝ ո՛չ եթէ միայն Արիստոտէլ Ստագիրացին այսպէս կոչէր, այլ եւ այլք Արիստոտէլք եղեն առ Ստագիրացեալն, որպէս մանկամարզն եւ մականուանեալն Առասպել, եւ յետ նորա՝ նոյն Ստագիրացին՝ վարդապետն Աղէքսանդրի: 19 Արդ՝ սոցա ամենեցուն շարագրութիւնս արարելոց՝ կարծին այնք շարագրութիւնք Ստագիրացւոյն գոլ վասն անուանի երեսն ունելոյ:

20 Այլ եւ վասն հոմանունութեան շարագրածութեանց լինին պատրանք.

քանզի եւ շարագրածութիւնս հոմանունան թողին հոմանունք Արիստոտէլք. եւ կարծի ամենայն Ստագիրացւոյն գոլ վասն անուանին գոլոյ:

21 Այլ եւ վասն հոմանունութեան ստորայիշատակման լինին պատրանք. քանզի Աղէքսանդրի ո՛չ միայն Ստագիրացւոյն Արիստոտէլի զգիրս ստորայիշատակեալ, այլ եւ զայլոց Արիստոտէլացն, եւ կարծին ամենայն ստորայիշատակմունք ի Ստագիրացւոյն գիրս արարեալ վասն նշանաւոր գոլոյ առնն:

22 Եւ կամ վասն յընտրութիւնս գոլ այլոց՝ կարծեցան նորին իսկ գոլ արարաւղին զընտրութիւնս, եւ ոչ նախատպից շարագրաւղացն: 23 Եւ կամ վասն ամպարհաւաճութեան ստացաւղին տարավայելուչ գիրս. քանզի ոմանք անանուանիք գոլով շարագրաւղք, զնշանաւորաց շարագրաւղացն զգիրս առեալ, վասն կարծելոյ եւ տարավայելուչս ունիլ գիրս՝ մակագրէին զանուն նշանաւոր շարագրաւղին: 24 Ընդ այսոսիկ է հարազատն: 25 Իսկ զկարգն խնդրելի է ոչ առ անհամատեսական միայն, որ ասացաւ մեզ, յորժամ ասէաք՝ եթէ պարտ է զբանականն նախադասել եւ յետ այսորիկ զբարոյականն եւ այնպէս մի ըստ միոջէ, որպէս ասացաք, այլ առ համատեսական խնդրելի է զկարգ՝ բանական գրոցն՝ զո՛ր դաս ունի առ բանականսն, եւ առ բնաբանականսն¹ բնաբանականն: 26 Իսկ զառ ի մասունս բաժանումն խնդրելի է, որպէս վերահատման դաս ունելով: 27 Քանզի որպէս վերահատումն խորագունից մասնկացն վերափեռեկութիւնս առնելով՝ իւրաքանչիւր մասնկան զպէտսն յարկացուցանէ², նոյնպէս եւ ի մասունս բաժանումն ուսուցանէ՝ զի՛նչ կամի առաջին հատած գրոցն:

1 Բարոյականսն, յուն. ἡ πρὸς τὰ φυσικά τὸ φυσικόν

2 Յարկացոցէ

28 Իսկ եթէ որպիսի՝ մասն յո՛ր մասնիկ վերաբերի՝ ոչ խնդրեմք, որպէս վերագոյն ասացեալ է, յորժամ ասէաք, եթէ որպիսի՞ ինչ բաժանումն Արիստոտէլականի որ Ստորոգութիւնք ցուցանէ, եթէ բանք ինքեանք իւրեանց զաւրութեամբ կարացին գոլ այնպիսիք, որպիսիք եւ իրքն իսկ են: 29 Քանզի նոյնպէս Արիստիդէս¹ զաւրութիւն վկայելով՝ զՅաղագս քառիցն մակազրեաց ի վերայ բանիցն այսպէս՝ Կիմոն, Միդտիազիս, Պերիկղիս², Թէմիստոկղիս: 30 Այլ եւ Պղատոն մակազրէ այսպէս՝ Գորգիաս, Փէդոն, Փեդրոս: 31 Իսկ որք մակազրեն Յաղագս ստորոգութեան կամ Սակս տասն սեռից էակին ցուցանեն, եթէ բանք ինքեանք վասն իւրեանց տկարութեան ոչ կարացին գոլ այնպիսիք, որպիսիք իրքն գոն: 32 Բայց յաղթէ եւ այնմ մակազրութիւն՝ որ ասէ Յառաջ քան գտեղիսն: 33 Քանզի թէպէտ եւ պարտ է զզասաւորութիւնն մակազրութիւն առնել, որպէս Յետ բնականացն, այլ անդ յիրաւիք քանզի եւ միայն հետեւի Բնականացն³ եւ միայնոց: 34 Իսկ առաջիկայ գիրքս ոչ միայն յառաջապետէ Տեղեաց, այլ եւ այլոց իրաց: 35 Գիտէ զամենայն մակազրութիւնս Արիստոտէլ՝ մակազրելով Ստորոգութիւնս, Տեղիս եւ այն Յաղագս երկնի եւ Յաղագս աշխարհի: 36 Արդ՝ այսպէս եւ պատճառ մակազրութեանն:

37 Յորս ասասցուք եւ զհարազատն. եթէ հարազատ է նախնոյն առնթերակայ գիրքս մի ի շփոթակցութենէ յարմարաբանութեանցն, ի դաժանութենէ մտածութեանցն եւ վասն յանուանէ յիշելոյ զյառաջիկայ գիրքս յայլ յիւր յիրողութիւնս, ասելով՝ եթէ «որպէս ասացեալ է ի Ստորոգութիւնսն», եւ յայնմանէ որ ի հոմանուն գիրս գրեցին ընկերք նորա եւ ի մակազ-

րութեան գրեցին զ«յաղագս» նախադրութիւն⁴, եւ վասն զի ընդ քննութիւնս մտիցելոյ յԱտտկեցոց պատմողացն. քանզի քառասուն գրոց գտելոց ի հնում գրանցումն Վերլուծականացն եւ երկուց Ստորոգութեանցն: 38 Եւ դարձեալ, եթէ ոչ էր հարազատ յարակայ գիրքս՝ անգլուխ լինիւր ամենայն բնական իրողութիւն: 39 Վասն որոյ Սիւրիանոս փիլիսոփոս մակազրեաց ի վերայ Փեդոնի⁵, զոր խորթացուցանէր ոմն ի Պանետիոս. «Եթէ ոչ⁶ Պղատոն գրեաց զիս՝ ապա ուրեմն երկուք Պղատոնք եղեն. Սոկրատականաց զբաւսանացն զամենայն ծաղիկս բերեմ: 40 Այլ զիս խորթ բացակատարեաց Պանէտիոս, որ զհոգի մականացու ասաց, նաեւ զիս խորթ բացակատարեաց»: 41 Իսկ ես ասեմ, ձեր վարդապետս, մակազրեմ Ստորոգութիւնս. «Եթէ ոչ Արիստոտէլի⁷ եղեալ էի այսպիսի⁸ նաւարկութիւն՝ արդարեւ անգլուխ իմաստասիրութիւն լինէր թանց իմ»: 42 Արդ այսպէս եւ հարազատն:

43 Յորոց վերայ ասասցուք զառ ի մասունս բարժանումնն: 44 Յերիս բարժանի առնթերակայ գիրքս՝ ի ստորոգութիւնս, այսինքն՝ ի նոյն իսկ ի հանդէսս, եւ առ ի պիտանացուսն ստորոգութեանցն՝ զառաջինն եւ զվերջին զհատածսն. քանզի ուսուցանէ զոր պիտանացու են ի ստորոգութիւնսն, սակայն ոչ զնոյնս: 45 Քանզի յառաջնումն հատածումն զայն պիտանացուս ուսուցանէ, որոց եւ ոչ մի ինչ առ կոչմունս ունիմք ի սովորութենէ՝ յաղագս հոմանունութեանց, յաղագս ենթակայի, յաղագս ստորոգեցելոյ. իսկ ի վերջնումն զայնս ի պիտանեացն ուսուցանէ, զորս եւ ի սովորութենէ գիտեմք՝ յաղագս նախկ-

4 Նախագրութիւն

5 Փեդրոսի, յու՛ն. τῷ Φαιδόνι

6 Որ

7 յԱրիստոտէլի

8 Յայսպիսի

1 Առիստիգիս

2 Մեդտիազիի, Պեգիկղիս

3 Բանականացն

նին, յաղագս համայնգամայնց, սակս ունելոյ, սակս շարժութեան: 46 Բայց ոչ կամեցաւ զամենայն պիտանիսն ի միում մասին ասել, զի մի՛ մեծագոյնս քան զհանդէսն արասցէ զնախերգանն: 47 Արդ՝ զի մի՛ եւ մեզ մեծագոյնս արասցուք զնախերգանացն՝ ի նոյն ինքն ի հանդէսն երթիցուք:

1 Ընդ այսոսիկ հանդերձ աստուծով եւ առաջիկա պրակիս

ՊՐԱԿՔ ԺԳ

2 Վասն զի դիտաւորութիւն ստորոգութիւնք են, իսկ էական հոմանունաբար ստորոգի ստորոգութեանցն, բայց ամենայն ստորոգութիւն զընդ ընքեամբք տեսակացն փաղանունաբար ստորոգի, որպէս սեռ տեսակում, վասն այսորիկ Արիստոտէլ նախադասէ զվարդապետութիւն հոմանունց եւ փաղանունց, եւ յայսոսիկ նախադասէ զհոմանունսն յառաջագոյն քան զփաղանունսն, վասն զի մին քան զերկուսն յառաջագոյն է: 3 Քանզի ի հոմանունսն միում պէտք են՝ անուան միայն հասարակութիւն որ առնէ զհոմանունսն, իսկ զփաղանունսն եւ հասարակութիւն անուան եւ հասարակութիւն իրի: 4 Բայց վասն զի Արիստոտէլ եթէ զի՞նչ է հոմանունն միայն եւ զի՞նչ փաղանունն ասէ, թողեալ զեթէ էն՝ մեք նախ քան զասելն զինչ է զեթէ էն ասասցուք: 5 Եւ յիրաւի խնդրեմք զեթէ էն, վասն զի ոմանք ձեռնարկեն ի բաց բառնալ զհոմանունսն, ցուցանելով թէ ոչ են:

6 Բե՛ր ցուցցուք՝ եթէ են հոմանունքն:

7 Եւ ցուցցուք այսպէս, խոստովանեալ առած յառաջագոյն առնելով զայս, եթէ եզերեցելոցն եւ շարամանութիւնքն եզերեալք գոն: 8 Արդ՝ եզերեալք գոն տառքդ, քանզի քսան եւ չորք են թուով. իսկ տառիցդ շարամանութիւնք են փաղառութիւնքն, ապա ուրեմն՝ փաղառութիւնք եզերեալք

գոն: 9 Իսկ փաղառութեանցն շարամանութիւնք են անուանք՝ յայտ է եթէ եւ անուանք եզերեալք գոն:

10 Իսկ անհատքն անեզերք եւ անբաւք՝ ո՛չ միայն ըստ առաջիկային, այլ եւ ըստ միշտ լինելոյն: 11 Վասն որոյ ոչ երբեք հանդուրժէ եզերեալն յարածգիլ ընդ անեզրին, եթէ ոչ բազում անգամ վերայըջեսցի. ապա ուրեմն են հոմանունքն. քանզի ոչինչ է հոմանուն՝ եթէ ոչ վերաըջութիւն նորին անուան:

12 Արդ՝ այսպէս ցուցեալ Արիստոտէլի, եթէ են հոմանունք յիմաստական յանդիմանութիւնս եւ եթէ ի հարկէ գոն՝ ոմանք փորձին ի բաց բառնալ զհոմանունսն, այսպէս եւ ըստ այսմ աւրինակի ասելով, եթէ հոմանուն իր եւ զանուն հոմանունան ընդունի եւ զսահմանն. իսկ որք զնոյն անուն եւ զնոյն սահման ընդունին՝ այնպիսիքն փաղանունք գոն. ապա ուրեմն՝ հոմանունքն փաղանունք գոն: 13 Եւ զի՞նչ յայլոցն եզրիցին հոմանունք նոցին հոմանունցն փաղանունցն ելոց: 14 Առ որս ասեմք երկուս լուծմունս, զմին այսպէս՝ եթէ ոչինչ անպատեհ է զնոյն իր եւ հոմանուն գոլ եւ փաղանուն ըստ այլ եւ այլ անուան: 15 Քանզի ըստ որում էաս եւ էաս հոմանունք են. քանզի զանագանս ստորագրութիւնս ունի իւրաքանչիւր ոք ի դոցանէ. իսկ ըստ որում էաս եւ էաս հոմանունք գոն՝ ըստ նորին հոմանունութեան իմացուածոյ եւ անուամբ փաղանունք գոն. արդ՝ ոչինչ անտեղի գոյ զնոյն եւ հոմանուն եւ փաղանուն գոլ ըստ այլում եւ այլում: 16 Եւ կամ այլազգաբար ասել, եթէ ըստ նորին անուան եւ հոմանուն եւ փաղանուն կարող գոյ լինել. քանզի ենթակայեսցին երկուք ոմանք անուանեալք Բարեխոհանէսք. արդ՝ աստանաւր որպէս Բարեխոհանէս եւ Բարեխոհանէս հոմանունք գոն, իսկ եթէ դէպ լինիցի եւ խոհեմք եւս գոլ

փաղանունք են: 17 Քանզի գտանին եւ Բարէխոհանէսք կոչեցեալք եւ բարեխորհուրդք՝ զսահմանն եւ զանուն բարեխորհանութեան ընդունելով: 18 Այս մի լուծումն կրկին: 19 Երկրորդ լուծումն, եթէ զանցաբանին այնքիկ՝ որ ասենն ցուցանել զհոմանունսն փաղանունս: 20 Վասն զի ոչ ցուցին զոր ինչ խոստացանն, վասն զի փաղանուն ստորոգութիւն եւ հասարակաբար ընդունականանայ, որոց ընդունականայ եւ առանձինն, թէպէտ եւ ոչ գոյ մին. որգոն՝ մարդոյ ոչ ելոյ՝ կարող գոյ ձի կենդանի եւ ասիլ եւ գոլ. եւ դարձեալ մարդ կենդանի ասիլ եւ կենդանի է, թէպէտ եւ ոչ է ձի: 21 Իսկ ի վերայ հոմանունցն ոչ ողջ գոյ այսպիսի սահման. վասն զի եւ ոչ մի էաս յամենայն աշխարհում եւ կարող գոյ հոմանուն լինիլ, այլ էանտեայ ոչ ելոյ: 22 Եւ արդ՝ զի՞նչ ժողովեաց բանս: 23 Եթէ կարող գոյ նոյն եւ հոմանուն գոլ եւ փաղանուն ըստ այլ եւ այլ անուան, ըստ նորին անուան, ըստ այլ եւ այլ նշանակութեան, որպէս Եւբուզոս Եւբուզոս:

1 Ընդ այսոսիկ հանդերձ աստուծով եւ առաջիկա պրակֆս

ՊՐԱԿՔ ԺԴ

2 «Հոմանունք ասին որոց անուանքն միայն հասարակ, իսկ ըստ անուանն բան գոյացութեանն այլ», որպէս էաս եւ էաս. քանզի երկուք էանտեայքն անուն միայն ունին հասարակ, իսկ ենթագրութիւնս զանազանս: 5 Արդ՝ հաւաստեսցուք զիւրաքանչիւր ոք ի բառիցն, որք յենթագրութեանն գոն:

3 Յետ եթէ էին հոմանունցն եկեսցուք եւ ի զինչ էն, նոյն ինքն ասել յենթագրութիւնն: 4 Արդ սահմանէ զհոմանունսն Արիստոտէլ այսպէս. «Հոմանունք ասին որոց անուանքն միայն հասարակ, իսկ ըստ անուանն բան գոյացութեանն այլ», որպէս էաս եւ էաս. քանզի երկուք էանտեայքն անուն միայն ունին հասարակ, իսկ ենթագրութիւնս զանազանս: 5 Արդ՝ հաւաստեսցուք զիւրաքանչիւր ոք ի բառիցն, որք յենթագրութեանն գոն:

6 «Հոմանունք».

7 Ահա վաղվաղակի աստուստ իսկ ի գրոցս Յամպղիքեանն երեւի դիտաւորութիւնն, որ ասէ, եթէ վասն ձայնից եւ մտածութեանց եւ յաղագս իրողութեանց է դիտաւորութիւն Ստորոգութեանցս. քանզի հոմանունքն ոչ յիրողութիւնս միայնս եւ ոչ իրողութիւնք գոլ տեսանին. ապա եթէ ոչ՝ եղիցի եւ հոմանունութիւնն նոյնութիւն իրողութեան, որ է անտեղի: 8 Եւ ի ձայնս միայն եւ ոչ ձայնք գոլ տեսանին. ապա թէ ոչ՝ եղիցի անուն անուան՝ որ է անտեղի: 9 Այլ յիրողութիւնս տեսանի հոմանունութիւնն ի կրեալսն զհոմանունութիւնսն: 10 Արդ՝ եթէ կարեւորապէս եւ յիրողութիւնս եւ ի ձայնս տեսանին հոմանունք՝ կարեւորապէս եւ ի մտածութիւնս, զի ուր ձայնք՝ եւ իրողութիւնք անդ հարկաւորապէս, ի մէջ նոցա եւ մտածութիւնք:

11 «Ասին».

12 Արդ՝ ոչ եթէ վասն զի ասաց «ասին», ամենայն իրաւք յաղագս ձայնից պարտ է իմանալ զդիտաւորութիւն. քանզի ասիք եւ ի վերայ ձայնից եւ ի վերայ իրողութեանց եւ ի վերայ մտածութեանց տեսանի. վասն զի կարող գոյ ասիք եւ զերեսեան նշանակել. քանզի այդպէս եւ զխուժագուծան որ հայերէնն խաւսին՝ յետնաբար ասեմք ասել, վասն զի ի ձայնսն են սխալանքն. եւ զայն որ յիմարաբարն բարբառի՝ յետնաբար ասեմք ասել, վասն զի մտածութիւնսն են սխալանքն. այսպէս եւ որ սուտն խաւսի՝ յուրաբար ասեմք ասել, վասն զի ի յիրողութիւնսն են սխալանքն: 13 Իսկ յիմարաբարն խաւսել ըստ երից լինի յեղանակաց, կամ յոչինչ նշանակելոցն ասէ ի բառիցն, որպէս եղջիւրուաքաղն, եւ կամ ի նշանակելոցն ասէ, բայց ոչ հետեւողացն միմեանց, որպէս յորժամ ասէ ոք «մարդ կենդանի է, այլ եւ քար մարմին է.

ապա ուրեմն՝ հոգի անմահ է»։ Եւ կամ ի նշանակելոցն ասէ, բայց ի հոմանունց։

14 [«Հոմանունն ասին»]։

15 Աստուստ տարակուսեն ոմանք ասելով, եթէ ընդէ՞ր եզական յոքնականում բացատրեաց. քանզի պարտ էր ասել ասաց։ 16 Առ որս ասեմք, եթէ վասն այսորիկ այսպէս ասաց Արիստոտէլ, ոչ եթէ Ատտիկեցի ինչ բաղակարգութեանն հոգ տանելով եւ սովորութեան, վասն զի ոչ այսպիսի ինչ իրաց հոգ տանի Արիստոտէլ, որպէս եւ ոչ այլ իմաստասէրք, բայց միայն այնմ հոգ տանին, զի մի գտցին ի վերջոյ ճշմարտութեանն։ 17 Այլ վասն այսորիկ այսպէս ասաց Արիստոտէլ եւ եզական յոքնականում բաղակարգեաց, որպէս զի յայտ արասցէ, եթէ հոմանունքն բազում իրք գոլով՝ միով անուամբ անուանին։

18 «Որոց ասաց, այսինքն որոց իրաց եւ անունն»։

19 Աստուստ տարակուսեն ոմանք ասելով, եթէ եւ ի բայսն գոն հոմանունք. որպէս կարեմ եւ կարեմ. վասն զի կարեմ նշանակէ եւ գոյժ, նշանակէ եւ կարել զհանդերձ ինչ կամ աւգ։ 20 Արգ՝ զիա՞րգ ասաց՝ եթէ «որոց անունն միայն հասարակ», որովհետեւ եւ ի բայսն ցուցաւ հոմանունութիւն։ 21 Առ որս ասեմք, եթէ վասն զի անուն երկակի է, մի որ ըստ ամենայն մասանց բանի բերի, ըստ որում ասեմք զՊղատոն եթէ գեղեցիկ անուանս էառ ի կիր, որպէս ոչ եթէ բայս ոչ էառ ի կիր գեղեցիկս, այլ անուանս ասեմք՝ նշանակելով եւ զանուանս եւ զբայս։ 22 Իսկ մին որ հակորոշի այլոց մասանցն բանի, որ եւ տիրական եւ հորովական կոչի, իսկ աստանաւր անունս լսելի է՝ զայն որ ըստ ամենայն մասանցն բանի բերի։

23 «Միայն»։

24 Միայնդ երկուս իրս նշանակէ. կամ զմիակն՝ ըստ որում ասեմք մի գոլ Աստուած, եւ կամ այն՝ որ հակորոշաբար ասի առ այլ լծակիցսն, որպէս բազում անգամ ասի, եթէ մնաց ի պատերազմին նիզակ միայն ունելով. որպէս ոչ եթէ ձեռս ոչ ունելով եւ ոտս, այլ զլծակից զէնսն ոչ ունելով՝ սուսեր եւ վահան։ 25 Իսկ աստանաւր ասացաւ միայն այն, որ առ հակորոշումն լծակցի¹։ 26 Քանզի անունն լծակցի² սահմանին. քանզի անունն է սահման ամփոփեալ, իսկ սահման է անուն տարածեալ։

27 «Հասարակն»։

28 Հասարակն քառակի ասի. կամ անբաժանելի, որպէս չուրի փող հասարակ է երկուց փողահարաց, եւ կամ որպէս ծառայ երկուց եղբարց. եւ կամ բարժանելի, որպէս անդաստան՝ որ հասարակ է, կամ տուն. եւ կամ այն ասի հասարակ, որ յառաջեցելումն առանձինն՝ որպէս թէատրոնին տեղիք. քանզի ի թէատրոնին տեղիք հասարակ գոլով՝ յառաջեցելումն առանձինն լինի. կամ այն հասարակ, որ հանգիտաբարն լինի հաղորդութիւն ընդունաւղացն՝ որպէս ձայն քարոզչի³. քանզի ձայն քարոզչի համաբար ամենեցուն լինի հաղորդութիւն. կամ որպէս նիւթ։ 29 Բայց աստանաւր հասարակ պարտ է առնուլ զայն, որ հանգիտաբար բոլորեցուն լինի հաղորդութիւն. քանզի զէաս զձայն հանգիտաբար ունին երկուք էանտեայքն։

30 «Իսկ ըստ անունն»։

31 «Ըստ անունն» յաւերելու ասելով՝ յայտ արար զյառաջագոյն ասացեալ իրս. քանզի կանխաւ ասացաք մեք, եթէ ամենայն ոք վերաբերական է, այսինքն՝ յիշեցուցիչ յառաջագոյն ծանուցելոյ իրի։

1 Լծակցեալ է

2 Լծակցեալ է

3 Քարոզի

32 Քայց տարակուսեն ոմանք ասելով, եթէ զիս՞րդ Արիստոտէլ կարճառաւտ ասող գոլով՝ աւելորդս աստանաւր ասէ. քանզի շատ էր աստանաւր ասել, եթէ հոմանունք են՝ որոց անուն միայն հասարակ: 33 Քանզի այսորիկ տուիցելոյ՝ ի հարկէ հետեւիւր եւ այլն, այսինքն զսահմանս նոցա զանազանս գոլ: 34 Եւ եթէ ասացեալ էր, եթէ հոմանունք են, որոց սահմանն միայն զանազան է՝ այլն ի հարկէ հետեւիւր, որ ասէ՝ եթէ անունն նոցա միայն հասարակ: 35 Արդ՝ աւելորդ ասաց, եթէ «ըստ անուանն բան գոյացութեանն այլ»: 36 Առ որս ասեմք, եթէ ոչ վարկապարագի ասաց զայս, այլ զի ցուցցէ՝ ո՛ր սահման գոյ զանազան. ոչ եթէ այն սահման՝ որ ըստ մարդկութեանն նոցա է զանազան, այլ այն՝ որ ըստ անուանն իսկ բացատրի. քանզի էաս եւ էաս ոչ ըստ մարդկութեանն զանազանին, վասն զի մի սահման է երկոցունց էանտեայցն. եւ ոչ ըստ էաս ձայնին զանազանին ի միմեանց, վասն զի երկոքին երկփաղառականք եւ յարաշեշտորք մաքուր զայբն ունելով. այլ զայն սահման ունին զանազան հոմանունքն, որ ի նորին իսկ ի ձայնէ նշանակի. քանզի էաս ձայն նշանակէ՝ ի վերայ միոյն, եթէ որդի Տեղամոնի է ի Սաղամինայ, իսկ ի վերայ միւսոյն նշանակէ, եթէ որդի Ուղեայ եւ Ղոկրատացի. քանզի այսոցիկ առանձնականացս ի վերայ երկաքանչիւրոցս տեսանելով՝ զանազան ենթազրութիւնք նոցա եղանին:

37 «Գոյացութեանն».

38 Գոյացութիւն աստանաւր զհասարակն պարտ է առնուլ. քանզի երկակի ասի գոյացութիւն՝ մի որ հակորոշի ինն ստորագութեանցդ, որ եւ տիրապէս գոյացութիւն ասի, եւ միւսն՝ որ եւ ըստ պատահմանցն բերի, զոր եւ աստանաւր պարտ է լսել:

39 «Այլ».

40 Աստուտ ոմանք ասեն, եթէ վասն է՞ր երկուց ելոց հակադրութեանց՝ հասարակի եւ յատկի, նոյնի եւ այլոյ՝ զի՞ ոչ վաղվաղակի յիշելով զհասարակն յիշեաց եւ զհակակայն սորա, այսինքն՝ զյատուկն. եւ յիշելով զայլն, զի՞ ոչ յիշեաց եւ զնոյն: 41 Եւ ասեմք, եթէ կամելով արուեստաւորս զմեզ առնել եւ բազում հակադրութեանց գիտունս՝ մի ճիղ յիշելով յերկաքանչիւրոց հակադրութեանցն՝ հրամայէ իմանալ զնորին հակակայն. քանզի յիշեցեալ զհասարակն՝ հրամայէ քեզ իմանալ զյատուկն եւ յիշեալ զայլն՝ հրամայէ քեզ իմանալ զնոյնն:

1 Ընդ այսոսիկ հանդերձ աստուծով եւ առաջիկա պրակֆս

ՊՐԱԿՔ ԺԵ

2 Սահմանեալ Արիստոտելի զհոմանունսն «որոց անունն միայն հասարակ, իսկ ըստ անուանն բան գոյացութեանն այլ», յարացուցի պիտանանայ առ ի յարակացութիւն հոմանունացն ճշմարիտ մարդումն եւ գրիցելումն: 3 Քանզի երկաքանչիւր ոք ի նոցանէն կենդանի ասի. եւ զի գրիցեալն եւս կենդանի ասի, յայտ է աստուտ, քանզի ստեղծիչն նորա կենդանազրաւղ ասի, իսկ սահման նոցա զանազան է. քանզի ճշմարիտ մարդն գոյացութիւն ներշնչաւոր զգայական է, իսկ գրիցեալն ոչ գոյացութիւն, այլ պատահումն, ոչ շնչական՝ այլ անշունչ, ոչ զգայական՝ այլ անզգայ. կենդանի ասի՝ որպէս պատկեր ներշնչաւորի եւ զգայականի:

4 Եւ զի ծանիցուք, եթէ յորպիսի՛ ինչ հոմանունացն վերաբերի յարացոյցդ՝ բե՛ր ասացուք զբաժանումն հոմանունցդ: 5 Հոմանունացն ոմանք ի բաստէ անուանեցան, որպէս յորժամ ոմանք յայլ եւ յայլ տեղիս գոլով՝ նոյն անուամբ անուանին, եւ ոչ մի ինչ մտածութիւն ունելով ա-

նուանաղացն զնոսա՝ որպէս Աղէքսանդրոս, որ եւ Պարիս, եւ Մակեդոնացին. իսկ ոմանք ի տրամախոհութենէ, որպէս յորժամ կամիցի ոք անուն ինչ անուանել: 6 Արդ՝ այնք որ ի բաստէն են՝ անբաժանելիք են. քանզի բաժանմունք յարհեստից եւ ի մակացութեանց վերաբերին, որպէս ասէ Պլատոն, եթէ հմտութիւն ըստ արհեստում պատրաստէ գկենցաղս մեր գնալով, իսկ անհմտութիւն ըստ բախտում: 7 Իսկ այնց հոմանունց որք ի տրամախոհութենէ գոյ անուանեցեալք՝ ոմանք ըստ ժամանակականում մտածութեան գոն անուանեցեալք, իսկ ոմանք՝ ոչ ըստ ժամանակականում: 8 Եւ այնց որք ըստ ժամանակականում մտածութեան գոյ անուանեցեալք՝ ոմանք՝ ըստ յիշողութեան, որպէս յորժամ ոք յիշելով զհայր իւր՝ եւ զորդին նորին անուամբ անուանիցէ: 9 Իսկ ոմանք՝ ըստ յուսում, որպէս յորժամ ոք անուանիցէ զիւր որդի Պլատոն, յուսալով լինել այնպիսի, քանզի գիտեն հաւատարիմ մարդկան անուամբ գրգռել զմեզ առ ի նմանութիւն նոցին՝ որոց անուանքն. զի մի լուրջութեք զայն, եթէ ահա որ կոչեցաւ Պլատոն:

10 Իսկ ոմանք՝ ըստ երկաքանչիւրումդ՝ եւ ըստ յիշողութեան եւ ըստ յուսում: 11 Արդ՝ այսպէս ըստ ժամանակականում մտածութեանց:

12 Իսկ այնց հոմանունց՝ որք ոչ ըստ ժամանակականում մտածութեանց գոն անուանեցեալք՝ ոմանք՝ ըստ հաղորդութեան, որպէս յերաժշտականութենէ երաժշտական, իսկ ոմանք՝ ըստ փոխաբերութեան: 13 Արդ՝ զանազանի փոխաբերութիւն վերաբանութեան¹. քանզի փոխաբերութիւն է կարճառատ վերաբանութիւն², իսկ վերաբանութիւն է, որպէս յորժամ ասեմ, եթէ որպիսի ինչ բան ունի վեց

առ չորս՝ զնոյն բան ունի եւ ինն առ վեց: 14 Իսկ փոխաբերութիւն է ոչ այն՝ որ բանումն պիտանանայ, այլ անուանում. քանզի յորժամ պարտ է ասել՝ եթէ «զոր ինչ բան ունի հովիւ առ ոչխարս, զնոյն բան ունի թագաւոր առ ժողովուրդս»: 15 Ոչ այդպէս ասէ եւ այդպէս պիտանանայ վերաբանութեանն, այլ անդուստ իսկ, որպէս Հոմերոս, հովիւ ժողովրդոց կոչէ զթագաւոր փոխաբերաբար: 16 Արդ՝ այսպէս եւ ըստ փոխաբերութեան:

17 Իսկ ոմանք դարձեալ՝ որպէս ի միոջէ, եւ այլք դարձեալ, որպէս առ մի: 18 Իսկ այնք հոմանունք, որ որպէս ի միոջէն գոն անուանեցեալք՝ կամ որպէս յարարչականէ կամ որպէս ի բժշկականէ՝ բժշկական գիրք, բժշկական գործի, եւ կամ որպէս ի յարացուցականէ՝ որպէս ի ճշմարիտ մարդոյ գրիցեալն. քանզի պատկեր է գրիցեալն ճշմարիտ մարդոյ: 19 Իսկ ոմանք՝ որպէս առ մին կատարումնն նայիցեալք՝ առողջականն³ մէզ, առողջական կերակուր, առողջական ջուր: 20 Արդ՝ յարացոյցդ առեալ երեւի առ ի միոջէն եւ այն արարչականէն: 21 Եւ արդ՝ այսոքիկ յաղագս այսոքիկ:

22 Բայց պարտ է հոմանունցն ոչ ըստ յառաջաբերութեանն միայն հաղորդիլ միմեանց, այլ եւ ըստ այլ պարականական իրաց. եւ ըստ հոլովականին, վասն զի առն եւ առն ոչ ասին հոմանունք. զի մին ուղղական է եւ զշիկերէ նշանակէ, իսկ միւսն սեռական է եւ զայր նշանակէ՝ որպէս այր առն. եւ ըստ միում մասին բանի գոլոյն, վասն զի կալ եւ կալ ոչ ասին հոմանունք, վասն զի ոչ են միոյ մասին բանի. վասն զի մին անուն է եւ նշանակէ որ զարդիւնս կասուն, իսկ միւսն բայ է հրամայական:

1 Վերաբերութեան, յուն. ἀναλογία

2 Վերաբերութիւն, յուն. ἀναλογία

3 Առ առողջականն

1 Ընդ այսուսիկ հանդերձ աստուծով եւ առաջիկա պրակֆս

ՊՐԱԿՔ ԺՁ

2 «Փաղանունք ապիմ՝ որոց եւ անունն հասարակ եւ բան գոյացութեանն նոյն».

3 Յետ հոմանուննցն գայ Արիստոտէլ եւ ի փաղանունսն, վասն զի պէտս ունի եւ նոցա ի ստորոգութիւնսն, եթէ արդարեւ ամենայն ստորոգութիւն իւրոց տեսակացն փաղանունաբար ստորոգի: 4 Բայց վասն զի եւ աստանաւր զի՛նչ են փաղանունքն միայն ասէ, իսկ եթէ էն յառաջագոյն քան զզինչ էն՝ ցուցցուք եթէ են փաղանունք ըստ երկից պատճառաց. նախ եթէ նոյն իսկ հոմանունքն փաղանունք ցուցան. երկրորդ՝ եթէ չորից ոմանց յարակացելոց միմեանց՝ հոմանունց, փաղանունց, յօքնանունց այլանունց՝ գոյ միով բանիւ ցուցանել, եթէ են այսոքիկ, եւ զի՛նչ է իւրաքանչիւր ոք ի դոցանէ: 5 Ձոր եւ ցուցանեմք ի բաժանմանէ այսպէս. յամենայն ժամ երկուց իրաց առնիցելոց, ունաւղաց անուն եւ սահման՝ հանդիպի նոցին կամ ըստ երկուց իրաց հաղորդիլ, եւ ըստ անուանում եւ ըստ սահմանում եւ լինին փաղանունք, եւ կամ ոչ ըստ անուանում եւ ոչ ըստ սահմանում հաղորդին՝ եւ գոյանան այլանունքն, եւ կամ ըստ ումեմն հաղորդին եւ ըստ ումեմն զանազանին. եւ այս դարձեալ՝ կամ ըստ անուան հաղորդին եւ ըստ իրաց զանազանին՝ եւ գոյանան հոմանունքն, եւ կամ ըստ իրաց հաղորդին եւ ըստ անուան զանազանին՝ եւ լինին բազմանունքն՝ որպէս խաղ, դալապր, մարտացու, վաղակաւոր, սուսեր, նրան: 6 Արդ՝ ցուցաւ եթէ են եւ զի՛նչ է իւրաքանչիւր ոք ի սոցանէ: 7 Այս երկրորդ:

8 Երրորդ այն՝ զի սուտ ցուցանի բանն, որ ի բաց բառնայ զփաղանունսն, ասելով, եթէ փաղանունքն ի ստորոգութիւնսն տեսանին, եթէ արդարեւ իւրա-

քանչիւր ոք ի ստորոգութեանցն իւրոց տեսակացն փաղանունաբար ստորոգի: 9 Իսկ այն որ ընդ երկու ստորոգութեամբք եղանի՝ ոչ միայն ասեմ ընդ տասամբ՝ այսպիսին հոմանուն ասի. ապա ուրեմն՝ փաղանունք ոչինչ են, որովհետեւ հոմանունք ցուցան: 10 Ձոր լուծանեմք այսպէս ասելով, եթէ ոչ բարիոք շարամանէք գյառաջարկութիւնսն. քանզի այն որ ի տասն ստորոգութիւնսն վերաբերի՝ երկակի վերաբերիլ ասի. կամ որպէս տեսակ նոցին վերաբերի եւ կամ որպէս նիւթում պէտս ունելով տասն ստորոգութեանցն: 11 Եւ որպէս տեսակ այսպէս. սպիտակ ի զանազան ստորոգութիւնսն որպէս տեսակ վերաբերի. քանզի եթէ զսպիտակացեալն առնու ոք՝ ի գոյացութիւն վերաբերի, իսկ եթէ զգոյնն՝ յորակութիւն վերաբերի: 12 Այդ՝ այսպէս որպէս տեսակ: 13 Իսկ եթէ որպէս նիւթում պիտանանայ տասն ստորոգութեանցն՝ այնպէս ասի գոյ՝ որպէս առինչքն. քանզի առինչք իւրեանց բնաւորական նիւթ ոչ ունելով՝ ի տասն ստորոգութիւնսն տեսանին: 14 Արդ՝ այսպէս եւ փաղանունքն ոչ եթէ որպէս տեսակ վերաբերին ի տասն ստորոգութիւնսն, այլ որպէս նիւթում պէտս ունին ի տասն ստորոգութիւնսն՝ որպէս առինչքն: 15 Քանզի եւ հոմանունքն առինչիցն ասի գոյ. քանզի եւ փաղանունքն փաղանունակի ասին փաղանունք: 16 Արդ՝ այսոքիկ եւ յաղագս փաղանունանցն:

17 Յետ որոյ բուռն հարկանէ եւ գյառանունցն. զորս եւ երրորդս դասեաց վասն երկից պատճառաց. կամ վասն զի մին յառաջագոյն է քան զերկուսն եւ երկուքն քան զերիսն: 18 Արդ՝ ի վերայ հոմանունցն միում պէտք են՝ անուան հասարակութեան, իսկ ի վերայ փաղանունցն երկուց՝ եւ անուան եւ սահմանում, իսկ ի վերայ յարանունցն չորից են պէտք՝ հաղորդութեան անուան եւ զանազանութեան ա-

նուան, հաղորդութեան իրի եւ զանազանութեան իրի: 19 Այս առաջին պատճառ:

20 Երկրորդ պատճառ, եթէ հոմանունացն եւ փաղանունացն յամենայն ստորագութիւնս ունին պէտս, իսկ յարանունացն յորակութիւն միայն: 21 Այս երրորդ պատճառ. եթէ յառաջագոյն բնաւորեցան գոլ հանապազ հարազատագոյնքն քան զխորթան: 22 Արդ՝ ի վերայ հոմանունացն եւ փաղանունացն հարազատագոյն եւ հաղորդութիւնք եւ զանազանութիւնքն, իսկ ի վերայ յարանունացն՝ խորթաբար: 23 Արդ՝ այսոքիկ յաղագս կարգաւորութեան նոցին: 24 Այլ վասն զի եւ սոցին այսոքիկ զգինչ էն միայն ասէ, ոչ եթէ եւ զեթէ էն՝ ցուցցուք եթէ են յարանունքն ի ձեռն երկուց պատճառաց. նախ եւ առաջին՝ եթէ այնոցիկ որոց ընդ մէջ են յարանունք՝ նոքա ցուցան գոլ, այսինքն՝ փաղանունքն եւ այլանունքն: 25 Երկրորդ՝ եթէ սուտ է բանն որ ասէ զնոցանէ ոչ գոլ, այսպէս ասելով՝ եթէ ոչ են յարանունքն. զի եթէ էին յարանունքն՝ պարտ էր նոցա ընդ բաժանմամբքն, զոր արարաք յառաջագոյն, անկանիլ. քանզի ըստ բաժանական հնարն ոչինչ պանձասցի փախչել: 26 Իսկ արդ՝ որովհետեւ ոչ անկան ընդ այն բաժանմամբքն՝ յայտ է եթէ ոչ գոն: 27 Զոր լուծանեմք այսպէս. եթէ ոչ կարէին յարանունքդ անկանել ընդ այսպիսի բաժանմամբք, վասն զի բաժանմունն ըստ հարազատ հաղորդութեան եւ զանազանութեան եղեւ, իսկ յարանունք խորթաբար ունին եւ զհաղորդութիւնս եւ զզանազանութիւնս: 28 Արդ՝ այսոքիկ եւ յաղագս այսոցիկ:

29 Աստուտ պարտ է գիտել, եթէ չորից պէտք են լինելութեան յարանունցն՝ հաղորդութեան անուան եւ զանազանութեան, հաղորդութեան իրի եւ զանազանութեան իրի. ուստի Տիգրան եւ Տիգրա-

նուհի¹ ոչ են յարանունք. քանզի թէպէտ եւ ունին հաղորդութիւն իմն անուան, վասն զի առաջին փաղառութիւնք անուանցն նոյնք են. այլ եւ զանազանութիւն անուան ունին ըստ վերջնում փաղառութեանն: 30 Այլ վասն զի Տիգրան եւ Տիգրանուհի եւ ոչ մի ինչ հաղորդութիւն ունին (վասն զի իւրաքանչիւր ոք ի նոցանէ այլ եւ այլ առանձինն ունի ենթագրութիւն), վասն այնորիկ ոչ են յարանունք: 31 Եւ ոչ կոյս եւ կուսիկ յարանունք ասին, վասն զի ոչ ունին զանազանութիւն իրաց. քանզի զնոյն նշանակեան երկուքեան բառքն: 32 Եւ ոչ հարստութիւն եւ փարթամն ասին յարանունք, վասն զի ոչինչ ունին հաղորդութիւն անուան. թէպէտ եւ իրաց ունին հաղորդութիւն եւ զանազանութիւն՝ որպէս հաղորդութիւն. եւ հաղորդեալ: 33 Եւ ոչ դարձեալ երաժշտական կին եւ երաժշտական մակացութիւն ասին յարանունք՝ վասն ոչ ունելոյ զանազանութիւն անուան:

34 Արդ՝ այսոցիկ այսպէս յառաջագոյն ասացելոց² տեսցուք, եթէ զի՛ւրդ սահմանէ Արիստոտէլ զյարանունսն: 35 Արդ՝ սահմանէ այսպէս ասելով. «Յարանունք են, որք յումեքէ տարբերեալք հոլովիւ ըստ անուանն եւ զառասութիւնն³ ունին». յորոց ձեռն զչորսս զայսոսիկ յայտ արար. քանզի ասելովն՝ «որք յումեքէ»՝ զհաղորդութիւն իրին եւ զզանազանութիւն յայտ արար. քանզի յումեքէն հաղորդի ամենայն իւրաւք այնմ՝ յորմէ էն. իսկ զանազանի, վասն զի ոչ ամենայն իրաւք նոյն է հաղորդ եւ հաղորդիցեալն: 36 Իսկ ասելովն՝ «տարբերեալք հոլովիւ», զզանազանութիւն անուան յայտ արար, քանզի «հոլովումն» առ ի յԱրիստոտէլէ յանգումն բառին լսի: 37 Իսկ ասելով

1 Յուև. "Ελενος και Έλένη

2 Ելոց փխ ասացելոց

3 Զհաղորդութիւն փխ զառասութիւն

«ըստ անուանն զառասուլթիւնն ունին»՝ զհաղորդութիւն անուանն յայտ արար:

38 Այսոցիկ յառաջագոյն ասացելոց պարտ է գիտել, եթէ ոչ է ընդունելի քերզողն, որ զհոմանունսն փաղանուեն ասաց որպէս յորժամ ասէ:

39 «Հանգէտ անձինս ունէին երկոքին էանտեայքն»:

Հոմանունք գոլով՝ փաղանուենս կոչեաց ի ձեռն հանգէտ անձանցն: 40 Եւ ոչ զայնոցիկ, որք զբազմանուանսն փաղանուենս կոչեն. որպէս խաղ, դալապր, մարտացու, վաղակաւոր, սուսեր, նրան: 41 Եւ ոչ զքերզողս պարտ է ընդունել, որք հակորոշեն զյարանունսն անուանականաց եւ բայականաց: 42 Քանզի է Փափկանէս ի փափկութենէ եւ Աստուածանէս յաստուծու. իսկ բայականք՝ ի սիրելոյ սիրեմ եւ յիմանալոյ իմաստուն. զոր պարտ է գամենայնս յարանունս կոչել. իսկ նոքա զոմանս անուանականս կոչեն եւ զոմանս՝ բայականս:

43 Արդ՝ յետ խնդրելոյ զզանազանութիւնս յարանունցն՝ խնդրեսցուք եւ զզանազանութիւնս զառ ի միոջէն եւ առ մին:

44 Արդ՝ զանազանին այսոքիկ միմեանց, վասն զի ի վերայ յարանունցն չորից պէտք, որպէս ասացաք, իսկ ի միոջէն եւ առ մին երկուց պէտք են՝ հաղորդութեան իրի եւ զզանազանութեան. որպէս պատկերին եւ յարացուցի, քանզի ոչ ունին անուն հասարակ եւ դարձեալ՝ առողջային աւղ եւ առողջային կերակուր ոչ ունին անուն հաւասար, այլ իր: 45 Արդ՝ այսոքիկ այսպէս: 46 Բայց արդ եկեսցուք ի նոյն ինքն բառիցն հաւաստութեանն մեկնութիւն:

47 «Փաղանունմ ասին՝ որոց եւ անուն հասարակ եւ բան գոյացութեանն մոյն. որպէս՝ կենդանի՝ մարդ եւ արջառ»:

48 Զնոյն յարացոյց առնու ի պէտս՝ զոր եւ հոմանունցն. քանզի անդ ասէր՝

«կենդանի մարդն եւ գրիցեալն», իսկ աստ՝ «որգոն՝ կենդանի՝ մարդն եւ արջառն»:

49 Զոր վասն այսորիկ ասի առնել, զի ցուցցէ՛ եթէ մարթ գոյ զնոյն եւ հոմանուն գոլ եւ փաղանուն. քանզի նոյն ինքն նոյնում ըստ նոյնում եւ հոմանուն եւ փաղանուն՝ որպէս երկու Բարեխոյհանէսք. քանզի եթէ որպէս տիրականս անուն առցէ զգոսա զԲարեխորհրդանէսսդ՝ հոմանունք գոն. իսկ եթէ ի վերայ շարագրեցելոց առցի, որպէս առասականք բարեխորհուրդ եւ բարեխորհուրդ՝ յայնժամ փաղանունք եղանին. եւ կամ նոյն ինքն այլում եւ այլում ըստ այլում եւ ըստ այլում եւ հոմանուն եւ փաղանուն, որպէս Սոկրատէս իւր պատկերումն հոմանուն, իսկ Պղատոնում՝ փաղանուն, որպէս մարդում. եւ կամ նոյն ինքն նոյնում ըստ այլում եւ այլում հոմանուն կամ փաղանուն, որպէս երկու էանտեայքն, քանզի երկու էանտեայքն ըստ էաս եւ էաս ձայնի հոմանունք, իսկ ըստ մարդ գոլումն փաղանունք. կամ նոյն ինքն այլում եւ այլում ըստ նոյնում հոմանուն եւ փաղանուն, որպէս յարացոյցն Արիստոտելի. քանզի կենդանին նոյն ինքն գոլով՝ այլում եւ այլում հոմանուն եւ փաղանուն. քանզի գրիցելում կենդանումն հոմանուն, իսկ ձիում եւ արջառում փաղանուն՝ որպէս կենդանեաց:

50 «Զի եթէ բացատրեսցէ ոք, զինչ է նոցա երկախանչիւր ումեք կենդանին գոլ՝ յատուկ իւրախանչիւր ումեք բան բացատրեսցէ»:

51 Այլ է ասել կենդանումն գոլ եւ այլ է ասել կենդանի գոլ: 52 Այլ է ասել մարդում գոլ եւ այլ է ասել մարդ գոլ. քանզի ի վերայ պարզիցն նոյն է՝ աստուծոյ գոլ եւ աստուած գոլ. իսկ ի վերայ շարագրեցելոցն ոչ նոյն. քանզի եթէ ասեմ «զմարդ», զերկոսին նշանակեմ՝ զհոգի եւ զմարմին. իսկ եթէ ասեմ «մարդում», զպարզն նշանակեմ՝ զհոգի միայն. քանզի

բանական հոգի է, որ տեսակարար է զմարդն. քանզի ամենայն իրողութիւնք տեսակաւ որոշին եւ ոչ նիւթով: 53 Եւ արդ՝ վասն զի կենդանին պարզ է, որպէս տեսակ՝ մարթ գոյ գանազանաբար անուանել. վասն որոյ եւ Արիստոտէլ՝ ընդարձակութիւն ունելով «կենդանուն գոյ» ասաց:

1 Ընդ այսոսիկ հանդերձ աստուծով եւ առաջիկա պրակիս

ՊՐԱԿՔ ԺԷ

2 «Յասիցելոցն՝ է ինչ որ ըստ շարամանութեան ասի».

3 Յետ հոմանունց եւ փաղանունցն եւ յարանունցն, որոց իւրաքանչիւր ոք յայտ առնէր զՅամպղիբեան դիտաւորութիւնն յաղագս ձայնից գոյ պարզից՝ նշանակաւդաց զպարզ իրողութիւնսն ընդ մէջ պարզից մտածութեանց՝ գայ Արիստոտէլ եւ ի նոյն ինքն ի ստորոգութիւնսն:

4 Այլ յառաջ քան զսոցայցն վարդապետութիւն բաժանէ զասացեալս ըստ շարամանութեան եւ առանց շարամանութեան. իսկ զգոյսն՝ յընդհանուր գոյացութիւն եւ յընդհանուր պատահումն, ի մասնական գոյացութիւն, ի մասնական պատահումն: 5 Եւ գայս առնէ, որպէս զի ցուցցէ՝ եթէ որպիսի՛ք ասիցեալք գոն ստորոգութիւնքն առանց շարամանութեան եւ որպիսի՛ք ոք են ընդհանուր գոյացութիւն եւ ընդհանուր պատահումն, մասնական գոյացութիւն եւ մասնական պատահում:

6 Արդ՝ զերկոսին բարժանէ Արիստոտէլ՝ եւ զասիցեալսն եւ զգոյսն: 7 Բայց յայսոսիկ նախադասէ զբաժանումն ասիցելոցն՝ որպէս կարճառաւտ. զի մի՛ նախ եւ առաջին յաղագս այլ բաժանման ասելով, ի բազում ժամանակս զնովաւ փարելով եւ ոչ յիշելով զմիւսն եւս՝ կարծիս տացէ զնմանէ միայնոյ բուռն հարեալ. որ երբեմն եւ յայպէս յառնել նորա՝ կարծեցին

ոմանք զմիոյ միայնոյ բուռն հարեալ:

8 Քանզի ոմանք յաղագս ձայնից միայն եւ ոմանք յաղագս իրողութեանց միայն, որպէս վերագոյն ասացաք: 9 Եւ զմի միայն բաժանումն եթէ առեալ էր ի կիր՝ կամ զասիցելոցն միայն եւ կամ զգոյցն միայն, գտեալ լինէր եւ այնպէս զխնդրելին, ի ձեռն ասիցելոցն զիրողութիւնսն՝ եթէ արդարեւ ասին ձայնք եւ ասին իրողութիւնք. եւ զգոյս միայն, եթէ բաժանեալ էր յընդհանուր գոյացութիւն եւ յընդհանուր պատահումն, եւ ի մասնական գոյացութիւն եւ ի մասնական պատահումն՝ եւ այնպէս գտեալ լինէր զխնդրելին. քանզի հանուրն եւ մասնականն ձայնից են, իսկ գոյացութիւն եւ պատահումն՝ իրողութեանց:

10 Արդ՝ երից բաժանմանց ի կիր արկեցելոց առ ի յԱրիստոտէլէ եւ որոշեցելոց ի միմեանց՝ միոյն որ ասէ, եթէ յասիցելոցն ոմանք ըստ շարամանութեան եւ ոմանք առանց շարամանութեան. իսկ միւսոյն, որ ասէ, գոյցն ոմանք ընդհանուր գոյացութիւն եւ ընդհանուր պատահումնք եւ մասնական գոյացութիւն եւ մասնական պատահումն. եւ միւսոյն եւս բաժանման, որ բարժանէ զառանց շարամանութեանն ի տասն ստորոգութիւնսն:

11 Արդ՝ ոմանք զբաժանումս գայս զերիս մի իմացան շարունակ, ասելով՝ այսպէս՝ եթէ ասիցելոցն ոմանք ըստ շարամանութեան ասին եւ ոմանք առանց շարամանութեանն. եւ առանց շարամանութեան ի տասն ստորոգութիւնս, իսկ ըստ շարամանութեանն յընդհանուր գոյացութիւն, յընդհանուր պատահումն, ի մասնական գոյացութիւն, ի մասնական պատահումն:

12 Առ որ ասեմք, եթէ խաբիմք յառաջաբերութենէ բանիցդ՝ ընդհանուր գոյացութիւն իմանալով ընդհանուր պատահումն, մասնական գոյացութիւն մասնական պատահումն եւ շարամանեալ զնոսա կարծէք:

13 Քանզի շարամանեալն եւ պարզն առ ի յԱրիստոտելէ ոչ յառաջաբերութեամբ որոշի, այլ նշանակեցելով. եւ պարզ առ ի նմանէ վարկանի շարադրեալ անուանցն՝ Ագուաւ վէմ, Արէսպագոս¹, Նոր քաղաք. եւ նոյն ինքն սահմանդ պարզ է առ ի յԱրիստոտելէ, որ ասէ՝ մարդ կենդանի բանաւոր մահկանացու մտաց եւ հանճարոյ ընդունակ, վասն զի մի իրս նշանակեն: 14 Իսկ շարադրեալք առ ի նմանէ այն են, որ բազում իրս նշանակեն, որպէս հոմանունք ամենայն՝ որպէս շուն ձայն. քանզի շուն ձայն բազում իրս նշանակէ:

15 Դարձեալ տարակուսեն ոմանք ասելով, եթէ զիւրդ գայնոսիկ, որք ըստ շարամանութեանն են՝ դասեաց այնց, որք ոչ ըստ շարամանութեանն են: 16 Եւ ասեմք՝ եթէ որպէս հաւաստագոյն եւ ծանալթագոյնս, քանզի հաւաստագոյնք են շարադրեալքն քան զպարզսն, եւ վասն զի շարամանեալքն դրութիւն իմն յայտնեն, իսկ դրութիւնն յառաջագոյն է քան ի բաց բարձումն, եւ զի յանգումն կանխեցելոցն սկիզբն հանդերձելոցն եղիցի, եւ զի յանգեսցի առաջին հատածն ի սուղ թիւս ստորագութեանցն, եւ սկիզբն արասցէ երկրորդի նոյն ինքն ի վարդապետութենէ ստորագութեանցն:

17 «Որգոն՝ մարդ, արջառ, ընթանայ, յաղթէ».

18 Բարիոք յարացոյցս արկ ի կիր ի մէջ անուան եւ բային այլ եղեալ անուն, որպէս զի մի՛ եւ կամաւք յընթեռնուլն սխալեսցուք, եւ ըստ շարամանութեան ընթերցցուք: 19 Քանզի ըստ շարամանութեան է ասելն «մարդ ընթանայ». զոր մարթ է ընթեռնուլ եւ առանձին «մարդ», առանձինն եւ «ընթանայ»: 20 Այլ եթէ այդպէս գրեալ էր, եթէ «մարդ, ընթանայ»՝ բազում անգամ սխալէր ընթերցաւղն եւ

ըստ շարամանութեան կարծէր գոլ: 21 Վասն որոյ ի միջի եղելոյ այն անուն «մարդ, արջառ, ընթանայ, յաղթէ»՝ եւ ոչ կամաւք սխալել կարէ յընթեռնուլն: 22 Իսկ բայս ի կիր էառ գերրորդ դիմին եւ ոչ զառաջնոյն եւ ոչ զերկրորդին, վասն զի այսոքիկ սահմանեալ դիմին են. քանզի յորմէ բանն եւ առ ոյ բանն: 23 Իսկ երրորդ դիմին բայք, թէպէտ եւ ածեն ի ներքս դէմս, սակայն անորիչ դէմս ածեն. քանզի ամենայն սահմանական բայ դէմս ածէ ի ներքս, վասն այսորիկ շարամանել կարծի: 24 Իսկ երրորդ դիմին բայք, թէպէտ եւ ի ներքս ածեն ի հարկէ դէմս, սակայն անորոշի ածեն եւ վասն այսորիկ ոչ թուին գոլ շարամանեալք: 25 Եւ եթէ ի կիր առեալ էր գանորիչ բայսն, որք ամենեւին ոչ գոն շարամանեալք վասն ոչ դէմս ի ներքս ածելոյ, բայց զի զառաջին յարացոյցն լուծանել կամեցաւ՝ եւ ըստ շարամանութեան եւ առանց շարամանութեան գնա առնել:

1 Ընդ այսոսիկ հանդերձ աստուծով եւ առաջիկա պրակֆս

ՊՐԱԿՔ ԺԸ

2 «Էականցն է ինչ որ գենթայ...»:

3 Յետ բաժանման ասիցելոցն գայ եւ ի բաժանումն գոյիցն: 4 Եւ երկուս առնու հարկադրութիւնս, զմին՝ յասիցելոցն եւ զմին՝ ի գոյիցն. յասացելոցն՝ զընդհանուրն եւ զմասնականն, իսկ ի գոյիցն՝ զգոյացութիւն եւ զպատահումն: 5 Եւ չորս առնէ շարամանութիւնս՝ զընդհանուր գոյացութիւն եւ զընդհանուր պատահումն, զմասնական գոյացութիւն եւ զմասնական պատահումն: 6 Եւ յայսոսիկ նախադասէ զընդհանուր գոյացութիւն՝ որպէս գոյացութիւն եւ որպէս սահման: 7 Իսկ երկրորդ դասէ զմասնական պատահումն, որպէս ամենեւիմբ հակակայ հանուր գոյացութեանն. զոր պարտ էր ի վեր-

1 Արիսպագոս, յուև. *Apetos páγος

Ջոյ դասել՝ որպէս գատրուկս յոռագունիցն եւ քարչել յընդհանուր գոյացութենէ. քանզի հակակայիցն մի է գիտութիւն: 8 Իսկ այլ երկուս եւս հակակացելոց եւ ասացելոց ումեմն գոյացութիւն գոլ եւ ումեմն հանուր գոլ՝ գտիրական վարկն տայ ընդհանուր պատահման վասն չորից պատճառաց. նախ եւ առաջին՝ զի ընդհանուրն կերպարանին ստորոգութիւնք եւ ոչ գոյացութիւնք գոլով. եւ զի ընդհանուրն մակացուս զմեզ առնէ եւ ոչ մասնականն, եւ այսու նախապատուագոյնք եմք քան զանբանսն՝ ճանաչելով զհանուրսն. ապա թէ ոչ՝ ի մասնական գիտութիւնսն պատուականագոյնք են քան զմեզ անասունքն, ունելով սգայութիւնս ոմանս ստուգագոյնս քան զմերս. եւ զի ի գոյացութենէ սկիզբն արասցէ եւ ի գոյացութիւն յանգեսցէ եւ ի միջի պահեսցէ զպատահմունն՝ որպէս գտկարս. քանզի ամենայն ուրեք ըստ քերդողականին «գյոռիսն ի մէջ վարեաց»: 9 Քանզի այսպէս եւ ի վերայ երկնայինցն եւ ենթալուսնեայցն տեսանեմք. վասն զի երկնայինքն պարունակեն, եւ ենթալուսնեայքն պարունակին. եւ դարձեալ՝ յենթալուսնեայն զխոնաւսն եւ զծորագոյնսն, այսինքն՝ զջուր եւ զաւդ. քանզի աւդ եւ ջուր պնդին ի ցամաքիցն՝ ի հրոյ եւ յերկրէ: 10 Եւ արդ՝ այսոքիկ յաղագս այսոքիկ:

11 Այլ եթէ այսպէս էր անուանեալ Արիստոտէլի, որպէս մեք՝ ընդհանուր գոյացութիւն, ընդհանուր պատահմունս, մասնական գոյացութիւն, մասնական պատահմունսն՝ թերեւս արդեւք զերծեալ էաք յաշխատութենէ: 12 Այլ վասն զի ոչ այսպէս անուանէ զնոսա, այլ փոփոխէ զանուանս նոցա՝ պարտ է խնդրել, եթէ վասն է՞ր փոփոխեաց զանուանս նոցա: 13 Եւ ասեմք՝ եթէ վասն երկուց պատճառաց. կամ վասն ենթագրելոյ միանգամայն եւ գոյացելոյ զիրողութիւնսն. քանզի ասել «ըստ ենթակայում» եւ ենթագրեաց եւ գոյա-

ցոյց. քանզի ըստ ենթակայումն զըստ ումեք ստորագրելն յայտ առնէ: 14 Եւ զնոյն եւ ի վերայ այլոցն ասացես: 15 Եւ կամ զի ցուցցէ, եթէ ոչինչ կայ աւելի քան զչորսս զայսոսիկ. վասն այսորիկ հակասաբար ասաց, որպէս զի կամելով մի՛ վրիպեսցուք եւ կարծեսցուք ընդ մէջ ինչ գրել այլս այսոցիկ. վասն զի է այլոց նմանաբար ստորասաբար յառաջբերեցելոց գտանել ինչ միջակ. որգոն՝ դարին եւ կոճատին, հիւանդութեան եւ ողջութեան կարծի ինչ ընդ մէջ գոլ վասն գտանելոյ եւ ի վերայ այլոց հակակայիցն միջակ. որգոն՝ սպիտակին եւ սեւոյն՝ գորշն, եւ ջերմոյն եւ ցրտոյ՝ գաղջն: 16 Նոյնպէս եւ ի վերայ այսոցիկ տեսանիւր, եթէ ասացեալ էր ստորասաբար. զի թէ ասացեալ էր ընդհանուր եւ մասնական գոյացութիւն եւ պատահումն՝ կարծիւր լինել միջակ ինչ նոցա: 17 Արդ՝ վասն զի ոչինչ է միջակ նոցա, վասն այսորիկ հակասաբար՝ զընդհանուրն կոչելով «ըստ ենթակայում», իսկ զմասնականն՝ «ոչ ըստ ենթակայում», իսկ զպատահումն՝ «ենթակայում», իսկ զգոյացութիւն՝ «ոչ նենթակայում». քանզի հակասաբար ասիցելոցն ոչինչ գտանի միջակ: 18 Իսկ հակասութիւն է կուր ստորասութեան եւ բացասութեան. որգոն՝ որպէս յորժամ ասեմ «սպիտակ է - ոչ է սպիտակ». որոց ոչինչ միջակ գոյ: 19 Եւ այսոքիկ այսպէս:

20 Բայց խնդրեսցի, եթէ վասն է՞ր չորից ելոց զերկուսն միայն ենթագրէ՝ զպատահումն եւ զմասնական: 21 Եւ ասեմք, եթէ որպէս կարճառաւտասէր զերկուսն միայն ենթագրէ. իսկ որպէս արուեստաւոր՝ զերկուսն ոչ վայրապարս, այլ զմինն յերկաքանչիւրոցն առնլով հակադրութեանց՝ հրամայէ մեզ յաղագս այլոցն մտածութիւն ունել. քանզի ի ձեռն «ենթակայումն» գամք ի մտածութիւն «ոչ նենթակայումն», եւ ի ձեռն «ոչ ըստ ենթակայումն» գամք ի մտածութիւն «ըստ

ենթակայումն» եւ ոչ նենթակայումն: 22 Բայց զի խնամաւոյ յոռագունիցն զայստոսիկ ենթագրէ, զի մի՛ վասն նուաղութեան գոլոյն սողոսկեցի որպէս եթէ եւ կարծեսցի ամենեւին ոչ գոլ:

1 Ընդ այսոսիկ հանդերձ աստուծով եւ առաջիկա պրակֆս

ՊՐԱԿՔ ԺԹ

2 «Նենթակայումն ասեմք որ յումեմ ոչ իբր մասն գոլ»...

3 Չորից բարբառոց անծանալթից մեզ ելոց՝ նենթակայում, ոչ նենթակայում, ըստ ենթակայում, [ոչ ըստ ենթակայում], երկուս միայն յայսցանէ ենթագրէ իմաստասէրս. զայնս՝ որք յոռիքն են՝ զնենթակայում, որ է պատահումն եւ մասնականն:

4 Եւ նախադասէ զենթակայումն կարող գոլ եւ ընդհանուր. այլ նա զի եւ ստորագութիւնքն ընդհանուրքն որոշին, այլ ոչ եթէ մասնականաւն. իսկ մասնականաւն ընդհանուր գոլ եւ ոչ երբեք կարող գոյ:

5 Եւ պարտ է գիտել, թէ ենթակայում ոչ է սահման՝ որպէս հոմանուան. վասն զի յինն ստորագութիւնսն տեսանի:

6 Բայց ընդհանրապէս իսկ ասելն, եթէ եւ ոչ միում ընդհանուր բարբառոյ մարթ գոյ սահման տալ. որովհետեւ սահմանք զհարողութիւն իրաց խնդրեն, իսկ հոմանուանք անուան միայն:

7 Բայց սակայն ենթագրութիւնն ենթակայումն ունի զհամեմատն սահմանի. քանզի նոյն ինքն «յումեքն» սեռում համեմատի, իսկ բաղկացուցչաց զանազանութեանց «ոչ իբր մասն ելով¹, անկար զատ գոլ յայնմանէ՛ յորում էն»:

8 Չորից պէտք են, որպէս զի եղիցի նենթակայում². քանզի պարտ է յումեքն գոլ ամենայն իրաւք, քանզի ահա միտք աստուածայինք, բանական հոգի, ոչ

է պատահումն, վասն զի եւ ոչ յումեքն է. եւ դարձեալ՝ պարտ է ոչ որպէս մասն գոլ յումեքն, քանզի ահա ձեռն յումեքն գոլով, ի մարմնում, ոչ է պատահումն, վասն զի մասն է մարմնոյն. պարտ է եւ անկար զատ գոլ յայնմանէ՛ յորում էն, քանզի ահա Սոկրատէս յումեք տեղում գոլով, ի Լիւկիում, եւ ոչ գոլով մասն տեղոյն՝ ոչ է պատահումն, վասն զի կարող գոյ զատ գոլ յայնմ տեղոջէ՛ յորում էն. պարտ է եւ ի նմա զգոյութիւն ունել. քանզի ահա Սոկրատէս յումեքն գոլով ի Պեղղոպոննիսիական ժամանակաւ եւ ոչ գոլով մասն ժամանակացն եւ ոչ կարելով զատ գոլ ի նոցանէ, սակայն ոչ է պատահումն, վասն զի ոչ ունիւր զգոլն ի նոսա. քանզի եւ ոչ գոյացութիւն ի ժամանակում զգոլն ունի պատահման ելում. այլ ժամանակն ի գոյացութեան ունի զգոլն՝ որպէս պատահումն:

9 Բայց են մետասան նշանակութիւնք յումեքն. կամ ի ժամանակում՝ որպէս Սոկրատէս ի Պեղղոպոննիսիականսն, կամ ի տեղոջ՝ որպէս ի Լիւկիում Սոկրատէս, եւ կամ յամանում՝ որպէս գինի սահորում եւ ցորեն ի կեղթում. եւ է թերեւս ուրեք տեղի ամանն անշարժ, իսկ սահմանն տեղի շարժուն, եւ կամ որպէս բոլոր ի մասունս՝ որպէս տասն ի յեւթան եւ յերիս, կամ որպէս մասունք ի բոլորում՝ որպէս եւթն եւ երեք ի տասին:

10 Եւ բարիք ասացաք զբոլորն եզաբար, իսկ զմասունսն յոքնաբար. քանզի ամենայն բոլոր մի է, իսկ մասունքն յոքունք, եւ կամ որպէս սեռ ի տեսակում՝ որպէս կենդանին ի մարդում, եւ կամ որպէս տեսակ ի սեռում՝ որպէս մարդ ի կենդանումն:

11 Եւ աստանաւր յիրաւի եզականաբար արտաձայնին երկոքին՝ սեռ ի տեսակում եւ տեսակ ի սեռում, իսկ ի վերայ բոլորին եւ մասանցն՝ բոլոր եզաբար եւ մասունքն յոքնաբար, վասն զի բոլոր յիւրում միում մասին բոլորաբար ոչ կարող գոյ տեսանիլ, իսկ սեռն բոլորիւ ինքեամք ի միում տեսակում կա-

1 Ասելով
2 Նենթակայում յումեքն

րող գոյ տեսանիլ. քանզի ահա հանգիտա-
լոր ունիմք ամենեքեան զսահման, եւ կամ
որպէս տեսակ ի նիւթում՝ որպէս տեսակ
անդրոց ի պղնձում, եւ կամ որպէս յարար-
չականում, ըստ որում ասեմք, եթէ ոչ են ի
սա դիրք, այլ ի բնութեան, որ ստեղծանէ
զսահման՝ կամ յիշխանականումն. կամ որ-
պէս յաւարտականում, ըստ որում ասեմք՝
յիմաստասիրութեան ունի գոյոյս. եւ կամ
որպէս նենթակայում՝ որպէս զպատահումն
ի գոյացութեան: 12 Զայսոսիկ զմետասան
նշանակութիւնս յումեքն յուր ստորոգու-
թիւնս վերաբերէ Արիստոտէլ: 13 Քանզի
իւրաքանչիւր ոք ի սոցանէ յայտ առնէ
զայս ինչն յայտում կալ. իսկ կալն ուր
ստորոգութեանն է: 14 Բայց այսոքիկ մե-
տասան նշանակութիւնք ըստ բնութեան
են յումեք. իսկ այլքն անբնականք են, որ-
պէս ապականութիւն յապականելումն
անբնաւորապէս է:

15 Աստուստ տարակուսեն ոմանք ե-
րիս տարակուսանս. մի զայս՝ եթէ ըստ ո-
րո՞ւմ նշանակութեան մետասանիցդ նշան
ի գծում է: 16 Եւ ասեմք, եթէ որպէս տե-
սակ ի նիւթում. քանզի տեսակարարէ զե-
զերեալ գիծն նշանն: 17 Երկրորդ տարա-
կուսութիւն է որ ասէ, եթէ բոլորն ի մա-
սունս է՝ եւ ոչ այլ ինչ¹ է բոլորն բայց մա-
սունք՝ զիա՞րդ ոչ ինքն յինքեան գտանի
գոլ ասացեալ: 18 Առ որ ասեմք, եթէ ոչ
բովնդակ ընթացակցութիւն ամենայն մա-
սանց առ ի լինիլ բոլոր ինչ, այլ պէտք են
եւ դրութեան եւ ձեւոյ եւ տեսակի՝ որ ի
վերայ եղանին.

19 Երրորդ տարակուսութիւն է որ ա-
սէ, եթէ զիա՞րդ նենթակայումն, պատա-
հումն գոլով՝ հակորոշեաց² տեղում եւ ժա-
մանակում, պատահմանց ելոց եւ նոցին:
20 Եւ ասեմք, եթէ ոչ եթէ տեղում եւ ժա-
մանակում հակորոշեաց, պատահմանց ե-

լոց, այլ այնոցիկ, որք ի տեղում եւ ի ժա-
մանակում են՝ գոյացութեանց ելոց:

21 «Նենթակայում ասեմ».

22 Բարւոք ասաց «ասեմ», քանզի
ինքն այսպէս անուանեաց. քանզի որ այ-
լոց են դրութիւնք՝ անդ «ասին» դնէ, որ-
պէս «հոմանունք ասին, փաղանունք ա-
սին»: 23 Բայց մեք ցուցաք զընթերական
ենթագրութիւնս, եթէ զիա՞րդ ունի զհամե-
մատն սեռում եւ բաղկացուցչաց զանա-
զանութեանց. զի այսպիսի ենթագրու-
թիւնս որոշէ զնա ի տասն նշանակիցելոցն.
քանզի յումեքն որոշեաց զնա յորպէս բո-
լոր ի մասունսն. քանզի բոլորն ոչ որպէս
այլ յայլում, այլ որպէս ինքն յինքեան
կարծի գոլ: 24 Իսկ ասելովն «ոչ որպէս
մասն» որոշեաց զնա ի յորպէս մասն ի բո-
լորում եւ յորպէս սեռ ի տեսակում եւ տե-
սակ ի սեռում. քանզի կարծի իմն, թէպէտ
եւ ոչ տիրապէս, մասն գոլ տեսակ սեռի.
քանզի զանազանութիւնս առեալ՝ կատարէ
զտեսակ, եւ տեսակ մասն գոլ կարծի սեռի՝
որպէս մասնականագոյն քան զնա. քանզի
ոչ ասաց՝ «յումեքն մի մասն գոլ», այլ «մի
որպէս մասն գոլ». քանզի այսոքիկ ոչ են
տիրապէս մասունք: 25 Իսկ ասելովն «յո-
րում էն», այսինքն յորում զգոլն ունի՝ ո-
րոշեաց զնա ի ժամանակէ եւ յարարչակա-
նէն եւ յաւարտականէն. քանզի ոչ եթէ
յայսոսիկ ունի զգոլն, որպէս ցուցաք:
26 Իսկ յորպէս տեսակ ի սեռում որոշէ
զնա՝ յայն որոշէ որպէս տեսակ ի սեռում:

1 Ընդ այսոսիկ հանդերձ աստուծով ա-
ռաջիկա տեսութիւնս

ՊՐԱԿՔ Ի

2 «Նենթակայումն ասեմ».

3 Եւ վասն զի ուսաք զենթագրութիւն
նենթակայում եւ ցուցաք, եթէ ունի համե-
մատեալ սեռում եւ բաղկացուցիչ զանա-
զանութեանց, սեռում՝ զումեքն, իսկ բաղ-

1 Այլ ոչինչ

2 Հակորոշեացաւ

կացուցիչ զանազանութեանց՝ զայլս ի բառիցն՝ բե՛ր այսուհետեւ եւ առ բաղկացեալ ենթագրութիւնս զվայելուչ տարակուսանսն տարակուսեսցուք: 4 Եւ այսոքիկ են, որք ըստ առաւել ունականութեան եւ ըստ նուազութեան դատախազեն: 5 Եւ այնոքիկ, որ դատախազենն զառաւել ունակութիւն՝ այսպէս ձեռնարկեն, եթէ եւ գոյացութեան պատկանի այսպիսի ենթագրութիւն. քանզի ահա Սոկրատէս յումեք ի տեղուջ է եւ ոչ է մասն տեղույ եւ ոչ կարէ զատ գոյ ի տեղուջէն յորում էն, քանզի ամենայն ուրեք ի տեղուջ է, սակայն ոչ է պատահումն: 6 Առ որ ասեմք, եթէ զո՞ր տեղի առնուք. զիւրաքանչի՞ւրն յորմէ որոշի թէ զհանուրն. իսկ եթէ զընդհանուրն՝ ամենեւիմք ոչ է ի նմա: 7 Իսկ եթէ նեղեալք ասիցեն, եթէ ոչ ըստ իւրաքանչիւրն ասեմք զսահմանեալն եւ ոչ զհանուրն, այլ զմասնականն՝ որ անորիշն է. թէպէտ եւ ամենայն իրաւք յումեմն տեղուջ է Սոկրատէս. դարձեալ ասեմք, եթէ վերջին զանազանութիւնք ենթագրութեանդ ոչ պատկանի գոյացութեան, որ ասեն անկար զատ գոյ յայնմանէ յորում էն. քանզի ոչ եթէ Սոկրատէս գոյացութիւն գոլով՝ ի տեղում ունի զգոլ՝ որպէս պատահումն, այլ տեղի ունի ի գոյացութեան զգոլն: 8 Այս առաջին տարակուսութիւն:

9 Իսկ երկրորդ տարակուսութիւն է, եթէ ահա բոլորն ի մասունս գոլով՝ ոչ է բոլորն մասն մասանցն եւ ոչ կարող գոյ բոլորն զատ գոլ ի մասանցն, սակայն ոչ է պատահումն: 10 Առ որ ասեմք, եթէ ենթագրութիւն զումեքն ունի եւ ոչ զումեքսն. իսկ բոլորն յումեքսն ասի գոլ եւ ոչ յումեք. քանզի մինչ կարի նուազ երկուս ունի մասունս ամենայն իրաւք բոլորն. վասն որոյ եւ վերստին տարակուսեն, եթէ եւ բոլորն յումեք ասի. քանզի մի ոմն ի մետասան նշանակութեանցն ասիւր գոլ յումեքն, որպէս բոլոր ի մասունս: 11 Եւ ասեմք, եթէ այս ասացաւ առ ի ցուցումն

ոչ կարելն պատահման ըստ ընքեան գոլ, եւ զի թէպէտ եւ եզական է արտաձայնութիւնն, սակայն բազմութիւն նշանակէ. քանզի յումեք բազմութեան մասանց գոյ բոլորն եւ կամ յումեք քանակութեան մասանց տեսանի: 12 Եւ այլազգ այսոքիկ տրամորոշին, զի բոլոր թիւ յիւր մասունս՝ որպէս ինքն յինքեան գոլ, իսկ պատահումն՝ որպէս այլ յայլում է: 13 Այլ տարակուսութիւն է որ ասէ, եթէ եւ տեսակ ի նիւթում գոլով՝ ոչ մասն է նիւթոյ եւ ոչ անջատի, քանզի յանջատելն ապականի, սակայն ոչ է պատահումն՝ որպէս տեսակարարու նոյն ինքն եւ տեսակ, այլ գոյացութիւն. քանզի տեսակարարիցելոյ գոյացութիւն է: 14 Առ որ ասեմք, եթէ պատահումն է տեսակ՝ վասն զի նիւթում որպէս եթէ պատահեաց, սակս եւ անջատի ի նմանէ: 15 Իսկ շարագրիցելոյ գոյացութիւն է՝ տեսակ եւ նիւթ, որպէս աւարտիչք նորին: 16 Վասն որոյ եւ նորա մասունք ասին եւ ոչ միմեանց. քանզի ոչինչ պակասին. քանզի ինքն մասն կարող գոյ լինիլ. վասն զի եւ ոչ եւթն երից մասն կարող գոյ լինիլ պակասելոյ քան եւթնն: 17 Այսոքիկ են տարակուսանք այնոցիկ, որք զառաւելութիւն դատախազեն զենթագրութեանն: 18 Իսկ որք զպակասութիւն դատախազեն՝ այսպէս ձեռնարկեն ասելով, եթէ ոչ ամենայն պատահման պատկանի բացատրեալ ենթագրութիւնդ, բայց միայն անանջատականումն: 19 Առ որ ասեմք, եթէ որչափ ինչ յանջատիլ եւ ոչ յանջատիլ² պատահման՝ ոմն անջատական եւ ոմն անանջատական է. իսկ որչափ ինչ կարողն գոլ զատ գոլ յայնմանէ յորում էն՝ ամենայն պատահումն անանջատելի է. քանզի ոչ ասաց, եթէ «որ ոչն կարէ անջատիլ», այլ «որ անկարն գոլ զատ գոլ»: 20 Եւ ապա ասեն եթէ այո՝ կարող գոյ զատ գոլ պա-

1 Գոյացութեան եւ

2 Ոչ յանանջատիլ

տաճումն. քանզի ահաւանիկ անուշութիւն խնձորոյն պատահումն գոլ՝ թողեալ զխնձորն՝ մնայ ի զգայարանում կամ ի գոյացումն: 21 Զայս տարակուսանս լուծանեն զանագանապէս. Պղատովն այսպէս՝ եթէ ոչ որոշեցաւ յենթակայէն, բայց ի ձեռն անաւար բացագեղմանց գայ առ մեզ, որպէս յայտ առնեն ըստ մասին նորա թաւամութիւնք. քանզի ի ծառն ոչ թառամի՝ վասն առաւել գոլոյ ներգեղման քան զարտագեղումն: 22 Իսկ Արիստոտէլ զարբանեկութիւն աւզոյն պատճառս ունի. քանզի որով բանիւ թափանցատեսական է եւ թափանցահնչական է՝ նովին բանիւ եւ թափանցահոտական: 23 Իսկ Պղոտինոս, որ եւ զՊղատոնին եւ զԱրիստոտէլին հաւաքեաց, ասէ՝ եթէ փոփոխի մասն ինչ աւզոյս. քանզի անուշութիւն խնձորոյն, մնալով ի նմա՝ ծնանի փոփոխէ մասն ինչ աւզոյս, որում զգամք եւ հոտ առնումք: 24 Յորոց կարծեաց ոչ մի ինչ ըստ ինքեան ճշմարիտ գոյ՝ ոչ զՊղատոնին որ ասէ բացագեղմունս ոմանս. քանզի բացագեղումն մարմին է, իսկ ամենայն մարմնոյ մի է ըստ բնութեանն շարժումն, քանզի կամ թեթեւ եւ ի վեր միտէ կամ ծանր եւ ի վայր: 25 Իսկ անուշութիւն խնձորոյն ամենեքեան համապատուաբար զգամք շուրջ կալով. ապա ուրեմն՝ ոչ է բովանդակ բացագեղմունս միայն ասել: 26 Նա եւ ոչ Արիստոտէլին միայն ըստ ինքեան ճշմարիտ. քանզի ահաւասիկ խոզք առաւել վերաբերելով զաղբս, վասն առաւել զգալոյ բացագեղմանց կտոցն, այլ եւ ըստ ժահահոտ տեղիս անցանելով՝ բազում անգամ կափուցանեմք զունչս կարկատանաւք ոմամք, եւ այն ինչ շնչելով՝ ոչ զգամք ժահահոտութեան. որպէս պարզեցելոց բացագեղմանցն կարկատանաւքն եւ մաքուր աւզոյն եկելոյ առ մեզ: 27 Եւ ոչ Պղոտինոսին միայն ճշմարիտ, որ ասէ որակել զբոլոր աւզ. քանզի առասպելական է ասելն որակել զբոլոր աւզ՝ որպէս անգեղց,

որք զգան անթաղ մարմնոցն որք յայլ քաղաքս են: 28 Իսկ երեքեան միանգամայն ճշմարտիք են. այլ ի վերայ վատ հոտոտելոցն պէտք են բացագեղմանց, իսկ ի վերայ ստուգաբար հոտոտիցելոցն՝ բաւական է թափանցահոտականն աւզոյ, իսկ ի վերայ չափաւորապէս հոտոտելոցն՝ բաւական է եւ փոփոխումն աւզոյ: 29 Այսոքիկ այսպէս: 30 Պարտ է գիտել, թէ ոչ ըստ միում ումեք ի կարծեաց որակութիւնք ի յենթակայէ յենթակայ փոփոխին, քանզի ի նմին են՝ յորում ենն, յայնմ յորում լինին. աւցտեսցի ինքն յինքեանէ որակութիւնն եւ կամ յայլում եւ յայլում այժմէն: 31 Եւ քանզի ամենայն երկուց այժմ է ինչ ընդ մէջ ժամանակ՝ յայնմ ժամանակում առանց ընթակայում եղիցին: 32 Բայց գոյր եւ պարզաբար լուծանել զայսոսիկ, եթէ զայս ոչ ասաց Արիստոտէլ «անկար գատ գոլ յորում էր», այլ եթէ «յորում է», վասն զի յորում է ամենայն իրաւք յենթակայում է:

1 Ընդ այսոսիկ հանդերձ աստուծով եւ առաջիկա պրակֆս

ՊՐԱԿՔՍ ԻԱ.

2 «Յորժամ այլ գայլ ստորոգիցի իբր գեմթակայէ»...

3 Եւ վասն զի ստորոգութիւնքս եւ լայնութիւն ունին եւ խորութիւն, խորութիւն ի մասնականսն կոյս է նոցա ելք, իսկ լայնութիւն զգառ ի կողմն փոխանակութիւն, որպէս զի զխորութիւնն առցես այսպէս՝ զգոյացութիւն եւ զմարմին, զչնչաւոր մարմին եւ զկենդանին եւ որ ի կարգին է, իսկ լայնութիւն՝ զչնչաւորն եւ զանշունչն եւ այնպէս՝ որ ի կարգին է, վասն այսորիկ Արիստոտէլ պայմանս մեզ եւ լայնութեան եւ խորութեան յարատրէ, եւ այժմ խորութեան, իսկ ապա զլայնութեանն: 4 Եւ է պայմանն եւ կանոն այսպիսի. յորժամ առաջինն երկրորդումն ստորոգի՝ իբր ենթակայում՝ եւ երկրորդն

երրորդում՝ ապա եւ առաջինն երրորդում ստորագեսցի՝ որպէս ըստ ենթակայում. որգոն՝ եթէ շնչաւորն կենդանումն ստորագի եւ կենդանին մարդումն՝ ապա եւ շնչաւորն մարդումն ստորագեսցի: 5 Եւ բարեռք առկայացաւ ի կանոնումը «ըստ ենթակայումն». քանզի եթէ հանդերձեալ է բնաւ ճշմարիտ գոլ պայմանը եւ կանոնը՝ պարտ է երկաքանչիւրոց նախադասութեանցն ըստ ենթակայում գոլ. քանզի եթէ երկոքին ի նենթակայում գոյասցին՝ ոչինչ ճշմարիտ ժողովի. այլ եւ եթէ մինն ըստ ենթակայում ասի եւ մին ի նենթակայում՝ առաջինն կամ երկրորդն, եւ ոչ այնպէս ճշմարիտ ինչ ժողովի: 6 Եւ արդ՝ առցին երկոքին նենթակայում, որգոն՝ «մարդ սպիտակ, սպիտակն երկփաղառական՝ ապա ուրեմն՝ եւ մարդն երկփաղառական է»: 7 Արդ՝ եթէ այդպէս եզերասցի՝ սուտ ժողովի: 8 Դարձեալ առցի մին նենթակայում, իսկ երկրորդն ըստ ենթակայում. որգոն՝ «մարդ սպիտակ, սպիտակ գոյն՝ ապա ուրեմն եւ մարդն գոյն է». որ է սուտ: 9 Դարձեալ առցի առաջինն ըստ ենթակայում՝ որգոն՝ «մարդ կենդանի է», իսկ երկրորդն նենթակայում՝ որգոն՝ «կենդանին երեքփաղառական». եւ ոչ այսպէս ճշմարիտ ինչ ժողովի. քանզի ժողովի՝ ապա ուրեմն եւ մարդ երեքփաղառական: 10 Եւ դարձեալ ի ձեռն այսր պայմանի զամենայն զգոյսդ ի տասն ստորագութիւնս վերաբերէ. քանզի որպէս պայմանն ցուցանէր զառաջինն երկրորդին գոլ եւ զերկրորդն երրորդումն՝ նոյնպէս եւ ի վերադարձմանէն է ցուցանել զվերջագոյնսն եւ զերկրորդսն յառաջինսն վերաբերել, որգոն՝ մարդ կենդանի է, եւ կենդանին՝ շնչաւոր, եւ շնչաւորն՝ մարմին, եւ մարմինն՝ գոյացութիւն, ապա ուրեմն՝ եւ մարդ ի գոյացութիւն վերաբերեսցի: 11 Եւ ի վերայ այլոց ստորագութեանցն նոյնպէս:

12 Աստուստ տարակուսեն ոմանք ասելով, եթէ սահմանէ Արիստոտէլ եւ զըստ

ենթակայումն, յորժամ ասէ, եթէ առաջինն երկրորդումն գոյանայ եւ երկրորդն երրորդին՝ ապա եւ առաջինն երրորդին գոյասցի. այլ եւ ոչ նենթակայումն՝ սահմանեաց, այսինքն զգոյացութիւն, յորժամ ասէ զյատուկս գոյացութեան. քանզի ենթագրութիւնք ի յատկացն առնուն: 13 Այս է տարակուսութիւն: 14 Զոր պարտ է այսպէս լուծանել. եթէ պայման եւ կանոն է ճառիցեալը եւ ոչ սահման կամ ենթագրութիւն. քանզի եւ ոչ ի միում ենթագրութեան կամ սահմանում զսահմանելին եւ կամ զանուն սահմանելոյն ի յենթագրութեանն առնու. քանզի ոչ ոք ասէ, եթէ մարդ է կենդանի մարդ. իսկ այժմ ի կանոնումս բազում անգամ սահմանելին յարառոցաւ, այսինքն՝ ըստ ենթակայումն: 15 Իսկ առ միւս եւս տարակուսութիւնն ասեմք, եթէ ոչինչ ի յատկացն գոյացութեան յորս ասէ զենթագրութիւն գոյացութեան. քանզի զամենայն, զոր միանգամ զյատուկսն ասէ՝ կամ գոյացութեան միայն գոյ կամ ամենայնի եւ կամ ամենայնում եւ ոչ՝ միայնում իսկ ենթագրութեան: 16 Եւ տիրաբար յատուկքն միայնում եւ ամենայնում եւ միշտ կամին գոլ՝ որպէս ուսաք:

17 Արդ՝ երկակի ելոյ ստորագութեան՝ միոյն ըստ ենթակայում, իսկ միւսոյն նենթակայում՝ ի նենթակայում ստորագութեանն այլ այլում ասելով գոլ՝ եւ ոչ մի ինչ խնդիրս զարթուցանէ: 18 Իսկ զըստ ենթակայում ստորագութիւնն կամելով ցուցանել՝ զմին այն ինչ որ ի միւսն է, այսինքն՝ ստորագեալն եւ որ ինչ նենթակայն էր՝ խնդիրս զարթուցանէ. քանզի եւ ասէ իսկ ոք, եթէ «որ կենդանի է մարդում ստորագի՝ նոյն ինքն ներդասիցեալն ի նմա՝ եթէ այլ ինչ ընդհանրականագոյն: 19 Եւ եթէ ներդասիցեալն ի նմա՝ թախանձումն ունի ստորագութիւն ինքն ինքեան

1 Զենթակայումն, յուլ. τὸ οὐκ ἐν ὑποκειμένῳ

ստորոգելով. իսկ եթէ ընդհանուր է՝ բազմազեացի մասնականն ընդհանրականին եւ եղիցի մասնականն՝ որ ինչ ընդհանուրն է»։²⁰ Առ այսուսիկ ասեմք, եթէ ամենայն իրաւք որ ստորոգելուցն է՝ պարտ է նմա եւ հասարակագոյն գոյ ենթակային եւ յատկագոյն. քանզի եթէ ընդհանրականագոյն է՝ ոչ երբեք թախանձումն ունի ստորոգութիւնն. իսկ եթէ յատուկ է իւրաքանչիւրոյ ուրուք՝ ոչ բազմազեացի մասնական ենթակայն ընդհանրականին, որպէս եւ է ի վերայ միջակիտի բոլորակին. քանզի նշանն այն որ միջակետն է եւ բոլորակին ամենայնի ուղղական, որ ի նմանէ արտահանի՝ եւ հասարակ է ամենեցուն եւ յատուկ իւրաքանչիւրոյ ուրուք։²¹ Եւ որպէս ձայն քարոզչի՝ որ հասարակ է ամենեցուն եւ յատուկ իւրաքանչիւրոյ ուրուք. քանզի եւ յամենեսեան է եւ յաւդում է՝ մի գոլով։²² Այլ եւ նոյն իսկ ինքն յատուկն, որ կարծի հաւասարն եւ հանդէտն գոլ՝ ընդհանրականագոյն ասի գոլ, վասն զի ամենայն յատուկ ընդհանուր տարրորոշմանց համազար գոյ. քանզի ասելն «մարդն ծիծաղական է», ոչ այլ ինչ ասեմք, բայց զայն՝ եթէ ամենայն մարդ ծիծաղական է. իսկ ամենայնն փոխանակ իւրաքանչիւրոյ իմանի. քանզի իւրաքանչիւր ուրուք ծիծաղական գոյն ընդհանրականագոյն է։²³ Բայց է եւ այլազգ ասել, եթէ կարող գոյ նոյն ինքն ընդհանրականագոյն եւ յատկագոյն ենթակային գոլ. քանզի ահա տեսանեմք, զանտեսակ նիւթ յառաջ գալով ի գոյացութենէ՝ նախ որպէս տեսակարարի իմն գտարակացութիւնսն առնլով եւ քանակելով, եւ ապա որակի, եւ ապա առնէ զներշնչաւոր մարմինն, յետ այսորիկ զկենդանին, ի վերայ այսոցիկ եւ զմարդն, ապա զՍոկրատէս, եւ անդ վախճանէ։²⁴ Արդ՝ ամենայն, որ յառաջ քան զՍոկրատէսն են՝ տեսակարարաւք զանազանութեամբք զանազանին ի միմեանց. իսկ Սոկրատէս առանձ-

նական ինչ յեղանակաւք զանազանի յայլոց մարդկանց, որոյ ի վերայ գայ մասնական տեսակն մարդոյ ումեք ոչ երբեք, այլ ըստ բնութեանն զանազանութիւն ընդունելով. վասն որոյ եւ մնայ անբաժանելի։²⁵ Եւ արդ՝ տես եթէ ո՛րպէս ինքն նիւթ, որ ամենեցուն գոյ ենթակայ հաւասարապէս՝ եւ առանձինն իւրաքանչիւրոյ ումեք ենթակացեալ գոյ ամենեցուն։²⁶ Նոյնպէս եւ ի վերայ կենդանոյն է տեսանել եւ ի վերայ ներշնչաւորին. քանզի նոյն ինքն եւ յատուկ եւ հաւասար իւրաքանչիւրոյ եղանի. հաւասար՝ որպէս բազմաց գոլով, իսկ յատուկ՝ որպէս առեալ գտեսակարարուս զանազանութիւնս եւ եղեալ տեսակ այլ ինչ այլ¹, ըստ համեմատութեան նիւթոյն, որ ամենեցուն ենթակայ է հաւասարապէս եւ առանձինն իւրաքանչիւր ումեք։

1 Ընդ այսուսիկ հանդերձ աստուծով եւ առաջիկա պրակս

ՊՐԱԿՔՍ ԻԲ

2 «Յայլայսեոից եւ ոչ ընդ միմեամբք»...

3 Յետ խորութեանն կանոնի գայ եւ ի կանոն լայնութեան։

4 Եւ վասն զի զլայնութիւն զանազանութիւնք առնեն, երկակի գոն զանազանութիւնք, քանզի կամ բազկացուցիչք գոն կամ բաժանականք, այլ եւ սեռքն երկակի գոն՝ ոմանք ընդ միմեամբք եւ ոմանք ոչ ընդ միմեամբք։⁵ Արդ՝ ի խնդիր է ի ձեռն այսոցիկ Արիստոտէլ, եթէ զի՞ւրդ ունին բազկացուցիչք զանազանութիւնքն եւ բաժանականքն առ սեռսն, որք ընդ միմեամբքն են եւ որք ոչ են ընդ միմեամբք, եւ բացերեւեցուցանէ ասելով, եթէ «այլասեռիցն եւ ոչ ընդ միմեամբք դասիցելուցն այլ են տեսակաւ զանազանութիւնքն»։ իսկ ընդ միմեամբք դասիցե-

1 Եւ ոչ այլ ինչ այլ, յուճ. ἄλλοτε ἄλλο

լոցն բաղկացուցիչքն ամենայն իրաւք նոյնք, իսկ բաժանականքն երբեմն նոյնք, երբեմն այլ: 6 «Բայց այլ սեռս» լսելի է զայնս, որք ի զանազան ստորոգութիւնս վերաբերին՝ որպէս կենդանին եւ մակացութիւն, եւ կամ այնք, որ թէպէտ ի մի ստորոգութիւն վերաբերին, սակայն բաժանաբար՝ որպէս բանականն եւ անբանն: 7 Արդ՝ ի զանազան ստորոգութիւնս վերաբերելոցն՝ եւ բաղկացուցիչքն եւ բաժանականքն ամենայն իրաւք այլք են, որպէս կենդանոյն եւ մակացութեան, որոց ստորոգութիւնքն զանազանք են: 8 Արդ՝ բաղկացուցիչքն կենդանոյն՝ ներշնչաւորն եւ զգայականն, իսկ բաժանականք՝ բանականն եւ անբանն, մահկանացուն եւ անմահն. իսկ բաղկացուցիչք մակացութեանն՝ անսխալն եւ անշարժն եւ յաղագս այնոցիկ լինիլն, որք միշտ այնպէս բնաւորեցան գոլ. իսկ բաժանականք են, որպէս բաժանեաց Պղատոն ի Գորգիոս, ասելով, եթէ արհեստիցն ոմանք բանականք միայն, որպէս տրամաբանականն, եւ ոմանք՝ գործականք միայն, որպէս կենդանագրողականն, իսկ ոմանք բանականք միանգամայնք եւ գործականք: 9 Եւ այս երկակի. կամ հանգիտաբար ունի բանումն զգործս, որպէս փանդեոներգութիւն, քանզի այն ինչ երգէ եւ հարկանէ, եւ կամ որպէս տապալախաղացութիւն յառաջագոյն ասելով.

10 «Եկ վեց եւ վեց քաջի Կանանիայի».

11 եւ կամ առաւել ունի զբանն քան զգործս՝ որպէս որ ասեն.

12 «Ի բաց տուր զառ ի յիմմէն առեալ ի հաւրէ»,

13 եւ նորա ըստ լռութեան ի վեր միայն ակնարկեալ ի վերայ ածէ դարձեալ Որեստէս¹.

14 «Եթէ ոչ ասացի զինչս, այլ զայն ասեմ ինչս զի զիս ապրեցուցես».

15 եւ կամ վերադարձապէս՝ յորժամ առաւել ունի զգործն քան զբանն, որպէս բժշկականն՝ որ գործական առաւել է քան բանական. թէպէտ եւ բանում պիտանանայ վասն տրամագիտութեան վասն բժշկելոյն. զի որ քաջ եւ լաւագոյն ծանեաւ զցաւս՝ լաւագոյն եւ բժշկէ: 16 Բայց ոչ միայն ի վերայ զանազան ստորոգութիւնս վերաբերիցելոցն կանոնս ճշմարիտ է, այլ եւ ի վերայ այնոցիկ՝ որք ոչ ընդ միմեամբքն են: 17 Եւ ոչ ընդ միմեամբքն ասին այնք, որք հակաբաժանին միմեանց, որպէս անմարմին մարմնում եւ ներշնչաւորն անշնչումն եւ որք միանգամ այսպիսիք են. քանզի եւ ոչ մի ոք ի սոցանէ ընդ միով ընկերովն է. քանզի մարմնոյ բաղկացականք զանազանութիւնք են եռակի տրամակայիլն դրութիւնս, այսինքն՝ դրութիւն ունիլն. իսկ բաժանականք են ներշնչաւորն եւ անշունչն: 18 Իսկ անմարմնոյն բաժանականք են աստուածայինն եւ հրեշտակականն. իսկ բաղկացուցիչք են որ յառաջ քան զբաժանականսն անտարակացելին, անդրելին:

19 Վասն որոյ եւ տարակուսեն ասելով, եթէ եւ այնոցիկ, որք ի մի ստորոգութիւն վերաբերին եւ հակաբաժանին եւ ոչ են ընդ միմեամբք՝ կարողութիւն է զնոյնս գոլ բաժանականս. քանզի եթէ բաժանեմ զկենդանին ի ցամաքային եւ ի ջրայինն, եւ դարձեալ բաժանեմ զցամաքայինն՝ յարիւնաւոր, որպէս ի մարդ եւ ի ձի, եւ յանարիւն, որպէս ի մեղու եւ ի մարախ եւ ի մրջիւն. դարձեալ բաժանեմ զջրայինսն՝ յարիւնաւոր՝ ի դաբրաքս եւ ի թիւնոս եւ յորփոս եւ յայսպիսիս, իսկ յանարիւն՝ որպէս ի միպրիկ եւ թիսիւր, կարապոս. արդ՝ ասա այլոց սեռիցն հակաբաժանիցելոց եւ ոչ ընդ միմեամբք ելոց՝ նոյնք են զանազանութիւնք: 20 Թէպէտ եւ բաժանէ ոք զկենդանին յարիւնաւոր եւ յանարիւն, եւ զարիւնաւորն՝ ի ցամաքային եւ ի ջրային, եւ նմանապէս զանարիւնն բաժանէ ի ցա-

1 Ոռեստոս

մաքայինն եւ ջրայինն, եւ այսպէս դարձեալ նոյնք գտանին բաժանականք զանազանութիւնք, եւ յարացոյցք յայտնի են: 21 Եթէ այլս տեսակաւ զանազանութիւնս ասէ Արիստոտէլ, որք այլ տեսակս առնեն՝ միշտ զանազանեալս միմեանց եւ ոչ երբեք նոյնն մնայ. քանզի արիւնաւորն ցամաքային ջրայնւոյն ոչ երբեք է նոյն տեսակաւ, եւ ոչ վերադարձապէս անարիւն ջրային անարեան ցամաքայնւոյն ոչ երբեք է նոյն տեսակաւ: 22 Արդ՝ զանազանութիւնք ոչ եթէ ինքեանք զանազանին միմեանց. քանզի զիւրդ արիւնաւորն զանազանի արիւնաւորում՝ որպէս արիւնաւոր, եթէ ոչ առցէ այլ յատկութիւնս ումանս եւ եղիցի ուրեք ուրեք մարդ եւ ուրեք ուրեք ձուկն, թէ պատահիցէ: 23 Բայց պարտ է եւ զայս գիտել, որպէս ասէ Եւստատիոս փիլիսոփոս՝ ստորայիշատակեալ Ստորոգութիւնսդ, եթէ յորժամ ասէ Արիստոտէլ «ոչ ընդ միմեամբք սեռիցն դասիցելոց ոչինչ արգելու զնոյնս գոլ», եթէ վասն բաժանականացն ասէ եւ ոչ բաղկացուցչացն. քանզի բաղկացուցիչքն մասունք թերեւս յիրաւի ասասցին՝ որոց ենն բաղկացուցիչք, որպէս ներշնչաւորն եւ զգայականն կենդանոյն. քանզի մասունք այսոքիկ թուին գոլ կենդանւոյն, որպէս լրացուցիչք նորին, եւ ոչ երբեք զանազանութիւնք նորա, թէ ոք ստուգաբար տեսանիցէ: 24 Իսկ բաժանականքն տիրաբար զանազանութիւնք են, որպէս զանազանից տեսակաց արարչականք: 25 Արդ՝ ի վերայ այսոցիկ բաժանականաց յայնոսիկ, որք ընդ միմեամբք են՝ կարողութիւն է երբեմն զնոյնս գոլ բաժանականս զվերագոյնն ներքագունումն. քանզի եթէ բաժանեմ զկենդանին ի թեւաւոր եւ ի ջրային՝ ոչ կարեմ զնոյն առնել բաժանականս կենդանոյ պարզաբար թեւաւորի եւ ջրայնւոյ. քանզի ոչ եթէ զթեւաւորն կարող ի բանական եւ յանբան բաժանել եւ ոչ զջրային կենդանին, եթէ ոք զայսոսիկ բաժանեալն

կամիցի բաժանել ի բանական եւ յանբան՝ ոչ կարող գոյ. քանզի ոչ է հնար: 26 Իսկ եթէ բաժանեմ զկենդանին ի ցամաքային եւ ի ջրային, զցամաքայինն կարող գոմ բաժանել ի բանական եւ յանբան՝ ի մարդ եւ ի ձի: 27 Եւ զկենդանին ի բանական եւ յանբան՝ ի մարդ եւ ի ձի: 28 Եւ ահա նոյնքն գտանին վերակացելոյ կենդանոյն զանազանութիւնք՝ բանականն եւ անբանն, եւ ցամաքայնւոյն որ ի բաժանմանէ կենդանոյն եղեւ. քանզի եւ ցամաքայինն բաժանի ի բանական եւ յանբանն:

29 Բայց այլ են այսոցիկ բաղկացուցիչք եւ բաժանականք զանազանութիւնք. քանզի անմարմնոյն զանազանութիւնքն թէպէտ բաղկացուցիչ գոն, եւ թէպէտ եւ բաժանականք լինին, ոչ են նոյնք բաժանականացն եւ բաղկացուցչացն որք մարմնոյն են: 30 Իսկ ընդ միմեամբք են այնոքիկ, որք ըստ խորութեան առաջաբերին, որպէս մարմին եւ շնչաւորն եւ կենդանին եւ մարդն: 31 Իսկ ի վերայ այնոցիկ, որք ընդ միմեամբքն են բաղկացուցիչքն՝ ամենայն իրաւք նոյնք են, քանզի այնոքիկ, որք ընդ միմեամբքն են՝ ամենայն իրաւք վերագոյնքն զներքնագունիցն ստորոգին, իսկ բաժանականքն երբեմն նոյնք երբեմն այլք. զի եթէ բաժանես զկենդանին ի բանական եւ յանբան՝ ոչ կարես դարձեալ բաժանել զբանականն ի բանական եւ յանբան: 32 Իսկ եթէ բաժանես զկենդանին ի մահկանացու եւ յանմահ, եւ դարձեալ զբանականն՝ ի մահկանացու եւ յանմահ՝ նոյնք են ստոյգ: 33 Յորժամ ասես, ո՞վ Արիստոտէլ, եթէ «այնց, որք ոչ են ընդ միմեամբք դասիցեալք՝ ոչինչ արգելու նոյնս գոլ»՝ յաղագս բաղկացուցչացն ասես եթէ յաղագս բաժանականացն. եթէ յաղագս բաղկացուցչացն ասես, վասն զի ամենայն իրաւք նոյնք են, զի՞նչ կամի ասելն եթէ «ոչինչ արգելու», որպէս միշտ ի վերայ միջակի ուրուք ասացեալ: 34 Իսկ եթէ յաղագս բաժանականացն ասես՝ զի՞նչ ասեմք

առ կանոն խորութեան՝ որ յաղագս բաղ-
կացուցչացն ասացեալ է: 35 Եւ ասեմք, մի
զուցէ եթէ վասն երկուցունցն ասէ՝ եւ
վասն բաժանականացն եթէ «ոչինչ արգե-
լու» եւ վասն բաղկացուցչացն, եթէ ամե-
նայն իրաւք նոյնք են, որպէս եւ ունի կա-
նոնն խորութեան: 36 Աստ տարակուսեն
ոմանք ասելով, եթէ վասն է՞ր նախադա-
սեաց զստորասականն բացասականին:
37 Եւ ասեմք, եթէ որպէս կարեւոր մար-
թականում. քանզի ամենայն իրաւք ի վե-
րայ բացասականին, այսինքն այնոցիկ՝ որ
ոչ ընդ միմեամբքն են՝ այլ եւ այլ են, իսկ
ի վերայ ստորասականին, այսինքն՝ որ ընդ
միմեամբքն են՝ մարթ գոյ զբաժանականսն
եւ նոյնս գոյ եւ այլս: 38 Եւ վասն է՞ր ոմն
կարեւոր եւ ոմն մարթ գոյ: 39 Եւ ասեմք,
եթէ վասն զի հակբաղադրական զուգա-
դարձութիւն միշտ ի հետեւողէն եղանի.
Իսկ Արիստոտէլ յառաջնորդականէն ա-
րար. քանզի ասելով, եթէ այլոց սեռիցն եւ
ոչ ընդ միմեամբք դասիցելոցն այլք են ա-
մենայն իրաւք տարբերութիւնքն երկո-
քեան. եւ պարտ էր ասել, եթէ «որոց
նոյնքն են զանազանութիւնքն՝ այնոքիկ
ընդ միմեամբք են»: 40 Բայց բարիոք առ-
կայացաւ ասելն «այլք տեսակաւ», որպէս
զի զգոյեղուտան առցուք զանազանու-
թիւնս. զի եթէ ոչ զայսոսիկ, այլ զպատա-
հականսն առնումք՝ կարողութիւն է այնո-
ցիկ, որք ի զանազան ստորոգութիւնս վե-
րաբերին՝ զնոյնս գոյ. քանզի, բաժանեմ
զկենդանին յոտնաւոր եւ յանոտն, եւ զա-
նաւթ՝ ի յոտնաւոր եւ յանոտն. յորոց կեն-
դանին ի գոյացութիւն վերաբերի, իսկ ա-
նաւթն՝ որպէս գործի՝ յառ ինչն: 41 Բայց
պարտ է եւ զայս գիտել, եթէ մանաւանդ
ընդ միմեամբ պարտ է ասել եզականաբար՝
քան եթէ ընդ միմեամբք յոքնաբար. քան-
զի եթէ ասեմք ընդ միմեամբք՝ կարծիս
տայ յինքեանս վերաբերիլ, այսինքն՝
զվերնագոյնսն ընդ ներքնագունիւքն գոյ,
որ է անկար. քանզի ոչ երբեք կենդանին

ընդ բանականաւն է՝ որպէս բանականն
ընդ կենդանեաւն:

1 Ընդ այսոսիկ հանդերձ աստուծով եւ
առաջիկա պրակֆս

ՊՐԱԿՔՍ ԻԳ

2 «Յայնցանէ՛ որք եւ ոչ ըստ միում շա-
րամանութեան ասացեալ».

3 Բաժանեալ Արիստոտէլի զասա-
ցեալսն յայնս, որք ըստ շարամանութեան
են, եւ զգոյսն յայնս, որք ոչ ըստ շարա-
մանութեան են, եւ զգոյսն՝ որ յընդհանուր
գոյացութիւն եւ ի մասնական գոյացու-
թիւն աստանաւր բաժանէ զայնս, որք ոչ
ըստ շարամանութեան են՝ ի տասն ստորո-
գութիւնս:

4 Եւ տարակուսեն ոմանք ասելով, ե-
թէ ընդէ՞ր անդուստ իսկ ի վերուստ ոչ ել
ընդ ամենայն բաժանմունսն, յորժամ բա-
ժանէր զասիցեալսն: 5 Եւ ասեմք, եթէ կա-
րեւորապէս արար՝ որ ի վերոյ պահեաց
զայս բաժանումն, որպէս զի յանգեսցի ա-
ռաջին հատածն ի սոսկ թիւ ստորոգու-
թեանցն եւ սկիզբն արասցէ երկրորդին
նոյն ինքն ստոյգ վարդապետութեան.
քանզի որպէս ճարտարք ի կենդանագրաւ-
ղացն՝ յառաջ քան զկատարեալ կերպա-
րանն՝ որ ի ձեռն գունոցն եղանի՝ նուազ
ինչ մտածութիւնս տան ի ձեռն գծագրու-
թեանն, այսինքն՝ սպիտակագրութեանն՝
այսպէս եւ Արիստոտէլ, բանին կենդա-
նագրելով զիրողութիւնս՝ նուազ երեւումն
մեզ տայ ստորոգութեանցդ. քանզի թանձ-
րամասն վարդապետութիւն նոցա սոսկ
յարացուցիւք միայն յառաջաբերի, իսկ
մանրապատումն եւ զյատուկսն իւրաքան-
չիւրոյ ստորոգութեան ասէ եւ զբաժա-
նումն, զի եւ զայնսն իմասցուք, որ ձեռն
յատկացն գոյանան ստորոգութեանց, եւ
զայնսն՝ յորոց նոքա դարձեալ գոյանան ի
ձեռն բաժանման: 6 Այլ Արիստոտէլ ի
ձեռն տասն յարացուցից առնէ զթիւ տասն

ստորոգութեանցս. իսկ բե՛ր մեք ի վերայ միոյ եւ նոյն յարացուցի արասցուք զվարդապետութիւն՝ ի վերայ Սոկրատայ. քանզի Սոկրատէս եւ գոյացութիւն է, որպէս մարդ եւ քանակ՝ որպէս երկուկանգնեան կամ երեքկանգնեան, եւ որակ՝ որպէս սպիտակ եւ երաժշտական, եւ առ ինչ՝ որպէս հայր կամ որդի, եւ առնէ՝ որպէս կտրելով, եւ կրէ՝ որպէս կտրիլ, եւ կայ՝ որպէս նստեալ կամ յոտն կացեալ, եւ ունի՝ որպէս զգեցեալ եւ զիմեալ, եւ ուր՝ որպէս ի Լիկիայ, եւ երբ՝ որպէս ի Պեղդէպոնիսական ժամանակին. իսկ Արիստոտէլ սոսկ արարեալ ստորոգութեանցս, եթէ տասն են, եւ ոչ ասացեալ զպատճառն, եթէ վասն է՛ր տասն են՝ բե՛ր այսուհետեւ եւ զպատճառսն եւս առագրեսցուք, եթէ վասն է՛ր տասն են: 7 Զոր եւ ցուցանեմք այսպէս ի բաժանմանէ. էակն կամ նենթակայում է կամ ոչ նենթակայում: 8 Եւ եթէ ոչ նենթակայում՝ առնէ զգոյացութիւն, իսկ եթէ նենթակայում՝ կամ ըստ ինքեան է կամ ոչ ըստ ինքեան: 9 Եւ եթէ ըստ ինքեան է՝ կամ բաժանելի է կամ անբաժանելի: 10 Եւ եթէ բաժանելի է՝ առնէ զքանակն, իսկ եթէ անբաժանելի է՝ առնէ զորակն. քանզի թէպէտ եւ կարծի բաժանելի գոլ որակն, այլ սակայն վասն նիւթոյն է բաժանելի: 11 Իսկ եթէ ոչ ըստ ընքեան՝ կամ կալումն միայն է եւ առնէ զառիւնչսն, եւ կամ ըստ կալման այլոց իմանի՝ եւ լինին վեց ստորոգութիւնքն, քանզի չորից ելոց պարզ ստորոգութեանց՝ գոյացութեան, քանակի, որակի, առընչի՝ ի շարամանութենէ սոցա այլ ստորոգութիւնքն ծնանին. յէութենէ եւ ի քանակէ՝ ուրն եւ երբն, յէութենէ եւ յորակութենէ՝ առնելն եւ կրելն, յէութենէ եւ յառընչէ՝ ունելն եւ կալն: 12 Վասն որոյ եւ տարակուսեն, եթէ զիա՞րդ ասէք՝ եթէ պարզք են տասն ստորոգութիւնքդ, որովհետեւ չորք միայն են պարզքն, իսկ վեցն շարադրեալք: 13 Եւ ասեմք, եթէ շարադրեալս զնոսա կոչեմք, քանզի երեւ-

մունս ոմանս շարադրութեան ներածեն մեզ, այլ ինքեանք պարզ են. քանզի ոչ եթէ ստորոգութիւն է, որ ի տեղւոջն է, եւ ոչ ստորոգութիւն է այն, որ ի ժամանակումն՝ այլ գոլն ի տեղւոջ ստորոգութիւն է եւ գոլն ի ժամանակում. վասն այսորիկ եւ անորիչ անուամբք անուանեաց զոմանս ի նոցանէ, որպէս զի մի ի քարչելն յինքեանս դէմս ինչ շարադրութիւն ի ներքս ածիցէ, որպէս առնելն եւ կրելն եւ կալն եւ ունելն անորիչք են: 14 Տասն ստորոգութիւնքն կարող գոն եւ դասումն ինչ ընդունել. քանզի նախագոյն է գոյացութիւն ամենեցուն, որպէս ենթակացեալ ամենեցուն. երկրորդ՝ քանակն, վասն զի անտեսակ նիւթն նախ քանականայ եւ ապա որականայ. երրորդ՝ որակն եւ յառաջագոյն քան զառիւնչն, վասն զի ըստ ընքեանն յառաջագոյն է այնմ՝ որ ըստ կալման է: 15 Արդ՝ այսոցիկ այսպէս ելոց՝ ապա եւ այնք յառաջագոյնք են, որք ի գոյացութենէ եւ ի քանակէ բաղկացեալք են ստորոգութիւնք, քան զայնս՝ որք ի գոյացութենէ եւ յորակութենէ. եւ դարձեալ՝ որք ի գոյացութենէ եւ յորակէ՝ յառաջագոյնք են քան զայնս, որ ի գոյացութենէ եւ յառընչէ: 16 Արդ՝ այսոքիկ յաղագս այսոցիկ:

17 Բե՛ր այսուհետեւ յետ բաժանման ստորոգութեանցն բազմութեան եւ եթէ տասն են՝ ոչ աւելի եւ ոչ նուազ՝ տարակուսութիւնս ոմանս ընդդէմ ստորոգութեանցս տարակուսելով լուծցուք: 18 Արդ՝ տարակուսեն ոմանք, նուազութիւն ասի ձայնիցն՝ վասն ասելոյն իսկագոյն, եւ իմացուածոցն՝ վասն ասելոյն նախկին, իսկ իրողութեանցն՝ վասն ասելոյն մանաւանդ եւ վասն զի սգացաւ վասն իւր ոչ արժանի գովութեանն ենթադրեալ. քանզի ըստ ճշմարտութեանն ոչ որ ինչ էն ասէ, այլ որ ոչն է: 19 Եւ եթէ պատկանի այնպիսի ենթադրութիւն ոչ ուրեք եւ ոչ երբեք ումն՝ վերացուցանէ զնա ի ձեռն ենթադրութեան, որ լուռ կացլով՝ այսպէս ասէ՝ եթէ

ոչ է պարտ կալ մնալ անդէն ի բացասութեանն, այլ պարտ է կալ եւ ի հակակայսն՝ վասն զի ըստ ճշմարտութեանն բացասութիւնք ոչ եթէ զոր ինչ էն ասեն, այլ որ ինչ ոչն է. եւ վասն այսորիկ ոչ ասեմ զնա զենթակայէ ումեքէ, վասն զի ենթակայանայ այնոցիկ, որք զենթակայէն ասին. եւ վասն այսորիկ ոչ ասեմ զնա նենթակայում, վասն զի ենթակայանայ այնոցիկ, որք նենթակայոջքն են, որպէս զի ի ձեռն այսոցիկ պարգեւէ ամենեցուն զպէտան անհատ գոյացութիւնն. քանզի եռակի ելոյ ամենայնին՝ կամ առաջին գոյացութեանցն կամ երկրորդին կամ պատահմանցն՝ առ անհատ գոյացութեամբքն զոն պատահմունք եւ երկրորդ գոյացութիւնք այլ պատահմանցն պէտս տայ առ ի գոլ, եւ երկրորդ գոյացութեանցն՝ առ ի ստորոգիլ:

20 Արդ՝ եթէ ամենեցուն պէտս տայ, որք առ նովաւն են՝ զի ա՞րդ ոչ է առաջին, եւ իսկազոյն, եւ մանաւանդ գոյացութիւն:

21 Եւ զի ամենեցուն պէտս տայ, որք առ նովաւն են՝ արհեստաբար նիւթէ ինքն եւ ցուցանէ, եթէ տեսակական գոյացութիւնն պէտս ունի անհատ գոյացութեանն առ ի ստորոգութիւն, որզոն՝ մարդ, քանզի այս երեւելի է ամենեցուն, եթէ բազում անգամ զտիրական անունն յառասական փոխարկեմք եւ փոխանակ ասելոյ, եթէ «կոչեա՛ զՍոկրատէս»՝ ասեմք, եթէ «կոչեա՛ առ իս զայրն զայն», եւ ցուցանեմք զնա. եւ զի կենդանին պէտս ունի անհատ գոյացութեանցն՝ այսպէս յարդարէ՝ ոչ է կենդանի, որ է մարդ կամ ձի կամ եզն, եւ ոչ է մարդ, որ ոչ է Սոկրատէս կամ Պղատոն կամ ով ոք եւ իցէ՝ ապա ուրեմն՝ ոչ է կենդանի, որ ոչ է Սոկրատէս կամ Պղատոն:

22 Նմանապէս եւ ի վերայ պատահմանցն ոչ ցուցանէ, եթէ այս ինչ սպիտակ պէտս ունի անհատ գոյացութեան, այլ եթէ գոյնն, այսպէս ասելով. ոչ է գոյն, որ ոչ է ի մարմնի, եւ ոչ է մարմին, որ ոչ է մարդ կամ ձի կամ այլ ինչ՝ ապա ուրեմն՝ ոչ է գոյն, որ

ոչ է յայս կամ յայնմ մարմնում: 23 Արդ՝ այսպէս Արիստոտելի ցուցեալ, եթէ ամենեցուն առ նովաւցն տայ պէտսն անհատ գոյացութիւնն եւ թէ ոչ ելոյ սորա ոչինչ յայլոցն ստորակայանայ. իսկ Աղէկսանդրոս Ափրոդիսեցի եւս առաւել յարաձգելով նորաձեւումն յիմաստասիրութիւն փորձի նիւթել, եթէ եւ բնութեամբ առաջին է անհատ գոյացութիւնն ամենեցուն. եւ զի շարաբառնայ՝ եցոյց ինքն իսկ Արիստոտել, եւ զի ոչ շարաբառնի՝ ինքն իսկ փորձի ցուցանել. քանզի ահա, ասէ, ընդհանուր արեգակն ի բաց բարձեալ՝ զոմն արեգակն ոչ եբարձ: 24 Առ որ ասեմք, եթէ հանուրն երկակի ասի՝ մինն ըստ կալման, որպէս՝ ամենայն մարդ, քանզի ամենայնն միշտ ըստ կալման, իսկ միւսն՝ միայնին ըստ ընքեան բնութեան ասացեալ, որպէս՝ մարդ այսպէս սոսկ ասացեալ: 25 Արդ՝ բոլորն այն ընդհանուր՝ ոչ որ ընդ կալմանն է, այլ միւսն եւս՝ տարեալ եղեւ ի մի արեգակնում. քանզի կարող եղեւ արեգակն զամենայն յատկութիւնս հանուր արեգական ընդունել, որ է ի վերայ միոյ մարդոյ անհնարին. քանզի ոչ ոք ի մարդկանէ կարող գոյ զամենայն յատկութիւնս հանուր մարդոյ ընդունել՝ վասն լինելոյ զոմն քերդող եւ զոմն բրուտ, վասն զի եւ կտրածն մարդոյ զըստ մասին մարդիկ ասաց Պղատոն: 26 Եւ այսոքիկ այսպէս:

27 Բայց տարակուսէ Ուրիանոս այսպէս. եթէ ասեմ զհանուր պատահումն յանհատ գոյացութեանն ըստորակացեալ՝ եղիցի եւ մասնական պատահումն յընդհանուր գոյացութիւն: 28 Առ որ ասեմք, եթէ զընդհանուր պատահումն ասեմք յանհատ գոյացութեանն գոլ. ոչ եթէ ըստ ճշմարտութեան ի նոյն իսկ յանհատ գոյացութեան ունի զգոլն, այլ զի նախաբար ամենայն պատահումն յանհատ գոյացութիւնս ունի զգոլն. թէպէտ եւ անմարմին

եւ ուրեք¹ գոյ անհատ գոյացութիւնն՝ նախաբար ի նմա գոյանան պատահմունքն, որպէս եւ յանձնում է տեսանել, քանզի յանձնում ումեք է տեսանել առաքինութիւն կամ չարութիւն՝ քանզի փոփոխի ըստ այսոցիկ, իսկ ըստ երկրորդ բանի եւ յընդհանուր գոյացութիւնսն ասին գոլ, թէպէտ եւ մտածութեամբ միայն: 29 Իսկ առ երկրորդն ասեմք՝ զի թէպէտ եւ է մասնական պատահումն յընդհանուր գոյացութեանն՝ ոչ եթէ ըստ ճշմարտութեան ինչ է, թէպէտ եւ մարմին ասասցես զընդհանուրն, սակայն եւ այնպէս անմարմին է, այլ եթէ բանս ունի ընդհանուր գոյացութիւնն, այսինքն՝ հանուր մարմինն՝ նախանձականս պատահմանց:

30 «Իսկ նենթակայումն էակացն մակաւելեացն եւ ոչ անուռն եւ ոչ բանն ստորոգի զենթակայէն».

31 Ստորոգիցելոցն՝ է ինչ որ ըստ բնութեան է եւ է որ առանց բնութեան. եւ առանց բնութեան ասեմք գոլ, յորժամ գոյացութիւն պատահման ստորոգի՝ յորժամ ասեմք, եթէ սպիտակն որ գոյն մարդ է եւ կամ դարձեալ՝ յորժամ անհատ գոյացութիւն հանուր գոյացութեան ստորոգի, որդոն՝ որ գայ մարդդ Սոկրատէս է, եւ կամ յորժամ տեսակք սեռից ստորոգին՝ որպէս յորժամ ասեմք, եթէ որ գայ կենդանիդ մարդ է. իսկ ըստ բնութեան են այսոցիկ, յորժամ հանուր գոյացութիւն անհատ գոյացութեան ստորոգի՝ որպէս մարդ Սոկրատում, կամ պատահումն գոյացութեան՝ որպէս սպիտակ մարդում: 32 Իսկ եթէ ոք ասիցէ, եթէ եւ ստորոգիլն պատահմանց պատահումն ըստ բնութեան է, որպէս գոյն սպիտակում՝ ասեմք եթէ այսոցիկ ոչ որպէս պատահմունք պատահմանց ստորոգին, այլ որպէս սեռ տեսակում:

33 Եւ պարտ է գիտել, եթէ ի վերայ ոմանց պատահմանց ոմանք հոմանունաբար ստորոգին գոյացութեան, փաղանունաբար եւ ոչ երբեք, որդոն՝ սպիտակն ստորոգի մարմնում. քանզի սպիտակ մարմին ասեմք, իսկ բան սպիտակին ոչ ստորոգի մարմնում, քանզի ոչ կարէ գսահման սպիտակին ընդունել մարմին. քանզի ոչ ոք ասէ՝ մարմին է սպիտակ գոյն արտադատող աչաց. իսկ մարդ ոչ հոմանունաբար եւ ոչ փաղանունաբար ստորոգի, որպէս գոյն. քանզի ոչ ոք ասէ, եթէ մարդ գոյն, այլ եւ ոչ գսահման գուռոյ ընդունի. քանզի ոչ ոք՝ կարափ գոյն, եւ կամ եթէ կարափ գոյն է յատուկ զգալի աչաց:

1 Ընդ այսոսիկ հանդերձ աստուծով առաջիկայ

ՊՐԱԿՔՍ ԻԴ

2 «Իսկ երկրորդ գոյացութեանցն յաւետ գոյացութիւն»...

3 Եւ եւս վասն այսոցիկ նախադրէ զանհատ գոյացութիւնն Արիստոտէլ՝ քանզի յերկրորդ գոյացութիւնս յաւետ գոյացութիւն տեսականն քան զսեռականն, որպէս յաւետ հուպ գոլով յանհատ գոյացութիւնն, որ մանաւանդ գոյացութիւն ցուցաւ. քանզի որպէս հպագոյնքն ի հուր առաւել ջեռունն եւ հպագոյնքն ի միակն առաւել միականք են՝ նոյնպէս եւ տեսական գոյացութիւնն հպագոյն գոլով յանհատն՝ մանաւանդ է. քանզի ամենայն որ ունի յայնմանէ հպագունիցն մանաւանդ բաշխէ: 4 Եւ զի յաւետ գոյացութիւն տեսականն քան զսեռականն է՝ երկակի նիւթէ՝ ի հպաւորութենէ եւ ի վերաբանութենէ², այսինքն՝ ի համեմատութենէ. այսպէս՝ եթէ ընտանեգոյն է եւ մատաւորագոյն զՍոկրատէս մարդ ասել, քան եթէ կենդանի: 5 Իսկ ի վերաբանութենէ

1 Անուրեթ

2 Ի վերա բնութեանն է

այսպէս՝ զի եթէ զանհատ գոյացութիւնն ոչ այլ ինչ կերպարանէր եւ առնէր յաւէտ գոյացութիւն, եթէ ոչ ենթակայանալն ամենեցուն՝ որ շուրջ զնովաւցն. արդ՝ այս ենթակայանալս տեսակացն առ սեռսն գոյ, իսկ սեռիցն առ տեսակս ոչ երբեք, քանզի ոչ երբեք ենթակայանան սեռք տեսակաց. վասն զի առաւել գոյացութիւն տեսակականն քան զսեռականն՝ որպէս ենթակայացեալ նմա: 6 Բայց ասի ի վերաբանութենէ, զի կարող գոյ վերաբանութեամբ հիւսիլ այսպէս. եթէ զոր բան ունի անհատ գոյացութիւն առ ամենայնս, որք առ նովաւն են ենթակայացեալ նոցա, վասն զի առաւել գոյացութիւն ասիցեալ՝ զնոյն բան ունի տեսակականն առ սեռականն. քանզի ենթակայացեալ է նմա, վասն զի առաւել գոյացութիւն է: 7 Եւ այսոքիկ այսպէս:

8 Աստուստ տարակուսեն ոմանք՝ ասելով, եթէ զիա՞րդ ասես դու յաւէտ գոյացութիւն եւ նուազ գոյացութիւն, տակաւին ոչ. եւս ասացեալ զյատկութիւնս գոյացութեան: 9 Այլ հանդերձեալ ասել զոչ ընդունիլն զյաւէտն եւ զնուազն, եւ չընդունի. քանզի գոյացութիւն գոյացութեան բաղդատեալ, որդոն՝ սեռականն առ տեսականն՝ ընդունիլ զյաւէտն եւ զնուազն. իսկ ինքն առ ինքեան յարարկեալ, ոչ ձգտի եւ ոչ ամփոփի. քանզի ոչ ոք ասէ յաւէտ մարդ եւ յաւէտ Սոկրատէս:

10 Դարձեալ այլ տարակուսութիւն, զի՞, ասէ, որպէս զանհատ գոյացութիւնն առաջին գոյացութիւն կոչեաց, վասն երկուց ասացաք պատճառաց, զի՞ ոչ զտեսականականն երկրորդ եւ ոչ զսեռականն երրորդ կոչեաց, այլ միով անուամբ զերկուսին անուանեաց՝ զտեսականսն եւ զսեռականսն: 11 Եւ ասեմք, եթէ վասն այսորիկ՝ միում հանդիպան անուան, վասն զի զմի եւ զնոյն պէտս տայ նոցա անհատ գոյացութիւն առ ստորոգութիւն:

12 «Ծանաւթագոյն եւ ընտանեգոյն բացատրեսցէ՝ զտեսակն Բան զսեռն բացատրելով».

13 Զի՞ ասացեալ «ծանաւթագոյն»՝ առադրեաց եւ «զընտանեգոյնն»: 14 Եւ ասեմք, եթէ ծանաւթագոյնն միայն ոչ կարէ յաւէտ գոյացութիւն առնել զանհատն, վասն զի եւ պատահմունք բազում անգամ ծանաւթագոյնք են, քան զանհատ գոյացութիւն. որդոն՝ փոխանակ ասելոյն «կոչեա՛ զԴաւիթ»¹, ասեմք «կոչեա զփիլիսոփոսն»: 15 Վասն այսորիկ առադրեաց զընտանեգոյնն. քանզի ծանաւթագոյնն ոչ ամենայն իրաւք յայտնէ զբնութիւն իրին, որպէս բազումք ի պատահմանցն, իսկ ընտանեգոյնք առաւել յայտնեն:

16 «Քանզի սա ուրոյն առաւել ուրումն մարդոյ».

17 Զիա՞րդ առաւել է ուրոյն ոչ ամենեւին ուրոյն: 18 Եւ ասեմք, որպէս զնուազ ծանրն առաւել թեթեւ ասեմք՝ նոյնպէս եւ զնուազ հասարակն առաւել ուրոյն ասեմք. քանզի մարդ նուազ հասարակ է առ կենդանեան. քանզի սեռք տեսակացն ստորոգին, իսկ տեսակք զսեռիցն ոչ հակադարձին. պարտ է առադրել՝ ըստ բնութեան ելոյ ստորոգութեանն. քանզի ստորոգութիւն եռակի է՝ կամ ըստ բնութեան կամ ոչ ըստ բնութեան կամ ըստ պատահման: 19 Ըստ բնութեան՝ յորժամ սեռք տեսակաց ստորոգին, իսկ ոչ ըստ բնութեան՝ յորժամ տեսակք սեռից, որպէս յորժամ ասեմք, թէ որ գայ կենդանիս մարդ է, քանզի այսպէս ասելով կենդանումն ստորոգի մարդ, իսկ ըստ պատահման ստորոգութիւն է, որպէս յորժամ զնոյնս, որք ի նորին ենթակայում են պատահմունք՝ միմեանց ստորոգես. որդոն՝ Սոկրատայ ելոյ կնտի եւ իմաստասիրի՝ ասեմք, եթէ կունտս այս իմաստասէր է:

1 Յուև. κάλεισον τὸν Σωκράτην

20 Եւ դարձեալ ըստ պատահման ստորոգութիւն է, յորժամ գոյացութիւն պատահման ստորոգի. որգոն՝ յորժամ ասեմք, եթէ սպիտակս որ գայ՝ կենդանի է. քանզի այսպէս ասելով՝ զկենդանին գտանեմք ստորոգեալ սպիտակում, որ է պատահման:

1 Ընդ այսոսիկ հանդերձ աստուծով եւ նոցա տեսակացն որ միան...

ՊՐԱԿՔ ԻԵ

2 Բաղդատեալ Արիստոտելի զգոյացութիւնս ըստ խորութեան, յորժամ գանձատն առ հանուրն բաղդատէր, ցուցեալ եթէ առաւել գոյացութիւն է տեսակականն քան զսեռականն՝ այժմ ըստ լայնութեան բաղդատէ գանձատնս եւ զհանուրսն, եւ ասէ, եթէ անհատ գոյացութիւնքն նմանաբար են գոյացութիւն, որպէս ամենեցուն զնովաւցն զմի եւ զնոյն պէտս վճարելով՝ որպէս է Դաւիթ¹ եւ Արգոս շուն եւ Եղիսարն պիտակ ձի: 3 Իսկ եթէ անհատ գոյացութիւնքն նմանաբար գոյացութիւնք են՝ ապա եւ տեսակական գոյացութիւնքն նմանաբար գոյացութիւնք են, որպէս զհանգէտն բացակացեալք յանհանգիտից գոյացութեանցն: 4 Արդ՝ այսպէս մեք: 5 Իսկ Արիստոտել ալ կարգաւորութեան պիտանացեալ. քանզի նա նախ զտեսակականսն բաղդատէ եւ ապա գանձատնս: 6 Եւ արժան է տարակուսել, եթէ ընդէ՞ր ոչ նախ գանձատնս գոյացութիւն բաղդատեաց, զի որպէս ստուերացուցումն յայսոցիկ պէտս առեալ՝ այնպէս ապա բաղդատէր զտեսակական գոյացութիւնս: 7 Եւ է լուծումն սորին, եթէ գայս որպէս զխոստովանեալ եւ գայտնի ինչ եթող. քանզի յայտնի է եւ սովորաբար, եթէ նմանաբար գոյացութիւնք են անհատքն յենթադրութենէն, վասն զի գերադրականիւք ձայնիւք արտաբերեաց, ասելով՝ իսկագոյն եւ

նախկին եւ մանաւանդ. քանզի ոչ է գերադրականին գերադրական: 8 Իսկ եթէ այս այսպէս է՝ ապա ուրեմն՝ ոչ է յաւէտ անհատ գոյացութիւն քան գայլ անհատ գոյացութիւն, թէպէտ եւ աննմանատեսակք են: 9 Դարձեալ տարակուսեն ասելով, եթէ մինչ նմանաբար գոյացութիւնք են անհատքն, եղիցի այս մըջիւն եւ արեգակն նմանաբար գոյացութիւնք: 10 Առ որս ասեմք, եթէ ըստ դիտաւորութեան Ստորոգութեանցս նմանաբար գոյացութիւնք են. քանզի դիտաւորութիւն Ստորոգութեանցս է յաղագս իրողութեանց ոչ եթէ զիրողութեանց բունն հարկանել եւ զբնութիւն նոցա քննել, ալ ըստ որում նշանակեն յայսպիսեաց եւ յայնպիսեաց ձայնից. քանզի յաղագս ձայնից միայն քննել քերդողաց է, իսկ յաղագս բնութեան գոյիցն՝ աստուածաբանութեան կամ բնաբանութեան: 11 Եւ այսոքիկ այսպէս:

12 Իսկ Արիստոտել տարակուսէ յինքեան, եթէ «զիա՞րդ ի վերագոյնսն երկրորդ գոյացութիւնս ասաց զսեռս եւ զտեսակս անհատ գոյացութեան եւ ոչ պարզաբար՝ եթէ սեռքն եւ տեսակքն»: 13 Եւ լուծանէ ասելով, եթէ զի մի պարառից զպատահմունսն. քանզի են եւ նոցա սեռք եւ տեսակք՝ որպէս գոյն եւ սպիտակ: 14 Արդ՝ ցուցանէ աստանաւր, եթէ սեռք եւ տեսակք առաջնոց գոյացութեանցն գոյացութիւնք են, իսկ սեռք եւ տեսակք անհատից պատահմանցն ոչ են գոյացութիւնք: 15 Եւ ցուցանէ այսպէս ասելով՝ սեռք եւ տեսակք անհատից գոյացութեանց գոյացութիւն բաղալնուն, եւ որք գոյացութիւն բաղալնուն՝ գոյացութիւնք են. իսկ սեռք եւ տեսակք անհատից պատահմանցն ոչ բաղալնուն գոյացութիւն. իսկ որ գոյացութիւն ոչ բաղալնուն՝ ոչ են գոյացութիւնք. ապա ուրեմն՝ սեռք եւ տեսակք անհատից պատահմանցն ոչ են գոյացութիւնք: 16 Եւ այլազգ՝ սեռք եւ տեսակք առաջնոց գոյացութեանցն ենթակա-

1 Յուս. օտբեր Σωκράτης

յանան հանուր պատահմանց, իսկ որ ընդհանուր պատահմամբք ստորակայանան՝ գոյացութիւնք են. ապա ուրեմն՝ սեռք եւ տեսակք առաջնոց գոյացութեանցն գոյացութիւնք են: 17 Եւ վասն անդրադարձութեան կանոնիս՝ վասն զի սեռք եւ տեսակք անհատից պատահմանց ոչ ենթակայանան հանուր պատահմանցն՝ ոչ են գոյացութիւնք. ապա ուրեմն՝ սեռք եւ տեսակք անհատից պատահմանցն ոչ են գոյացութիւնք:

18 «Եւ նոցա տեսակացն որք միանգամ ոչ են սեռք».

19 Բարիոք ասաց «որք միանգամ ոչ են սեռք», զի մի զընդմիմեամբքն ոք առցէ. քանզի եթէ զընդմիմեամբքն ոք առնու, ոչ երբեք տեսակ տեսակում բաղդատի, այլ տեսակ սեռում, որ ոչ է մեր այժմ առ ի խնդրել:

1 Ընդ այսուսիկ հանդերձ աստուծով եւ առաջիկա

ՊՐԱԿՔՍ ԻԶ

2 «Եւ հասարակ գամենայն»...

3 Յուցեալ Արիստոտելի գայնս՝ որոց գոյացութիւն զհետ երթայ ի ձեռն բաժանման, յորժամ զառաջինն առ հանուրն բաղդատէր, ասելով զնա յաւէտ գոյացութիւն, եւ յորժամ զհանուրն առ հանուրն բաղդատէր, ասելով զտեսակականն քան զսեռականն յաւէտ գոյացութիւն. եւ զարձեալ ըստ լայնութեան բաղդատեալ՝ զանհատսն ասէր, եթէ նմանաբար գոյացութիւնք են՝ այժմ ցուցանէ եւ գայնս, որք գոյացութեան հետեւին, եւ ասէ զուրոյնսն գոյացութեան: 4 Եւ որում պարտ էր սահման ասել ի վերայ գոյացութեանն՝ ոչ առնէ գայն, վասն զի սեռ սեռականագոյն է գոյացութիւն, իսկ սեռականագունումն ոչ է սեռ եւ ոչ բաղկացուցիչ տարբերութիւնք, յորոց ամենայն սահման առնու:

5 Իսկ յորոց վերայ ոչ կարեմք սահման բացատրել՝ սիրեմք գոյ նա ի ձեռն յատկացն բացատրել զնոսին: 6 Արդ՝ վասն այսորիկ եւ Արիստոտել ոչ կարացեալ ասել զսահման գոյացութեան՝ գյատուկսն ասէ գոյացութեան. քանզի ունին ինչ նմանութիւն սահման եւ յատուկն առ միմեանս զհակադարձիւն երկաքանչիւրումն եւ զմիայնում եւ զամենայնում եւ զմիշտն գոյ: 7 Արդ՝ թուէ զուրոյնս գոյացութեան եւ ասէ, եթէ «հասարակ զամենայն գոյացութեան ոչ գոյ նենթակայում»: 8 Վասն որոյ եւ տարակուսեն ոմանք ասելով, եթէ վասն է՞ր գյատուկսն առաջադրելով առ ի յասել՝ զհասարակ յիշեաց: 9 Եւ ասեն ոմանք առ այս, եթէ ոչինչ անտեղի է զնոյն եւ հասարակ գոյ եւ յատուկ՝ որպէս ծիծաղականն. քանզի առ համատեսակն հասարակ է, իսկ առ աննմանատեսակն յատուկ: 10 Այլ եթէ նոյն եւ հասարակ եւ յատուկ կարող գոյ լինիլ՝ ընդէ՞ր ոչ ասէ յատուկ գորս անուանեաց ընտանեգոյն անուամբ: 11 Զորոյ զպատճառսն ասեմք՝ ըստ իւրաքանչիւր յատկի յիւրաքանչիւր ստորոգութեան երկուս ինչս որոնէ իմաստասէրս, եթէ ամենայն գոյացութեան գոյ եւ եթէ ոչ ամենայնում եւ եթէ միայնում կամ ոչ միայնում: 12 Եւ եթէ գտանէ ամենայնում գոյացութեան բայց ոչ միայնում, հասարակ զնա կոչէ, եւ եթէ միայնում գոյացութեան եւ ոչ ամենայնում՝ ապա յատուկ զնա կոչէ. քանզի յատուկքն նեղիլ կամիլով միայնում գոյով կերպարանին եւ ոչ ամենեցուն, որպէս հասարակն ամենեցուն գոյով եւ ոչ միայնում: 13 Բայց ըստ իւրաքանչիւր ստորոգութեան նախադասէ զսուտ ուրոյնսն քան զճշմարիտսն, որպէս զի մաքրիցելոց մեզ մաքուրս մատուցէ զճշմարտութիւնն, որպէս ասէ Պղատոն վասն գոյացութեան, եթէ գոյացութիւն կամ առաջին է կամ երկրորդ, եւ զենթագրութիւնս նոցին, եթէ առաջին գոյացութիւնն ոչ զենթակայէ ասի եւ ոչ նենթա-

կայում է, իսկ երկրորդը՝ զենթակայէ ումեմնէ ասին, բայց նենթակայում ոչ են: 14 Արդ՝ եթէ այսպէս է՝ ապա եւ ոչ մի գոյացութիւն նենթակայում. ոչ մի վասն առաջին առածին. քանզի կամ առաջին է կամ երկրորդ. իսկ ոչ է նենթակայում վասն ենթագրութեանց. եւ արդ այսպէս՝ եթէ եւ ոչ մի գոյացութիւն նենթակայում: 15 Բայց ցուցանէ եւ առանձինն, եթէ եւ ոչ երկրորդ գոյացութիւնքն են նենթակայում, ասելով այսպէս՝ երկրորդ գոյացութիւնքն փաղանունաբար ստորոգին առաջնոց գոյացութեանցն, իսկ նենթակայութիւնքն ոչ երբեք փաղանունաբար ստորոգին առաջնոց գոյացութեանցն, այլ կամ հոմանունաբար, որպէս սպիտակն Սովկրատում, կամ յարանունաբար՝ որպէս ի քերականութենէ քերականն, եւ կամ այլանունաբար. ապա ուրեմն՝ երկրորդ գոյացութիւնքն ոչ են նենթակայում: 16 Այլ վասն զի երկրորդ գոյացութիւնքն զենթակայէ ումեքէ ասելով՝ զբազումն իմն եւ կարծիս տան նենթակայում գոլ՝ ցուցանէ եթէ ոչ են նենթակայում, ասելով այսպէս. եւ եթէ էին, ասէ, նենթակայում՝ ոչ ահա այն ինչ ենթակայում պիտանանային իւրեանց անհատիցն առ ի գոյացութիւն, ուր եւ նոքին իսկ խոստովանաբար նենթակայում գոն ոչ պիտանանան ենթակայից իւրեանց անհատիցն առ ի գոյացութիւն, այլ առաջնոց գոյացութեանցն: 17 Զի եթէ նենթակայում եղիցին երկրորդ գոյացութիւնքն՝ բազում անպատեհութիւն ունի բանս. քանզի գտցին առ նենթակայումն գոլով նենթակայումն գոլով անհատիցն պատահանց, եթէ արդարեւ ցուցաւ ոչինչ նենթակայութեանցն իւրոց անհատիցն պիտանացեալ որպէս ենթակայում առ ի գոյացութիւն:

- 1 Ընդ այսոսիկ հանդերձ աստուծով եւ առաջիկա ՊՐԱԿՔՍ ԻԷ
- 2 «Բայց ոչ ուրոյն է այս գոյացութեան»...
- 3 Տուցեալ Արիստոտելի, եթէ ամենայնում գոյացութեան գոյ ոչ նենթակայութեան գոլ՝ այժմ ցուցանէ, թէ ոչ միայնում գոյացութեան գոյ, այլ եւ տարբերութեան: 4 Եւ ձեռնարկել պարտ է յԱստուծոյ եւ ի նիւթոյ, քանզի կարծին այսոքիկ ոչ գոլ գոյացութիւն, Աստուած՝ որպէս վերագոյակ եւ առաւելաբնոյթ. իսկ նիւթ՝ որպէս ոչինչ յէական գոլով, այլ յոռագոյն քան զամենեսեան. քանզի ծայրք էականն ի բացասութենէ սահմանին, որպէս ուսաք վերագոյն, քանզի եւ ոչ նիւթ նենթակայում է, զի մի տացուք նիւթ նիւթոյ, եւ ոչ աստուածայինն նենթակայում է, եւ քանզի այսոքիկ աստուածաբանութեան կամ բնաբանութեան են՝ ձեռնարկէ ի տարբերութեանց՝ տրամաբանականի ելոյ անուան եւ իրի. քանզի ասէ, եթէ տարբերութիւնք ոչ են նենթակայում: 5 Զի՞նչ ասես, ո՞վ Արիստոտէլ. հակորոշեցեր զգոյացութիւնս ընդդէմ տարբերութեանց՝ որպէս տարբերութեանց ո՞չ ելոց գոյացութեանց: 6 Եւ զի՞նչ արդեւք իցեն տարբերութիւնք, հարցցուք զքեզ, գոյացութիւնք եթէ պատահմունք: 7 Եթէ գոյացութիւնք՝ վասն է՞ր հակորոշեցեր: 8 Իսկ եթէ պատահմունք են, վասն զի ի տարբերութեանց են սահմանք գտցին, գոյացութիւնք ի պատահմանց եղեալք եւ մասնունք գոյացութեանց պատահմունք՝ եւ զիա՞րդ դու ինքն ասես, եթէ «մասնկունք գոյացութեանց գոյացութիւնք են»: 9 Այսոքիւք տարակուսանալք վարակացեալ Պորփիրիոս¹ ոչ ընդարմացաւ մէջ ինչ բնութիւն ասել գոյացութեան եւ պատահման եւ ի նմա դնել զտարբերութիւնս՝ որ-

1 Արիստոտել, յուև. 6 Πορφύριος

պէս եւ այնքիկ, որք յազագս լուսոյ տարակուսանաւք վարակացեալ՝ ոմանք մարմին զլոյս ասելով եւ ոմանք՝ անմարմին՝ մէջ իմն ապա բնութիւն ստորագրեցին մարմնոյ եւ անմարմնոյ, եւ անմարմին մարմին ասացին զլոյս: 10 Եւ վասն այնորիկ երկուց ծայրից հաղորդութիւն ունի՝ կամ հանգիտաբար նոցին ունի եւ կամ առաւելաբար: 11 Առաւելաբարն երկակի՝ կամ ի միողէն առաւել ի միողէն նուազ, կամ ի միողէն նուազ եւ միւսմէն առաւել. վասն այսորիկ եռակի ասէին գոլ զզանազանութիւնս՝ կամ առաւել գոյացութիւն եւ նուազ պատահումն, որպէս բանական եւ անբանն. քանզի առաւել գոյացութիւնք են այսոքիկ, որպէս լցուցանելով զգոյացութիւն եւ ի սահմանս ներմտանելով, բայց սակայն պատահմունք՝ որպէս ի ներում որպիսի ինչ էին ստորագրեալք. քանզի մի է պատահմանցն ստորագրութիւն՝ որակութիւն: 12 Իսկ հանգէտ գոյացութեան եւ պատահման՝ որպէս ի հրում ջերմութիւն եւ ի ձեան սպիտակութիւն. քանզի որպէս յորակիցելում մարմնում գոյացութիւնք են, որպէս լցուցանողք գոյացութեանց նոցին. իսկ որպէս յանորակում մարմնում՝ պատահմունք. քանզի յայնժամ լինին եւ բացալինին թանց ենթակային ապականութեան: 13 Եւ առաւել պատահմունք քան եթէ գոյացութիւն, այն որ ի կարափումն սպիտակութիւն եւ յէթիոպացիումն սեւութիւն՝ լինին եւ բացալինին առանց ենթակային ապականութեան, որպէս ասէ Պորփիրիոս՝ «բայց կարէ ընդ միտ ածել եւ իմանալ ազուաւ սպիտակ եւ Եթիոպացի ի բաց ընկեցեալ զգոյն առանց ենթակային ապականութեան»: 14 Բայց սակայն կարծին գոյացութիւնք գոլ վասն գոլոյ ամենայն տեսակի կարապին սպիտակութիւն եւ ազուաւ սեւութիւն: 15 Արդ՝ եռակի ըստ նմա հաւաքին զանազանութիւնք: 16 Այլ, Պորփիրիոս, հակասութիւն առնեն գոյացութիւն եւ պատա-

հումն, որ նենթակայում է եւ որ ոչ նենթակայում. իսկ հակասութեան ոչինչ է մէջ, քանզի հակասութիւն հակադրութիւն է, որոյ ընդ մէջ ոչինչ է ըստ ինքեան: 17 Եւ բարիոք առադրեցաք ըստ ընքեան. քանզի ըստ պատահման մարթի գոլ մէջ ինչ. քանզի սպիտակի եւ ոչ սպիտակի ոչինչ է մէջ, բայց եթէ հանդիպի եւ ոչ սպիտակն թուլս իմանայցի. քանզի յայնժամ գտանիցի մէջ ինչ հակասութեան, թէպէտ եւ ըստ պատահմանէ: 18 Եւ արդ զի՞նչ պարտ է ասել: 19 Եթէ գոյացութիւնք են տարբերութիւնքն, բայց գոյացութիւնք ոչ որպիսիք այժմս մեզ առաջիկան յայցելել ծանուցեալք ի յոլովիցն մարդս. քանզի յոլովն մարդ եւ կենդանի ասի եւ մարդ եւ Սոկրատէս: 20 Ապա եթէ ասես, եթէ «եւ արդ զի՞նչ մի է թէ չասեն բանական եւ անբան, որք են տարբերութիւնք». ասեմք՝ եթէ բանականն եւ անբանն շարադրիցելոց իրաց անուանք են, իսկ զբանականութիւն եւ զանբանութիւն յոլովն մարդ ոչ գիտէ, որք են տարբերութիւնք: 21 Արդ՝ վասն այսորիկ հակորոշեաց զզանազանութիւնս ընդդէմ գոյացութեան: 22 Եւ այսոքիկ այսպէս: 23 Բայց զի՛ իրազգաց եղեւ վասն իւր Արիստոտէլ զտարբերս պատահումն առնելոյ վասն հակորոշելոյ ընդդէմ գոյացութեան՝ ի վերայ ածէ, եթէ մասունք գոյացութեանցն գոյացութիւնք են, իսկ տարբերութիւնք մասունք են սահմանաց եւ գոյացութեանց լցուցիչք. ապա ուրեմն՝ գոյացութիւնք են տարբերութիւնք՝ որպէս մասունք գոյացութեան: 24 Բայց վրդովեցուցանէ զմեզ բանն, որ ասէ, եթէ մասունք գոյացութեան պատահմունք են. քանզի այսպէս ասէին ոմանք, եթէ մասունք գոյացութեան յումեք են, որք յումեքն են՝ պատահմունք են. ապա ուրեմն՝ եւ մասունք գոյացութեան պատահմունք են. քանզի ոչ եթէ այսպէս պարզաբար ասէաք զումեքն նենթակայում, այլ զու-

մեքն մի որպէս մասն գոյ: 25 Իսկ այժմ յուժեքն, որպէս մասն ի բոլորումն ասէ են տարբերութիւնք:

26 «Բայց ոչ ուրոյն գոյացութեան է այս».

27 Պարտ էր ասել, եթէ ոչ միայնում գոյացութեան գոյ՝ ասաց՝ ոչ եթէ ուրոյն. քանզի ուրոյն միայնովն կերպարանի եւ ոչ ամենայնիւն:

1 Ընդ այսուսիկ հանդերձ աստուծով եւ առաջիկայ ՊՐԱԿՔՍ ԻԸ

2 «Եւ է գոյացութեանցն եւ տարբերոյ»...

3 Երկրորդ յատուկ գոյացութեան փաղանունաբար ստորոգելն: 4 Այլ այս եւ պատահմանցն է. քանզի գոյն սպիտակում փաղանունաբար ստորոգի: 5 Այլ այսպէս ասէ, եթէ երկրորդ յատուկ գոյացութեան փաղանունաբարն միայն ստորոգիլ. քանզի պատահմունքն եւ փաղանունաբար ստորոգին եւ հոմանունաբար եւ յարանունաբար եւ այլանունաբար, որպէս ապացոյցք ասացան վերագոյն: 6 Եւ կամ այլազգաբար ասել, եթէ երկրորդ յատուկ գոյացութեան փաղանունաբարն ստորոգիլ առաջնոց գոյացութեանցն. քանզի պատահմունքն թէպէտ եւ փաղանունաբար ստորոգին՝ ոչ եթէ առաջնոց գոյացութեանցն, այլ իւրեանց անհատիցն: 7 Բայց այս յատուկ ոչ ամենայնում գոյացութեան է եւ ոչ միայնում. ամենայն գոյացութեան ոչ է վասն անհատ գոյացութեան, վասն զի անհատ գոյացութիւն անստորոգելի է: 8 Այլ եւ ոչ միայնում գոյացութեան է. քանզի եւ տարբերութիւնք փաղանունաբար ստորոգին: 9 Արդ՝ զիա՞րդ յատուկ ամենեւին ոչ յատուկն. քանզի եթէ ոչ ամենայնում եւ ոչ միայնում գոյ ամենեւիմբ՝ ոչ կարէ յատուկ գոյ, վասն զի յատուկն ամենայնում եւ միայնում եւ միշտ գոյ, որոյ էն յատուկ: 10 Արդ՝ մի գուցէ

որպէս այլ՝ հասարակ է գոյացութեան եւ տարբերութեանց, որպէս զի եթէ ասէր՝ եթէ հասարակութիւն ունի առ պատահումն, ըստ որում երկաքանչիւր ոք փաղանունաբար ստորոգի: 11 Այլ վասն զի յայդպէս ասելոյդ հինգ յատուկութիւնք գտանին գոյացութեան, իսկ պատմիչք Արիստոտելական իմաստասիրութեան վեց սովորեալ են ասել՝ ասա՛ եթէ արհամարհեաց այժմ զհակորոշութիւնն գոյացութեան առ տարբերութիւն եւ զերկոսեան որպէս գոյացութիւն էառ: 12 Յայնժամ յատուկ գտանի գոյացութեան եւ առաւել յատուկ. քանզի առաջին յատկին ամենայնում գոյոյ եւ ոչ միայնում՝ սա միայնում գոյ եւ ոչ ամենայնում. քանզի յատուկքն նեղիլ կամելով՝ միայնովն կերպարանին եւ ոչ ամենայնիւն:

13 Յետ որոց տարակուսեն՝ եթէ զիա՞րդ ասէ զտարբերութիւնս փաղանունաբար ստորոգիլ, եթէ տարբերութիւնք անուան ոչ տան հաղորդութիւն. քանզի ոչ ոք ասէ՝ եթէ մարդ բանականութիւն է: 14 Առ որս ասեմք, եթէ փաղանունն երկակի ասի առ ի յԱրիստոտելէ. կամ այն՝ որ հաղորդատրեն անուան եւ իրի, կամ այն՝ որ աւարտակիցն լինի առ գոյացութիւն. քանզի այսպէս եւ ինքն ներում Յաղագս անձինն բանում զանձն փաղանունաբար ասէ կենդանւոյն ստորոգիլ, վասն զի աւարտակից լինի առ ի գոյացութիւն սորին, թէպէտ եւ ոչ անուան եւ ոչ իրի հաղորդատրէ. քանզի ոչ ոք ասէ զկենդանին հոգի, այլ եւ ոչ զսահման հոգւոյն ընդունի կենդանին: 15 Այլ վասն զի Արիստոտել կամի վասն տարբերութեան, զի եւ անուան եւ իրի հաղորդատրեսցէ՝ մի գուցէ հաղորդատրէ, թէպէտ եւ յարանունաբար. քանզի ասի ի բանականութեանէ բանական: 16 Եւ կամ այլազգաբար, եթէ զոր աւրինակ սպիտակն երկակի է՝ որպէս եւ սպիտակացեալ փայտն եւ ինքն սպիտակութիւնն՝ մի գուցէ երբեք կարեմք ա-

սել, եթէ եւ բանականն երկակի է՝ ինքն իսկ բանականութիւն եւ բանական կենդանին: 17 Եւ կամ այլազգաբար. թէպէտ եւ ոչ կարեմք ասել զմարդն բանականութիւն, բայց բանականութիւն ունել կարող եմք ասել: 18 Արդ եցոյց բանս, եթէ տարբերութիւնք տիրապէս փաղանունաբար ստորոգին:

1 Ընդ այսոսիկ հանդերձ աստուծով եւ առաջիկա ՊՐԱԿՔՍ ԻԹ՝

2 «Բայց ամենայն»...

3 Ի վերայ առաջնոց գոյացութեանցն ըստգտեալ Արիստոտելի զառաջին եւ զերկրորդ յատուկան գոյացութեան, զմին՝ որպէս ամենեցուն եւ ոչ միայնում, իսկ զերկրորդն՝ որպէս ոչ ամենեցուն եւ ոչ միայնում, յայլ յատուկ շրջէ զբանն եւ ասէ՝ յատուկ է գոյացութեան «զայս ինչ զենթակայ նշանակել»։ Քանզի եւ այսպէս ինքն ի Բնականսն զնիւթ ենթակայ կոչէ. քանզի երկրքեան սահմանեալք են, եւ այս ինչն՝ որպէս ընդ ցուցմամբ անգանելով, եւ նիւթն՝ որպէս յինքն կալով մնալով եւ ամենեցուն, որք ի նմայն են՝ փոփոխելով, որպէս զկաթսայն կարողութիւն է այլաձեւել եւ առնել անդրի, եւ դարձեալ յայլ ինչ փոխաձեւել եւ առնել այլ ինչ՝ ոչ ինչ նուազ կալով մնալով պղինձն, որ ինչ էրն՝ յառաջ քան զլինելն կաթսայ կամ անդրի կամ այլ ինչ յայսպիսեաց: 4 Արդ՝ այսպէս Արիստոտէլ զայն ինչն եւ զնիւթն ենթակայս կոչէ: 5 Իսկ ինչն զմասնականսն նշանակէ: 6 Իսկ երկրքեան՝ այս ինչ եւ ինչն՝ զմասնական ենթակայն նշանակէ, այսինքն՝ զանհատ գոյացութիւնն: 7 Արդ՝ այս յատուկ ոչ պատկանի նիւթում, վասն զի ընդհանուր ենթակայ է նիւթ եւ ոչ ունի պատահմունս ըստանուրն բանի¹, որք

առնեն զմասնականն. բայց եւ պարզաբար է ասել, եթէ եւ ոչ հանուրն պատկանի նիւթում եւ ոչ մասնականն. քանզի այսոքիկ տեսակարարիցեալք անուանք են. քանզի նիւթ ոչ ունի ըստ ունակութեան զտեսակս, այլ ըստ պատկանութեան, այլ եւ ոչ աստուածային գոյացութեանն պատկանի, վասն զի ոչ ումեք ենթակայանայ, եւ ոչ դարձեալ երկրորդ գոյացութեանցն. քանզի այսոքիկ՝ թէպէտ եւ միայնին առաջաբերութեամբ թուին զայս ինչ նշանակել, յորժամ ասէ ոք՝ «մարդ» կամ «կենդանի», այլ սակայն ոչ զայս ինչ նշանակեն, այլ այսպիսի ինչ այսինքն՝ նմանութիւն՝ ըստ որում միմեանց նմանեալ են մարդիկ, ըստ որում մարդիկ են, եւ կենդանին՝ ըստ որում կենդանի: 8 Եւ մի կարծի՛ր, եթէ յորժամ ասացի այսպիսի ինչ նշանակել զերկրորդ գոյացութիւնսն, այսպիսի ինչն որակութիւն է, իսկ որակութիւն՝ պատահումն, եթէ եւ երկրորդ գոյացութիւնքն պատահմունք են. քանզի թէպէտ եւ որակութիւն նշանակեն, այլ սակայն գոյեղուտ որակութիւն նշանակեն: 9 Այլ վասն զի եւ հանուր պատահմունք նմանութիւն նշանակեն ըստ մասին պատահմանցն, որո՞վ զանազանին յերկրորդ գոյացութեանցն: 10 Եւ ասեմք, եթէ երկրորդ գոյացութիւնքն գոյեղուտ նմանութիւնս նշանակեն, իսկ պատահմունքն՝ մակագոյեղուտ. քանզի երկակի է որակութիւն՝ գոյեղուտ եւ մակագոյեղուտ: 11 Արդ՝ մի գուցէ առ մերձակայ յատուկս այլ գովեստ է անհատ գոյացութեան. քանզի անհատ գոյացութիւն՝ վասն ամենեցուն զնովաւն ենթակայիլ՝ ինքն միայն յինքեան է, իսկ այլքն ամենայն յանհատ գոյացութեան ասին գոլ:

12 Զայսոսիկ Արիստոտէլ եւ այլ ինչ ոչ: 13 Իսկ մեք հինգ իրաւք ունիմք մակացուցանել. նախ՝ եթէ զիս՞րդ ասեմք զգոյացութենէ իրս նշանակել, վասն զի եւ գոյացութիւն է, իսկ իրք նշանակին եւ ոչ նշանակեն: 14 Եւ ասեմք, եթէ դիտաւո-

1 Թուև. τῷ ἑαυτῆς λόγῳ

րուծիլն Ստորոգութեանցս է ոչ յաղագս իրաց եւ կամ զիրաց բուռն հարկանել, այլ ըստ որում նշանակին յայսպիսեաց ձայնից. քանզի երբեմն եւ իրք զտեղի առնեն ձայնից, ոչ որպէս իրք նշանակելով, այլ որպէս այսպէսաբար անուանիցեալք. որդոն՝ Սոկրատէս ի բազմութեան տեսանելով՝ որք քննենն զնա. բայց նշանակեն երբեմն եւ իրք զձայն՝ որպէս ձգելով առ ինքեանս զիւրեանց զառասութիւնն. բայց նշանակին եւ իրք յիրաց, որգովն, կաթն՝ զի ծնաւ, ծուխ՝ վասն զի հուր, գլխացաւութիւն՝ վասն զի արեգակնակիզութիւն. իսկ երբեմն եւ ձայնք առնեն զտեղի իրաց, որգոն՝ Սոկրատէս զնայ, ոչ որպէս Սոկրատէս անունն զնայ, այլ իրն՝ որ ունի զայսպիսի անուն: 15 Երկրորդ՝ զի եթէ եւ յայսմ յատկէ երեւի, որ ըստ նմանութեանն յատկին՝ ոչ եթէ ըստ այն որ այս ինչ են, այլ որ ըստ նմանութեան յատուկն է՝ ըստ այնմ երեւի, եթէ գոյացութիւնք են զանագանութիւնք, ոչ միայն զի ոչ են նենթակայում եւ կամ եթէ փաղանուաբար ստորոգին եւ կամ եթէ մասունք գոյացութեան են, այլ զի եւ նմանութիւնս գոյացութեան նշանակեն. քանզի երկրորդ գոյացութիւնքն նմանութիւնս նշանակելով ըստ մասին գոյացութեանցն գոյացութիւնք, նոյնպէս եւ տարբերութիւնք, նմանութիւնս գոյացութեանց նշանակելով՝ գոյացութիւնք ասին: 16 Իսկ երրորդ իմացուցութեւք, եթէ զիւր՝ վերագոյն ասէաք զսեռ եւ զտեսակ ի ներում զինչ էին ստորագեալ, իսկ այժմ ի ներում որպիսի ինչ էին: 17 Եւ ասեմք, եթէ երկոքեան ճշմարիտ են. քանզի եթէ առցես զներագասեալն զնոյն ինքն զիրն եւ ոչ որ ըստ կալմանն է յայնոսիկ՝ որ ըստ մասինն են, որդոն՝ զկենդանին կամ զմարդն, յայնժամ ի ներում զինչ էին ստորագին. իսկ եթէ զբացարձակն, այսինքն՝ զյառաջ քան զփոքունսն եւ որ ըստ կալմանն է, յայնժամ ի ներում որպիսի ինչ էին ստորագին. քանզի

նմանութիւնս գոյացութեանց նշանակեն. քանզի հակաբաժանիցելոցն դիմակացութիւն նմանութեան եւ աննմանութեան: 18 Իսկ չորրորդ՝ պարտ է մակացուցանել, եթէ Արիստոտէլ զայս ինչ կոչէ զանհատ գոյացութիւնսն, եւ այսպիսի ինչ գերկրորդն, իսկ Պղատոն՝ ստորընդդիմաբար նմա: 19 Եւ ասեմք, եթէ երկոքեան ճշմարիտ են. քանզի իւրաքանչիւր ոք զսահմանեալն զայս ինչ կոչէ, իսկ զանորիչն՝ այսպիսի ինչ: 20 Բայց է եւ յերկաքանչիւրսն եւ սահմանեալ եւ անորիչ՝ սահմանեալ մի թուով, իսկ անորիչ այն՝ որ եւ ոչ յիւրում առասութեանն կայ մնայ. որգոն՝ Սոկրատէս ի ներհոսման եւ ի բացահոսման գոլ ունի, որպէս եւ այլ բնականքն, որք յամենայն ժամ փոփոխին. քանզի ասելն «կոչեա՛ զնստեալն զայն» յառնէ եւ ոչ անսաց իւրում առասութեանն. իսկ յերկրորդ գոյացութիւնսն սահմանեալն անփոփոխելին գոլ, որգոն՝ ընդհանուր մարդ եւ կենդանի, իսկ անորիչ է մոլորիլն զընդհանուրն, յորժամ բազմաց ունիմք մտածութիւն. քանզի եթէ ասէ «մարդ», ներպառեալ ունի զՍոկրատէս եւ այլս բազումս: 21 Իսկ հինգերորդիւ եւ վերջնով պարտ է մակացուցանել, եթէ առ ի յանգիտանալոյ զայս նշանակութիւն՝ լինի ոչնչային անուանեալք զանցաբանութիւնք ըստ Հոմերոսի Ողիւսեայն, որ ի դէպ ժամանակի Ոչնչային անուանեաց զինքն: 22 Եւ ունի զանցաբանութիւնն այսպէս՝ որ ոք ի յԱթենս՝ նա ոչ ի Մեգարս, մարդ որ ի յԱթենս՝ մարդ ոչ ի Մեգարս. ապա ուրեմն՝ ոչ է ի Մեգարս մարդ: 23 Եւ ասեմք, եթէ զանցաբանութիւն է յոր ոքն. քանզի որ ոքն ընդհանուր ջանայ լինիլ, որ է սուտ. քանզի զոր ոքն եթէ ոք ընդհանրում առնու՝ սուտ է. իսկ եթէ ոք ի վերայ մասնականին առնու, ճշմարիտ է բանն յայնժամ՝ եթէ զմասնականն առնումք. քանզի իք մարդ՝ որպէս Սոկրատէս կամ այլ ոք որ ըստ մասին, որ յԱթենս է՝ ի Մեգարս ոչ, զի մի աւցտեսցի

ինքն ինքեամբ: 24 Արդ այսպէս է ասել, եթէ որ յԱթենս՝ նա ոչ ի Մեգարս. Սոկրատէս յԱթենս՝ Սոկրատէս ապա ոչ ի Մեգարս:

1 Ընդ այսոսիկ հանդերձ աստուծով եւ առաջիկա ՊՐԱԿՔՍ Լ

2 «Բայց է գոյացութեանց եւ ոչ ինչ»...

3 Վասն զի երրորդ յատուկն՝ զայս ինչ նշանակէ, եւ միայնում գոյացութեան գոյ՝ եւ վասն այնորիկ առաւել յատուկ կարծիւր գոլ. եւ թուի ոչ որպէս իրում նմա գոլ, այլ որպէս ձայնում նշանակում. քանզի նշանակելն ձայնի է. ոչ յառաջագոյն դադարեցուցանէ Արիստոտէլ զյաղագս յատկութեանցն բան՝ նախ քան զգտանել յատուկ ինչ գոյացութեան, որ որպէս իրում նմա գոյ: 4 Եւ վասն զի որպէս իրում է գոյացութեան ներհակացն զնա գոլ ընդունակ, իսկ ներհակացն գոլումն զնա ընդունակ հետեւի ոչ ինչ ընդունիլ ներհակ, եւ դարձեալ այսմ հետեւի ոչ ընդունիլ զյաւէտն եւ զնուազն, զայսոսիկ գերիս զյատկութիւնս գոյացութեան աւանդեալ՝ դադարեցուցանէ զյաղագս գոյացութեանն բան եւ զյատկութեանցն նորին: 5 Եւ վեցերորդ եւ տիրապէս աւանդէ եւ վերջին յատուկ ներհակացն զնա ընդունական գոլ. բայց չորրորդ յատուկ գոյացութեան է ոչ ինչ ունիլն ներհակ. զոր հաւատարմացուցանէ ի մակածականէն. քանզի եւ ոչ առաջնումն, ասէ, է ներհակ եւ ոչ երկրորդումն: 6 Եւ զայս դարձեալ հաւատարմացուցանէ յայլ մակածութենէ. եւ առաջնումն, ասէ, ոչինչ է ներհակ, վասն զի Սոկրատում ոչինչ է ներհակ, եւ ոչ երկրորդումն դարձեալ է ինչ ներհակ, վասն զի կենդանում ներմարդում ոչինչ է ներհական. քանզի յոլով մակածականս յառաջիկայում իրողութեանս յաղագս սեռականագուցուցն ելոյ, որք ոչինչ յառաջ

քան զինքեանս ունին, այլ զամենայն յետոյ ինքեանց: 7 Իսկ մակածութիւն յերկրորդացն եւ ի մասնականացն զընդհանուրսն հաւատարմացուցանէ, իսկ ապացոյց ոչ այսպէս, այլ ի վերնագուցուցն զներքոյսն: 8 Եւ վասն զի թանձրամասնական է մակածութիւն՝ որպէս ոչ յամենայն իրում ճշմարտելով՝ բե՛ր մեք ի ձեռն այլ հարկաւորագուցնից եղանակի զնոյն ցուցցուք: 9 Պարտ է գիտել, թէ բնաւորական եւ անքարոզ եւ անդաշնելի պատերազմ յարուցեալ է ի զգալի իրողութիւնսն, յորժամ երկուց իրաց պատերազմելոց ընդ միմեանս՝ երկաքանչիւր ոք ունաւդ կամի լինել ենթակայում, իսկ ենթակայն ոչ կարէ ի նոյն եւ ի նմին այժմ ընդունել զներհակսն վասն ըստ մասին ընդունակ գոլոյ ներհակացն: 10 Արդ՝ որք պատերազմինն ընդդէմ վասն միոյ ենթակայի պատերազմին, որպէս ասէ Պղոտինոս, քանզի յաղագս տեղոյն պատերազմին: 11 Եւ պարտ է գիտել, եթէ ենթակայ այժմ ասի տեղի. քանզի իւրաքանչիւր ոք ի ներհակացն ունի յատուկ տեղի, եւ ոչ երբեք պատերազմին ներհակքն հեռի բացակացեալք, այլ մերձենալով ի միմեանս եւ բաղահոսեալք, եւ ի միում գոլով տեղում՝ պատերազմին՝ եթէ ո՞ք ի նոցանէ կալցի գտեղին՝ քանզի անհնարին է թարց հակառակութեան կալ մնալ զներհակսն ի միում եղեալ տեղում. արդ՝ ենթակայ գտեղին պարտ է լսել, յորում պատերազմին ներհակքն, եւ ոչ եթէ անորակ մարմինն. ապա ուրեմն՝ որք պատերազմինն՝ նենթակայում են, յայնմ՝ որ տակաւին ոչ եւս աւար եղեալ գոյ յաղթումն. արդ՝ եթէ որք պատերազմինն նենթակայում են վասն բաղահակադրան հակադարձութեանն, որ ի հետեւիլոյն լինի, այսպէս պարտ է ասել. իսկ որք ոչ նենթակայում գոն՝ ոչ պատերազմին միմեանց. իսկ գոյացութիւն ոչ նենթակայում է. ապա ուրեմն՝ գոյացութեան ոչինչ է ներհական՝ որ պատերազմ

մին: 12 Այլ այս չորրորդ ասիցեալ յատուկ ամենայնում ասացեալ գոյացութեան է եւ ոչ միայնում. քանզի ոչ հակադարձի բանս. զի եւ ոչ ամենայն, որ պատերազմի՝ նենթակայում է, եւ ոչ ամենայն, որ նենթակայում են՝ պատերազմին միմեանց. վասն զի ձեւում ոչինչ է ներհակ. քանզի ոչինչ է եռանկիւնի եռանկիւնիոյ ներհական եւ ոչ զքառանկիւնի քառանկիւնում, վասն զի եւ ոչ զյաւէտն եւ զնուազն ընդունին, թէ արդար եւ եռանկիւնին ոչ լինի ինքեան յաւէտ եռանկիւնի եւ նուազ. քանզի մեծագոյն ասի եռանկիւնի եռանկիւնիոյ, այլ յաւէտ եռանկիւնի ոչ է, վասն զի ամենայն եռանկիւնի զմի եւ զնոյն սահման ընդունի. այլ եւ ոչ միջակաց գունոցն է ինչ ներհակ՝ գորչումն եւ խարտեչումն. քանզի ներհակք յոլովիւք տարակացութեամբք դատին. իսկ յոլով տարակացեալ է ոչ մէջն ի ծայրէն, այլ ծայրն ի ծայրէն: 13 Եւ բացորոշիցելոյ քանակի ոչինչ է ներհական, որգոն՝ երկկանգնումն կամ եռականգնումն: 14 Իսկ եթէ թոյլ տամք անորիչ քանակումն գոլ ներհական՝ զփոքրն մեծումն, զշատն սակաւումն՝ ցուցցի եթէ եւ ոչ այսոցիկ է ինչ ներհակ, վասն զի մեծն ի փոքրում փոքուց բաղկացաւ եւ շատն ի փոքր սակաւուց. արդ՝ եթէ պարունակեալ ունին զինքեանս, այլ բաղկացուցիչքն ինքեանց, իսկ ներհակք ապականիչք միմեանց են եւ ոչ բաղկացուցիչք: 15 Զայսոսիկ Արիստոտէլ եւ այլ ինչ ոչ:

16 Յետ որոց տարակուսեն ոմանք երիս տարակուսանս: 17 Նախ եթէ զիւրօրդ ասի գոյացութիւն ոչ ունիլ ներհակ. քանզի ներ Յաղագս լինելութեան եւ ապականութեան ասէ գտարերցդ պատերազմիլ միմեանց՝ զհուր ջրում եւ զաւղ երկրում: 18 Եւ լուծանէ Աղեքսանդրոս ասելով, եթէ «ոչ ամենեւիմբ ընդ ընքեանս պատերազմին տարերքդ. քանզի ոչ եթէ ըստ մարմնոյ պատերազմին, այլ որակութիւն որա-

կութեան, այսինքն՝ ցրտութիւն ջերմութեան եւ ցամաքութիւն խոնաւութեան»: 19 Իսկ Սիւրբանոս եւ առաւել մակդատելով ասէ, եթէ «եւ ոչ ըստ որակութեանն պատերազմին, եթէ գոյեղուտք առցին ուրեք. քանզի ոչ հակառակի ցրտութիւն ջերմութեան, եթէ ի հրում եղիցի կամ ի ջրում, ապա եթէ ոչ՝ էր երբեք եւ հուր ցուրտ գտանիլ»: 20 Այլ թէպէտ եւ ապականէ որակութիւն գորակութիւն, որպէս յանորակ մարմնում պարտ է առնուլ յայնժամ զնոսա. քանզի յայնժամ պատահմունք են եւ լինին եւ բացալինին թանց ենթակային ապականութեան: 21 Երկրորդ տարակուսութիւն է, զի եթէ գոյացութեան ոչինչ է ներհակ՝ զիւրօրդ բան, այսինքն միտք, եւ բարկութիւն պատերազմին միմեանց. քանզի գոյացութիւնք են այսոքիկ. վասն զի այսոքիկ մասունք են անձին՝ բան, բարկութիւն, ցանկութիւն, եւ պատերազմի բարկութիւն բանում, որպէս ասէ Մեդեայ¹.

22 «Բայց բարկութիւն վեհագոյն է քան զխորհուրդ»:

23 Առ որ ասեմք, եթէ ոչ ըստ գոյացութեան պատերազմին, այլ ըստ ազդմանցն. քանզի բարկութիւն եւ բան գոյացութիւնք են, իսկ բարկանալն եւ բանաւորիլն ներգործութիւնք: 24 Իսկ եթէ ոք մակտարակուսէ ասելով, եթէ ներհակ ներգործութիւնք ի ներհակաց զաւրութեանց առաջաբերին, իսկ ներհակ զաւրութիւնք ի ներհակաց գոյացութեանց՝ ոչ բարիք ասէ. քանզի միեւնոյն գոյացութիւն ի ներհակէ յառաջաբերէ ազդմունս, որպէս կարծիք. քանզի կարծիք զմինն միայն գիտելով՝ երբեմն կարծէ, եթէ հոգի անմահ է. իսկ հաւատացեալ ի մակացուցաւղէ կարծէ դարձեալ, եթէ անմահ է հոգի. եւ եթէ ոչ երբէք դաշնակիցք լինին ներհակք. իսկ

1 Միգիայ, յուն. Μηδεια

բարկութիւն է ուրեք՝ ուր նուաճի բանում, որպէս ասէ Ողիւսեւս:

25 «Համբեր, ո՛վ սիրտ, քանզի եւ այլ դաժանագուռնից համբերեցեր».

26 Երրորդ տարակուսութիւն է, եթէ որովհետեւ ոչ է ներհակ ինչ գոյացութեան, զիա՞րդ ասեմք թշնամիս զմարդիկ, քանզի այն ինչ մարդիկ գոյացութիւնք են: 27 Եւ ասեմք, եթէ ոչ ըստ որում գոյացութիւնք են՝ պատերազմին, այլ պատահումն ինչ արար զնոսա թշնամիս, այսինքն՝ անմտութիւնն՝ որ պատահէ, վասն զի եւ գիտութիւն պատահէ. եւ եթէ ոչ դաշնակիցք լինին ներհակք, իսկ զմեծ թշնամութիւն յորով մեծ սիրելութիւն ընդունի, եւ եթէ զինքեանս արարին պատահս իւրեանց ինչից. քանզի ասեն իսկ ցմիմեանս, եթէ «զգոյութիւնն զիմ յափշտակիցեր».

գոյութիւն կոչելով զինչսն եւ զինքեանս արարին պատահմունս, եւ ոչ ի դէպ պատահմունս, այլ պատահմանց պատահմունս, այսինքն՝ իւրեանց ինչից:

1 Ընդ այսոսիկ հանդերձ աստուծով եւ առաջիկա ՊՐԱԿՔՍ ԼԱ.

2 «Բայց թուի գոյացութիւն»...

3 Չորրորդ յատուկ գոյացութեանն՝ ոչն ունել ներհակս՝ յղացաւ այլ յատուկս՝ զոչն ընդունել զյաւէտն եւ զնուազն. քանզի ներհակք կատարումն են, իսկ յաւէտն եւ նուազն ճանապարհ ի ներհակսն: 4 Եւ կոչէ ներհակ, որպէս բերի յասելն՝ զսպիտակն եւ զսեւան, որք եւ կատարումն ասին գոլ, իսկ յաւէտն եւ նուազն զառ ի սպիտակէն ի թուխն փոխարկութիւն կամ ի թխոյն ի սպիտակն՝ ոչ միահամուռն եղելոյ, այլ ճանապարհում ումեմն պիտանացեալ, ըստ յառաջման ի սպիտակէն ի թուխն փոփոխման: 5 Արդ՝ ուր ներհակք՝ անդ յաւէտ եւ նուազ, եւ ուր յաւէտ եւ

նուազ՝ անդ ներհակք: 6 Եւ ուր ոչ են յաւէտն եւ նուազն՝ եւ ոչ ներհակք, եւ ուր ոչ ներհակք՝ եւ ոչ յաւէտ եւ նուազ. քանզի միշտ չորք այսոքիկ ասիցեալք հանդիպին միմեանց: 7 Այլ այսոքիկ ճշմարիտ են ըստ Պղատոնի, որ ամենայն իրի ներմիջակս ասէ. քանզի ոչ միահամուռն բնութիւն վազէ յամենեւիմք ներհակէ ի ներհակ. որգոն՝ սպիտակն ի թուխն ոչ միահամուռն փոխարկի, այլ ճանապարհաւ՝ նախ նուազ ինչ սպիտակ, ապա եւս նուազ եւ ապա թուխ: 8 Իսկ ըստ Արիստոտելի ոչ ամենայն ներհակաց միջակ, այլ գիտէ եւ առանց միջակաց ներհակ, թէպէտ եւ երկուս միայն՝ զդար եւ զկոճատ, զցաւ եւ զառողջութիւն: 9 Եւ ոմանք ասեն, եթէ եւ այսոցիկ միջակք են. քանզի դարին յերկուս բաժանիցելոյ, յերկուս եւ կոճատին բաժանիցելոյ՝ երեք անմիջակքն՝ դարիցս դարն, որ մինչեւ ցմիակն յերկուս բաժանի, որպէս ԼԲ ի ԺԶ, յԼ, ի Դ, յԲ, ի Ա, եւ կոճատադարն, որ բազում հատմունս դարինս ընկալեալ՝ ի կոճատ թիւ յանգի որպէս ԽԸ ի ԻԴ, ի ԺԲ, ի Զ, յԳ, եւ դարկոճատն՝ որ յերկուս բաժանեալ՝ նոյնժամայն ի կոճատ թիւ յանգի, որպէս ԺԸ ի Թ եւ Թ, որք են կոճատք: 10 Այլ այսոցիկ թուոց դարին եւ կոճատի միջակք են ասացեալքդ, իսկ հիւանդութեան եւ ողջութեան վերադարձութիւնն: 11 Այլ թերեւս ուրեք ասիցէ Արիստոտէլ, եթէ պարզ դարին, այսինքն հանուրցն, եւ պարզ կոճատին ոչինչ է ընդ մէջ, իսկ դուք զոմն դար ասէք եւ զոմն՝ կոճատ. քանզի դարիցս դարն ոմն դար է եւ ոչ հանուր: 12 Եւ հիւանդութեան եւ ողջութեան ոչինչ է ընդ մէջ. քանզի թէպէտ եւ կարծի գոլ մէջ վերադարձութիւնն, զոր ասեն բժիշկք՝ որպէս առ ի զգայութիւն զըստ բնութեանն եւ զոչ ըստ բնութեանն քննելով զողջութիւնն եւ զհիւանդութիւնն՝ ասեն մէջ գոլ զվերադարձութիւնն. իսկ Արիստոտէլ զստոյգ ըստ բնութեան եւ զստոյգ զոչ

ըստ բնութեանն դատելով գողջութիւնն եւ
զհիւանդութիւնն՝ ոչինչ ասէ նոցա մէջ գոլ:
13 Զայսոսիկ Արիստոտէլ:

14 Իսկ արտաքուստ տարակուսեն ասելով,
եթէ զիա՞րդ վերագոյնն ասէր՝ եթէ
գոյացութիւնն ընդունի գյաւէտն եւ
զնուագն, իսկ այժմ ասէ՞ եթէ ոչ ընդունի:
15 Լուծանեմք գտարակուսութիւնս գայս.
եւ ընդունի եւ ոչ ընդունի. քանզի ինքն
ինքեան բաղդատելով՝ ոչ ասի յաւէտ եւ
նուագ, որզոն՝ մարդ քան զմարդ ոչ յաւէտ
մարդ եւ նուագ, ոչ մարդ ինքն ինքեան.
Իսկ անհատ գոյացութիւնն առ սեռականսն
եւ առ տեսականսն գոյացութիւնն բաղ-
դատելով՝ առաւել գոյացութիւնն է:
16 Երկրորդ տարակուսութիւնն է, եթէ
զիա՞րդ Արիստոտէլ միշտ սովորութիւն
ունի ասել ի բացատրութեան գոյացու-
թեան յատկութիւնն է, թէ միայնում գոյ եւ
ոչ միայնում եւ եթէ ամենայնում գոյ եւ
ոչ ամենայնում՝ այժմ ոչինչ ի յայսպի-
սեաց յիշեաց: 17 Եւ ասեմք լուծումն այս-
պիսի, եթէ որպէս այն ինչ զտեալ ունելով
զնա ընդ առաջին յատկին՝ այժմ եթող.
քանզի եթէ ոչ ունէր ներհակ, որ յառաջ
քան զսա էր յատուկ՝ հետեւի ոչ ընդունել
գյաւէտն եւ զնուագն. իսկ նա ոչ միայ-
նում գոյացութեան գոյ, եւ ոչ սա միայն
գոյացութեան գոյ, այլ եւ քանակում.
քանզի եռականգունն եւ քառականգունն
ոչ ընդունին գյաւէտն եւ զնուագն, եւ ոչ
հինգն կամ տասն: 18 Իսկ երրորդ տարա-
կուսութիւնն է, զի եթէ գյաւէտն եւ
զնուագն, ասէ, ոչ ընդունի գոյացութիւնն՝
զիա՞րդ Արիստոտէլ ներում Յաղագս լինե-
լութեան եւ ապականութեան ասէ նուագ
ջերմ գոլ զաւր քան զհուր, որք են գոյա-
ցութիւնք: 19 Լուծումն սորին յԱղեք-
սանդրոսէ, եթէ ոչ ըստ որում գոյացու-
թիւնք են՝ ընդունին գյաւէտն եւ
զնուագն, այլ ըստ որակութեանց: 20 Իսկ
Սիւրիանոս ասէ, եթէ եւ ոչ ըստ որակու-
թեանց ընդունին գյաւէտն եւ զնուագն,

յորժամ գոյեղուտ առջին որակութիւնքն.
քանզի իւրաքանչիւր ոք յոլովեն յիւրում
յենթակայումն, եւ ոչ եթէ յաւէտիւն եւ
նուագիւն զանագանին. քանզի տեսակա-
րարիցեալք են այսոքիկ եւ զիջմունք տե-
սակաց են: 21 Եւ այլագգաբար. եթէ
նուագն, որ ինչ յաւէտն է եղեալ՝ ոչ ար-
տակայացաւ յիւրմէ տեսակէն, իսկ չափա-
ւոր ինչ ջերմութիւնն հրոյ ընկալեալ՝ կո-
րոյս զգոյն:

1 Ընդ այսոսիկ հանդերձ աստուծով եւ
առաջիկա

ՊՐԱԿՔՍ ԼԲ

2 «Եւ մանաւանդ զի ուրոյն գոյացու-
թեան որ միեւնոյն».

3 Վեցերորդ յատուկ գոյացութեան
զմի եւ զնոյնն թուով ներհակացն գոլ ըն-
դունակ ըստ մասին: 4 Եւ բարոք առկա-
յացաւ ըստ մասին, վասն զի ոչ համայն եւ
սպիտականայ եւ թխանայ Սոկրատէս, եւ
ոչ համայն հիւանդանայ եւ ողջանայ:
5 Մի եւ նոյն թուով բարոք առկայացաւ,
վասն զի եւ թիւ ընդունի զներհակսն, այլ
ոչ միով թուով տեսակաւ, ուր եւ ոչ միով
թուով բաղկանան դարն եւ կոճատն, այլ
որպէս ի նիւթում, որ կարող է ի դար եւ ի
կոճատ բաժանիլ. քանզի կանգնեան
փայտն եւ ի դար բաժանի եւ ի կոճատ:
6 Եւ դարք ձիք կարող գոն կոճատ լինիլ
միոյ առադրիցելոյ կամ ի բաց բարձելոյ:
7 Այլ եւ գոյն թէպէտ եւ ընդունի զներ-
հակսն, որզոն զսեաւն կամ զսպիտակն,
այլ ոչ որպէս մի թուով, այլ որպէս մի տե-
սակաւ: 8 Բայց յատուկս այս միայն գո-
յացութեան է վասն այսպիսւոյ բանի. որ
ներհակաց է ընդունական՝ պատահմանց է
ընդունակ, քանզի ամենայն ներհակք պա-
տահք են, իսկ որ պատահմանց ընդունակ
է՝ ենթակայէ պատահմանց, իսկ պատահ-
մանց ենթակայն՝ գոյացութիւնն է. ապա
ուրեմն՝ միայնում գոյացութեան է յա-

տուկա այս: 9 Բայց ոչ ամենեցուն է. քանզի երկրորդք գոյացութիւնքն անյեղլիք գոլով՝ ոչ ընդունին զներհակսն, այլ եւ ոչ ամենայն անհատիցն է. քանզի եւ երկնայինքն անյեղլիք գոլով՝ ոչ ընդունին զներհակսն: 10 Այլ եւ ամենայն անհատք զգալեացս ոչ ընդունին զներհակսն, որպէս ոմանք կարծեցին վասն կարապին, թերեւս ուրեք, որ ըստ սպիտակութեանն ոչ փոփոխի: 11 Առ որս ասելի է, թէպէտ եւ զհակադրութիւնս զայս ոչ ընդունի, այլ սակայն զայլ հակադարձութիւնսն ընդունի՝ զՋերմոյն եւ զցրտոյն, զցամաքոյն եւ զխոնավոյն: 12 Եւ այսոքիկ այսպէս:

13 Բայց տարակուսէ յընքեան Արիստոտէլ, եթէ ոչ միայնում գոյացութեան գոյ այս. քանզի թուի եւ բան եւ կարծիք ընդունել զներհակսն, յորոց ոմն քանակ է, այսինքն բանն, եւ ոմն որակ կարծիքն. բայց երկոքին բանք, այլ ոմն՝ առաջաբերական եւ ոմն՝ ներտրամադրական. քանզի բան, որ ասէ՝ եթէ «Սոկրատէս նրստի»՝ ճշմարտէ տակաւին ի նստելն Սոկրատայ, իսկ ստէ յարուցելոյ նորա: 14 Նմանաբար եւ զկարծիսն իմասցիս: 15 Բայց լուծանէ գտարակուսութիւնս զայս Արիստոտէլ ըստ ներկացութեան եւ ըստ հակայյարակացութեան: 16 Եւ սկիզբն առնէ ի հակայյարակացութեանէ, որպէս գործակից լինիլոյ նմա ի ներկացութեան: 17 Եւ ունի այսպէս. զի եթէ տամք՝ եթէ բան եւ կարծիք ընդունին զներհակսն, այլ յեղանակ ընդունելութեանն զանագան է. քանզի գոյացութիւն ըստ ընքեան փոփոխմանն ընդունի զներհակսն, իսկ բան եւ կարծիք ինքեանք անշարժ ամենեւին գոլով, իսկ իրին փոփոխեցելոյ՝ ասին եւ նոքա փոփոխել զաւրէն այնորիկ՝ որ յաջմէ է եւ ապա ի ձախմէ լինի ընգերին փոխակացելոյ: 18 Արդ՝ պէտք են տրամորոշման բանիս. քանզի պէտս ունի առադրութեան ըստ իւր ինքեանն փոփոխման, որպէս զի գոլ բանին այսպէս. եթէ միեւնոյն գոլով թուով՝ գոյացութիւն

ընդունական է ներհակացն մասնաբար ըստ իւր ինքեան փոփոխմանն: 19 Բայց է եւ այլազգ լուծանել գտարակուսութիւնս զայս, եթէ ոչ մնաց իսկ նոյն բան. քանզի այլ է որ ասացն «Սոկրատէս նրստի», եւ այլ է, որ ասացն՝ «ոչ նրստի»՝ այն ինչ յարուցելոյ նորա՝ բայ ինչ ասացեալն ոչ է. քանզի ոչ մնայ յիրին փոփոխման, որպէս զի ճշմարտեացէ կամ ստեացէ: 20 Նմանապէս եւ կարծիք այլ է՝ որ առ ըստ ձեռնութեանն է՝ որ ասէ «Սոկրատէս նստի», եւ այլ է որ նախաձեռնի որ ասէ, եթէ «Սոկրատէս ոչ նստի»՝ յարուցելոյ նորա: 21 Արդ թէպէտ եւ տամք, եթէ նոյն ինքն կարծիքն ընդունին զճշմարիտն եւ զսուտն, այլ ոչ եթէ կարծիք ըստ ինքեան ճշմարտէ եւ ստէ, այլ անձնն՝ ըստ կարծեաց. քանզի ոչ եթէ կարծիք ըստ ընքեան կարծէ, այլ անձն ըստ կարծեացն կարծէ. քանզի որպէս ոչ ասեմք զձեռն նիւթել, այլ զմարդն ձեռամբ՝ նոյնպէս եւ ոչ կարծիք կարծեն, այլ անձն ըստ կարծեաց կարծէ: 22 Եւ զայսոսիկ հակայարակացութիւնն: 23 Իսկ ներկացութիւն խոտելով զայն զոր հակայարակացութիւնն ասաց, եթէ բան եւ կարծիք ինքեանք անշարժ մնալով եւ իրին փոփոխեցելոյ՝ ընդունակք լինին ներհակացն, արդ ասէ՝ եթէ ոչ ընդունին զներհակսն. քանզի ոչինչն՝ որ ինքն ոչ փոփոխի՝ կարող գոյ զներհակսն ընդունել. ապա եթէ ոչ՝ զի՞նչ իցէ որ արգելու զներհակսն ի միասին գոլ, որգոն՝ զսպիտակութիւն եւ զթխութիւն ի միում ենթակայում: 24 Եւ է կատարելագոյն ներկացութիւնն քան զհակայարակացութիւն, վասն զի տրամորոշման ոչ ունի պէտս: 25 Եւ այսոքիկ այսպէս: 26 Այլ թերեւս ասիցէ ոք զԱրիստոտէլ, եթէ «զի՞նչ ասես, ո՞վ Արիստոտէլէս, բան ո՞չ ընդունի զճշմարիտն եւ զսուտն»: 27 Եւ թէ ասիցէ ուրէք Արիստոտէլ, եթէ ոչ բանն միայն էակ ճշմարտէ եւ ստէ, եւ ոչ իրն միայն, այլ ընդ միմեանս հիւսուամն բանին եւ իրին. քանզի ձայնակ-

ցութիւն երկուցունցն առնէ զճշմարիտն, իսկ անձայնակցութիւն՝ զսուտն. քանզի որպէս ազանիւն զկաւչիկն ոչ ոտինն միայն, այլ ի պատկանութիւնն ոտինն առ կաւչիկն՝ նոյնպէս է ի վերայ բանի եւ իրի:

28 Բայց տարակուսին չորս տարակուսանս. նախ՝ եթէ «զիւրդ ասես, ո՞վ Արիստոտելէս, եթէ գոյացութիւն միայն ընդունի գներհակսն. քանզի ահա եւ գիծ ունի ուղղութիւն եւ գելութիւն»:²⁹ Առ որս ասեմք, եթէ ո՞ր գիծ՝ ուսումնակա՞նն, այսինքն՝ որ մտածութեամբն առեալ լինի:³⁰ Եւ եթէ զայն ասիցեն՝ այնպիսիսն յայլ եւ յայլ ժամ այլաբան իմանի:³¹ Իսկ եթէ զբնաւորական գիծն ասիցեն՝ նիւթն ըստ գծին ընդունի գներհակսն:³² Երկրորդ տարակուսութիւն, եթէ «ահա եւ նոյն ինքն գործ չար աննահանջ գոլով՝ եւ գովելի է եւ պարսաւելի. պարսաւելի առ առաքինին, իսկ գովելի առ անառակն»:³³ Լուծումն սորին, եթէ նա որպէս ի նոյնում այժմ գերկոսեան ունելով՝ ընգալեալ երեւի ունել գներհակսն, իսկ անընդունական կայ. եւ եթէ առ այլ եւ առ այլ յարարկանիլ գրելով թուի ընդունել գներհակսն, վասն զի գաւրութեամբ եւ ոչ ներգործութեամբ:³⁴ Երրորդ տարակուսութիւն է, թէ «նո՞յն շարժումն ընդունի գաւրութիւն եւ գյամրութիւն»:³⁵ Եւ ասեմք, եթէ ոչ է մի թուով. քանզի այլ է արագն եւ այլ է յամրն:³⁶ Չորրորդ տարակուսութիւն՝ «զիւրդ, ասէ, ժամանակ ընդունի զլոյս եւ զխաւար, զտիւ եւ զգիւղեր»:³⁷ Եւ ասեմք, եթէ ոչ ժամանակ, այլ աւղ է՝ որ գայտոսիկ ընդունի:³⁸ Իսկ աւղ գոյացութիւն է:³⁹ Այսոքիկ եւ յաղագս գոյացութեան:

ՅԱՂԱԳՍ ԲԱՆԱԿԻ

1 «Եւ քանակին է՝ ինչ որ տարորոշ եւ է ինչ որ շարունակ».

2 Յետ գոյացութեան զքանակէ բուռն հարկանէ Արիստոտէլ:³ Եւ պարտ է վեց գլուխս ոմանս խնդրել ի վերայ մերձակայ ստորոգութեանս. նախ զկարգաւորութիւնն նորին առ գոյացութիւն, երկրորդ՝ եթէ սեռ է քանակն շարունակին եւ տարորոշիցելոյն, երրորդ՝ եթէ այսոցիկ միայն է սեռ, թէ եւ միտի, որպէս ասէ Պղատոն եւ Արքիլտաս¹ եւ Պտղոմէոս աստեղաբաշխ. չորրորդ՝ եթէ զի՛նչ է շարունակն եւ զի՛նչ տարորոշեալն. հինգերորդ՝ եթէ ողջաբար ունի զբաժանումն տարորոշիցելոյն. վեցերորդ՝ եթէ ողջաբար ունի զբաժանումն շարունակին:⁴ Արդ՝ վեց ելոց առաջիկայ տեսութեանս՝ զերկուսս զայսոսիկ միայն խնդրելի է, զի՞նչ է կարգաւորութիւն, այսինքն՝ ընդէ՞ր յետ գոյացութեան զքանակէ բուռն եհար:⁵ Եւ ասեմք, եթէ ըստ վեց պատճառաց. նախ՝ եթէ երկրորդմբք իւր յատկաւ գոյացութիւն հաղորդի քանակումն՝ ոչինչ ունելովն ներհակս եւ ոչ ընդունելովն գյաւէտն եւ գնուազն, որով յորակէն գանազանի. քանզի որակումն ոչինչ յայսցանէ գոյ:⁶ Արդ՝ եթէ հաղորդի քանակն գոյացութեանն, իսկ որք հաղորդինն միմեանց՝ հուպ գոն ի միմեանս՝ յիրաւի յետ գոյացութեան զքանակէ բուռն հարկանէ:⁷ Երկրորդ պատճառ՝ եթէ նիւթ անտեսակ գոլով եւ անորակ՝ նախ քանականայ եւ ապա որականայ:⁸ Երրորդ՝ եթէ նիւթ յորակէն հանդուրժեաց փախչիլ, իսկ ի քանակէն ոչ. քանզի մի է թուով, իսկ մին եւ եզն քանակին է ըստ Արիստոտէլի:⁹ Չորրորդ՝ զոր պարտ էր երկրորդ ասել ի պատճառսն, եթէ պարտ էր յետ լինելոյ զբանն՝ որ յաղագս շատին եւ սակաւուն էր, եւ յաղագս փոքու եւ մեծի, որք յարա-

1 Արքիլտաս, յուճ. Ἀρχύτας

քարչին ի բանէն՝ որ յաղագս գոյացութեան. քանզի յիշեաց անդ զշատն եւ զսակաւն, զմեծն եւ զփոքրն, իսկ այժմ փութալի է՝ որ յաղագս նոցա բանն է: 10 Իսկ եթէ տարակուսիցեն ասելով, եթէ «եւ գորակութիւն յիշեաց ի գոյացութեան յառաջ քան զքանակն, յորժամ ասէրն՝ եթէ երկրորդ գոյացութիւնքն այսպիսի ինչ եւ որակութիւն նշանակեն, եւ վասն է՞ր ոչ գորակն նախադասեաց քանակին»: 11 Ասեմ քեզ եւ ես, եթէ գորակութիւն յիշեաց՝ ոչ զայժմու առաջիկացեալս՝ որ առնէ զմի ստորոգութիւն պատահման, այլ զգոյեղուտ որակութիւն յիշեաց. քանզի որ առ գոյացութեամբ որակութիւն է՝ զայն բացորոշեն երկրորդ գոյացութիւնք: 12 Հինգերորդ պատճառ է, թէ եւ պարտ էր զքանակէ բուռն հարկանել յետ գոյացութեան, վասն զի եւ գոյացութիւն զառաջին եւ զերկրորդն ընդունի, իսկ առաջինն եւ երկրորդն քանակի են: 13 Վեցերորդ պատճառ է, թէ եւ նոյն ինքն կարգաւորութիւն քանակի է, վասն զի եւ թիւ՝ որ առնէ զկարգաւորութիւն՝ քանակի է: 14 Ընդ այսոսիկ եւ առաջին գլուխն:

15 Երկրորդ գլուխ՝ եթէ սեռ է քանակն շարունակին եւ տարրոշելոյն. քանզի կարծեսցի ոչ գոլ սեռ, վասն զի յայնոսիկ՝ որք որպէս զսեռ ի տեսակս բաժանին՝ տեսակքն ոչ ունին պէտս միմեանց. որգոն՝ բանականն ոչ ունի պէտս անբանականում եւ անբանն ոչ ունի պէտս բանականումն:

16 Եւ դարձեալ սոցա ի բաց բարձեցելոյ մնան. քանզի մարդոյ ի բաց բարձեցելոյ՝ մնան ձի եւ եզն են այլ տեսակք: 17 Իսկ շարունակ քանակն պէտս ունի տարրոշիցելոյն, վասն զի ամենայն մարմնոյ երեք են տարակացութիւնք: 18 Արդ՝ մարմին շարունակ քանակին է, իսկ երեքն տարրոշիցելոյ քանակին: 19 Եւ ասեմք՝ եթէ մարմին երիս պէտս կալաւ տարակացութեան, եւ ոչ եթէ երից թուոց. քանզի պատահեաց նոցա վայրապար երից գոլ. ապա

երեք՝ որպէս երեք բաղկացուցանեն զմարմին՝ պարտ էր զորեւէ երիս առնուլ եւ բաղկացուցանել զմարմին. որգոն՝ զսպիտակն եւ զթուխն եւ զխարտեաշն: 20 Երկրորդն էր ընդդիմակացութիւն, եթէ ոչ է սեռ քանակն շարունակին եւ տարրոշիցելոյն. քանզի յայնոսիկ՝ որք որպէս զսեռ ի տեսակս բաժանին՝ տեսակքն ոչ ունին կարգաւորութիւն. իսկ Արիստոտէլ միշտ գտարրոշիցեալն նախադասէ շարունակումն: 21 Առ որ ասեմք, եթէ ոչ ըստ հասարակ բնութեանն ընկալան զկարգաւորութիւն. քանզի նմանապէս քանակ է երկաքանչիւր ոք ի նոցանէ՝ որպէս բանականն եւ անբանն նմանապէս կենդանիք. բայց նախադասեալ է բանականն վասն պատուականութեան, այսպէս եւ տարրոշիցեալն նախադասեալ է քան զշարունակն, զի նախադասիցեալ է պատուականութեամբ տարրոշեալն քան զշարունակն. քանզի տարրոշիցեալ քանակն միով տեսակաւ իւրով, թուով, ընդ ամենայն էակսն գոյ անցեալ. քանզի իւրաքանչիւր ոք յէական կամ եզ է եւ կամ բազում:

1 Ընդ այսոսիկ հանդերձ աստուծով եւ առաջիկա

ՏԵՍՈՒԹԻՒՆՍ ԼԳ

2 «Եւ Բանակիցն՝ է ինչ որ տարրոշ է եւ է ինչ որ շարունակ».

3 Երրորդ գլուխ էր առաջադրեցելոցն ի խնդրել, եթէ այսոցիկ միայն է սեռ՝ թէ եւ միտի՝ որպէս ասէ Պլատոն: 4 Եւ ասեմք, եթէ ոչ կարէ մէտ երրորդ տեսակ գոլ քանակի, վասն զի մէտ կիր է շարունակ քանակի. քանզի ամենայն մարմին կամ թեթեւ է կամ ծանր. քանզի որպէս ջերմութիւն գոյեղուտ որակութիւն է ի հրում, եւ դարութիւն եւ կոճատութիւն որակութիւնք են քանակուտք ի թուում՝ նոյնպէս եւ թեթեւութիւն եւ ծանրութիւն

որակութիւնք են քանակուտք ի մարմնում. քանզի ամենայն, որպէս ասացաք, կամ թեթեւ է կամ ծանր է: 5 Եւ այլազգ զայս ցուցանել, եթէ ոչ են տեսակք քանակի թեթեւութիւն եւ ծանրութիւն, այլ կիրք, վասն զի տարրորոշիցեալն այն ինչ յաստուածայինսն եւ յաննիւթսն եւ յիմանալիսն տեսանի, յորս ոչ է մէտ: 6 Արդ՝ առաջին տեսակ քանակի տարրորոշիցեալն, իսկ երկրորդն սորին հակակայն ոչ տարրորոշիցեալն, որ է շարունակ, այսինքն՝ գիծ, մակերեւութիւն, մարմին: 7 Եւ ոչ ոք ի սոցանէ է թեթեւ կամ ծանր՝ ոչ գիծ, ոչ մակերեւութիւն եւ ոչ ուսումնական մարմին եւ ոչ անորակ մարմին, այլ որակիցեալն միայն: 8 Եւ պարզաբար ասել՝ եթէ կիրք եւ ոչ քանակք մէտք:

9 Չորրորդ գլուխ էր, յորում խնդրէաք՝ եթէ զի՞նչ է շարունակն եւ զի՞նչ տարրորոշիցեալն, եւ եթէ ողջաբար ունին ենթազրուութիւնք սոցին՝ ըստ կարգին ասել արժան է: 10 Արդ՝ շարունակ է, որոյ մասնկուտք առ միմեանց սահման շարամերձին. որզոն՝ գծին մասնկուտք առ մի ոմն հասարակ սահման շարամերձին, այսինքն՝ նշան. քանզի եթէ բաժանես գգիծն ի քանիս եւ կամիցիս հատածս՝ մասնկուտք նորին ըստ նշանին շարամերձին ի միմեանս: 11 Բայց պարտ է զմասնկուտքն շարունակին զաւրութեամբ առնուլ եւ ոչ ներգործութեամբ. ապա եթէ ներգործութեամբ առնումք զնոսա՝ առնեմք զշարունակն տարրորոշիցեալ, եւ ապականացու եղիցի սահման սահմանելոյն, որով եւ զերկնայինսն՝ շարունակ եղեալս եւ անկիրս՝ առնեմք ապականացուս եւ բաժանելիս: 12 Եւ ոչ միայն զմասնկուտքն շարունակին զաւրութեամբ առնլի է, այլ եւ զըստիքսն, այսինքն՝ զնշանսն, զաւրութեամբ արժան է առնուլ եւ ոչ ներգործութեամբ. զի եթէ ներգործութեամբ առնումք, որպէս յառաջագոյն ասացաք, տարրորոշիցեալ առնեմք զշարունակն. քանզի

եզերք գծիցն նշանք, ապա եւ մասանցն գծիցն գիծք. քանզի եւ սոքա գիծք: 13 Արդ՝ այսպէս ասացի յաղագս շարունակի: 14 Իսկ տարրորոշիցեալ, որոյ մասնկուտք ոչ շարամերձին առ մի ոմն հասարակ սահման. քանզի մասնկուտք հընգի կամ երից ոչ շարամերձին առ մի հասարակ սահման: 15 Բայց արժան է եւ աստանաւր զմասնկուտքն ներգործութեամբ առնուլ եւ ոչ զաւրութեամբ, զի եթէ զաւրութեամբ առնումք զմասնկուտքն՝ շարունակ առնեմք զտարրորոշիցեալն, եւ եղիցի սահման սահմանելոյն ապականացուս:

16 Հինգերորդ արժան է խնդրել, եթէ ողջաբար՞ ունի բաժանումն տարրորոշիցելոյն. քանզի բաժանի տարրորոշիցեալն ի թիւ եւ ի բան. երկաքանչիւր ոք ի սոցանէ տարրորոշիցեալ է. թիւ՝ ի հարկէ. քանզի թէ էր շարունակ՝ արժան էր գոլ հասարակ ինչ միակ, որ երբեմն ընդ միումն առեալ լինիւր եւ երբեմն ընդ միւսումն. որզոն՝ որպէս ի վերայ մասանց ինանն արժան էր գոլ միակ, որպէս միջակ ինչ՝ որ ընդ վեցին առնլով՝ եւթն առնէր զնա, եւ ընդ երիցն առնլով՝ չորս առնէր զնա, եւ գտանիւր ինն տասն եւ տասն մետասան, որ է անտեղի. քանզի ոչ եթէ որպէս ի վերայ նշանի եւ աստ նոյն համեմատութիւն պահի. քանզի նշան առադրեալ ոչ աճեցուցանէ եւ ոչ ի բաց բարձեալ պականեցուցանէ, իսկ միակն առադրեալ աճեցուցանէ եւ ի բաց բարձեալ պականեցուցանէ զքանակն, այսինքն՝ զթիւն: 17 Բայց եւ բան տարրորոշիցեալ է, վասն զի ընդ մէջ ամենայն երկուց փաղառութեանց լուութիւն է, որպէս ի Դաւիթ¹ անունն. քանզի ի «դաւ» փաղառութեանն այլ արտաձայնութիւն է եւ ի «յիթ» փաղառութեանն այլ արտա-

1 Յուս. փլոս

ձայնութիւն¹: 18 Արդ՝ դադարումն արտա-
 ձայնութեան առաջին փաղառութեանն
 լռութիւն նորին է, եւ յայնժամ սկիզբն
 առնէ արտաձայնիլ երկրորդ փաղառու-
 թիւն: 19 Եւ զայն պարտ է իմանալ լռու-
 թիւն ընդ մէջ փաղառութեանցն զաննմա-
 նաբար արտաձայնութիւնս՝ որ ի ձեռն բա-
 դաձայնիցն աննմանութեան. քանզի եւ
 ընդ մէջ երկուց ներհակաց շարժմանց է
 դադարումն, որպէս եւ յերակսն ցուցանի:
 20 Իսկ եթէ ոչ է բաղաձայն ընդ մէջ, որ-
 պէս «աւանդ», այլ սակայն եթէ ոք կամի-
 ցի առնել երկուս փաղառութիւնս եւ եր-
 կուս արտաձայնութիւնս՝ հարկ է լռութիւն
 առնել ի միջումն, որ բաժանէ զնոսա ընդ
 մէջ նոցին. քանզի ոչ երբեք խնդրէին
 քերդողք ի վերայ բաղաձայնիցն՝ որ ի մի-
 ջում բանին, եթէ ո՛յք ի նոցանէ սկզբնա-
 կանք են եւ ո՛յք յանգականք, այլ նմանա-
 բար ամենայնն սկզբնականք եւ յանգա-
 կանք էին:

21 Վեցերորդ գլուխ էր, եթէ ողջա-
 բա՞ր ունի բաժանումն շարունակին. քան-
 զի բաժանի ի հինգ՝ ի գիծ, ի մակերեւու-
 թիւն, ի մարմին, ի տեղի, ի ժամանակ.
 քանզի ասեն ոմանք, եթէ անկատար է բա-
 ժանումնդ եւ աւելորդ ըստ այլ եւ այլ ի-
 րաց. քանզի զշարժումն ոչ յիշեաց՝ որ է
 քանակ, իսկ զմակերեւութիւն երկիցս յի-
 շեաց՝ յանուանէ եւ ի ձեռն տեղոյ: 22 Առ
 որս ասեմք, եթէ վասն այսորիկ եթող
 զշարժումն որպէս անկատար. քանզի միշտ
 յինչ հայի շարժումն, իսկ ստորոգութիւնք
 ի լինիլն ունին զգոլն եւ կատարեալք են
 ստորոգութիւնք, եւ ի հոմանունցն է շար-
 ժումն. քանզի ի գոյացութեան է շարժումն
 եւ ի քանակումն եւ յորակումն, եւ ի գո-
 յացութեան՝ որպէս լինելութիւն եւ ապա-
 կանութիւն, իսկ ի քանակումն՝ որպէս ա-

ծելութիւն եւ թառամութիւն, իսկ յորա-
 կումն՝ որպէս այլայլութիւն ըստ ջերմու-
 թեան եւ ըստ ցրտութեան եւ ըստ այլոց ո-
 րակութեանց, է եւ ըստ տեղոյ շարժումն:
 23 Վասն զի ի հոմանունցն է շարժումն եւ
 ի զանազանս վերաբերի ստորոգութիւնս՝
 եւ յիրաւի ոչ յիշեաց այժմ եւ ոչ ասաց
 զնմանէ, եթէ քանակի է: 24 Բայց յետ ա-
 ւանդութեան ստորոգութեանց բուռն հար-
 կանէ զնմանէ: 25 Բայց որոշեաց զտեղի ի
 մակերեւութեանէ, վասն զի տակաւին եւ ոչ
 է ցուցեալ, եթէ մակերեւութիւն տեղի է,
 զոր ցուցանէ ի Բնականումն². քանզի
 Պղատոն եւ որք ի նմանէն՝ մարմին ասէին
 գոլ զտեղի՝ եռակի տարակացեալ:

1 Ընդ այսոսիկ հանդերձ աստուծով եւ
 առաջիկա պրակիս

ՊՐԱԿՔ ԼԴ

2 «Եւ Բանակիմ՝ է ինչ որ տարորոշ է».

3 Բաժանեալ Արիստոտէլի զքանակն ի
 տարորոշեալն եւ ի շարունակն, եւ զտարո-
 րոշեալն՝ ի թիւ եւ ի բան, եւ զշարունակն՝
 ի հինգ՝ ի գիծ, ի մակերեւութիւն, ի մար-
 մին, ի տեղի, ի ժամանակ, որպէս զի լինել
 զամենայն տեսակս քանակի եւթն, երկու
 տարորոշիցելոյն եւ հինգ շարունակին. եւ
 զի երկու տարորոշիցելոյն են եւ հինգ շա-
 րունակին՝ հաւատարմանայ ի սահմանէ
 երկաքանչիւրոցն: 4 Եւ պարտ է ի վերայ
 թուոյ եւ բանի ցուցանել, եթէ քանակ են
 եւ տարորոշիցեալ: 5 Արդ՝ ի վերայ թուոյ
 խոստովանաբար առեալ՝ եթէ քանակ է,
 վասն զի ամենայն ոք սովորաբար՝ որք
 միանգամ կամին գիտել զթիւ մարդկան եւ
 ձիոց՝ հարցանէ, եթէ քանի են. որպէս զի
 թուոյ ոչ այլ ինչ ելոյ այլ քանակ: 6 Իսկ
 զմիւսն եւս նիւթէ՝ եթէ տարորոշիցեալ.
 քանզի եթէ էր, ասէ, թիւ շարունակ՝ ար-
 ժան էր հասարակ ինչ միակ գոլ. որզոն՝

1 Յուև. εν γάρ τῷ φίλος τῆς φι συλλαβῆς ἢ
 ἐκφώνησις ἄλλη ἐστὶ παρὰ τὴν los ἐκφώνησις τῆς
 συλλαβῆς

2 Ի բնաբանումն, յուև. εν τῇ φυσικῇ

որպէս ի վերայ մասանց ինանն՝ վեցին եւ երիցն, որ ընդ վեցին առնլով՝ եւթն առնէր զնա, եւ ընդ երիցն՝ չորս, եւ լինէր ինն տասն եւ տասն մետասան, եւ այս յանբաւս. քանզի ոչ եթէ, որպէս ի վերայ նշանի՝ զնոյն եւ աստ ոք ունի ասել. քանզի նշանն անմասն գոլով, մասնաւորում առադրելով, այսինքն՝ գրծի՝ ոչ աճեցուցանէ զնա եւ ոչ ի բաց բառնալով՝ նուազեցուցանէ. եւ գիծ անլայն գոլով, լայնութեան առադրելով, լայնութիւն ոչ առնէ. եւ մակերեւութիւն խորութիւն ոչ ունելով, առադրելով խորութեան՝ խորութիւն ոչ առնէ: 7 Եւ այսոքիկ այսպէս: 8 Դարձեալ վասն բանի պարտ է ցուցանել, եթէ քանակ է եւ տարրորոշեալ, որպէս խոստովանաբար առնու, եթէ տարրորոշեալ է բան՝ վասն զի ամենայն երկուց փաղառութեանց ընդ մէջ է լուութիւն, որպէս յառաջագոյն ասացաւ. եւ զի քանակ է բան՝ ցուցանէ ասելով, եթէ քանակ է բան, վասն զի չափի երկայնիւ եւ սղիւ փաղառութեամբ. իսկ չափիլն քանակի է, ապա ուրեմն՝ բանն քանակ է: 9 Վասն որոյ տարակուսեն, եթէ շատ էր ասելն սղիւ փաղառութեամբ, զի սուղն եւ զինքն չափէ եւ զերկարն: 10 Առ որ ասեմք, եթէ ոչ միշտ սուղ փաղառութիւն չափէ զերկարն. քանզի երկարն առ ի յերաժշտականացն չորից ամանականաց է, զոր եւ գիսիմոն կոչեն, որ է կրկնակ չափականացն երկարաց. եւ սուղ լինի առ ի յերաժշտականացն երից ամանականաց, որպէս երեքպատիկ գոլով քան զչափականացն սուղն. իսկ այսչափ սուղ զայսպիսի երկար ոչ չափէ. քանզի եւ ոչ երեք զչորս երեքք չափեն, վասն զի ոչ են նորա մասունք. զի չափական մասն թուոյ մասն պարտի գոլ ի նորա. ապա եթէ ոչ՝ ասի չափել զնա ըստ թուականացն. քանզի թուականք մասն ասեն թուոյ գոլ ոչ զվայրապարն, այլ զայն՝ որ կատարելապէս զնա չափէ՝ որպէս կէս եւ երրեակ եւ նմանք նոցին: 11 Վասն զի եւ եզաբար ա-

սի մասն եւ ոչ մասունք: 12 Եւ վասն այնորիկ մասն ասի, վասն զի ի բազմապատկութեան ծնանի զթիւն աւարտաբար, որպէս զի ոչինչ պակասել եւ առաւելուլ, որպէս երիցս երկու վեց. քանզի աւարտեալ է բացալնուլ եւ կատարել, որպէս ոչինչ պակասել եւ առաւելուլ. քանզի աւարտէ կատարումն անաւելորդն եւ անպակասն ի նախնեացն: 13 Այլ եւ ոչ ի չափականաց: 14 Եւ այսոքիկ յաղագս տարրորոշիցելոյն:

15 Իսկ զչարունակն բաժանէ ի հինգ, որպէս յառաջ ասացաք: 16 Եւ զի իւրաքանչիւր ոք ի նոցանէ շարունակ՝ ցուցանէ յենթադրութեանցն. գիծ շարունակ է, վասն զի մասնկունք նորա առ մի հասարակ սահման շարամերձին՝ առ նշանն. մակերեւութիւն շարունակ է, զի մասնկունք նորա առ մի հասարակ սահման շարամերձին՝ առ գիծն. մարմին շարունակ է, զի մասնկունք նորա առ մի հասարակ սահման շարամերձին՝ առ մի հասարակ սահման շարամերձին՝ առ այժմն. քանզի այժմն անմասն գոլով շարամերձէ զանցեալն եւ զապառնին. քանզի որպէս նշանն ի գծում՝ նոյն աւրինակի թիւս միակն եւ ի ժամանակում այժմն. քանզի անմասունք են երեքդ՝ թիւ, նշան, այժմ: 17 Բայց զանազանին նշան եւ այժմն ի միակէն, վասն զի միակն առադրեալ թուում՝ աճեցուցանէ, եւ ի բաց բառնալով պակասեցուցանէ, իսկ նշան առադրելով՝ ոչ մեծացուցանէ, եւ ի բաց բառնալովն՝ ոչ փոքր կացուցանէ: 18 Նոյնպէս եւ այժմն անմասն գոլով առադրելով ժամանակում՝ ոչ աճեցուցանէ զնա, եւ ոչ բառնալով՝ պակասեցուցանէ: 19 Նմանապէս եւ տեղի շարունակ է. քանզի եթէ մարմին որ ի տեղուջ է՝ շարունակ է. ապա եւ տեղի շարունակ է. քանզի եթէ ոչ է շարունակ տեղի, իսկ այն որ ի տեղուջ է՝ շարունակ է՝ մասն ինչ նորա ոչ ի տեղուջ: 20 Եւ եթէ տեղին շարունակ է

եւ այն որ ի տեղոջ է՝ ոչ է շարունակ՝ գտցի մասն ինչ տեղոյ ոչ տեղի. որգոն՝ որպէս զի տեղի իմասցուք զսպիրոն, իսկ ի տեղոջ զգիրնին՝ որ ի նմա: 21 Արդ եթէ տեղին, այսինքն սպիրոն, ոչ է շարունակ, այլ որպէս մաղատեսակ ինչ՝ եղիցի մասն գիրնոյն, որ ի նմա է՝ ոչ ի տեղոջ. ապա ուրեմն պարտ է եւ գտեղին շարունակ գոլ:

22 «Եւ քանակին՝ է ինչ որ տարորոշ է եւ է ինչ որ շարունակ».

23 Նախադասէ գտարորոշն շարունակին. որգոն՝ զթիւ եւ զբան. քանզի աննիւթագոյն է թիւ քան զմիակ, որպէս կարող գոլով անշփոթաբար զանազան ձեւս ընդունել, որ է յատուկ աննիւթականի. քանզի նոյն իսկ թիւ կարող գոյ բոլորակ միանգամայն եւ քառանկիւնի գոլ: 24 Եւ բոլորակ է, որ ի նոյնէն սկիզբն առնէ եւ ի նոյնն յանգի զաւրէն բոլորակի՝ որպէս երեսուն եւ վեցն, քանզի վեցիցս վեց երեսուն եւ վեց՝ ի վեցէն սկիզբն արար եւ ի վեցն յանգեաւ, որպէս՝ եւ քսան եւ հինգն. քանզի հնգիցս հինգ՝ քսան եւ հինգ: 25 Իսկ քառանկիւնի է, որ ի թուոյ զինքն բազմապատկեցուցեալ եղեւ՝ որպէս ինն՝ երիցս երեք՝ ինն: 26 Յառաջեալ ի միակէն իսկ միակն բոլորակաբար՝ այն ինչ բոլորակաբար փոխաձեւացեալ այլ տեսակ ոչ ընդունի, եթէ ոչ նախ առաջին տեսակն ապականի:

27 «Եւ առ այսոքիւք եւս ամանակ եւ տեղի».

28 Վասն է՞ր՝ որպէս զգիծն եւ զմակերեւութիւն եւ զմարմին՝ ըստ շարունակութեան թուեաց՝ ոչ նոյնպէս գտեղի եւ գծամանակ ըստ կարգի նոցա, այլ հակորոշեաց: 29 Եւ ասեմք երկուս պատճառս. մի զայս՝ եթէ գիծ եւ մակերեւութիւն եւ մարմին ի միում տեսանին. քանզի գիծ եւ մակերեւութիւն ի մեր մարմնում, իսկ տեղի եւ ժամանակ ոչ ի մեզ, այլ արտաքոյ եւ շուրջ զմեզ: 30 Եւ կամ այլազգ ասեմք,

եթէ գերիսն զայն երկրաչափութեան է գիտել, իսկ գտեղի եւ գծամանակ՝ բնաբանութեան. քանզի բնաբանութիւն յաղագս շարժման յարդարի, զի բնութիւն սկիզբն է շարժման եւ դադարման, իսկ երկրաչափութիւն յաղագս անշարժ եւ շարունակ քանակի յարդարի: 31 Եւս եւ աստեղաբաշխութիւն. քանզի աստեղաբաշխութիւն գտեղի գտեալ՝ գծամանակ ինդրէ. որգոն՝ յառիժոնն երբ եղիցի արեգակն: 32 Իսկ երբն ժամանակ գտեալ բնական՝ տեղի ինդրէ. որգոն՝ յետ տասն աւուր եղիցի արեգակն:

33 «Եւ ասեմ գնոյն իմքն որ ձայնիւն բանն լինի».

34 Բան զանազան իրս նշանակէ. քանզի բան ասի եւ ներտրամակացն՝ ըստ որում եւ զհրեշտակս բանականս ասեմք եւ զառաջաբերականն, յաղագս որոյ եւ մեր բանս է: 35 Նշանակէ եւ զճառականն. որգոն՝ զճարտասանականն եւ զբժշկականն: 36 Ասի բան եւ կալումն միակացն, որպէս յորժամ ասեմք, եթէ զոր բան այս ինչ միակ ունի առ այս՝ զնոյն բան ունի եւ այս ինչ միակ առ այս. այլ եւ զպատճառանն՝ ըստ որում եւ Պղատոն ասէ, եթէ «արհեստ ոչ զանբան իրն», այսինքն՝ զանպատճառն: 37 Արդ՝ վասն այսորիկ ասաց եթէ ասեմ որ ձայնիւն բանն լինի, այսինքն՝ զարտաձայնիցեալն առ հակորոշումն այլոցն բանից, որպէս զի ցուցցէ, եթէ այս բան որ ձայնիւս լինի՝ ի տարորոշեալ քանակն վերաբերի, եւ ոչ այլքն, այսինքն՝ ներտրամադրականն եւ կալումն եւ պատճառն: 38 Եւ տարակուսեն ոմանք ասելով, եթէ զի՞րդ ասէ Արիստոտէլ զբանն, որ ձայնիւ է՝ քանակին գոլ. քանզի տրամախոհութեան է նշանակիչ, եւ վասն այնորիկ շարադիր է՝ որպէս յանուանէ եւ ի բայէ բաղկացեալ, իսկ ի Ստորոգութիւնսն՝ ոչ եթէ յաղագս շարադիրիցելոց ձայնից է բան Արիստոտէլի, այլ յաղագս

պարզ ձայնիցն. քանզի ինքն իսկ Արիստոտել է՝ որ ասէ, եթէ այնց՝ որք ոչ ըստ միում շարամանութեան ասին՝ կամ գոյացութիւն նշանակէ, կամ որակ, կամ քանակ, եւ որ ի կարգին է: 39 Արդ՝ զիա՞րդ ասէ՝ եթէ բան քանակին է. քանզի շարադրէ ըստ շարամանութեան անուանց եւ բայից: 40 Եւ ասեմք, եթէ աստ յիշեաց զբան՝ ոչ որպէս շարադրիցեալ, այլ որպէս տարորոշ եւ որպէս բաղկացեալ ի փաղառութեանց, որպէս եւ ինք իսկ յա՛յտ արար Արիստոտել ասելով, եթէ չափի ըստ երկար եւ սուղ փաղառութեանց՝ որ ձայնիւ բանն է՝ ցուցանէ զնա տարորոշ քանակին: 41 Եւ յայտ է՝ եթէ բան աստանաւր զմի անունն ասէ եւ զմի բայ, եւ պարզաբար զմի բառն, եւ զանշարադրական ձայնն. քանզի եւ այսոքիկ չափին երկար եւ սուղ փաղառութեամբ: 42 Իսկ ներում Յաղագս մեկնութեան բան առնու զշարադրիցեալն եւ զնշանականն. քանզի սահմանելով ասէ, եթէ բան է ձայն նշանական, որոյ մասանցն իմն նշանակ է գատ...

43 «Որգոն՝ հինգն եթէ եմ տասանցն մասունք՝ առ ոչ մի հասարակ սահման շարամերձին».

44 Եւ յիրաւի ստորադրաբար զբանս յառաջ էած հինգ, եթէ ասելով տասնին մասն, վասն զի հինգ ոչ միայն տասանց է մասն, այլ եւ տասին եւ քսանի եւ այլոց բազմաց, եւ զի ոչ է սահմանեալ տասին հինգն. քանզի կարողութիւն է տասին մասն գոլ՝ միոյ եւ ինան, երկուց եւ ութի, երից եւ եթան, վեցի եւ չորից, հնգի եւ հնգի:

45 «Քանզի մակարդակին մասնկումն առ ոմն հասարակ սահման շարամերձին».

46 Առ ի հնոցն նոյն կարծիւր գոլ մակարդակ եւ մակերեւութիւն. քանզի ի միոյ իրի վերայ առնուին՝ զմակերեւութեանն անունն եւ զմակարդակին: 47 Իսկ առ ի

նորագունիցս որոշեալ է մակերեւութիւն եւ մակարդակն. քանզի մակարդակ զհարթ մակերեւութիւնն կոչէ, որ հանգէտ իւրովք ուղղականաւքն գատ եղեալ եւ որոյ մէջն ծայրիցն առաջակայանայ ամենեցուն՝ որք զնոյն գերսունսն (°) կորընթեաց եւ կամ խորոփեաց: 48 Արդ՝ ի նորագունիցս հասարակ ինչ է մակերեւութիւն, որ բերի եւ ըստ հարթ մակերեւութեան, որ է մակարդակ, եւ ըստ խորոփիոյն եւ ըստ կորընթոյն:

49 «Նմանապէս եւ ի վերայ մարմնոյ մարթի առնուլ հասարակ սահման գմակերեւութիւն, առ որ մարմնոյն մասնկումն շարամերձին».

50 Քանզի մարմնոյ մասունք շարամերձին առ հասարակ սահման՝ մակերեւութիւն, եւ ի ձեռն նորա առ գիծ. քանզի մակերեւութիւն ըստ խորութեան բաժանելով զմարմին, իսկ գիծ ամենեւին անտարակաց գոլով, ըստ խորութեան մասանց մարմնոյն անտարակացաբար ըստ խորութեան շարամերձիլ առ միմեանս, եւ աստանաւր դարձեալ գաւրութեամբ պարտ է առնուլ զբաժանումն՝ որ ըստ մակերեւութեանն լսի, որպէս զի պահեսցի մարմինն շարունակ: 51 Եւ ի ձեռն մակերեւութեան առ գիծն շարամերձին մասնկումնք մարմնոյն. քանզի ըստ երկրաչափաց ծայր մակերեւութեան, եւ պարտ է նմա՝ որ բաժանէն զմարմին՝ ըստ մակերեւութեան սկիզբն առնել ի գծէն եւ զնա որպէս ծայր ցուցանել եւ մակերեւութիւն առնել եւ նովաւ բարձանել զմարմինն: 52 Արդ՝ վասն զի ըստ բոլորին ինքեան մակերեւութիւն հատանէ զմարմին՝ հարկ է եւ ըստ եզերն իւրում, այսինքն՝ ըստ գծին, շարամերձեալ զծայրս մարմնոյն:

53 «Բայց է եւ ամանակ եւ տեղի յայսպիսեացս».

54 Եւ զի շարունակ քանակ է եւ տեղի եւ ժամանակ՝ այժմ ցուցանէ. քանզի եւ

սոցա մասնկուռնքն առ ոմն հասարակ սահման շարամերձին. քանզի զժամանակին մասնկուռնս արդեանն անտարակաց գոլով՝ ամենեւին շարամերձէ ինքեամբ՝ զանցեալն եւ զապառնին, իսկ զտեղւոյ մասնկուռնս շարամերձէ գիծն, վասն զի մակերեւութիւն կարծի գոլ տեղի, իսկ մակերեւութեան մասնկուռնք ըստ գծին շարամերձին:

55 «Քանզի յեղանակաւ իմն զմարմնոյն մասնկուռնս ունի տեղի, որք առ ոմն հասարակ սահման շարամերձին. ապա եւ տեղւոյ մասնկուռնս, որք ունին զիրաւանչիւր ոք ի մասանց մարմնոյն՝ առ նոյն սահման շարամերձին, առ որ մարմնոյն մասնկուռնս».

56 Եւ զի տեղւոյն մասնկուռնք՝ որպէս շարունակի՝ առ ոմն հասարակ սահման շարամերձի՝ նիւթէ յայնմանէ որ ի տեղւոյ. քանզի եթէ տեղի եզերէ այնմ որ ի տեղւոյ է, իսկ նորա մասնկուռնք որ ի տեղւոյ է՝ առ ոմն հասարակ սահման շարամերձին՝ հարկ է եւ ի տեղւոյն մասնկաց ունել հասարակ ինչ սահման՝ առ որ շարամերձին. քանզի եթէ այս որ ի տեղւոյ է՝ շարունակ է, իսկ տեղի ոչ, այլ տրամաւցտեալ, հանդիպեսցի մասն ինչ այնորիկ՝ որ ի տեղւոյն ոչ գոլ ի տեղւոյ: 57 Արդ՝ եթէ իւրաքանչիւր ոք, ասէ, ի մարմնոյն մասնկաց զոմն տեղի ունի, եւ այս մասնկուռնք առ ոմն հասարակ սահման շարամերձին՝ հարկ է եւ մասնկաց տեղւոյն, որք ունին զայն որ ի տեղւոյն է, առ ոմն սահման շարամերձիլ. ապա ուրեմն՝ շարունակ եղիցի եւ տեղի, վասն զի առ մի ոմն հասարակ սահման մասնկուռնք նորա շարամերձին. քանզի շարունակացն հասարակ սահման է՝ մասնկաց նոցա առ ոմն հասարակ սահման շարամերձիլ, եւ պատկանեցաւ այս սահման տեղւոյմ. ապա ուրեմն՝ եւ տեղի շարունակ է:

1 Ընդ այսոսիկ հանդերձ աստուծով եւ առաջիկա պրակֆս

ՊՐԱԿՔ ԼԵ

2 «Եւ եւս դարձեալ արտադիր ունակս լայն».

3 Վաղ ուրեմն բաժանեալ Արիստոտելի զքանակն ի տարրոշն եւ ի շարունակն, եւ զշարունակն ի հինգ՝ ի գիծ, ի մակերեւութիւն, ի մարմին, ի տեղի, ի յամանակ, իսկ զտարրոշն յերկուս՝ ի թիւ, ի բան՝ այժմ վերստին բաժանէ զքանակն ի դրելին եւ յանդրելին, եւ զդրելին՝ ի գիծ, ի մակերեւութիւն, ի մարմին, ի տեղի, եւ ոչ երբեք ուրեք ի բաց եբարձ ի շարունակացն զժամանակ, իսկ զանդրելին յերիս՝ ի թիւ, ի բան եւ ի ժամանակ. քանզի առձաւնէ տարրոշումն զժամանակ: 4 Բայց արժան է խնդրել զանդրաբարձութիւն ժամանակի պատճառ վերստին բաժանման քանակի: 5 Եւ ասելի է, եթէ երկուց ելոց ծայրից ներհակաց միմեանց, այսինքն՝ տարրոշին եւ շարունակին, որպէս եւ առասպելարկուքն ասեն բոլորովիմբ եւ ամենեւիմբ զանազանիլ զյոյժ տարակացեալսն, այսինքն՝ ներհական տեսակաւք քանակին զբոլորովինն ի վերայ շարունակին դասելով, իսկ զամենայնն ի վերայ տարրոշին, եւ Պղատոնի զամենայն ներհակն միջաւորս ասելով գոլ, որպէս զի զյաւէտն եւ զնուազն ընկալցին՝ պարտ է եւ տարրոշին եւ շարունակին միջակ ինչ գոլ, եւ միջակ տարրոշին եւ շարունակին զժամանակ. քանզի որպէս շարժումն ինչ գոլով՝ շարունակ է ժամանակ, քանզի ամենայն շարժումն շարունակ է, իսկ որպէս թուիցեալ շարժումն՝ որ եւ դարձեալ թուիլովն տարրոշ է ժամանակ: 6 Բայց երիւք ոմամբք կերպարանէ զդրելին Արիստոտէլ զբոլորն միանգամայն ստորակայելովն եւ ընդ ցուցմամբ ստորանկանիլովն եւ ընդունելովն զվեց դրական մակբայսն: 7 Արդ՝ ցուցցուք զերեսեան ի վերայ իւ-

րաքանչիւրոյ տեսակի շարունակացն՝ գիծ, բոլորն, միանգամայն ստորակայիցաւ թզական կամ առաւել կամ պակաս, նմանապէս եւ մակերեւութիւն եւ մարմին: 8 Այլ եւ զվեց դրական մակբայսն ընդունի գիծ. քանզի ասել՝ ունիմք եթէ գիծս ոմն առաջոյ եւ ոմն վերջոյ, ոմն յաջմէ եւ ոմն յահեկէ, ոմն վերին, ոմն ներքին, նմանապէս եւ ի վերայ մակերեւութեան եւ ի վերայ մարմնոյ ասեմք: 9 Իսկ անդրելի քանակ բոլորն միանգամայն ոչ ստորակայի եւ ոչ ընդ ցուցմամբ ստորանկանի եւ ոչ զվեց դրական մակբայսն ընդունի. քանզի ահա ժամանակ բոլորն միանգամայն ոչ ստորակայի. քանզի պարտ է ապականիլ այսմ աւուր եւ լինիլ վաղուին: 10 Եւ ոչ բան միանգամայն բոլորն ստորակայի. քանզի է ինչ որ ասացաւ եւ ոչ է, եւ է ինչ որ հանդերձեալ է ասիլ: 11 Նմանապէս եւ ի վերայ թուոյն՝ որ թուեն. քանզի այս թիւ որ թուիս՝ կամ ի կարծիս է կամ յառաջաբանութեան է ինչ նորա որ ասացեալ է եւ ոչ է ինչ որ լինի: 12 Այլ եւ ոչ ընդ ցուցմամբ անգանի. քանզի եթէ ոչ ինչ մնայ, այլ անցանէ՝ զիա՞րդ մատամբ ցուցանի: 13 Այլ եւ ոչ զվեց դրական մակբայսն ընդունի ոք յերիցն. քանզի զիա՞րդ՝ որ ամենեւիմբ ոչն է՝ կամ ի վեր է կամ ի վայր: 14 Բայց կարգաւորութիւն իմն ընդունին տեսակք տարրոշին. քանզի բանին նախագոյն է նախերգանն քան զպատմութիւնն, նոյնպէս եւ ի վերայ թուոյ՝ մինն քան զերկուսն յառաջագոյն է: 15 Վասն որոյ տարակուսեն, եթէ ընդէ՞ր ոչ բաժանեաց զքանակն ի կարգաւորեալն եւ յանկարգն: 16 Եւ ասեմք՝ եթէ կարգաւորութիւն ընդ բոլոր տեսակս քանակին էանց՝ շարունակին եւ տարրոշիցելոյն. քանզի ի վերայ ամենեցուն պատկանի ասել առաջին: 17 Արդ՝ եթէ կարգաւորութիւն է յամենեսին, զիա՞րդ որ զկարգաւորութիւնն ունէր՝ ի կարգաւորեալ եւ

յանկարգ բաժանիւր: 18 Եւ այսորիկ այսպէս:

19 Բայց մակաբաժանէ զքանակն եւ այլազգ ասելով, եթէ քանակին ոմն տիրաբար քանակ է եւ ոմն երեւաբար. եւ տիրաբար քանակ է ոչ մեծն եւ փոքրն եւ կամ շատն եւ սակաւն՝ որ անմիջաբար ստորագին. քանզի մեծն եւ փոքրն ի վերայ ամենայն շարունակացն ասի. քանզի մեծ գիծ ասեմք եւ փոքր մակերեւութիւն եւ տեղի եւ մարմին ասելով տիրապէս. իսկ շատն եւ սակաւն ի վերայ բանին եւ թուոյ եւ ժամանակի տիրապէս ասի: 20 Արդ՝ այսոքիկ տիրապէս քանակք: 21 Իսկ ոչ տիրապէս այնոքիկ, որոյ մեծն եւ փոքրն եւ շատն եւ սակաւն ոչ անմիջաբար, այլ ընդ մէջ միոյ ուրուք տեսակացն քանակի ստորագի. որդոն՝ շատ ասեմք սպիտակութիւն ընդ մէջ մակերեւութեան. քանզի շատ սպիտակն է ոչ վասն ինքեան, այլ վասն մակերեւութեան. քանզի զմակերեւութիւն սպիտակին եթէ որպէս սպիտակի կամեսցուք նշանակել՝ ոչ ասեմք շատ սպիտակ էր, այլ սպիտակ սպիտակ եւ կամ սպիտակագոյն: 22 Եւ զՏրովական պատերազմն մեծ ասեմք ոչ վասն ընքեան, այլ վասն ժամանակի պատերազմին. եւ զգործսն երկար ասեմք վասն ժամանակին եւ ոչ վասն ընքեան՝ կամ առաւրէ կամ ամսաւրեայ կամ տարեւորական:

23 «Եւ այսպէս դաս ինչ կայցցի, այլ դիր ոչ կարի քաջ գտցես առնուլ».

24 Եւ վասն զի իմացաւ Արիստոտէլ, եթէ ի վերայ բնաւորական թուոյ որք թուինն, այսինքն՝ ձիք տասն, կամարք տասն, յորոց վերայ կարողութիւն է դրութիւն առնուլ եւ ցուցանել՝ եթէ ուր կան՝ վասն այսորիկ նահանջեաց զառաջին ասացեալն, եթէ ոչ գիր ինչ քաջ գտցես առնուլ:

1 Յորս հանդերձ աստուծով առաջիկա
պրակֆս

ԼԶ ՊՐԱԿԳ

2 «Եւ այլ եւս Բանակին ոչինչ է ներհա-
կան».

3 Յետ երկից բաժանմանց քանակին՝ ի
տարորոշն եւ ի շարունակն, ի դրելին եւ
յանդրելին, ի տիրաբար քանակն եւ յերե-
ւաբար՝ փոխարկէ զբանն ի յատուկս քա-
նակին: 4 Եւ ահա այն ինչ վերագոյն մի
յատուկ քանակի աւանդեաց մեզ ի չա-
փելն, յորժամ ասէր եթէ բան չափի երկար
եւ սուղ փաղառութեամբ եւ վասն այնո-
րիկ քանակ ցուցանիւր բան որպէս զի ա-
մենայն քանակի չափիցելոյ: 5 Եւ զի զայս
զմի յատուկս բացատրեաց մեզ՝ յայտ ա-
րար եւ վասն ասելոյն «եւ այլ եւս քանա-
կին ոչինչ է ներհական», որպէս զի ըստ
լուսեցելոյ միոյ մեզ յատկին աւանդիցելոյ:
6 Այլ ունիմք, ասեն ոմանք, եւ զերկրորդ
յատուկն աւանդեալ վերագոյն ի ներուժ
յաղագս գոյացութեան բանումն, յորժամ
ասէր թէ յատուկ գոյացութեանն ոչ ու-
նիլն ներհական. բայց այս ամենայնում
գոյացութեան է, ոչ միայնում. քանզի եւ
քանակի է: 7 Եւ ասեմք՝ եթէ եւ յերկբայս
էր անդ՝ եթէ ոչինչ է քանակումն ներհա-
կան, ասելով «բայց եթէ ոք զմեծն փո-
քումն եւ զշատն սակաւուն ասասցեն ներ-
հական». այլ զայս յարաքարչէր ի ներուժ
Յաղագս գոյացութեան բանումն առ ի
խնդրել, իսկ այժմ առաջի իսկ կայ. քանզի
յաղագս քանակի է բանս: 8 Արդ՝ երկրորդ
յատուկ քանակի ոչինչ ունիլն ներհական,
եւ մի ոք ասասցէ զմեծն փոքուն եւ
զշատն սակաւուն. քանզի այսոքիկ ոչ
ներհականք: 9 Եւ զի ոչ են ներհականք
եւ ոչ քանակք, այլ առնչին՝ ցուցանէ
ըստ ներկացութեան եւ ըստ հակայարկա-
ցութեան: 10 Եւ ըստ ներկացութեան այս-
պէս՝ եթէ ոչ են քանակք, այլ առնչիցն
են. իսկ ըստ յարկացութեանն այսպէս՝ եթէ

ոչ են ներհականք, այլ առնչիցն՝ որպէս
գոլ հասարակ իջաւան ներկացութեան եւ
հակայարկացութեան զառինչսն. քանզի ե-
թէ ցուցանեմք՝ եթէ առնչք են՝ ապա ոչ
են քանակք, քանզի բաժանի քանակն յա-
ռնչիցն, եւ եթէ ցուցանեմք դարձեալ՝ ե-
թէ առնչիցն են՝ ապա ոչ են ներհականք.
քանզի քառակի հակակայիցն առիցելոց՝
որով հակաբաժանին ներհակքն յառն-
չիցն:

11 Եւ պարտ է գիտել եթէ երկուց
ձեռնարկութեանց պիտանանայ ներկացու-
թիւն, առաջնոյ՝ որ ասէ եթէ մեծն եւ
փոքրն, շատն եւ սակաւն առ այլ ասին,
իսկ քանակ ըստ ընքեան է. ապա ուրեմն՝
մեծն եւ փոքրն ոչ են քանակին: 12 Երկ-
րորդում ձեռնարկութեան՝ եթէ մեծն եւ
փոքրն, շատն եւ սակաւն անորոշք եւ.
քանզի մինչեւ զքանակին է մեծ, եւս քա-
նակին է փոքր՝ անյայտ է. իսկ քանակն
սահմանեալ է. քանզի քանիաւնութիւն
յայտ առնէ, վասն զի յորժամ կամիմք
զթիւ իրիք գիտել, հարցանեմք՝ եթէ քանի
են. ապա ուրեմն՝ մեծն եւ փոքրն, շատն եւ
սակաւն ոչ են քանակք: 13 Արդ՝ զայսո-
սիկ ներսաստութիւնն: 14 Իսկ հակայարա-
կացութիւն չորից պիտանանայ ձեռնար-
կութեանց, առաջնումն՝ եթէ մեծն եւ
փոքրն, շատն եւ սակաւն ինքեանք, որ
ինչ ենն՝ այլոց ասին գոլ, իսկ ներհա-
կանքն ոչ ասին առ այլ. որդոն՝ թուիսն ոչ
ասի սպիտակ ի թուիս, այլ ներհական. ա-
պա ուրեմն՝ մեծն եւ փոքրն ոչ են ներհա-
կանք: 15 Իսկ երկրորդում պիտանանայ
ձեռնարկութեան, որ ասէ՝ զի եթէ մեծն եւ
փոքրն ներհականք են՝ ի միասին եղիցին
ներհականքն նոյնումն կարող եղելում եւ
մեծ գոլ եւ փոքր առ այլ եւ առ այլ:
16 Իսկ երրորդում պիտանանայ ձեռնար-
կութեան, որ ասէ՝ եթէ մեծն եւ փոքրն,
շատն եւ սակաւն ներհականք են՝ եղիցի
ինքն ոք ինքեան ներհական. քանզի կա-
րող գոյ նոյն ինքն եւ մեծ գոլ եւ փոքր

ըստ նոյն ժամանակում առ այլ եւ առ այլ, որ է անտեղի: 17 Իսկ չորրորդում պիտանանայ զոր ոչ ասէ Արիստոտէլ, այլ եթէ մեծն եւ փոքրն, սակաւն եւ շատն ներհականք՝ ոչ երբեք ներհականքն ապականողք եղիցին միմեանց, այլ ապրեցուցանողք. շատ փոքունք մի մեծ առնեն եւ շատ սակաւք մի մեծ առնեն. իսկ ներհականքն միշտ ապականողք միմեանց գոն:

1 Ընդ այսոսիկ հանդերձ աստուծով եւ առաջիկայ պրակֆս

ՊՐԱԿՔ ԼԷ

2 «Մանաւանդ զի ներհակութիւն քանակիցն է»...

3 Ազատեալ Արիստոտէլի գրանակն ի ներհակութենէ՝ մեծի եւ փոքու, շատի եւ սակաւու, որք քանակ թուին գոլ եւ ներհականք՝ ըստ ճշմարտութեան ցուցեալ ոչ քանակ գոլ եւ ոչ ներհական ի ձեռն սաստուլթեան եւ հակայարաստութեան՝ իրատ տայ ի ձեռն այսոցիկ այնմ, որ կամիցի ներհակութիւն ի քանակումն դնել՝ ոչ ձեռնարկել ի մեծէն եւ փոքուէ, ի շատէն եւ ի սակաւէ, այլ ի տեղւոյ ձեռնարկել. քանզի տեղի խոստովանաբար քանակ է, եւ ներհական վերին տեղի ներքին տեղւոյ: 4 Առ որ ասեմք՝ եթէ ոչ է վերին տեղի ներքին տեղւոյ ներհական. քանզի վերին եւ ներքին երկակի ասի. ոմն՝ առ բնութիւն, եւ ոմն՝ առ մեզ. առ մեզ, յորժամ զվերին եւ զներքինն ոտիւք սահմանեմք եւ գլխով, ի վեր ասելով՝ զի վեր քան զգլուխն կիսագունդ, իսկ ներքին զայն՝ որ ընդ ոտիւքն է: 5 Իսկ առ բնութիւն վերին ասի եւ ներքին. վերին՝ բոլոր երկին, առ որ միտէ թեթեւն, իսկ ներքին՝ զերկիր, յոր միտեն ծանուկք: 6 Բայց եւ ոչ որ առ մեզ է վերին եւ ներքին ներհական է վասն երից ձեռնարկութեանց. նախ այն՝ զոր եւ ի հակայարաստութեան ասացաք: 7 Որոց առաջին էր այս՝ եթէ վերինն եւ ներքինն

ինքեանք, որ ինչ ենն՝ այլ այլոց ասին գոլ, իսկ ներհականք ինքեանք, որ ինչ ենն՝ այլց ոչ ասին գոլ, որպէս ասացաւ. ապա ուրեմն՝ վերինն եւ ներքինն ոչ են ներհական: 8 Երկրորդ ձեռնարկութիւն եթէ վերին եւ ներքին ներհականք են՝ ի միասին գոյասցին ներհականքն նմին իրի կարող գոլոյ լինիլ եւ վերին եւ ներքին: 9 Երրորդ՝ եթէ վերինն եւ ներքինն ներհականք են՝ եղիցի որ ինքն ինքեան ներհական. քանզի կարող է վերին լինիլ եւ ներքին ի նմին ժամանակում առ այլ եւ առ այլ: 10 Արդ՝ այսպէս ցուցանեմք եթէ որ առ մեզ վերինն եւ ներքինն ոչ են ներհականք: 11 Այլ եւ ոչ՝ որ առ վերինն եւ ներքինն է բնութիւն՝ ներհականք են. եւ մի որ ասացէ զայն՝ եթէ եզերք ներհականց շարժմանցն ներհականք են եւ եզր ի վերն շարժման վերին տեղւոյն, իսկ ի վայրն շարժման ներքին տեղւոյ: 12 Մի՛ որ ասացէ զայս. քանզի եզերք ներհականացն շարժմանց ոչ եթէ տեղիք են, այլ դադարանք: 13 Բայց եթէ եւ տամք իսկ, եթէ եզերք ներհականացն շարժմանց տեղիք են վերին եւ ներքին՝ ոչ եթէ այն ինչ տեղիք են ներհականք, այլ վերին եւ ներքին. եւ պարզաբար ասել եթէ եռական մակբայքն ամենայն ոչ եթէ տեղի առնեն, այլ կալումն առելոցն. այսպիսի ինչ առելոցն. քանզի նոյն ինքն վերինն եւ ներքինն առընչին է եւ այլ իմն ունիլ ասի, իսկ տեղի ոչ է առընչիցն, այլ ըստ պատահման ի վերն լինելոյ: 14 Արդ՝ այլ է վերին եւ այլ է վեր լինիլ. քանզի վերինն տեղի է եւ ի քանակն վերաբերի, իսկ ի վերն լինիլ ի տեղւոյ է լինիլ եւ յուր ստորագութիւնն վերաբերի: 15 Ձնոյնս եւ վասն ներքին տեղւոյ ասացուք, եթէ այլ է ներքին տեղի եւ այլ է ի ներքնումն լինիլ: 16 Բայց ցուցցուք, եթէ եւ ոչ տեղի՝ որպէս տեղի տեղում ներհական, վասն զի եւ ոչ վերին տեղի՝ որպէս տեղի ներքին տեղւոյ ներհական քան:

1 Ընդ այսուսիկ հանդերձ աստուծով եւ
առաջիկա պրակֆ

ՊՐԱԿՔ ԼԸ

2 «Եւ մանաւանդ զի ներհակութեան քա-
նակ».

3 Յանդիմանեալ Արիստոտելի զայնո-
սիկ, որք ասէին՝ եթէ ներհակ է վերին տե-
ղին ներքնում, եւ ըստ ներաստութեան
եւ ըստ հակյարսաստութեան ի բառնալ
զձեռնարկութիւնն որ ասէր՝ եթէ «եզերք
ներհականացն շարժմանց ներհակք են»՝
այժմ դարձեալ զնոյն ինքն զայս ի ձեռն
այլ ձեռնարկութեան նիւթելով յանդիմա-
նէ: 4 Իսկ ձեռնարկութիւնն է այսպիսի.
երկին ի յերկրէ յոլովիւ տարակացեալ.
քանզի թէպէտ եւ մեծագոյն տարակացու-
թիւն ի բեւեռէն է առնուլ՝ զտրամաչափն,
այլ որպէս բոլորակ ի բեւեռէ եւ ծիր ի մի-
ջոցէ՝ կարի շատ գոյ տարակացեալ. իսկ որ
կարի շատն գոն տարակացեալ՝ ներհա-
կանք են միմեանց. ապա ուրեմն՝ երկին
ներհական է երկրի: 5 Եւ զի ներհական է՝
յայտ է, որ հանդիպաւն նոցա, այսինքն՝
կարի յոյժ տարակացութիւն, որ եւ սահ-
ման եղեւ ներհականացն: 6 Առ որ ասեմք,
եթէ ոչ է բովանդակ կարի յոյժ տարակա-
ցութիւն առ ի յառնելը զներհականս.
քանզի եթէ որ կարի յոյժ տարակացու-
թեամբ ներհականքն որոշին եւ յայսմանէ
ցուցանի երկին ներհական երկրում, վասն
զի մեծագոյն է տարակացութիւնն՝ մարթի
առնուլ զբոլոր տրամաչափն երկնի կէս
տրամաչափի որ ի բեւեռէն է՝ եղիցի ըստ
մեզ վերինն եւ ներքինն մանաւանդ ներ-
հական այսինքն, որ ի վերայ երկրի կիսա-
գունդն եւ որ ի ներքոյ երկրի, որպէս բո-
լորին տրամաչափաւն տարակացեալք,
քան զայն որ ըստ բնութեան, այսինքն՝
բոլոր երկին, առ որ միտեն թեթեւքն, եւ
երկիր, առ որ միտեն ծանուկքն, որք ի բե-
ւեռէն միայն են տարակացեալք. քանզի
կրկնակ է ամենայն տրամաչափ բոլորա-

կին քան զայն՝ որ ի բեւեռէն է տարակա-
ցեալ: 7 Այլ եւ ոչ հուր ջրում եղիցի ներ-
հական, այլ մանաւանդ երկրում եղիցի
ներհական՝ որպէս կարի յոյժ տարակա-
ցեալ. քանզի նախ հուր է ի վեր եւ ապա
աւղ եւ ապա ջուր եւ ապա երկիր: 8 Արդ
ոչ երբէք ըստ որակութեանց ներհականք
են միմեանց հուր եւ ջուր, վասն զի հուր է
տաք եւ չոր, իսկ ջուր՝ հով եւ գէջ, այլ
հուր եւ հող մանաւանդ ներհականք են
միմեանց՝ որպէս կարի յոյժ տարակացեալք
միմեանց ապա ուրեմն՝ բաւանդակ տե-
ղեաւն միայն կարի յոյժ տարակացան, այլ
եւ բնութեամբ արժան է կարի յոյժ տարա-
կայանալ: 9 Այլ եւ ոչ այս միայն է բա-
ւանդակ. քանզի ահա գոյացութիւն եւ
պատահումն, գոն եւ ոչ գոն եւ կարի յոյժ
են տարակայացեալ եւ ոչ են ներհականք.
քանզի եւ ապրեցուցիչք եւս է գոյացու-
թիւնն պատահմանն. քանզի ի նմա ունի
զգոյն: 10 Այլ պարտ է եւ ի մի մի սեռ վե-
րաբերիլ. այս միայն բաւանդակ է. քանզի
ահա սպիտակութիւն եւ ջերմութիւն ի մի
սեռ վերաբերին յորակութիւն եւ ոչ են
ներհականք: 11 Այլ արժան է եւ ի միում
գոլ յենթակայում զնոսա. քանզի ջերմու-
թիւն եւ սպիտակութիւն ոչ ի միում ենթա-
կայում են. քանզի ջերմութիւն յանորակ
մարմին է, իսկ սպիտակութիւն յորակիցե-
լում՝ որպէս երկրորդ որակութիւն. զի նախ
յանորակ մարմնում լինի ցրտութիւն, ջեր-
մութիւն, խոնաւութիւն, ցամաքութիւն, եւ
ապգոյն սպիտակութիւն կամ թխութիւն:
12 Այլ եւ ոչ այս միայն բաւանդակ. քան-
զի ահա սպիտակութիւն ի կարափում եւ
թխութիւն յագուաւում ի միում ենթակա-
յում են. քանզի որակացեալ ի մարմնում
են, եւ ոչ են ներհականք միմեանց. քանզի
ոչ փոփոխին ի միմեանս. բայց արժան է ի
միմեանս փոփոխել: 13 Արդ՝ ոչ բաւան-
դակ ի վերայ ներհակացն տեղական կարի

յոյժ տարակացութիւն¹, այլ արժան է եւ բնութեամբ կարի յոյժ տարակայանալ, այլ եւ զայլ ասացեալսն ունել, որպէս զի եղիցին ներհականքն. քանզի եթէ ոչ լինին ընթացակիցք այս ամենայն՝ նա ոչ են ներհականք: 14 Այլ այսոքիկ պատկանին Պղատոնում ձեռնարկութեանցն, որք ցուցանեն՝ եթէ երկին երկրում ներհական՝ որպէս կարի յոյժ տարակացեալ. քանզի հետեւի Պղատոնում՝ որ տեղական կարի յոյժ

տարակացութեամբք սահմանէ զներհականսն՝ ոչ է ասել զջուր հրում ներհական ըստ տիրաբար ներհականսն, այլ զերկիր հրում ասէ ներհական՝ որպէս կարի յոյժ տարակացեալ. քանզի յոյժ տարակացեալքն միմեանց ներհակութեամբ մէջս ասէ գոլ: 15 Եւ այսքան յաղագս երկրորդ յատկի քանակիս: 16 Իսկ այլ երկու յատուկքն քանակիս՝ զչափիլն ստորոգիին:

1 Տարակուսութիւն, յուն. διάστασις

ՄԱՏԹԷ ԳԻՏՆԱԲԱՐ

ՀԱՐՑՈՒՄ ԱՐՔԱՅԻՆ ՎԱՉԱԳԱՆԱՅ ԶՄԱՏԹԷ ԵՐԷՑ ԳԻՏՆԱԲԱՐ

«ՀԱՐՑՈՒՄ ԱՐՔԱՅԻՆ ՎԱՉԱԳԱՆԱՅ»

Ե-Ձ դդ. սահմանագծում ապրած Մատթէ երէցի մասին տեղեկութիւններ է հաղորդում մօտաւորապէս 501-502 թթ. գրուած Կեանք եւ վարք Վաչագանայ արքայի պայմանական անուանումով երկը, որն աւելի յաճախ կոչւում է պարզապէս Վաչագանի վէպ: Վերջինս պահպանուել է Ժ դ. հեղինակ Մովսէս Դասխուրանցու (ուշ ձեռագրերում եւ գրականութեան մէջ կոչուած նաեւ Կաղանկատուացի) Պատմութիւն Աղուանից երկի մէջ (գլուխներ Ա.Ժդ-իդ): Վէպը յայտնում է, որ Մատթէն երկար տարիներ եղել է Արցախի Դարահոճ գիւղի երէցը եւ մշտական մասնակցութիւն ունեցել մօտաւորապէս 485-523 թթ. գահակալած Վաչագան Բ Արշակունի Աղուանից թագաւորի աստուածահաճոյ գործերին: Մի դրուագում նշուած է, որ նա եղել է Հայոց Յովհաննէս Մանդակունի կաթողիկոսի (478-490 թթ.) աշակերտը եւ դրա շնորհիւ կարողացել է Դարահոճի իր եկեղեցի բերել հայրապետի մատանիով կնքուած՝ Հայոց սրբերի՝ Գրիգոր Լուսաւորչի, Հովհաննէսի եւ Գայիանէի մասունքները: Բացի Վաչագանի վէպից Մատթէն յիշատակուած է նաեւ Աղուէնի եկեղեցական ժողովի արձանագրութեան (Աղուէնի կանոնների) մէջ («Մատթէ Դարահոճոյ երէց»), որը գումարուել է Վաչագան Բարեպաշտ Աղուանից թագաւորի եւ Շուփհաղիչոյ կաթողիկոսի կողմից մօտաւորապէս 510-ական թթ.:

Հայր Ներսէս Ակինեանի կարծիքով, Դարահոճի Մատթէ երէցին կարելի է նոյնացնել Ձ դ. երկրորդ կէսում ապրած եւ Յովհաննէս Բ Գաբեղենացի կաթողիկոսի (557-574 թթ.) կարգադրութեամբ 568 թ. Սիւնիք եւ Արցախ այցելած Մատթէոս քահանայի հետ: Սակայն Վաչագանի վէպի նոր քննութեան արդիւնքում պարզ է դարձել, որ վերջինս ժամանակակից ու հաւաստի սկզբնաղբիւր է, ուստի նրա տեղեկութիւնը Մատթէ երէցի եւ Վաչագան Բարեպաշտ արքայի գործակցութեան մասին եւս չի կարող կասկածի առարկայ լինել:

Մատթէի «գիտնաւոր» պատուանունը յայտնում է միայն իր երկի վերնագիրը, ինչպէս որ այն հաղորդում է Մովսէս Դասխուրանցին (Պատմութիւն Աղուանից, Ա.իդ): Հ. Ն. Ակինեանի կարծիքով, Վաչագան արքայի հարցին Մատթէի փոքրիկ պատասխանի լեզուն դասական հայերէնն է, թէպէտ նա համարում է այս գործը «հաւանօրէն Ե դարու երկրորդ կէսին թարգմանուած Ս. Հօր մը գրուածք», որը հաւանութիւն չի գտել հետագայ ուսումնասիրողների աշխատանքներում:

Պատմութիւն Աղուանիցի ձեռագրերի երկու խմբերի (a ձեռագիր եւ bclr ձեռագրեր՝ bl եւ cr ենթախմբերով) օգտագործմամբ կազմուած Մատթէ Գիտնաւորի երկի քննական բնագիրը մեծ հաւանականութեամբ պատկերացում է տալիս նրա վեցերորդ դարեան վիճակի մասին: Ստորեւ ներկայացուած բնագրի տողատակերում հաշուի չեն առնուած Պատմութիւն Աղուանիցի երկու տասնեակից աւելի մնացեալ գրչագրերի տարընթերցումները, քանի որ դրանք հաստատապէս արտագրուել են վերը նշուած հինգ ձեռագրերից որեւէ մէկից եւ չեն կարող օգտակար համարուել հեղինակի ինքնագրի վերականգնման հարցում: Բնագրի տողատման եւ կէտադրման խնդրում էապէս օգտուել ենք Պատմութիւն Աղուանիցի համեմատական հրատարակութեան հեղինակ Վարազ Առաքելեանի կատարած աշխատանքից:

Ալեքսան Թակոբեան

ՄԱՏԵԼԱԳԻՏՈՒԹԻՒՆ

1. **Հ. Ներսէս Ակիմեան**, *Մովսէս Դասխուրացի (կոչուած Կաղանկատուացի) եւ իր Պատմութիւն Աղուանից*, Վիեննա, 1970:
2. **Կիմ Ղահրամանեան**, «Պատմութիւն Աղուանից աշխարհի» երկի աղբիւրները (թեկնածուական ատենախօսութիւն), Երեւան, 1974:
3. **Ասատուր Մնացականեան**, *Աղուանից աշխարհի գրականութեան հարցերի շուրջը*, Երեւան, 1966:
4. **Մովսէս Կաղանկատուացի**, *Պատմութիւն Աղուանից աշխարհի*, քննական բնագիրը եւ ներածութիւնը Վ. Առաքելեանի, Երեւան, 1983:
5. **Ալեքսան Թակոբեան**, *Մովսէս Կաղանկատուացու «Աղուանից պատմութեան» ձեռագրերը*, ԲՄ, 1986, թիւ 15:
6. **Ալեքսան Թակոբեան**, «Վաչագանի վէպ»-ը եւ Արշակունեաց թագաւորութեան խնդիրը Դ-Ձ դարերի Աղուանում, ՀԱ, Վիեննա, 2003:
7. **Հենրիկ Սազեան**, *Մովսէս Կաղանկատուացու «Աղուանից պատմութեան» աղբիւրները*, ՊԲՀ, 1972, թիւ 2:
8. **А. А. Акопян**, *Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках*, Ереван, 1987.
9. **К. А. Каграманян**, *Источники “Истории страны Алуанк”*, Автореф. дисс. ... к. и. н., Ереван, 1973.
10. *The History of the Caucasian Albanians by Movses Dasxuranci*. Translated by C. J. F. Dowsett, London, 1961.

ՏԱՌԱՆԻՇԵՐ ԲԱՂՂԱՏՈՒԱԾ ՁԵՌԱԳՐԵՐԻ

- a* - ՄՄ ձեռ. թիւ 1531, ժամանակ՝ 1289 թ.
b - ՄՄ ձեռ. թիւ 1725, ժամանակ՝ 1675 թ.
c - ՄՄ ձեռ. թիւ 2561, ժամանակ՝ 1664 թ.
l - Ռուսաստանի Գիտութիւնների ակադեմիայի Արեւելագիտութեան ինստիտուտի Ա.-Պետերբուրգի բաժանմունքի գրադարանի հայերէն ձեռագրերի հաւաքածոյ, թիւ С 59, ժամանակ՝ 1678 թ.
r - Բրիտանական թանգարանի թիւ Or 5261, ժամանակ՝ ԺԷ դ.
ag, bg - տառանիշերով տրուած են համապատասխան ձեռագրերի՝ Մովսէս Դասխուրացու կազմած գլխացանկերի ընթերցումները:

[ԻԴ.] ՀԱՐՑՈՒՄՆ¹ ԱՐՔԱՅԻՆ² ՎԱՉԱԳԱՆԱՅ³, ՉՄԱՏԹԷ⁴ ԵՐԷՑ⁵

ԳԻՏՆԱԽՐ

1 Ասէ արքա⁶. «Հոգիք հրատարեալք ի մարմնոյ զգայո՞ւն է, թէ⁷ անզգայ, կամ կենդանիքս ննջեցելոցն զիա՞րդ կարեն աւզնել⁸»:

2 Լուծումն⁹. «Աղաչելով զԱստուած պահաւք եւ աղաւթիւք¹⁰ եւ պատարագաւք¹¹ կամ այլ ինչ բարի յիշատակ, որ¹² յանուն նոցա կատարի: 3 Եւ¹³ զոր աւրինակ Դաւիթ՝ զգեցեալ զսպառազինութիւնն¹⁴ Շառուղայ¹⁵, կաղալ եւ գթել¹⁶ սկսաւ, իսկ յորժամ մերկացեալ ի բաց ընկէց¹⁷ զծանրութիւն զինուցն եւ թեթեւացեալ յիւրն դարձաւ¹⁸ բնութիւն¹⁹, սոյնպէս եւ Հոգիք: 4 Մինչդեռ զգեցեալ զսպառազինութիւն մարմնոյ՝ կան ի ծանրութեան²⁰, իսկ յորժամ զսա ի բաց դնիցեն²¹, որպէս եղևն ասացեալ, սրատեսիկ եւ քաջիմաց եւ

առաւել զգայուն²² լինի: 5 Եւ որք²³ ասացին՝ անզգայ²⁴ լինել²⁵ զՀոգին ելեալ ի մարմնոյն, յանդիմանեմք²⁶ զնոսա²⁷ Աստուածաշունչ զրոց վկայութեամբ: 6 Ասէ. Մովսէս ծառայ իմ վաղնանեցաւ²⁸, իսկ արդ եկեալ Մովսէս չքնաղազգեստն²⁹ փառաւք առաջի Աստուծոյ, ոչ մարմին զգեցեալ³⁰, որում Պետրոս բաղձացեալ խնդրէր ի Տեառնէ զանդէն³¹ բնակութիւնն»: 7 Իսկ եթէ³² անզգայ³³ էր Հոգի մարգարէին, որպէս³⁴ ասեսդ³⁵, ելեալ ի մարմնոյն³⁶, ի՞բր գայր³⁷ յզգայութիւն³⁸ եւ այսպէս³⁹ վայելուչ կերպարանս խաւսել⁴⁰ ընդ Աստուածորդւոյն⁴¹: 8 Աստուած, ասէ, կենդանաց եմ⁴², եւ ոչ՝ մեռելոց⁴³: 9 Մեռեալ մարմինն ո՞չ ապաքէն անզգայ է, իսկ անզգայացեալ Հոգին, յայտ⁴³ է, թէ⁴⁴ մեռեալ է: 10 Եւ

1 *a_gb_g* հարցմունք *փիս* հարցումն
2 *cl* արբայի *փիս* արբային
3 *bclr* Վաչագանա *փիս* Վաչագանայ (*la_gc_g*) *a* Վաչագանա արբայի Աղուանից *փիս* արբային Վաչագանայ (*bclra_gc_g*)
4 *acrc_g* գՄաթէ *փիս* Մատթէ (*bla_g*)
5 *bcrc_g* Էրեց *l* երեց
6 *l* արբայ
7 *a* թե
8 *bl* օգտել *փիս* աւզնել
9 *a* լուծում
10 *bclr* չիբ եւ աղաւթիւբ
11 *a* չիբ եւ պատարագաւբ
12 *bclr* չիբ որ
13 *r* գի *փիս* եւ
14 *bcl* զսպառազինութիւն
15 *bclr* Սաւուղի *փիս* Շաւուղայ (=Սաւուղայ)
16 *l* գթիլ
17 *bc* ընկեց
18 *a* դարձեալ *փիս* դարձաւ
19 *a* բնութն
20 *bclr* մարմնական ծանրութեանս *փիս* ծանրութեան
21 *bclr* դնիցէ

22 *a* զգաուն
23 *bclr* ոյբ *փիս* որբ
24 *cr* անզգա *b* անզգա
25 *l* լինիլ
26 *bc* յանդիմանեցումբ
27 *bl* չիբ գնոսա
28 *bclr* վախճանեցաւ
* Յէ. Ը 2
29 *bclr* չբնաղագեղն *փիս* չբնաղագեստն (*a* չբնաղագեստն)
30 *cr* ըզգեցեալ
31 *l* զանտէն
32 *a* եթե
33 *b* անզգա
34 *a* որ *փիս* որպէս
35 *a* ասենդ *փիս* ասեսդ
36 *a* մարմնէն *փիս* մարմնոյն
37 *bclr* գայր *փիս* գայր
38 *bclr* ի զգայութիւն *փիս* յզգայութիւն (*a*)
39 *a* յայսպէս
40 *l* խօսիլ
41 *bc* աստուածորդոյն
42 *bclr* եմ եւ
* Հմմտ. Մատթ. ԻԲ՝ 32:
43 *l* յայտն
44 *a* թե *b* եթե

դարձեալ՝ եթէ¹. Վերակացու եղեց² քաղա-
 քի դայրմիկ՝ վասն իմ եւ վասն Դաւթի՝ ծա-
 րայի իմոյ³: 11 Արդ՝ աղէ, ասա՛, անզգայա-
 ցեալ հոգւոյն³ զի՞նչ մեծարանք էին⁴՝ վե-
 րակացու լինել⁵ գաւակին⁶ նորա: 12 Այդ⁷
 յազգաս կենդանի հոգւոյ⁸ մարգարէին⁹ ա-
 րար շնորհս՝ վերակացու լինել¹⁰ քաղաքին,
 փրկել զնոսա ի սրոյ թշնամւոյն¹¹: 13 Եւ
 առաքեալն Պաւղոս ասէ. Ելանել ի մարմ-
 նոյս¹² եւ ընդ Քրիստոսի լինել¹³ լաւ հա-
 մարիմ¹⁴: 14 Որ եւ¹⁴ նոյն իսկ կենարար
 Բանն ասէ ընդ Հաւր. Զորս ետուր ցիս,
 կամիմ, զի ընդ իս իցեմ եւ զփառսն իմ
 տեսցեն¹⁵:

15 Արդ՝ ըստ քո բանիդ՝ անզգայ հոգ-
 ւոցն¹⁵ որպէ՞ս մարթ էր ընդ Տեառն լինել¹⁶
 կամ զանճառելի փառսն տեսանել, կամ մե-
 ռեալ մեծատանն հոգին՝ ի տանջանարանէն
 հեռագոյն սրատես աչաւք զԱբրահամ եւ
 զԴաւար տեսանել¹⁷ կամ գիտել, ուստի՞
 էր: 16 Զի յայտնապէս փրկչին ձայն երե-

ւեցուցանէ¹⁸ ճշմարիտ առակովն¹⁹, եթէ²⁰
 առաւել քան ի մարմնի, յորժամ արտաք-
 սանայ²¹ քան զմարմինն, լինի քաջատես եւ
 առաւել²² իմաստուն հոգին: 17 Ոչ միայն
 սրբոցն եւ վայելչացելոց հոգիք, այլ եւ մե-
 ղաւորաց՝ զգան եւ են լցեալ իմաստու-
 թեամբ, որպէս մեծատունն քաջատես լի-
 նէր, զի մեծ վիհ ընդ մէջ կարել ճանաչել
 զԱբրահամ: 18 Եւ մեզ ուսոյց ճշմարիտ²³
 հաւատն՝ իջումն Աստուծոյ ի դժոխս՝ ի²⁴
 փրկել զնոսա, եթէ²⁵ արդարեւ զգայուն են
 եւ առաւել իմաստագոյն հոգիք²⁶ հրաժա-
 րելոցն ի մարմնոյ²⁷: 19 Եւ որք կատարեն
 գլխատակս²⁸ սրբոց²⁹ մեծարեալ, պատա-
 ըագաւք աղաչեն զհոգիս նոցա եւ նոքաւք
 հայցեն³⁰ զողորմութիւն յառատատուրն
 Աստուծոյ, արդարեւ կարեն բարեխաւսել
 հոգիք սրբոցն³¹, եւ վաղվաղակի ընդունի
 Աստուած զխնդրուածս³² նոցա, եւ մեղու-
 ցելոցն³³ շնորհէ թողութիւն³⁴:

1 a եթե
 2 b եղեց
 3 Խ. . Լ. 35
 4 cr հոգոյն b հոգին
 5 bclr եւ փիս էին
 6 l լինիլ
 7 bcr գաւակի փիս գաւակին (=բաղաճիմ՝ ըստ Վ. Ա.)
 8 bclr այլ
 9 cr հոգոյ b հոգոյն
 10 a մարգարեին
 11 l լինիլ
 12 a թշնամոյն bc թշնամոյ
 13 a մարմնոյս
 14 l լինիլ
 15 Բ. Գ. Փ. Լ. Ե. 23:
 16 a չիմ եւ
 17 Գ. Գ. Յ. Գ. Ժ. Լ. 24:
 18 bcr հոգոցն
 19 l լինիլ
 20 bclr չիմ կամ մեռեալսն ... տեսանել

18 b երեսցուցաներ
 19 bclr առակաւն
 20 a եթե bclr թէ
 21 a արտաքսանա
 22 cr չիմ առաւել
 23 b ճշմարիտն
 24 bclr եւ փիս ի
 25 a եթե bclr թէ
 26 l ոգիմն b ոգիմ
 27 bcr մարմնոյն
 28 bclr գլխատակս
 29 c սրբոցն
 30 bclr հայցել
 31 a սրբոց
 32 a գլխոյն իս
 33 a մեղացն
 34 b գթողութիւն

ԱՔՐԱՀԱՄ ՄԱՄԻԿՈՆԷԻՑ ԵՊԻՍԿՈՊՈՍ

ԹՈՒՂԹ ՎԱՍՆ ՆՆՁԵՑԵԼՈՑ

ԱՐՐԱՐԱՍ ՄԱՍԻԿՈՆԵԻՑ ԵՊԻՍԿՈՊՈՍԸ ԵՒ ԻՐ ԹՈՒՂԹԸ

Ձ դ. մատենագիր Աբրահամ Մամիկոնեցից եպիսկոպոսի Թուղթը կամ Կանոնները մեզ են հասել Ժ դ. վերջի պատմիչ Մովսէս Դասխուրանցու Պատմութիւն Աղուանից երկում (գլուխ Ա.իե) եւ Հայոց կանոնագրոյի ձեռագրերում (գրանց Ա խմբի օրինակներում նրանք կրում են ԻԲ, իսկ Բ խմբի օրինակներում՝ ԼԴ թուահամարը): Բնագիրը բաղկացած է երեք մասից, որոնք ամբողջութեամբ ներկայացուած են Կանոնագրում՝ «Աբրահամու Մամիկոնեցից եպիսկոպոսի առ Վաչագան Աղուանից արքայ» գլխագրի տակ՝ սկզբում ենթադրուիւնների վերնագրերով: Մովսէս Դասխուրանցին ընդօրինակել է միայն առաջին մասը՝ «Երանելոյն Աբրահամու Մամիկոնեցից եպիսկոպոսի առ Վաչագան Աղուանից արքայ. թողթ վասն ննջեցելոց» գլխագրի տակ: Միայն առաջին մասն առկայ է նաեւ Երուսաղէմի մէկ եւ Վենետիկի երկու ձառնարկներում. համեմատութիւնից երեւում է, որ այդ հատուածն ընդօրինակուած է Կանոնագրոյի Բ խմբի՝ մեր կողմից X, անուանուած ենթախմբի ինչ-որ մի ձեռագրից:

Պատմութիւն Աղուանիցում բառացի արտագրութեամբ պահպանուած եւ պայմանականօրէն Վաչագանի վէպ անուանուող Ձ դ. երկի տեղեկութիւնների համաձայն՝ Վաչագանը Բուն Աղուանքի վաղմիջնադարեան թագաւորութեան Արչակունի արքայատոհմի տասներորդ ներկայացուցիչն էր (Ժ դ. պատմիչը նրան համարում է բնիկ հայկական Առանշահիկ իշխանատոհմի շառաւիղ) եւ թագաւոր էր ճանաչուել Սասանեան արքայից արքայ Վաղարշ Ա-ի (484-488 թթ.) կողմից (հաւանաբար, Նուարսակի պայմանագրութեան շրջանակում՝ 485 թ. աշնանը): Ըստ վերջին հետազօտութեան՝ նրա իշխանութիւնը, հաւանաբար, շարունակուել է մինչեւ Ձ դ. 20-ական թթ. եւ աւարտուել Կաւատ Ա Սասանեանի կողմից Վիրքում թագաւորական իշխանութեան վերացման հետ միաժամանակ՝ 523 թ.:

Վաչագանի վէպում, որը թուագրւում է Ձ դ. առաջին տարիներով (հաւանաբար՝ 501-502 թթ.), չեն յիշատակուում ո՛չ Աբրահամ Մամիկոնեցից եպիսկոպոսը, ո՛չ Մատթէ Գիտնաւորը (որին, ըստ Պատմութիւն Աղուանիցի նախորդ գլխի վերնագրի տուեալների, նոյնպէս Հարցում էր ուղղել Վաչագան արքան), ո՛չ էլ որեւէ տեղեկութիւն այդ թագաւորի կողմից կատարուած նամակագրութեան մասին: Առկայ սկզբնաղբիւրները ճանաչում են միայն մէկ Աբրահամ Մամիկոնեցից եպիսկոպոսի: Նա Տարօնի եպիսկոպոսի պաշտօնում փոխարինել է Մերշապուհ (Ներշապուհ) Մամիկոնեցից եպիսկոպոսին, որը Ձ դ. կէսի յայտնի գործիչ էր՝ Ներսէս Բագրեւանդեցի կաթողիկոսի (548-557 թթ.) կարեւորագոյն գործերի մասնակիցը: Մերշապուհին յաջորդած Աբրահամի անունն արձանագրուած է Յովհաննէս Գաբեղենացի կաթողիկոսի (557-574 թթ.)՝ Աղուանք եւ Սիւնիք ուղարկուած յայտնի նամակներում, որոնք թուագրւում են մօտաւորապէս 568 թ.: Թովմա Արծրունին մի առիթով յիշատակում է Մաշտոցի եւ Սահակ Պարթեւի աշակերտ ոմն Աբրահամ Մամիկոնեան եպիսկոպոսի:

Ձեռագրերում Աբրահամին վերագրուած է եւս մի երկ՝ Թուղթ Արրահամու Մամիկոնեցից եպիսկոպոսի առ Վաչագան արքայ Աղուանից. Պատմութիւն վասն Ժողովոյն Եպեսոսի, որ եղել ի Ժամանակս Թէոդոսի Փոփու վասն ամբարշտին Նեստորի վերատառութեամբ, որը հաստատապէս համարւում է է դ. ստեղծուած (ամենայն հաւանականութեամբ,

Վրթանէս Քերթոզի հեղինակութեամբ): Այնուամենայնիւ, բանասէրները հակուած չեն մերժել ստորեւ ներկայացուած երկի վաւերականութիւնը՝ իբրեւ Զ դ. ստեղծագործութեան: Ըստ Հ. Ն. Ակինեանի՝ «Թէ հատուածս Աբրահամ եպիսկոպոսի գրչէն է, չեմ ուզեր կասկածի ենթարկել: Բայց չկայ որ եւ է կռուան գրուածքս «Թուղթ» նկատելու համար եւ «Թուղթս» Վաչական թագաւորի ուղարկուած ըլլալու համար»: Նկատենք, որ սոյն երկի վաւերականութիւնը մինչեւ վերջ պնդելու դէպքում պէտք է նաեւ ենթադրել, որ եղել է մէկ ուրիշ Աբրահամ եպիսկոպոս, որն անթուղթի է Մերշապուհ եպիսկոպոսից առաջ՝ Զ դ. սկզբում:

Աղբիւրագիտական տեսակէտից անհրաժեշտ է նշել, որ Աբրահամի Թղթի կամ Կանոնների ենթագլուխների վերնագրերը, ամենայն հաւանականութեամբ, աւելացուած են Կանոնագրի ամենավաղ ժողովածոն (որն ունեցել է 24 կանոնախումբ) կազմող Յովհաննէս Օձնեցի կաթողիկոսի կողմից, ճիշտ այնպէս, ինչպէս դա արուել է ուրիշ կանոնախմբերի համար: Ուսումնասիրողներից որեւէ մէկը չի կասկածում, որ Մովսէս Դասխուրանցին կամ նրա մի նախորդն է Աբրահամի երկի բնագիրն ընդօրինակել Կանոնագրից, ոչ թէ՛ հակառակը: Դա նշանակում է, որ անհրաժեշտ է որոշ վերապահումով մօտենալ նաեւ Թուղթ վասն ցնջեցելոց վերտառութեանը, որին հանդիպում ենք միայն Պատմութիւն Աղուանիցում:

Ձեռագրերի մանրակրկիտ քննութեամբ Վազգէն Յակոբեանը պարզաբանել է, որ Կանոնագրի շուրջ 200 օրինակների՝ մեզ հասած երկու ձեռագրախմբերը ծագում են Ժ դ. վերջում (992-997 թթ. միջեւ) կազմուած ընդհանուր մայր տարբերակից, որն ունեցել է 40 կանոնախումբ: Նրանից են ծագում Հայոց կանոնագրի հնագոյն երկու ձեռագրերը՝ A գրչագիրը՝ արտագրուած 1098 թ. (Նոր Ձուղայի ձեռագիր), եւ B գրչագիրը՝ արտագրուած ԺԳ դ.: Դրանցից կատարուած տասնեակ ընդօրինակութիւնները կազմում են Հայոց կանոնագրի ձեռագրերի Ա խումբը: Ժ դ. վերջի այդ տարբերակից են արտագրուել նաեւ Հայոց կանոնագրի ձեռագրերի Բ խմբի երեք ենթախմբերի մայր գրչագրերը: Դրանցից ոչ մէկը մեզ չի հասել, ուստի Բ խմբի մայր օրինակի ընթերցումների մասին պատկերացում կազմելու համար անհրաժեշտ է նախապէս վերականգնել բոլոր երեք ենթախմբերի ձեռագրերի մայր գրչագրերի ընթերցումները: Կատարելով այդ աշխատանքը (Վ. Յակոբեանի համեմատական աշխատանքի օգնութեամբ)՝ ենթախմբերը պայմանականօրէն նշանակել ենք՝ K_a (acdkmpsv ձեռագրեր՝ ԺԶ-ԺԷ դդ.), K_b (befgq ձեռագրեր՝ ԺԶ-ԺԸ դդ.) եւ K_r (hloru ձեռագրեր՝ ԺԷ դ.): Ընդհանուր առմամբ, Վ. Յակոբեանի մանրակրկիտ աշխատանքի շնորհիւ, իւրաքանչիւր ենթախմբի նախնական ընթերցումների վերհանումը լուրջ խնդիրներ չի յարուցում, նոյն կերպ նաեւ (դրանից յետոյ)՝ Ա եւ Բ խմբերի մայր տարբերակի ընթերցումների վերհանումը (կանոնագրային ընդհանուր ընթերցումները նշանակում ենք՝ K=ABK_{abr}): Որոշ կասկածելի դէպքերում ընթերցողն կարող է հետեւել Վ. Յակոբեանի քննական-համեմատական հրատարակութեան տողատակերի մատուցած սպառիչ նիւթին:

Պատմութիւն Աղուանիցի ձեռագրերի երկու խմբերի (a ձեռագիր եւ bcir ձեռագրեր՝ bl եւ cr ենթախմբերով) եւ Կանոնագրի ձեռագրախմբերի ընթերցումների համադիր օգտագործմամբ կազմուած Աբրահամի Թղթի (Կանոնների) քննական բնագիրը մեծ հաւանականութեամբ պատկերացում է տալիս նրա վեցերորդ դարեան վիճակի մասին: Ստորեւ ներկայացուած բնագրի տողատակերում հաշուի չեն առնուած Պատմութիւն Աղուանիցի

երկու տասնեակից աւելի մնացեալ գրչագրերի, ինչպէս նաեւ Կանոնագրքի առանձին ձեռագրերի տարրնթերցումները, քանի որ դրանք հաստատապէս արտագրուել են կա՛մ մեր կողմից օգտագործուած ձեռագրերից որեւէ մէկից, կա՛մ կանոնագրքային Բ խմբի ձեռագրախմբերի (վերականգնուած) մայր օրինակներից, ուստի չեն կարող օգտակար համարուել Աբրահամի Թղթի ինքնագրի վերականգնման հարցում: Բնագրի տողատման եւ կէտադրման խնդրում էապէս օգտուել ենք Պատմութիւն Աղուանիցի համեմատական հրատարակութեան հեղինակ Վ. Առաքելեանի եւ Հայոց կանոնագրքի քննական հրատարակութեան հեղինակ Վ. Յակոբեանի կատարած աշխատանքից:

Ալեքսան Յակոբեան

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

1. **Հ. Ներսէս Ակիմեան**, Մովսէս Դասխուրանցի (կոչուած Կաղանկատուացի) եւ իր Պատմութիւն Աղուանից, Վիեննա, 1970:
2. **Յակոբ Անասեան**, Հայկական մատենագիտութիւն. Ե-ԺԸ դդ., հտ. Ա, Երեւան, 1959:
3. *Գիրք Թղթոց*, Երուսաղէմ, 1994:
4. **Մովսէս Կաղանկատուացի**, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Քննական բնագիրը եւ ներածութիւնը Վարագ Առաքելեանի, Երեւան, 1983:
5. *Կանոնագիրք Հայոց*, աշխատասիրութեամբ՝ Վազգէն Յակոբեանի, հտ. Ա, Երեւան, 1968. հտ. Բ, Երեւան, 1971:
6. **Կիմ Ղահրամանեան**, «Պատմութիւն Աղուանից աշխարհի» երկի աղբիւրները (թեկնածուական ատենախօսութիւն), Երեւան, 1974:
7. **Ասատուր Մնացականեան**, Աղուանից աշխարհի գրականութեան հարցերի շուրջը, Երեւան, 1966:
8. **Ալեքսան Յակոբեան**, Մովսէս Կաղանկատուացու «Աղուանից պատմութեան» ձեռագրերը, ԲՄ, թիւ 15, Երեւան, 1986:
9. **Ալեքսան Յակոբեան**, «Վաչագանի վէպ»-ը եւ Արշակունեաց թագաւորութեան խնդիրը Դ-Ձ դարերի Աղուանիում, ՀԱ, Վիեննա, 2003:
10. **Հ. Բարսեղ Սարգիսեան**, Աբրահամ Մամիկոնէից եպիսկոպոսն եւ իւր առ Վաչագան գրած թուղթն, Վենետիկ-Ս. Ղազար, 1899:
11. **Հենրիկ Սուգեան**, Մովսէս Կաղանկատուացու «Աղուանից պատմութեան» աղբիւրները, ՊԲՀ, Երեւան, 1972, թիւ 2:
12. **А. А. Аюпян**, *Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках*, Ереван, 1987.
13. **К. А. Каграманян**, *Источники "Истории страны Алуанк"*, Автореф. дисс. ... к. и. н., Ереван, 1973.
14. *The History of the Caucasian Albanians by Movses Dasxuranci*. Translated by C. J. F. Dowsett, London, 1961.

ՏԱՌԱՆԻՇԵՐ ԲԱՂՂԱՏՈՒԱԾ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԵՒ ՀԱՄԱՌՕՏԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- a* - ՄՄ ձեռ. թիւ 1531, ժամանակ՝ 1289 թ.
b - ՄՄ ձեռ. թիւ 1725, ժամանակ՝ 1675 թ.
c - ՄՄ ձեռ. թիւ 2561, ժամանակ՝ 1664 թ.
l - Ռուսաստանի Գիտութիւնների ակադեմիայի Արեւելագիտութեան ինստիտուտի Ա.-Պետերբուրգի բաժանմունքի գրադարանի հայերէն ձեռագրերի հաւաքածոյ, թիւ C 59, ժամանակ՝ 1678 թ.
r - Բրիտանական թանգարանի թիւ Or 5261, ժամանակ՝ ԺԷ դ.
A - Նոր Զուղայի ձեռ. թիւ 131 (ՄՄ լուսանկարների հաւաքածոյ, թիւ 203), ժամանակ՝ 1098 թ.
B - ՄՄ ձեռ. թիւ 6409, ժամանակ՝ ԺԳ դ.
K_a, K_b, K_r - Հայոց կանոնագրքի Բ խմբի ձեռագրախմբերի վերականգնուած մայր օրինակների ընթերցումներ (ըստ Վազգէն Յակոբեանի համեմատած նիւթի)
K_g - Երեւնի շառընտիրների ընթերցումները՝ ըստ հետեւեալ ձեռագրացուցակների տրամադրած նիւթի՝
 Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց վանքի, Ա. հտ., կազմեց Ա. արքեպս. Սիրմէեան, Վենետիկ-Ս. Ղազար, 1948 (ձեռ. թիւ 1)
 Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հտ. Բ, Վենետիկ-Ս. Ղազար, 1924 (ձեռ. թիւ 202, 300)

**ԱՐՐԱՅԱՍՈՐ¹ ՄԱՍԻԿՈՆԵԻՑ² ԵՊԻՍԿՈՊՈՍԻ³ ԱՌ ՎԱԶԱԳԱՆ⁴ ԱՂՈՒԱՆԻՑ
ԱՐՔԱՅ⁵. [ԹՈՒՐԹ⁶ ՎԱՍՆ⁷ ՆՆՁԵՑԵԼՈՑ⁸]**

- 1 Ա. Եթէ ոչ են հոգիք ննջեցելոցն ի գիտութիւն⁹ աստի իրացս:
- 2 Բ. Եթէ որք աղաւթեն առ նշխարս վկայից՝ Աստուած է¹⁰ ընդունող¹¹ աղաւթիցն¹² եւ հատուցանող¹³:
- 3 Գ. Եթէ հոգիք վաղնանելոցն¹⁴ ոչ են միմեանց ի¹⁵ ծանաւթութիւն¹⁶:

4 Ա.¹⁷ Միտ դիր, ո՛վ սիրելու թիւն¹⁸, զի թէ¹⁹ գիտութիւն եւ անգիտութիւն յաղազս հոգւոցն²⁰ հանգուցելոցն²¹ ասիցէ ոք²² ինչ

առ բանս²³, ո՛վ ոք²⁴ այնպէս արմար²⁵:
5 Քանզի ո՛չ²⁶ հանգուցեալքն, այլ²⁷ Աստուած ընդունիչ է²⁸ պատարագացն²⁹ եւ կատարիչ ուխտից. լսէ աղաւթից կենդանեացն³⁰ եւ թեթեւացուցանէ ոգւոցն³¹ մեռելոց³² յուսով ննջեցելոցն³³:

6 Ուսուցանեն մեզ³⁴ եւ զայս³⁵ Գիրք Սուրբ³⁶, որպէս եղիսէնս³⁷ ոչ մանկանն³⁸ մեռելոյ³⁹ լսելով⁴⁰, այլ⁴¹ մաւրն աղաչանաց⁴² լսելով⁴³, կենդանացոյց զմանուկն⁴⁴

- 1 *abclr* երանելոյն Աբրահամու, *K_θ* Տեանն Աբրահամու (*K*)
- 2 *AB* Մամիկոնենից *փխ* Մամիկոնեից (*abclrK_{abr}K_θ*)
- 3 *a* Էպիսկոպոսի
- 4 *BK_{abr}* Վաչաբան *փխ* Վաչագան (*abclrAK_θ*)
- 5 *IK_b* արբայի, *bcK_θ* արբա, *K_r* արբեպիսկոպոսի *փխ* արբայ (*aBK_a*)
- 6 *bclr* չիք թուղթ, *a_g* թուղթէ առ Վաչագան Աղուանից արբ *փխ* առ Վաչագան ... թուղթ
- 7 *ab_g* սակս, *a_g* սակս վասն *փխ* վասն (*bclr*)
- 8 *a* ննջեցելոցն *փխ* ննջեցելոց (*bclra_g*), *K_θ* վասն տգիտութեան (*K_{θ2}* գիտութեան, *K_{θ3}* անգիտութեան) *փխ* թուղթ վասն ննջեցելոց, *K* չիք թուղթ վասն ննջեցելոց
- 9 *AB* գիտութեան *փխ* գիտութիւն (*K_{abr}*)
- 10 *K* չիք է
- 11 *K* ընդունաւ *փխ* ընդունող (*վերականգնում*)
- 12 *K_{ab}* չիք աղաւթիցն
- 13 *K* հատուցանաւ *փխ* հատուցանող (*վերականգնում*)
- 14 *ABK_{ar}* վախճանելոցն *փխ* վաղնանելոցն (*K_b*)
- 15 *K_b* չիք ի
- 16 *AK_a* ծանաւթութեան *փխ* ծանաւթութիւն (*BK_{br}*)
abclrK_θ չիք Եթէ ոչ են հոգիք ... ի ծանաւթութիւն (*նախ. 1-3*)
- 17 *abclrK_θ* չիք Ա.
- 18 *aK_rK_θ* սիրելի *փխ* սիրելութիւն (*bclrABK_{ab}*)
- 19 *ABK_{ar}* եթէ *փխ* թէ (*abclrK_bK_{θ1}*)
- 20 *K* չիք հոգւոցն *bclr* հոգւոցն
- 21 *a* հոգւոցն ննջեցելոցն *փխ* հանգուցելոցն (*bclrK*)
տգիտութիւն անգիտութեան (*K_{θ2θ3}* առ գիտութեամբ) *փխ* գիտութիւն ... հանգուցելոցն
- 22 *abl* ասիցեմք, *cr* ասեմք *փխ* ասիցէ ոք (*K*)

- 23 *bclr* բան, *a* բնաւ *փխ* առ բանս (*K*) *K_θ* բան *փխ* բանս
- 24 *bclr* չիք ոք, *a* չիք ով ոք
- 25 *BK_{ab}* արմար, *K_rK_θ* տխմար *փխ* արմար (*abclrA*)
- 26 *K* Եթէ ոչ, *K_θ* թէ ոչ *փխ* քանզի ոչ (*abclr*). *a* ձեռագրում հետագայում ի տառը ջնջած է եւ դարձուած քան զոչ
- 27 *bclrAK_{br}* այլ *փխ* այլ (*aB*)
- 28 *a* ընդունի, *bl* է ընդունիչ *փխ* ընդունիչ է (*crK*)
- 29 *a* զպատարագացն, *bclr* պատարագաց *փխ* պատարագացն (*KK_θ*)
- 30 *bclr* չիք լսէ աղաւթից կենդանեացն (*KK_θ*)
- 31 *bc* հոգոց, *l* հոգւոց, *K_r* յոգւոյն, *K_θ* ոգոցն *փխ* ոգւոցն (*ABK_{ab}*). *հետեւելով Ղունկիանոս դպրի ընդօրինակութեանը՝ Վ. Առաքելեանը եւ Վ. Յակոբեանը վերականգնել են՝ զքեռիմս հոգւոցն (ոգւոցն):*
- 32 *K_r* մեղելոյն. *մինչեւ այստեղ ունենք K_θ տարբերակի՝ Յուցակների ընձեռած նիւթը:*
- 33 *K_r* ննջեցելոյն *bclr* յուսով մեռելոցն *փխ* մեռելոց յուսով ննջեցելոցն *a* չիք եւ կատարիչ ... ննջեցելոցն (*երեք տող*)
- 34 *a* զմեզ, *bclr* զմեզս (*l* մեզ) ուսուցանեն *փխ* ուսուցանեն մեզ (*K*)
- 35 *K_b* զայս մեզ *փխ* մեզ եւ զայս *abclr* չիք եւ զայս
- 36 *K* Սուրբ Գիրք *փխ* Գիրք Սուրբ (*abclr*)
- 37 *a* Էղիսէնս
- 38 *a* մանգան, *bclr* մանկան *փխ* մանկանն (*K*)
- 39 *a* մեռելոյն *փխ* մեռելոց
- 40 *K_{ab}* լսելոյ *փխ* լսելով (*abcrABK_r*)
- 41 *abclrAK_{abr}* այլ *փխ* այլ (*B*)
- 42 *cr* աղաչանացն
- 43 *K* չիք լսելով, *l* չիք այլ մաւրն ... լսելով
- 44 *l* զմեռեալն, *B* զմեռեալն *փխ* զմանուկն

եւ աւանդեաց մաւրն՝: 7 Եւ Տէր Աստուած մեր գթաց, ասի¹, յայրի կինն² եւ յարոյց³ զմիամաւր որդին⁴: 8 Այլ⁵ առաքելոցն զայրեացն⁶ արտասուս եւ⁷ կառաչս⁸ տեսանելով⁹ յարուցին զՏաբիթայն¹⁰ եւ աւանդեցին¹¹ նոցա: 9 Արդ՝ եթէ¹² կենդանեացն¹³ աղաւթիւք¹⁴ ի¹⁵ մեռելութենէ¹⁶ ի կենդանութիւն գիտէ¹⁷ ածել աստուածային¹⁸ զաւրութիւնն¹⁹, կարի յոյժ եւ մեղաց թողութիւն հաւատասցուք առնուլ յուսով²⁰ ննջեցելոցն, որք ի կենդանեաց²¹ յԱստուծոյ²² յաղագս նոցա խնդրեսցեն²³:

« ՏԷ՛՞Պ Թ՝ՄԳ՝ ԺԼ 17-23:

- 1 *abclr* գթացեալ, *K* գթալ ասի *փ*ս գթաց, ասի (*վերականգնում*)
- 2 *abclr* յայրին *փ*ս յայրի կինն
- 3 *K* եւ յարուցանել, *abclr* յարոյց *փ*ս եւ յարոյց (*վերականգնում*)
- 4 *abclr* որդի նորա *փ*ս որդին (*K*)
- 5 *abclr* եւ, *K_{abr}* այլ *փ*ս այլ (*AB*)
- 6 *abclr* յայրեացն *փ*ս զայրեացն (*K*)
- 7 *a* եւ ի
- 8 *a* կառաչանս, *bclr* կառաչն, *K_a* կաշառս *փ*ս կառաչս (*ABK_{br}*)
- 9 *a* նայելով, *bclr* հայելով *փ*ս տեսանելով (*K*)
- 10 *BK_a* զՏաբիթայ, *cr* զՏապիթայն
- 11 *abclr* աւանդեցին զնա
- 12 *a* եթե
- 13 *a* ընտանեացն *փ*ս կենդանեացն (*bclrK*)
- 14 *bcr* աղօթիւն, *a* աղաւթ *փ*ս աղաւթիւ (*IK*)
- 15 *K_b* չի՞ *ի*
- 16 *B* մեռելութենէն
- 17 *abclr* գիտն *փ*ս գիտէ (*K*). *a* ձեռագրում սկզբից գրուել է գիտն, յետոյ գրիչն աւելացրել է ն տառը:
- 18 *abclr* ապա աստուածային
- 19 *a* զարուքին
- 20 *K_b* չի՞ յուսով
- 21 *abclr* կենդանիս *K_a* կենդանութեան *փ*ս ի կենդանեաց (*K*)
- 22 *AK_aK_a* չի՞ յԱստուծոյ
- 23 *abclr* նոցա խնդրեմք (*bclr* խնդրեմք (*b* խնդրեմ) նոցա) գթողութիւն (*a* բողոքիւն *c* չի՞ գթողութիւն) մեղաց (*cr* մեղացն) յԱստուծոյ ներողութենէն *փ*ս յԱստուծոյ ... նոցա խնդրեսցեն *K_a* վասն նոցա խնդրեն *փ*ս յաղագս նոցա խնդրեսցեն

10 Բ. Իսկ եթէ ոք յաղագս վկայիցս²⁴ Աստուծոյ տարակուսանայցէ²⁵, լուիցէ հաւանաբար, զի ի²⁶ բազում եւ ի հեռաւոր տեղիս նշխարք միոյ²⁷ վկայի²⁸ բաշխեցան²⁹, որպէս եւ Պետրոսի առաքելոյ³⁰ ի Հռովմէ³¹ ի Հայս եւ յԱղղուանս, թերեւս՝ յեթովպիա³² եւ ի Պարսս³³: 11 Ի՞բր³⁴ ասասցուք՝ բաժանեցաւ ոգին Պետրոսի ըստ իւրաքանչիւր³⁵ մասանց³⁶ նշխարացն, եթէ ամբողջ պահելով՝ ամենայն ուրեք է, որ են երկոքին անհնարին. զի բաժանումն մարմնոյ իսկ, մարմին՝ արարածական բնութիւն բաժանելի³⁷ բնաւորեաց³⁸ իսկ ամենայն ուրեք լինել աստուածութենէ³⁹ առանձին: 12 Իբր⁴⁰ աղաւթեսցուք առ նշխարս սրբոցն, բարեխաւս կացուցանելով⁴¹ առ Աստուած, շնորհք աստուածային հանգուցեալ յոսկերս⁴² նոցա ի ժամու նահատակութեանն⁴³ եւ բաժանի ըստ նշխարացն եւ անբաժանելի մնայ⁴⁴ ըստ բնու-

- 24 *B* վկայիցն, *K_{br}* վկայից *փ*ս վկայի
- 25 *K_a* տարակուսանայցեն, *K_b* տարակուսեսցի *փ*ս տարակուսանայցէ (*ABK_r*)
- 26 *K_b* չի՞ *ի*
- 27 *B* միոյ միոյ
- 28 *ABK_a* վկայից *փ*ս վկայի (*K_{br}*)
- 29 *K_b* բաժանեցան *փ*ս բաշխեցան
- 30 *K_b* առաքելոյն
- 31 *AB* Հռովմէ եւ, *K_b* Հռովմէ *փ*ս Հռովմէ (*K_{ar}*)
- 32 *A* յեթովպիա, *B* յեթովպիա, *K_a* յեթովպիա, *K_r* յեթովպիայ *փ*ս յեթովպիա (*K_b*)
- 33 *ABK_{br}* Պարս *փ*ս Պարսս (*K_a*)
- 34 *K_{ab}* իբրեւ *փ*ս իբր (*ABK_r*)
- 35 *K_b* իւրաքանչիւրոց *փ*ս իւրաքանչիւր
- 36 *K_{ar}* մասանցն *փ*ս մասանց (*ABK_b*)
- 37 *AB* բաժանիլ *փ*ս բաժանելի (*K_{abr}*)
- 38 *A* բնաւորաց, *B* բնաւորեցաւ *փ*ս բնաւորեաց (*K_{abr}*)
- 39 *A* աստուածութեանն է *փ*ս աստուածութենէ (*BK_{abr}*)
- 40 *ABK_{br}* իբր *փ*ս իբրեւ (*K_a*)
- 41 *K_r* կացուցանել *փ*ս կացուցանելով
- 42 *K_a* ի յոսկերս
- 43 *K_b* նահատակութեան
- 44 *K_r* մնաց *փ*ս մնայ

թեանն¹, վասն զի աստուածային զաւրու-
թիւն է: 13 Զայս ուսուցանէ քեզ եւ լոյս²
արեգական³, զի բաժանի ի⁴ ժամու ինքն⁵
եւ անբաժանելի⁶ մնայ ըստ բնութեան⁷,
այդ⁸ ոչ⁹ հանապազ զայս կարողութիւն¹⁰
ունի, զի արարած ապականելի է: 14 Արդ՝
եթէ այս¹¹ այսպէս, ո՞ւր եւ¹² իցեն նշխարք
սրբոցն:

15 Առընթեր է եւ¹³ շնորհք¹⁴ աստուա-
ծային, որ լսէ խնդրուածոց խնդրողաց եւ
հատուցանէ ըստ իւրաքանչիւր պիտոյից,
վասն զի արարչական է զաւրութիւնն:
16 Իսկ ընդէ՞ր ամենեւին ի բարեխաւսու-
թիւն կոչեմք¹⁵ զսուրբ նահատակսն եւ ոչ
զնոյն ինքն Աստուած¹⁶ թախանձեցուցա-
նեմք: 17 Վասն զի ամալթալից եմք մե-
ղաւք եւ ոչ կարեմք համարձակապէս¹⁷
մերձենալ¹⁸ առ Աստուած. միջնորդ¹⁹ ու-
նիմք զսրբոց համարձակութիւնն²⁰, որք
տաճար եղեն Հոգւոյն²¹ Սրբոյ: 18 Զի նո-
քաւք շնորհս²² Աստուծոյ՝ խաւսելով
զակնկորութիւն²³ մեր՝ անպատկառելի

գործեսցէ եւ ըստ իւրում առատութեան
պարգեւեսցէ²⁴ զպէտս խնդրողին²⁵, զի ա-
մենայն արարածական բնութիւն²⁶ բարե-
խաւսել, այդ²⁷ ոչ ունի իշխանութիւն²⁸
զքաւութիւն պարգեւել: 19 Եւ այսքան
մեզ²⁹ յաղագս ազգումն առնելոյ հրաժա-
րելոցն³⁰ ի կենդանեաց ճառեցաւ:

20 Գ. Իսկ յաղագս ծանալթութեան
առ միմեանս³¹, վաղք³² իրք են ի միմեանց
ի վախճանելոցս եւ յետոյ ժամանակ ծա-
նալթութեան³³ են երկու զանազանու-
թիւնք: 21 Կամ ըստ սովորութեան³⁴
մարմնոյն³⁵ ի կարգաւորութենէ ծանու-
ցեալ լինի, զի պահեսցէ զյիշատակ անմո-
ռաց, զոր երբեմն տեսեալ ճանաչէր, իսկ ի
ծերութիւն հասելոյն³⁶, զոր ի մանկու-
թեանն ունէր տեսակ ի մտի ունելով, վրի-
պէ զծանալթութիւնն³⁷: 22 Եւ կամ մար-
գարէական ակամբն³⁸ տեսեալ ոք³⁹ ծանի-
ցէ, որպէս Պետրոս զՄովսէս եւ զԵղիայն⁴⁰
ի լերինն: 23 Ապա ուրեմն հասարակական
ասել զծանալթութիւնն⁴¹ ի վերայ ամե-

1 K_b բնութեան

2 K_b զայս փիլ լոյս

3 K_b արեգական

4 K_b չի՞ք ի

5 K_r ինքն ի ժամու փիլ ի ժամու ինքն

6 K_r անբաժան փիլ անբաժանելի

7 K_a բնութեանն

8 AK_{abr} այլ փիլ այլ (B)

9 K_{ab} չի՞ք ոչ

10 K_b տկարութիւն փիլ կարողութիւն

11 K_b չի՞ք այս

12 K_b չի՞ք եւ

13 K_{abr} չի՞ք եւ (AB)

14 K_r շնորհ

15 K_b չի՞ք կոչեմք

16 K_{ab} զԱստուած փիլ Աստուած (ABK_r)

17 B համարձակ, K_b համարձակութեամբ փիլ
համարձակապէս (AK_{ar})

18 A մերձանալ փիլ մերձանալ (BK_{abr})

19 K_r միջնորդ

20 K_a համարձակութիւն K_b համարձակութիւնս
փիլ համարձակութիւնն (ABK_r)

21 K_{br} հոգոյն

22 AB զշնորհս փիլ շնորհս (K_{abr})

23 K_{abr} զակնկորութիւնն փիլ զակնկորութիւն (AB)

24 K_r պարգեւէ փիլ պարգեւեսցէ

25 A խնդրաւորին

26 K_{ab} չի՞ք բնութիւն

27 AK_{abr} այլ փիլ այլ (B)

28 K_{ab} զբաւութիւն պարգեւել իշխանութեամբ փիլ
իշխանութիւն զբաւութիւն պարգեւել (ABK_r)

29 K_b զմեզ

30 K_{ab} հրաժարելոցս փիլ հրաժարելոցն (ABK_r)

31 K_b միմեանց փիլ միմեանս

32 AB վաղ փիլ վաղ (K_{abr})

33 AK_a ծանալթութեանն, K_r ի ծանալթութեան փիլ
ծանալթութեան (BK_b)

34 K_a սովորութեանն է, K սովորութեան փիլ սովո-
րութեան (ABK_r)

35 AB մարմնոյ փիլ մարմնոյն (K_{abr})

36 A հասելոցն փիլ հասելոյն (BK_{abr})

37 BK_{ar} զծանոթութիւնն, K_b զծանալթութիւն փիլ
զծանալթութիւնն (A)

38 K_{abr} ակամբ փիլ ակամբն (AB)

39 K_{abr} զո՞ք փիլ ո՞ք (AB)

40 BK_{br} զԵղիա փիլ զԵղիայն (AK_a)

41 A զծանութիւնն, K_b ծանալթութեանն փիլ զծա-
նալթութիւնն (BK_{ar})

նայն ննջեցելոցն շամբուչ¹ ինձ թուի, զի որպէս ննջեցինն² նոյնպէս եւ³ յարիցեն, զի ոմանք մանկունք, եւ ոմանք ծերք, արք եւ կանայք, իսկ Տէր⁴ յԱւետարանին հրեշտակակերպ⁵ ասաց զյարուլթեանն

մանկունս: 24 Այլ եւ ոչ մարգարէութիւն ամենեքեան տեսցեն, բայց միայն առաքինիքն՝ ցնծալով ընդ առաջ⁶ աջոյ⁷ կողմանէն՝ ըստ Աւետարանին բանի⁸ հրաւիրեալք յարքայութիւնն⁹:

1 K_b շամբուղ

2 K_{ar} մնջեցինն փխ մնջեցինն (ABK_b)

3 K_{abr} չիք եւ (AB)

4 K_b Տէրն

5 K_b հրեշտակակերպս

6 K_b յառաջ

7 K_a աջու, K_b յաջոյ փխ աջոյ (ABK_r)

8 K_r բանին

9 K_b յարքայութեանն, $abclrK_g$ չիք Բ. Իսկ եթէ ոք ... յարքայութիւնն (*Մատ. 10-24*)

ՄԱՀԱԿ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՈՒՂԿԱՅԻ

ԿԱՆՈՆԶ ԺՈՂՈՎՈՅՆ ԿԱՐՆՈՅ

ՍԱՀԱԿ ՈՒՂԱԿՑԻՆ ԵՒ ԿԱՐՆՈՅ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Սահակ Բ կաթողիկոսին ձեռագրերում վերագրվում է ինչպես հինգ, այնպես էլ եօթ եւ տասը տարուայ գահակալութիւն: Ըստ այդմ՝ նա աթոռակալած է համարուում 534-539 թթ. (Մ. Օրմանեան) կամ 528-538 թթ. (Վ. Պ. Անանեան): Նրա անունով Գիրք Թղթոցում պահպանուած է Սահակայ Հայոց կաթողիկոսի եւ մեծի թարգմանչի ընդդէմ երկարմակաց Նեստորականաց երկը, որը, սակայն, գրուած է Թ դ. Սահակ Մուտ վարդապետի կողմից: Ստորեւ հրատարակուող Կարնոյ ժողովի կանոնները գրականութեան մէջ երբեմն վերագրուում են Սահակ Գ Չորոփորեցուն (677-703 թթ.): Սակայն անհրաժեշտ է նշել, որ կանոններում չկայ որեւէ հանգամանք, որը թոյլ կը տար դրանք համարել է դ. աւարտի կամ Ը դ. սկզբի գործ: Մասնաւորապէս՝ բացակայում են այդ դարում սովորական քննարկումները միակամութեան (մոնոթելիզմի) թեմաներով, որոնք յատկապէս առօրէական դարձան Բիւզանդիայում Յուստինիանոս Բ կայսեր տիրապետութեան տարիներին (685-695, 706-711 թթ.):

Կարնոյ (Թէոդոսուպօլսի) ժողովի արձանագրութեան նախաբանում կայ հետեւեալ՝ թուագրում ենթադրող վկայութիւնը. «... որ ժողովեցան յամենայն քաղաքաց եւ յաշխարհաց Յունաց եւ ի Հռոմոց եւ ի մեծն Հռովմայ, հրամանաւ մեծի թագաւորին Յուստինեայ, որ նախանձայոյզ եղեալ աւրինացն Աստուծոյ եւ սրբոց առաքելոցն քարոզութեան, ժողով հրամայեաց լինել ի միջասահմանս աշխարհին Հայոց, Վրաց եւ Աղուանից: Որ ժողովեցան բազում եպիսկոպոսք յամենայն քաղաքաց հանդերձ կաթողիկոսաւն Հայոց Սահակաւ: ... Եւ ժողովեցան բազում եպիսկոպոսք Վրաց եւ Աղուանից ի քաղաքին Թէոդոսուպաղիս եւ միաւորեցան ի հաւատս սրբոց առաքելոցն եւ ի կանոնս սուրբ ժողովոյն...»: Է դ. վերջում դժուար է ենթադրել ոչ միայն Հայոց եւ Յունաց համատեղ ժողովը Արաբական խալիֆայութեան եւ Բիւզանդական կայսրութեան սահմանագիծ Կարինում, այլեւ յատկապէս՝ Վրաց եպիսկոպոսների մասնակցութիւնը այդպիսի ժողովին:

Ժամանակագրական բոլոր տարբերակներում Սահակ Ուղկացու (կամ Հարքացու) աթոռակալութիւնն ընկնում է Յուստինիանոս Ա կայսեր օրերում (527-565 թթ.): Վերջինս աւելի շատ յայտնի է քաղկեդոնականութիւնը դաժանօրէն պարտագրելու իր քաղաքականութեամբ: Սակայն Փիլոն Տիրակացու ժամանակագրութեան (գրուած 686 թ.) տուեալներով, իր իշխանութեան առաջին փուլում կայսրը վարում էր այլ քաղաքականութիւն: Մասնաւորապէս՝ նա յետ կանգնեց իր նախորդ Յուստինոս Ա կայսեր (518-527 թթ.) գծից, որը չէր շարունակել իր նախորդներին՝ Զենոն (474-491 թթ.) եւ Անաստաս (491-518 թթ.) կայսրերի հաշտեցուցիչ դիրքորոշումը Քաղկեդոնի ժողովին առնչուող խնդիրներում (Յուստինոս Ա-ի այդ մօտեցման մասին եւս ժամանակագրութիւնը համառօտ հաղորդում է): Աւելացնենք, որ Յուստինիանոս Ա կայսեր ժամանակ Հայոց եկեղեցու կողմից հակաքաղկեդոնական դիրքորոշման մասին անուղղակի հաղորդում է պարունակում նաեւ Սեբէոս պատմիչի մօտ պահպանուած՝ Ներսէս Գ Շինող կաթողիկոսի Կոնստանտ Բ կայսերն ուղղուած 648 թ. նամակը: Այստեղ ասուում է. «...մինչեւ հրաման տալ Կաւատայ արքայի եւ որդւոյ նորին Խոսրովու, եթէ՛ իւրաքանչիւր ոք զիւր հաւատս կալցի, եւ զՀայս նեղել ոք մի իշխեսցէ» (Խոսրով Անուշիրուան արքայից արքան փոխարինել է Տօրը 531 թ.):

Յուստինիանոս Մեծ կայսեր ժամանակ տեղի ունեցած ժողովի մասին աւելի մանրամասն տեղեկութիւններ է հաղորդում եւ ստորեւ ներկայացուող կանոններից գրեթէ մէջբերումներ կատարում Ը դ. առաջին կէսի հեղինակ Ստեփաննոս Սիւնեցին (Գիրք Թղթոցում պահպանուած Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի, մեծի իմաստասիրի Պատասխանի թղթոյն Անտիոքու եպիսկոպոսի, գոր վասն հաւատոյ գրեալն էր վերտառութեամբ երկում): Եղած փաստերը բաւարար են թուում Կարնոյ ժողովը Զ դ. 20 կամ 30-ական թթ. թուագրելու համար: Անհասկանալի է մնում միայն, թէ ինչու կանոնների բնագրում յիշատակուած չէ Սասանեան արքայից արքայի (Կաւատի կամ Խոսրով Անուշիրուանի) գահակալութեան համապատասխան տարին: Թերեւս, պէտք է ենթադրել, որ դրա պատճառը եղել է ժողովի՝ Կարինում, այսինքն՝ Հայաստանի բիւզանդական մասում տեղի ունեւալը:

Կարնոյ ժողովի կանոնները պահպանուել են Հայոց կանոնագրքի ձեռագրերում՝ ԽԲ, իսկ Բ խմբի օրինակներում՝ ՄԹ թուահամարի տակ: Բ խմբի՝ մեր կողմից K_b նշանակուող ենթախմբի օրինակներն աւարտուում են աւելի վաղ կանոնախմբերով եւ չունեն Սահակ Ուղկացու կանոնները: Ինչպէս պարզաբանել է Վազգէն Յակոբեանը, Կանոնագրքի 200 օրինակների մեզ հասած երկու ձեռագրախմբերը ծագում են Ժ դ. վերջում (992-997 թթ. միջեւ) կազմուած մէկ ընդհանուր մայր տարբերակից, որն ունեցել է 40 կանոնախումբ: Նրանից են ծագում Հայոց կանոնագրքի հնագոյն երկու ձեռագրերը՝ *A* գրչագիրը՝ արտագրուած 1098 թ. (Նոր Զուղայի ձեռագիր), եւ *B* գրչագիրը՝ արտագրուած, ըստ ամենայնի, միեւնոյն մայր օրինակից ԺԳ դ.: Դրանցից կատարուած ընդօրինակութիւնները կազմում են Հայոց կանոնագրքի ձեռագրերի Ա խումբը: Ժ դ. վերջի այդ տարբերակից են արտագրուել նաեւ Հայոց կանոնագրքի ձեռագրերի Բ խմբի մեզ հասած երեք ենթախմբերի մայր գրչագրերը: Նրանցից ոչ մէկը մեզ չի հասել, ուստի Բ խմբի մայր օրինակի ընթերցումների մասին պատկերացում կազմելու համար անհրաժեշտ է նախապէս վերականգնել բոլոր երեք ենթախմբերի ձեռագրերի մայր գրչագրերի ընթերցումները: Կատարելով այդ աշխատանքը (Վ. Յակոբեանի համեմատական հսկայածաւալ աշխատանքի օգնութեամբ)՝ ենթախմբերը պայմանականօրէն անուանել ենք՝ K_a (*acdkmpsv* ձեռագրեր՝ ԺԶ-ԺԷ դդ.) եւ K_r (*hloru* ձեռագրեր՝ ԺԷ դդ.): Ընդհանուր առմամբ, Վ. Յակոբեանի աշխատանքի շնորհիւ իւրաքանչիւր ենթախմբի նախնական ընթերցումների վերհանումը լուրջ խնդիրներ չի յարուցում (որոշ կասկածելի դէպքերում շահագրգիռ ընթերցողն ինքը կարող է դիմել Վազգէն Յակոբեանի քննական-համեմատական հրատարակութեան տողատակերի մատուցած սպառիչ նիւթին):

Կանոնագրքի ձեռագրախմբերի ընթերցումների համագիր օգտագործմամբ կազմուած Կարնոյ ժողովի Կանոնների քննական բնագիրը մեծ հաւանականութեամբ պատկերացում է տալիս նրա վեցերորդարեան վիճակի մասին: Ստորեւ ներկայացուած բնագրի տողատակերում հաշուի չեն առնուած Կանոնագրքի առանձին ձեռագրերի տարընթերցումները, քանի որ դրանք հաստատապէս արտագրուել են *A*, *B* ձեռագրերից կամ Բ խմբի ձեռագրախմբերի (վերականգնուած) մայր օրինակներից, ուստի չեն կարող օգտակար համարուել Կանոնների ինքնագրի վերականգնման հարցում: Հայոց կանոնագրքի կազմող գրիչների կողմից աւելացուած վերնագիրը եւ յօդուածացանկը վերցրել ենք փակագծերի մէջ: Իբրեւ Զ դ. բնագրի վերականգնում՝ բնականաբար, բաց են թողնուած կանոնագրքային ընդհանուր գլխակարգութեան յօդուածահամարները: Բնագրի տողատման եւ կէ-

տաղրման խնդրում էապէս օգտուել ենք Հայոց կանոնագրքի քննական հրատարակութեան հեղինակ Վ. Յակոբեանի կատարած աշխատանքից:

Ալեքսան Յակոբեան

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

1. **Աշոտ Գ. Աբրահամեան, Անանիա Շիրակացու մատենագրութիւնը**, Երեւան, 1944:
2. **Հ. Պօղոս Անանեան, Քննութիւն հայ եկեղեցւոյ պատմութեան ե. եւ Ջ. դարերու շրջանին**, Վենետիկ-Ս. Ղազար, 1991:
3. **Գիրք Թղթոց**, Երուսաղէմ, 1994:
4. **Աբրահամ Զամինեան, Հայոց եկեղեցու պատմութիւն**, հտ. Ա-Բ, Նոր Նախիջեւան, 1908-1909:
5. **Կանոնագիրք Հայոց**, աշխատասիրութեամբ՝ Վազգէն Յակոբեանի, հտ. Ա, Երեւան, 1964. հտ. Բ, Երեւան, 1971:
6. **Հ. Վարդան Հացունի, Կարելոր խնդիրներ Հայ եկեղեցւոյ պատմութեան**, Վենետիկ-Ս. Ղազար, 1927:
7. **Աբէլ արքեպս. Մխիթարեանց, Պատմութիւն ժողովոց Հայաստանեայց եկեղեցւոյ՝ հանդերձ կանոնադրութեամբ ի պէտս ժառանգաւորաց**, Վաղարշապատ-Ս. Էջմիածին, 1874:
8. **Պատմութիւն Սերէնոսի**, աշխատասիրութեամբ՝ Գ. Վ. Աբգարեանի, Երեւան, 1979:
9. **Նորայր եպս. Պողարեան, Սահակ վարդապետ (Մոռուտ). Բացայայտութիւն**, Երուսաղէմ, 1994:
10. **Միշել Վան Էսթրուկ, Բիւզանդիայի հայկական քաղաքականութիւնը՝ սկսած Յուստինիանոս Բ-ից մինչեւ Լեւոն Գ, «Էջմիածին»**, Վաղարշապատ-Ս. Էջմիածին, 1997, թիւ 2-է:
11. **Մաղափա արքեպս. Օրմանեան, Ազգապատում**, §§ 354-355:

ՏԱՌԱՆԻՇԵՐ ԲԱՂԴԱՏՈՒՄԸ ԶԵՌԱԳՐԵՐԻ

A - Նոր Զուղայի ձեռ. թիւ 131 (ՄՄ լուսանկարների հաւաքածոյ, թիւ 203), ժամանակ՝ 1098 թ.

B - ՄՄ ձեռ. թիւ 6409, ժամանակ՝ ԺԳ դ.

K_a, *K_b*, *K_r* - Հայոց կանոնագրքի Բ խմբի ձեռագրախմբերի վերականգնուած մայր օրինակների ընթերցումներ (ըստ Վազգէն Յակոբեանի համեմատած նիւթի)

**ԽԲ¹. ԿԱՆՈՆՔ ՍՈՒՐԲ ԺՈՂՈՎՈՅՆ, ՈՐ ԺՈՂՈՎԵՑԱՆ² Ի
ԹԵՈՂՈՍՈՒՊԱՒԻՍ³, ՈՐ ԱՅԺՄ ԿՈՉԻ ԿԱՐՆՈՅ ԲԱՂԱՔՂ**

1 Սուրբ եւ աստուածասէր ժողովն⁴, որ ժողովեցան յամենայն քաղաքաց եւ յաշխարհաց⁵ Յունաց եւ ի Հռոմոց⁶ եւ ի մեծն Հռովմայ⁷, հրամանաւ մեծի թագաւորին Յուստինեայ, որ⁸ նախանձայոյզ եղեալ աւրինացն Աստուծոյ եւ սրբոց առաքելոցն քարոզութեան, ժողով հրամայեաց լինել ի միջասահման աշխարհին Հայոց⁹, Վրաց եւ Աղուանից: 2 Որ ժողովեցան բազում եպիսկոպոսք յամենայն քաղաքաց հանդերձ կաթողիկոսաւն¹⁰ Հայոց¹¹ Սահակաւ՝ եւ հրամանաւ նորին թագաւորին¹² զսրբոց առաքելոցն զաւանդութիւնս եւ զսուրբ ժողովոյն Նիկիայ եւ զՃՄ-իցն, որ ի Կոստանտինուպաղիս¹³ եւ զՄ-իցն¹⁴, որ յԵփեսոս, զայն հաստատել¹⁵ հաւատ եւ նզովել զամենայն հերձուածողս¹⁶ զառաջինս եւ զմիջինս եւ զվերջինս: 3 Նախ եւ առաջին՝ զաղանդն Մարկիովնեայ¹⁷ եւ

զաղանդն Արտեմովնի¹⁸ եւ զաղանդն Մանիքեցւոցն¹⁹ եւ զաղանդն Պաւղեայ²⁰ Սամոսացւոյ եւ զաղանդն Արիոսի եւ զաղանդն Մակեդովնի²¹ եւ զտումարն Ղեւոնի²² եւ զամենայն հերձուածողս²³, որք²⁴ արտաքոյ սրբոց առաքելոցն քարոզութեան եւ սուրբ ժողովոյն են ասացեալ, արտաքս ընկենուլ յեկեղեցւոյ²⁵ եւ աւտար համարել եւ ոչ հաղորդել ընդ այնպիսեացն, եւ թագաւորական հրամանաւ²⁶ յաքսորս բնակեսցէ այնպիսին մինչեւ ցար մահուան իւրոյ:

4 Եւ ժողովեցան բազում եպիսկոպոսք Վրաց եւ Աղուանից ի քաղաքին²⁷ Թէոդոսուպաղիս²⁸ եւ միաւորեցան ի հաւատս սրբոց առաքելոցն եւ ի կանոնս սուրբ ժողովոյն եւ ինչ ինչ, որ պէտք էին, եղին ի լրութիւն եկեղեցւոյ²⁹ եւ ի կանոնս զգուշաւորս՝ գլուխս³⁰ Թ³¹:

5 Ա. Վասն Յայտնութեան:

6 Բ. Վասն սուրբ միոնոնի³²:

7 Գ. Վասն Աւետարանացն¹ կարդացման:

1 *K_{ar}* ԾԹ՝ փխ ԽԲ
2 *BK_{ar}* չի՛ք ժողովեցան
3 *K_{ar}* Թէոդոսուպաղիս փխ Թէոդոսուպաղիս (*AB*)
4 *K_r* ժողովուրդն փխ ժողովն
5 *K_a* աշխարհաց
6 *K_r* Հռոմայս փխ Հռոմոց
7 *K_r* Հռոմայ փխ Հռովմայ
8 *BK_{ar}* որք փխ որ
9 *A* Հայոց փխ Հայոց (*BK_{ar}*), (գուցէ Ջ դ. բնօրինակին Է յանգում հէնց այս Հայոց ընթերցումը, որն արձանագրուած է, օրինակ, Արուսի կաթողիկէի շինարարական վիմագրում. «...ի ձեռն Գրիգորի Մամիկոնեանի Հայոց իշխանի...»)
10 *A* կաթաղիկոսաւն
11 *A* Հայոց փխ Հայոց (*BK_{ar}*)
12 *K_r* թագաւորի
13 *K_{ar}* Կոստանդինուպաղիս, *B* Կոստանդինուպաղիս փխ Կոստանտինուպաղիս (*A*)
14 *K_r* զԲՃ-իցն փխ զՄ-իցն
15 *K_r* հաստատեալ փխ հաստատել
16 *BK_a* հերձուածաւղս
17 *K_{ar}* Մարկիոնեայ, *B* Մարկիոնի փխ Մարկիովնեայ (*A*)

18 *BK_{ar}* Արտեմոնի փխ Արտեմովնի (*A*)
19 *AB* Մանիքեցւոցն, *K_r* Մանիքեցւոցն փխ Մանիքեցւոցն (*K_a*)
20 *A* Պաւղեայ *K_r* Պաւղոսի փխ Պաւղեայ (*BK_a*)
21 *BK_{ar}* Մակեդոնի փխ Մակեդովնի (*A*)
22 *K_{ar}* Լեւոնի փխ Ղեւոնի (*AB*)
23 *BK_a* հերձուածաւղս, *K_r* հերձուածողս փխ հերձուածողս
24 *K_r* որ
25 *K_r* յեկեղեցւոյ
26 *K_r* հրամանաւն
27 *K_a* քաղաքին, *K_r* քաղաքն փխ քաղաքին (*AB*)
28 *K_{ar}* Թէոդոսուպաղիս փխ Թէոդոսուպաղիս (*AB*)
29 *K_r* եկեղեցւոյ
30 *K_r* գլուխ
31 *BK_a* չի՛ք գլուխս Թ
32 *BK_{ar}* մեոնոնի փխ միոնոնի (*A*), (=միւոնոնի)

- 8 Դ. Վասն ընթերցուածոցն, որ ցրագալուցիցն² երիկունն կարդան:
- 9 Ե. Վասն ուրարեացն ընթերցուածոցն եւ Աւետարանացն:
- 10 Զ. Վասն Տեառնընդառաջին եւ նորին ընթերցուածոցն³:
- 11 Է. Վասն Աւետարանի եւ չորանաշակ լինելոյ, թէ ի սուրբ Քառասներորդսն⁴ հանդիպի:
- 12 Ը. Սակս⁵ Առաջաւորութեան հացին, թէ պարտ է անխմոր լինել, եւ գարբութեան բաժակն՝ անխառն եւ անապակ ի ջրոյ:
- 13 Թ. Վասն զգեստի քահանային, որ ի պատարագն եւ⁶ սարկաւագին:
- 14 ԿԱՆՈՆՔ ՍՈՒՐԲ ԺՈՂՈՎՈՅՆ ԿԱՐՆՈՅ⁷

15 Ա. Վասն մեծի Յայտնութեանն, զոր կարգեցին առաքելքն ի Հոգւոյն⁸ Սրբոյ, ի յանուարի⁹ Զ-ն¹⁰ կատարել մեծ առաւելութեամբ ի փառս Աստուծոյ:

16 Արդ՝ եթէ ոք ի պատրիարգաց կամ¹¹ ի մայրաքաղաքաց եպիսկոպոսաց կամ յերիցանց¹² կամ ի սարկաւագաց այդպէս¹³ խորհիցի եւ արտաքոյ Առաքելական կանոնաց, զոր ոմանք ի ղեկտեմբերի ԻԵ-ն¹⁴ Մնունդ առնեն՝ մոլորեալք յաղանդն Արտեմոնի, արդ՝ եթէ ոք ըստ այնմ

մտաց խորհիցի եւ մոլորիցի յուղիղ կարգաց եւ ի կրանից Աստուծոյ, այնպիսին անկցի ի կարգէ եւ յաշտիճանէ¹⁵ մերժեսցի: 17 Եթէ պատրիարգ իցէ եւ եթէ եպիսկոպոս, հրամանաւ թագաւորականաւ ելցէ յաշխարհէ եւ յաքսորս բնակեսցէ մինչեւ ի մահ, զի մի՛ արմատ դառնութեան ի վեր երեւեալ եւ նովաւ բազումք պղծիցին: 18 Զոր եւ ոմն ի մերոց եղբարց յԱսիացւոց¹⁶ աշխարհին տաւնեաց ընդ Ասորիս՝ հետեւող¹⁷ եղեալ Արտեմոնի, տարագրեցաւ յեկեղեցոյ¹⁸ եւ արտաքս անկաւ իբրեւ զուռն՝ ըստ բանին Տեառն: 19 Արդ՝ եթէ եպիսկոպոս կամ երէց կամ սարկաւագ կամ բնաւ իսկ ի քահանայական կարգէ հետեւող¹⁹ եղիցի այնմ²⁰ աղանդի, այնպիսին նգովեալ եղիցի յԱստուծոյ եւ ի սուրբ ժողովոյս²¹. ամէն:

20 Բ. Վասն սուրբ աւծման ձիթոյն, զոր կարգեցին առաքելքն:

21 Յաւուր Յայտնութեան սաղմոսիւք եւ աւրհնութեամբ եւ երգովք հոգեւորաւք²² եւ մոմեղինաւք²³, ջահիւք բորբոքելովք ընդ արեւագալն ի ջուրն երթան եւ ի նմին աւուր աւրինակաւ Յորդանանու²⁴, զոր Տէրն կատարեաց ի փրկութիւն ամենայն հաւատացելոց մկրտութեամբ²⁵ իւրով եւ ջաղխեաց²⁶ զգլուխ վիշապին ի վերայ ջուրցն եւ ետ աւրինակ ամենեցուն, նոյն մկրտութեամբ ծնանիլ ի ջրոյ եւ ի Հոգւոյ²⁷ եւ ջաղխեալ¹ զգլուխ վիշապին ի

1 *K_a* Աւետարանաց
 2 *K_r* ցրագալուցի
 3 *K_r* ընթերցուածոցն
 4 *K_a* Քառասներորդսն փ/ս Քառասներորդսն
 5 *K_a* վասն փ/ս սակս
 6 *K_r* եւ ի
 7 *BK_{ar}* չի՛ Կանոնի ... Կարնոյ
 8 *K_r* հոգոյն
 9 *K_a* յունուարի, *K_r* յունվարի փ/ս յանուարի (AB)
 10 *K_r* Զ, *B* ի Զ-ն փ/ս Զ-ն
 11 *A* կամ կամ
 12 *K_r* երիցանց
 13 *BK_{ar}* այլագ փ/ս այլագ (A)
 14 *BK_a* ի ԻԵ-ն, *K_r* ԻԵ փ/ս ԻԵ-ն (A)

15 *K_r* յաստիեանէ փ/ս յաշտիեանէ (*ABK_a*)
 16 *B* յԱսիացիոց
 17 *K_a* հետեւաւ
 18 *K_r* յեկեղեցոյ
 19 *K_a* հետեւաւ
 20 *K_r* յայնմ
 21 *K_{ar}* ժողովոյն փ/ս ժողովոյս (AB)
 22 *B* հոգեւորով
 23 *B* մոմեղեմաւ
 24 *K_r* Յորդանանաւ փ/ս արիմակաւ Յորդանանու
 25 *K_r* մկրտութեամբն
 26 *BK_r* ջախեաց
 27 *K_r* շոգոյ

Ջուրն² եւ կոխան լինել գարշապարի մե-
րում առաք հրամանն ի Տեառնէ: 22 Արդ՝
եթէ եպիսկոպոս կամ քահանայ կամ սար-
կաւագ ծուղասցի³ եւ ոչ երթիցէ ի Ջուրն
աւրինակաւ Յորդանանու ցնծալից բերկ-
րանաւք եւ ոչ աւրհնեսցէ զՋուրն եւ ոչ
արկցէ յաւծման իւղոյն ի Ջուրն եւ կամ
չքաւորութեամբ կամ ծուղութեամբ⁴, այն-
պիսին դատապարտեսցի յԱստուծոյ եւ
արտաքոյ մերոյ եկեղեցւոյս⁵ ելցէ, եւ թէ
ժողովրդական է՝ որոշեսցի:

23 **Գ.** Եւ պարտ է Աւետարան կար-
գալ՝ ի Մատթէոսէ⁶ սկիզբն առեալ յա-
ռաջնմէն⁷ Գիրք ծննդեան Յիսուսի Քրիս-
տոսի՞, եւ միապէս զամենայն խոր-
հուրդսն⁹ կատարել զծննդեանն, զմկրտու-
թեանն մինչեւ յայն տեղի, թէ՛ Հրեշտակի
մատեան եւ պաշտէին զնա՞: 24 Եւ ապա
զնշան խաչին իջուցանեն ի Ջուրն եւ ամե-
նայն բազմութիւն ժողովրդեանն՝ առնուլ
յաւրհնութեան ջրոյն ըստ իւրաքանչիւր
կարգի ի բժշկութիւն մարդոյ¹¹ եւ անաս-
նոց, ողջամիտ հաւատովք եւ ուղիղ
մտաւք նկատել եւ տեսանել ի Ջուրն գայն,
որ էջն ի Յորդանան մարմնաւոր տես-
լեամբ եւ ազաւնակերպ երեւմամբ եւ¹² ի
վերուստ վկայելով՝ Դա է որդի իմ սիրելի՞:

25 **Դ.** Եթէ եպիսկոպոս կամ երէց կամ
սարկաւագ կամ բնաւ իսկ ի քահանայա-

կան կարգէ փոխեսցէ զգիրս ընթերցուա-
ծոցն զԱւետարանացն զճրագալուցին, զոր
սրբոյն Յակովբայ¹⁴ եղբաւր¹⁵ Տեառն մե-
րոյ, եղեալ է յաղագս կնոջն փրկութեան ի
Հոգւոյն¹⁶ Սրբոյ:

26 Այդ¹⁷ արդ, ասեմ, եթէ ոք այլագ-
գաբար խորհիցի¹⁸ ըստ Արտեմովնի¹⁹ եւ
ըստ Յոբնաղի դրութեանն²⁰ եւ փոփոխէ
գտահմանս առաքելականս եւ ոչ ընթերց-
ցի²¹ Աւետարան²² ըստ Ղուկայ՝ եւ հովիւի
Էիմ²⁴ ըստ կնոջն փրկութեան, եւ յետոյ ի
Մատթէոսէ²⁴ ըստ մարմնաւորութեանն եւ
նախնիս ունել²⁵ զԴաւիթ եւ զԱբրահամ²⁶,
եւ եթէ այլագգ ինչ խորհիցի եւ մտացա-
ծին բանիւք վտարանդի առնէ զմարդիկ՝
այնպիսին նզովեալ եղիցի յԱստուծոյ եւ ի
սուրբ ժողովոյն. եթէ քահանայ է՝ լուծցի,
եւ եթէ ժողովրդական՝ որոշեսցի: 27 Եւ ե-
թէ ոչ ընթերցցի²⁷ զընթերցուածոցն գիրս,
զոր եղեալ է, առաջինն²⁸ վասն աշխարհա-
րարութեանն²⁹ եւ յետոյ՝ զԵսայեայ մար-
գարէի զընթերցուածն³⁰, զոր եղեալ համա-
ռաւտ վասն տնաւրէնութեանն³¹ Տեառն,
եւ յետ ամենեցուն ի Դանիէլէ³² եւ զերգս
Երից մանկանցն եւ՝ «զՍատանայ ի հուր»:

1 BK_r ջախեալ
2 K_r ի վերայ ջուրցն փխ ի ջուրն
3 BK_{ar} ծուլասցի փխ ծուղասցի (A)
4 BK_{ar} ծուլութեամբ փխ ծուղութեամբ (A)
5 K_r եկեղեցոյս
6 AB Մաթէոսէ փխ Մատթէոսէ (K_{ar})
7 K_{ar} յառաջագոյն փխ յառաջնմէն (AB)
8 Մատթէոս 1
9 K_r խորհուրդն
10 Մատթէոս 10-11
11 A մարդոց, K_r մարմնոյ փխ մարդոյ (BK_a)
12 K_r չիք եւ
13 Մատթէոս 5, Մատթէոս 10-7

14 K_r Յակովբայ
15 K_a եղբաւրն
16 K_r Հոգոյն
17 AK_{ar} այլ փխ այլ (B)
18 K_r խորհեսցի փխ խորհիցի
19 BK_{ar} Արտեմովնի փխ Արտեմովնի (A)
20 K_r գրութեանն փխ դրութեանն
21 BK_{ar} ընթերցի փխ ընթերցցի (A)
22 K_r Աւետարանն
23 Դ. 1-4. ԲՑ
24 BK_a Մաթէոսէ
25 K_r ունելով փխ ունել (ABK_a)
26 BK_a զԱբրահամ
27 BK_a ընթերցի փխ ընթերցցի (AK_r)
28 K_r յառաջինն
29 ABK_a աշխարարութեանն փխ աշխարհարարու-
թեանն (K_r)
30 K_r ընթերցուածն
31 K_r տնաւրէնութեան փխ տնաւրէնութեանն
(ABK_a)
32 K_{ar} Դանիէլէ փխ Դանիէլէ (AB)

եւ որ այդպէս¹ խորհիցին՝ այնպիսիքն նզովեալ եղիցին յԱստուծոյ եւ ի մէնջ եւ ի սուրբ ժողովոյն:

28 **Ե.** Վասն Ը-աւրեայ² աւուրցն ընթերցուածոցն եւ Աւետարանացն՝ թէ պարտ է զամենայն աւուրսն³ ընթեռնուլ ընթերցուած⁴ յառաքելական մատենիցն Պաւղոսի եւ ոչ ընթեռնուլ⁵ մարգարէ, վասն զի ամենայն քարոզութիւն մարգարէիցն կատարեցաւ յերեկորին ճրագալուցին եւ միաւորեցաւ հարսն եւ փեսայն յառագաստին:

29 Վասն զի այսպէս⁶ կանոնեցին առաքելաքն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: 30 Եւ սուրբն Յակովբոս⁷ կարգեաց⁸ զընթերցուածս⁹ եւ յաւրինեաց՝ յերկրորդում¹⁰ աւուրն ի մատրան սրբոյն Ստեփաննոսի¹¹ ժողովելոյ¹² եւ անդ կատարելով¹³ զաւրէն կոծոցն եւ յետոյ՝ ի Պաւղոսի առաքելական մատենէն եւ Աւետարան ի Յովհաննէ: 31 Եւ յերրորդում¹⁴ աւուր կիրակէին¹⁵ ժողովին ի սուրբ մատրանն, որ է կաթողիկէն¹⁶ եւ բարձրագահ, քան զամենայն եկեղեցիս, եւ ընթեռնուլ ընթերցուած յառաքելական մատենէն եւ Աւետարան ի Մատթէոսէ¹⁷ Իբրեւ նոքա

գնացին¹⁸: 32 Եւ այսպէս զամենայն աւուրսն կատարել զըրութեամբ սրբոյն Յակովբայ¹⁹ ի փառս Աստուծոյ եւ մի՛ հետեւել²⁰ զըրութեան²¹ Յորնաղի եւ Արտեմովնի²² եւ նոցին խորհողացն: 33 Ապա եթէ²³ ոք գտցի աւտար քարոզութեան հաւանեալ²⁴ եւ արարեալ, եթէ քահանայ է՝ լուծցի, եթէ²⁵ ժողովրդական՝ որոշեսցի, եթէ²⁶ եպիսկոպոս՝ արտաքոյ աշխարհաց ելցէ, թագաւորական հրամանաւ յաքսորս բնակեսցէ²⁷ մինչեւ ցաւր մահուանն²⁸ իւրոյ:

34 **Զ.** Վասն աւրինաւոր տաւնի Քառասներորդաց²⁹ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, զոր ի փերուարի³⁰ ի³¹ ԺԴ-ն հրամայեցաւ կատարել, ի փառս Աստուծոյ եւ մի՛ տաւնել ընդ հերձուածողս³²:

35 Որք զըրութեամբ Արտեմովնի³³ մուրեցան յուղիղ ճանապարհէն եւ զղբի³⁴ եւ զընթերցուած փոխեցին, կամ եղեւ մեծ եւ աստուածասէր ժողովոյս, զի ժողովեալ ամենայն հաւատացելոց՝ բերկրանաւք սրտիւ եւ ցնծալից ուրախութեամբ, հսկմամբ յերեկորեայ³⁵ տաւնեսցեն ի փառս Աստուծոյ, յորում աւուր եւ հանդիպեսցի՝ հոգեւորական աւրհնութեամբ, ջահիւք բորբոքելովք աւրհնել զայն, որ ըստ

1 BK_a այլագգ, K_r այլագգի փխ այդագգ (A)
2 K_a ուրբաւրեայ
3 K_r աւուրս
4 K_r ընթերցուածս
5 K_r ընթեռնուլ
6 K_r այնպէս
7 K_r Յակովբոս
8 K_r կարգեալ փխ կարգեաց
9 K_r զընթերցուածսն
10 K_r յերկրորդումն
11 AB Ստեփանոսի փխ Ստեփաննոսի (K_{ar})
12 K_a ժողովելով փխ ժողովելոյ (ABK_r)
13 K_r կատարելոյ փխ կատարելով
14 K_r յերրորդումն փխ յերրորդում
15 K_r կիրակէին
16 B կաթողիկէ, K_a կաթողիկէն, K_r կաթողիկէ փխ կաթողիկէն (A)
17 ABK_a Մատթէոսէ փխ Մատթէոսէ (K_r)

18 Մատթ. ԺԵ 7
19 BK, Յակովբայ
20 K_r հետեւիլ
21 B դրութեանցն, K_a դրութեանն փխ դրութեան (AK_r)
22 K_{ar} Արտեմոնի
23 K_{ar} թէ փխ եթէ (AB)
24 A հաւանել փխ հաւանեալ (BK_{ar})
25 K_r եւ եթէ
26 ABK_a թէ փխ եթէ (K_r)
27 BK_{ar} կացցէ փխ բնակեսցէ (A)
28 K_{ar} մահուան փխ մահուանն (AB)
29 K_r Քառասներորդաց
30 A փետրոսի, K_{ar} փետրուարի փխ փետրուարի (B)
31 K_r չիբի
32 BK_a հերձուածաւղս
33 BK_{ar} Արտեմոնի
34 K_r զգիբ
35 K_{ar} յերեկորեայ փխ յերեկորեայ (AB)

մարմնոյ մարդացաւ եւ կրեաց զամենայն կիրս մարդկային բնութեանս: 36 Մինչեւ յերրորդ¹ ժամն եղիցին ի հսկման ամենայն զգուշութեամբ, եւ յերրորդ ժամուն պատարագ մատչի՝ ի փրկութիւն ամենայն հաւատացելոց, որ զսրբութեամբ վայելողացն² աստուածատեսակս գործէ: 37 Յորում աւուրն³ զգիշերն որպէս տիւ⁴ լուսաւորէ, այնմ աւուր նկարե՛լ եւ ակն ունե՛լ, եւ մի՛ արհամարհանաւք եւ ծուղութեամբ⁵: 38 Ապա եթէ ի պահս սուրբ Զատիկի աղուհացիցն Քառասներորդացն⁶ հանդիպիցի, յորում աւուր հանդիպի՝ ի նմին աւուր տաւնեսցի սաղմոսիւք եւ աւրհնութեամբ⁷ եւ երգովք հոգեւորաւք⁸: 39 Եւ մի՛ փոխեսցեն զաւրն՝ ծուղութեամբ⁹ պատճառաւ արհամարհանաւք, եւ պատարագ մատչիցի ի փառս Աստուծոյ եւ ի կատարումն խորհրդոյն: 40 Եւ ի փափուկ կերակուրս ամենեւին մի՛ լուծանիցին՝ մի՛ ի¹⁰ ձէթ, մի՛ ի գինի եւ մի՛ ի ձուկն, բայց¹¹ ի հաց եւ ի¹² յաղ: 41 Եւ եթէ ոք ըստ սովորական սրբոյ բաժակին այդ¹³ ինչ ազահիցի ի պատարագին՝ անընկալ լիցի, տաւնն եւ պահքն անվաւեր եղիցի: 42 Ըստ Մեծի հինգշաբաթի աւուրն պատարագին եղիցի պատարագն եւ կերակուրն, ապա եթէ յարձակման¹⁴ աւուր հանդիպիցի՝ զառնագէն խմբեսցեն ամենայն հաւատացեալք ի Քրիստոս:

43 Է. Բայց եթէ ուրբաթի կամ չորեքշաբաթի հանդիպի՝ ըստ վերագոյն պատուիրանիդ¹⁵ պահո՛վք¹⁶ տաւնեսցեն, եւ մի՛ լուծմամբ կերակրոց կամ ըմպելեաց¹⁷: 44 Եւ եթէ ոք ի հաւատացելոց անցցէ¹⁸ ընդ¹⁹ կանոնեալ սահմանադրութիւնդ²⁰ անիծեալ լիցի, վասն զի այսպէս պատուիրեցաւ ընդ ամենայն աշխարհ ի սրբոց առաքելոցն եւ աւանդեցաւ մեզ, եւ մեք այնմ հետեւեալ եմք, զոր նոքայն քարոզեցին եւ հաստատեցին: 45 Թէպէտ եւ զատեալք եւ մեկնեալք ի փշաբեր անապատ գնացին ոմանք եւ եղեն լուցկիք հրոյ եւ կերակուր որդանցն, այդ²¹ մեզ քաւ լիցի խոտորել ի սրբոց քարոզութենէն. ապա եթէ գտցի ոք զայս արարեալ՝ աւտար եղիցի ի մէնջ եւ ի սրբոց աւրհնութենէ²² հեռի եղիցի:

46 Ը. Դարձեալ ի վերայ այսր ամենայնի պատուիրանադիր²³ աւանդութեանս՝ գեր քան զասացեալս աւանդեմք կանոնական սահմանադրութիւնս հանուրց ժառանգաւորաց սրբոյ եկեղեցոյ եւ սպասաւորաց խորհրդական սեղանոյն: 47 Զի լուաք լուր սարսափելի եւ ծանրագոյն, թէ ի տեղիս տեղիս յառաջնորդաց²⁴ եկեղեցոյ²⁵ ոմանք՝ խմորեալ²⁶ ի Նեստորականաց եւ ի Քաղկեդոնականաց՝ ապականեն զսուրբ խորհուրդն խառնմամբ խմորոյ եւ ջրոյ: 48 Արդ՝ յայսմ²⁷ հետէ եթէ եպիսկոպոս կամ երէց գտցի, որ այսպիսի չար սո-

1 K_a ի յերրորդ
 2 AB վայելաւորացն
 3 BK_a աւուր
 4 K_r գտիւ
 5 K_{ar} ծուլութեամբ փխ ծուլութեամբ (AB)
 6 K_{ar} Քառասներորդացն
 7 K_a արհնութեամբ
 8 B հոգեւորովք
 9 BK_r ծուլութեամբ, K_a ծուլութեան փխ ծուլութեամբ (A)
 10 B չի՛ք ի
 11 K_{ar} բայց միայն
 12 A չի՛ք ի (BK_{ar})
 13 BK_{ar} այլ փխ այդ (A)
 14 K_r արձակման

15 K_a պատուիրանին
 16 K_{ar} պահաւ փխ պահով (AB)
 17 B ըմպելեաց
 18 K_a անցէ փխ անցցէ
 19 A ըստ փխ ընդ (BK_{ar})
 20 K_a սահմանադրութեան փխ սահմանադրութիւնդ
 21 AK_{ar} այլ փխ այդ (B)
 22 K_r արհնութեան
 23 A պատուիրանադիր
 24 K_r առաջնորդաց
 25 K_r եկեղեցոյ
 26 K_r խմորեալ
 27 K_r այսմ

վորութեամբ աւանդեսցեն զսուրբ խորհուրդն՝ լուծցին յամենայն քահանայական պատուոյ եւ ի սուրբ ժողովոյն նզովեալ եղիցին¹: 49 Ապա եթէ տգիտութեամբ ոք արար եւ յետոյ զղջացեալ խոստովան լիցի, ընկալցի զայնպիսին սուրբ եկեղեցի Դամաց ապաշխարութեամբ: 50 Իսկ եթէ ժողովրդական ոք հաղորդեսցի տգիտութեամբ այնպիսի² հերձուածողական ապականեալ ակրինացն՝ արտաքոյ եկեղեցւոյ³ ապաշխարեսցէ ամս Բ, իսկ կամաւք եւ գիտութեամբ արարողքն⁴ զամս Զ արտաքոյ եկեղեցւոյ⁵ լիցին մեծաւ զղջմամբ, եւ վարդապետն՝ հայելով ի ջերմագոյն արտասուան՝ արժանաւորեսցէ խորհրդոյն: 51 Ապա եթէ⁶ ոչ ապաշխարեսցեն եւ արհամարհեսցեն⁷ զպատուիրեալս ի մէնջ՝ ի սուրբ ժողովոյն նզովեալ եղիցին:

52 Թ. Զգուշացուցանեմ դարձեալ զեպիսկոպոստնս, զքահանայս եւ զսարկաւազունս, զի մի՛ լիցի համարձակութեամբ սպասաւորել սրբոյ սեղանոյն⁸ հասարակարէն հանապազորդեան հանդերձիւ⁹, այլ¹⁰ ըստ իւրաքանչիւր աշտիճանի¹¹ զգեցցին պարեգաւտս եւ պատմուճանս:

53 Եպիսկոպոսապետն, այսինքն կաթողիկոսն, զգեցցի¹² ի ներքոյսն¹³ պարեգաւտս սպիտակ եւ ի վերայ նափորս՝ ԲԺ¹⁴ խաչիւք նկարակերտեալ եւ ամփոփեալ

թեզանաւք¹⁵, եւ եմփորոն, որպէս եւ¹⁶ այլոց եպիսկոպոսացն, եւ յաջոյ կողմանէ կոնքեռն¹⁷ նկարագրեալ, նմանապէս եւ զայլ¹⁸ կարգաւորութիւնն¹⁹ արասցէ ըստ գրեցելոցս²⁰: 54 Նոյնպէս եւ եպիսկոպոսն զգեցցի կամաս²¹ բոլորաստորոտ²² սպիտակ ստորեւ²³, զգեցեալ եւ ի վերայ աղաբողոն առանց թեզանեաց, բոլորեալ շուրջանակաւ, եւ ուրար գերկոսեան²⁴ ուսովքն²⁵ եւ զսպեալ թեզանաւք²⁶, եւ զգաւտեալն ունելով դաստառակ խաչանմանեալ յաջմէ կողմանէ, եւ ի վերայ աղաբողոնին կրկնաւ խաչիւք²⁷ հնգիւք²⁸ եմփորոն եւ կաւշիկս զգեցեալ²⁹: 55 Եւ սքողեալս³⁰ մինչեւ ցժամ խորհրդոյն եւ ի սկզբան³¹ աղաւթիցն վերացուցեալ զծածկոյթ գլխոյն՝ առանց սքողելոյ³² կացցէ մինչեւ յաւարտումն խորհրդոյն: 56 Նոյնպէս եւ քահանայքն զգեցցին սպիտակ պարեգաւտս ի ներքոյ եւ ուրար գերկոսեան ուսովքն եւ ի վերայ³³ աղաբողոն պղնձաւոր առանց թեզանեաց եւ կաւշիկս յոտս. բացաւ գլխով սպասաւորեսցէ խորհրդոյն սրբութեան, եւ ոչ միայն զխորհուրդն սուրբ, այլ³⁴ եւ զամենայն քահանայագործութիւնս: 57 Զձեռ-

1 K_a եղիցի
 2 AB յայնպիսի փիս այնպիսի (K_{ar})
 3 K_{ar} եկեղեցոյ
 4 K_a արարաւղին
 5 K_r եկեղեցոյ
 6 K_r թէ ոք փիս եթէ
 7 BK_a արհամարհիցեն փիս արհամարհեսցեն
 8 K_r եկեղեցոյն փիս սեղանոյն
 9 K_a հանդերձիւն
 10 AK_{ar} այլ փիս այլ (B)
 11 K_r աստիճանի փիս աշտիճանի (ABK_a)
 12 AB զգեցցին փիս զգեցցի (K_{ar})
 13 K_r ներքոյն փիս ներքոյսն
 14 K_r ԲԺ-ան փիս ԲԺ (=երկոտասան)

15 K_a թեզանեալ
 16 K_r չիք եւ
 17 AB կոնգրեսն (=կոնգրեսն^o) փիս կոնգրեսն (K_{ar})
 18 BK_{ar} գայլ փիս գայլ (A)
 19 K_r կարգաւորութիւն
 20 A գրելոցս փիս գրեցելոցս (BK_{ar})
 21 K_r կամար փիս կամաս (AB)
 22 K_a չիք կամաս բոլորաստորոտ
 23 K_a ի ստորեւ, K_r ըստորեւ փիս ստորեւ (AB)
 24 K_r գերկոսին
 25 K_a ուսովք
 26 K_a թեզանեալն, K_r թեզանեալ փիս թեզանալ (AB)
 27 K_r խաչիւ
 28 K_a հնգիւք
 29 K_r զգեցեալս փիս զգեցեալ (ABK_a)
 30 K_r սփառեալս
 31 K_a յիսկզբան փիս ի սկզբան
 32 K_r սփառելոյ
 33 A վերայ փիս վերայ (BK_{ar})
 34 AK_{ar} այլ փիս այլ (B)

նադրութիւն քահանայի եւ զաւրհնութիւն եկեղեցւոյ¹ եւ զայլ ինչ, որ անկաւոր է եպիսկոպոսապետաց եւ քահանայից՝ մի՛ իշխեսցեն առանց պատմունճանի կատարել: 58 Նոյնպէս եւ² սարկաւազունքն զգեցցին պատմունճան սպիտակ եւ կացցեն ի սպասու խորանին հոլանիք, եւ լիցին³ ի ժամ պատարագին, եւ ուրար զհակ ուսովքն խաչանկար, եւ զքշոցսն հովանի կալցին ի վերայ քաւութեան սեղանոյն. եւ կէսքն ի նոցանէ բուրուառս⁴ բարձեալ ի ձեռս, ալումք առեալ՝ զքաւութեամբն մատուցեն զբուրումն⁵ անուշահոտութեան խորհրդոյն մեղսաքաւիչ, եւ զհաց պատարագին ինքեանք կազմեսցեն սաղմոսիւք եւ զզուշութեամբ. եւ զսուրբ խորհուրդն հանել ի սեղանն եւ իջուցանել եւ քարոզել եւ յայլ

ինչ մի՛ ամենեւին համարձակել⁶: 59 Եւ ոչ հրամայեմք եպիսկոպոսի կամ քահանայի՝ առանց մերձակայութեան սոցա սպասուորելոյ քահանայագործել:

60 Արդ՝ որք մտերիմ եւ երկիւղած⁷ մտաւք հնազանդին մերոյին⁸ սուրբ ժողովոյս կանոնադրութեանս՝ խաղաղութիւն ի վերայ նոցա եւ ողորմութիւն: 61 Եւ որք ստունգանեն եւ հետեն յաստուածադիր աւրինադրութենէս՝ լուցկիք լիցին հրոյն յաւիտենից տանջանացն եւ պարտական մշտնջենաւոր մեղացն⁹, եւ ըստ նախկի¹⁰ ասացելոցն՝ ինքնակալին հրամանաւ ընդ թագաւորական պատուհասիւ անկցին, արտասահմանեալք ի մետաղս բնակեսցեն մինչեւ ցաւր մահուան իւրեանց¹¹:

1 K, եկեղեցոյ
2 A չի՛ եւ
3 A գաւտելոյծ լիցին (BK_{ar})
4 K, բուրվառս
5 K, բուրումն

6 K, համարձակիլ
7 A երկիւղած
8 K, մերոյ փիս մերոյին (ABK_o)
9 K_a ի մեղացն
10 K_a նախնի, K, նախկին փիս նախկի (AB)
11 A չի՛ իւրեանց (BK_{ar})

ՊԵՏՐՈՍ ՍԻՒՆԵՑԻ

ԳՈՎԵՍԻ Ի ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆՆ

ՅԱՂԱԳՍ ՄԱՐՄՆԱԴՐՈՒԹԵԱՆՆ ՏԵԱՌՆ

ՅԱՂԱԳՍ ՀԱԲԱՏՈՅ

ՊԵՏՐՈՍ ՍԻՒՆԵԱՅ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՍԷ

ԱՌ ՍՈՒՐԲՆ ՅԻԶՏԻՔՈՒԶՏԻ ՅՈՐԺԱՄ Ի ՀԱՆԴԻ ԷՐ Ի ԴՎԻՆ

ՊԵՏՐՈՍ ՍԻՆԵՑԻՆ ԵՒ ԻՐ ԵՐԿԵՐԸ

Պետրոս Սիւնեցու կենսագրական տուեալները խիստ սակաւաթիւ են: Ծնուել է, հաւանաբար, Ե դ. վերջին քառորդին, պատանեկութեան ժամանակ աշակերտել Մովսէս Քերթողազօրը: Ստացել է խոր, համակողմանի գիտելիքներ, հմտացել մեկնաբանական, քերթողական արուեստի մէջ. այս պատճառով նա յայտնի է նաեւ Քերթող պատուանունով:

Որպէս Սիւնեաց թեմի հոգեւոր վերատեսուչ (547-556 թթ.)՝ մասնակցել է 554 թ. Դուիւնի եկեղեցածողովին: Նրա ստորագրութիւնը կայ Ներսէս Բ կաթողիկոսի երեք թղթերի մէջ: Պետրոսը տակաւին ողջ է եղել 555-556 թթ. եւ մահացել, հաւանաբար, 558 թ.:

Պետրոս Սիւնեցին ծաւալել է մատենագրական լայն գործունէութիւն, հեղինակել է ճառեր, ներբողներ, դաւանաբանական, մեկնաբանական աշխատութիւններ:

ա. Աստուածաբանական, գեղարուեստական արժանիքներով աչքի ընկնող առաջին երկը՝ Գովեստ ի սուրբ Աստուածածինն... խորագրով ներբողն է: Այն հնագոյնն է հայ եկեղեցական մատենագրութեան մէջ Տիրամօրը նուիրուած երկերի շարքում: Շարադրանքն ուղեկցուած է աստուածաբանական խոր, համակողմանի մեկնաբանութեամբ, ինչը դրսեւորուած է այս երկի կենդանի կապը, մասնաւորաբար՝ արեւելաքրիստոնէական մարեմբանութեան հետ: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ Գ. Տէր-Մկրտչեանի չօգտագործած ՄՄ թիւ 5349 ձեռագիրը (թերթ 110ա-113բ) պարունակում է շահեկան ընթերցումներ՝ նպատակայարմար գտանք այն համեմատել հրատարակուած քննական բնագրի հետ:

բ. Պետրոսի անուամբ մեզ է հասել Յաղագս հաւատոյ վերտառութեամբ մի աշխատութիւն, որ առաջին երեք տիեզերածողովների, ինչպէս նաեւ Եփեսոսի երկրորդ եւ Քաղկեդոնի ժողովների համառօտ պատմութիւնն է:

գ. Պետրոսի միւս աշխատութիւնը Սուրբ Ծննդեան մի ճառ է, որից փոքրիկ պատառիկներ են պահպանուել միայն: Դրանք առկայ են Ստեփաննոս Սիւնեցու Յաղագս անպականութեան մարմնոյն եւ Վարդան Այգեկցու Արմատ հաւատոյ աշխատութիւններում:

դ. Պետրոսի անուամբ միւս երկը՝ Հարցմունք յաղագս մարմնաւորութեան Տեառն, ներկայացնում է Աղուանից Վաչագան թագաւորի հարցումներն ու Պետրոսի պատասխանները: Ըստ Գ. Տէր-Մկրտչեանի եւ այլ ուսումնասիրողների՝ այս երկն անվաւեր է:

ե. Պետրոսի Սիւնեաց եպիսկոպոսի առ Սուրբն Յիզտիբուզտի յորժամ ի հանդի էր ի Դվին երկը յարաբերուած է ս. Յիզտիբուզտի վկայաբանութեանը: Պետրոսի թուղթը դրուատում է ս. Յիզտիբուզտի՝ նահատակուելու պատրաստակամութիւնը: Շարադրուած է, ամենայն հաւանականութեամբ, 549-553 թթ.:

զ. Պետրոս Սիւնեցին հեղինակ է նաեւ դաւանաբանական (ձառ ընդդէմ ֆաղկեդոնականաց), մեկնաբանական (Մեկնութիւն իրթին եւ դժուարիմաց բանից Հին եւ Նոր կտակարանաց), ներբողական (Ներբողեան ի Բաբիկ Սիւնի) երկերի, որոնք մեզ չեն հասել: Այս երկերից օգտուել է Ստեփաննոս Օրբէլեանն իր Պատմութեան մէջ:

Պետրոս Սիւնեցու գործերը հրատարակուած են ըստ Գալուստ Տէր-Մկրտչեանի՝ եւ

1 Տե՛ս Գալուստ Տէր-Մկրտչեան, Հայագիտական ուսումնասիրութիւններ, գիրք Բ, աշխատասիրութեամբ՝ Պ. Հ. Յակոբեանի, Ս. Էջմիածին, 1998, էջ 166-197 (բնագրում յիշուած նախկին ձեռագրահամարները փոխուած են ըստ Մաշտոցեան Մատենադարանի Յուցակ ձեռագրաց-ի նոր համարակալման):

Նորայր Պողարեանի՝ կազմած բնագրերի՝ որոշ զէպքերում նոր ձեռագրերի համեմատութեամբ: Պետրոսի Հայոց Քերթողի եւ Նորին յետ սակաւուց միաւորները հրատարակուած են ըստ ՄՄ թիւ 1982 ձեռագրի (ժամանակ՝ 1699 եւ 1702 թթ.):

Յակոբ Քեոսեան

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

1. **Գալուստ Տէր-Մկրտչեան, Պետրոս Սիւնեաց եպիսկոպոս.** տե՛ս **Գալուստ Տէր-Մկրտչեան, Հայագիտական ուսումնասիրութիւններ,** գիրք Բ, աշխատասիրութեամբ՝ Պ. Հ. Յակոբեանի, Ս. Էջմիածին, 1998:
2. **Հ. Ներսէս Ակիմեան, Պետրոս եպոս. Սիւնեաց,** ՀԱ, 1903, 1904:
3. **Հ. Բարսեղ Սարգիսեան, Պետրոս Սիւնեցի,** «Բազմավէպ», 1904, էջ 65-71:
4. **Հ. Նորայր Պողարեան, Պետրոսի Սիւնեաց եպիսկոպոսի առ Սուրբն Յիզտիրուզոյ յորժամ ի հանդի էր ի Դվին,** «Էջմիածին», 1966, Ա:
5. **А. А. Акопян, Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках,** Ереван, 1987.

ՏԱՌԱՆԻՇԵՐ ԲԱՂԴԱՏՈՒԱԾ ԶԵՌԱԳՐԵՐԻ ԵՒ ՀԱՄԱՌՕՏԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

A - ՄՄ ձեռ. թիւ 2679, ժամանակ՝ 981 թ.

D - ՄՄ ձեռ. թիւ 5349, շառընտիր, ժամանակ՝ ԺԳ դ.

G - ՄՄ ձեռ. թիւ 1525, շառընտիր, ժամանակ՝ ԺԳ դ.

H - ՄՄ ձեռ. թիւ 993, շառընտիր, ժամանակ՝ 1456 թ.

K - ՄՄ ձեռ. թիւ 1521, շառընտիր, ժամանակ՝ 1404 թ.

W - ՄՄ ձեռ. թիւ 1524, շառընտիր, ժամանակ՝ 1401 թ.

Աթանաս - **Ս. Աթանաս Աղեփսանդրացի, Ճառք,** Վենետիկ-Ս. Ղազար, 1899

Սահմանք - *Սահմանք իմաստասիրութեան.* տե՛ս **Կորիւն վարդապետի, Մամբրէ Վերծանողի եւ Դաւթի Անյաղթի Մատենագրութիւնք,** Վենետիկ-Ս. Ղազար, 1833

Առածք - Դաւթի փիլիսոփայի առածք հիւնգ. տե՛ս **Կորիւն վարդապետի, Մամբրէ Վերծանողի եւ Դաւթի Անյաղթի Մատենագրութիւնք**

Պորփիր - *Վերլուծութիւն Պորփիրի.* տե՛ս **Կորիւն վարդապետի, Մամբրէ Վերծանողի եւ Դաւթի Անյաղթի Մատենագրութիւնք**

Նիւս. Կազմ. - **Գրիգոր Նիւսացի, Տեսութիւն մարդոյ կազմութեան.** տե՛ս ՄՄ ձեռ. թիւ 469

Նիւս. Բն. - **Գրիգոր Նիւսացի, Նեմեսիոսի Յաղագս բնութեան մարդոյ.** տե՛ս ՄՄ ձեռ. թիւ 469

1 Տե՛ս Հ. Նորայր Պողարեան, Պետրոսի Սիւնեաց եպիսկոպոսի..., «Էջմիածին», 1966, Ա, էջ 50:

**¹ԵՐԱՆԵԼԻՈՅՆ ՊԵՏՐՈՍԻ ՍԻՆԵԱՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ
ԳՈՎԵՍ Ի ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԾԱԾԻՆՆ ԵՒ Ի ՄԻՇՏ ԿՈՅՍՆ ՍԱՐԻԱՍ
ԸՍՏ ՅՈՐՁՈՐՁՄԱՆ ՆՈՐԻՆ. ԵՒ Ի ՍՈՒՐԲ ԳՐՈՑ ²ԼՈՒԾՍՈՒՆՔ ՆՈՅԻՆ,
ՀՈԳԵՒՈՐ ԻՍԱՍՏԻԲ**

1 Բազմութիւնք քրիստոսասէր ժողովոյս արարէք զաւրս զայս տաւն նորասքանչ ուրախութեամբ³ եւ բերկրեսցուք⁴ ի սմա մեծահրաշ ցնծութեամբ: 2 Զի ահա երկիրնք ձայն աւետաւոր ⁵առ երկիրս գոչեն եւ զձագուամն փառաց ⁶ի Բեդդեմ՝ քարոզեն: 3 Յանկալի է մեզ այսաւր ջրհորն Դաւթի, յորում գետն Աստուծոյ⁷ յորդահոս իջիւք բխողեալ՝ զտիեզերս արբուցանէ: 4 Արդարեւ ասեմ թէ յառաջացոյց աւրի-

նակն զճշմարտութիւնն տպաւորեաց, քանզի ⁸տեառնամայրն ջրհոր ⁹ինքնաբուղիս կենդանի ջրոյն եղեւ, ուստի ոչ իշխեաց ¹⁰ըմպել որ զնայն պահէր¹¹, զի կուսականն մարմինն անաղտ սրբութեամբ¹² կնքեցաւ, յորմէ արդարութեան արեգակն ծագեաց եւ ճառագայթաւէտ¹³ լուսով զաշխարհս լուսաւորեաց:

5 Արդ՝ զի՞նչ ասացից կամ զի՞նչ խաւսեցայց, զի միտք եւ լեզու զարժանաւոր¹⁴ պատիւ կուսական տաւնիս ընծայել¹⁵ ոչ կարեն: 6 Զի ոչ բան զմարդասիրութիւնն Աստուծոյ չափել կարէ եւ ոչ թիւ ¹⁶զբազմամեծար յարգանս Մարիամու ի Համար բերել զաւրէ: 7 Բա՛բէ, ո՞ ալլ այսպիսի լուաւ սքանչելիս, ¹⁷եթէ Տէրն եւ ստեղծիչն ի յաղախնոյ եւ ի կաւեղէն ստեղծուածոյ տղայաբար յանձն էառ ծնանիլ. այո՛, այո՛, քանզի կամելով ¹⁸զնախաՀայրն եւ զառաջին կոյսն կանգնել ի գլորմանէն՝ իսկապէս ծրարեցաւ յորովայնին, ճշմարտապէս եղեւ այսաւրածին մանուկ: 8 Յաղաքս որոյ եւ մեք ի վեր քան զբան

1 G երանելոյն / K վերնագիրն է երանելոյն Պետրոսի Սինեայ Եպսի Ասացեալ գովեստ յամենասուրբ անձնին կոյսն Մարիամ եւ ի համեմատութիւն անւան նորա: / D Սրբոյն Պետրոսի Սինեայ եպիսկոպոսի գովեստ ասացի[ալ] Սուրբ Ծնունդն / W երանելոյն Պետրոսի Սինեայ եպիսկոպոսի Ասացեալ ի գովեստ սուրբ Աստուածամինն Մարիամու: / WDK Բաց են թողնում նաորի սկզբից մի մեծ հատուած եւ սկսում են. Մի՛ ոք իշխեսցէ զծնիցեալն (D զծնեալն) ի սրբոյ կուսէն ասել սոսկ մարդ... / K եւ W նաորնտիրներից նշանակում ենք միայն մի Բանի ընթերցուած, սկզբնաւորութիւնները եւ վերջերը, ցոյց տալու համար այդ խմբի նորագոյն եւ մեծապէս տարբեր ու անհարազատ խմբագրութիւն լինելը: Տե՛ս եւ Տաշեան ցուց. սոյն նաորը, էջ 2 եւ 48: Հմմտ. եւ Յայսմաւորի, Բ տպագրութիւն, 7 ապրիլ. մի շարք «Ուրախ լեր», այրբենական կարգով: W-ի տեսակից է եւ ՄՄ թիւ 3791 ձեռագիրը, որն ունի Պետրոսի այս նաորը «Մի՛ ոք իշխեսցէ զծնիցեալն» սկսուածով: Որքան տեղեկանում ենք Յուցակից՝ այդ ձեռագիրը մի նաորնտիր է, բոլորգիր, թուղթ, գրուած Աստուածատուր կաթողիկոսի ժամանակ, գրիչը՝ Կարապետ: Բուն ձեռագիրը ձեռքի տակ չենք ունեցել:

2 H լուծմունք նորին
3 G ուրախութեան
4 G բերկրեցայք / K բերկրեցարում
5 G առ երկիրս հնչեմ
6 H ի Բեթդեմ
7 K արջերկնից

8 K աստուածամայրն աղախինն ջրհոր / GH տնամայրն
9 H կենդանի ինքնաբուղիս
10 K ըմպել Դաւիթ, այսինքն Յովսէփ, որ զնայն պահէր
11 G պահիւր
12 G սրբութեամբն
13 G նառագայթաւետ
14 K արժանական
15 G ընծայել
16 K զբազմամեծար արգանդ
17 G թէ արքն եւ ստեղծն ի յաղախնէ
18 K զնախահայրն Ադամ եւ զառաջին մայրն եւս կանգնել

զաւրս պատուեսցուք, եւ բարձր քան զերկիրնս¹ զերկիրս իմասցուք եւ հրաշափառ քան զարեւելս զկոյսն տեսցուք, եւ առաւել քան զհրեշտակս՝ զհովիւսն մեծարեսցուք, եւ ընտիր քան զքերովբիմսն² զմսուրն ծանիրցուք: 9 Նաեւ երուսաղէմ³ քաջ ի բաց քան զհրեղէն կառսն⁴ պայծառացաւ:

10 Եւ զայս ոչ ⁵եթէ մտածաւրէն ինչ ճարտասանս խաւսից ի մէնջ աշխատասիրեցաք յարմարել, զի զսոյն եւ ⁶աստուածագիր մատեանքն յառաջաձայնեալ քարոզեցին:

11 Քանզի որոյ էութիւնն յարարչագործութեան անդ ի ⁷հրեշտակաց եւ ի մարդկային բնութեանս զբանաւորութիւնս արար, զնա ինքնագոյական Հայր ⁸այսաւր իբրու յինքենէ ծնանի, զոր նոյն ինքն Հայր բերանով Դաւթայ⁹ խաւսերգեաց, թէ Որդի իմ ես դու եւ ես այսաւր ծնայ գեղգ:

12 Արդ՝ յորում աւուր ստեղծիչն աւուրց եւ բանից ¹⁰յանձն էառ ծնանիլ վերստին, աղէ՛, ¹¹եկ բեր դու ինձ ասել, թէ ո՞ր բան յառաջ մատուցեալ զայնպիսի աւուր բաւական լիցի պատմել¹² գովութիւնս: 13 Եւ եթէ բարձր զերկիրս քան զերկիրնսն¹³ իմասցուք, միթէ սնափառութեամբ ինչ պարծեցայ, ա՛ւն անդր. ո՞չ ա-

պաքէն սպասաւորական հոգեացն¹⁴ եղեն երկինք բանակետդ, իսկ երկիրս բոլորիցն¹⁵ Աստուծոյ սեպհական¹⁶ քաղաք, զոր եւ մարգարէն ¹⁷իսկ յայտնապէս հնչէր, թէ Սա է Աստուած մեր, ընդ որում ո՛չ համարեսցի այլ¹⁸: 14 Յետ այսորիկ յերկրի երեւեցաւ եւ ընդ մարդկան շրջեցաւ¹⁹:

15 Եւ զի բազմափառ¹⁹ քան զարեւելս զկոյսն Մարիամ տեսաք, միթէ բա՞ն ինչ մեծամտութեամբ ի վեր քան զարժանն զանցուցաք, քա՛ւ լիցի: 16 Զի յոյժ պատուական են արեւելք վասն տուրնջենային հրոյն²⁰ ընդ այն ծագելոյ, այլ ո՛չ իբրեւ ²¹գտեառնամայր աղախինն, յորում ամենեցունցն Աստուած բնակեաց²² եւ արեգակնաբար ի նմանէ յաշխարհս ծագեաց:

17 ²³Եւ զի առաւել քան զքերովբիմսն զմսուրն եդաք, միթէ տհասութեամբ²⁴ ինչ զաննմանս բարբառեցաք: 18 Ո՞չ ²⁵ահա յորմէ վեցթեւեանքն հիացեալ ի բացուստ սարսեն՝ սա այսաւր ի մտուր անդ որպէս ի հայրական ծոց բազմի: 19 Ուստի եւ մարգարէական ²⁶չնորհացն բերանք՝ դիտելով զամենայն ճախր առեալ ճահողաբար՝ զներքինն ընդ վերինն կապակցէին, մանաւանդ ²⁷զի եւս առաւել քան զգերիվերոյսն զստորինս պարագրեցին: 20 Զի յորոյ երեսաց երկինք որպէս մոմ հալին՝ նա

1 H գերկիին
 2 H գերովբէսն
 3 G Եմ / H Եեմ
 4 G տառսն
 5 K եթէ մարդկեղէն ինչ
 6 K աշխատասէր մատեանքն
 7 H զհրեշտակաց եւ զմարդկան բնութիւնս արար
 8 H չի՞բ այսաւր իբրու յինքենէ ծնանի, զոր նոյն ինքն Հայր
 9 H Դաւթի
 * Սաղմ. Ի՛ 7
 10 G վերըստին յանձն էառ ծնանիլ / K յանձն առ վերստին ծնանիլ
 11 G եկ դու բեր / K եկ դու եւ բեր
 12 H ի պատմել
 13 H գերկիինս

14 H հոգւոցն
 15 G բոլորից
 16 H սեփական
 17 H չի՞բ իսկ յայտնապէս
 18 Քուում է պակասաւոր:
 ք Խաբ. Գ. 36, 38
 19 H բազմափայլ
 20 G հրոյդ / K լուսոյն
 21 H տեառնամայրն աղախին / K գտիրամայր աղախինն ալ
 22 H բնակեցաւ
 23 H եւ առաւել քան զքերովբէսն զմսուրնսն եղաք
 24 GH տրիասութեամբ
 25 H ահա ուստի սերովբէքն ի բացուստ սարսափելին հիացեալ
 26 H շնորհացն բանք՝ գիտելով
 27 H զի առաւել

այսաւր ի յայրին ամփոփեալ զսպի¹:
 21 Ընդ որ եւ առակաւոր բանն ²զարմա-
 ցեալ հիանայր, թէ Զի՞նչ երկիր իցէ յորում
 լոյսն ազանիցի³: 22 Զի ի հայրենի ծոցոյն
 որպէս³ հուր փայլակնացաւ եւ ի խաւսուն
 երկրին անվնաս ծրարեցաւ, ⁴ըստ նորին
 կանխասացութեանն, թէ երկիր եւ ի նմա-
 նէ ելցէ հաց եւ ի ներքոյ նորա որպէս
 լոյսն շրջեցաւ⁵, զոր միւս մարգարէն⁵
 յայտնապէս մեկնէ, թէ Հաներ զհաց յերկ-
 րէ⁶, այսինքն զմարմին իւր ի Մարիամայ
 սրբոյ կուսէ:

23 Բա՛բէ, անպատում երանութիւնքն⁶
 զկուսական որովայնն փակեցին, զոր մար-
 գարէութեան հոգին բերանովն⁷ Դաւթայ՝
 լեառն սուրբ անուանեաց. Հիմունք նորա,
 ասէ⁸, ի լեառն սուրբ նորա⁷: 24 Արդարեւ
 յայսմ լերին տնաւրինեալ անբաժանելի
 միաւորութեամբ երկու աշխարհքն⁹ հիմ-
 նաւորեցան՝ աստուածութիւնն եւ մարդ-
 կութիւնն: 25 ¹⁰Վասն որոյ մի՛ ոք իշխես-
 ցէ զծնիցեալն ի սուրբ¹¹ կուսէն ¹²սոսկ
 մարդ ասել, զի ինքն իսկ¹³ հիմունս արկ¹⁴
 ի¹⁵ նմա բարձրեալն: 26 Որպէս եւ¹⁶ հրեշ-

տակն քարոզեաց, թէ Որ ի նմայն ծնեալ է՝
 ի Հոգոյն Սրբոյ է՛: 27 Ասէ՛ Սիրէ Տէր
 զդրունս Սիոնի քան զամենայն յարկսն Յա-
 կովքայ¹⁷: 28 Անսկիզբն Բանն Աստուած
 կրկին անգամ ¹⁷դրունս Սիոնի¹⁸ զկուսա-
 կան մարմինն յաւրինեաց, զի յասելն
 հրեշտակին զողջոյնն¹⁹ ընդ լսելիսն ի
 ներքս վազեաց²⁰ Բանն եւ իննամսեայ²¹
 ժամանակաւ ²²ի մարմին զինքն թանձրա-
 ցուցեալ²³, ընդ որ ամենայն ²⁴մահկանա-
 ցուք ծնանին՝ ընդ նոյն եւ անմահացու-
 ցիչ²⁵ Տէրն ոչ զգուեցաւ ելանել²⁶:

29 Ո՛վ մեծի խորհրդոյն²⁷, մտանէր եւ
 ելանէր եւ զդրունս կուսութեանն փակեալ
 պահէր: 30 Արդ՝ որպիսի՞՞ աւրինակաւք²⁸
 զքեզ ²⁹յառաջ բերեալ զովեսցուք սուրբ³⁰
 Աստուածածին: 31 Զի ահա եղեր՝ Դրախտ
 աստուածատունկ. Այգի վայելուչ. Մորենի
 անկիզբի. Լեառն սուրբ. Վէմ ջրածին³¹.
 Գաւազան ծաղկեալ. Սափոր ոսկի. Տուփ
 անուշահոտ խնկոց. Տապանակ կենդանա-
 գիր³² կտակին. Ջրհոր կենդանի ջրոյն. Բոյս
 բարի. Տեղի շափիղայի³³. Քաղաք Աստուծոյ.
 Պարտեզ փակեալ. Աղբեր³⁴ կնքեալ. Բլուր

1 H զըսպի / K զըսպիւր
 2 H հիացեալ զարմանայր
 3 ՅԵ. ԼԸ 19
 3 H չիք որպէս
 4 H ըստ նորուն
 5 ՅԵ. ԻԸ 5
 5 H մարգարէ
 6 ՍԿԵ. ՆԳ. 15
 6 G երանութիւնն / H երանութիւնն / K երանու-
 քեանն
 7 G բերանով
 8 H չիք ասէ
 9 ՍԿԵ. ՉԳ 2
 9 H աշխարհիք
 10 WD սկսուում են՝ Մի՛ ոք իշխեսցէ զծնիցեալն (D
 զծնեալն) ի սրբոյ կուսէն եւ այլն:
 11 H չիք սուրբ
 12 D ասել սոսկ մարդ
 13 D չիք իսկ
 14 H էարկ
 15 D եւ ի
 16 D չիք եւ

է ՄԿԵ. Ը 20
 շ ՍԿԵ. ՉԳ 2
 17 GD դրունս իւր
 18 H սիօնի
 19 H զողջոյն
 20 D եմուտ փի վազեաց
 21 G իննամսեա / D իննամսեան
 22 H ի մարմնի
 23 H [ստորացուցեալ, փակագծուածը կարկատա-
 նի վրայ՝ նոր գրչով
 24 H մահացուք ծնանին նայ նոյն եւ անմահից
 տէրն / D մահկանացուք
 25 G անմահացիչ / K անմահացուցիչ
 26 H ելանել յրգանէլ
 27 G խորհրդոյն
 28 D արիմակաւ
 29 H յառաջաբերեալ
 30 D ով փի սուրբ
 31 D աղբերածին փի ջրածին
 32 D կտակագիր փի կենդանագիր
 33 G շափիղայ
 34 H աղբեր

կնդրկի. Հովիտ¹ շուշանի. Երկիր ծարա-
ւուտ. Ամպ թեթեւ. Անապատ անկոխ.
Գուռն աղիտեալ. Տոմար² անընթեռնի³. Եր-
կիր բանաւոր. Առաւաւտ խաղաղութեան⁴։
32 Արդ՝ զայս ամենայն մարգարէիցն
պարք նախաձայնեցին։

33 ⁴Իսկ մեք սկսցուք մեկնել կարգաւ
զքսան եւ զչորս վկայութիւնս սրբոցն որ
վասն քո։

34 [Ա]. ⁵Ուրախ լեր Մարիամ,
⁶Դրախտ աստուածատունկ. քանզի աս-
տուածաբոյս մարմինն ⁷ի միջի քում որ-
պէս զծառն կենաց արմատացեալ, զոր ընդ
բոցեղէն ⁸սրոյն զաւրութիւն բարձրելոյն
⁹անհպելի ¹⁰զքեզ տաղաւարեաց։

35 [Բ]. Ուրախ լեր Մարիամ, Այգի
վայելուչ, յորում կամաւորութեամբ
Հաւր¹¹ ճշմարիտ որթն տնկէր։ 36 Կապեա-
ցէ, ասէ, զէշ իւր գորթոյ եւ ¹²գլաւանակ իւր
¹³զգնդակէ որթոյ՞։ 37 Որթ զԱստուած
Բանն ասէ¹⁴ եւ զնդակ՝ զմարմին նորին,
զոր եւ ինքն իսկ Միածինն ասէր¹⁵, թէ ես
եմ որթն նշմարիտ²։

38 [Գ]. Ուրախ լեր Մարիամ, Մորենի

սխրալի¹⁶, որ աստուածութեանն¹⁷ հրով
վառեալ ոչ այրեցար։

39 [Դ]. Ուրախ լեր Մարիամ, Լեռուն
սուրբ, յորում ստեղծիչն Մովսէսի¹⁸ նո-
րահրաչ տնաւրէնութեամբ առագաստեալ
վարագուրեցաւ¹⁹։

40 [Ե]. Ուրախ լեր Մարիամ, ապա-
ռած Վէմ, ուստի յորդահոս վտակն խաղա-
ցեալ՝ զհամահրաւէր աւետիսն ²⁰աշխարհի
հնչէր. եթէ ո՞ք ծարաւի իցէ եկեցցէ առ իս
եւ արբցէ²։

41 [Զ]. Ուրախ լեր Մարիամ, Գաւա-
զան ²¹ծաղկեալ, ուստի յարմատոյն Յես-
սեայ²² բղխեալ յարագալար ծաղիկն²³, ո-
րում յառաջացոյց յաւրինակ քահանայա-
պետին եղեւ ցուպ, որ²⁴ ի խորանի անդ
առժամայն²⁵ բողբոջեալ²⁶ սաղարթէր։

42 [Է]. Ուրախ լեր Մարիամ, Սափոր
ոսկի, որ ոչ զմահկանացու ընչընչուկն²⁷
կրեցեր, այլ զանմահացուցիչ կերակուրն,
զոր ²⁸աստուածեղէն բերանն ²⁹հրատարա-
կեալ ասէ. Հարբն ձեր կերան զմանանայն
յանապատին եւ մեռանէ, իսկ ³⁰որ զմարմին
իմ ուտէ՝ զմահ մի՛ տեսցէ յաւիտեանն²։

1 G Ովիտ
2 H տումար
3 GD անընթեռնելի
4 Հմմտ. Լսողութեանս շարականներ՝ Լեռուն վեմաջին էւ այլն։
5 D չի՞ Իսկ ... որ վասն քո
6 D չի՞ Ուրախ լեր (այսպէս եւ այլուր)
7 G դրախտ շնչաւոր եւ աստուածաբոյս / D դրախտ շնորհալի, այգի աստուածատունկ փի Ուրախ ... քում
8 G ի մէջ նորա
9 G հրոյն զարութիւն
10 D գնա տաղաւարեաց անհպելի
11 G գնա տաղաւարեաց
12 D չի՞ Հաւր
13 G գլովանակ, չի՞ իւր
14 D գորթոյ գնդակէ
5 Հմմտ. Կոմ. Խթ. 11։
16 D չի՞ ասէ
17 D ասաց
8 Յ՝ՎՃ. ԺԵ 1

16 D հրալի փի սխրալի
17 D աստուածային
18 G մովսեսի
19 G վերագործեցաւ
20 D բղխէր փի աշխարհի հնչէր
2 Յ՝ՎՃ. Լ՝ 37
21 D չորուստ ի յեսսեայ արմատն բղխեաց ուրա-
խարար փի ծաղկեալ ... յարագալար
22 G յեսսեայ
23 H ծաղիկ
24 D զի փի որ
25 D չի՞ առժամայն
26 G բողբոջէր
27 G ընչընչուկն / H զիւնչընչուկն / D չնչուկն
28 H աստուածային / D աստուածային բարբառն
աղաղակեաց փի աստուածեղէն բերանն հրա-
տարակեալ ասէ
29 G հրատարակեաց. ասէ
8 Յ՝ՎՃ. Գ 49
30 D որ ուտէ զմարմին իմ
2 Հմմտ. Յ՝ՎՃ. Բ 51. 52։

43 [Ը]. Ուրա՛խ լեր Մարիամ, Տուփ խնկահոտ¹ իւղով լցեալ, ուստի նարդոսն մեծագնի² բուրեալ եւ աստուածային անուշահոտութեամբ զտիեզերական տունս լցոյց³:

44 [Թ]. Ուրա՛խ լեր Մարիամ, Տապանակ շարժուն, յորում Բանն մշտնջենաւոր եղեւ կենդանագրեալ⁴ եւ նորոգելով⁵ եւս զջարդեայսն փոխանակ մովսիսակերտ⁶ քարեղինացն չորս բանաւոր տախտակս զաստուածական աւրէնս դրոշմեաց:

45 [Ժ]. Ուրա՛խ լեր Մարիամ, Մտն կենդանի ջրոյն, զորմէ մարգարէն ասէր, թէ Ջուր ի տանէ Տեառն ելցէ եւ արբուցէ զվիճակն հեթանոսաց⁷, զոր եւ Միածինն ասաց, թէ ես եմ ջուրն կենդանի⁸:

46 [ԺԱ]. Ուրա՛խ լեր Մարիամ, Բոյս բարի ըստ սրբոյն Յակովբայ, որ արծարծեալ ի մահիճսն առ կենարարն Քրիստոս զբանն տպաւորեաց⁹, թէ⁹ շառաւիղէ ելեր որդեակ¹⁰:

47 [ԺԲ]. Ուրա՛խ լեր Մարիամ, Քաղաք Աստուծոյ ըստ երանելւոյն Դաւթայ¹⁰, որ յառաջն երգեաց թէ Փառաւորեալն խաւսեցաւ վասն քո քաղաքի Աստուծոյ¹¹:

48 [ԺԳ]. Ուրա՛խ լեր Մարիամ, Տեղի շափիղայի¹¹, զի իբրեւ ակն պատուական

աստուածախառն մարմինն¹² գոյանայր¹³ քեզ, որ եւ եղաւն¹⁴ իսկ որպէս զքար¹⁵ ընտիր ի հիմունս Սիովնի:

49 [ԺԴ]. Ուրա՛խ լեր Մարիամ, ըստ ամենիմաստնոյն¹⁶ Սողովմոնի¹⁷ Աղբեր կնքեալ¹⁸, ընդ որ ամենալցոյց¹⁸ գետն բղխեալ՝ զկուսութեանն¹⁹ կնիք ո՛չ ելոյծ:

50 [ԺԵ]. Ուրա՛խ լեր Մարիամ, Պարտէզ փակեալ, որ զբազմաբեր²⁰ ձիթենին վերընձիւղեցեր, յաղագս որոյ Եսայիաս մարգարէացաւ, թէ Մնացեալն Յակովբայ նորատունկ սիրելի. ծաղկեցէ Իսրայէլ²¹ եւ լցցի երկիր²² պտղով նորա²³:

51 [ԺԶ]. Ուրա՛խ լեր Մարիամ, Հովիտ անվար, ուստի իբրեւ շուշան վայրենի տէրունական²³ մարմինն բուսաւ, զորմէ հոգելից մարգարէն ճառեաց, թէ եղէց ցաւը Իսրայէլի²⁴ եւ ծաղկեցէ²⁵ որպէս շուշան²⁶:

52 [ԺԷ]. Ուրա՛խ լեր Մարիամ, Բլուր խնկոյ²⁶, յոր Տէրն մտեալ անմահութեանն հոտովն²⁷ զմահկանացու²⁸ իւր ճամբէր եւ ծնեալ յաշխարհ կենդանեաց եւ մեռելոց՝²⁹ յաւիտենական ծխէր կեանս, զոր

1 D անուշահոտ
2 H մեծագին / D արեանն մեծագնոյ փխ նարդոսն մեծագնի
3 H լցեալ
4 D կենդանագիր
5 H եւս խորտակեալս
6 G մուսիսակերտ
7 D ջրիոր իմանալի ջրոյն փխ Տուն կենդանի ջրոյն
8 Հմմտ. Յվւ. Գ. 19:
9 Տէ՛ւ Յւլւ. Գ. 10-11:
8 D տնարիկեաց փխ տպաւորեաց
9 G ի շառաւիղէ
10 Եւ. ԽԹ. 9
10 D Դաւթի
11 Սաղմ. 2. 2. 3
11 GD շափիղայ

12 H մարմին
13 H ի քէն / D ի նմա փխ ի քեզ
14 D եղիւ փխ եղաւն
15 H քար
16 D ամենիմաստին
17 H սողովմոնի
18 Է. Երգ. Գ. 12
18 D ամենակեցոյց փխ ամենալցոյց
19 H զկուսութեանդ
20 D զբազմապտուղ փխ զբազմաբեր
21 G իէղ / H յիսրայէլէ / D Յեսսեայ փխ Իսրայէլ
22 D տիեզերք փխ երկիր
23 Հմմտ. Եւ. ԽԹ. 6:
23 D ի տէրունական
24 G իղի
25 D ծաղկեցի
26 Է. Ով. ԺԳ. 6
26 HD խնկոյ
27 H հոտով
28 D նիւթս համեմաց
29 D զանմահական զկեանսն ընծեռէր յաւիտենական փխ յաւիտենական ծխէր կեանս, զոր

մարգարէութիւնն կանխաւ գուշակէր, թէ Բուրեցի հոտ նորա որպէս կնդրկի”:

53 [ԺԸ]. Ուրախ լեր Մարիամ, Երկիր ծարաւուտ, զորոյ զբնութիւնն ¹ոչ իշխեաց վթարել լուծումն արուի. ուստի մարգարէն զՔրիստոս ի նմա բոյս յապառափի երգեաց ասելով² Պատմեցաւ մեզ իբրեւ գմանուկ, իբրեւ զարմատ ի ծարաւուտ երկրի³:

54 [ԺԹ]. Ուրախ լեր Մարիամ, Ամպ թեթեւ ըստ ³յառաջասացութեան մարգարէին, թէ Ահա՛ւասիկ Տէր նստեալ ի վերայ թեթեւ ամպոյ եկեացէ յեզրիպտոս⁴: 55 Եւ⁴ արդարեւ ամպ ցամաք, զի ոչ գիջացեալ ծանրացար ի ցանկութենէ առն:

56 [Ի]. Ուրախ լեր Մարիամ, Անպատ անկոխ, յորում ⁵ոչ սոսկ ոք⁶ մարգարէ զվկայութեանն⁷ գործէ խորան, այլ զմեծն եւ զկատարեալն եւ զանձեռագործ խորանն, այսինքն զտիրական⁸ մարմինն առանց սերման առն⁹ ¹⁰ստեղծ ինքեան, զոր¹¹ ի լուսազգեստ արգանդին Հարեալ սաղմէր¹², զոր եւ Հոգեհնչող¹³ քնարն հնչէ¹⁴, թէ Յարեւու եհար զխորան իւր⁵:

57 [ԻԱ]. Ուրախ լեր Մարիամ, Դուռն աղխեալ, ընդ որ Հրեշտակաց¹⁵ Տէրն մո՛ւտ եւ ե՛լ եւ ¹⁶զկուսական արգանդդ¹⁷ ոչ ելոյժ, յաղագս որոյ Եզեկէէլ մարգարէացաւ, թէ Դուռնն¹⁸ որ յարեւելս կոյս է՝ ոչ ոք մտցէ ընդ նա եւ ելցէ, ¹⁹բայց Տէր Աստուած Իսրայէլի մտցէ եւ ելցէ եւ դուռն²⁰ փակեալ կայցէ²¹:

58 [ԻԲ]. Ուրախ լեր Մարիամ, Տոմար անընթեռնլի, ²²զի թէպէտ եւ գիտէր Յովսէփ զզարուութիւն, զի ունէր այլ կին, եւ չէր անփոյթ²³ ²⁴ի մարմնոյ խառնութեանց, սակայն զնա²⁵ ո՛չ իշխեաց ընթեռնուլ, որպէս մարգարէն ասաց, թէ Տացի թուղթս ²⁶այս յայր մի, որ գիտիցէ դպրութիւն եւ մի՛ կարասցէ ²⁷ընթեռնուլ զնա²:

59 [ԻԳ]. Ուրախ լեր Մարիամ, Երկիր բանաւոր, զի աստուածընկալ որովայնդ²⁸ անմատոյց լուսոյն ²⁹ոչ միայն աթոռ, այլ ճշմարտութեամբ եղեւ մայր³⁰, զոր եւ ոմն ի շնորհալից³¹ վարդապետացն գրեաց, թէ ³²Նորագործ աստուածապէս նարտարապետեալ՝ զերկիրս երկին արարէ:

« ՈՎ. ԺԳ. 7
1 KD ոչ իշխեաց բանալ
2 GD ասէ
բ Հմմտ. Ե. Կ. 2:
3 D յառաջասաց մարգարէութեան
գ Ե. ԺԹ. 1
4 D չիք եւ
5 G ոչ ոք սոսկ
6 H չիք ոք
7 G զվկայութեանն
8 D գտիեզերական փիս գտիրական
9 H չիք առն
10 D ստեղծիչն ի կուսական արգանդին խառնեալ սաղմ առէր փիս ստեղծ ... սաղմէր
11 G չիք գոր
12 H սաղմէր
13 D հոգեբերող փիս հոգեհնչող
14 H հնչէր
դ Ս. ԺԹ. 6

15 G հրշտակաց
16 H զկուսական կնիքն
17 D արգանդն
18 G դուռն
19 H չիք բայց Տէր Աստուած Իսրայէլի մտցէ եւ ելցէ
20 D դուռն այդ
21 D կացցէ
ե Հմմտ. Ե. Կ. 1-2:
22 H չիք զի թէպէտ եւ գիտէր ... ոչ իշխեաց ընթեռնուլ
23 D անփորձ փիս անփոյթ
24 D յէզ մարմնոյ մերձաւորութենէ փիս ի մարմնոյ խառնութեանց
25 D չիք զնա
26 D չիք այս / H այս առն որ
27 H ընթեռնուլ գաա, որ նշանակէր զՅովսէփ
չ Հմմտ. Ե. Կ. 12:
28 G որովայնն
29 D ոչ առող փիս ոչ միայն աթոռ
30 D մարդ փիս մայր
31 D շնորհաւոր ի նշմարիտ փիս շնորհալից
32 G նորագործապէս նարտարապետեալ
է Տէ՛ս Պարտապատմաց :

60 [ԻԴ]. Ուրա՛խ լեր Մարիամ, Առաւաւտ գեղեցիկ, յորում խաղաղութիւնն մեր զարմանալի յաւրինամամբ արար գերկոսինն¹ մի, եւ ըստ սրբոյն Զաքարիայ՝ արեգակնաբար ի մեզ ²ծագեցաւ, փարատել³ զխաւար մեղաց՝:

61 Արդ՝ ⁴զի՞նչ եւ այլ առակ աւրինակաց⁵ ի մէջ առեալ սուրբ⁶ Աստուածածնիդ կարասցուք ընծայել⁷: 62 Զի⁸ ⁹ո՞չ ապաքէն ելեր ըստ բանս. ո՞չ ապաքէն գեր ի վերոյ գտար էակացս¹⁰. ո՞չ ապաքէն անցեր ¹¹ըստ մարդկային միտս, զի Հոգին Սուրբ ¹²էջ առ քեզ եւ զաւրութեամբ¹³ վերնոյն տաղաւարեցար: 63 Եւ այս յաւէտ յիրաւի:

64 Զի զԱստուած ընկալար. զի զԱստուած յղացար. զի զԱստուած երկնեցեր զի զԱստուած ծնար. զի զԱստուած անպարագրելի ի գերկս բարձեալ կրեցեր. զի զԱստուած կաթնաբուծեցեր¹⁴. զի զԱստուած սնուցեր. զի զԱստուած գգուեցեր¹⁵. ¹⁶Եւ որոյ երկինք աթոռ են եւ եր-

կիրս պատուանդան ոտից նորա, եւ զքնաւ իսկութիւն նորա եւ ոչ երկինք երկնից բաւական են տանել՝ դու զնա իբրեւ զտղայ խանձարրապատ առնէիր¹⁷:

65 ¹⁸Տինա եւ զի՞ կայ իմ ընդ այսպիսի մրցման կռուելոյ, ընդէ՞ր վարանեալ տարակուսեն զիս երանութեանն ցոյցք. զի ահա երկինքն, որ ի Սինէական ¹⁹լերինն բոցազարդ հրով զսանդարամետացն հիմունս դղորդեալ սասանեցուցին, եւ ձեռքն, որ զերկինս եւ զերկիր արարին, այժմ ի մէջ անցեալ իբրեւ զպարմանի՝ բաժակ ի մատունս բերեալ՝ աղջկան միոյ մատուցանէ:

66 Արդ՝ այս գովութիւն ոչ այլ ինչ է, այլ քոյին իսկ²⁰ մարգարէութիւն²¹, թէ Յայսմիեստէ երանիցեմ ինձ ամենայն ազգք՝:

67 Արդ՝ աղաչեմք գքեզ, սուրբ Աստուածածին, լեր²² բարեխաւս ²³առ Որդիդ քո եւ Աստուած²⁴ մեր միշտ փրկել ի փորձութենէ ²⁵զի՞ ձեռն քո ի նա հաւատացեալ ժողովուրդս²⁶ ²⁷եւ փառս մատուցանել ծնիցելոյդ ի քէն. ²⁸այժմ եւ յաւիտեանս յաւիտենից, ամէն:

1 G գերկոսին / D գերկոսեան
2 H ծագելով փարատեաց
3 D փարատելով
* Տէ՛. * Ղ. * Կ. Ը 78-79:
4 G զի՞նչ առակ եւ այլ
5 D աւրինակի
6 D չի՞ սուրբ
7 G ընծայել
8 D չի՞ Զի
9 D չի՞ ո՞չ ապաքէն ... միտս
10 D էականաց
11 H ընդ մարդկային
12 H էջ ի քեզ եւ զարութեամբ բարձրելոյն
13 D բարձրութեան փխ զարութեամբ
14 GD կաթնաբուծեցեր / H կաթնաբուծ արարեր / K կաթնարբուցեր / Հմնտ. «Եփր. Խոստ.» (ՆՀԲ) «Մայր աստուծոյ Մարիամ, որ գաստուած ծնար, որ գաստուած կաթնաբուծեցեր»:
15 K գգուցեր, զի գամ համբուրեցեր. Աննա է խորհուրդս որ ի ձեռն ամենասուրբ կուսին երեւեցաւ ազգի մարդկան, անհնայնի, անհասանելի, անիմանալի, անհետազատելի ելլն: Բաց է բողոնով GH-ի մնացած մասը: Նոյնն է անում եւ W գգուեցեր. Աննա է խորհուրդս որ ի ձեռն

ամենասուրբ կուսին երեւեցաւ ազգի մարդկան եւ այլն:
16 D չի՞ եւ որոյ ... ամենայն ազգք
17 H արարեր / Հմնտ. եւ Աթանաս՝ Խանձարրապատեալ կաթնաբուծեցեր (էջ 296):
18 H Զի՛ նա / G Տի՛, նա, եւ զի՞ կայ իմ եւ այլ ընդ այսպիսի մրցման կռուել / Այս հատուածը տե՛ս Աթանաս, էջ 298, ծմբ. 7:
19 G լերինն զհիմունս բացազարդ հրով զսանդարամետացն դղորդեալ
20 G չի՞ իսկ
21 H մարգարէութիւնն
Բ Ղ. * Կ. Ը 48
22 G լեր մեզ
23 GH առ որդիտ
24 D Աստուածդ
25 G զի ի ձեռն քո
26 D ժողովուրդս
27 D մնա հանցում փառս եւ պատիւ ընդ Հաւր եւ ամենասուրբ Հոգւոյն այժմ եւ միշտ... փխ եւ փառս ... աժմ եւ
28 H այժմ եւ յաւիտեանս

**ՎԱՐՑՄՈՒՔ ՅԱՂԱԳՍ ՄԱՐՄՆԱԽՈՐՈՒԹԵԱՆՆ ՏԵԱՌՆ ՉԱՆԱԶԱՆՔ՝
ՎԱԶԱԳԱՆԻ ԱՂՈՒԱՆԻՑ ԻԾԵԱՆԻ ԸՆԴ ՊԵՏՐՈՍԻ ՍԻՆԵԱՑ
ՇԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԵՒ ԻՄԱՍՏԱՍԻՐԻ**

1 [Ա.] Հ[արցումն]. Սահմանել³ զԱստուածութիւնն կարողութիւն իցէ՞ ումբ ընդ սահմանելիս:

2 - Պատասխ[անի]. Հարկաւոր է ինձ յայսմ վայրի կրկին առնուլ դէմս եւ զերկաքանչիւրսն ամբողջ պահել. վասն զի աստուածային⁴ գիրք ոչ միայն բանաւոր կենդանեաց ստեղծանեն դէմս, այլեւ այլոց կենդանեաց, որք զբանական զաւրութիւնն չափեցին զՀիմունս ամենայն բանից: ⁵Տեղադրութեամբ փոխաբերութեան ազարակին սահմանաց անհնար է սահմանել զաստուածութիւնն, զի թէ ինքն է տեղի ամենայնի, երկնի եւ երկրի եւ ամենայնի⁶ որ ՚ի նմա են, զիա՞րդ ոք ընդ սահմանելիսն չափիցէ՞ կողմանս դնելով նմա: ⁴ Բայց համառաւտ բանիւն, որ ցուցանողն կոչի, իբր ⁸սահմանելի է աստուածութիւնն, զի եւ Կիւրեղ Աղեկսանդրացի համառաւտ բանիւ սահմանեաց զՀոգին Սուրբ ընդդէմ ամբարշտին Մակեդոնի, քանզի սեռ է եւ ի գոյացուցիչ զանազանութեանց առեալ լինի սահմանաց. այլ ոչ ի տեղւոյն, եւ ոչ ի ժամանակէ, եւ ոչ բնաւ ի շարժմանէ, քանզի անհնար է զշարժութեան տեսական առնուլ ⁹ի վերայ աս-

տուածութեանն, որ յարարածոցս կարգեցաւ:

1 [Բ.] Հարցումն. Ընդէ՞ր մարգարէն ասէ՛ Աստուած ¹⁰ի տեղւոյ սրբութեան իւրում՞:

2 - Պատ. Ամենայն գիրք ¹¹ի տեղւոյ ասեն, եւ որք արժանի եղեն տեսանել զնմանութիւն փառաց նորա բազում աւրինակաւք այլայլեալս ի միմեանց զդէմս նորա գրեցին, այլ ոչ զոր ինչ էն. մարդոյ նմանութիւն տեսեալ յսկզբանն՝ առաջին գոյացեալ մարդոյն էր. հիւրասիրին Աբրահամով՝ հիւրոյ կերպարանաւք, ուստի զմարմնաւոր կերակուրսն եւ զլուացարարսն պատրաստէր. եւ Սահակաւ դրոշմեաց իսկ զմեծ խորհուրդն ոչխարով մեռելութեան նորա գտիեզերակեցոյց¹² մահն: ³ Եւ Յակովբայ¹³ ըմբշամարտիկ¹⁴ ձեւով. եւ աւրինազրին՝ հուր վառեալ ¹⁵ի մորենւոյն. եւ ժողովրդեանն՝ պատուանդանաւ ոտից ական պատուականի. եւ Յիսուայ¹⁶ դիմաւք սպառազինութեամբ զաւրավարի: ⁴ Եւ դատաւորացն մասնաւոր նմանութեամբ ի միմեանց որոշեալ. եւ յետ այնորիկ յորժամ ընդ հարսն խաւսեցաւ մարգարէաւք, եւ ընդ թագաւորսն ի բազում մասունս եւ աւրինակս: ⁵ Այլ այն աւրինակ ըստ ժամանակին խորհրդական տե-

1 A Վերնագրում ունի նշանակած լուսանցքում հատուածի թուահամարը ԾՂԴ:

2 A էպիսկոպոսի եւ իմաստասիրի

3 A սահմանեալ

4 A ածաին..

5 Հմմտ. Սահմանի՞ «Սահման ասի ի փոխաբերութենէ զիւղից եւ ագարակային սահմանաց» (էջ 142):

6 A ամենայն. տողամիջում՝ ի

7 A ի նմայ

8 Հմմտ. Առածո՞ «Սահման է բան համառոտ յայտնիչ գոյացութեան» (էջ 216):

9 A ի վերայ

10 A ի տեղոյ

՞ Ս՝Պ՝. ԿԼ՝ 6

11 A ի տեղոյ

12 A գտիեզերակեցուց

13 A յակովբայ

14 A ըմբշամարտիկ

15 A ի մորենոյն եւ ժողովորդեանն

16 A յիսուայ

սուրբիւնք էին¹, զի այնպէս զիջանելով երեւէր, զի տեսեալ լիցի անտեսանելին որչափ հնար է արարածոց: 6 Այլ Աստուած ոչ է ²ի տեղւոջ, եւ ոչ ի ժամանակի. զի թէ ի տեղւոջ է՝ ապա ի պարունակութեան է, եւ անմարմինք ոչ պարունակին. եւ եթէ³ ի ժամանակի է՝ ապա ընդ ժամանակաւ է. եւ զի⁴ ընդ ժամանակաւ լինիցի ժամանակաց արարիչն:

1 [Գ.] Հարց. Ընդէ՞ր մարգարէքն արձուսեմ եւ կառս քաղաքս:

2 -Պատ. Տեսութիւն ճշմարիտ է, այլ գոյութիւն⁵ ոչ ուրեք երեւի. մի՞թէ անբան կենդանիք իցեն յերկինս՝ ցուլ եւ առիւծ եւ արծուի, կամ բնաւ ⁶թե՞ւք գոն հրեշտակաց, կամ երկթեւեանք, կամ վեցթեւեանք, այլ այնպէս երեւին կերպս ի կերպս, առեալ անմարմին⁷ զաւրութեանցն զհեծելոց ձեւ եւ զհիւսանց աւրինակ. քան[զի]⁸ ձող առնուլ եւ լար հիւսանց գործ է եւ երկրաչափաց⁹, զոր եզեկիէլ եւ Ջաքարիաս տեսանէին: 3 Յորժամ ¹⁰աւերելոց էր Երուսաղէմ հեծեալս եւ եղջիւրս տեսանէին, եւ ձիս աշխետս եւ պէսպէս պէսպէս՝. եւ յորժամ շինելոց էր՝ հիւսուցն եւ երկրաչափս¹¹. զի զիտասցես թէ ըստ ժամանակին տեսիլքն յաճախէին այլափոխեալ. քանզի այսպէս գրեալ էին, թէ եւ ի տեսիլս յաճախեցից¹²: 4 Եւ հրեշտակապետն¹³ յաւետա-

րանել կուսին զձերունուց¹⁴ առեալ կերպարանս, զի մի՛ խոռովե[ս]ցի¹⁵ աւրհնեալն, որ ոչ ¹⁶բերէր զղէմս երիտասարդաց: 5 Արդ միթէ հրեշտակք¹⁷ ձերք եւ մանկո՞ւնք իցեն յերկինս: 6 Թեւ ոչ ունին եւ թռուցեալ իջանեն, զի զերագաշարժութիւնն նոցա թեւս կոչեն աստուածային գիրք: 7 Դէմս¹⁸ ոչ ունին զգայարանաց¹⁹, այլ նմանութեամբ մարդկան երեւին. շրթունս ոչ ունին ծաղկեալ բնական կարմրութեամբ, այլ զհրամայեալսն մեզ վայելչագոյնս բարբառին²⁰. լեզուս ոչ ունին կրկինս կամ միատակս եւ բազում ներգործութեամբ կազմեալ տեսակարարս²¹ բանից, եւ ձայնեն աւետիս բարեաց կանխաւ արժանաւորաց:

1 [Գ.] Հարցումն. Աստուածային առաքեալն ընդէ՞ր ասէ. Թէ զլեզուս մարդկան խաւսիցիմ եւ զհրեշտակաց²²:

2 -Պատ. ²³Բանականք [են] հրեշտակք, ոչ եթէ ընդունելով իբրեւ զմեզ, այլ յաւերժականս ունելով: 3 Արդ յորժամ խաւսին ըստ մերում աւրինակի՝ ի լեզուէ ասեմք բարբառեալ²⁴, իսկ եթէ²⁵ ասիցէ ոք, թէ հրեղէն ունել²⁶ լեզուս, եւ այն ²⁷տարակ[ուս]անս է, զի լեզուին ²⁸հարկէ զհետ երթան գործիքն ամենայն շրջանակի:

1 A եիմ
2 A ի տեղոջ
3 A էթէ
4 A յուսանցում հատուած ձՂԵ
5 A գոուքիւն
6 A քեւք գոյն
7 A անմարմին
8 A քան
9 A երկրաչափաց տողամիջում չա
10 A աւերելոց էր եմ
11 A Հմմտ. Գ. 1. Ը 8, 9. 3, 6:
12 A Տէ՛ր Եղէ՛կ. Խ 3, 5, 8:
13 A Ու՛ր. Ժ Բ 10
14 A հրշտակապետն

12 A զձերունուց
13 A խոռովեցի
14 A բերեր զղեմս
15 A հրշտակք
16 A դեմս
17 A սգայարանաց
18 A բարբառին
19 A տեսակ, ս. տողամիջում. արար. [=տեսակարարս]
20 A զհրշտակաց
21 A Ը Կ. Ժ Գ 1
22 A բանակեմք հրշտակք ոչ էթէ
23 A բարբառեալ
24 A էթէ
25 A ունել
26 A ի տարականս
27 A ի հարկե

1 [Ե.] Հարց. Եւ հրեղէնք¹ ո՞չ են հրեշտակք²:

2 -Պատ. Եւ կարի քաջ հրեղէնք³ են հրեշտակք⁴ եւ լուսաւորք հոգիք ինքնակատարք. ասէ՛ Արար զհրեշտակս⁵ իւր հոգիս, եւ զպաշտաւնեայս⁶ իւր Պի հուր կիզելոյ⁷: 3 Արդ՝ ⁸հրեղէնք են հրեշտակք, բայց քանակութիւնն ոչ ունին, եւ ոչ անդամոց թիւս եւ թեւոց, զի ի միաթեւաց ⁹մինչեւ ի բազմաթեւս եւ զատաթեւս եւ կցաթեւս եւ թաղանթաթեւ[ս] առ մեզ կենդանեացս¹⁰ են եւ ոչ ի վեր անդ. եւ ոչ գործիս մասնաւորս, եւ ոչ անդամս երեւելիս եւ աներեւոյթս: 4 Արդ՝ ¹¹եթէ հրեշտակք այնպէս են, զիա՞րդ ասիցես զարարիչն ¹²հրեշտակաց ի տեղւոջ կամ տեղեալ սահմանելի:

1 [Զ.] Հարց. Զի՞նչ են հրեշտակք:

2 -Պատ. [Հրեշ]տակք¹³ են հոգի կենդանի, բանաւոր, աներեւոյթ, ի բարի՝ դիւրաշարժ, եւ ի չարիս՝ դժուարաշարժ: 3 Բայց ¹⁴գիտա[ս]ցես, ո՛ր արքայ, եթէ ամենայն [ան]մարմին զաւրութիւնք որոշեալք են ի միմեանց փառաւք եւ զաւրութեամբ եւ կայարանաւք եւ ինքնակատարք են:

1 [Է.] Հարց. Հաւանեալ եմ ամենայնիդ¹⁵, բայց մարգարէն ընդէ՞ր ասէ, թէ Աս-

տուած մեր յերկիմս եւ յերկրի¹⁶, ի ծով եւ յամենայն խորս¹⁷:

2 -Պատ. Մարգարէն այլ ինչ ոչ գիտէ տեղի ¹⁷քան զայդ, եւ ոչ բնաւ իսկ այլ տեղի, զի իմաստունն ասէ, թէ Երկիմք երկնից չեն քաւականք. եւ դարձեալ՝ Անդունդք ասացին թէ չէ առ իս, եւ ծով ասաց թէ չէ ընդ ինեւ¹⁸. աղէ, ասա՛ նախ քան զերկինս եւ զերկիր առնել ո՞ւր գտանիցես զտեղին, յորում ասիցես զաստուածութիւնն, զի ինքն Տէր մեր այսպէս ասէ ի դէմս իմաստնոյն, թէ Յառաջ քան զամենայն բոլորս ծնեալ եմ ես¹⁹. եւ դարձեալ, թէ Նախ քան զերկիր գործեալ՝ ես էի, որով ուրախ լինէր Տէր²⁰: 3 Արդ՝ ուրախ լինէր մինչ ոչ երկինք էին եւ ոչ երկիր:

1 [Ը.] Հարց. Մարգարէն ընդէ՞ր ասէ, թէ Զարքիբ, ընդէ՞ր ննջես Տէրէ:

2 -Պատ. Այսպիսիք բազում են ասացեալ յաստուածային գիրս եւ զայս քեզ ցուցանեմ, արքայ՝ ¹⁸: 3 ¹⁹Ննջել ասեն զիրք զԱստուած եւ զարթնող եւ ծիծաղել եւ բարկանալ. այս ամենայն ոչ են նորաստորոգի: 4 Զիա՞րդ Հնար է ի քուն ասել զԱստուած, որ Ոչ ննջէր եւ ոչ ի քուն երթայ²⁰ պահայոյցն²¹ Իսրայելի²². ²³զի քուն է

1 A հրեղեմք
2 A հրշտակք
3 A հրեղեմք
4 A հրշտակք
5 A զհրաշտակս
6 A զպաշտաւնայս
7 A ի հուր դիզելոյ
8 Սաղմ. ճԳ. 4
9 A հրեղեմք են հրշտակք
10 A մինչեւ եւ
11 A կենդանացս. տողամիջում՝ Ե
12 A էթէ հրշտակք
13 A հրշտակաց ի տեղոջ
14 A հրշտակք
15 A զիտացես, ո՞ր արքայ, էթէ
16 A ամենայնիս

16 A երկրի. տողամիջում՝ Ե
Բ Սաղմ. ճԼԳ. 6
17 A քան զայլ
Գ Գ. Թ. Գ. Ը 27
Դ Յ. Բ. Ը 14
Ե Հմց. Յ. Բ. Ը 7:
Զ Հմց. Ը. Գ. Ը 30:
Է Սաղմ. ԽԳ. 24
18 A արքայ
19 Հմմտ. Ապողիմար, A «Բունել ասեն զիրք գաստուած եւ զարթնուլ, բարկանալ, աքոռ ունել զիրքեւ...» (թերթ 226):
20 A երթալ
21 Հմմտ. ՆճԲ պահախոյցն:
22 A Իդի
Ը Հմց. Սաղմ. ճԻ 4:
23 Հմմտ. Նիւս. Կազմ. «Եւ այսպիսի ախտ քուն է. անդողոջ խաղաղացեալ ի մարմնին զգայութեանն» (այլ ընթ. ի մարմնի զգայութեանն), (թերթ 144ա). տե՛ս եւ ՆճԲ անդողոջ:

ախտ անդողդոջ խաղաղանալ ի մարմնի զգայութեանցն¹, ²եւ արթնութիւն նորին հակառակ լուծումն քնոյ. եւ ծաղր՝ անբան շնչոյն ընդարձակութիւն է ի մեզ ջղաւք եւ մկամբք կատարեալ, եւ նորին հակառակն՝ ժողովեալ հոծատեսակ շնչոյն նեղելոյ զխոնաւ գոլորշիսն ³ի խելապատակն ⁴իբր ընդ ագուգայս իջանեն յաչսն, որպէս սեխիցն եւ նմանեացն ընդ կոռունսն առեալ զջուրն. ⁵եւ բարկութիւն եռանդն է զսրտիւն արեանն ի վերածխութենէ մաղձոյ: ⁵ Արդ զայսոսիկ ա[խ]տս մարդկայինս զիա՞րդ առնուցուս բնաւորապէս ⁶ի վերայ պարզ էութեանն: ⁶ Բայց այսպէս⁷ իմասցիս. յորժամ մեղանչէր Իսրայէլ⁸ եւ տիրէին նոցա թշնամիքն եւ աղաղակէին ի վեր եւ ոչ լինէր լսելի, գայն քուն անուանեն, եւ ոչ էր քուն, զի եւ Շղիա այպանէր⁹ զբազաղիման, թէ¹⁰ պնդագոյնս կարգացէք միթէ ի քուն իցէ Աստուածն¹¹ ձեր. եւ զրոց այդ իսկ է սովորութիւն. ¹²զլուծութիւնն բարեգործութեան քուն անուանեն, զերկայնամտութիւնն՝ արթնութիւն, [...]ելն եւ զայպանելն՝ ծաղր, զբարեբարելն՝ քաղցրութիւն, արհամարհելն ե[ւ] զվրէժխնդրութիւնն՝ բարկութիւն, եւ այլ

բազումք այսպիսի ¹³են եւ ասին, որպէս Աստուած, հրեշտակ¹⁴, մարդ: ⁷ Եւ են եւ ոչ ասին, որպէս անմահ եւ անապական. յոչինչ յառաջ քան զնա լինելոյն՝ անսկիզբն, զի եւ ոչ ունի կատարումն՝ անսկիզբն¹⁵ եւ անապական: ⁸ Եւ ոչ են եւ ոչ ասին, որպէս չար ասել զաստուածութիւնն կամ ի բազմաց գոյացեալ, զի ի բազմաց գոյանալն սկիզբն է լուծանելոյ: ⁹ Արդ՝ որպէս ասացին՝ անմարմինքն ոչ են ընդ որակութեամբ եւ ոչ ունին նմանութիւն գունոյ կամ ձեւոյ, կամ այլոց եղանակաց, զի այս ի վերայ արարածոցս է: ¹⁰ Եւ թէպէտեւ¹⁶ մարդն ըստ պատկերի եւ ըստ նմանութեան ասի արարեալ, այլ նմանութիւն է եւ ոչ հաւասարութիւն:

1 17[Թ.] Հարց. եւ գոր սասցեալդ էիր, թէ Համառուտ բանի սահմանելի է աստուածութիւնն, արդ սահմանեա¹⁸ ինձ:
2 -Պատ. Ի տեղադրական եւ ¹⁹ի բնա-

1 A սգայութեանցն
2 Հմմտ. Ապողիմար, A «Զի քնոյ լուծումն գարթնուլ է» (թերթ 226բ) / «Արթնութիւն է լուծումն քնոյ». Վահրամ՝ երբ. (ՆՃԲ արթնութիւն). տե՛ս եւ ՆՃԲ ծաղր, մի վկայութիւն այս Լ՝ հարցումից՝ իբրեւ պիտատո:
3 A ի խելապատակն
4 Հմմտ. Վահրամ՝ «Արտասոււ... իբրեւ ընդ ագուգայս իջանեն յաչսն» / ՆՃԲ ագուգայ:
5 Հմմտ. Նիւս. Բն. «Սրտմտութիւն է եռանդն շուրջ գարտին ի վերածխութենէ մաղձոյ կամ ի պղտորմանէ եղեալ» (թերթ 70բ). տե՛ս եւ ՆՃԲ վերածխութիւն
6 A ի վերա
7 A այսպես
8 A իէդ
9 A յապաներ
10 A թե
11 A ածն
12 A զլուծիւն բարեգործութեան

13 A են եւ ասին. տողամիջում մի աւելորդ եւ
14 A հրշտակ
15 A անսկիսբն
16 A թեպետ
17 Այս իններորդ հարցման համառոտութիւնը գտնում ենք Վանականի մօտ՝ «Վանականի Հարցմունք գանագանի եւ պատասխանիք բարառնաբար», ՄՄ ձեռ. թիւ 3074, թերթ 104բ՝ «Հարցումն Վաչագանա իշխանի եւ պատասխան Պետրոսի Սիւնեաց վերադիտողի. Զի՞նչ է սահման ալ - Ա՞ծ ոչ սահմանի, բայց այսպէս ասել մարթ է, թէ աստուած կենդանի, մշտնջենաւոր, բանական, անախտ, առաջին եւ երկնային միտս ըստ ինքեան առ նիւթոյ, այլ այլ՝ արիւնակ: Արդ աստուած ասելով զարարչութիւն եւ զիշխանութիւն նշանակէ եւ զեպիկուրեացն զանաստուածութիւն յանդիմանէ, իսկ կենդանի եւ մշտնջենաւոր ասելով յարարել յաստուածոցն գատուցանէ, եւ բանական ասելով ի համերց հաստուածոցն որոշէ, եւ ըստ ինքեան ասելով գատանէ եւ յարարածական խառնակ բնութենէս. եւ առաջին եւ երկնային ասելով զայլ միտս նմանեցուցանէ, թէ պարզ եւ մաքուր առանց ամբոխելոյ. եւ առ նիւթոյ ասելով զարարող կամաց նիւթ եւ տեսակ ցուցանէ արարելոցս եւ զաստուածութիւնն ցուցանէ աննիւթ եւ անմարմին»:
18 A սահմանեալ
19 A ի բանական

կան սահմանաց բացարձակ է աստուածութիւնն, բայց բանական սահմանաց մարթ է նուրբ եւ փայլած ինչ սահմանել, որպէս յորժամ ասէ, թէ Աստուած է կենդանի, մշտնջենաւոր, բանական, անախտ, առաջին եւ իրականութիւն միտս անախտաբար, չըստ ինքեան, առ նիւթոյ. դարձեալ այլ եւ այլ աւրինակ սահմանի, բայց ի նոյն միտս բերի: 3 Արդ Աստուած ասելով զարարչութիւնն եւ զիշխանութիւնն նշանակէ, 2 եւ զԵպիկորեանց զանաստուածութիւն յանդիմանէ. 3 իսկ մշտնջենաւոր եւ կենդանի ասելով ի չա[ստ]ուածոց եւ յարարելոցն զատուցանէ. եւ բանական ասելով ի համերց աստուածոցն զատուցանէ. եւ անախտ ասելով յամենայն ախտականացս զատուցանէ. եւ 4 ըստ ինքեան ասելով՝ ի բաց բառայ⁵ ի բնութենէն զքուն եւ զնախանձ եւ զբարկութիւն: 4 Եւ առաջին եւ երկնային միտս ասելով զայլ միտս պատկեր նմանեցուցանէ, թէ⁶ պարզ եւ մաքուր, առանց ամբոխելոյ: 5 Եւ առ նիւթոյ ասելով զարարաւղ կամացն շարժումն նիւթ եւ տեսակ ցուցանէ արարածոց իւրոց, եւ զաստուածութիւնն ցուցանէ աննիւթ եւ անմարմին:

1 [Ժ.] Հարց. Ասեմ հերձուածողմն ի սահմանն Քրիստոսի աստուածային մարմնոյն, թէ Աստուած բանն Որդին միածին⁷ մա[րդ] է կատարեալ առանց սահմանելոյ, սուրբ է գործն նորա ի նմա առանց կատարելոյ, ⁸եւ իւր առանձնաւորութիւն առանց համեմատութեան:

1 A ըստ ընթեան
 2 Հմմտ. Սահմանք՝ «Քանզի եպիկուրային է (այլ ընթ. եպիկուրացոցն է) ասել, եթէ ոչ է աստուած» (էջ 131):
 3 A իստ մշտնջենաւոր
 4 A ըստ ընթեան
 5 A բառնալով
 6 A թե
 7 A միածինման է
 8 A եւ իւր անձնանձնաւորութիւն

2 - Պատ. Եթէ⁹ Որդին Աստուծոյ ի մարմնին անսահման է որպէս ասենն, այն Որդի Աստուծոյ է զոր Պաւղոսն ասէ, թէ¹⁰ Սահմանելոյ Որդոյն¹¹ Աստուծոյ զաւրութեամբ՝. եւ Պետրոս ընդ Կոռնեղիոս¹² ասէր, թէ նա ¹³[է] սահմանեալն յԱստուծոյ դատաւոր կենդան[եաց] եւ մեռելոցք. եւ թէ Որդին Աստուծոյ ի մարմնին անսահման է, եւ մարմին ¹⁴հոգևով սահմանելի, զի մարմին հոգևով մարդ կենդանի. երկուք ուրեմն են որդիք՝ սահմանեալն մարդոյ ընդթեամբ մարդ ի մարդոյ, եւ անսահմանն Աստուծոյ բնութեամբ Աստուած յԱստուծոյ: 3 Եւ սուրբ է գործն, որ ասացեր, առանց բաժանելոյ, ոչինչ աւելի ետուր քան զմարգարէի, զի սուրբ էին գործք սրբոցն եւ յԱստուծոյ ոչ բաժանեցան. արդ զայս ուսուցանէ Գրիգոր Աստուածաբանն, ¹⁵թէ Աստուած ընդ Աստուածս միաւորեալ եւ ծանուցեալ: 4 Եւ դարձեալ թէ¹⁶ ոչ բնութեամբ միաւորելով ի մարմնին աստուածային¹⁷, ապա բազում են աստուածային մարմինք եւ կոչեցեալք աստուածք. եւ եթէ¹⁸ առանձնաւորութիւն անհամեմատ է՝ երկու ուրեմն անձինք են, զի առանձնաւորութիւն¹⁹ անձանց է: 5 Առանձնաւորութիւն միայն անձին ²⁰ոչ է համեմատութիւն առ ինքն, այլ՝ առ այլ առաւել քան զնուազն, կամ նուազ քան զառաւել, կամ հաւասար:

9 A էթէ
 10 A թե
 11 A որդոյն
 * Հոգ. Ե 4
 12 A կոռնողիոս
 13 Փակագծուածները ջնջուած են խոնաւորութիւնից:
 ք Գործ. Ժ 42
 14 A հոգով սահմանելի
 15 A թե ան ընդ ա. ս
 16 A թե
 17 A անային
 18 A էթէ
 19 A առանձնաւորութիւն
 20 A ոչ ե

1 [ԺԱ.] Հարց. Յակոբիկֆ ասեմ, թե Քրիստոս մի բնութիւն է յերկուց բնութեանց:

2 -Պատ. Ոչ եթէ¹ Յակոբիկք ասացին միայն, [այլ] եւ սուրբ հարքն: 3 Արդ թէ մի [ի] սրբոյ կուսէն անուանի ծնեալն, եւ ինքն է որով ամենայնն մի բնութիւն է, վասն զի եւ դէմ² մի:

1 [ԺԲ.] Հարց. Եթէ³ մի բնութիւն ոչ այլ ինչ քան զերկու բնութիւնս. զի իր որ յիրէ է՝ այլ է, քան որ ինքն ի նմանէ է⁴ հարկաւորաբար:

2 -Պատ. Մի բնութիւն ոչ այլ ինչ է, բայց յերկուց միացեալն, բառնալով թուոյն, նոյն յորոց միացաւն, անշփոթ⁵ եւ անորոշաբար: 3 Եւ զի ասացեր, թէ իր որ յիրէ է նոյն է որ ինքն ի նմանէ հարկաւորաբար, եւ ես քեզ ասեմ՝ իր որ յիրէ է, նոյն է որ ինքն ի նմանէ է հարկաւորաբար ըստ բնութեանն եւ պատահման: 4 Սողոմոն ի Դաւթայ ծնեալն նոյն է ըստ բնութեանն եւ սահմանի, եւ մարդ՝ ⁶ի հոգւոյ եւ ի մարմնոյ գոյացեալ՝ ոչ այլ ինչ է քան զհոգի եւ զմարմին, բառնալով թուոյն: 5 Եւ եթէ⁷ ոչ բառնաս զթիւն՝ երեք⁸ բնութիւնք են ⁹քո Քրիստոսին, զի հարկաւորին ոչ է կարելի ինչ, այլ ամենայն¹⁰ ի հարկէ շարժեալ նոյնաւրինակ ունել զշարժումն:

1 [ԺԳ.] Հարց. Միաւորութիւն հաստի՞չ է էութեանցն եթէ¹¹ խափանիչ. թէ խափանիչ է, ապա Քրիստոս ոչ Աստուած

է եւ ոչ մարդ, եւ եթէ հաստիչ է, ապա Քրիստոսի երկու բնութիւնք են:

2 -Պատ. Միաւորութիւնն ոչ հաստիչ է եւ ոչ բարձաւղ, այլ ժողով ի մի, զոր աւրինակ սահմանական, զի զբազում բնութիւնս ի մի առնէ, եւ բաժանականն՝ յայլ եւ յայլս բաժանէ. եւ զայս ի սահմանէ մարդոյ ծանիցես: 3 Եւ դարձեալ՝ միտ դի՛ր, միաւորութիւնն ի՞բր կարէ հաստատել զէութիւն կամ զբնութիւնն, զի միաւորութիւնն պատահումն¹² է եւ էութիւնքն գոյացութիւնք, եւ գոյացութիւնք են բարձաւղ եւ հաստիչ պատահմանց, եւ միաւորութիւնն ժողովէ միայն: 4 Արդ՝ ես քեզ հարցանեմ. Միաւորութիւնն թէ հաստիչ էութեանց եւ բնութեանց է, որպէս յաւժարիս եւ կարծես, [արդ]¹³ եթէ¹⁴ բնութեանցն միայն հաստիչ է, ապա բարձաւղ է անձանցն, եթէ բարձաւղ է անձանցն, ապա գտանի Քրիստոսն քո առանց անձին. եւ եթէ¹⁵ հաստիչ է անձանցն, ապա Քրիստոսի երկու անձինք են, որպէս¹⁶ նախաւրինակին քո Նստորի Քրիստոսին. զի չկարես ասել, թէ Բանն Աստուած մարմին առանց անձին էառ, զի այդ հերձուած Ապողինարի է: 5 Եւ եթէ¹⁷ մի անձն խոստովանիս ¹⁸աստուածային եւ մարդկային, ապա նոյնաւրինակ մի բնութիւն¹⁹ միաւորութեամբ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

1 [ԺԴ.] Հարց. Քրիստոս Աստուած է եւ մարդ. եթէ²⁰ Աստուած ասեմ եւ մարդ՝ անուանեմ զի՞նչ նշանակեմ, բնութիւնն թէ անձն. թէ անձն է, ապա Քրիստոսի երկու անձն է եւ եղեր դու Նստոր. ա-

1 A էթէ
2 A դեմ
3 A էթէ
4 A է տողամիջում
5 A անշփոթ
6 A ի հոգոյ
7 A էթէ
8 A գ
9 A քո քին
10 A ամէնայն
11 A էթէ

12 A պատասխումն
13 A արդ ջնջուած
14 A էթէ
15 A էթէ
16 A որպէս
17 A էթէ
18 A անձային
19 A բնութիւն
20 A էթէ. տողամիջում աւելորդ թ [=թէթէ]

պա եթէ¹ զբնութիւնն նշանակեն, ապա Քրիստոսի երկու բնութիւնն են:

2 -Պատ. Քրիստոս Աստուած է եւ մարդ, հոգի է եւ մարմին: 3 Եւ շաղկապն ոչ բնութիւն ցուցանէ, ըստ այլ բառից կապ ի միմեանց զատանելով, որպէս Աստուած՝ անսկիզբն եւ անժամանակ, եւ աստ ոչ երկու բնութիւն ցուցանեն Աստուծոյ. եւ ասացեր թէ անուանքն զի՞նչ նշանակեն² բնութիւնն թէ անձն. ոչ բնութիւն առանց անձին նշանակէ եւ ո՛չ անձն առանց բնութեան. եթէ³ բարձեալ զմիաւորութիւնն խնդրես զնշանակսն՝ այլ բնութիւն անձամբ. աղէ՛ ասա[ս]ցեն⁴ կամ ցուց[ց]են⁵ մեզ բնութիւն ⁶առանց [անձ]ին, զի բնութեան զհետ երթայ անձն: 4 Արդ՝ եթէ⁷ զբնութիւնն նշանակեն անուանքն, ապա բարձեալ են աստուածային մարդկային⁸ անձինքն. զայդ եւ ոչ Հրեայք: 5 Զի թէ⁹ ամենայն մարդ զմի բնութիւն ունի եւ զայլ եւ այլ անձն, այլ զհասարակն ամենայն ոք առ ինքն կատարելապէս զհասարակն ունի: 6 Բայց առաքեալն սուրբ զբաժինս ոչ ուրեք յիշեաց, այլ միաւորութեամբ աստուածութեանն¹⁰ եւ մարդկութեանն ասէ՝ Յիսուս Քրիստոս երեկ եւ այսաւր նոյն եւ յաւիտեանս՝. եւ զարձեալ՝ Յորոց եւ Քրիստոս ըստ մարմնոյ, որ է ¹¹ի վերայ ամենեցուն Աստուած արեւնեալ յաւիտեանս, ամէն՛: զի ի միաւորութեանն ոչ մնան բաժանելով սահմանք

իւրաքանչիւր եւ նշանակք, որպէս սահմանէ երանելին Իգնատիոս վկայն սուրբ՝ Միաւորութեամբ ի մի բնութիւն:

1 [ԺԵ.] Հարց. Յորժամ ի միաւորութիւն եկին՝ եղեն որ ո՞չն էին, թէ՛ որ էինն. եւ թէ որ էինն եղեն՝ ապա Քրիստոսի երկու բնութիւնն են:

2 -Պատ. Եղեն որ էինն, եւ ոչ է երկու բնութիւնք. թէ¹² երկու բնութիւն է զատեալ սահմանաւն՝ ապա լինելն ի՞նչ է. ոչ կայ այդր Աստուծոյ լինել մարդ: 3 Եւ ո՞ւր տանիս զԱստուածաբանի ասելն ի Զատկի ձառին, թէ Որ էրն լինի եւ ¹³ստացիչն ստացանի, եւ անտանելին տարեալ լինի: 4 Բանս մեր ի ձայնէ եւ յաւերոյ հաստատեալ է. եւ որ էրն լինի ոչ այլ ինչ քան զնոյն եւ ոչ երկու բնութիւն. Զերկրորդ¹⁴ բանէ ասեմ եւ ոչ զառաջնոյ. այլ մի բնութիւն Բան[ին մարմնացելոյ]: 5 Նոյն աւրինակ է եւ Տեառն մերոյ:

1 [ԺԶ.] Հարց. Այս բնութիւնս՝ որ հաւա[տաս լինել] Քրիստոսի, ¹⁵երկու է թէ այլ քան զերկուս:

2 -Պատ. Յերկուց միացեալ եւ ոչ այլ ¹⁶քան զերկուց միացեալն:

1 [ԺԷ.] Հարց. Քրիստոս բնութիւն յաւնակա՞ն է թէ ոչ. թէ յաւնական է՝ բոլորովիմբ¹⁷ սոսկ է նորա բնութիւն արտաբոյ յայսմ, եթէ ոչ է՝ ապա Քրիստոս ոչ է յերրորդութենէն¹⁸, զի երրորդութիւնն ծանուցեալ է պարզ. եւ եթէ¹⁹ այլ բնութիւն է նորա քան զյաւնականն, ա-

1 A էթէ
2 A նշանակին
3 A էթէ
4 A ասացեն
5 A ցուցեն
6 A առանցին զի
7 A էթէ
8 A մարդկային
9 A թե
10 A ամութեանն
՝՝ ԵՔր. Ժ. Գ. 8-9
11 A ի վերայ ամենեցուն
Է Լուս. Թ. 5

12 A թե
13 Հմմտ. Աստուածաբան, Ծն., Զփր. կթ., Ծնորհ. թղթ. «Ստացիչն ստանի կամ ստացանի» (նշի ստացիչ):
14 A գերրորդ. ուղղուած՝ գերկրորդ
15 A բ է
16 A քան զբոլոր
17 A բոլորովիմբ
18 A յերրորդութենէն
19 A էթէ

պա ¹Քրիստոսի երկու բնութիւն է՝ մի յաւդական եւ մի պարզ:

2 - Պատ. Քրիստոս ոչ է բնութիւն, այլ գոյացութիւն, եւ անունդ Քրիստոսի ոչ ունի սահմանական² զաւրութիւն, եւ զայս Կիւրեղ Աղեկսանդրացի ուսուցանէ. ի Պարպամանցն ասէ. ³Քրիստոսդ անուն ոչ սահման է եւ ոչ սահմանի զաւրութիւն. ապա եթէ⁴ ասես Քրիստոսի բնութիւնն՝ ապա այսպէս պատասխանեմ. Քրիստոս մարմնով յաւդական է եւ հոգևով⁵ մարդ, ⁶այնու պարզ եւ աստուածութեամբն եւս առաւել պարզ: ³ Եւ զորաւրինակ մարդ բանական ⁷հոգևով հրեշտակաց համագոյ է եւ անբան շնչովն անասուն կենդանեաց, եւ ոչ երկու բնութիւն ի միաւորութեանն տեսանի, նոյնպէս եւ Քրիստոս մարմնով եւ հոգևով⁸ մեզ համագոյ, յաւդականով մարմնով եւ պարզ հոգևով⁹, եւ աստուածութեամբն՝ Հաւր եւ Հոգևոյ¹⁰ պարզ եւ տարած էութեանցն: ⁴ ¹¹Եւ վասն մարդոյն ուսիր՝ ի մարդոյն կազմութեան եւ բնութեան, զի եւ առ անասունս հաղորդին եւ առ հրեշտակս¹² նոյնպէս. եւ Տէրն մեր առ Հայր եւ առ մեզ: ⁵ Զոր Պրոկղ ասէ, եթէ¹³ ի խաչին բեւեռեալ լինէր եւ աթոռ փառաց ոչ մերկանայր. եւ յայտ է, եթէ¹⁴ Քրիստոս

¹⁵ի խաչին էր մարմնով առ մարդկան եւ աստուածութեամբն ընդ Հաւր յաթոռ փառաց, եւ ընդ մարմնոյն միաւորութեամբ ի խաչին եւ ի գերեզմանի:

1 [ԹԸ.] Հարց. Քրիստոս սահմանելի¹⁶ է, թէ անսահմանելի. ¹⁶թէ ասես թէ սահմանելի է եւ անսահմանելի, հարցանեմ թէ¹⁷ ո՞ր բնութեամբ սահմանելի¹⁸ է եւ ո՞ր բնութեամբ անսահմանելի¹⁹:

2 - Պատ. Ամենայն նիւթեալքն ²⁰չորեքկիւն են, ²¹[երկբայ ի խոստովանելոյ] եւ երկբայ յերկբայէ, խոստովանեալ յերկբայէ, խոստովանեալ ի խոստովանելոյ: ³ Ես բնութեանց չեմ՝ խոստուկ, զի երկբայ ²²ի խոստովանելոյ է: ⁴ Դու զի¹⁷ որ ասես, թէ որո՞վ բնութեամբ սահմանելի է, զի միաւորութիւն ոչ լինի ի բնութիւնս երկուս, որպէս ասէ Յոհան Ոսկեբերան²³. եւ երկբայ յերկբայէ, որպէս Ղեւոն ի Նատորէ: ⁵ Յայտնապէս Նատոր երկուս անձն ասաց եւ երկուս բնութիւնս, վասն Աստուծոյ ծննդեանն երկբայ ասացաւ. եւ Ղեւոն երկուս բնութիւնս ասաց, եւ վասն անձանց երկբայ ասացաւ: ⁶ Արդ խոստովանեալ ի խոստովանելոյ, որպէս անձանցն միաւորութիւն: ⁷ Բայց Քրիստոս սահմանեալ է ի Պաղոսէ, եւ տեղեալ եւ բանիւ նոյն սահմանեալ է եւ անսահմանելի եւ աներեւոյթ. եւ ոչ մուծանէ անդ բնութիւն սահմանեալ եւ անսահման: ⁸ Ապա եթէ²⁴ ոչ ի

1 A ֆի ք

2 սահմանիական

3 Հմմտ. Գիրք Պարպամանց Կիրողի, Ա՝ «Քրիստոսդ անուն ոչ սահմանի գորութիւն ունի եւ ոչ գուրուֆ գեութիւն»:

4 A էթէ

5 A հոգով

6 A այնով պարզ

7 A հոգով հրշտակաց

8 A հոգով

9 A հոգով

10 A հոգոյ

11 Հմմտ. «Նիւսացու Տեսութիւն Մարդոյն Կազմութեան» եւ նոյն Նիւսացու անունը կրող «Յաղագս Բնութեան Մարդոյ» գրքերի անուանակոչութեան հետ:

12 A հրաշտակս

13 A էթէ

14 A էթէ

15 A ի խաչին եր

16 A թե ասես

17 A թե

18 A սահմանելի

19 A անսահմանելի

20 A երեքկիւն որ մեմֆ ուղղում եմֆ՝ չորեքկիւն / Հմմտ. Պորփիր՝ «Զորք են որ ներանիւթ են ... խոստովանեալ ի խոստովանելոյ, երկբայ յերկբայէ, խոստովանեալ յերկբայէ, երկբայ ի խոստովանելոյ» (էջ 322):

21 Փակագծուածը աւելացնում եմֆ Դաւիթ Անյադրից:

22 A ի խոստովանելոյ

23 A ոսկեբերան

24 A էթէ

Հարկէ զնես Երրորդութեանն¹ երկուս բնութիւնս եւ երկուս կամս. զի եթէ² Քրիստոս մի ի Սուրբ Երրորդութենէն է եւ Քրիստոսի երկուս³ բնութիւն է, ապա Երրորդութեանն երկուս բնութիւնս է եւ երկուս կամս, ապա պարտ է հաւատալ ի Հայր եւ յՈրդի եւ ի Հոգին Սուրբ եւ Քրիստոսի յերկրորդ բնութիւնն եւ յերկրորդ կամսն, եւ այսոքիկ սկիզբն⁴ են հակառակութեան ի Սուրբ Երրորդութիւնն:

1 [ԺԹ.] Հարց. Քրիստոս որո՞վ բնութեամբ հաւասար է ընդ մեզ, եւ որո՞վ ընդ Հաւր:

2 -Պատ. Ես թէ երկուս բնութիւնս խոստովանէի, ապա երկուս կամս ասէի եւ երկուս կենդանիս, զի զհետ երթայ: 3 Աղէ՛ ասա՛, Քրիստոս որո՞վ կենդանութեամբ հաւասար է ընդ մեզ եւ որո՞վ կենդանութեամբ ընդ Հաւր: 4 Թէ ասես աստուածային կենդանութեամբն հաւասար է ընդ Հաւր եւ մարդկային կենդանութեամբն⁵ հաւասար է մեզ, ապա ուրեմն Քրիստոս երկուս⁶ կենդանիք են. ապա եթէ⁷ ասես թէ⁸ շնչակայ կենդանութեամբն հաւասար է Հաւր եւ ընդ մեզ, ապա արարեր զԵրրորդութիւնն շնչակայն կենդանակիր եւ եղեն Աստուած եւ մարդիկ՝ ըստ քո ասելոյդ՝ կենդանի մի ըստ տեսակի կենդանոյ. եւ արդ հայհոյութիւն չար է ⁹ի վերայ Աստուծոյ:

1 [Ի.] Հարց. Քրիստոս մի՞ բնութիւն է եթէ¹⁰ երկուս. եթէ¹¹ մի ասես հարցանեմ¹²

թէ հասարակ է, թէ յատուկ. թէ յատուկ է, ապա ուրեմն անձն է. եւ եթէ հասարակ է, ապա ուրեմն գտանի յիրաբանչիւր անձինս Երրորդութեանն. եւ եթէ¹³ հասարակ ասես եւ յատուկ՝ այդմ՝ ոչ է հնար լինել:

2 -Պատ. Գրիգոր Աստուածաբանն ասէ. Ո՞վ նոր խառնմանս, ո՞վ սքանչելի խառնուածոյս¹⁴. արդ՝ մի բնութիւն է Քրիստոսի յետ միաւորութեանն, եւ յետ աստ ոչ ժամանակի նշան, այլ ձեւ բանից սովորական: 3 Աստուածութեամբն գտանի յիւրաքանչիւր ումեք Երրորդութեանն հասարակաբար: 4 Եւ զինչ անտեղի ասել զայս զմարդ մի բնութիւն հոգևովն¹⁵, հասարակ մարմին զաւրութեանց եւ ի նոսա տեսեալ. զի հոգևոյ¹⁶ սահման է կենդանի, բանական, անմահ, ինքնաշարժ. նոյն է եւ ¹⁷ի հրեշտակի. զի ասացեր՝ ¹⁸թէ յատուկ է ապա անձն է, զի ա՞րդ կարէ յատուկ անձն լինել, զի յատուկ պատահումն է եւ անձն գոյացութիւն:

5 Աղէ ասա՛. անձն¹⁹ մարդկային²⁰ հասարակ է թէ յատուկ, թէ հասարակ է՝ ապա ուրեմն գտանի յիւրաքանչիւր անձինս Երրորդութեանն, եւ եթէ յատուկ՝ ապա Քրիստոսն ոք ոչ է յԵրրորդութենէն, զի ունի բաժանաբար զայն, որ Երրորդութիւնն ոչ ունի՝ զանձն մարդոյ յատուկ: 6 Զարմանալի է նոր վարդապետութիւնդ²¹, զանձանցն միաւորութիւն անձառելի է եւ հաւատովքս խոստովանի [ի] Քրիստոս եւ զբնութեանցն միաւորութիւն

1 A երրորդութենն
2 A էթէ
3 A ք
4 A սիզբն
5 A կենդանութեան
6 A ք
7 A էթէ
8 A թե
9 A ի վերայ
10 A էթէ
11 A թե

12 A հարցանեմ հարցանեմ
13 A էթէ
14 A հառնուածոյս. տե՛ս նշ՛ք խառնուած:
15 A հոգովն
16 A հոգոյ
17 A ի հրշտակի
18 Հմմտ. «Երկու են իրողութիւնք. կամ պատահումն կամ գոյացութիւն». Վերլուծ. Պորփ., էջ 309:
19 A անձս. տողամիջում՝ ին
20 A մարդկային
21 A վարդապետութիւնս

ոչ անճառելի, այլ ճառելի եւ քո մտացդ¹ հասանելի: 7 Թէ անճանց հնար էր մի անձն լինել, բնութեանցն զի՞նչ անհնարութիւն էր մի բնութիւն լինել:

1 [ԻԱ.] Հարց. Ի միանալ բնութեանցն բարձա՞ն տարբերութիւնքն եթէ² ոչ:

2 -Պատասխ. ³Ոչ բարձան տարբերութիւնքն, քանզի տարբերութեանցն մնալն ոչ խափանուամն միաւորութեանցն, զի մարդ ի հասարակաց իրէ եւ յիւրոց գոյացուցչաց⁴ տարբերութեանցն ⁵սահմանելի կենդանի բանաւոր մահկանացու. եւ ոչ հաստատէ զբնութիւնը⁶, զի տարբերութիւն ոչ է այլ եւ այլ բնութեան նշանակ, զի տեսանեմք ⁷ի վերայ միոյ բնութեան, որ ոչ ըստ միաւորութեան է, բազում տարբերս. որպէս ի վերայ հրոյ, զի մարմին անորակ է, վերաբեր, սուր, կիզանող. կիզանելոյն եւ ոչ ⁸բնութիւնս աստ այլ եւ այլ ⁹մտաբերութիւնքս:

1 [ԻԲ.] Հարց. Այս մի բնութիւնս աստուածայի՞նքն թէ մարդկային, թէ աստուածային մարդկային:

2 -Պատ. Մի յերից զմինն խոստ[ով]անիս, զմի բնութիւն աստուածային եւ մարդկային, որպէս ոսկի ընդ հուր գոյգ¹⁰:

1 [ԻԳ.] Հարց. Զի՞նչ էառ ի Մարիամայ, բնութիւնքն թէ անձն. թէ բնութիւն էառ¹¹, ապա Քրիստոսի երկու¹² բնու-

թիւնքն եւ, ապա եթէ¹³ անձն՝ ապա երկու¹⁴ անձիւնքն:

2 -Պատ. Աստուած ի կուսէն մարմին էառ¹⁵ անձնաւոր, եւ զոր աւրինակ ոչ յաւելաւ ի Սուրբ Երրորդութիւնն անձն մարդկային, եւ ոչ բնութիւն յաւելաւ ի Սուրբ Երրորդութիւնն: 3 Եւ ¹⁶եթէ երկու բնութիւնք են Քրիստոսի՝ ապա երկու¹⁷ անձինք են, զի ճշմարտութեամբ անձն մարդկային ունէր, որով զգայր¹⁸ չարչարանացն:

1 [ԻԴ.] Հարց. Ո՞ր բնութեամբ անէր, աստուածայի՞նքն թէ մարդկային:

2 -Պատ. Եւ ես քեզ հարցանեմ. որո՞վ անճամբ զգայր չարչարանաց որ հոգայրն եւ տխրէրն¹⁹, զի որք զբանական հոգին ոչ ունին՝ ոչ գիտեն տխրել եւ հոգալ, այլ իբրեւ զոչխար ի սպանումն անճալ լինին. եւ եթէ²⁰ աստուածային անճամբ՝ զայդ Ապողինարոսք ժպրհեցան ասել. եւ եթէ²¹ մարդկային անճամբն՝ ապա ²²Քրիստոսին երկու անձինք են, եւ գտանիս Նստոր: 3 Արդ Աստուած բանն անճաց իւրով մարմնովն եւ տրտմեցաւ իւրով հոգևովն²³ եւ անտրտում է իւրով աստուածութեամբն. եւ ²⁴ոչ են երեք, զոր աւրինակ ծնաւ ի Հաւրէ եւ ծնաւ ի մաւրէ եւ ոչ է երկածին, այլ միածին:

1 A մտացո
2 A էթէ
3 A լուսանցագրութիւնն նոյն գրչով՝ չեմ հալա կամ չեմ հաւա [=չեմ հաւան?].
4 A գոյացցուչաց
5 Հմմտ. Պորփիր' «Սահմանեմք զմարդ եւ ասեմք. կենդանի բանաւոր ե մահկանացու» (էջ 291, 322 եւլն):
6 A զբնութիւնն
7 A ի վերա
8 A բնութիւն սաստ
9 A մտաբերութիւնք. վերելից՝ ս
10 A գոգ
11 A եառ
12 A բ

13 A էթէ
14 A բ
15 A առ. վերելից՝ է [=էառ]
16 A էթէ բ
17 A բ
18 A սգայր
19 A տխրերն
20 A էթէ
21 A էթէ
22 A քին բ
23 A հոգովն
24 A ոչ են գ

ԵՐԱՆԵԼԻՈՅՆ ՊԵՏՐՈՍԻ ՍԻՒՆԵԱՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՅԱՂԱԳՍ ՀԱՄԱՏՈՅ

1 Երկնահարաշ եւ աստուածարեալ ժողովն որ ի Նիկիայ եղեալ վասն Արիոսի ի Կոստանդինոսէ թագաւորէ: 2 Զի աղեքսանդրացին այն արարած զՈրդին Աստուծոյ դաւանէր, վասն որոյ ժողով եղեալ ազդմամբ Սուրբ Հոգւոյն, տարամերժեալ պարաբարձումն լինէր նմա: 3 Եւ լուսաւորէին զեկեղեցի աստուածասահման կանոնաւ՝ որ յԵրուսաղէմ եպիսկոպոս Մակարիոս, ի Հռովմ Յուլիոս, յԱղեքսանդրի Աղեքսանդրոս, յԱնտիոք Եւստաթիոս, ի Կոստանդինուպալիս Աղեքսանդրոս, ի Հայս սուրբն Գրիգոր:

4 Իսկ Կոստանդինուպալսի ժողովն վասն Մակեդոնի Հոգեմարտին եղեւ, որ հայհոյէր զՀոգին Սուրբ եւ ոչ Հաւր եւ Որդւոյ յեւթեմէ¹ ասէր, այլ որպէս արբանեակ եւ սպասաւոր հրամանաց Հաւր, որպէս զմի ոք ի հրեշտակաց: 5 Յաղագս որոյ ժողովեալ ի Կոստանդինուպալիս պատրիարք թուով հարիւր եւ յիսուն պարաբարձումն առնեն նմա եւ Հոգեմարտ անուանեն: 6 Եւ էր յԵրուսաղէմ եպիսկոպոս Կիրեղ, ի Հռոմ Դասադիոս, յԱղեքսանդր Տիմոթէոս², յԱնտիոք Մեղիտոս, ի Կոստանդինուպալիս Նեքտառիոս, ի Հայս սուրբն Ներսէս:

7 Ապա յաւուրս փոքր թէովդոսի այլ ոմն երեւեալ թունաւոր աւճապատիր վիշապազլուի Նեստոր անուն, որ տարական[ոն]³ թղթով աղանդէր զաշխարհս: 8 Զի էր հայրապետ Կոստանդինուպալսի եւ զՍամոստացւոյն Պաւղոսի զհայհոյութիւնն հաստատէր՝ շարայարմարութիւն զերկուց բնութեանցն պատկանելով ի

տնաւրէնութիւն Բանին Աստուծոյ: 9 Վասն որոյ պատճառի ժողովեալ արքեպիսկոպոսք երկերիւր⁴ ի հռչակեալն յԵփեսոս անտարրական սրովն հատանէին տարամերժելով ի տարաբնակ կոյս կղզեաց: 10 Եւ էր յԵրուսաղէմ եպիսկոպոս Յոբնադ, ի Հռովմ Կղեստիանոս, յԱղեքսանդր Կիրեղ, յԱնտիոք Յովհաննէս, ի Կոստանդինուպալիս Նեստոր հայհոյիչ, ի Հայս մեծն Սահակ: 11 Ապա յետ ելիցն երանելւոյն Կիրիլի Աղեքսանդրացւոյ, որ հեղինակ սիւնհոգոսին էր յԵփեսոս, բորբոքէր նոյն աղանդ ի Փղաբիանոսէ եւ ի Թեոդորիտէ: 12 Եւ ոմն Եւտիքէս հայհոյիչ ընդդիմադրէր հակառակ Փղաբիանոսի. զի նոքա սոսկ մարդ ասացին զՔրիստոս, եւ Եւտիքէս համազոյ զոյ զմարմինն սուրբ ի Կուսէն ասէր: 13 Ապա եղեալ երկրորդ ժողով յԵփեսոս ի նոյն թագաւորէն թէովդոսէ, նզովեցին զՓղաբիանոս եւ զԵւտիքէս: 14 Իսկ Եւտիքէս զղջացեալ ըստ ժամանակին խոստովանէր զյանցանս իւր, դաւանէր զղիւբաղոնն՝ տայր ժողովրդեանն⁵ եւ լինէր առ ժամն ընդունելի: 15 Եւ Փղաբիանոս եւ համախոհք իւր լուծեալք լինէին ի հայրապետական պատուոյն ի Դիոսկորոսէ հեղինակէ⁶ ժողովոյն: 16 Եւ էր յԵրուսաղէմ եպիսկոպոս Յոբնադ, ի Հռովմ Ղեւոն, յԱղեքսանդր Դիոսկորոս, ի Կոստանդինուպալիս Փղաբիանոս, ի Հայս մեծն Սահակ:

17 Իսկ յետ փոխելոյն բարեպաշտ թագաւորին թէոդոսի՝ Մարկիանոս թագաւորէ: 18 Եւ վրէժխնդիր եղեւ լուծմանն Նեստորի, եւ ետ հրաման ինքնիշխան կամաւ.

1 G յէուրթ
2 G Տիմոթէոս
3 G տարական

4 G եւ հռչակեալն
5 G ժողովրդեանն
6 G հիղիմակէ

յաւետամբոխ սիւնհողոս հանդիսանան ի Քաղկեդոն վեց հարիւր երեսուն եւ վեց եպիսկոպոս: 19 Որ եւ բազումք ի նոցանէ էին յեփեսոս ի յառաջնում եւ յերկրորդում ժողովոյն որ ոչ կամաւ եկին ի Քաղկեդոն, զի զոր քակեցին դարձեալ շինիցեն: 20 Քանզի ահ սպառնալեաց ի թագաւորէն հասեալ պակեան ժողովն: 21 Զի

նախ առաջին գերանելին Դէոսկորոս աքարտէին Եւտիքէ անուամբն եւ լուծեալ զնա յաքսորս ի Կիզիկոն. ապա եւ գՏիմոթէոս¹ եւ զբազումս զայլս: 22 Եւ էր յերուսաղէմ եպիսկոպոս Յորնաղ, ի Հռովմ Ղեւովն, յԱղեքսանդր Դէոսկորոս², ի Հայս Սուրբն Սահակ:

1 G գՏիմոթեսոս

2 G Դեոսկորոս

ՊԵՏՐՈՍ ՍԻՆԵԱՅ ԵՊԻՍԿՈՊՈՍ¹ ԱՍԷ

1 Ծնանիւր էմանուէլն մարդացեալ՝ յիմանալի բովս զմարդկութիւնն յաստուածութեանն հրացուցեալ. քանզի Աստուած է եւ ամենայն ինչ հետեւի սմա. թէպէտ ամպ եւ մէգ² շուրջ զնովաւ, այլ ինքն լոյս է. թէպէտ եւ ի բաժակ մահու խոնարհի³, այլ ինքն անմահ է եւ անապական:

2 ՆՈՐԻՆ: Ի սուրբ եւ յանարատ կուսէն միացոյց⁴ իւր մարմին եւ արար երկնաւոր հաց, վասն իւր ի յերկնուստ իջիցն, եւ կոչեաց կերակուր եւ ըմպելի⁵ եւ կեցուցիչ ճաշակաւոց զնա:

3 Եւ դարձեալ Պետրոս ի ծննդեան Ճառիցն ասէ.

4 Որպէս ⁶ի սկզբանն Բանն արտաքս եկեալ ի ծոցոյ Հաւր անբաժանաբար ասէր՝ Եղիցի լոյս⁷, եւ մի ըստ միոջէ ⁷զվեցերեակն յանկէր աւուրց սքանչելագործութիւն, զոր ի ձեռն տարաւրէնութեան ա-

պականեալ կորոյս նախահայրն, վասն որոյ անտանելի բերելով Որդւոյն⁸ քան զմարդասիրութիւնն՝ անապականաբար⁹ մարմնացաւ ի սրբոյ կուսէն:

5 ՆՈՐԻՆ: ¹⁰Հին աւրէնքն եւ նոր բանն առժամայն աւրինակն մշտնջենաւոր¹¹ շնորհի անապական Տէր:

6 ¹²Պետրոսի Հայոց Քերթողի:

7 Քանզի Աստուած է, ¹³որպէս եւ կամի առնէ. թէպէտ եւ խոնարհի [ի] բաժակ մահու՝ անմահ էր, թէպէտ եւ չարչարի, այլ լուծիչ է չարչարանացն:

8 Նորին յետ սակաւուց:

9 Արդ այս ամենայն աստուածախառն գործ է եւ ոչ մարդոյ լոկոյ, զի ծնաւ ի կուսէ Աստուած թանճրացեալ բնութեամբ ¹⁴մարդոյ՝ խառնեալ ընդ Աստուծոյ անքակտելի խառնումն:

1 Ձեռագրում՝ եպիսկապոս

2 Ձեռագրում՝ մեգ

3 Ձեռագրում՝ խորարհի

4 Ձեռագրում՝ միացոց

5 Ձեռագրում՝ ըմպելի

6 Ձեռագրում՝ իսկսբանն

7 Ի՞նչ. Ը 4

7 Ձեռագրում՝ զվեցերեակն

8 Ձեռագրում՝ որդոյն

9 Ձեռագրում՝ անապարար

10 Սոյն հատուածը կայ եւ ՄՄ ձեռ. թիւ 1561, թերթ 40թ՝ «Արմատ Հաւատոյ Յովի. Մայրավանեցոյ»: Այս ձեռագրի տարբերութիւնները տրուում են ստորեւ:

11 Ձեռագրում՝ մշտնջենաւոր

12 Մովսէսի Հայոց ի քերթողի

13 եւ որպէս

14 մարդ խառնեալ ընդ աստուած

**ՊԵՏՐՈՍԻ ՍԻՆԵԱՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԱՌ ՍՈՒՐԲԸ ՅԻՉՏԻԲՈՒՉՏԻ ՅՈՐԺԱՄ
Ի ՅԱՆԴԻ ԷՐ Ի ԴՎԻՆ**

1 Անհետագալտ ելեալ ծովու նաւաստի, ի խորոց ի վեր բերեալ մարգարիտ, մշակութեան Հաւր Հասկ, Բանին Որդւոյ առ, էակից Սուրբ Հոգւոյն ծնունդ, ըստ պաւղոսեան ձայնին աւգնել ի յաշխարհի, երկնաւոր կոչմանն բաժանորդ, մանաւանդ թէ ըմբռնեալ իսկ ի վկայ չարչարանացն Քրիստոսի, տէր Յիզտիբուզիտ:

2 Պետրոս կրտսեր ամենայն եպիսկոպոսաց խոնարհեալ ի հեռուստ հպաւորաբար առ ոտս Տեառն զեկուցանէ ողջոյն:

3 Վատբաստութեան չափով չափեցաք զմեզ, թէպէտ եւ փառաւորեցաւ Քրիստոս ի մարմինս ձեր անարժանք ի մաւտոյ՝ բացուստ ի բաց մեծ միջոցաւ ան-

ջատեալք, ընդ աղաւտ զաղաւթից ձերոց նշմարեմք նշոյլս, առ ձեզ զաւրացեալ պարծանք եւ զմեզ յաղթահարէ ակնակորութիւն:

4 Արդ, որք առաջադէմսդ նկտիք, քաջ նահատակք եւ զրահազգեստք, վահանաւորք պատենազէն սաղաւարտեալք, ի նիզակախուռն գումարութեանդ, յորում յաղթութեան ձերում կանգնի նշան տէրունի, յիշեսջիք եւ զմեզ զմերքս, եւ զապա[յ]գէնս, եւ զընդ ամենայն ախտիւ անկեալ, փրկել ի գերութենէն թշնամւոյն, եւ ազատել ի ծառայութենէ ախտից ի վերայ յարուցելոց: 5 Որպէս կա[յ]ցես գրով գիտել տա[ն]ջիր:

ՆԵՐՍԷՍ ԲԱԳՐԵՒԱՆԴԱՑԻ

ՊԱՏԱՍԽԱՆԻ ԹՂԹՈՅՆ ԱՍՈՐԵԱՑ

ԹՈՒՂԹ ՄԵՂԱԴՐՈՒԹԵԱՆ ԱՌ ԵՊԻՍԿՈՊՈՍՈՒՆԱՆ

ՈՒԽՏ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԻՍ

ԿԱՆՈՆՔ ՆԵՐՍԷՍԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԵՒ ՆԵՐՇԱՊՅՈՑ

ՄԱՍԻԿՈՆԵԻՑ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ՆԵՐՍԷՍ ԲԱԳՐԵԼԱՆՂԱՑԻՆ ԵՒ ԻՐ ԵՐԿԵՐԸ

Ներսէս Բագրեւանդացին ծնուել է դարավերջին Բագրեւանդի Աշտարակ գիւղում, կաթողիկոսական աթոռը զբաղեցրել է 548-557 թթ.: Նրա գործունէութեան մէջ ներդաշնակուած են դիւանագէտի նրբատեսութիւնն ու Եկեղեցու ներքին կեանքով, դաւանական ինքնուրոյնութեամբ մտահոգ հովուապետի նախանձախնդրութիւնը: Այս յատկանիշները լաւագոյնս դրսեւորուած են այն քաղաքականութեամբ, որ վարում էր նա: Ներսէս Բ հայրապետն օգտագործում է այն դրական վերաբերմունքը, որ Պարսից արքունիքը, յանձին Խոսրով Անուշիրուան թագաւորի, տածում էր հակաբիւզանդական կողմնորոշում որդեգրած Հայոց եկեղեցու նկատմամբ: Ներսէս Բագրեւանդացու ջանքերով էր, որ պարսիկ նախարար Դենշապուհ Նիխորականի կողմից հայերի նկատմամբ իրականացուող կրօնափոխութեան կոշտ ընթացքը փոխարինուեց նորանշանակ Վշնասպ Վահրամի մեղմ քաղաքականութեամբ:

Եկեղեցաքաղաքական յարաբերութիւններում նմանապէս Ներսէս Բագրեւանդացին կարողացաւ ճիշտ օգտագործել Պարսից արքունիքի դրական դիրքորոշումը Հայոց եկեղեցու հանդէպ: Ուժեղացնելով նեստորականութեան դէմ պայքարը՝ Ներսէս Բագրեւանդացի հայրապետը դաւանական հովանու տակ է վերցնում Հայոց եկեղեցուն դիմած ասորիներին եւ նրանց համար եպիսկոպոս ձեռնադրում Աբգիշոյին: Պատասխան Թղթում Ներսէս հայրապետը, Հայոց եկեղեցու ընդունած սկզբունքներին համերաշխ, ուղղափառ ու վաւերական է նկատում ասորիների հակասեւերեան եւ հականեստորական դաւանանքը՝ նրանց յորդորելով «հաստատուն ունել զնոյն ամենայն քաջութեամբ ոչ երկնչել ի սպառնալեաց նոցա» (նեստորականներին): Թերեւս առաջին անգամ լինելով՝ Թղթում յանձնարարում է երից սրբասացութիւնը («խաչեցարիւ»): Ի մտի ունենալով այս Թղթի դաւանական կարեւորութիւնը՝ նրանից մի հատուած ներառնուած է Կնիք հաւատոյ ժողովածոյի մէջ:

Նեստորականներից զգուշանալու կոչ-ահագանգ է հնչեցւում նաեւ Տեառն Ներսէսի հայոց կաթողիկոսի թուղթ մեղադրութեան առ եպիսկոպոսունս գրուածքում: Այստեղ արձանագրուած է, որ «վաճառաշահութեան» պատրուակով Հայաստան ներթափանցած նեստորականները, աշխուժանալով նոյնիսկ իրենց «առաջնորդ չեպիսկոպոս կարգեալ», ձգտում են հայերին շեղել իրենց ուղղափառ դաւանութիւնից: Ուստի եկեղեցաքաղաքական այս կարգավիճակի թելադրանքով 554 թ. Ներսէս Բագրեւանդացին գումարում է Դուրնի երկրորդ ժողովը, որին մասնակցում են նաեւ ասորիները Աբգիշո եպիսկոպոսի գլխաւորութեամբ: Այստեղ ընդունուած Միաբանութեան ուխտի մէջ յիշատակուած են առաջին երեք տիեզերաժողովները, նգովքի են ենթարկուած նեստորականութիւնը, մծղնէութիւնը, եւ կարգադրուած է «ամենեւին մի վիճել ընդ նոսա հակառակաբանութեամբ, այդ հեռանալ ի նոցանէն՝ արդարեւ որպէս ի թշնամեաց Քրիստոսի Աստուծոյ»: Ժողովում սահմանուած են 37 բարենորոգչական կանոններ, որոնք վերաբերում են գլխաւորաբար քահանայական պաշտօնավարութեանը, եկեղեցի-հասարակութիւն յարաբերու-

Թեան կարգաւորմանը: Այդ կանոնները մաս են կազմում Հայոց կանոնագրքի եւ վերահրատարակում են համաձայն Վ. Յակոբեանի հրատարակութեան¹:

Ներսէս Բագրեւանդացուց պահպանուել է եւս մի թուղթ՝ Որոշումն Ենստորակացն ի սրբոյ եկեղեցւոյ խորագրով: Այստեղ յիշեցում է Դուինի եկեղեցածողովի հակա-նեստորական որոշումների եւ դրանք կատարելու խստագոյն անհրաժեշտութեան մասին:

Յակոբ Քեոսեան

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

1. **Մ. Օրմանեան**, *Ազգապատում*, §§ 359-362, 366-370, 372-373:
2. *Գիրք Թղթոց*, էջ 172-205:
3. *Կնիք հաւատոյ ընդհանուր սուրբ եկեղեցւոյ յուղղափառ եւ ս. հոգեկիր հրացն մերոց դաւանութեանց, յաւուրս Կոմիտաս կաթողիկոսի համահաւաճեալ, հրատարակութիւն Կարապետ եպիսկոպոսի, Ս. Էջմիածին, 1914, 135-136:*
4. *Կանոնագիրք հայոց, Ա.*, աշխատասիրութեամբ՝ Վ. Յակոբեանի, Երեւան, 1964, էջ 475-490, 638-640:

ՏԱՌԱՆԻՇԵՐ ԲԱՂԴԱՏՈՒԱԾ ԶԵՌԱԳՐԵՐԻ ԵՒ ՀԱՄԱՌՕՏԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

A - *Գիրք Թղթոց*, էջ 176-180

B - *Կնիք հաւատոյ*, էջ 135-136

¹ Տե՛ս *Կանոնագիրք հայոց, Ա.*, աշխատասիրութեամբ՝ Վ. Յակոբեանի, Երեւան, 1964, էջ 475-490: Կանոնի բաղդատուած ձեռագրերի տառանկիշերը տե՛ս ՄՉ, Ա. հտ., էջ 4-5:

ՊԱՏԱՍԽԱՆԻ ԹՂԹՈՅՆ ԱՍՈՐԵԱՅ, Ի ՆԵՐՍԵՍԷ ԶԱՅՈՑ ԿԱԹՈՒՂՈՒԿՈՍԷ, ԵՒ Ի ՄԵՐՇԱՊՅՈՑ ՄԱՍԻԿՈՆԵԻՑ ԵՊԻՍԿՈՊՈՍԷ

1 ¹ Ի բազում ժամանակաց լուեալ զեղբայրութեանդ ձերոյ ուղղափառութիւն համբաւով, իսկ այժմ ընկալաք գրով առ ի ձէնջ աներկբայանալ ի սրբոյ հաւատոյ հաստատութիւն, որպէս ունին ճշդաբար ընդ ամենայն տիեզերս եկեղեցիք Քրիստոսի Աստուծոյ մերոյ, ըստ քարոզութեան սրբոց առաքելոց, եւ վկայութեան սրբոց մարգարէից, որ առաք ի ձեռաց եղբարց եկելոցդ առ մեզ, Աբդիսոյ երբեմն քահանայի, իսկ այժմ շնորհիւն Քրիստոսի եպիսկոպոսի, եւ այլոց ընդ նմա ուղեւորելոց գործակցաց. Ահարոն վանից երէց Մարհալայի, եւ Նոյ վանից երէց Կենայի, եւ Բրիսիտոյ քահանայ միայնակեաց, եւ Սէթ պաշտաւնեա Դամոքայ, եւ Դաւիթ վանից երէց Փարթնայի, եւ Եղիայ եւ Յովսէփ ի նմին վանից Մարեբայի, եւ Դաւիթ սարկաւազ ի վանից Բդնայի, եւ Սարգիս քահանայ ի գեղջէ Մարտի, եւ Դաւիթ վանից երէց Խափայի, եւ այլ հաւատարիմ վանաց երիցունք, եւ քահանայք, եւ սարկաւարքք, գիր որ ունէր այսպէս զկնի բանիցն ողջունականաց, թէ հաւատ մեր այս է, որ միաբանեալ է ընդ ձեր լուսաւոր հաւատոյ ուղղափառութեանդ, զոր քարոզելին մարգարէք եւ առաքեալք, եւ ուսուցին հարք ճշմարիտք Յ եւ ԺԸ եպիսկոպոսքն որ ժողովեցան ի Նիկիա քաղաք, եւ ՃՄ.քն ի Կոստանտնուպալիս, եւ Մ.քն որ ժողովեցան յԵփեսոս: 2 Ձայս հաւատ ընդունիմք եւ զայս երիս ժողովս, եւ հաւատամք եթէ սուրբ Մարիամ Կոյս աստուածածին է, զի ի նմանէ մարմնացաւ Բանն Աստուած ստուգապէս ի մարմնոյ եւ յուկերաց, եւ մարդացաւ կատարելապէս,

մինչ էառ ի Կուսէն մարմին ճշմարիտ եւ անձն եւ միտս, չարչարեցաւ, խաչեցաւ, մեռաւ վասն մեր որպէս եւ կամեցաւ, ստուգապէս եւ ոչ կարծեալք, եւ ապականութիւն բնաւ ոչ գտաւ ի նմա, զի մարմինն որ ի մեզէ առաւ անապականութիւն էր, եւ փառաւոր ի նմանէ միութենէ. եւ նովին մարմնով յարեաւ, եւ նստաւ ընդ աջմէ Աստուծոյ Հաւր: 3 Եւ այսպէս փառաբանեմք. «Սուրբ Աստուած, սուրբ եւ հզաւոր, սուրբ եւ անմահ, որ խաչեցար վասն մեր, ողորմեա մեզ»:

4 Եւ նզովեմք զՆեստոր պեղծ, եւ զԹէոփորոս, եւ զԴեոփորոս, եւ զգիրս իւրեանց եւ զհաղորդս նոցին, եւ զԲարծուսայ Ընծիհնայ, եւ զպեղծ կանոնս նոցա, եւ զԹէոփորիտոս, եւ զժողովն Քաղկեդոնի, եւ զտումարն Լեւոնի, եւ զԱպաղղիւսարիս, եւ զԵւտիքոս, եւ զՍեւերիոս, եւ զգիրս իւր ապականութեան, եւ զՊաւղոս Սամուտացի, եւ զՄանի, եւ զՄարկիոն, եւ զԱրիոս, եւ զամենայն խորհրդակիցս նոցա: 5 Ձայդ ամենայն հաւատ ստուգիւ լուեալ զհաստատունս, եւ տեսեալ զփախուստ ձեր ի դաւաճանող որոմանն սերմանեաց՝ թշնամեաց խաչին Քրիստոսի, որք ուրանան ամենեկին զմարմնանալն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի Աստուծոյ ի սրբոյ Կուսէն Մարիամայ, ապախտ առնելով անձանց իւրեանց զամենայն կիրս ըստ մարմնոյ, բայց ի մեղաց, զոր մեք ըստ գրեցելոց եղբայրութեան ձերոյ, խոստովանիմք եւ հաւատամք իսկապէս զմարդանալն կատարելապէս ամենայնիւ, զկաթնաբոյժ լինելն, զսնանիլն, զչարչարանսն² ի վերայ խաչին¹, զմահն, զթա-

1 B չիբի բազում ... գուանիլն

2 B զչարչարանս

զումն գերեքաւրեայ, զյարութիւնն՝ որպէս կամեցաւ աստուածաբար, նովին ²մարմնով փառաւք զհամբարձումն, զնստելն ընդ աջմէ Հաւր. յաղագս ամենայն տիեզերաց³, զգալուստն⁴ նովին մարմնով եւ փառաւք, դատել զկենդանիս եւ զմեռեալս, յաւիտենական թագաւորութեամբ: 6 Եւ նովին հաւատով եւ յուսով ⁵երկրպագեմք եւ փառաւորեմք զԱստուածութիւնն հանդերձ մարմնաւորութեամբն, եւ զմարմնաւորութիւնն հանդերձ Աստուածութեամբն. եւ երիցս սրբասացութեամբ զխաչիլն⁶ խոստովանիմք:

7 Եւ նզովեմք ⁷եւ մեք հանապազ, զուրացողսն, եւ⁸ զՆեստորիոս չարագտաւդն⁹ հնարաւորութեան¹⁰ հերձուածողութեան¹¹, ¹²եւ զնմանս նորին, եւ զԹէոդորոս¹³, եւ ¹⁴զԴիոդորոս. եւ զԵւտիքոս, եւ զԱրիոս, եւ զամենայն զիրս ապականութեան¹⁵, եւ զԱպողինարիս, եւ զտումարն¹⁶ Լեւոնի, ¹⁷զՊաւղոս Սամուստացի, եւ զՄանի, եւ զՄարկիովն, եւ զԲարձումա, եւ ¹⁸զՍեւերիոս, եւ զԻբա, եւ զԱկակ, ¹⁹եւ զպիղծ ժողովն նոցա, եւ զստանուն կանոնս նոցա, եւ զԹէոդորիտոս, եւ զանաւրէն ժողովն Քաղկեդոնի, եւ զԹշնամա-

նաւդ եւ զանյիշելի բռնադատեալ կանոնսն²⁰ ի նոցանէ, զորս²¹ նզովեաց ²²եւ ժողով սրբոցն ՅԺԸ.իցն ի Նիկիա, եւ ճ եւ Մ.իցն ի Կոստանդինուպաւլիս, եւ Մ.իցն յԵփեսոս, զոր հնազանդեալ ունին եկեղեցիք Քրիստոսի կարգաւորեալ: 8 Այդ եւ զամենայն իսկ²³ պիղծ եւ արհամարհելի հերձուածս՝ հեռացեալս ի ճշմարտութենէն, ուրացաք եւ ուրանամք եւ միշտ ուրացուք. ²⁴մի՛ լինիլ հաղորդ անպաղովեան գործոց նոցա, եւ մի՛ լսել հրապուրող եւ չարաթոյն բանից նոցա մահաբերաց, որ հանապազ վառեն անձանց զհուր գեհենին, անուցանեն զորդն անվախձան, թանձրացուցանեն զխաւարն շաւշափելի: 9 Զնոսա որոշեաց առաքեալն մանկունս անիծից, եւ զնոցիմ կորստական վարդապետութիւնն անուանեաց ամպս անջրդի՛ս, վարեալս ի մրրկէ ի կորուստ, ծառս գաւսս պտղակորոյսս, նիւթս կիզման յաւիտենականի՛: 10 Եւ հրամայեցաւ մեզ ճշմարիտ հաւատացելոցս ի սրբոյ աւետարանչէն Յովհաննէ, ամենեւին չընդունել ի տունս, եւ ոչ ողջունել բանիւ, զի մի՛ ոք ի մէնջ լիցի հաղորդ չար գործոց նոցա՛:

11 Ըշմարիտ գտաք զձեզ հաւատով, եւ հաւատարիմ ծառայս Աստուծոյ, գրեցաք ձեզ հաստատուն ունել զնոյն ամենայն քաջութեամբ, ոչ երկնչել ի սպառնալեաց նոցա, համբերութեամբ տանել, եթէ դիպեացի, զկապանս, զբանդս, որով լցան խնդութեամբ սուրբ առաքեալքն, ցուցեալ մեզ արինակ բարի քաջալերութեան, կամաւք եւ յաւժարութեամբ ընդու-

1 B սրբոյ Խաչիմ
 2 B մարմնովն գիտաւաբ
 3 B տիեզերաց փրկութիւնն
 4 B գգալոցն
 5 B չիք երկրպագեմք եւ
 6 B գերբորդութիւնն փիս զխաչիլն
 7 B չիք եւ մեք
 8 B չիք եւ
 9 B չարագտող
 10 B հնարութեան
 11 B հերձուածողացն
 12 B չիք եւ զնմանս նորին
 13 B եւ զՍամուստացին եւ զԹովդորոս
 14 B գիւտողր եւ գեւտիքն
 15 B ապականութեանց
 16 B գտումարն
 17 B չիք զՊաւղոս Սամուստացի
 18 B զՍեւերոս եւ զԻբա
 19 B չիք եւ զպիղծ ժողովն նոցա

20 B կանոնս
 21 B գոր եւ փիս գորս
 22 B ժողով սրբոցն, որ ի Նիկիա ՅԺԸ (318) եւ ճԾ (150), որ ի Կոստանդնուպոլիս եւ Մ (200) որ յԵփեսոս փիս եւ ժողով... յԵփեսոս
 23 B չիք իսկ
 24 B չիք մի՛ լինիլ ... ամէն
 * Հմբ. ՅՊ. 12:
 † Տէ՛ս Բ ՅՊ. 10:

նել զյափշտակութիւն ընչից ապականելեաց ժամանակեան կենցաղոյս, արհամարհել զամենայն նեղութիւնս եկեալս ի վերայ վասն անուանն Քրիստոսի: 12 Եւ մեք գոհանալով յուսամք ի ձեր հաստատութիւն հոգւոյ, եւ հաղորդիմք կամաւք եւ խորհրդովք, կարեկցեալ ամենայն կարեաց ձերոց, եւ խնդրեմք ի տուողէն բարեաց, զինքնայորդոր յաւժարութիւն ձեր յաւելուածով պահել, աւր ըստ աւրէ աւգնականութեամբ եւ շնորհիւ փրկչին Քրիստոսի Աստուծոյ մերոյ: 13 Հնազանդեցաք եւ հաւանեցաք հրամանի ձերում, եւ վկայութեամբ ձերով ձեռնադրեցաք զայրդ ընտրեալ ի ձեզէ զԱբղիսոյ, ի մեծապատիւ աշտիճան քահանայապետութեան, ամենայն եպիսկոպոսաւք աշխարհիս, հանդերձ քահանայիւք եւ վանականաւք եւ ուխտիւս սրբոյ եկեղեցւոյ, կամաւք ազատաց աշխարհականաց, եւ համաւրէն ժողովրդականաց, եւ առաքեցաք առ ձեզ:

14 Աղաւթեմք եւ մեք ի մեր եկեղեցւոջ, լերուք մեզ աղաւթակիցք եւ դուք միանձնութեամբ հաւատոյ՝ հայցել յԱստուծոյ, զի աստուածատուր շնորհիւ դորա, եղիցի խաղաղութիւն աշխարհի, հաստատութիւն սրբոյ եկեղեցւոյ, զաւրութիւն ուղղափառութեան: 15 Եւ ձեր հնազանդութիւն եղիցի առ դա ստոյգ, որպէս առ հրեշտակապետ Աստուծոյ, ողջամիտ պահել զվկայութիւն ձեր ի վերայ դորա, զի բաւական եղիցի կարգաց սրբոյ եկեղեցւոյ, վարուց ուղղութեան, պաշտաման եւ աղաւթից պայծառութեան, եւ փութոյ եղբայրութեան, զի ամենայնաւք զարդարուն եղեալ՝ ձեր թելադրութեամբ եղիցի ձեզ պարծանք՝ եւ մեզ ուրախութիւն երկնաւոր. որով փառաւորեսցի հասարակաց Սուրբ Երրորդութիւնն Հաւր եւ Որդւոյ եւ Սուրբ Հոգւոյն, ամէն:

ՏԵԱՌՆ ՆԵՐՍԵՍԻ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ԹՈՒՂԹ ՄԵՂԱԴՐՈՒԹԵԱՆ ԱՌ ԵՊԻՍԿՈՊՈՍՈՒՆՍ

1 Սրբասիրաց եւ քրիստոսասիրաց աթոռակցաց մերոց, Գրիգորի Արծրունեաց եպիսկոպոսի, Սահակայ Ռշտունեաց եպիսկոպոսի, Սողովմոնի Մոկաց եպիսկոպոսի, Ստեփաննոսի Անձեւացեաց եպիսկոպոսի, Հոռոմանոսի Ակիոյ եպիսկոպոսի, Քրիստափորի Պալունեաց եպիսկոպոսի, Միքայէլի Զարեհաւանից եպիսկոպոսի, Աստուածատրոյ Բժնունեաց եպիսկոպոսի, Թաղէոսի Մեհնունեաց եպիսկոպոսի. ի ներսիսէ Հայոց կաթողիկոսէ, ի Մերչապհոյ Տարաւնոյ եւ Մամիկոնէից եպիսկոպոսէ, ի Գրիգորէ Մարդպետական եպիսկոպոսէ, ի Պարգեւայ Հարքայ եպիսկոպոսէ, ի Տիրկանէ Բագրեւանդայ եպիսկոպոսէ, ի Գրիգորոյ Բասենոյ եպիսկոպոսէ, ի Պետրոսէ Սիւնեաց եպիսկոպոսէ, ի Մաշդոցէ Խոռխոռունեաց եպիսկոպոսէ, ի Խոսրովայ Ամատունեաց եպիսկոպոսէ, Հոգեւոր սիրով ողջոյն:

2 Վասն անիծեալ խուժկաց նեստորականաց, որ եկեալ բնակեցան յաշխարհիս մերում պատճառաւ վաճառաշահութեան, եւ այժմ չարահնար պղծալից անիծաբեր արուեստիւ իւրեանց ցողիս մեր ազգեցին, մինչեւ իւրեանց պղծութեան հաւատոյ առաջնորդ չեպիսկոպոս ածեալ, եւ մեզ լուսաւոր եւ ուղղափառ հաստատուն հաւատոյս խոչընդակն կացուցանել. յառաջագոյն վասն նորին իրաց, մեք եւ աշխարհիս մերոյ տանուտեարք եւ ազատք, միաբանութեամբ ի ձեռն գրոյ հրաման արարաք վասն ձեր, փութապէս ի Դուին ի սուրբ եկեղեցիս ժողովելոյ, եւ աստ միաբանու-

թեամբ ըստ հաճոյիցն Աստուծոյ առնել խորհուրդ, եւ հնար լինել բառնալ զայսպիսի անհնարին աղէտս, եւ զհանապազորդ հեծութիւն հոգւոց մերոց: 3 Եւ ձեր ոչ ունելով զնախանձ վասն Աստուծոյ, հեղգացեալ սպուժեցէք, եւ ի ձեր առնելոյ՝ բազում գործ սրբոյ եկեղեցւոյ մնաց. քանզի գործ Աստուծոյ է, եւ հանդէս հոգեւորական, ձեր զմարմնոց հեշտութիւն կարեւոր համարելով. որոց յոյժ մեղադիր եմք:

4 Արդ, վասն նորին զայս գիր միաբանութեամբ առ ձեզ հրամայեցաք առնել, եւ զձեզ տեարս ստիպեմք փութով հասանել, ոչ վասն մարմնաւոր պիտոյից, այլ նախանձախնդիր լինելոյ գործոյ Աստուծոյ, եւ հոգւոց փրկութեան՝ ի սահմանեալ ժամադրութիւնս, ամենայն հաստատութեամբ առանց յապաղանաց ի սրբոյ Գրիգորի ժողովն, միաբանութեամբ ի սուրբ եկեղեցիս ժողովել: 5 Ապա թէ ոք, առանց պատճառի հիւանդութեան, այլ զբաւսանաւք կենցաղոյս, հեղգացեալ գտցի, եւ ի սահմանեալ ժամդ ոչ եկեսցէ, այնպիսին ի միաբանութենէ եպիսկոպոսութեան որոշեալ լիցի: 6 Իսկ որ կամաւոր յաւժարութեամբ ի ժողով միաբանութեան ուղղափառ հաւատոյս ի սուրբ եկեղեցիս փութասցի, նա հատուցումն բարի ի սուրբ Երրորդութենէն ընկալցի, եւ ի մէնջ եւ յաթոռակցաց մերոց աւրհնեսցի: 7 Եւ դուք տեարք, որպէս թուի, կամաւորութեամբ, ի ձեռն գրոյ պատասխանի արարէք:

8 Ողջ լերուք յուսովն Քրիստոսի Աստուծոյ մերոյ:

**ՈՒՆՏ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԻՍ Ի ՁԵՌՆ ՆԵՐՍԵՍԻ ՀԱՅՈՑ ԿԱ-
ԹՈՒՂԻԿՈՍԻ, ԵՒ ՄԵՐՇԱՊՅՈՑ ՄԱՍԻԿՈՆԵԻՑ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ, ԵՒ ՊԵՏՐՈՍԻ
ՍԻՆԵԱՑ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ, ԵՒ ԱՅՂՈՑ ԱԹՈՌԱԿՑԱՑ, ԵՒ ՏԱՆՈՒՏԵՐԱՆՑ, ԵՒ
ԱԶԱՏԱՑ, ԵՒ ՀԱՄԱԻՐԵՆ ԺՈՂՈՎՐԱԿԱԿԱՆԱՑ**

1 Վասն զի եհաս մեզ վտանգ հոգեւոր դիպուեալի, որ եղեւ հանապազորդեան հիւանդութիւն, եկաք ի խորհուրդ միաբանական, զի բարձցուք զհառաչագին հեծութիւն ցաւոյս այսորիկ հոգեւոց մերոց եւ զխիղճ ի խորհրդոց՝ փախչել ի մեղաց աւտարոտեաց, որում լինել երբեք չէր ակնկալութիւն: 2 Եւ վասն զի եղեւ, վասն այնորիկ հարկեցաք առնել զմիաբանութիւնսս զայս համաշխարհական, մեք ամենայն Հայք, ի քսան եւ չորրորդ ամի Խոսրովու արքայից արքայի, ի սուրբ ի քառասներորդսն, ի կիւրակէի իւղոգոմենին, վասն չար աղանդին խուժկաց նետորականաց, զորս նգովեաց Սուրբ Հոգին ի ձեռն սրբոց ուղղափառ եպիսկոպոսաց ՅԺԸ-իցն ժողովելոց ի Նիկիայ, եւ ՃԾ-իցն ի Կոստանդիանուպաւղիս, եւ Մ.ոցն յԵփեսոս, որոց անիծեալ զՆետոր խոգեցին ի բաց ընկեցին, արարեալ զնա հայաձական յաւտար աշխարհ ի կողմանս Մծբնացւոց, զորս երթեալ խմորեաց չարագիւտ արուեստիւ իւրով զոգիս նոցա, արարեալ զնոսս փշաբերս եւ խաւարաբնակս, յոր ըմբռնեցան եւ կողմանքն Խուժաստանի, յորոց ոմանք հասեալ յառաջագոյն յաշխարհ մեր, վաճառաշահութեամբ կեցին ընդ հարսն մեր եւ ընդ մեզ, միաբանութեամբ ի մեր եկեղեցւոջ խոստովանելով զինքեանս միահաւատ ընդ մեզ: 3 Եւ ի տասն եւ յեւթներորդ ամի Խոսրովու արքայից արքայի, ի մարգպանութեանն Նիհորականայ, արարին իմն շինած յանուն Մանաճհրի Ռաժկի, որ հաւատացեալ ի Քրիստոս եւ մկրտեալ անուանեցաւ Գրիգոր, եւ սպանաւ վասն

նորին հաւատոյ, եւ ապա անուանեցին զնա տեղի ժողովոյ պղծութեան իւրեանց:

4 Ածին եւ վարդապետս առաջնորդ կորստեան ինքեանց, որք եկեալ ձեռնարկեցին՝ զապականութիւն իւրեանց բերելով ի սուրբ եւ ի ճշմարիտ հաւատ մեր, եւ պատրեցին ի ժողովրդականաց տգիտաց զարս եւ զկանայս, հաղորդել հաւատոյ յաղտեղութեան աղաւթից նոցա, տանել հաց ընծայի ի տեղի անաւրէնութեան նոցա, ընդունել ի ձեռաց նոցա հաղորդութիւն՝ իբրեւ յուխտէ նուիրաց պաւղիկեանց, յանդգնեցան տալ զիւրեանց ջնջազիր կնիք անկնիք մանկանց ժողովրդեան մերոյ՝ առ ի մեռանել նոցա առանց մկրտութեան զմահն յաւիտեանական, եւ զգողս եւ զպոռնիկս եւ զայլ վնասակարս, զոր մեք արտաքոյ եկեղեցւոյ եւ աւրհնութեան առնէաք, եւ չհամարէաք արժանի սրբոյ հաղորդութեան, երթային առ նոսս եւ նոքա ընդունէին յիւրեանց ի պիղծ եւ յանաւրէն աւրհնութիւնն եւ հաղորդութիւն ժողովարանին՝ հակառակ մեզ:

5 Զայս աղէտ հոգեւոր տեսանելով ի նոցանէն, հասաք, թէպէտ եւ անագան, ի վերայ՝ պատճառող ստութեան նոցա, զի կեղծաւորութեամբ ունելով զանուն քրիստոնէութեան եւ ուրանան զճշմարտութիւնն:

6 Իսկ մեր ոչ կարացեալ համբերել այսպիսի չար գործոց նոցա, համաւրէն ամենեքեան արարաք զգիրս զայս ուխտի եւ հաստատութեան ամենեցուն կամաց յաւտարութեամբ, առաջի տեսառն մերոյ Յիսուսի Քրիստոսի Աստուծոյ մերոյ: 7 Քանդեալ աւերեցաք զտեղի ապաւինի անաւ-

ընդունվեան նոցա եւ բարձաք ի մէնջ գիշերայինն զայն խաւար:

8 Եւ Ներսէս Հայոց կաթողիկոս, եւ Մերչապուհ Տարաւնոյ եւ Մամիկոնէից եպիսկոպոս, Գրիգոր սեպհական գնդին եպիսկոպոս, Պարգեւ Հարքայ եպիսկոպոս, Տիրակ Բագրեւանդայ եպիսկոպոս, Գրիգոր Բասենոյ եպիսկոպոս, Ներսէս Մարդաղւոյ եպիսկոպոս, Վաղոտ Արշամունեաց եպիսկոպոս, Պետրոս Սիւնեաց եպիսկոպոս, Գրիգոր Արծրունեաց եպիսկոպոս, Մարկոս Բագրեւանդայ եպիսկոպոս, Մաշդոց Խոռխոռունեաց եպիսկոպոս, Յոհան Ապահունեաց եպիսկոպոս, Աբղիսոյ Ասորեաց ուղղափառաց եպիսկոպոս, Յովնան Վանանդայ եպիսկոպոս, Հաւուկ Արշարունեաց եպիսկոպոս, Քրիստափոր Պալունեաց եպիսկոպոս, Յոյս Գողթան եպիսկոպոս, Թաղէոս Մեհենունեաց եպիսկոպոս, եւ ամենայն եպիսկոպոսունք Հայոց աշխարհիս, եւ իշխանք, Համազասպ ի Գուգվառամեան ի տանէ Մամիկոնէից, Գարջոյր Հայոց մաղխազ, Սամէլ յԱրտաւազդան սպարապետ, Գրիգոր ի Հմայական, Սահակ ի Վարդանան, Աստուածատուր Վանանդայ տէր, Դատոյ ի Գարջուղեան, Գրիգոր եւ Վարդան ի Վասակայ, Զաւրակ ի Գագաւունան, Վարազ Յոհան ի Յոհանան, Վարդան ի Մուշեղեան, Համազասպ, Սահակ ի Հմայակեան, Գնեալ Գնունի, Վարազ Գաբեղեան, Գրիգոր Աբեղեան, Մերչապուհ ի Շինական, Համազասպ Չիւնականեան, Աստուածատուր Հաւունի, Աշոտ ի Վարազտիրոցեան, Մուշեղ ի Հմայեկեան, Վրիւ յԱրտաշրան, Աստուածատուր Արշաւրեան, Սամուեղ ի Մամական, Վարդ ի Հմայական, Ներսէս ի Սամսոնեան, Վարդան Վահեւունի, Հմայեակ Վարաժնունի, Մանուէլ Սպանդունի, Վարդ եւ Արտաւազդ ի Մամական, Համազասպ ի Սահական, Սահակ ի Մանուեղեան, Վարդան ի Մու-

 32 *b* խնդրուածաց
 33 *hlo* գաւուր
 34 *hlo* շաբաթի *d* շաբաթոջ *e* շաբաթուց
 35 *h* միոյ *Lo* միջոյ փխ միոջ *d* չիբ միոջ
 36 *I* աստուծոյ *Sode* աստուծոյ *u* յաստուծոյ խնդրել
 37 *U* զմարմնոյս
 38 *J* առողջութիւնն
 39 *hlo* չիբ եւ հոգւոյ փրկութիւն
 40 *RYo* հոգոյ *X* զհոգոյ *aikmrs* հոգւոց *befpq* հոգոց *cd*
 զհոգոց *n* զհոգւոյ
 41 *JYW* փրկութիւնն *adefkmqs* փրկութիւն ամէն *b*
 փրկութիւն շնորհել յաստուծոյ

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԳԱԲԵՂԵՆԱՑԻ (ԳԱԲԵՂԵԱՆ)

ԹՈՒՂԹ, ՉՈՐ ՏԵՐ ՅՈՎՀԱՆՆԵՍ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԵՒ ԱՅԼ
ԵՊԻՍԿՈՊՈՍԷ, ԱՌ ՍԻՆԵԱՑ ԵՊԻՍԿՈՊՈՍՆ ԵՒ ԱՌ ՏԵՐՆ ԱՐԱՐԻՆ

ԹՈՒՂԹ ՅՈՎՀԱՆՆԻՍԻ՝ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՌ ՏԵՐ ԱԲԱՍ՝
ԱՂՈՒԱՆԻՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ

ՅՈՎՀԱՆՆՈՒ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ Ի ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ ԲՐԻՍՏՈՍԻ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԳԱԲԵՂԵՆԱՅԻՆ (ԳԱԲԵՂԵԱՆ) ԵՒ ԻՐ ԵՐԿԵՐԸ

Յովհաննէս Բ Գաբեղենացի (Գաբեղեան) կաթողիկոսը ծնունել է Զ դ. սկզբին Գաբեղեանք գաւառի Սիւնձեղուն գիւղում, եղել Թաթուլի վանքի վանական: Իբրեւ Ապաճունեաց եպիսկոպոս եւ Հայոց եկեղեցու դաւանական սկզբունքների ջատագով՝ իր մասնակցութիւնն է բերել Դուինի 554 թ. ժողովին: Կաթողիկոսական աթոռը զբաղեցրել է 557-574 թթ.: Շարունակելով իր նախորդի՝ Ներսէս Բ Բագրեւանդեցի հայրապետի հականեստորական, հակաքղկեղոնական պայքարը՝ 568 թ. թղթեր է յղել Սիւնեաց Վրթանէս եպիսկոպոսին եւ Աղուանից Աբաս կաթողիկոսին:

ա) Թուղթ, գոր տէր Յովհաննէս Հայոց կաթողիկոս եւ այլ եպիսկոպոսuf առ Սիւնեաց եպիսկոպոսն եւ առ տէրն արարին:

Դուինի 554 թ. ժողովի պարագաների մասին խօսելուց յետոյ Թուղթն արձանագրում է այն տաղնապալի վիճակը, որը տիրում էր Սիւնեաց աշխարհում՝ «վասն զի ի հաւատարիմ մարդկանէ լուաք, եթէ պեղծ նեստորականք բազումք եւ ի ձեր աշխարհիդ բնակեալ են եւ դուք զդոսա ի սուրբ եկեղեցիս ընդունիք եւ ընդ նոսա հաղորդիք»: Յիշեցնելով հայ հաւատքի, դաւանական գիտակցութեան հաստատման մէջ ս. Գրիգոր Լուսաւորչի եւ առաջին երեք տիեզերաժողովների բերած անուրանալի նպաստի մասին՝ հեղինակը կոչ է անում հաւատարիմ մնալ դրանց, չհաղորդուել նեստորականներին եւ այլ հերձուածողներին, չգայթակղուել նրանց «հրապուրող եւ չարաթոյն» խօսքերով: Թղթի շարադրման փաստն ինքնին ցոյց է տալիս, որ Դուինի 554 թ. ժողովից յետոյ էլ Հայաստանում (մասնաւորապէս՝ Սիւնիքում) դեռ լիովին արմատախիլ արուած չէր Հայոց եկեղեցու միասնականութեանը սպառնացող նեստորականութիւնը:

Թուղթը շարադրելիս օգտագործուած է հակաճառելու այն փորձառութիւնը, որը հայ դաւանաբանական միտքը ձեռք էր բերել տասնամեակների ընթացքում: Այս մասին է վկայում ոչ միայն ընդհանուր աղերսը Բաբգէն Ոթմսեցու Թուղթ Հայոց ի Պարսս, առ ուղղափառս Ա թղթի եւ Յովհաննէս Գաբեղեանի ներկայ գրութեան միջեւ, այլեւ «իսկ ի ժամանակիս յայսմիկ նեստորի անիծելոյ, որ կուրացոյց չարահնար հերձուածովն իւրով զկողմանս Խուժաստանի... Եւ ոչ կարացեալ մեր տանել այսպիսի չարաչար եւ դառն հայհոյութեան, փութացաք» հատուածի բառացի համապատասխանութիւնը¹:

Բացի Գիրք Թղթոցից, Թուղթը պահպանուել է նաեւ ԺԳ դ. վերջի հեղինակ Ստեփաննոս Օրբէլեանի Պատմութիւն Սիւնեաց երկում գրեթէ բառացի արտագրութեամբ: Ստորեւ հրատարակուող քննական բնագիրը կազմել է Ալեքսան Յակոբեանը՝ Սիւնեաց պատմիչի երկի հրատարակութիւնների ընթերցումների համեմատութեամբ:

բ) Թուղթ Յովհաննիսի՝ Հայոց կաթողիկոսի առ տէր Աբաս՝ Աղուանից կաթողիկոս (Թուղթ, գոր տէր Յովհաննէս Հայոց կաթողիկոս եւ այլ եպիսկոպոսունմf առ Աղուանից եպիսկոպոսունս արարին):

Թուղթն ուղղուած է Աղուանքի Աբաս կաթողիկոսին եւ նրա աթոռակից եպիսկոպոսներին: Թղթիս գրութիւնը թելադրուած էր Աղուանից կողմերում աշխուժացած նես-

1 Ե. Տէր-Մինասեան, նեստորականութիւնը Հայաստանում. տե՛ս Ե. Տէր-Մինասեան, Պատմաբանասիրական հետազոտութիւններ, Երեւան, 1971, էջ 375-376, ծմք. 74:

տորականների եւ քաղկեդոնականների վտանգաւոր գործունէութիւնը կանխելու հրամայականով: Այստեղ եւս կոչ է արւում արտաքսել հերձուածողներին եւ «գմահաբեր վարդապետութիւն նոցա ամենեւին ոչ առնել արժանի լսելութեան»: Երկու եկեղեցիների դաւանանքի միասնութիւնը պահպանելու համար Գաբեղենացին յորդորում է երեք կամ աւելի եպիսկոպոսներ ուղարկել Հայաստան՝ ճշմարիտ վարդապետութեան ուսուցումով նորոգելու եւ զօրացնելու նրանց ուղղափառ դաւանանքը:

զ) Յովհաննէս Գաբեղենացու գրչին պատկանում է նաեւ Ի Յայտնութիւնն Քրիստոսի ճառը: Այն հայ եկեղեցական մատենագրութեան մէջ Մամբրէ Վերծանողի համաբնոյթ ճառից¹ յետոյ նոյն նիւթին նուիրուած վաղագոյն երկերից է: Ինչպէս Մամբրէի ճառում, այնպէս էլ այստեղ չափորոշուած են Տիրոջ ծննդեան 3-4 տեսակներ. եթէ Մամբրէի ճառում կարգորոշուած է Տիրոջ ծննդեան 3 տեսակ՝ Հօրից՝ նախայաւիտենական, Մարիամ Աստուածածնից՝ ժամանակի մէջ, Մկրտութեան պահին՝ Յովհաննէս Մկրտչի ձեռքով, ապա Յովհաննէս Գաբեղենացու ձառում աւելացւում է եւս մէկը՝ Թաղումը եւ Յարութիւնը: Ըստ Յովհաննէս Գաբեղենացու՝ բացառելով ծննդեան առաջին տեսակը՝ մահկանացու աղամորդին ապրում է մնացեալ երեք տեսակները: Այս միտքը աստուածաբանական արձագանքն է ս. Գրիգոր Նազիանզացու Ի Մկրտութիւնն ճառի «Երիս ծնունդս գիտէ մեզ բանս. որ ի մարմնոյն, եւ ի մկրտութենէ, եւ ի յարութենէ» բառերի²: Ելնելով դաւանական անհրաժեշտութիւնից՝ հեղինակն, ի տարբերութիւն Արտեմոնադիւր ընթերցուածոց, շեշտում եւ հիմնաւորում է Ծննդեան եւ Յայտնութեան մէկ տօն լինելը:

Յովհաննէս Բ Գաբեղենացի կաթողիկոսի կարգադրութեամբ յունարէնից հայերէն են թարգմանուել Եւտիքէս Կ. Պոլսեցու (553-565, 577-582 թթ.) Յաղագս զանազանութեան բնութեան եւ առանձնաւորութեան երկը, ինչպէս նաեւ՝ Գիրք Էակացը:

Յակոբ Քեոսեան

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

1. Գիրք Թղթոց, էջ 206-209, 210-214:
2. Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի Պատմութիւն տանն Սիսական, ի լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին, Մոսկուա, 1861:
3. Ստեփաննոս Օրբէլեան, Պատմութիւն նահանգին Սիսական, ի լոյս ընծայեաց հանդերձ ծանօթութեամբ Կարապետ վրդ. Շահնազարեանց, Փարիզ, 1859:
4. Մովսէս Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, քննական բնագիրը եւ ներածութիւնը Վարագ Առաքելեանի, Երեւան, 1983, էջ 122-126:
5. Հ. Ներսէս Ակիմեան, Պ. Տէր-Պօղոսեան, Գրիգոր եպիսկոպոս Արծրունի եւ Յովհաննէս կաթողիկոս Գաբեղեան, ՀԱ, 1975, էջ 129-164:
6. А. А. Акопян, *Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках*, Ереван, 1987.

1 Տե՛ս ՄՀ, հտ. Ա, էջ 1130-1136:

2 Տե՛ս ՄՄ՝ ձեռ. թիւ 946, թերթ 27ա:

ՏԱՌԱՆԻՇԵՐ ԲԱՂԴԱՏՈՒՄԾ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԵՒ ՀԱՄԱՌՕՏԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԳԹ - *Գիրք թղթոց*, էջ 206-209, 210-214

Օ - **Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի Պատմութիւն տանն Սիսական**, ի լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին, Մոսկուա, 1861, էջ 66-69

ՊԱ - **Մովսէս Դասխուրանցի, Պատմութիւն Աղուանից** (**ՊԱԱ** - հնագոյն *a* ձեռագիր, **ՊԱԵ** - *B* խմբի *bclr* ձեռագրեր)

**ԹՈՒՂԹ, ՉՈՐ ՏԵՐ ՅՈՎՅԱԼՆԵՍ ԶԱՅՈՑ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ԵՒ ԱՅԼ
ԵՊԻՍԿՈՊՈՍԸ, ԱՌ ՍԻՆԵԱՅ ԵՊԻՍԿՈՊՈՍՆ ԵՒ ԱՌ ՏԵՐՆ ԱՐԱՐԻՆ՝¹**

1 Քրիստոսիւ պայծառացելոյ սիրելի² եղբաւր եւ աթոռակցի մերոյ տեառն Վրթանիսի՝ Սիւնեաց եպիսկոպոսի, եւ մեծավայելչի եւ փառաւորելոյ Միհր Արտաշրի՝ Սիւնեաց տեառն, ի Յովհաննիսէ Հայոց կաթողիկոսէ³, յԱբրահամայ Տարաւնոյ⁴ եւ Մամիկոնենից⁵ եպիսկոպոսէ, ի Ներսայ⁶ Բասենոյ եւ Մարդաղոյ եպիսկոպոսէ, ի Մաշտոցէ Խորխոռունեաց⁷ եպիսկոպոսէ, ի Գտայ⁸ Վանանդայ եպիսկոպոսէ, յԱբղիսոյէ Ասորեաց ուղղափառաց⁹ եպիսկոպոսէ, ի Բաբայ Ամատունեաց եպիսկոպոսէ, աւրհնութեամբ եւ հոգեւոր սիրով ողջո՛յն:

2 Դուք ինքնին գիտէք զանհնարին վտանգսն¹⁰, որ այժմ յաշխարհս մեր եհաս. զի յառաջագոյն երանելի հարքն մեր եւ զկնի նոցա մեք ընկալաք զհաւատ ճշմարտութեան՝ զայն, զոր քարոզեցին մարգարէքն եւ առաքեալքն¹¹, եւ¹² ուսուցին հարքն ճշմարիտք, սուրբն Գրիգորիոս՝

սրբոյն Թադէոսի յաջորդն, եւ ՅԺԸ եպիսկոպոսքն, որ¹³ ժողովեցան ի Նիկիա քաղաք, եւ ՃՄ.քն, որ¹⁴ ժողովեցան ի Կոստանդնուպալիս, եւ Մ.քն, որ¹⁵ ժողովեցան յԵփեսոս, որ¹⁶ Սրբոյ Հոգւոյն ազգամամբ ուսուցին մեզ, զոր եւ ի սկզբանէ իսկ տէրունեան բարբառն վարդապետեաց աշակերտացն, ասելով. Գնացէ՛ք, աշակերտեցէ՛ք զամենայն հեթանոսս, մկրտեցէ՛ք զմոսս յանուն Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ՞, եւ¹⁷ բարձր եւ հռչակաւոր կնիք եղաւ ի վերայ ամենայնի: 3 Ձայս հաւատ¹⁸ ճշմարտութեան ստուգեալ ունէր միաբանութեամբ աշխարհս Հայոց, եւ¹⁹ ոչ ինչ ամենեւին յումեք արատութիւն յայտնի երեւէր, եւ բնակեալ էաք ի սուրբ կաթողիկէ²⁰ եկեղեցւոջ ընդ հովանեաւ սուրբ խաչին Քրիստոսի Աստուծոյ մերոյ ի խոր խաղաղութեան:

4 Իսկ ի ժամանակիս յայսմիկ Նեստորի անիծելոյ, որ կուրացոյց չարահնար²¹ հերձուածովն իւրով զկողմանս Խուժաստանի, երեւեցաւ խմոր չարութեան²² եւ յաշխարհիս մերում, որ էր ծածկեալ յանձինս անսուրբս, որք սկսան պղտորել զյստակ հաւատս ճշմարիտ Սուրբ Երրորդութեանն, պատրել զանձինս անհաստա-

1 Օ Հայոց կաթողիկոսն տէր Յովհաննէս եւ այլ եպիսկոպոսք արարին առ Սիւնեաց եպիսկոպոսն եւ իշխանն փխ տէր Յովհաննէս... արարին
2 Օ եւ սիրելոյ փխ սիրելի
3 ԳԹ կաթողիկոսէ
4 Օ Տարաւնացոյ փխ Տարաւնոյ (հմմտ. յաջորդ բնագրում)
5 ԳԹ Մամիկոնէից փխ Մամիկոնենից (հմմտ. յաջորդ բնագրում)
6 Օ Ներսիսէ փխ Ներսայ (հմմտ. յաջորդ բնագրում)
7 ԳԹ Խորխոռունեաց փխ Խորխոռունեաց (հմմտ. յաջորդ բնագրում)
8 Օ Գիւտայ փխ Գտայ (հմմտ. յաջորդ բնագրում)
9 Օ Ասորւոց փխ Ասորեաց ուղղափառաց
10 Օ վտանգն
11 Օ մարգարէք եւ առաքեալք փխ մարգարէքն եւ առաքեալքն
12 Օ չիք եւ

13 Օ որք
14 Օ որք
15 Օ որք
16 Օ եւ փխ որ
* Մարտ. ԻԸ 19
17 Օ որ փխ եւ
18 Օ հաւատս
19 Օ չիք եւ
20 Օ կաթողիկէ
21 Օ չար
22 Օ չարութեան նորա

տաց¹ մարմնասէր ցանկութեամբք, եւ տա-
րածեցաւ երկբայութիւնն, եւ հիւանդացան
բազումք զախտ անհնարին: 5 Եւ ոչ կա-
րացեալ մեր տանել այսպիսի չարաչար եւ
դառն հայհոյութեան՝ փութացաք մեք եւ
այլ աշխարհիս Հայոց եպիսկոպոսունք,
ընդ որս էր եւ երանելին Պետրոս եպիսկո-
պոսն ձեր, եւ քահանայք եւ ուխտ սրբոյ
եկեղեցւոյ եւ վանաց երիցունք, ազատք
եւ համարէն ժողովրդականք ուղղա-
փառք՝ ժողովեալք² ի սուրբ եկեղեցիս, եւ
միաբանութեամբ զպեղծ³ Նեստորիանոսս
եւ զՔաղկեդոնիտս, եւ զայլ հերձուածողս,
ի մեր սուրբ եկեղեցւոյս նզովիւք հալա-
ծական արարաք⁴, եւ սուրբ եւ փառաւոր-
ընկալ⁵ սեղանոյս եւ կենատուր սուրբ⁶ Ա-
ւետարանիս եւ փրկչական սուրբ խաչիս
առաջի՝ պայման արարաք⁷ ամենեւիմք⁸
հեռանալ ի հաղորդութենէ նոցա եւ չլսել
բանից նոցա մահաբերաց⁹:

6 Եւ¹⁰ վասն զի ի հաւատարիմ մարդ-
կանէ լուաք, եթէ պեղծ¹¹ Նեստորականք
բազումք եւ ի ձեր աշխարհիդ¹² բնակեալ
են¹³, եւ դուք զդոսս ի սուրբ եկեղեցիս
ընդունիք եւ ընդ դոսս հաղորդիք, յիշե-
լով զսրբոյն¹⁴ Գրիգորի զմեծ վաստակ եւ
զջան, որ ի մեր եւ ի ձեր աշխարհիդ վերայ
հասարակաց, եւ զսուրբ ծնունդն, զոր
սրբով աւագանաւն վերստին ծնաք, եւ

զլուսաւոր եւ զճշմարիտ հաւատ¹⁵, զոր
մեք եւ դուք ընկալաք եւ այժմ ունիմք,
եւ¹⁶ զհոգեւոր սէր¹⁷, զոր ընդ ձեզ ու-
նէաք¹⁸, առաւել քան զամենայն զայդ հոգ
յանձին կալաք հեռացուցանել եւ ի ձէնջ
զչարի որոմանն սերմանս: 7 Վասն նորին
յուխտէ մերմէ զհաւատարիմ այր՝ զՄա-
տթէոս¹⁹ քահանայ²⁰, առաքեցաք առ ձեզ
եւ աղաչեցաք²¹ Քրիստոսիւ Աստուծով մե-
րով, որպէս ցայժմ լեալ էք ազգ սուրբ ժո-
ղովորդ սեպհական Տեառն Աստուծոյ,
նոյնպէս եւ այժմ²² եւ մինչեւ յաւիտեան²³
դուք եւ զաւակք ձեր զաւրացարուք Տե-
րամբ եւ կարողութեամբ զաւրութեան նո-
րա, եւ առէք զսպառազինութիւնն Աստու-
ծոյ, եւ զսուրբ եւ զճշմարիտ հաւատ²⁴, զոր
ի սուրբն²⁵ Գրիգորէ եւ յայլ հոգեկիր երա-
նելի հարանցն²⁶ ընկալաք, հաստատուն եւ
անշարժ պահեցէք յանձինս ձեր: 8 Եւ
զպեղծ Նեստորիանոսսդ²⁷ եւ զայլ հեր-
ձուածողս, որ յաշխարհիդ ձերում են,
նոյնպէս ի սրբոյ եկեղեցւոյ²⁸ եւ ի ձեր հա-
ղորդութենէ նզովիւք ի բաց մերժեցէ՛ք, եւ
ամենայն ուղղափառաց պատուիրեցէ՛ք՝
մի՛ լինել հաղորդ անպտղութեան գործոց
նոցա եւ մի՛ լսել հրապուրող եւ չարաթոյն
բանից նոցա մահաբերաց²⁹:

1 Օ անհաստատս
2 Օ ժողովեալ
3 Օ զպիղծ
4 Օ հալածականս արարաք նզովիւք փիս նզովիւք
հալածական արարաք
5 Օ չի՞ք եւ փառաւորընկալ
6 Օ կենսատու փիս կենատուր սուրբ
7 Օ պայմանեցաք փիս պայման արարաք
8 Օ ամենեւիմ
9 Օ մահաբերից փիս մահաբերաց
10 Օ չի՞ք եւ
11 Օ չի՞ք պեղծ
12 Օ աշխարհիդ
13 Օ են բնակեալ փիս բնակեալ են
14 Օ մեր գարբոյն

15 Օ հաւատն
16 ԳԹ չի՞ք եւ
17 Օ սէրն
18 Օ ունիմք
19 ԳԹ Մաթէոս փիս զՄատթէոս (Օ) (հմմտ. աստ՝
յաջորդ թղթում)
20 Օ քահանայն
21 Օ աղաչեմք զձեզ փիս աղաչեցաք
22 ԳԹ այժմ էք
23 Օ ցլաւիտեան
24 Օ հաւատն
25 Օ սրբոյն
26 Օ հարցն փիս հարանցն
27 Օ զպիղծ Նեստորիանոսսդ փիս զպեղծ Նեստո-
րիանոսսդ
28 Օ յեկեղեցւոյ
29 Օ մահաբերից

9 Քանզի զնոսա որոշեաց սուրբ առաքելն մանկուեսս անիծից, եւ զնոցին կորստական վարդապետութիւնն անուանեաց ամպս անջրդիս՝ վարեալս ի մրրկէ ի կորուստ, ծառս գաւսս պտղակորոյսս՝, նիւթս կիզման հրոյն յաւիտենից, որք յիրաւի իսկ նզովին, զի նոքա են պղտորիչք եկեղեցւոյ Քրիստոսի Աստուծոյ¹, յայժմու ժամանակիս, յամենայն տեղիս, որք եւ անուանեցան իսկ ի սրբոյ առաքելոյն եղբարք սուտք, մշակք անաւրէնութեան եւ նեռինք՝ եկեալք² յաշխարհ³: 10 Եւ հրամայեցաւ մեզ՝ ճշմարիտ հաւատացելոցս ի սրբոյ աւետարանչէն ի⁴ Յովհաննէ՝ ոչ ընդունել զնոսա ի տունս եւ ոչ ողջունել բանիւք, այլ հեռանալ ամենեւին ի նոցանէ որպէս ի թշնամեաց խաչին Քրիստոսի:

11 Եւ մեք աղաւթեմք, զի նոյն ինքն Սուրբ Երրորդութիւնն խափանեացէ եւ նկուն արասցէ զթշնամիս իւր, զհակառակորդսն ճշմարիտ հաւատոյ, եւ զաւրացուցէ զպաշտաւնեայս եւ զերկրպագուս անուան իւրոյ սրբոյ: 12 Եւ եթէ յումեք ի հերձուածողսդ գտցի զղջումն, եւ ամենայն կամաւք իւրովք դառնայցէ ի սուրբ հաւատս մեր եւ ոչ խաբէութեամբ, նզովեալ գրով զպեղծն⁵ Նեստոր եւ զամենայն հերձուածողս եւ զթէոդորիտոս⁶ եւ զժողովն Քաղկեդոնի, եւ⁷ ապա ընդունել զայնպիսին⁸ ապաշխարութեամբ. վասն զի դուռն ողորմութեանն Աստուծոյ խոստովանողաց եւ ապաշխարողաց հանապազբաց է:

« Տէ՛ * Յ՛-դ * 12:

1 Օ չիք Աստուծոյ

2 Օ ելեալ փխ եկեալք

3 Օ յաշխարհս

4 Օ չիք ի

է Տէ՛ * Ի՛ Յ՛-վ՛ 10:

5 Օ զպիղծն

6 ԳԹ չիք եւ զԹէոդորիտոս

7 Օ չիք եւ

8 Օ զայնպիսին

ԹՈՒՂԹ ՅՈՎՅԱՆՆԻՍԻ՝ ՅԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՌ ՏԵՐ ԱԲԱՍ՝ ԱՂՈՒԱՆԻՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ¹

1 Լաւաց, ճշմարտից եւ աստուածասիրաց, սիրելի եղբարց² եւ աթոռակցաց³ մերոց⁴՝ տեառն⁵ Աբասու⁶ Պարտաւայ⁷ [արք]եպիսկոպոսի⁸, Մովսէսի⁹ Բախաղատու¹⁰ եպիսկոպոսի, Գրիգորի Կապաղակայ եպիսկոպոսի, Հոռմակայ¹¹ Ամարասայ եպիսկոպոսի, Տիմոթէի Բաղասականու եպիսկոպոսի, Ամբակուծայ Շաքիոյ¹² եպիսկոպոսի, Յոհաննայ¹³ Գարդմանայ եպիսկոպոսի, Ղեւոնդի¹⁴ Մեծկողմանց եպիսկոպոսի:

2 Ի Յովհաննիսէ Հայոց կաթողիկոսէ¹⁵, յԱբրահամայ¹⁶ Տարաւնոյ եւ Մամիկոնենից¹⁷ եպիսկոպոսէ, ի Գրիգորէ¹⁸ Մարզպետական եպիսկոպոսէ, ի Ներսայ Բասենոյ եւ Մարդաղոյ եպիսկոպոս¹⁹, ի

Ստեփաննոսէ²⁰ Տայոց եպիսկոպոսէ, ի Մաշտոցէ խորխոռունեաց²¹ եպիսկոպոսէ, ի Գտայ²² Վանանդայ եպիսկոպոսէ, յԱբղիսոյէ²³ Ասորեաց²⁴ ուղղափառաց²⁵ եպիսկոպոսէ, ի Քրիստափորէ Ռշտունեաց եպիսկոպոսէ, ի Բաբայ Ամատունեաց եպիսկոպոսէ²⁶, ի Սեկունդոսէ²⁷ Մոկաց եպիսկոպոսէ, եւ յայլ²⁸ եպիսկոպոսաց աշխարհիս²⁹ աւրհնութեամբ եւ հոգեւոր սիրով³⁰ ողջոյն:

3 Քանզի եհաս առ մեզ³¹ լուր դժնդակ³² Համբաւոյ³³, եթէ³⁴ են ոմանք գայլք յափշտակողք զգեստուք³⁵ ոչխարաց, որք³⁶ եկին յաշխարհդ ձեր ի վանաց պղծոյն Պետրոսի, որ անուամբ աղքատասէրք³⁷ կոչին³⁸ եւ գործով³⁹ քրիստոսա-

1 ԳԹ գոր տեր Յովհաննէս Հայոց կաթողիկոս եւ այլ եպիսկոպոսունմ առ Աղուանից եպիսկոպոսունս արարին *փիս* Յովհաննիսի... կաթողիկոս, ՊԱ կաթողիկոս սակս հաւատոյ (ՊԱԵ հաւատոց) հաստատութեան (ՊԱԵ հաստատման), (վերականգնում)

2 ՊԱ եղբար փիս եղբարց

3 ՊԱ աթոռակցի

4 ՊԱԱ մերոյ, ՊԱԵ մերում փիս մերոց

5 ԳԹ չիք տեառն

6 ՊԱ Աբասայ փիս Աբասու

7 ՊԱ Աղուանից փիս Պարտաւայ

8 ՊԱ կաթողիկոսի փիս [արք]եպիսկոպոսի, ԳԹ եպիսկոպոսի փիս [արք]եպիսկոպոսի (վերականգնում)

9 ՊԱԵ Մովսիսի

10 ԳԹ Բաղաղատու փիս Բախաղատու

11 ՊԱ Հոռմկայ

12 ՊԱԱ Շախոյ փիս Շաքիոյ (ԳԹ ՊԱԵ)

13 ՊԱԵ Յովհաննայ

14 ՊԱԵ Աեւոնդեայ

15 ԳԹ կաթողիկոսի

16 ՊԱԱ յԱբրահամէ

17 ՊԱ չիք եւ Մամիկոնենից

18 ՊԱԱ Գրիգորոյ

19 ՊԱ չիք ի Ներսայ ... Մարդաղոյ եպիսկոպոսէ

20 ԳԹ Ստեփաննուէ ՊԱԱ յՍտեփաննուէ փիս ի Ստեփաննուէ (ՊԱԵ)

21 ԳԹ Խորխոռունեաց

22 ԳԹ Գիւտայ փիս Գտայ (ՊԱ) (Գտայ ընթերցումն առկայ է նաեւ Յովհաննէս Գաբելեանացու՝ Սիւնեաց եպիսկոպոսին յղած նամակում տե՛ս աստ՝ նախորդ բնագիրը)

23 ՊԱԱ յԱբղիշուէ, ՊԱԵ յԱբղիշոյ փիս յԱբղիտոյէ

24 ՊԱԱ յԱսորեաց, ՊԱԵ Ասորաց փիս Ասորեաց

25 ՊԱ չիք ուղղափառաց

26 ՊԱ ի Բաբայ Ամատունեաց եպիսկոպոսէ, ի Քրիստափորէ Ռշտունեաց (ՊԱԱ յՌշտունեաց) եպիսկոպոսէ փիս ի Քրիստափորէ... Ամատունեաց եպիսկոպոսէ

27 ՊԱԱ Սիկունդոսէ

28 ՊԱ յայլ ամենայն

29 ՊԱ Հայաստանեայց փիս աշխարհիս

30 ՊԱ չիք եւ հոգեւոր սիրով

31 ՊԱԵ ի մեզ, ՊԱԱ մեզ փիս առ մեզ

32 ՊԱԱ դժնակ

33 ՊԱԱ համբաւու

34 ՊԱԵ քէ

35 ՊԱԱ սգեստում, ՊԱԵ սգեստիւք փիս զգեստում

36 ՊԱ որ

37 ՊԱ աղքատասէր

38 ՊԱ կոչի

39 ՊԱԵ գործով, ՊԱԱ գործաւ փիս գործով

տեսացք¹ եւ ուրացողք զՍուրբ Երրորդութիւնն. զչար որոմն անիծելոյն Նեստորի եւ զժողովոյն² Քաղկեդոնի³ անարգելաբար սերմանեն⁴ ի հոգիս⁵ անմեղաց, թիւրելով զնոսա յուղղափառ հաւատոյ⁶ մատնել ի⁷ յաւիտենական կորուստն: 4 Զորմէ լսելով առհասարակ⁸ հոգւոյ⁹ եւ մարմնոյ¹⁰ եղեն անբժշկելի ցաւք¹¹: 5 Վասն որոյ ամենայն հարկաւորութեամբ փութացաք կարեկից լինել ձեզ եւ գրել յիշեցուցանելով¹² զբանս¹³ սրբոյ¹⁴ առաքելոյն, Զգուշանալ անձանց եւ ամենայն¹⁵ հաւտիդ, յորում եդ զձեզ Սուրբ Հոգին¹⁶ տեսուչս եւ վարդապետս, հաստատուն պահել¹⁷ զհաւատս ուղղափառութեան¹⁸, զոր ընկալան հարքն մեր ի Սրբոց Գրոց, ի¹⁹ Հին եւ ի²⁰ Նոր Կտակարանաց, ի ձեռն սրբոյն Գրիգորի, եւ յերից²¹ երանելեաց²² ժողովոցն²³, ՅժԼիցն ի Նիկիա, ՃԾ-իցն ի Կոստանդնուպոլիս²⁴ եւ Մ-իցն յԵփեսոս, որոց ձայնակիցք

եւ ժառանգաւորք²⁵ ուղղափառ հաւատոյն նոցա²⁶ եղաք²⁷ մեք ամենայն եկեղեցիք²⁸:

6 Խոստովանիմք մեք²⁹ զմի Աստուած Հայր ամենակալ, զարարողն ամենայն երեւելեաց եւ աներեւելեաց³⁰, եւ ի մի³¹ Տէր Յիսուս Քրիստոս, յՈրդին³² Աստուծոյ, ծնեալ ի Հաւրէ, Աստուած յԱստուծոյ, լոյս ի լուսոյ³³, Աստուած ճշմարիտ յԱստուծոյ ճշմարտէ, որով ամենայնքն³⁴: 7 Եւ ի³⁵ Սուրբ Հոգին, որ ի Հաւրէ ելանէ³⁶, եւ³⁷ ընդ Հաւր եւ ընդ Որդւոյ երկրպագի³⁸ եւ փառաբանի³⁹, արարչակից եւ հաւասար Հաւր եւ Որդւոյ⁴⁰, Երրորդութիւն⁴¹ կատարեալ միով բնութեամբ, փառաւք եւ զարութեամբ եւ իշխանութեամբ⁴²՝ նախախնամելով զընդհանուր⁴³ եղեալքս⁴⁴:

8 Իսկ ի վաղճան⁴⁵ ժամանակիս⁴⁶ Աստուած գլով մշտնջենաւոր Բանն Աստուծոյ՝ եղեւ մարդ կատարեալ անյեղապէս, մարմնացեալ ի սուրբ Կուսէն անճառա-

1 ՊԱ Բրիստոսատեսաց
 2 ՊԱԱ զժողովն
 3 ՊԱԱ Քաղկեդոնի
 4 ՊԱԱ սերմանել
 5 ՊԱ յոգիս փիս ի հոգիս
 6 ՊԱ հաւատոյն
 7 ՊԱԱ չի՞ք ի
 8 ՊԱ քէ (ՊԱԵ եքէ) վնասակար փիս առհասարակ
 9 ԳԹ ոգւոյ փիս հոգւոյ
 10 ՊԱԱ անմարմնոյ փիս մարմնոյ
 11 ՊԱԱ ցաւուց, ՊԱԵ ցաւոց փիս ցաւ
 12 ՊԱ յիշեցուցանելով ձեզ
 13 ՊԱԵ գրան
 14 ՊԱԵ սուրբ
 15 ՊԱ չի՞ք ամենայն
 16 ՊԱ Հոգին Սուրբ փիս Սուրբ Հոգին
 * Հմմտ. Գործ. Ի 28:
 17 ՊԱ ունելով փիս պահել
 18 ՊԱԱ ուղղափառութեամբ
 19 ՊԱ չի՞ք ի
 20 ՊԱ չի՞ք ի
 21 ՊԱԵ երից, ՊԱԱ երիցս փիս յերից
 22 ՊԱԱ երանեալ
 23 ՊԱԱ ժողովոց
 24 ՊԱԵ Կոստանդնուպոլիս ՊԱԱ Կոստանդնուպոլիս

25 ՊԱ ժառանգորդք
 26 ՊԱ նոցա հաւատոյն
 27 ՊԱ եղաք (ՊԱԱ եղէք) ուղղափառ նոցա (ՊԱԵ նոցայն) հաւատոյն (ՊԱԵ հաւատոցն) փիս ուղղափառ... նոցա եղաք
 28 ՊԱ այսիքն ամենայն եկեղեցիք Բրիստոսի Աստուծոյ (ՊԱԵ չի՞ք Աստուծոյ) փիս մեք ամենայն եկեղեցիք
 29 ՊԱ չի՞ք մեք
 30 ՊԱ ամենայնի փիս ամենայն երեւելեաց եւ աներեւելեաց
 31 ՊԱԵ զմի փիս ի մի
 32 ՊԱԱ յՈրդի, ՊԱԵ Որդի փիս յՈրդին
 33 ՊԱ չի՞ք Աստուած յԱստուծոյ, լոյս ի լուսոյ
 34 ՊԱ ամենայն
 35 ՊԱԵ չի՞ք ի
 36 ՊԱ ելող ի Հաւրէ փիս որ ի Հաւրէ ելանէ
 37 ՊԱ չի՞ք եւ
 38 ՊԱ երկրպագեալ փիս երկրպագի
 39 ՊԱ փառաւորեալ փիս փառաբանի
 40 ՊԱ չի՞ք Հաւր եւ Որդւոյ
 41 ՊԱԱ Երրորդութեանն փիս Երրորդութիւն
 42 ՊԱ չի՞ք եւ իշխանութեամբ
 43 ՊԱԱ զընթանուր ՊԱԵ ընթանուր
 44 ՊԱԵ եղելոցս փիս եղեալս
 45 ԳԹ ՊԱԵ վախճան փիս վաղճան (ՊԱԱ)
 46 ՊԱ յաւիտենիս փիս ժամանակիս

բար¹, ոչ հեռացեալ ի բնութենէն եւ ոչ քայքայեալ ի մարմնաւորութիւն, այլ եկաց մնաց նոյն, որ էրն² անփոփոխելի եւ անայլայլելի³, Աստուած մարմնացեալ, ո՛չ մասամբ, այլ բոլորովմբ, ո՛չ պակասութեամբ, այլ⁴ լիութեամբ⁵, ո՛չ երկուութիւն, այլ⁶ միութիւն անբաժանելի⁷: 9 Ո՛չ Հայր էառ մարմին⁸, այլ⁹ Որդի. եւ¹⁰ ո՛չ Սուրբ Հոգին թանճրացեալ մարմնով¹¹, այլ¹² Միածինն ի Հաւրէ, բայց կամաւ¹³ Հաւր եւ¹⁴ զաւրութեամբ Սուրբ¹⁵ Հոգւոյն, այլ¹⁶ գոյութեամբ միայն Բանն Աստուծոյ¹⁷: 10 Այսպէս եւ Սուրբ Ծնունդն ճանաչի: 11 Նոյն ինքն անբաւանդակելին¹⁸ խանճարրապատեցաւ, զի մեք զգեցցուք զանապականութիւն¹⁹. եղաւ ի մսուր, զի զանասնականն ի բաց փոխեսցուք զբարս²⁰, ի հրեշտակաց²¹ փառաբանեցաւ²², զի մեք կոչեսցուք լինել փառաբանակիցք նոցա²³, ընծայեցաւ²⁴ ի մոգուցն²⁵, զի

պտղաբերեսցուք զհաւատս²⁶, կաթնաբուծեցաւ²⁷, զի զանմեղութիւն ընկալցուք, զարգացաւ ըստ մարմնոյ ամենակատարն, զի ժամանեսցուք ի չափ հասակի լրմանն կատարմանն²⁸ Քրիստոսի՞: 12 Եկն կամաւ ի չարչարանս, զի ի տանջանաց մեղացն զերծուցէ²⁹, խաչեցաւ, զի ի կենդանութեան պտղոյն վայելեսցուք, մեռաւ, զի մահուամբ³⁰ մեռուցէ³¹ զմահ, եղաւ ի գերեզմանի, զի խորտակեսցէ զնիգս դժոխոց³², յերրորդ աւուր յարեաւ, զի զմեզ ի նորոգութիւն կենդանութեան³³ փոխեսցէ³⁴, համբարձաւ յերկինս եւ³⁵ նստաւ ընդ աջմէ Հաւր³⁶, զի եւ մեք դասեալ լիցուք³⁷ ընդ աջմէ նորա³⁸, զայլոց է միւսանգամ դատել զկենդանիս եւ զմեռեալս, եւ չիք վաղճան³⁹ նորա թագաւորութեանն⁴⁰: 13 Այսպէս հաւատամք եւ երկրպագեմք⁴¹ եւ փառաբանելով ասեմք. Սուրբ Աստուած, սուրբ եւ հզաւր, սուրբ եւ անմահ, որ խաչեցար վասն մեր, ողորմեա՛ մեզ:

14 Իսկ զոչ այսպէս խոստովանողսն նզովեցին սուրբ հարքն, նմանապէս եւ մեք նզովեմք զհինս⁴² զամենեսեան եղեալ

1 ՊԱ աննառապէս ի սուրբ Կուսէն փիլ ի սուրբ Կուսէն աննառարար
 2 ՊԱ որ էն նոյն փիլ նոյն որ էրն
 3 ՊԱ չի՞ք եւ անայլայլելի
 4 ԳԹ այլ փիլ այլ (վերականգնում)
 5 ՊԱ չի՞ք ոչ պակասութեամբ, այլ լիութեամբ
 6 ԳԹ ՊԱԵ այլ փիլ այլ (ՊԱԿ)
 7 ՊԱԿ անբաժանելի
 8 ՊԱ մարմնացեցաւ փիլ էառ մարմին
 9 ԳԹ ՊԱԵ այլ փիլ այլ (ՊԱԿ)
 10 ՊԱ չի՞ք եւ
 11 ՊԱ մարմնացեալ թանճրածն փիլ թանճրացեալ մարմնով
 12 ԳԹ ՊԱԵ այլ փիլ այլ (ՊԱԿ)
 13 ՊԱ կամաւ փիլ կամաւ
 14 ՊԱ եւ Հաւր փիլ Հաւր եւ
 15 ՊԱ եւ Սուրբ
 16 ԳԹ ՊԱԵ այլ փիլ այլ (ՊԱԿ)
 17 ՊԱ Աստուած փիլ Աստուծոյ
 18 ԳԹ ՊԱԵ անբովանդակելի փիլ անբաւանդակելի (ՊԱԿ)
 19 ՊԱԿ զանապանութիւն
 20 ՊԱ մեք զանասնական բարս (ՊԱԿ բարսն) ի բաց դիցուք փիլ զանասնական... զբարս
 21 ՊԱԿ հրշտակաց
 22 ՊԱ փառաւորեցաւ փիլ փառաբանեցաւ
 23 ՊԱ լիցուք նոցա երգակից փիլ կոչեսցուք... նոցա
 24 ՊԱԿ ընծայեցաւ

25 ՊԱ մոգուց
 26 ՊԱԵ զհաւատն
 27 ՊԱ կաթամբ բուծեցաւ փիլ կաթնաբուծեցաւ
 28 ՊԱ չի՞ք կատարմանն
 * Տ է՛ * Ե չէ՛ * Գ 13 :
 29 ՊԱԿ գերծցուք փիլ գերծուցէ
 30 ՊԱ մահուամբն
 31 ՊԱԵ սպանցէ փիլ մեռուցէ
 32 ՊԱԵ դժոխոցն
 33 ՊԱ կենդանութիւն փիլ նորոգութիւն կենդանութեան
 34 ՊԱԿ փոխարկեսցէ փիլ փոխեսցէ
 35 ՊԱ չի՞ք եւ (բացի B խմբի եւ ձեռագրախմբից)
 36 ՊԱԵ նորա փիլ Հաւր
 37 ՊԱԿ դասեալ լիցուք եւ մեք փիլ եւ մեք դասեալ լիցուք
 38 ՊԱԵ չի՞ք զի դասեալ ... նորա
 39 ՊԱԵ վախճան փիլ վաղճան (ՊԱԿ)
 40 ԳԹ թագաւորութիւն նորա վախճան ոչ ունի փիլ չի՞ք վաղճան նորա թագաւորութեանն (ՊԱ)
 41 ՊԱԿ չի՞ք եւ երկրպագեմք
 42 ՊԱ զիին

Հերձուածողսն¹ եւ զնորս՝ զԱրիոս եւ զՊաւղոս Սամոստացի, զՄանի եւ զՄարկիրոն, զԵւնոմիոս եւ զԵւտիքոս, զԱպաւղիւնարոս եւ² զպեղծն³ Նեստոր, եւ զԹէոդորիտոս, եւ զանտի⁴ ժողովն Քաղկեդոնի⁵, եւ⁶ զտումարն⁷ Ղեւոնի⁸, որ լրբաբար⁹ յանդգնեցան ասել երկուս¹⁰ բնութիւնս եւ երկուս¹¹ դէմս ի վերայ միոյ Քրիստոսի Աստուծոյ. եւ թէ¹² Սուրբ Կոյսն ոչ ծնաւ Աստուած, այլ մարդ սոսկ ըստ մեզ եւ տաճար Բանին Աստուծոյ: 15 Այլ¹³ են¹⁴ ումանք, որ ասեն, թէ¹⁵ մինչ¹⁶ յերկրի¹⁷ էր Քրիստոս¹⁸ ոչ էր յերկրին¹⁹, եւ մինչ ի խաչին վերայ²⁰ էր՝ ոչ էր²¹ յաթոռ փառաց²², եւ մինչ ի գերեզմանին էր՝ ոչ էր ընդ աջմէ Հաւր. զխորհեցողսն այսպէս նզովեմք: 16 Եւ զիբա, եւ զԱկակ, եւ զԲարձուճա ի Մծբնայ, որք Հնագանդեցան ժողովոյն Նեստորի, եւ եղեն պատճառք կորստեան բազմաց, եւ զՍեւերիոս եւ զգիրս ապականութեան նորա, այլ եւ

զամենեսեան իսկ զայնոսիկ, որ այսմ Հաւանին եւ Հնագանդին նոցա ամպարիշտ սպանող վարդապետութեանն՝ նզովեմք²³:

17 Եւ առաքեցաք առ ձեզ յուխտէս մերմէ զայր Հաւատարիմ՝ զՄատթէոս²⁴ քահանայ, բերել²⁵ զգրեալսդ մեր առ ձեզ, ընդ նմին յիշեցուցանելով զբանս²⁶ Յովհաննու աւետարանչի, որ ասէ. եթէ ոք եկեսցէ առ ձեզ եւ զվարդապետութիւնս գայս²⁷ ոչ ունիցի²⁸, մի՛ ընդունիցի²⁹ զնա ի տունս, եւ մի՛ բանի³⁰ ողջոյն ասել նմա: 18 Եւ եթէ ոք ասիցէ այնպիսումն ողջոյն, հաղորդեսցի եւ³¹ չար գործոց նորա՞. զի որ ոչ խոստովանի զՏէր Յիսուս մարմնով եկեալ, նա ինքն³² իսկ է նեոնն եւ³³ մոլորեցուցիչ³⁴. զայնպիսիսն³⁴ ի տանց եւ³⁵ ի սահմանաց ձերոց Հալածել³⁶ եւ զմահաբեր վարդապետութիւնն նոցա ամենեւին ոչ առնել արժանի լսելութեան³⁷: 19 Արդ, վասն զի Հարքն ձեր Հաւատակից էին Հարանց³⁸ մերոց, եւ դուք՝ մեզ, Հաճոյ թուե-

1 ՊԱԵ հերձուածողս
2 ՊԱ չի՞ գեւնոմիոս եւ գեւտիոս, զԱպաւղիւնարոս եւ
3 ՊԱԵ զպիղծն
4 ՊԱ գւնոտի չար
5 ՊԱՎ Քաղկեդոնի
6 ՊԱԵ չի՞ եւ
7 ՊԱ գիրեական տումարն (ՊԱՎ տումարն) փխ գտումարն
8 ԳԹ ՊԱԵ Լեւոնի փխ Ղեւոնի (ՊԱՎ)
9 ՊԱՎ լրբաբար
10 ՊԱ երկու
11 ՊԱ երկու
12 ՊԱ եթէ
13 ՊԱԵ Այլ եւ
14 ՊԱՎ են եւ այլ փխ Այլ (եւ) են
15 ՊԱՎ եթե փխ թէ
16 ՊԱ մինչ ի
17 ՊԱԵ ցերկրի փխ յերկրի
18 ՊԱ Տէրն Քրիստոս
19 ՊԱ յերկրին ոչ էր (ՊԱԵ չէր փխ ոչ էր) փխ ոչ էր յերկրինս
20 ՊԱ չի՞ վերայ
21 ՊԱ չէր փխ ոչ էր
22 ՊԱԵ յաթոռ փառաց չէր փխ ոչ էր (չէր) յաթոռ փառաց (ԳԹ ՊԱՎ)

23 ՊԱ նզովէ Աստուած, եւ մեք նզովեմք զամենայն, որք այսմ հաւանեցան կամ հաւանին փխ նզովեմք: Եւ գիրա... վարդապետութեանն՝ նզովեմք (ուր տող)
24 ՊԱ Մատթէոս (քացի Ե իմրի եւ ձեռագրախմբից. Մատթէոս ընթերցումն ունի նաեւ Յովհաննէս Գարեղենացու՝ Սիւնեաց եպիսկոպոսին յղած նամակի բնագիրը. տե՛ս աստ)
25 ՊԱՎ բերեալ
26 ՊԱ յիշեցուցանեմք եւ զբանն փխ ընդ նմին... զբանս
27 ՊԱ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի փխ գայս
28 ՊԱՎ ունիցին
29 ՊԱՎ ընդունիցի
30 ՊԱՎ բանիւք
31 ՊԱ տացէ այնպիսոյն ողջոյն, կցորդ լիցի փխ ասիցէ... հաղորդեսցի եւ
* Հ՛ճԳ. Բ՛ Յ՛ՎԷ. 10:
32 ՊԱՎ չի՞ ինքն
33 ՊԱ չի՞ եւ
Զ Հ՛ճԳ. Բ՛ Յ՛ՎԷ. 7:
34 ՊԱ զայնպիսին
35 ՊԱ չի՞ ի տանց եւ
36 ՊԱՎ հալածեսցիք, ՊԱԵ հալածեսցին փխ հալածել
37 ՊԱ լսել փխ առնել արժանի լսելութեան
38 ՊԱ հարցն փխ հարանց

ցաւ գալ ի ձէնջ այսր եպիսկոպոսաց երից կամ աւելեաց՝ լսելով ի մէնջ¹ յանդիման զճշմարիտ վարդապետութիւնն², զի մի՛ ոք կորիցէ ի հովուաց կամ ի³ հաւտից, այլ ի

վերայ բարւոյ գիւտի ձերոյ եղիցի ուրախութիւն հրեշտակաց⁴ յերկինս եւ մեզ յերկրի, ծառայիցս եւ երկրպագուացս Քրիստոսի⁵ Աստուծոյ մերոյ:

20 Ողջ լերուք ի Տէր:

1 ՊԱ ձէնջ փխ մէնջ

2 ՊԱ վարդապետութիւն

3 ՊԱ չի՞ ի

4 ՊԱ հրշտակաց

5 ՊԱ Գորից Քրիստոսի

ՅՈՎՅԱԼՆՈՒ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ Ի ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՍԻ

Զգարնանային ժամանակին աւուրան նշանակելով, որ եւ աշխարհի լինելութեան սկիզբն՝ ըստ մեծի մարգարէին Մովսէսի, խաւսելով ընդ Եբրայեցական ազգին, Ամիսս այս եղիցի ձեզ սկիզբն ամսոց^ա. եւ աստուածապաշտ ազգին ի դա՛ռն ծառայութենէ ազատութիւն ելանել՝ ի խոստացեալ երկիրն պարգեւաց մարդասիրին Աստուծոյ կանխաւ հասանել, հետեւակելով ընդ յատակս Կարմիր ծովոն՝ զմեծամեծ սքանչելեացն յիշատակս ի միտ ունելով: 2 Խորհրդաբար եւ ճշմարիտ աշխարհարարութեանս այսորիկ սկիզբն, զգալստեանն Տեառն նորոգելով զհնացեալ եւ զապականեալ զառ ի ներքոյս երկնից յազատութիւն ճշմարիտ, ի ծառայութենէ քրիստոնեայս, եւ աստուածապաշտս ի հեթանոսութենէ առնելով, գյառաջ ասացեալ բանն դարձուցանելով ի սա. Տաւնս այս եղիցի ձեզ սկիզբն ամենայն տաւնից, ո՛վ քրիստոնեայք, առաջին է յամենայն տաւնս սրբոյ եկեղեցւոյ, յորում նորոգումն համարէն աշխարհի լեալ, յոյժ վեհագոյն քան յոչնչէն լինելութիւն. առաջին գտաւ ի ծագեալ արեգականն արդարութեան, ամենայն հոգեւոր կարգք զիւրաքանչիւր կալան գտեղի, որ ի հրեշտականման պաշտաւնէից կատարին հանապազ. ոչ յերկիր անցաւոր պարգեւացս, այլ յերկնից արքայութիւնն, եւ յաւիտենական պարգեւսն. ոչ ծառայակցաւ Մովսէսի առաջնորդութեամբ, այլ ճշմարիտ աւրինադրաւ՝ Տերամբ եւ Աստուծով Մովսէսի եւ ամենայն արարածոց Քրիստոսիւ. որ թէպէտ եւ զկերպարանս ծառայի էառ կամաւք վասն մերոյ փրկութեան, զի զմեզ առ ինքն մերձեցուցէ, եւ ազգակցաւ մերով մարմնովս՝ զոր խառնեաց եւ միացոյց

ընդ իւրումն Աստուածութեանն, կեանս մշտնջենաւորս շնորհեաց մեզ, սակայն եկաց մնաց յիւրում Աստուածութեանն անփոփոխելի:

3 Եւ թէ զանունն ոք կամի ուսանել գտաւնիս, յորում սքանչելիք մեծամեծք կատարեցան, լուիցէ զանսուտ բանն երկուս ի միասին գումարեալ ծնունդս, միոյ եւ նորին Միածնի Որդոյն Աստուծոյ. առաջին յԱստուածածին կուսէն սրբոյ եւ երկրորդ յետ երեսուն ամի ի սմին աւուրս մկրտութեամբ ի Յորդանան ի Կարապետէն իւրմէ ի Յովհաննէ ծանուցեալ աշխարհի. վկայեալ Հաւր ի վերուստ բարբառով՝ Դա՛ է որդի իմ սիրելի ընդ որ հաճեցայ^բ. եւ ապանատես Հոգին Սուրբ ի նմին աւուր իջեալ յերկնից նմանութեամբ աղաւնոյ հանգչէր ի վերայ՝ յայտնելով զնա փրկիչ աշխարհի, որպէս ի Ծննդեանն, նոյնպէս եւ ի Մկրտութեանն: 4 Յաղագս որոյ եւ Յայտնութիւն ասի աւրս եւ Ծնունդ. միոյն պատճառք, վասն զի Բանն Աստուած մարմին եղեալ բնակեաց ի մեզ հաւատացեալս. եւ միւսոյն՝ վկայութեամբ Հաւր եւ Հոգւոյն Սրբոյ ի մարդիկ ծանալթութիւն. զորոյ զկնի ճշմարիտ վկայութեանցն համարձակեալ եւ Մկրտիչն բարբառէր մեծաձայն ասելով. Ահա գառն Աստուծոյ որ բառնայ զմեզս աշխարհի^գ:

5 Յայտնագոյնս ասացից. հիմն եւ արմատ ամենայն շինուածոյ սուրբ եկեղեցւոյ, եւ ամենայն աստուածապաշտից քրիստոնէից, զայս տաւն անդրանիկ ամենայն տաւնից հաւատացելոց ի փրկիչն Քրիստոս, պատուեսցուք զսա որպէս սկիզբն փրկութեան մերոյ ամենայն սրբութեամբ եւ հոգեւոր աւրհնութեամբք

^ա Եւ. Ժ. Բ. 2

^բ Մատթ. Գ. 17, Ժ. Է. 5
^գ Յովհ. Ը. 29

եւ երկնային ուրախութեամբ լցեալ: 6 Բայց յաղագս կրկնապատիկ լինելոյ պատճառք տաւնիս այսորիկ երկոցուն սքանչելի ծննդոցն՝ մերով մարմնով ի սուրբ Կոստէն, եւ մկրտութեամբ ի Յորդանան հոգեւոր աւագանաւն, ի մի եկեալ միաբանութիւն յաւուր յայսմիկ, բազմապատիկ արարին գուրախութիւն. միովն զի ի բնութենէ մարդկան առեալ զմարմինն՝ ընդ անճառելի Աստուածութեանն խառնեալ միաւորեցաւ, եւ միւսովն զի բարբառ Հաւր ի յերկնից ոչ որոշեաց զմարդկութիւնն, այլ զմիաւորեալն ի մարմնի աստուածութիւնն մարդկութեամբն՝ իւր Որդի սիրելի անուանեաց. ասէ, Ընդ որ համեցայ: 7 Մեզ հրամայեաց լսել նմա եւ հնազանդ լինել, պատուեսցուք առաւելագոյն զայս ուրախութեամբ մեծաւ, յորում բնութիւնս մեր պատուեցաւ, յաղագս առեցելոյ ի մէնջ ընդ ճշմարիտ աստուածութեանն միաւորեալ, եւ զուստր ազգիս մերոյ Աստուածածին կոչեցաւ եւ եղեւ, որում ի սպասու կան բիւրաւոր բանակք հրեշտակաց Որդւոյ մարդոյ: 8 Եւ զտաւնիս այսորիկ զպատճառս ինքեանք բարբառէին եւ մարդկան ուսուցանէին ասէլ. Փառք ի բարձունս Աստուծոյ եւ յերկիր խաղաղութիւն եւ ընդ մարդկան համութիւն: 9 Քանզի ասէ, ակնկալութիւն արարածոց յայտնութեան Որդւոյն Աստուծոյ սպասէր, առ ի մերժել եւ ի բաց ընկենուլ յինքեան զճանրութիւն նզովիցն, որք յաղագս յանցանաց մարդոյն եղան:

10 Լուիցուք այսուհետեւ եւ յաւետարանէն. եթէ զիս՞րդ եղեւ ծնունդ Բանին, ասէ. Բանն մարմին եղեւ եւ բնակեաց ի մեզ. եւ դարձեալ ինքն Հայր բերանով մարգարէին Դաւթայ, որպէս յերեսաց Միածնի Որդւոյն խաւսեցեալ Բանն ընդ

« Մատթ. Գ. 17. Ժ. 5
բ Ղուկ. Բ. 14
գ Յով. Ը. 14

Հաւր. Տէր ասաց ցիս որդի իմ ես դու, եւ ես այսաւր ծնայ զմեզ. Վասն զի ծառայի կերպարան էառ կամաւք, ոչինչ դանդաղի տէր իւր կոչել զծնողն իւր բնութեամբ: 11 Որդի իմ ես դու, ի վերայ բերէ. զառաջին ծնունդն նախ քան զամենայն յաւիտեանս լեալ անուանէ, վասն զի երիս ծնունդս ամենայն մարդոյ հնար է լինել, ի գրոց սրբոց ուսանիմք: 12 Առաջին ըստ բնութեան ի միմեանց. երկրորդն որ յոյժ լաւագոյն եւս է քան զառաջինն եւ աստուածային, վերստին ծնունդ ի ջրոյ եւ ի Հոգւոյ Սրբոյ, առանց որոյ ոչ յորդեգրութիւն Աստուծոյ ոք դասի, եւ ոչ զերկնից արքայութիւնն կարէ տեսանել. վասն զի եւ թողութեան մեղաց ոչ լինել արժանաւոր հասանել. ընդ որ թէպէտ եւ Նիկիոյի մոս տարակուսեալ յերկուանայ թանճրագոյն մտաւք, անհնարին՝ ծերոյն ասելով անդրէն միւսանգամ յարգանդ մտանել մաւր իւրոյ եւ վերստին ծնանիլ, եւ յանդիմանի ի փրկչէն Քրիստոսէ, իբրեւ զտգէտ վարդապետ Իսրայելի: 13 Այլ մեք ուսեալք ի հասարակաց Վարդապետէն եւ յիմաստութենէն Աստուծոյ, հաւատամք եթէ է հնար մտանել հին մարդովն, ապականեցելովն մեղաւք ցանկութեան. ի հոգեւոր արգանդ աւագանի ջրոյն սրբութեան, եւ ելանել հաւատովք նոր մարդ՝ ամենեւին առանց մեղաց, զգեցեալ զզաւրութիւն Աստուծոյ զկատարեալ սրբութիւնն:

14 Եւ երրորդ ծնունդ զհամաւրէն մարդկան նորոգումն ի հողոյ, ընդ որ սքանչանալով մարգարէն Եսայեաս, Ո՛վ լուաւ, ասէ, կամ ո՛վ ետես թէ երկիր զագգ մի բովանդակ ծնանիցի ի միում աւուրէ: 15 Թուի այդ աւրինակ ծննդեան լինել, որ ըստ ուսման եւ բանի վարդապետութեան հաւատոց է. որպէս երանելին Պաւղոս

դ Սաղմ. Բ. 7
է Հմմտ. Ես. Կ. 9. 8:

զԿորնթացիսն աւետարանաւն ծնեալ ի Քրիստոս Յիսուս^ա, եւ զՈմեսիմոս ի կապանս ծնեալ^բ, *ասէ*:

16 Արդ մարդկան այսոքիկ են ծննդեան աւրինակ. իսկ Քրիստոսի Հանդերձ երեքումբք այսոքիկ որ ի Կուսէն Սրբոյ. Դաւթի եւ Աբրահամու որդի ասի:

17 Եւ մկրտութեամբն ի Յորդանան ի կարապետէն իւրմէ ի Յովհաննէ, երկոքեան ծնունդքս ի նմին աւուր Հանդիպան¹. Ետ երեսնամեայ ժամանակի. եւ յարութեանն որ ի մեռելոց, յերրորդ աւուր: 18 Այսոցիկ երից ծննդոց փրկչին մերոյ Քրիստոսի եղելոյ ի վերջին ժամանակ աշխարհիս. Կ եւ չորրորդ ծնունդ նորա նախ քան զամենայն յաւիտեանս, անճառելի եւ անպատում ի Հաւրէ միայն, Աստուած յԱստուծոյ, լոյս ի լուսոյ: 19 Զի թէպէտ եւ ամենայն աւրինակք ծննդեան նորա աստուածային եւ անճառելիք, այլ՝ այն առաւել եւս է սքանչելի եւ անպատում, եւ վերագոյն քան զմիտս մարդկան, զի յորմէ Հետէ Հայր իմանի եւ Որդի ընդ նմին, ո՛չ պատուով. եւ ո՛չ երիցութեամբ առաւել ոք քան զոք, բայց միովն միայն որոշեալ ի միմեանց, զի մին ծնաւդ միայն է, եւ միւսն ծնեալ, իսկ միւսն ի նոցին էութենէ: 20 Նոքա այսաւր ի Յորդանան ծանուցան աշխարհի, վասն որոյ առաւել զայս տաւն պատուեսցուք մեծաւ ուրախութեամբ:

21 Եւ Կիւրղոս Երուսաղէմի եպիսկոպոս, վարժեալ հռետորական արհեստիւք

եւ լի Հոգևով Սրբով, որ ի Սիմոն կախարդէ եւ ցիւր ժամանակն զամենայն աղանդս յանդիմանեալ կշտամբեաց եւ զանիրաւ ժողովս նոցա, եւ զտաւնս եւ զընթերցուածս եւ զսաղմոսս ի սրբոց առաքելոցն զեղեալսն Հաստատեաց, եւ զյիշատակս մարգարէից եւ առաքելոց եւ մարտիրոսաց ստուգեալ կարգեաց. եւ զլուսի զՅայտնութիւնն եդ, զոր սուրբ առաքելոցն էր կարգեալ, եւ Հասաց զԾնունդն յառաջ քան զՅայտնութիւն, այլ՝ զմի եւ զնոյն: 22 Եւ զոր յայլ քաղաքս ըստ Արտեմոնադիր ընթերցուածոց դեկտեմբերի ամսոյ ի քսան եւ հինգն ծնունդ առնեն, զայն Յակովբայ առաքելոյ եւ Դաւթայ մարգարէի յիշատակի աւր եդ Կիւրեղ. քանզի եւ սուրբ Հարքն, որ ի Նիկիա ժողովեալ, եւ երանելին սուրբն Գրիգորիոս եւ սուրբն Արիստակէս ոչ կարգեցին երկուս տաւնս զԾնունդն եւ զՅայտնութիւնն, այլ՝ մի տաւն: 23 Եւ ըստ նոցունց հոգեկիր վարդապետքն եւ թարգմանիչք, որք յԱղեքսանդր եւ յայլ յայտնի քաղաքս վարժեալ, ոչ աւելիս եւ նորս ինչ թարգմանեցին, եւ ոչ ընկալան, եւ ոչ մեզ աւանդեցին. այլ Հաստատեալ եմք ի վերայ հիման սուրբ առաքելոցն եւ երանելի Հարցն, որ զմի եւ նայն տաւն կատարեցին, եւ կատարեմք ի պատիւ Սուրբ Երրորդութեանն, զաւր սուրբ Յայտնութեանն՝ ոչ բաժանելով յերկուս զայսաւր ի Յորդանան զծնիցեալ Բանն:

^ա Տէ՛* Ը Կ*ր* Գ* 15:

^բ Տէ՛* Փ* 10:

¹ Այսպէս յօրինակիմ

ՆԵՐՍԷՍ ՌԱԺԻԿ

ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՍՐԲՈՅՆ ՅԻՉՏԻԲՈՒՉՏԵԱՅ

«ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՍՐԲՈՅՆ ՅԻՉՏԻԲՈՒՉՏԵԱՅ»

Արեւելեան վկաների լուսեղէն փաղանգը Համալրող սրբերից մէկն է Յիզդբուզիդը: Ազգաւ պարսիկ, Մախոթ անունով այս այրը ծնուել է մօտաւորապէս 525 թ. Իրանի Բեշապուհ կամ Բերշապուհ գաւառի Քունարաստան գիւղում՝ մոզի ընտանիքում: 549 թ. ականատես է եղել պարսիկ քրիստոնեայ Գրիգոր Մանածիհր ռաժիկի նահատակութեան, ինչն, ըստ երեւոյթին, շրջադարձային դեր է ունեցել նրա հետագայ կեանքում: Մախոթին վիճակուել է այցելել «յաշխարհն Սիւնեաց, պարապելով յունկնդրութիւն գրոց սրբոց» «սակաւ ամիսս», հաւանաբար իր գիտութեամբ հռչակուած Պետրոս Սիւնեցու մօտ: Այնուհետեւ գնացել է Դուին: Այստեղ, Խոսրով Պերոզ անունով մոզի ապարանքում, ծագած հրդեհի ժամանակ տեսնելով քրիստոնեայ քահանայի խաչի գօրութիւնը՝ դարձի է եկել, բաց է բաց յայտարարել է իր քրիստոնեայ լինելը: Մոզերի պահանջով Նիխորական անունով պարսիկ մարզպանը նրան բանտ է նետել, մահուան սպառնալիքով պահանջել է վերադառնալ մոզութեան: Այս նոյն սպառնական պահանջը նրան ներկայացուել է Նիխորականին փոխարինած Նախապետ Քնարիկի կողմից եւս: Սակայն նրա բոլոր սպառնալիքներն ի դերեւ են ելել: Երեք տարի բանտում մնալով՝ Մախոթը հաւատակիցների կողմից վերանուանուել է Յիզդբուզիդ, որ ստուգաբանում է «Աստուածատուր» կամ «Աստուած ապրեցոյց»: Դուին ժամանած Խոսրով Անուշիրուան արքայի ներկայացուցիչները, գործը քննելով, ներում են շնորհել Յիզդբուզիդի երկու ընկերներին՝ Ներսէս Ռաժիկին եւ Սահակին, որոնք մանկուց քրիստոնեայ էին, բայց հաւատափոխ անելու գուր ջանքերից յետոյ մահապատժի վճիռ են կայացրել Յիզդբուզիդի հանդէպ: Սրբին յղուած նամակում Պետրոս Սիւնեցին իր գօրակցութիւնն է յայտնել նրան եւ յորդորել արժանապատուութեամբ դիմաւորել մահը: Խոսրով արքայի 33-րդ տարում, սահմի 2-ին, այսինքն՝ 553 թ. նոյեմբերի 9-ին, կիրակի օրը, 28 տարեկան հասակում Յիզդբուզիդը խաչուել է Դուինում: Համաձայն վկայաբանութեան համառօտ տարբերակի՝ «Յայնժամ դիմեաց Հայրապետն քահանայիւք եւ ժողովրդովք եւ բարձեալք զպատուական մարմինն սրբոյն՝ տարան ի մեծ եկեղեցին Դունայ եւ եղին ի տապանի սաղմոսիւք եւ աւրհնութեամբ եւ զխաչն մասունք արարեալ բաշխեցին ամենայն հաւատացելոց»:

Հայ իրականութեան մէջ Յիզդբուզիդի մասին տեղեկութիւններ են հաղորդուում Փիլոն Տիրակացու ժամանակագրութեան, Յովհաննէս Դրասխանակերտցու Պատմութեան, Դաւիթ Դնեցու Վկայաբանութեան մէջ: Ճառընտիրներում, Ճաշոց ծիսամատեանում պահպանուել են նրա վկայաբանութեան ընդարձակ, իսկ Յայսմաւուրբներում՝ համառօտ տարբերակները: Ընդարձակ տարբերակը մեզ յայտնի է նաեւ հայերէնից կատարուած վրացերէն թարգմանութեամբ: Յունական Յայսմաւուրբում գետեղուած է 'Κβοζή'της-ի փոքրիկ պատմութիւնը: Յիզդբուզիդ Պարսեցի նահատակի վերաբերեալ տեղեկութիւններ են բերուած նաեւ ասորերէն պատառիկներից մէկում:

Ըստ Ն. Մառի՝ Վկայաբանութեան հայկական բնագիրը ստեղծուած է ամենաուշը է դարում, իսկ համաձայն Ի. Աբուլաճէի՝ Ը դարի առաջին քառորդի վերջում: Մինչդեռ, ըստ Ա. Յակոբեանի դիտարկման (հիմնուած «գայր անտի յաշխարհն Սիւնեաց, պարապելով յունկնդրութիւն գրոց սրբոց եւ լեալ անդ սակաւ ամիսս, հասան է ի Հայս» բառերի

վրայ), վկայաբանութիւնը շարագրուել է 570-660 թթ., «երբ դեռ Սիւնիքը Հայքից անջատ էր»:

Վկայաբանութեան հայկական բնագիրը հրատարակուած է ըստ Վենետիկի Մխիթարեան հրատարակութեան¹:

Յակոբ Քեոսեան

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

1. *Լիակատար վարք եւ վկայաբանութիւնք սրբոց*, Հատընտիրք Բաղնալի ի նաորնորաց, հատոր Բ, Վենետիկ-Ս. Ղազար, 1874, էջ 124-130:
2. **Ալեքսան Յակոբեան**, *Ծիծեռնաժամփի եկեղեցու անուանումը*, ՀԱ, 2000, էջ 135-196:
3. **Ոլոյս Բաբլաձե**. *Ճարտուղի և Երեւանի լուսնային շրջանը IX-X երեսներ, Գաղտնիքներ և ճշմարտություններ*, Երևան, 1944, ԳԵ. 114-123.
4. *Армянские жития и мученичества V-XVII вв*: перевод с древнеармянского, вступительные статьи и примечания К. С. Тер-Давтяна, Ереван, 1994, стр. 271-281.
5. **P. Peeters**, *Une légende Syriaque de S. Iazdbozid*:- "Analecta Bollandiana", t. XLIX, fasc. I-II, Bruxelles, 1931.

¹ Տե՛ս *Լիակատար վարք եւ վկայաբանութիւնք սրբոց*, Հատընտիրք Բաղնալի ի նաորնորաց, հտ. Բ, Վենետիկ-Ս. Ղազար, 1874, էջ 124-130:

ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՍՐԲՈՅՆ ՅԻՉՏԻՐՈՒՉՏԵԱՅ¹

1 Ընդ ժամանակս թագաւորութեանն Խոսրովու որդւոյ Կաւատայ արքային Պարսից՝ առաւել զայրացեալ լինէր խոստովանութիւնն որ առ Քրիստոս, եւ ոչ սակաւք նահատակեցան յաշխարհին Պարսից եւ ի դրան արքունի: 2 Յորում ժամանակի այր ոմն Մախոշ մոգ՝ ի նորին աշխարհէ, ի գաւառէն, որ կոչի Բերշապուհ, ի գեղջէ, որոյ անուն Քունարաստան, որոյ ծնողքն պաշտաւնեայք էին կրակի, եւ ինքն ի մանկութենէ մոգութեամբ վարժեալ. եւ էր զաւրաւոր խրատու եւ գիտութեամբ հրապաշտիցն եւ խորհրդով իմաստուն:

3 Սա ի դիպուածոյ իմեքէ ի բանակս թագաւորին հասանէր, եւ պատահէր չարչարանաց սուրբ վկայի ուրումն՝ որում անուն էր Գրիգորիոս: 4 Հրաշացեալ ընդ համարձակութիւն նահատակին, եւ զհաւատոց բարեք նախանձն նախանձեալ՝ ասէ՝ ՚ի սրտի իւրում. Տէր Աստուած քրիստոնէից, նայեաց յիս եւ ցոյց ինձ ճանապարհ, որով գնացից, եւ բաց ինձ դուռն ողորմութեան ընդ նահատակի քում, զի արժանի եղջց արքայութեան քում, որ Տէրդ ես երկնի եւ երկրի: 5 Իսկ ի նմին գիշերի տեսիլ սքանչելի երեւէր նմա, որպէս թէ լինէր ինքն ի սուրբ եկեղեցւոյ, եւ այր ոմն սպիտակագգեստ երեւեալ նմա ասէ. Երանելի ես դու, զի այսպիսի լուսաւոր եկեղեցւոյ եղեր արժանի. եւ հաւատասցես յայսմհետէ յԱստուած յարարիչն երկնի եւ երկրի եւ յՈրդին համազաւր եւ ի հոգին համագործ, եւ ուսցիս զայդ յաւանդութենէ սրբոյ Աւետարանին: 6 Եւ զարթուցեալ իմացաւ զտեսիլն, եւ հաւատաց բոլորով սրտիւ եւ ասէ. Աստուածն քրիստոնէից է

ճշմարիտ Աստուած: 7 Եւ յայնմհետէ զղջմամբ ունէր զմոգութիւնն:

8 Գայր անտի յաշխարհն Սիւնեաց, պարապելով յունկնդրութիւն Գրոց Սրբոց. եւ լեալ անդ սակաւ ամիսս հասանէ ի Հայս. եւ եկեալ յԱյրարատ գաւառ՝ բնակէր յոստանին Հայոց ի Դուին, յարեալ ի մոգս ուրումն Հայոց համակարի, որում անուն էր Խոսրով Պերոզ. եւ արհամարհանաւք զմոգութիւնն անցուցանէր: 9 Եւ լինէր ի ձմերային ժամանակի, ի մեհեկանին, ըստ Պարսկաց ամսոյ սկիզբն, եւ ըստ սովորութեանն իւրեանց զոհս աղտէղ մատուցանէին հրոյն յապարանս համակարին: 10 Եւ երանելին Մախոշ կայր ընդ նոսա յառակի, պնդեալ զբերանն: 11 Եւ բարձրացեալ բոցն ի ճարպոյն, հասանէր ի դարաւանդակ տանն եւ բորբոքէր: 12 Իսկ մոգուցն ժողովեալ զզոհելն՝ զհուրն փութացան շիջուցանել, եւ ոչ կարացին. եւ արտաքս ընթացեալ պատմէին զիրան: 13 Եւ որ հազարապետն էր Հայոց, իբրեւ լուաւ զձայն ամբոխին, փութապէս հասանէր ՚ի դուռն եկեղեցւոյն, ստիպէր զպաշտաւնեայսն առնուլ զսուրբ խաչն եւ բերել յապարանսն, զի թերեւս մերժեսցի հուրն, որ առ նեղութեանն ակամայ հաւատայր: 14 Եւ սպասաւորացն առեալ զնշանս սուրբ խաչին՝ արագ հասանէին ի տեղին, եւ հասեալ յանդիման ապարանիցն սուրբ խաչն, եւ բոցն տարածեալ շիջանէր առ հասարակ: 15 Այս մեծ նշան եղեւ պատուական սուրբ խաչիւն յաշխարհիս Հայոց՝ ՚ի խնդութիւն բարեպաշտից եւ յամալթ կռապաշտութեան: 16 Եւ տեսեալ կնոջ համակարին՝ մեծ գոհութիւն առաքէ սպասաւորաց սքանչելագործ սուրբ խաչին:

¹ Ձեռագրում՝ Յիգտրուգտես

17 Իսկ երանելին Մախոշ իմացեալ զայսպիսի սքանչելիս, զուռն որովք հրամայէր՝ ջարդեալ ի բաց ընկենոյր, նոյնպէս եւ զբերանակապն. եւ մատուցեալ առնոյր զբուրվառն ի ձեռաց սարկաւազին, եւ արկանէր խոնկա առաջի սրբոյ խաչին, եւ յայտնէր զհաւատսն, զոր ունէր ի Քրիստոս. եւ յուղարկելով զսպասաւորս խաչին ասէր. Խնդրէ՛ք յԱստուծոյ վասն իմ, զի եւ ես քրիստոնեայ եմ: 18 Եւ տեսեալ մոգուցն՝ ասեն ցնա. Ընդէ՞ր զայդ իշխեցեր առնել: 19 Ասէ երանելին. Ես ի բազում ժամանակաց հաւատացի քրիստոնէից, եւ խղճիւ մոգէի, բայց արդ յայտնապէս քարոզեմ զհաւատս, որ ի Քրիստոս, եւ այլ ոչ եւս սպասաւորեցից հրոյ՝ զայդ ամենայն զարմանալիս տեսեալ:

20 Ի վաղիւ անդր երթեալ մոգուցն առաջի Հայոց իշխանին, որ կոչէր Նիխորական, եւ ամբաստանէին զերանելոյն: 21 Եւ ածեալ զնա առաջի՝ ասէ դատաւորն. Ա՛յ թշուառական, ընդէ՞ր զհայրենի մոգութիւնսն թողուս, եւ յիմար եւ ուխտակորոյս լինիս: 22 Պատասխանի ետ երանելին եւ ասէ. Ճշմարտիւ ասեմ, ո՛վ դատաւոր, վասն իմ, զի քսան եւ հինգ ամ ունիմ, որով ընդ վայր աղանդաւորեցայ. իսկ այժմ ծանուցեալ զճշմարիտն Աստուած՝ ի հայրենի բազմաստուածութենէն հրաժարեցի: 23 Վասն որոյ ոչ այսուհետեւ կենցաղոյս պատրանք յայսց հաւատոց անջատեսցեն զիս, քանզի հանդերձեալ եմ տանել հասելոց տանջանաց: 24 Եւ զայրացեալ իշխանն՝ հրամայեաց հարկանել զերանելին երկոտասան կրկին, եւ կտրեալ զմաւրուսն եւ զհերս, եւ գրեալ զհարցումն՝ կապէր զոտս եւ զձեռս եւ տայր ի բանտ: 25 Եւ գտանէր սուրբն իւր վշտակից զոմն ի բանտին, որում անուն էր Ներսէս, որ ի բազում ժամանակաց էր կապեալ ի բանտին վասն Աստուծոյ: 26 Եւ ուսանէր ի նմանէ երանելին զսուրբ հաւատս եւ

զսաղմոսս քսան, եւ այսպէս անդադար պաշտէր զԱստուած եւ աղաւթէր:

27 Յետ սակաւ ժամանակի փոխանորդէ զկնի Նիխորականին Նախապետն անուանեալ. եւ նստեալ յատենի՝ ածին զերանելին Մախոշ առաջի նորա: 28 Ասէ Նախապետն. Զիա՞րդ իշխեցեր զհայրենի աստուածն թողուլ եւ հաւատացեր անծանաւթին Քրիստոսի: 29 Ասէ երանելին. Մի է Աստուած՝ հասարակաց արարիչ, որ ունի զմտաց ամենայն բարեգործաց, որոյ տեսեալ զմիտս իմ թուլացեալ ի բազմաստուածոցն երկրպագութենէ՝ առաջնորդեաց ինձ ի ճշմարիտ աստուածգիտութիւն: 30 Եւ սրտմտեալ Նախապետին՝ հրամայեաց գան հարկանել զնա սաստիկ, եւ կապեալ նորին երկաթովք տարան ի բանտ: 31 Եւ լեալ ի բանտին այլ եւս ամս երիս՝ հայցէր ի քահանայն առնուլ զտէրունական կնիքն, զի անուանեսցէ զնա Յիգտիբուզիտ, որ թարգմանի Աստուածատուր, այսինքն է՝ յԱստուծոյ փրկեալ, զոր եւ Հոգին Սուրբ կենդանագրէր, որ եւ զաւրացեալ լինէր ի բանտին հոգևովն, եւ հանեալ տայր զհանդերձս իւր կարաւտելոց, եւ ինքն զգենոյր այժեայս եւ հողաթափս: 32 Եւ այսպէս պահովք եւ աղաւթիւք հսկէր սաղմոսելով անդադար գեղեցիկ կրաւնաւորութեամբ:

33 Եւ ի լնուլ այլ եւս երից ամացն՝ յաջորդէր զՆախապետն որում Քնարիկն ասէին: 34 Դպիր ոմն սորա երթեալ ի բանտն՝ հնարէր պատրել զերանելին. ասէ ցնա. Քեզ միայն Արեաց աշխարհն չեղեւ բաւական, զի մոլորեալ ես ի մոգութենէ, անձամբ զքեզ գերի վարելով առ հասարակ յաշխարհէ եւ ի դենէ մոլորեալ: 35 Պատասխանի տուեալ սրբոյն ասէ. Ամենայն անծանաւթք ճարտարաց բնութեամբ սպասաւորին, եւ կենդանիքս ի ստացողէն ստրկացան. այսպէս եւ մարդիկ իւրեանց արարչին պարտին ծառայել

միայն Աստուծոյ. վասն որոյ եւ ես յանտեսութեան իմում նանրութեան ծառայեցի. իսկ յորժամ գլխացաւ յիս Աստուած, կալեալ զմտածութենէ իմմէ կապեաց ի սէր պատուիրանաց իւրոց՝ ներկեալ յուսով շնորհի իւրոյ, զոր ոչ կարասցեն կենցաղոյս փորձութիւնքս փոփոխել: 36 Եւ լուեալ զայս ատենադպրին՝ յոտն յարեալ ցասամաք, եւ սկսաւ հարկանել զնա բրով անողորմ: 37 Եւ այլ եւս բազում ազգի ազգի տանջանս հասուցանէր երանելոյն, զի հաւանեցի ունել զմոգութիւնն:

38 Յայնմ ժամանակի լուեալ թագաւորն զբազում բռնութիւն եւ զտառապանս զոր հասուցանէին աշխարհին Հայոց գործակալքն, առաքէր երիս իշխանս հաւատարիմս այց առնել երկրին, անուն միումն Նատոյ՝ որ կոչի Դրովանդական, եւ երկրորդին Պերոզ, որ էր Ռէոյ գաւառին մոգպետ, եւ երրորդին Խոյապ, որ էր սպասաւոր արքային. որք եկեալ ի Հայս բազում ուղղութիւնս արարին: 39 Եւ յաւուր միում հրապարակաժողով արարեալ՝ նստէին յատենի յաղագս հրամանին արքունի: 40 Ի նմին ժամու արք ամպարիշտք զգացուցին իշխանացն եւ ասեն. Են արք երեք ի բանտի, որոց զմեր պաշտանն թողեալ եւ զքրիստոնէութիւն են յանձն առեալ, ներսէս ոմն Ռաժիկ, եւ Սահակ ոմն յԱտրպատականէ, եւ Յիզտիբուզիտ Պարսիկ: 41 Եւ հրամայեցին անել զնոսա: 42 Ասէ մոգպետն ցնեքսէս. Ընդէ՞ր եղեր քրիստոնեայ: 43 Ասէ երանելին. Մայր իմ քրիստոնեայ էր, եւ ի տղայութեանն էի հաւատացեալ ի Քրիստոս, չգիտեմ բնաւ զձեր դենդ: 44 Հարցեալ եւ ընդ Սահակ. եւ նա ասէ. Ի տղայութեանն լեալ էի քրիստոնեայ:

45 Իսկ երանելին Յիզտիբուզիտ կայր յետոյ, եւ նուաղ ճայնիւ սաղմոսէր զվեցերորդ սաղմոսն. Տէր, մի՛ սրտմտութեամբ Բով յանդիմաներ զիս, եւ մի՛ բարկութեամբ

Բով խրատեր զիս՝: 46 Եւ զատուցեալ զնոսա՝ ասէ ցՅիզտիբուզիտ. Ա՛յ թշուառական, ընդէ՞ր զլուսաւոր դենն թողեր եւ նսեմաւոր քրիստոնէութեան հաւատացեր, եւ դարձեալ ստիպելով զոհեալ քո հրոյ: 47 Ասէ սուրբն. Այո, զոհեալ, եւ զմոգութիւն առաւել գիտեմ քան զքեզ. եւ եթէ հրամայես ասել եւ յայտ առնել, ծանիցես որքան լաւ է քրիստոնէութիւն քան զամենայն պաշտամունս, զոր ես քննեալ եւ հաւատեալ ծանուցեալ, քրիստոնէութեան միայն է կարողութիւն փրկել յահագին ի մահուանէն: 48 Եւ լուեալ մոգպետին՝ հրամայէր սպասաւորացն պատուեալ զպարեգալտս նորա եւ հանել զկնգուղն. հարկանէին զգլուխ երանելոյն եւ զմաւրուսն խլեալ արմատաքի:

49 Եւ դարձեալ զերեսեան երանելիսն հրամայեցին պահել զերիս աւուրս. եւ յետ այնորիկ անեալ զնոսա՝ ոչ կարէին հաւանեցուցանել. ապա արգելին զնոսա ի տան միում անկերակուր: 50 Եւ հրամայեաց մոգպետն արկանել ծուխ զգիշերն ամենայն: 51 Վտանգեալ սուրբքն՝ աղաղակէին եւ ասէին. Աստուած, յաւգնել մեզ մայեաց, եւ Տէր, յընկերել մեզ փութա՞: 52 Եւ այսպէս անդադար սաղմոսէին մինչեւ ցառաւաւտն. եւ լեալ ի բանտին աւուրս տասն: 53 Եւ ի գիշերի միում յաւուր կիւրակէի, յորում հանդերձեալ էր Յիզտիբուզիտ վկայել, տեսութիւն երեւէր նմա. այր ոմն ունէր ի ձեռինն վարոց, եւ հասուցեալ ի գլուխ նորա՝ եւ հոսէր արիւնն ի միջէ աչաց նորա: 54 Եւ երեւեալ երից լուսագեաց արանց՝ ի բաց մերժեցին զայրն, որ եհարն, եւ բերեալ պսակ յընտիր մարգարտէ՝ դնէին ի գլուխ նորա: 55 Եւ զարթուցեալ պատմեաց ընկերացն, եւ գիտացին եթէ հասեալ է ժամ նորա:

« Սաղմ. 9. 2. 1-2
 ք Տէ՛ր Սաղմ. 4. 10. 2:

56 Եւ ի վաղիւն եկեալ հաւատարիմքն երթեալ ի բանտն ածել զսուրբսն. եւ եկեալ դահճապետն ի բանտն՝ տանել, եւ նա հրաժարեալ յեղբարցն գնայր. եւ յերթալն սաղմոսէր զչորրորդ սաղմոսն, սկսեալ ի բանտէն մինչեւ ի տեղի ատենին. Ի կարդալ իմուլ լուար ինձ ըստ արդարութեան, ի նեղութենէ ինձ անդորր արարեր^ա. եւ կատարեալ զսաղմոսն՝ հասանէր ի տեղի ատենին: 57 Եւ լուեալ քրիստոնէիցն՝ առ հասարակ դիմեցին անդր տեսանել զնահատակութիւն սրբոյն: 58 Եւ սուրբն Յիզատիբուզիտ կայր առաջի չորից դատաւորացն, եւ կազմեալ երիս փայտս մահապարտաց. զոր բերեալ առաջի՝ ասէ մոգպետն ցտուրբն. Տեսանե՞ս զփայտսդ՝ յորում հանդերձեալ ես մեռանել. խնայեա ի քեզ, եւ մի՛ ի նմին յամառութեան կար: 59 Պատասխանի ետ սուրբն եւ ասէ. Առաւել եւս հաստատեալ եմ ի Քրիստոս, որ է յոյսն իմ. բայց դու զհրամայեալսն քեզ վասն իմ՝ կատարեա: 60 Եւ հրամայեաց տանել ի փայտն. եւ սուրբն յաւժարութեամբ սրտիւ եւ զուարթ մտաւք երթայր ի փայտն. եւ հանեալ ի նմանէ ի բաց գերծուցին զհանդերձիկն, զոր ունէր: 61 Ասէ երանելին. Յիրաւի է այս այսպէս, զի իմ Տեառնորդին ի կամաւոր խաչելութեանն Միածինն փրկիչ՝ մերկ ի խաչին բեւեռեցաւ, զի զնախահաւրն մերոյ զմերկութիւնն զգեցուցէ, որ եւ զիս զաւրացուցէ, զի պարտեցից զսատանայական խորամանկութիւնս ի մարմնի իմում: 62 Եւ տարածեալ զինքն ի վերայ փայտին՝ սկսաւ ասել զքառասներորդ երրորդ սաղմոսն. Արի, Տէր, աւգնեա մեզ եւ փրկեա զմեզ վասն անուանդ քո. համարեցաք որպէս գոչխար ի զեմուսնէ:

63 Եւ ի կանգնել զփայտն՝ յղէ առ նա մոգպետն, զի թերեւս դարձցի: 64 Եւ ար-

համարհեալ չտայր պատասխանի. կայր ի փայտին պնդեալ ի բազմամբոխ ատենին, եւ խոցէին նետիւք զկողս նորա: 65 Դիպեցաւ ի նմին աւուր հանել ի փայտ երկուս մահապարտս, զորս եւ հանին իսկ ընդ նոսա. մինն էր ի ժողովոյն Խուժկաց, զոր ածեալ ի փայտն՝ համբուրէր զոտս սուրբ վկային, եւ առեալ հող արիւնախառն, որ ի կաթուածոց վկային, ընկենոյր ի ծոց իւր: 66 Եւ դահճապետն կոփելով զգլուխ նորա, հանին ընդ աջմէ վկային ի փայտն, եւ ի նա ձգեալ զնետն եւ այնպէս աւանդեաց զոգին: 67 Իսկ միւսն Հրեայ էր. իբրեւ ածին ի փայտն, բողոքեաց առ դատաւորսն. Մի՛ կորուսանէք, զմոգութիւն յանձն առնում. եւ չկալեալ միտ դատաւորացն՝ հանին զնա ի փայտն յահեկէ սրբոյն: 68 Եւ երանելին ի մէջ երկուց մահապարտացն ի բարձր տեղուջ ողջակիզեալ յանդիման արեգականն եւ ամենայն ժողովրդոցն: 69 Որ ունէր խորհուրդ զարմանալի. որ եւ յիշատակեալ ի նա տէրունւոյն բան՝ ըստ ճշմարիտ խոստմանն, թէ՛ Որ հաւատայ յիս՝ գգործն գոր ես գործեմ եւ նա գործեսցէ, եւ մեծամեծ եւս քան զնոյնս: 70 Եւ առաքեալ ասէ. Զորս յառաջն քան չէր՝ յառաջագոյն հրաւիրեաց կերպարանակից լինել պատկերի Որդոյ իւրոյ^բ:

71 Եւ այսպէս քաջութեամբ վկայեաց սուրբն Յիզատիբուզիտ ի քսաներորդի երրորդի ամին Խոսրովու թագաւորի, որ աւր երկու էր քաղոց ամսոյ, յաւուր կիրակէի յերրորդ ժամու. եւ հրամայեաց պահել զմարմին երանելւոյն ի վերայ փայտին: 72 Իսկ հաւատացելոցն ըստ յաջողելոյն Աստուծոյ առեալ զմարմին սրբոյն, եւ պատուական հանդերձիւք պատեալ, իջուցին ի հանգիստ պայծառ պատուով, տաւն կատարելով մեծաւ ուրախութեամբ. յորում այսպէս լոյս փայլեալ զուարճացոյց զան-

^ա Սաղմ. Գ. 2
^բ Սաղմ. ԽԳ. 27, 23

^գ Յովն. ԺԳ. 12
^դ Հաղմ. Բ. 29

ձինս ուղղափառ հաւատացելոց: 73 Վասն
զի ամենափրկչին Յիսուսի Քրիստոսի
Տեառն մերոյ, հանդերձ Հաւր ամենակալի
եւ Հոգւոյն Սրբոյ, վայելէ փառք, պատիւ,
այժմ եւ միշտ:

74 Եւ ես՝ Ներսէս (ասէ վկայաբանն)
չարչարակից եւ ընկերակից սրբոյն, արա-
րի զպատմութիւնս ի փառս Քրիստոսի
Աստուծոյ մերոյ:

ՎՐԹԱՆԷՍ ՔԵՐԹՈՂ

ՅԱՂԱԳՍ ՊԱՏԿԵՐԱՄԱՐՏԻՑ

ՊԱՏԱՍԽԱՆԻ ԹՂԹՈՅՆ ՍՈՐՄԵՆԱՅ, ՈՐ ԱՌ ՎՐԹԱՆԷՍ ԵՒ
ՎԱՐԴԱՊԵՏ ԳՐԵԱՑ

ԹՈՒՂԹ ՇՐՋԱԳԱՅԱԿԱՆ ԱՌ ԵԿԵՂԵՑԻՍ ՑՈՒՐՏԱԽԱՅ

ԹՈՒՂԹ ԱՌ ՊԵՏՐՈՍ ՎՐԱՑԻ

ՏԵԱՌՆ ԿԻՐՈՎՆԻ Ի ՎՐԹԱՆԻՍԷ

ՊԱՏԱՍԽԱՆԻ ԹՂԹՈՅՆ ՄՈՎՍԷՍԻ Ի ՎՐԹԱՆԻՍԷ [Ա]

ՊԱՏԱՍԽԱՆԻ ԹՂԹՈՅՆ ՄՈՎՍԷՍԻ Ի ՎՐԹԱՆԻՍԷ [Բ]

ՊԱՏԱՍԽԱՆԻ ԵՐՐՈՐԴ ԹՂԹՈՅՆ ՄՈՎՍԷՍԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ Ի
ՎՐԹԱՆԻՍԷ

ՎՐԹԱՆԵՍ ԲԵՐԹՈՂԸ ԵՒ ԻՐ ԳՈՐԾԵՐԸ

Վրթանէս Քերթողը ծնունել է 2 դ. կէսերին: Ուսումը ստացել է Դուլինի կաթողիկոսարանում: Ամենայն հաւանականութեամբ, դրան եպիսկոպոս է ձեռնադրուել Մովսէս Եղիվարդեցի կաթողիկոսի ձեռքով: 604-607 թթ. պայմաններում հաւատարմօրէն վարել է կաթողիկոսական տեղապահութեան պաշտօնը: Աբրահամ Աղբաթանեցի կաթողիկոսի ընտրութիւնից յետոյ Վրթանէսն ապրել է եւս 10 տարի:

Դատելով իր աշխատութիւններից՝ հմուտ եւ քաջատեղեակ էր Աստուածաշնչին, աստուածաբանութեանը, պատմութեանը: Մեզ աւանդուած գործերում, որոնք նուիրուած են ժամանակի Եկեղեցուն յուզող զանազան խնդիրներին, դրսեւորուած են հեղինակի դաւանաբանական սուր միտքը, լայն մտահորիզոնը:

ա. Յաղագս պատկերամարտից (չուրջ 591-604 թթ.). սա պատմական մեծարժէք վաւերագիր է, ուր կարեւոր տուեալներ են բերուած Հայոց եկեղեցում կիրառուած սրբապատկերների, նրանց բովանդակութեան, դաւանաբանական նշանակութեան, ինչպէս նաեւ նկարչական տեխնիկայի, օգտագործուած ներկերի բաղադրութեան վերաբերեալ:

Սուրբգրային եւ հայրախօսական աղբիւրների հիման վրայ հեղինակը մերժում է Բիւզանդիայում տարածուած պատկերամարտութիւնը, որը նա համարում է աղանդաւորութիւն: Մերժելով պատկերամարտերի տեսակէտերը (Տիրոջը պատկերելու անկարելիութիւնն ու մերժելիութիւնը) եւ արտայայտելով Հայոց եկեղեցու պատկերայնական սկզբունքները՝ Վրթանէս Քերթողը աստուածաբանօրէն հիմնաւորում է տէրունական պատկերագրութեան թոյլատրելիութիւնն ու անհրաժեշտութիւնը: Իր տեսակի մէջ այս Թուղթը հայ միջնադարեան եկեղեցական գեղագիտութեան վաղագոյն տեսական յուշարձաններից է, որ ժամանակի առումով կանխում է Բիւզանդիայում հրապարակ հանուած համաբնոյթ երկերին:

Բնագիրը ներկայացուած է ըստ Երուանդ Մելքոնեանի կազմած գիտական բնագրի¹, ուր Երեւանի Մատենադարանի թիւ 3062, 2966 եւ 4381 ձեռագրերը համեմատուած են հ. Գ. Զարբհանալեանի հրատարակած վենետիկեան բնագրի հետ²:

բ. Թուղթի.

Վրթանէս Քերթողի Թղթերի մեծ մասը նուիրուած է հայ եւ վրաց եկեղեցական յարաբերութիւններին: Դրանք գետեղուած են Գիրք Թղթոցում³ եւ Ուխտանէսի Պատմութեան մէջ⁴:

- Երեք Թղթեր՝ յղուած Յուրտաւի Մովսէս եպիսկոպոսին:
- Թուղթ շրջագայական առ եկեղեցիս Յուրտաւայ (606 թ.):
- Թուղթ առ Պետրոս Վրացի (606 թ.):
- Տեսոն Կիրովնի ի Վրթանիս:

¹ Տե՛ս «Էջմիածին», 1970, Զ-Է, էջ 89-93, բնագրի արտատպութիւնը տե՛ս Երուանդ Մելքոնեան. քանակներն ու ղիւանագէտը (1944-1997), Երեւան, 2003, էջ 13-31:

² Տե՛ս Հ. Գ. Զարբհանալեան, Յաղագս բարեխօսութեան սրբոց, Վենետիկ-Ս. Ղազար, 1852, Յաւելուած:

³ Տե՛ս ԳԹ, էջ 234-241, 246-247, 270-271, 276-277, 278-279, 280-282, 285-291:

⁴ Տե՛ս Ուխտանէս, Բ, էջ 26-27, 41, 49-53:

- Պատասխանի քղթոյն Սորմենայ, որ առ Վրթանէս եւ վարդապետ գրեաց: *Ըստ եղիչէ արքեպիսկոպոս Դուրեանի՝ այս Թուղթը լոկ թիւրիմացաբար է վերագրուել Վրթանէս Բերթողի գրչին¹: Նա Թղթի խորագրում առկայ «վարդապետ» բառը համարում է անձնանուն: Ելնելով Թղթում տեղ գտած մի շարք արտայայտութիւններից եւ այն փաստից, որ Ուխտանէսը թիւրիմացաբար Վրթանէս Բերթողին նոյնացնում է Սմբատ մարզպանի եղբայր «Հայոց Շարսաղար» պատուանունը կրող Վարդապետի հետ² հետազօտողը Թղթի հեղինակութիւնը վերագրում է այդ իշխանին, որ (քանիցս յիշատակում է անուան կայուն եւ յստակ գրութեամբ «Վարդապետ Հայոց Շարսաղար», «Վարդապետ Քչկան»³), իբրեւ դաւանական խնդիրներին իրագեկ, արտօնութիւն էր ստացել տեղապահից՝ Վրթանէս Բերթողից, պատասխանելու Արեւմտահայոց ստրատելատ կամ զօրավար Սորմենէսի նամակին:*

Հակուած լինելով ընդունել այս վերագրումը՝ մենք, այնուամենայնիւ, երկը զետեղում ենք Վրթանէս Բերթողի ժառանգութեան մէջ այն տրամաբանութեամբ, որ Թուղթը շարագրուած է Վրթանէս Բերթողի, իբրեւ տեղապահի, գիտութեամբ եւ արտօնութեամբ:

Թղթում քննադատում է Յունահայոց Յովհան Բագաւանցի հակաթող կաթողիկոսի որդեգրած քաղկեդոնական վարդապետութիւնը: Թղթի հեղինակը սթափութեան կոչ է ուղղում Յունահայոց եկեղեցուն՝ հեռու մնալու աղանդաւորական խոտոր ընթացքից, առաջնորդուելու բացառապէս առաջին երեք տիեզերաժողովների ընդունած որոշումներով: Յոյց տալով Խաչեալի՝ մարմնի բնութեամբ մարդկային եւ տնօրինական միաւորութեամբ աստուածային լինելը՝ հեղինակը վարդապետօրէն հաստատագրում է Խաչի (Խաչեալի)՝ Սուրբ Երրորդութեանը պատկանելը, որով ապացուցում է Խաչի փրկաբանական արժէքը: Ի դէպ, դարձեալ մատնանշելով Քրիստոսի աստուածամարդկային բնութեան տնօրինական իրողութիւնը՝ Թղթում կիրարկում է «աստուածախառն մարմին» արտայայտութիւնը, որով հեղինակը հաւատարիմ է մնում Հայոց եկեղեցու քրիստոսաբանական աւանդոյթին⁴:

Թղթերից գատ, Վրթանէսի գրչին է պատկանում Համառուտ պատմութիւն շինութեան վկայարանի Հոփսիմեանց ի Կոմիտասայ կաթողիկոսէ (618-619 թթ.) երկը: Նոր Հայկազեան բառգրքի կազմողները օգտուել են դրանից⁵, սակայն ցարդ այդ գործն անյայտ է:

Յակոբ Քէոսեան

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

1. **Հ. Ներսէս Ակիմեան**, Վրթանէս վարդապետ Քերթող եւ իւր երկասիրութիւնը, ԶԱ, 1910, էջ 8-10, 37-46:
2. **Նղիշէ արքեպ. Դուրեան**, Վրթանէս Քերթողի Յաղագս պատկերամարտից. տե՛ս **Ն. արքեպ. Դուրեան**, Ամբողջ երկեր Նղիշէ պատրիարք Դուրեանի. Ոստումնա-

¹ Տե՛ս «Սիոն», 1928, էջ 305-312:

² Ուխտանէս, Բ, էջ 60

³ ԳԹ, էջ 242-243, 296-297, 322, 325

⁴ Ագաթանգեղոս, Պատմութիւն Հայոց. տե՛ս ՄՀ, հտ. Բ, էջ 1474, 1480:

⁵ Տե՛ս ՆՀԲ, հտ. Ա, էջ 19:

սիրութիւնք եւ քննադատութիւնք, 2, Երուսաղէմ, տպ. Սրբոց Յակոբեանց, 1935, էջ 299-308:

3. **Սիրարփի Տէր-Ներսէսեան**, *Է դարի մի երկ՝ նուիրուած պատկերների պաշտպանութեանը*. տե՛ս **Ս. Տէր-Ներսէսեան**, *Հայ արուեստը միջնադարում*, աշխատութիւնների ժողովածոյ, Երեւան, 1975, էջ 7-30:
4. **Նրուանդ Մելֆոնեան**, *Վրթանէս Քերթողը եւ պատկերամարտութիւնը*, «Էջմիածին», 1970, 2-Է, էջ 86-97:
5. **Յակոբ Քէոսէեան**, *Վրթանէս Քերթողի «Յաղագս պատկերամարտից»* երկը. տե՛ս **Յ. Քէոսէեան**, *Դրուագներ հայ միջնադարեան արուեստի աստուածաբանութեան*, Ս. Էջմիածին, 1995, էջ 114-144:
6. **Polykarp P. S.** *Die Abhandlung, Gegen die Bilderstürmes von Vrthanes Kherthox aus dem Armenischen übersetzt*, - "Wiener zeitschrift für die Kunde des Morgenlandes", Wiener, XXVI, 1912, SS. 275-293.

ՏԱՌԱՆԻՇԵՐ ԲԱՂԴԱՏՈՒԱԾ ԶԵՆԱԳՐԵՐԻ ԵՒ ՀԱՄԱՌՕՏԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ա - ՄՄ ձեռ. թիւ 3062, ժամանակ՝ 1765-1767 թթ.

Բ - ՄՄ ձեռ. թիւ 4381, ժամանակ՝ ժԹ դ.

Գ - **Հ. Գ. Զարբհանալեան**, *Յաղագս բարեխօսութեան սրբոց*, Վենետիկ-Ս. Ղազար, 1852, յաւելուած

Դ - ՄՄ ձեռ. թիւ 2966, ժամանակ՝ ժԷ դ.

Ա - **ԳԹ**, էջ 246-247, 270-271, 278-279, 280-282

Բ - **Ուխտանէս**, Բ, էջ 26-27, 32-33, 42-44, 44-45

ՅԱՂԱԳՍ ՊԱՏԿԵՐԱՄԱՐՏԻՑ

1 Ի կենսաբեր լուսոյն զարդարին ամենայն արարածք, եւ ի ճառագայթ նորա¹ նորոգ պայծառացեալ բերկրին երկինք եւ երկիր, քանզի լոյսն ճշմարտութեան ելից լուսով զամենայն տիեզերս, փարատեաց զմէզ խաւարային ի ստուերամած եւ թանճրացեալ սրտից եւ լցաւ աշխարհ Աստուածածանաւթ վարդապետութեամբ: 2 Իսկ մթաւորական² ուսմանն խորհաւոյք, որք շրջին յաղջամուղջ³ խաւար ընդվայրածք շաղեալք⁴ սասանեն, զանհեթեթս պատրեն զմիտս⁵ անմեղաց եւ մուծանեն հերձուածս յեկեղեցի: 3 Ոչ է արժան, ասեն, նկարս եւ պատկերս յեկեղեցիս առնել. եւ բերեն վկայութիւն ի Հնոց կտակարանաց, զոր վասն հեթանոսաց կռապաշտութեան էր ասացեալ, վասնորոյ եւ ամբաստան լինէին մարգարէքն: 4 Բայց մերս ոչ նմանի նոցա, որ յաղագս Քրիստոսի եւ ընտրելոց իւրոց: 5 Եւ ոչ եթէ ի բանից ճարտարութենէ, այլ Գրոց վկայութեամբ ասասցուք, որպէս եւ պատմիչք պատուիրանացն ուսուցին⁶ մեզ ստուգապէս⁷:

6 Քանզի զպատկերացն աւրինակ նախ Մովսէս արար ի խորանին հրամանաւն Աստուծոյ : 7 Եւ քերովբէս⁸ ոսկիս, ճախարակեայս, թեւաւորս, մարդակերպս ի վերայ քաւութեանն, յորոյ միջոյ խաւսէր⁹ Տէրն տերանց, զոր եւ առաքեալ ի վկա-

յութիւն հաստատէ՝ քերովբէքն փառաց, որք հովանի ունէին ի վերայ քաւութեանն, որ ի մեծի¹¹ խորհրդոյ աւրինակ: 8 Նոյնպէս¹² եւ զվարագոյրն, զոր Տէրն ասաց առնել նարաւտով¹³, նկարուք¹⁴ ի պէսպէս¹⁵ յաւրինուածեալ զարդիւք, որ է բեհեզ եւ ծիրանի, կարմիր¹⁶ եւ կապուտակ. ոչ ապաքէն դեղք էին¹⁷ երանգք նկարուց վարագուրին, եւ նկարք վարագուրին՝ քերուաւբէքս: 9 Այնպէս¹⁸ եւ Սողոմոն արար ի Տաճարին քերովբէս ի կիպարիս¹⁹ փայտէ եւ պատեաց ոսկով եւ ոչ միայն²⁰ որ ի դաբիրն էին քերուաւբէք այլ ի²¹ յորման եւ ի դրունս եւ ի սեամս²² քերուաւբէքն այլ եւ յորման. շուրջանակի գրեաց գրչաւ²³ քերուաւբէս եւ արմաւենիս եւ թուուցեալ թիթեղունս, եւ ոչ խստեաց Աստուած այլ կոչեաց Տաճար անուան իւրոյ: 10 Եւ հոգեկիր մարգարէն Եղեկիէլ, տեսին զոր ետես, ոչ իբրեւ զայլ²⁴ որ ի մարգարէիցն եւ կամ պատգամախաւսաւք, այլ աստուածատես գուշակմամբ բարբառեալ²⁵ ասէր. 11 Եղ

1 Ա եւ Դ ունեն Աննա օրինոփ

2 Գ ուսմանց խոհալփ

3 Ա չիփ խաւար ընդվայրածք շաղեալփ

4 Դ շայլեալփ

5 Գ գսիրտս

6 ԱԳ ասացին

7 ԲԳ չիփ ստուգապէս

8 Բ քերուքս / Գ քերուքս

9 Բ չիփ յորոյ ... փաւուքեանցն

10 Գ չիփ Տէրն ... փաւուքեանցն

11 Ա խորհրդոց փիլ խորհրդոյ օրինակ

12 Գ Սոյնպէս

13 Բ նարաւտաւ

14 Ա նկարովս

15 Գ յօրինուածեալփ զարդարեալ / Դ յօրինուածովփ զարդարեալ

16 ԱԳ չիփ կարմիր

17 Բ չիփ երանգփ նկարուց վարագուրին / Գ կաւաւ նարաւտուց

18 ԳԴ սոյն օրինակ փիլ Այնպէս

19 Բ կիպարիս

20 Բացի Ա-ից միւս ձեռագրերում չիփ որ ի դաբիրն: Ըստ Անտոնեանի երրայական փոխառութիւն է եւ նշանակում է տաճարի ներքին մաս, հաւանաբար՝ զոհարան: / Բ ի դաբիրն

21 Գ եւ փիլ ի

22 Բացի Ա եւ Դ միւս ձեռագրերում չիփ քերուաւբէքն այլ եւ յորման

23 Բ գրչով

24 Բ ոչ ի մարդս փիլ ոփ ի մարգարէիցն եւ կամ պատգամախոսով

25 ԱԳԴ բարբառէր

զիս Տէր ի վերայ լերին մինչ¹ բարձոյ շոյժ, եւ ի վերայ նորա իբրեւ զշինուած³ քաղաքի, եւ տարաւ զիս ի ներքս, եւ տեսի ի նմա Տանար եւ ⁴այր մի ի նմա ահեղ եւ զարմանալի, եւ փայլատակումք հատանէին ⁵ի նմանէ իբրեւ ի պղնձոյ, եւ կայր ի վերայ դրանն եւ ի ձեռին իւրում ունէր լար շինողաց եւ ձաւղ չափոյ եւ ասէ ցիս. «Որդի մարդոյ տես եւ ի միտ առ զամենայն ինչ⁶, որ ի սմա է, զի վասն ցուցանելոյ քեզ եկի այսր»: 12 եւ տեսի զտանարն նկարեալ շուրջանակի ներքոյ եւ արտաքոյ քերովքէք եւ արմաւենիք ի յատակէն մինչեւ ցվերնայարկն, եւ ոչ միայն Տանարն էր նկարեալ, այլեւ պատշգամբն, եւ դրումք եւ սեղանն Տեառն: 13 եւ էին քերովքէք մարդակերպք երկու երկու ամենեքին եւ արմաւենի ի մէջ երկոցունց, որ է մեծի սփանչելեաց նորա ցոյց⁷:

14 Արդ, զի՞նչ ասիցես⁷ յաղագս սորա, ⁸ով մարդ, որ Հիւանդ ես մտաւք, զի վասն Մովսէսի եւ Սողոմոնի յաւրինուածոյն եւ քերաւքէիցն ասացեր, թէ ձեռագործք են⁹, իսկ զսա ¹⁰զի՞նչ Համարիցես¹¹, զոր Աստուծոյ իւրոյ¹² է ցուցեալ: 15 Ահա յայտ եղեւ, զի որ յառաջնոցն պատկերք էին, ի պատիւ եւ ¹³ի սպասաւորութիւն երկրպագութեան փառաց Աստուածութեան: 16 Այս ի Հնոց գրոց¹⁴ ասացեալ: 17 Իսկ ի Նորոց կտակարանաց ասէ Պաւղոսն ցԱթե-

նացիսն. 18 Շրջեալ եւ տեսեալ զպաշտամունս ձեր՝ գտի բագին մի, ¹⁵յորում գրեալ էր. «Անծանաւթի Աստուծոյ». զոր դուք յանծանաւթ պաշտէք, եւ զնոյն պատմեմ ձեզ¹⁶: 19 Մի՞թէ Աստուած էր բագինն. բայց զի յանուն¹⁶ Աստուծոյ պատուէին, զնոյն եւ Պաւղոս վկայեաց: 20 Եւ մեք ոչ եթէ ¹⁷ճշմարիտ Աստուած ասեմք ¹⁸զպատկերս եւ զնկարս, այլ յանուն Աստուծոյ նկարեմք որպէս երեւեցաւն, զոր Եսայի ասէ զձեռնեղն, երեմիա՝ զընդ մարդկան շրջելն, եւ Դաւիթ զչարհարանացն եւ զթաղման, եւ Եզեկիէլ եւ Ովսէէ՝ զՅարութենէն, Դանիէլ եւ Զաքարիա՝ զերկրորդ գալստենէն, Նաոււմ եւ Մաղաքիա՝ զդատաստանէն, քանզի նոքա նշանակաւ պատմեցին¹⁹ մեզ ²⁰եւ է որ եղեւ ²¹եւ է որ լինելոց է, եւ մեք զնոյն նկարեմք, զոր ի Գիրսն գրեալ է, զի եւ զերն դեղ է եւ նիւթք պատկերաց: 21 Նաեւ վարդապետք եկեղեցւոյ յիշատակեն յաղագս²² պատկերաց, որպէս Յոհանէս²³ Կոստանդնուպոլսի Եպիսկոպոս յայն ճառի, որ ասէ²⁴ առ լուսաւորեալսն, մի փոքր յառաջ մատուցեալ ասէ. «Զորաւրինակ պատկերք պղնձիք թագաւորականք ²⁵անշունչք են եւ անզգայք, որ փախչին ի նոսա մարդիկ ապրեցուցանեն ոչ զի պղինձն²⁶ է, այլ վասն զի թագաւորաց է»: 22 Եւ դու ըստ այնմ աւրինակի իմացիր, ով Հերետիկոսդ: 23 Եւ դարձեալ յայն ճառի, որ ասէ. «Ոչ է պարտ

1 Բ չիք միոյ
 2 Գ չիք յոյժ ... զշինուած
 3 Բ զշինած
 4 ԱԳ չիք այր մի ... զարմանալի
 5 ԱԳԳ չիք ի նմանէ
 6 Բ չիք ինչ
 * Տէ՛՞ Եւսէ՛՛ Խ 2՛:
 7 Բ ասացեր
 8 ԱԳ ով դու փխ ով մարդ
 9 Գ էին
 10 Գ ունի անիմաստ շինել
 11 Ա հրամայես / Դ համարեսցիս
 12 Բ չիք իւրոյ
 13 ԲԳ չիք ի սպասաւորութիւն
 14 Բ գրեաց

15 Բ չիք յորում գրեալ էր
 Զ Գործ. ԺԷ 23
 16 Բ զանուն
 17 ԱԳԳ Աստուած ճշմարիտ
 18 ԱԳ զպատկերաց նկարս
 19 Ա պատմէին
 20 Բ չիք եւ է
 21 Բ չիք եւ է
 22 Գ վասն
 23 ԲԳ Յօհան
 24 Բ չիք ասէ
 25 ԱԳԳ չիք անշունչք ... ապրեցուցանեն, Բ կրկնում է
 26 Բ ի պղնձէ

անցանել զաստուածային գրով. ապա, ա- սէ, ոչ տեսանէք ի թագաւորական պատ- կերսն, զի ի վեր անդ կայ¹ պատկերն եւ ըզթագաւորին զիր² ունի գրեալ եւ ի խո- նարհ խարսխին գրեալ են թագաւորին նա- հատակութիւնք, ³յաղթութիւնք, իրաց ուղղութիւնք. նոյնպէս եւ ⁴ի մաշկսն է տեսանել թագաւորական պատկերն ⁵ի վե- րայ եւ ի ստորեւն առաքինութիւնք, յաղ- թութիւնքն ամենայն»:

24 Կամ զի⁶նչ արդեաւք ասիցես զպատկերն Տեառն, զոր Անան⁶ հաւատա- րիմ թագաւորին Աբգարու, նկարեաց⁷ յան- դիման Քրիստոսի, տեսութեամբ իսկ. զոր եւ այժմ ասեն զոլ ի մեծ եկեղեցւոջն Ուռ- հայի:

25 Եւ Սեւերիանոս եպիսկոպոս ասէ. «Զորաւրինակ թագաւորի ⁸ի բացեայ եղե- լոյ պատկերն⁹ նորա ընու զտեղի թագաւո- րին, եւ երկրպագանեն իշխանք եւ զտաւնս մասոյ¹⁰ կատարեն. պետք¹¹ հան- դիպին¹² եւ ուամիկք երկիրպագանեն ոչ ի տախտակն հայելով, այլ ի պատկեր թա- գաւորին, ոչ ի բնութիւն հային¹³, այլ որ ի գրովն տպաւորեալ է. եւ եթէ մահկանացու թագաւորի պատկեր այնքան զաւրանայ, որչափ եւս առաւել անմահի¹⁴ թագաւորին կերպարան եւ պատկերն»:

1 Բ չի՛կ կայ
2 Բացի Բ, միւս ձեռագրերը չի՛կ գիր
3 Գ չի՛կ յաղթութիւնք, իրաց ուղղութիւնք
4 Բ ի մշակսն
5 Բ չի՛կ ի վերայ ... ստորեւն
6 Բ չի՛կ Անան / Գ ունի աստուածային
7 Գ նկարեալ
8 Ա ի քաց
9 ԱԳ եւ պատկերն
10 Բ ամսոց
11 Բ թէ պետք
12 Բ հանդիպէի
13 Բ հօրն
14 Բ անմահ

էին եկեղեցւոյ, եւ թէ զսոցա գիրս¹⁵ կամիս ուսանել¹⁶ զնոյն պատմեն: 27 Այսպէս եւ ¹⁷սուրբն Գրիգոր Հայոց Լուսաւորիչն ասէ յաղաւթսն իւրում. «¹⁸Փոխանակ զրաւչե- լոցն փայտից զնաչն իւր կանգնեաց ի մէջ տիեզերաց, եւ զի սովոր էին մարդիկ երկր- պագանել պատկերացն մեռելոց, եղաւ ինքն մեռեալ պատկեր ի վերայ ինչին, մեռաւ եւ անշնչացաւ, զի հաստատեսցեն¹⁹ խաչին փայտի երկիրպագանել եւ ²⁰որ ի վերայ նորա պատկերն եւ մարդադէմն ի- ցէ, զի զպատկերագործսն եւ զպատկերա- սէրսն եւ զպատկերապաշտսն յիւր պատ- կեր աստուածութեանն հնազանդեսցուս- ցէ»:

28 Արդ ²¹եթէ մերոցս բանից ոչ հա- ւատայք, զգիրս պարտ է քննել եւ ի վերայ հասանել. բայց դուք ի գրոց այնչափ հեռի էք, որպէս երկինք՝ յերկրէ:

29 Բագու՛մ եւ այլ վկայութիւնք են ի Գրոց Սրբոց, քանզի ամենայն ինչ տեսա- նելի է, որ միտս ունին, զի ականջք²² լսեն, եւ միտք իմանան, եւ առանց մտաց աչաց մարմնոյ աչք կուրացեալ զտանին:

30 Բայց զարմանք մի այս է, որ զպատ- գամսն ընդունիք եւ զիշխանն հալածէք, նշանին երկիրպագանէք եւ ի թագաւորն քարածիգ լինիք, զխաչն պատուէք եւ զնաչելեալն²³ թշնամանէք:

31 Այսպէս Մանիքեցիքն եւ Մարկիոնացիքն առ ա- չաւք համարին զճշմարտութեամբ մարմ- նանալ Փրկչին, եւ յորժամ տեսանեն զպատկերս՝ զժղմնին²⁴ զայրագնեալք եւ մատուցեալք թշնամանեն:

15 ԱԳԳ գիրս
16 ԱԲԳ տեսանել
17 ԱԳԳ սրբոյն Գրիգորի հայոց Լուսաւորչին
18 ԱԳ չի՛կ Փոխանակ ... երկրպագանել
19 Գ հաւատացեն
20 Բ չի՛կ որ ի
21 Բ թէպէտ եւ մեր բանիցս չհաւատայք
22 ԱԲԳ միտք
23 Գ զնաչեալն
24 Գ զժղմնին
25 Բ միթէ մեր չիցէ / Գ միթէ ոչ իցէ

չիցէ տեսեալ զմարգարէսն, տեսեալ¹ է եւ քննեալ, զի նոքա վասն կռապաշտութեանն աղաղակէին ըստ այնմ, թէ կուո՞ք հեթանոսաց դեւք եմք², բայց ոչ ուրեք գտանեմք զրեալ, եթէ պատկերք եկեղեցւոյ³ կամ քրիստոնէից ասեն դեւք, այլ զկռոցն ամբաստան լինին մարգարէքն⁴: 33 Նաեւ յեկեղեցական պատմութեանն ասէ, զոր Եւսեբի ժամանակագրի հաստատեալ էի եաւթերորդ դարու թեանն ի եաւթն եւ տասներորդ ճառին, վասն սքանչելի նշանացն, որ եղեն, ասէ, ի Պեննադայ ի քաղաքի⁵ մեծամեծ գործոցն վասն Փրկչին մերոյ: 34 «Այլ քանզի զայս⁶ քաղաք յիշեցաք մեք, ասէ, ոչ է արժան անցանել զսորա⁷ պատմութեամբ, զի արժանի է սա յիշատակաց այնոցիկ, որ գայցեն զկնի մեր վասն կնոջն տեռատեսի, որոյ բղիւումն արեան խաղացեալ ելանէր, զոր ուսաք մեք ի սուրբ Աւետարանէն, որ բժշկեցաւ ի ցաւոց անտի⁸ ի Փրկչէն մերմէ⁹ յայնմ քաղաքի, որ ասեն, թէ էր նա, եւ տուն նորա յայտնի է անդէն ի քաղաքին եւ շնորհք ողորմութեանն, որ եղեն ի կինն¹⁰ նշան սքանչելեացն Աստուծոյ, զի առաջի դրաց տանն¹¹ նորա կայ ի¹² վերայ բարձր վիմի պատկեր պղնձի կնոջ մարդոյ իջեալ ի ծունգս իւր եւ սփռեալ¹³ զձեռս իւր առաջի իւր՝ աղաչէ ըստ նորա¹⁴ նմա-

նութեան, եւ ընդդէմ նորուն կայ դարձեալ պատկեր պղնձի առն մարդոյ, որ կանգնեալ է եւ կայ¹⁵ արկեալ զիւրեւ մեկնոց¹⁶ եւ կարկառեալ ունի զձեռն իւր առ կինն, եւ ի կողմանէ ոտից նորա¹⁷ ի վերոյ քան զհանդերձն բուսեալ է արմատ ինչ բոյս¹⁸, որ աւտար է յամենայն արմատոց¹⁹ տեսլեամբ իւրով եւ ելանէ մինչեւ ի դրաւշակ հանդերձի նորա եւ է նա դեղ ամենայն ցաւոց, այս անդրի ի նմանութիւն Փրկչին մերոյ է, որպէս եւ ասեն՝ կայ մնայ մինչեւ յաւուրս մեր, եւ տեսաք մեք զնա աչաւք մերովք ի ժամանակի իբրեւ չոգաք մեք ի քաղաքն յայն»:³⁵ Բայց²⁰ ոչինչ է սա մեծ քան զայն, որ հաւատացին ի Քրիստոս յարանց հեթանոսաց եւ նկարեցին դեղով զպատկերսն Պաւղոսի եւ Պետրոսի եւ զնորուն իսկ զՔրիստոսի եւ կայ²¹ մինչեւ ցայսաւր ժամանակի:

36 Եւ արդ, չիցէ ձեր տեսեալ զգիրս զայս, ով ընկեր, որ հակառակ կայք²² պատուիրանացն Աստուծոյ: 37²³ Ընկեր ասեմ, ոչ վասն ուղղափառութեան հաւատոյ ասեմ ընկեր, այլ ըստ այնմ, որ լուսւն ի Տեառնէ մերմէ²⁴ Յիսուսէ Քրիստոսէ, թէ՛ Ընկեր, վասն որոյ եկիրդ²⁵: 38 Զի թէ ընթերցեալ էք եւ ոչ գիտէք, ապա առ ձեզ կատարի բան առաքելոյն²⁵, որ ասէ. 39 Որոց Աստուած աշխարհիս այսորիկ կուրացոյց զմիտս²⁶ անհաւատիցն, զի մի՛ ծագես-

1 Գ հերկեալ
 2 Բ չի՞ք ազ դեւք եմ
 3 Ս ազ.՝ Գ, Լ, 5
 4 Բ չի՞ք կամ ... զկռոցն
 5 Ա.Գ.Դ չի՞ք մարգարէքն
 6 Գ մեծագործոցն փիս մեծամեծ գործոցն
 7 Բ չի՞ք քաղաք ... զսորա
 8 Ա.Գ զայս
 9 Բ չի՞ք անտի
 10 Բ Գ չի՞ք յայնմ ... ի կինն
 11 Գ.Դ շարունակում եմ ի Փրկչէն մերմէ՛ նշան սփռեցիւս սոցա մինչեւ ցայսօր ժամանակի
 12 Ա.Գ չի՞ք տանն
 13 Գ վերնաբարձր փիս վերայ բարձր
 14 Ա.Բ.Գ չի՞ք զձեռս իւր
 15 Բ չի՞ք նորա

15 Ա.Գ ունեն անիմաստ եւ
 16 Գ կրկնոց / Ա.Դ մերկնոց
 17 Բ ի վերայ
 18 Ա.Գ.Դ չի՞ք բոյս
 19 Ա չի՞ք տեսլեամբ իւրով
 20 Գ ոչ ինչ է
 21 Բ ունին փիս կայ
 22 Գ կաս
 23 Բ այստեղ ընդհատում է: Ամբողջ շարունակութիւնից կան միայն մի քանի անկապ բառեր:
 24 Գ չի՞ք Յիսուսէ Քրիստոսէ
 25 Մ առ.՝ Ի, 9, 50
 26 Դ ունի աւելորդ մարգարէի
 26 Գ զսիրտս

ցի ի¹ նուսա լուսաւորութիւն Աւետարանի փառացն Քրիստոսի^ա. այլովք հանդերձ. ապա թէ ²չէ ընթերցեալ ձեր, խնդրել արժան է եւ քննել եւ գիտել զբարին եւ զչարն եւ ընտրել զաստուածայինսն եւ զգիւականսն:

40 Եւ զիարդ ոչ գիտէք, զի ի մեհեանս կռոցն է զբողմեալ³ Որմիզդ⁴, որ է Արամագդ, եւ պոռնկութիւնք իւր եւ կախարդութիւնք, իսկ յեկեղեցիս Աստուծոյ տեսանեմք նկարեալ զսուրբ Կոյս Աստուածածին եւ ի գիրկս իւր ունելով զՔրիստոս իբրեւ յայնժամ զարարիչն իւր եւ զՈրդի եւ զստեղծիչն ամենայնի:

41 Իսկ մեհեանս կռոցն Անահիտ եւ պղծութիւնք իւր եւ պատիրք: 42 Իսկ յեկեղեցիս քրիստոնէից եւ ի յարկս վկայից Աստուծոյ տեսանեմք նկարեալ զսուրբն Գրիգոր եւ աստուածահաճոյ չարչարանք իւր եւ սուրբ առաքիւնութիւնք եւ զսուրբն⁵ Ստեփաննոս Նախավկայն ի մէջ քարկոծողացն⁶, զերանելի եւ ⁷զսուրբ կանայսն զԳայրիանէ եւ զՀովսիսիմէ՝ հանդերձ ամենայն սուրբ ընկերաւք եւ յաղթող նահատակութեամբ⁸ նոյնպէս, եւ զայլ առաքիւնիս եւ զպատուականս եւ զհրեշտակակրանս, զորս ոչ բաւեմք ընդ համար արկանել⁹: 43 Ի մեհեանս սնտոիցն Աստղիկ եւ Ափրոզիտէս¹⁰, զոր մայր ցանկութեանց կոչեն ամենայն¹¹ հեթանոսք, եւ արբեցութիւնք նոցա եւ անառակութիւնք, իսկ յե-

կեղեցիս¹² Աստուծոյ՝ Խաչն տերունական եւ խաչակիր ¹³զունդք առաքելոց եւ մարգարէից, որք բարձին ի միջոյ զկուսպաշտութիւն¹⁴ ամենեցուն եւ ածին զտիեզերս յաստուածպաշտութիւն եւ յամալթ արարին զսատանայ եւ զզաւրս նորա: 44 Քանզի յեկեղեցիս Աստուծոյ տեսանեմք¹⁵ նկարեալ զամենայն սքանչելագործութիւնս Քրիստոսի¹⁶, զոր արար, որպէս եւ ի Գիրս գրեալ է, որպէս եւ յառաջն ասացաք, զոր գուշակեցին¹⁷ մեզ մարգարէքն. զծնանելն ասեմ եւ զմկրտելն, զչարչարանսն, զխաչելութիւնն, զթաղումն, զյարութիւն, զհամբառնալ¹⁸ յերկինս. զայդ ամենայն նկարեն յեկեղեցիս, զոր Գիրք Սուրբք պատմեն, Ոչ¹⁹ ապաքէն դեղով գրեալ է զգիրս եւ զնոյն բան դեղովք նկարեալ է յեկեղեցիս. ի գրոցն ականջք միայն²⁰ լսեն, իսկ զնկարսն աչաւք տեսանեն եւ ականջաւք լսեն եւ ²¹սրտիւք հաւատան:

45 Ահա յայտ է, զի չէ արտաքոյ Գրոց պաշտել զպատկերսն, եւ եթէ խորհրդիւ ոք քննէ, ճշմարիտ գայ, եւ վրիպեալ զտանին հերետիկոսքն, որ հակառակաբանեն եւ ասեն. «Վասն այսորիկ խոտան համարիմք, զի անխաւսք են եւ անբանք»:

46 Արդ, մի⁶ թէ Տապանակն Աստուծոյ խաւսէր, յորժամ զԴագովն²² բերանսեալ կործանեաց եւ զԱզովտոս եւ զԳէթ եւ զԱսկողովն²³ զքաղաք այլազգեացն ե-

1 Գ առ փիս ի
ա Բ Կ ր Գ Կ 4
2 Գ ունի միայն ձեր ընթերցեալ
3 Գ դրոշեալ
4 ԱԳ գՈրմիզդ
5 Գ չիբ գուրբն
6 Գ քարկոծչացն
7 Գ զփառաւոր կոյսն Սուրբ Գայանէ ...
8 Գ ցահատակոթ
9 Գ անցուցանել փիս արկանել
10 ԱԳ Եպրափրոզիտես
11 ԱԳ չիբ ամենայն

12 Գ-ում միշտ կայ յեկեղեցւոջ
13 ԱԳ գրեալն յառաքելոց եւ ի մարգարէից
14 Գ զամբարշտութիւն
15 Գ չիբ տեսանեմք
16 ԱԳ Աստուծոյ փիս Քրիստոսի
17 ԱԳ գուշակն եղեն
18 Գ զհամբարձումն
19 Գ չիբ Ոչ
20 ԱԳ մտացն
21 Գ որ սրտիւ իմանան՝ հաւատան
22 Գ զԴագոն
23 Գ զԱսկաղոնայ

Հար¹ Հարուածովք, մինչեւ բողոք բարձեալ
 ասկողովնացիքն ասէին. 47 Անդէ⁶ր դար-
 Ժաւ տապանակդ Աստուծոյ իսրայէլի առ
 մեզ սպանանել² զմեզ եւ զժողովուրդս
 մեր³: 48 Մի⁶թէ Խաչն Քրիստոսի խաւսե-
 ցաւ, որ ի քաղաքին զմեռեալսն³ կենդա-
 նացոյց եւ Հրաշագործութիւնս բազումս է
 արարեալ մինչեւ յաւուրս⁴ մեր, որ է պար-
 ծանք Հրեշտակաց եւ փրկութիւն մարդ-
 կան եւ արհաւիրք դիւայ: 49 Եւ արդ զու-
 գաւորեալ⁵ շարամանին նոր պատուիրանք
 ըստ Հնոցն եւ մեզ վկայեն շնորհիւն⁶
 Քրիստոսի, քանզի եւ զտուփս⁷ Աւետարա-
 նին տեսանեմք նկարեալ, ոչ միայն յոսկ-
 ւոյ եւ յարծաթոյ այլ եւ յոսկերաց⁸ փղաց
 եւ կարմիր մորթոց կազմեալ եւ մեք յոր-
 ժամ երկիրպագանեմք սրբոյ Աւետարանին
 կամ Համբուրեմք, ոչ եթէ փղին ոսկերացն
 մատուցանեմք զերկրպագութիւն կամ
 Գլայքային, որ յաշխարհէ բարբարոսացն է
 եկեալ ի վաճառ, այլ Բանի Փրկչին¹⁰, որ ի
 մագաղաթին¹¹ գրեալ է: 50 Այսպէս եւ
 Տէրն Փառաց նստեալ ի յաւանակի եւ ի
 մերձենալ ի քաղաքն, ելին ընդ առաջ¹²
 ծերք եւ տղայք¹³ ոստաւք ձիթենեաւք եւ
 ոստաւք արմաւենեաւք եւ աւրհնէին գո-
 վէին եւ երկիրպագանէին. ոչ եթէ իշոյն
 երկրպագանէին, այլ Քրիստոսի Որդւոյն
 Աստուծոյ, որ ի վերայ նորա¹⁴ նստեալն էր:
 51 Այսպէս եւ պատկերացն երկրպագանել

ոչ վասն դեղոցն է, այլ վասն Քրիստոսի,
 յորոյ անուն նկարեցաւն: 52 Այլ¹⁵ արդ
 զի⁶նչ նմանութիւն է աստուածային պատ-
 կերացն¹⁶ Հեթանոսաց պղծութեանն. վասն
 որոյ Հերետիկոսք բիծս կարկատեն եւ Հեր-
 ձուածս մուծանեն ի կորուստ անձանց եւ
 բնաւ լսողաց, զոր¹⁷ տալոց եւ Հատուցա-
 նելոց են զանանցական վրէժս¹⁸ տանջա-
 նաց գեհէնին՝ Հանդերձ ամենայն կամակ-
 ցաւք¹⁹ իւրեանց եւ գործակցաւք, որում
 յիրաւի եւ ի դէպ ասաց երջանիկ մարդա-
 րէն Ովսէէ. 53 Որոգայք²⁰ գայթակղութեան
 ի ճանապարհս նոցա, վասն զի մոլութիւն
 ի տան Աստուծոյ տնկեցիմք. եւ միւս եւս.
 54 Վայ որ արբուցանէ ընկերին իւրում
 հրապոյրս պղտորս²: 55 Եւ արդարեւ իսկ
 Հրապուրանաւք եւ Հաղբիւք²¹ մեղաց շա-
 ղապատին, որ²² ըստ երեբեալ են յուղիղ
 Հաւատոյ, եւ Հեղեալ²³ տապալեցան յուղիղ
 խորհրդոց: 56 Բայց ասեմ եւ ոչ լռեմ:
 57 Զոր աւրինակ²⁴ եթէ գիրս ուրուք
 խնդրեալ յարկեղաց եւ ասիցէ²⁵ զառա-
 քեալդ տուր, կամ թէ զեսայի, կամ զերե-
 միա, մի⁶թէ Եսայի ինքն իցէ եւ կամ առա-
 քեալն ինքնին, ոչ ապաքէն պատգամք
 աստուածայինք ընդ նմին եւ բանք նոցա:
 58 Եւ մեք պատկերաց նկարուք զնոսս յի-
 շեմք²⁶ եւ զառաքողսն նոցա եւ ոչ ասեմք,
 թէ սա իցէ Աստուածն, այլ յիշողութիւնն
 Աստուծոյ եւ ծառայից նորա:

1 Գ չիք եհար
 2 Գ ապականել փխ սպանանել
 3 Ը Թ. ա. գ. Ի 10
 4 Գ յորս
 5 Գ չիք գուգաւորեալ
 6 Գ շնորհոփ
 7 Գ գտիպս փխ գտուփս
 8 Ա յոսկերց
 9 Ա չիք լայնային, որ / Գ դաբային
 10 Ա չիք Փրկչին
 11 Ա. Գ գրեցաւ փխ գրեալ է
 12 Ա յառաջս
 13 Գ ոստովք ձիթենեաց եւ ոստովք արմաւենեաց
 14 Ա. Գ չիք նորա

15 Գ չիք Այլ
 16 Գ պատուիրանաց փխ պատկերացն
 17 Գ չիք տալոց եւ
 18 Գ վրէժ
 19 Ա. Գ չիք իւրեանց եւ գործակցաւք
 20 Գ որոց
 2 Ը Թ. ա. Թ 8
 4 Ը. Գ. ա. Գ 15
 21 Գ խաբից
 22 Գ ստերիւրեալ
 23 Ա. Գ եղեալ
 24 Գ եթէ ի գիրս խնդրեալ
 25 Գ ասացէ
 26 Ա չիք եւ գառափողսն ... ասեմք

59 Եւ որ գրեալն է, թէ զպատկերս յեկեղեցիս Պապ տարաւ, այդ ամենեցուն յայտնի է, թէ սուտ խաւսիք. քանզի ¹ի Հայս պատկերս ոք չգիտէր առնել մինչեւ ցայժմ, բայց ի Հոռոմոց բերէին, եւ մեր ուսմունք անտի էին, եթէ նոքա չէին կորուսեալ. եւ քան զՊապ յառաջ այլ թագաւորք էին եւ պատկերս եւ նկարս տանէին յեկեղեցիս յանուն Քրիստոսի, եւ դարձեալ զկնի Պապայ եւ այլք թագաւորք եղեն ²ի Հայս եւ հայրապետք, որպէս երանելի սուրբն Սահակ եւ Մաշտոց³ եւ Եղնիկ եւ Արձան եւ Կորիւն եւ ընկերք նոցա⁴, որ եւ ի ձեռն իսկ նոցա Հայոց դպրութիւն⁵ շնորհեցաւ ⁶ի Տեառնէ Աստուծոյ, եւ ոչ ոք ի նոցանէ վասն պատկերաց եւ նկարուց եկեղեցւոյ բանս ինչ ոք արար. բայց միայն Շմուէլ⁷ եւ Թադէոս եւ Եսայի⁸ եւ ընկերք նոցա, որ եւ գյուղովս ընդ իւրեանս ⁹ի յետս կացուցին, որպէս եւ զձեզդ, զի թէպէտ ¹⁰առ ժամանակ փայլէ կողմն հերձուածողաց, այլ ստէպ խամրի, վասնզի գստութիւն խաւսին. զի եւ մեղք իսկ առաջին ի ստութենէ ծնան, որպէս առ¹¹ Ադամաւն:

60 Քանզի ոչ եթէ իմ են բանք, այլ Գրոց Սրբոց, Հնոց եւ Նորոց կտակարանաց. եթէ կամիք Քրիստոսի Աստուծոյ ծառայել եւ սիրել զպատուիրանս նորա, զնոյն գիրս, զորոց անուանս ¹²ի սմա գրեալ է, յուզեցէք եւ յորժամ գտանիցէք¹³, նոքա¹⁴ ցուցանեն զճշմարիտ ճանապարհն Աստուծոյ:

61 Եւ վասն պատկերացն այսչափ եւեթ բաւական լիցի, որ միտս ունի:

62 Իսկ զդեղոցն, որ ասեն, թէ պիղծ են, որք յանդիմանին իսկ¹⁵ ի յինքեանց բերանոց, քանզի դեղ Գրոցն է արջասպ¹⁶ եւ զխտոր եւ կռիզ, զոր եւ ճաշակել իսկ մարթի, եւ նիւթն պատկերաց կաթն ու ձու, զառիկ, լաժուարդ, ժանգառ, ¹⁷բուռ, կիր եւ որ ¹⁸այլ ինչ է, զոր ի պէտս կերակրոց մարթի ճաշակել կամ ի պէտս բժշկութեան: ⁶³ Բայց ոչ ասեմք պիղծ, զոր եղ¹⁹ Աստուած ի վայելչութիւն երկրի, եւ ոչ անգոսնեմք իբրեւ զազիր ինչ, որ ասէքդ, թէ Հոտ գայ ի դեղոցն: ⁶⁴ Արդ իբրեւ այդպէս անաղտք²⁰ էք եւ հոգեւորք, պարտ է ձեզ ²¹ի ժամ աղաւթիցն հերձուլ զորովայնս ձեր եւ եռանդամք²² ջրով լուանալ զաղիս ձեր եւ ապա մտանել յեկեղեցի, ով չարք եւ անհնարին չարք, որ մերթ դեղոցն ահով դնէք եւ մերթ պատկերացն եւ նկարուց եւ ասէք, թէ ձեռագործք են եւ մեզ չեն արժանի, նա եւ եկեղեցիք ձեռագործք են եւ կոչին Տաճար Աստուծոյ: ⁶⁵ Զոր եւ Պաւղոս ասէր առ Տիմոթէոս. Զի գիտասցես, ասէ, որպէս պարտ իցէ քեզ ի տան Աստուծոյ շրջել, որ է եկեղեցի Աստուծոյ կենդանւոյ սիւն եւ հաստատութիւն նշմարտութեան*:

66 Արդ, առ այս զինչ ասիցէք, զի եւ սա ձեռագործ է, քանզի յայտնեալք զաներեւոյթն ճանաչեմք, եւ դեղքն եւ նկարքն յիշողութիւն է Աստուծոյ եւ ծառայից նորա: ⁶⁷ Բայց քանզի դուք վիսացեալ էք սատանայիւ եւ սուրբ

1 Գ ի հայք, ի հայս
 2 Գ ի հայք, ի հայս
 3 Գ Մեսրոպ փի Մաշտոց
 4 Ա նոցունց
 5 ԱԳ իսկ դպրութիւն
 6 Ա ի Քրիստոսէ
 7 Գ ունի պիղծն մուրհի
 8 ԱԳ Եսայ
 9 ԱԳ յետ
 10 Գ առ ժամանակ մի փայլածէ
 11 ԱԳ չիք առ
 12 ԱԳ ի սմայս
 13 Գ գտանէք

14 Ա նոցա
 15 Գ չիք իսկ
 16 ԱԳ ասպնջակն փիս արջասպ
 17 Գ բուռկիր
 18 Գ եւ այլ որ նման է սոցիւն
 19 Գ ետ
 20 ԱԳ անաղտք
 21 Գ ի ժամու
 22 Գ եռանդամք
 * Լ ՏԻՎ. Գ. 15

կոչէք զանձիս եւ նմանող էք գերեզմանաց բռելոց, ապա¹ ճշմարիտ ասաց առակողն. Մի՛ կարի արդար լինիր եւ մի՛ նարտարէր, զի մի՛ թիրեացիս²: 68 Եւ դարձեալ ասէ. Ծնունդ չար առ արդարս ունի² զանձն իւր³, որպէս եւ դուքդ³ բարձրացեալ պանծայք եւ անդուռն բերանով խաւսիք, զոր ինչ ոչ է պիտոյ:

69 Այլ մեք փութասցում յեկեղեցի Քրիստոսի մտանել ի տուէ եւ ի գիշերի հանապազար կանխեալ⁴ յաղաթս, որպէսզի կատարեսցում զպանդխտութեան ժամանակս:

70 Եւ արժանի լիցում տեսանել զԱստուած զուարթագին երեսաւ յաւուրն դատաստանի, զի յաւիտենից բարութիւնս հասանել կարասցում⁵ զի նմա փառք յաւիտեանս յաւիտենից⁶, ամէն:

1 Գ ուրեմն փ/ս ապա

2 Ժող. 1: 17

3 Գ ունիցի

4 Ընտել. 1: 12

5 Ա.Գ պանծացեալ բարձրանայք

4 Գ կանխել / Դ կանխեալ

5 Գ կարիցեմք

6 Գ չի՛լ յաւիտենից

ՊԱՏԱՍԽԱՆԻ ԹՂԹՈՅՆ ՍՈՐՍԵՆԱՅ, ՈՐ ԱՌ ՎՐԹԱՆԵՍ ԵՒ ՎԱՐԴԱՊԵՏ ԳՐԵԱՑ

1 Գիտեմք, զի բազմադէմ եւ պէսպէս աւրինակաւ խաւսեցայք ցուցանել զանձինս համախոհս եւ միաբանս ընդ մեզ հաւատով, զոր տնկեաց երանելի նահատակն Քրիստոսի եւ հայր մեր Գրիգորիոս ի մշտնջենաւոր պայծառութիւն Հայաստան աշխարհիս. համարեցաք եթէ ա՛յդպէս իցէ. վասն որոյ յուրով անգամ թախանձեալ զսրբասէր եպիսկոպոսս քննութիւն առնել, եւ ուսոյց մեզ, թէ ոչ է աւրէն առանց միաբանական ժողովոյ՝ զոր այպանեալ էր ձեր մտաց՝ ի պատասխանել անձանց թշնամանս յաճախելով. թէ յորժամ չէր իշխան՝ ընդէ՞ր զհաստատեալ սեղանսն յուղղափառացն կործանեաց. եւ վերստին մկրտութիւնս արար: 2 Վասն որոյ տեղեկացաք, եթէ ո՛չ ա՛յդպէս, այլ զկանոնակա՛նն եւ զիրաւացի՛ն կատարեաց: 3 Եւ դուք ըստ որումն անձամբ անձին յաղթել անարգանա՛ւք, քան զամենայն յաղթութիւնս առաջին եւ քաջ վարկայք, զմեր քերդողս նեոինն կարապետ առնելով՝ ոտնհար եղայք. եթէ ի Դունա այրեցեալ եւ յաւերակ եկեղեցւոջ նստի՝ եւ նորոգածեւութիւն վարդապետէ: 4 Նեոինն ասանջական եւ առաջնորդ, եւ կարապետ զնա պարտ է ասել¹. որ ազգի միոյ ապստամբութեան եղեալ պատճառ, եւ զարս ի կանանց վարատելոյ եւ զկանայս յարանց, յորոց բազումք թափառական կենաւք ի տար աշխարհ վախճանեցան, թաղման անգամ ո՛չ լինելով արժանի եւ մանաւանդ յիւր բնակ եւ յուղղափառ վարդապետաց կարգէ՝ սրանալով է փախու-

ցեալ, որպէս զամպարիշտն՝ առանց ուրուք հալածելոյ, եւ տարագի՛ր եղեալ յամբիծ եւ հոչակաւոր եւ կեցուցանող նոցին հաւատոց:

5 Բայց եւ զայն պարտ է ճանաչել՝ զի որ բերանովք աւրհնէք, այսինքն ժառանգաւորս հաւատոյ համբաւելով զձեզ սրբոյն Գրիգորի, զընծայ այրեցմանս այսորիկ եւ աւերածի դո՛ւք մատուցէք նմա՛. թողումք ասել զայլն եւս: 6 Եւ վանից երիցունք եւ դոցին քահանայք, որք ձեռն արկին, նզովելով զանաւրէն ժողովն Քաղկեդոնի զի առանց բռնադատելոյ արարին՝ ամենեցուն է յայտնի: 7 Քանզի որք ոչ կամեցան ձեռնարկել, տակաւին եւս ի տեղուջս մնան առանց իրիք խոշտանգանաց, եւ ոչ որպէս բազումք՝ ի ձէնջ հալածական եղեալք յաւուրս ձմերայնոյ՝ վէրս ընկալան, եւ ցարդ եւս մորմոքին: 8 Եւ քանզի վստահ էաք ի սահման հաւատոյ հարցն եւ ճշմարիտ վարդապետացն մերոց, ո՛չ ակամայ՝ այլ կամաւք երանելի եպիսկոպոսին՝ եւ այլոց կոչէաք ի պարծանս անձանց մերոց տեսանել, եւ ի պտուղ խաղաղութեան:

9 Բայց այս առաւելագոյն եւս սքանչելի, եւ յո՛յժ զարմացման արժանի. զի մինչդեռ ուրանայիք երդմամբ հաստատելով, ոչ աւելի ինչ ունել կամ պակաս զդրութիւն հաւատոյ. քան զոր Հայաստան աշխարհիս է ընկալեալ, այս եկեղեցւոյս առաջնորդաց հնազանդել, կամ ընդունել զժողովոյն Քաղկեդոնի բռնադատեալ կանոնսն՝ ամենեւին չառնուիք յանձն, այժմ ի ձեր գրեալսն՝ զնորին հակառակն եհաս տեսանել: 10 Զի զոր մեր պատուական հարցն եւ հոգեկիր վարդապետացն ընդ ուղղափառ հովիւսն եւ ընդ մարտիրոսս է

1 Յօրինակին՝ պատրաստել փխ պարտ է ասել. Գուրեանը ծանուցում է, որ պատրաստելը իմաստ չունի. կը կարդանք՝ պարտ է ասել («Սիռն», 1928, էջ 310, ծմբ. 2):

դասեալ, զԴէոսկորոս. եւ զՏիմոթէոս Ա-
ղեքսանդրացի, անջինջ նգովից վիճակի
առնէք արժանի, սուտ եւ մոլորեցուցիչս
կարգալով, եւ զթիւրսն եւ զչարապաշտսն
եւ Հերձուածողս զՔաղկեդոնիտան բարե-
փառ ասէք, եւ փոխանակ միաւորութեան
երեւեցուցանէք:

11 Գիտեմք արդ թէ եւ ա՛յլ ինչ զոր
ունիմքն՝ կարեւորագոյն են եւ աւգտակա-
րագոյնք, ցուցանիցեմք. չիք ի ձեզ տեղի.
ընդէ՞ր եւս եւ զառաջինն քաջ եւ անդր-
դուելի վարդապետացն զանուանսն ի կիր
առեալ, փաստաբանութեամբ պարծիք
զսրբոյն Աթանասի, եւ զԲարսղի, եւ
զսքանչելի Գրիգորանցն. եւ զյորդորա-
բանն Յովհաննու եւ զմեծի Հաւրն Քրիս-
տոսախրի Կիւրղի, եւ զերից ականակիտ
եւ անթերի ժողովոցն, որք ի պատիւ ամե-
նասուրբ Երրորդութեան գումարեցան:

12 Զի թէ ճառեցելոցդ՝ մեծարոյ թուէր
ձեզ լիութիւն Հաւատոյ, զմէ՞ ի Քաղկեդո-
նի նորածեւան կցկցեալ կարկատէիք եւ, ոչ
նմանեալ Աստուածընկալ Հարցն որ յեփե-
սոս՝ մի Որդի դաւանելով՝ գնայիք զՀետ
խոստովանութեան Հաւատոյ բարեպաշտ
Հարցն: 13 Այլ զի ընդդէմ նոցին է, չգոյ
ումեք Հնար ծածկել. բայց զոր ճառելոցս
եմ, ճարտարաբանեալս ի ձէնջ ամենապա-
տիկ ծաղճ է պատարուն, թէ չեմք կա-
րաւտ Խորասանիկ եւ Ատրպատիճ կանո-
նաց եւ վարդապետութեան: 14 Սակայն
յոյժ ստեցէք եւ ոչ մասնաւոր այսպիսի
ինչ. զի Խորասանիկն յարուցեալ ընդ ա-
ռաւաւտս լուանայ, եւ Համարի թէ զամե-
նայն գործեալ աղտեղութիւնսն ի բաց
մաքրեցի: 15 Եւ դուք մտանելով առ բոզս,
ի բաղանիս լոգացեալ՝ նոցին Հաւասար
սուրբ կարծէք լինել: 16 Վասն որոյ ան-
խտիր ի տէրունական մարմինն մերձե-

նայք՝ զոր պատգամն Աստուածային ընդ
դատապարտութեամբ փակեաց:

17 Եւ Ատրպատիճս՝ զի ոչ գիտեն եթէ
խնդիր զՀաւատ լուծանէ, մի՛շտ ծփին փո-
փոխելով ի բազմաստուածութիւնս, զոր եւ
վասն ձեր ճշմարտութեամբ է ասել Հան-
դերձ արտասուաւք, զի անդադար էք ալէ-
կոծական պղտորութեամբ շփոթեալք, այլ
եւ այլ սահմանադրութիւնս առնել Հաւա-
տոյ ոչ շատանայք: 18 Ապա ուրեմն սուտ
էր եւ կարի անպատրաստաբար զԽորասա-
նիկսն բամբասել եւ զԱտրպատիճս, զի ոչ
կարէք ժխտել զայս՝ որպէս թէ չիցէ այդ-
պէս: 19 Այլ զպարծանաց յոյս ունել ի
Փրկիչն մեր եւ ի Տէր Յիսուս Քրիստոս, որ
ի վերայ ամենեցուն է Աստուած՝ բաղձալի
պանծանաւք առնումք յանձն, մարմնա-
ցեալն, մարդացեալն յԱստուածածին եւ ի
միշտ կուսէն Մարիամայ, խաչեալն եւ
թաղեալն, եւ յարուցեալն յաւուր երրորդի,
ամբարձեալ յերկինս, նստեալ ընդ աջմէ
Հաւր Աստուածախառն մարմնով զամե-
նայն կատարեաց արդարութիւնս:

20 Արդ զի արտաքոյ ամենակալ Եր-
րորդութեանն, Աստուած գոք ասել Հաւա-
սար անհամեմատականն՝ ամպարչտու-
թիւն է. ըստ այնմ թէ, չիք Աստուած՝ բայց
ի միոյն, որ է ամենասուրբ Երրորդու-
թիւնն. Անձնաւորութիւնն որոշմամբ, եւ
միաւորեալ Աստուածութիւնն: 21 Զի՛արդ
զՔրիստոս Աստուած խոստովանիք, եւ
զխաչն արտաքոյ Երրորդութեանն. ոչ է
ասէք պարտ յԵրրորդութեանն դնել զնորա
խաչն, զի չհաճի Աստուածութիւնն. որ ի
թշնամանս ինչ նմա բերի. եւ պատճառս՝
զՆիկիական Հոգեյարդար ժողովն ունիք:
22 Եւ այս զի նանիր եւ սնոտի պատրա-
նաւք եւ պաճուճեալ. լո՛ւր, զի ի Նիկիա
Հարքն դաւանելով զՀայր ամենակալ, ի
նոյն վաղվաղակի յարեալ մի Տէր զՅիսուս
Քրիստոս քարոզեցին, ծնեա՛լ յԱստուծոյ
Հաւրէ յառաջ քան զամենայն յաւիտեանս.

1 ԳԹ Յատեցելոյդ. ուղղում եմք՝ համաձայն Դու-
րեանի («Սիոն», 1928, էջ 311ա, ծմբ. 2):

եւ զնոյն մարմնացեալ ի Մարիամայ միշտ Կուսէն եւ խաչեալ. ահաւասիկ յԵրրորդութենէն նորա խաչն: 23 Քանզի Բանն Աստուած, մի ի զիմաց Երրորդութեանն՝ մարմնով իւրով, որ բնութեամբ մարդկային էր, եւ միաւորութեամբ տնաւրէնութեանն Աստուածային, արար զփրկութիւն ի մէջ երկրի: 24 Ապա ուրեմն ոչ Երրորդութեանն այլ յԵրրորդութենէն խաչն, զոր դուր արտաքոյ հանեալ առանց զանգիտելոյ, ասէք թէ չէ յԵրրորդութենէն խաչն, կարծեալ աւրինադրել ինչ, եւ մերկ մարդոյ տայք զփրկական եւ զկենդանարար զչարչարանսն, որում ոչ գոյ հնար ապրեցուցանել զոք:

25 Այսպիսի վկայութեամբ չարաչար ի կիր առնելով զբարիք ասացեալսն, թէ՛ Մատնելոց է Որդի մարդոյ ի ձեռս մեղաւորաց՝. եւ թէ՛ Պարտ է Որդոյ մարդոյ բազում չարչարանս կրել՝ եւ զՅիսուս Նագովրեցի գայր ցուցեալ յԱստուծոյ՞, եւ որ ինչ ի կարգին է. եւ զայն՝ Յիսուս գորդում սպանէ՞ք. եւ զայն եւս նման սոցին, զոր Բանն Աստուած զծառայի առաջին առնով կերպարանս՝ ոչ համարեցաւ ամալթ կատարեալ սոսկ մարդոյ կրել ձեռնարկել, եւ մարդն է Յիսուս Քրիստոսէ, ըստ Պաւղոսի:

26 Արդ եթէ սոսկ մարդ է Քրիստոս, որ մեռան վասն մեր, ընդունայն են հաւատք եւ դատարկ աւետիքն փրկութեան եւ լի՛ նզովիւք, քանզի գրեալ է, թէ՛ Անիծեալ է, որ դիցէ գոյս իւր ի մարդ: 27 Եւ եթէ Աստուած խոստովանիք՝ յայտ է, եթէ եկամուտ եւ պիտակ համարիք զԱստուածութիւնն եւ շնորհաւք ընկալեալ, վասն որոյ եւ զխաչն արտաքոյ Երրորդութեանն

զնէք, եւ այսպէս յայտաբար երկուս որդիս քարոզէք՝ մի բնութեամբ զԱստուածն Բան, եւ միւսն շնորհիւ զ՛ի Մարիամայ մարդն, քանզի լցեալ է ամենայն աշխարհ հայհոյութեամբս այսորիկ ի ձեր գրեցելոցն:

28 Եթէ Որդի Աստուծոյ՝ ոչ միայն Աստուածութեան բնութեամբն ի վերայ կայ, այլ եւ ի մարմնոյն բնութեան այսպիսի երեւութիւք. թէ՛ եւ եղէց մա ի Հայր, եւ մա եղիցի ինձ յՈրդիէ. ահաւասիկ, ասեն, որդիս անուն եւ ի մարմնոյս բնութեան վերայ կայ: 29 Եւ դարձեալ թէ. Տէր ասացցիս, Որդի իմ եւ դու, եւ եւս այսաւր ծնայ զԲեգ միայնէ, եւ այս ասեն որդի մարմնոյ բնութեան կոչի: 30 Եւ աւետաւորութիւնն որ առ երջանիկ Կոյսն ի հրեշտակէն, թէ՛ Ահա յղացցիս եւ ծնցիս որդի, եւ կոչեսցեն զանունն մորա Յիսուս. մա եղիցի մեծ եւ Որդի բարձրելոյ կոչեսցի՞ք: 31 Տեսանէս, ասեն, զի եւ ի մարմնոյն վերայ կայ որդիդ անուն՝ եւ ոչ միայն Աստուածութեանն բնութեան: 32 Այսպիսի եւ եւս դժնդակագոյն իրաւք լի են ընդհանուր գաւառք, ոչ գիտեմք ուստի՞ յորդեցայք զվաղնջուցն շիջուցեալ արծարծել, զ՛ի Վաղենտինացն, եւ այլ ստանուն գիտնականաց. քանզի այն դպրոցի էր գուպար վստահութեանդ այդորիկ, ա՛յլ զոմն չարչարեալն աղանդելով եւ այլ զոչ չարչարեալն, որոց գլուխ եւ արմատ դառնութեան Սիմոն ճանաչիւր կախարդ, երկուս որդիս անուանելով, մի ըստ բնութեան՝ եւ մի՛ շնորհաւք. զոմն անմահ, եւ զոմն՝ մահկանացու: 33 Արդ, որ նորանշան հարուածովքն անկեալ հերձաւ՝ վայրապարին ճապաղեալ քրթփչո՛րն՝ ճարակ լինելով յաւիտենական հրոյն, մեծարանաւք առեալ ի կիր համա-

« Մատթ. ԺԷ 21
 բ Տէ՛ս Մատթ. Ժ.Չ 21:
 գ Գործ. Բ 22
 դ Գործ. Ե 30
 է Հմմտ. Փլոյ. Բ 6-7:
 զ Տէ՛ս Երեմ. ԺԷ 5:

է Տէ՛ս Կոր. Գ 18:
 զ Սաղմ. Բ 7
 զ Ղուկ. Ը 31-32
 1 Այսպէս յօրինակին:

ուստէք բարեպաշտս ծանուցանել յամա-
ռեալք զաստուածովայելչաբար միաւորու-
թիւն Բանին ի մարմնին իւրում: 34 Սահ-
մանեցին խոստովանել՝ եւ մի լինել
մշտնջենաւոր անքակութեամբ. վասն որոյ
մի Քրիստոս եւ Տէր քարոզի յերկնաւորաց
եւ յերկրաւորաց. անջինջ նգովից պարտա-
ւոր էք:

35 Ոչինչ նուազ եւ հանդերձեալ պա-
տասխանիքս ընծայեն զարմացումն այս-
պիսի ինչ, թէ գտեսութիւն ձեր թեթեւ հա-
մարեալ, մեր նուաստութիւնս՝ ոչ զաւրեաց
բառնալ. այլ՝ յաճախագոյն արտասոււաւք
փութացայ տեղեկութիւն տալ թագաւորաց
մերոց: 36 Արդ տեսութիւն թուել ծանր՝
ըստ իրաւանց արդեաւք էր, բայց զանձին
իւրոյ զողբս թողեալ, որ սաստկագոյն քան
զամենեցուն իցէ, կարի իսկ յետին անմ-
տութիւն լինի՝ զայլոց ի կիր առնուլ զաշ-
խարհումն: 37 Պարտ է ձեզ զձերոյին աշ-
խարհդ լա՛լ անմխիթար սգով թախծա-
նաւք. զի ճեղքեալ էք եւ աղմկեալք ան-
թիւ աղանդոց զանազանութեամբ. եւ միա-
բանել կամ ցածնուլ¹ ոչ նկատէք. իսկ յոր-
ժամ ոք իւրում տան վերակացութիւն առ-
նել չգիտիցէ կամ չզաւրիցէ, զիա՞րդ ի վե-
հագունից հրապարակախաւս համարձա-
կեալ հրաման տայցէ ճոռոմաբանելով. ո՞չ

ապաքէն յամենեցունց կրիցէ ծա՛ղր եւ
ա՛յլն կատականաց. եւ փոխանակ նեղ
դրան, ի թշնամանաց զլա՛յնն բանայցէ:
38 Զանձինս քննեցէք, եւ ո՛չ դատապար-
տիք. զի իւրաքանչիւր ոք ընդ անձին իւ-
րոյ տալոց է դատ առաջի Աստուծոյ:
39 Այլ թէպէտ այս այսպէս է, սակայն
պարտ եւ պատշաճ է մեզ յուսալ ի Քրիս-
տոս Աստուած մեր, լինել ձեռնտու եւ
բառնալ ի միջոյ զնորոգածեւ գայթակղու-
թիւն, որ ի Քաղկեդոնի յարձանէն Լեւոնի
բռնագբաւսութեամբ սերմանեցաւ. քանզի
Նա միայն է քաջ եւ յաղթող հովիւ եւ սի-
րող պատուիրանապահաց իւրոց, խոնարհ
եւ այցելու, որ երբեմն զԱրիանոսացն քա-
կեաց կարճեալ ճոխութիւն. նոյնպէս հա-
ւատամ, եւ զՔաղկեդոնիտոսդ տեսանել նո-
րին զաւրավիզն աւգնականութեամբ. եւ
ապա լինի հաճոյ ժողովել միշտ ի բարե-
պաշտութեան ամրացեալ բոլոր եպիսկոպո-
սաց մերոց, եւ ճշմարիտ քահանայից ամե-
նայն ուխտի սրբոյ եկեղեցւոյ, խորտակել
եւ բառնալ ի միջոյ գտիեզերակործան ար-
ձանին գայթակղութիւնս, եւ զանբաժանե-
լի եւ զանայլայլելի գքաջ Հովիւն Փրկիչ
եւ Տէր մեր խոստովանելով ձայնին տալ
լսել:

1 Գթ ցասնուլ. ուղղում եմի՝ համաձայն Դուրեա-
նի («Սիրոն», 1928, էջ 311բ, ծնթ. 1):

ՊՈՒՂԹ ՇՐՋԱԳԱՅԱԿԱՆ ՏԵԱՌՆ ՎՐԹԱՆԻՍԻ ՔԵՐԴՈՂԻ

1 Սրբասէր ուղղափառաց եւ ճշմարտից, եւ վանից երիցանց, եւ գեղջ² քահանայից, ազատաց եւ շինականաց, ծերոց եւ տղայոց³, եւ համաւրէն ամենայն ժողովրդականաց, հայալեզու աշխարհացոյ, որ էքդ⁴ ընդ իշխանութեամբ եկեղեցւոյն Յուրտաւայ, ի Վրթանիսայ⁵ եւ յայլ պաշտանէից սրբոյ եկեղեցւոյս՝ Տէրամբ ողջոյն:

2 Վասն զի եհաս առ մեզ լուր չախորժելի, եթէ զհերձուածն Նեստորի եւ գժողովոյն⁶ Քաղկեդոնի, զոր Հայոց եւ Վրաց եւ Աղուանից միաբանակաց⁷ եպիսկոպոսաց եւ իշխանաց սոսկալի նզովիւք անյիշատակութեամբ էր ի բա՛ց բարձեալ՝ Արդ կաթուղիկոսդ անուանեալ եպիսկոպոսակցաւք⁸ հանդերձ եւ իշխանաւք ընդունելութիւն եւ մեծարանս առնեն հերձուածոյդ⁹: 3 Լուաք եւ վասն սրբութեանդ¹⁰ ձերոյ ունել նախանձ վասն ուղղափառ հաւատոյ ամենայն բարեպաշտութեամբ ընկալեալ¹¹ ի սկզբանէ յաշխարհիդ ձերում, եւ աղաւթեմք միշտ հաստատուն մնալ եւ արիանալ՝ անզանգիտող համարձակութեամբ: 4 Գիտացէք, երբարք, զի ի վերջին ժամանակս եմք, եւ չար գազանին հրապոյրք մերձեալ են, ապստամբութիւն

առնելով ուղղափառաց¹² հաւատոց, զի մուրուրեան իւրոյ կազմեսցէ ասպնջական¹³:

5 Վասն որոյ արթո՛ւն կացէք եւ հսկեցէք¹⁴ եւ մի՛ իւրք մեղկիցիք, զանգիտելով ի մահկանացուացն երկիւղէ, այլ համարձակութեամբ զայն համառաւտել, զոր ի սկզբանէն ունէաք զճշմարիտ հաւատն, զի եւ պարգեւացն Աստուծոյ արժանի լինիցիմք¹⁵,¹⁶ գուցէ ձեռն զմաճով արկեալ՝ լքանիցիմք աչառելով կամ զանգիտելով յոմանց, վասն որոյ զայ բարկութիւնն Աստուծոյ: 6 Այլ դի՛ք ի սիրտս ձեր զյորդորական բան Փրկչին մերոյ եւ Տեառն Յիսուսի Քրիստոսի Աստուծոյ. եթէ՛ Մի՛ հոգայցէք, որպէս թէ զի՞նչ խաւսիցիք ընդ հակառակորդս ձեր. զի հոգի իմ պարգեւէ՛ որ ինչ պիտոյ է ձեզ խաւսել՞: 7 Եւ եթէ՛ աւելի ինչ պէտք եղիցին¹⁷ հակառակութեան եւ պատասխանաց¹⁸, հրամայեսցէ գրել¹⁹ առ մեզ Սրբութիւնդ ձեր. եւ շնորհիւ ամենասուրբ Երրորդութեանն հասեալ առ ձեռն պապանձեցուցուք զբերանս՝ զհայհոյութեան բանս²⁰ չարախաւսողացն:

8 Ողջ լերուք ի Տէր:

1 B Թուրք շրջաբերական Տեառն Վրթանիսի Քերթողի (ի) հայալեզու աշխարհն Յուրտաւայ՝ ի խնդրոյ Մովսիսի եպիսկոպոսի՝ առ ի հաստատել գնոսս ի հաւատս
2 B գեղջաց
3 B տղայոց, Հայալեզու աշխարհաց
4 B էք
5 B Վրթանիսէ
6 B գնզովեալն փիւ գժողովոյն
7 B միաբանականաց
8 B եպիսկոպոսաւք
9 B հերձուածողաց
10 B սրբութեան
11 B որ ձնկեալ է փիւ ընկալեալ

12 B ուղղափառ
13 B ասպնջականս
14 B խորշել յանգգամայն, զի փիւ եւ մի՛... զի եւ
15 B լիցուի
16 B չի՛ գուցէ... խաւսել
* Տէ՛ * Մարթ. Ժ. 19:
17 B լինին
18 B պատասխանոյ
19 B գրեսցէ փիւ հրամայեսցէ գրել
20 B չի՛ բանս

1ՏԵԱՌՆ ՊԵՏՐՈՍԻ, ՎՐԱՅԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ, Ի ՎՐԹԱՆԻՍԷ

1 Փառաւորելոյ Տեառն Պետրոսի Աստուածաշնորհ պարգեւաւք պայծառացելոյ, ի Վրթանիսէ եւ ի միաբանական² սրբոյ եկեղեցւոյս պաշտաւնէից Տերամբողջոյն:

2 Գրէ երանելի առաքեալն, որ հանդերձեալն էր լինելոց, թէ՛ Հերոնիմոս¹ լինելոց եմ ի ձեզ, եւ որ ընդիրմն եմ երեւեսցիմ³: 3 Լուաք յաղագս պատուականութեան քո, եթէ նախանձաւոր ես եւ սիրաւոյ ճշմարիտ հաւատոց. զի որպէս յառաջագոյն երանելի հայրապետն մեր Մովսէս գրեաց յաշխարհդ հեռանալ ի խոտիկ չեպիսկոպոսիդ³ խաբէութեանց, այժմ առաւելագոյն եւս պարտիմք փախչել յանաւրէն ժողովոյ Քաղկեդոնի հայհոյութեանցն, զի հաւասար հրէութեան⁴ է. զոր համբաւ չախորժելի այժմ եհաս մեզ լսել, թէ յաշխարհիդ ձերում մեծարանս մատուցանեն ժողովոյն այնմիկ: 4 Վասն որոյ եպիսկոպոս մի աշխարհիդ⁵ փախստական գնացեալ է, զդառն եւ գանբժշկելի⁶ վիրաւնութիւն⁷ ժողովոյն այնորիկ ճանաչելով: 5 ⁸Արդ, որպէս ընկալայք զնախանձ Աստուծոյ յանձինս ձեր, պինդ կացէք մինչեւ ի կատարումն գործոյդ, զի եւ պարգեւացն երկնաւորաց արժանի լինիցիք: 6 Թուղթ⁹ արարաք վասն դորին իրաց ցկաթուղիկոսդ¹⁰ եւ ցայլ իշխանսդ¹¹, զի

նորոգածեութիւն ինչ հաւատոյ մի՛ եղիցի ի մէջ երկուց աշխարհացս. ¹²եւ մի՛ աստարութիւն հոգեւոր եւ մարմնաւոր սիրոյ թուեսցի պատուականութեանդ քում. որպէս եղեր իսկ ասպնջական ուղղափառ հաւատոյ, զոր ի ձեռն սրբոյն Գրիգորի հաստատեաց բազում սքանչելագործութեամբ¹³ Տէր Աստուած յաշխարհիս¹⁴: 7 ¹⁵Եւ դու առաւելագոյն խաղաղութեան պատճառս¹⁶ լեր, զի ¹⁷նորոգածեութիւնն, որ ստութեամբն է պաճուճեալ, կորիցէ, եւ ճշմարտութիւնն հաստատեսցի, եւ սրբասէր¹⁸ եպիսկոպոսս¹⁹, ²⁰որ ճշմարիտ հաւատոյ նախանձաւոր է, ի տեղի իւր դարձցի. զի եթէ այդ այդպէս ոչ լինի, յաւիտեանական թշնամանք²¹ մնան²² ի վերայ աշխարհիդ: 8 Եւ եթէ ի ձեռն գրելոցդ²³ հակառակութիւնդ չբառնայ²⁴, գրեցէք²⁵ առ փառաւորեալ²⁶ իշխանս աշխարհիս մերոյ, որ զմեզ այդր արձակեն²⁷, եւ այնպէս²⁸ լինի որպէս Աստուածն կամի:

9 Ողջ լեր:

1 B Թուղթ Վրթանիսի Քերթողի առ Պետրոս եպիսկոպոս ի խնդրոյ Մովսէսի եպիսկոպոսի
2 B միաբան
3 Ը Կ. Բ. Ժ. Ը 19
4 B եպիսկոպոսիդ
5 B հրեւոքեանցն
6 B գնացեալ է փախստական
7 B գանջիշելի փյս գանբժշկելի
8 B վիրուքիւն
9 B չի՛ք Արդ... լինիցիք
10 B Արդ, թուղթ
11 B առ կաթողիկոսդ

11 B առ իշխանսդ
12 B այլ կացցէ մնացէ փյս եւ... հաւատոյ
13 B սքանչելագործութեամբ
14 B չի՛ք յաշխարհիս
15 A չի՛ք եւ դու
16 B պատմառ
17 B ստութիւն փյս նորոգածեութիւնն... պաճուճեալ
18 B չի՛ք սրբասէր
19 Մովսէս Յուրտաւայ
20 B չի՛ք որ... նախանձաւոր է
21 B թշնամիք
22 B մնամք
23 B գրելեացս
24 B բառնայ
25 B գրէք
26 B չի՛ք փառաւորեալ
27 B առաքեմ
28 B այն

1ՏԵԱՈՆ ԿԻՐՈՎՆԻ Ի ՎՐԹԱՆԻՍԷ

1 Սրբասիրի Տեառն Կիրովնի² Վրաց կաթողիկոսի, եւ Ատրնեբսեհի³ եւ Վահանայ, եւ Բրգմիհրի⁴ իշխանաց, ի Վրթանիսէ, եւ ի միաբան պաշտաւնէից սրբոյ եկեղեցւոյ՝ Տերամբ ողջոյն:

2 Յառաջագոյն առ պատուականութիւն ձեր գրեաց երանելի Հայրապետն մեր Մովսէս յաղագս Խոռթիկ⁵ չեպիսկոպոսին խաբէութեանց. զի մի եղիցի նորոգածեութիւն Հաւատոյ ի մէջ երկուց աշխարհացս, որ սքանչելի հիմնադրութեամբ տնկեցաւ⁶ յանդանգիտող եւ ի քաջ նահատակէն Տեառն ի սրբոյն Գրիգորէ: 3 Արդ՝ ոչ միայն ի Նեստորի խմորոյն ունիմք պատուէր ի Հարցն եւ յուղղափառ վարդապետացն մերոց հեռանալ եւ նգովել, այլ եւ գեւտիքոս եւ գեւնոմիոս, եւ զՍեւերոս⁷ եւ զՄարկիովն, զՍաբէլիոս⁸ եւ զայլ նմանիս նոցա, եւ առաւելագոյն եւս զտիեզերակործան եւ զանյիշելի գժողովն⁹ Քաղկեդովնի, որ յետ ճշմարիտ միաւորութեանն¹⁰ Տեառն երկուս բնութիւնս բաժանեալս¹¹ եւ անջատեալս ի միմեանց սահմանեցին ի վերայ միոյ¹² Քրիստոսի: 4 Այժմ լուաք թէ դուք զանաւրէն ժողովն Քաղկեդովնի եւ զտումարն¹³ Լեւոնի ուղղափառ համարիք եւ մեծարանաց արժանի, վասն զի չունիք

կրթութիւն քննել զհերձուածոց չարութիւնս, զի չարագոյն քան զհրէական ուրացութիւնս՝ հեռացուցանէ ի միամիտ հաւատոյն¹⁴ որ ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր է:

5 Արդ՝ ոչ է պարտ Աստուածսիրութեան¹⁵ ձերում աւելի ինչ վարդապետութիւն զուրուք ընդունել¹⁶ քան զերից սուրբ եւ անարատ ժողովոցն, որք ի պատիւ ամենասուրբ Երրորդութեանն գումարեցան, ՅԺ եւ Ը.իցն ի Նիկիա. եւ ՃԾ.իցն¹⁷ ի Կոստանդնուպալիս. եւ Մ.ոցն յԵփեսոս¹⁸. եւ աւելի քան զայս¹⁹ սահման հաւատոյ մեր եւ ձեր հարցն եւ վարդապետաց ոչ կալեալ է²⁰ եւ ոչ ընդունիմք. եւ որ ընդունի²¹, եւ կամի²² խառնել յականակիտ եւ յամբիծ սահման հաւատոյ վարդապետութեան նոցա հրապոյրս ինչ պղտորս, զիտասցէ զի աւտա՛ր է եւ տարագիր յուղղափառ հաւատոյ. զի հաւատով ուսանիմք հաճոյ լինել Աստուծոյ:

6 Արդ՝²³ զի ի վերջին ժամանակս եմք՝ չգոյ ումեք լինել յերկբայս. եւ զի նախ ապստամբութիւնն է գալոց՝, երանելի առաքեալն ուսուցանէ, եւ յաղագս նորին նոյն ինքն հանգիպողական պատասխանին. Եթէ ո՛ր աւելի ինչ աւետարանեցէ ձեզ²⁴, քան զայն զոր աւետարանեցաքն,

1 B Թուրք Վրթանիսի Քերթողի առ Կիրոն Վրաց կաթողիկոս եւ առ իշխանս աշխարհին՝ ի խնդրոյ Մովսէսի եպիսկոպոսի պատենցին

2 B Կիրոնի

3 B առ Ներսէի փիս Ատրնեբսեհի

4 B Բրգմի

5 B եպիսկոպոսին խաբէութեան

6 B կանգնեցաւ փիս տնկեցաւ

7 B զՍեւերոս

8 B եւ զՍաբելիոս

9 B ժողովն

10 B չի՛ր Տեառն երկուս բնութիւնս

11 B բաժանեալ

12 B միոյն

13 B զանիծեալ տումարն

14 B հաւատոցն

15 B աստուածսիրութեանն

16 B Քանգի երից փիս քան զերից

17 B հարիւր յիսուցն փիս ՃԾ.իցն

18 B երկերիւրքն, որ յԵփեսոս

19 B զայն

20 B չի՛ր է

21 B ընդունի ո՛ր

22 B կամ ի փիս կամի

23 B չի՛ր Արդ

« Հմք. Բ Թէ. Բ 3 :

24 B չի՛ր ձեզ

նգովեալ լիցի^ա: 7 Զի ընդ ամենայն տիեզերս յեկեղեցիս ուղղափառաց, յետ ընթեռնլոյ զսուրբ Աւետարանն, որ ի Նիկիա սահմանեցաւ սուրբ հաւատն՝ ասեմք, ոչ¹ եթէ զՔաղկեդոնի ժողովոյն հայհոյութիւնս. ապա թէ այդպէս է, ոչ պարտիմք զամուր զցանկ² հաւատոյս մերոյ խրամատել, զի Որ քակէ զցանկ հայրենի՝ հարցէ զնա աւճ^ք. Գրն բողոքէ: 8 Եւ՝ Որ զլէ զվէմ, այսինքն՝ զհաստատութիւն ճշմարիտ հաւատոյ, զանճն իւր կորուսանէ^ք: 9 Արդ՝ պարտ է պատուականութեանդ ճե-

րում նախանձաւոր լինել ճշմարիտ հաւատոյ հարցն, որ սքանչելեալք եւ աստուածաշնորհ պարգեւաւք արմատացաւ³ յաշխարհիս մերում: 10 Եւ եթէ է⁴ ինչ երկբայութիւն ի միտս ձեր, եւ կամիք զփորձ առնուլ յաղագս այդորիկ, գրեցէ՛ք առ միաբան փառաւորեալ իշխանս աշխարհիս մերոյ⁵, որ գամք այդր. եւ որպէս ի հեռատանէ թղթոյս պատգամաւ, նոյնպէս յանդիմանական վկայութեամբ գրոց սրբոց, յայտնի առնեմք զճշմարտութիւն բանիցս:

11 Ողջ լերուք:

^ա Տէ՛ս Գաղ. Ա 9:

¹ B այլ ոչ

² B ցանկ

^ք Ժ՞ղ. Ժ 8

^ք Տէ՛ս Առաւ. Ի, Գ 27:

³ B առատացաւ փխ արմատացաւ

⁴ B չի՛ք է

⁵ B մեր

ՊԱՏԱՍԽԱՆԻ ԹՂԹՈՅՆ ՍՈՎԱԵՍԻ Ի ՎՐԹԱՆԻՍԷ

1 *Զգիր(ս) ողջունի սրբութեան քո ընկալեալ¹, գոհանալով զԱստուծոյ ուրախացայ. զի նախանձաւոր էք ուղղափառ հաւատոյ². եւ ասպնջական սուրբ հարց ճշմարիտ վարդապետութեանն, որ տնկեցաւ³ յաշխարհս մեր ի ձեռն երիցս⁴ երանեալ⁵ սուրբ եւ քաջ, եւ անզանգիտող նահատակին տեսնն Գրիգորի⁶: 2 Եւ զի յապստամբող⁷, եւ ի վերջին ժամանակս հասեալ եմք, ⁸ոչինչ են զարմանք տեսանել՝ զոր սրբութիւնդ ձեր գրեաց⁹: 3 Քանզի տակաւին եւս տեսանեմք զգուշակութիւն նուիրական առաքելոյն, թէ՛ չերձուածք լինելոց եմ ի ձեզ^ա, եւ զայն եւս թէ՛ Որ ընտիրբ¹⁰ եմ ի ձեզ՝ երեսեցիմք^բ, զոր ճշմարտիւ սրբութիւնդ քո կատարեաց, հալածանաց եւ բազմապատիկ նեղութեանց համբերելով: 4 Եւ ի վերայ դորին եղիցի քեզ միշտ արիանալ. եւ անքակելի*

մնալ¹¹ շնորհիւն¹² Քրիստոսի Աստուծոյ մերոյ, եւ լրջմտութեամբ ստանալ պարգեւս՝ ի բաւական աջոյն Քրիստոսի: 5 Իսկ որ ի բազմացն փութայք շահաւորութիւն, ցանկալի է. եւ որ յընկերսիրութիւն ընթանայք՝ աւգուտ¹³ տենչալի է¹⁴. ըստ այնմ, թէ՛ Ոչ խնդրեմ գանձիմ աւգուտ՝ այլ զբազմաց, զի ապրեսցիմք^գ: 6 Զթողիթն զոր խնդրեցեր ի հայալեզուսն, առնեմք շնորհիւն Աստուծոյ: 7 Նոյնպէս եւ ի Կիւրոն եւ յիշխանս աշխարհին առնեմք ըստ յառաջելոյն Աստուծոյ: 8 Եւ եթէ կամի Քրիստոս Աստուած ի մաւտ աւուրս Կաթողիկոս կամին նստուցանել, զհոգս ձեր շնորհիւն Քրիստոսի Աստուծոյ՝ նա հոգայ եւ մեք սատարեմք մինչեւ ի կատարումն գործոյդ¹⁵ ըստ կարի մերում:

9 *Ողջ լեր ի Տէր:*

1 *B* ընկալայ, եւ

2 *B* հաւատոց

3 *B* աւանդեցաւ փխ տնկեցաւ

4 *B* չիբ երիցս

5 *B* քաջ եւ սուրբ

6 *B* սրբոյն Գրիգորի

7 *B* յապստամբ

8 *B* ոչ եմ

9 *B* գրեաց առ մեզ

ա *Ը Գ՞՞ր. Ժ.Ը 19*

10 *A* ընդիրբն

բ *Ը Գ՞՞ր. Ժ.Ը 19*

11 *A* չիբ մնալ

12 *B* շնորհաւն

13 *B* աւգուտ է եւ

14 *B* չիբ է

գ *Ը Գ՞՞ր. Ժ. 33*

15 *B* գործոյն

ՊԱՏԱՍԽԱՆԻ ԹՂԹՈՅՆ ՄՈՎԱԵՍԻ Ի ՎՐԹԱՆԻՍԷ ՎԱՐԴԱՊԵՏԷ

1 Ձգիր ողջունի սրբութեան քո ընկալեալ՝ զԱստուծոյ գոհացաք եւ ուրախ եղեաք, որ Տէրդ, պահպանութեամբ ամենասուրբ Երրորդութեանն, ողջ է:

2 Եւ զոր գրեալս էր առ նուաստութիւնս մեր, բազմապատիկ շնորհակալութեամբք եւ արդիւնաւոր աւրհնութեամբք էր պատարուն: 3 Ձթուղթն զոր խնդրեցէքն առ կաթողիկոսն անուանեալ, եւ առ այլ իշխանս աշխարհին, արարաք որպէս արժան էր. բայց որ վասն մանկանն գրեալ էր, մի յաղագս նուագութեանն, եւ մի յաղագս ժամանակիս դժուարութեան, չեղեւ հնար արձակել. Տէր, անմեղադիր լեր: 4 Թո՛ղ զի քո մանուկդ պատասխանի բերէ, որ մեք ըստ նմին իմանալ գիտեմք, եւ եթէ շնորհէ գթութիւն ամենասուրբ Երրորդութեանն եւ ի ձեռն գրեցելոցդ խա-

ղաղութիւն լինի, որպէս եւ ունիմք իսկ յոյս, բարի է որ դուք ի ձեր սուրբ եկեղեցին հասանէք բարգաւաճեալ անուամբ:

5 Ապա թէ յերկարէ ինչ յամառութիւն ուրացելոցն, պատուէր տուք ծանաւթից ձերոց եւ սիրեկեաց իշխանաց, որ գրեն առ փառաւորեալ իշխանս աշխարհիս մերոյ, որ մեզէն իսկ երթամք հրամանաւ սոցա, եւ աւգնականութեամբ Քրիստոսի Աստուծոյ մերոյ յանդիմանեմք զնոսա, ք զի դան յուղղութիւն: 6 Ապա թէ վասն բազում մեղաց մերոց զհակառակսն եւ զընդդէմսն հասանէ լսել, զփոշի ոտից մերոց ի նոսա թաւթափեմք, եւ յաղագս այդր պատճառի է, զի անմեղադրելիք յԱստուծոյ եւ ի մարդկանէ լինիմք:

7 Ողջ լեր ի Տէր:

ՊԱՏԱՍԽԱՆԻ ԵՐՐՈՐԴ ԹՂԹՈՅՆ ՍՈՎԱԵՍԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ Ի ՎՐԹԱՆԻՍԷ

1 Զողջոյն սրբութեան ձերոյ լուայ եւ ուրախ եղէ: 2 Ծանեայ եւ զպատճառսն թղթոյն պատասխանի չառնելոյ, եւ զոր արարեալն իսկ է առ իս ազատ արանց ումանց այնպէս է՝ որք ի հիւանդութեան ինչ ընդ բարբաջ անկեալ զինչպէտ խաւսին: 3 Ասեն, մեք եւ զայս ունիմք հաւատ եւ զայդ, աւրինաց աստ հաղորդիմք եւ անյդ: 4 Մովսիսի եթէ կամք են եկեցցէ կաթողիկոսիս հնազանդ լիցի, զի մեզ այս հաճոյ է, եւ զիւր տեղի կալցի: 5 Աւելորդ համարիմ ես ինչ ասել այսմ ամենայնի, Աստուծոյ զաւրութեանն պահեսցի: 6 Բայց յաղագս զաշխարհս մեր նգովելոյ եւ թշնամանելոյ, որպէս եւ այլ կորստեան եւ աստուածառաք բարկութեանն ասպնջական եղեն, թերեւս եւ զայդ յանդգնութիւն արարին, անբժշկելի վէրս անձանց իւրեանց կազմեցին, զինքեանս ինքեամբ խոցոտելով. մեք հեռի եմք յայնմ անիծից: 7 Դու Տէր աղաւթեա՛, զի ի ժամուս պնդեալ են առաջնորդ կարգել. եթէ զայս գործ աւգնէ ի կատարումն տանել Քրիստոս Աստուած մեր. ապա գիտեմք եթէ ձեր կամք այնպէս կատարին՝ որպէս Աստուծոյ ողորմութեանն թուի:

8 Բայց վասն խնդրոյն զպատճառս ընթերցուածասէր եւ ուղղափառ պատուականութեանդ յաղագս վերստին հաստատելոյ աւտարացուցանող եւ կորստական անաւրէն ժողովոյն Քաղկեդոնի, զոր եբարձ ի միջոյ բարեպաշտն Զենոն՝ միաւորիչ թղթովն: 9 Եւ յետ նորա՝ նորին սահմանի նախանձաւոր եղելոյ, ցանկալին հրեշտակաց եւ մարդկան Անաստասիոս, արդ այսպէս ունի պատմութեանս այսորիկ պատճառս:

10 Քանզի յետ փոխելոյ յանարատ եւ յԱստուածահաճոյ կենաց պանդխտու-

թեանս այսորիկ երանելոյ քաջանուանն Անաստասայ, Յուստին անուն կալաւ զյաջորդութիւն իշխանութեանն, այր ժանդ եւ անաւրէն, որ վարժեալ էր աղանդովն Նեստորի եւ ի նմին զանգեալ եւ հաստատեալ: 11 Նորա թագաւորեցելոյ ըստ ցանկութեան անձինն եւ կանխապատրաստ եղելոյ մահացան խորհրդոյն, սկիզբն արար թշնամանել, հերետիկոս կոչելով զբարեպաշտ եւ զխաղաղասէր թագաւորսն, զԶենոն եւ զԱնաստաս: 12 Եւ զգեղծեալն ի նոցանէ գտումարն Լեւոնի եւ զժողովն Քաղկեդոնի, հրաման տայր շրջաբերական թղթովք գոռոգասաստ եւ անխիղճ իշխանաց անդրէն հաստատել. եթէ ոք համարձակեսցի ընդդէմ կալ թագաւորին հրամանաց, սրով սպառել եւ պէսպէս տանջանաւք: 13 Յայնժամ եկեղեցիք ամենայն արեամբ լինէին շաղախեալք, եւ մետաղք եւ կղզիք կապանաւորաւք լցեալք: 14 Զի քաջ հովիւքն զմեռանելն լաւ համարէին, եւ անարատութեամբ առ Քրիստոս ժամանել, քան թէ կալ անաւրէն վարդապետութեամբ ժողովոյն Քաղկեդոնի: 15 Իսկ անաւրէն վիրազին, զաղանդոյն սիրաւղս եւ աշակերտս եւ որք զանցաւոր պատուոցս քան զմշտնջենաւորին կամեցեալք ընտրել զփառս, եպիսկոպոս կարգեալ քաղաքաց քաղաքաց հաստատեաց զժողովոյն խորհուրդ: 16 Աստանաւր էր ինչ յիշատակի արժանի, բայց այլում ժամուս պահեսցի. քանզի բազում խռովութիւնք եղեալ ի ժողովրդականաց յաղագս չընդունելոյ զհերձուածող եպիսկոպոսսն: 17 Արդ՝ սուղ ինչ ժամանակ կալեալ զթագաւորութիւնն Յուստինէ, վախճանի ծանր ախտից հարուածովք, եւ թագաւորէ Յուստինիան՝ յետ նորա, եւ աղմուկ հակառակութեան

1 Յօրինակիմ՝ Յուստինի բաճ

ժողովոյն Քաղկեդոնի տակաւին եւս հնչէր եւ ի նորա ժամանակս:

18 Իսկ յաւուր միում խորհուրդ արարեալ ընդ ոմանս ի մեծամեծացն, յաղագս սպանման ուղղափառ եպիսկոպոսաց եւ հալածանաց, թէ ի գուր արար թագաւորն զիսոպոլիսիւնս զայս ամենայն քաղաքաց, եւ այժմ ոչ է պարտ մեզ անտես առնել. եւ ոմանք ի յանդիման կացելոցն, որք աղանդոյն այնր էին աշակերտք, ասեն ցթագաւորն, թէ անհնարին է ումեք ի մարդկանէ ասել զայդ, զի Սիմեոնի ձեռն արկեալ է եւ հաւանեալ է սահմանադրութեան ժողովոյն Քաղկեդոնի, եւ ցարդ եւս պահի զգուշաբար ի ներքս ի տապանին սրբոյն Եւփիմեայ, ուր ժողովն իսկ եղեւ:

19 Քանզի Սիմեոնս այս եղեալ միայնակեաց յԱնտիոք քաղաքի, հրաշալի եւ հուշակաւոր, եւ ընտանի սրբոյ Հոգւոյն շնորհաց, որպէս եւ զմի ոք ի տեսանողաց:

20 Եւ ոմն ի մաւտաւորացն նախանձաւոր եղեալ ուղղափառ հաւատոյ, ասէ ցթագաւորն. եթէ երանելի Սիմեոնի ձեռն արկեալ եւ հաւանեալ է սահմանադրութեան հաւատոյ ժողովոյն Քաղկեդոնի, եւ կայ ի տապանի սրբոյն Եւփիմեայ, ես դառն չարչարանաւք ընկալայց զգրաւումն կենաց իմոց:

21 Քանզի այսպէս ունի պատմութիւն անսուտ յիշատակարանաց մերոց, թէ Թէոփորիտոս, որ համազոյգ Նեստորի գտեալ, լուծեալ եղեւ յեպիսկոպոսութենէ իւրմէ, եւ հրամանաւ ամպարշտին Մարկիանոսի ընկալեալ եղեւ յառաջնորդութիւն Քաղկեդոնի ժողովոյն, եւ առեալ զսահմանեալ գրեալսն ըստ հրամանի թագաւորին հասանէր ի դուրս խցկանն երանելոյն Սիմեոնի:

22 Իսկ նորա յառաջագոյն ծանուցեալ զգալուստն, հրամայէ սպասաւորացն յարգելանոցէն զինքն ի խոնարհ իջուցանել, եւ հրատ լուցեալ. վասն որոյ յոյժ զարմացեալ սպասաւորացն եթէ զինչ լի-

նիցի այն: 23 Եւ իսկոյն տեղեկութիւն տուեալ երանելոյն, թէ ոմն ի թագաւորէն եկեալ խնդրէ տեսանել զքեզ: 24 Եւ նորա հրաման առեալ թէ վասն այդորիկ իսկ եկի ի տեղս յայս, եւ մտեալ ի ներքս Թէոփորիտոս, բազում բանիւք թախանձանս մատուցանելով աղաչէր ձեռնարկ առնել եւ հաւանել առաջիկայ լինել սահմանին, քանզի ամենեւին ի մարդկանէ յայսպիսի իմն գործաւղաց եւ ոչ ակն առնուլ գիտէր երեսաց: 25 Վաղվաղակի զգրեալսն յինքն առեալ ի վառեալ հրատն ընկենոյր. նգովելով զՄարկիանոս եւ զժողովն եւ զհաւանեալսն անյամ սահմանի. եւ աւելի ինչ քան զայդ ոչ գտանես ասէ, ո՛վ թագաւոր:

26 Իսկ թագաւորին թոյլ տուեալ առ ժամն լուռ լինելով, հրամայէ ի միում աւուրց մակուկաչու ուղեգնացութեամբ ի Քաղկեդոնի ելանել սակաւուք արամբք, եւ մտեալ ի վկայարանս սրբոյն Եւփիմեայ ստիպէ զսպասաւորն բանալ գտապան ոսկերացն պահարանի: 27 Իսկ նա ասէ, ո՛վ դուք որ զայդ համարձակիք գործել, զոր ոչ ուրուք արարեալ ի մարդկանէ: 28 Եւ իմացեալ զմիտս ինքնակալ թագաւորին վաղվաղակի բանայ նմա, եւ սփռեալ զքղամիզն, հրամայէ գնչխարս սրբոյն անդր հանել, եւ ասէ ցսպասաւորն, այլ կա՞յ ինչ ի ներքս. եւ նա ասէ, այլ ոչինչ գոյ ամենեւիմբ: 29 Եւ հայեցեալ թագաւորին տեսանէր ինքն իսկ, զի այլ ինչ ոչ գոյր. յոգւոց հանեալ ձեծէր զճակատն, ապաշաւելով եւ ողբալով զսուրբ եւ գերանելի հովիւսն, որք յաղագս ուղղափառ եւ ճշմարիտ հաւատոյն հալածեցան եւ սպանան: 30 Եւ խորհուրդ արարեալ ընդ մեծամեծս իւր՝ բառնալ ի միջոյ զսահման նորոգածեւութեան ժողովոյն Քաղկեդոնի, եւ զվաղընջուցն յառաքելոցն եւ սուրբ հարցն զքարոզեալն հաստատել: 31 Եւ իսկոյն հասեալ նմա մահ դաւողական, որպէս բազմաց բան է, ի նմին մնաց յառաջագոյն գործեցեալն:

32 Եւ դու մի՛ զարմանար, ո՛վ նախանձաւորդ Աստուածայնոյն, թէ ընդէ՞ր նուազեաց ուղղափառութիւնն եւ զարգացեալ ծաւալեցաւ հրէական սարսափելի հայհոյութիւնն: 33 Վասն զի ի յետին ժամանակս եմք, եւ զարհուրեալ կասկածեմք թէ ի մեր իսկ աւուրս հասցէ կատարած: 34 Եւ քանզի բազում ինչ եղեալ էր ի նշանաց, պարտ էր եւ այդմ լինել, զոր կանխաւ գուշակեաց բանն երջանիկն առաքելոյ: 35 Եւ ո՞ր իցէ այն. Նախ եկեցեւ, ասէ, ապստամբութիւնն եւ ապա յայտնեցի մարդն անաւրեմութեան որդին կորստեան: 36 Ապստամբութիւն աստ ոչ եթէ զերկրաւոր թագաւորացս ճակատամարտից ինչ ասէ, զի այդ ի վաղընջուց կալաւ սովորութիւն, այլ ի ճշմարիտ հաւատոյն քակելոյն, եւ այսուն մոլորութեան զհետ երթաւորացն, ասէ, ըստ այնմ եթէ Ի ժամանակս յետինս քակեցին ոմանք ի հաւատոց: 37 Եւ զի յոյժ նուազունք մնալոց են անբիծ եւ կեցուցանող հաւատոյն պաշտանեայք Փրկչին մերոյ եւ Տեառն, հաւանեցուցէ զքեզ անշուշտ բանն, զոր ի դէմս մեր որպէս ըզձալով իմն ճառեաց: 38 Իսկ Որդին մարդոյ, ասէ, եկեալ գտանիցէ՞ արդեւք հաւատս յերկրի: 39 Վասն այնորիկ վաղվաղակի գայթաղեցուցանէ եւ տիրէ դերաքրիստոսն. զի յուղիղ ճանապարհէն զմոլորեալն դիւրաւ ըմբռնելով, յափշտակէ գայլն ապականիչ, եւ յաճախէ զջողիրս ճախակողմանն դասու զժողովբեր կորստեան: 40 Յաղագս որոյ պարտ է մեզ զգուշանալ եւ անսասանելի պահել զանձինս ի վերայ ճշմարիտ հաւատոյ ի մարգարէիցն տնկեալ, եւ ի սքանչելագործ ա-

ռաքելոցն աճեցեալ, եւ պողաբերեալ ոռոգմամբ ի Սուրբ Հոգւոյն, եւ ի սուրբ հարցն դաւանեալ եւ համառաւտեալ, ՅԺ. եւ Լ.իցն ի Նիկիա, եւ ՃԾ.իցն ի Կոստանդնուպալիս. եւ Մ.ոցն յԵփեսոս, որք ի պատիւ Ամենասուրբ Երրորդութեանն գումարեցան:

41 Եւ մի ոք բանիւ կամ գործով ըստերկրեացուք ի հետոց նոցա, թէ եւ ի պատուոց ինչ հասցէ անկանել, եւ մերկանալ ի փառաց երկրաւորաց, կամ բանդից կամ կապանաց մատնել, սովոյ եւ սրոյ յաւժարութեամբ մատուցուք զպարանոցս մեր, զի առանց այսց աստուածահաճոյ երիցս ժողովոցս անթերի հաւատոյ խոստովանութեան՝ անհնար է հաճոյ լինել Աստուծոյ: 42 Զորոց զգրութիւն հաւատոց, եւ ոչ ի Քաղկեդոնի ապստամբեալքն իշխեցին յայտնապէս հայհոյել, այլ ի ծածուկ գաղտնապէս երկուս բնութիւնս ասելով անխառնս եւ անհաղորդելիս, քստմնելի անջատմամբ, եւ զգործ երկաքանչիւրոցն բաժանել տան լրբենի յանդգնութեամբ. զի եւ զաստուածավայելչաբար միաւորութեանն խառնումնն եւ հաղորդութիւնն ուրանալ եւ ի բաց բառնալ հնարեցին: 43 Վասն որոյ պարտ է ճանաչել Աստուածսիրութեան քում, զի գտակ այս չարեաց եւ հիմն Սիմոն է՝ մոգն եւ կախարդն, որ առ սուրբ երանելի առաքելովքն էր, եւ ճաղածանակ նշաւակութեամբ հերձեալ կորեաւ. զոր եւ ի հինգետասաներորդում սաղմոսին մեկնութեանն ծանուցանէ:

44 Այս փոքր ի շատէ ծանուցումն քում Սրբութեան:

« Ի Թ.է. Ի 3
 բ Ը Տ.է. Գ. 1
 գ Գ.է. Ժ. 8

ԳՐԻԳՈՐ ՔԵՐԹՈՂ

ՍՐԲԱՍԻՐԻ ՏԵԱՌՆ ԱԲՐԱՅԱՍՈՒ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ Ի
ԳՐԻԳՈՐԷ ՆՈՒԱՍԵ ՔԵՐԴՈՂԷ

ԳՐԻԳՈՐ ՔԵՐԹՈՂ

Գրիգոր Քերթողը, ամենայն հավանականությամբ, ծնունդ է Ձ դ. կեսերին: Քերթող պատուանունը, որ տարածուած ու յարգի էր մասնաւորաբար Սիւնեաց դպրոցում եւ տրւում էր առաւել կարող վարդապետներին, ենթադրել է տալիս, որ Գրիգոր վարդապետը գործել է այնտեղ: Առաջին անգամ նրա անունը յիշատակւում է՝ իբրեւ Մովսէս Եղիվարդեցի կաթողիկոսի կողմից առաքուած հայոց պատուիրակութեան անդամ, Վրթանէս Քերթողի հետ, Մօրիկ կայսեր կարգադրութեամբ 589 թ. Կ. Պոլսում գումարուած եկեղեցածողովին մասնակցելու համար:

Գրիգոր Քերթողից մեզ է հասել մի Թուղթ՝ յղուած Աբրահամ Աղբաթանեցի կաթողիկոսին 607 թ.: Թուղթը շօշափում է, ինչպէս երեւում է, այն օրերին ծիսադաւանաբանական վէճեր յարուցած մի խնդիր՝ արդեօք Հայոց եկեղեցու համար ընդունելի՞ են հերձուածողների կողմից կանգնեցուած եւ օգտագործուած սեղանները: Գրիգոր Քերթողը միանգամայն պատշաճ է համարում այդպիսի սեղանների նորոգումն ու ծիսական կիրառումը՝ տեսակէտ, որ նա հիմնաւորում է Հին ու Նոր կտակարաններից քաղուած վկայութիւններով: Թէպէտ ցանկալի է հերձուածողների կիրառած սեղանները փոխել, «թէ կար գոյ, այլ ոչ զհինն աւրինադրեմք տապալել»: Չնայած հերձուածողների կիրառած Տիրոջ սեղանը ծածկուած է անվայելուչ լացուկոծով, թերահաւատութեամբ, բայց նրա մէջ եղած Աստուծոյ շնորհն ու կնիքը անփոփոխելի է, ինչը կարելի եւ օրինական է դարձնում դրա օգտագործումը խորհրդակատարութեան մէջ:

Գրիգոր Քերթողը քաջատեղեակ է աստուածաբանական մատենագրութեան մէջ լայն շրջանառութիւն ունեցող խորհրդաբանութեանը: Սուրբ Սեղանը համարելով Սուրբ Խաչի նշանակը՝ նա այն խորհրդաբանօրէն նոյնացնում է Հեսսէի գաւազանի, Սաբեկայ ծառի եւ Յակոբ նահապետի տեսիլքում երեւացող սանդուղքի հետ:

Թուղթը գրուած է յունաբան հայերէնին յատուկ արհեստական մանուածապատ ոճով: Այն հրատարակուած է ըստ Գիրք Թղթոց ժողովածոյի¹:

Յակոբ Քեռսեան

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

1. Գիրք Թղթոց, էջ 300-310:
2. Մ. արքեպս. Օրմանեան, Ազգապատում, § 433:

1 Տե՛ս ԳԹ, էջ 300-310: Ե. ԽԿԱ. Դ. Աշմազրով Գիրք Թղթոցի ծանօթագրութիւններում հապաւում է Եղիշէ Եպիսկոպոս Դուրեանի օրինակը, ուր վերջինս կատարել է բազմաթիւ սրբագրութիւններ:

ՍՐԲԱՍԻՐԻ ՏԵԱՆ ԱՐԲԱՅԱՍՈՒ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ Ի ԳՐԻԳՈՐԷ

ՆՈՒԱՍԵ ԲԵՐԴՈՂԷ

1 Պարտ է կարաւղացն, *ասէ առաքեալ*, գտկարուքիւն տկարացն բառնալ վասն շինութեան^ա, եւ ըստ մարգարէին հրամանի գփարիմս ի նանապարիէ ի բաց ընկեմուլ^բ, *զի մի՛ որ կաղն իցէ գլորիցի*, եւ ոչ զնել առաջի սակաւատեսի գայթազողութիւն. եւ այս թէպէտ եւ առ այլս է, բայց առաւելագոյն պատշաճեցաւ առաջնորդաց: 2 Եւ այժմ իմ եւ ըստ մեզ խորհաւդացս բանքս են առ երանելի հարս մեր ի Քրիստոս, որք ի մերում ժամանակիս զհետ երթաւդաց սրբոց առաքելոցն խրատու եւ նմանութեան՝ որոշեալք ի ստոցն: 3 Եւ աղերս ապաբանութեան, զարժանն թուեցեալ մեզ խնդրել առ արգելաւդս համառատագոյն ձայնիւ. քանզի յեկեղեցիս եւ ի ժողովանոցս, զորս Աստուծոյ շինած գիտեմք բանաւոր արժանացելովքս, զսեղանն մեծ ուսաք ի նոյն ինքն ի Բանէն Աստուծոյ եւ ի նորին առաքելոցն, զնոյն պաշտելի եւ զատուցեալ եւ որոշեալ զճշմարիտն եւ զանմերձենալին: 4 Վասն որք այլապէս խորհիցին, եւ ոչ զնմանութիւն պաշտաման առաքելոցն վարդապետութեան ունաւդաց, որպէս գրէ երանելին Պաւղոս Երբայեցւոցն կանոնեալ սովորութիւն եւ առ այնս որք ոչ ուղղակի խորհին ի հաւատ, յամառական պնդութեամբ, արտաքս վարել, հանել յեկեղեցւոյ քարոզական ազդամամբ յաղագս ոչ աղաւթակցելոյն եւ Քրիստոսի երկրպագու լինելոյն ընդ մեզ: 5 Եւ գոչէ եւս թէ սուրբ սրտիւ եւ անխիղմ վիտս ունել^գ ի կատարեալն հաւատ, եւ կալ առաջի սուրբ եւ Աստուծոյ սեղանոյ: 6 Եւ զի Աստուծոյ սեղան խա-

չայարդար աւրհնութեամբ յուղղոցն եւ ի կատարելոցն գլխաւորացն եղանի, *ամենեցուն յայտ է: 7 Իսկ զորս եւ ոչ առաջի սեղանոյն սովորութիւն ընկալաք թողուլ՝ վասն հարման նոցա մտացն խղճի:*

8 Քանզի չէ հաղորդութիւն լուսոյ ընդ խաւարի. զի ի նոցանէ յուղղութիւնն առարկեալ զսեղանն մեզ կեցուցանող մարմնոյն, եւ մեղսակէզ հրոյն՝ ո՛ր յանձն առցէ հաւաստի եղանիլ. զի Տէրն մեր եւ Աստուած ի ձեռն սեղանոյն ճշմարտագործէ, որպէս պատմէ աւետարանագիրն եւ զինքն իսկ առնէ յուտել կերաւդացն. ապա հակառակ ունարան ի լուծումն փոխէ գէտութիւն զտենչալի հրոյն կայծակն. որպէս եւ ոչ կենդանի ջուրն առ գերութեամբն, որ թուի ինձ դասք հերեսիտաց, զոր փորեցին իւրեանց գուբս ըստ մարգարէին ամբաստանութեան: 9 Բայց սեղան Տեառն կենդանի ջրով շրջագայեալ, կարէ հուրն իմանալի փութեանակի բորբոքել, որպէս առ Եղիայիւն: 10 Իսկ ապա որք պատուէրս առաք փորձել քննութեամբ, զբարին ընդունել, եւ ի չարեաց իրէն հեռանալ, անընդրող եւ խառնակ մտաւք վարիլ արգեւք ո՞չ լինիցի առիթ գեհենին. թողից զպատուէրն զամենայնիւ ոչ հաղորդելն ընդ այնպիսիսն:

11 Բայց պատճառ գայլոց եղեալ մեծի դատապարտութեան յԱստուծոյ ակնունելի է: 12 Զի կամ անդրէն շինիցի հաղորդել կամաց հերձուածողաց հեռացեալն, եւս չարագունիցի գայրացական մտաւք, ի Քրիստոս զմեղանչելն ամբարիցէ, կամ բամբասեալ եւ զմէնջ իբրեւ զմի յորոշելոցն, ի սուրբ հարսն ընթացուցանէ զպատճառս յանդգնութեանն իբրեւ ամ-

^ա Հմմտ. Հուսմ. ԺԵ 1:
^բ Տէ՛ն Ե՛ն. ԿԻ՛ 10:
^գ Գործ. Ի՛Ի 16

բարհաւաճելոց, եւ զիւրեանցն խնդրաւոյ կացուցողի, թէ միութիւն այժմ յայտի:

13 Եւ ահա կորնչիցի տկար եղբայրն, վասն որոյ Քրիստոսն մեռաւ, եւ պատճառաւորն եղելոյ ըզձալի եւ հեշտ է երկանաքար հարստել ընդ պարանոցն, եւ տալ զինքն ովկիանեան յորձանացն՝ վճիռ հրաւիրէ:

14 Բայց այժմ ինձ ընդ միտ ածէք, ձեզ Աստուծով զթշնամանողն մեր աւանդիս հանդերձ աւանդաւորքն, եւ կամեցող շրջել զաւետարանութիւն՝ ատի ի մէնջ մեծի միջոցաւ, ի բաց հեռացուցանել նզովին ձայնիւ, եւ ըստ նորա զնուիրեալն նորին միում շարայարութեան կրկնակացն Քրիստոսի, որպէս իւր թուի. որ է արդարեւ թշնամանք մարդացելոյն Աստուծոյ:

15 Մեզ արժանի համարիք ասել ի ձեռն մաղթման զՀայր, առաքել զՍուրբ Հոգին ի նա, զի արասցէ ճշմարիտ մարմին եւ արիւն փրկաւորին մերոյ Բանին մարմնացելոյ, եւ զի նոցանէ խորհրդոյն հրաժարեցուցանէք. զի թէ ի նմա թերութիւն եւ անվայելուչք Աստուծոյն մարդացելոյ, նոյն եւ աստ հաւասար նմին: 16 Քանզի ոչ առանց աւրհնութեան, որպէս ասացի, ուսաք զսա գոլ, եւ ըստ երկրորդ բանի զդարձեալսն ի խոստովանութիւն, ի հովուական աշտիճանի կացելոցն՝ սակա առաջին գործոյ, զի որք ոչ յուզողոց ընկալան զձեռնադրութիւնն՝ յապաշխարութեան կարգի կացուցանէք, ոչ համարձակել ի սեղան աւրհնել, եւ զյառաջն կանգնել, որպէս յուզողաց համարիք: 17 Բայց թէ վասն քահանային մերձեցման զվատթարագոյն սրբեալ համարիք, մի՛ գուցէ եւ նա վարակիցի. քանզի վատթարի եւ առաքիւնոյ առ միմեանս յարմամբ հա՛րկ է եւ զհառնումն առնուլ. որ լինի ո՛չ առաքիւնի եւ ո՛չ վատթար. եւ այս ի բազումս:

18 Արդ՝ հայցաւորքս ի ձեռն գրոյ աղաչեմք զսրբութիւնդ ձեր, թէ այլ ինչ

յայտնեցաւ ձեզ ի հին եւ նոր կտակարանաց, ցուցէ՛ք եւ մեզ, եւ կամ թէ ի ձեռն հոգւոյն շնորհի նշանակել ձեզ: 19 Քանզի սովոր է զհակառակութիւնս լուծանել, եւ զկամս երկիւղածաց առնել, ապա թէ ոչ զհայցումնս մեր կատարեցէք, փոխել զսեղանս նորս ի նորոյ հաստատեալս, որ ոչ ըստ հարանցն մերոց, որ ի Քրիստոս կացեալ, այլ ըստ աւտարատեսուչ հովուաց յաջորդութիւն առին: 20 Եւ քանզի որպէս նոքա զբարեպաշտութիւն խոստովանելով յառաջին ի մտացն փոխեցան, այսպէս գոյ հնար փոխարկել յառաջին սրբութեանն պատուականութիւն եւ զսեղանս, որպէս առ Մակաբայեցւոյքն եղեւ, յեղեալ զխղճելին յանխղճագոյնս: 21 Սակա փոխելոյ է մեր բանս աւրինակեալ՝ թէ կար գոյ, այլ ոչ զհինն աւրինադրեմք տապալել: 22 Քանզի թէպէտ եւ լալով եւ արտասուաւք եւ քրովք եւ թերահաւատութեամբ ծածկեցին զսեղանն Տեառն, բայց հաստատուն հիմն Աստուած կա՛յ եւ ունի զկնիքս զայս գորոց ասեն, թէ ծանեաւ Տէր զիւրսն, իսկ յանաւրինացն եւ յանհաճելեացն բացակայի: 23 Իսկ գորոց խորհրդագէտն եւ վարդապետն հեթանոսաց որոշումն դնէ, զի՞նչ ոք առ այս ասիցէ: 24 Ապա թէ անընդրութեամբ վարիցիմք, միթէ կա՞յ ինչ ի միջի, ի բաց քակել զարգելումնս, եւ զմեզ յեկեղեցիս նեստորականաց մտանել, եւ ի նոցա հաստատեալ սեղան կատարել զխորհուրդն տէրունեան, եւ զնոցին չերիցունս ի մերս: 25 Ո՞չ ապաքէն առաջինքն՝ յորժամ կամէին միաբանել հաւատով, այսու իրաւք զմիաւորութիւն ցուցեալ՝ համարձակէին կատարել ի միմեանց եկեղեցւոյ սեղանս: 26 Արդ՝ որք զկերպարանս Քրիստոսադաւանութեանն թէեւ բազումք ունին, ի գաւրութեանէն հեռիք են. որպէս այժմ առ մեզ հերիսիոտայքս, եւ կամ յարեւելս ի Պարսս, ի Տիպոն, եւ յայլ տեղիս ամենեւեմբ իսկ գատուցեալ յեկեղեցեացն, զի եւ զգուզնա-

քեայ անդ երկրպագութիւն՝ դատապարտութիւն ի հոգեւորին ուսուցանէք: 27 Վասն այսորիկ սեղանակտաւս աւրհնէք եւ երիցունս արձակէք, կարեկցել նոցա որք արքունի հրամանաւ անդր երթան:

28 Արդ՝ վարդապետացն հրաման հաստատուն կայցէ, եւ առանց հաւասարութեան խոտորելոցն՝ զպաշտաւն կատարեսցեն. ապա թէ յաշխարհիս թիւրացելոցն արարուածի թոյլ տայք, ոչինչ արգելէ եւ ի մէնջ յիշատակելոցդ սեղան զնոյն սովորութիւն ունել, եւ լոկ ի հացէն եւ ի բաժակէն աւրհնութեանց արգելուլ ծիծաղելի է: 29 Արդ՝ աղաչեմք, մի՛ լիցի մերոցս լսել զՏէրունեան զայն ձայն. Առաջնորդ կոյր. զի՞նչ մեծ է, հա՛ցն՝ թէ սեղանն որ սրբէ՞. եւ ի վերայ եբեր, թէ Ուրեմն վկայէ՞ դու՛ք ձեզէն, զի որդիք է՛ք այնպիսի հարանցնէ՞:

30 Ո՞չ ապաքէն կամակար մտաւք յանձն առին մերքս յայն յեղուլ, ոմանք վասն ազահութեան, եւ այլք սակս սնափառութեան, եւ կէսք կաշառովք եղեալք ընդ սուրբ հարանցն նզովիւք: 31 Իսկ աթոռոցն իշխանութեան արժանաւորելոյ ըստ կանոնին սահմանի, դուք առաւել ողորմութեան արժանի արարէք, եւ այժմ զայս եւս մինչ ընդարձակէք: 32 Վասն որոյ ասեմքս մեզէն իսկ որոշիմք յառաքելոցն եւ ի սուրբ հարցն. եւ չէ՛ ինչ անուամբ լոկ յորջորջելն, զի լսելոց եմք. Թէ որդիք նոցա էիք, զգործս նոցա կատարէիք: 33 Քանզի նոքա եւ զբաղանիս անգամ ի հերձուածողաց կոխեալս պիղծ համարէին. եւ արդարեւ ապաշաւելի մասին հասանեմք, մինչ այդմ եւս թոյլ տայք լինել:

34 Արդ՝ թողեալ զսուտ քահանայականն դաս, եւ զխորհուրդ հացին բեկման եւ զբաժակին, զսեղանոյս միայն քննութիւն յառաջ ձգեսցուք, եւ յայսոսիկ զհեթանոսականն, որում բազին սովորեցին ա-

սել. եւ զՀրէիցն յառաքելոց չյիշատակեցաւ առ մերս յարակցել: 35 Նոյն կանոն եւ աստ: 36 Իսկ առ սա որպէս¹ բանս է, մինն ուղիղ ըստ լի հաւատոյ, եւ միւսն թիւրացեալ ըստ պակասահաւատն բարուց: 37 Քանզի սա՛, Տեառն զաւրուութեանց² եւ նա՛ ոչ: 38 Սա զսուրբս միայն ընդունի եւ զխոստովանողս, որպէս եւ նախ ցուցաւ Յսայեայ աւրինակելով զսա: 39 Քանզի նախ զՏէր զաւրութեանց ետես, եւ առ նմին զնուէրին սեղան կայծակնապարուկ, զի եւ խոստովանողին զՏէր զաւրութեանց տեսեալ աչաւք՝ կայծակն պղծակէզ ի նորին սեղանոյ առաքի, որպէս եւ մերքն ասեն, տեսաք մեք զնա, եւ առ մեզ հաւաստի եղանիլ: 40 Իսկ պղծաշուրթն ժողովրդեան, որք զՏէրն զաւրութեանց մեզ ասեն անսրբութեան ընդունիչ, եւ զա՛յս ազգէ, Երեմիաս. մեղքն Յուդայ, ասէ, գրեալ ի տախտակս սրտից նոցա եւ յեղջիւրս սեղանոց ձերոց³. այսինքն զոր նոքա մեղանչէին, թէ դու մարդ ես. նովին մեղաւք գրեցան թիւրացս սեղանոյ եղջերք: 41 Քանզի եւ նա՛ նոցա եւ ձեր ասաց, որք ըստ հնոցն մտաց. եւ արդիքս Քաղկեդոնիտք զխոստովանութիւնն ի սեղանս գրեցին աղամանդեայ եղեգամբ³: 42 Եւ որոշէ դարձեալ առաքեալ՝ այսպէս ունիմք մեք սեղան՝ ուստի ո՛չ ունին իշխանութիւն այսպիսիքն մաշակել⁴, եւ մեզ ի նոցայն թէ Մի մերձեմար, մի՛ մաշակեր, եւ մի՛ հպիր, որ է ի պէտս ապականութեանէ:

43 Եւ դարձեալ քաջերեսագոյն իսկ գրաւչէ զմին Տեառն, եւ որք ըստ Տեառն խորհին, եւ զմիւսն դիւաց, որք ի բաց դարձեալ ի ճշմարտութենէն: 44 Եւ թէ ոչ այսպէս, ո՞յր այլ վատապաշտի սեղան՝

« Հմմտ. Մատթ. ԻԳ. 19:
 ք Հմմտ. Մատթ. ԻԳ. 31:

1 Ե. եպս. Դ. գորմէ
 2 Ե. եպս. Դ. ունի՛ սեղան
 3 Հմմտ. Երեմ. ԺԷ. 1:
 4 Ե. եպս. Դ. եղնգամբ
 5 Եբր. ԺԳ. 10
 6 Հմմտ. Կող. Բ. 21:

Հանց կամ բաժակ ելանէ յաւրհանութիւն, քանզի զո՛չկարողութիւնն հաւասարապէս եղ, որպէս ի բաժակէն ղիւաց, մերձեցելոցն ի Տէրունականն: 45 Եւ յանդգնութիւն ինձ ոչինչ թուի գոլ ի բանիս, առասել զայս ձայն ի վերայ հերձուածողաց, զի թէ հակառակող՝ սատանայ անուանի, որպէս Տէրն մեր եւ Աստուած Պետրոսի կոչեաց սաստելով, յորժամ զմարդկաւրէնսն միայն խորհէր ի վերայ նորա՝ եւ ո՛չ զԱստուծոյն, թէ Յնտս երթ սատանայ՝ գայթաղութիւն իմ^ա: 46 Եւ դարձեալ թէ այսս եւ դեւս չարս՝ զհրապուրողս յաւտար վարդապետութիւնս կարգայ, վասն զտգէտսն, զյողղողս շարժահիմն առնելոյն: 47 Ըստ երկնաքաղաքացւոյն առնն, որ ասէր զպատերազմ ունել ընդ այսս չարս, որ ի ներքոյ երկնից, որք խռովեն եւ տատանեն հողմով վարդապետութեամբ, եւ թէ այնպիսի վարդապետութիւն, որ է հողմ, ա՛յսք անուանին, որպէս սաղմոսերգակն ասէ, թէ Ա՛յսբ եւ մրրիկ՝ արհնեցե՛մ գՏԷր՞ գոր ի լսումն ածողքն՝ հողմս փոխարկեն: 48 Եւ այսակի հողմոյ սկիզբն ի չարադեւն Սիմոնէ կախարդէ եղեւ: 49 Իսկ ապա ո՞ւմ խղճելի է ի Պաղտէ գսեղանս ղիւացն ասացեալ՝ զհերձուածողացն իմանալ, որ ստուգապէս կարծի ինձ եւ առանց երկբայութեան: 50 Եւ վասն քննութեան այսքան: 51 Իսկ զլիազոյնսն ի պարապ ժամու խնդրողացն մատուցուք:

52 Բայց առ հակառակամարտսն կա՛յ եւս ասել, որք Սուրբ Երրորդութեամբն ասեն սրբել, թէպէտ եւ հաւատ ի Քրիստոս ոչ լի իցէ: 53 Մի՛ փոփոխել, ասէ մարգարէն, զսահմանս հաստատեալս ի հարանց մկրտութիւնք. Այո՛, զի ի հարցն լուաք զարժանն, եւ է սա այսպիսի ինչ: 54 Նախ՝ ասել. թէ վա՛յ ինձ, զի պիղծ շրթունս ու-

նիմ, եւ խոստովանել զարժանաւորութիւն հաւատոց անպակաս ունելով, հանդերձ ողորմութեամբ, որպէս գրէ առակողն, եւ ապաշաւելով զոչ բարւոքն յառաջագոյն. ապա սերովբէ իմն մատուցանէ զմաքրական դեղն, զմարմինն Աստուածն Բանի, հրացեալ աստուածային հրո՛վն ծախականաւ: 55 Իսկ ի վերայ սեղանոյ այսպէս ուսաք. թէպէտ եւ Սուրբ Երրորդութեանն անուն պատմիւր եւ առ զբաւորականսն ի նորա վերայ, որպէս Բանի Տեառն եւ հոգւով բերանոյ նորա ամենայն հաստատեալք, եւ Լուսով երեսաց բոց տեսանեմք զոյսէ: 56 Եւ երիցս սուրբն ասելով, զմի Տէրութիւնն խոստովանելով, եւ այլք բազումք այսպիսիք բարբառք ի տաճարին: 57 Բայց զի ի Քրիստոս Յիսուս զհաւատն կատարեալ ոչ ունէին, թէպէտ սեղան է, այլ առաքեալ որոշեաց զմերս ի խորանի՛ն պաշտաւնէից, զսոյն իմանալի է եւ աստ:

58 Այլ ասեն ոմանք, թէ սաղմոսերգն՝ նշանակաբարս զխաչն ցուցանելով մեզ, զսեղանդ անուն յիշատակեաց, որ ձեւ եւ զաւրինակ յայտեալ՝ վասն վերունակ լինել մարմնոյն Տէրունեան: 59 Ապա աւրինադրի մեզ, զի նոցունց արարեալ խաչ նիւթեղէն՝ քակտել կամ չընդունել. ապա թէ այս ո՛չ, հանգոյն նորին եւ սեղանն: 60 Ասասցուք եւ առ այս, թէ հրաման ունէաք ի Գրոց, կամ ի ճշմարիտ հարանցն. այո՛. որպէս եւ այժմ բազում անգամ հրաժարիմք ի տէրունեան նշանէն, որ հանաւ յայսց ի վերայ հացին բեկելոյ եւ բաժակին, հրամանաւ ներբարգաւածիցն, թէեւ է պատուական: 61 Իսկ զնիւթեղէնդ վասն այնր ոչ. զի թէ եւ նոցա յիմարութիւն է, իսկ մեզ զարութիւն Աստուծոյ՞ քանզի

ա Մարտ. Գ 10. Ժ 23
բ Սաղմ. Ճ Խ Ը 8
գ Հմմտ. Բ Օ ր. Ժ Թ 14:

դ Հմմտ. Սաղմ. Լ Բ 6:
ե Սաղմ. Լ Ե 10
զ Հմմտ. Ը Կ ր. Ը 18:

պատուիրէ: Մի՛ ինչ քան զգրեալսն իմա-
նալ^ա. այս ըստ տիրագոյն մտաց:

62 Բայց աղէ զնշանակ սիրաւոր, եւ
զպատիւ անգանազանողդ, վասն զի
զխաչն նշանակէ եւ գաւազանն, յաղագս
նոր պտուղն բերելոյ, եւ բարունակ՝ վասն
ճռին ողկուզոյ. եւ ծառ՝ սակս կախման
խոյրն. թէ կամիս յաւելից եւ զսանդուղսն:

63 Իսկ ստուգագոյն է՝ տուեալն երկիւղա-
ծաց նշան: 64 Արդ՝ հաւասարապէս տալի
է մեզ զպատիւն, որք զճշմարտութիւնն
զլիաւորեալ առաք, որով նշանաւ պար-
ծիմք իսկ. եւ այնց որ յառաջ նշանակա-
բարսն ցուցանէր, եւ կամ թէ ըստ անձնիւր
հարկաւոր պիտոյիցն առ նոսա, ոչ դուզ-
նաքեայ խնամ ունիմք¹, անարգութիւն
ինչ հասանիցէ ի խաչ կամ ի սեղան:

65 Ապա ուրեմն ոչ հասարակ է պատիւ
խաչին եւ սեղանոյ: 66 Իսկ որք ասեն
մանկանց անբանից ունել զպատուակա-
նութիւն սեղանոյս, եւ հասարակ զընկա-
լումն, քանզի բան ոչ գոյ երկաքանչիւր
խոստովանութեան, յայտնի են պատճառք
կամաց նոցա. ի լսելն թէ ոչ է երկրորդ
մկրտութիւն որ ի Սուրբ Երրորդութիւնն,
ջանան անորոշ մտաց իմացուցանել, զի
երկուցեալք ի հարանցն աւանդութեանց
փոխելոյ, ահամայ յայնպիսի սեղանոց վա-
յելեսցեն զանվայելն մակարդ, առ այնպի-
սիսն՝ եւ ոչ մի բան առնել պատասխանի,
կատարեալ իմաստութիւն:

67 Իսկ առ բարի հովիւղ ասասցուք,
ո՞չ ապաքէն կանոն աւրինադրեցաւ ծնաւ-
ղաց յանգագուշութենէ մահ ի վերայ հա-
սեալ համբակաց, ապաշխարութիւնն ա-
մաւք որոշելովք. եթէ հեղգութիւն մարմ-
նոցն հասցէ քթուանաց անաւթովք,

զծնաւղսն ասեմք պարտաւոր: 68 Եւ թէ
չարափառ եղեալք կամ առանց մկրտու-
թեան՝ զերկնաւղսն մեղադրութեան ար-
ժանի առնեմք: 69 Եւ առաքեալ ծնաւ-
ղացն պատուիրէ. Սնուցանիցիք, ասէ, ուս-
մամբ եւ վարդապետութեամբ^բ: 70 Եւ Աս-
տուածաբանն իմ Մովսէս՝ որդւոցն պա-
տուիրէ. զԱստուածս քո բայ՝ մի՛ բամբա-
սիցես^գ. զի որպէս Աստուածն մեր զմեզս
մեր նա վերացոյց. այսպէս հարք եւ մարք
մեր տղայութեանն զմեր: 71 Եւ զբնու-
թիւնն իսկ ասէ առաքեալ, թէ որ կարն-
կերն է, տգէտ է բանին արդարութեան,
բանգի տղայ է. իսկ կատարեալն են կիրք
վասն ի չափն հասմանն: 72 Հանաչելիքն
հասու են ընտրութեան բարոյ եւ չարի^դ,
քաղցու եւ դառին, որք եւ զպարտսն պա-
հանջին. ապա թէ ոչ ո՞ հաւատայ առաջ-
նորդաց համարս ընդ մեր պահանջել:
73 Այսպէս իմասցի եւ ի վերայ տղայոցն,
քանզի համբակացն ծնաւղացն խոստովա-
նութիւն յաղագս անձանց եւ նոցա՝ բաւա-
կան իմանամք: 74 Իսկ սեղանոց՝ ոչ այս-
պէս: 75 Քանզի որպէս սովորութիւն կա-
լաւ առ ոմանս շարժել զսեղանոցն զհաս-
տիչն ինչ ոչ վնասեաց: 76 Արդ՝ որպէս
յայս եկն բանս, է՞ զոր շնորհատուր իշխա-
նութեամբ յարժանաւորութիւն կոչէք, եւ
է՞ զորս խոստովանութեամբ ասել նախ
զանաւրէնութիւնն յորմէ արդարանան:
75 Իսկ սեղան ուրեմն փոխել իրաւունք են:

76 Այս ի մէնջ աղերս առ ձեզ, եւ
խնդիր ըստ գրոց, ուղղել ի պատուիրանաց
զսխալումն կամաց մերոց, ձեզ է բաւակա-
նութիւն. ապա թէ իշխանութեամբ ինչ
կամիք, եւ ոչ ըստ Գրոց, մեր վերջին բան
վասն այդր դոյնդ է:

^ա Ը ԿՊ. Գ 6

1 Ե. եպս. Գ. ունի՝ զի մի

^բ Հմմտ. Եփե. Գ 4:

^գ Եւ. ԻԲ 28

^դ Հմմտ. Եփե. Ե 13:

ՄՈՎՍԷՍ Բ. ԵՂԻՎԱՐԴԵՑԻ

ԹՈՒՂԹ ՏԵԱՌՆ ՄՈՎՍԻՍԻ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՌ ԿԻՐՈՆ ՎՐԱՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ

ՄՈՎՍԵՍ Բ. ԵՂԻՎԱՐԴԵՑԻՆ ԵՒ ԻՐ ԹՈՒՂԹԸ

Յովհաննէս Դրասխանակերտցի եւ Ստեփաննոս Տարօնեցի Ասողիկ պատմիչները՝ նոյն աղբիւրից քաղած վկայութեամբ, Մովսէս Բ. կաթողիկոսը ծնուել է Արագածոտն գաւառի Եղիվարդ գիւղում: Յաջորդել է Յովհաննէս Բ. Գաբեղենացի կաթողիկոսին եւ գահակալել 30 տարի (574-604 թթ.): Նրա օրօք ու նախաձեռնութեամբ տեղի ունեցած կարեւոր պատմամշակութային իրադարձութիւններից մէկը 584 թ. տոմարական բարեփոխութիւնն է, երբ «ի Հրամանէ մեծին Մովսէսի քերթողք եւ գիտունք արուեստին եղին զկարգ թուականութեան Թորգոմեան համարոյ, որ է շարժումն յառաջխաղաց եւ հիմն զանազան մասանց արուեստին: Եւ այսպէս՝ ըստ հայկական լեզուի տուեալ տօմար տօնից տարեկանից»¹: Ուխտանէսը այստեղից է քաղում իւր տեղեկութիւնը՝ տօների կարգաւորումը կոչելով «Պատճէն տումարի հայ ամսոց»²: Խօսքը, անշուշտ, Պատմէն տումարի բնագրի մասին է³:

Մովսէս Եղիվարդեցու կաթողիկոսութեան տարիներին սկիզբ առաւ հայ-վրացական դաւանական մի բանավէճ, որ Աբրահամ Աղբաթանեցու օրօք աւարտուեց Հայոց եկեղեցուց Վրաց բաժանմամբ: «Աշխարհաւ եւ ազգաւ Վրացի» Կիւրոնը «ունէր զզպրութիւն վասն Վրաց եւ Հայոց» (Ուխտանէս) եւ 15 տարի Նիկոպոլսում բնակուելուց ու գործելուց յետոյ եկել էր Հայաստան եւ Մովսէսի սատարմամբ կարգուել Դուինի Ս. Կաթողիկէի վանաց երէց՝ միաժամանակ, իբրեւ քորեպիսկոպոս, վարելով Արարատեան գաւառի վիճակը: Հինգ տարի անց (598 թ.), ի պատասխան Վիրքից ժամանած եպիսկոպոսների եւ իշխանների խնդրանքի, Մովսէսը Վրաց կաթողիկոս է առաջադրում Կիւրոնին՝ «իւր համարելով զնա»: Երկու տարի անց Յուրտաւի եպիսկոպոս Մովսէսը, «բանիւ եւ ի ձեռն գրոյ», Հայոց հայրապետին տեղեկացնում է, թէ Կիւրոնը Սիւ անունով վաղածանօթ ոմն խուժիկի եպիսկոպոս է ձեռնադրել եւ քաղկեդոնական նկրտումներ է ցուցաբերում: Մովսէս կաթողիկոսը «գրէ զթուղթ առ Կիւրոն սիրոյ պատճառաւ եւ առաքէ ի ձեռն Ստեփաննոսի եպիսկոպոսի... զի թերեւս կարասցէ շահել զնա»: Հայոց հայրապետից պատկառող Կիւրոնը մեղմում է իր ձգտումը:

Ուխտանէս պատմիչը Աբրահամ Աղբաթանեցու առ Կիւրոն ուղարկած առաջին թղթից ու նրա պատասխանից տեղեկացել է Մովսէս Եղիվարդեցու կողմից Կիւրոնին հասցէագրած Թղթի մասին, սակայն նրա օրինակը չի գտել Գիրք Թղթոցում⁴: Պրպտումները պատմիչին տարել են Տփղիս, ուր նա Կիրակոս քահանայի օգնութեամբ ու վրացերէնից հայերէն թարգմանութեամբ ձեռք է բերել Մովսէս Եղիվարդեցու Թուղթն ու Կիւրոն կաթողիկոսի պատասխանը եւ զետեղել իր Պատմութեան Բ բաժնում⁵:

1 Յովհաննէս Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 65

2 Ուխտանէս, Բ, էջ 6

3 Պատմէն տումարի (է-ժե դդ.) քննութիւն եւ բնագրեր, աշխատասիրութեամբ՝ Ջ. Էյնաթեանի, աշխատակցութեամբ եւ խմբագրութեամբ՝ Գ. Տէր-Վարդանեանի, Երեւան, 2002

4 Ուխտանէս, Բ, էջ 74, 76

5 Նոյն տեղում, էջ 8-13

Գիրք Թղթոցի երկրորդ հրատարակութիւնը պատրաստելիս Հ. Նորայր Պողարեանը, Ուխտանէսից քաղելով, գետեղել է այդ բնագիրը, որտեղից եւ քաղում ենք այն՝ մասնակի սրբագրումներ կատարելով¹:

Մասնագիտական գրականութեան մէջ Մովսէս Բ. կաթողիկոսի ձեռակերտ է համարուում Եղիվարդի եռանաւ բազիլիկ եկեղեցին: Սակայն յուշարձանի հարաւային պատին փորագրուած խոշորատառ եւ ծածկագիր շինարարական արձանագրութեան առեղծումից պարզուեց, որ այն կառուցուած է 660 թ.: Աւետարանի ասոյթը ծածկագրի վերածելով՝ «ոչ իմ ինչ մտացածնի քողախնդրեալ»²:

Պարոյր Մուրադեան

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

1. Ուխտանէս, Բ, էջ 8-13:
2. Գիրք Թղթոց, էջ 221-230:
3. **Հ. Ներսէս Ակիմեան**, Կիրոն կաթողիկոս Վրաց. Պատմութիւն հայ-վրաց յարաբերութեանց եօթներորդ դարու մէջ, Վիեննա, 1910, էջ 108-126, 166-171:
4. **Մաղափա արքեպս. Օրմանեան**, Ազգապատում, § 381-398:
5. **Յեժանյեւ**. *ისტორია გამოყოფისა ქართველთა სომეხთაგან. სომხური ტექსტო ქართული თარგმანითა და გამოკვლევით გამოხცა ზაზა ალექსიძემ*. თბილისი, 1975, გვ. 26-36.
6. **Bishop Ukhtanes of Sebastia**, *History of Armenia. Part II. History of the Severance of the Georgians from the Armenians*. Translation, introduction and commentary by Fr. Zaven Arzoumanian, Ph. D. Columbia University, Fort Lauderdale, 1985, pp. 44-48.

1 ԳԹ, էջ 221-230

2 Տե՛ս «Նրեւանի համալսարան», 1974, քիւ 1 (19), էջ 36-40. 1976, քիւ 1 (24), էջ 47-52:

ԹՈՒՂԹ ՏԵԱՌՆ ՄՈՎՍԻՍԻ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՌ ԿԻՐՈՆ ՎՐԱՅ ԿԱԹՈՂԻԿՈՍ

1 Կիրոնի Վրաց Կաթողիկոսի եւ այլ Եպիսկոպոսաց աթոռակցաց քոց՝ ի Մովսիսէ Հայոց Կաթողիկոսէ եւ յայլ Եպիսկոպոսաց աթոռակցաց իմոց՝ սիրով ողջոյն:

2 Յառաջագոյն իսկ մինչդեռ առ մեզն էիր՝ խաւսեցաք ընդ քեզ բան խրատու եւ մխիթարութեան. որպէս սիրելի եղար եւ աթոռակից՝ որպէս եւ եսդ, եւ եղիցիս արժանապէս գնալ քեզ ի ճանապարհս Տեառն եւ պահել զպատուիրանս նորա սուրբ սրտիւ եւ անկեղծաւոր հաւատով, եւ զգուշանալ ի վարս եւ ի գնացս, եւ բարիոք հով[ու]ել եւ հովուապետել, եւ զգոյշ լինել հատիղ՝ որ քեզ հաւատացաւ. եւ այլ ամենայն պատուիրանք Տեառն՝ որ յայդ բան բովանդակին: 3 Եւ դարձեալ գնոյն գրեմ գնալ արժանապէս ի ճանապարհս Տեառն, եւ երանելի լինել ըստ մարգարէին ձայնի, եւ ո՛չ գնալ ի խորհուրդս ամբարշտաց, եւ յիշել զամենայն բանս Աստուածաշունչ գրոց Հին եւ Նոր կտակարանաց, որ պատուիրեն մեզ՝ պահել զպատուիրանս Տեառն ուղիղ մտաւք եւ ճշմարիտ խոստովանութեամբ, եւ ո՛չ խոտորիլ ի ճանապարհաց Տեառն յաջ կամ յահեակ. եւ ես գնոյն խնդրէի լսել ի քէն: 4 Բայց արդ լսեմ, թէ հերձուածք գոն ի քեզ. եւ սակաւ ինչ հաւատացի: 5 Բայց հաւատացի, վասնզի ի հաւատարիմ վկայից եղեւ մեզ ծանուցեալ: 6 Եւ լուաք այսպէս, եթէ այր մի խոտորիկ նեստորական եկն առ քեզ եւ ի քէն առեալ ձեռնադրութիւն Եպիսկոպոսութեան. եւ զարմացայ յոյժ, զի գայնպիսին ո՛չ միայն ի պատիւն յայն ածել արժան էր, այլեւ պատժել, եւ ի ժողովս հաւատացելոց ո՛չ ընդունել. զի գայլ ո՛չ երբէք բնակի ի մէջ ոչխարաց, այլ եթէ երբէք բնակիլ հանդիպի՝ աւձտէ

եւ ցրուէ գնոսա: 7 Նմանապէս եւ գողք. զի գող ո՛չ գայ՝ եթէ ո՛չ զի գողասցի եւ սպանցէ եւ կորուսցէ՝ ասաց մեզ Տէրունական բանն: 8 Վասնզի այնպիսիքն գողք են եւ աւազակք եւ գայլք յափշտակողք. եւ դարձեալ սուտ առաքեալք եւ մշակք նենգաւորք, եւ կերպարանին զգեստիւք ոչխարաց, եւ ի ներքոյ գայլք են յափշտակողք. յայնպիսեացն զգուշանալ մեզ հրամայեաց Հովիւն քաջ. որ եղ գանձն իւր ի վերայ ոչխարաց՝. եւ ապա յաւուր վրիժուց հատուցման հատուցանէ նոցա որոշելով ի ձախակողմն կոյս, ասելով՝ Երթայք անիծեալք յինէնք, եւ որ ի կարգին է բան: 9 Եւ դարձեալ, եթէ՝ Ի բաց կացէ՛ք յինէն ամենայն մշակոյ անիրաւութեան. զի ո՛չ գիտեմ գձեզ: 10 Նաեւ ընդ մէջ կտրեսցէ գնոսա, եւ զմասն նոցա ընդ անհաւատս դիցէ. զի եւ առաքէ ի տեղին, զոր պատրաստեալ է սատանայի եւ հրեշտակաց նորա:

11 Արդ գիտեմք՝ զի անգիտութեամբ արարեր գայդ: 12 Արդ, դարձի՛ր եւ ապաշաւեա՛ հանդերձ ապաշխարութեամբ. եւ արտասուաւք ասա՛ դու զմարգարէին. Տէ՛ր, մի՛ յիշեր զմեզս մանկութեան իմոյ եւ զանգիտութեան. եւ այլ մի՛ եւս տացես տեղի բնակութեան խոտորիկ ի մէջ հաւատացելոց: 13 Եւ պատուիրեմ՝ մեծաւ սաստիւ, զի մի՛ ոք իշխեսցէ ընդունել գնա ի յարկս իւր, եւ մի՛ տալ նմա ողջոյն ամենեւին, եւ մի՛ տեղի բնակելոյ նմա ընդ իշխանութեամբ քոյ: 14 Եւ դարձեալ՝ մի՛ երբէք ողջոյն տալ նմա ի հաւատացելոց քոց. վասնզի հրաման առաք յաստուածային պատուիրանաց՝ այնպի-

« ԹՊՎ. Ժ 11

բ ՄՊԲ. Ի Ե 41

գ ՂՎ. Գ. Ժ Գ 27

սեացն ողջոյն ո՛չ տալ. այլ դու ապաշա-
ւեա՛ հանդերձ արտասուլաւք եւ ողորմու-
թեամբ աղքատաց, եւ ապաշխարեա՛ մե-
ծաւ զղջմամբ, զի ապաշաւելն է դադարելն
ի մեղացն: 15 Զի եթէ մեղիցես, դարձցիս,
ասէ, եւ թէ ուղղեսցիս, յերկար ձգիցիս. եւ
յորժամ դարձցիս եւ յոգւոց հանիցես եւ
հեծեծիցես: 16 Արդ, դարձցին առ Աս-
տուած՝ որ խնդրեն զնա, գրեալ է:
17 Վասնզի զդարձն միայն խնդրէ Աս-
տուած. Գարձարն՝ւֆ առ իս, ասէ, եւ ես
դարձայց առ ձեզ՞: 18 Արդ, մի՛ լինիր չա-
րի յիշատակ, եւ մի՛ գտիչ չարեաց. վասն-
զի ունիս բազում պատուիրանաց յիշա-
տակ. զբարի գործովք մի՛ զանց առներ:

19 Արդ, այսոքիկ քեզ պատուէր ի
Գրոց սրբոց. զի սիրեսցես զՏէր Աստուած
քոյ. քանզի այն է պատուիրանն Աստու-
ծոյ՝ զի սիրեմք զնա ի սուրբ սրտէ եւ յան-
կեղծաւոր հաւատոյ. զի գրեալ է, սիրես-
ցես զՏէր Աստուած քոյ յամենայն սրտէ
քոյմէ եւ զաւրութեանէ՞, եւ որ այլն եւս:
20 Այս է առաջին պատուիրան. եւ ամե-
նայն Գիրք աստուածայինք յայս բան բո-
վանդակին: 21 Արդ, պահեա՛ զհաւատ եւ
զխոստովանութիւն սրբոց հարցն, զոր ին-
քեանք դաւանեցին, եւ զնոյն մեզ աւան-
դեցին երեք հարիւր տասն եւ ութքն՝ որ ի
Նիկիայ, եւ հարիւր եւ յիսունքն՝ որ ի
Կոստանդնուպալիս, եւ երկերիւրքն որ
յեփեսոս, իմա զայն՝ որ ի ժամանակս Կա-
լատայ արքայից արքայի խնդիր եղեւ
քննութեան հաւատոց, եւ Հոռոմք զՔաղ-
կեդոնին ընկալան զհաւատս, եւ մեր աշ-
խարհս եւ ձեր հրաժարեցին եւ հեռացան.
եւ դեռ եւս գրով կայ եւ պահի մեր եւ ձեր
միաբանութիւն հաւատոյ: 22 Արդ, մի՛
ստեր ուխտի հարցն մերոց՝ որ եղին ի մէջ
երկոցունց, եւ մի՛ մեկներ ի միաբանութե-
նէ մերմէ. եւ մի՛ թողուր զուսումն ման-

կութեան, եւ մի՛ մոռանար զուխտն աս-
տուածեղէն, եւ մի՛ ձայնակից լինիր Հոռո-
մոց, եւ մի՛ դառնար սրտիւք քոյ յԵգիպ-
տոս, եւ ի փրկողէ քեզ զՓարաւոնի դառն
տերութիւնէն Հոռոմոց, եւ ի չար վերակա-
ցուացն, եւ ի դառն ծառայութեանէ. մի՛
յանդիմաներ ի մարգարէէն, թէ ո՛չ կացին
նոքա յուխտին Տեառն, եւ ըստ իրաւանց
նորա ոչ կամեցան զնալ: 23 Եւ այլուր թէ՛
դարձան սրտիւք իւրեանց յԵգիպտոս:
24 Արդ, մի՛ յենուր ի ցուպն եղեգնէ ի
ՂախՂախեալն. զի թէ յենուցուս, վնաս ոչ
սակաւ առնիցես անձին քուս:

25 Մի՛ քակեր զցանկ հայրենի, զոր
հաստատեցին սուրբ հարքն վիմաւք հա-
ւատոց: 26 Զի որ քակէ զցանկ, հարցէ
զնա աւճ. եւ որ գլէ վէժ՝ կորուստ անձին
իւրոյ առնէ: 27 Արդ, հաստատուն կա՛լ զ-
խոստովանութիւն երից սուրբ ժողովոցն.
զոր հարքն մեր եւ ձեր միաւորական գրով
հաստատեցին ի մէջ իւրեանց, որ դեռ եւս
կայ: 28 Եւ փախի՛ր անչափ հեռաւորու-
թեամբ ի պիղծ ժողովոյն Քաղկեդոնի եւ
յանընդունակ տոմարէն Լեւոնի. եւ նգո-
վեա՛ զամենայն հերձուածողսն զառա-
ջինսն եւ զմիջինսն եւ զվերջինսն, զոր
սուրբ հարքն նգովեցին, եւ մեք նգովեմք.
եւ բա՛րձ զամենայն չար ի միջոյ:
29 Վասնզի գրեալ է՝ Բարձե՛ֆ, ասէ՛ զչարն
ի միջոյ ձերմէ՞ : 30 Եւ դարձեալ, եթէ ելե՛ֆ
ի միջոյ ցոցա եւ մեկնեցարուֆ, եւ ի պիղծս
մի՛ մերձեցայք՞. եւ ես ընկալայց զձեզ՝ ա-
սէ՛ Տէր: 31 Արդ զԽուժիկն զայն հալածեա՛
յերկրէ քումմէ եւ յաշխարհէ, մի՛ դարձեալ
արմատ դառնութեան ի վեր երեւեալ, եւ
նովաւ բազումք պղծեսցին:

32 Յիշեա՛, զի եկիր բնակեցար ընդ
հովանեաւ սրբոյ Կաթուղիկէիս, եւ ծառա-
յեցեր միամտութեամբ սրտի քո ի ձեռն

« Հմմտ. Բ՝ Մատթ. Լ. 9, Բ՝ Օր. Լ. 2:

բ՝ Մատթ. Բ՝ 37

գ՝ Բ՝ Օր. ԺԳ. 5, ԺԷ. 7

դ՝ Ե՝ Ե՛ 11

հոգեւոր ծառայութեանն՝ որ քեզ հաւատացաւ ի մէնջ. եւ մեք վստահացեալ ի կեանս քո, առ սէր քո՝ արարաք զկամս քո՝ առաջնորդ զքեզ կացուցանելով աշխարհիդ այդմիկ. զի թէպէտ եւ էիր ազգաւ եւ բնակութեամբ յաշխարհէդ, այլ վաղ ուրեմն հեռացեալ եւ աւտարացեալ ի Հռոմայեցւոցն վարեցար աշխարհ:

33 Իսկ շնորհք Հոգւոյն, որ կոչեաց զքեզ ի կոչումնդ յայդ հոգեւոր, իբր ըմբռնմամբ իմն ձգեաց եւ եհան զքեզ յերկաթի հնոցէն՝ եւ ի միջոյ հալոցացն Հռոմոց բռնութենէն. վասն զի փառք Տեառն ի կղզիս ծովու, եւ անուն նորա փառաւոր եղիցի յամենայն տեղիս հեռաւորս: 34 Արդ, մի՛ լինիր պատճառ կորստեան քեզ եւ ժողովրդեան քում, զի մի՛ գուցէ հասանիցեն նզովք ի Տեառնէ յաղաքս քո ի վերայ ժողովրդեան երկրիդ՝

ըստ ասելոյ մարգարէին, եթէ՛ նզով կերիցեն գերկիր, զի մեղան բնակիչք նորա, եւ մնացեն մարդք սակաւաւորք՝: 35 Եւ դարձեալ, եթէ՛ Առաքեցել Տէր ի պատիւ քո անարգանս եւ զփառս հանցել ի քեզ: 36 Եւ դարձեալ, եթէ՛ Յորժամ կատարեցել Տէր առնել զամենայն ինչ, ածցել զանոն իւր ի վերայ մեծամտինք, եւ որք զանձինս առ իմաստունս ունին, եւ խորհեցան խորհուրդ այլ ո՛չ Տէրամբ:

37 Արդ, զայսոսիկ ի բազում վշտաց եւ ի նեղութենէ սրտի գրեցի առ քեզ՝ քանզի սէրն Աստուծոյ ստիպէ զմեզ խաւսել զբանս ճշմարտութեան՝ որ վասն նորա: 38 Ողջ լե՛ր ի Տէր:

39 Եւ զպատասխանիդ թղթոյդ ըստ կամաց Աստուծոյ եղիցի մեզ լսել:

40 Ողջ լեր ի Տէր:

ՑԱՆԿԵՐ

ՍՈՒՐԲԳՐԱՅԻՆ ՅՂՈՒՄՆԵՐ

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ, ՑԵՂԱՆՈՒՆՆԵՐ

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐ, ՏՈՅՍԱՆՈՒՆՆԵՐ

ՍՈՒՐԲԳՐԱՅԻՆ ՅՂՈՒՄՆԵՐ

Ծն. Ա 4 408	Սաղմ. Ղ 5 496	Մաղբ. Գ 10, Ժ 9 23 522
Ծն. ԽԹ 11 392	Սաղմ. Ճ Գ 4 398	Մաղբ. Ժ 19 505
Ծն. ԽԹ 9 393	Սաղմ. Ճ Ժ 6 34, 42	Մաղբ. Ժ 28 31
ԵԼ. Ժ Բ 2 453	Սաղմ. Ճ Ի 4 398	Մաղբ. Ժ 8 432
ԵԼ. Ի Բ 28 523	Սաղմ. Ճ Ի Գ 1 41	Մաղբ. Ժ Ա 7 380
ԵԼ. Լ Բ 31-32 474	Սաղմ. Ճ Լ Գ 6 398	Մաղբ. Ժ Գ 21 503
Ղ Ե- Ի Ե 36 432	Սաղմ. Ճ Խ Ը 8 522	Մաղբ. Ժ Է 5 120, 379, 453-454
Բ Օ ր . Ժ Գ 5, Ժ Է 7 530	Ասակ. Ը 30 398	Մաղբ. Ժ Է 21 503
Բ Օ ր . Ժ Թ 14 522	Ասակ. Ի Գ 27 508	Մաղբ. Ի 16, Ի Բ 14 486
Բ Օ ր . Լ 2 530	Ասակ. Լ 12 500	Մաղբ. Ի Բ 32 359
Յեռ. Ա 2 359	Ժող. Է 17 500	Մաղբ. Ի Բ 37 530
Ա Թ ա գ . Ե 10 498	Ժող. Ժ 8 484, 508	Մաղբ. Ի Գ 19 521
Գ Թ ա գ . Ը 27 398	Երգ. Գ 12 393	Մաղբ. Ի Գ 31 521
Գ Թ ա գ . Ժ Է 17-23 368	Ես. Ի Է 6 393	Մաղբ. Ի Ե 41 529
Բ Մ ն ա յ . Լ 9 530	Ես. Բ 3 483	Մաղբ. Ի Գ 50 496
Յոբ. Ի Ը 5 391	Ես. Ժ 12 531	Մաղբ. Ի Ը 19 445
Յոբ. Լ Ը 19 391	Ես. Ժ Գ 3-21 68	Մաղբ. Ի Թ 7 379
Յոբ. Ի Ե 7 398	Ես. Ժ Թ 1 394	Մաղբ. Ժ Գ 15 7
Յոբ. Ի Ը 14 398	Ես. Ի Գ 6 531	Յովհ. Ա 1, 3 480
Սաղմ. Զ Գ 2 391	Ես. Ի Թ 12 394	Յովհ. Ա 14 454
Սաղմ. Զ Գ 3 393	Ես. Լ Է 35 360	Յովհ. Գ 5 28
Սաղմ. Ճ Գ 15 391	Ես. Ծ Գ 2 394	Յովհ. Գ 18 7
Սաղմ. Ա 1-2 39	Ես. Կ Բ 10 472, 519	Յովհ. Գ 10-11 393
Սաղմ. Բ 7 390, 454, 503	Երեմ. Թ 1-2 30	Յովհ. Գ 49 392
Սաղմ. Գ 2 464	Երեմ. Ժ Է 1 521	Յովհ. Է 37 392
Սաղմ. Գ 2, Լ Է 2 463	Երեմ. Ժ Է 5 503	Յովհ. Գ 6 28
Սաղմ. Է 1 34	Եղևկ. Խ 2 494	Յովհ. Ժ 11 529
Սաղմ. Ժ 1 31	Եղևկ. Խ 3, 5, 8 397	Յովհ. Ժ 16 28
Սաղմ. Ժ Ը 6 394	Եղևկ. Խ Գ 1-2 394	Յովհ. Ժ Գ 12 464
Սաղմ. Լ Բ 6 522	Ո վ ա . Թ 8 498	Յովհ. Ժ Գ 28 479
Սաղմ. Լ Գ 19 29	Ո վ ա . Ժ Բ 10 397	Յովհ. Ժ Ե 1 392
Սաղմ. Լ Գ 2 11	Ո վ ա . Ժ Գ 6 393	Յովհ. Ժ Է 11, 22 479
Սաղմ. Լ Ե 10 522	Ո վ ա . Ժ Գ 7 394	Յովհ. Ժ Է 24 360
Սաղմ. Լ Է 2 463	Յ լ լ . Գ 19 393	Ղ ա ս . Ա 31-32 503
Սաղմ. Խ Գ 24 398	Ա մ բ . Բ 15 498	Ղ ա ս . Ա 42 41
Սաղմ. Խ Գ 23 464	Զ ա ս . Ա 8, Զ 3, 6 397	Ղ ա ս . Ա 48 395
Սաղմ. Խ Գ 27 464	Բ ա ր . Գ 36, 38 390	Ղ ա ս . Ա 78-79 395
Սաղմ. Ծ 19 90	Մ ա ղ բ . Ա 1 379	Ղ ա ս . Բ 8 379
Սաղմ. Ծ Գ 7-8 31	Մ ա ղ բ . Ա 20 391	Ղ ա ս . Բ 14 454
Սաղմ. Կ Է 6 396	Մ ա ղ բ . Գ 10-11 379	Ղ ա ս . Ժ Բ 8 7
Սաղմ. Հ Գ 3-4 32	Մ ա ղ բ . Գ 17 120, 453-454	

ጊዜ-ታሪክ 8 513	ፎቶግራፊያ 33 509	ፎቶግራፊያ 4 32
ግንባታ-ቤት 22 503	ፎቶግራፊያ-ፊልም 19 506, 509	ፎቶግራፊያ-ግል 1 513
ግንባታ-ገንዘብ 30 503	ፎቶግራፊያ-ግል 1 397	ፎቶግራፊያ-ግል 12 30
ግንባታ-ታሪክ 42 400	ፎቶግራፊያ-ግል 17 33	ፎቶግራፊያ-ግል 12 29
ግንባታ-ታሪክ 37 483	ፎቶግራፊያ-ግል 17 41	ፎቶግራፊያ-ግል 10 455
ግንባታ-ታሪክ 23 494	ፎቶግራፊያ-ግል 4 497	ፎቶግራፊያ-ግል 13 523
ግንባታ-ገንዘብ 28 449	ፎቶግራፊያ-ግል 4 123	ፎቶግራፊያ-ግል 30 486
ግንባታ-ገንዘብ 16 519	ፎቶግራፊያ-ግል 14-16 39	ፎቶግራፊያ-ግል 31 486
ግንባታ-ግል 4 400	ፎቶግራፊያ-ግል 17 33	ፎቶግራፊያ-ግል 8-9 402
ግንባታ-ግል 3 474	ፎቶግራፊያ-ግል 18 33, 503	ፎቶግራፊያ-ግል 10 521
ግንባታ-ግል 5 402, 483	ፎቶግራፊያ-ግል 6 135	ፎቶግራፊያ-ግል 15 485
ግንባታ-ግል 32-33 484	ግንባታ-ግል 9 120, 508	ፎቶግራፊያ-ግል 1 480
ግንባታ-ግል 1 519	ግንባታ-ግል 13 450	ፎቶግራፊያ-ግል 20 483
ግንባታ-ግል 17 484	ግንባታ-ግል 4 523	ፎቶግራፊያ-ግል 20 483
ፎቶግራፊያ 2 483	ፎቶግራፊያ-ግል 23 360	ፎቶግራፊያ-ግል 10 447, 451
ፎቶግራፊያ-ግል 15 455	ፎቶግራፊያ-ግል 6-7 503	ፎቶግራፊያ-ግል 7 451
ፎቶግራፊያ-ግል 6 523	ፎቶግራፊያ-ግል 5 28	ፎቶግራፊያ-ግል 10-11 484
ፎቶግራፊያ-ግል 16-17 33	ፎቶግራፊያ-ግል 3 513	ፎቶግራፊያ-ግል 12 123, 416, 447
ፎቶግራፊያ-ግል 6 483	ፎቶግራፊያ-ግል 3 507	ፎቶግራፊያ-ግል 13 123

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ, ՑԵՂԱՆՈՒՆՆԵՐ

Ա

- ԱԲՂԱՀԱՅ 117
ԱԳՌԱԽ, ՎԷՄ 314
ԱԶՈՎՏՈՍ 497
ԱԹԵՆԱՑԻՔ 294, 299, 301, 494
ԱԹԷՆՔ 182, 299, 335-336
ԱԼՈՒԵՆ 133 (տե՛ս ԱՂՈՒԷՆ)
ԱԼՈՒԷՆ 133-134 (տե՛ս ԱՂՈՒԷՆ)
ԱԽԱՅ 118
ԱԿԵ 418
ԱՂԲԵՂ 133 (տե՛ս ԱԶԲԵՂ)
ԱՂԲԵՐՂ 133 (տե՛ս ԱԶԲԵՂ)
ԱՂԵՔՍԱՆԴՐ 406, 455 (տե՛ս նաև ԱՂԵՔ-
ՍԱՆԴՐԱՑԻՈՑ ՔԱՂԱՔ, ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ)
ԱՂԵՔՍԱՆԴՐԱՑԻՈՑ ՔԱՂԱՔ 482 (տե՛ս
նաև ԱՂԵՔՍԱՆԴՐ, ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ)
ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ 406, 481 (տե՛ս նաև Ա-
ՂԵՔՍԱՆԴՐ, ԱՂԵՔՍԱՆԴՐԱՑԻՈՑ
ՔԱՂԱՔ)
ԱՂՈՒԱՆՔ 51-55, 57, 60-62, 64-67, 69, 71, 73,
75, 78, 80, 85, 89, 96, 100, 103, 115, 118-120,
124-125, 127-131, 133, 139, 357-359, 363-365,
367-368, 373, 377, 387, 396, 439, 441-443,
448, 469, 472, 474, 505 (տե՛ս նաև ԱՂ-
ՎԱՆՔ)
ԱՂՈՒԷՆ 51-53, 127-131, 133-134, 357 (տե՛ս
նաև ԱԼՈՒԵՆ, ԱԼՈՒԷՆ)
ԱՂՎԱՆՔ 84 (տե՛ս ԱՂՈՒԱՆՔ)
ԱՄԱՄՐԱՍ 98 (տե՛ս ԱՄԱՐԱՍ)
ԱՄԱՐԱՍ 53, 60, 63, 98, 89, 96, 98, 100, 102,
107-108, 448 (տե՛ս նաև ԱՄԱՄՐԱՍ, Ա-
ՄԱՐԱՍԱ)
ԱՄԱՐԱՍԱ 60, 98, 107 (տե՛ս ԱՄԱՐԱՍ)
ԱՅՐԱՐԱՏ 118, 461
ԱՅՐՄԱՆՈՒԾԷԻՑ ՎԱՆՔ 134 (տե՛ս նաև
ՄԱՆՈՒԾԷԻՑ ՎԱՆՔ)
ԱՆՏԻՈՔ 374, 406, 481, 486, 512
ԱՇՏԱՐԱԿ 413
ԱՇՏԻՇԱՏ 127, 130
ԱՊԱՀՈՒՆԻՔ 117, 420, 441
ԱՌԱՆ 53, 65, 128
ԱՌԱԽԵՂԵԱՆՔ 117
ԱՍԻԱՑԻՈՑ ԱՇԽԱՐՀ 378 (տե՛ս ԱՍԻԱՑ-
ԻՈՑ ԱՇԽԱՐՀ)
ԱՍԻԱՑԻՈՑ ԱՇԽԱՐՀ 378 (տե՛ս նաև Ա-
ՍԻԱՑԻՈՑ ԱՇԽԱՐՀ)
ԱՍԿԱՂՈՆ 497 (տե՛ս ԱՍԿՈՂՈՎՆԱ)
ԱՍԿՈՂՈՎՆԱ 497 (տե՛ս նաև ԱՍԿԱՂՈՆ)
ԱՍՈՐԵՍՏԱՆ 117-118, 120
ԱՍՈՐԻՔ 5, 65, 115, 378, 411, 415, 420, 445, 448
ԱՍՏՂԻԿ, ՄԵՏԱՆ 497
ԱՏՏԻԿԵՑԻՔ 304, 307
ԱՏՏԻԿԷ 287
ԱՏՐՊԱՏԱԿԱՆ 463
ԱՏՐՊԱՏԻՃՔ (Ատրպատականի բնակիչներ)
502
ԱՐԱԳԱԾ 471
ԱՐԱԳԱԾՈՏՆ 469, 527
ԱՐԱԺԱՆՍ 95, 97 (տե՛ս նաև ԱՐԱԾԱՆ)
ԱՐԱԾԱՆ 97 (տե՛ս ԱՐԱԺԱՆՍ)
ԱՐԱՐԱՏԵԱՆ ԳԱԽԱՌ 527
ԱՐԳԵՍԱՑԻՔ 64, 80 (տե՛ս նաև ԱՐԳԷՍԱ-
ՑԻՔ, ԵՐԳԷՍԱՑԻՔ)
ԱՐԳԷՍԱՑԻՔ 64 (տե՛ս ԱՐԳԵՍԱՑԻՔ)
ԱՐԵԱՑ ԱՇԽԱՐՀ 462
ԱՐԵԻԵԼԵԱՑ ԱՇԽԱՐՀ 57-58, 129 (տե՛ս
նաև ԱՐԵԻԵԼՔ)
ԱՐԵԻԵԼՔ 4 (տե՛ս նաև ԱՐԵԻԵԼԵԱՑ ԱՇ-
ԽԱՐՀ)
ԱՐԷՈՊԱԳՈՍ 314 (տե՛ս նաև ԱՐԻՍՊԱ-
ԳՈՍ)
ԱՐԻՍՊԱԳՈՍ 314 (տե՛ս ԱՐԷՈՊԱԳՈՍ)
ԱՐԾԱԽ 100 (տե՛ս ԱՐՑԱԽ)
ԱՐՈՒՄ 377
ԱՐՏԱՇԱՏ 58
ԱՐՏԱԶ 6, 21, 57
ԱՐՑԱԽ 52, 55, 71, 91, 100, 134, 357 (տե՛ս
նաև ԱՐԾԱԽ)

ԱԻՏԷԼԱՑԻՈՑ ԳԱԻԱՌԻ 111 (տե՛ս նաև ՈՒՏԱՑԻՈՑ, ՈՒՏԻԱՑԻՈՑ)

Բ

ԲԱԲԵԼՈՆ 67 (տե՛ս նաև ԲԱԲԻԼՕՆ)
 ԲԱԲԻԼՕՆ 67 (տե՛ս ԲԱԲԵԼՈՆ)
 ԲԱԳՐԵԻԱՆԴ 413, 418, 420
 ԲԱԶԿԱՆՑ 100 (տե՛ս ՊԱՐԶԿԱՆՑ ԳԱԻԱՌԻ)
 ԲԱԽԱՂԱՏ 448 (տե՛ս նաև ԲԱՂԱՂԱՏ)
 ԲԱՂԱՂԱՏ 448 (տե՛ս ԲԱԽԱՂԱՏ)
 ԲԱՂԱՍԱԿԱՆ 448
 ԲԱՍԵՆ 117, 418, 420, 445, 448
 ԲԴՆԱՅԻ ՎԱՆՔ 415
 ԲԵԴՂԵԵՄ 389 (տե՛ս նաև ԲԵԹՂԵԵՄ)
 ԲԵԹՂԵԵՄ 389 (տե՛ս ԲԵԴՂԵԵՄ)
 ԲԵԾԱՊՈՒՀ 452 (տե՛ս նաև ԲԵՐԾԱՊՈՒՀ)
 ԲԵՐԴՈՑ ՎԱՆՔ 129
 ԲԵՐԴՈՇՄԱՅ 118
 ԲԵՐԾԱՊՈՒՀ 452, 461 (տե՛ս նաև ԲԵԾԱՊՈՒՀ)
 ԲԶՆՈՒՆԻՔ 117
 ԲԺՆՈՒՆԻՔ 418
 ԲԻԼՈՆ 186
 ԲԻԻԶԱՆԴԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹԻԻՆ 373 (տե՛ս նաև ԲԻԻԶԱՆԴԻԱ)
 ԲԻԻԶԱՆԴԻԱ 373, 375, 489 (տե՛ս նաև ԲԻԻԶԱՆԴԱՆԴԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹԻԻՆ)
 ԲՂԱԴ ՇԱՀԱՍՏԱՆ 117

Գ

ԳԱՅԵԳՈՇ 133 (տե՛ս նաև ԳԱՅԷԳՈՇ, ԳԱՅԷԳՈՒՇ, ԳԵԳԱՇ)
 ԳԱՅԷԳՈՇ 133 (տե՛ս նաև ԳԱՅԵԳՈՇ)
 ԳԱՅԷԳՈՒՇ 133 (տե՛ս ԳԱՅԵԳՈՇ)
 ԳԱՅԷԶ 133 (տե՛ս ԳԱՅԷԳՈՇ)
 ԳԱՐԴՄԱՆ 139, 448 (տե՛ս նաև ՔԱՐԴՄԱՆ)
 ԳԱՐՄԵԿԱՆ 117 (տե՛ս նաև ԳԱՐՄԻԿԱՆ)
 ԳԱՐՄԻԿԱՆ 118 (տե՛ս նաև ԳԱՐՄԵԿԱՆ)
 ԳԵԳԱՇ 133 (տե՛ս ԳԱՅԵԳՈՇ)
 ԳԷԹ 497
 ԳԻՍ 95

ԳԻԻՏԱԿԱՆ 111 (տե՛ս նաև ԴԻԻՏԱԿԱՆ, ԴՈՒՏԱԿԱՆ)

ԳՈՂԹՆ 420
 ԳՈՒԳԱՐՔ 25
 ԳՈՒՆՏՇԱՊՈՒՀ 118
 ԳՈՒՐԿԱՆ 475
 ԳՏՉԱՎԱՆՔ 55

Դ

ԴԱՄՈՔ 415
 ԴԱՇՏԱԿԱՐԱՆ 117
 ԴԱՐԱՀԱՇ 95 (տե՛ս ԴԱՐԱՀՈՇ)
 ԴԱՐԱՀԱՋ 95 (տե՛ս ԴԱՐԱՀՈՇ)
 ԴԱՐԱՀՈՇ 53, 91, 95, 133, 357 (տե՛ս նաև ԴԱՐԱՀԱՇ, ԴԱՐԱՀԱՋ, ԴԱՐԱՀՈՋ, ԴԱՐԱՀՈՒՇ, ԴԱՐՈՀՈՋ)
 ԴԱՐԱՀՈՋ 53, 91 (տե՛ս նաև ԴԱՐԱՀՈՇ)
 ԴԱՐԱՀՈՒՇ 133 (տե՛ս ԴԱՐԱՀՈՇ)
 ԴԱՐՈՀՈՋ 133 (տե՛ս ԴԱՐԱՀՈՇ)
 ԴԻԻՏԱԿԱՆ 53, 91-92, 95, 111-112 (տե՛ս նաև ԳԻԻՏԱԿԱՆ, ԴՈՒՏԱԿԱՆ)
 ԴՈՒԻՆ 115, 118, 387, 413-414, 418, 441, 459, 461, 489, 501, 527 (տե՛ս նաև ԴՎԻՆ)
 ԴՈՒՏԱԿԱՆ 91-92, 95, 111-112 (տե՛ս ԴԻԻՏԱԿԱՆ)
 ԴՎԻՆ 385, 387-388, 409 (տե՛ս նաև ԴՈՒԻՆ)

Ե

ԵԲՐԱՅԵՑԻՔ 519
 ԵԳԻՊՏԱՑԻՔ 188, 233
 ԵԳԻՊՏՈՍ 188, 233, 394, 477, 530
 ԵԴԷՆՎՊԻԱՅ 368 (տե՛ս ԵԹՈՎՊԻԱ)
 ԵԹԵՆՎՊԻԱ 368 (տե՛ս ԵԹՈՎՊԻԱ)
 ԵԹԷՆՎՊԻԱ 368 (տե՛ս ԵԹՈՎՊԻԱ)
 ԵԹՈՎՊԱՑԻՔ 172, 277-279
 ԵԹՈՎՊԻԱ 368 (տե՛ս նաև ԵԴԷՆՎՊԻԱՅ, ԵԹԵՆՎՊԻԱ, ԵԹԷՆՎՊԻԱ, ԵԹԻՆՎՊԻԱ)
 ԵԹԻՆՎՊԻԱ 368 (տե՛ս ԵԹՈՎՊԻԱ)
 ԵԼԻՍ 287
 ԵՂԻՎԱՐԴ 527-528
 ԵՊԵՍՈՍ 363 (տե՛ս նաև ԵՓԵՍՈՍ)
 ԵՐԱՍԽ 57
 ԵՐԳԷՍԱՑԻՔ 80 (տե՛ս ԱՐԳԵՍԱՑԻՔ)

ԵՐԵՒԱՆ 3, 4, 26, 54, 55, 116, 130, 144, 145, 358, 365, 375, 414, 441, 442, 489, 491, 527, 528

ԵՐՈՒՍԱՂԷՄ 26, 102, 363, 365-366, 375, 390, 397, 406-407, 455, 473, 478, 481-483, 491

ԵՓԵՍՈՍ 123, 377, 387, 406-407, 415-416, 419, 445, 449, 481, 507, 513, 530 (տե՛ս նաեւ Ե-ՊԵՍՈՍ)

Չ

ԶԱՐԵՀԱԻԱՆ 418 (տե՛ս նաեւ ԶԱՐԵՀՈՒԱՆ) ԶԱՐԵՀՈՒԱՆ 117 (տե՛ս նաեւ ԶԱՐԵՀԱԻԱՆ)

Ը

ԸՆԾԻՀՆ 415 (տե՛ս ՄԾԲԻՆ)

Թ

ԹԱԹՈՒԼԻ ՎԱՆՔ 441 ԹԷՈՒԴՈՍՈՒՊԱԻՂԻՍ 377 (տե՛ս նաեւ ԹԷՈՒԴՈՍՈՒՊՈԼԻՍ, ԹԷՈՒԴՈՒՊԱԻԼԻՍ, ԿԱՐԻՆ, ԿԱՐՆՈՅ ՔԱՂԱՔ)

ԹԷՈՒԴՈՍՈՒՊՈԼԻՍ 373 (տե՛ս նաեւ ԹԷՈՒԴՈՍՈՒՊԱԻՂԻՍ, ԹԷՈՒԴՈՒՊԱԻԼԻՍ, ԿԱՐԻՆ, ԿԱՐՆՈՅ ՔԱՂԱՔ)

ԹԷՈՒԴՈՒՊԱԻԼԻՍ 377 (տե՛ս ԹԷՈՒԴՈՍՈՒՊԱԻՂԻՍ)

ԹԻՖԼԻՍ 527 (տե՛ս նաեւ ՏՓԽԻՍ)

ԹՈՐԳՈՄԵԱՆ ԱՇԽԱՐՀ 58

Ի

ԻՍՐԱՅԷԼ 94, 393-394, 398-399 (տե՛ս նաեւ ԻՍՐԱՅԷՂ, ՀՐԷԱՍՏԱՆ)

ԻՍՐԱՅԷՂ 454 (տե՛ս նաեւ ԻՍՐԱՅԷԼ, ՀՐԷԱՍՏԱՆ)

ԻՐԱՆ 459

Լ

ԼԻԿԻԱ 325 ԼԻԿՊԱԻԼԻՍ 233 ԼԻԻԲԷԱՑԻՔ 303 ԼԻԻԿԻՈՆ 316

Խ

ԽԱՓԱՅ 415

ԽՈՐԱՍԱՆԻԿՔ (Խորասանի բնակիչներ) 502 ԽՈՒԺԱՍՏԱՆ 117, 121, 419, 441, 445

Ծ

ԾԻԾԵՌԻՆԱՎԱՆՔ 460

Կ

ԿԱՂԱՆԿԱՏՈՅՔ 133-134 (տե՛ս նաեւ ԿԱՂԱՆՏՈՒԱՑ, ԿԱՂԱՆՈՒԱՑ, ԿԱՂԱՆԿԱՑՈՒՈՑ, ԿԱՂԱՆԿԱՆՏՈՒԱՑ)

ԿԱՂԱՆՏՈՒԱՑ 133 (տե՛ս ԿԱՂԱՆԿԱՏՈՅՔ)

ԿԱՂԱՆՈՒԱՑ 133 (տե՛ս ԿԱՂԱՆԿԱՏՈՅՔ)

ԿԱՂԱՆԿԱՑՈՒՈՑ 133 (տե՛ս ԿԱՂԱՆԿԱՏՈՅՔ)

ԿԱՂԱՆԿԱՆՏՈՒԱՑ 133 (տե՛ս ԿԱՂԱՆԿԱՏՈՅՔ)

ԿԱՄԲԷԾ 73 (տե՛ս նաեւ ԿԱՄԲԷՋ)

ԿԱՄԲԷՋ 73 (տե՛ս նաեւ ԿԱՄԲԷԾ)

ԿԱՊԱՂԱԿ 53, 127, 133, 448

ԿԱՐՄԵՆԱՆԱՆ 117

ԿԱՐՄԻԿԱՆ 118

ԿԱՐՄԻՐ ԾՈՎ 453

ԿԱՐԻՆ 371, 373-374, 378 (տե՛ս նաեւ ԹԷՈՒԴՈՍՈՒՊԱԻՂԻՍ, ԹԷՈՒԴՈՍՈՒՊՈԼԻՍ, ԿԱՐՆՈՅ ՔԱՂԱՔ)

ԿԱՐՆՈՅ ՔԱՂԱՔ 377 (տե՛ս նաեւ ԹԷՈՒԴՈՍՈՒՊԱԻՂԻՍ, ԹԷՈՒԴՈՍՈՒՊՈԼԻՍ, ԿԱՐԻՆ)

ԿԵՆԱՑ 415

ԿԻԶԻԿՈՆ 407

ԿԻԻՐՈՍ 481

ԿՈՄԻԴԵԱՑ 79 (տե՛ս ՆԻԿՈՄԻԴԵԱ)

ԿՈՍՏԱՆԴԻԱՆՈՒՊԱԻՂԻՍ 419 (տե՛ս նաեւ ԿՈՍՏԱՆԴԻՆՈՒՊԱԻԼԻՍ, ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊԱԻԼԻՍ, ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊԱԻՂԻՍ, ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ)

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊԱԻԼԻՍ 377, 406, 416 (տե՛ս նաեւ ԿՈՍՏԱՆԴԻԱՆՈՒՊԱԻՂԻՍ, ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊԱԻԼԻՍ, ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊԱԻՂԻՍ, ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ)

ԺՂԲԱՑ ԱՇԽԱՐՀ 79 (տե՛ս նաև ԺԲԱՑ)
ԺՈՐԱՑ ԿՈՂՄԱՆՔ 42

Մ

ՄԱԶՔԹԱՑ ԱՇԽԱՐՀ 80, 89 (տե՛ս նաև
ՄԱՍԿՈՒԹԱՑ ԱՇԽԱՐՀ, ՄԱՍՔԹԱՑ
ԱՇԽԱՐՀ, ՄԱՍՔՈՒԹԱՑ ԱՇԽԱՐՀ,
ՄՍԿԹԱՑ ԱՇԽԱՐՀ)

ՄԱԿԵԴՈՆԻԱ 290

ՄԱՀԱՐՁՈՅ ՎԱՆՔ 118

ՄԱՂՈԿԱՆ 117

ՄԱՆՈՒՇԷԻՑ ՎԱՆՔ 134 (տե՛ս ԱՅՐՄԱ-
ՆՈՒՇԷԻՑ ՎԱՆՔ)

ՄԱՍԿՈՒԹԱՑ ԱՇԽԱՐՀ 89 (տե՛ս ՄԱԶՔ-
ԹԱՑ ԱՇԽԱՐՀ)

ՄԱՍՔՈՒԹԱՑ ԱՇԽԱՐՀ 62, 80, 89 (տե՛ս
ՄԱԶՔԹԱՑ ԱՇԽԱՐՀ)

ՄԱՍՔԹԱՑ ԱՇԽԱՐՀ 53, 62, 64, 80, 89 (տե՛ս
ՄԱԶՔԹԱՑ ԱՇԽԱՐՀ)

ՄԱՐԴԱՂԻ 420, 445, 448

ՄԱՐՀԱԼԱՅԻ ՎԱՆՔ 415

ՄԱՐՏԻ 415

ՄԵԾ ՀԱՅՔ 109, 117 (տե՛ս նաև ՀԱՅԱՍ-
ՏԱՆ, ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀ, ՀԱՅՔ)

ՄԵԾԿՈՂՄԱՆՔ 448

ՄԵՀԵՆՈՒՆԻՔ 420

ՄԻՋԱԳԵՏՔ 5

ՄԾԲԻՆ 117, 451 (տե՛ս նաև ԸՆԾԻՀՆ)

ՄԾԲՆԱՑԻՈՑ ԿՈՂՄԱՆՔ 419

ՄԾՀԻԹԱ 475

ՄՈԿՔ 117, 418, 448

ՄՈՍԿՈՒԱ 54, 130, 442, 443

ՄՍԿԹԱՑ ԱՇԽԱՐՀ 80 (տե՛ս ՄԱԶՔԹԱՑ
ԱՇԽԱՐՀ)

Յ

ՅՈՐԴԱՆԱՆ 120, 378-379, 453-455

ՅՈՒՆԱՑ ԱՇԽԱՐՀ 57, 373, 377

Լ

ԼԵՂՈՍ 188

ՆԻԿԻԱ 118-120, 122-123, 377, 406, 415-416,
419, 445, 449, 455, 481, 483-484, 486, 502,
507-508, 513, 530

ՆԻԿՈՄԻԴԱ 62, 79, 84 (տե՛ս նաև ԿՈՄԻ-
ԴԵԱ, ՆԻԿՈՄԻԴԵԱ)

ՆԻԿՈՄԻԴԵԱ 62, 79, 84 (տե՛ս նաև ԿՈՄԻ-
ԴԵԱ, ՆԻԿՈՄԻԴԱ)

ՆԻԿՈՊՈԼԻՍ 527

ՆԻՆՈՒԷ 117

ՆՈՆԱԲԱՐՍԱԴ 117

ՆՈՇԻՐԱԿԱՆ 117

ՆՈՐ ՆԱԽԻՋԵԻԱՆ 375

ՆՈՐ ԶՈՒՂԱ 129, 131, 364, 366, 374-375

ՆՈՐ ՔԱՂԱՔ 59 (տե՛ս նաև ՎԱՂԱՐՇԱ-
ՊԱՏ)

ՆՈՒԱՐՍԱԿ 127, 363

Շ

ՇԱՀԱՊԻՎԱՆ 128

ՇԱՄՔՈՐԻ ԲԵՐԴ 129

ՇԱԽԱՐՇԱՆ 6, 19, 21

ՇԱՔԻ 448

ՇՈՇՏՐ 121

Ո

ՈԹՄՈՒՍ 115

ՈԼԻՄՊԻՈՍ 186

ՈՍԱՅ 186

ՈՒՌՀԱՅ 5, 495

ՈՒՏԱՑԻՈՑ 111 (տե՛ս ԱԻՏԷԱՑԻՈՑ ԳԱ-
ԻԱՌ)

ՈՒՏԻԱՑԻՈՑ 111 (տե՛ս ԱԻՏԷԱՑԻՈՑ ԳԱ-
ԻԱՌ)

Չ

ՉՈՂ 53

Պ

ՊԱԶԿԱՆՑ 100 (տե՛ս ՊԱՐԶԿԱՆՑ ԳԱԻԱՌ)

ՊԱԶԿԱՆՔ 100 (տե՛ս ՊԱՐԶԿԱՆՔ)

ՊԱՐԶԿԱՆՑ ԳԱԻԱՌ 100 (տե՛ս նաև ԲԱԶ-
ԿԱՆՑ, ՊԱԶԿԱՆՑ, ՊԱՐԶԿԱՆՔ, ՊԱՐՍ-
ԿԱՆՑ)

ՊԱՐԶԿԱՆՔ 100 (տե՛ս նաև ՊԱՋԿԱՆՔ, ՊԱՐԶԿԱՆՑ ԳԱԻԱՌ, ՊԱՐՍԱԿԱՆՍ)

ՊԱՐՍԱԿԱՆՍ 100 (տե՛ս ՊԱՐԶԿԱՆՔ)

ՊԱՐՍԻՑ ԱՇԽԱՐՀ 67, 117, 123, 461

ՊԱՐՍԻՑ ԹԱԳԱԻՈՐՈՒԹԻՒՆ 27

ՊԱՐՍԿԱՆՑ 100 (տե՛ս ՊԱՐԶԿԱՆՑ ԳԱԻԱՌ)

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ 115

ՊԱՐՍՔ 27, 43-45, 52, 64, 66, 68, 71-72, 75, 79, 113, 117, 122, 368, 413, 441, 461, 520

ՊԱՐՏԱՅ 133 (տե՛ս ՊԱՐՏԱԻ)

ՊԱՐՏԱԻ 66, 127, 129, 133, 448 (տե՛ս նաև ՊԱՐՏԱՅ, ՊԵՐՈՋ-ԿԱԻԱՏ, ՊԵՐՈՋԱՊԱՏ, ՊԵՐՏԵԻ)

ՊԵՆՆԱԴԱՅ 496

ՊԵՐՈՋ-ԿԱԻԱՏ 127 (տե՛ս նաև ՊԱՐՏԱԻ)

ՊԵՐՈՋԱՊԱՏ 66 (տե՛ս նաև ՊԱՐՏԱԻ, ՊԵՐՈՇԱՊԱՏ)

ՊԵՐՈՇԱՊԱՏ 66 (տե՛ս ՊԵՐՈՋԱՊԱՏ)

ՊԵՐՏԵԻ 133 (տե՛ս ՊԱՐՏԱԻ)

ՊՂՈՒՏՈՆ 170

Ռ

ՌԷ 463

ՌԸՇՏՈՒՆԻՔ 448 (տե՛ս ՌՇՏՈՒՆԻՔ)

ՌԻՆՈՍ 301-302

ՌՇՏՈՒՆԻՔ 21, 117, 418, 448 (տե՛ս նաև ՌԸՇՏՈՒՆԻՔ)

ՌՈՒԱԿ 74 (տե՛ս ՌՈՒՏԱԿ)

ՌՈՒՍԱՍՏԱՆ 55, 131, 358, 366

ՌՈՒՏԱԿ 74 (տե՛ս նաև ՌՈՒԱԿ)

Ս

Ս. ՊԵՏԵՐՔՈՒՐԳ 55

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ 375, 387-388, 414, 491

Ս. ԿԱԹՈՂԻԿԷ ՎԱՆՔ 527

Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԿՐՏԻՉ ՎԱՆՔ 469, 471, 475

Ս. ՂԱԶԱՐ 4, 144-145, 366, 388-489, 491,

ՍԱՂԱՄԻՆ 308

ՍԱՆԱՏՐՈՒԿ, լեռ 19

ՍԱՆԱՏՐՈՒԿ, դաշտ 19, 21

ՍԱՍԱՆԵԱՆ ՏԷՐՈՒԹԻՒՆ 53, 127, 128, 363, 374

ՍԱՐԵԲԱՅ ՎԱՆՔ 415

ՍԻՆԷԱԿԱՆ ԼԵՐԻՆՔ 395

ՍԻՈՆ 391, 483

